Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՌՈՒՍ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

БИБЛИОТЕКА РУССКОЙ КЛАССИКИ

А. М. ГОРЬКИЙ

Избранные произведения

Издательство
«Советакан грох», Ереван 1983

Ա. Մ. ԳՈՐԿԻ

Ընտիր գրքեր

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ 1983

Գ 831
ԳՄԴ 84.Ռ7

Կազմեց
Հարություն Կարապետյանը

Գ 831 Գորկի, Մ.:
Ընտիր երկեր /Ռուս. թարգմ. Ե. Չարենցը, Ստ. Շահումյանը, Ա. Աթայանը և ուրիշ.։ Կազմ. Հ. Կարապետյանը.— Եր.։ Սովետ. գրող, 1983.— 624 էջ։
Ժողովածուն ընդգրկում է ռուս մեծ գրողի «Մայրը» վեպը, «Հատակում» պիեսը, պատմվածքներ և բանաստեղծություններ։
Գ 4702010200 (1) 22 / 701(01)83 83 «Տ» ԳՄԴ 84.Ռ7 Գ2

© «Սովետական գրող» հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1983

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԼԵԳԵՆԴՆԵՐ

ՄՐՐԿԱՀԱՎԻ ԵՐԳԸ

Ծովի ալեհեր հարթության վրա
Ամպեր է ահա կուտակում քամին,
Ահեղ ամպերի և ծովի միջև
Ճախրում է հպարտ մրրկահավը,
Թռչում է՝ մի սև կայծակի նման։
Մերթ ալիքներին թևով դիպչելով,
Մերթ նետի նման ամպերին հասած՝
Ճչում է նա չոր—և խինդ են լսում
Ամպերը խիզախ թռչունի ճիչում։
Հնչում է ճիչում — փոթորկի ծարավ։
Եվ զայրույթի ուժ, և կրքի հրդեհ,
Եվ հաղթանակի հավատք են լսում
Ամպերը նրա այդ ահեղ ճիչում։
Նվում են ճայերն ամպրոպից առաջ,
Սուզահավերը նվում են նույնպես,—
Սուզահավերին անհայտ է հավետ
Անհուն հրճվանքը կյանքի պայքարի։
Գոռ որոտներից սարսում են նրանք։
Հիմար պինգվինը թաքցընում է խեղճ,
Գիրուկ մարմինը ժայռերի խորքում...
Եվ միայն հպարտ Մրրկահավն է
Ճախրում համարձակ, խիզախ և ազատ՝
Ծովի ալևոր, ճերմակ փրփուրում։
Ավելի մռայլ ու ծանր են իջնում

Ամպերը ծովի հարթության վրա,
Եվ ալիքներն են երգում ու պարում՝
Թռչելով դեպի որոտը պայթող։
Ցասման փրփուրում որոտն է թնդում,
Ալիքներն են հորդ՝ վիճում քամու հետ,
Եվ ահա հանկարծ գրկում է քամին
Ամպերի երամն անդուլ զրկանքով,
Եվ շպրտում է ամեհի թափով,
Վայրի բարկությամբ, ժայռերի վրա,
Փշրում է, ցրում, դարձընում փոշի
Նրանց զմրուխտե կույտերն ահագին։—
Մրրկահավը ճախրում է ճիչով,
Կայծակի նման ամպերը ճեղքում,
Պոկում է թևով փրփուրը ջրի,
Ճախրում է ահա, ինչպես հզոր դև,
Սև, անագորույն ոգի փոթորկի,—
Եվ ծիծաղում է, և խուլ հեկեկում...
Որոտի ցասման, վրդովմունքի մեջ
Նա զգայուն դև—վաղուց է արդեն
Հոգնություն տեսնում։— Համոզված է նա,
Որ չեն պարուրի ամպերն արևին,
Չեն ծածկի ընդմիշտ, չեն ծածկի, օ, ոչ։—
Ոռնում է քամին... Որոտը թնդում...
Կապույտ բացի պես ամպերն են վառվում
Ծովի ալեկոծ անդունդի վրա—
Բռնում է ծովը կայծակի նետերն
Ու իր ահռելի ընդերքում մարում։
Կրակե կարմիր օձերի նման
Եվ գալարվում են, և կորչում ծովում
Այդ կայծակների ցոլքերը բոսոր։
— Փոթորիկը հիմա թինդով կըպայթի...
Դա խիզախ, հպարտ մրրկահավն է
Ճախրում սլացող կայծակների մեջ,
Ահեղ աղմկող, հորդ ծովի վրա,
Դա հաղթանակի երգիչն է ճչում.
— Թող փոթորիկը ուժգնորեն պայթի...

ԲԱԶԵԻ ԵՐԳԸ

Բարձր լեռների
Կատարը սողաց
Եվ պառկեց այնտեղ,
Խոնավ քարափում,
Գալարուն իժը՝
Հայացքը ծովին։

Բարձր արևն էր
Երկնքում շողում,
Եվ լեռներն էին
Շոգ՝ շնչում վերև,
Եվ ալիքները
Զարնվում էին
Վարը՝ քարերին։

Իսկ ձորի միջով
Վարը, խավարում,
Սահանքն էր սահում
Դեպի ծովը լուրթ,
Զարկելով իրար
Քարերն հատակի,—
Փրփուրով պատած,
Հզոր, ալեհեր,
Կտրում էր լեռը
Եվ ծովը թափվում
Դժգոհ ոռնոցով։

Հանկարծ այն քարափն,
Ուր իժն էր պառկել,
Վերևից ընկավ
Վիրավոր բազեն՝
Փշրված կրծքով,
Փետուրն արյունոտ։
Մի հատու ճիչով
Նա ընկավ գետին—
Եվ զարնվում էր

Անզոր զայրույթով
Ամրակուռ քարին...
Իժը վախեցավ,
Ետ սողաց ճեպով,
Հասկացավ սակայն,
Որ կյանքին նրա
Մնացել է լոկ
Մի քանի վայրկյան...
Մոտ սողաց իսկույն
Մեռնող թռչունին
Եվ ֆշշաց ուղիղ
Աչքերին նրա.
«Ի՞նչ է, մեռնո՞ւմ ես...»։
— Այո, մեռնում եմ,—
Շշնջաց բազեն,
Խորը շնչելով.
— Ես լավ ապրեցի...
Ես բախտավոր եմ...
Քաջ կռվեցի ես...
Տեսա երկինքը...
Դու չես տեսնի այն
Երբեք այնքան մոտ...
«Էհ, խեղճ արարած,
Ինչ է երկինքը.
Դատարկ տեղ միայն...
Ո՞նց սողամ այնտեղ...
Այստեղ ինձ համար
Ավելի լավ է.
Խոնավ ու տաք է»։
Այսպես իժն ասաց
Ազատ թռչունին,
Ծիծաղեց հոգում
Նրա անհեթեթ
Մտքերի վրա,
Եվ այսպես խորհեց.
«Թռիր թե սողա—
Վախճանն հայտնի է...
Բոլորս էլ վերջը

Կրպառկենք հողում,
Ամեն ինչ վերջը
Աճյուն կդառնա»։
Բայց խիզախ բազեն
Թպրտաց հանկարծ,
Կանգնեց մի փոքր
Եվ շուրջը նայեց—
Քարափին խոնավ։

Գորշ քարի միջով
Ջուրն էր թորում դուրս,
Եվ հեղձուցիչ էր
Քարափում խավար,
Եվ գալիս էր գաղջ,
Ծանր, լեշի հոտ։
Եվ ճչաց բազեն
Կարոտով, ցավով,
Հավաքած բոլոր
Իրա ուժերը.
— Օ, եթե երկինք
Մեկ էլ թռչեի...
Ես կսեղմեի
Թշնամուն կրծքիս
Եվ... թող հագենար
Արյունով իմ նա...
Օ, երջանկություն
Կռվի, պայքարի...
Իսկ իժը խորհեց.
«Երևի այնտեղ
Ապրելը այդքան
Իրոք որ լավ է,
Եթե նա այդպես
Խոր հառաչում է...»։
Եվ առաջարկեց
Ազատ թռչունին.
«Դու էլ մոտեցիր
Եզրին քարափի
Եվ նետվիր ներքև—

Գուցե թևերդ
Քեզ բարձրացրնեն,
Եվ ապրես կրկին
Դու մի քիչ ևս
Քո վեհ տարերքում»։
Եվ հառնեց բազեն,
Եվ, խենթ ճչալով,
Գնաց եզերքը՝
Ճանկերը խոնավ
Քարին քսելով։
Եվ մոտեցավ նա,
Պարզեց թևերը,
Շնչեց կրծքով ողջ,
Բոցեց աչքերը—
Եվ գլորվեց վար։
Եվ, ինչպես քարը,
Սահելով ներքև,
Արագ ընկնում էր,
Կոտրում թևերը,
Եվ կորցնում էր
Իր փետուրները...
Ջրի ալիքը
Գրկեց մարմինը,
Եվ լվանալով
Նրա արյունը,
Փրփուրով պատած
Մղեց դեպի ծովը։
Իսկ ալիքները
Տխուր հառաչով
Զարնվում էին
Ցոր քարերին այն.
Եվ չէր երևում
Նրա մարմինը
Ծովի անսահման
Տարածության մեջ...
Քարափում պառկած
Խորհում էր երկար
Իժը թռչունի

Վախճանի մասին
Եվ սիրո մասին
Դեպի երկինքը...
Եվ ահա նայեց
Դեպի հեռուն նա,
Որ հար շոյում է
Մեր հայացքները
Բախտի երազով։
«Իսկ ի՞նչ էր տեսնում
Մեռնող այն բազեն
Այդ անապատում
Անտակ ու անեզր...
Ինչո՞ւ են նրանք,
Մեռնելով՝ հավետ
Հուզում հոգին մեր
Իրենց սիրով այդ՝
Դեպի թռիչքը,
Դեպի երկինքը...
Ի՞նչն է պարզ այնտեղ...
Չէ՞ որ կարող եմ
Ես ինքս իմանալ
Այդ ամենը—գեթ
Մի փոքր պահով
Երկինք թռչելով»։
Ասաց—և արավ։
Ոլորված, որպես
Փայլուն մի օղակ՝
Թռավ առաջ նա—
Եվ արևի դեմ
Փայլեց, ինչպես մի
Բարակ ժապավեն։
Սողալու համար
Ծնվածը — թռչել,
Օ, անկարող է...
Մոռանալով այս—
Ընկավ քարին նա,
Բայց չփշրվեց,
Այլ ծիծաղեց լոկ.

«Ահա թե որն է
Երկինք թռչելու
Հիմար հաճույքը...
Ընկնելու մեջ է...
Հիմար թռչուններ...
Հողին անընտել,
Ձանձրացած այնտեղ,
Նրանք ձգտում են
Դեպի երկինքը—
Եվ կյանքն են փնտրում
Անապատում տոթ։
Այնտեղ դատարկ է,
Այնտեղ լույս շատ կա,
Բայց չկա այնտեղ
Ուտելիք, չկա
Կենդանի մարմնի
Համար հենարան։
Էլ ինչի՞ է այդ
Հպարտությունը...
Էլ ինչի՞ է այդ
Հանդիմանանքը...
Նրա համար, որ
Ծածկեն նրանով
Իրենց տենչերի
Խելառ ընթացքը,
Որ նրանց ետև
Քողարկեն իրենց
Անպետքությունը
Այս կյանքի համար...
Հիմար թռչուններ...
Բայց չեն խաբի ինձ
Այլևս նրանց
Խենթ զրույցները...
Ես ինքս գիտեմ
Ամեն ինչ հիմա։
Ես ինքս արդեն
Տեսա երկինքը...
Վեր Էախրեցի ես

Եվ չափեցի այն,
Տեսա անկումը,
Բայց չմեռա ես,
Այլ ավելի եմ
Հավատում ինքս ինձ...
Թող նրանք, ովքեր
Ձեն սիրում հողը—
Ապրեն սուտով լոկ...
Ես գիտեմ հիմա
Ճշմարտությունը
Եվ նրանց կոչին
Չեմ հավատում ես։
Հողի ծնունդ եմ—
Հողով կապրեմ ես»։
Եվ կրծկվեց նա
Պիրկ՝ քարի վրա՝
Իրենով հպարտ։—
Փայլում էր ծովը
Վառ լույսերի մեջ,
Եվ ալիքները
Զարնվում էին
Ափերին՝ ահեղ։
Նրանց որոտում
Թնգում էր երգը
Բազեի մասին։
Եվ դողում էին
Ժայռերը՝ նրանց
Հարվածներից գոռ
Եվ երգից նրանց.
«Խոլ-խիզախների
Խենթությանը վեհ
Երգում ենք փառք մենք։
Խոլ-խիզախների
Խենթությունը վեհ—
Օ, այս է ահա
Կյանքի իմաստը...
Օ, քաջ Բազե դու
Կռվում՝ քո դաժան

Ոսոխների դեմ,
Եղար արնաքամ...
Բայց կգա օրը,
Եվ քո արյունի
Վառ կաթիլները՝
Կայծերի նման
Կբռնկվեն մեր
Կյանքի խավարում
Եվ բազմաթիվ քաջ
Սրտեր կբվառեն
Ծարավով լույսի
Եվ ազատության։
Թեկուզ մեռար դու,
Եվ բազմաթիվ քաջ
Եվ ոգով արի
Ու խիզախ մարդկանց—
Ընդմիշտ կլինեն
Պայծառ օրինակ,
Հպարտ օրինակ...
Խոլ-խիզախների
Խենթությանը վեհ
Երգում ենք երգ մենք...»։

ԱՂՋԻԿԸ ԵՎ ՄԱՀԸ

1

Դառնում է արքան պատերազմից։
Գնում է — զայրույթից գոռում է։
Լսում է — թփի եզեր
Մի աղջիկ ծիծաղում է։

Ահեղ կիտելով հոնքերը դեպին՝
Արքան մտրակեց ձիուն՝ փնչալով,
Հարձակվեց վրան, ինչպես փոթորիկ,
Եվ գոռաց՝ զրահ ցնցելով.
«Ի՞նչ ես դու»,— գոռաց նա չար ու կոպիտ,—

Ի՞նչ ես դու, աղջի, ցցել ատամներդ.
Կործանեց, հաղթեց ինձ թշնամին։
Իմ ամբողջ զորքը կոտորվել է.
Գերի է ընկել շքախումբս ողջ.
Գնում եմ ահա, որ նոր զորք բերեմ.
Ես—արքան եմ քո, սիրտս—վիշտ ու ոխ,—
Հիմար ծիծաղող ես ո՞նց համբերեմ»։

Շապիկը կրծքին շտկելով հազիվ՝
Աղջիկը ասաց արքային զազիր.
«Ես խոսում եմ, տես, հետն իմ սիրածի,—
Տեր-արքա, դու լավ է — հեռացիր»։
Արքաների հետ խոսելու համար
Սիրողը ե՞րբ է ժամանակ ճարում.
Երբեմն սերը վառվում է արագ,
Քան մոմը՝ աստծո տաճարում։
Մոլեգնեց արքան բարկությունից չար,
Հրաման տվեց իր խմբին խոնարհ.
«Զնդան նետեցեք այս լիրբ աղջկան,
Կամ, լավ է, իսկույն խեղդեցեք նրան»։
Ծամածռելով մռութները հեզ՝
Արքայի մարդիկ թափվեցին վրան,
Շրջապատեցին չար դևերի պես—
Մահին հանձնեցին դժբախտ աղջկան։

2

Լեցուն է մահը միշտ չար հույզերով,
Բայց այդ օրը նա փոխվել էր ասես.
Չէ՞ որ գարնանը սերմերը սիրա
Ուռչում են անգամ այդ պառավի մեջ։
Ջանձրալի է հար նեխած մսերում
Ոչնչացնել հիվանդություններ.
Երբեմն ուզում ես ապրել անօգուտ,
Ամեն մի րոպե մահով չընդունել։
Բոլորը՝ նրան տեսնելու պահին՝
Ջգում են միայն սարսափ անիմաց,
Ջանձրացել էր նա մարդկային մահից,

Թաղման ծեսերից, փոսերից՝ այն բաց։
Զբաղված գործով անշնորհակալ՝
Այս կեղտոտ ու մութ աշխարհի վրա—
Իր գործն հմտորեն կատարում է հար—
Բայց ավելորդ են համարում նրան։
Վիրավորիչ է, իհարկե, սա քիչ.
Բարկանում է մերթ մարդկանցից նա էլ,
Եվ, բարկանալով, տանում է կյանքից
Ոչ նրանց հաճախ, ում պետք է տանել,
Է, սատանայի՞ն սիրի նա գուցե,
Անհաղուրդ շնչի դժոխքի հրով,
Հեկեկա սիրո ցավից ու խոցից,
Նրա հետ մեկտեղ արբենա սիրով...

3

Աղջիկը՝ կանգնած Մահի առաջին՝
Սպասում է հարվածին Մահի։
Փնչում է Մահը,— խղճում է զոհին.—
«Ինչքան էլ ջահելն է, նայիր...
Ի՞նչ ես արքային ասել կոպտաբար.
Սպանեմ պիտի քեզ դրա համար...»։

«Օ, մի բարկանա,— աղջիկը ասաց,
— Ինչո՞ւ ես իզուր բարկանում վրաս.
Առաջին անգամ համբուրում էր ինձ
Սիրածս՝ թփի կանաչ հովանում,
Իսկ արքան—փախչում էր պատերազմից.
Ինչ արքա, ինչ բան—այդ լույս վայրկյանում...
Դե, ես էլ ասի արքային, նրան.
— Հեռացիր, արքա, այստեղից։—
Լավ էի ասում, կարծես թե, սակայն
Տես՝ ինչքան եղավ անտեղի...
Եվ, Մահից, գիտեմ, ազատում չկա.
Մեռնելու եմ, գիտեմ, չըսիրած,—
Բայց ամբողջ հոգով խնդրում եմ, ով Մահ,
Թույլ տուր, որ մեկ էլ համբուրեմ նրան...»։

Տարօրինակ էր զրույցն այս Մահին.
Ո՞վ է Մահվանից նման բան ուզում...
Մտածեց՝ էլ գործ կըմնա՞ իրեն,
Թե չհամբուրվեն մարդիկ աշխարհում...
Եվ, տաքանալով արևի ներքո,
Մահն ասաց՝ մոտիկ կանչելով օձին.
«Գնա, համբուրիր — և ետ եկ շուտով.
Գիշերը՝ քոնն է, կըսպանեմ լուսին»։

Եվ նստեց քարին։— Օձը ժանիքով իր
Մահվան գերանդին է լիզում։
Աղջիկը բախտից հեկեկում է,
Փնչում է Մահը.— «Դե գնա, դե, շուտ»։

4

Գարնան արևով քնքուշ տաքացած,
Մահը արձակեց տրեխները հին,
Հենվեց չոր քարին—և խորը քնեց։
Եվ վատ մի երազ այցելեց Մահին։

Իբրև Կայենը՝ ծնողը նրա,
Իր Թոռանթոռի՝ չար Հուդայի հետ,
Երկուսն էլ զառում,— ելնում են լեռը,
Երկու իժի պես սողում են կամաց։

«Տեր»,— հառաչում է մոայլ Կայենը,
Երկինք նայելով մարած աչքերով.
«Տեր»,— հայցում է չար Իսկարիովտացին՝
Աչքերը հողից չըբարձրացնելով։

Վերը, ամպի մեջ, լույս լերան վրա
Տերն, ընկողմանած, կարդում է մի գիրք.
Վառ աստղերով է այդ գիրքը գրված,
Մի էջ է նրա—Ծիր-Կաթինն անհուն։
Կանգնած է վերը Հրեշտակապետն՝

Ըսպիտակ ձեռքում—կայծակների խուրձ,
Ուղևորներին ասում է նա խիստ.

«Հեռացեք, աստված ձեզ չի ընդունի»։
«Միքայել,— տխուր հայցում է Կայենն.
Մեծ է հանցանքս աշխարհի հանդեպ՝
Ես ծնեցի կյանքն ըսպանողին,
Ես եմ հայրն ստոր, անիծյալ Մահի»։

«Միքայել, —տխուր ասում է Հուդան.—
Գիտեմ՝ Կայենից հանցապարտ եմ ես,
Քանզի մատնեցի գարշելի Մահին
Լույսի պես պայծառ սիրտը աստուծո»։

Եվ աղերսում են նրանք երկուսով.

«Միքայել, տերը մեզ մի խոսք միայն,
Թող մի խոսք ասի, թող խղճա լոկ մեզ—
Չէ՞ որ ներումն մենք չենք աղերսում»։

Հրեշտակապետն ասում է կամաց.

«Երիցս արդեն ասել եմ նրան.
Երկու անգամին նա ոչինչ չասաց,
Երրորդ անգամին նա խիստ բարբառեց.
— Իմացիր, քանի դեռ Մահը կյանքում
Կործանում է շունչ՝ ու ծիլ կենդանի—
Չիք ներում նրանց—Կայեն-Հուդային»։

Այստեղ Մատնիչն ու Եղբայրասպանը
Տխուր ոռնացին և հեծկլտացին,
Եվ, գրկած իրար, գլորվեցին ցած՝
Լերան ներքևի ճահիճը նեխած։
Իսկ մութ ճահիճում հրճվում են, խաղում
Մարդակեր դևեր ու սատանաներ—
Եվ թքում են բութ նրանց երեսին
Ճախճախուտային կապույտ կրակներ։—

5

Մահը արթնացավ կեսօրին մոտիկ։
Նայում է, աղջիկը չի եկել դեռ։
Փնչում է քնկոտ. «Տես անամոթին,
Գիշերն, արի տես, խիստ կարճ է եղել»։

Քաղեց մի հասած արևածաղիկ,
Հոտոտեց, հրճվեց՝ արևի ներքո
Դիտելով ծաղկած ծառերի դեղին
Տերևներն՝ ասես դարձած ոսկեգույն։

Եվ արեգակին նայելով — հանկարծ
Երգեց նողկալի իր ձայնով հանգած.

«Մարդիկ՝ ձեռքով չարաղետ՝
Մերձավորին սպանում—
Եվ թաղում են, և երգում.
«Ի վերին Երուսաղեմ»։

Ձեմ հասկանում ես ոչինչ.
Բռնակալը իր ձեռքով
Սպանում է մարդկանց միշտ
Եվ միշտ թաղում—նույն երգով։

Ազնիվ է թե ավազակ—
Հենց որ ուզում են թաղեն,
Նույնն են երգում շարունակ,
«Ի վերին Երուսաղեմ»։

Հիմարի թե ստորի,
Հենց որ ձեռքով իմ քաղեմ—
Երգում են միշտ բոլորին.
«Ի վերին Երուսաղեմ»։

6

Նա երգը երգեց և խիստ դժգոհեց.
Անցել է արդեն ժամ ու ժամանակ—
Իսկ աղջիկը դեռ չկա, չի գալիս.
Սա — վատ է, Մահը չի սիրում հանաք։

Դառնալով դժնի ու չար առավել—
Հագավ Մահը իր տրեխները հին;
Եվ, հազիվ իջավ լուսընկա գիշեր—
Ճանապարհ ընկավ՝ ամպի պես մթին։

Քիչ գնաց—մեկ էլ տեսնում է ահա.
Ցողապատ, դալար թավուտի ներքո
Նստած է, գարնան դիցուհու նման,
Աղջիկը՝ շաղած լուսնյակի ցոլքով։

Վաղ-գարնանային հողի պես տկլոր՝
Բացված է նրա կուրծքը անամոթ,
Եվ թավ, մետաքսյա մաշկի վրա, խոր,
Աստղերն են փայլում համբույրների տոթ։—

Աստղերի նման կուրծքն են զարդարում
Գիրգ ստինքների պտուկները հուր,—
Եվ, աստղերի պես, աչքերն են նայում
Վեր՝ կաթն-ծիրի ճամփեքին մաքուր։

Կապույտ ստվերներ աչքերի տակին,
Շրթերը—կարմիր վերքերի նման,
Գլուխը դրած նրա ծնկներին՝
Հոգնած, հագեցած՝ նիրհել է տղան։

Նայում է Մահը—և բոցը քենի
Մարում է դանդաղ իր դատարկ գանգում։
«Եվայի նման այդ ի՞նչ ես էլի
Թաքնվել աստծուց խոտի արանքում»։

Երկընքի նման մարմնով իր լուսեղ
Իր սիրած տղին ծածկելով Մահից—
Պատասխան տվեց Աղջիկը խիզախ.
«Սպասիր մի քիչ, դեռ մի հայհոյի,
Աղմուկ մի հանի, մի դիպչի սրան,
Մի հնչեցրու գերանդին քո սուր.
Կրգամ, կըմտնեմ իսկույն գերեզման—
Միայն թե սրան—երկար կյանք դու տուր։

Մեղավոր եմ ես, չեկա ժամկետին,
Կարծում էի, որ—դու շատ ես մոտիկ,
Թույլ տուր սիրածիս ես գրկեմ էլի—
Կյանքը նրա հետ շատ է ցանկալի...
Նա էլ—լավն է շատ. նայիր՝ հուրհուրան
Ինչպիսի չքնաղ, ինչպիսի վսեմ
Հետքեր է թողել նա կրծքիս վրա.
Տես՝ կակաչներ են կրակե ասես...»։

Մահն, ամաչելով, կամաց ծիծաղեց.
«Արևի հետ է համբուրվել ասես...
Բայց—մենակ դու չես իմ հոգսը կյանքում,
Շատերին պիտի ես մահ տամ ու քուն.
Ես ժամանակին լավ եմ ծառայում,
Գործ շատ կա, իսկ ես—զառամ եմ արդեն.
Ամեն մի վայրկյանն ինձ թանկ է կյանքում—
Հավաքվիր, աղջի, ժամանակն է, դե...»։
Պնդում է աղջիկն.
«Իմ սիրածը ինձ
Երբ գրկում է—էլ ոչ երկինք, ոչ հող.
Լցվում է հոգիս կարոտով աննինջ,
Վառվում է իմ մեջ երկնային մի շող...
Էլ սարսափ չկա գալիքի հանդեպ,
Ոչ մարդ է էլ պետք, ոչ երկինք անհուն.
Մանկան պես—խինդը իրենով է խենթ,
Եվ իրենով է սերը հիանում...»։

Լսում է մահը, մտածկոտ ու սև,—
Էհ, ո՞նց կասեցնի այս երգը անվերջ...

Չիք աստված կյանքում—արևից վսեմ,
Չիք կրակ—սիրո կրակից անշեջ...

7

Լուռ է մահը, իսկ զրույցներն աղջկա
Հալում են շոր ոսկորները նրա հին,
Մերթ սառեցնում և մերթ կիզում են նրան,—
Ի՞նչ պիտի տա Մահու սիրտը աշխարհին։

Մահը — մայր չէ. բայց կին է նա, և նրա
Սիրտն էլ անշուշտ մտքից ուժեղ է և խիստ.
Իր մութ սրտում կան բողբոջներ հուրհրան՝
Կարոտանքի, վրդովմունքի և խղճի։

Նրանց, ում նա սիրում է խոր իր սիրով,
Ում սիրտը որ շար կարոտով է լեցուն—
Գիշերները նա որպիսի կարոտով
Մեծ հանգրստի զրույցներ է շշնջում։
«Էհ ինչ,— ասաց Մահը.— Հրաշք թող լինի —
Թույլ եմ տալիս—ապրիր, ապրիր դու, միայն...
Միայն թե ես ընդմիշտ քեզ մոտ կլինեմ,
Սիրո կողքին ես կլինեմ հավիտյան...»։
Այդ օրվանից Սերն ու Մահը, ինչպես քույրեր,
Միասին են շրջում կյանքում մինչև հիմա,
Սիրո հետքից Մահն է քայլում քայլով երեք,
Սուր գերանդին ուսին, միջնորդ կնոջ նման։—
Քայլում է նա, իր քրոջով հմայված հար —
Եվ ամենուր, թաղման ծեսին, թե հարսանիքին—
Նա անդադրում, անշեղորեն կերտում է վառ
Խինդը սիրտ և բերկրություն կյանքի։

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ՊԱՌԱՎ ԻԶԵՐԳԻԼԸ

I

Ես այս պատմությունները լսել եմ Ակկերմանի մերձակայքում, Բեսարաբիայում, ծովի ափին։

Մի երեկո, վերջացնելով օրվա այգեկութը, մի խումբ մոլդավացիներ, որոնց հետ ես աշխատում էի, գնացին ծովի ափը, իսկ ես ու պառավ Իզերգիլը մնացինք խաղողի վազերի խիտ ստվերի տակ ու, գետնի վրա պառկած, լռում էինք, նայելով, թե գիշերվա խոր մթության մեջ ինչպես են անհետանում դեպի ծովը գնացող մարդկանց սիլուետները։

Նրանք գնում էին, երգում ու ծիծաղում. տղամարդիկ բրոնզագեմ էին, փարթամ ու սև բեղերով և ուսերին հասնող խիտ գանգուրներով, կարճ բաճկոններով ու լայն շալվարներով. կանայք և աղջիկները ուրախ էին, ճկուն, մուգ կապույտ աչքերով, նույնպես բրոնզագեմ։ Նրանց մետաքսե ու սև մազերն արձակված էին, գոլ ու թեթև զեփյուռը խաղում էր դրանց հետ, զրնգացնում մազահյուսերի դրամները։ Քամին սուրում էր լայն, համաչափ ալիքներով, բայց երբեմն ասես ցատկում էր ինչ-որ անտեսանելի առարկայի վրայից, և ուժեղ թափ առնելով, ծածանում էր կանանց մազերը, որոնք ասես նրանց գլուխների շուրջը փոփոխացող ֆանտաստիկ բաշեր լինեին։ Դա կանանց դարձնում էր տարօրինակ ու հեքիաթային։ Նրանք ավելի ու ավելի էին հեռանում մեզանից, իսկ գիշերն ու ֆանտազիան է՛լ ավելի սքանչելիորեն էին պաճուճում նրանց։

Մեկը ջութակ էր նվագում... մի աղջիկ երգում էր մեղմ կոնտրալտոյով, ծիծաղ էր լսվում...

Օդը հագեցած էր ծովի սուր բուրմունքով ու իրիկվանից քիչ առաջ անձրևով առատորեն ողողված գետնի ուժեղ գոլորշիացումներով։ Դեռ հիմա էլ երկնքով մեկ թափառում էին ծվենծվեն, փարթամ, տարօրինակ ուրվագծեր ու գույներ ունեցող ամպերը, որ տեղ-տեղ նոսր էին ինչպես ծխի քուլաները, մթնակապույտ և գորշ երկնագույն էին, տեղ-տեղ էլ խիտ, կոշտ էին ժայռերի փլվածքների նման, փայլատ-սև էին կամ կինամոնագույն։ Նրանց արանքում փաղաքուշ շողում էին երկնքի լուրթ պատառները, որոնք գեղազարդված էին աստղերի ոսկե կայլակներով։ Այդ ամենը,— հնչյուններն ու բույրերը, ամպերն ու մարդիկ,— տարօրեն գեղեցիկ էր ու տրտում, հիասքանչ մի հեքիաթի սկիզբ էր թվում։ Ու ամեն ինչ կարծես դադարեցրել էր իր աճը, մեռնում էր, ձայների աղմուկը մարում էր, ու հեռանալով, տխուր հառաչանքների էր վերածվում։

— Ինչո՞ւ դու չգնացիր նրանց հետ,— գլխի շարժումով հարցրեց պառավ Իզերգիլը։

Ժամանակը բոլորովին կորացրել էր նրան, երբեմնի սևորակ աչքերը անփայլ էին ու արտասվակալում էին։ Նրա չոր ձայնը տարօրինակ էր հնչում, ճռճռում էր, կարծես պառավը ոսկորներով էր խոսում։

— Չե՛մ ուզում,— պատասխանեցի նրան։

— Ի-ի՜հ... դուք, ռուսներդ, ալևոր եք ծնվում։ Շարունակ մռայլ եք, ոնց որ դևերը... մեր աղջիկները վախենում են քեզնից... Բայց չէ՞ որ դու ջահել և ուժեղ ես...

Լուսինը ծագեց։ Նրա սկավառակը մեծ էր, արյունամածկարմիր, թվում էր, թե նա դուրս է եկել այս տափաստանի խորքերից, որը իր կյանքում այնքա՜ն շատ մարդկային միս էր կլանել ու արյուն խմել, ու երևի հենց դրանից էլ պարարտացել էր և առատաձեռն էր դարձել։ Սաղարթի ժանյականման ստվերները ընկան մեզ վրա, ցանցի նման ծածկեցին ինձ ու պառավին։ Մեզնից դեպի ձախ տափաստանով սահեցին ամպերի ստվերները. լուսնի կապտավուն ցոլքով ողողված, նրանք դարձան ավելի թափանցիկ ու պայծառ։

— Տե՛ս, հրե՛ն, Լարրան է գալիս։

Ես նայեցի այնտեղ, ուր ցույց տվեց պառավն իր դողդոջուն, մատները ծուռտիկ ձեռքով, ու տեսա հետևյալը. այնտեղ ստվերներ էին շարժվում, դրանք շատ էին, ու դրանցից մեկը, որ մյուսներից ավելի սև էր ու աչքի ընկնող, իր քույրերից ավելի

արագ էր սահում և ավելի ցածր էր. նա ընկել էր մի կտոր ամպից, որը երկրին ավելի մոտիկ և ավելի արագ էր սահում, քան մյուսները։

— Այնտեղ ոչ ոք չկա,— ասացի ես։

— Դու ավելի կույր ես, քան ես, պառավս։ Նայիր, հրե՛ն, մթին է տալի, վազում է տափաստանով։

Ես էլի՛ նայեցի ու դարձյալ ոչինչ չտեսա, բացի ստվերից։

— Դա ստվեր է։ Ինչո՞ւ դու նրան Լարրա ես անվանում։

— Որովհետև այդ նա է։ Հիմի նա արդեն ուրու է դարձել, դեհ, ժամանակն է։ Նա հազարավոր տարիներ է ապրում, արևը չորացրել է նրա մարմինը, արյունն ու ոսկորները, ու քամին դրանք փոշիացրել է։ Ա՜յ թե աստված ինչ է անում մարդուն նրա հպարտության համար։

— Պատմիր ինձ, թե այդ ինչպես է եղել,— խնդրեցի պառավին, զգալով, որ լսելու եմ տափաստաններում հյուսված սքանչելի հեքիաթներից մեկը։

Ու պառավն ինձ պատմեց այդ հեքիաթը։

«Հազարավոր տարիներ են անցել այն ժամանակից, երբ պատահեց այս բանը։ Հեռո՜ւ-հեռո՜ւ, ծովից դենը, արևածագի տեղում, կա մեծ գետով մի երկիր. այն երկրում ծառի ամեն մի տերև ու բույսի ամեն մի ցողուն այնքան ստվեր են տալի, որքան հարկավոր է մարդուն արևից պաշտպանվելու համար, որն այնտեղ շատ և շատ կիզիչ է։

Ա՜յ թե ինչպես առատաձեռն է այն երկրի հողը։

Այնտեղ մարդկանց մի հզոր ցեղ էր ապրում, նրանք հոտեր էին արածացնում և իրենց ուժն ու արիությունը վատնում գազաններ որսալու վրա, որսից հետո քեֆ էին անում, երգում ու խաղում էին աղջիկների հետ։

Մի անգամ, քեֆի ժամանակ, արծիվը երկնքից իջնելով փախցրեց այդ աղջիկներից մեկին, որ սև-սև մազեր ուներ, քնքուշ էր գիշերվա նման։ Տղամարդիկ նետեր արձակեցին արծվի վրա, բայց այդ խղճուկ նետերը ընկան գետին։ Տղամարդիկ գնացին աղջկան փնտրելու, բայց չգտան։ Ու մոռացան նրան, ինչպես ամեն բան էլ մոռացվում է աշխարհում»։

Պառավը հոգոց հանեց ու լռեց։ Նրա ճռճռան ձայնն այնպես էր հնչում, որ կարծես թե բոլոր մոռացված դարերն էին

արտնջում, որոնք նրա կրծքում մարմնավորվել էին իբրև հուշերի ուրուներ։ Ծովը մեղմիվ արձագանքում էր թերևս իր ափերին ստեղծված հնադարյան առասպելներից մեկի սկզբնավորությանը։

«Բայց քսան տարուց հետո աղջիկն ինքը եկավ, նա հալոմաշ էր եղել ու հյուծվել, իսկ նրա հետ կար մի երիտասարդ, որ գեղեցիկ և ուժեղ էր, ինչպես ինքը քսան տարի առաջ։ Ու երբ աղջիկան հարցրին, թե որտեղ էր եղել, նա պատմեց, որ արծիվը նրան տարել էր լեռները ու այնտեղ ապրում էր իր հետ, որպես իր կնոջ հետ։ Ահա արծվի որդին, իսկ հայրն արդեն չկա. երբ նա սկսեց թուլանալ, վերջին անգամ թռավ, երկինք բարձրացավ ու, թևերը ծալած, այնտեղից ընկավ ասրի սուր քարերին, շարդուփշուր եղավ...

Բոլորը էլ զարմանքով նայում էին արծվի որդուն ու տեսնում էին, որ սա իրենցից ոչնչով էլ լավ չի, միայն թե աչքերը սառն ու հպարտ են, ինչպես թռչունների թագավորի աչքերը։ Ու խոսում էին նրա հետ, իսկ նա, եթե ուզում էր, պատասխանում էր, կամ լռում, իսկ երբ եկան ցեղի ավագները, նա դրանց հետ խոսեց ինչպես իրեն հավասարների հետ։ Այս բանը վիրավորեց նրանց, ու ավագները նրան անվանելով անպետք ու բութ մի նետ, ասացին, որ իրենց հարգում, հնազանդվում են նրա պես հպարտները, նրանից երկու անգամ մեծ մարդիկ։ Իսկ նա, համարձակորեն նայելով նրանց, պատասխանեց, որ չկան այնպիսիները, ինչպես ինքն է. ու եթե բոլորն էլ հարգում են այդ ավագներին, ապա ինքը չի ուզում այդ անել։ Օ՜... այն ժամանակ արդեն բոլորովին բարկացան ավագները։ Բարկացան ու ասացին.

— Նա տեղ չունի մեր մեջ։ Ուր ուզում է, թող գնա։

Նա ծիծաղեց ու գնաց, ուր որ ուզում էր,— մի գեղեցիկ աղջկա մոտ, որը ակնապիշ նայում էր նրան. գնաց նրա մոտ, մոտեցավ ու գրկեց նրան։ Աղջիկը նրան դատապարտող ավագներից մեկի դուստրն էր։ Ու թեև տղան գեղեցիկ էր, աղջիկը նրան գեն հրեց, որովհետև վախենում էր հորից։ Աղջիկը դեն հրեց նրան և ուզեց հեռանալ, իսկ տղան խփեց նրան, ու երբ աղջիկն ընկավ, ասրը գրեց նրա կրծքին, այնպես, որ աղջկա ջուրթերից արյունը ցայտեց դեպի երկինք. աղջիկը հեծկլտաց, օձի պես գալարվեց ու մեռավ։

Երկյուղը բռնեց բոլոր նրանց, ովքեր տեսան այդ. առաջին անգամն էր, որ նրանց ներկայությամբ այդպես սպանում էին կնոջը։ Ու երկար լռում էին բոլորը, նայելով աղջկան, որ ընկած էր բաց աչքերով ու արյունաշաղախ բերանով ու տղային, որ կանգնած էր աղջկա կողքին, բոլորի դեմ մենակ, ու հպարտ էր, չէր ծռում գլուխը, ասես պատիժ էր սպասում։ Հետո, երբ խելքի եկան, բռնեցին նրան, կապոտեցին ու այդպես էլ թողին, գտնելով, որ անմիջապես սպանելը քիչ է և իրենց չի բավարարիս։

Գիշերն աճում էր ու ամրապնդվում, լցվում տարօրինակ, հուշիկ հնչյուններով։ Տափաստանում տխուր սվսվում էին գետնասկյուռները, խաղողի վազերի սաղարթում անդադար բզզում էին բզեզները, սաղարթը հառաչում էր ու շրշում, լուսնի լրիվ սկավառակը, որ սկզբում արյունամած-կարմիր էր, այժմ, հետզհետե հեռանալով երկրից, դալկանում էր ու տափաստանի վրա ավելի ու ավելի առատորեն սփռում իր կապտավուն լույսը...

«Եվ ահա նրանք հավաքվեցին, որ միտք անեն, թե ինչ պատիժ տան, որ արժանի լինի հանցագործությանը... Ուզում էին ձիերով պատառոտել նրան. այդ է՛լ նրանց քիչ էր թվում. մտածում էին միանգամից մեկական նետ արձակել նրա վրա, բայց դրանից էլ հրաժարվեցին. առաջարկում էին վառել նրան, բայց խարույկի ծուխը չէր թողնի, որ տեսնեին նրա տանջանքները. շատ բան էին առաջարկում, բայց չէին գտնում մի այնպիսի պատիժ, որ դուր գար բոլորին։ Իսկ տղայի մայրը ծունկ էր շոքել նրանց առաջ և լռում էր, ոչ արցունքներ և ոչ էլ խոսքեր էր գտնում գութ աղերսելու համար։ Երկար խոսում էին նրանք, և ահա մի իմաստուն երկար մտածելուց հետո ասաց.

— Հարցնենք նրան, թե ինչո՞ւ արեց այդ։

Այդ մասին հարցրին տղային։ Նա ասաց.

— Արձակեցեք իմ կապանքները։ Ես կապված չեմ խոսի։

Իսկ երբ նրա կապանքներն արձակեցին, նա հարցրեց.

— Ի՞նչ եք ուզում,— այնպես հարցրեց, որ կարծես թե նրանք ստրուկներ լինեին...

— Դու լսեցիր...— ասաց իմաստունը։

— Ինչո՞ւ պետք է ես ձեզ բացատրեմ իմ արարքները։

— Որ մեզ համար հասկանալի լինես։ Դո՛ւ, հպա՛րտ տղա, լսի՛ր։ Միևնույն է, դու հո մեռնելու ես... Ուրեմն թո՛ղ որ մենք հասկանանք այն, ինչ որ դու արել ես։ Մենք կենդանի ենք մնա-

լու, մեզ համար օգտակար է ավելի շատ բան գիտենալ, քան գիտենք...

— Լավ, կասեմ, թեև ինքս էլ գուցե սխալ եմ հասկանում այն, ինչ որ պատահել է։ Ինձ թվում է, որ ես աղջկան սպանեցի այն պատճառով, որ նա ինձ վռնդեց... Իսկ նա ինձ հարկավոր էր։

— Բայց նա քոնը չէ,— ասացին ավագները։

— Մի՞թե դուք օգտվում եք միայն նրանից, ինչ որ ձերն է։ Ես տեսնում եմ, որ ամեն մարդ ունի միայն լեզու, ձեռներ ու ոտներ... Բայց նա տիրում է կենդանիներին, կանանց, հողին... և ուրիշ շատ բաների։

Նրան ասացին, որ այն ամենի համար, ինչ որ մարդը վերցնում է, հատուցում է իր ունեցածով,— իր խելքով և ուժով, երբեմն էլ կյանքով։ Իսկ տղան պատասխանեց, թե ուզում է պահպանել իրեն ամբողջովին։

Երկար խոսեցին նրա հետ ու վերջապես տեսան, որ նա իրեն առաջինն է համարում աշխարհում, իրենից բացի ոչինչ չի տեսնում։ Բոլորն էլ նույնիսկ սարսափեցին, երբ հասկացան, թե նա ինքն իրեն ինչպիսի մենակության է դատապարտել։ Նա ոչ ազգ ու տակ ուներ, ոչ մայր, ոչ անասուններ, ոչ կին, ու չէր էլ ուզում այդ բոլորը։

Երբ մարդիկ տեսան այդ, նորից սկսեցին դատողություններ անել, թե ինչպես պատժեն նրան։ Բայց այս անգամ նրանք երկար չխոսեցին, իմաստունը, որ մյուսներին չէր խանգարում դատողություններ անելու, ասաց.

— Սպասեցե՛ք, կա՛ արժանի պատիժ։ Դա մի սարսափելի պատիժ է, որ հազար տարի է՛լ ձեր մտքովը չի անցնի։ Դրա պատիժը հենց իր մեջ է։ Թողեք դրանք, թող ազատ լինի։ Ահա դրա պատիժը։

Եվ այստեղ մեծ բան կատարվեց։ Երկնքից պայթեց որոտը, թեպետ այնտեղ ամպեր չկային։ Երկնային ուժերը հաստատեցին իմաստունի խոսքը։ Բոլորն էլ երկրպագեցին ու ցրվեցին։ Իսկ երիտասարդը, որը հիմա ստացել էր Լարրա անունը, որ նշանակում է մերժված, վռնդված,— այդ երիտասարդը բարձր ծիծաղում էր իրեն լքած մարդկանց հետևից, ծիծաղում էր՝ մնալով մենակ, ազատ, ինչպես իր հայրը։ Բայց նրա հայրը մարդ չէր... իսկ սա մարդ էր։ Եվ ահա սկսեց ապրել ազատ, ինչպես թռչուն։ Նա գալիս էր մարդկանց մոտ ու փախցնում էր անա

սուններ, աղջիկներ, ինչ որ ուզենար։ Նրա վրա նետեր էին արձակում, բայց նետերը չէին կարող խոցել նրա մարմինը, որ պատած էր բարձրագույն պատժի անտեսանելի ծածկոցով։ Նա ճարպիկ էր, գիշատիչ, ուժեղ, դաժան ու մարդկանց դեմ առ դեմ չէր հանդիպում։ Միայն հեռվից էին նրան տեսնում։ Եվ նա, միայնակ, երկար ժամանակ այդպես պտույտ էր գալիս մարդկանց մոտ, շա՛տ երկար ժամանակ, տասնյակ ու տասնյակ տարիներ։ Բայց ահա մի անգամ նա մոտեցավ մարդկանց, ու երբ վերջիններս հարձակվեցին նրա վրա, տեղից չշարժվեց ու բոլորովին էլ ցույց չտվեց, թե պաշտպանվելու է։ Այն ժամանակ մարդկանցից մեկը գլխի ընկավ և բարձրաձայն գոչեց.

— Ձեռք չտա՛ք դրան։ Ուզում է մեռնել։

Ու բոլորն էլ կանգ առան, չցանկանալով թեթևացնել այն մարդու վիճակը, որը նրանց չարիք էր պատճառել, չուզեցին սպանել նրան։ Կանգ առան ու ծիծաղեցին նրա վրա։ Իսկ նա, լսելով այդ ծիծաղը, դողում էր ու ձեռները տանելով կրծքին, դրա վրա ինչ-որ բան էր փնտրում։ Ու հանկարծ նա մի քար վերցնելով, հարձակվեց մարդկանց վրա։ Բայց մարդիկ խույս տալով նրա հարվածներից, իրենք ոչ մի հարված չհասցրին, ու երբ նա հոգնեց, թախծալի ճիչով ընկավ գետնին, նրանք հեռացան ու նայեցին տղային։ Ահա նա վեր կացավ ու վերցնելով իր հետ մղած կովում մեկի կորցրած դանակը, դրանով խփեց իր կրծքին։ Բայց դանակը կոտրվեց, կարծես թե քարի էր խրփվել։ Ու նորից նա ընկավ գետնին, գլուխը երկար խփում էր դրան։ Բայց գետինը խույս էր տալիս նրանից, նրա գլխի հարվածների տակ փոսեր էին առաջանում։

— Նա չի կարող մեռնել,— ուրախացած ասացին մարդիկ։

Ու թողնելով նրան, հեռացան։ Նա պառկեց մեջքի վրա ու տեսավ, որ վերևում, երկնքում սև կետերի նման սուրում էին արծիվները։ Նրա աչքերում այնքան թախիծ կար, որ դրանով կարելի էր թունավորել աշխարհիս բոլոր մարդկանց։ Այսպես, այն ժամանակից նա մնաց մենակ, ազատ, սպասելով մահվան։ Եվ ահա նա շրջում է, շրջում ամենուրեք... Տեսնո՞ւմ ես, նա արդեն ուրու է դարձել ու միշտ էլ այդպես կմնա։ Նա ոչինչ չի հասկանում,— ոչ մարդկանց խոսքերը, ոչ էլ նրանց արարքները։ Ու շարունակ փնտրում է մի բան, շրջում է ու շրջում... Նրա համար կյանք չկա, մահն էլ չի ժպտում նրան։ Նրա համար տեղ

չկա մարդկանց մեջ... Այ թե ինչպես է մարդը տուժել իր հպարտության համար»։

Պառավը հոգոց հանեց, լռեց, ու նրա գլուխը իջնելով կրծքին, մի քանի անգամ տարօրինակ կերպով օրորվեց։

Ես նայեցի նրան։ Ինձ թվաց, որ քունը հաղթահարում է պառավին։ Ու չգիտեմ ինչու ես սաստիկ խղճացի նրան։ Իր պատմածի վերջավորությունը նա տալիս էր վերամբարձ, սպառնական տոնով, բայց և այնպես նրա ձայնի մեջ ինչ-որ երկչոտ, ստրկական նոտա էր հնչում։

Ծովափում սկսեցին երգել, տարօրինակ էր այդ երգը։ Սկզբում հնչեց մի կոնտրալտո, երգեց երկու-երեք նոտա, ու հնչեց մի ուրիշ ձայն, որ երգը նորից էր սկսում, իսկ առաջին ձայնը շարունակ հեղվում էր ու հեղվում...— երկրորդը, չորրորդը, հինգերորդը երգել էին սկսում նույն կարգով։ Ու հանկարծ տղամարդկանց մի շարք ձայներ էլի սկզբից երգեցին նույն երգը։

Կանանց յուրաքանչյուր ձայնը բոլորովին առանձին էր հընչում, դրանք բոլորն էլ գույնզգույն առվակներ էին թվում, ու կարծես իջնելով վերևից, դար ու փոսերից, թռչկոտելով ու զրընգալով, լցվելով տղամարդկանց ձայների թավ, դեպի վեր հեղվող ալիքի մեջ, ընկղմվում էին դրանում, դուրս պրծնում դրանից, խլացնում դրան, ու կրկին մաքուր և ուժեղ հնչելով, մեկը մյուսի ետևից դեպի վեր էին թռչում։

Ձայների միջից չէր լսվում ալիքների աղմուկը...

II

— Դու լսե՞լ ես, որ մի որևէ տեղ այդպես երգեն,— հարցրեց Իզերգիլը՝ բարձրացնելով գլուխը. նա ժպտաց անատամ բերանով։

— Չեմ լսել։ Երբեք չեմ լսել...

— Ու չես է՛լ լսի։ Մենք սիրում ենք երգել։ Միայն գեղեցիկները կարող են լավ երգել,— գեղեցիկները, որոնք սիրում են ապրել։ Մենք սիրում ենք ապրել։ Տե՛ս, է, մի՞թե օրվա ընթացքում չեն հոգնել այն մարդիկ, որոնք երգում են այնտեղ։ Արևածագից մինչև մայրամուտը աշխատել են, լուսինը ծագեց, ու արդեն երգում են։ Այն մարդիկ, որոնք ապրել չգիտեն, արդեն կպառկեին քնելու։ Այն մարդիկ, որոնց համար սիրելի է կյանքը, ահա երգում են։

— Բայց առողջությունը...— փորձեցի առարկել ես։

— Առողջությունը միշտ էլ կհերիքի ապրելու համար։ Առողջությո՞ւնը։ Մի՞թե դու, փող ունենալով, չէիր ծախսի այն։ Առողջությունը նույն ոսկին է։ Գիտե՞ս ես ինչ էի անում, երբ ջահել էի։ Արևածագից մինչև մայրամուտը, համարյա վեր չկենալով, գործեր էի գործում։ Ես արևի ճառագայթի պես աշխույժ էի, և ահա պետք է նստեի անշարժ, ոնց որ քար։ Ու այնքան էի նստում, որ հետո շարժվելիս բոլոր ոսկորներս ճռճռում էին։ Իսկ երբ գալիս էր գիշերը, վազ էի տալի սիրածս մարդու մոտ, համբուրվում էի նրա հետ։ Ու այսպես երեք ամիս գնում էի, քանի դեռ սեր կար. այդ ժամանակվա բոլոր գիշերները նրա մոտ էի լինում։ Եվ ահա թե ինչ օրի եմ հասել, ցամաքել է արյունս։ Բայց որքա՜ն սիրեցի, որքա՜ն համբույրներ առա ու տվի...

Ես նայեցի պառավի դեմքին։ Նրա սև աչքերն այնուամենայնիվ անփայլ էին, հիշողությունը նրանց չէր աշխուժացնում։ Լուսինը լուսավորում էր նրա շոր, ճաքճքված շուրթերը, սուր կզակը, ճերմակած մազերը ու կնճռոտ քիթը, որ ծռված էր բվի քթի պես։ Այտերի փոխարեն կային սև փոսեր և դրանցից մեկի վրա ընկել էր գլխին փաթաթած կարմիր լաթի տակից թափվող մոխրագույն-ալեզարդ մազերի մի փունջ։ Դեմքի, պարանոցի ու ձեռների մաշկն ամբողջովին կնճռոտված էր, ու պառավ Իզերգիլի յուրաքանչյուր շարժումից կարելի էր սպասել, որ այդ շոր մաշկը ամբողջովին կպատառոտվի, ծվեն-ծվեն կլինի ու իմ առջև կմնա մի մերկ կմախք՝ մարած, սև աչքերով։

Նա վերստին սկսեց պատմել իր ճռճռան ձայնով.

«Ես մորս հետ ապրում էի Ֆայլմիի մեջ ձակայքում, Բիրլատի[1] ափին. տասնհինգ տարեկան էի, երբ այն երիտասարդը եկավ մեր գյուղը։ Նա բարձրահասակ էր, ճկուն, սև բեղերով, ուրախ։ Նստել է նավակին ու զի՛լ ձայնով գոչում է դեպի մեր պատուհանը. «Հե՛յ, գինի չե՞ք ունենա... ուտելու բան»։ Ես նայեցի պատուհանից, հացենիների ճյուղերի արանքից, ու ի՞նչ եմ տեսնում. գետն ամբողջովին կապուտակել է լուսնից, իսկ նա սպիտակ շապկով ու լայն լաթագոտիով, որի ծայրերը կախվել էին կողքից, կանգնել է մի ոտը նավակի, մյուսը ափի վրա։ Օրորվում է, ինչ-որ երգ է երգում։ Տեսնելով ինձ, ասում է՝

[1] Բիրլատ կամ Բիրլադ — գետ է Ռումինիայում։

«Ա՛յ թե ինչպիսի գեղեցկուհի է ապրում այստեղ... Ես այդ չգիտեի»։ Կարծես թե մինչև ինձ տեսնելը նա ճանաչում էր բոլոր գեղեցկուհիներին։ Ես նրան գինի տվի ու խոզի եփած միս... Ջորս օրից հետո էլ ինքս ամբողջովին հանձնվեցի... Գիշերները ես ու նա շարունակ զբոսնում էինք նավակով։ Նա գալիս էր նավակով ու կամացուկ սուլում գետնասկյուռի պես, իսկ ես պատուհանից գետն էի ընկնում ձկան պես։ Ու գնում էինք... Նա Պրուտ գետից ձուկ որսող էր ու հետո, երբ մայրս ամեն բան իմացավ ու ծծեց ինձ, համոզում էր իր հետ գնալ Դոբրուջա ու ավելի հեռու, Դանուբի կողմերը։ Բայց այն ժամանակ նա ինձ այլևս դուր չէր գալիս. միայն երգում էր ու համբուրվում, ուրիշ ոչինչ։ Այդ արդեն ձանձրալի էր։ Այն ժամանակ գուցուլները[1] խմբով ման էին գալի այն վայրերում, ու այստեղ սիրածներ ունեին... Նրանք ուրախ էին ապրում։ Մի որևէ աղջիկ սպասում ու սպասում է իր կարպատյան կտրիճին, կարծում է, թե նա արդեն բանտումն է կամ սպանվել է տուրուդմբոցում, ու հանկարծ նա մենակ կամ թե երկու-երեք ընկերով գալիս է սիրածի մոտ, ասես երկնքից է ընկնում։ Թանկ-թանկ նվերներ է բերում, չէ՞ որ ամեն ինչ հեշտությամբ էր ընկնում նրանց ձեռքը։ Ու քեֆ է անում սիրածի մոտ, նրանով պարծենում իր ընկերների առաջ։ Իսկ սիրածին այդ դուր է գալիս։ Ես էլ գուցուլ ունեցող մի ընկերուհուս խնդրեցի նրանց ցույց տալ ինձ... Ո՞նց էր ընկերուհուս անունը։ Մոռացել եմ... է՛հ, հիմի սկսել եմ ամեն ինչ մոռանալ։ Շա՛տ ժամանակ է անցել այն օրերից, էլ ո՞նց հիշես։ Հա՛, ընկերուհիս ինձ ծանոթացրեց մի երիտասարդի հետ։ Սա գեղեցիկ էր... Շեկլիկ էր, բեղերն էլ, մազերն էլ շեկ էին։ Հրաշեկ գլուխ։ Ու տխուր էր նա, երբեմն սիրալիր, երբեմն էլ գազանի պես մռնչում էր ու կռվում։ Մի անգամ խփեց երեսիս... Իսկ ես կատվի նման թռա նրա կրծքին ու կծեցի թուշը... Այն ժամանակից նրա թշի վրա փոս մնաց, ու նա սիրում էր, երբ ես համբուրում էի այդ փոսը...»։

— Բա ձկնորսը ի՞նչ եղավ,— հարցրի ես։

— Ձկնո՞րսը։ Նա... Նա միացավ գուցուլներին։ Սկզբում շարունակ հորդորանքներ էր կարդում գլխիս և սպառնում էր ջուրը գցել, իսկ հետո՝ ոչինչ, միացավ նրանց և ուրիշ սիրած

[1] Գուցուլներ — ուկրաինական լեռնաբնակ մի ցեղ արևելյան Կարպատներում։ (Մ. Թ.)։

գտավ... Նրանց երկուսին էլ,— ձկնորսին և այն գուցուլին,— կախաղան բարձրացրին։ Ես գնացի տեսնելու, թե ինչպես էին նրանց կախում։ Դա Դորբուջայում էր։ Ձկնորսը դեպի կախաղան էր գնում լալով և գույնը գցած, իսկ գուցուլը ծխում էր։ Քայլում է ու ծխում, ձեռները դրպանները դրած, մի բեղը ընկել է ուսին, մյուսը կախվել կրծքին։ Տեսավ ինձ, հանեց ծխամորճը ու գոչեց՝ «Մնաս բարով»... Ես մի ամբողջ տարի խղճում էի նրան։ Էհ, դա ա՛յն ժամանակ պատահեց, երբ նրանք ուզում էին հեռանալ դեպի Կարպատյան լեռները, իրենց տեղերը։ Հրաժեշտ տալու համար հյուր գնացին մի ռումինի մոտ, այնտեղ էլ բռնեցին նրանց։ Բռնեցին երկու հոգու, մի քանիսին սպանեցին, մնացածները փախան... Այնուամենայնիվ հետո ռումինացուն հատուցում տվին... ագարակը, աղացն ու ամբողջ հացը վառեցին։ Նա մուրացիկ դարձավ։

— Այդ դո՞ւ արեցիր,— հետաքրքրվելով հարցրի ես։

— Գուցուլները շատ բարեկամներ ունեին, միայն ես չէի... Ով որ նրանց լավագույն բարեկամն էր, նա էլ կատարեց նրանց մեռելոցը...

Ծովի ափին արդեն լռեց երգը, ու հիմա պառավին արձագանքում էր միայն ծովի ալիքների աղմուկը. համաչափ, խռովահույզ աղմուկը խռովահույզ կյանքի պատմության պանծալի արձագանքն էր։ Գիշերն ավելի ու ավելի էր մեղմանում, ու հետզհետե է՛լ ավելի էր պայծառանում լուսնի կապտավուն փայլը, իսկ գիշերվա անտեսանելի բնակիչների անհանգիստ կյանքի անորոշ ձայները հանդարտվում էին, չքանում ալիքների սաստկացող աղմուկում... որովհետև ուժեղանում էր քամին։

— Ես մի թուրքի է՛լ էի սիրում։ Եղա նրա հարեմում, Սկյութարիում։ Մի ամբողջ շաբաթ ապրեցի, ոչինչ... Բայց ձանձրացա... միշտ կանայք ու կանայք... Ութ կին ուներ նա... ամբողջ օրը ուտում են, քնում ու հիմար խոսքեր ասում... Կամ հայհոյում են, կչկչում հավերի նման... Նա, այդ թուրքը, արդեն հասակով էր։ Համարյա սպիտակել էր, ծանրաբարո էր ու հարուստ։ Իշխանավարի էր խոսում... Աչքերը սև էին... Շիտակ աչքերը... Հենց հոգու մեջ էին նայում։ Նա շատ էր սիրում աղոթել։ Ես նրան Բուքուրեշտում տեսա... Ման է գալի շուկայում ոնց որ արքա, ու նայում այնպե՛ս լուրջ, լուրջ։ Ես ժպտացի նրան։ Նույն օրվա երեկոյան փողոցում ինձ բռնեցին ու տարան նրա մոտ։ Նա սանդալներ ու արմավենի էր ծախել ու եկել

Բուքուրեշտ ինչ-որ բան գնելու։ «Գալի՞ս ես ինձ մոտ»,— ասում է։ «Այո, այո, գալիս եմ»։—«Լավ»։ Ու ես մեկնեցի։ Հարուստ էր նա, այդ Թուրքը։ Մի որդի ուներ, սև, ճարպիկ մի տղա... Տանվեց տարեկան էր։ Նրա հետ էլ ես փախա Թուրքից... Փախա Բուլղարիա, Լոմ-Պալանկա... Այնտեղ մի բուլղարուհի դանակով խփեց կրծքիս իր փեսացուի Թե ամուսնու համար — չեմ հիշում։

Երկար ժամանակ հիվանդ էի մի վանքում։ Կուսանոց էր։ Ինձ խնամում էր մի աղջիկ, լեհուհի. հիշում եմ, Արցեր-Պալանկայի մոտ գտնվող մի ուրիշ վանքից նրա մոտ էր գալի Եղբայրը, աբեղա էր նա... Ոնց որ ճիճու լիներ... շարունակ սողում էր իմ առաջ... Ու երբ առողջացա, նրա հետ փախա... իրենց Լեհաստանը։

— Կա՛ց... Բա ո՞ւր մնաց փոքրիկ Թուրքը։

— Տղա՞ն։ Մեռավ նա, այն տղան։ Տան կարոտից էր, Թե սիրուց... միայն Թե սկսեց հյուծվել, ոնց որ չամրապնդված ծառ, որի վրա չափազանց շատ արև է ընկնում... այնպես էլ տկարանում էր, հյուծվում... Հիշում եմ, պառկել է, ամբողջովին սփրթնել ու կապուտակել, ոնց որ սառույցը, բայց իր մեջ դեռ վառվում է սերը... Ու շարունակ խնդրում է կռանալ ու համբուրել իրեն... Ես սիրում էի նրան, հիշում եմ, շատ էի համբուրում... Հետո նա արդեն բոլորովին տկարացավ, համարյա չէր շարժվում։ Պառկած է, ու ոնց որ աղքատը ողորմություն ուզի, ինձ խնդրում է պառկել իր կողքին ու տաքացնել իրեն։ Ես պառկում էի։ Արի ու պառկի նրա հետ... Նա իսկույն բռնկվում է ամբողջովին։ Մի անգամ, երբ ես արթնացա, նա արդեն սառն էր... մեռած... Ես լացի նրա վրա։ Ո՞վ գիտե, գուցե Թե ե՛ս ջղանեցի նրան։ Այդ ժամանակ ես արդեն երկու անգամ մեծ էի նրանից։ Ու այնպես ուժե՛ղ էի, լիքը... Իսկ նա ի՛նչ էր որ. երեխա էր...

Պառավը հառաչեց և,— ես այդ առաջին անգամ տեսա,— երեք անգամ խաչակնքեց, չոր շուրթերով ինչ-որ շշնջաց։

— Է՛, դու մեկնեցիր Լեհաստան, հետո՞,— Թելադրեցի նրան։

— Հա՛... Այն փոքրիկ լեհի հետ։ Նա ծիծաղելի և ստոր մարդ էր։ Երբ նրան կին էր հարկավոր, նա որձ կատվի նման քսվում էր ինձ, և լեզվիցն ուղղակի մեղր էր հոսում, իսկ երբ ինձ չէր ուզում, ձաղկում էր ինձ խոսքերով, ոնց որ մտրակով։

Մի անգամ մենք գնում էինք գետի ափով, և ահա նա ինձ մի հպարտ, վիրավորական խոսք ասաց։ Օ-օ՜, ես ո՜նց բարկացա։ Տաքացա կպրի նման։ Ձեռքերիս մեջ առա նրան ու ոնց որ երեխայի,— նա փոքրամարմին էր,— վեր բարձրացրի ու այնպես սեղմեցի կողերը, որ նա ամբողջովին կապուտակեց։ Ես Թափ առա ու նրան ափից շպրտեցի գետը։ Նա գոռում էր։ Ծիծաղելի էր գոռում։ Ես վերևից նայում էի նրան, իսկ նա Թպրտում էր այնտեղ, ջրի մեջ։ Ես Թողի ու հեռացա։ Ու էլ չհանդիպեցի նրան։ Ես դրանով երջանիկ էի. հետո երբեք չէի հանդիպում նրանց, որոնց մի ժամանակ սիրել էի։ Դրանք վատ հանդիպումներ են. միևնույն է, Թե մեռածի հետ հանդիպես։

Պառավը հոգոց հանեց ու լռեց։ Ես պատկերացնում էի այն մարդկանց, որոնց մասին պատմում էր նա։ Ահա հրավարս, երկարաբեղ գուցուլը գնում է մեռնելու՝ հանգիստ ծխելով ծխամորճը։ Նա հավանորեն սառն, լուրթ աչքեր ուներ, որոնք ամեն ինչի վրա էլ խորաղնին ու շեշտակիորեն էին նայում։ Ահա նրա կողքին Պրուտ գետի սև-բեղավոր ձկնորսը. լալիս է նա, չի ցանկանում մեռնել, ու մահացու տխրությունից գունատված նրա դեմքի վրա մարել են ուրախ աչքերը, և արցունքներով Թրջված բեղերը տխուր կախվել են ծուված բերանի անկյուններից։ Ահա նա, ծերուկ, ծանրաբարո Թուրքը,— հավանորեն ֆատալիստ ու բռնակալ,— ու նրա կողքին իր որդին, Արևելքի գունատ ու Թույլ ծաղիկը՝ համբույրներով Թունավորված։ Ահա և սնափառ լեհը, նրբաբարո ու դաժան, պերճախոս ու սառնասիրտ... Ու նրանք բոլորը լոկ զժգույն ուրուներ են, իսկ այն կինը, որին նրանք համբուրում էին, կողքիս նստել է կենդանի, բայց ժամանակի ընթացքում չորացած, անմարմին, անարյուն, անիրձ սրտով, անկրակ աչքերով, նույնպես համարյա ուրու։

Պառավը շարունակեց.

— Լեհաստանում ծանրացավ իմ դրությունը։ Այնտեղ սառն ու կեղծավոր մարդիկ են ապրում։ Ես չգիտեի նրանց օձի լեզուն։ Շարունակ ֆշշում են... Ի՞նչ են ֆշշում։ Այդ օձի լեզուն աստված է տվել նրանց, որովհետև նրանք կեղծավոր են։ Այն ժամանակ ես գնում էի, չգիտենալով Թե ուր, ու տեսնում էի, Թե ինչպես նրանք պատրաստվում էին բունտ բարձրացնելու ձեր, ռուսների դեմ։ Հասա Բոխնյա քաղաքը։ Մի ջհուդ գնեց ինձ. ոչ Թե իր համար գնեց, այլ ինձ ծախելու համար։ Ես համաձայ-

նեցի։ Ապրելու համար պետք է կարողանալ որևէ բան անել։ Ես ոչինչ չէի կարողանում անել և դրա համար էլ ծախում էի ինքս ինձ։ Բայց ես այն ժամանակ մտածեցի, որ եթե մի քիչ փող ճարեմ Բիրլադ վերադառնալու համար, կփշրեմ շղթաները, որքան էլ դրանք ամուր լինեն։ Ու ապրում էի այնտեղ։ Հարուստ պաներ էին գալի ու քեֆ էին անում ինձ մոտ։ Այդ նրանց վրա թանկ էր նստում։ Նրանք ինձ համար կռվում էին, կատաղություն հասնում։ Մեկը երկար ժամանակ աշխատում էր ինձ իր ձեռքը գցել և մի անգամ ահա թե ինչ արեց. եկավ, ծառան էլ հետևից, ձեռքին մի պարկ։ Պանը վերցրեց այդ պարկը ու շուռ տվեց գլխիս վերևից։ Ոսկե դրամները խփվեցին գլխիս, ու ես հրճվանքով լսեցի դրանց զնգոցը, երբ դրանք ընկան հատակի վրա։ Բայց ես այնուամենայնիվ վռնդեցի պանին։ Նա հաստ, պլպլան դեմք ուներ, փորն էլ ոնց որ մի մեծ բարձ լիներ։ Նա կուշտ խոզի պես էր նայում։ Այո, ես նրան վռնդեցի, թեպետև նա ասում էր, որ ծախել է իր բոլոր հողերը, տները և ձիերը, որ ոսկի թափի ինձ վրա։ Ես այն ժամանակ սիրում էի մի արժանավոր պանի, որի երեսը կտրատված էր։ Ամբողջ երեսը խաչաձև թրատված էր թուրքերի թրերով,— թուրքերի դեմ նա դրանից կարճ ժամանակ առաջ կռվել էր հույների համար։ Ա՛յ թե մարդ... Հույները նրա ինչի՞ն էին պետք, երբ ինքը լեհ էր։ Իսկ նա գնացել, նրանց հետ միասին կռվել էր նրանց թշնամիների դեմ։ Նրան թրատել էին, հարվածներից դուրս էր ընկել մի աչքը ու ձախ ձեռքի երկու մատները կտրվել էին... Հույները նրա ինչի՞ն էին պետք, երբ նա լեհ էր։ Ա՛յ թե ինչ. նա սխրագործություններ էր սիրում։ Իսկ երբ մարդը սխրագործություններ է սիրում, միշտ էլ կարողանում է դրանք կատարել ու դրա համար տեղ կգտնի։ Կյանքում, գիտե՞ս, միշտ էլ տեղ կա սխրագործությունների համար։ Այն մարդիկ, որոնք չեն գտնում այդ տեղը, սոսկ ծույլեր կամ վախկոտներ են, կամ չեն հասկանում կյանքը, որովհետև եթե մարդիկ հասկանային կյանքը, ամեն մեկը կուզենար իր մահից հետո հիշատակ թողնել կյանքում։ Այդ դեպքում կյանքը մարդկանց չէր կլանի առանց հետքի... Օ՜, այդ թրատվածը լավ մարդ էր։ Որևէ բան անելու համար նա պատրաստ էր գնալու մինչև աշխարհի ծայրը։ Հավանորեն ձերոնք նրան սպանեցին բունտի ժամանակ։ Իսկ դուք ինչո՞ւ էիք գալիս մաջարներին ջարդելու։ Դեհ, դեհ, սուս արա...

Հրամայելով, որ ես լռեմ, պառավ Իզերդիլը հանկարծ ինքը լռեց, մտածմունքի մեջ ընկավ։

— Ես ճանաչում էի նաև մի մաջարի։ Մի անգամ նա հեռացավ ինձանից,— դա ձմռանն էր,— ու միայն գարնանը, երբ ձյունը հալվեց, նրան գտան դաշտում, գլուխը գնդակով ծակված։ Ահա՛ թե ինչ։ Տեսնո՞ւմ ես, սերը ավելի շատ մարդ է կործանում, քան ժանտախտը. եթե հաշվես, պակաս չի լինի... Ի՞նչ էի ասում. հա՛, Լեհաստանի մասին... Այո, այնտեղ ես խաղացի իմ վերջին խաղը։ Հանդիպեցի մի շլյախտիչի... Ա՛յ թե գեղեցիկ էր, հա՛-ա։ Գեղեցիկ էր այդ սատանան։ Իսկ ես արդեն պառավ էի, ա՛խ, պառավ էի։ Քառասուն տարեկան կլինեի՞։ Անշուշտ կլինեի։ Իսկ նա և՛ հպարտ էր, և՛ մենք, կանայք, երես էինք տալի նրան։ Ինձ համար թանկ էր նա... Այո։ Նա ուզում էր միանգամից, հենց այնպես, նվաճել ինձ, բայց ես անձնատուր չեղա։ Ես երբեք և ոչ ոքի ստրկուհին չեմ եղել։ Ջհուդի հետ արդեն հաշիվս վերջացրել էի, շատ փող էի տվել նրան... Արդեն Կրակովում էի ապրում։ Այն ժամանակ ես ամեն ինչ ունեի — թե՛ կառք, թե՛ ոսկի և թե՛ ծառաներ... Նա, այն հպարտ դևը, գալիս էր ինձ մոտ ու միշտ ուզում էր, որ ես ինքս ընկնեմ իր գիրկը։ Մենք վեճի բռնվեցինք... Հիշում եմ, ես նույնիսկ հալումաշ էի լինում դրանից։ Դա երկար տևեց... Ես իմ ուզածն արեցի. նա ծնկաչոք խնդրում էր ինձ... Հենց որ իր ուզածն արեց, իսկույն թողեց ինձ։ Այն ժամանակ ես հասկացա, որ պառավել էի... Օ՜, այդ դառն էր ինձ համար։ Որքա՜ն դառն էր... Ախր ես սիրում էի նրան, այդ սատանային... Իսկ նա, հանդիպելով ինձ, ծիծաղում էր... ստոր մարդ էր նա։ Ուրիշների մոտ է՛լ էր ծիծաղում ինձ վրա։ Ես այդ գիտեի։ Է՛հ, ծանր էր վիճակս։ Բայց նա հանդիպում էր ինձ հետ, ու ես այնուամենայնիվ հաճույքով էի նայում նրան։ Ու երբ նա գնաց ձեր, ռուսների դեմ կռվելու, իմ վիճակը վատացավ։ Ջսպում էի ինձ, բայց չէի կարողանում ինքս ինձ հաղթահարել... Ու որոշեցի գնալ նրա ետևից։ Նա Վարշավայի մոտ էր, անտառում։

Երբ տեղ հասա, իմացա, որ ձերոնք արդեն ջարդել են նրանց... և նա գերության մեջ է մոտիկ մի գյուղում։

«Ուրեմն էլ չեմ տեսնի նրան»,— մտածեցի ես։ Բայց ուզում էի տեսնել։ Սկսեցի ջանք թափել, որ տեսնեմ... Մուրացիկ կնոջ շոր հագա, կաղ ձևացա, երեսս կապեցի ու գնացի այն գյուղը, ուր գտնվում էր նա։ Ամենուրեք — կազակներ ու զինվորներ...

Այնտեղ գտնվելը թանկ նստեց ինձ վրա։ Իմացա, թե լեհերը որտեղ են նստած, ու տեսնում եմ, որ դժվար է այնտեղ ընկնել։ Իսկ այդ հարկավոր էր ինձ։ Եվ ահա գիշերը սողալով մոտեցա այն տեղին, ուր գտնվում էին նրանք։ Սողում եմ բանջարանոցով, ածուների արանքով, ու տեսնում եմ, որ այնտեղ ժամապահ է կանգնած... Լսում եմ, թե ինչպես լեհերը երգում են ու բարձրաձայն խոսում։ Երգում են մի երգ... աստվածամորն ուղղված... Ու նա էլ, իմ Արկադին, երգում է այնտեղ... Սիրտս ուղղված... Ու նա էլ, իմ Արկադին, երգում է այնտեղ... Սիրտս զառնացավ, երբ մտածեցի, որ առաջ ուրիշներն էին իմ ետևից սողում... Բայց ահա և հասավ ժամանակը, երբ ինքս օձի պես գետնի վրա սողում եմ այն մարդուն տեսնելու համար, և գուցե դեպի իմ մահն եմ սողում։ Իսկ այդ ժամապահն արդեն ականջ է դնում, կացել է դեպի առաջ։ Դեհ, ես ի՞նչ անեի։ Վեր կացա գետնից ու քայլեցի դեպի ժամապահը։ Դանակ-մանակ չունեի, բացի ձեռներիցս ու լեզվիցս, ոչինչ չունեի։ Ցավում եմ, որ դանակ չէի վերցրել։ Շշնջում եմ՝ «Սպասիր»... Իսկ նա, այդ զինվորը, արդեն սվինը դեմ արեց բկիս։ Ես նրան շշնջալով ասում եմ՝ «Մի՛ խոցիր, կաց, լսիր, եթե դու հոգի ունես։ Ոչինչ չեմ կարող քեզ տալ, այլ խնդրում եմ քեզ...»։ Նա իջեցրեց հրացանը ու նույնպես շշնջալով ասաց ինձ. «Գորիր հեռացիր, այ կնիկ, ի՞նչ ես ուզում»։ Ես նրան ասացի, թե որդիս բռնված է այստեղ... «Դու հասկանո՞ւմ ես, զինվոր, որդիս է։ Ախր դու էլ մեկի որդին ես, չէ՞։ Մտիկ արա ինձ, — ես քեզ պես որդի ունեմ, ու նա հրե՛ն այնտեղ է։ Թո՛ղ նայեմ նրան, գուցե թե շուտով մեռնի... գուցե թե քեզ վաղը սպանեն... մայրդ հո լաց կլինի՞ քո վրա։ Չէ՞ որ քեզ համար ծանր կլինի մեռնել առանց նրան՝ մորդ տեսնելու։ Իմ որդու համար էլ հո ծանր է։ Դեհ ուրեմն խղճա քեզ, նրան ու ինձ՝ մորը»։

Օֆ, ինչքա՛ն երկար խոսեցի նրա մոտ։ Անձրև էր գալի, թրջում մեզ։ Քամին ոռնում էր, սուլում, խփում մեջքիս։ Ես կանգնել ու դողում էի այդ քարե զինվորի առաջ։ Իսկ նա շարունակ ասում էր՝ «Ոչ»։ Ու ամեն անգամ, երբ ես լսում էի նրա սառը խոսքը, է՛լ ավելի էր բռնկվում Արկադիկին տեսնելու ցանկությունս... Ես խոսում էի ու աչքերով չափում զինվորին. նա կարճահասակ էր, լղար, ու հազում էր։ Եվ ահա նրա առաջ ես ընկա գետնին ու, գրկելով նրա ծնկները, թեժ խոսքերով նրանից գութ աղերսելով, նրան գցեցի գետնին։ Նա ընկավ ցեխի մեջ։ Ես նրան արագությամբ շուռ տվի երեսի վրա

ու գլուխը խորթեցի լճակի մեջ, որ չգոռա։ Նա չէր գոռում, այլ միայն թպրտում էր, աշխատելով ինձ դեն գցել իր մեջքից։ Ես երկու ձեռներովս նրա գլուխը ավելի խորն էի խորթում ցեխի մեջ։ Ու նա խեղդվեց... Ես վազ տվի դեպի ամբարը, որտեղ երգում էին լեհերը։ «Արկադիկ...»,— շշնջացի պատի ճեղքից։ Նրանք, այդ լեհերը, գլխի ընկնող մարդիկ են, լսելով ձայնս, դադարեցին երգը։ Ահա իմ դիմաց նրա աչքերը։ «Կարո՞ղ ես այստեղից դուրս գալ»։—«Այո, հատակի միջով»,— ասաց նա։ «Դեհ, արի»։ Եվ ահա նրանցից չորսը դուրս եկան այդ ամբարի տակից. իմ Արկադիկը և ուրիշ երեք հոգի. «Որտե՞ղ են ժամապահները»,— հարցրեց Արկադիկը։ «Հրե՛ն, պառկած է...»։ Ու նրանք քայլեցին կամացուկ, գետնին կռացած։ Անձրևը գալիս էր, բարձր ոռնում էր քամին։ Մենք հեռացանք գյուղից ու լուռ, երկար գնում էինք անտառի միջով։ Արագ էինք գնում։ Արկադիկը բռնել էր ձեռքիցս, նրա ձեռքը տաք էր ու դողում էր։ Օ՜... ես ինձ այնքա՛ն լավ էի զգում նրա հետ, բանի դեռ նա լուռ էր։ Վերջին բոպեներն էին գրանք, իմ ազատ կյանքի լավ բոպեները։ Բայց ահա մենք հասանք մի մարդագետին ու կանգ առանք։ Նրանք, չորս հոգին էլ ինձ շնորհակալություն հայտնեցին։ Երկա՛ր ու երկար ինչ-որ բան էին ասում ինձ։ Ես լսում էի ու նայում իմ պանին։ Ի՞նչ պետք է անի նա ինձ։ Եվ ահա նա գրկեց ինձ ու լրջորեն ասաց... Չեմ հիշում ինչ ասաց, բայց այնպես էր դուրս գալիս, որ նա, իբրև շնորհակալություն իրեն ազատելու համար, սիրելու է ինձ... Ու նա ժպտալով ծունկ չոքեց իմ առաջ և ասաց. «Ի՛մ թագուհի։ Ա՛յ ինչպիսի կեղծավոր շուն էր... էհ, ես նրան ոտովս աքացի տվի ու կխփեի դեմքին, բայց նա դեն թռավ։ Զայրացկոտ ու սփրթնած կանգնել է իմ առաջ... Կանգնած են մյուս երեքն էլ, մռայլվել են։ Բոլորն էլ լուռ են։ Ես նայեցի նրանց։ Հիշում եմ, այդ պահին խիստ ձանձրացա ու մի տեսակ ծուլություն տիրեց ինձ... Ես նրանց ասացի՝ «Գնացեք»։ Նրանք, այն շները, հարցրին ինձ՝ «Դու կվերադառնաս այնտեղ ու ցույց կտաս մեր ճամփան, հա՞»։ Ա՛յ քեզ ստոր մարդիկ։ Նրանք այնուամենայնիվ հեռացան։ Ես էլ գնացի... Մյուս օրը ձերոնք բռնեցին ինձ, բայց շուտով բաց թողին։ Այն ժամանակ ես տեսա, որ ժամանակն է տուն ու տեղ լինել, հերիք է ապրել կկվի նման։ Արդեն ծանրաշարժ էի, թուլացել էին թևերս, ու խամրել փետուրներս... Ժամանակն էր, այո։ Ես մեկնեցի Գալիցիա, այնտեղից էլ Դոբրուջա։ Եվ ահա արդեն

մոտ երեք տասնյակ տարի է, որ ապրում եմ այստեղ։ Ամուսին ունեի, մոլդավացի էր. մեռավ մի տարի առաջ։ Ահա և ապրում եմ ես։ Մենակ եմ ապրում... ո՜չ, մենակ չեմ, ահա նրանց հետ եմ։

Պառավը ձեռքը թափ տվեց դեպի ծովը։ Այնտեղ ամեն ինչ հանդարտ էր։ Երբեմն լսվում էր ինչ-որ կարճ, խաբուսիկ ձայն և իսկույն մեռնում։

— Նրանք սիրում են ինձ։ Ես նրանց շատ եմ պատմում այլևայլ դեպքեր։ Դա հարկավոր է նրանց։ Բոլորն էլ դեռ ջահել են... Ես էլ նրանց հետ ինձ լավ եմ զգում։ Նայում եմ ու մտածում. «Կար ժամանակ, որ ես էլ նրանց պես էի... Միայն թե այն ժամանակ շատ ուժ և կրակ կար իմ մեջ, դրա համար էլ ավելի ուրախ ու ավելի լավ էի ապրում... Այո...»։

Նա լռեց։ Ես տխրում էի նրա կողքին։ Նա գլուխն օրորելով ննջում էր և կամացուկ ինչ-որ շշնջում... Գուցե աղոթում էր։

Ծովից բարձրացավ մի ամպ, որ սև էր, ծանր, մռայլ ուրվագծերով, լեռնաշղթայի էր նման։ Ամպը սողում էր դեպի տափաստանը։ Նրա գագաթից կտոր-կտոր ամպեր էին պոկվում, առաջ էին անցնում ու մեկը մյուսի հետևից հանգցնում աստղերը։ Ծովն աղմկում էր։ Մեզնից ոչ հեռու, խաղողի վազերի մեջ ոմանք համբուրվում էին, փսփսում ու հառաչում։ Հեռո՜ւ-հեռվում, տափաստանում մի շուն էր ոռնում... Օդը գրգռում էր ներվերս տարօրինակ մի բույրով, որը խտտում էր քթածակերս։ Ամպերից երկրի վրա ստվերների խիտ երամակներ էին ընկնում ու սողում, չքանում էին ու նորից երևում... Լուսնի տեղ մնացել էր միայն պղտոր, դժգույն մի բիծ, երբեմն այն բոլորովին ծածկվում էր մի կտոր մուգ կապտավուն ամպով։ Ու տափաստանային հեռաստանում, որ հիմա արդեն սև ու ահավոր էր, ասես դարանակալած, իր մեջ ինչ-որ բան թաքցնող, փոքրիկ, կապույտ լույսեր էին բռնկվում։ Մերթ այստեղ, մերթ այնտեղ մի ակնթարթ երևում էին նրանք ու մարում, ասես մի քանի մարդ տափաստանում ցրված, միմյանցից հեռու, այնտեղ ինչ-որ բան էին փնտրում, լուցկիներ վառում, որոնք իսկույն հանգչում էին քամուց։ Դրանք կրակի խիստ տարօրինակ, կապույտ լեզուներ էին, որոնք ինչ-որ հեքիաթային մի բան էին ակնարկում։

— Տեսնո՞ւմ ես կայծերը,— հարցրեց ինձ Իզերգիլը։

— Այն կապույտ կայծե՞րը,— ցույց տալով դեպի տափաստանը, ասացի ես։

— Կապո՞ւյտ։ Այո, այդ նրանք են... Ուրեմն այնուամենայնիվ թռչում են։ Օ-հո՜... Ես էլ չեմ տեսնում դրանք։ Հիմա ես չեմ կարող շատ բան տեսնել։

— Որտեղի՞ց են այդ կայծերը,— հարցրի պառավին։

Առաջ ես ինչ-որ բան էի լսել այդ կայծերի ծագման մասին, բայց ուզում էի լսել, թե պառավ Իզերգիլն ինչ կպատմի դրանց մասին։

— Այդ կայծերը Դանկոյի վառվող սրտից են։ Աշխարհում եղել է մի սիրտ, որը մի անգամ բռնկվել է կրակով... Եվ ահա նրանից են այդ կայծերը։ Ես քեզ կպատմեմ դրա մասին... Նույնպես հին հեքիաթ է... Հին է, ամեն ինչ հին է։ Տեսնո՞ւմ ես ինչքան բան է եղել հնում... Իսկ հիմա ոչ մի այդպիսի բան չկա, ոչ այնպիսի գործեր, ոչ մարդիկ, ոչ այնպիսի հեքիաթներ, ինչպես հնում... Ինչո՞ւ... Հապա՛, ասա։ Չես ասի... Դու ի՞նչ գիտես որ։ Ի՞նչ գիտեք դուք բոլորդ, երիտասարդներդ։ Է՜-հե։ Հապա մի նայեք հնին սուր աչքով՝ այնտեղ կգտնվեն բոլոր լուծումները... Իսկ դուք չեք նայում և դրա համար էլ ապրել չգիտեք... Մի՞թե ես չեմ տեսնում կլանքը։ Օ՜, ամեն ինչ տեսնում եմ, թեև թույլ են աչքերս։ Ես տեսնում եմ, որ մարդիկ չեն ապրում, այլ հարմարվում են ու հարմարվում և այդպիսով վատնում իրենց ամբողջ կյանքը։ Ու երբ կողոպտում են իրենք իրենց, վատնելով ժամանակը, սկսում են գանգատվել բախտից։ Բախտը ի՞նչ է որ։ Ամեն մեկի բախտն իր ձեռքումն է։ Հիմի ես ամեն տեսակ մարդիկ եմ տեսնում, իսկ ուժեղ մարդիկ չկան։ Ո՞ւր են նրանք... Գեղեցիկներն էլ քանի գնում պակասում են։

Պառավը միտք էր անում, թե կյանքից ուր են կորել ուժեղ ու գեղեցիկ մարդիկ, ու միտք անելով, դիտում էր մթին տափաստանը, ասես այնտեղ պատասխան էր փնտրում։

Ես սպասում էի նրա պատմելուն և լռում էի, վախենալով, որ եթե մի բան հարցնեմ, նա դարձյալ մի կողմ կշեղվի։

Եվ ահա նա սկսեց պատմությունը։

III

«Հնում երկրի վրա ուրիշ տեսակ մարդիկ էին ապրում, անանցանելի անտառները երեք կողմից շրջապատել էին այդ մարդկանց թափառախմբերը, իսկ չորրորդ կողմում տափաստանն

էր։ Դրանք ուրախ, ուժեղ ու համարձակ մարդիկ էին։ Եվ ահա ծանր ժամանակ եկավ. որտեղից որտեղ ուրիշ ցեղեր երևացին և նրանց քշեցին անտառի խորքը։ Այնտեղ ճահիճներ կային ու մթություն էր տիրում, որովհետև անտառը հին էր ու նրա ճյուղերն այնքան խիտ էին իրար հյուսվել, որ նրանց միջից երկինքը չէր երևում, և արևի ճառագայթները հազիվ էին կարողանում խիտ սաղարթի միջով թափանցել ճահիճները։ Բայց երբ նրա ճառագայթները ընկնում էին ճահիճների ջրի վրա, գարշահոտություն էր բարձրանում, և դրանից մեկիկ-մեկիկ մեռնում էին մարդիկ։ Այդ ցեղի կանայք ու երեխաները սկսեցին լաց լինել, իսկ հայրերը մտածմունքի մեջ ընկան ու տխրեցին։ Հարկավոր էր հեռանալ այդ անտառից, և դրա համար կար երկու ճամփա, մեկը՝ դեպի ետ, այնտեղ շար և ուժեղ թշնամիներ կային, մյուսը՝ դեպի առաջ, այնտեղ վիթխարի ծառեր էին կանգնած, որոնց հուժկու ճյուղերը պինդ գրկել էին իրար, հանգուցաշատ արմատները խոր նստել էին ճահճի կպչուն տիղմի մեջ։ Այդ քարե ծառերը լուռ ու անշարժ կանգնած էին լինում ցերեկը, գորշ մթնշաղում, ու երեկոները, երբ խարույկներ էին վառվում, նրանք է՛լ ավելի էին խտանում մարդկանց շուրջը։ Ու միշտ, գիշեր-ցերեկ այդ մարդիկ օղակված էին անթափանց խավարով, որը ասես ճզմելու էր նրանց, իսկ նրանք սովոր էին լայնարձակ տափաստանին։ Է՛լ ավելի սարսափելի էր լինում, երբ քամին խփում էր ծառերի գագաթներին ու ամբողջ անտառը խուլ շառաչում էր, ասես սպառնում էր այն մարդկանց ու թաղման երգ երգում։ Այնուամենայնիվ նրանք ուժեղ մարդիկ էին ու կարող էին գնալ մահացու կռիվ մղել այն մարդկանց դեմ, որոնք մի անգամ հաղթել էին նրանց, բայց նրանք չէին կարող մեռնել մարտերում, որովհետև պատգամներ ունեին ու եթե մեռնեին, նրանց հետ կկորչեին նաև պատգամները։ Եվ դրա համար էլ նրանք նստում ու միտք էին անում երկար գիշերներին, անտառի խուլ աղմուկում, ճահճի թունավոր գարշահոտության մեջ։ Նրանք նստած էին լինում, իսկ խարույկներից առաջացած ստվերները լուռ թռչկոտում ու պարում էին նրանց շուրջը, ու շարունակ թվում էր, որ ոչ թե ստվերներն են պարում, այլ անտառի ու ճահճի չար ոգիներն են հաղթահանդես կատարում... Մարդիկ հա՛ նստում էին ու մտածում։ Բայց ոչ մի բան՝ ոչ աշխատանքը, ոչ էլ կանայք այնպես չեն մաշում մարդկանց մարմիններն ու հոգիները, ինչպես թախծալի մտածմունքները։

Ու մարդիկ թուլացան մտածմունքներից... Նրանց մեջ վախ առաջացավ, կաշկանդեց նրանց ամուր ձեռները, սարսափ էին առաջացնում կանայք՝ լալով գարշահոտությունից մեռածների դիակների վրա, վախով բռնվածների բախտի վրա, ու անտառում լսվեցին վախկոտ խոսքեր, որոնք սկզբում երկչոտ ու կամացուկ, հետո էլ ավելի ու ավելի բարձր էին հնչում... Արդեն ուզում էին գնալ թշնամու մոտ ու իրենց ապատությունը նվիրաբերել նրան, ու էլ ոչ ոք, մահից վախեցած, չէր սարսափում ստրկական կյանքից... Բայց այստեղ երևան եկավ Դանկոն ու մենակ փրկեց բոլորին»։

Ակներև էր, որ պառավը հաճախ էր պատմել Դանկոյի վառվող սրտի մասին։ Նա խոսում էր ծորուն ձայնով, ու նրա ճրոճրան, խուլ ձայնը իմ առջև պարզ պատկերում էր անտառի աղմուկը, ուր ճահճի թունավոր շնչից մեռնում էին ապաբախտ, հալածված մարդիկ...

«Դանկոն այն մարդկանցից մեկն էր, գեղեցիկ մի երիտասարդ։ Գեղեցիկները միշտ էլ համարձակ են։ Եվ ահա Դանկոն ասում է նրանց, իր ընկերներին.

— Մտածելով, քարը ճամփից դեն չես գցի։ Ով ոչինչ չի անում, նրա հետ ոչինչ էլ չի պատահի։ Ինչո՞ւ ենք ուժներս վատնում մտածմունքների ու վշտի վրա։ Վեր կացեք, գնանք անտառ ու անցնենք նրա միջով, չէ՞ որ նա վերջ ունի. աշխարհում ամեն ինչ վերջ ունի։ Գնա՛նք, դե՛հ։

Նայեցին նրան ու տեսան, որ նա բոլորից լավն է, որովհետև նրա աչքերում շատ ուժ և էներգիայի կրակ էր ցոլում։

— Առաջնորդիր մեզ,— ասացին մարդիկ։

«Եվ նա առաջնորդեց...»։

Պառավը մի փոքր լռեց ու նայեց դեպի տափաստանը, ուր շարունակ թանձրանում էր խավարը։ Հեռո՛ւ-հեռվում բռնկվում էին Դանկոյի վառվող սրտի կայծերը ու, լոկ մի ակնթարթ առկայծելով, օդային կապույտ ծաղիկներ էին թվում։

«Դանկոն տարավ նրանց։ Բոլորն էլ միահամուռ կերպով գնացին նրա ետևից, հավատում էին նրան։ Դժվա՛ր էր այդ ճամփան։ Մութն էր, ու ամեն քայլափոխում ճահիճը բաց էր անում իր ագահ, նեխած երախը, կլանում մարդկանց, ու ծառերը հզոր սարսպի նման փակում էին ճանապարհը։ Նրանց ճյուղերը իրար էին հյուսվել. օձերի նման ամենուրեք ձգվել էին արմատ-

ները, ու այն մարդիկ ամեն մի քայլափոխում շատ արյուն-քրտինք էին թափում։ Երկար գնում էին նրանք... Անտառն ավելի էր խտանում, ուժերը գնալով նվազում էին։ Եվ ահա մարդիկ սկսեցին տրտնջալ Դանկոյի դեմ, ասելով, որ երիտասարդ ու անփորձ այդ մարդն իզուր է իրենց տանում ով գիտի ուր։ Իսկ նա քայլում էր առջևից, կայտառ էր և ուրախ։

Մի անգամ փոթորիկ պայթեց անտառի վրա, ծառերը խուլ, ահավոր աղմուկ բարձրացրին։ Անտառն այնքան մթնեց, որ կարծես միանգամից այնտեղ էին հավաքվել բոլոր գիշերները, ինչքան որ դրանք եղել էին աշխարհում, դրա ծննդյան ժամանակներից։ Փոքրիկ մարդիկ գնում էին մեծ ծառերի արանքով, կայծակների ահարկու աղմուկում, գնում էին նրանք, ու վիթխարի ծառերը օրորվելով, ճռճռում, շառաչում, երգում էին ցասկոտ, իսկ փայլակները, թռչելով ծառերի գագաթների վերևից, մի րոպե լուսավորում էին անտառը կապույտ, սառն լույսով, ու չքանում նույն արագությամբ, որով երևում էին՝ վախեցնելով մարդկանց։ Կայծակների սառն փայլով լուսավորվող ծառերը կենդանի արարածներ էին թվում, որոնք իրենց ծուռումուռ, երկար ձեռներն էին տարածել խավարի գերությունից փախչող մարդկանց շուրջը, այդ ձայները խիտ ցանցեր էին հյուսել՝ փորձելով կանգնեցնել մարդկանց։ Իսկ ճյուղերի մթությունից ինչ-որ մի սարսափելի, խավար ու ցուրտ բան էր նայում գնացողների վրա։ Այդ դժվարին ճանապարհ էր, ու հոգնատանջ մարդիկ վհատվեցին։ Բայց նրանք ամաչում էին խոստովանել իրենց անզորությունը, և ահա նրանք չարացած ու ցասկոտ հարձակվեցին Դանկոյի վրա, որը գնում էր նրանց առջևից։ Ու նրանք սկսեցին կշտամբել Դանկոյին, թե սա չի կարողանում կառավարել իրենց, ու ահա թե ինչ արին։

Կանգ առան և անտառի հաղթական աղմուկում, երերուն խավարում, հոգնած ու չարացած, սկսեցին դատել Դանկոյին։

— Դու,— ասացին նրանք,— չնչին ու վնասակար մարդ ես մեզ համար։ Դու մեզ տարար և հոգնեցրիր և դրա համար կմեռնես։

— Դուք ասացիք՝ «առաջնորդիր», ու ես առաջնորդեցի,— գոչեց Դանկոն ու կուրծքը դուրս ցցած, կանգնեց նրանց առաջ։— Իմ մեջ առաջնորդելու արիություն կա, դրա համար էլ ես բերի ձեզ։ Իսկ դո՞ւք։ Ի՞նչ արեցիք ձեզ օգնելու համար։ Դուք միայն քայլում էիք ու չէիք կարողանում պահպանել ձեր ուժերը՝ ավելի երկար ճանապարհի համար։ Դուք միայն գնում ու գնում էիք ոչխարների հոտի պես։

Այս խոսքերը է՛լ ավելի կատաղեցրին մարդկանց։

— Դու կմեռնե՛ս, դու կմեռնե՛ս,— գոռում էին նրանք։

«Իսկ անտառը շառաչում էր ու շառաչում, արձագանքում նրանց ճիչերին, ու կայծակները պատառոտում էին խավարը։ Դանկոն նայում էր այն մարդկանց, որոնց համար ջանքեր էր թափել, ու տեսնում էր, որ նրանք գազանների են նմանվում։ Շատ մարդիկ էին կանգնած նրա շուրջը, բայց նրանց դեմքերի վրա չկար ազնվություն, և նա չէր կարող գութ սպասել այդ մարդկանցից։ Այդ ժամանակ նրա սրտում էլ եռաց զայրույթը, բայց հանգավ, որովհետև նա կարեկցում էր մարդկանց։ Նա սիրում էր մարդկանց ու կարծում էր, թե առանց իրեն նրանք գուցե և կորչեն։ Եվ ահա նրա սիրտը բռնկվեց նրանց փրկելու, հեշտ ճանապարհ դուրս բերելու ցանկության կրակով, ու նրա աչքերում շողշողացին այդ հուժկու կրակի ճառագայթները... Տեսնելով այդ, մարդիկ կարծեցին, թե նա կատաղել է, դրա համար էլ այդպես պայծառ են վառվել աչքերը, ու գայլերի պես լարեցին իրենց ուշքը, սպասելով, թե նա կռվելու է իրենց հետ, ու սկսեցին ավելի խիտ շրջապատել նրան, որ հեշտությամբ բռնեին ու սպանեին։ Դանկոն հասկացավ նրանց միտքը, դրանից է՛լ ավելի բոցավառվեց նրա սիրտը, որովհետև նրանց այդ միտքը իր սրտում տխրություն առաջացրեց։

Անտառը էլի՛ երգում էր իր մռայլ երգը, թնդում էր որոտը, անձրև էր թափվում...

— Ի՞նչ անեմ մարդկանց համար,— որոտից է՛լ ուժեղ գոչեց Դանկոն։

Ու հանկարծ նա ձեռներով պատռեց կուրծքը, այնտեղից հանեց սիրտը ու բարձրացրեց գլխից վեր։

Այն վառվում էր պայծառ, ինչպես արևը, ու արևից էլ՛ պայծառ, ու ամբողջ անտառը լռեց՝ մարդկանց նկատմամբ մեծ սիրո այդ ջահով լուսավորված, իսկ խավարը նրա լույսից ցնդեց և այնտեղ, անտառի խորքում, երերալով, ընկավ ճահճի նեխած երախը։ Մարդիկ զարմանքից քարացան։

— Գնանք,— գոչեց Դանկոն ու նետվեց առաջ, իր տեղը՝ վառվող սիրտը բարձր պահած ու նրանով լուսավորելով մարդկանց ճանապարհը։

Նրանք հմայված գնացին Դանկոյի ետևից։ Այն ժամանակ անտառը էլի՛ սկսեց աղմկել, զարմանքով օրորել ծառերի գագաթները, բայց վազող մարդկանց դոփյունը խլացրեց նրա աղմուկը։ Բոլորն էլ վազում էին արագ ու համարձակ, վառվող սրտի հրաշանման տեսարանով զմայլված։ Հիմա է՛լ մեռնում էին, բայց առանց գանգատների ու անլաց էին մեռնում։ Դանկոն է՛լ շարունակ առջևումն էր, ու նրա սիրտը բոցավառվում ու բոցավառվում էր։

Եվ ահա անտառը հանկարծ բացվեց նրանց առաջ, բացվեց ու մնաց նրանց ետևում, խիտ ու համր, իսկ Դանկոն ու բոլոր մարդիկ միանգամից ընկղմեցին արեգակի լույսի և անձրևով լվացված մաքուր օդի ծովը։ Այնտեղ, նրանց ետևում, անտառի վրա փոթորիկ էր, իսկ այստեղ շողում էր արևը, փռված էր տափաստանը, փայլում էին խոտաբույսերը անձրևի աղամանդներով, ու ոսկու նման շողշողում էր գետը։ Երեկո էր, ու մայրամուտի ճառագայթներից գետը կարմիր էր թվում, ինչպես այն արյունը, որ տաք-տաք հեղվում էր Դանկոյի պատառոտված կրծքից։

Սիգապանծ ու համարձակ Դանկոն մի հայացք նետեց դեպի առաջ, լայնարձակ տափաստանի վրա, խնդագին մի հայացք նետեց ազատ երկրի վրա և հպարտ ծիծաղեց։ Հետո էլ ընկավ ու մեռավ։

Իսկ մարդիկ, բերկրանքով և հույսերով լեցուն, չնկատեցին նրա մահը ու չտեսան, որ Դանկոյի դիակի կողքին դեռ վառվում է նրա համարձակ սիրտը։ Միայն մի զգույշ մարդ նկատեց այդ ու, ինչ-որ բանից վախենալով, ոտը դրեց հպարտ սրտի վրա... Եվ ահա սիրտը, կայծեր ցրելով, հանգավ...»։

— Այ Ով որտեղից են դրանք, տափաստանի կապույտ կայծերը, որ երևում են փոթորկից առաջ։

Հիմա, երբ պառավը վերջացրեց իր գեղեցիկ հեքիաթը, տափաստանում ահավոր լռություն տիրեց, ասես տափաստանն էլ ապշեց խիզախ Դանկոյի ուժից, որ մարդկանց համար վառել էր իր սիրտը ու նրանցից ի տրիտուր ոչինչ չէր խնդրել։ Պառավը ննջում էր։ Ես նայում էի նրան ու մտածում՝ էլ ինչքա՞ն հեքիաթներ և հուշեր են մնացել նրա հիշողության մեջ։ Ու մտածում էի Դանկոյի մեծ, վառվող սրտի և մարդկային երևակայության մասին, որը այնքա՞ն գեղեցիկ և հուզիչ առասպելներ էր ստեղծել։

Փչեց քամին ու ցնցոտիների տակից բացեց հետզհետե պինդ քուն մտնող պառավ Իզերգիլի չորացած կուրծքը։ Ես ծածկեցի նրա պառաված մարմինը ու ինքս էլ պառկեցի գետնին, նրա կողքին։ Տափաստանը լուռ էր ու խավար։ Երկնքում էլի՛ դանդաղ, ձանձրալի սահում էին ամպերը... Խուլ ու տրտում աղմկում էր ծովը։

—

ՄԱԿԱՐ ՁՈՒԴՐԱ

Ծովից պաղ ու խոնավ քամի էր փչում, տափաստանով մեկ տարածում ափին խփվող ալիքների ճղփյունի և առափնյա թփերի խշշոցի մտախոհ մեղեդին։ Երբեմն-երբեմն քամու պոռթկումները իրենց հետ բերում էին կնճռոտած, դեղին տերևներ, գցում խարույկի մեջ ու բորբոքում նրա բոցը. դողում էր մեղ շրջապատող աշնանային գիշերվա մշուշը և վախեցած ետ քաշվելով՝ մի ակնթարթ բաց էր անում ձախ կողմում՝ անծայրածիր տափաստանը, աջ կողմում՝ անսահման ծովը և ուղիղ իմ առաջ՝ ծերունի գնչու Մակար Զուդրայի կերպարանքը. նա պահում էր մեզանից մի հիսուն քայլ հեռու տեղավորված իր թափառախմբի ձիերը։

Բանի տեղ չդնելով քամու պաղ ալիքները, որոնք նրա չեքմենի օձիքը բանալով մերկացրել էին մազոտ կուրծքը և անողորմաբար խփում էին նրան, սա դեղեցիկ և ուժեղ դիրքով թիկն էր տվել երեսը դեպի ինձ, հանդարտ ձիգ էր տալիս իր ահագին ծխամորճը, բերանից ու քթից ծխի թանձր քուլաներ արձակում և իմ գլխի վրայով անշարժ հայացքը տափաստանի լուռ ու մեռյալ խավարին հառած՝ խոսում էր ինձ հետ անվերջ ու ոչ մի շարժում չէր անում քամու սուր հարվածներից պաշտպանվելու համար։

— Ուրեմն շրջո՞ւմ ես դու։ Այդ լա՛վ է։ Փառավոր վիճակ ես ընտրել դու քեզ համար, բազե՛։ Այդպես էլ պետք է։ Շրջիր ու դիտիր, դիտեցիր սրտիդ ուզածի չափ, պառկիր ու մեռի՛ր— ա՛յս է ամբողջը։

— Կյա՞նք, ուրիշ մարդի՞կ,— շարունակեց նա կասկածամտորեն լսելով իմ առարկությունը նրա՝ «այդպես էլ պետք է» խոսքին։— Էհ՛։ Իսկ քո ի՞նչ գործն է դա։ Իսկ դու ինքդ կյանք չե՞ս։ Ուրիշ մարդիկ ապրում են առանց քեզ և կապրեն առանց

քեզ։ Կարծում ես, թե դու որևէ մեկին պե՞տք ես։ Դու հաց չես, մահակ չես և ոչ ոքի պետք չես դու։

Սովորել ու սովորեցնե՞լ, ասում ես։ Իսկ դու կարո՞ղ ես սովորել, թե ինչպես կարելի է մարդկանց երջանիկ դարձնել։ Ո՛չ, չես կարող։ Դեռ մի թող մազերդ ճերմակեն, հետո ասա, թե ինչ պետք է սովորեցնել։ Ի՞նչ պիտի սովորեցնես։ Ամեն մարդ գիտի, թե իրեն ինչ է հարկավոր։ Ով խելոք է, վերցնում է ինչ որ կա, ով անխելք է, ոչինչ չի ստանում, և ամեն մեկը ի՛նքն է սովորում։

Ծիծաղելի են նրանք, քո այդ մարդիկ։ Կուտակվել են մի տեղ ու ճղմում են իրար, իսկ աշխարհում տես ինչքա՞ն տեղ կա,— նա ձեռքը լայն տարածեց դեպի տափաստան։— Եվ բոլորն էլ աշխատում են։ Ինչո՞ւ։ Ո՞ւմ համար։ Ոչ ոք չգիտե։ Նայում ես՝ մարդը հող է վարում, ու մտածում ես, ահա սա իր ուժերը քրտինքի հետ կաթիլ առ կաթիլ հողի մեջ է քամում, հետո էլ կպառկի այդ հողի մեջ ու կփտի այնտեղ։ Ոչինչ չի մնա իրեն, ոչինչ չի տեսնի իր հողից դենը և կմեռնի հիմար, ինչպես որ ծնվել է։

Ի՞նչ է, նա դրա՞ համար է ծնվել, որ հողը փորփրի ու մեռնի, նույնիսկ ժամանակ չգտնելով իր համար գերեզման փորել։ Նա գիտե՞ ինչ բան է ազատությունը։ Հասկանո՞ւմ է տափաստանի լայնարձակությունը։ Տափաստանի ալիքի ձայնը ուրախացնո՞ւմ է նրա սիրտը։ Նա ստրուկ է հենց որ ծնվել է, ամբողջ կյանքում ստրուկ է, ա՛յ թե ինչ։ Ի՞նչ կարող է անել նա։ Միայն խեղդվել կարող է, եթե մի քիչ խելքի գա։

Իսկ ես, նայի՛ր, ա՛յ, հիսունութ տարում այնքան բան եմ տեսել, որ թե ամբողջը թղթի վրա առնես, քո այդ տոպրակի պես հազար տոպրակի մեջ էլ չի տեղավորվի։ Դե հիմա ասա. ի՞նչ աշխարհներում չեմ եղել ես։ Չես կարող ասել։ Դու իսկի չգիտես էլ այն աշխարհները, որտեղ եղել եմ ես։ Այդպես պետք է ապրել. քայլիր, քայլիր, պրծավ գնաց։ Մի տեղ երկար մի՛ կանգնիր. ի՞նչ օգուտ մի տեղ կանգնելուց։ Ա՛յ, ինչպես ցերեկն ու գիշերն են իրար ետևից վազելով պտտվում երկրի շուրջը, այնպես էլ դու հեռու վազիր կյանքի մտքերից, որպեսզի չդադարես սիրել կյանքը։ Իսկ թե որ սկսեցիր մտածել, էլ կյանքը չես սիրի. միշտ այդպես է լինում։ Ինձ հետ էլ եղել է այդպես։ Է՛, եղել է, բալե՛, եղել է։

Նստած էի բանտում, Գալիչինում։ «Ինչո՞ւ եմ ապրում

այս աշխարհում»,— մտածում էի ես թախիծով,— տխուր է բանտում, բալե՛, է՛, ինչքա՛ն է տխուր, ու հենց որ լուսամուտից նայեցի դաշտերին, թախիծը սիրտս մտավ, սիրտս մտավ ու ճմլեց, ոնց որ աքցանով ճմլես։ Ո՞վ կարող է ասել, թե ինքն ինչի համար է ապրում։ Ոչ ոք չի կարող ասել, բալե՛։ Եվ կարիք էլ չկա, որ մարդ դրա մասին ինքն իրեն հարց տա։ Ապրիր, պրծավ գնաց։ Եվ թափառիր ու շուրջդ նայիր, կտեսնես, որ երբեք թախիծը մոտ չի գա քեզ։ Հապա, այն ժամանակ քիչ մնաց գոտիով խեղդեի ինքս ինձ, ա՛յ թե ինչ։

— Հե՛։ Մի անգամ խոսում էի մի մարդու հետ։ Խիստ մարդ էր, ձեր ռուսներից։ Հարկավոր է, ասում էր նա, այնպես չապրել, ինչպես ինքդ ես ուզում, այլ այնպես, ինչպես ասված է աստծու խոսքի մեջ։ Աստծուն հնազանդ եղիր, և նա կտա քեզ ամեն բան, ինչ որ խնդրես։ Իսկ ինքը մաշված, պատառոտված շորերի մեջ է։ Ես էլ նրան ասացի, որ իր համար նոր շոր խնդրի աստծուց։ Իսկ նա բարկացավ ու հայհոյելով խռիկ տվեց ինձ։ Այնինչ դրանից առաջ ասում էր, որ հարկավոր է մարդկանց ներել և սիրել։ Դե թող ինքն էլ ի՛նձ ներեր, եթե իմ խոսքից նեղացել էր։ Ա՛յ թե ուսուցիչ է։ Սովորեցնում են քիչ ուտել, իսկ իրենք օրական տասն անգամ են ուտում։

Նա թքեց խարույկի մեջ ու լռեց և նորից լցրեց ծխամորճը։ Քամին ոռնում էր մեղմ ու ողբագին, խավարի մեջ վրնջում էին ձիերը, թափառախմբից լսվում էր մի մեղմ ու կաթոգին երգ։ Երգողը գեղեցկուհի Նոնկան էր՝ Մակարի դուստրը։ Ես երգ։ Երգողը գեղեցկուհի Նոնկան էր՝ Մակարի դուստրը։ Ես ճանաչում էի նրա կրծքային թավ ձայնը, որ միշտ մի տեսակ տարօրինակ, անբավական ու պահանջկոտ էր հնչում՝ երգելիս լիներ նա, թե՝ «բարև» ասելիս։ Նրա թուխ, անփայլ դեմքին թագուհու գոռոզություն էր քարացել, իսկ մի ինչ-որ ստվերով սքողված մուգ դարչնագույն աչքերում շողում էր իր գեղեցկության անպարտելիության գիտակցությունը և արհամարհանք դեպի այն ամենը, ինչ ինքը չէ։

Մակարը ծխամորճն ինձ տվեց։

— Ծխիր։ Լա՞վ է երգում աղջիկը։ Հապա՛։ Կուզեի՞ր, որ այդպիսի մեկը սիրեր քեզ։ Ո՞չ։ Լա՛վ։ Այդպես էլ հարկավոր է. մի՛ հավատա աղջիկներին և հեռու կաց նրանցից։ Աղջկան համբուրելն ավելի լավ է ու հաճելի, քան ինձ համար ծխամորճ քաշելը, բայց որ համբուրեցիր նրան, կամքը մեռավ քո սրտում։ Նա քեզ կկապի իրենից ինչ-որ մի անտեսանելի բա-

նով, որ կտրել չես կարող և դու նրան կտաս քո ամբողջ հոգին։ Ճի՛շտ է։ Զգուշացիր աղջիկներից։ Ստո՛ւմ են միշտ։ Սիրում եմ քեզ, ասում է, աշխարհում ամեն բանից ավելի, բայց փորձիր քորոցով ծակել նրան, պատառ-պատառ կանի սիրտդ։ Ես գիտեմ։ է՛, ինչքան բան գիտեմ ես։ Կուզե՞ս, բալե, մի պատմություն անեմ քեզ։ Իսկ դու հիշիր և եթե հիշես, քո ամբողջ կյանքում ազատ թռչուն կլինես։

«Ապրում էր աշխարհում երիտասարդ գնչու Զոբարը, Լոյկո Զոբարը։ Ամբողջ Հունգարիան ու Չեխիան, Սլավոնիան ու ծովի շուրջը եղած բոլոր երկրները ճանաչում էին նրան, ի՜նչ կտրիճ տղա էր։ Այն կողմերում չկա մի գյուղ, որտեղ մի հինգ մարդ երդում տված չլիներին սպանել Լոյկոյին, բայց նա ապրում էր իր համար, և եթե մի որևէ ձի դուր եկավ նրան, թեկուզ զինվորների մի ամբողջ գունդ պահապան կանգնեցրու այդ ձիուն, միևնույն է, Զոբարը կհեծնի նրան և կսլանա։ է՛, կա՞ր մեկը, որից վախենար նա։ Սատանան էլ որ իր ամբողջ շքախմբով նրա մոտ գար, Լոյկոն թե որ դանակը չխրեր նրա սիրտը, գոնե մի թունդ կհայհոյեր, իսկ որ դևերի մռութին մի-մի քացի կհասցներ, դրան արդեն խոսք չկա։

Ու բոլոր թափառախմբերը ճանաչում էին նրան կամ լսել էին նրա մասին։ Նա միայն ձիեր էր սիրում և ուրիշ ոչինչ, այն էլ ո՛չ երկար ժամանակով. մի քանի անգամ քշեց, բավական է, կծախի, իսկ փողը՝ ով ուզում է, թող վերցնի։ Նրա համար չկար ոչ մի նվիրական բան. իր սի՞րտն է հարկավոր քեզ, նա ինքը կհաներ իր կրծքից ու կտար քեզ, միայն թե քեզ համար լավ լինի այդ։ Ա՛յ թե ինչպիսի տղա էր նա, բալե՛։

Մեր թափառախումբն այդ ժամանակները շրջում էր Բուքովինայում. դա մի տասը տարի սրանից առաջ էր։ Մի անգամ, գարնանային մի երեկո, նստած էինք մենք՝ ես, զինվոր Դանիլոն, որ կռվել է Կոշուտի հետ միասին, ծերունի Նուրը, և մյուս բոլորը, և Ռադան՝ Դանիլոյի աղջիկը։

Դու ճանաչում ես իմ Նոնկային։ Թագուհի աղջիկ է։ Իսկ Ռադան, է՛, նրա հետ համեմատել անգամ չի կարելի. մեծ պատիվ կլինի Նոնկայի համար։ Նրա՝ այդ Ռադայի մասին խոսքով պատմել չի լինի։ Նրա գեղեցկությունը գուցե թե միայն ջութակով նվագել կարելի է, այն էլ միայն նա կարող է նվագել, ով այդ ջութակը գիտի ինչպես իր հոգին։

Շատ կտրիճների սիրտ էր տոչորել նա, օ՜, շա՜տ։ Մորավայում մի խոշոր ազնվական կար, քյաքյուլավոր մի ծերունի, տեսավ նրան և քար կտրեց։ Նա նստել էր ձիու վրա ու նայում էր դողալով, ասես տենդի մեջ լիներ։ Գեղեցիկ մարդ էր նա՝ ինչպես սատանան տոն օրերին. քուրքը ոսկեկար էր, կողքից կախված թուրը, հենց որ ձին ոտքը շարժեր, շռղում էր կայծակի պես, այդ ամբողջ թուրը զարդարված էր թանկագին քարերով, իսկ փափախի գագաթի կապուտակ թավիշը ասես երկնքի մի կտորը լիներ. այդպիսի մե՛ծ մարդ էր այդ ծերունին։ Նայեց, նայեց Ռադային ու ասաց.— է՛յ, մի համբույր տուր, մի քսակ փող կտամ քեզ։— Իսկ Ռադան շուռ եկավ մի կողմ ու պատասխան չտվեց։— Ներիր, եթե քեզ նեղացրի, գոնե քաղցր նայիր ինձ,— իսկույն իր գոռոզությունն իջեցրեց ծերունի ազնվականը և նրա ոտների առաջ նետեց քսակը — մե՛ծ, շատ մեծ քսակ, ախպերս։ Իսկ Ռադան, որպես թե պատահմամբ, ոտքով հրեց, ցեխը գցեց քսակը և ուրիշ ոչինչ։

— Ա՜խ, աղջիկ,— ախ քաշեց ազնվականը, մտրակեց ձիուն, և փոշին վեր գալարվեց ամպի պես։

Իսկ մյուս օրը նորից երևաց։— Ո՞վ է նրա հայրը,— կայծակի պես որոտում է ամբողջ թափառախմբում։ Դանիլոն առաջ եկավ։— Ծախիր աղջիկդ, վերցրու ինչ կուզես։— Իսկ Դանիլոն նրան պատասխանում է.— Այդ միայն պաներն են ծախում ամեն ինչ, սկսած իրենց խոզերից մինչև իրենց խիղճը, իսկ ես Կոշուտի հետ կռիվ եմ արել և ոչինչ չեմ ծախում։— Մոնչաց ծերունին ու ձեռքը տարավ թրին, բայց մեզանից մեկը վառվող աբեթը խրեց նրա ձիու ականջը, և ձին փախցրեց այդ կտրիճին։ Իսկ մենք վրանները պոկեցինք ու գնացինք։ Գնում ենք մեկ օր, երկու օր, տեսնենք՝ հասավ մեր ետևից։— Հե՛յ, դո՛ւք,— ասում է,— աստծու առաջ ու ձեր առաջ մաքուր է իմ խիղճը, կնությյան տվեք ինձ այդ աղջիկը, ամեն ինչ կկիսեմ ձեզ հետ, ես շատ հարուստ եմ։— Վառվում է ամբողջովին և քամու բերանն ընկած սիզախոտի պես օրորվում է թամբի վրա։

Մենք մտքի մեջ ընկանք։

— Ի՞նչ կասես, աղջիկս, խոսի՛ր,— բեղի տակ ասաց Դանիլոն։

— Թե որ արծիվը իր կամքով ագռավի բույնը մտներ, ի՞նչ կդառնար նա,— հարցրեց մեզ Ռադան։

Ծիծաղեց Դանիլոն, ու մենք էլ նրա հետ։

— Կեցցե՛ս, աղջիկս։ Լսեցի՞ր, պարո՛ն։ Գլուխս չի գալիս։ Աղավնի փնտրիր, նրանք ավելի մատչելի են։— Եվ մենք առաջ գնացինք։

Իսկ այն պարոնը վերցրեց փափախը, գետնովը տվեց ու այնպես սլացավ, որ գետինը դողդողաց։ Ա՛յ թե ինչպիսի աղջիկ էր Ռադան, բազե՛։

Այո՛։ Եվ ահա մի գիշեր նստել ենք մենք ու լսում ենք՝ տափաստանի վրայով երաժշտություն է լողում։ Սքանչելի՛ երաժշտություն։ Արյունը եռ էր գալիս երակներումդ այդ երաժշտությունից, որ ասես կանչում էր հեռո՛ւ, ինչ-որ տեղ։ Զգում ենք, որ մենք բոլորս էլ այդ երաժշտությունից ուզում ենք այնպիսի մի բան, որից հետո ապրելն էլ հարկավոր չէ, կամ, եթե պիտի ապրես, ուրեմն ապրես որպես ամբողջ աշխարհի թագավոր, բազե՛։

Ահա խավարից դուրս պրծավ մի ձի, իսկ նրա վրա նըստած է մի մարդ և նվագում է մեզ մոտենալով։ Կանգ առավ խարույկի մոտ, դադարեց նվագել, ժպտալով մեզ է նայում։

— Էհե՛, Զոբա՛ր, այդ դո՞ւ ես,— ուրախ գոչեց Դանիլոն։ Եվ ահա նա, Լոյկո Զոբարը։

Բեղերն ընկել են ուսերին ու խառնվել գանգուրներին, աչքերը վառվում են վճիտ աստղերի պես, իսկ ժպիտը՝ ասես մի ամբողջ արև լինի, աստված վկա։ Ասես մի ձույլ երկաթից է կոփված իր նժույգի հետ միասին։ Կանգնել է ահա խարույկի բոցերի դեմ, ինչպես արյան մեջ, և ժպտում է մեզ, որից ատամներն են շողշողում։ Նզովյալ լինեմ, թե որ նրան չսիրեցի ես ինչպես ինձ, և ավելի շուտ, քան ինձ մի խոսք կասեր, կամ պարզապես կնկատեր, որ ե՛ս էլ ապրում եմ այս լույս աշխարհում։

Ահա թե ինչպիսի մարդիկ են լինում, բազե՛։ Հենց որ նայեց աչքերիդ, հոգիդ կգերի, և դա ամենևին ամոթ չէ քեզ համար, այլ ավելի հպարտ կզգաս քեզ։ Այդպիսի մարդու հետ դու ինքդ էլ ավելի լավն ես թվում քեզ։ Քիչ կան, բարեկամս, այդպիսի մարդիկ։ Եվ լավ է, որ քիչ կան։ Աշխարհում լավ բան որ շատ լիներ, լավի տեղ չէին դնի այն։ Այդպես է, բա՛։ Դե լսիր շարունակությունը։

Ռադան ասում է.— Լավ ես նվագում դու, Լոյկո։ Ո՞վ է պատրաստել քո այդ ջութակը, որ այդքան հնչեղ է ու զգայուն։— Իսկ նա ծիծաղում է.— Ես ինքս եմ պատրաստել։ Եվ

պատրաստել եմ ոչ թե փայտից, այլ մի ջահել աղջկա կրծքից, որին սիրում էի թեժ սիրով, իսկ լարերը նրա սրտիցն եմ հյուսել։ Խաբում է ջութակը դեռ մի քիչ, բայց ոչինչ, ես դիտեմ կնտնտոցը բռնել իմ ձեռքում։

Հայտնի է, ջահելը ուզում է մեկեն մուժ գցել կույսի շրջնաղ աչքերին, որպեսզի նրանք չայրեն իր սիրտը, այլ իրենց նայեն անհույս թախիծով։ Այդպես էլ Լոյկոն։ Բայց սխալ խփեց։ Ռադան շուտ եկավ, հորանջեց, ասաց.— Ասում էիք բա, թե խելոք և ճարպիկ է Զոբարը։ Ա՛յ թե փչո՛ւմ են մարդիկ,— ասաց ու հեռու քաշվեց։

— Էհե՛, գեղուհի, սուր ատամներ ունես դու,— ցոլացրեց աչքերը Լոյկոն ու իջավ ձիուց։— Ողջո՛ւյն, եղբայրնե՛ր։ Ահա և ես, ձեզ մոտ եմ եկել։

«— Բարի ես եկել,— պատասխան տվեց նրան Դանիլոն։ Համբուրվեցինք, զրույց արինք ու պառկեցինք քնելու... Ամուր քնեցինք։ Իսկ առավոտյան տեսնենք՝ Զոբարի գլուխը լաթով փաթաթած։ Այդ ի՞նչ է եղել։ Դե, դա ձին է Լոյկոյի քնած ժամանակ սմբակով խփել։

Է՜-է՜-է՜, հասկացանք մենք, թե ի՜նչ ձի է այդ ու ժպտացինք մեր բեղերի տակ, ժպտաց և Դանիլոն։ Դե, ի՜նչ կա որ, մի՞թե Լոյկոն չարժե Ռադային։ Բայց ո՜չ։ Որքան էլ լավն է աղջիկը, հոգին նեղ է ու փոքրիկ, և թեկուզ մի փուք ոսկի կախես վզիցը, միևնույն է, ավելի լավ չի լինելու, քան թե կա։ Դե լավ, թողնենք։

Ու ապրում էինք մենք, ապրում նույն տեղում. գործերս այդ օրերին լավ էին գնում, և Զոբարն էլ մեզ հետ էր մնում։ Ա՛յ, դա ընկեր էր։ Եվ իմաստուն էր, ինչպես ծերունի, և բանաստեղծակ, և գրել-կարդալ գիտեր ռուսերեն ու մաջարերեն։ Պատահում էր, կսկսեր խոսել, տարով մի՛ քնիր, հենց նրան լսիր։ Իսկ նվագում էր — շանթահար լինեմ, թե որ աշխարհում մեկն էլ գտնվեր նրա պես նվագող։ Թե որ կնտնտոցը մեկ քսեր լարին, սիրտդ կթռչեր, մեկ էլ որ քսեր, քար կկտրեր այն՝ նրան լսելով։ Իսկ նա նվագում է, նվագում ու ժպտում։ Եվ լացդ է գալիս, երբ լսում ես նրան, և միաժամանակ ծիծաղդ է գալիս։ Ահա, տեսնում ես, տնքում է մեկը դառն, աղեկտուր, խնդրում է օգնել, ասես դանակով սիրտդ է կտրտում։ Կամ տափաստանն է հեքիաթներ ասում կապույտ երկնքին, տխուր ու տրտում ծանր հեքիաթներ։ Լալիս է կույսը՝ ճամփու դնելով իր քաջ կտրիճին։

Իսկ կարիճը այն՝ կանչում է կույսին դեպի տափաստան։ Ու հանկարծ՝ հե՛յ-հե՛յ, ոնց որ մի որոտ՝ թնդում է երգը ուրախ ու աղատ, ու մեկ էլ տեսար, ինքը՝ արևն է պարում երկնքում այդ նվագի տակ։ Ա՛յ թե ինչպես էր Զոբարը, բազե՛։

Մարմնիդ ամեն մի ջիղն էր հասկանում երգերը նրա, և դու ամբողջովին նրա ստրուկն էիր դառնում։ Եվ թե այդ պահին Լոյկոն գոչեր՝ «ի զե՛ն, ընկերնե՛ր», մենք բոլորս զենք կվերցնեինք ու կռվի կելնեինք ում դեմ էլ ասեր։ Ամեն ինչ կարող էր անել նա մարդուն, և բոլորը սիրում էին նրան, շատ էին սիրում, միայն Ռադան էր, որ չէր էլ նայում այդ քաջ կտրիճին։ Եվ դեռ լավ է, եթե միայն չնայեր, պատահում էր, որ ծաղրում էլ էր նրան։ Խիստ էր ցավեցրել նա Զոբարի սիրտը, օ՜, շատ խիստ։ Ատամներն է կրճտացնում Լոյկոն ու բեղն է քաշքշում, աչքերը մութն են անդունդից, իսկ երբեմն էլ այնպես են փայլում, որ մարդ սարսափ է զգում նայելիս։ Գիշերը հեռու տափաստան է քաշվում Լոյկոն, և մինչև առավոտ լալիս է նրա ջութակը, լալիս է, թաղում Զոբարի կամքը։ Իսկ մենք պառկում ենք, ականջ դնում ու մտածում. ի՞նչ անել։ Գիտենք, որ եթե երկու քար գլորվում են իրար վրա, նրանց միջև կանգնել չի կարելի. կճզմեն քեզ։ Ու այդպես էլ շարունակվում էր։

Մի օր հավաքվել, նստել էինք մենք ու խոսում էինք գործերի մասին։ Տխուր էինք, և Դանիլոն խնդրեց Լոյկոյին. «Մի երգ երգիր, Զոբար, ուրախացրու մեր սրտերը»։— Լոյկոն մի հայացք գցեց Ռադային, որ քիչ հեռու մեջքի վրա պառկած նայում էր երկնքին, և զարկեց լարերին։ Եվ խոսեց ջութակը, ասես իսկապես կույսի սիրտ լիներ դա։ Ու Լոյկոն երգեց.

Հե՛յ-հե՛յ, կրծքումս վառվում է կրակ,
Իսկ տափաստանն է լայն,
Սլանում է նժույգս քամու պես արագ,
Ձեռքս ամուր է այնքան։

Ռադան բարձրացավ արմունկի վրա, երեսը դարձրեց. նայեց երգչի աչքերին ու քմծիծաղ տվեց։ Բռնկեց Լոյկոն ինչպես արշալույս։

Հե՛յ, հոպ-հե՛յ, ապա, իմ ընկեր,
Ցսրանա՞նք առաջ.
Տափաստանի վրա դաժան մութ է ընկել,

Իսկ այնտեղ սպասում է մեզ լուսաբաց։
Հե՛յ-հե՛յ, սլանանք ընդառաջ ցերեկվան,
Բարձրացի՛ր, դեպի վեր հասիր,
Միայն թե բաշով չդիպչես
Գեղեցկուհի լուսնին։

Ինչպե՞ս էր երգում։ Հիմա չկա մեկը, որ այդպես երգի։ Իսկ Ռադան ասում է, կարծես թե ջուր է մաղում.

— Դու այդքան շատ վերև մի՛ թռչի, Լոյկո, մեկ էլ տեսար՝ քթիդ վրա ցեխն ընկար ու բեղերդ կեղտոտեցիր։— Գազանի պես նայեց նրան Լոյկոն, բայց ոչինչ չասաց. համբերեց տղան ու շարունակեց իր երգը.

Հե՛յ-հո՛պ, կարող է լուսանալ այստեղ,
Իսկ մենք քնել ենք իրար հետ,
Է՛յ, հե՛յ, այն ժամանակ ամոթից
Մենք կայրվենք այստեղ։

— Ա՛յ թե երգ է հա՛,— ասաց Դանիլոն,— կյանքումս այդպիսի երգ չեմ լսել դեռ. թող սատանան ինձ ծխամորճ շինի իր համար, թե սուտ եմ ասում։— Ծերունի Նուրն էլ և՛ բեղերն է սղալում, և՛ ուսերն է թոթվում, ու բոլորիս սրտին էլ դուր է գալիս Զոբարի երգը կտրիճի։ Միայն Ռադային դուր չի գալիս։

— Մի անգամ էլ մոծակն էր այդպես բզզում՝ ցանկանալով իր ձայնը նմանեցնել արծվի կանչին,— ասաց նա ու կարծես բոլորիս վրա ձյուն մաղեց։

— Դու, ի՞նչ է, Ռադա, մտրա՞կ ես ուզում,— դեպի աղջիկը ձգվելով ասաց Դանիլոն, բայց Զոբարը գետնովը տվեց իր փափախը ու հողի պես ամբողջովին սևացած ասում է.

— Սպասի՛ր, Դանիլո՛։ Խելառ ձիուն պողպատի սանձ է հարկավոր։ Տո՛ւր ինձ աղջիկդ կնության։

— Դու էլ բա՛ն ասացիր,— քմծիծաղ տվեց Դանիլոն,— վերցրու, թե որ կարող ես։

—Շատ լավ,— ասաց Լոյկոն ու դարձավ Ռադային.— Դե՛, աղջի՛կ, լսիր ինձ մի քիչ ու շատ մի՛ փքվիր։ Քեզ պես աղջիկներ ես շատ եմ տեսել, է՛, ինչքան շա՛տ։ Բայց ոչ մեկը իմ սիրտը չի շարժել այնպես, ինչպես դու։ Է՛հ, Ռադա՛, գերի ես դարձրել դու իմ հոգին։ Ի՞նչ արած։ Ինչ որ լինելու է, թող լինի, և... չկա այնպիսի նժույգ, որին նստելով դու կարո-

դանաս ինքդ քեզանից հեռու սլանալ... Աստծո առաջ, իմ պատվի առաջ, քո հոր և այս բոլոր մարդկանց առաջ քեզ կին եմ վերցնում։ Բայց տե՛ս. իմ ազատությունը չխանգարես դու. ես ազատ մարդ եմ, ապրելու եմ այնպես, ինչպես ինքս կուզեմ։— Եվ ատամները սեղմած, աչքերը շողացնելով մոտեցավ նրան։ Նայում ենք՝ ձեռքը մեկնեց նրան։ Ահա, մտածում ենք, սանձ հագցրեց տափաստանի նժույգին Ռադան։ Հանկարծ տեսնում ենք՝ ձեռքերը թափահարեց ու՝ շրա՛խկ, ծոծրակի վրա ընկավ գետին...

Ի՞նչ հրաշք է սա։ Կարծես գնդակը դիպավ տղայի սրտին։ Բայց այդ Ռադան էր երկար մտրակը շրխկացրել տղայի ոտքերին ու քաշել իրեն. այ թե ինչու էր ընկել Լոյկոն։

Եվ նորից պառկել է աղջիկը անշարժ ու ժպտում է լուռ։ Նայում ենք, թե ինչ է լինելու, իսկ Լոյկոն նստել է գետնին ու գլուխը սեղմել երկու ձեռքի մեջ, ասես վախենում է, թե հիմա կպայթի այն։ Հետո վեր կացավ կամաց ու գնաց տափաստան՝ առանց նայելու որևէ մեկին։ Նուրբ շշնջաց ականջիս.— Հետևի՛ր նրան։— Ու գիշերային խավարի մեջ տափաստանով սողացի ես Զորարի ետևից։ Այդպես էր, բաղե՛»։

Մակարը ծխամորճից թափ տվեց մոխիրը և սկսեց նորից լցնել այն։ Ես ավելի պինդ փաթաթվեցի շինելի մեջ և պառկած նայում էի նրա դեմքին, որ սևացել էր արևից ու քամուց։ Նա խստությամբ գլուխն օրորում ու ինչ-որ բան էր շշնջում ինքն իրեն։ Ձերմակ բեղերը շարժվում էին, և քամին զգզում էր նրա գլխի մազերը։ Նա նման էր դարավոր կաղնու, որին խփել է կայծակը, բայց դեռևս զորեղ է, ամուր ու հպարտ իր ուժով։ Ծովն առաջվա պես շշնջում էր ափերի հետ, և քամին էլի տանում, տարածում էր նրա շշունջը տափաստանի վրա։ Նոնկան այլևս չէր երգում, իսկ երկնքում հավաքված ամպերն ավելի խավար էին դարձնում աշնանային գիշերը։

«Գնում էր Լոյկոն ոտքերն իրար գցելով, գլուխը կախ, ձեռքերը մտրակների պես ցած թողած և, հասնելով գետակի մոտի ձորը, նստեց մի քարի ու ախ քաշեց։ Այնպես ախ քաշեց, որ խղճահարությունից սիրտս արյունով լցվեց, բայց չմոտեցա նրան։ Խոսքով ցավին դարման չես անի, ճիշտ չէ՞։ Այդպե՛ս է։ Նստել է մի ժամ, երկու ժամ, երեք ժամ ու չի շարժվում. նըստել է ու նստել։

«Ես էլ պառկել եմ քիչ հեռու։ Լուսավոր գիշեր է, լուսինը

արծաթով է ողողել ամբողջ տափաստանը, և հեռվում երևում է ամեն ինչ։

Հանկարծ տեսնում եմ՝ թափառախմբից շտապ գալիս է Ռադան։

Սիրտս ուրախացավ։ է՛, լավ է,— մտածում եմ,— քաջ աղջիկ է Ռադան։ Ահա նա մոտեցավ Լոյկոյին, իսկ նա չի էլ լսում։ Ձեռքը դրեց նրա ուսին։ Լոյկոն ցնցվեց, ձեռքերը ետ քաշեց ու գլուխը բարձրացրեց։ Եվ վեր թռավ նա, դանակը դուրս քաշեց։ Ո՜ւհ, մորթելու է աղջկան, մտածում եմ ես, և արդեն ուզում էի ձեն տալ թափառախմբին, վազել նրանց մոտ, հանկարծ լսում եմ.

— Թո՛ղ։ Գլուխդ կփշրեմ։— Նայում եմ՝ Ռադայի ձեռքին ատրճանակ կա, որ բռնել է նա ուղիղ Զորարի ճակատին։ Ա՛յ քաջ սատան աղջիկ։ Դե լավ, մտածում եմ, հիմա նրանք հավասար ուժեր ունեն, տեսնենք ի՞նչ է լինելու։

— Լսի՛ր,— Ռադան ատրճանակը գոտին խրեց ու ասում է Զորարին.— ես քեզ սպանելու չեմ եկել, այլ՝ հաշտվելու, նետի՛ր դանակը։— Լոյկոն դանակը նետեց ու մռայլ նայում է աղջկա աչքերին։ Սքանչելի պատկեր էր դա, ախպերս։ Կանգնած են երկու մարդ ու նայում են իրար գաղանի նման, այնինչ երկուսն էլ այնքա՜ն լավ, այնքա՜ն քաջ մարդիկ են։ Նայում է նրանց պայծառ լուսինը և մեկ էլ ես, ուրիշ ոչինչ։

— Դե, լսիր ինձ, Լոյկո. ես սիրում եմ քեզ,— ասում է Ռադան։ Լոյկոն միայն ուսերը թոթվեց, կարծես ձեռքերն ու ոտքերը կաշկանդված էին։

— Կտրիճներ շատ եմ տեսել ես, բայց դու նրանցից ավելի քաջ ես ու գեղեցիկ և՛ հոգով, և՛ դեմքով։ Նրանցից ամեն մեկը իր բեղերը կխուզեր, թե որ ես աչքով նշան անեի, նրանք բոլորը իմ ոտքերի տակ կընկնեին, թե որ ես ուզենայի այդ։ Բայց ի՞նչ օգուտ։ Նրանք առանց այդ էլ այնքան էլ քաջ չէին, իսկ ես նրանց բոլորին կնամարդի կդարձնեի։ Աշխարհում քիչ են մնացել քաջ գնչուներ, Լոյկո, շատ քիչ։ Երբեք ես ոչ ոքի չեմ սիրել, Լոյկո, բայց քեզ սիրում եմ։ Եվ մեկ էլ սիրում եմ ազատությունը։ Ազատությունը, Լոյկո, ավելի եմ սիրում, քան քեզ։ Բայց առանց քեզ ես ապրել չեմ կարող, ինչպես և դու՝ առանց ինձ։ Եվ ահա, ես ուզում եմ, որ դու իմը լինես և հոգով, և մարմնով, լսո՞ւմ ես։— Լոյկոն ժպտաց։

— Լսում եմ։ Սիրտս ուրախանում է քո խոսքը լսելիս։ Դե, ասա՛, էլի՛ ասա։

— Էլի, ահա թե ինչ, Լոյկո. միևնույն է, ինչ էլ որ անես, ես քեզ կհաղթեմ, դու իմը կլինես։ Ուրեմն խզուր ժամանակ մի՛ կորցնի, քեզ սպասում են իմ համբույրները և փաղաքշանքները... Ամուր պիտի համբուրեմ ես քեզ, Լո՛յկո։ Իմ համբույրներից դու կմոռանաս քո կարիճային կյանքը... և քո աշխույժ երգերը, որ այնպես ուրախացնում են կարիճ գնչուներին, այլևս չեն հնչի տափաստանում. դու կերգես սիրային, քնքուշ երգեր ինձ համար՝ Ռադայի համար... Ուրեմն խզուր ժամանակ մի՛ կորցնի. ես ասացի այս, ուրեմն վաղը գու կհնազանդվես ինձ, ինչպես ղատանին՝ ավագ ընկերոջը։ Ամբողջ թափառախմբի առաջ կխոնարհվես ինձ, կհամբուրես իմ աջ ձեռքը, և այն ժամանակ ես կլինեմ քո կինը։

— Ա՛յ թե ինչ էր ուզում գրողի տարած աղջիկը։ Դա չտեսնված, չլսված բան էր. ծերունիներն ասում էին, որ միայն հին ժամանակներում չերնագորցիների մոտ է այդպես եղել, իսկ գնչուների մոտ՝ երբե՛ք։ Դե, բազե՛, կարո՞ղ ես դրանից ավելի ծիծաղելի բան հնարել։ Մի տարի էլ որ գլուխդ տրաքացնես, չես կարող։

Մի կողմ նետվեց Լոյկոն ու տափաստանով մեկ ճչաց, ոնց որ կրծքից վիրավորված։ Ցնցվեց Ռադան, բայց ցույց չտվեց։

— Դե, ուրեմն, մնաս բարով մինչև վաղը։ Իսկ վաղը կանես այն, ինչ ես հրամայեցի, լսո՞ւմ ես, Լո՛յկո։

— Լսում եմ։ Կանեմ,— հառաչեց Զորբարը և ձեռքը մեկնեց նրան։ Ռադան չնայեց էլ նրան, իսկ Լոյկոն երերաց բամու կոտրած ծառի պես և ընկավ գետին՝ հեծկլտալով ու ծիծաղելով։

Ա՛յ թե ինչպես ճմլեց կարիճին անիծյալ Ռադան։ Ես հազիվ ուշքի բերի նրան։

Էհե՛։ Ո՞ր գրողին է պետք, որ մարդիկ դարդի մեջ թաղվեն։ Ո՞վ է սիրում լսել, թե ինչպես դարդից մորմոքվելով տնքում է մարգկային սիրտը։ Դե ի՛նքդ մտածիր...

Վերադարձա թափառախումբ և ամեն ինչ պատմեցի ծերունիներին։ Մտածեցին, մտածեցին ու որոշեցին սպասել, տեսնենք ինչ է լինելու վաղը։ Եվ ահա թե ինչ եղավ։ Երեկոյան, երբ բոլորս հավաքվել էինք խարույկի շուրջը, եկավ և Լոյկոն։ Նա մռայլ էր, գիշերվա ընթացքում խիստ նիհարել էր և աչքերը ներս էին ընկել։ Նա ցած էր գցել հայացքը և առանց բարձրացնելու ասաց մեզ.

— Այ թե ինչ, ընկերնե՛ր։ Այս գիշեր նայեցի ես իմ սրտին և նրա մեջ տեղ չգտա իմ նախկին ազատ կյանքի համար։ Այնտեղ միայն Ռադան է ապրում, ուրիշ ոչինչ։ Ահա նա, գեղեցկուհի Ռադան, ժպտում է թագուհու պես։ Նա իր ազատությունն ավելի է սիրում, քան ինձ, իսկ ես նրան սիրում եմ ավելի, քան իմ ազատությունը, և որոշեցի խոնարհվել Ռադային, այդպես է հրամայել նա, որպեսզի բոլորը տեսնեն, թե ինչպես նրա գեղեցկությունը հնազանդեցրեց կարիճ Լոյկո Զորբարին, որը նրանից առաջ աղջիկների հետ խաղում էր այնպես, ինչպես ճախրաբազեն բադերի հետ։ Իսկ հետո նա կդառնա իմ կինը և կփայփայի ու կհամբուրի ինձ, այնպես որ ես այլևս ձեզ համար երգել չեմ ուզի և իմ ազատությունն էլ չեմ ափսոսա։ Այդպես չէ՞, Ռա՛դա։— Նա աչքերը բարձրացրեց և խոր նայեց նրան։ Ռադան լուռ ու խիստ գլխով արեց և մատնացույց արեց իր ոտքերը։ Իսկ մենք նայում էինք ու ոչինչ չէինք հասկանում։ Նույնիսկ մարդ ուզում էր հեռանալ այդտեղից, միայն թե չտեսներ, թե ինչպես Լոյկո Զորբարը աղջկա ոտքերն է ընկնում, թեկուզև այդ աղջիկը Ռադան լիներ։ Ամոթ էր մի տեսակ, և՛ դավալի, և՛ վշտալի։

— Դե՛,— գոչեց Ռադան Զորբարին։

— Էհե՛, մի՛ շտապիր, դեռ կձանձրանաս էլ...— ծիծաղեց Լոյկոն։ Ծիծաղեց, և կարծես պողպատ էր այդ, որ գրնդաց։

— Ահա և ամբողջը, ընկերնե՛ր։ Ի՞նչ է մնում անել։ Մնում է միայն փորձել. արդյոք իմ Ռադան ունի՞ այնպիսի ամուր սիրտ, ինչպես ցույց է տվել ինձ։ Դե, ուրեմն, կփորձեմ, ներեցեք ինձ, եղբայրնե՛ր։

Մենք դեռ չէինք էլ գլխի ընկել, թե ինչ է ուզում անել Զորբարը, իսկ Ռադան արդեն ընկած էր գետնին, մինչև դաստակը նրա կուրծքն էր խրված Զորբարի կեռ դանակը։ Մենք քար էինք կտրել։

Իսկ Ռադան դուրս քաշեց դանակը, մի կողմ նետեց և իր սև մազերի փնջով կրծքի վերքը սեղմած՝ ժպտալով ասաց բարձր ու հասկանալի.

— Մնաս բարո՛վ, Լո՛յկո, ես գիտեի, որ դու այդպես էլ կանես...— ու մեռավ աղջիկը...

Հասկացա՞ր դու այդ աղջկան, բազե՛։ Ահա թե ինչպիսին էր նա. թող հավիտյանս հավիտենից նզովյալ լինեմ ես, սատանի աղջիկ էր նա։

— Է՜հ, և կխոնարհվեմ ես քո ոտքերի առաջ, հպարտ թագուհի,— տափաստանով մեկ գոչեց Լոյկոն և գետին ընկնելով՝ շուրթերը հպեց մեռած Ռադայի ոտքերին ու անշարժացավ։ Մենք գլխարկներս վերցրել ու կանգնել էինք լուռ։

Ի՞նչ կասես այս բանին, բազե՛։ Հապա՛։ Նուրն ուզում էր ասել՝ «հարկավոր է կապկպել նրան...»։ Ձեռք չէր բարձրանա Լոյկո Զոբարին կապկպելու համար, ոչ ոքի ձեռքը չէր բարձրանա, և Նուրը գիտեր այդ։ Նա ձեռքը թափ տվեց ու մի կողմ քաշվեց։ Իսկ Դանիլոն վերցրեց դանակը, որ Ռադան մի կողմ էր նետել, երկար նայում էր նրան, շարժելով իր ճերմակ բեղերը, այդ դանակի վրա դեռ չէր սառել Ռադայի արյունը, և նա այնպես կեռ էր ու սուր... Իսկ հետո Դանիլոն մոտեցավ Զոբարին և դանակը նրա թիկունքը խրեց իսկ և իսկ սրտի դիմաց։ Դե, պարզ է, Ռադայի հայրն էր ծերունի զինվոր Դանիլոն։

— Ա՛յ, այդպես,— դեպի Դանիլոն դառնալով՝ պարզ ասաց Լոյկոն ու գնաց Ռադային հասնելու։

Իսկ մենք նայում էինք։ Պառկած էր Ռադան՝ ձեռքով կրծքին սեղմած իր մազերի փունջը, և նրա բաց աչքերը նայում էին կապուտակ երկնքին, իսկ նրա ոտքերի մոտ փռվել էր կտրիճ Լոյկո Զոբարը։ Գանգուրներն ընկել էին երեսին, և նրա դեմքը չէր երևում։

«Կանգնել էինք մենք ու մտածում էինք։ Դողում էին ծերունի Դանիլոյի բեղերը, և կիտվել էին նրա թավ հոնքերը։ Նա լուռ նայում էր երկնքին, իսկ ալեհեր Նուրը պառկեց գետնին երեսնիվայր և այնպես էր լալիս, որ ցնցվում էին նրա ծերունական ուսերը։

Եվ լալու բան էր իսկապես, բազե՛։

... Գնո՞ւմ ես դու, դե գնա քո ճամփան ու մի՛ շեղվիր։ Ուղիղ գնա։ Գուցե և իզուր չկորչես։ Ահա ամբողջը, բազե՛»։

Մակարը լռեց և ծխամորճը քիսայի մեջ դնելով՝ չեքմենի օձիքը կոճկեց։ Անձրև էր մաղում, քամին սաստկացել էր, ծովը մռնչում էր խուլ ու բարկացկոտ։ Մեկը մյուսի ետևից մարմրող խարույկին էին մոտենում ձիերը և իրենց խոշոր, խելացի աչքերով նայելով մեզ՝ անշարժ կանգ էին առնում, շրջապատելով մեզ խիտ օղակով։

— Հո՛պ, հո՛պ, էհե՛յ,— սիրալիր ձայն տվեց նրանց Մակարը և թփթփացնելով իր սիրելի թուխ նժույգի վզին՝ դարձավ ինձ ու ասաց.

— Քնելու ժամանակ է,— ապա գլխիցը հետ փաթաթվելով չեքմենի մեջ՝ տարածվեց գետնի վրա ու լռեց։ Իմ քունը չէր տանում։ Նայում էի տափաստանի խավարին, և օդի մեջ աչքիս առաջ լողում էր Ռադայի կերպարանքը՝ հպարտ ու արքայական գեղեցկությամբ։ Նա ձեռքով իր կրծքի վերքին էր սեղմել սև մազերի փունջը, և նրա թուխ ու բարակ մատների միջով կաթիլ-կաթիլ ծորում էր արյունը ու ընկնում գետնին հուր-կարմիր աստղիկների պես։

Իսկ նրա ետևից կրնկակոխ լողում էր կտրիճ Լոյկո Զոբարը։ Նրա դեմքը ծածկել էին սև ու խիտ գանգուրների փնջերը, որոնց տակից կաթկթում էին պաղ ու խոշոր արցունքներ...

Անձրևն ուժեղանում էր, և ծովը մռայլ ու հանդիսավոր հիմն էր երգում գեղանի գնչուների հպարտ զույգին՝ Լոյկո Զոբարին ու Ռադային՝ հին զինվոր Դանիլոյի դստերը։

Իսկ նրանք երկուսն էլ սահուն ու անձայն պտույտ էին գալիս գիշերային խավարի մեջ, և գեղեցիկ Լոյկոն ոչ մի կերպ չէր կարողանում հասնել հպարտ Ռադային։

1892

ՉԵԼԿԱՇԸ

Փոշուց մթագնած հարավային կապույտ երկինքը պղտոր է. թեժ արևը կանաչավուն ծովին նայում է կարծես մոխրագույն բարակ շղարշի միջից։ Նա համարյա չի անդրադառնում ջրի մեջ, որը բեկբեկվում է թիերի հարվածներից, շոգենավերի պտուտակներից, կտրտվում է թուրքական ֆելուգների և այլ նավերի ցոուկներից, որոնք նեղվածք նավահանգիստն ակոսում են ամեն ուղղությամբ։ Գրանիտի միջև կաշկանդված ծովի ալիքները իրենց գագաթներին սահող ահագին ծանրությունից ճնշվելով՝ բախվում են նավերի կողերին, ափերին, բախվում են ու փրփրած, զանազան անպետք իրերով կեղտոտված՝ քրթմնջում։

Խարսխաշղթաների զնգոցը, ապրանք բեռող վագոնների միացման շխկոցը, չգիտես որտեղ սալահատակի քարերին թափվող թիթեղների մետաղային ողբը, փայտի խուլ թրխկոցը, ապրանքակիր սայլերի ճռինչը, շոգենավերի սուլոցները՝ մերթ սուր, ականջ ծակող, մերթ խուլ մռնչացող, բեռնող բանվորների, նա-

վաստիների ու մաքսատան զինվորների աղաղակները — այս բոլոր ձայները միաձուլվում, դառնում են աշխատանքային օրվա խլացուցիչ երաժշտությունը և խռովահույզ ծփանքով կանգնում նավահանգստի վրա, իսկ գետնից շարունակ դեպի վեր են բարձրանում ձայների նորանոր ալիքներ մերթ խուլ, որոտընդոստ, որոնք ահեղորեն դղրդացնում են շրջակայքը, մերթ սուր, շառաչող, որոնք պատառոտում են տոթակեզ փոշոտ օդը։

Գրանիտը, երկաթը, փայտը, նավահանգստի սալահատակը, նավերն ու մարդիկ — ամեն ինչ Մերկուրիի կրքոտ հիմնի հզոր հնչյուններն են շնչում։ Սակայն մարդկանց ձայները, որոնք հազիվ են լսվում այդ հիմնի մեջ, թույլ են ու ծիծաղելի։ Հենց իրենք՝ մարդիկ էլ, որոնք սկզբում ծնունդ են տվել այդ աղմուկին, ծիծաղելի են ու խղճուկ. նրանց փոշոտ, ցնցոտիապատ, ժիր մարմինները ուսերին բարձած բեռների տակ կքած՝ դես ու դեն են վազվզում փոշու ամպի մեջ, տոթի ու ձայների ծովում, և որքա՜ն չնչին են նրանք՝ համեմատած իրենց շրջապատող երկաթե հսկաների, ապրանքների կույտերի, շառաչող վագոնների և այն ամենի հետ, որ ստեղծել են իրենք։ Իրենց ստեղծածը ստրկացրել, դիմազուրկ է արել նրանց։

Ուղևորվելու պատրաստ ծանր հսկա շոգենավերը սուլում են, ֆշշում, խոր հառաչում, և նրանց արձակած ամեն մի ձայնում արհամարհանքի ծաղր է զգացվում դեպի գորշագույն, փոշոտ մարդկանց ֆիգուրները, որոնք սողում են նրանց տախտակամածների վրա՝ խոր-խոր նավամբարները լցնելով իրենց ստրկական աշխատանքի արդյունքով։ Արտասվելու չափ ծիծաղելի են բեռնողների երկար շարքերը, որոնք իրենց ուսերով հազարավոր փութ հաց են կրում, լցնում նավերի երկաթե փորերը, որպեսզի միևնույն հացից մի քանի ֆունտ վաստակեն իրենց ստամոքսի համար։ Պատառոտված, քրտնամխած, հոգնածությունից, աղմուկից ու տապից բթացած մարդիկ և արևի տակ փայլփլող վիթխարի, հզոր մեքենաներ. մեքենաներ, որոնք վերջի վերջո շարժման մեջ են դրվում ոչ թե շոգիով, այլ հենց իրենց ստեղծողների մկաններով ու արյունով,— դաժան հեգնանքի մի ամբողջ պոեմ է այս համեմատությունը։

Աղմուկը ճնշում էր, փոշին ռունգները գրգռելով աչքերն էր կուրացնում, տոթը այրում էր մարմինը, ուժասպառ անում, և շուրջն ամեն ինչ թվում էր լարված, համբերությունից հանող, պատրաստ՝ պայթելու որպես մի ահեղ փոթորիկ, որից հետո

թարմացած օդում հեշտ կլինի շնչել ազատ ու թեթև, աշխարհում հանգիստ կտիրի, իսկ այս փոշոտ աղմուկը, խլացուցիչ, գրգռող ու թախծոտ կատաղության հասցնող այս աղմուկը, կանհետանա, և այն ժամանակ քաղաքում, ծովի վրա ու երկընքում կլինի խաղաղ, պարզ ու սքանչելի...

Հնչեցին զանգի տասներկու համաչափ ու զրնգուն հարվածները։ Երբ վերջին պղնձե ձայնը մարեց, աշխատանքի վայրի երաժշտությունն արդեն մեղմացել էր։ Էլի մի բոպե անց՝ նա դարձավ դժգոհության մի խուլ քրթմնջյուն։ Այժմ արդեն մարդկանց ձայնը և ծովի ճղփյունը ավելի լսելի էին դարձել։ Ճաշի ժամն էր այդ։

I

Երբ բեռնող բանվորները աշխատանքը թողած աղմկոտ խմբերով ցրվեցին նավահանգստում և մանրավաճառ կանանցից զանազան ուտելեղեն գնելով՝ հենց սալահատակի վրա, ստվերախիտ անկյուններում նստեցին ճաշելու, երևաց Գրիշկա Զելկաշը՝ մի հին, եփված գայլ, որ նավահանգստի մարդկանց լավ ծանոթ էր իբրև մոլի հարբեցող և ճարպիկ ու խիզախ գող։ Նա բոբիկ էր, պլիսե մաշված վարտիքով. գլուխը բաց, հագին չթե մի կեղտոտ շապիկ, որի պատռված օձիքի տակից երևում էին նրա շարժուն, չոր ու սուր-սուր ոսկորները, իսկ մեջքին կապած ուներ դարչնագույն մի կաշի։ Նրա գզգզված, ալեխառն սև մազերից, ճմռթված սուր գիշատիչ դեմքից երևում էր, որ հենց նոր է արթնացել քնից։ Նրա թխաթույր բեղերից մեկի մեջ հարդի մի ծեղ էր մնացել, մի ուրիշ ծեղ խճճվել էր ձախ այտի կոշտ մազերի մեջ, իսկ ականջի ետևը նա խրել էր հենց նոր պոկած լորենու մի փոքրիկ ճյուղ։ Երկարահասակ էր նա, ոսկրոտ, փոքր-ինչ կորացած, դանդաղ քայլում էր քարերի վրա և իր սապատավոր գիշատիչ քիթը դես ու դեն շուռ տալով՝ սուր հայացք էր գցում շուրջը. նրա մոխրագույն, պաղ աչքերը փայլփլում էին և բեռնակիրների մեջ փնտրում ինչ-որ մեկին։ Նրա թխաթույր, թավ ու երկար բեղերը շարունակ ցնցվում էին կատվի բեղերի նման, իսկ մեջքին դրած ձեռքերը շփվում էին միմյանց և երկար, ծուռ ու կառչուն մատները ջղայնորեն միահյուսվում էին իրար։ Մինչև իսկ այստեղ, իր նման խիստ ակներև հարյուրավոր շրջմոլիկների մեջ նա ուշադրություն էր

գրավում իր վրա, տափաստանի բազեի նմանվելով իր՝ այդ գիշատչային նիհարությամբ ու դարանակալ քայլվածքով, որ արտաքուստ սահուն էր ու հանդարտ, բայց ներքուստ գրգռված ու սրատես, ինչպես այն գիշատիչ թռչունի թռիչքը, որին հիշեցնում էր նա։

Երբ Չելկաշը հասավ բոսյակ-բեռնողների մի խմբի, որը նստած էր ածուխով լի քթոցների կույտի ստվերում, այդ խմբից նրա առաջը եկավ ամրակազմ մի երիտասարդ՝ կապույտ բծերով ծածկված ու ապուշ դեմքով և չանգռոտված վզով, որ ցույց էր տալիս, թե հենց նոր մի լավ ծեծ է կերել նա։ Երիտասարդը վեր կացավ և Չելկաշի կողքով քայլելով կիսաձայն ասաց.

— Նավատորմայինները երկու հակ կտորեղենի մասին գլխի են ընկել... փնտրում են։

— Է՞,— հարցրեց Չելկաշը՝ աչքով հանգիստ չափելով նրան։

— Էլ ի՞նչ է՝ Փնտրում են, ասում եմ։ Ուրիշ ոչինչ։

— Ի՞նչ է, ի՞նձ էին հարցնում, որ օգնեմ գտնելու։

Եվ Չելկաշը ժպտալով նայեց այն կողմը, որտեղ կամավոր նավատորմի պահեստն էր գտնվում։

— Կորի՛ր գրողի ծոցը։

Ընկերը ետ դարձավ։

— Է՛յ, սպասի՛ր։ Այդ ո՞վ է քեզ այդպես նախշել։ Տես, թե ոնց են մուրտառել սփաթը... Միշկային չե՞ս տեսել այստեղ։

— Վաղուց չեմ տեսել,— ձայն տվեց նա, քաշվելով իր ընկերների մոտ։

Չելկաշն առաջ գնաց։ Բոլորը նրան դիմավորում էին որպես լավ ծանոթի։ Բայց նա, որ միշտ զվարթ էր ու կծու խոսող, այսօր կարծես քեֆը տեղը չէր և հարցերին պատասխանում էր կարճ ու կտրուկ։

Որտեղից որտեղ ապրանքի հակերի ետևից դուրս պրծավ մաքսատան պահապանը, որ մուգ կանաչավուն, փոշոտ ու կռվի պատրաստ մի մարդ էր։ Նա կտրեց Չելկաշի ճամփան, սպառնական դիրք բռնեց նրա առաջ, ձախ ձեռքը գցեց սուսերի կոթին, իսկ աջով փորձեց բռնել նրա օձիքը։

— Կանգնի՛ր։ Ու՞ր ես գնում։

Չելկաշը մի քայլ ետ քաշվեց, աչքը գցեց պահապանի վրա ու չոր-չոր ժպտաց։

Պահապանի կարմիր, բարեսիրտ-խորամանկ դեմքն աշխատում էր դաժան տեսք ստանալ, ուստի փքվել էր, կլորացել ու կարմրատակել, նա հոնքերը շարժում էր, աչքերը չռել էր և շատ ծիծաղելի դարձել։

— Քեզ ասված է՝ չհամարձակվես նավահանգիստ մտնել, կողերդ կփշրեմ։ Իսկ դու էլի՞,— սպառնագին գոռաց պահապանը։

— Բարի օր, Սեմյոնիչ, վաղուց է իրար չենք տեսել,— հանդարտ ողջունեց Չելկաշը և ձեռքը մեկնեց նրան։

— Երանի երբեք չտեսնեի քո երեսը։ Գնա՛, գնա՛...

Բայց և այնպես Սեմյոնիչը մեկնած ձեռքը սեղմեց։

— Դու ինձ այն ասա,— շարունակեց Չելկաշը՝ իր կառչուն մատներից բաց չթողնելով Սեմյոնիչի ձեռքը և մտերմաբար ու բարեկամաբար թոթվելով այն,— Միշկային չե՞ս տեսել։

— Միշկա՞ն որն է։ Ոչ մի Միշկա չեմ ճանաչում։ Գնա կորի՛ր, ախպերս, թե չէ՝ պահեստի կառավարիչը կտեսնի, նա հո քեզ...

— Շեկոն, է՛ն, որի հետ անցյալ անգամ ես աշխատում էի «Կոստրոմա» նավի վրա,— իր խոսքը շարունակեց Չելկաշը։

— Որի հետ միասին գողություն ես անում, այ թե ինչպես ասա։ Քո այդ Միշկային հիվանդանոց տարան. ոտքը չուգունի տակ էր մնացել։ Գնա, ախպերս, քանի քեզ մարդավարի բան են ասում, գնա՛, թե չէ՝ վզակոթիդ տալով դուրս կանեմ...

— Ա՜, տեսնո՞ւմ ես։ Բա ասում ես՝ Միշկա չեմ ճանաչում։ Գիտես ուրեմն։ Բայց դու ինչո՞ւ ես այդպես չարացած, Սեմյո՛նիչ։

— Գիտե՞ս ինչ, դու խոսքը կտուրը մի՛ գցի, գնա՛ այստեղից...

Պահապանն սկսեց բարկանալ և շուրջը նայելով աշխատում էր իր ձեռքը դուրս քաշել Չելկաշի պինդ ձեռքից։ Չելկաշը իր թավ հոնքերի տակից հանդարտ նայում էր նրան և առանց նրա ձեռքը բաց թողնելու շարունակում էր իր զրույցը.

— Դու ինձ մի՛ շտապեցրու։ Այ, մի կուշտ կխոսեմ քեզ հետ ու կգնամ։ Դե, ասա, ո՞նց ես... Կնիկդ, երեխաներդ առո՞ղջ են,— և աչքերը փայլեցնելով, ծաղրական ժպիտով ատամները ցցելով ավելացրեց.— միշտ ուզում եմ հյուր գալ քեզ, բայց ժամանակ չի լինում, մի գլուխ խմած եմ լինում...

— Լա՛վ, լա՛վ, դու էդ բաները թող... Դու հանաք մի՛ անի, ոսկրոտ սատանա։ Ես, ախպերս, իսկապես որ... Հը՛, չինի՞ տներում, փողոցներում թալան անելու միտք ունես։

— Ինչո՞ւ որ։ Այստեղ եղածն էլ ինձ ու քեզ հերիք է ու հերիք։ Աստված վկա, հերիք է, Սեմյոնիչ։ Լսիր ինձ. էլի՞ երկու հակ կտորեղեն ես ծլկացրել... Տե՛ս, Սեմյոնիչ, զգույշ կաց, չինի թե բռնվես...

Սեմյոնիչը բարկացած ցնցվելով ու թուքը շաղ տալով ուզում էր ինչ-որ բան ասել։ Չելկաշը բաց թողեց նրա ձեռքը և երկար ոտքերով դանդաղ քայլեց դեպի նավահանգստի դարբասը։ Պահապանը կատաղաբար հայհոյելով շարժվեց նրա ետևից։

Չելկաշն ուրախացավ։ Նա կամաց սուլում էր ատամների արանքից և ձեռքերը շալվարի գրպանները խրած՝ դանդաղ առաջ էր գնում՝ կծու ծաղր ու կատակ նետելով աջ ու ձախ։ Նրան պատասխանում էին նույն ձևով։

— Տեսնո՞ւմ ես, Գրիշկա, մեծավորը ոնց է պաշտպանում քեզ,— ձայն տվեց մեկը բեռնող բանվորների միջից, որոնք արդեն ճաշը վերջացրած՝ մեկնվել էին գետնին հանգստանալու։

— Դե ես բորիկ եմ, դրա համար էլ Սեմյոնիչը ետևիցս գալիս է, որպեսզի ոտս չվնասեմ,— պատասխանեց Չելկաշը։

Մոտեցան դարբասին։ Երկու զինվոր տնտղեցին Չելկաշին և թեթևակի հրելով դուրս գցեցին փողոց։

Չելկաշը անցավ փողոցի մյուս կողմը և նստեց պանդոկի դռան դիմաց ընկած քարին։ Նավահանգստի դարբասից դղրդոցով դուրս էր գալիս բեռնած սայլերի երկար շարանը։ Նրանց ընդառաջ էին սլանում դատարկ սայլերը, որոնց մեջ գտնվող սայլապանները վեր-վեր էին թռչում։ Նավահանգիստը ոռնացող որոտ ու կծու փոշի էր արձակում...

Այդ կատաղի իրարանցման մեջ Չելկաշն իրեն հիանալի էր զգում։ Նրան սպասում էր մի կարգին գործ, որը քիչ աշխատանք և մեծ ճարպկություն էր պահանջում։ Նա վստահ էր, որ այդքան ճարպկություն կունենա ինքը, և աչքերը կկոցած երևակայում էր, թե ինչպես է քեֆ անելու վաղն առավոտյան, երբ գրպանը լիքը կլինի թղթադրամով... Հետո միտքն ընկավ ընկերը՝ Միշկան. նա շատ պետք կգար այս գիշեր, եթե ոտքը կոտրած չիներ։ Եվ Չելկաշը հայհոյեց քթի տակ, մտածելով, որ, թերևս, առանց Միշկայի չկարողանա գործը գլուխ բերել։ Ինչպիսի՞ գիշեր է լինելու... Նա նայեց երկնքին, ապա փողոցի երկարությամբ։

Նրանից մի վեց քայլ հեռու՝ մայթի մոտ, սալահատակի վրա, մեջքը մի քարի դեմ տված նստած էր մի երիտասարդ տղա, հագին կապույտ զոլավոր վերնաշապիկ ու նույնպիսի անդրավարտիք, ոտքերին տրեխներ և գլխին մի մաշված շիկագույն գլխարկ։ Նրա կողքին դրված էին մի փոքրիկ տոպրակ և անկոթ մի գերանդի, որ փաթաթված էր ծղոտե պարանով և խնամքով կապված բարակ թելով։ Երիտասարդը լայնաթիկունք էր, ամրակազմ, շեկ մազերով, արևախանձ ու հողմահար դեմքով և խոշոր, կապուտակ աչքերով, որոնք Չելկաշին էին նայում դյուրահավատ ու բարեհոգի։

Չելկաշն ատամները ցցեց, լեզուն դուրս գցեց և դեմքին զարհուրելի արտահայտություն տալով՝ աչքերը շռեց նրա վրա։

Երիտասարդն սկզբում տարակուսանքով աչքերը թարթեց, բայց հետո հանկարծ քրքջաց և ծիծաղի միջից գոչեց՝ «ա՛յ քեզ գիժ»։ Ապա նա համարյա առանց տեղից վեր կենալու անճոռնաբար իր քարից քարշ եկավ դեպի Չելկաշի քարը, իր հետ փոշու միջով քարշ տալով նաև տոպրակն ու գերանդին, քարերին խփելով գերանդու կրունկը։

— Հը՛, ախպերս, երևում է՝ լավ կոնծել ես,— դիմեց նա Չելկաշին՝ ձիգ տալով նրա շալվարից։

— Հա՛, տղա՛, էդպիսի մի բան է եղել,— ժպտալով խոստովանեց Չելկաշը։ Նրան միանգամից դուր եկավ մանկական պայծառ աչքերով այդ քաջառողջ, բարեհոգի երիտասարդը։— Հնձի՞ց ես գալիս։

— Բա էլ ի՞նչ... Հնձում ես մի վերստ, ձեռքդ մի գրոշ է ընկնում։ Բաններս վատ է։ Ինչքա՞ն մարդ կա... Բոլոր սովածները դուրս են թափվել, աշխատանքի գինը գցել, ինչ կուզես՝ արա։ Կուբանում երեք աբասի էին տալիս։ Ա՛յ թե բան էր հա՛... Իսկ ավելի առաջ, ասում են, երեք, չորս, հինգ մանեթ էին տալիս...

— Առա՛ջ... Առաջ հենց մենակ ռուս մարդու երես տեսնելու համար երեքանոց էին տալիս։ Հենց ես ինքս մի տասը տարի սրանից առաջ դրանով էլ ապրում էի։ Գնում ես ստանիցա, ռուս եմ, ասում ես։ Իսկույն սկսում են քեզ նայել, շոշափում են, զարմանում ու, երեք ռուբլին ստացիր։ Դեռ ուտացնում-խմացնում էլ են։ Եվ ապրիր որքան քեֆդ ուզի։

Երիտասարդը սկզբում Զելկաշին լսում էր բերանը լայն բացած, զարմանքի ու հիացմունքի արտահայտությունը կլոր դեմքին, բայց հետո, հասկանալով, որ այդ գլուխը սուտ է խոսում, շրթունքները չմփացրեց ու քրքջաց։ Զելկաշը ժպիտը բեղի տակ թաքցրած՝ լուրջ տեսք էր պահում։

— Խելա՛ռ, էնպես ես խոսում, որ ասես ճիշտ բաներ ես պատմում, ես էլ ականջ եմ դնում ու հավատում... Չէ, աստված վկա, առաջ այնտեղ...

— Դե, բա ե՞ս ինչ եմ ասում։ Ես էլ հենց այն եմ ասում, որ առաջ այնտեղ...

— Դե գնա՛...— ձեռքը թափ տվեց երիտասարդը։— Կոշկակա՞ր ես դու, թե ինչ։ Կամ դերձա՞կ ես։ Ի՞նչ գործի տեր մարդ ես։

— Ե՞ս,— հարց տվեց Զելկաշը ու մի պահ մտածելով ասաց.— Զկնորս եմ...

— Զկնո՛-ո՛-որս։ Ա՛յ թե հա՛։ Է՛, ո՞նց է, ձուկ բռնո՞ւմ ես...

— Ինչո՞ւ ձուկ։ Այստեղի ձկնորսները հո մենակ ձուկ չեն որսում։ Ավելի շատ՝ խեղդված մարդիկ, հին խարիսխներ, ջրի տակն անցած նավեր, ամե՛ն բան։ Դրա համար առանձին տեսակ կարթեր կան...

— Փչի՛ր, փչի՛ր... Երևի էն ձկնորսներից ես, որ իրենք իրենց մասին երգում են՝

Մենք թոռ ենք գցում
Ցամաք ափերում,
Կամ ամբարներում,
Նույնիսկ տներում...

— Իսկ դու այդպիսի մարդիկ տեսե՞լ ես,— հարցրեց Զելկաշը՝ ժպիտն աչքերում նայելով նրան։

— Չէ՛, որտե՞ղ պիտի տեսնեի։ Լսել եմ...

— Քեզ դո՞ւր են գալիս։

— Այդպիսի մարդի՞կ։ Ո՞նց ասեմ... Տղերք են էլի՛, իրենց համար ազա՛տ-արձակ...

— Իսկ ազատությունն ի՞նչ է որ... Դու սիրո՞ւմ ես ազատությունը։

— Ինչպե՞ս չես սիրի։ Ինքդ քո գլխի տերն ես. գնա՝ ուր քեֆդ ուզի, ինչ ուզում ես՝ արա... Ի՞նչ ասել կուզի։ Թե որ կարողանաս քեզ մի քիչ կարգին պահել ու վզիդ էլ բեռ չինի, դրանից էլ լավ բա՞ն։ Քեֆ արա՝ ինչքան սիրտդ կուզի, միայն թե աստծուն մտիդ մի՛ գցիր։

Զելկաշն արհամարհանքով թքեց և երեսը շուռ տվեց երիտասարդից։

— Վերցնենք հենց ինձ,— շարունակեց երիտասարդը։— Հայրս մեռել է, տնտեսությունս՝ աղքատ, մայրս պառավ կին է, հողը ուժ չունի։ Ի՞նչ պիտի անեմ։ Ապրել է պետք։ Բայց ո՞նց։ Հայտնի չի։ Մտածում եմ՝ տնփեսա գնամ մի հարուստ տուն։ Լա՛վ։ Գոնե աղջկա բաժինն առանձնացնեին... Բայց չէ՛. մանակ... ամբողջ տարիներ մեջդ կոտրիր նրա համար։ Տեսնո՞ւմ ես, թե ինչպիսի բաներ կան։ Իսկ թե որ մի հարյուր, հարյուր հիսուն մանեթ ետ գցեի, ձեռաց ոտի կկանգնեի և այդ Անտիպին էլ... Դե ա՛ռ, կեր։ Տալի՞ս ես Մարֆային։ Չէ՞։ Հարկավոր չի։ Փառք աստծու, գյուղում աղջիկ շատ կա։ Եվ, ուրեմն, ես բոլորովին ազատ կլինեի, ինքս իմ քեֆին... է՛հ,— երիտասարդը հառաչեց։— Իսկ հիմա տնփեսա գնալուց դուրս էլ ի՛նչ կարող ես անել։ Մտածում էի՝ կգնամ Կուբան, մի երկու հարյուր մանեթ կհավաքեմ ու՝ պրծավ. ազա ես։ Բայց գլուխ չեկավ... Ուզես, չուզես՝ բատրակ պիտի գնաս... Իմ ունեցածով ես ոչ մի անգամ ոտի կանգնել չեմ կարող։ է՛հ-է՛հ...

Տղան ամենևին չէր ուզում տնփեսա գնալ։ Նրա դեմքը նույնիսկ խամրած էր ու տխուր։ Նա ծանրորեն շուռ եկավ գետնի վրա։

— Հիմա ո՞ւր ես գնում,— հարցրեց Զելկաշը։

— Ո՞ւր պիտի գնամ. պարզ է՝ տուն։

— Ես ի՛նչ իմանամ, ախպերս, գուցե ուզում ես Թուրքի հողը գնալ։

— Թուրքի հո՛-ո՛ղը...— ծոր տվեց երիտասարդը։— Էդ ո՞ր ուղղափառ քրիստոնյան Թուրքի հողը կգնա։ Բա՛ն ասացիր դու էլ...

— Ա՛յ թե անխելքն ես հա՛,— հոգոց հանեց Զելկաշը և նորից երեսը դարձրեց զրուցակցից։ Այդ առողջ գյուղական երիտասարդը նրա մեջ ինչ-որ միտք էր արթնացնում...

Անորոշ, դանդաղ հասունացող մի ինչ-որ սրտամաշ զգացմունք շարժվում էր նրա ներսում և խանգարում կենտրոնանալ ու մտածել այն ամենի մասին, ինչ պետք է աներ այդ գիշեր։

Անպատիվ արված երիտասարդը կիսաձայն ինչ-որ բան էր քրթմնջում քթի տակ, երբեմն-երբեմն խեթ հայացք գցելով բոսյակի վրա։ Նրա թշերը ծիծաղելիորեն փքվեցին, շրթունքները բացվեցին, նեղացած աչքերն սկսեցին խիստ արագ ու ծիծաղելի կերպով բաց ու խուփ լինել։ Ըստ երևույթին, նա չէր սպասում, որ իր զրույցն այդ թավ բեղերով շրջմոլիկի հետ այդպես շուտ ու վիրավորական կվերջանա։

Շրջմոլիկն այլևս ուշադրություն չէր դարձնում նրա վրա։ Նա մտքի մեջ ընկած շվշվացնում էր ու նստած տեղը իր բոբիկ, կեղտոտ կրունկով թխկթխկացնում։

Երիտասարդն ուզում էր փոխհատուցել նրան։

— Է՛յ, ձուկ բռնող, դու շուտ-շո՞ւտ ես այդպես հարբում,— խոսել սկսեց նա, բայց նույն րոպեին ձկնորսն արագ շուռ եկավ նրա կողմը և հարցրեց.

— Է՛յ, ծծկեր, ուզո՞ւմ ես այս գիշեր ինձ հետ գործ անել։ Շո՛ւտ ասա։

— Ի՞նչ գործ,— վարանմունքով հարցրեց երիտասարդը։

— Ի՞նչ գործ... Ինչ որ կասեմ... Ձուկ բռնելու ենք գնալու։ Դու կթիավարես...

— Հը՛մ... ինչո՞ւ չէ, կգամ։ Աշխատել կարելի է։ Միայն թե... մի փորձանքի մեջ չընկնենք... Շատ խորամանկն ես... աչքիս մութ մարդ ես երևում...

Ձելկաշը կրծքի տակ այրուցքի պես մի բան զգաց և սառը չարությամբ կիսաձայն ասաց.

— Իսկ դու մի՛ դուրս տա, եթե խելքդ չի հասնում։ Թե չէ՝ այնպես կբամփեմ գլխիդ, որ աչքերդ պեծին կտան...

Նա վեր թռավ քարի վրայից, ձախ ձեռքով ձիգ տվեց իր բեղը, իսկ աջը սեղմելով՝ մի ամուր, ջլապինդ բռունցք կազմեց, և աչքերը փայլատակեցին։

Երիտասարդը վախեցավ։ Նա արագ շուրջը նայեց և աչքերը երկչոտ թարթելով՝ նույնպես վեր թռավ տեղից։ Նրանք լուռ կանգնած աչքով չափում էին իրար։

— Դե՞,— դաժան հարցրեց Ձելկաշը։ Նա եռում ու ցնցվում էր վիրավորանքից, որ հասցրել էր նրան այդ ջահել հորթուկը, որին խոսակցության ժամանակ նա արհամարհում էր, իսկ այժմ միանգամից սկսեց ատել նրա համար, որ այդպես ջինջ ու կապուտակ աչքեր ուներ, առողջ ու արևախանձ երես, կարճ ու ամուր կռներ, նրա համար, որ մի ինչ-որ գյուղում ուներ իր

տունը, որ մի հարուստ գյուղացի նրան ուզում էր տնփեսա դարձնել. ատում էր նրա ամբողջ անցյալ ու ապագա կյանքի համար, բայց ավելի շատ նրա համար, որ այդ տղան, որը իր՝ Ձելկաշի համեմատությամբ երեխա էր, համարձակվում էր սիրել ազատությունը, որի արժեքը չգիտեր, և որը նրան պետք չէր։ Միշտ անհաճո բան է տեսնել, որ այն մարդը, որին դու քեզանից վատ ու ցածր ես համարում, սիրում ու ատում է նույնը, ինչ որ դու, և այդպիսով դառնում է քեզ նման։

Երիտասարդը նայում էր Ձելկաշին, նայում և սկսում էր նրան գործատիրոջ տեղ դնել։

— Դե ես... հո հակառակ չեմ,— խոսեց նա։— Ես էլ հենց գործ եմ փնտրում։ Ինձ համար մեկ չի՞ քեզ մոտ աշխատեմ, թե ուրիշի։ Ասելս այն է, որ դու աշխատող մարդու տեսք չունես. մի տեսակ... շատ գջլոտն ես։ Դե ես հո հասկանում եմ, որ այդպիսի բան ամեն մարդու հետ էլ կարող է պատահել։ Տեր իմ աստված, ես, ի՞նչ է, հարբած մարդ չե՞մ տեսել։ Էնքա՛ն եմ տեսել... դեռ քեզանից էլ վատերը...

— Դե, լա՛վ, լա՛վ։ Ուրեմն համաձա՞յն ես,— արդեն փափկած հարցրեց Ձելկաշը։

— Ե՞ս։ Պարզ է... մեծ ուրախությամբ։ Գինն ասա։

— Գինը՝ նայած աշխատանքին։ Տեսնենք ինչ աշխատանք կլինի։ Այսինքն թե՝ ինչ որս կունենանք... Կարող է պատահել, որ մի հնգանոց ստանաս։ Հասկացա՞ր։

Բայց այժմ արդեն խոսքը վերաբերում էր փողին, իսկ գյուղացին այստեղ պարզություն էր ուզում և նույն պարզությունը պահանջում էր վարձողից։ Երիտասարդի մեջ նորից անվստահություն ու կասկած ծագեց։

— Այդպես, ախպերս, ինձ ձեռք չի տա։

Ձելկաշն իր դերի մեջ մտավ.

— Սպասիր, մի՛ խոսիր։ Գնանք գինետուն։

Եվ նրանք քայլեցին փողոցով կողք կողքի, Ձելկաշը՝ գործատիրոջ հպարտ տեսքով, բեղերը ոլորելով, երիտասարդը՝ հնազանդվելու լիակատար պատրաստակամության արտահայտությամբ, բայց և այնպես վախով ու անվստահությամբ լի։

— Իսկ անունդ ի՞նչ է,— հարցրեց Ձելկաշը։

— Գավրիլա,— պատասխանեց երիտասարդը։

Երբ նրանք հասան կեղտոտ ու մրոտ գինետուն, Ձելկաշը մոտեցավ բուֆետին, մշտական հաճախորդի մտերմությամբ

պատվիրեց մի շիշ օղի, շշի, տապակած միս, թեյ և այս ամենը թվելուց հետո բուֆետապանին կարճ նետեց՝ «բոլորը նիսիա», որին բուֆետապանը լուռ գլխով արեց։ Այդտեղ Գավրիլան միանգամից մեծ հարգանք զգաց դեպի իր գործատերը, որը, չնայած խաբեբա մարդու տեսքին, այդքան ճանաչված էր և վըստահություն էր վայելում։

— Դեհ, հիմա մենք կուտենք ու կարգին կխոսենք։ Դու մի քիչ նստիր այստեղ, ես հիմա կգամ։

Նա դուրս գնաց։ Գավրիլան շուրջը նայեց։ Գինետունը գտնվում էր մի նկուղում։ Այնտեղ խոնավ էր ու մութ և օղու, ծխախոտի, ծխի, ձյութի ու էլի ինչ-որ ուրիշ սուր հեղձուցիչ հոտով լցված։ Գավրիլայի դիմաց մի ուրիշ սեղանի մոտ նըստած էր նավաստու հագուստով մի հարբած մարդ՝ շեկ մորուքով, ածուխի փոշուց ու կուպրից ամբողջովին սևացած։ Նա շուտ-շուտ զկոտալով մի երգ էր գոմռում, որը կազմված էր ինչ-որ աղճատված ու աղավաղված, մերթ զարհուրելի շաչող, մերթ դղրդացող խոսքերից։ Երևում էր, որ այդ մարդը ռուս չէ։

Նրա ետևը նստած էին երկու մոլդավուհի։ Նրանք ցնցոտիների մեջ էին, սևահեր, արևախանձ և նույնպես հարբած ձայնով ինչ-որ երգ էին ճռճռում։

Ապա խավարի մեջ երևացին էլի ուրիշ կերպարանքներ, բոլորը վարմանալի գզլտված, բոլորը կիսահարբած, ճղճղան ու անհանգիստ...

Գավրիլայի սիրտն ահ ընկավ։ Գոնե շուտ վերադառնար իր գործատերը։ Գինետան աղմուկը խառնվել, միաձուլվել էր, և թվում էր, թե այդ մի ինչ-որ վիթխարի կենդանի է մռնչում, որը հարյուրավոր բազմապիսի ձայներ է արձակում և զայրացած կույտի պես դես ու դեն է նետվում, որ դուրս պրծնի այդ քարի փոսից, բայց ելք չի գտնում... Գավրիլան զգում էր, թե ինչպես մի ինչ-որ շշմեցնող ու ծանր բան է թափանցում իր մարմինը, որից գլուխը պտույտ է գալիս ու մթնում են աչքերը, որոնք հետաքրքրությամբ ու վախով հածում էին գինետանը...

Զելկաշը եկավ, և նրանք սկսեցին զրուցելով ուտել ու խմել։ Երրորդ բաժակից արդեն Գավրիլան հարբեց։ Նրա քեֆը բացվեց և ուզում էր մի որևէ դուրեկան խոսք ասել իր տիրոջը, որը,— ա՛յ քեզ հոգի մարդ,— այսպես անուշ-անուշ հյուրասիրեց իրեն։ Բայց բառերը, ալիք-ալիք կուտակվելով նրա կո-

կորդում, չգիտես ինչու, պոկ չէին գալիս հանկարծ ծանրացած լեզվի ծայրից։

Զելկաշը նայում էր նրան և հեգնաբար ժպտալով ասում.

— Կատարը տաքացել է... է՛-է՛հ, դմբո՛, հինգ բաժակով խելքդ կուլ տվիր, բա ո՞նց պիտի գործ անես...

— Բարեկամս...— թոթովում էր Գավրիլան,— մ-մ-մի վախի... ես... ես... ինչ ուզես կանեմ... եկ մի համբուրեմ... քեզ... հը՞...

— Դե լա՛վ, լա՛վ, ա՛ռ, մեկն էլ կոնծիր։

Գավրիլան խմում էր, և վերջապես հասավ այնտեղ, որ ամեն ինչ նրա աչքի առաջ սկսեց օրորվել հավասար, ալիքանման շարժումներով։ Դա անդուր բան էր և սիրտը խառնում էր։ Նրա դեմքը ապուշ ցնծություն էր արտահայտում։ Զանալով ինչ-որ մի բան ասել՝ նա ծիծաղելիորեն չփչփացնում էր շրթունքները և մռռում։ Զելկաշը ասես ինչ-որ մի բան հիշելով ակնապիշ նայում էր նրան, բեղերը ոլորում և մռայլ ժպտում։

Իսկ գինետունը մռնչում էր հարբած աղմուկով։ Շեկ նավաստին քնել էր սեղանին հենված։

— Դեհ, գնա՛նք,— ասաց Զելկաշը վեր կենալով։

Գավրիլան փորձեց վեր կենալ, բայց չկարողացավ և մի թունդ հայհոյանք տալով ծիծաղեց հարբած մարդու անիմաստ ծիծաղով։

— Բանդ բուրդ է,— ասաց Զելկաշը և նորից նստեց նրա դիմացի աթոռին։

Գավրիլան շարունակ քրքջում էր ու բութ հայացքով նայում գործատիրոջ երեսին։ Զելկաշն էլ նայում էր նրան ակնապիշ, ուշադիր ու մտախոհ։ Նա իր առաջ տեսնում էր մի մարդ, որի կյանքն ընկել էր իր գայլային ճանկը։ Նա զգում էր, որ կարող է շուռ տալ այդ կյանքը ինչպես ուզենա։ Նա կարող էր ճմռթել այդ կյանքը խաղաթղթի պես, բայց կարող էր և օգնել նրան՝ հաստատորեն մտնելու գյուղական կանոնավոր շրջանակի մեջ։ Մի ուրիշ մարդու տեր զգալով իրեն՝ Զելկաշը մտածում էր, որ այդ երիտասարդը երբեք չի խմի այն բաժակը, որ ճակատագիրը ստիպել է ճաշակել իրեն՝ Զելկաշին... Եվ նա ճակատագիրը ստիպել է ճաշակել իրեն՝ Զելկաշին... Եվ նա նախանձում էր ու ափսոսում այդ նորաբողբոջ կյանքը, ծիծաղում էր նրա վրա և նույնիսկ վշտանում, մտածելով, թե նա կարող է կրկին անգամ ընկնել այնպիսի ճանկեր, ինչպիսին իրենն են... Եվ այս բոլոր զգացմունքները, ի վերջո, Զելկաշի

մեջ միաձուլվելով. դարձան մի տեսակ հայրական, տիրական զգացմունք։ Նա խղճում էր երիտասարդին, բայց երիտասարդը պետք էր իրեն։ Այն ժամանակ Զելկաշը բռնեց Գավրիլայի կըռնատակից և ծունկով թեթևակի հրելով դուրս բերեց գինետան բակը, պառկեցրեց դարսած վառելափայտի ստվերի մեջ, իսկ ինքը նստեց նրա կողքին ու սկսեց ծխամորճ քաշել։ Գավրիլան մի քիչ շուռումուռ եկավ, մրթմրթաց ու քնեց։

II

— Հը՛, պատրա՞ստ է,— կիսաձայն հարցրեց Զելկաշը Գավրիլային, որը թիերով էր զբաղված։

— Այս րոպեին։ Ա՛յ, այս ցիցն է շարժվում։ Կարելի՞ է թիով մի հատ խփեմ գլխին։

— Չէ՛, չէ՛։ Ձայն չլինի։ Ձեռքով պինդ հուպ տուր, տեղը կընկնի։

Նրանք երկուսն էլ սուսուփուս զբաղված էին մի մակույկով, որ կապված էր առագաստանավերից մեկի նավախելին։ Այդտեղ մի ամբողջ նավատորմիզ կար՝ կաղնի տախտակ բարձած բազմաթիվ առագաստանավեր և թուրքական խոշոր նավեր, որոնց բարձած էին արմավենու, սանդալի գերաններ ու նոճու հաստ-հաստ կոճղեր։

Խավար գիշեր էր. երկնքում լողում էին խիտ ամպերի հաստ շերտեր, ծովը խաղաղ էր, ձյութի պես սև ու թանձր։ Այն խոնավ ու աղի բուրմունք էր շնչում և նավակողերին ու ափին խփելով քնքշանքով ճղփում՝ թեթևակի օրորելով Զելկաշի մակույկը։ Ափից շատ հեռու ծովում բարձրանում էին նավերի մթին կմախքները, երկնքի մեջ խրելով սրածայր կայմերը, որոնց գագաթներին գույն-գույն լապտերներ էին կախված։ Ծովն արտացոլում էր լապտերների լույսը, որոնք ցրվել էին նրա երեսին, որպես բազմաթիվ դեղին բծեր։ Նրանք գեղեցիկ դողդողում էին ծովի փափուկ, սև-փայլատ թավշի վրա։ Ծովը քնած էր օրվա աշխատանքից հոգնած մարդու առողջ ու խոր քնով։

— Գնա՛նք,— ասաց Գավրիլան՝ թիերը ջուրն իջեցնելով։

— Գնա՛նք։— Եվ Զելկաշը ղեկի մի ուժեղ հարվածով մակույկը հրեց նավերի միջև եղած ջրի շերտը։ Մակույկն արագորեն լողաց սահուն ջրի վրայով, և ջուրը թիերի հարվածներից

փայլփլեց կապթաֆոսֆորային լույսով, ու մի երկար, շողշողուն ժապավեն ձգվեց մակույկի ետևից։

— Հը՛, ո՞նց է, գլուխդ ցավո՞ւմ է,— քնքշանքով հարցրեց Զելկաշը։

— Սաստիկ... դժժում է չուգունի պես։ Մի քիչ թրջեմ ջրով։

— Ինչո՞ւ որ։ Դու, ավելի լավ է, ա՛ռ, ներսդ թրջիր, ավելի շուտ կանցնի,— և նա մի չիշ մեկնեց Գավրիլային։

— Դրո՞ւստ։ Տե՛ր, դու օրհնիր...

Լսվեց մեղմ կլկլոց։

— Է՛յ, դո՛ւ, ուրախացա՞ր։ Բավական է,— ընդհատեց նրան Զելկաշը։

Մակույկը նորից առաջ սլացավ՝ անաղմուկ ու թեթև պտույտներ գործելով նավերի միջև... Հանկարծ նա դուրս պրրծավ նավերի բազմության միջից, և ծովը, անծայրածիր ու հզոր ծովը, ծավալվեց նրանց առաջ, փռվելով դեպի կապուտակ հեռուները, որտեղ նրա ջրերից դեպի երկինք էին բարձրանում ամպերի լեռներ՝ դեղին, փափուկ երիզներով կապտամանուշակագույն ամպեր, կանաչավուն ու ծովագույն ամպեր և այն մոայլ, կապտագույն ամպերը, որոնք այնքան թախծոտ ու ծանր ստվեր են գցում։ Դանդա՞ղ, դանդա՞ղ սահում էին ամպերը՝ մերթ միաձուլվելով, մերթ միմյանց առաջ ընկնելով, խառնում էին իրենց գույներն ու ձևերը, կլանելով իրենք իրենց և նորից սկիզբ առնելով նոր գծագրությամբ, վեհապանծ ու մոայլ... Ինչ-որ ճակատագրական բան կար անշունչ զանգվածների այդ դանդաղ շարժման մեջ։ Թվում էր, թե այնտեղ, ծովի եզերքին նրանք անսահմանորեն շատ են և միշտ էլ այդպես անտարբեր պիտի վեր սողան դեպի երկինք, չար նպատակ ունենալով երբեք թույլ չտալ նրան, որ ննջացող ծովի վրա փայլի իր միլիոնավոր ոսկե աչքերով՝ գույնզգույն աստղերով, որոնք ապրում ու շողշողում են երազում, բարձր իղձեր հարուցելով այն մարդկանց մեջ, որոնց համար թանկ է դրանց անաղարտ փայլը։

— Լա՞վ է ծովը,— հարցրեց Զելկաշը։

— Ոչինչ, միայն թե ահալի է,— պատասխանեց Գավրիլան՝ թիերով համաչափ և ուժեղ խփելով ջրին։ Ջուրը հազիվ լսելի զնգում ու ճղփում էր երկար թիերի հարվածներից և շառնակ փայլփլում ֆոսֆորի ջերմ ու կապուտակ լույսի տակ։

— Ահալի՛ է... Հիմարն ես հա՛...— ծաղրանքով մրթմրթաց Զելկաշը։

Նա, այդ գողը, սիրում էր ծովը։ Նրա եռուն նյարդային բնավորությունը, որ ծարավի էր տպավորությունների, երբեք չէր հագենում դիտելով այդ անծայրածիր, ազատ ու հզոր մթին տարածությունը։ Եվ նրա համար վիրավորական էր այդպիսի պատասխան լսել այն հարցին, որ վերաբերում էր իր սիրած ծովի գեղեցկությանը։ Նավախելին նստած՝ նա ղեկով ճեղքում էր ջուրը և հանգիստ ու խաղաղ նայում առաջ՝ այդ թավիշ հարթության վրա երկար ու հեռու գնալու փափագով լցված։

Ծովի վրա նրա մեջ միշտ էլ ծնունդ էր առնում մի ծավալուն ու ջերմ զգացմունք, որ համակում էր նրա ամբողջ հոգին ու մի փոքր մաքրում այն կյանքի ապականությունից։ Նա գնահատում էր այդ և սիրում էր իրեն ավելի լավ տեսնել այդտեղ, ջրի ու օդի մեջ, որտեղ խոհերը կյանքի մասին և հենց ինքը՝ կյանքը, միշտ կորցնում են՝ առաջիններն իրենց սրությունը, երկրորդը՝ արժեքը։ Գիշերները ծովի վրա սահում է նրա քընկոտ շնչառության մեղմ շշունջը, և այդ անընդգրկելի ձայնը խաղաղություն է զեղում մարդու հոգու մեջ ու քնքշաբար զբաղելով նրա պոռթկումները՝ զորեղ իղձեր է ծնում նրա մեջ...

— Բա թո՞ր որտեղ է,— հանկարծ հարցրեց Գավրիլան՝ անհանգիստ նայելով մակույկի մեջ։

Զելկաշը ցնցվեց։

— Թո՛ր, ինձ մոտ է, նավախելում։

Բայց նա ինքն էլ ամաչեց, որ ստում է այդ տղայի առաջ և ափսոսաց իր խոհերն ու զգացմունքները, որ ոչնչացրեց այդ երիտասարդն իր հարցով։ Նա բարկացավ։ Կրծքի ու կոկորդի ծանոթ սուր այրոցը գրգռեց նրան, և նա խիստ ու կծու ասաց Գավրիլային.

— Դու, գիտե՞ս ինչ, նստել ես, նստիր քո տեղը։ Եվ ինչ որ քո գործը չի, քիթդ մեջը մի՛ խոթիր։ Քեզ վարձել են թիավարելու համար, դե թիավարիր։ Իսկ թե որ լեզվիդ զոռ տաս, քեզ համար վատ կլինի։ Հասկացա՞ր։

Մի րոպե մակույկը ցնցվեց ու կանգ առավ։ Թիերը կախված մնացին ջրի մեջ, փրփրացնելով այն, և Գավրիլան սկսեց անհանգիստ շուռումուռ գալ նստարանին։

— Թիավարի՛ր...

Մի թունդ հայհոյանք ցնցեց օդը։ Գավրիլան թափ տվեց թիերը։ Մակույկը կարծես վախեցավ և աղմուկով ջուրը ճեղքելով առաջ գնաց արագ, նյարդային ցնցումներով։

— Համաչա՛փ...

Զելկաշը վեր կացավ նավախելից, առանց թիերը բաց թողնելու ձեռքից, և իր պաղ աչքերը սևեռեց Գավրիլայի սփրթնած դեմքին։ Մեջքը ծռած, դեպի առաջ թեքված՝ նա նման էր կատվի, որ պատրաստվում է ոստյուն գործել։ Լսվում էր ատամների չար կրճտոց և ինչ-որ ոսկորների երկչոտ չխկչխկոց։

— Ո՞վ է գոռում,— լսվեց ծովից մի դաժան կանչ։

— Դե՛հ, սատանի ծնունդ, թիավարի՛ր... կամա՛ց... կըսպանեմ շան պես... Դե՛հ, թիավարի՛ր... Մե՛կ, երկո՛ւ... Ծպտուն ես հանել՝ պատառ-պատառ կանեմ... —թշշում էր Զելկաշը։

— Սո՛ւրբ կույս աստվածածին...— շշնջում էր Գավրիլան՝ վախից ու թափած ջանքերից թուլացած և դողդողալով։

Մակույկը սահուն շուռ եկավ ու ետ գնաց դեպի նավահանգիստ, որտեղ լապտերների լույսերը հավաքվել, բազմերանգ մի խումբ էին կազմել, և երևում էին կայմերի սյուները։

— Է՛յ, ո՛վ է գոռում,— նորից լսվեց մի ձայն։

Այժմ այդ ձայնն ավելի հեռու էր, քան առաջին անգամ։ Զելկաշը հանգստացավ։

— Դու ինքդ ես գոռում,— ասաց նա կանչերի ուղղությամբ, ապա դարձավ Գավրիլային, որը դեռ աղոթք էր մրմնջում.— Դե՛հ, ախպերս, այս քո բախտն էր։ Թե չէ, այդ գրողի բաժինները եթե մեր ետևից ընկնեին, քո բանը պրծած էր։ Հասկանո՞ւմ ես։ Ես քեզ իսկույն այնտեղ, ձկների մոտ պիտի ճամփեի...

Այժմ, երբ Զելկաշը խոսում էր հանգիստ և նույնիսկ բարեհոգի ձևով, Գավրիլան, որ դեռ դողում էր վախից, սկսեց աղաչել.

— Լսիր, արի բաց թող ինձ։ Քրիստոսի սիրուն, բաց թող։ Ափ հանիր ինձ, որտեղ ուզում է լինի։ Վայ ինձ, վայ ինձ, կորած եմ ես... Դե, աստծու սիրուն, բաց թող։ Ի՞նչ եմ արել ես քեզ։ Չեմ կարող... Էս տեսակ գործերում ես չեմ եղել... Առաջին անգամն է... Տե՛ր իմ աստված։ Ախր կորած եմ ես... Էս ինչպե՞ս եղավ, ախպերս, որ խելքից հանեցիր ինձ։ Հոգուդ մեղք ես անում... Հոգիդ կորցնում ես ախր... Ա՛յ թե փորձանքի մեջ ընկա հա՛...

— Ի՞նչ փորձանք,—խստությամբ հարցրեց Զելկաշը։—Հը՞, դե ասա՛, ի՛նչ է եղել որ։

Նրան զվարճացնում էր երիտասարդի վախը, և նա հրճվում

էր և՛ Գավրիլայի վախով, և՛ այն մտքից, թե՝ ահա տեսեք, ի՞նչ ահեղ մարդ է Զելկաշը։

— Մութ գործեր են, ախպերս... Բաց թող ինձ, աստծուն սիրուն... Ես քեզ մի վնաս տվե՞լ եմ, հոգիս...

— Դե լա՛վ, ձայնդ կտրիր։ Թե որ պետք չլիներիր, ես քեզ չէի վերցնի։ Հասկացա՞ր։ Դե ձայնդ կտրի՛ր։

— Տե՛ր իմ աստված,— հառաչեց Գավրիլան։

— Դե՛, դե՛, մի՛ նվա,— ընդհատեց նրան Զելկաշը։

Բայց այժմ արդեն Գավրիլան իրեն զսպել չէր կարողանում և լալիս էր մեղմ հեծկլտոցով, քիթը սրբում, շուռումուռ գալիս նստարանին, բայց թիավարում էր ավելի ուժեղ ու կատաղաբար։ Մակույկը նետի պես էր սլանում։ Նորից նրա առաջն եկան նավերի մթին իրաններ, և մակույկը կորավ նրանց մեջ, շուռումուռ գալով նավերի միջև ընկած ջրի նեղ շերտերով։

— Է՛յ, դո՛ւ, լսի՛ր։ Թե որ քեզ բան հարցնող լինի, ձայն չհանես, եթե ուզում ես ապրել։ Հասկացա՞ր։

— Ա՛խ-ա՛խ...— հուսահատ հառաչեց Գավրիլան՝ որպես պատասխան այդ խիստ հրամանի և դառնությամբ ավելացրեց.— իմ բանը պրծած է...

— Մի՛ նվա,— խստությամբ շշնջաց Զելկաշը։

Գավրիլան այդ շշունջից կորցրեց որևէ բան մտածելու ընդունակությունը և փորձանքի սառն նախազգացումով համակված՝ քարացավ։ Նա մեքենայաբար թիերն իջեցնում էր ջուրը, ետ էր թեքում, թիերը դուրս հանում, նորից ջուրը գցում և այդ անելիս շարունակ ակնապիշ իր տրեխներին էր նայում։

Ալիքների քնկոտ աղմուկը դժժում էր մռայլ և սարսափ ազդում։ Ահա նավահանգիստը... Նրա գրանիտե պատի այն կողմը լսվում էին մարդկային ձայներ, ջրի ճողփյուն, երգ ու բարակ սուլոցներ։

— Կա՛ց,— շշնջաց Զելկաշը։— Բաց թող թիերը։ Ձեռքերդ դեմ տուր պատին։ Կամա՛ց, գրողի՛ բաժին...

Գավրիլան ձեռները ողորկ քարերին դեմ արած՝ մակույկն առաջ էր տանում պատի երկարությամբ։ Մակույկը քարերին բուսած լորձին քսվելով առաջ էր գնում անձայն, անաղմուկ։

— Կա՛ց... Թիերը տո՛ւր։ Այս կողմը տուր։ Իսկ անձնագիրդ մո՞տդ է։ Տոպրակիդ մե՞ջ։ Տո՛ւր տոպրակդ։ Դե տո՛ւր, շո՛ւտ։ Այս, սիրելիս, նրա համար եմ անում, որ չփախչես։ Առանց թիերի դու էլի մի կերպ կարող էիր փախչել, բայց առանց անձնագրի սիրտ չես անի։ Սպասիր այստեղ։ Բայց տես, թե որ ծպտուն ես հանել, ծովի հատակը կիջնես...

Եվ հանկարծ ձեռքերով մի ինչ-որ բանի կառչելով՝ Զելկաշը օդ բարձրացավ և պատնեշի վրա անհայտացավ։

Գավրիլան ցնցվեց... Այնքա՞ն արագ կատարվեց այդ... Նա զգաց, թե ինչպես իրենից սահում, ընկնում է այն նզովյալ ծանրությունն ու վախը, որ զգում էր նա այդ երկարաքեղ, նիհար գողի մոտ... փախչե՞լ հիմա... Եվ նա ազատ շունչ քաշելով շուրջը նայեց։ Ձախ կողմը բարձրանում էր առանց կայմերի մի նավի սև կմախքը, որ ասես վիթխարի դագաղ լիներ՝ անմարդ ու դատարկ... Ալիքի յուրաքանչյուր հարվածը նրա կողին՝ առաջացնում էր ծանր հառաչանքի նման մի խուլ արձագանք։ Աջ կողմը ջրից բարձր ձգված էր խոնավ քարե պատնեշը, որ ասես պաղ ու ծանր օձ լիներ։ Ետևում ևս երևում էին ինչ-որ սև-սև կմախքներ, իսկ առջևում, պատնեշի ու այդ դագաղի կողի միջև երևում էր ծովը՝ լուսե ու ամայի իր վրա կախված սև-սև ամպերով։ Վիթխարի ու ծանր այդ ամպերը դանդաղորեն առաջ էին շարժվում՝ խավարի մեջ սարսափ տարածելով և պատրաստ՝ իրենց ծանրությամբ ճնշելու մարդուն։ Ամեն ինչ պաղ էր, սև, շարագուշակ։ Գավրիլան սարսափ զգաց։ Այդ սարսափն ավելի վատ էր, քան այն վախը, որ ազդել էր նրա վրա Զելկաշը։ Նա ամուր գրկեց Գավրիլայի կուրծքը, ճմլեց, մի երկչոտ կծիկ դարձրեց այն և մեխեց մակույկի նստարանին...

Իսկ շուրջը ամեն ինչ լուռ էր։ Ոչ մի ձայն չէր լսվում բացի ծովի հառաչից։ Ամպերը սահում էին երկնքում նույնքան դանդաղ ու տխուր, որքան առաջ, բայց նրանք ավելի ու ավելի շատ էին ելնում ծովից, և երկնքին նայելով՝ կարելի էր կարծել, թե այն էլ մի ծով է, միայն թե խռովահույզ ծով, որ շուռ է տված մյուս խաղաղ նիրհած ու ողորկ ծովի վրա։ Ամպերը նման էին ալիքների, որոնց գանգրագագաթ ճերմակ կատարները խոյանում էին դեպի ցած, դեպի երկիրը, նման էին անդունդների, որոնցից քամին դուրս է կորզել այդ ալիքները, և նման էին նոր բացված կոհակների, որոնք դեռ չեն ծածկվել կատաղության ու ցասումի կանաչավուն փրփուրով։

Գավրիլան իրեն ճնշված էր զգում այդ մռայլ խաղաղությամբ ու գեղեցկությամբ և զգում էր, որ ուզում է շուտ տեսնել իր տիրոջը։ Իսկ եթե նա այնտեղ մնա՞... Ժամանակը դանդաղ էր անցնում, ավելի դանդաղ, քան սահում էին երկնքի

ամպերը... Եվ լռությունը գնալով ավելի շարագույժ էր դառնում... Բայց ահա, պատնեշի ետևը լսվեց մի ճողփյուն, խշշոց և շշուկի նման մի բան։ Գավրիլային թվաց, թե հենց հիմա ինքը կմեռնի...

— Է՛յ, քնա՞ծ ես։ Բռնի՛ր... Զգույշ...— լսվեց Զելկաշի խուլ ձայնը։

Պատնեշի վրայից մի ինչ-որ խորանարդաձև ծանր բան էր իջնում։ Գավրիլան մակույկի մեջ առավ այն։ Իջավ էլի մի այդպիսի բան։ Հետո պատնեշի լայնքով ձգվեց Զելկաշի երկար իրանը, որտեղից որտեղ լույս ընկան թիերը, Գավրիլայի ոտքերի մոտ ընկավ նրա տոպրակը, և Զելկաշը ծանր շնչելով նստեց նավախելին։

Գավրիլան նրան նայելով ժպտում էր ուրախ ու երկչոտ։

— Հոգնեցի՞ր,— հարցրեց նա։

— Առանց դրան չի լինի, հորթո՛ւկ։ Դե՛հ, քեզ տեսնեմ, թիերը ձեռքդ առ։ Զոռ տուր ինչքան ուժ ունես։ Է՛հ, ախպերս, լավ վաստակ ունեցար։ Գործի կեսն արել ենք արդեն։ Հիմա մնում է այն սատանաների քթի տակով անց կենալ, իսկ հետո՝ ստացիր փողդ ու գնա քո Մաշկայի մոտ։ Իսկ դու Մաշկա ունե՞ս, տղա։

— Ունե-ե՛մ։— Գավրիլան աշխատում էր ամբողջ ուժով, կուրծքը՝ ոնց որ փուքս, ձեռքերը՝ պողպատե զսպանակներ։ Զուրը կլթկլթում էր մակույկի տակ, իսկ մակույկի ետևից ձգվող երկնագույն շերտը հիմա ավելի լայն էր։ Գավրիլան ամբողջովին քրտնամխել էր, բայց շարունակում էր թիավարել իր ամբողջ ուժով։ Այդ գիշեր երկու անգամ սարսափ ապրած լինելով՝ այժմ վախենում էր երրորդ սարսափից և ցանկանում էր միայն մի բան. շուտ ավարտել այդ նզովյալ գործը, ցամաք դուրս գալ ու հեռու փախչել այդ մարդուց, քանի դեռ նա իսկապես չի սպանել իրեն կամ բանտ չի հասցրել։

Նա որոշեց ոչ մի բանի մասին չխոսել Զելկաշի հետ, չհակառակվել նրան, անել ամեն բան, ինչ կհրամայի, և եթե հաջողվի ողջ-առողջ բաժանվել նրանից, հենց վաղն ևեթ մաղթանք կատարել Նիկոլայ Հրաշագործին։ Ջերմ աղոթքը պատրաստ էր դուրս հորդելու նրա կրծքից։ Բայց նա զսպում էր իրեն, փնչում շոգեմեքենայի պես ու շարունակում էր լռել՝ աչքի տակով նայելով Զելկաշին։

Իսկ Զելկաշն առաջ էր թեքվել իր չորուկ ու երկար հասակով և նման էր թռչունի, որ պատրաստվում էր թռչելու ինչ-որ տեղ։ Նա բազեի աչքերով նայում էր մակույկի առաջ, խավարի մեջ և իր գիշատիչ սապատավոր քիթը դես ու դեն դարձնելով՝ մի ձեռքով պինդ բռնել էր ղեկի բռնակը, մյուս ձեռքով քաշում էր բեղը, որը ցնցվում էր ժպիտներից, որոնք ծամում էին նրա բարակ շրթունքները։ Զելկաշը գոհ էր իր հաջողությունից, իրենից և այդ ջահելից, որին այնքան խիստ վախեցրել էր ինքը և դարձրել իր ստրուկը։ Նա տեսնում էր, թե ինչպես է ջանում Գավրիլան, և խղճաց նրան ու կամեցավ սիրտ տալ.

— Է՛յ,— քմծիծաղ տալով կամացուկ ասաց նա։— Ի՞նչ է, շա՞տ վախեցար, հա՞։

— Ոչի՞նչ...— հառաչեց Գավրիլան ու տնքաց։

— Դե հիմա էլ թիերին շատ մի զոռ տա։ Արդեն պրծանք։ Մի տեղ է միայն մնացել անցնելու... Հանգստացիր մի քիչ...

Գավրիլան հնազանդ կանգ առավ, շապկի թևքով սրբեց ճակատի քրտինքը և նորից թիերը ջրի մեջ թողեց։

— Դե, կամաց թիավարիր։ Այնպես, որ ջուրը ձայն չհանի։ Մնացել է, որ մի դուռ անցնենք։ Կամա՛ց, կամա՛ց... Թե չէ, ախպերս, այստեղ մարդիկ շատ խիստ են... Մեկ էլ տեսար՝ հրացանը ճակատիդ դեմ տվին։ Այնպես կտրաքացնեն, որ ծրպտուն հանելու ժամանակ էլ չես ունենա։

Այժմ արդեն մակույկը ջրի վրայով սահում էր գողեգող, համարյա անձայն։ Միայն թիերից կապտավուն կաթիլներ էին թափվում ծովը և նրանց կաթած տեղում նույնպիսի կապտավուն բծեր էին առաջացնում։ Գիշերը քանի գնում՝ ավելի լուռ ու ավելի խավար էր դառնում։ Այժմ արդեն երկինքը նման չէր ալեծուփ ծովի, ամպերը ցրվել էին երկնքի երեսին ու ծածկել այն միալար ծանր վարագույրով, որ անշարժ իջել էր ջրի վրա։ Իսկ ծովն ավելի էր խաղաղվել, մթնել և ավելի ուժեղ էր բուրում ջերմ ու աղի հոտ և արդեն այնքան լայն չէր թվում, ինչպես առաջ։

— Ա՜խ, թե մի անձրև գար...— շշնջաց Զելկաշը։— Այնպես կանցնեինք, ինչպես վարագույրի ետևից։

Մակույկի աջ ու ձախ կողմում սև ջրի միջից բարձրանում էին ինչ-որ շենքեր՝ բարժաներ, նույնպես սև, անշարժ ու մռայլ։ Նրանցից մեկի վրա մի լույս էր շարժվում, մեկը շրջում էր այնտեղ՝ լապտերը ձեռքին։ Ծովը նրանց կողերը շոյելով հնչում էր աղերսալի ու խուլ, իսկ նրանք պատասխանում էին խուլ ու պաղ

արձագանքով, ասես վիճում էին հետը՝ չուզենալով ինչ-որ բան զիջել։

— Պահակնե՞րը...— հազիվ լսելի շշնջաց Զելկաշը։

Այն պահից, երբ Զելկաշը Գավրիլային պատվիրել էր կամաց թիավարել, նորից սուր սպասողական վիճակ էր պաշարել Գավրիլային։ Նա ամբողջովին առաջ էր ձգվել խավարի մեջ, և նրան թվում էր, թե ինքն աճում է, ոսկորներն ու ջղերը բուն ցավ պատճառելով ձգվում էին նրա մեջ, գլուխը միայն մի մրոտքով լցված՝ ցավում էր, մեջքի մաշկը ցնցվում էր, իսկ ոտքերը ասես մանր, սուր ու պաղ ասեղներ էին ծակծկում։ Աչքերը կայծկըլտում էին խավարի մեջ լարված նայելուց, և նա ամեն րոպե սպասում էր, թե ահա մեկը դուրս կգա իրենց առաջ ու կգոռա. «Կացե՛ք, գողե՛ր...»

Այժմ, երբ Զելկաշը շշնջաց՝ «պահակները», Գավրիլան ցնցվեց, սուր, այրող մի միտք անցավ նրա միջով, անցավ ու դիպավ նրա պինդ լարված նյարդերին։ Նա ուզում էր աղաղակել, օգնության կանչել մարդկանց... Նա արդեն բացել էր բերանը, տեղից մի փոքր բարձրացել, կուրծքը փքել, օդ առել նրա մեջ, բերանը բաց արել, բայց հանկարծ սարսափահար եղած, կարծես մտրակահար՝ փակեց աչքերը և ընկավ նստարանին։

...Մակույկի առաջ, հեռու հորիզոնում, ծովի սև ջրից վեր բարձրացավ մի վիթխարի հրակապույտ սուր, վեր բարձրացավ, ճեղքեց գիշերային խավարը, իր սուր բերանով սահեց երկնքի ամպերի վրայով և որպես մի լայն ու կապույտ շերտ՝ փռվեց ծովի երեսին։ Փռվեց, և նրա փայլուն շերտի վրա խավարի միջից դուրս եկան մինչ այդ անտեսանելի մռայլ նավեր, լուռ գիշերային փարթամ մշուշով պատած։ Թվում էր, թե դրանք երկար ժամանակ եղել էին ծովի հատակում, ուր մղել էր նրանց փոթորկի հզոր ուժը, և ահա այժմ ծովից ծնունդ առած հրեղեն սրի հրամանով դուրս եկան այնտեղից, վերև բարձրացան, որպեսզի նայեն երկնքին և այն ամենին, ինչ ջրի երեսին էր գտնվում... Նրանց պարանները փաթաթվել էին կայմերին և ասես կպչուն ջրիմուռներ լինեին, որոնք այդ սև հսկաների հետ հատակից բարձրանալով՝ խճճել էին նրանց իրենց ցանցի մեջ։ Եվ նորից ծովի խորքերից վեր բարձրացավ նա, այդ զարհուրելի կապուտակ սուրը, վեր բարձրացավ շողշողալով, նորից ճեղքեց գիշերային խավարը ու նորից փռվեց այս անգամ արդեն մի այլ

ուղղությամբ։ Եվ այնտեղ, ուր նա փռվեց, նորից երևացին նավերի կմախքներ, որոնք մինչ այդ անտեսանելի էին։

Զելկաշի մակույկը կանգ առավ և օրորվում էր ջրի երեսին՝ ասես վարանմունքի մեջ։ Գավրիլան երեսը ձեռքերով ծածկած պառկել էր հատակին, իսկ Զելկաշը ոտքով հրում էր նրան ու թշշում կատաղաբար, բայց կամաց։

— Հիմա՛ր, մաքսատան հածանավն է դա... էլեկտրական լապտերի լույս է արձակում... վեր կա՛ց, դդո՛ւմ։ Ախր հիմա լույս կգցեն մեզ վրա... քեզ էլ կկործանես, ավանա՛կ, ու ինձ էլ քեզ հետ։ Դե՛, վեր կաց...

Եվ, վերջապես, երբ կոշիկի կրունկի հարվածներից մեկը մյուսներից ավելի ուժեղ իջավ Գավրիլայի մեջքին, նա վեր թռավ, դեռևս վախենալով բանալ աչքերը, նստեց նստարանին և շոշափելով թիակները գտնելով՝ մակույկն առաջ շարժեց։

— Կամա՛ց։ Կսպանե՛մ, դե՛ կամաց... Ա՛յ թե տխմարն ես, գրողը տանի քեզ... Ինչի՞ց վախեցար ախր, հը՞։ Մոռ՛ւթ... լապտեր է, ուրիշ ոչինչ։ Թիերդ կամա՛ց... Թթված սատանա... Այդ մաքսանենգներ են փնտրում։ Մեզ չեն հասնի, հեռու ենք արդեն։ Մի՛ վախենա, չեն հասնի։ Հիմա մենք...— Զելկաշը ցընծագին իր շուրջը նայեց։— Իհարկե, դուրս պրծանք... Թո՛ւհ... Ա՛յ թե բախտավոր մարդ ես դու, ա՛յ դանդալոշ դմբո՛...

Գավրիլան լուռ թիավարում էր և ծանր շնչելով խեթ-խեթ նայում այն կողմը, որտեղ դեռ բարձրանում ու իջնում էր այն հրավառ սուրը։ Նա ոչ մի կերպ չէր կարողանում հավատալ Զելկաշին, թե դա լապտեր է միայն։ Պաղ ու կապտավուն շողը, որ խավարը ճեղքելով ծովին արծաթի գույն էր տալիս, իր մեջ մի ինչ-որ անբացատրելի բան ուներ, և Գավրիլան նորից հոգեմաշ սարսափի՝ հիպնոզի մեջ ընկավ։ Նա թիավարում էր մեքենաբար և շարունակ կուչ գալով՝ կարծես վերևից հարվածի էր սպասում, և ոչինչ, ոչ մի ցանկություն չկար նրա մեջ, նա դատարկ էր ասես ու հոգի չուներ։ Այդ գիշերվա հուզմունքները վերջնականապես դուրս էին մղել նրանից ամեն մարդկային բան։

Իսկ Զելկաշը ցնծության մեջ էր։ Ցնցումների վարժված նրա նյարդերն արդեն խաղաղվել էին։ Գոհունակությունից ցընցվում էին նրա բեղերը, և աչքերի մեջ կրակ էր բորբոքվում։ Նա շատ լավ էր զգում իրեն, սուլում էր ատամների միջից, խոր ներշնչում ծովի խոնավ օդը, չորս կողմն էր նայում և բարձ-

սրտությամբ ժպտում՝ երբ հայացքը կանգ էր առնում Գավրիլայի վրա։

Քամի բարձրացավ և արթնացրեց ծովը, որի վրա հանկարծ մանր կոհակներ խաղացին։ Ամպերը ասես բարակեցին ու թափանցիկ դարձան, բայց ամբողջ երկինքը դեռ ծածկված էր նրանցով։ Չնայած որ քամին, թեպետ դեռ թեթև, ազատ սուրում էր ծովի վրայով, բայց ամպերն անշարժ էին և ասես ինչ-որ տխուր ու տաղտուկ բան էին խորհում։

— Դե՛, ախպերս, ժամանակն է, ուշքի արի։ Սրա՞ն նայեցեք. ասես կաշին սեղմել ու ամբողջ հոգին դուրս են քամել, ոսկրով լի մի պարկ է մնացել։ Դե, պրծավ ամեն ինչ, է՛յ...

Գավրիլայի համար, այնուամենայնիվ, հաճելի էր մարդկային ձայն լսել, թեկուզև այդ Զելկաշի ձայնը լիներ։

— Ես լսում եմ,— կամացուկ ասաց նա։

— Դե՛, դե՛։ Խմոր ես դառել... Հապա՛, նստիր ղեկի մոտ, իսկ ես կթիավարեմ. հոգնել ես երևի։

Գավրիլան մեքենաբար իր տեղը փոխեց։ Երբ Զելկաշը տեղափոխվելիս նայեց նրա երեսին և նկատեց, որ նա երերում է դողդողացող ոտքերի վրա, ավելի շատ խղճաց երիտասարդին։ Նա թփթփացրեց Գավրիլայի մեջքին ու ասաց.

— Դե լավ, լավ, մի՛ վախենա։ Բայց թե վաստակեցիր, հա՞։ Ես, ախպերս, բոլ փող կտամ քեզ։ Մի քսանհինգնոցի հետ ո՞նց ես, հը՞։

— Ինձ ոչ մի բան պետք չի... Միայն թե ափ դուրս գայի...

Զելկաշը ձեռքը թափ տվեց, թքեց ու սկսեց թիավարել՝ իր երկար ձեռքերով շատ ետ մղելով թիերը։

Ծովը արթնացավ։ Նա խաղում էր մանր ալիքներով, ծնունդ էր տալիս նրանց, զարդարում փրփուրի երիզով, զարկում իրար ու փոշի դարձնում։ Փրփուրը հալվելով թշշում էր ու հառաչում, և շուրջը ամեն ինչ լի էր ներդաշնակ շշուկով ու ջրի ճողփյունով։ Խավարը ասես աշխուժացել էր։

— Դե, ասա տեսնեմ,— խոսեց Զելկաշը,— հիմա կգնաս գյուղ, կպսակվես, կսկսես հող վարել, հաց ցանել, կնիկդ երեխաներ կբերի, ուտելիքը չի հերիքի ու այդպես, ամբողջ կյանքդ պիտի կաշվից դուրս գաս։ Դե ինքդ ասա. ի՞նչ համ կա դրա մեջ։

— Ի՞նչ համ պիտի լինի,— երկչոտ ու ցնցվելով պատասխանեց Գավրիլան։

Տեղ-տեղ քամին պատառոտում էր ամպերը, և պատռվածքների միջից նայում էին երկնքի կապույտ պատառները՝ մեկ-երկու հատիկ աստղերով։ Արտացոլելով ալեծուփ ծովի մեջ՝ այդ փոքրիկ աստղերը ոստոստում էին ալիքների վրա՝ մերթ անհայտանալով, մերթ նորից փայլելով։

— Դեպի ա՛ջ բռնիր,— ասաց Զելկաշը։— Շուտով կհասնենք։ Հը՞-ըմ... Պրծանք։ Լավ գործ տեսանք։ Տեսնո՞ւմ ես, ինչեր են լինում... Մի գիշերվա մեջ կես հազար չանթեցի։

— Կես հազա՞ր,— կասկածանքով ծոր տվեց Գավրիլան, բայց և իսկույն վախեցավ և ոտքով խփելով հակին՝ շտապ հարցրեց.— իսկ սա ի՞նչ բան է որ...

— Դա շատ թանկ բան է։ Իսկական գնով որ ծախես, հազարից էլ կանցնի։ Բայց ես թանկ գին չեմ ուզում... Ո՞նց է։

— Հըմ-հա՛...— հարցական ծոր տվեց Գավրիլան։— Թե որ իմ ձեռն ընկնե՞ր,— հառաչեց նա՝ իսկույն հիշելով իրենց գյուղը, աղքատիկ տնտեսությունը, իր մորը և այն բոլոր հեռավորն ու հարազատը, որի համար ինքն աշխատանքի էր դուրս եկել, որի համար այդպես տանջվել էր այդ գիշեր։ Նրան համակեց հիշողությունների ալիքը իրենց գյուղի մասին, որը զառիվայր բլրից իջնում էր դեպի ցած, դեպի այն գետակը, որ թաքնված էր կեչու, սպիտակ ուռենու և վայրի բալենու անտառի մեջ...— է՛հ, ի՛նչ լավ կլիներ,— թախիծով հառաչեց նա։

— Հը՛մ... Կարծում եմ՝ ձեռաց վագոն կնստեիր ու՝ տուն... Իսկ ո՞նց կսիրեին քեզ աղջիկները, ո՛ւհ... Վերցրու որը կուզես։ Տուն կշինեիր քեզ համար... Բայց, ասենք, տուն շինելու համար փողը մի քիչ պակաս կլիներ...

— Դրուստ է... տան համար պակաս կլիներ։ Մեզանում փայտեղենը շատ թանկ է։

— Դե, ի՛նչ կա որ։ Հին տունը կարգի կբերեիր։ Իսկ ձի՞։ Ո՞նց է, ունե՞ս։

— Ձի՞։ Ձի ունեմ, բայց շատ պառավ է գրողի տարածը։

— Դե, ուրեմն, ձի կառնեիր։ Լա՛վ ձի։ Կով... Ոչխարներ... Հավ ու սագ... Հը՞։

— Էլ մի՛ ասի... Օ՛հ, տեր իմ աստված, ո՞նց կապրեի...

— Հը՛մ, ոչինչ, ախպերս, վատ կյանք չէիր ունենա... Ես էլ դրանից մի քիչ հասկանում եմ։ Մի ժամանակ ես էլ իմ բունն ունեի... Հերս գյուղի առաջին հարուստներից մեկն էր...

Չելկաշը թիավարում էր դանդաղ։ Մակույկը ճոճվում էր ալիքների վրա, որոնք խփում էին նրա կողերին, ու հազիվ էր առաջ գնում մթին ծովի վրայով, իսկ ծովը քանի գնում՝ ավելի էր աշխուժանում։ Երկու մարդ ջրի երեսին օրորվելով երազում էին ու մտախոհ իրենց շուրջը դիտում։ Չելկաշն սկսեց Գավրիլային խոսեցնել գյուղի մասին, ցանկանալով մի քիչ սիրտ տալ նրան ու հանգստացնել։ Սկզբում նա խոսում էր բեղի տակ ծիծաղելով, բայց հետո զրույցի մեջ խոսքեր նետելով և Գավրիլային հիշեցնելով գյուղական կյանքի քաղցրությունները, որոնցից ինքը վաղուց հիասթափվել էր, մոռացել և միայն այժմ սկսեց հիշել,— նա աստիճանաբար ոգևորվեց և, փոխանակ երիտասարդին հարցուփորձ անելու գյուղի կյանքի ու գործերի մասին, իր համար էլ աննկատելիորեն սկսեց ինքը պատմել նրան։

— Գյուղացու կյանքում, ախպերս, գլխավորը ազատությունն է։ Ինքդ քո գլխի տերն ես։ Քո տունն ունես. ճիշտ է, մի գրոշ էլ չարժի, բայց քոնն է։ Դու քո հողն ունես. մի թիզ է, բայց քոնն է... Դու թագավոր ես քո հողի վրա... Դու մարդահաշիվ ես... Ամեն մեկից կարող ես պահանջել, որ քեզ հարգեն... Այդպես չի՞,— ոգևորված իր խոսքն ավարտեց Չելկաշը։

Գավրիլան հետաքրքրությամբ նայում էր նրան և ինքն էլ ոգևորվում։ Այդ խոսակցության ժամանակ նա արդեն մոռացել էր, թե ում հետ գործ ունի և իր առջև տեսնում էր իր նման մի գյուղացի, որը բազում սերունդների քրտինքով հավիտենապես կապած էր հողին, մանկության հիշողություններով կապված էր նրա հետ, բայց ինքնակամ անջատվել էր հողից ու նրա հոգսերից, դրա համար էլ իր արժանի պատիժն էր կրում։

— Այդ մեկը, ախպերս, ճիշտ ես ասում։ Շատ ճիշտ։ Այ, հիմա քեզ նայիր։ Ի՞նչ ես դու առանց հողի։ Հողը, ախպերս, ոնց որ հարազատ մայր, երբեք չես մոռանա նրան։

Չելկաշը մտքի մեջ ընկավ... Նա նորից զգաց կրծքի այն գրգռող այրուցքը, որ երևան էր գալիս ամեն անգամ, հենց որ մեկը դիպչում էր իր անսանձ ինքնասիրությանը, մանավանդ, եթե դա իր աչքում արժեք չունեցող անձ էր լինում։

— Դուրս ես տալիս...— ասաց նա ցասումով,— գուցե կարծում ես, թե այս բոլորը ես լո՞ւրջ ասացի... Ո՞նց չէ, գրպանդ լայն բաց արա։

— Ա՛յ քեզ մարդ...— նորից վախեցավ Գավրիլան։— Ես հո քո մասին չեմ ասում։ Քեզպեսները շա՜տ... է՜հ, ինչքա՜ն անբախտ մարդիկ կան աշխարհում... Որ ման են գալիս անտունանտեղ...

— Եկ, թիերը վերցրո՛ւ, հիմա՛ր,— կարճ հրամայեց Չելկաշը, չգիտես ինչու իր մեջ զսպելով թունդ հայհոյանքի մի ամբողջ հեղեղ, որ լցվել էր կոկորդը։

Նրանք նորից տեղները փոխեցին, և հակի վրայով դեպի նավախելն անցնելիս Չելկաշն իր մեջ մի սուր ցանկություն զգաց այնպիսի մի քացի տալու Գավրիլային, որ նա ջուրը գլորվի։

Կարճ խոսակցությունը դադարեց, բայց այժմ նույնիսկ Գավրիլայի լռությունից Չելկաշը գյուղի հոտ էր առնում... Նա մտաբերում էր անցյալը, մոռանալով ուղղություն տալ մակույկին, որին ալիքները շեղել ու քշում էին դեպի ծովի խորքը։ Կարծես ալիքները հասկանում էին, որ այդ մակույկը կորցրել է իր նպատակը, և ավելի ու ավելի վեր նետելով նրան՝ հեշտությամբ խաղ էին անում հետը ու թիերի տակ բռնկվում կապուտակ նրբին գույներով։ Իսկ Չելկաշի առջևով արագորեն անցնում էին անցյալի պատկերները, հեռավոր անցյալի, որը ներկայից բաժանված էր տասնմեկ տարվա բոսյակային կյանքի մի ամբողջ պատնեշով։ Նա հիշեց իր մանկությունը, իրենց գյուղը, իր մորը, այն կարմրաթուշ, փափլիկ կնոջը, որ մոխրագույն բարի աչքեր ուներ, հիշեց իր հորը, որ շեկ մորուքով ու խիստ դեմքով մի հսկա էր։ Հիշեց իր փեսայությունը, իր կնոջը՝ սևաչյա Անֆիսային, որ երկար ծամ ուներ, փափլիկ էր ու զվարթ, հիշեց, թե ինչպես ինքը գեղեցիկ գվարդիական զինվոր էր։ Ու նորից հիշեց իր հորը՝ արդեն ծեր ու աշխատանքից կորացած, հիշեց և մորը՝ կնճռոտված ու կռացած։ Հիշեց, թե գյուղն ինչպես դիմավորեց իրեն, երբ ծառայությունից վերադարձավ, ինչպես էր ամբողջ գյուղի առաջ հայրը հպարտանում իր Գրիգորիով, որ երկարաբեղ, առողջ ու ճարպիկ զինվոր էր։ Հիշողությունը՝ դժբախտների այդ խարազանը, մինչև իսկ անցյալի քարերին է կենդանություն տալիս, և անցյալում խմած թույնի մեջ մեղր է կաթեցնում...

Չելկաշն զգաց հայրենի օդի հանգստացնող ու փաղաքուշ հովը, որ իր հետ բերում էր և՛ մայրական սիրակեզ խոսքերը, և՛ իսկական գյուղացի հոր խրատները, շատ մոռացված հնչյուններ, և մայր հողի անուշ բուրմունքը, այն մայր հողի, որը հենց նոր էր հալվել, նոր էր հերկվել և հենց նոր էր ծածկվել աշնա-

նացանի զմրուխտագույն մետաքսով... Նա իրեն զգում էր մենակ, արմատահան եղած և ընդմիշտ հեռու նետված այն կյանքի ընթացքից, որի մեջ մշակվել էր իր երակների մեջ հոսող արյունը։

— Է՜հ, այս ո՞ւր ենք գնում,— հանկարծ հարցրեց Գավրիլան։

Չելկաշը ցնցվեց և գիշատիչի անհանգիստ հայացքով չորս կողմը նայեց։

— Ճիշտ որ... գրողը տանի... Հապա, զոռ տուր թիերին։

— Մտքի մե՞ջ էիր ընկել,— ժպտալով հարցրեց Գավրիլան։

— Հոգնել եմ...

— Ասում ես, ուրեմն, մենք էլ չե՞նք բռնվի սրանցով,— Գավրիլան ոտքը խփեց հակին։

— Չէ... Հանգիստ եղիր։ Այ, հիմա կհանձնեմ ու փողը կստանամ... Հը՜մ...

— Հինգ հարյո՜ւր...

— Պակաս չի լինի։

— Ա՜յ թե փող է հա՜... Թե որ իմը լիներ... Ի՜նչ կյանք կսկսվեր ինձ համար...

— Գյուղակա՞ն կյանք։

— Պարզ բան է։ Ձեռաց կգնայի ու...

Եվ Գավրիլան անձնատուր եղավ ցնորքներին։ Իսկ Չելկաշը լուռ էր։ Նրա բեղերը կախ էին ընկել, աջ կողքը թրջվել էր ալիքների ցայտերից, աչքերը ներս էին ընկել ու փայլը կորցրել։ Նրա կերպարանքի մեջ բոլոր գիշատիչ կողմերը փափկել էին, սքողվել նվաստացուցիչ մտախոհությամբ, որը դուրս էր նայում նույնիսկ նրա կեղտոտ շապկի ծալքերի միջից։

Նա կտրուկ շուռ տվեց մակույկը և ուղղեց դեպի մի ինչ-որ սև բան, որ դուրս էր ցցվել ջրի միջից։

Երկինքը նորից ծածկվել էր ամպերով, տեղում էր մանր ու գոլ անձրև, որ ալիքների կատարներին զարկվելով ուրախ ճլթոց էր հանում։

— Կանգնի՜ր։ Կամա՜ց,— հրաման տվեց Չելկաշը։

Մակույկի քիթը դիպավ նավի կողին։

— Քնա՞ծ են, ի՜նչ է, այդ գրողի տարածները,— մրթմրթաց Չելկաշը՝ կեռիկը գցելով նավակողից կախված ինչ-որ թոկերի։— Սանդուղքն իջեցրե՜ք... Անձրևն էլ սկսվեց, կարծես չէր

կարող մի քիչ առաջ գալ... Է՜յ, դո՜ւք, փալասնե՜ր... ի՞նչ բանի եք...

— Սելկա՜շ, դո՞ւ ես,— լսվեց վերևից մի փաղաքուշ մլավոց։

— Դե, սանդուղքն իջեցրո՜ւ։

— Կալիմերա, Սելկաշն է։

— Սանդուղքն իջեցրո՜ւ, խանձած սատանա,— մռնչաց Չելկաշը։

— Օ՜, բարկացած ես եկել այսօր... Էլո՜ւ։

— Բարձրացի՜ր, Գավրիլա,— դարձավ Չելկաշը իր ընկերոջը։

Մի բոպե չանցած՝ նրանք տախտակամածի վրա էին, որտեղ երեք մորուքավոր մթին կերպարանքներ տարօրինակ սըվսըվացող լեզվով իրար հետ աշխույժ խոսելով նավեզրից ներքև, Չելկաշի մակույկի մեջն էին դիտում։ Չորրորդ կերպարանքը երկար վերարկուի մեջ փաթաթված մոտեցավ նրան, լուռ սեղմեց ձեռքը, ապա կասկածանքով նայեց Գավրիլային։

— Փողերը պատրաստիր մինչև առավոտ,— կարճ ասաց նրան Չելկաշը։— Իսկ հիմա գնում եմ քնելու։ Գնա՜նք, Գավրիլա։ Ուտել ուզո՞ւմ ես։

— Քնել կուզեի...— պատասխանեց Գավրիլան, և հինգ բոպե անց՝ արդեն խոմփում էր, իսկ Չելկաշը նրա կողքին նստած ինչ-որ մեկի կոշիկն էր փորձում իր ոտքին և մտքի մեջ ընկած մի կողմ թքելով՝ տխուր սուլում էր ատամների միջից։ Հետո նա մեկնվեց Գավրիլայի կողքին և ձեռքերը գլխի տակ դնելով՝ բեղերը շարժեց։

Նավը մեղմ օրորվում էր խայտացող ալիքների վրա, ինչ-որ մի տեղից փայտի ողբագին ճռռոց էր լսվում, անձրևը մեղմ խփում էր տախտակամածին և ալիքները ճողփում էին նավակողին զարնվելով... Ամեն ինչ թախծոտ էր և հնչում էր ինչպես մայրական օրոր, որը հույս չէր դնում իր զավակի բախտի վրա...

Չելկաշը ատամները կրճտացնելով գլուխը բարձրացրեց, իր շուրջը նայեց և ինչ-որ բան շշնջալով նորից պառկեց... Նա ոտքերը չռեց, որից նմանվեց խոշոր մկրատի։

III

Առաջինը Չելկաշն արթնացավ։ Նա անհանգիստ շուրջը նայեց, բայց իսկույն խաղաղվեց ու նայեց Գավրիլային, որ դեռ քնած էր։ Նա անուշ խոմփացնում էր և երազի մեջ ժպտում իր

ամբողջ արևակեզ, առողջ, մանկական դեմքով։ Չելկաշը հոգոց հանեց և պարանե նեղ սանդուղքով վերև բարձրացավ։ Նավամբարի մուտքից նայում էր կապարագույն երկնքի մի կտորը։ Լույսը բացվել էր, բայց աշնան նման տրտում էր ու գորշ։

Չելկաշը վերադարձավ մի երկու ժամ հետո։ Նրա դեմքը կարմրած էր, բեղերը կտրիճավարի վերև էին ոլորված։ Նա հագել էր երկարաճիտ ամուր կոշիկներ, մի բաճկոն ու կաշվե շալվար և նման էր որսորդի։ Նրա ամբողջ հագուստը հնամաշ էր, բայց ամուր և շատ էր սազում, ծածկելով նրա նիհարությունը և քաջատես կերպարանք տալով նրան։

— Է՛յ, հորթո՛ւկ, վե՛ր կաց...— ոտքով հրեց նա Գավրիլային։

Գավրիլան վեր թռավ տեղից և քնաթաթախ նրան չճանաչելով՝ վախեցած պղտոր աչքերը հառեց նրան։ Չելկաշը քրքջաց։

— Տե՛ս, թե ինչ է դարձել,— վերջապես լայնորեն ժպտաց Գավրիլան։— Իսկական աղա...

— Մեզ համար դա ձեռաց բան է։ Բայց վախկոտ ես դու, հա՞։ Երեկ գիշեր քանի՞ անգամ մահվան դուռը հասար։

— Դե, ախր, ինքդ դատիր. առաջին անգամն էր, որ այդպիսի գործի մեջ էի ընկել։ Ախր մարդ կարող է հոգին կորցնել։

— Լավ, մեկ էլ որ լիներ, կգնայի՞ր, հը՞։

— Մեկ է՞լ... Դե... ինչպես ասեմ... Նայած թե մեջը ինչքան օգուտ կա, այ թե ինչ։

— Դե, ասենք թե՝ երկու հարյուրանոց։

— Երկու հարյուրանո՞ց... Ոչինչ... կարելի է...

— Սպասի՛ր։ Հապա հոգի՞դ։ Որ կորցնե՞ս...

— Դե ով է իմանում... կարող է թե չի կորչի,— ժպտաց Գավրիլան։— Ու թե հոգիդ չկորցրիր, մարդ կդառնաս մարգամիջում։

Չելկաշն ուրախ քրքջաց։

— Դե լավ, թողնենք հանաքները։ Արի ափ գնանք...

Եվ ահա նրանք նորից մակույկի մեջ են։ Չելկաշը ղեկի մոտ, Գավրիլան՝ թիերի։ Նրանց վերևը երկինքն է՝ մոխրագույն, հավասարապես ծածկված ամպերով, և մակույկի հետ խաղում է պղտոր կանաչավուն ծովը՝ աղմուկով վեր-վեր նետելով նրան ալիքների վրա, որոնք դեռ մանր են և իրենց պայծառ, ազի ցայտերը ուրախ-ուրախ նետում են մակույկի մեջ։ Մակույկի

քթի վրայով հեռվում երևում է ավազոտ ափի դեղին շերտը, իսկ նավախելի ետևում դեպի հեռուն է տարածվում ծովը՝ ակոսված ալիքների երամներով, որոնք զարդարվել են սպիտակ, փարթամ փրփուրով։ Նույն կողմը, ավելի հեռու, երևում են բազմաթիվ դանավեր, իսկ դեպի ձախ՝ կայմերի մի ամբողջ անտառ և քաղաքի տների ճերմակ կույտերը։ Այնտեղից ծովի վրայով գալիս է մի խուլ դժժոց, որ դղրդում է ու ալիքների ճողփյունի հետ միախառնվելով մի գեղեցիկ, զորեղ երաժշտություն կազմում... Եվ այդ ամենը շղարշված է մոխրագույն մշուշի մի նուրբ քողով, որ առարկաները հեռացնում է իրարից...

— Ո՜ւհ, իրիկնապահին ի՞նչ փոթորիկ է լինելու,— խոսեց Չելկաշը՝ գլխով ծովը ցույց տալով։

— Փոթորի՞կ,—հարցրեց Գավրիլան՝ ամբողջ թափով ալիքներն ակոսելով թիերով։ Նա արդեն ոտից-գլուխ թրջված էր ցայտերից, որ քամին շաղ էր տալիս ծովի վրա։

— Էհե՛...— հաստատեց Չելկաշը։

Գավրիլան մի փորձող հայացք գցեց նրա վրա...

— Հը՛, ինչքա՞ն տվին քեզ,— հարցրեց նա վերջապես, տեսնելով, որ Չելկաշը մտադիր չէ խոսք բանալու։

— Տե՛ս,— ասաց Չելկաշը, գրպանից մի բան հանելով ու մեկնելով Գավրիլային։

Գավրիլան տեսավ գույնզգույն թղթերը, և նրա աչքում ամեն ինչ պայծառ ծիածանի երանգ ստացավ։

— Օ՜... Իսկ ես կարծում էի խաբում ես ինձ... Այդ ինչքա՞ն է։

— Հինգ հարյուր քառասուն։

— Ա՛յ թե հա՜...— շշնջաց Գավրիլան՝ ագահ աչքերով նայելով հինգ հարյուր քառասունին, որոնք նորից թաքնվեցին Չելկաշի գրպանում։— Ա՛յ-ա՛յ-ա՛յ... Թե որ այդքան փողը իմը լինե՛ր...— և նա ճնշված հառաչեց։

— Քեֆ ենք անելու ես ու դու, տղա՛, ո՞նց ենք քեֆ անելու,— ոգևորված գոչեց Չելկաշը։— Օ՜, հերիք կանի... Բայց դու դարդ մի՛ անի, ախպերս, ես քեզ բաժին կհանեմ... Քառասունը կտամ քեզ, հը՞։ Գոհ կլինե՞ս։ Կուզե՞ս հենց հիմա տամ։

— Թե որ չես նեղանա... Ինչ կա որ։ Կվերցնեմ։

Գավրիլան ամբողջովին դողում էր սպասումից, որ սրի պես ծակծկում էր նրա կուրծքը։

— Ախ դո՛ւ, սատանի կրունկ։ Կվերցնե՞մ։ Դե վերցրու,

ախպեր, շատ եմ խնդրում քեզ՝ վերցրո՛ւ։ Ինքս էլ չգիտեմ, թե ի՞նչ պիտի անեմ այսքան փողը։ Ա՛ռ, վերցրու, ազատիր դու ինձ...

Զելկաշը Գավրիլային մեկնեց մի քանի թղթադրամ։ Նա դողդողացող ձեռքով վերցրեց դրամները, թիերը բաց թողեց և սկսեց փողը թաքցնել ծոցում, ագահորեն աչքերը կկոցելով, աղմուկով ներս քաշելով օդը, կարծես մի ինչ-որ այրող բան էր խմում։ Զելկաշը ծաղրական ժպիտով նայում էր նրան։ Իսկ Գավրիլան արդեն նորից ձեռքն էր առել թիերը և թիավարում էր նյարդայնորեն, շտապ, աչքերը ցած գցած, ասես վախենում էր ինչ-որ մի բանից։ Նրա ուսերն ու ականջները ցնցվում էին։

— Ա՛յ թե աչքածակն ես հա՞... Լավ բան չի... Ասենք՝ ինչ... Դե գյուղացի ես...— մտախոհ ասաց Զելկաշը։

— Ախր ձեռիդ որ փող լինի, ինչե՞ր ասես չես անի...— հանկարծ գոչեց Գավրիլան՝ սաստիկ հուզմունքի բռնկումով։ Եվ շտապ ու շնչասպառ, կարծես իր մտքերի ետևից վազելով ու բառեր որսալով սկսեց պատմել, թե ինչպես է գյուղական կյանքը՝ երբ փող ունես և երբ փող չունես։ Պատիվը, լիությունը, ուրախությունը...

Զելկաշը լսում էր նրան ուշադիր, լուրջ դեմքով, աչքերը մի ինչ-որ մտքից կկոցած։ Եվ մերթ ընդ մերթ էլ ժպտում էր գոհունակ ժպիտով։

— Հասանք,— ընդհատեց նա Գավրիլայի խոսքը։

Ալիքն իր մեջ առավ մակույկը և հարմար խրեց ավազի մեջ.

— Դե՛, ախպերս, հիմա արդեն պրծանք։ Հարկավոր է մակույկը մի քիչ հեռու քաշել, որ ալիքը չտանի։ Կգան կվերցնեն։ Իսկ ես ու դու՝ մնաս բարով... Այստեղից քաղաք ութ վերստ է։ Դու էլի քաղա՞ք ես վերադառնալու։

Զելկաշի երեսին շողում էր մի խորամանկ-բարեհոգի ժպիտ, և նա ինքն էլ ամբողջովին նման էր մի մարդու, որ մտածում է իր համար մի շատ հաճելի և Գավրիլայի համար անսպասելի բան անել։ Ձեռքը գրպանը խրած՝ նա այնտեղ խշխշացնում էր թղթադրամները...

— Չէ... ես չեմ գնա... ես...— Գավրիլան շնչասպառ էր լինում, ինչ-որ մի բան խեղդում էր նրան։

Զելկաշը նայեց նրան։

— Այդ ի՞նչ ես տրորվում,— հարցրեց նա։

— Ոչինչ...— Բայց Գավրիլայի դեմքը մերթ կարմրում էր,

մերթ գունատվում, և նա ճմռթվում էր տեղում, ոչ այն է ցանկանալով նետվել Զելկաշի վրա, ոչ այն է՝ դրդված մի ուրիշ ցանկությունից, որը կատարելը դժվար էր նրա համար։

Զելկաշին դուր չեկավ երիտասարդի այս գրգռված վիճակը։ Նա սպասում էր, թե ինչով կվերջանա այդ։

Հանկարծ Գավրիլան սկսեց ծիծաղել մի այնպիսի տարօրինակ ծիծաղով, որ նման էր հեկեկանքի։ Նա գլուխը կախել էր ցած, Զելկաշը նրա դեմքի արտահայտությունը չէր տեսնում, հազիվ երևում էին միայն Գավրիլայի ականջները, որոնք մերթ կարմրում էին, մերթ գունատվում։

— Դե՛, գրողը տանի քեզ,— ձեռքը թափ տվեց Զելկաշը։— Ի՞նչ է, սիրահարվե՞լ ես ինձ։ Տրորվում է աղջկա պես... Թե՞ ինձանից բաժանվելը դժվար է, է՛յ, խոխա՛։ Դե ասա՛, ի՞նչ ես ուզում։ Թե չէ՝ գնում եմ, հա՞...

— Գնում ե՞ս,— բարձր գոչեց Գավրիլան։

Ամայի ավազոտ ափը դողաց նրա կանչից, և ծովի ալիքները ողողված ավազի դեղին շեղջերը կարծես հուզվեցին։ Ցընցվեց և Զելկաշը։ Հանկարծ Գավրիլան պոկվեց իր տեղից, նետվեց Զելկաշի ոտքերը, գրկեց երկու ձեռքով ու քաշեց իրեն։ Զելկաշը երերաց, ծանրորեն նստեց ավազի վրա և ատամները կրճտացնելով՝ օդի մեջ թափով շարժեց բռունցք արած երկար ձեռքը։ Բայց նա չհասցրեց հարվածել, ձեռքը կանգ առավ Գավրիլայի ամոթխած ու աղերսական շշունջից։

— Հոգյա՛կս, անուշի՛կս... ինձ տուր այդ փողերը։ Տուր ինձ, Քրիստոսի սիրուն։ Քո ինչի՞ն են պետք... Ախր մի գիշերվա մեջ... միայն մի գիշերվա... Իսկ ինձ՝ տարիներ են պետք... Տուր ինձ... Աղոթք կանեմ քեզ համար... Երեք եկեղեցում մինչև մահս աղոթք կանեմ քո հոգու փրկության համար... Ախր դու քամուն ես տալու դրանք... Իսկ ես՝ հողին կտամ... Դե տուր ինձ... Ինչի՞դ է պետք... Քեզ համար ի՞նչ է որ դա... Միայն մի գիշեր՝ և դու հարուստ կլինես։ Եկ մի բարի գործ արա։ Ախր դու կորած մարդ ես... Ծուռ ճամփի վրա ես... Իսկ ես... օ՜... Տո՛ւր ինձ, աղաչում եմ։

Զելկաշը վախեցած ու զարմացած, չարացած նստել էր ավազին, մի փոքր ետ թեքված ու ձեռքերը հենած գետնին, նստել էր լուռ և աչքերը զարհուրելի չռել երիտասարդի վրա, որը գլուխը նրա ծնկների մեջ խրած՝ շնչասպառ լինելով իր աղերսանքն էր շշնջում։ Վերջապես Զելկաշը ետ հրեց նրան, վեր

թռավ տեղից և ձեռքը գրպանը խրելով՝ Գավրիլայի երեսին շպրտեց թղթադրամները։

— Ա՛ռ, խժռի՛ր...— գոչեց նա դողալով վրդովմունքից, սուր խղճահարությունից և դեպի այդ ագահ ստրուկը տածած ատելությունից։ Եվ փողերը նետելով՝ նա իրեն հերոս զգաց։

— Ես ինքս էի ուզում քեզ ավելին տալ։ Երեկ մեղքս եկար։ Գյուղը միտքս ընկավ... Մտածում էի՝ արի օգնեմ այս տղային։ Սպասում էի, թե դու ի՛նչ կանես, կխնդրես, թե ոչ։ Իսկ դու... է՛հ, փալաս։ Մուրացկան... Բա կարելի՞ է փողի համար այդպես տանջել իրեն... Տխմա՛ր։ Աչքածա՛կ շներ... Գլուխներդ կորցնում, հինգ կոպեկով ծախում եք ձեզ...

— Աղավնյա՛կս... Քրիստոսի օրհնանքը քեզ վրա... Ախր էս ի՞նչ է հիմա իմ ձեռին... հիմա ես... հարո՛ւստ եմ...— ճչում էր Գավրիլան ցնծությամբ՝ դողալով ու փողը պահելով ծոցում։— Ախ, դու... սիրելիս... Մինչև մահ չեմ մոռանա քեզ... Կնոջս էլ, երեխաներիս էլ կպատվիրեմ, որ աղոթեն քեզ համար։

Չելկաշը լսում էր նրա ուրախ հեծկլտանքները, նայում էր նրա ագահության ցնծությունից աղավաղված շողշողուն դեմքին և զգում, որ ինքը գող է, շրջմոլիկ, ամեն մի հարազատ բանից կտրված մարդ, բայց երբեք չի լինի այդպես ագահ ու ստոր, այդպես ինքն իրեն կորցրած։ Երբեք ինքն այդպիսին չի լինի... Եվ այդ միտքն ու զգացողությունը, համակելով նրան իր ազատության գիտակցությամբ, պահում էին նրան Գավրիլայի մոտ, այդ ամայի ծովափին։

— Բախտավորացրիր դու ինձ,— գոչում էր Գավրիլան և բռնելով Չելկաշի ձեռքը՝ քսում էր իր դեմքին։

Չելկաշը լուռ էր և գայլի նման բացել էր ատամները։ Իսկ Գավրիլան շարունակում էր իր զեղումները։

— Ես էլ ի՞նչ էի մտածում։ Երբ գալիս էինք այստեղ, մտածում էի՝ թիակով մի հասցնեմ սրա գլխին, այսինքն թե՝ քո գլխին, ու փողերը վերցնեմ, իսկ սրան, այսինքն՝ քեզ, ծովը... հապա՞։ Մտածում էի՝ ո՞վ պիտի իմանա։ Իսկ թե գտնեն էլ, ո՞վ պիտի հարցնի, թե ով է արել։ Այնպիսի մարդ չի, որ սրա համար աղմուկ բարձրանա... Ո՞ւմ է հարկավոր։ Ո՞վ պիտի աշխարհում հետաքրքրվի սրանով։

— Ե՛տ տուր փողերը,— մռնչաց Չելկաշը՝ Գավրիլայի կոկորդից բռնելով։

Գավրիլան փորձեց դուրս պրծնել, բայց Չելկաշի մյուս

ձեռքն էլ օձի նման փաթաթվեց նրան... Լսվեց պատռվող շապկի ճռռոց. և Գավրիլան պառկած ավազի վրա՝ խելացնոր աչքերն էր շռել, ձեռքի մատներով օդին էր կառչում ու ոտքերը թափահարում։ Ուղղաձիգ, շոր ու գիշատիչ տեսքով կանգնած՝ Չելկաշը շարությամբ ատամները ցցած ծիծաղում էր բեկ-բեկ շարախինդ ծիծաղով, և նրա բեղերը ջղայնորեն թռչկոտում էին ոսկրոտ ու սուր դեմքին։ Նրան երբեք իր ամբողջ կյանքում այդպես խիստ չէին ծեծել, և երբեք նա այդպես զայրացած չէր եղել։

— Հը՞, բախտավո՞ր ես հիմա,— ծիծաղի միջից հարցրեց նա Գավրիլային և մեջքը դարձնելով նրան՝ քայլեց քաղաքի կողմը։ Բայց դեռ հինգ քայլ էր չէր արել, երբ Գավրիլան կատվի պես կռացավ, ոտքի թռավ և ուժեղ թափ առնելով նրա վրա նետեց մի խոշոր կլոր քար ու գոչեց.

— Ա՛ռ քեզ...

Չելկաշը ճչաց, երկու ձեռքով բռնեց գլուխը, երերաց առաջ, շուռ եկավ դեպի Գավրիլան ու երեսնիվայր ընկավ ավազի վրա։ Գավրիլան քարացած նայում էր նրան։ Ահա նա ոտքը շարժեց, փորձեց գլուխը բարձրացնել և ցնցվելով լարի պես ձգվեց։ Այն ժամանակ Գավրիլան սկսեց փախչել հեռու, որտեղ մառախլապատ տափաստանի վրա կախվել էր թավ ու սև մի ամպ, և որտեղ մութն էր։ Ալիքները խշշում էին՝ նետվելով ավազի վրա, խառնվելով նրանց հետ ու նորից ետ քաշվելով։ Փրփուրը թշշում էր, և ջրի շիթերը թռչում էին օդի մեջ։

Սկսեց անձրև մաղել։ Սկզբում բարակ, բայց հետո հորդացավ, և կաթիլները իջնում էին երկնքից բարակ շիթերով։ Ջրի թելերից գոյացավ մի ամբողջ ցանց, որ միանգամից ծածկեց և՛ հեռավոր տափաստանը, և՛ ծովի հեռաստանը։ Բայց ահա անձրևի միջից նորից երևաց Գավրիլան, որ վազում էր առաջ թռչունի նման։ Մոտենալով Չելկաշին՝ ընկավ նրա առաջ և սկսեց շուռումուռ տալ նրան գետնի վրա։ Նրա ձեռքը քսվեց կարմիր ու ջերմ թանձր հեղուկի... Նա ցնցվեց ու ետ նետվեց խելացնոր, գունատ դեմքով։

— Ախպերս, վեր կաց,— անձրևի աղմուկի մեջ շշնջաց նա Չելկաշի ականջին։

Չելկաշն ուշքի եկավ և Գավրիլային ետ հրելով խռպոտ ձայնով ասաց.

— Հեռու կորի՛ր...

— Ախպերս, ներիր ինձ... այդ սատանան մղեց ինձ...— դողդողալով շշնջում էր Գավրիլան՝ համբուրելով Զելկաշի ձեռքը։

— Գնա... Հեռացիր...— խռխռում էր նա։

— Թողություն տուր հոգուս... Հարազատս... Ներիր ինձ...

— Անիծ... կորիր այստեղից... գրողի ծոցը գնա,— հանկարծ գոչեց Զելկաշը և նստեց ավազի վրա։ Նրա դեմքը գունատ էր, չար, պղտոր աչքերը փակվում էին, ասես խիստ քնել էր ուզում։— էլ ի՞նչ ես ուզում։ Անեղիքդ արիր... դե գնա՛, կորիր։— Եվ նա ուզեց ոտքով խփել վշտաբեկ Գավրիլային, բայց չկարողացավ, և նորից գետին կընկներ, եթե Գավրիլան չբռներ նրա ուսերից ու պահեր։ Այժմ Զելկաշի դեմքը Գավրիլայի դեմքի հետ կողք կողքի էին։ Երկուսն էլ գունատ էին ու սարսափահար։

— Թո՛ւ,— թքեց Զելկաշը Գավրիլայի լայն բացված աչքերին։

Գավրիլան հեզաբար թևքով սրբեց թուքը և շշնջաց.

— Ինչ կուզես՝ արա... Ծպտուն չեմ հանի։ Ներիր ինձ, ի սեր Քրիստոսի։

— Սողո՛ւն... շնություն անել էլ չես կարողանում...— արհամարհանքով գոչեց Զելկաշը, բաճկոնի տակից պատռեց իր շապիկը և լուռ, մերթ ընդ մերթ ատամները կրճտացնելով, սկսեց փաթաթել իր գլուխը։— Փողերը վերցրի՞ր,— ատամների միջից նետեց նա.

— Չեմ վերցրել, ախպերս։ Հարկավոր չի ինձ... փորձանք է փողը...

Զելկաշը ձեռքը տարավ իր բաճկոնի գրպանը, հանեց թղթադրամների կապոցը, մի հարյուրանոց նորից դրեց գրպանը, իսկ մնացածը նետեց Գավրիլային.

— Վերցրու և գնա՛։

— Չեմ վերցնի, ախպերս... Չեմ կարող։ Ներիր ինձ։

— Վերցրու, ասում եմ...— գոռաց Զելկաշը՝ զարհուրելի ոլորելով աչքերը։

— Ներիր... նոր կվերցնեմ...— երկչոտ ասաց Գավրիլան և փռվեց Զելկաշի ոտքերի առաջ, անձրևից առատորեն թրջված խոնավ ավազի վրա։

— Սուտ ես ասում, կվերցնես, գարշելի՛,— վստահ ասաց Զելկաշը և մազերից բռնած՝ դժվարությամբ բարձրացրեց նրա գլուխը ու փողը դեմ արավ դեմքին։

— Վերցրո՛ւ, վերցրո՛ւ։ Հո զուր չես աշխատել։ Վերցրու, մի՛ վախիր։ Մի՛ ամաչիր, որ քիչ մնաց մարդ պիտի սպաներիր։ Ինձ պես մարդկանցով ո՞վ պիտի հետաքրքրվի։ Դեռ շնորհակալություն էլ կասեն, եթե իմանան։ Դե, վերցրո՛ւ։

Գավրիլան տեսավ, որ Զելկաշը ծիծաղում է, և թեթևություն զգաց։ Նա փողն ամուր սեղմեց ձեռքում։

— Ախպերս, կներե՞ս ինձ, հը՞։ Ցե՞ս ուզում,— արցունքն աչքերին խնդրում էր նա։

— Հարազա՛տս...— Գավրիլայի եղանակով պատասխանեց Զելկաշը՝ ոտքի ելնելով ու օրորվելով։— Ի՞նչ է եղել որ... Բան չկա։ Այսօր դու ինձ, վաղը՝ ես քեզ...

— Է՛հ, ախպերս, ախպերս...— վշտաբեկ հառաչեց Գավրիլան՝ գլուխն օրորելով։

Զելկաշը նրա առաջ կանգնած ժպտում էր տարօրինակ ձևով, իսկ նրա գլխի փաթաթանը ոռպե առ ոռպե կարմրելով նմանվում էր թուրքական ֆեսի։

Անձրևը թափվում էր հեղեղի պես։ Ծովը խուլ մռնչում էր, ալիքները կատաղաբար ու ցասումով զարկվում էին ափերին։

Երկուսն էլ լուռ կանգնած էին։

— Դե՛, մնաս բարով,— ծաղրանքով ասաց Զելկաշը ու ճանապարհ ընկավ։

Նա երերում էր, ոտքերը դողում էին, և գլուխն այնպես տարօրինակ ձևով էր բռնել, որ կարծես վախենում էր կորցնի այն։

— Ներիր ինձ, ախպերս...— կրկին խնդրեց Գավրիլան։

— Ոչի՛նչ,— սառն պատասխանեց Զելկաշը՝ ճանապարհ ընկնելով։

Նա քայլում էր օրորվելով, ձախ ձեռքի ափով գլուխը բռնած, իսկ աջով՝ կամացուկ ձիգ տալով իր գորշագույն բեղը։

Գավրիլան նայում էր նրա ետևից, մինչև որ նա անհետացավ անձրևի մեջ, որն ավելի ու ավելի հորդանալով՝ թափվում էր ամպերից անթափանցելի, անվերջանալի բարակ շիթերով և տափաստանը պարուրում պողպատագույն անթափանց մշուշով։

Հետո Գավրիլան վերցրեց իր թրջված գլխարկը, խաչակնքեց երեսը, նայեց բռի մեջ պինդ սեղմած փողերին, ազատ ու խոր շունչ քաշեց, փողերը ծոցը խրեց և լայն ու հաստատ քայլերով առաջ գնաց ծովի ափով, Զելկաշի գնացած կողմին հակառակ։

Ծովը ոռնում էր, ծանր ու խոշոր ալիքները խփում առափնյա ավազին, փշրում և փրփրում, ցայտեր արձակում։ Անձրևը ուժեղ խփում էր գետնին ու ջրին... ոռնում էր քամին... Ամեն ինչ շուրջը լի էր ոռնոցով, մռնչոցով ու դժոցով... Անձրևը ծածկել էր և՛ ծովը, և՛ երկինքը։

Շուտով անձրևն ու ալիքների ցայտերը լվացին կարմիր բիծն այնտեղ, որտեղ Ջելկաշն էր պառկած, լվացին Ջելկաշի հետքերը և երիտասարդի հետքերը առափնյա ավազի վրայից... Եվ ծովի ամայի ափին ոչ մի հետք չմնաց այն փոքրիկ դրամայից, որ տեղի էր ունեցել երկու հոգու միջև։

ՄԻ ԱՆԳԱՄ ԱՇՆԱՆԸ...

...Մի անգամ աշնանը ես մի շատ անհարմար ու անախորժ դրության մեջ ընկա։ Մի օտար քաղաք էի եկել. ոչ մի ծանոթ չպատահեց, գրպանումս էլ փող չկար. և ես մնացի այդպես առանց բնակարանի ու առանց կոպեկի։

Առաջին օրերը ես ծախեցի հագուստիս մի մասը, որ կարելի էր ծախել։ Հետո ուղևորվեցի դեպի նավահանգիստ, որ գտնվում է «Գետաբերան» կոչվող հեռավոր քաղաքամասում։ Նավագնացության ժամանակ այնտեղ կյանքը եռում է. մարդ հեշտությամբ կարող է իր համար գործ գտնել։ Իսկ այդ ժամանակ ամեն ինչ դատարկ էր և խաղաղ, որովհետև արդեն հոկտեմբեր ամսվա վերջերն էին։

Ես թափառում էի միայնակ դատարկ շինությունների ու փոքրիկ տախտակամած խանութների միջև ու հազիվ էի շարժում հոգնած ոտքերս։ Աչքերս գետնին հառած, ուզում էի այդ ցեխերի մեջ ուտելիքի որևէ մնացորդ գտնել և մտածում էի միևնույն ժամանակ, ինչ լավ բան է կուշտ լինելը...

Քաղաքակրթության ներկա պայմաններում հոգեկան քաղցն ավելի հեշտ կարելի է հագեցնել, քան մարմնականը։ Դուք թափառում եք երկար փողոցներով. ձեր շուրջը բարձրանում են գեղեցիկ շինություններ, որոնց մասին ամենայն համարձակությամբ կարող եք ասել, որ նրանք նույնչափ գեղեցիկ են և ներսից. նույնչափ ճաշակով ու շքեղ կահավորված։ Այդ բոլորը կարող է ձեր մեջ քաղցր մտածմունքներ առաջ բերել ճարտարապետության, առողջապահության և էլի ուրիշ շատ մեծ-մեծ բաների մասին։ Ձեզ պատահում են տաք և գեղեցիկ հագնված մարդիկ. նրանք անչափ բարի են և քաղաքավարի. նրանք ամենայն զգուշությամբ խույս են տալիս ձեզանից, որպեսզի չնկատեն ձեր ցավալի գոյությունը... Աստված վկա, քաղցած մարդու հոգին ավելի լավ է կերակրվում միշտ, քան կուշտ մարդունը։ Ահա ձեզ մի դրություն, որից կարելի է շատ սրամիտ եզրակացություն դուրս բերել կուշտ մարդկանց օգտին։

...Գիշերը մոտենում էր։ Անձրևն էր գալիս, և հյուսիսից մռընչալով փչում էր քամին։ Նա կատաղի շվվոց էր բարձրացնում դատարկ մնացած փայտաշեն խանութներում և ծեծում էր հյուրանոցների տախտակած պատուհանները։ Գետի ալիքները նրա հարվածներից ուռչում ու փրփրում էին և կատաղի արագությամբ, միմյանց վրա թռչելով, շտապում, անհայտանում էին մթության մեջ... Կարծես գետը զգում էր, որ ձմեռը մոտենում է, և վախեցած փախչում էր սառույցի կաշկանդող շղթաներից, որ հենց այդ գիշեր կարող էր գցել նրա վրա հյուսիսային քամին։ Երկինքը թանձր էր ու խավար, այնտեղից անընդհատ տեղում էին անձրևի մանր կաթիլներ... Քիչ հեռվում նշմարվող երկու չորացած ու ծռված ծառերը և նրանց մոտի՝ կողքի վրա ընկած նավակը լրացնում, ընդգծում էին բնության այդ տխուր տեսարանը։

Հատակը կոտրված, շուռ եկած նավակ և սառը քամուց կողոպտված, ծեծված ու ծերացած ծառեր... Շուրջս ամեն ինչ ավերվել ու անապատ է դարձել. երկինքը շարունակում է սգալ, արտասվել։ Մռայլ է և դատարկ ամեն ինչ։ Կարծես ամեն բան իմ շուրջը սկսել է մեռնել. շուտով միմիայն ես պետք է մնամ կենդանի, իսկ հետո ինձ էլ սպասում է նույն սառը մահը...

Այդ ժամանակ ես 17 տարեկան էի — երանելի ժամանակ...

Ես երկար թափառեցի սառն ու խոնավ ավազներով, ատամներիս կրճտոցով շատ երգեր հյուսեցի սովի ու ցրտի պատվին, և հանկարծ փոքրիկ խանութներից մեկի ետևը տեսա մի փոքրիկ, կծկված ու գետնին կպած կանացի մարմին։ Անձրևից թրջված շորերը կպել էին նրա կռացած ուսերին։ Ես մոտեցա նրան ու սկսեցի դիտել։ Նա ձեռքով փորում էր թաց ավազը և ուզում էր, ըստ երևույթին, անցք բանալ դեպի խանութի ներսը...

— Այդ ինչի՞ համար ես փորում,— հարցրի ես, նստելով կողքին։

Նա մի ճիչ արձակեց և վեր թռավ։ Այժմ, երբ նա, դիմացս կանգնած, վախեցած նայում էր ինձ իր լայն բացած կապույտ աչքերով, ես տեսա, որ դա իմ հասակակից մի աղջիկ է, վերին աստիճանի գրավիչ դեմքով, որը, դժբախտաբար, զարդարված էր երեք հատ մեծ կապույտ բծերով։ Այդ մի փոքր փչացնում էր տպավորությունը, թեև կապտածները շատ կանոնավոր էին դասավորված՝ մի-մի հատ հավասար չափի աչքերի տակը և մի հատ ճակատի մեջտեղը։ Երևում էր, որ խփողի ձեռքը կատարելագործվել է մարդկային դեմքեր փչացնելու արհեստում։

Աղջիկը նայում էր ինձ, և նրա աչքերում փայլող երկյուղը հետզհետե մարում, անհայտանում էր... Ահա նա ավազոտ ձեռքերը թափ տվեց, ուղղեց գլխի չիթ աղլուխը, կծկվեց ու ասաց.

— Ինչպես տեսնում եմ, դու էլ ես սոված... դե, մի փոքրիր տեսնենք... Իմ ձեռքերը հոգնել են։ Այնտեղ,— նա գլխի շարժումով ցույց տվեց խանութը,— անպատճառ հաց կլինի, գուցե և երշիկ։ Այս խանութում դեռ առատուր կա...

Ես սկսեցի փորել. իսկ նա մի քիչ կանգնեց, նայեց ինձ, հետո նստեց իմ կողքին և սկսեց օգնել...

Մենք լուռ աշխատում էինք։

Ես չեմ կարող հիմա հաստատ ասել, հիշո՞ւմ էի արդյոք այդ ժամանակ քրեական օրենքների հաստատուն ժողովածուն. բարոյագիտություն, սեփականության իրավունք և այլ այսպիսի բաներ... որոնք, ինչպես ասում են իմաստուն մարդիկ, երբեք չպետք է մոռանալ կյանքում, ոչ մի դեպքում... Որպեսզի կարելուն չափ մոտ լինեմ ճշմարտությանը, խոստովանում եմ ես, կարծեմ, այնքան տարվել էի փորելով, որ ամեն բան մոռացել էի, բացի... այն բանից, ինչ որ կարող էի գտնել խանութում։

Արդեն մթնում էր։ Թաց ու ցուրտ խավարը հետզհետե թանձրանում էր իմ շուրջը։ Ալիքների աղմուկը հետզհետե խլանում էր, իսկ անձրևը ավելի ու ավելի ուժգին ծեծում էր նավակի տախտակները... Հեռվից լսվում էր գիշերապահի ճչանակի տխուր ու մելամաղձոտ ձայնը...

— Հատակը տախտակած չի՞ լինի արդյոք,— կամաց հարցրեց ինձ իմ օգնականը։ Ես չհասկացա ինչի մասին է հարցնում և լռեցի։

— Գուցե տախտակած է... Այդ ժամանակ մեր շարշարանքը իզուր կլինի. հողը կփորենք, կհասնենք տախտակներին, հետո՞... Ավելի լավ է կողպեքը կոտրենք... Թույլ կողպեք է երևում...

Լավ մտքերը շատ սակավ են ծագում կնոջ գլխում, բայց և այնպես... ծագում են, ինչպես տեսնում եք։ Ես միշտ գնահատել եմ լավ մտքերը և աշխատել եմ կարելուն չափ օգտվել նրանցից։

Կողպեքը գտա, քաշեցի և դուրս պոկեցի իր օղակների հետ միասին... Ընկերուհիս իսկույն օձի պես գալարվեց ու ներս սողաց խանութ՝ բացված քառանկյունի անցքով։

— Կեցցե՛ս, տղա,— բացականչեց նա ներսից։

Կնոջ մի փոքրիկ գովասանքը ինձ համար ավելի արժե, քան տղամարդու երկար գովաբանությունը, կուզեք լինի այդ տղամարդը նույնիսկ ավելի պերճախոս, քան բոլոր հին ու նոր հռետորները միասին վերցրած։ Բայց այն ժամանակ տրամադրությունս այսքան լավ չէր. և ես, առանց ուշադրություն դարձնելու ընկերուհուս սիրախոսության վրա, կարճ ու վախեցած հարցրի՝

— Բան կա՞...

Նա միապաղաղ ձայնով սկսեց թվել իր գյուտերը.

— Մի զամբյուղ... շշերով, դատարկ տոպրակներ... մի հովանոց... մի երկաթե դույլ...

Դրանցից ոչ մեկը չէր կարելի ուտել։

Ես զգում էի, որ հույսերս չքանում են։

...Բայց հանկարծ նա ուրախ բացականչեց.

— Ահա... ա՛յ որտեղ է։

— Ո՞վ։

— Հացը... մի բոմբի... միայն թրջված է, վերցրու...

Բոմբին ընկավ ոտքերիս մոտ, իսկ քիչ հետո հայտնվեց և ինքը՝ հարգելի ընկերուհիս։ Ես իսկույն մաս-մաս արի հացը և սկսեցի ագահ-ագահ ուտել...

— Դե ինձ էլ տուր տեսնենք... Եվ պետք է այստեղից հեռանալ... ո՞ւր գնանք...

Նա ուշադրությամբ նայեց չորս կողմը։

— Այ, ինչ-որ նավակ է երևում, գնանք նրա տակը նստենք։

— Գնանք։

Եվ մենք ուղևորվեցինք դեպի նավակը։ Երկուսս էլ ագահությամբ լափում էինք մեր ավարը։ Գետը մռնչում էր, անձրևը հետզհետե մեծանում... Մի ինչ-որ տեղից երկար ու սուր շվվոց էր լսվում, կարծես մեկը, ինչ-որ հզոր ու ոչ ոքից չվախեցող մի

էակ, սուլում ու ծաղրում էր մեր աշխարհի կարգերը, այդ անպիտան աշնանային երեկոն և մեզ՝ այդ երեկոյի երկու հերոսներիս... Սիրտս կծկվում ու նվում էր այդ շվվոցից։ Այնուամենայնիվ, ես մեծ ախորժակով ուտում էի հացը։ Բարեկամուհիս ետ չէր մնում ինձանից, և մենք այդպես մոտենում էինք նավակին։

— Անունդ ի՞նչ է,— չգիտեմ ինչու հարցրի ես։

— Նատաշա,— պատասխանեց նա անտարբեր եղանակով։

Ես նայեցի նրան և սաստիկ ցավ զգացի սրտիս մեջ։ Հետո հայացքս ուղղեցի դեպի իմ առաջ ընկած մթությունը, և ինձ թվաց, որ բախտիս միշտ հեգնոտ ու այլանդակ դեմքը խորհրդավոր կերպով նայում է ինձ ու ժպտում...

...Անձրևը շարունակում էր ծեծել նավակի կողերը, և նրա մեղմ շփշփոցը տխուր մտածմունքներ էր առաջացնում իմ մեջ։ Քամին շվվոցով ներս էր խուժում հատակի մի ճեղքից, որտեղ մի փոքրիկ տաշեղ, քամու շնորհիվ, շարունակ ինչ-որ անհանգիստ ու ողբալի ձայներ էր հանում։ Գետի ալիքները ճողփում էին ափերը և նույնպես ողբալի ու հուսակտուր ձայներ էին հանում։ Նրանք կարծես մի ինչ-որ բան էին պատմում, որ վաղուց ձանձրացրել, զզվեցրել է նրանց, մի սրտամաշուկ բան, որից նրանք կուզենային փախչել, բայց որի մասին դեռ անհրաժեշտ էր երկար խոսել, պատմել... Անձրևի շփշփոցը միանում էր ալիքների աղմուկի հետ, և նավակի շուրջը, գորշ մթության մեջ, մի երկար հառաչ էր լսվում. դա՝ բնության անմիտ կատակներից զզված, ամառվա ու աշնան, տաքի ու ցրտի, արևի ու անձրևի անվերջ փոփոխություններից նեղացած ու հոգնած՝ ծերուկ երկրագնդի երկար ու ծանր հառաչն էր... Քամին էլ իր շառաչյունով տխուր, հուսահատ երգեր էր հորինում ու տարածում գետի ալիքների և նրա սև ու անբնակ ափերի վրա...

Մեր տեղը, նավակի տակը, զուրկ էր հարմարություններից. նեղվածք էր ու խոնավ. կոտրված հատակից մեզ դիպչում էին անձրևի ցուրտ կաթիլները. քամին անտանելի էր։ Մենք լուռ նստել, դողում էինք։ Հոգնածությունից աչքերս փակվում էին։ Նատաշան մեջքը դեմ էր տվել նավակի կողքին և կուչ եկել, մի փոքրիկ գունդ էր դարձել։ Մնկները ձեռքերով գրկած ու կզակը հենած նրանց վրա, նա անթարթ նայում էր գետի կողմը, և նրա մեծ ու լայն բացած աչքերը ավելի ևս մեծ էին երևում իրենց տակի կապտածների շնորհիվ։ Նա բոլորովին չէր շարժվում, և

այդ անշարժությունն ու լռությունը, զգում էի, կամաց-կամաց ինչ-որ ահ էր գցում սրտիս մեջ. ես վախենում էի իմ հարևանուհուց... Ուզում էի խոսել նրա հետ, բայց չգիտեի ինչպես սկսել։

Նա ինքը խոսեց։

— Ախ, անիծյալ կյանք...— պարզ ու որոշ արտասանեց նա։

Եվ դա գանգատ չէր բախտից։ Նրա ձայնի մեջ այնքան անտարբերություն կար, որ չէր կարելի ասածը գանգատի տեղ ընդունել։ Երևում էր, որ մարդն ուղղակի մտածել է կյանքի մասին և եկել է մի որոշ եզրակացության, որ և հայտնում է այժմ, և որին ես չէի կարող պատասխանել առանց կեղծելու, առանց հակասելու ինձ։ Ես լուռ էի, իսկ նա կարծես չէր էլ նկատում ինձ, առաջվա պես անշարժ նստած էր։

— Մարդ չի էլ սատկում, պրծնի...— նորից խոսեց Նատաշան. այս անգամ կամաց և մտաղբաղ։ Եվ դարձյալ գանգատի ոչ մի նշույլ։ Դարձյալ երևում էր, որ մարդը մտածել է կյանքի մասին, նայել է իր վրա և հանգիստ հոգով եկել է այն եզրակացության, որ իր անձը կյանքի ծաղրից ու կատակներից ազատելու համար նա մի բան միայն կարող է անել —«սատկել»...

Մտքի այդչափ ճշտությունը և պարզությունը սիրտս լցրեց անասելի ցավով ու զզվանքով, և ես զգում էի, որ, եթե շարունակեմ լռել, լաց պետք է լինեմ... Իսկ դա ամոթ կլիներ մի կնոջ առջև, մանավանդ որ նա ինքն ահա լաց չէր լինում։ Ես վճռեցի խոսել։

— Ո՞վ է թակել քեզ,— հարցրի ես, որովհետև չկարողացա ուրիշ, ավելի մարդավարի խոսք գտնել։

— Պաշկեն, ուրիշ ո՞վ պիտի լինի,— պարզ ու հանգիստ պատասխանեց նա։

— Պաշկան ո՞վ է։

— Իմ սիրեկանը... մի հացթուխ։

— Շա՞տ է ծեծում քեզ...

— Շատ... ամեն հարբելիս ծեծում է։— Եվ հանկարծ նա ավելի մոտեցավ ինձ ու սկսեց Պաշկի, իր և իրենց հարաբերությունների մասին երկար պատմություն անել։ Ինքը «փողոցն ընկած աղջկերանցից է, որոնք... և այլն», իսկ նա մի շեկ բեղերով, լավ հարմոն ածող երիտասարդ է։ Նա հաճախ այցելելիս է եղել «հասարակաց տունը» և իր ուրախ բնավորությամբ ու գեղեցիկ շորերով, իր «դարսովի» կոշիկներով ու 15 ռուբլիանոց վերարկուով գրավել է Նատաշայի սիրտը։ Այդ ժամանակվա-

նից Պաշկեն սկսել է մշտապես «նիսիա օգտվել»... և երբ հաստատվել է այդ դերում, սովորություն է դարձրել իր համար վերցնել Նատաշայից այն փողերը, որ ուրիշ հյուրերը առանձին տալիս են եղել նրան իբրև նվեր, հարբել այդ փողերով և հետո գալ ծեծել Նատաշային... Բայց այդ դեռ ոչինչ. նա սկսել էր Նատաշայի առաջ «բարձը փոխել», ուրիշ աղջկերանց հետևից ընկնել...

— Դե դու ասա, սրտիս չէ՞ր դիպչի այդ... Ուրիշներից ես ինչո՞վ եմ պակաս... Նշանակում է ես նրա համար խաղալիք էի, ծաղրի առարկա... ստոր արարած։ Անցյալ օրն իրավունք վերցրի խաղեյկայից, որ գնամ զբոսնելու. եկա նրա մոտ, տեսնեմ Դունկեն հարբած-տրաքված նստած է նրա սենյակում։ Ինքն էլ, իհարկե, հարբած էր։ Ասում եմ՝ «ա՜յ ստոր արարած, ստոր, խաբեբա...»։ Նա վրա ընկավ ինձ ու սկսեց ծեծել. ի՞նչ մազերից քարշ տալ հատակի վրա, ի՞նչ ոտքերի տակ գցել, ջարդել... մի սաղ տեղ չթողեց... Եվ այդ դեռ էլի ոչինչ, շորերս ամբողջովին պատառոտեց... Ահա, նայիր սրանց։ Հիմա ես ո՞ր քարովը տամ գլուխս, ինչպե՞ս երևամ խաղեյկային։ Բոլորը պատառոտեց, շորերս էլ, թիկնոցս էլ... բոլորովին նոր էր թիկնոցս, հինգ ռուբլի էի տվել... գլխակապս էլ պոկեց... Ախ, աստված, հիմա ես ի՞նչ անեմ,— վայ տվեց նա հանկարծ վշտացած ու խեղդվող ձայնով։

Վայ էր տալիս նույնպես հետզհետե սաստկացող քամին... Ատամներս նորից սկսեցին պար գալ։ Նա էլ կուչ էր գալիս ցրտից և արդեն այնքան մոտեցել էր ինձ, որ ես կարողանում էի մթության մեջ տեսնել նրա փայլող աչքերը։

— Ինչ գարշելի բաներ եք բոլոր տղամարդիկդ,— խոսեց նա նորից։ Ոտքերիս տակը կգցեի ձեզ բոլորիդ... Որ մեկը առաջիս սատկելիս լիներ ձեզանից, երեսին կթքեի, չէի խղճա... կեղտոտ խոզեր... Վնգստում եք, վնգստում, պոչներդ ժաժ տալիս շան նման, և հենց որ ինձ պես մի անխելքը ձեռքներդ ընկնի, պատրաստ եք իսկույն ոտնատակ տալ... գծուծ անասուններ...

Նրա հայհոյանքները շատ պես-պես էին, բայց ուժ չկար մեջները, ոչ բարկություն և ոչ ատելություն դեպի այդ «գծուծ անասունները»։ Ընդհանրապես նրա խոսակցության տոնը շատ հանգիստ էր, բոլորովին չէր համապատասխանում ասածների մտքին և շատ աղքատ էր ձայնի ելևէջներով։

Բայց և այնպես դա ինձ վրա ավելի էր ազդում, քան մինչև այդ ժամանակ իմ լսած բոլոր հոռետեսական ճառերն ու կարդացած գրքերը։ Այդպես է, մեռնողի մի ճիգը ավելի բնական է, ավելի ուժեղ ու ցնցող, քան մահվան ամենագեղարվեստական ու ամենաստույգ նկարագրությունը։

Սիրտս շատ վատ էր, գուցե ավելի ցրտից, քան թե հարևանուհուս ճառերից։ Ես ակամայից մի ծանր ու երկար տնքոց արձակեցի ու ատամներս կրճտացրի։

Հենց նույն վայրկյանին երկու ձեռք փաթաթվեցին գլխովս, և ես լսեցի մի քաղցր ու մեղմ կարեկցությամբ հնչող ձայն։

— Հը, ի՞նչ պատահեց քեզ...

Ես պատրաստ էի ենթադրել, որ այդ հարցը տալիս է ինձ ոչ թե Նատաշան,— որը մի բոպե առաջ բոլոր տղամարդկանց գարշելի արարածներ հայտարարեց ու այնքան հայհոյեց բոլորին,— այլ մի ուրիշը. բայց նա նորից սկսեց խոսել, և այս անգամ ավելի շուտ-շուտ։

— Ի՞նչ կա, հը՞, հո չե՞ս մրսում. սառե՞լ ես... ա՜յ անպիտան, նստել ես ու լռել. ինչո՞ւ չէիր ասում, որ մրսում ես։ Դե պառկիր, ձգվիր... ես էլ կպառկեմ։ Հա, այսպես, հիմա գրկիր ինձ, լավ գրկիր։ Տեսնո՞ւմ ես ինչ լավ է. հետո մեջք մեջքի կպառկենք, այսպես գիշերը կանցնի... Երևի գինու ես տվել շլուխդ... թե՞ տեղից դուրս են արել... Բան չկա...

Նա ինձ մխիթարում էր, սիրտ էր տալիս։

Օ՜, երիցս անգամ նզովյալ լինեմ ես։ Որպիսի հեգնություն կյանքի կողմից։ Երևակայեցեք. այդ ժամանակ ես ամենալուրջ կերպով զբաղված էի մարդկության ապագայի խնդրով. ես երազում էի սոցիալական բարենորոգումների, քաղաքական մեծ-մեծ հեղափոխությունների մասին. խոր-խոր գրքեր էի կարդում, որոնց մեջ հայտնած մտքերը, թվում էր, չեն կարողանում լավ ըմբռնել նույնիսկ իրենց հեղինակները... Ես պատրաստվում էի մի «խոշոր ներգործող հասարակական ուժ» դառնալ, և ինձ թվում էր, որ մասամբ արդեն հասել եմ իմ նպատակին։ Համենայն դեպս այդ ժամանակները ես երևակայում էի, որ ես մի բացառիկ իրավունք ունեմ ապրելու, որպես կյանքի համար մի անհրաժեշտ մեծություն, որպես պատմության մեջ խոշոր դեր կատարելու ընդունակ մի մարդ...

Եվ ինձ էր, որ տաքացնում էր իր մարմնով պատիվը ծախած մի կին, մի անբախտ, ջարդված ու տրորված էակ, որը

ոչ տեղ ունի կյանքում, ոչ գին, և որին ես գլխի չընկա օգնելու, այնինչ ինքը ինձ ահա օգնում էր... Իսկ եթե գլխի էլ ընկնի, հազիվ թե կարողանայի որևէ կերպով օգնել նրան։

Ա՜խ, ես կուզեի որ այդ բոլորը մի երազ լիներ, մի հիմար ու ճնշող երազ...

Բայց, ավաղ... Անձրևի ցուրտ կաթիլները շարունակում էին թափվել ինձ վրա. կուրծքս կպած էր մի ուրիշ տաք կրծքի, երեսս շոյում էր նրա տաք շնչառությունը... մի քիչ օղեշունչ, բայց այնքան կենդանարար...

Քամին ոռնում ու հևում էր, անձրևը ծեծում էր նավակի տախտակները, ալիքները հևում ու աղմկում էին։ Մենք կպել էինք միմյանց, բայց դարձյալ դողում էինք ցրտից։ Եվ այդ բոլորը... իրականություն էր։

Իսկ Նատաշան դեռ ինչ-որ խոսում էր, և այնպիսի քաղցր ու կարեկից ձայնով, ինչպես միայն կանայք կարող են խոսել։ Այդ գգվող ու շոյող խոսքերից կրծքիս տակ մի ինչ-որ տաքություն առաջացավ, և այդ տաքությունից մի ծանր բան հալվեց ու ընկավ սրտիս վրայից։ Այդ ժամանակ արտասուքի մի հեղեղ թափվեց իմ աչքերից, որը սրբեց, տարավ այն բոլոր կեղտը, վիշտն ու չարությունը, որով լցվել էր սիրտս այդ գիշերվա ընթացքում։

Իսկ Նատաշան խոսում, համոզում էր ինձ.

— Դե, բավական է, սիրելիս, ինչքան լաց լինես. բավական է։ Աստծով, ամեն բան կանցնի, կլավանաս, նոր գործ կգտնես... բոլորը կանցնի...

Եվ շարունակ համբուրում էր ինձ... համբուրում էր անթիվ, անհամար ու ջերմ համբույրներով։

Այդ առաջին կնոջ համբույրներն էին, որ մատուցանում էր ինձ կյանքը, և, պետք է ավելացնել, այդ ամենալավ համբույրներն էին իմ կյանքում, որովհետև բոլոր մնացածները ոչինչ չէին տալիս իմ հոգուն, չնայած որ շատ ու շատ ավելի թանկ էին նստում ինձ...

— Դե սուս, ասում եմ... Ես վաղը քեզ համար մի տեղ կանեմ, գործ կճարեմ...— կարծես երազում լսում էի նրա քաղցր շշունջը։

...Մինչև լույս մենք այդպես գրկված, պառկած էինք։

Իսկ երբ որ լուսացավ, դուրս եկանք նավակի տակից և

գնացինք քաղաք... Հետո բարեկամաբար բաժանվեցինք միմյանցից...

Դրանից հետո ես այլևս երբեք չեմ պատահել Նատաշին, թեև ամբողջ մի կես տարի փնտրել եմ նրան քաղաքի բոլոր մութ խորշերում... Նրան, իմ աննման Նատաշին, որի հետ ես անց կացրի այդ գիշերը, մի անգամ աշնանը...

Եթե նա մեռել է արդեն, որ շատ լավ կլիներ նրա համար, թող հանգչին հանգիստ նրա ոսկորները, իսկ եթե դեռ կենդանի է, խաղաղություն նրա տանջվող հոգուն. և թող երբեք նրա մեջ չարթնանա իր անկման գիտակցությունը... որովհետև այդ կլիներ նրա համար մի նոր, ավելորդ ու անպտուղ տանջանք...

ՔՍԱՆՎԵՑ ՏՂԱՄԱՐԴ ԵՎ ՄԻ ԱՂՋԻԿ

Պոեմ

Քսանվեց հոգի էինք, քսանվեց կենդանի մեքենաներ, փակված մի խոնավ նկուղում, որտեղ առավոտից մինչև երեկո խմոր էինք հունցում, նրանից կրենդել ու չորաբլիթ շինելով։ Մեր նկուղի պատուհանները բացվում էին մի փոսի վրա, որ փորված էր պատուհանների առաջ և ներսից պատած էր խոնավությունից կանաչագունած աղյուսով։ Պատուհանների փեղկերը դրսից պատած էին երկաթե խիտ վանդակով, իսկ ապակիների վրա այնքան ալյուրի փոշի էր նստել, որ արևի լույսը չէր կարողանում նրանց միջով թափանցել մեր նկուղը։ Մեր տերը պատուհանները պատել էր երկաթով, որպեսզի մենք չկարողանանք իր հացից մի կտոր տալ աղքատի կամ մեր այն ընկերներին, որոնք, աշխատանք չունենալով, քաղցած էին։ Մեր տերը մեզ ժուլիկ էր անվանում և ճաշին մսի փոխարեն տալիս էր հոտած փորոտիք։

Մենք խեղդվում էինք այդ նեղ, քարե տուփի մեջ, որի ցածր ու ծանր առաստաղը պատած էր մրով ու ոստայնով։ Մեզ ճընշում ու զզվանք էին պատճառում այդ հաստ պատերը, որոնք նախշված էին կեղտի ու բորբոսի բծերով... Մենք վեր էինք կենում առավոտյան ժամը հինգին՝ քնից չկշտացած և բթացած ու անտարբեր. ժամը 6-ին արդեն սեղան էինք նստում կրենդելներ շինելու խմորից, որ մեզ համար պատրաստած էին լինում մեր ընկերները դեռևս մեր քնած ժամանակ։ Եվ ամբողջ

"օրը, առավոտից մինչև երեկոյան ժամը տասը, մեզանից ոմանք սեղանի առաջ նստած՝ ձեռքերով խմոր էին օխլավում ու օրորվում, որպեսզի չփայտանան, իսկ մյուսներն այդ ժամանակ ալյուրի վրա ջուր էին լցնում ու շաղախում։ Եռացող ջուրն ամբողջ օրը տխուր ու միօրինակ մռլտում էր կաթսայում, որտեղ կրենդելներ էին խաշվում, և հացթուխի թին չարացած ու արագ քսքստացնում էր փռան ցածի գոգին՝ խմորի խաշված լպրծուն կտորները տաք աղյուսների վրա նետելով։ Առավոտից մինչև երեկո փռան մի կողմում փայտ էր վառվում, ու բոցի կարմիր արտափայլը թրթռում էր արհեստանոցի պատի վրա՝ կարծես թե անխոս մեզ վրա ծիծաղելով։ Ահագին վառարանը նման էր հեքիաթային հրեշի այլանդակ գլխի, որը կարծես թե դուրս էր եկել հատակի տակից, բացել վառ կրակով լի իր լայն երախը, տապ էր շնչում մեր կողմը և իր ճակատագլխի օդանցքների երկու սև խոռոչներով նայում էր մեր անվերջ աշխատանքին։ Այդ երկու խոր խոռոչներն ասես աչքեր լինեին, հրեշի անողոք ու անկիրք աչքեր, որոնք նայում էին միշտ նույն մռայլ հայացքով, կարծես ստրուկներին նայելուց հոգնելով ու նրանցից ոչ մի մարդկային բան չսպասելով՝ իմաստուն, սառն արհամարհանքով էին արհամարհում նրանց։

Օրը օրին, ալյուրի փոշու, դրսից մեր ոտքերի հետ բերած ցեխի մեջ կորած, թանձր, գարշահոտ, խեղդող օդ շնչելով, մենք օխլավում էինք խմորը և կրենդելներ շինում, դրանք մեր քրտինքով թրջելով, և ատում էինք մեր աշխատանքը խոր ատելությամբ, որովհետև մենք երբեք չէինք ուտում այն, ինչ մեր ձեռքերով էինք շինում, սև հացը կրենդելից գերադասելով։ Երկար սեղանի շուրջը նստած ինն հոգի ինների դիմաց՝ մենք երկար ժամանակ մեխանիկորեն շարժում էինք մեր ձեռքերն ու մատները և այնքան էինք վարժվել մեր աշխատանքին, որ երբեմն արդեն մեր շարժումներին չէինք էլ հետևում։ Եվ այնքան էինք դիտել իրար, որ յուրաքանչյուրս գիտեր մյուս ընկերների երեսի բոլոր կնճիռները։ Մենք խոսելու բան չունեինք, վարժվել էինք դրան, ամբողջ ժամանակ լուռ էինք՝ եթե իրար չէինք հայհոյում, որովհետև մարդու, մանավանդ ընկերոջը հայհոյելու առիթ միշտ կլինի։ Բայց իրար հայհոյելն էլ մեզ մոտ հազվադեպ էր լինում. ինչո՞ւմ կարող է մեղավոր լինել մի մարդ, եթե նա կիսամեռ վիճակում է, եթե ապուշի պես բութ է ու անհասկացող, եթե աշխատանքի ծանրությունը ճնշել է նրա բոլոր

զգացմունքները։ Բայց լռությունը սարսափելի ու տանջալից է միայն նրանց համար, ովքեր արդեն ասել են ամեն ինչ և էլ ասելու բան չունեն, իսկ այն մարդիկ, որոնք իրենց խոսքը դեռ չեն ասել, նրանց համար լռելը շատ հասարակ ու հեշտ բան է... Երբեմն մենք երգում էինք, և մեր երգն սկսվում էր այսպես. աշխատանքի ժամանակ մեկը հանկարծ տնքում էր հոգնած ձիու ծանր տնքոցով ու ցածրաձայն երգում մեկն այն երկարաձիգ երգերից, որոնց մղկտալի-փաղաքշական եղանակը միշտ թեթևացնում է երգողի հոգին։ Երգում էր մեզանից մեկը, իսկ մենք սկզբում լուռ լսում էինք նրա մենավոր երգը, որը մարում ու խլանում էր նկուղի ծանր, ճնշող առաստաղի տակ, ինչպես տափաստանային խարույկի փոքրիկ կրակն աշնանային խոնավ գիշերին, երբ գորշ երկինքը կախվում է երկրի վրա ինչպես կապարե տանիք։ Հետո երգողին միանում էր մեկ ուրիշը և արդեն ցածր ու թախծոտ երկու ձայն էր լողում մեր նեղ փոսի խեղդող օդում։ Ու հանկարծ միանգամից մի քանի ձայներ էին գլում երգը, որը փրփրում էր, ինչպես ալիք, ուժեղանում, բարձրաձայն էր հնչում և ասես ետ մղում մեր քարե բանտի խոնավ, ծանր պատերը...

Երգում էինք բոլոր քսանվեց մարդիկս. բարձրահնչյուն, վաղուց միմյանց ներդաշնակված ձայները լցնում էին արհեստանոցը, և այն նեղ էր լինում երգի համար. երգը զարնվում էր պատերի քարին, տնքում, լալիս ու կենդանացնում էր մեր սիրտը մի մարմանդ, խտղտեցնող ցավով, նորոգում էր մեր հին ցավերը և կարոտ զարթեցնում... Երգիչները խոր և ծանր թառանչ էին արձակում, որևէ մեկը անսպասելի կերպով ընդհատում էր երգը և երկար լսում, թե ընկերներն ինչպես են երգում, ապա նորից էր իր ձայնը խառնում ընդհանուր ալիքին։ Մեկ ուրիշը կարոտով է՞հ կանչելով՝ երգում էր աչքերը փակած, և գուցե երգի հնչյունների թանձր, լայն ալիքը նրան պատկերանում էր իբրև ինչ-որ հեռու տեղ տանող մի ճանապարհ՝ վառ արևի լույսով լուսավորված մի լայն ճանապարհ, ու նա իրեն տեսնում էր այդ ճանապարհով ընթանալիս...

Վառարանի բոցը շարունակում էր թրթռալ, հացթուխի թին շարունակում էր քսքստացնել աղյուսի վրա, ջուրը մռլտում էր կաթսայում, և կրակի արտափայլն առաջվա պես թրթռում էր պատի վրա ու լուռ ծիծաղում... Իսկ մենք ուրիշի խոսքերով երգում էինք մեր բութ վիշտը, արևից զրկված կենդանի մարդ-

կանց ծանր թախիծը, ստրուկ մարդկանց թախիծը։ Ահա այս-պես էինք ապրում մենք՝ բանվեց մարդիկս քարաշեն մեծ տան նկուղում, և կյանքը մեզ համար այնքան ծանր էր, որ ասես այդ տան բոլոր երեք հարկերն էլ կառուցված էին ուղղակի մեր ուսերի վրա...

Բայց երդերից բացի, մենք ունեինք էլի մի լավ, մեր կողմից սիրված, գուցե և մեզ համար արևին փոխարինող բան։ Մեր տան երկրորդ հարկում տեղավորված էր ոսկեկարի մի արհեստանոց և այնտեղ, բազմաթիվ աղջիկ վարպետների շրջանում, ապրում էր տասնվեցամյա սպասուհի Տանյան։ Հաշտից դեպի մեր արհեստանոցը տանող դռան մեջ բացված պատուհանիկի ապակուն ամեն առավոտ հպվում էր երկնագույն ուրախ աչքերով մի փոքրիկ, վարդագույն դեմք, և նրա հնչեղ փաղաքշական ձայնը կանչում էր մեզ.

— Բանտարկյալնե՛ր, կրենդելիկներ տվե՛ք։

Մենք բոլորս դառնում էինք դեպի այդ հստակ ձայնը և խնդագին, բարեսրտորեն նայում աղջկական այդ մաքուր երեսին, որ այնպես լավ էր ժպտում մեզ։ Մեզ համար հաճելի էր տեսնել ապակուն սեղմվելուց ճապաղած այդ քիթը և մանր, սպիտակ ատամները, որոնք փայլում էին ժպիտով բացված վարդագույն շրթունքների միջից։ Միմյանց հրելով՝ մենք նետվում էինք դուռը բաց անելու, և նա այնպես ուրախ, այնքան սիրալիր էր մտնում մեր նկուղը. նա բաց էր անում գոգնոցը, կանգնում մեր առաջ՝ գլխիկը մի քիչ կողքի թեքած ու շարունակ ժպտում էր։ Նրա շագանակագույն մազերի հաստ ծամը ուսն ի վար իջնելով, հանգչում էր կրծքի վրա։ Մենք՝ կեղտոտ, խավար, անճոռնի մարդիկս ցածից վեր էինք նայում նրան.— դռան շեմքը չորս աստիճան բարձր էր մեր նկուղի հատակից.— մենք՝ գլուխներս վեր բարձրացրած, նայում էինք նրան և բարի լույս մաղթում, ինչ-որ հատուկ խոսքեր ասում նրան, այդ խոսքերը մենք պահում ենք միայն նրա համար։ Նրա հետ խոսելիս մեր ձայնն է՛լ ավելի մեղմ է հնչում, կատակներն է՛լ ավելի թեթև են լինում։ Մենք ամեն ինչում հատուկ կերպով ենք վերաբերվում նրան։ Հացթուխը վառարանից հանում է մի թի ամենալավ եփված, կարմրած կրենդել ու ճարպկորեն գցում Տանյայի գոգնոցը։

— Տե՛ս, տիրոջ աչքովը չընկնես, հա՛,— նախազգուշացնում ենք Տանյային։ Իսկ նա չարաճճիաբար ծիծաղելով, ուրախ կանչում է մեզ.

— Մնաք բարով, բանտարկյալնե՛ր,— ու մկնիկի պես արագ անհետանում է։

Այսքանը միայն... Բայց նրա գնալուց հետո մենք դեռ երկար ժամանակ հաճույքով խոսում ենք իրար հետ նրա մասին, ասում ենք նույնը, ինչ որ ասել էինք երեկ և ավելի առաջ. որովհետև նա՛ էլ, մե՛նք էլ, մեր շուրջը եղած ամեն ինչն էլ նույնն է, ինչ որ երեկ էր և ավելի առաջ... Շատ ծանր և տանջալից բան է, երբ մարդ ապրում է, իսկ նրա շուրջը ոչինչ չի փոխվում, և եթե այդ վերջնականապես չի ոչնչանում նրա հոգին, ապա որքան երկար է ապրում նա, այնքան ավելի տանջող է դառնում նրա համար շրջապատի անշարժությունը... Կանանց մասին մենք միշտ այնպես էինք խոսում, որ երբեմն մենք ինքներս էլ զզվանքով էինք լսում մեր կոպիտ և անպատկառ խոսքերը. և այդ հասկանալի է, որովհետև այն կանայք, որոնց մենք գիտեինք, գուցե այլ խոսքերի արժանի էլ չէին։ Բայց Տանյայի մասին մենք երբեք վատ չէինք խոսում. մեզանից ոչ մեկը և երբեք ոչ միայն իրեն թույլ չէր տալիս ձեռք դիպցնել նրան, այլև նա երբեք նույնիսկ ազատ կատակ լսած չէր մեզանից։ Գուցե դա հետևանք էր այն բանի, որ նա երբեք երկար չէր մնում մեզ մոտ՝ կերևար մեր աչքին, ասես երկնքից ընկած աստղ, ու կանհետանար. գուցե և դա հետևանք էր այն բանի, որ նա փոքր էր և շատ գեղեցիկ, իսկ ամեն մի գեղեցիկ բան նույնիսկ կոպիտ մարդկանց ստիպում է հարգել իրեն։ Կա նաև այն, որ թեպետև մեր տաժանակիր աշխատանքը մեզ դարձրել էր բութ եզներ, բայց մենք այնուամենայնիվ մարդ էինք մնացել, և ինչպես բոլոր մարդիկ, չէինք կարող ապրել առանց որևէ բանի երկրպագելու։ Մեր շուրջը չկար ոչ ոք, որ նրանից լավ լիներ, և նրանից բացի ոչ ոք ուշադրություն չէր դարձնում մեզ՝ նկուղում ապրողներիս վրա, ոչ ոք, թեև տանը տասնյակ մարդիկ էին ապրում։ Եվ, վերջապես,— անշուշտ սա գլխավորն էր — մենք բոլորս էլ նրան համարում էինք մերը, մի այնպիսի բան, որն իր գոյությունը պահպանում է կարծես թե միայն մեր կրենդելների շնորհիվ. մենք մեր պարտականությունն էինք դարձրել նրան տաք-տաք կրենդելներ տալը, և այդ մեզ համար դարձել էր ամենօրյա ղոհաբերություն կուռքին, այդ դարձել էր համարյա սրբազան

ծես և օրըստօրե մեզ ավելի ու ավելի էր կապում նրա հետ։ Բացի կրենդելներից, մենք Տանյային տալիս էինք շատ խորհուրդներ, որ նա տաք հագնվի, սանդուղքով արագ չվազի, փայտի ծանր շալակներ չվերցնի։ Նա մեր խորհուրդները լսում էր ժպիտն երեսին, դրանց պատասխանում էր ծիծաղով և մեր խորհուրդները երբեք չէր կատարում, բայց մենք դրանից չէինք վիրավորվում. մեզ հարկավոր էր միայն ցույց տալ, որ մենք հոգ ենք տանում նրա մասին։

Հաճախ նա մեզանից զանազան բաներ էր խնդրում. օրինակ, խնդրում էր բանալ մառանի ծանր դուռը, փայտ ճղել, և մենք ուրախությամբ, մինչև անգամ հպարտանալով էինք անում այդ և մյուս բոլոր բաները, ինչ նա ցանկանում էր։

Բայց երբ մեզանից մեկը խնդրեց իր միակ շապիկը կարկատել, նա արհամարհանքով փնչացնելով՝ ասաց.

— Ա՜յդ էր պակաս։ Դա ի՞նչ իմ բանն է...

Մենք շատ ծիծաղեցինք հիմարի վրա և այլևս երբեք ոչինչ չէինք խնդրում նրանից։ Մենք սիրում էինք նրան — սրանով ասված է ամեն ինչ։ Մարդ միշտ ուզում է իր սիրով կապվել որևէ մեկի հետ, թեև երբեմն այդ սիրով ճնշում, երբեմն էլ աղտոտում է նրան. մարդ կարող է իր սիրով թունավորել իր մերձավորի կյանքը, որովհետև սիրելիս նա իր սիրեցյալին չի հարգում։ Մենք պետք է սիրեինք Տանյային, որովհետև էլ չկար մեկ ուրիշը, որին սիրեինք։

Երբեմն մեզանից մեկնումեկը հանկարծ սկսում էր չգիտես ինչու այսպիսի դատողություն անել.

— Ինչո՞ւ ենք մենք այսպես երես տալիս այդ աղջկան։ Ի՞նչ մի առանձին բան կա նրա մեջ, հը՞։ Մենք ինչ-որ շատ ենք զբաղվում նրանով։

Մենք արագ և կոպտաբար սանձահարում էինք նրան, ով համարձակվում էր այսպիսի խոսքեր ասել. մենք որևէ բան սիրելու կարիք ունեինք. մենք գտել էինք այդ բանը և սիրում էինք, իսկ այն, ինչ սիրում ենք մենք, քսանվեցս, պետք է անխախտ լինի յուրաքանչյուրի համար, որպես մեր սրբություն, և ամեն ոք, ով դրանում դեմ կգա մեզ, մեր թշնամին կլինի։ Մենք սիրում ենք գուցե և ոչ այն, ինչ իրոք լավ է, բայց չէ որ մենք քսանվեց հոգի ենք, ուստի և միշտ ցանկանում ենք, որ այն, ինչ թանկ է մեզ համար, սրբություն լինի և ուրիշների համար։

Մեր սերը պակաս ծանր չէ, քան ատելությունը... և գուցե

հենց այդ է պատճառը, որ որոշ գոռոզ մարդիկ պնդում են, թե մեր ատելությունն ավելի շոյիչ է, քան մեր սերը... Հապա էլ ինչո՞ւ նրանք չեն փախչում մեզանից, եթե դա այդպես է...

Բացի կրենդելի փոքից, մեր տերը ուներ նաև բուլկու փուռ. դա գտնվում էր նույն տան մեջ և մեր փոսից բաժանված էր միայն մի պատով. բայց բուլկիագործները — նրանք չորս հոգի էին — իրենց հեռու էին պահում մեզանից, գտնելով, որ իրենց աշխատանքը մերից մաքուր է, և այդ պատճառով իրենց մեզանից լավ համարելով, նրանք մեր արհեստանոցը չէին գալիս և երբ բակում պատահում էին մեզ, արհամարհանքով ծիծաղում էին մեր վրա։ Մենք էլ նրանց մոտ չէինք գնում. մեզ այդ արգելում էր և մեր տերը, վախենալով, որ մենք կսկսենք կաթնահունց բուլկի գողանալ։ Բուլկիագործներին մենք չէինք սիրում, որովհետև նախանձում էինք նրանց. նրանց աշխատանքը մերից հեշտ էր, նրանք մեզանից շատ աշխատավարձ էին ստանում, նրանց ավելի լավ էին կերակրում, նրանց արհեստանոցն ընդարձակ էր, լուսավոր, և նրանք բոլորն էլ այնպես մաքուր էին, առողջ, որ ատելի էին մեզ համար։ Իսկ մենք բոլորս էլ մի տեսակ դեղնած էինք ու գորշ. մեզանից երեքը հիվանդ էին սիֆիլիսով, ոմանք՝ քոսով, մեկին էլ բոլորովին ծռմռել էր ռևմատիզմը։ Տոներին և աշխատանքից ազատ ժամանակ նրանք հագնում էին պիջակ և ճռճռան կոշիկներ, երկու հոգի հարմոն ունեին, և նրանք բոլորը զբոսնելու էին գնում քաղաքային այգին, այնինչ մեր հագինն ինչ-որ կեղտոտ ցնցոտիներ էին, և մեր ոտքերին՝ հնամաշ ու պատռված ոտնամաններ, ու ոստիկանությունը քաղաքային այգի չէր թողնում մեզ. էլ մենք կարո՞ղ էինք բուլկիագործներին սիրել։

Եվ ահա մեկ անգամ մենք իմացանք, որ նրանց բուլկի թխողը իրեն հարբեցողության է տվել, տերը նրան աշխատանքից արձակել է և արդեն ուրիշի է վարձել, և որ այդ ուրիշը զինվոր է, աթլետ ժիլետ է հագնում և ոսկե շղթայով ժամացույց կրում։ Մեզ համար հետաքրքրական էր այդպիսի պճնամոլին տեսնելը, և այդ հույսով մենք մեկս մյուսի ետևից սկսեցինք մի գլուխ դուրս գնալ բակ։

Բայց նա ինքը եկավ մեր արհեստանոցը։ Աքացի խփելով, նա բաց արեց դուռը և, այն բաց թողնելով, կանգնեց շեմքի վրա ու ժպտալով ասաց մեզ.

— Բարի հաջողում։ Բա՛րև, տղե՛րք։

Սառն օդը, թանձր, գորշ ամպի պես դռնից ներս խուժելով, դալարվում էր նրա ոտքերի մոտ, իսկ նա կանգնել էր շեմքի վրա, վերից վար նայում էր մեզ, ու նրա շիկավուն, հմտորեն ոլորած բեղերի տակից փայլում էին նրա խոշոր, դեղին ատամները։ Նրա հագի ժիլետն իսկապես մի ինչ-որ առանձին տեսակի բան էր. կապույտ, վրան ծաղիկներ ասեղնագործած այդ ժիլետն ամբողջովին փայլում էր, իսկ նրա վրայի կոճակներն ինչ-որ կարմիր քարից էին։ Ժամացույց և շղթա էլ ուներ...

Գեղեցիկ էր նա՝ այդ զինվորը, այնպես բարձրահասակ, առողջ, կարմրաթուշ, ու մեծ, պայծառ աչքերը լավ էին նայում՝ փաղաքշաբար ու վճիտ հայացքով։ Նա գլխին դրած ուներ սպիտակ, թանձր օսլայած թասակ, իսկ մաքուր, վրան ոչ մի բիծ չունեցող գոգնոցի տակից նայում էին պայծառորեն փայլեցրած նորաձև կոշիկների սուր քթերը։

Մեր կրենդել թխողը հարգանքով խնդրեց նրան դուռը ծածկել. զինվորն առանց շտապելու կատարեց այդ խնդրանքը և սկսեց հարցուփորձ անել մեր տիրոջ մասին։ Մենք իրար խոսք կտրելով ասացինք նրան, որ մեր տերը շատ ետ եկած, ժուլիկ, չարագործ և ուրիշներին տանջող մարդ է. ամեն բան, ինչ կարելի և հարկավոր էր ասել մեր տիրոջ մասին, բայց այստեղ գրել չի կարելի։ Զինվորը լսում էր մեզ, շարժում բեղերը և մեզ դիտում մեղմ, պայծառ հայացքով։

— Իսկ աղջիկներ ձեզ մոտ շա՞տ կան...— հանկարծ ասաց նա։

Մեզանից ոմանք հարգալից ժպտացին, մյուսները իրենց կերպարանքին անուշ արտահայտություն տվեցին, մեկն էլ պարզաբանեց զինվորին, որ մեզ մոտ ինը հատ աղջիկ կա։

— Օգտվո՞ւմ եք,— հարցրեց զինվորը, աչքով անելով։

Մենք նորից ծիծաղեցինք — ոչ շատ բարձրաձայն և ամաչկոտ ծիծաղով... Մեզանից շատերը կցանկանային իրենց ցույց տալ իբրև նույնպիսի կտրիճ տղերք, ինչպիսին որ նա էր, բայց ոչ ոք չկարողացավ այդ անել, ուղղակի ոչ մեկս։ Ու մեզանից մեկն էլ խոստովանեց այդ, կամացուկ ասելով.

— Մենք ի՞նչ կարող ենք...

— Ը-հա՛, ձեզ համար դա դժվար է,— համոզված ասաց զինվորը՝ սևեռուն հայացքով դիտելով մեզ։— Դուք ինչ որ... էնիք չեք... Դուք չունեք պահանջված կեցվածքը... կարգին կեր-

պարանք... նշանակում է՝ տե՞սք։ Իսկ կինը՝ նա սիրում է, որ տղամարդը լա՞վ տեսք ունենա։ Նա ցանկանում է, որ տղամարդու իրանը շենք ու շնորհքով լինի... որ նրանում ամեն ինչ կանոնավոր լինի։ Սրա հետ մեկտեղ նա հարգում է ուժը... Ուզում է, որ տղամարդու ձեռքը լինի — ը՛հը՛։

Զինվորը գրպանից դուրս քաշեց շապիկի թևը քշտած, մինչև արմունկը մերկ աջ ձեռքը և ցույց տվեց մեզ... Ձեռքը սպիտակ էր, ուժեղ, ոսկեփայլ մազով ծածկված։

— Ոտը, կուրծքը — ամեն ինչ պինդ պետք է լինի... Ու դրա հետ մեկտեղ, որ մարդ շնորքով հագած լինի... ինչպես իրերի գեղեցկությունն է պահանջում... Ա՛յ, ինձ կնանիք սիրում են։ Ես նրանց չեմ կանչում, չեմ հրապուրում, նրանք իրենք են հինգ-հինգ կախվում վզիցս...

Նա նստեց ալյուրի պարկի վրա և սկսեց երկար ու բարակ պատմել այն մասին, թե կնանիք ինչպես են սիրում իրեն, և ինքն ինչպես կտրիճաբար է վարվում նրանց հետ։ Հետո նա գնաց և, երբ դուռը ճռճռալով ծածկվեց նրա ետևից, մենք երկար ժամանակ լռեցինք, մտածելով ինչպես նրա, այնպես էլ նրա պատմածների մասին։ Իսկ հետո, չգիտես ինչից, բոլորս միանգամից խոսեցինք և իսկույն պարզվեց, որ նա բոլորիս էլ դուր է եկել։ Այնպիսի պարզ ու հիանալի մարդ էր. եկավ նստեց, խոսեց։ Մեզ մոտ ոչ ոք չէր գալիս, ոչ ոք մեզ հետ չէր խոսում այդպես բարեկամաբար... Եվ մենք բոլորս խոսում էինք նրա մասին և այն մասին, թե հետագայում նա ինչ հաջողություններ է ունենալու ոսկեկար անող աղջիկների մոտ, որոնք բակում մեզ հանդիպելիս կամ վիրավորական ձևով սեղմում էին շրթունքները, փոխում իրենց ճանապարհը, մեզանից հեռու տեղով անցնում, կամ քայլում էին ուղղակի մեզ վրա, կարծես թե մենք բոլորովին էլ իրենց ճանապարհի վրա չինեինք։ Իսկ մենք միշտ միայն հիանում էինք նրանցով թե բակում, թե այն ժամանակ, երբ նրանք անցնում էին մեր պատուհանների մոտով — ձմեռը ինչ-որ հատուկ տեսակի գդակ դրած ու մուշտակ հագած, ամառը՝ ծաղկազարդ շլյապա դրած և ձեռքերին գույնզգույն հովանոց բռնած։ Բայց դրա փոխարեն այդ աղջիկների մասին մեր մեջ այնպես էինք խոսում, որ եթե նրանք մեր խոսածը լսեին, ամոթից ու վիրավորանքից բոլորն էլ կկատաղեին։

— Բայց չլինի թե նա Տանյուշկային էլ... փչացնի՞,—հանկարծ մտահոգված ասաց հացթուխը։

Այդ խոսքերից զարմացած՝ մենք բոլորս էլ լռեցինք։ Մենք կարծես թե Տանյային մոռացել էինք. զինվորն իր խոշոր, գեղեցիկ կերպարանքով կարծես թե ծածկել էր մեր աչքից Տանյային։ Հետո աղմկալից վեճ սկսվեց, ոմանք ասում էին, թե Տանյան այդքան չի ստորացնի իրեն, մյուսները պնդում էին, թե նա զինվորի հրապույրներին չի դիմանա, երրորդներն էլ, վերջապես, առաջարկում էին այն դեպքում, երբ զինվորը Տանյայի պոչից կպչի, նրա կողերը ջարդել։ Եվ, ի վերջո, բոլորս վճռեցինք հետևել զինվորին ու Տանյային, նախազգուշացնել աղջկան, որ զինվորից զգուշանա... Սա վերջ դրեց մեր վեճին։

Անցավ մոտավորապես մեկ ամիս. զինվորը բուլկի էր թխում, զբոսնում ոսկեկար անող աղջիկների հետ, հաճախ էր մտնում մեր արհեստանոցը, բայց թե աղջիկների նկատմամբ ինչ հաղթանակներ էր տանում, մեզ չէր պատմում, այլ անվերջ բեղերն էր ոլորում ու ախորժակով շրթունքները լզմզում։

Տանյան ամեն առավոտ կրենդելի էր գալիս մեզ մոտ, և, ինչպես միշտ, ուրախ էր, սիրալիր ու քաղցրահայաց դեպի մեզ։ Մենք փորձեցինք խոսել Տանյայի հետ զինվորի մասին. նա զինվորին անվանեց «չռված աչքերով հորթ» ու նրան տվեց էլի ուրիշ ծիծաղելի մականուններ, և դա մեզ հանգստացրեց։ Մենք հպարտանում էինք մեր աղջկանով, տեսնելով, թե ոսկեկար անող աղջիկներն ինչպես են ձգտում զինվորին։ Տանյայի այդ վերաբերմունքը դեպի զինվորը մեզ բոլորիս մի տեսակ բարձրացնում էր, և մենք, կարծես թե այդ վերաբերմունքով ղեկավարվելով, ինքներս էլ սկսում էինք արհամարհանքով վերաբերվել զինվորին։ Իսկ Տանյային է՛լ ավելի սիրեցինք, առավոտներն է՛լ ավելի ուրախ ու քաղցրությամբ էինք դիմավորում նրան։

Բայց մեկ անգամ զինվորը մի քիչ խմած եկավ մեզ մոտ, նստեց ու սկսեց ծիծաղել, իսկ երբ մենք հարցրինք, թե այդ ինչի՞ վրա է ծիծաղում, նա բացատրեց.

— Երկու աղջիկ ինձ համար կռվեցին... Լիդկան և Գրուշկան... Ի՞նչպես նրանք այլանդակեցին իրենց, հը՞։ Հա՛-հա՛։ Մեկը մյուսի մազերից բռնեց, նախասենյակում գետին գցեց ու ձիու պես հեծա՛վ վրան... հա՛-հա՛-հա՛։ Իրար մոռթ չանգռեցին... միմյանց շոր պատռեցին... ծիծաղից մարդ թուլանում

էր։ Տեսնես ինչո՞ւ այդ կնանիք ազնվաբար կռվել չեն կարողանում։ Ինչո՞ւ են չանգռտում, հը՞։

Նա նստած էր նստարանին՝ այնպես առողջ, մաքուր, ուրախ. նստել ու մի գլուխ քրքջում էր։ Մենք լուռ էինք։ Չգիտես ինչու, այս անգամ նա մեզ դուր չէր գալիս։

— Չ-չէ, զարմանք բան է, թե կնկա հարցում իմ բախտն ինչպես է բանում։ Ծիծաղելու բան է. աչքով ես անում ու՝ պատրաստ է։ Ս-սատանան տանի՞։

Փայլուն մազերով ծածկված նրա սպիտակ ձեռքերը բարձրացան ու շրմփոցով նորից ընկան ծնկներին։ Նա այնպես հաճելիորեն զարմացած հայացքով էր նայում մեզ, որ կարծես թե ինքն էլ անկեղծորեն տարակուսում էր, թե կանանց հետ գործ ունենալիս իր բախտն ինչպես է բանում։ Նրա հաստ ու կարմիր մռութը ինքնագոհ ու երջանիկ պսպղում էր, և նա անվերջ ախորժանքով լզմզում էր իր շրթունքները։

Մեր հացթուխն ուժգին ու բարկացած քստացրեց թին վառարանի կրակարանին ու հանկարծ ծաղրանքով ասաց.

— Ձլուռ պոկելը մի մեծ բան չի, տղամարդ ես, սոսին արմատահան արա...

— Այսինքն, դու այդ ինձ ես ասո՞ւմ,— հարցրեց զինվորը։

— Հենց քեզ...

— Ի-ի՞նչ։

— Ոչինչ... ասացի՝ անցավ։

— Չէ, դու մի կա՛ց։ Բանն ի՞նչ է։ Ի՞նչ սոսի։

Մեր հացթուխը չէր պատասխանում. միայն թե թին արագ էր բանեցնում վառարանի մեջ. խաշած կրենդելները վառարանի մեջն էր գցում, ճարպկորեն թիի վրա առնում եփվածները ու աղմուկով շպրտում գետին, փոքրիկ տղաների մոտ, որոնք դրանք շարում էին ճլոպաթելի վրա։ Կարծես թե մոռացել էր թե՛ զինվորին, թե՛ նրա հետ ունեցած խոսակցությունը։ Բայց զինվորը հանկարծ անհանգստացավ, ոտքի ելավ ու գնաց դեպի վառարանը, ուշադրություն չդարձնելով այն բանին, որ ջղայնացած հացթուխի ձեռքին ետ ու առաջ շարժվող թիի կոթը կարող է դիպչել իր կրծքին։

— Չէ՛, դու էն ասա՛, թե դա ո՞վ է։ Դու իմ սրտին դիպար։ Ինձ ես այդպես ասո՞ւմ։ Իմ ձեռից ոչ մի աղջիկ չի պրծնի, չէ՞-է։ Իսկ դու ինձ էդ տեսակ դիպչողական խոսքեր ես ասում...

Թվում էր, թե նա իսկապես անկեղծորեն վիրավորվել է։

Երևի նա չուներ մի այնպիսի արժանիք, որի համար ինքը հարգեր իրեն, բացի կանանց գայթակղեցնելու իր հմտությունից, գուցե բացի այդ ընդունակությունից նրա մեջ կենդանի ոչինչ չկար, և միայն այդ ընդունակությունն էր նրան թույլ տալիս իրեն կենդանի մարդ զգալու։

Չէ՞ որ կան մարդիկ, որոնց համար կյանքում ամենաթանկ և ամենալավ բանը իրենց հոգու կամ մարմնի որևէ հիվանդությունն է։ Նրանք իրենց ողջ կյանքի ընթացքում դրանով են զբաղվում և միայն դրանով են կենդանի. նրա պատճառով տառապանք կրելով՝ նրանք դրանով են սնվում, ուրիշներին գանգատվում են այդ հիվանդությունից ու դրանով մերձավորների ուշադրությունը դարձնում իրենց վրա։ Դրա համար իբրև հատուցում մարդկանց կարեկցությունն են վաստակում ու դրանից բացի ոչինչ չունեն։ Վերցրեք նրանցից այդ հիվանդությունը, բժշկեցեք նրանց, և նրանք կդժբախտանան, որովհետև կզրկվեն ապրելու միակ միջոցից, այն ժամանակ նրանք ներքուստ դատարկ կլինեն։ Երբեմն մարդու կյանքն այնքան աղքատ է լինում, որ նա ակամայից ստիպված է լինում գնահատել իր արատը և նրանով ապրել. և կարելի է ասել, որ մարդիկ հաճախ ձանձրույթից են արատավոր դառնում։

Զինվորը վիրավորվել էր, վրա էր քշում մեր հացթուխին ու մռնչում.

— Չէ՛, դու ասա՛, դա ո՞վ է։

— Ասե՞մ,— հացթուխը հանկարծ շուռ եկավ դեպի զինվորը։

— Ասա՛։

— Տանյային ճանաչո՞ւմ ես։

— Հետո՞։

— Հետո էլ այդ։ Փորձի՛ր։

— Ե՞ս։

— Դո՛ւ։

— Նրա՞ն։ Դա ինձ համար՝ թյո՞ւ։

— Կտեսնե՞նք։

— Կտեսնե՞ս։ Հը՛-հա՛։

— Նա քեզ...

— Մի ամիս ժամանակ։

— Ի՞նչ գլուխգովանն ես, զինվո՛ր։

— Երկու շաբաթ ժամանակ։ Ես ցույց կտամ։ Նա ո՞վ է որ։ Տանկա՛ն։ Թո՛ւ։

— Դե՛, հեռացիր էստեղից... խանգարում ես...

— Երկու շաբաթ, ու պատրաստ կլինի։ Ա՛խ դու...

— Կորի՛ր, ասում եմ։

Մեր հացթուխը հանկարծ կատաղեց ու թին նրա վրա բարձրացրեց։ Զինվորը զարմացած ետ ու ետ գնաց, նայեց մեզ, լռեց ու կամացուկ, շարագուշակ եղանակով ասաց «դե լավ» ու նկուղից գնաց։

Վեճը մեզ հետաքրքրել էր. այդ ընթացքում մենք բոլորս լուռ էինք։ Բայց երբ զինվորը գնաց, մեր մեջ աշխույժ, բարձրաձայն խոսակցություն սկսվեց ու աղմուկ բարձրացավ։

Մեկը բղավեց հացթուխին.

— Լավ բան չէր արածդ, Պավե՛լ։

— Դու քո բանին կաց,— մոլեգնած պատասխանեց հացթուխը։

Մենք զգում էինք, որ հացթուխը դիպել էր զինվորի ամենանուրբ տեղին և, որ Տանյային վտանգ է սպառնում։ Մենք զգում էինք այդ և միևնույն ժամանակ բոլորիս էլ համակել էր մի բուռն, հաճելի հետաքրքրություն, թե բանն ինչո՞վ է վերջանալու։ Արդյո՞ք Տանյան կդիմանա զինվորի հրապուրանքներին։ Ու համարյա բոլորս էլ համոզված գոչում էինք.

— Տանկա՞ն։ Նա կդիմանա։ Նրան հեշտությամբ չես հաղթի։

Մենք անչափ ուզում էինք փորձել մեր աստվածուհու ամրությունը։ Մենք լարված կերպով ապացուցում էինք իրար, որ մեր պաշտածը կուռ կամքի տեր է և այդ ընդհարումից հաղթանակով դուրս կգա։ Վերջապես մեզ սկսեց թվալ, թե մենք զինվորին քիչ ենք գրգռել, թե նա կմոռանա վեճը և թե մեզ անհրաժեշտ է մի լավ վիրավորել նրա ինքնասիրությունը։ Այդ օրից սկսած մենք ապրեցինք մի ինչ-որ առանձնահատուկ, լարված և ջղային կյանքով, ինչպես մինչ այդ դեռ չէինք ապրել։ Մենք օրեր շարունակ վիճում էինք իրար հետ, մի տեսակ խելոքացել էինք բոլորս էլ, սկսել էինք ավելի շատ ու ավելի լավ խոսել։ Մեզ թվում էր, թե մենք մի ինչ-որ խաղ ենք խաղում սատանայի հետ և մեր կողմից դրված խաղլեքը Տանյան է։ Եվ երբ մենք բուլկիագործներից իմացանք, որ զինվորն սկսել է «մեր Տանկայի ետևից ընկնել», մեր կյանքն այնքան սարսռագին լավ և այնքան հետաքրքրական դարձավ, որ մենք նույն-

իսկ չնկատեցինք, թե ինչպես մեր տերը, մեր հուզվածությունից օգտվելով, մեր օրական մշակած խմորի քանակը տասնչորս փթով ավելացրել է։ Մենք կարծես թե աշխատանքից չէինք էլ հոգնում։ Տանյայի անունն ամբողջ օրը մեր բերանին էր։ Եվ ամեն առավոտ մենք մի առանձին անհամբերությամբ էինք սպասում նրան։ Երբեմն մեզ թվում էր, թե նա կգա մեզ մոտ, և այդ արդեն նախկին Տանյան չի լինի, այլ մի ինչ-որ ուրիշ Տանյա։

Բայց մենք նրան ոչինչ չէինք ասում տեղի ունեցած վեճի մասին։ Իրեն էլ ոչինչ չէինք հարցնում և առաջվա պես սիրալիր ու լավ էինք վերաբերվում։ Բայց այդ վերաբերմունքի մեջ մի ինչ-որ նոր բան էր մտել, այն անհարիր էր դեպի Տանյան տածած մեր նախկին զգացմունքներին և այդ նորը լարված հետաքրքրություն էր, որ պողպատե դանակի պես սուր էր և սառը...

— Տղե՛րք։ Այսօր ժամկետը լրանում է,— ասաց մեզ հացթուխը մի առավոտ՝ աշխատանքն սկսելով։

Առանց հիշեցման էլ մենք այդ լավ գիտեինք, բայց այնուամենայնիվ ցնցվեցինք։

— Մտիկ տվեք Տանյային... հիմի կգա,— առաջարկեց հացթուխը։ Մեզանից մեկն ափսոսանքով բացականչեց.

— Բայց դա աչքով կտեսնվի՞։

Ու նորից մեր մեջ աշխույժ, աղմկալի վեճ բորբոքվեց։ Այսօր մենք վերջապես կիմանանք, թե ինչքան է մաքուր և կեղտի համար անմատչելի այն անոթը, որի մեջ մենք ամփոփել ենք այն, ինչ լավագույնն է մեր մեջ։ Այդ առավոտ մենք միանգամից և առաջին անգամ զգացինք, որ իսկապես մեծ խաղ ենք խաղում, որ մեր պաշտածի մաքրության այդ փորձումը կարող է նրան ոչնչացնել մեզ համար։ Մենք այդ բոլոր օրերը լսում էինք, որ զինվորը համառ կերպով հետամտում է Տանյային՝ առանց նրանից ձեռք քաշելու, բայց չգիտես ինչու՝ ոչ մեկս էլ չհարցրեց Տանյային, թե նա ինչպես է վերաբերվում զինվորին։ Իսկ Տանյան շարունակում էր կանոնավոր կերպով ամեն առավոտ կրենդելի գալ մեզ մոտ և դարձյալ նույնն էր, ինչպես միշտ։

Այդ օրը ևս մենք շուտով լսեցինք նրա ձայնը.

— Բանտարկյալնե՛ր։ Ես եկա...

Մենք շտապեցինք նրան ներս թողնել, և երբ նա ներս

մտավ, սովորականի հակառակ մենք լռությամբ դիմավորեցինք նրան։ Աչքներս չորս արած նրան նայելով՝ մենք չէինք իմանում, թե ինչ խոսենք նրա հետ, ինչից հարցնենք։ Ու մթին, լուռ բազմությամբ կանգնել էինք նրա առաջ։ Նա, ինչպես երևում էր, զարմացավ իր համար անսովոր ընդունելությունից, և մենք հանկարծ տեսանք, որ նա գունատվեց, անհանգստացավ, կանգնած տեղում իրար անցավ ու ճնշված ձայնով հարցրեց.

— Դուք այդ ինչի՞ եք... այդպիսին։

— Իսկ դո՞ւ,— մռայլ նետեց հացթուխը՝ աչքերը նրանից չհեռացնելով։

— Ես ի՞նչ եմ որ։

— Ո-ոչինչ...

— Դե՛, շուտով տվեք կրենդելները...

Առաջ նա մեզ երբեք չէր շտապեցնում...

— Ջես ուշանա,— ասաց հացթուխը՝ առանց տեղից շարժվելու և առանց աչքերը նրա երեսից հեռացնելու։

Այն ժամանակ Տանյան հանկարծ շուռ եկավ, դռնից դուրս եկավ և անհայտացավ։

Հացթուխը թին վերցրեց և դեպի վառարանը շուռ գալով՝ հանգիստ տոնով ասաց.

— Նշանակում է՝ պատրաստ է... Կտրիճ զինվոր... Սրիկա՛...

Մենք ոչխարի հոտի պես իրար հրհրելով գնացինք դեպի սեղանը, լուռ նստոտեցինք և սկսեցինք թույլ-թույլ աշխատել։ Շուտով մեզանից մեկն ասաց.

— Կարող է պատահել, որ դեռ...

— Դե-դե՛։ Մի խոսի՛,— գոչեց հացթուխը։

Մենք բոլորս գիտեինք, որ նա խելոք մարդ է, մեզանից խելոք։ Եվ նրա գոչյունը հասկացանք իբրև հավաստիացում, որ նա հավատացած է զինվորի հաղթությանը... Մենք տխրեցինք ու անհանգստացանք...

Ժամը 12-ին, ճաշի ժամանակ, զինվորը եկավ։ Նա, ինչպես միշտ, մաքուր էր ու մի քիչ պճնված և, ինչպես միշտ, նայում էր ուղղակի մեր աչքերին։ Իսկ մենք անհարմար էինք զգում նրան նայել։

— Հը՛, ազնիվ պարոններ, ուզո՞ւմ եք, որ ձեզ ցույց տամ զինվորի կտրիճությունը,— ասաց նա հպարտ քմծիծաղ տա-

լով։— Թե ուզում եք, դուրս եկեք հաշտը ու ճեղքով նայեք... հասկացա՞ք։

Մենք դուրս եկանք ու իրար վրա ընկնելով՝ կպանք հաշտի տախտակե պատի ճեղքերին, որտեղից բակն էր երևում։ Մենք երկար չսպասեցինք։ Շուտով շտապ քայլերով, մտահոգ դեմքով, բակով անցավ Տանյան՝ հալված ձյան և ցեխի լճակների վրայով ոստնելով։ Նա մառան տանող դռնով ներս գնաց, ծածկվեց մեր աչքերից։ Հետո, առանց շտապելու և սուլելով, նույն տեղը գնաց զինվորը։ Նա ձեռքերը կոխել էր գրպանները, բեղերը շարժվում էին...

Անձրև էր գալիս, և մենք տեսնում էինք, թե նրա կաթիլներն ինչպես են ընկնում լճակների մեջ, և լճակները նրանց հարվածներից կնճռոտում են իրենց երեսը։ Խոնավ, գորշ օր էր, շատ ձանձրալի օր։ Տանիքներին դեռ ձյուն կար նստած, իսկ գետնի վրա արդեն ցեխի թուխ բծեր էին գոյացել։ Տանիքների ձյունն էլ պատած էր թուխ, կեղտոտ փառով։ Անձրևը դանդաղ էր գալիս, մռայլ ձայն հանում։ Մենք մրսում էինք, և սպասելը տհաճություն էր պատճառում մեզ...

Մառանից առաջինը դուրս եկավ զինվորը. նա դանդաղ գնաց բակով՝ ձեռքերը գրպանները դրած, բեղերը շարժելով, ինչպես միշտ էր, այնպես էլ այժմ։

Հետո դուրս եկավ Տանյան։ Նրա աչքերը... նրա աչքերը փայլում էին ուրախությունից ու երջանկությունից, իսկ շրթունքները ժպտում էին։ Եվ քայլում էր, ասես քնի մեջ օրորվելով, անհաստատ քայլերով...

Մենք այդ բանը հանգիստ չկարողացանք տանել։ Բոլորս միանգամից նետվեցինք դեպի դուռը, դուրս եկանք բակ, սուլեցինք, բղավեցինք նրա վրա՝ թշնամանքով, բարձրաձայն, վայրենաբար։

Մեզ տեսնելով՝ նա ցնցվեց ու մեխված ի պես կանգ առավ իր ոտքերի տակի ցեխի մեջ։ Մենք շրջապատեցինք նրան և չարախնդությամբ, անզուսպ կերպով հայհոյում էինք նրան անպատկառ խոսքերով, անամոթ բաներ էինք ասում նրան։

Մենք այդ անում էինք ոչ բարձրաձայն, առանց շտապելու, տեսնելով, որ նա միևնույն է ճողոպրելու ճանապարհ չունի, որ մենք շրջապատել ենք նրան և կարող ենք ծաղրել ինչքան ցանկանանք։ Չգիտեմ ինչու, բայց մենք նրան չծեծեցինք։ Նա կանգնած էր մեր մեջ և մեր վիրավորանքները լսելով՝ գլուխը պտտում էր մեկ այս կողմ, մեկ այն կողմ։ Իսկ մենք գնալով ավելի շատ և ավելի ուժգնորեն էինք տեղում նրա գլխին մեր խոսքերի կեղտի ու թույնի տարափը։

Նրա երեսի գույնը թռել էր։ Նրա երկնագույն աչքերը, որ դրանից մի բոպե առաջ երջանիկ էին, այժմ լայն բացվել էին, կուրծքը ծանր էր շնչում, և շրթունքները դողդողում էին։

Իսկ մենք, նրան շրջապատած, մեր վրեժն էինք լուծում նրանից, որովհետև նա կողոպտել էր մեզ։ Նա մեզ էր պատկանում, մենք նրա վրա էինք ծախսում մեր մեջ եղած լավագույն բանը, ու թեև այդ լավագույնը մուրացկանի ունեցած փշրանքներ էին, բայց մենք քսանվեց հոգի էինք, իսկ նա՝ մենակ, ուստի և ինչ տանջանք էլ որ տայինք նրան, նրա մեղքն ավելին էր արժանի։ Եվ ինչպե՞ս էինք վիրավորում նրան... նա շարունակում էր լռել, շարունակ մեզ էր նայում իր վայրենի աչքերով և շարունակ դողում էր...

Մենք ծիծաղում էինք, գոռում, մոնչում... ինչ-որ տեղից ուրիշ մարդիկ էին վազում, միանում մեզ... Մերոնցից մեկը քաշեց Տանյայի կոֆտայի թևը...

Հանկարծ Տանյայի աչքերը փայլատակեցին. նա առանց շտապելու ձեռքերը դեպի գլուխը բարձրացրեց և, մազերը կարգի բերելով, բարձրաձայն, բայց հանգիստ, ուղղակի մեր երեսին՝ ասաց.

— Ա՜խ դուք, ողորմելի՜ բանտարկյալներ...

Եվ քայլեց ուղղակի մեր վրա, այնպես քայլեց, ասես մենք նրա առաջ չլինեինք, ասես նրա ճանապարհը փակած չլինեինք։ Այդ պատճառով էլ իրոք մեզանից ոչ ոք նրա ճանապարհի վրա չգտնվեց։

Իսկ մեր շրջանից դուրս գալով՝ նա, առանց մեր կողմը ետ նայելու, նույնպես բարձրաձայն, հպարտ ու արհամարհելով ասաց և՛ այս խոսքերը.

— Ա՜խ դուք, սրիկա-անե՛ր... սո-ղուննե՛ր...

Ու գնաց՝ շիտակիրան, գեղեցիկ, հպարտ։

Իսկ մենք մնացինք բակում, ցեխի մեջ, անձրևի ու անարև գորշ երկնքի տակ...

Հետո մենք էլ լուռ գնացինք մեր խոնավ քարե փոսը։ Ինչպես առաջ՝ արևը երբեք մեր պատուհաններով ներս չէր թափանցում, ու Տանյան էլ այլևս երբեք մեզ մոտ չեկավ...

ԻՄ ՈՒՂԵԿԻՑԸ

Ես նրան պատահեցի Օդեսայի նավահանգստում։ Մի երեք օր շարունակ իմ ուշադրությունը գրավում էր նրա թիկնեղ, ամրակազմ ֆիգուրան և գեղեցիկ մորուքով շրջագծված արևելյան տիպի դեմքը։ Նա միշտ աչքովս էր ընկնում. ես տեսնում էի, թե ինչպես ամբողջ ժամերով կանգնում էր պատնեշի գրանիտի վրա՝ ձեռնափայտի կոթը բերանը կոխած ու թախիծով դիտելով նավահանգստի պղտոր ջուրն իր սև, նշաձև աչքերով. օրը տասն անգամ անց էր կենում իմ մոտով անհոգ մարդու քայլվածքով։ Ո՞վ էր նա... Ես սկսեցի հետևել նրան։ Նա էլ, կարծես դիտմամբ ինձ գրգռելու համար, ավելի ու ավելի հաճախ էր աչքովս ընկնում և, վերջապես, ես սովորեցի ջոկել հեռվից նրա նորաձև, վանդականախշ, բաց գույնի հագուստը և սև շլյապան, նրա ծույլ քայլվածքը և բութ, տխուր հայացքը։ Նա միանգամայն անբացատրելի էր այդտեղ, նավահանգստում, նավերի ու շոգեշարժերի սուլոցների, շղթաների շառաչի, բանվորների աղմուկի, մարդուս ամեն կողմից շրջապատող՝ նավահանգստի կատաղի-ջղային ժխորի մեջ։ Բոլոր մարդիկ մտահոգ էին, հոգնած, բոլորը վազվզում էին փոշու, քրտինքի մեջ, գոռգոռում, հայհոյում էին... Այդ տարօրինակ կերպարանքն աշխատանքի ժխորում դանդաղ անց ու դարձ էր անում մեռելատիպ տխուր դեմքով, անտարբեր դեպի ամեն ինչ, բոլորին օտար...

Վերջապես, արդեն չորրորդ օրը ճաշին, ես հանդիպեցի նրան և վճռեցի, ինչ էլ լինի՝ իմանալ, թե ով է նա։ Նրանից քիչ հեռու տեղավորվելով՝ սկսեցի հաց ու ձմերուկ ուտել և դիտել նրան՝ հնար մտածելով, թե ինչպես անեմ, որ՝ որքան կարելի է քաղաքավարի ձևով, նրա հետ խոսակցություն բանամ։

Նա կանգնած էր թեյի արկղիկների կույտին կռթնած և, անշարժ շուրջը նայելով, մատներով թխկթխկացնում էր ձեռնափայտը, կարծես ֆլեյտա նվագելիս լիներ։

Բոսյակի հագուստով, բեռնակրի թոկը մեջքիս և ածխափոշով կեղտոտված մարդուս համար դժվար էր նրան՝ այդ ֆրանտին ինձ հետ խոսել տալ։ Բայց, ի զարմանս իմ, ես տեսա, որ նա ինձնից չի հեռացնում աչքերը, ու նրանք վառվում են մի անդուր, ագահ, անասնական կրակով։ Ես վճռեցի, որ իմ դիտողությունների առարկան քաղցած է և շուրջս արագ դիտելով՝ կամացուկ հարցրի նրան.

— Քաղցա՞ծ եք։

Նա ցնցվեց, ագահորեն բաց արավ ամրակազմ, առողջ ատամների համարյա մի հարյուրյակ և նույնպես կասկածանքով շուրջը նայեց։

Մեզ վրա ոչ ոք ուշադրություն չէր դարձնում։ Այդ ժամանակ ես կես ձմերուկ ու ցորենհացի մի կտոր կոխեցի նրա ձեռքը։ Նա խլեց այդ բոլորն ու անհետացավ՝ նստելով ապրանքի կույտի ետևում, երբեմն այնտեղից դուրս էր գալիս նրա գլուխը՝ շլյապայով, որ դրված էր ծոծրակին և ծածկում էր քրտնքոտ, թուխ ճակատը։ Նրա դեմքը փայլում էր լայն ժպիտից, և նա, չգիտեմ ինչու, շուտ-շուտ աչքով էր անում ինձ՝ ոչ մի վայրկյան չդադարելով ծամել։ Ես նրան նշան արի՝ սպասել ինձ, գնացի միս գնելու, գնեցի, բերեցի, տվի նրան և կանգնեցի արկղների մոտ այնպես, որ բոլորովին ծածկեցի իմ խեղճ ֆրանտին կողմնակի հայացքներից։ Մինչև այդ նա ուտում ու անդադար գիշատչաբար շուրջն էր դիտում, ասես վախենում էր, թե պատառը կխլեն. այժմ նա սկսեց հանգիստ ուտել, բայց այնպես շտապ ու ագահաբար, որ ես ցավ զգացի այդ սովալուկ մարդուն նայելիս, ուստի մեջքս դարձրեցի նրա կողմը։

— Շնորհակալ եմ. շա՞տ շնորհակալ եմ,— նա թափահարեց իմ ուսը, ապա ձեռքս բռնեց ու սկսեց նույնպես անողորմաբար թոթվել։

Հինգ րոպեից հետո նա արդեն ինձ պատմում էր, թե ով է ինքը։

Վրացի իշխան Շաքրո Պտաձեն, Քութայիսի հարուստ կալվածատիրոջ միակ որդին, կովկասյան երկաթուղու կայարաններից մեկում գրասենյակային ծառայող է լինում՝ ապրելով մի ընկերոջ հետ։ Այդ ընկերը հանկարծ անհետանում է, հափշտակելով և տանելով իր՝ իշխան Շաքրոյի փողերն ու արժեքավոր իրերը, և ահա իշխանը հետամտում է նրան։ Պատահմամբ նա իմանում է, որ ընկերը տոմսակ է վերցրած եղել Բաթում գնալու. իշխան Շաքրոն նույնպես ուղևորվում է այնտեղ։ Բայց Բաթումում պարզվում է, որ ընկերը գնացել է Օդեսա։ Այն ժամանակ իշխան Շաքրոն վերցնում է ինչ-որ Վանո Սվանիձեի անձնագիրը,— մի սափրիչի, որ նույնպես ընկեր էր, իրեն հասակակից, բայց նշաններով իրեն նման չէր,— ու ճանապարհ է ընկնում Օդեսա։ Այստեղ նա հայտնում է ոստիկանությանը գողության մասին, նրան խոստանում են գողին գտնել. նա սպա-

սում է երկու շաբաթ, ծախսում է իր բոլոր փողերը, և ահա արդեն երկրորդ օրն է, որ բերանը պատառ չի դրել։

Ես լսում է նրա հայհոյանքների հետ խառը պատմությունը, նայում նրան, հավատում և խղճում տղային, որ քսանեռորդ տարին նոր էր թևակոխել, բայց իր միամտությանը նայած՝ նրան կարելի էր ավելի փոքր համարել։ Նա հաճախ և խորին զայրույթով հիշում էր այն սերտ բարեկամության մասին, որը կապում էր նրան իր այդ գող ընկերոջ հետ, որը գողացել էր այնպիսի իրեր, որոնց համար Շաքրոյի դաժան հայրը հավանորեն իր որդուն «խանչալով կմորթի», եթե որդին դրանք չգտնի։ Ես մտածեցի, որ եթե չօգնեմ այս տղային, անկուշտ քաղաքը նրան կկլանի։ Ես գիտեի, թե երբեմն ինչ չնչին դիպվածներ են համալրում բոսյակների դասակարգը, իսկ այստեղ իշխան Շաքրոյի համար կային բոլոր շանսերն ընդունելու այդ հարգելի, բայց չհարգվող դասը։ Ես ուզեցի նրան օգնել։ Շաքրոյին առաջարկեցի գնալ ոստիկանապետից տոմս խնդրել, նա կմկմաց և հայտնեց, որ չի գնա։ Ինչո՞ւ։ Բանից դուրս եկավ, որ նա իր բնակած համարների փողը չի տվել, իսկ երբ նրանից փողը պահանջել են, նա ինչ-որ մեկին խփել է, հետո թաքնվել և այժմ արդարացի կերպով ենթադրում է, որ ոստիկանությունը նրա բանը բուրդ կանի այդ փողը չտալու և խփելու համար. հա, ի դեպ, նա շատ էլ հաստատ չի հիշում — մի՞ հարված է հասցրել՝ թե՞ երկու, երեք՝ թե՞ չորս։ Դրությունը բարդանում էր։ Ես վճռեցի այնքան աշխատել, մինչև որ բավական փող վաստակեմ նրա Բաթում գնալու համար, բայց ավա՜ղ, բանից դուրս եկավ, որ այդ իսկի էլ շուտ գլուխ գալու բան չի, որովհետև սովալլուկ Շաքրոն ուտում էր երեք մարդու չափ և ավելի։

Այդ ժամանակ «սովյալների» մեծ հոսանքի հետևանքով նավահանգստում օրավարձի գները շատ ցածր էին, և ութսուն կոպեկ վաստակից վաթսուն կոպեկը երկուսս ուտում էինք։ Բացի դրանից, դեռ մինչև իշխանին հանդիպելս ես որոշել էի Ղրիմ գնալ, ուստի և չէի ուզում երկար մնալ Օդեսայում։ Այն ժամանակ ես իշխան Շաքրոյին առաջարկեցի ինձ հետ ոտով գնալ՝ այսպիսի պայմաններով. եթե ես նրա հետ Թիֆլիս գնացող ուղեկից չգտնեմ, այն ժամանակ ինքս տեղ կհասցնեմ, իսկ եթե գտնեմ, մենք իրար հրաժեշտ կտանք։

Իշխանը նայեց իր պճրուն կոշիկներին, գլխարկին, անդրադարձրեց իրեն, շփեց կուրտկան, մտածեց, մի քանի անգամ հառաչեց և, վերջապես, համաձայնեց։ Եվ ահա մենք միասին ոտով ուղևորվեցինք Օդեսայից Թիֆլիս։

2

Երբ հասանք Խերսոն, ես ճանաչեցի իմ ուղեկցին և տեսա, որ նա միամիտ-վայրենի, չափազանց անզարգացած, ուրախ մի տղա է՝ երբ կուշտ է, լքված է՝ երբ քաղցած է, ճանաչեցի իբրև ուժեղ, բարեհոգի մի կենդանու։

Ճանապարհին նա ինձ պատմում էր Կովկասի մասին, կալվածատեր վրացիների կյանքի, նրանց զվարճությունների և դեպի գյուղացիներն ունեցած վերաբերմունքի մասին։ Նրա պատմությունները հետաքրքրական էին, յուրօրինակ գեղեցիկ, սակայն պատմողին նկարում էին իմ առջև չափազանց ոչ գովելի կողմից։ Պատմեց նաև, օրինակ, այսպիսի մի դեպք։

Մի հարուստ իշխանի մոտ նրա հարևանները քեֆի են հավաքվում. գինի են խմում, շուրեկ ուտում ու խորոված, ուտում են լավաշ ու փլավ, և հետո իշխանը հյուրերին տանում է ախոռը։ Ձիերը թամբում են։ Իշխանն իր համար վերցնում է ամենալավին և քշում դաշտի միջով։ Կրակոտ ձի է լինում։ Հյուրերը գովում են նրա վայելչագեղությունները ու արագավազությունը։ Իշխանը նորից է սլանում, բայց հանկարծ մի գյուղացի սպիտակ ձիու վրա նստած՝ դաշտ է դուրս թռչում և իշխանի ձիուց առաջ անցնում,— առաջ է անցնում ու... հպարտ ծիծաղում։ Իշխանն ամոթահար է լինում հյուրերի առջև... Խրստությամբ կիտում է հոնքերը, ձեռքի նշանով մոտ կանչում գյուղացուն, և երբ նա մոտենում է, իշխանը սրի մի հարվածով կտրում է նրա գլուխը, ատրճանակն արձակելով նրա ձիու ականջի մեջ՝ սպանում է ձիուն, իսկ հետո իշխանությանը հայտնում է իր արարքը։ Եվ նրան տաժանակիր աշխատանքի են դատապարտում...

Շաքրոն այդ հաղորդում է ինձ՝ իշխանին ափսոսող տոնով։ Ես փորձում եմ ապացուցել նրան, որ խղճալու բան չկա, սակայն նա խրատական եղանակով ասում է ինձ.

— Իշխաններ քիչ կան, գյուղացիներ՝ շատ։ Մի գյուղացու համար չի կարելի դատապարտել իշխաններին։ Ի՞նչ է գյուղացին։ Այ,— և Շաքրոն ցույց է տալիս ինձ մի գունդ հող,— իսկ իշխանը՝ ոնց որ աստղ։

Մենք վիճում ենք, նա բարկանում է։ Երբ նա բարկանում է, ատամները բաց է անում գայլի նման, ու երեսը սրվում է։

— Լռի՛ր, Մաքսի՛մ։ Դու չես ճանաչում կովկասյան կյանքը,— գոչում է նա։ Իմ պատճառաբանություններն անզոր էին նրա անմիջականության առաջ, և այն, ինչ որ ինձ համար պարզ էր, նրա համար ծիծաղելի էր։ Ես իմ հայացքների գերազանցության ապացույցներով նրան փակուղի էի գցում, նա առանց երկար մտածելու ասում էր ինձ.

— Գնա Կովկաս, ապրիր այնտեղ։ Կտեսնես, որ ես ճշմարիտ եմ ասում։ Ամենքն այդպես են անում, նշանակում է՝ այդպես էլ պետք է։ Ինչո՞ւ ես պիտի քեզ հավատամ, քանի որ մեկ դու ես ասում՝ այդ այդպես չէ, իսկ հազարավորներն ասում են՝ այս այսպես է։

Այն ժամանակ ես լռում էի՝ հասկանալով, որ պետք է ոչ թե խոսքերով, այլ փաստերով առարկել այն մարդուն, որը հավատացած է, թե կյանքն ինչպես որ կա, լիովին օրինական է ու արդարացի։ Ես լռում էի, իսկ նա հիացմունքով՝ շրթունքները ճաճաչացնելով էր խոսում կովկասյան կյանքի մասին, որը լի է վայրենի գեղեցկությամբ, կրակով ու ինքնատիպությամբ։ Այդ պատմությունները, ինձ հետաքրքրելով ու գրավելով՝ միևնույն ժամանակ վրդովում ու կատաղեցնում էին իրենց վայրագությամբ, հարստության և բիրտ ուժի երկրպագությամբ։ Մի անգամ ես հարցրի նրան, թե նա գիտի՞ արդյոք Քրիստոսի վարդապետությունը։

— Իհարկե,— ուսերը թոթվելով՝ պատասխանեց նա։

Բայց հետո պարզվեց, որ նա միայն այսքանը գիտի. մի Քրիստոս է եղել, որ հրեական օրենքների դեմ է դուրս եկել, և հրեաները դրա համար խաչել են նրան խաչի վրա։ Բայց նա աստված է եղել, ուստի և խաչի վրա չի մեռել, այլ համբարձվել է երկինք և այն ժամանակ մարդկանց տվել է կյանքի նոր օրենք...

— Ի՞նչ օրենք,— հարցրի ես։

Նա նայեց ինձ ծաղրական տարակուսանքով և հարցրեց.

— Դու քրիստոնյա՞ ես։ Դե՛, ես էլ եմ քրիստոնյա։ Աշխարհիս վրա համարյա բոլորը քրիստոնյա են։ Դե էլ ի՞նչ ես հարցնում։ Տեսնում ես, թե բոլորն ինչպե՞ս են ապրում... Հենց դա է Քրիստոսի օրենքը։

Ես հուզված սկսեցի նրան պատմել Քրիստոսի կյանքի մասին։ Նա սկզբում ուշադրությամբ լսում էր, հետո այդ ուշադրությունն սկսեց հետզհետե թուլանալ և, վերջապես, վերջավորվեց հորանջով։

Տեսնելով, որ նրա սիրտն ինձ չի լսում, ես սկսեցի նորից դիմել նրա խելքին և խոսել փոխադարձ օգնության օգուտների, գիտության օգուտների, օրինականության օգուտների, օգուտների, շարունակ օգուտների մասին... Իմ պատճառաբանությունները, դիպչելով նրա աշխարհընկալման պարսպին, փշրվում փոշիանում էին։

— Ով ուժեղ է, նա ինքն իր համար օրենք է։ Նրան պետք չի սովորել, նա կույր-կույր էլ կգտնի իր ճամփան,— ծուլորեն առարկեց ինձ Շաքրոն։ Նա կարողանում էր ինքն իրեն հավատարիմ մնալ։ Դա իմ մեջ հարգանք էր զարթեցնում դեպի նա։ Բայց նա վայրենի էր, խստասիրտ, և ես զգում էի, թե ինչպես իմ մեջ երբեմն ատելություն էր բռնկվում դեպի Շաքրոն։ Սակայն հույս չէի կորցնում գտնելու մեր մեջ շփման կետ, գտնելու այն հողը, որի վրա երկուսս էլ կկարողանայինք համաձայնության գալ և իրար հասկանալ։

Մենք անցանք Պերեկոպը և մոտենում էինք Յալթային։ Ես երազում էի Ղրիմի հարավային ափը, իշխանը ատամների արանքով իր տարօրինակ երգերը երգելով՝ մռայլ էր։ Մեր ամբողջ փողը վերջացավ, վաստակելու տեղ էլ չկար տակավին։ Մենք շտապում էինք Թեոդոսիա, որտեղ այդ ժամանակ նավահանգստի շինարարության աշխատանքներ էին սկսվում։

Իշխանն ինձ ասում էր, որ ինքն էլ կբանի, և փող աշխատելով, մենք ծովով կգնանք Բաթում։ Բաթումում նա շատ ծանոթներ ունի, և անմիջապես ինձ համար դռնապանի կամ պահապանի տեղ կգտնի։ Նա թփթփացնում էր ուսիս և լեզուն քաղցր ծպծպացնելով՝ հովանավորաբար ասում.

— Ես քեզ համար ա-այնպիսի կյանք ստեղծեմ։ Ծծը՛, ծծը՛։ Գինի կխմես՝ ինչքան ուզես, ոչխարի միս՝ ինչքան ուզես։ Կպսակվես վրացուհու հետ, մի հաստլիկ վրացուհու, ծծը՛, ծծը՛, ծծը՛... Նա քեզ համար լավաշ կթխի, երեխաներ կծնի, շա՛տ երեխաներ, ծծը, ծծը։

Այդ «ծծը, ծծը»-ն սկզբում ինձ զարմացնում էր, հետո սկսեց գրգռել, ապա արդեն հասցնում էր թախծալի կատաղություն։ Ռուսաստանում այդպիսի հնչյունով խոզերին են կան-

չում, իսկ Կովկասում նրանով արտահայտում են հիացմունք, ափսոսանք, բավականություն, վիշտ։

Շաքրոն արդեն խիստ մաշել էր իր նորաձև զգեստը, և կոշիկները շատ էին ճաքճքվել։ Ջեռնափայտն ու շլյապան ծախել էինք Խերսոնում։ Շլյապայի տեղ նա գնել էր երկաթուղային աստիճանավորի մի հին գլխարկ։

Երբ նա առաջին անգամ գլխին դրեց այդ գլխարկը,— խիստ թեք դրեց,— ինձ հարցրեց.

— Ինձ սազո՞ւմ է։ Գեղեցի՞կ է։

3

Եվ ահա Ղրիմում ենք։ Անցանք Սիմֆերոպոլը և ուղևորվեցինք դեպի Յալթա։

Ես գնում էի՝ հոգի այդ կատրի բնության գեղեցկության համար սքանչացումով, հոգակտոր, որին փաղաքշում է ծովը։ Իշխանը հառաչում էր, վշտանում և շուրջը տխուր հայացքներ գցելով՝ ջանում էր լցնել իր դատարկ ստամոքսն ինչ-որ տարօրինակ հատապտուղներով։ Նրանց սննդարար հատկություններին ծանոթանալը նրա համար բարեհաջող էր անցնում ոչ միշտ և հաճախ նա շար հումորով ասում էր ինձ.

— Եթե փորս տակն ու վրա անի, ինչպե՞ս պետք է շարունակեմ ճանապարհս, հը։ Ասա՛, ինչպե՞ս։

Որևէ բան վաստակելու հնարավորություն չէր ներկայանում, և մենք, չունենալով ոչ մի գրոշ հացի փող, սնվում էինք մրգերով ու ապագայի վրա դրած հույսերով։ Իսկ Շաքրոն սկսել էր արդեն ինձ հանդիմանել ծուլության և, ինչպես ինքն էր արտահայտվում, «բերանբացության» համար։ Նա ընդհանրապես դարձել էր անտանելի, բայց ինձ ավելի շատ մտահոգում էր իր առասպելական ախորժակի վերաբերյալ պատմություններով։ Բանից դուրս է գալիս, որ նա ժամը 12-ին իբրև նախաճաշ «մի գառնուկ» ուտելով և երեք շիշ գինի խմելով, ժամը 2-ին կարող էր առանց հատուկ ճիգեր գործ դնելու ճաշին ուտել երեք ափսե ինչ-որ «չախոխբելի», կամ «չխրթմա», մի թեփշի փլավ, մի ամբողջ շամփուր խորոված, «ինչքան ուզես՝ տոլմա» և դեռ էլի կովկասյան շատ խորտիկներ, և ընդամենը խմել գինի՝ «ինչքան ուզեր»։ Նա ամբողջ օրերով պատմում էր ինձ իր գաստրոնոմիական հակումների և գիտելիքների մասին, պատմում էր՝ շրթունքները չմփացնելով, վառվող աչքերով, ատամները բաց անելով ու կրճտացնելով, քաղցածությունից աղմուկով ներս քաշելով ու կուլ տալով թուքը, որ առատությամբ ցայտում էր նրա պերճախոս շրթունքներից։

Մի անգամ Յալթայի մոտ ինձ վարձեցին մրգեղենի մի այգի կտրտած ճյուղերից մաքրելու. ես իմ օրավարձը նախօրոք առա և ամբողջ հիսուն կոպեկի հաց ու միս գնեցի։ Երբ գնածս բերեցի, այգեպանն ինձ կանչեց, և գնացի՝ գնածս հանձնելով Շաքրոյին, որը հրաժարվել էր աշխատանքից, պատճառաբանելով, թե գլուխը ցավում է։ Մի ժամից հետո վերադառնալով՝ ես համոզվեցի, որ Շաքրոն իր ախորժակի մասին խոսելիս՝ դուրս չէր եկել ճշմարտության սահմաններից, իմ գնածից ոչ մի փշրանք չէր մնացել։ Դա ընկերական վարմունք չէր, բայց ես լռեցի՝ ի դժբախտություն ինձ- ինչպես պարզվեց հետագայում։

Շաքրոն, նկատելով իմ լռությունը, դրանից օգտվեց իր ձևով։ Այդ ժամանակից սկսվեց մի ինչ-որ անհեթեթ բան։ Ես աշխատում էի, իսկ նա զանազան պատճառաբանություններով հրաժարվում էր բանելուց. ուտում էր, քնում և ինձ աշխատել ստիպում։ Ինձ համար ծիծաղելի և ցավալի էր նայել նրան, այդ առողջ տղային, երբ ես գործս վերջացրած՝ հոգնած վերադառնում էի նրա մոտ, նա մի ստվերոտ անկյունում սպասելիս էր լինում ինձ և այնպիսի ագահությամբ էր շոշափում ինձ հայացքով։ Բայց է՛լ ավելի վշտալի ու վիրավորական էր տեսնել, որ նա ծիծաղում էր ինձ վրա այն պատճառով, որ ես աշխատում եմ։ Նա ծիծաղում էր, որովհետև սովորել էր Քրիստոսի անունով ողորմություն խնդրել։ Երբ նա սկսեց ողորմություն հավաքել, սկզբում քաշվում էր ինձնից, բայց հետո, երբ մոտենում էինք մի թաթարական գյուղի, նա սկսում էր աչքիս առաջ պատրաստվել մուրալու։ Դրա համար նա հենվում էր ձեռնափայտին և ոտը գետնով քարշ տալիս, ասես թե ցավելիս լիներ, իմանալով, որ ժլատ թաթարներն առողջ երիտասարդին ողորմություն չեն տա։ Ես վիճում էի նրա հետ, ցույց տալիս նրա այդպիսի զբաղմունքի ամոթալիությունը...

— Ես չեմ կարողանում բանել,— կարճ առարկում էր նա։ Նրան ողորմություն քիչ էին տալիս։ Ես այդ ժամանակ սկսել էի հիվանդանալ։ Ճանապարհն օրեցօր դառնում էր ավելի զբաղ-

վար, և իմ հարաբերությունները Շաքրոյի հետ՝ ավելի ծանր։ Նա այժմ արդեն խստիվ պահանջում էր, որ ես նրան կերակրեմ։

— Դու ինձ տանո՞ւմ ես։ Տար։ Մի՞թե ես կարող եմ ոտով այդքան հեռու տեղ գնալ։ Ես սովոր չեմ։ Ես դրանից կարող եմ մեռնել։ Ի՞նչ ես ինձ չարչարում, սպանում։ Ես որ մեռնեմ, բանը ո՞նց կլինի։ Մերս լաց կլինի, հերս լաց կլինի, ընկերներս լաց կլինեն։ Էդ ինչքա՞ն արցունք կանի։

Ես այդպիսի խոսքեր էի լսում, բայց դրանք ինձ չէին բարկացնում։ Այդ ժամանակ իմ մեջ սկսել էր ծագել մի տարօրինակ միտք, որ ինձ դրդում էր տանել այդ բոլորը։ Պատահում էր, նա քնած էր լինում, իսկ ես նրա կողքին նստած, դիտելով նրա հանգիստ, անշարժ դեմքը, կրկնում էի ինքս ինձ, կարծես մյ։ բան կռահելով։

— Իմ ուղեկիցը... ուղեկիցս...

Եվ գիտակցությանս մեջ երբեմն աղոտ միտք էր ծագում, թե Շաքրոն միայն օգտվում է իր իրավունքից, երբ այնպես վստահ ու համարձակ պահանջում է ինձնից օգնություն ու խնամք։ Այդ պահանջն արտահայտում էր ուժեղ բնավորություն, ուժ։ Նա ինձ ստրկացնում էր, ես նրան ենթարկվում էի և ուսումնասիրում, հետևում նրա դեմքի յուրաքանչյուր դողոցին, աշխատելով պատկերացնել, թե ուրիշի անձնավորությունը զավթելու այդ պրոցեսում նա ո՞ւր և ինչի՞ վրա կանգ կառնի։ Իսկ նա իրեն շատ լավ էր զգում. երգում էր, քնում ու ծիծաղում իմ վրա, երբ քեֆը տալիս էր։ Երբեմն իրարից բաժանվում էինք երկու-երեք օրով, գնում զանազան կողմեր. ես նրան հաց ու փող էի մատակարարում, եթե ունենում էի, և ասում էի, թե որտեղ ինձ սպասի։ Երբ կրկին հանդիպում էինք, ապա նա, որ ինձ ճանապարհ դրած էր լինում կասկածանքով ու տխուր շարությամբ, դիմավորում էր սաստիկ ուրախ, հրճվանքով և միշտ ասում էր ծիծաղելով.

— Ես կարծում էի, թե դու ինձ մենակ թողեցիր, փախար։ Հա՛, հա՛, հա՛...

Ես նրան ուտելու բան էի տալիս, պատմում էի իմ տեսած գեղեցիկ տեղերի մասին, և մի անգամ, Բախչիսարայի մասին խոսելիս, ի դեպ, պատմեցի Պուշկինի մասին և ասացի նրա ոտանավորներից։ Այդ բոլորը ոչ մի տպավորություն չարեց նրա վրա։

— Է՛, ոտանավորներ։ Դրանք երգեր են և ոչ թե ոտանավորներ։ Ես մի մարդ էի ճանաչում, մի վրացու, նա երգ էր երգում։ Այ, դրանք երգեր էին... որ չէր երգում — ա՛յ, ա՛յ, ա՛յ... բա՛րձր... շա՛տ բարձր էր երգում։ Ասես կոկորդը խենչալ էին կոխել ու խառնշտորում էին... Նա մի գինեվաճառ մորթեց, հիմի Սիբիր է գնացել...

Ամեն անգամ նրա մոտ վերադառնալիս ես ավելի ու ավելի էի ընկնում նրա աչքից, և նա չէր կարողանում այդ թաքցնել ինձնից։

Մեր գործերը շատ վատ էին գնում։ Ես հազիվ էի հնարավորություն գտնում շաբաթական մեկ կամ մեկուկես ռուբլի աշխատել և, ինքնըստինքյան հասկանալի է, որ այդ ավելի քան քիչ էր երկուսիս համար։ Շաքրոյի մուրալը սննդի խնայողություն չէր բերում. նրա ստամոքսը մի փոքրիկ անդունդ էր, որ կլանում էր անխտիր ամեն ինչ՝ խաղող, սեխ, աղ դրած ձուկ, հաց, չորացրած մրգեր, և ժամանակի ընթացքում այն կարծես ավելի էր մեծանում ծավալով և ավելի ու ավելի զոհեր պահանջում։

Շաքրոն սկսեց շտապեցնել ինձ Ղրիմից գնալու, խելացիորեն ասելով ինձ, որ արդեն աշուն է, իսկ ճանապարհ դեռ շատ կա։ Ես համաձայնեցի նրա հետ։ Մանավանդ, որ ես նայել, վերջացրել էի Ղրիմի այդ մասը, և մենք ճանապարհվեցինք դեպի Թեոդոսիա այն հույսով, որ «այնտեղ փող էլ կգցենք ճանկերս», որից էլի զուրկ էինք։

Ալուշտայից քսան վերստ հեռանալով՝ մենք կանգ առանք գիշերելու։ Ես Շաքրոյին համոզել էի ծովափով գնալ, թեև այդ երկարագույն ճանապարհն էր, բայց ես ուզում էի մի կուշտ ծովի օդ շնչել։ Մենք խարույկ վառեցինք և պառկեցինք նրա մոտ։ Երեկոն հրաշալի էր։ Մուգ կանաչ ծովը ներքևում, մեզնից փոքր-ինչ ցած, զարկվում էր ժայռերին. կապույտ երկինքը հանդիսավոր կերպով լուռ էր վերևում, իսկ մեր շուրջը մեղմիկ խշխշում էին թփերն ու ծառերը։ Լուսինը դուրս էր գալիս։ Սոսիների ճամկավոր սաղարթից ստվերներ էին ընկնում։ Մի ինչ-որ թռչուն երգում էր չարաճճի ու հնչեղ ձայնով։ Նրա արծաթահնչյուն դայլայլիկները հալչում էին ալիքների մեղմ ու փաղաքշող աղմուկով լի օդի մեջ, և երբ նրանք անհետանում էին, լսվում էր մի միջատի ջղային ճռճռոցը։ Խարույկը զվարթ էր վառվում, և նրա կրակը թվում էր կարմիր ու դեղին ծաղիկների մի բոցավառ փունջ։ Նա էլ էր ստվերներ առաջացնում, և այդ

ստվերներն ուրախ ցատկոտում էին մեր շուրջը՝ ասես լուսնի ծույլ ստվերների առաջ իրենց աշխուժությամբ պարծենալով։ Ծովի լայն հորիզոնն ամայի էր. նրանից վեր՝ երկինքն էր անամպ, և ես ինձ զգում էի աշխարհիս ծայրին՝ դիտելիս տարածությունը՝ հոգի դյուրթող այդ առեղծվածը... ինչ-որ մեծ բանի մոտ լինելու երկչոտ զգացումը լցնում էր հոգիս, և սիրտս թպրտալով դալկանում էր...

Հանկարծ Շաքրոն բարձրաձայն քրքջաց։

— Հա՛-հա՛-հա՛... Ի՞նչ հիմար կերպարանք ունես։ Ուղղակի ոնց որ ոչխարի կերպարանք։ Ա՜, հա՛-հա՛-հա...

Ես վախեցա. կարծես թե գլխիս հանկարծակի ամպրոպ ճայթեց։ Բայց այդ ավելի վատ էր։ Դա ծիծաղելի էր, այո՛, բայց ինչքա՜ն վիրավորական էր... Նա, Շաքրոն, լալիս էր ծիծաղից. ես ինձ լալու պատրաստ էի զգում՝ ուրիշ պատճառով։ Կոկորդումս կարծես քար կար, ես չէի կարողանում խոսել և վայրենի աչքերով նայում էի նրան, որով ավելի էի տաստկացնում նրա ծիծաղը։ Նա, փորը բռնած, թավալվում էր գետնի վրա. իսկ ես դեռ չէի կարողանում ուշքի գալ ինձ հասցրած վիրավորանքից... Ինձ ծանր վիրավորանք էր հասցված, և այն քիչ մարդիկ, որոնք, հուսով եմ, որ կհասկանան այդ,— որովհետև գուցե իրենք էլ զգացել են այդօրինակ մի բան,— նրանք նորից կզգան իրենց հոգում այդ ծանրության չափը։

— Վե՛րջ տուր,— կատաղած գոռացի ես։

Նա վախեցավ, ցնցվեց, բայց դեռ էլի չէր կարողանում իրեն զսպել. ծիծաղի բռնկումները դեռ բռնում էին նրան. նա ուռցնում էր այտերը, աչքերը չռում և հանկարծ նորից բուռն կերպով քրքջում։ Այն ժամանակ ես վեր կացա ու հեռացա նրանից։ Ես երկար գնում էի առանց մտածելու, համարյա առանց գիտակցելու, վիրավորանքի այրող թույնով լցված։ Ես գրկում էի ամբողջ բնությունը և լուռ, ամբողջ հոգով սերս հայտնում նրան,— վառ սերը մի մարդու, որը մի քիչ բանաստեղծ է... իսկ բնությունը, հանձին Շաքրոյի, քրքջաց իմ վրա՝ հափշտակությանս համար։ Ես հեռու կգնայի բնության, Շաքրոյի և կյանքի բոլոր կարգերի դեմ մեղադրական վճիռ կայացնելուս մեջ, սակայն ետևիցս արագ քայլեր լսվեցին։

— Մի՛ բարկանա,— ամոթահարված արտասանեց Շաքրոն՝ ձեռքը կամաց դիպցնելով ուսիս։— Դու աղոթո՞ւմ էիր։ Ես չգիտեի։

Նա խոսում էր չարություն արած երեխայի երկչոտ տոնով և ես, չնայելով հուզմունքիս, չկարողացա չտեսնել նրա խղճալի դեմքը, որ շփոթմունքից ու վախից ծիծաղելի կերպով ծռմռվել էր։

— Ես էլ քեզ ձեռք չեմ տա։ Ճի՛շտ։ Ո՛չ մի ժամանակ։

Նա բացասաբար թափահարեց գլուխը։

— Ես տեսնում եմ, որ դու հանգիստ մարդ ես։ Բանում ես։ Ինձ չես ստիպում։ Մտածում եմ՝ ինչո՞ւ։ Ուրեմն հիմար է նա, ոնց որ ոչխար...

Այդ նա ինձ մխիթարո՞ւմ էր։ Այդ նա ներողությո՞ւն էր խնդրում ինձնից։ Իհարկե, այդպիսի մխիթարանքներից ու թողություն հայցելուց հետո ինձ ոչինչ չէր մնում անել, եթե ոչ ներել նրան՝ ո՛չ միայն անցյալը, այլև ապագան։

Կես ժամ հետո նա խոր քնած էր, իսկ ես նստած էի նրա կողքին ու նայում էի նրան։ Քնած ժամանակ նույնիսկ ուժեղ մարդն անպաշտպան ու անօգնական է թվում, իսկ Շաքրոն ողորմելի էր։ Նրա հաստ շրթունքները, կիտած հոնքերի հետ միասին, նրա դեմքը դարձնում էին մանկական, երկչոտ, զարմացած։ Շնչում էր նա լիաթոք, հանգիստ, բայց երբեմն դեգերում ու զառանցում էր՝ վրացերեն խոսելով աղաչանքով ու փութկոտ։ Մեր շուրջը թագավորում էր այն լարված խաղաղությունը, որից միշտ մի բան ես սպասում, և որը եթե կարողանար երկար շարունակվել, մարդուն կգժվեցներ իր կատարյալ անդորրությամբ ու հնչյունի շարժման այդ ցայտուն ստվերի բացակայությամբ։ Ալիքների մեղմ ճողփյունը չէր հասնում մեզ, մենք գտնվում էինք մի ինչ-որ փոսում, որը պատած էր կպչուն մացառներով և կարծես քարացած կենդանու բրդբրդոտ երախ լիներ։ Ես նայում էի Շաքրոյին ու մտածում.

— Սա իմ ուղեկիցն է... Ես կարող եմ սրան այստեղ թողնել, բայց չեմ կարող նրանից հեռանալ, որովհետև նրա անունը լեգիոն է... Սա իմ ամբողջ կյանքի ուղեկիցն է... Նա մինչև գերեզման կուղեկցի ինձ...

Թեոդոսիան ի դերև հանեց մեր սպասելիքները։ Երբ մենք տեղ հասանք, այնտեղ կար մոտ չորս հարյուր մարդ, որոնք մեզ պես գործի էին սպասում և նույնպես ստիպված էին բավականանալ նավամատույցի պատնեշի կառուցման հանդիսատեսը լինելու դերով։ Աշխատում էին թուրքեր, հույներ, վրացիներ, սմոլենսկցիներ, պոլտավացիներ։ Ամենուրեք, թե՛ քաղա-

քում և թե՛ նրա շուրջը, խմբերով շրջում էին «սովյալների» գորշ, ընկճված կերպարանքներ, և գայլի արշավով դես ու դեն էին թափառում ազովյան ու տավրիկյան շրջմոլիկները։

Մենք գնացինք Կերչ։

Իմ ուղեկիցը կատարում էր իր խոսքը և ինձ ձեռք չէր տալիս, բայց նա սաստիկ քաղցում էր և մեկի ուտելը տեսնելիս՝ ուղղակի գայլի նման կրճտացնում էր ատամները՝ ինձ սարսափեցնելով զանազան կերակուրների նկարագրությամբ ու քանակի մատնանշումով, կերակուրներ, որ նա պատրաստ էր կլանելու։ Մի քանի ժամանակից ի վեր նա սկսել էր հիշել կանանց մասին։ Սկզբում հարևանցիորեն, ափսոսանքի հառաչանքներով, ապա հաճախ, «արևելցի մարդու» ընչաքաղց ժպիտներով. նա, վերջապես, հասավ այն աստիճանին, որ երբ մոտովն անցնում էր կանանց սեռին պատկանող որևէ անձնավորություն,— ինչ տարիքի և ինչ արտաքինի տեր էլ որ լիներ,— նա այլևս չէր կարող չասել ինձ մի որևէ գործնական փիլիսոփայական կեղտոտություն նրա այս կամ այն հանգամանքի առթիվ։ Նա ճառում էր կանանց մասին այնպես ազատ, առարկայի այնպիսի ճանաչողությամբ և նայում էր նրանց վրա այնպիսի զարմանալի ուղիղ տեսակետով, որ ես միայն թքում էի... Մի անգամ փորձեցի նրան ապացուցել, որ կինը նրանից վատ արարած չի, բայց տեսնելով, որ նա ոչ միայն վիրավորվում է ինձնից իմ հայացքների համար, այլև պատրաստ է կատաղության հասնել այն ստորացման համար, որին, նրա կարծիքով, ես ենթարկում էի իրեն, թողեցի փորձերս մինչև այն ժամանակ, երբ նա կուշտ կլինի։

Մենք Կերչ էինք գնում այլևս ոչ թե ծովափով, այլ տափաստանով՝ ճանապարհը կարճացնելու դիտավորությամբ, և մեր պարկում կար ընդամենը երեք գրվանքանոց մի գարե բոքոն, որ գնել էինք մի թաթարից մեր վերջին հինգ կոպեկանոցով։ Շաքրոյի՝ գյուղերում հաց մուրալու փորձերը ոչ մի հետևանքի չէին հասցնում. ամենուրեք կարճ պատասխանում էին. «Զեզպեսներ շատ կան...» Այն մեծագույն ճշմարտություն էր. իրավ, այդ ծանր տարին սոսկալի շատ էին մի կտոր հաց որոնողները։

Իմ ուղեկիցը տանել չէր կարող «սովյալներին» — ողորմություն ժողովելու մեջ իր մրցակիցներին։ Նրա կենսական ուժերի պաշարը՝ չնայելով ճանապարհի դժվարությանը և վատ

սննդառությանը՝ թույլ էր տալիս նրան ընդունելու այնպիսի հյուծված և խղճալի տեսք, որով մուրացկաններն, արդարև, կարող էին պարծենալ որպես մի տեսակ կատարելությամբ. և նա նրանց դեռ հեռվից տեսնելիս՝ ասում էր.

— Էլի գալիս են։ Փո՛ւ, փո՛ւ, փո՛ւ։ Ի՞նչ են շրջում։ Ի՞նչ են շրջում։ Ի՞նչ են հեռվից գալիս։ Մի՞թե Ռուսաստանը նեղ է։ Չեմ հասկանում։ Ռուսաստանի ժողովուրդը շատ հիմար է։

Եվ երբ ես բացատրում էի նրան այն պատճառները, որոնք ստիպել էին հիմար ռուս ժողովրդին Ղրիմում շրջել՝ հաց փընտրելով, նա անվստահությամբ գլուխն օրորելով՝ առարկում էր.

— Չե՛մ հասկանում։ Ինչպե՞ս կարելի է... Մեզ մոտ, Վրաստանում, այդպիսի հիմարություններ չեն լինում։

Մենք Կերչ հասանք ուշ երեկոյան և ստիպված եղանք գիշերել նավամատույցից դեպի ափը ձգված կամրջակների տակ։ Լավ կլիներ, որ թաքնվեինք. մենք գիտեինք, որ մեր գալուց քիչ առաջ բոլոր ավելորդ մարդկանց — շրջմոլիկներին — կերչից դուրս էին տարել, և վախենում էինք, որ ոստիկանատուն կընկնենք, և քանի որ Շաքրոն ճանապարհորդում էր ուրիշի անձնագրով, ուստի այս հանգամանքը կարող էր մեր վիճակի մեջ լուրջ բարդություններ առաջ բերել։

Մակընթաց ալիքներն ամբողջ գիշեր առատությամբ ցայտեր էին տեղում մեզ վրա, և լուսաբացին մենք դուրս եկանք կամրջակների տակից թրջված ու փետացած։ Ամբողջ ցերեկը շրջեցինք ծովափին, և բոլորը, ինչ հաջողվեց մեզ վաստակել, մի տասը կոպեկանոց էր, որ ես ստացա մի տերտերակնոջից, որի մի պարկ սեխը շուկայից տուն տարա։

Այժմ հարկավոր էր նեղուցով անցնել Թաման։ Ոչ մի մակույկատեր չհամաձայնեց ընդունել մեզ իբրև թիավարող՝ մյուս ափն անցնելու համար, որքան էլ որ ես խնդրեցի։ Բոլորը գբրգրված էին շրջմոլիկների դեմ, որոնք մեր գալուց քիչ առաջ այդտեղ շատ հերոսական սխրագործություններ էին կատարել, իսկ մեզ, ոչ առանց հիմքի, նրանց կարգն էին դասում։ Երբ հասավ երեկոն, ես անհաջողություններիցս ողջ աշխարհի վրա չարացած լինելով՝ վճռեցի բավական վտանգավոր մի բան անել և գիշերը հասնելուն պես՝ ի կատար ածեցի։

4

Գիշերը ես ու Շաքրոն կամաց մոտեցանք մաքսատան հըրշեջ պահակակետին, որի մոտ երեք մակույկ կար. դրանք շղթաներով կապած էին ծովափնյա քարե պարսպին ամրացրած օղակներից։ Մութն էր, քամի էր փչում, մակույկներն ընդհարվում էին իրար, շղթաները շառաչում էին... Ինձ համար հարմար էր տարուբերել օղակն ու հանել քարից։

Մեզնից վեր, հինգ արշինաչափ բարձրության վրա, ման էր գալիս մաքսատան պահակ զինվորը և ատամների արանքով սուլում էր։ Երբ նա մեզ մոտիկ տեղում կանգ էր առնում, ես ընդհատում էի աշխատանքս, բայց դա ավելորդ զգուշություն էր. նա չէր կարող ենթադրել, թե ներքևում մինչև կոկորդը ջրի մեջ խրված մարդ կա, իսկ ինչ վերաբերում է շառաչին, շղթաները առանց իմ օգնության էլ անընդհատ շառաչում էին։ Շաքրոն արդեն ձգվել էր մակույկի հատակին և ինձ ինչ-որ բան էր շշնջում, որը ես չկարողացա հասկանալ՝ ալիքների աղմուկի պատճառով։ Օղակն իմ ձեռքերում էր... Ալիքը խլեց մակույկը և միանգամից նետեց ափից հեռու։ Ես բռնել էի շղթայից և լողում էի մակույկի հետ, հետո բարձրացա և մտա նրա մեջ։ Մենք հանեցինք երկու ծածկույթատախտակ և թիերի փոխարեն ամրացնելով թիատեղերում, ճանապարհ ընկանք...

Խաղում էին ալիքները, և Շաքրոն, նավախելին նստած, մերթ կորչում էր աչքից՝ նավախելի հետ միասին, մերթ բարձրանում էր ինձնից վեր և գոռալով՝ համարյա ընկնում ինձ վրա։ Ես նրան խորհուրդ տվի չգոռալ, եթե չի ուզում, որ պահապանը իրեն լսի։ Այն ժամանակ նա լռեց։ Ես նրա երեսի տեղ տեսնում էի մի ճերմակ բիծ։ Նա ամբողջ ժամանակ ղեկն էր վարում։ Մենք ժամանակ չունեինք մեր դերերը փոխելու և վախենում էինք նավակի միջով մի տեղից մյուս տեղն անցնել։ Ես բարձր ասում էի նրան, թե ինչ դիրք տա նավին, և նա, իսկույն ինձ հասկանալով՝ անում էր ամեն բան այնպես արագ, որ կարծես թե հենց ծովային ծնված լիներ։ Թիակներին փոխարինող տախտակները ինձ քիչ էին օգնում։ Քամին փչում էր մեր նավախելին, և ես քիչ էի հոգում այն մասին, թե ուր է տանում մեզ, աշխատելով միայն, որ նավաքիթը նեղուցի լայնությամբ լինի։ Դա հեշտ էր, որովհետև դեռ երևում էին կերչի կրակները։ Ալիքները նավեզրի վրայով դեպի մեզ էին բարձրանում և ցայրագին աղմկում էին. քանի շատ էինք դեպի նեղուցը տարվում, այնքան ալիքներն ավելի բարձր էին դառնում։ Հեռվից արդեն լսվում էր մռնչյուն, որ վայրենի էր և ահեղ... Իսկ մակույկը շարունակ տարվում էր ավելի ու ավելի արագ, շատ դժվար էր ընթացքի ուղղությունը պահպանել։ Մենք մի քանի դլուխ դլորվում էինք խոր վիհերի մեջ և այնտեղից թռչում ջրային բլուրների վրա, իսկ գիշերն ավելի ու ավելի էր մթնում, և աև ամպերն ավելի էին ցած իջնում։

Նավախելի հետևում երևացող կրակները կորան խավարի մեջ, և այն ժամանակ սարսափելի դարձավ։ Թվում էր, թե ցասկոտ ջրի այդ տարածությունը սահմաններ չունի։ Ոչինչ չէր երևում, բացի խավարի միջից դուրս թռչող ալիքներից։ Այդ ալիքները ձեռքիս խլեցին մի տախտակը, մյուսն էլ ինքս գցեցի մակույկի հատակը ու երկու ձեռքով ամուր բռնեցի նավեզրերից։

Շաքրոն վայրենի ձայնով ոռնում էր ամեն անգամ, երբ նավակը վեր-վեր էր թռչում։ Ցայրացած տարերքով շրջապատված և նրա աղմուկից խլացած, ես ինձ խղճալի ու անզոր էի զգում այդ խավարի մեջ։ Սիրտս անհույս, չար հուսահատությամբ համակված՝ տեսնում էի շուրջս միայն այդ ալիքները՝ ճերմակ բաշերով, որոնք փշրվում, աղի ցայտեր էին դառնում, և ինձնից վեր գտնվող սև ամպերը խիտ ու թանձր՝ նույնպես նման էին ալիքների... Ես հասկանում էի միայն մի բան. այն ամենը, ինչ կատարվում էր իմ շուրջը, կարող էր լինել անչափ ավելի ուժգին և ավելի ահռելի, և ես բարկանում էի, որ նա իրեն պահում է և չի ուզում այդպիսին լինել։ Մահն անխուսափելի է։ Բայց անհրաժեշտ է այդ անաչառ, ամեն ինչ համահարթող օրենքը մի որևէ բանով գեղեցկացնել, որովհետև չափազանց ծանր է ու բիրտ։ Եթե ինձ վիճակված լիներ այրվել կրակում կամ խեղդվել ճահճուտում, ես կաշխատեի ընտրել առաջինը — էլի մի տեսակ ավելի վայելուչ է։

— Առագաստ պարզենք,— գոչեց Շաքրոն։

— Ո՞ւր է դա,— հարցրի ես։

— Իմ չեքմենն[1] առագաստ չինենք...

— Գցի՛ր այստեղ։ Ղեկը բաց չթողնես...

Շաքրոն լուռ խլրտաց նավախելի վրա։

[1] Կովկասյան լեռնականների վերնազգեստ։ (Ս. Թ.)։

— Բռնի՛ր...

Նա դեպի ինձ նետեց իր չեքմենը։ Հատակի վրայով մի կերպ փորսող տալով՝ ես նավածածկույթից պոկեցի մի տախտակ ևս, ամուր գործվածք ունեցող հագուստի թևը հագցրի նրան, նավակի նստարանների մոտ տնկեցի, ոտներս դեմ տվի ու վերցրի մյուս թևն ու փեշը, երբ հանկարծ մի բոլորովին անսպասելի բան պատահեց... Նավակը սովորականից շատ բարձր ցատկեց, ապա ցած թռավ, և ես ինձ գտա ջրի մեջ՝ մի ձեռքիս պահած չեքմենը, իսկ մյուսով բռնած թոկից, որ պատ էր տված նավեզրի դրսի կողմից։ Ալիքներն աղմուկով ցատկում էին գլխիս վրայով, և ես կուլ էի տալիս դառնաղի ջուրը։ Այն լցվեց ականջներս, բերանս, քիթս... Ձեռքերով թոկն ամուր բռնած՝ ես բարձրանում ու իջնում էի ջրի վրա՝ գլուխս նավեզրին թրխկացնելով և չեքմենը նավակի հատակը գցելով՝ աշխատում էի ինքս էլ թռչել նավակը։ Իմ տասնյակ ճիգերից մեկը հաջողվեց, ես նավակին հեծա և իսկույն տեսա Շաքրոյին, որ թավալգլոր էր գալիս ջրի մեջ՝ երկու ձեռքով բռնած նույն պարաններից, որ ես հենց նոր բաց էի թողել։ Բանից երևաց, որ դրանք փաթաթված էին ամբողջ նավակի շուրջը՝ անցկացված լինելով եզրերին ամրացված երկաթե օղակների միջով։

— Կենդանի՞ եմ,— գոչեցի ես նրան։

Նա վեր ցատկեց ջրից և նույնպես շրմփաց նավակի հատակը։ Ես նրան բռնեցի, և մենք դեմառդեմ ելանք իրար։ Ես նստած էի նավակի վրա՝ ինչպես ձիու վրա, ոտներս հագցրած թոկերի մեջ, ինչպես ասպանդակների, բայց այդ անհուսալի էր. ամեն մի ալիք կարող էր հեշտությամբ վայր գլորել ինձ այդ թամբից։ Շաքրոն ձեռքերով պինդ բռնեց ծնկներս և գլուխը դեմ տվեց կրծքիս։ Նա ամբողջովին դողում էր, և ես զգում էի, թե ինչպես էին դողդողում նրա ծնոտները։ Պետք էր մի բան անել։ Հատակը լպրծուն էր, կարծես յուղ քսած լիներ։ Ես Շաքրոյին ասացի, որ նա նորից ջուրը մտնի և բռնի նավեզրի թոկից, իսկ ես նույնը կանեմ մյուս կողմում։ Պատասխանի տեղ նա տկսեց գլխով հրհրել կուրծքս։ Ալիքները վայրենի պարով շարունակ ցատկում էին մեր վրայով, և մենք հազիվհազ էինք կարողանում տեղներս մնալ. մի ոտս սաստիկ կտրում էր թոկը։ Մեր տեսադաշտում ամենուրեք գոյանում էին ջրի բարձր բլուրներ և աղմուկով անհետանում։

Ես ասածս կրկնեցի Շաքրոյին արդեն հրամանի տոնով։ Նա

ավելի ուժգին սկսեց գլխով հարու տալ կրծքիս։ Հապաղել չէր կարելի։ Ես ինձնից պոկեցի նրա ձեռքերը մեկը մյուսի ետևից ու սկսեցի նրան ջուրը հրել, աշխատելով, որ նա թոկն իր ձեռքը գցի։ Եվ այդտեղ կատարվեց մի բան, որ ինձ ամենից ավելի վախեցրեց այդ գիշեր։

— Խեղդո՞ւմ ես ինձ,— շշնջաց Շաքրոն և նայեց դեմքիս։

Այդ իսկապես զարհուրելի էր։ Զարհուրելի էր նրա հարցը, ավելի զարհուրելի՝ նրա հարցի տոնը, որի մեջ հնչում էր և՛ երկչոտ հնազանդություն, և՛ խնայելու խնդրանք. և՛ վերջին հառաչանքը մի մարդու, որը կորցրել է ճակատագրական վախճանից խուսափելու հույսը։ Բայց ավելի սարսափելի էին աչքերը՝ մեռելատիպ, գունատ, թրջված երեսին...

Ես գոչեցի նրան.

— Պի՛նդ կաց,— և ինքս ջուրն իջա՝ թոկից բռնած։ Ոտս դիպավ մի բանի և, առաջին վայրկյանին ցավից ոչինչ չկարողացա հասկանալ։ Բայց հետո հասկացա։ Մեջս մի ջերմություն բռնվեց, ես հարբեցի և զգացի ինձ ավելի ուժեղ, քան երբևէ...

— Գետի՞ն,— գոչեցի ես։

Գուցե մեծ ծովագնացները, որոնք նոր երկրներ են հայտաբերել, դրանց տեսնելիս՝ այս բառը ճչացել են ավելի մեծ զգացմունքով, քան ես, բայց ես կասկածում եմ, որ նրանք կարողացած լինեին ինձնից ավելի բարձր գոռացած լինել։ Շաքրոն ոռնաց, և մենք ջուրը նետվեցինք։ Բայց շուտով հիասթափվեցինք երկուսս էլ. ջուրը դեռ մինչև կրծքներս էր հասնում, և ոչ մի տեղ չէին երևում ցամաք ափի ավելի էական նշաններ։ Ալիքներն այստեղ ավելի թույլ էին և արդեն չէին ցատկոտում, այլ ծուլորեն գլորվում էին մեր վրայով։ Բարեբախտաբար ես ձեռքիցս բաց չէի թողել մակույկը։ Եվ ահա ես նրա մի կողմի մոտ կանգնեցի, Շաքրոն մյուս կողմի, ու փրկարար թոկերից բռնած, սկսեցինք զգուշությամբ գնալ ինչ-որ մի տեղ, մակույկը մեր ետևից քաշելով։

Շաքրոն ինչ-որ փնթփնթում ու ծիծաղում էր։ Մտահոգ նայում էի շուրջս։ Մութն էր։ Մեր ետևից, աջակողմում ալիքների աղմուկն ավելի ուժգին էր, առջևից, ձախակողմում՝ ավելի մեղմ. մենք գնացինք դեպի ձախ։ Գետինն ամուր էր, ավազոտ, բայց ամբողջովին փոս-փոս. երբեմն ոտքերս հատակին չէին հասնում և թիավարում էինք ոտքերով ու մի ձեռքով՝ մյուս-

սով նավակից բռնած. երբեմն ջուրը միայն մինչև ծնկներս էր հասնում։ Խոր տեղերում Շաքրոն վայում էր, իսկ ես դողում էի սարսափահար։ Եվ հանկարծ՝ փրկություն — առջևում կրակ շողշողաց...

Շաքրոն գոռաց որքան ուժ ուներ, բայց ես շատ լավ էի իմանում, որ նավակն արքունական է, և իսկույն հարկադրեցի Շաքրոյին հիշել այդ։ Նա լռեց, բայց մի քանի րոպեից հետո լսվեցին նրա հեկեկանքները։ Ես չկարողացա նրան հագստացնել. միջոց չկար։

Ջուրը քանի գնում՝ քչանում էր... հասավ ծնկներիս... կոճերիս... ես ու Շաքրոն քարշ էինք տալիս արքունական նավակը, բայց ուժեներս հատան, և մենք մակույկը բաց թողեցինք։ Մեր ճանապարհին ընկած էր ծառի մի սև խթխթոտ բուն. մենք ցատկեցինք նրա վրայով — և երկուսս էլ ոտաբոբիկ ընկանք ինչ-որ ծակծկող խոտի մեջ։ Այդ ցավ էր պատճառում և անհյուրընկալ վերաբերմունք էր գետնի կողմից, բայց մենք ուշադրություն չդարձրինք և վազեցինք դեպի կրակը։ Նա մեզնից մի վերստ հեռավորության վրա էր և, զվարթ պլպլալով, ասես ծ՛ծաղկոտ դիմավորում էր մեզ...

...Երեք ահագին բրդոտ շուն, խավարի միջից դուրս պրծնելով՝ հարձակվեցին մեզ վրա։ Շաքրոն, որ մինչ այդ ամբողջ ժամանակ ջղաձգաբար հեկեկում էր, սարսափելի ճչաց և գետին ընկավ։ Ես թաց շեքմենը նետեցի շների վրա և կոացա՝ ձեռքով որոնելով քար կամ փայտ։ Ոչինչ չկար, միայն խոտն էր ձեռքերս ծակծկոտում։ Շները միահամուռ մեզ վրա էին պրծնում։ Ես երկու մատս բերանս դրած սուլեցի որքան ուժ ունեի։

Նրանք ետ ցատկեցին, և իսկույն ևեթ լսվեց վազող մարդկանց ոտների դոփյուն ու խոսակցություն։

Մի քանի րոպե հետո մենք արդեն խարույկի մոտ էինք, չորս հովիվների շրջանում, որոնք հագած էին բուրդը դրսի կողմը դարձրած ոչխարենիներ։

Երկուսը նստած էին գետնին և ծխում էին, մեկը բարձրահասակ, խիտ, սև մորուքով և կազակի փափախ դրած՝ կանգնած էր մեր ետևը՝ հենված ծայրին ահագին արմատագունդ ունեցող փայտին. չորրորդը՝ մի ջահել շեկ տղա, օգնում էր լացող Շաքրոյին՝ շորերը հանելու։ Մեզնից հինգ սաժենաչափ

հեռու՝ հողը մեծ տարածությամբ ծածկված էր ինչ-որ թանձր մոխրագույն և ալիքաձև, արդեն հալ ընկնող գարնան ձյուն հիշեցնող մի բանի շերտով։ Միայն երկար ու անընդհատ նայելով կարելի էր ջոկել իրար կիպ սեղմված ոչխարների առանձին կերպարանքները։ Այդտեղ նրանք մի քանի հազար էին, որոնց քունն ու գիշերվա խավարը կիպ սեղմել, դարձրել էին խիտ, տաք և հաստ շերտ, որը ծածկել էր տափաստանը։ Երբեմն նրանք մայում էին խղճալի ու երկչոտ ձայնով...

Ես շեքմենը չորացնում էի կրակի վրա և հովիվներին ասում ամեն բան՝ առանց թաքցնելու. պատմեցի և այն միջոցի մասին, որով ձեռք բերի նավակը։

— Հապա ո՞ւր է նա, էն նավակը,— հարցրեց ինձ խստատես ալևոր ծերունին, որ աչքն ինձնից չէր հեռացնում։

Ես ասացի։

— Գնա՛, Միխալ, մտիկ տուր...

Միխալը, այն սեամորուքը, փայտն ուսին դրեց և գնաց դեպի ծովափ։

Շաքրոն, որ ցրտից դողդողում էր, ինձ խնդրեց իրեն տալ տաք, բայց դեռ թաց շեքմենը, սակայն ծերն ասաց.

— Դեռ կա՛ց. առաջ մի վազվզի, որ արյունդ տաքացնես։ Վաղիր խարույկի շուրջը. հապա՛։

Շաքրոն սկզբից չհասկացավ, բայց հետո հանկարծ պոկ եկավ տեղից և մերկ՝ սկսեց պարել մի աներևակայելի վայրենի պար, խաղաքնդակի նման ոստնելով խարույկի վրայով, պրոտելով մի տեղում, ոտները գետնին դոփելով, ամբողջ ուժով ճչալով, ձեռները թափահարելով։ Դա մի չափազանց ծիծաղելի տեսարան էր։ Երկու հովիվները գետնին թավալվում էին՝ ամբողջ կոկորդով քրքջալով, իսկ ծերը լուրջ, անհույզ դեմքով աշխատում էր ձեռքի ափերով ծափ տալ պարի տակտի համեմատ, բայց չէր կարողանում հանգը գտնել, խոր նայում էր Շաքրոյի պարին՝ գլուխն օրորելով ու բեղերը շարժելով և թանձր ու թավ ձայնով շարունակ գոչում էր.

— Հայ-հա՛։ Էդպե՛ս, էդպե՛ս։ Հայ-հա՛։ Ծա՛փ, ծա՛փ։

Խարույկի կրակով լուսավորված, Շաքրոն օձի նման գալարվում էր, ցատկում մի ոտի վրա, մանր դոփյուններով երկու ոտով դոփում գետինը, և կրակի լույսից փայլող նրա մարմինը ծակծկվում էր քրտնքի խոշոր կաթիլներով, որոնք արյան պես կարմիր էին երևում։

Այժմ արդեն բոլոր երեք հովիվն էլ ծափ էին տալիս, իսկ ես, ցրտից դողալով՝ ցամաքեցնում էի ինձ խարույկի մոտ և մտածում, որ իմ ապրած արկածը բախտավոր կդարձներ Կուպերի և Ժյուլ-Վեռնի մի որևէ երկրպագուի. կա և՛ նավաբեկություն, և՛ հյուրասեր բնիկներ, և՛ վայրենու պար խարույկի շուրջը...

Ահա Շաքրոն արդեն նստած է գետնին՝ չեքմենով փաթաթված և ուտում է՝ մերթ-մերթ նայելով ինձ իր սև աչքերով, որոնցում կայծկլտում էր մի բան, որն իմ մեջ մի ինչ-որ անախորժ զգացում էր արթնացնում։ Նրա շորը շորանում էր՝ խարույկի մոտ հողում ցցած փայտերից կախված։ Ինձ էլ հաց և աղի ճարպ տվին ուտելու։

Միխալը եկավ ու լուռ նստեց ծերունու կողքին։

— Հը՞,— հարցրեց ծերը։

— Նավակն այնտեղ է,— կարճ պատասխանեց Միխալը։

— Ջուրը չի քշի՞։

— Չէ՛։

Եվ նրանք բոլորը լռեցին՝ ինձ դիտելով։

— Հը՞,— հարցրեց Միխալն՝ իսկապես առանց մեկնումեկին դիմելու,— տանե՞լ սրանց ստանիցա՝ ատամանի մոտ։ Գուցե՞ ավելի լավ է ուղղակի մաքսային ծառայողների մոտ տանել։

Միխալին չպատասխանեցին։ Շաքրոն հանգիստ ուտում էր։

— Կարելի է ատամանի մոտ տանել... նույնպես և մաքսային ծառայողների մոտ... Մե՛կն էլ է լավ, մեկե՛լն էլ,— ասաց ծերը։

— Կա՛ց, պապի...— սկսեցի ես։

Բայց նա իմ վրա ոչ մի ուշադրություն չդարձրեց։

— Ուրեմն էդպես՝ Միխա՛լ։ Նավակն էնտե՞ղ է։

— Ըհը՛, էնտեղ է։

— Հը՞... ջուրը չի քշի՞։

— Ծծը՛... չի՛ քշի։

— Դա թող էնտեղ էլ կենա։ Իսկ վաղը մակույկավարները կգնան Կերչ և իրանց հետ կտանեն։ Դատարկ նավակն ընչի՞ չպետք է տանեն որ։ Չէ՞։ Էդպես... Իսկ հիմի դուք... տկլոր տղերք... իքը... էնիք չեղա՞ք... Երկուսդ էլ չվախեցա՞ք։ Չէ՞։ Բո՛-բո՛... Մի կես վերստ էլ անցած լինեիք, ծովոմը կլինեիք։

Ի՞նչ կանեիք, թե որ ձեզ ծովը գցեր։ Հը՞։ Երկուսդ էլ տակը կսկեիք կացնի պես... Կխեղդվեիք ու պրծա՛վ գնաց։

Ծերը լռեց և նայեց վրաս՝ բեղերում հեգնական ժպիտ։

— Ի՞նչ ես սուս անում, ա՛յ տղա։

Ինձ ձանձրացրել էին նրա դիտողությունները, որոնք, չհասկանալով, համարում էի ծաղր մեր հասցեին։

— Ա՛յ, ականջ եմ դնում քեզ,— ասացի ես բավական բարկացած։

— Հետո ի՞նչ,— հետաքրքրվեց ծերը։

— Դե՛, ի՞նչ կա, որ ինչ լինի։

— Էլ ի՞նչ ես չգրացնում։ Բա էդ կա՞րգ է՝ քեզնից մեծին չգրացնես։

Ես սուս կացա։

— Իսկ էլի ուտել չե՞ս ուզում,— շարունակեց ծերը։

— Ոչ։

— Է՛հ, մի կեր։ Չես ուզում՝ մի ուտի։ Բայց կարելի է ճանապարհի՞ համար հաց կվերցնես։

Ես ուրախությունից ցնցվեցի, բայց ինձ չմատնեցի։

— Ճանապարհի համար կվերցնեի...— հանգիստ ասացի ես։

— Ըհը՛... Դե, ուրեմն սրանց էնտեղ հաց ու ճարպ տվեք ճանապարհի համար... Բայց կարելի՞ է ուրիշ բան էլ կա. ինչ որ կա, նրանից էլ տվեք։

— Բայց մի՞թե դրանք գնալու են,— հարցրեց Միխալը։

Մյուս երկուսն իրենց աչքերը ծերի վրա բարձրացրին։

— Հապա էստեղ ի՞նչ պիտի անեն։

— Ախր մենք ուզում էինք ատամանի մոտ տանել... կամ թե՛ մաքսային ծառայողների...—հիասթափված ասաց Միխալը։

Շաքրոն խարույկի մոտ իրար եկավ և գլուխը հետաքրքրությամբ դուրս հանեց չեքմենի միջից։ Նա հանգիստ էր։

— Սրանք ատամանի մոտ ի՞նչ պիտի անեն։ Սրանք ատամանի մոտ, հավատա, բան էլ չունեն անելու։ Հետո նրա մոտ կգնան... եթե կուզենան։

— Բա նավակի բանը ո՞նց կլինի,— ձեռք չէր քաշում Միխալը։

— Նավակի բա՞նը,— նորից հարցրեց ծերը։— Նավակին ի՞նչ կլինի որ։ Իր տեղո՞ւմն է։

— Իր տեղումն է...— պատասխանեց Միխալը։

— Էհ, թո՛ղ էնտեղ էլ մնա։ Իսկ առավոտյան ա՛յ Իվաշկան կտանի նավահանգիստ... Էնտեղից էլ կվերցնեն կտանեն Կերչ։ Նավակի հետ էլ ուրիշ բան չունենք անելու։

Ես ակնդետ նայում էի ծեր հովվին և չէի կարողանում գտնել մի ամենափոքրիկ շարժում նրա ֆլեգմատիկ, արևառ ու քամհար դեմքին, որի վրա ոստոստում էին խարույկի ստվերները։

— Մի փորձանք չպատահի հանկարծ...— սկսեց տեղի տալ Միխալը։

— Թե որ լեզուդ քեզ պահես, հավատա, փորձանք չի պատահի։ Իսկ եթե որ սրանց տանես ատամանի մոտ, դա, ես կարծում եմ, կանհանգստացնի թե՛ մեզ, թե՛ սրանց։ Մեզ հարկավոր է մեր գործն անել, սրանց՝ գնալ։ Է՛յ, հեռու տեղ եք գնալո՞ւ,— հարցրեց ծերը, թեև ես արդեն ասել էի նրան, թե որքան հեռու է այդ։

— Թիֆլիս։

— Երկա՞ր ճանապարհ է։ Ա՛յ, տեսնո՞ւմ ես. իսկ ատամանը ետ կգցի սրանց. իսկ որ նա ետ գցի, սրանք ե՞րբ տեղ կհասնեն։ Ուլեմն թո՛ղ գնան իրանց համար, ուր ուզում են։ Հը՞։

— Ինչ կա որ։ Թո՛ղ գնան,— համաձայնեցին ծերի ընկերները. երբ նա, վերջացնելով իր դանդաղ խոսքերը, շրթունքներն ամուր սեղմեց և հարցական նայեց բոլորին, մատներով իր գորշ մորուքը ոլորելով։

— Դե՛հ, ուրեմն, աստված ձեզ հետ, գնացե՛ք տղերք,— ձեռքով արավ ծերը։— Իսկ նավակը իր տեղը կուղարկենք։ Էնպես չէ՞։

— Շնորհակալությո՞ւն, պապի՛,— գլխարկ հանեցի ես։

— Ինչի՞ համար ես շնորհակալ։

— Շնորհակալ եմ, ախպեր, շնորհակա՞լ եմ,— հուզված կրկնեցի ես։

— Ախր ինչի՞ համար ես շնորհակալ։ Ա՛յ զարմանալի բան։ Ես ասում եմ գնացեք, աստված ձեզ հետ, իսկ սա ինձ՝ շնորհակալ եմ։ Մի՞թե դու վախենում էիր, որ ես քեզ սատանայի մոտ կուղարկեի։ Հը՞։

— Մեղքս ինչ թաքցնեմ, վախում էի...— ասացի ես։

— Օ՜...— և ծերունին վեր քաշեց հոնքերը։— Ես ինչո՞ւ պետք է մարդուն վատ ճանապարհի վրա գնեմ։ Ավելի լավ է ես նրան այն ճանապարհը գցեմ, որով ինքս եմ գնում։ Կարելի

է դեռ էլի կպատահենք, ուրեմն ծանոթ լինենք։ Կարող է պատահել, որ հարկավոր կլինի իրար օգնել... Ձեզ տեսություն (ցտեսություն)...

Նա վերցրեց իր բրդոտ ոչխարենի գդակը և գլուխ տվեց մեզ։ Գլուխ տվին և նրա ընկերները։ Մենք հարցրինք Անապայի ճանապարհն ու գնացինք։ Շաքրոն ծիծաղում էր ինչ-որ բանի վրա...

6

— Ինչի՞ վրա ես ծիծաղում,— հարցրի նրան։

Ինձ հիացրել էր ծեր հովիվը և նրա կենսական մորալը, ինձ հիացրել էր և՛ լուսադեմի զով քամին, որ փչում էր ուղիղ մեր կրծքին, և՛ այն, որ երկինքը մաքրվել էր ամպերից, որ շուտով արևը պայծառ երկինք էր բարձրանալու ու փայլուն, գեղեցիկ ցերեկն էր ծնվելու...

Շաքրոն խորամանկությամբ աչքով արավ ինձ և ավելի ուժգին քրքջաց։ Ես էլ էի ժպտում՝ լսելով նրա ուրախ, առողջ ծիծաղը։ Հովիվների խարույկի մոտ մեր անցկացրած երկու երեք ժամը և համեղ հացն ու ճարպը հոգնեցուցիչ ճանապարհորդությունից հետո թողել էին միայն ոսկորների մի թեթև ցավ. բայց այդ զգացումը չէր խանգարում մեր ուրախությանը։

— Դե՛, ի՞նչ ես ծիծաղում։ Ուրա՞խ ես, որ կենդանի ես մնացել, հա՞։ Կենդանի ու նաև կուշտ։

Շաքրոն բացասաբար շարժեց գլուխը, կողքիս խփեց արմունկով, ծամածռություն արավ, նորից քրքջաց և, վերջապես, ասաց իր կոտրտված լեզվով.

— Չե՞ս հասկանում, թե ինչի է ծիծաղս գալիս։ Չէ՛։ Հիմի կիմանաս։ Գիտե՞ս, թե ինչ պետք է անեի, եթե մեզ տաներին այդ ատաման-տամոժանի մոտ։ Չե՞ս իմանում։ Ես քո մասին կասեի՝ սա ուզում էր ինձ խեղդի։ Ու կսկսեի լաց լինել։ Այն ժամանակ ինձ կսկսեին խղճալ ու բանտ չէին նստացնի։ Հասկանո՞ւմ ես։

Ես սկզբում ուզում էի այդ իբրև կատակ հասկանալ, բայց, ավա՜ղ։ Նա կարողացավ ինձ համոզել, որ իր մտադրությունը լուրջ էր եղել։ Նա այնպես հիմնավոր ու պարզ կերպով էր համոզում ինձ այդ բանում, որ ես փոխանակ այդ միամիտ ցինիզմի համար նրա վրա կատաղելու, լցվեցի խորին խղճահա-

բության զգացումով դեպի նա։ Ուրիշ ի՞նչ կարելի է զգալ դեպի մի մարդ, որն ամենապայծառ ժպիտով և ամենաանկեղծ տոնով պատմում է քեզ, որ ինքը մտադիր էր քեզ սպանել։ Ի՞նչ անել նրան, երբ նա նայում էր այդ արարքին որպես մի անմեղ ու սրամիտ կատակի։

Ես սկսեցի տաքացած ապացուցել Շաքրոյին իր մտադրության ամբողջ անբարոյականությունը։ Նա շատ պարզորեն առարկում էր ինձ, որ ես չեմ հասկանում իր օգուտը, մոռանում են նրա ուրիշ անձնագրով ապրելը և այն, որ դրա համար նրա բանը վատ կլիներ...

Հանկարծ գլխումս մի դաժան միտք փայլեց.

— Կա՛ց,— ասացի ես,— մի՞թե դու հավատում ես, որ ես ուզում էի քեզ խեղդել։

— Չէ՛... երբ դու ինձ ջուրն էիր հրում — հավատում էի, երբ դու ինքդ մտար ջուրը՝ չհավատացի։

— Փա՜ռք աստծու,— բացականչեցի ես։— Դե՛ դրա համար էլ շնորհակալ եմ։

— Չէ՛, շնորհակալություն մի ասա։ Ե՛ս քեզ կասեմ շնորհակալություն։ Այնտեղ, խարույկի մոտ դու էլ մրսում էիր, ես էլ մրսում էի... Չեքմենը քոնն է — դու չպահեցիր քեզ համար։ Դու այն չորացրիր և ինձ տվիր։ Իսկ դու ոչինչ չվերցրիր։ Ա՛յ, քեզ շնորհակալություն։ Դու շատ լավ մարդ ես, ես հասկանում եմ։ Կգանք Թիֆլիս, այդ բոլորի փոխարենը կստանաս։ Հորս մոտ կտանեմ քեզ։ Հորս կասեմ՝ ա՛յ մարդ։ Ուտեցրու սրան, խմեցրու սրան, իսկ ինձ քշիր էշերի մոտ, ախոռը։ Ահա՜ թե ինչ կասեմ։ Մեզ մոտ կապրես, այգեպան կլինես, գինի կխմես, սիրտդ ինչ ուզի՝ կուտես... Ա՛խ, ա՛խ, ա՛խ... Շա՜տ լավ կյանք կքաշես։ Շա՜տ պարզ... Կե՛ր, խմիր ինձ հետ մի ամանից...

Նա երկար ու մանրամասնորեն նկարագրում էր այն կյանքի սքանչելիքները, որ պատրաստվում էր ստեղծելու ինձ համար Թիֆլիսում՝ իրենց տանը։ Իսկ ես նրա զրույցի ժամանակ մտածում էի այն մարդկանց մեծ դժբախտության մասին, որոնք զինվելով նոր մորալով, նոր ցանկություններով, մեն-մենակ առաջ էին գնացել և իրենց ճանապարհին հանդիպում են իրենց համար խորթ, իրենց հասկանալու անընդունակ ուղեկիցների... Ծանր է այդպիսի մենակների կյանքը... Նրանք երկրից վեր են, օդի մեջ..., բայց նրանք հածում են այնտեղ, ինչպես բարի

բույսերի սերմեր, թեպետև սակավ են փտում արգավանդ հողում...

Լուսանում էր։ Ծովի հեռաստանը փայլում էր վարդագույն ոսկու պես։

— Քունս տանում է,— ասաց Շաքրոն։

Մենք կանգ առանք։ Նա պառկեց մի փոսում, որ քամին փորել էր ծովափից ոչ հեռու, չոր ավազի մեջ և գլխովին չեքմենի մեջ փաթաթվելով՝ շուտով քնեց։ Ես նստեցի նրա կողքին և նայում էի ծովին։

Նա ապրում էր իր լայնարձակ կյանքով, որը լի էր հզոր շարժումով։ Ալիքների երամներն աղմուկով թավալվում էին դեպի ափը, փշրվում՝ ավազին ընդհարվելով, իսկ ավազը թույլ թշշում էր՝ ջուրը ծծելով։ Առաջավոր ալիքներն իրենց ճերմակ բաշերը թափ տալով՝ աղմուկով խփում էին ափին իրենց կրծքով և նահանջում՝ նրանից ետ մղվելով, իսկ նրանց արդեն դիմավորում էին ուրիշ ալիքներ, որոնք օգնության էին գալիս։ Ամուր գրկախառնվելով, փրփրուն ու ցայտուններով ծածկված՝ նրանք նորից էին դեպի ափը գլորվում ու ծեծում նրան՝ ձգտելով իրենց կյանքի սահմաններն ընդլայնել։ Հորիզոնից մինչև ափը՝ ծովի ամբողջ տարածության վրա, ծնվում էին այդ ճկուն ու կորովի ալիքները և շարունակ գնում էին, գնում իբրև մի խիտ զանգված՝ նպատակի միասնականությամբ սերտ կապված միմյանց հետ։ Արևն ավելի ու ավելի պայծառ էր լուսավորում նրանց կատարները, և այն ալիքների կատարները, որոնք հեռու էին, հորիզոնի վրա, բոսորագույն էին թվում։ Ոչ մի կաթիլ անհետ չէր կորչում ջրային զանգվածի այդ տիտանական շարժման մեջ, զանգվածի, որը ասես թե ոգեշնչված էր մի գիտակցական նպատակով և ահա հասնում էր նրան լայն ռիթմիկ զարկերով։ Հրապուրիչ էր առաջավորների գեղեցիկ քաջությունը, ալիքների, որոնք ըմբոստությամբ թռչում էին լռիկ ափը, և հաճելի էր նայել, թե ինչպես նրանց ետևից խաղաղ ու միաբան գալիս է ամբողջ ծովը, հզոր ծովը, որին արևն արդեն ներկել էր ծիածանի բոլոր գույներով և որը լի էր իր գեղեցկության և ուժի գիտակցությամբ...

Հրվանդանի ետևից, ալիքները պատռելով, դուրս լողաց մի հսկայական շոգենավ և ծանր ու մեծ օրորվելով, ծովի հուզված լանջի վրա՝ սուրաց կատաղությամբ իր եզրերի վրա հարձակվող ալիքների կատարներով։ Այդ նավը՝ գեղեցիկ և հուժկու,

որի մետաղը պսպղում էր արևից, մի ուրիշ անգամ գուցե կարողանար մտածել տալ մարդկանց հպարտ ստեղծագործ ուժի մասին, որոնք տարերքն են ստրկացնում... Բայց իմ կողքին պառկած էր մարդ-տարերքը։

7

Մենք անցնում էինք Թերեքի մարզով։ Շաքրոյի մազերը սաստիկ գզգզված էին, հագուստն անկարգ, պատառոտած և ինքը սատանայի պես չարացած, թեև այժմ արդեն քաղցած չէր, որովհետև բավական վաստակ ունեինք։ Նա որևէ աշխատանքի անընդունակ դուրս եկավ։ Մի անգամ փորձեց մի կալում հարդ տրմղել և կեսօրից հետո հիվանդացավ՝ ձեռքերի ափերին արյունալից հարուկներ առաջացնելով։ Մի ուրիշ անգամ մենք մի դժնիկ էինք արմատահան անում, և նա քլունգով իր վզի կաշին պլոկեց։

Գնում էինք բավական դանդաղ, երկու օր բանում էինք, մի օր գնում։ Շաքրոն չափազանց անզուսպ էր ուտում, և շնորհիվ նրա որովայնամոլության, ես ոչ մի կերպ չկարողացա այնքան փող ետ գցել, որպեսզի հնարավորություն ունենամ կոստյումի որևէ մաս առնել նրա համար։ Իսկ նրա կոստյումի բոլոր մասերը մի բազմություն էին զանազանակերպ ծակերի, որոնք մի կերպ կապակցված էին գույնզգույն կարկատաններով։

Մի անգամ մի ստանիցայում նա իմ պարկից հանեց իրենից ծածուկ մեծ դժվարությամբ իմ ետ գցած հինգ ռուբլին ու երեկոյան դարձավ այն տունը, որի բանջարանոցում ես աշխատում էի, հարբած ու ինչ-որ մի հաստլիկ կազակ կնոջ հետ, որն ինձ այսպես բարևեց.

— Բա՛րև, անիծած հերետիկոս։

Իսկ երբ ես այդպիսի մակդիրից զարմացած՝ հարցրի նրան, թե ես ինչու եմ հերետիկոս, նա ապլոմբով պատասխանեց.

— Նրա համար, սատանա՛, որ տղային արգելում ես կանանց սեռը սիրել։ Մի՞թե դու կարող ես արգելել, երբ օրենքը թույլատրում է... Անե՛ծք քեզ...

Շաքրոն կանգնած էր նրա կողքին և դրականապես գլխով էր անում։ Նա սաստիկ հարբած էր և երբ որևէ շարժում էր անում, ամբողջովին ոտուձեռից ընկած օրորվում էր։ Նրա վա-

րի շրթունքը կախ էր ընկել։ Անփայլ աչքերը նայում էին երեսիս անմիտ-համառ հայացքով։

— Է՛յ, դո՛ւ, ի՞նչ ես աչքերդ վրաներս չռել։ Տուր սրա փողը,— գոռաց քաջ կինը։

— Ի՞նչ փող,— ապշեցի ես։

— Տո՛ւր, տո՛ւր։ Թե չէ ես քեզ կտանեմ զինվորական վարչություն։ Տուր այն հարյուր հիսուն ռուբլին, որ նրանից վերցրել ես Օդեսայում։

Ի՞նչ անեի։ Սատանայի կինը հարբած-հարբած կարող էր իսկապես գնալ զինվորական վարչության խրճիթը, և այն ժամանակ գյուղական իշխանությունը, որ խիստ է զանազան թափառաշրջիկ մարդկանց վերաբերմամբ, կկալանավորի մեզ։ Ո՞վ գիտե, իմ և Շաքրոյի համար ինչ դուրս գար այդ բանտարկությունից, և ահա ես սկսեցի դիվանագիտորեն սիրաշահել այդ կնոջը, որը, իհարկե, մեծ ճիգեր չպահանջեց ինձանից։ Մի կերպ, երեք շիշ գինու օգնությամբ, ես նրան խաղաղացրի։ Նա ընկավ գետին ձմերուկների մեջ ու քնեց։ Ես Շաքրոյին պառկեցրի, իսկ մյուս օրը վաղ առավոտյան ես ու նա դուրս եկանք ստանիցայից՝ թողնելով կնոջը ձմերուկների մոտ։

Խմած լինելուց կիսահիվանդ, տրորված և ուռած դեմքով՝ Շաքրոն բոպեն մեկ ֆքում էր, ծանր հառաչում։ Ես փորձում էի նրա հետ խոսակցել, բայց նա ինձ չէր պատասխանում և միայն ոչխարի պես իր թավ գլուխն էր շարժում։

Մենք գնում էինք մի նեղ շավղով, որով ետ ու առաջ էին սողում փոքրիկ կարմիր օձեր՝ գալարվելով մեր ոտների տակ։ Մեր շուրջը թագավորող անդորրությունը մեզ գցում էր մի երազային-նիրհուն վիճակի մեջ։ Մեր ետևից երկնքով դանդաղ շարժվում էին սև ամպերի երամներ։ Իրար միանալով՝ նրանք ծածկեցին ողջ երկինքը մեր ետևում, մինչդեռ առաջներս երկինքը պարզ էր տակավին, թեև արդեն ամպերի պատառներն այնտեղ էլ վազեցին և կայտառ առաջ սլացան՝ մեզնից առաջ անցնելով։ Հեռվում մի ինչ-որ տեղ թնդում էր որոտը, և նրա քրթմնջացող հնչյուններն ավելի ու ավելի էին մոտենում։ Անձրևի կաթիլներն սկսեցին թափվել։ Խոտը մետաղաձայն խշշաց։

Տեղ չկար ապաստանելու։ Ահա մթնեց, և խոտի խշշոցը հնչեց ավելի բարձր, վախեցած ձայնով։ Երկինքը որոտաց, և ամպերը դողդողացին՝ կապույտ կրակով բռնված։ Խոշորակաթիլ անձրևը թափվեց հեղեղի պես, և ամպրոպի ճայթյուն-

ները մեկը մյուսի ետևից սկսեցին անընդմեջ հնչել ամայի տափաստանում։ Քամու և անձրևի հարվածներից կռացող խոտը պառկում էր գետնին։ Ամեն ինչ դողում էր, ալեկոծվում։ Շանթերը, որոնց լույսը մարդու աչք էր կուրացնում, պատռում էին ամպերը... Նրանց խորաթափանց փայլի մեջ հեռվում երևում էր մի լեռնաշղթա՝ արծաթագույն ու պաղ, կապույտ կրակներով շողալով, իսկ երբ շանթերը մարում էին, նա անհետանում էր, կարծես խավար անդունդը գլորվելով։ Ամեն ինչ որոտում էր, ցնցվում, ետ մղում հնչյունները և ծնում նրանց։ Ասես երկինքը՝ պղտոր ու զայրացած՝ կրակով էր սրբում իր վրայի փոշին ու ամեն մի աղտեղություն, որ երկրից բարձրացել էր դեպի նա, և երկիրը թվում էր թե ցնցվում է՝ նրա ցասումից սարսափած։

Շաքրոն մրթմրթում էր, ինչպես վախեցած շուն։ Իսկ ես ուրախ էի, ես մի տեսակ բարձրացել էի սովորականից՝ դիտելով տափաստանային մրրիկի այդ հզոր, մռայլ պատկերը։ Հրաշալի քառսը հրապուրում և հերոսական տրամադրություն էր ներշնչում՝ ահավոր ներդաշնակությամբ համակելով հոգիս...

Եվ ես ցանկանում էի մասնակցել դրան, որևէ բանով արտահայտել դեպի այդ խորհրդավոր ուժն ունեցած հիացմունքի զգացումը, որը լցրել էր հոգիս։ Կապույտ բոցը, որ բռնել էր երկինքը, թվում էր, թե վառվում է և՛ իմ կրծքում. և ինչո՞վ արտահայտեի իմ մեծ հուզմունքը և իմ հրճվանքը բնության այդ փառահեղ պատկերի առաջ... Ես երգեցի —զի՞լ, ձայնիս ամբողջ ուժով։ Որոտը թնդում էր, շանթերը շողշողում էին, խոտը խշշում էր, իսկ ես երգում էի և ինձ լիովին հարազատ զգում այդ բոլոր ձայներին... Ես գժություն էի անում. այդ նեբելի է, որովհետև ոչ ոքի վնաս չէի հասցնում, բացի ինձանից։ Փոթորիկը ծովում և մրրիկն ամայի դաշտում՝ բնության մեջ ավելի փառահեղ երևույթներ ես չեմ տեսել։

Եվ այսպես, ես գոչում էի, հաստատապես հավատացած լինելով, որ իմ այդ վարմունքով ոչ ոքի չեմ անհանգստացնի և ոչ ոքի չեմ ստիպի խիստ քննադատության ենթարկել իմ վարվելակերպը։ Բայց հանկարծ ոտիցս ամուր քաշեցին, և ես ակամայից նստեցի մի ջրափոսի մեջ...

Երեսիս նայում էր Շաքրոն՝ լուրջ և կատաղի աչքերով։

— Դու խելքդ թոցրե՞լ ես։ Ջե՞ս թոցրել։ Ջէ՞։ Դե՛, ուրեմն լռի՛ր։ Մի՛ գոռա։ Ես քո կոկորդը կպատռեմ։ Հասկանո՞ւմ ես։

Ես ապշեցի և սկզբում հարցրի, թե իրեն ինչո՞վ եմ խանգարում...

— Վախեցնում ես։ Հասկացա՞ր։ Ամպերը որոտում են՝ այդ աստված է խոսում, իսկ դու գոռում ես... Ի՞նչ ես մտածում։

Ես նրան հայտնեցի, որ իրավունք ունեմ երգելու, եթե ցանկանում եմ, ինչպես և նա ինքը։

— Իսկ ես չեմ ուզում,— կտրուկ ասաց նա։

— Մի՛ երգիր,— համաձայնեցի ես։

— Դու էլ մի՛ երգիր,— խստությամբ իր թելադրանքն էր անում ինձ Շաքրոն։

— Ո՛չ, ավելի լավ է՝ ես կերգեմ...

— Լսի՛ր, դու ի՞նչ ես կարծում,— զայրացած խոսեց Շաքրոն։— Ո՞վ ես դու։ Դու տուն ունե՞ս, դու մայր ո՞ւնես։ Հա՞յր։ Ազգականներ ունե՞ս։ Հող ունե՞ս։ Ինչացո՞ւ ես դու աշխարհքիս երեսին։ Կարծում ես՝ դու մա՞րդ ես։ Էդ ե՛ս եմ մարդ։ Ես ամեն ինչ ունեմ...— Նա ծեծեց իր կուրծքը։— Ես իշխան եմ... Իսկ դո՞ւ... դու ոչի՞նչ ես։ Ոչինչ չունե՞ս։ Իսկ ինձ ճանաչում է Քութայիսը, Թիֆլիսը... Հասկանո՞ւմ ես։ Դու ինձ հակառակ մի՛ գնա։ Դու ինձ ծառայո՞ւմ ես։ Գոհ կլինես։ Ես քեզ տասնապատիկ կվճարեմ։ Դու ինձ էդպե՞ս ես անում։ Դու ուրիշ բան անել չես կարող. դու ինքդ էիր ասում, որ աստված հրամայել է ծառայել ամենքին, առանց պարգև ստանալու։ Ես քեզ կպարգևատրեմ։ Ինչո՞ւ ես դու ինձ չարչարում։ Բաներ ես սովորեցնում, վախեցնում ես։ Ուզում ես, որ ես էլ էնպես լինեմ, ինչպես դու ես։ Դա լավ չի... ա՛խ, ա՛խ, ա՛խ... ֆո՞ւ, ֆո՞ւ...

Նա խոսում էր, շմփշմփացնում, ֆոթացնում, հառաչում... Ես նայում էի նրա երեսին՝ զարմանքից բերանս բաց արած։ Նա, ինչպես երևում է, առաջս էր թափում բոլոր վրդովմունքները, վիրավորանքները և անբավականությունները, որոնք դիզվել էին իր մեջ մեր ճանապարհորդության ամբողջ ժամանակամիջոցում։ Ավելի խոր համոզելու համար՝ նա մատով խթում էր կրծքիս և ուսերս շարժում, իսկ ավելի ուժգին տեղերում՝ իր ամբողջ մարմնով վրաս էր գալիս։ Մեզ թրջում էր անձրևը, մեր վերևն անընդհատ որոտում էր երկինքը, և Շաքրոն, որպեսզի ձայնը լսելի դարձնի, գոռում էր իր կոկորդով մեկ։

Իմ դրության տրագիկոմիզմն ամենից ավելի պարզ դարձավ ինձ համար և ինձ ստիպեց, որքան ուժ ունեի՝ քրքջալ...

Շաքրոն թքելով՝ երեսը դարձրեց ինձանից։

8

...Որքան ավելի էինք մոտենում Թիֆլիսին, այնքան Շաքրոն ավելի կենտրոնացած ու մռայլ էր դառնում։ Ինչ-որ նոր բան էր երևում նրա նիհարած, բայց այնուամենայնիվ անշարժ դեմքին։ Վլադիկավկազից ոչ հեռու մտանք մի չերքեզական աուլ և այնտեղ վարձվեցինք սիմինդր քաղելու։

Երկու օր բանելով չերքեզների մեջ,— որոնք, համարյա ռուսերեն չխոսելով անդադար ծիծաղում էին մեզ վրա ու հայհոյում մեզ իրենց լեզվով,— մենք վճռեցինք աուլից հեռանալ՝ աուլցիների դեպի մեզ ավելի ու ավելի աճող թշնամական վերաբերմունքից վախեցած։ Աուլից տասը վերստաչափ հեռացել էինք, երբ Շաքրոն հանկարծ դուրս քաշեց ծոցից լեզգիական մարմաշի մի փաթեթ և հրճվանքով ցույց տվեց ինձ, բացականչելով.

— Էլ հարկավոր չի բանել։ Կծախենք, ամեն ինչ կառնենք։ Հերիք կանի մինչև Թիֆլիս։ Հասկանո՞ւմ ես։

Ես վրդովվեցի կատաղելու աստիճան և մարմաշը խլելով նետեցի մի կողմ ու ետ նայեցի։ Չերքեզները հանաք չեն անում։ Դրանից քիչ առաջ մենք կազակներից լսել էինք այսպիսի պատմություն. մի շրջմոլիկ՝ հեռանալով այն աուլից, ուր բանել էր, իր հետ տարել էր մի երկաթե գդալ։ Չերքեզները ետևից հասել էին, խուզարկել, գտել նրա մոտ այդ գդալը և փորը խանչալով պատռելով՝ գդալը խոր դրել էին վերքի մեջ, ապա հանգիստ հեռացել էին՝ թողնելով նրան տափաստանում, որտեղից կազակները նրան տարել էին կիսակենդան վիճակում։ Նա՛ էր այդ պատմել նրանց և ստանիցայի ճանապարհին մեռել էր։ Կազակները հաճախ և խիստ զգուշացնում էին մեզ չերքեզներից, պատմելով այս ոգով խրատական պատմություններ, և ես հիմք չունեի նրանց չհավատալու։

Ես հիշեցրի Շաքրոյին այս մասին։ Նա առաջս կանգնած լսեց և հանկարծ լուռ, ատամները կրճտացնելով ու աչքերը կկոցելով, կատվի պես հարձակվեց ինձ վրա։ Հինգ րոպեի չափ մենք հիմնավորապես ծեծում էինք իրար. վերջապես Շաքրոն զայրույթով գոռաց.

— Հերի՛ք է...

Զարշարված՝ մենք երկար ժամանակ լռեցինք՝ իրար դիմաց նստած... Շաքրոն խեղճ-խեղճ նայեց այն կողմը, ուր շպրտել էի կարմիր մարմաշը, ու ասաց.

— Ինչի՞ համար կռվեցինք։ Վա՛հ, վա՛հ, վա՛հ... Շա՜տ հիմար բան է։ Մի՞թե ես քեզնից էի գողացել... Ի՞նչ է, դու ափսոսո՞ւմ էիր։ Ես քեզ էի խղճում, դրա համար գողացա... Դու բանում ես, ես չեմ կարողանում... Ես ի՞նչ անեի։ Ուզում էի քեզ օգնել...

Ես աշխատեցի բացատրել նրան, թե ինչ բան է գողությունը...

— Խնդրեմ, սու-ո՞ւս արա։ Քո գլուխը փետի նման է...— արհամարհական ձևով ասաց ինձ և բացատրեց,— որ մեռնելիս լինես, կգողանա՞ս։ Հը՞։ Իսկ մի՞թե սա կյանք է։ Զենդ կտրի՛ր։

Վախենալով, որ նրան նորից կգրգռեմ, ես լռեցի։ Այդ արդեն գողության երկրորդ դեպքն էր։ Դեռ առաջ, երբ մենք Սև ծովի ափերին էինք, նա թռցրել էր հույն ձկնորսներից մի գրպանի կշեռք։ Այն ժամանակ էլ քիչ մնաց մենք կռվեինք։

— Հը, շարունակե՞նք ճանապարհը,— ասաց նա, երբ մենք փոքր-ինչ խաղաղվել էինք, հաշտվել ու հանգստացել։

Մենք առաջ գնացինք։

Նա օրավուր դառնում էր ավելի ու ավելի մռայլ և նայում էր ինձ տարօրինակ հայացքով, աչքի տակով։ Մի անգամ, երբ արդեն անցել էինք Դարյալի կիրճը և իջնում էինք Գուդաուրից, նա այսպես խոսեց.

— Մեկ-երկու օր էլ անցնի՝ Թիֆլիս կհասնենք։ Ծծը՛, ծծը՛,— ծթծթացրեց նա լեզվով, և նրա դեմքը պայծառացավ։— Կգնամ տուն,— որտե՞ղ էիր։— Ճանապարհորդում էի։ Բաղնիս կգնամ... ըհա՛։ Կուտեմ շատ... ա՜խ, շա՜տ։ Մորս կասեմ՝ շատ սոված եմ։ Հորս կասեմ՝ ներիր ինձ։ Ես շատ դարդ եմ տեսել, կյանք եմ տեսել... տարբեր տեսակ։ Բոսյակները շատ լավ մարդիկ են։ Երբ պատահեմ, մի մանեթ կտամ, կտանեմ գինետուն, կասեմ՝ գինի խմի՛ր, ես ինքս էլ եմ բոսյակ եղել։ Հորս քո մասին կասեմ... Ա՜յ մարդ եմ ասում, մեծ եղբոր պես է եղել ինձ համար... Խրատել է ինձ... Ծեծել է ինձ, շո՛ւնը... կերակ-

րել է։ Հիմի, կասեմ, դու կերակրիր սրան դրա համար։ Մի տարի կերակրիր, ա՛յ թե ինչքան։ Լսո՞ւմ ես, Մաքսի՛մ։

Ես սիրում էի լսել, երբ նա այդպես էր խոսում. նա մի տեսակ պարզ և մանկական հատկություն էր ստանում այդպիսի վայրկյաններին։ Այդպիսի խոսքերն ինձ համար հետաքրքիր էին և՛ այն պատճառով, որ ես Թիֆլիսում ոչ մի ծանոթ մարդ չունեի, իսկ ձմեռը մոտենում էր, Գուգաուրում արդեն բուք դիմավորեց մեզ։ Ես Շաքրոյի վրա մի քիչ հույս ունեի։

Մենք արագ էինք գնում։ Ահա և Մցխեթը՝ Իբերիայի հին մայրաքաղաքը։ Վաղը Թիֆլիս կհասնենք։

Դեռ հեռվից, հինգ վերստաչափ տարածությունից, ես տեսա Կովկասի մայրաքաղաքը՝ երկու սարերի միջև սեղմված։ Ճանապարհի վերջն էր։ Ես ուրախ էի մի ինչ-որ բանի. Շաքրոն անտարբեր էր։ Նա բութ հայացքով առաջ էր նայում և քաղցած մի կողմ թքում, ցավագին ծամածռությամբ շարունակ փորը բռնելով։ Այդ նրանից էր, որ նա անզգուշությամբ գազար էր կերել, որ քաղել էր ճանապարհին։

— Դու կարծո՞ւմ ես, ես՝ վրացի ազնվականս, կգնամ իմ քաղաքն օրը ցերեկով այսպես, պատառոտված հագուստով ու կեղտոտ։ Չէ-է՛... Մենք կսպասենք երեկոյին։ Կանգնի՛ր։

Մենք նստեցինք մի ինչ-որ դատարկ շինության պատի տակ և մի-մի վերջին ծխախոտ փաթաթելով, ցրտից դողդողալով՝ ծխեցինք։ Ռազմավիրական ճանապարհից փչում էր սուր և ուժեղ քամի։ Շաքրոն նստել՝ ատամների արանքով մի թախծալի երգ էր երգում... Ես մտածում էի մի տաք սենյակի և նստակյաց կյանքի մյուս առավելությունների մասին, որ ունի նա թափառական կյանքի հետ համեմատած։

— Գնա՛նք,— տեղից բարձրացավ Շաքրոն՝ վճռական դեմքով։

Մթնեց։ Քաղաքը վառում էր ճրագները։ Այդ գեղեցիկ էր։ Կրակները հետզհետե, մեկը մյուսի ետևից, ինչ-որ մի տեղից դուրս էին ցատկում խավարի մեջ, որը պատել էր այն հովիտը, ուր քաղաքն էր թաքնված։

— Լսի՛ր, դու ինձ տուր այդ բաշլըղը, որ երեսուս ծածկեմ... թե չէ ծանոթներս ինձ կարող է պատահի ճանաչեն...

Ես բաշլըղը տվի։ Մենք գնում էինք Օլգինսկայա փողոցով։ Շաքրոն սուլում էր ինչ-որ վճռական բան։

— Մաքսի՛մ։ Տեսնո՞ւմ ես ձիաքարշի կայարանը՝ Վերայի

կամուրջը։ Նստիր այստեղ, սպասի՛ր։ Ես մտնեմ մի տուն, ընկերոջից հարցնեմ մերոնց մասին, հորս, մորս մասին...

— Դու շուտ կգա՞ս։

— Իսկո՛ւյն։ Մի մոմենտ...

Նա արագ խցկվեց մի մութ ու նեղ նրբափողոց և անհետացավ այնտեղ՝ ընդմիշտ։

Ես այլևս երբեք չհանդիպեցի այդ մարդուն, որ իմ ուղեկիցն էր եղել կյանքիս համարյա ամբողջ չորս ամսվա ընթացքում. բայց ես հաճախ եմ հիշում նրան՝ բարի զգացմունքով և ուրախ ծիծաղով։

Նա ինձ սովորեցրեց շատ բան, որ չես գտնի իմաստունների գրած հաստ ֆոլիանտներում, որովհետև կյանքի իմաստությունը միշտ ավելի խոր ու ավելի լայն է մարդկանց իմաստությունից։

ԲՈԼԵՍ

Իմ մի ծանոթն ահա թե ինչ պատմեց ինձ.

«Երբ ես ուսանող էի Մոսկվայում, ինձ վիճակվեց ապրել «այնպիսի»— գիտես, չէ՞— կանանցից մեկի կողքի սենյակում։ Նա լեհուհի էր, անունը Թերեզա։ Լինելով բարձրահասակ, խիստ թուխ մազերով, իրար միացած սև հոնքերով ու մեծ, կոպիտ, ասես կացնակոփ երեսով՝ նա սարսափ էր ազդում ինձ իր թուխ աչքերի կենդանական փայլով, թանձր, թավավուն ձայնով, կառապանի շարժուձևերով, շուկայի առևտրական կնոջ իր ամբողջ հսկայական, մկանակուռ կերպարանքով... Ես ապրում էի ձեղնասենյակում, և նրա դուռն իմի դիմացն էր։ Ես երբեք բաց չէի անում իմ դուռը, եթե իմանում էի, որ նա տանն է։ Բայց դա, իհարկե, սակավ էր պատահում։ Երբեմն ինձ վիճակվում էր հանդիպել նրան սանդուղքի վրա, բակում, և նա ժպտում էր ինձ մի ժպիտով, որը ես համարում էի գիշատչական ու ցինիկ։ Ես շատ եմ տեսել նրան հարբած, խոնջ աչքերով, թափթփված մազերով, հատկապես տգեղ ժպիտով ժպտալիս... Այդպիսի դեպքերում նա ինձ ասում էր.

— Առողջություն ձեզ, պանե ուսանող,— ու հիմարաբար քրքջում էր, ավելացնելով իմ հակակրանքն իր հանդեպ։ Ես կփոխեի բնակարանս, որպեսզի ազատվեի այդպիսի հանդի-

պումներից ու ողջույններից, բայց իմ փոքրիկ սենյակն այնքան հաճելին էր՝ պատուհանից բացվող լայն տեսարանով, և այդ փողոցն այնքան խաղաղ էր... Ես համբերում էի։

Եվ մի անգամ առավոտյան ես պառկած էի մահճակալի վրա ու ճգնում էի որևէ հիմք գտնել, որպեսզի դասախոսություններին չգնամ, հանկարծ դուռը բացվեց, և այդ զզվելի Թերեզան շեմքից գոչեց թավ ձայնով։

— Առողջությո՛ւն ձեզ, պանե ուսանող։

— Ի՞նչ եք կամենում,— ասացի։ Տեսնեմ՝ դեմքն ամաչկոտ է, խնդրողական... Նրա սովորական դեմքը չի։

— Գիտե՞ք ինչ, պանե, ես ձեզ մի բան պետք է խնդրեմ... արե՛ք այդ ինձ համար։

Ես պառկած եմ մնում, լռում ու մտածում եմ.

— Ոտնձգությո՛ւն է։ Հանցափորձ իմ մաքրության դեմ,— ո՛չ ավելի, ո՛չ պակաս։ Պինդ կաց, եգո՛ր։

— Ինձ հարկավոր է, գիտե՞ք, նամակ ուղարկել իմ հայրենիքը,— ասաց նա — և այնպես աղերսագին, կամաց, երկչոտ։

Է՛, ստածեցի, սատանան քեզ հետ, համեցի՛ր։ Վեր կացա, նստեցի սեղանի մոտ, թուղթ վերցրեցի և ասացի.

— Անցեք այստեղ, նստեցեք ու թելադրեցեք...

Նա անցավ, զգուշությամբ նստեց աթոռի վրա և մեղավորի հայացքով նայեց ինձ։

— Դե՛, նամակն ո՞ւմ եք գրում։

— Վարշավայի Ճանապարհ, Սվենցյանի քաղաք, Բոլեսլավ Կաշպուտին...

— Ի՞նչ գրեմ։ Ասացե՛ք...

— Իմ սիրելի Բոլես... սրտիս հատոր... իմ հավատարիմ սիրեցյալ։ Թո՛ղ պահպանե քեզ մայր աստվածածինը։ Իմ ոսկեստրիկ, ինչո՞ւ այսքան երկար ժամանակ դու չես գրում քո կարոտակեզ աղավնյակ Թերեզային...

Ես քիչ մնաց փոթկացնեի... «կարոտակեզ աղավնյակ», որն ունի տասներկու վերշոկանոց հասակ, փթանոց բռունցք և այնպիսի սև մռութ, որ կարծես աղավնյակն իր ամբողջ կյանքում ծխնելույզ է մաքրել ու մի անգամ էլ չի լվացվել։ Մի կերպ զսպեցի ինձ, հարցրի.

— Նա ո՞վ է, այդ Բոլեսը։

— Բոլես, պանե ուսանող,— կարծես Թերեզան վիրավորվեց նրանից, որ ես անունն աղավաղեցի։— Նա իմ նշանածն է...

— Նշանա՞ծ...

— Իսկ ինչո՞ւ պանն այդպես զարմացավ։ Մի՞թե ես՝ աղջիկս, չեմ կարող նշանած ունենալ։

Նա՝ այդ աղջի՛կը։

— Օ՜, ինչու չէ։ Ամեն ինչ պատահում է... Իսկ նա վաղո՞ւց է ձեր նշանածը...

— Վեցերորդ տարին է...

Օհո-հո՛,— մտածեցի ես։ Դե, նամակը մենք գրեցինք։ Այնպիսի, պետք է ասեմ ձեզ, քնքուշ ու սիրահարական նամակ, որ ես ինքս թերևս տեղս փոխեի այդ Բոլեսի հետ, եթե նամակագրուհին լիներ ոչ թե Թերեզան, այլ մի որևէ ուրիշ, նրանից փոքր բան։

— Դե, շնորհակալությո՛ւն ձեզ, պանե, ձեր մատուցած ծառայության համար,— ասաց ինձ Թերեզան՝ գլուխ տալով։— Միգուցե ե՞ս էլ կարող եմ որևէ բանով ծառայություն մատուցել ձեզ։

— Ո՛չ, խորապես շնորհակա՛լ եմ։

— Բայց գուցե պանի շապիկը կամ անդրավարտիքը պատրվա՞ծ է։

Զգացի, որ այդ շրջազգեստավոր մաստադոնտը կարմրացրեց ինձ ու բավական խստորեն ասացի, որ նրա ծառայությունների կարիքը չունեմ։

Գնաց։

Անցավ մի երկու շաբաթ... Երեկո էր։ Նստած էի պատուհանի տակ ու սուլում էի, մտածելով այն մասին, թե ի՞նչ անեմ, որ ուշադրությունս ինձնից հեռացնեմ։ Հիշում եմ, ձանձրանում էի. եղանակը շատ վատ էր, ոչ մի տեղ գնալ չէի ուզում ու ձանձրույթից զբաղվում էի ինքնաանալիզով։ Այդ էլ բավական ձանձրալի բան է, բայց ուրիշ ոչինչ անել չէի ուզում։ Դուռը բացվեց — փա՜ռք աստծու,— մոտս մարդ է գալիս...

— Հը՛, պան ուսանողը հո որևէ շտապ գործով չի՞ գալիս։

Թերեզա՞ն է։ Հըմ...

— Ո՛չ... ի՞նչ կա որ։

— Ուզում էի պանին խնդրել, որ մի նամակ էլ գրի...

— Համեցեք... Բոլեսի՞ն...

— Ո՛չ, հիմա արդեն նրանից...

— Ի՞նչ։

— Օ՜, ի՞նչ հիմար կին եմ։ Ես սխալ ասացի, պանե, նե-
ռեցե՛ք։ Հիմա արդեն, գիտե՞ք, հարկավոր է ոչ թե ինձ, այլ
մի ընկերուհուս... այսինքն ոչ թե ընկերուհուս, այլ... մի ծա-
նոթ տղամարդու... Այդ տղամարդն ինքը չի գրում... բայց
նշանած ունի, ինչպես ահա ես եմ... նույնպես Թերեզա... Այս-
պես ուրեմն, գուցե պանը նամակ գրի այդ Թերեզային։

Նայեցի ես նրան,— շփոթվում է, մատները դողում են,
ինչ-որ շփոթ բան է ասում, ու... գլխի՞ ընկա։

— Ահա թե ինչ, տիրուհի՛,— ասացի,— դուք ոչ մի Բոլես
ու Թերեզա էլ չունեք և այդ բոլորը ստում եք։ Իսկ այդ պոչ
խաղացնելուց դուք օգուտ չունեք, և ձեզ հետ ծանոթություն
հաստատել ես չեմ ցանկանում... Հասկացա՞ք։

Նա հանկարծ ինչ-որ տարօրինակ կերպով վախեցավ,
շփոթվեց, սկսեց կանգնած տեղը դոփդոփել և ծիծաղելիորեն
շարժել շրթունքները՝ ցանկանալով ինչ-որ բան ասել ու ոչինչ
չասաց։ Ես սպասում եմ, թե դրան ինչ է հետևելու, և տեսնում
ու զգում եմ, որ կարծեմ մի քիչ սխալվել եմ, նրան կասկա-
ծելով ինձ գայթակղեցնելու և առաքինության ճանապարհից
շեղելու ցանկության մեջ։ Այստեղ կարծես թե ինչ-որ ուրիշ
բան կար։

— Պան ուսանո՛ղ,— սկսեց նա և հանկարծ ձեռքը թափ
տալով՝ շեշտակի շրջվեց դեպի դուռը ու գնաց։ Ես մնացի՝ հո-
գումս մի շատ տհաճ զգացումով, լսեցի, որ նրա դուռը ծած-
կվեց,— այնպե՛ս ուժգին,— բարկացավ, երևի, հսկայամար-
մին կինը... Մտածեցի ու որոշեցի՝ գնամ նրա մոտ և այստեղ
կանչելով, գրեմ իր համար բոլորը, ինչ հարկավոր կլինի։

Մտա նրա սենյակը, տեսնեմ՝ նա նստել է սեղանի մոտ,
արմունկները հենել սեղանին և ձեռքերով սեղմել գլուխը։

— Լսեցե՛ք,— ասացի...

...Այ, միշտ, երբ ես այս պատմությունն եմ անում ու
հասնում այս տեղին, սարսափելի վատ եմ զգում ինձ... այդ-
պիսի հիմարությո՛ւն։ Հը-ըմ...

— Լսեցե՛ք,— ասացի...

Նա տեղից վեր թռավ, աչքերը փայլեցնելով՝ իմ կողմը
շարժվեց և, ձեռքերն ուսերիս դնելով, սկսեց շշնջալ, ավելի
ճիշտ՝ մռնչալ իր թավ ձայնով...

— Դե ի՞նչ կա որ։ Ի՞նչ։ Այդպե՞ս է։ Չկա ո՛չ մի Բոլես,
չկա՛... Թերեզա էլ չկա։ Իսկ ձեզ ի՞նչ։ Ձեզ համար դժվար է
գրիչը շարժել թղթի վրա, հա՞։ Ա՜խ, դո՛ւք։ Ու դեռ այդ տե-
սակ... սպիտա՜կն է։ Ոչ-ու չկա,— ո՛չ Բոլես, ո՛չ Թերեզա. մե՜ն
մենակ ես կամ։— Դե, ի՞նչ կա որ։ Ի՞նչ։

— Կացե՛ք,— ասում եմ ես՝ այդ ընդունելությունից շըշ-
մած,— բանն ինչո՞ւմն է։ Բոլես չկա՞։

— Այո՛, չկա։ Ի՞նչ անենք որ։

— Իսկ Թերեզա նույնպես չկա՞։

— Թերեզա էլ չկա։ Ես եմ Թերե՜զան։

Ոչի՜նչ չեմ հասկանում։ Աչքերս չռում եմ նրա վրա և աշ-
խատում որոշել, թե մեզանից որ մեկն է խելքը թոցրել։ Իսկ
նա նորից է գնացել սեղանի մոտ, որոնում է այնտեղ թղթերի
մեջ, գալիս է ինձ մոտ ու վիրավորված ասում.

— Եթե ձեզ համար այդքան դժվար էր գրել, ապա ահա՝
նա, ձեր գրվածքը, վերցրե՛ք։ Իսկ ինձ համար ուրիշներն էլ
կգրեն...

Տեսնեմ՝ ձեռքիս Բոլեսին գրած նամակն է։

— Լսե՛ք, Թերեզա։ Այս բոլորն ի՞նչ է նշանակում։ Ձեր
ինչի՞ն է պետք ուրիշները գրեն, եթե ես ահա գրել եմ, իսկ
դուք այն չեք ուղարկել։

— Ո՞ւր։

— Այ, դրան... Բոլեսին։

— Բայց չէ՞ որ նա չկա՞։

Ո՜ւղղակի ոչինչ չեմ հասկանում։ Մնում էր միայն թքել ու
հեռանալ։ Բայց Թերեզան բացատրեց։

— Ի՞նչ անենք,— վիրավորված խոսեց նա։— Չկա նա,
թո՛ղ չլինի։— Ու ձեռքերը տարածեց, կարծես, չհասկանալով,
թե նա ինչու չկա։— Իսկ ես ուզում եմ, որ նա լինի... Մի՞թե ես
էլ մարդ չեմ, ինչպես բոլորը։ Իհարկե, ես... Ես գիտեմ... Բայց
ոչ մի մարդու վնաս չկա դրանից, որ ես նամակ եմ գրում
նրան...

— Կացեք, ո՞ւմ։

— Դե՛ Բոլեսին, էլի՞։

— Բայց չէ՞ որ նա չկա։

— Ա՜խ, Իեզուս-Մարիա։ Դե ինչ անենք, որ չկա, հը՞։
Չկա՛, բայց իբր թե կա՛։ Ես գրում եմ նրան, դե, ու դուրս է

գալիս, ենց որ նա կա... Իսկ Թերեզան ես եմ, ու նա պատասխանում է ինձ, և ես էլ՝ նորից նրան...

Ես հասկացա... Ես այնպիսի ցավ, այնպես վատ, այնպիսի ամոթ զգացի ինչ-որ բանի համար։ Իմ կողքին, ինձանից երեք քայլի վրա ապրում է մի մարդ, որ աշխարհիս վրա չունի մեկը, որը կարողանար սիրողաբար, սրտագին վերաբերվել իրեն, և այդ մարդը իր համար բարեկա՞մ է հորինում։

— Ա՛յ, դուք ինձ համար նամակ եք գրում Բոլեսին, իսկ ես այն կարդալ եմ տալիս մեկ ուրիշին. և երբ կարդում են ինձ համար, ես լսում ու մտածում եմ, թե Բոլեսը կա՞։ Ու խնդրում եմ Բոլեսի կողմից նամակ գրեն Թերեզային... ինձ։ Երբ ինձ համար այդպիսի նամակ են գրում ու կարդում, ինձ արդեն բոլորովին թվում է, թե Բոլեսը կա։ Իսկ դա թեթևացնում է իմ կյանքը։

...Հը՛մ... սատանան տանի... Դե այդ ժամանակից ես սկսեցի կանոնավոր կերպով շաբաթը երկու անգամ նամակ գրել Բոլեսին և Բոլեսից պատասխան՝ Թերեզային։ Ես լավ էի գրում այդ պատասխանները... Թերեզան երբեմն լսում էր այդ պատասխանները և դառը ողբում էր... ողբում մի տեսակ թավ ձայնով։ Եվ նրա համար, որ երևակայական Բոլեսի կողմից իրեն գրած նամակներով ես արցունք էի քամում իր աչքերից, Թեեզան ձրի կարկատում էր իմ գուլպաների, շապիկների և այլ շորերի բոլոր պատռվածքները... Հետո, այս պատմությունից մի երեք ամիս անց, ինչ-որ բանի համար նրան բանտ նստեցրին։ Իսկ հիմա նա հավանաբար արդեն մեռած կլինի։

...Ծանոթս փչեց գլանակի ծայրի մոխիրը, մտածկոտ նայեց երկնքին և եզրափակեց.

«Հը՛մ... Մարդ ինչքան շատ է դառնություն ճաշակել, այնքան ավելի մոլեգնաբար է ծարավում քաղցրի։ Իսկ մենք, հնացած առաքինությունների քղամիդ հագած և մեր մեծամտության ու կատարյալ անմեղանչականության համոզմունքի մշուշի միջով միմյանց վրա նայելով, այդ բանը չենք հասկանում։

Դուրս է գալիս մի բավական հիմար և... շատ դաժան բան։ Իբրև թե՝ ընկած մարդիկ են... Իսկ ընկած մարդիկ ի՞նչ են։ Ամենից առաջ՝ մարդիկ, նույն ոսկորը, արյունը, նույն միսը և նույն ներվերը, ինչ որ մենք ունենք։ Այս մասին ամբողջ դարեր է, որ օրը-օրին ասում են մեզ։ Իսկ մենք լսում ենք և... սատանա՞ն գիտի, թե ինչքան անհեթեթ բան է այս բոլորը։

Իսկապես, մենք ինքներս էլ ընկած ենք, և թերևս, մինչև անգամ շատ խորն ընկած... կատարյալ մեծամտության և այն համոզմունքի անդունդը, թե մեր ներվերը և ուղեղը գերազանց են այն մարդկանց ուղեղից ու ներվերից, որոնք միայն նվազ խորամա՞նկ են, քան մենք, ավելի վատ են կարողանում լավ ձևանալ, քան մենք ենք ձևանում... Սակայն, բավական է այս մասին։ Այնքան հին է այս բոլորը... որ մինչև անգամ ասելն ամոթ է»...

ՄԱՐԴՈՒ ԾՆՈՒՆԴԸ

92 թիվն էր, սովի տարին, Սուխումիի և Օչեմչիրիի միջև, Կոդոր գետի ափին, ծովից քիչ հեռու, լեռնային գետակի վճիտ ջրերի ուրախ կարկաչի միջից որոշակի լսվում է ծովի ալիքների խուլ ճողփյունը։

Աշուն էր։ Կոդորի սպիտակ փրփուրի մեջ պտտվում, երևվում-անհետանում էին դափնեկեռասի[1] դեղին տերևները՝ փոքրիկ, ճարպիկ լոսոսների նման։ Ես նստել էի գետափի քարերին և մտածում, որ հավանորեն որորներն ու ջրագուավներն էլ տերևները ձկան տեղ են ընդունում և խաբվում են. ահա ինչու այդպես վիրավորված ճչում են այնտեղ՝ աջ կողմի վրա, ծառերի ետևում, ուր ճողփում է ծովը։

Գլխավերևիս շագանակենիները պճնված են ոսկեճամուկ հագուստով, իսկ ոտքերիս մոտ սփռված են անհամար տերևներ, որ նման են չգիտես ում բազուկներից կտրված ձեռքերին։ Դիմացի ափի բոխու ճյուղերն արդեն մերկ են և պատառոտված ուռկանի պես կախված են օդից. դրա մեջ ասես ծուղակ ընկած՝ ոստոստում է լեռնային դեղնակարմիր փայտփորիկը, սև քիթը թխկթխկացնում է բնի կեղևին՝ դուրս քշելով միջատները, իսկ հեռավոր հյուսիսի հյուրերը՝ ճարպիկ երաշտահավերն ու մով ծովաճայերը կտցահարում, կուլ են տալիս դրանց։

Իմ ձախ կողմում լեռների գագաթներից ծանրորեն կախվել և անձրև են սպառնում ծխացող ամպերը, նրանց ստվերները սահում են կանաչ սարալանջերի վրայից, ուր աճում է այլ տե-

[1] Դափնազգիների մի տեսակն է, վարդանման թոփ կամ ծառ։

ղերից ջնջված շիմշատ ծառը, իսկ հինավուրց հաճարենու ու լորենու փչակների մեջ կարելի է գտնել «հարբեցնող մեղր», որ հնում քիչ մնաց իր հարբեցնող քաղցրությամբ կորստյան մատներ Մեծն Պոմպեոսի զինվորներին՝ ոտից գցելով երկաթե հռոմայեցիների մի ամբողջ լեգեոն։ Մեղուներն այդ մեղրը պատրաստում են դափնու և լեռնավարդի ծաղիկներից, իսկ «անցորդ» մարդիկ հանում են փչակից և ուտում, քսելով լավաշին՝ ցորենի այլյուրից թխած բարակ հացին։

Հենց դրանով էլ զբաղված էի ես՝ նստած շագանակենիների տակի քարերին. գազազած մեղվի անթիվ խայթոցներով պատած, ես հացի կտորները թաթախում էի մեղրով լի կաթսայիկի մեջ և ուտում, հիանալով աշնան հոգնած արևի ծույլ խաղով։

Կովկասում աշունն ասես մի պճնազարդ մայր եկեղեցի լինի, որ կառուցել են մեծ իմաստունները — հենց նրանք էլ միշտ ամենամեծ մեղավորներն են — խղճի սրատես աչքերից իրենց անցյալը սքողելու համար ոսկուց, փիրուզից, զմրուխտներից կառուցել են անեզր մի տաճար, լեռներից կախել են թուրքմեննելի երկրում, Սամարղանդում, Շամախիում մետաքսաթելերից գործված ամենալավ գորգերը, կողոպտել են ողջ աշխարհն ու ամենայն ինչ, բերել այստեղ, դեմ արել արևին՝ կարծես ուզենալով ասել նրան.

— Քոնը քեզ՝ քո որդիներից։

...Ես տեսնում եմ, թե ինչպես ուրախ երեխաների խոշոր աչքերով ալեհեր, երկարամորուք հսկաներ իջնելով լեռներից՝ զարդարում են աշխարհը, ամենուրեք առատաձեռն սփռելով գույնզգույն գանձեր. լեռնագագաթները ծածկում են արծաթի հաստ շերտերով, իսկ նրանց խորշերն ու ծերպերը՝ բազմազան ծառերի կենդանի հյուսվածքով։ Եվ խելահեղ գեղեցկություն է ստանում նրանց ձեռքերի տակ բարբեր հողի այս պատառը։

Սքանչելի պաշտոն է աշխարհումս մարդ լինելը. որքան հրաշալիքներ ես տեսնում, ինչպիսի տանջագին քաղցրությամբ է հուզվում սիրտդ գեղեցկությունից զգացած լուռ հիացմունքի պահին։

Դե, իհարկե, երբեմն դժվար է լինում, ամբողջ կուրծքդ լցվում է այրող ատելությամբ և թախիծն ագահորեն ծծում է սրտիդ արյունը. բայց միշտ այդպես չէ. չէ՞ որ արևն էլ երբեմն խիստ վշտանում է մարդկանց նայելուց — այնքան շատ է ջանք

թափել նրանց համար, բայց անհաջողակ մարդուկներ են ստացվել...

Քիչ չեն անշուշտ և լավերը. սակայն դրանց պետք է նորոգել կամ ավելի շուտ՝ նորից կերտել։

...Թփերի վերևը, իմ ձախ կողմում, սև գլուխներ են օրորվում — ծովի ալիքների խշշոցից և գետի խոխոջից հազիվ են լսվում մարդկային ձայները — «սովյալներն» են դրանք, որ Սուխումիից, որտեղ խճուղի էին շինում, գնում էին Օչեմչիրի աշխատելու։

Ճանաչում եմ ես նրանց. Օրյուլի նահանգից են. միասին էինք աշխատում նրանց հետ և երեկ միասին էլ փակեցինք մեր հաշիվները։ Ես նրանցից շուտ ճանապարհ ընկա, գիշերը, որպեսզի արևի ծագումը դիտեմ ծովափից։

Զորս գեղջուկ և ցցուն այտոսկրերով մի դեռատի, հղի գեղջկուհի՝ հսկայական, դեպի կզակն ուռած փորով, կապտագորշ, սարսափահար չոած աչքերով։ Թփերից վեր տեսնում եմ նրա դեղին լաչակով փաթաթված գլուխը, որ օրորվում է քամուց տարուբերվող ծաղկած արևածաղկի պես։ Նրա ամուսինը մեռավ Սուխումիում՝ անհագորեն միրգ ուտելուց։ Ես ապրում էի բարաքում, այդ մարդկանց հետ. ռուսական բարի սովորությամբ նրանք այնքան շատ և այնքան բարձրաձայն էին խոսում վիշտ ու ցավից, որ նրանց տրտունջները հավանաբար հինգ վերստ շրջապատում լսվում էին։

Տաղտկալի մարդիկ են դրանք՝ ընկճված իրենց վիշտ ու ցավից, որ պոկել է նրանց հայրենի հոգնած, անբերրի հողից, և ինչպես քամին աշնան չոր տերևները, քշել է այստեղ, ուր անծանոթ բնության պերճանքը ապշեցնելով՝ կուրացրել է, իսկ աշխատանքի ծանր պայմանները վերջնականապես փշրել են այդ մարդկանց։ Այստեղ նրանք նայում էին ամեն ինչին՝ խամրած աչքերը շփոթահար թարթելով, ողորմելիորեն ժպտալով իրար, կամացուկ ասելով.

— Տես է՞, ի՞նչ հող է...

— Կանաչը ուղղակի խեղդում է։

— Հա-ա՞... բայց ախր քարքարոտ էլ է...

— Անհարմար հող է, խոսք չկա...

Եվ հիշում էին Զամբիկի ձորակը, Զոր որսանոցը, Թայ դաշտը՝ հայրենի վայրերը, որտեղ հողի ամեն մի բուռն իրենց

պապերի աճյունն էր, որտեղ ամեն ինչ հասկանալի է, ծանոթ, սիրելի և ողողված է իրենց քրտինքով։

Այնտեղ նրանց հետ մի ուրիշ գեղչկուհի էլ կար՝ բարձրահասակ, ուղղաձիգ, տախտակի պես տափակ, ձիու ծնոտներով և ածուխի պես սև, շիլ աչքերի անփայլ հայացքով։

Երեկոյան նա այս դեղին լաչակավորի հետ դուրս էր գալիս բարաքից և նստելով այնտեղ՝ խճակույտի վրա, բարձր ու բարկացած ձայնով երգում էր.

Ժամի այգու մոտ...
Կանաչ թփերում,
Ավազին փռեմ
Սպիտակ թաշկինակ...
Ու կսպասեմ ես
Իմ անուշ յարին...
Կգա սիրելիս...
Կողջունեմ խորին...

Դեղին լաչակովը սովորաբար լռում էր՝ կռացնելով վիզը և դիտելով իր փորը. բայց երբեմն հանկարծ ծուլորեն և գեղջկական թավ, կերկեր ձայնով մասնակցում էր երգին լալկան բառերով.

Ախ իմ սիրելի,
Իմ յար թանկագին...
Ես էլ բախտ չունեմ՝
Լինել քո կողքին...

Հարավային գիշերվա սև, հեղձուցիչ խավարում այդ ողբասաց ձայները հիշեցնում էին հյուսիսը, ձյունածածկ անապատները, բուքի ոռնոցը և գայլերի հեռավոր կաղկանձը...

Հետո շիլ կինը հիվանդացավ տենդով, և բրեզենտե պատգարակով նրան տարան քաղաք. պատգարակի վրա նա ցընցվում էր ու մռնչում՝ շարունակելով իր երգը ժամի այգու և ավազի մասին։

...Դեղին գլուխը սուզվեց օդի մեջ և անհետացավ։

Ես վերջացրի իմ նախաճաշը, տերևներով ծածկեցի կաթսայի մեջը, հավաքեցի կապոցս և առանց շտապելու ճանապարհ ընկա մեկնածների հետքերով՝ հոնի ձեռնափայտը տրկտրկացնելով շավղի կարծր հողին։

Ես էլ ահա ճանապարհի նեղ, մոխրագույն շերտի վրա եմ.

աջ կողմում ծփում է մուգ կապույտ ծովը, կարծես անտեսանելի հյուսներ հազարավոր ռանդաներով տաշում են նրան. սպիտակ տաշեղը վազում է դեպի ափը խշխշալով, հալածվելով քամուց, որ տաք է, խոնավ ու բուրումնավետ, ինչպես առողջ կնկա շնչառությունը։ Տաճկական մի նեղ ֆելուգա թեքվելով ձախ կողի վրա՝ սահում է դեպի Սուխում, ուռեցնելով առագաստները, ինչպես Սուխումի ամբարտավան ինժեներն՝ այդ լրջագույն մարդն էր ուռեցնում իր թշերը։ Չգիտես ինչու «սուս»-ի փոխարեն նա ասում էր «շուս», «թեև»-ի փոխարեն՝ «թաև»։

— Շուս արա, թաև դու կտրիճ ես, բայց ես քեզ բոպեապես կհանձնեմ ոստիկանությանը...

Սիրում էր նա մարդկանց ուղարկել ոստիկանություն, և հաճելի է մտածել, որ հիմա, հավանաբար, գերեզմանի որդերը կերել են նրան ու ոսկորներն են միայն թողել։

Հեշտ է քայլելը, ասես լողում ես օդում։ Հաճելի խոհեր, խայտաճամուկ հագնված վերհուշեր խաղաղիկ շուրջպար են բռնել հիշողության մեջ, այդ շուրջպարը հոգուդ մեջ է, ինչպես սպիտակ կոհակները ծովում. նրանք վերևումն են, իսկ այնտեղ՝ խորքում անդորր է. այնտեղ խաղաղ լողում են երիտասարդության պայծառ ու ճկուն հույսերը, ինչպես արծաթազօծ ձկները՝ ծովի խորքում։

Ճանապարհը ձգվում է դեպի ծովը, գալարապտույտ սողում-մոտենում է ավազաշերտին, ուր վազում են ալիքները. թփերն էլ են ուզում նայել ալիքի երեսին, կռանում են ճանապարհի ժապավենի վրայով՝ ասես գլուխ տալով ջրային անապատի կապուտակ անեզրությանը։

Լեռներից քամի է փչում. անձրև է գալու։

...Թփերի միջից լսվեց կամացուկ տնքոց՝ մարդկային տընքոց, որ միշտ էլ հարազատորեն ցնցում է հոգիդ։

Թփերը ետ եմ տանում և տեսնում՝ մեջքը ընկուզենու կողմը հենած, նստել է այն դեղին լաչակով կինը, գլուխն իջել է ուսին, բերանն այլանդակորեն լայնացել է, աչքերը ետ են ընկել ու խելացնոր են։ Նա ձեռքերը դրել է հսկայական փորին և այնպես անբնական, սոսկալի է շնչում, որ ամբողջ փորը ջղաձգորեն ոստոստում է, իսկ կինը ձեռքերով պահելով այն և ցուցադրելով դեղին, գայլի ատամները՝ մռնչում է։

— Ի՞նչ է, խփե՞լ են,— հարցրի ես՝ կռանալով նրա վրա։

Նա մերկ սրունքները ճանճի պես պտտում է մոխրագույն փոշու մեջ և ծանր գլուխն օրորելով՝ խռպոտ ձայնով ասում.

— Հեռացի՛ր... անամոթ... գը-նա՞...

Ես հասկացա բանի էությունը — մեկ անգամ արդեն տեսել էի դա — իհարկե վախեցա, ետ նետվեցի, իսկ կինը բարձրաձայն, երկարաձիգ ոռնաց. պայթելու պատրաստ նրա աչքերից սպտոր արցունքներ ցայտեցին և հոսեցին շառագունած, ուռած, փքված այտերի վրա։

Դա ինձ վերադարձրեց նրա մոտ. ցած գցեցի կապոցս, թեյամանը, կաթսայիկը, կնոջը նետեցի մեջքի վրա՝ գետնին և ուզում էի ծնկները ճկել. նա հրեց ինձ՝ ձեռքերով խփելով դեմքիս ու կրծքիս, շրջվեց և էգ արջի պես մռնչալով, խռալով՝ շորեքթաթ հեռացավ, մտավ թփերի մեջ։

— Ավազակ... դև...

Թուլացան ձեռքերը. նա ընկավ, դեմքը դիպավ գետնին և նորից ճչաց՝ ջղաձգորեն ձգելով ոտքերը։

Բորբոքված տենդի մեջ արագ վերհիշելով այն ամենը, ինչ գիտեի այդ գործի մասին, ես շրջեցի նրան մեջքի վրա, ճկեցի ոտքերը. արդեն դուրս էր եկել պտղափուչիկը։

— Պառկիր, հիմա կազատվես...

Վազեցի դեպի ծովը, քշտեցի թևերս, լվացի ձեռքերս և վերադառնալով՝ սկսեցի մանկաբարձություն անել։

Նա գալարվում էր. ինչպես ծառի կեղևը օջախի մեջ, ձեռքերը խփում գետնին և պոկելով թառամած խոտերը՝ ուզում էր կոխել բերանը, հող էր շաղ տալիս արնակալած վայրենացած աչքերով զարհուրելի, ոչ մարդկային դեմքին. իսկ փուչիկն արդեն պայթել էր և երևում էր գլուխը։ Ես պետք է զսպեի նրա ոտքերի ջղաձգությունները, օգնեի երեխային և հետևեի, որ նա խոտ չկոխի ծռված, մռնչացող բերանը...

Մենք մի քիչ նախատում էինք իրար, նա ատամների միջից, ես էլ կամացուկ, նա ցավից և երևի ամոթից, ես էլ շփոթմունքից և նրա նկատմամբ զգացած ցավագին խղճահարությունից...

— Աստ-վա՞ծ,— խռխռալով արտաբերում է նա. կապույտ շրթունքները կծոտված են ու փրփրակալած, իսկ արևից ասես հանկարծ գունաթափված աչքերից անվերջ հոսում են մոր անտանելի ցավի առատ արցունքները, և նրա ողջ մարմինն ասես երկուսի բաժանված՝ կոտրատվում է...

— Կորի գնա՛, չա՛ռք...

Թույլ, հոդախախտ ձեռքերով նա շարունակ ետ է մղում ինձ, իսկ ես համոզող շեշտով ասում եմ.

— Հիմար, շարունակիր ծնունդը, շուտ...

Ցավագին կերպով խղճում եմ նրան, և թվում է, որ նրա արցունքները ցայտում են աչքերիս մեջ. սիրտս սեղմվում է թախիծից, ուզում եմ աղաղակել և աղաղակում եմ.

— Դե շուտ։

Եվ ահա իմ ձեռքերի վրա է մի կարմիր մարդ։ Թեև արցունքների միջից, բայց և այնպես տեսնում եմ, որ նա ամբողջովին կարմիր է և արդեն աշխարհից դժգոհ. թպրտում է, գժություն անում և պինդ ճչում է, թեև դեռ կապված է մորը։ Նրա աչքերը կապույտ են, քիթը ծիծաղելի կերպով ճմլված է կարմիր, տրորված դեմքի վրա, շրթունքները երերում են և ծոր տալիս։

— Ա-ա՞, ա ա՞...

Սաստիկ լպրծուն է. մեկ էլ տեսար դուրս պրծավ իմ ձեռքերից. ես չոքած նայում եմ նրան և հոհոում. խիստ ուրախ եմ նրան տեսնելով և մոռացել եմ, թե ինչ պետք է անեմ։

— Կտրիր...— կամացուկ շշնջում է մայրը. նրա աչքերը փակ են, դեմքը սմքել է, հոդագույն, ինչպես մեռելինը, իսկ կապույտ շրթունքները հազիվ են երերում։

— Դանակով... կտրի...

Իմ դանակը բարաքում գողացել էին. ատամներով կտրեցի պորտալարը. երեխան ճչում էր օրյոլյան թավ ձայնով, իսկ մայրը ժպտում։ Ես տեսա, թե ինչպես զարմանալի փթթում և կանաչ կրակով վառվում էին մոր անհատակ աչքերը, թուխ ձեռքը շոշափում էր շրջազգեստը, փնտրում գրպանը, իսկ կծոտած, արյունոտ շրթունքները սվսվում էին.

— Ուժ... չունեմ... երիզը գրպանում... կապելու պորտը...

Ինքս հանեցի երիզը, կապեցի. մայրը գնալով ավելի վառ է ժպտում. այնքան լավ ու վառ, որ ես գրեթե կուրանում եմ այդ ժպիտից։

— Դու վրա-գլուխդ կարգի բեր, ես էլ գնամ, լվանամ սրան...

Նա անհանգիստ մրթմրթում է.

— Տես, զգույշ... տես հա...

Կարմիր մարդուկը բնավ էլ զգուշություն չի պահանջում.

սնդմել է բռունցքը և ճչում, ճչում՝ ասես կանչում է, որ իր հետ կռվեն...

— Ա-ա՜... ա-ա՜...

— Հա, հա, պնդացիր, ախպեր, ամուր կաց, թե չէ մերձավորներդ իսկույն գլուխդ կպոկեն...

Առանձին լրջությամբ ու բարձր ճչաց նա, երբ առաջին անգամ ծովի փրփրուն ալիքը ցողեց նրան՝ երկուսիս վրա էլ ուրախ շաչելով, հետո, երբ սկսեցի թակել նրա կուրծքն ու կռնակը՝ նա կկոցեց աչքերը, սկսեց ձեռքն ու ոտքը թափ տալ և սուր ճչաց, իսկ ալիքներն իրար ետևից շարունակում էին ողողել նրան։

— Գոռա, օրյոլցի, որքան ուժ ունես՝ ճչա...

Երբ մենք վերադարձանք մոր մոտ, նա պառկել էր, նորից աչքերը փակել, կծոտում շրթունքները՝ ընկերքը գուրս նետելու գալարներով բռնված. սակայն չնայած նրան, հառաչանքի ու տնքոցի միջից ես լսում էի նրա նվաղուն շշունջը.

— Տուր... տուր ինձ...

— Կսպասի։

— Տուր, է՜։

Եվ դողդոջուն, անվստահ ձեռքերով արձակեց կոֆտայի կրծքամասի կոճակները։ Ես օգնեցի նրան ազատելու ստինքը, որ պատրաստում է բնությունը քսան մարդ-օրվա համար, գիժ օրյոլցուն դրի նրա տաք մարմնի վրա. մանկիկն ամեն ինչ հասկացավ և ձայնը կտրեց։

— Անարատ մայր աստվածածին,— ցնցվելով հառաչում էր ծննդկանը և գիսախռիվ գլուխը, որ իր կապոցի վրա էր, այս ու այն կողմ էր նետում։

Եվ հանկարծ կամացուկ ճչալով լռեց, հետո նորից բացվեցին նրա ծայրաստիճան գեղեցիկ աչքերը՝ ծննդկանի սուրբ, կապույտ աչքերը և նայեցին կապույտ երկնքին. նրանց մեջ վառվում ու հալչում է ազնիվ, ցնծագին ժպիտը։ Բարձրացնելով ծանր ձեռքը՝ մայրը դանդաղ խաչակնքում է իրեն ու երեխային...

— Փա՜ռք քեզ, անարատ տիրամայր... օֆ... փա՜ռք քեզ...

Աչքերը խամրեցին, սուզվեցին. նա երկար լռել, հազիվ էր շունչ քաշում, և հանկարծ գործնականորեն, ավելի հաստատ ձայնով ասաց.

— Բաց արա, տղա ջան, իմ կապոցը...

Բաց արինք, նա շեշտակի նայեց ինձ, թույլ-թույլ ժպտալով. կարծես հազիվ նկատելի կերպով շառագույնը փայլեց նրա ներս ընկած այտերին ու քրտնաթոր ճակատին։

— Դենը գնա...

— Շատ մի գլուխ դնի դրա հետ...

— Դե շուտ, դենը գնա...

Հեռացա քիչ այն կողմ՝ թփերի մեջ։ Սիրտս կարծես հոգնել է, իսկ կրծքումս կամացուկ երգում են ինչ-որ գեղեցիկ թռչուններ, և դա ծովի անվախճան ճողփյունի հետ այնքան լավ է, որ կարելի է մի տարի ունկնդրել...

Մոտակայքում մի տեղ աղբյուր է խոխոջում, կարծես աղջիկն իր սիրածի մասին է պատմում ընկերուհուն...

Թփերի վրա բարձրացավ դեղին լաչակով գլուխը՝ արդեն պարտ ու պատշաճ կապված։

— Է՜, է՜, քույրիկ, շուտ սկսեցիր ման գալը։

Թփի ճյուղը բռնած՝ նստել էր մայրը ասես խմած, գորշ դեմքի վրա արյան նշույլ չկար, աչքերի փոխարեն հսկայական կապույտ լճեր էին. նա խանդաղատանքով շշնջում էր.

— Տե՛ս ինչպե՜ս է քնել...

Լավ էր քնել, բայց իմ կարծիքով ուրիշ երեխաներից ամենևին ոչ լավ, իսկ եթե տարբերություն կար, ապա դա վերաբերում էր շրջապատին. նա պառկել էր աշնանային վառվուն տերևների կույտի վրա, մի թփի տակ, որը չի աճում Օրյոլի նահանգում։

— Լավ կանեիր պառկեիր, այ մեր։

— Չէ, է՜,— ասաց նա՝ օրորելով գլուխը թուլացած վզի վրա,— պետք է ճանապարհ ընկնեմ ու հասնեմ՝ ո՞նց են ասում...

— Օչեմչիրի՞...

— Հենց էդ է։ Մերոնք տեսնես քանի վերստ են անցել...

— Բայց մի՞թե դու կարող ես գնալ։

— Բա աստվածածի՞նը։ Նա կօգնի։

Դե իհարկե, եթե նրա գործն աստվածածնի հետ է, էլ ոչինչ չես կարող ասել։

Նայում է նա թփի տակ պառկած պստիկ, դժգոհ ուռած դեմքին՝ աչքերից ցայտեցնելով փաղաքշող լույսի տաքուկ ճառագայթներ, լիզում-սրբում է շրթունքները և ձեռքի դանդաղ շարժումով շոյում կուրծքը։

Ես օջախ եմ վառում, քարեր շարում՝ թեյամանը դնելու համար։

— Հիմա, մայր, ես քեզ թեյ կհրամցնեմ...

— Հա։ Տուր, տուր խմեմ։ Կրծքերս մաքուր ցամաքել են։

— Այդ ինչո՞ւ երկրացիներդ թողեցին քեզ, գնացին։

— Նրանք չթողեցին, չէ։ Ես ինքս ետ մնացի, նրանք էլ հոկոնծել էին, ու... Եվ լավ էլ եղավ, թե չէ նրանց մոտ ինչպե՞ս ազատվեի...

Նայեց նա ինձ, արմունկով ծածկեց դեմքը, ապա արյուն թքելով՝ ամոթխած ժպտաց.

— Առջնե՞կդ է։

— Առջնեկս է... Իսկ դու ո՞վ ես։

— Կարծես թե մարդ եմ...

— Իհարկե մարդ ես։ Պսակվա՞ծ ես։

— Չեմ արժանացել...

— Սուտ չե՞ս ասում։

— Ինչո՞ւ։

Նա խոնարհեց աչքերը, մտածեց։

— Բա ո՞նց ես կնկա գործերն իմանում։

Հիմա արդեն կստեմ։ Եվ ասացի.

— Սովորել եմ։ Ուսանող եմ. լսե՞լ ես։

— Իհարկե լսել եմ։ Մեր տերտերի մեծ տղան էլ ուսանող է, տերտերություն է սովորում...

— Այ, ես էլ դրանցից եմ։ Հիմա գնամ ջուր բերեմ...

Կինը գլուխը խոնարհեց դեպի տղան, ականջ դրեց՝ շնչում է. հետո նայեց ծովի կողմը։

— Լվացվել է պետք, բայց ջուրն անծանոթ է... Այդ ի՞նչ ջուր է. և աղի, և դառն...

— Հենց դրանով էլ մաքրվիր, առողջարար ջուր է։

— Հաա՞։

— Ճիշտ եմ ասում։ Աղբյուրի ջրից էլ տաք է. իսկ այստեղի աղբյուրները ասես սառույց լինեն...

— Դե, դու գիտես...

Գլուխը կրծքին խոնարհած, նիրհած, քայլքով անցավ մի հեծվոր աբխազ. փոքրիկ, ամբողջովին ջղային ձիուկը ականջները խաղացնելով կլոր, սև աչքը շեղեց մեզ վրա, փռնչաց. հեծվորը զգույշ թափ տվեց երկարամազ փափախով գլուխը, նույնպես նայեց մեր կողմը և նորից խոնարհեց գլուխը։

— Ինչ գեշ ու զարզանդ են էստեղի մարդիկ,— կամացուկ ասաց օրյոլցի գեղջկուհին։

Ես գնացի։ Քարերի վրա ցատկոտում է, խաղում սնդիկի պես շողշողուն ու աշխույժ առվակը, որի մեջ ուրախ գլուխկոնծի են տալիս աշնանային տերևները. սքանչելի է։ Ձեռքերս, դեմքս լվացի, թեյամանս լիքը ջուր լցրի, վերադարձա և թփերի միջից տեսա, որ կինն անհանգիստ շուրջը նայելով ծնկների վրա սողում է գետնով, քարերով։

— Ի՞նչ ես անում։

Վախեցավ. կապտեց և մի բան թաքցրեց իր տակ. ես հասկացա։

— Տուր ինձ, ես կթաղեմ։

— Ու, մատաղ քեզ, ախր ինչպե՞ս կարելի է։ Օրենքով բաղնիքի նախասենյակում, հատակի տակ պետք է...

— Ինչպես չէ, շուտով բաղնիք կշինեն այստեղ։

— Դու հանաք ես անում, իսկ ես վախենում եմ։ Բա որ հանկարծ գազանն ուտի... չէ՞ որ օրենքով հողին պիտի տրվի...

Շրջվեց մի կողմ և մի խոնավ ու ծանր փաթեթ տալով ինձ՝ կամացուկ, ամոթխած կերպով խնդրեց.

— Աղաչում եմ, ի սեր Քրիստոսի, ինչքան կարող ես լավ թաղի, խոր... խղճա իմ բալիկին, իմ ասածի պես արա...

...Երբ վերադարձա՝ տեսա, որ նա երերալով և ձեռքն առաջ պարզած՝ գալիս է ծովից, շրջազգեստը մինչև գոտկատեղը թաց, իսկ դեմքը մի քիչ շառագունել է և կարծես ներքուստ լուսավորվում է։ Օգնեցի նրան հասնելու խարույկին՝ զարմացած մտածելով.

«Ի՞նչ գազանային ուժ»։

Հետո մեղրով թեյ խմեցինք, իսկ նա կամացուկ հարցրեց.

— Սովորելուց ձե՞ռ ես քաշել։

— Այո, ձեռ եմ քաշել։

— Խմելո՞ւ ես տվել քեզ, ինչ է։

— Վերջնականապես խմելու եմ տվել, այ մեր։

— Այ թե ինչ մարդ ես։ Ախր ես քեզ հիշում եմ, Սուխումում նկատել եմ, երբ դու ոռճիկի պատճառով մեծավորի հետ կռվում էիր. հենց էդ ժամանակ էլ մտածեցի՝ երևում է, որ հարբեցող է, դրա համար էլ ինչ անվախն է...

Եվ հաճույքով լիզելով ուռած շրթունքներին քսված մեղրը՝

կապույտ աչքերը շարունակ խեթում էր թփի տակ, որտեղ անխռով քնել էր ամենանոր օրոլցին։

— Ինչպե՞ս պետք է ապրի սա,— հառաչելով ասաց նա՝ ինձ զննելով։— Դու ինձ օգնեցիր, շնորհակալ եմ... բայց չգիտեմ՝ դա լա՞վ է նրա համար, թե ոչ...

Կուշտ թեյ խմեց, կերավ, խաչ հանեց եբեսին, և երբ ես իմ տնտեսությունն էի հավաքում, նա քնկոտ երերալով նիրհում էր, մի բանի վրա մտածում՝ նորից գունաթափ աչքերով գետնին նայելով։ Հետո սկսեց վեր կենալ։

— Ճի՞շտ որ գնում ես։

— Գնում եմ։

— Ախր, այ մեր, մի տե՛ս, է՞։

— Բա աստվածածի՞նը... Հապա, տուր ինձ դրան։

— Ես կտանեմ նրան...

Վիճեցինք, նա զիջեց և ուս-ուսի տված ճամփա ընկանք։

— Չլինի հանկարծ գլորվեմ,— ասաց նա հանցավորի պես ժպտալով և ձեռքը դրեց ուսիս։

Ռուսաց երկրի նոր բնակիչը՝ անհայտ ճակատագրի մարդը ձեռքերիս վրա պառկած, կարգին ֆոֆսում էր։ Ճողփում ու խշշում էր ծովն՝ ամբողջովին սպիտակ, տաշեղանման ժանյակներով զարդարված, փսփսում էին թփերը, շողշողում էր կեսօրն անցնող արևը։

Գնում էինք դանդաղ. երբեմն մայրը կանգ էր առնում, խոր շունչ քաշում, գլուխը վեր գցում, նայում շուրջը՝ ծովին, անտառին ու լեռներին, հետո էլ՝ տղայի դեմքին։ Ամբողջովին տառապանքների արցունքներով լվացված նրա աչքերը նորից էին փթթել և վառվում էին անսպառ սիրո կապույտ կրակով։

Մի անգամ էլ կանգ առնելով, ասաց.

— Տե՛ր աստված։ Լավ է, ի՞նչ լավ է։ Երանի թե միշտ գնայի այսպես, գնայի մինչև աշխարհի ծայրը, սա էլ՝ որդիս, աճեր մեծանար այսպես ազատ, մոր կրծքի մոտ, իմ անուշ բալիկը...

...Ծովը խշշում է, խշշում...

ՄԱՅՐԸ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

I

Ամեն օր բանվորական ավանի վրա, ծխալից, յուղոտած օդում դողում ու մռնչում էր գործարանի շչակը, և, այդ կանչին հնազանդ՝ փոքրիկ գորշ տներից վախեցած ուտիճների նման փողոց էին վազում մռայլ մարդիկ, որոնք ժամանակ չէին ունեցել քնով թարմացնելու իրենց մկանները։ Ցուրտ աղջամուղջին նրանք չսալած փողոցով գնում էին դեպի գործարանի քարե բարձր վանդակները. գործարանն անտարբեր վստահությամբ սպասում էր նրանց՝ ցեխոտ ճանապարհը լուսավորելով տասնյակ ճարպոտ, քառակուսի աչքերով։ Ցեխը ճլմփում էր ոտքերի տակ։ Լսվում էին քնած ձայների խռպոտ բացականչություններ, կոպիտ հայհոյանքը չարությամբ ճեղքում էր օդը, իսկ մարդկանց ընդառաջ լողում էին այլ հնչյուններ՝ մեքենաների ծանր աղմուկը, գոլորշու վրթվրթոցը։ Մռայլ և խստորեն նքշմարվում էին սև խողովակները, որոնք բարձրանում էին ավանի վրա հաստ ձեռնափայտերի պես։

Երեկոյան, երբ արևը մայր էր մտնում, և տների ապակիների վրա հոգնած շողում էին նրա կարմիր շողերը, գործարանն իր քարի ընդերքից դուրս էր թափում մարդկանց, ասես մշակված մետաղի խարամ լինեին, և նրանք նորից գնում էին փողոցներով՝ մխոտված, դեմքերը սևացած, օդում մեքենայի յուղի մածուցիկ հոտ տարածելով, քաղցից ատամները պսպղացնելով։ Այժմ նրանց ձայներում աշխուժություն և նույնիսկ ուրախություն էր հնչում,— այդ օրվա տաժանալից աշխատանքը վերջացել էր,— տանը նրանց սպասում էր ընթրիք և հանգիստ։

Գործարանը կլանել է օրը, մեքենաները մարդկանց մկաններից այնքան ուժ են ծծել, որքան հարկավոր է եղել իրենց։ Այդ օրն անհետ ջնջված էր կյանքի մատյանից, մարդ էլի մի քայլ էր արել դեպի իր գերեզմանը, բայց իր առջև, մոտիկ, նա տեսնում էր հանգստի հաճույքը, ծխոտ գինետան ուրախությունները և գոհ էր։

Տոներին քնում էին մինչև ժամը տասը, ապա սոլիդ ու ամուսնացած մարդիկ հագնում էին իրենց լավագույն զգեստը և գնում պատարագ լսելու՝ հետն էլ հայհոյելով երիտասարդներին, եկեղեցու հանդեպ անտարբեր լինելու համար։ Եկեղեցուց տուն էին վերադառնում, կարկանդակ ուտում և նորից պառկում քնելու մինչև երեկո։

Տարիներով կուտակված հոգնածությունը մարդկանց զբրկում էր ախորժակից, և որպեսզի ուտել կարողանան, շատ էին խմում՝ ստամոքսները գրգռելով օղու սուր դաղոցով։

Երեկոյան ծույլ-ծույլ զբոսնում էին փողոցներում, և ով կրկնակոշիկներ ուներ, հագնում էր, նույնիսկ եթե գետինը չոր լիներ, իսկ անձրևակալ ունեցողը վերցնում էր այն իր հետ, թեկուզ արևը փայլելիս լիներ։

Իրար հանդիպելիս խոսում էին գործարանի մասին, մեքենաների մասին, հայհոյում էին վարպետներին, խոսում ու մտածում էին միայն այն մասին, ինչ որ կապված էր աշխատանքի հետ։ Տկար, անուժ մտքի հատուկենտ կայծեր հազիվ էին ցոլցլում օրերի ձանձրալի միօրինակության մեջ։ Տուն վերադառնալով՝ կռվում էին կանանց հետ և հաճախ ծեծում նրանց՝ բռունցքները չխնայելով։ Երիտասարդները նստում էին պանդոկներում կամ երեկույթներին հավաքվում իրար մոտ, հարմոն էին նվագում, երգում էին անպատկառ, տգեղ երգեր, պարում, զազրախոսում և խմում։ Աշխատանքից հոգնատանջ մարդիկ շուտ էին հարբում, և բոլոր կրծքերում արթնանում էր անբմբռնելի, հիվանդագին մի գրգիռ։ Այդ գրգիռը ելք էր փընտրում իր համար։ Ամուր կառչելով այդ տագնապալից զգացմունքը թուլացնելու ամեն մի հնարավորության՝ այդ մարդիկ դատարկ բաների համար իրար վրա էին հարձակվում գազանի կատաղությամբ։ Արյունահեղ կռիվներ էին ծագում, որոնք երբեմն վերջանում էին ծանր վնասվածքներով, մեկ-մեկ էլ՝ սպանությամբ։

Մարդկանց հարաբերությունների մեջ ամենից շատ կար

նենգավոր չարության զգացմունքը, որը նույնքան հին էր, որքան և մկանների անբուժելի հոգնածությունը։ Մարդիկ ծնվում էին հոգու այդ հիվանդությամբ՝ ժառանգելով այն իրենց հայրերից, և դա մութ ստվերի պես ուղեկցում էր նրանց մինչև գերեզման՝ կյանքի ընթացքում գրգռելով նրանց մի շարք հանցանքների, որոնք զզվելի էին իրենց աննպատակ դաժանությամբ։

Տոներին երիտասարդները տուն էին վերադառնում ուշ գիշերը՝ պատառոտված հագուստով, ցեխոտ ու փոշոտ, դեմքերը դաջարդված, չարախնդությամբ պարծենալով ընկերներին հասցրած հարվածների համար, կամ վշտացած, բարկացած կամ վիրավորանքի արտասուքներն աչքերում, հարբած ու թշվառ, դըժբախտ ու զզվելի։ Տղաներին երբեմն տուն էին բերում իրենց մայրերը, հայրերը։ Մնողները նրանց գտնում էին որևէ տեղ ցանկապատի տակ, փողոցում կամ գինետներում անզգայության աստիճանի հարբած, զազրելի հայհոյանք էին տալիս, բռունցքներով ծեծում իրենց զավակների մեղկացած, օղուց թուլացած մարմինները, հետո քիչ թե շատ հոգածությամբ նրանց պառկեցնում էին քնելու, որպեսզի առավոտը վաղ, երբ օդի մեջ պղտոր առվի պես հոսի շչակի բարկացկոտ մռնչյունը, նրանց արթնացնեն գործի գնալու։

Զավակներին խիստ էին հայհոյում և ծեծում, բայց երիտասարդների հարբեցողությունը և կռիվները միանգամայն օրինական երևույթ էին թվում ծերերին,— հայրերը երիտասարդ ժամանակ նույնպես խմել ու կռվել էին, նրանց էլ էին ծեծել իրենց մայրերն ու հայրերը։ Կյանքը միշտ այդպես է եղել,— նա սահուն և դանդաղ ընթացել է պղտոր հեղեղի պես երկար տարիներ և ամբողջովին կաշկանդված է եղել մտածելու և օրեցօր միևնույն բանն անելու անխախտ, վաղեմի սովորություններով։ Եվ ոչ ոք ցանկություն չի ունեցել այդ կյանքը փոխելու մի փորձ կատարել։

Երբեմն ինչ-որ մի տեղից ավանն էին գալիս կողմնակի մարդիկ։ Սկզբում նրանք իրենց վրա ուշադրություն էին հրավիրում պարզապես նրանով, որ օտարականներ էին, ապա իրենց նկատմամբ թեթև, արտաքին հետաքրքրություն էին զարթեցնում՝ պատմելով այն տեղերի մասին, որտեղ աշխատել էին. հետո նրանց վրայից նորությունը ջնջվում էր, նրանց վարժվում էին, և նրանք աննկատելի էին դառնում։ Նրանց պատմածներից

պարզվում էր, որ բանվորի կյանքը ամեն տեղ միատեսակ է։ Իսկ եթե դա այդպես է, ուրեմն էլ ի՞նչ խոսել։

Բայց երբեմն նրանցից ոմանք խոսում էին ավանում լսված ինչ-որ բաներ։ Նրանց հետ չէին վիճում, բայց նրանց տարօրինակ խոսքերին ունկնդրում էին թերահավատությամբ։ Այդ խոսքերը ոմանց մեջ կույր գրգիռ էին արթնացնում, ոմանց մեջ՝ տարտամ մի տագնապ, երրորդներին անհանգստացնում էր մի ինչ-որ անորոշ հույսի թեթև ստվերը, և նրանք սկսում էին ավելի շատ խմել, որպեսզի վանեն անհարկի, իրենց խանգարող այդ տագնապը։

Օտարականի մեջ արտասովոր բան նկատելով՝ ավանի բնակիչները երկար ժամանակ չէին կարողանում մոռանալ այդ և իրենց չնմանող այդ մարդուն վերաբերվում էին անգիտակցական երկյուղով։ Նրանք կարծես վախենում էին, թե այդ մարդը կյանքի մեջ մի այնպիսի բան կնետի, որը կխախտի նրա՝ թեև ծանր, բայց հանդարտ, թախծալիորեն ուղիղ ընթացքը։ Այդ մարդիկ սովորել էին, որ կյանքը միշտ ճնշի իրենց միատեսակ ուժով, և դեպի լավը ոչ մի փոփոխություն չսպասելով՝ գտնում էին, թե բոլոր փոփոխությունները ընդունակ են միայն ավելացնելու ճնշումը։

Նոր բան ասող մարդկանցից ավանի բնակիչները լուռ խույս էին տալիս։ Այդ ժամանակ այդ մարդիկ անհետանում էին՝ կրկին գնալով ինչ-որ մի տեղ, իսկ գործարանում եղած ժամանակ նրանք քաշված էին ապրում, եթե չէին կարողանում ի մի ձուլվել ավանի միապաղաղ մասսայի հետ...

Այսպիսի կյանքով հիսուն տարի ապրելով՝ մարդը մեռնում էր։

II

Այդպես էր ապրում նաև փականագործ Միխայիլ Վլասովը, մազմզոտ, մռայլ ու մանր աչքերով մի մարդ։ Այդ աչքերը թավ հոնքերի տակից նայում էին կասկածանքով, անդուրեկան ծաղրանքով։ Գործարանի լավագույն փականագործ և ավանի ամենաուժեղ մարդը լինելով, նա մեծավորների հետ իրեն կոպիտ էր պահում, ուստի և փող քիչ էր վաստակում, ամեն տոն օր մեկին ծեծում էր, և ամենքն էլ նրան չէին սիրում, նրանից վախենում էին։ Փորձել էին նրան էլ ծեծել, բայց ապարդյուն։

երբ Վլասովը տեսնում էր, որ մարդիկ իր վրա են գալիս, նա ձեռքն էր առնում քար, տախտակ, երկաթի կտոր և ոտները լայն դրած՝ լուռ ու մունջ սպասում էր թշնամիներին։ Աչքերից մինչև ականջները սև մորուքով բռնված նրա դեմքը և մազմզոտ ձեռքերն ամենքին երկյուղ էին ներշնչում։ Մանավանդ վախենում էին նրա աչքերից. այդ մանր, սուր աչքերը ծակում էին մարդկանց պողպատե գայլիկոնների պես, և նրա հայացքին հանդիպելիս ամեն մարդ զգում էր իր առջև վայրի, անընկրկելի մի ուժ, որը պատրաստ է անխնա հարվածելու։

— Դե՛հ, ցրվեցե՛ք,— խուլ ձայնով ասում է նա։ Նրա դեմքին խիստ մազերի միջից պսպղում էին խոշոր, դեղին ատամները։ Մարդիկ ցրվում էին՝ հայհոյելով նրան երկչոտ ու նվաստացող հիշոցով։

— Խուժանն է՛ր,— կարճ ասում էր նա նրանց հետևից, և նրա աչքերը փայլում էին մախաթի պես սուր, հեգնական ժպիտով։ Ապա գլուխը գրգռիչ կերպով բարձր պահած՝ նա գնում էր նրանց հետևից և կանչում.

— Հը՛, ո՞վ է իր մահն ուզում։

Ոչ ոք չէր ուզում։

Նա քիչ էր խոսում և «խուժանը» նրա սիրած բառն էր։ Այդպես էր նա անվանում գործարանի իշխանությանը և ոստիկանությանը, այդ խոսքով էր նա դիմում իր կնոջը։

— Տո՛, խուժա՛ն, չե՞ս տեսնում, շալվարս պատռվել է։

Մի անգամ, երբ նրա որդի Պավելը տասնչորս տարեկան էր, Վլասովն ուզեց նրա մազերից քաշել։ Բայց Պավելը ձեռքն առավ մի ծանր մուրճ և կարճ ասաց.

— Ձեռք չտա՛ս...

— Ի՞նչ,— հարցրեց հայրը՝ դեպի որդու բարձր, բարակ կերպարանքը դիմելով, ասես կեչու վրա գնացող մի ստվեր լիներ։

— Հերի՛ք է,— ասաց Պավելը։— էլ չեմ թողնի...

Եվ մուրճը բարձրացրեց։

Հայրը նայեց նրան, մազմզոտ ձեռքերը հետևը դրեց և քմծիծաղով արտասանեց.

— Լա՛վ...

Հետո ծանր հառաչելով ավելացրեց.

— Է՛հ, խուժա՛ն...

Դրանից քիչ հետո նա իր կնոջն ասաց.

— Էլ ինձանից փող չուզես,— Պաշկան քեզ կպահի...

— Իսկ դու ստացածդ գինո՞ւ ես տալու,— համարձակվեց հարցնել կինը։

— Քո գործը չի, խուժա՛ն։ Ես սիրուհի եմ պահելու...

Սիրուհի նա չպահեց, բայց այդ օրվանից համարյա երկու տարի շարունակ, մինչև մահը նա որդու վրա չէր նայում և նրա հետ չէր խոսում։

Նա մի շուն ուներ, իր նման մեծ ու բրդոտ։ Շունն ամեն օր ուղեկցում էր նրան գործարան և ամեն երեկո նրան սպասում էր դարբասի մոտ։ Տոն օրերը Վլասովը գնում էր գինետները շրջելու։ Նա ման էր գալիս լուռումունջ և կարծես մեկին գտնել ուզելով՝ աչքերով ճանկռտում էր մարդկանց դեմքերը։ Շունն էլ, իր մեծ ու բրդոտ պոչը կախ գցած, ամբողջ օրը շրջում էր նրա հետևից։ Հարբած վերադառնալով տուն՝ նա նստում էր ընթրելու թախծալի, շանն էլ կերակրում էր գավաթից։ Նա շանը չէր ծեծում, չէր հայհոյում, բայց և երբեք չէր փաղաքշում։ Ընթրիքից հետո նա սեղանի վրայից ամանը գցում էր հատակին, եթե կինը ժամանակին վերցնել չէր կարողանում, առաջն էր դնում մի շիշ օղի և մեջքը պատին հենելով՝ բերանը լայն բացած ու աչքերը փակած՝ խուլ ձայնով մի երգ էր ոռնում։ Թախծոտ, տգեղ հնչյուններն իրար էին խառնվում նրա ընչացքների մեջ՝ նրանց վրայից ցած թափելով հացի փշրանքը, փականագործը հաստ մատներով շտկում էր մորուքի և ընչացքների մազերն ու երգում։ Երգի բառերն անհասկանալի էին, ձգձգված, մեղեդին գայլերի ձմռան ոռնոց էր հիշեցնում։ Նա երգում էր քանի դեռ շշում օղի էր լինում, իսկ հետո կողքի վրա պառկում էր երկար նստարանին կամ գլուխը դնում սեղանին և այդպես քնում մինչև շչակը։ Շունը պառկում էր նրա կողքին։

Վլասովը մեռավ աղեթափությունից։ Մի հինգ օր ամբողջովին սևացած՝ նա շուռումուռ էր գալիս անկողնում՝ աչքերը պինդ փակած և ատամներն էր կրճտացնում։ Երբեմն ասում էր կնոջը.

— Մկնդե՛ղ տուր, թունավորի՛ր...

Բժիշկը կարգադրեց Միխայիլի փորին տաք թրջոցներ դնել, բայց ասաց, թե անհրաժեշտ է վիրահատություն կատարել և նույն օրն ութ հիվանդին տանել հիվանդանոց։

— Գնա կորի՛ր, ես ինքս էլ կարող եմ մեռնել։ Խուժա՛ն,— խռռացրեց Միխայիլը։

Բայց երբ բժիշկը գնաց, և կինն սկսեց արցունքն աչքերին հորդորել ամունսուն, որ համաձայնի վիրահատություն կատարելու, Միխայիլը բռունցքը սեղմեց և կնոջն սպառնալով՝ ասաց.

— Կառողջանամ, քե՛զ համար վատ կլինի։

Նա մեռավ առավոտյան, այն րոպեներին, երբ շչակն աշխատանքի էր կանչում։ Դագաղում բերանը բաց էր պառկած նա, բայց հոնքերը բարկությամբ կիտված էին։ Նրան թաղեցին կինը, որդին, շունը, հին հարբեցող և գող Դանիլո Վեսովշչիկինը, որդին, որ վռնդված էր գործարանից, և ավանի մի քանի մուրացականներ։ Կինը լալիս էր կամացուկ և զուսպ, Պավելը չէր լալիս։ Ավանի բնակիչները փողոցում դագաղին հանդիպելիս կանգ էին առնում և երեսները խաչակնքելով՝ իրար ասում.

— Երևի Պելագեան ուրախացել է, որ մարդը մեռել է...

Ոմանք ուղղում էին.

— Չի մեռել, սատկել է...

Երբ դագաղը հողով ծածկեցին, մարդիկ հեռացան, իսկ շունը մնաց և թարմ հողի վրա նստած՝ երկար ժամանակ լուռ հոտոտում էր գերեզմանը։ Մի քանի օրից հետո ինչ-որ մեկն սպանեց շանը...

III

Հոր մահվանից երկու շաբաթ անց, մի կիրակի օր Պավել Վլասովը տուն եկավ սաստիկ հարբած։ Օրորվելով նա անցավ տան առջևի անկյունը և բռունցքով սեղանին խփելով, ինչպես հայրն էր անում, մոր վրա գոռաց։

— Ընթրի՛ք բեր։

Մայրը մոտեցավ նրան, նստեց կողքին և գրկեց որդուն՝ նրա գլուխն իր կրծքի վրա դնելով։ Որդին, ձեռքը մոր ուսին հենելով, ընդդիմանում էր և գոռում.

— Մայրի՛կ, շո՛ւտ...

— Հիմարիկ,— տխուր և քնքշորեն ասաց մայրը՝ նրա դիմադրությունը հաղթահարելով։

— Պիտի ծխեմ էլ։ Ինձ տուր հորս ծխամորճը...— չհնազանդվող լեզուն դժվարությամբ շարժելով՝ թոթովեց Պավելը։

Նա առաջին անգամ էր հարբել։ Օդուց թուլացել էր նրա մարմինը, բայց գիտակցությունը չէր խամրել, և նրա գլխում թակում էր այս հարցը։

«Հարբա՞ծ եմ։ Հարբա՞ծ եմ»

Նրան շփոթեցնում և հուզում էր մոր գգվանքները, նրա աչքերի տրտմությունը։ Լացը գալիս էր, և այդ ցանկությունը զսպելու համար նա աշխատում էր ավելի հարբած ձևանալ, քան էր։

Իսկ մայրը ձեռքով շոյում էր նրա քրտնած, խճճված մազերը և մեղմաձայն ասում.

— Լավ չես արել...

Պավելի սիրտն սկսեց խառնել։ Փսխումի կատաղի նոպայից հետո մայրը նրան անկողին դրեց՝ գունատ ճակատը ծածկելով թաց սրբիչով։ Պավելը մի քիչ զգաստացավ, բայց շուրջն ամեն ինչ ալեձև օրորվում էր, նրա կոպերը ծանրացել էին, և բերանում զզվելի, դառն համ զգալով՝ նա արտևանունքների միջով նայում էր մոր մեծ դեմքին և անկապ մտածում։

«Երևի դեռ վաղ է ինձ համար։ Ուրիշները խմում են, և ոչինչ, իսկ իմ սիրտը խառնում է...»

Մի ինչ-որ հեռու տեղից ականջին էր հասնում մոր քնքուշ ձայնը։

— Էլ դու ինձ ինչպես պիտի պահես, եթե սկսես խմել...

Աչքերն ամուր փակելով՝ Պավելն ասաց.

— Ամենքն էլ խմում են...

Մայրը ծանր հառաչեց։ Որդին իրավացի էր։ Մայրը ինքը լավ գիտեր, որ բացի գինետնից ուրիշ տեղ չկար, որտեղից մարդիկ ուրախություն քաղեին։ Բայց և այնպես ասաց.

— Իսկ դու մի՛ խմիր։ Քո փոխարեն հայրդ խմել է, որքան որ պետք է։ Նա ինձ էլ է բավականաչափ տանջել... գոնե դո՛ւ մորդ խղճայիր։

Պավելը լսելով այդ տրտում, մեղմ բառերը, հիշեց, որ հոր կենդանության ժամանակ մայրը տանն աննկատելի էր, լուռումունջ և ապրում էր միշտ տագնապահար՝ ծեծի սպասելով։ Հորը հանդիպելուց խուսափելով՝ Պավելը վերջերս քիչ էր լինում տանը, նա մորից խորթացել էր, և այժմ հետզհետե զգաստանալով՝ սևեռուն հայացքով նայում էր նրան։

Մայրը բարձրահասակ էր, քիչ կորացած. երկարատև աշխատանքից և ամուսնու ծեծից ջարդված նրա մարմինը շարժվում էր անաղմուկ և մի քիչ կողքի վրա, կարծես թե նա շարունակ վախենում էր որևէ բանի դիպչել։ Նրա լայն, ձևաձև դեմքը, որ ակոսված էր կնճիռներով, և մի քիչ ուռած էր, լուսավորվում էր թուխ աչքերով, որոնք տագնապալից տխուր էին, ինչպես ավանի կանանց մեծ մասի աչքերը։ Աջ հոնքի վերևը մի խոր սպի կար, որը հոնքը մի քիչ վեր էր բարձրացնում. թվում էր, թե նրա աջ ականջն էլ ձախից բարձր է. դա նրա դեմքին այնպիսի արտահայտություն էր տալիս, որ կարծես թե նա միշտ վախեցած ականջ է դնում։ Թուխ խիտ մազերի մեջ ալեզարդ փնջեր էին պսպղում։ Նա այնքա՜ն հեզ էր, տրտում, հլու-հնազանդ...

Եվ նրա այտերով դանդաղ հոսում էին արցունքները։

— Մի՛ լար,— կամացուկ խնդրեց որդին։— Ջուր տուր խմեմ։

— Ես քեզ համար սառույցով ջուր կբերեմ...

Բայց երբ մայրը վերադարձավ, որդին արդեն քնած էր։ Մայրը մի րոպե կանգնած մնաց նրա գլխավերևում, շերեփը դողդողում էր նրա ձեռքին, և սառույցը մեղմ զարկվում էր թիթեղին։ Շերեփը սեղանին դնելով՝ նա լուռ ծունկի իջավ սրբապատկերների առջև։ Պատուհանների ապակիներին էին զարկվում հարբած կյանքի հնչյունները։ Աշնան երեկոյի խավարում ու խոնավության մեջ ճչում էր հարմոնը, մեկը բարձր երգում էր, մեկը հայհոյում էր փտած խոսքերով, տագնապալից հնչում էին կանանց գրգռված, հոգնաբեկ ձայները...

Վլասովների փոքրիկ տանը կյանքն սկսեց ընթանալ ավելի խաղաղ և հանգիստ, քան առաջ, և մի քիչ ուրիշ կերպ, քան ավանում ամեն տեղ։ Նրանց տունը գտնվում էր ավանի ծայրում, դեպի ճահիճն իջնող ոչ բարձր, բայց թեք զառիթափի մոտ։ Տան մի երրորդ մասը բռնում էին խոհանոցը և նրանից բարակ միջնորմով բաժանված մի փոքրիկ սենյակ, ուր մայրն էր քնում։ Մնացած երկու երրորդը մի քառակուսի սենյակ էր երկու պատուհանով, նրա մի անկյունում Պավելի մահճակալն էր, առջևի անկյունում՝ սեղանը և երկու երկար նստարան։ Մի քանի աթոռ, ճերմակեղենի պահարանը՝ վրան փոքրիկ հայելի, մի շորի արկղ, պատին մի ժամացույց և անկյունում երկու սրբապատկեր — ահա բոլորը։

Պավելն արեց այն ամենը, ինչ պետք է աներ ջահել տղան. նա գնեց հարմոն, օսլայած կրծքով շապիկ, վառ գույնի փողկապ, կրկնակոշիկներ, ձեռնափայտ և ամեն բանով նմանվեց իր հասակակից բոլոր պատանիներին։ Գնում էր երեկույթներ, սովորել էր կադրիլ և լեհական պար, տոներին հարբած էր տուն

վերադառնում և միշտ սաստիկ տառապում էր օղուց։ Առավոտները գլուխը ցավում էր, նրան տանջում էր այրուցքը, դեմքը գունատ էր, տխուր։

Մի անգամ մայրը նրան հարցրեց.

— Հը՛, ինչպե՞ս էր երեկոյան, ուրա՞խ անցավ։

Որդին մռայլ ջղայնությամբ պատասխանեց.

— Սաստի՛կ ձանձրալի էր։ Ես ավելի լավ է կարթով ձուկ որսալու գնամ։ Կամ՝ ինձ համար հրացան առնեմ։

Նա աշխատում էր եռանդագին, առանց պարապուրդների և տուգանքների, լռակյաց էր, և նրա կապույտ, մոր աչքերի նման մեծ-մեծ աչքերը նայում էին դժգոհ։ Նա իր համար հրացան չգնեց և ձուկ որսալու չգնաց, բայց նկատելիորեն սկսեց թեքվել ամենքի գնացած ճանապարհից, ավելի սակավ էր լինում երեկույթներին և թեև տոներին ինչ-որ տեղ էր գնում, բայց զգաստ էր վերադառնում։ Մայրը, աչալուրջ հետևելով նրան, տեսնում էր՝ որդու թուխ դեմքը սրանում է, աչքերն ավելի ու ավելի լուրջ են նայում, շրթունքները տարօրինակ խստությամբ սեղմվում են։ Թվում էր, թե նա լուռ զայրանում է մի բանի վրա, կամ հիվանդությունը մաշում է նրան։ Առաջ ընկերները գալիս էին նրա մոտ, այժմ նրան տանը չգտնելով՝ սկսեցին այլևս չգալ։ Մոր համար հաճելի էր տեսնել, որ իր որդին սկըսում է շնմանվել գործարանի մյուս երիտասարդներին, բայց երբ նա նկատեց, որ որդին կենտրոնացած և համառորեն կյանքի պղտոր հոսանքից դուրս է լողում մի կողմ, մի ինչ-որ տեղ, այդ աղոտ երկյուղի մի զգացում առաջացրեց նրա հոգում։

— Դու գուցե առողջ չե՞ս, Պավլո՛ւշա,— երբեմն հարցնում էր նա։

— Ո՛չ, ես առողջ եմ,— պատասխանում էր որդին։

— Շատ ես նիհարել,— հառաչելով ասում էր մայրը։

Պավելն սկսեց գրքեր բերել տուն և աշխատում էր կարդալ դրանք աննկատելի կերպով. իսկ կարդալուց հետո ինչ-որ մի տեղ թաքցնում էր։ Երբեմն նա գրքույկներից ինչ-որ բան էր արտագրում առանձին թղթի վրա և նույնպես թաքցնում...

Մայր ու որդի շատ քիչ էին խոսում իրար հետ և իրար քիչ էին տեսնում։ Առավոտները որդին լուռ թեյ էր խմում և գնում գործի, կեսօրին գալիս էր ճաշելու, ճաշի ժամանակ աննշան խոսքեր էին փոխանակում, և որդին նորից էր անհետանում մինչև երեկո։ Իսկ երեկոյան նա խնամքով լվացվում էր, ընթրում և ապա երկար ժամանակ կարդում էր իր գրքերը։ Տոներին տնից դուրս էր գալիս առավոտվանից, վերադառնում ուշ գիշերը։ Մայրը գիտեր, որ նա քաղաք էր գնում, այնտեղ թատրոն էր հաճախում, բայց քաղաքից նրա մոտ ոչ ոք չէր գալիս։ Մորն այնպես էր թվում, թե քանի գնում՝ որդին ավելի ու ավելի քիչ է խոսում, և միևնույն ժամանակ նկատում էր, որ երբեմն ինչ-որ նոր բառեր է գործածում, որոնք իր համար անհասկանալի են, իսկ որդու համար սովորական դարձած կոպիտ և սուր արտահայտությունները նա այլևս չէր գործածում։ Նրա վարքուբարքի մեջ շատ մանր բաներ էին երևան եկել, որոնք իրենց վրա էին գրավում մոր ուշադրությունը. նա թողել էր պճնամոլությունը, սկսել էր ավելի շատ հոգ տանել մարմնի և զգեստի մաքրության մասին, շարժվում էր ավելի ազատ, ճարպկորեն և արտաքուստ ավելի պարզ և մեղմաբարո դառնալով, մոր մեջ անհանգիստ հետաքրքրություն էր զարթեցնում։ Մոր նկատմամբ ունեցած նրա վերաբերմունքի մեջ էլ մի ինչ-որ նորություն կար. նա երբեմն ավլում էր սենյակի հատակը, տոներին ինքն էր հավաքում իր անկողինը, ընդհանրապես աշխատում էր թեթևացնել մոր աշխատանքը։ Ավանում ոչ ոք այդ բանը չէր անում։

Մի անգամ Պավելը բերեց և պատից կախեց մի նկար — երեք մարդ զրուցելով՝ թեթև ու առույգ մի ինչ-որ տեղ էին գնում։

— Սա հարություն առած Քրիստոսն է, Էմմաուս է գնում,— բացատրեց Պավելը։

Մորը դուր եկավ նկարը, բայց նա մտածեց.

«Քրիստոսին պաշտում ես, բայց ժամ չես գնում...» Գրքերն ավելի ու ավելի էին շատանում դարակի վրա, որը Պավելի համար գեղեցիկ շինել էր իր ատաղձագործ ընկերը։ Սենյակը հաճելի տեսք էր ստացել։

Պավելը մորը «դուք» էր ասում և նրան անվանում էր «մայրիկ», բայց երբեմն մեկ էլ տեսար, քնքշանքով էր դիմում նրան.

— Դու, մայրի՛կ, խնդրում եմ չանհանգստանաս, ես ուշ կվերադառնամ տուն...

Մորն այդ դուր էր գալիս, որդու խոսքերում նա ինչ-որ լուրջ և հաստատուն բան էր զգում։

Բայց մոր տագնապն ավելանում էր։ Ժամանակի ընթաց-

քոմ չփարատվելով, այդ տագնապն ավելի ու ավելի սուր էր կրծում մոր սիրտը մի ինչ-որ անսովոր բանի նախազգացումով։ Երբեմն մայրն սկսում էր դժգոհել որդուց ու մտածում էր.

— Բոլոր մարդիկ մարդու են նման, իսկ սա՝ վարդապետի։ Շատ է խստասիրտ։ Իր տարիքի համեմատ բան չի։

Երբեմն նա մտածում էր.

«Գուցե որևէ աղջի՞կ է գտել իր համար»։

Բայց աղջիկների հետ ընկնելը փող է պահանջում, իսկ տղան գրեթե ամբողջ վաստակը տալիս էր իրեն։

Այդպես անցնում էին շաբաթներ ու ամիսներ, և աննկատելիորեն անցան տարօրինակ, լուռ կյանքի երկու տարի, լի աղոտ խոհերով և ավելի ու ավելի աճող երկյուղներով։

IV

Մի անգամ ընթրիքից հետո Պավելն իջեցրեց լուսամուտի վարագույրը, նստեց անկյունում և սկսեց կարդալ՝ գլխավերևը պատից կախելով թիթեղե ճրագը։ Մայրն ամանեղենը հավաքեց և, խոհանոցից դուրս գալով, զգուշությամբ մոտեցավ որդուն։ Պավելը գլուխը բարձրացրեց և հարցականորեն նայեց մոր դեմքին։

— Բան չկա, Պա՛շա, ես հենց այնպես...— շտապ ասաց մայրը և հեռացավ՝ հոնքերը շփոթված շարժելով։ Բայց խոհանոցում մի բոպե կանգնած մնալով անշարժ, խոհուն ու մտահոգված, նա ձեռները մաքուր լվաց և կրկին դուրս եկավ գնաց որդու մոտ։

— Ուզում եմ մի բան հարցնել քեզ,— կամաց ասաց նա,— ի՞նչ ես կարդում դու ամբողջ ժամանակ։

Որդին գիրքը ծալեց.

— Նստի՛ր, մայրի՛կ...

Մայրը ծանր նստեց նրա կողքին և շտկվեց, ուշադրությունը լարեց՝ մի կարևոր բանի սպասելով։

Մոր վրա չնայելով, ոչ բարձր, և հայտնի չէ թե ինչու, խիստ դաժանորեն Պավելն ասաց.

— Ես կարդում եմ արգելված գրքեր։ Այս գրքերը կարդալն արգելում են նրա համար, որ դրանք ասում են ճշմարտությունը մեր բանվորական կյանքի մասին... Այս գրքերը տպագրվում են ծածուկ, գաղտնի, և եթե սրանք ինձ մոտ գտնեն, ինձ բանտ կնստեցնեն, բանտ կտանեն նրա համար, որ ես ուզում եմ իմանալ ճշմարտությունը։ Հասկացա՞ր։

Հանկարծ մոր շնչառությունը ծանրացավ։ Աչքերը լայն բանալով՝ նա նայում էր որդուն, նա օտար էր թվում իրեն։ Նրա ձայնը ուրիշ էր, ավելի ցածր էր, բամբ և հնչեղ։ Նա մատներով փետում էր բարակ, թավ ընչացքները և տարորեն, աչքի տակով նայում դեպի անկյունը։ Մորը երկյուղ պատեց որդու համար և խղճաց նրան։

— Իսկ ինչո՞ւ ես այդ բանն անում, Պա՛շա,— ասաց նա։

Պավելը գլուխը բարձրացրեց, նայեց մորը և ոչ բարձր, հանգիստ պատասխանեց.

— Ուզում եմ իմանալ ճշմարտությունը։

Նրա ձայնը հնչում էր կամաց, բայց հաստատ, աչքերը համառ փայլում էին։ Մայրը սրտի խորքում հասկացավ, որ իր որդին իրեն ընդմիշտ դատապարտել է մի ինչ-որ խորհրդավոր ու սարսափելի բանի։ Կյանքում ամեն ինչ նրան թվում էր անխուսափելի. նա սովորել էր ենթարկվել առանց մտածելու և այժմ կամաց լաց եղավ միայն՝ վշտով ու թախծով սեղմված սրտում բառեր չգտնելով։

— Մի՛ լար,— ասում էր Պավելը քնքշորեն և կամաց, իսկ մորը թվում էր, թե որդին հրաժեշտ է տալիս։— Մտածիր մի, թե ի՞նչ կյանքով ենք մենք ապրում։ Դու քառասուն տարեկան ես, բայց մի՞թե դու ապրել ես։ Հայրս քեզ ծեծում էր, ես հիմա եմ հասկանում, որ նա իր ցավն էր թափում քո կողերին, իր կյանքի ցավը. այդ ցավը խեղդում էր նրան, իսկ նա չէր հասկանում, թե որտեղից է այդ ցավը։ Նա աշխատել էր երեսուն տարի, սկսել էր աշխատել այն ժամանակվանից, երբ ամբողջ գործարանը տեղավորված էր երկու կորպուսում, իսկ հիմա յոթ կորպուս է դարձել։

Մայրը նրան լսում էր սարսափով և ագահաբար։ Որդու աչքերը վառվում էին գեղեցիկ ու պայծառ. կուրծքը սեղանին հենած՝ Պավելն ավելի մոտեցավ մորը և սկսեց խոսել ուղղակի, նրա արցունքով թաց երեսին ասելով իր առաջին ճառն այն ճշմարտության մասին, որ հասկացել էր ինքը։ Երիտասարդական ամբողջ ուժով և աշակերտի ավյունով, որը հպարտ է այն գիտելիքներով, որոնց ճշմարիտ լինելուն սրբությամբ հավա-

տում է, նա խոսում էր այն մասին, ինչ որ արդեն պարզ էր իր համար,— խոսում էր ոչ այնքան մոր համար, որքան ինքն իրեն ստուգելով։ Մի պահ նա կանգ էր առնում բառեր չգտնելով և այն ժամանակ իր առջև տեսնում էր այն վշտացած դեմքը, որի վրա աղոտ փայլում էին արցունքներով մթագնած բարի աչքերը։ Այդ աչքերը նայում էին երկյուղով, տարակուսանքով։ Որդին խղճում էր մորը, սկսում էր նորից խոսել, բայց արդեն մոր մասին, նրա կյանքի մասին։

— Դու ի՞նչ ուրախություն ես տեսել,— հարցնում էր որդին։— Քեզ ի՞նչը կարող է հիշեցնել անցած կյանքդ։

Մայրը լսում էր և գլուխը տխուր շարժում՝ զգալով մի նոր, իրեն անծանոթ բան, վշտալի և ուրախալի, որը քնքշորեն փաղաքշում էր նրա մորմոքված սիրտը։ Այդպիսի խոսքեր իր մասին, իր կյանքի մասին նա լսում էր առաջին անգամ, և դրանք իր մեջ զարթեցնում էին վաղուց նիրհած, անորոշ խոհեր, մեղմորեն արծարծելով կյանքից ունեցած իր աղոտ դժգոհության խամրած զգացումները,— վաղուց անցած երիտասարդ տարիների խոհերն ու զգացմունքները։ Այն տարիներին նա իր ընկերուհիների հետ խոսել էր կյանքի մասին, խոսել էր երկար, ամեն բանի մասին, բայց ամենքը՝ և հենց ինքն էլ՝ միայն գանգատվում էին, ոչ ոք չէր բացատրում, թե ինչո՞ւ է կյանքն այնպես ծանր ու դժվարին։ Եվ ահա այժմ նրա առջև նստած է իր որդին, և այն, ինչ ասում են նրա աչքերը, դեմքը, բառերը,— այդ բոլորը դիպչում է նրա սրտին՝ այն լցնելով հպարտության զգացումով որդու համար, որը ճիշտ է հասկացել իր մոր կյանքը, նրա հետ խոսում է նրա տառապանքների մասին, խղճում է նրան։

Մայրերին չեն խղճում։

Մայրն այդ գիտեր։ Այն բոլորը, ինչ որդին ասում էր կնոջ կյանքի մասին, դառն, ծանոթ ճշմարտություն էր, և մոր կրծքում կամաց թպրտում էր զգացումների կծիկը, որը է՛լ ավելի էր ջերմացնում նրան մի անծանոթ գգվանքով։

— Բայց դու ի՞նչ ես ուզում անել,— հարցրեց նա՝ ընդհատելով որդու խոսքը։

— Սովորել, իսկ հետո՝ սովորեցնել ուրիշներին։ Մեզ, բանվորներիս, սովորել է հարկավոր։ Մենք պետք է գիտենանք, պետք է հասկանանք, թե ինչի՞ց է, որ կյանքն այսպես ծանր է մեզ համար։

Մոր համար քաղցր բան էր տեսնել, որ որդու կապույտ աչքերը, որոնք միշտ լուրջ ու խիստ են, այժմ վառվում էին այնպես մեղմ և սիրալիր։ Մոր շրթունքների վրա գոհունակ, մեղմ ժպիտ էր երևում, թեև այտերի խորշոմներում դեռ դողդողում էին արտասուքները։ Մոր մեջ տատանվում էր երկակի մի զգացմունք. նրա մեջ հպարտություն էր առաջ բերում որդին, որն այնպես լավ էր տեսնում կյանքի վիշտը, բայց նա չէր կարողանում մոռանալ որդու երիտասարդությունը և այն, որ նա խոսում է ոչ այնպես, ինչպես ամենքը, որ նա մեն-մենակ է որոշել վեճի բռնվել ամենքի համար, և հենց իր՝ մոր համար սովորական այդ կյանքի հետ։ Նա ուզում էր ասել որդուն. «Սիրելի՛ս դու ի՞նչ կարող ես անել»։

Բայց նա վախենում էր խանգարել իրեն հիանալու որդով, որը հանկարծ իր առաջ հանդես էր բերել իրեն այդպես խելոք... թեև մի քիչ խորթ իր համար։

Պավելը տեսնում էր ժպիտ մոր շրթունքներին, ուշադրություն նրա դեմքին, սեր նրա աչքերում, և նրան թվում էր, թե կարողացավ հասկացնել նրան իր ճշմարտությունը և խոսքի ուժի համար զգացած իր պատանեկան հպարտությունը բարձրացնում էր նրա հավատը դեպի ինքը։ Հուզմունքով բռնված՝ նա խոսում էր մերթ ժպտալով, մերթ հոնքերը կիտելով, երբեմն նրա բառերում ատելությունն էր հնչում, և երբ մայրը լսում էր նրա հնչեղ, շեշտակի խոսքերը, վախենալով՝ երերում էր գլուխը և կամաց հարցնում որդուն.

— Այդպե՞ս է արդյոք, Պա՛շա։

— Այդպես է,— պատասխանում էր որդին հաստատապես և ուժգին։ Եվ մորը պատմում էր այն մարդկանց մասին, որոնք ժողովրդին բարիք ցանկանալով՝ նրա մեջ ճշմարտություն էին սերմանում, իսկ դրա համար կյանքի թշնամիները բռնում էին նրանց ինչպես գազանների, բանտ նստեցնում, տաժանակրության ուղարկում...

— Ես այդպիսի մարդիկ տեսել եմ,— տաքացած բացականչեց Պավելը։— Դրանք ամենալավ մարդիկն են աշխարհի երեսին։

Այդ մարդիկ մոր մեջ երկյուղ էին հարուցում, նա կրկին ուզում էր հարցնել որդուն. «Այդպե՞ս է արդյոք»։

Բայց սիրտ չէր անում և նվաղած լսում էր պատմություններ իրեն անհասկանալի այն մարդկանց մասին, որոնք իր որ-

դուն սովորեցրել էին խոսել և մտածել նրա համար այդքան վտանգավոր ձևով։ Վերջապես նա որդուն ասաց.

— Շուտով կլուսանա, լավ կանեիր՝ պառկեիր քնելու։

— Այո՛, ես իսկույն կպառկեմ,— համաձայնեց որդին։ Եվ դեպի մայրը կռանալով՝ հարցրեց.— հասկացա՞ր ինձ։

— Հասկացա՛,— հառաչելով պատասխանեց մայրը։ Նրա աչքերից նորից գլորվեցին արցունքները, և նա հեծկլտալով ավելացրեց.— կկորչե՛ս դու։

Որդին վեր կացավ, քայլեց սենյակում, ապա ասաց.

— Դե՛, տեսնո՞ւմ ես, դու հիմա գիտես, թե ես ինչ եմ անում, ուր եմ գնում, ես քեզ բոլորն ասացի։ Ես խնդրում եմ քեզ, մա՛յր, եթե դու ինձ սիրում ես, չխանգարես ինձ...

— Սիրելի՛ս,— բացականչեց մայրը։— Գուցե ավելի լավ կլիներ, որ ես բան չիմանայի՞։

Որդին բռնեց մոր ձեռքը և ամուր սեղմեց իր ձեռքերում։

Նրան ցնցեց «մայր» բառը, որ որդին ասաց չերմ ուժգնությամբ, և ձեռքի այդ սեղմումը, նոր և օտարոտի։

— Ես բան չեմ անի,— ընդհատվող ձայնով ասաց մայրը։

— Միայն թե պահպանի՛ր դու քեզ, պահպանի՛ր։

Չիմանալով, թե ինչից պետք է պաշտպանվել, մայրը թախծագին ավելացրեց.

— Դու քանի գնում՝ նիհարում ես...

Եվ գրկելով որդու ամրակուռ, վայելչակազմ մարմինը, գգվող, չերմ հայացքով խոսեց շտապ-շտապ և կամաց.

— Աստվա՛ծ քեզ հետ։ Ապրիր ինչպես ուզում ես, ես քեզ չեմ խանգարի։ Միայն մի բան եմ խնդրում, մի՛ խոսիր մարդկանց հետ առանց երկյուղի։ Մարդկանցից զգուշանալ է պետք, բոլորն իրար ատում են։ Ապրում են ագահությամբ, ապրում են նախանձով։ Չարիք գործելու համար հոգի են տալիս։ Հենց որ սկսես նրանց արարքները բաց անել ու դատապարտել, նրանք քեզ կատեն, գլուխդ կուտե՛ն։

Որդին կանգնած էր շեմքում՝ ականջ դնելով այդ տխուր խոսքերին, իսկ երբ մայրը վերջացրեց, նա ժպտալով ասաց.

— Մարդիկ վատ են, այո՛։ Բայց երբ ես իմացա, որ աշխարհիս երեսին ճշմարտություն կա, մարդիկ լավացան...

Նա նորից ժպտաց և շարունակեց.

— Ինքս էլ չեմ հասկանում, թե ինչպես եղավ այդ։ Մանկությունից սկսած ամենքից վախենում էի, սկսեցի մեծանալ՝

դատել սկսեցի. ոմանց ստորության համար, ոմանց՝ չգիտեմ ինչի, հենց այնպես։ Իսկ հիմա ամենքն ինձ համար ուրիշ բան են դարձել, խղճո՞ւմ եմ բոլորին, թե՝ ի՞նչ է. չեմ կարողանում հասկանալ, բայց սիրտս քնքշացավ, երբ իմացա, որ բոլորը չեն մեղավոր, որ կեղտի մեջ են...

Նա լռեց՝ կարծես ականջ դնելով իր մեջ մի բանի, ապա ցածրաձայն և խոհուն ասաց.

— Ահա թե ինչպե՛ս է շնչում ճշմարտությունը։

Մայրը նայեց նրան և կամաց պատասխանեց.

— Դու վտանգավոր կերպով փոխվել ես. օ՜, տե՛ր աստված։

Երբ որդին պառկեց ու քնեց, մայրն զգուշությամբ վեր կացավ իր անկողնից և կամաց մոտեցավ նրան։ Պավելը պառկած էր մեջքի վրա, և ճերմակ բարձին պարզորոշ նկատվում էր նրա թուխ, կամակոր և խիստ դեմքը։ Մայրը ձեռքերը կրծքին սեղմած, բոբիկ և միայն շապիկը հագին կանգնել էր որդու անկողնի մոտ, շրթունքներն անձայն շարժվում էին, իսկ աչքերից դանդաղ և համաչափ իրար հետևից հոսում էին խոշոր, պղտոր արցունքները։

Եվ նրանք նորից սկսեցին ապրել լուռումունջ՝ իրարից Հեռու և իբար մոտիկ։

V

Մի անգամ, շաբաթվա մեջ մի տոն օր, Պավելը տնից դուրս գալիս՝ մորն ասաց.

— Շաբաթ օրն ինձ մոտ հյուրեր են գալու քաղաքից։

— Քաղաքի՞ց,— կրկնեց մայրը, և հանկարծ հեկեկաց։

— Է՜, ինչո՞ւ ես այդպես անում, մայրի՛կ,— դժգոհ բացականչեց Պավելը։

Մայրը, երեսը գոգնոցով սրբելով, պատասխանեց հառաչելով.

— Չգիտեմ, հենց այնպես...

— Վախենո՞ւմ ես։

— Վախենում եմ,— խոստովանեց մայրը։

Որդին կռացավ դեպի մոր դեմքը և բարկացած՝ կարծես հայրն էր, արտասանեց.

— Դե հենց վախից է, որ բոլորս կորչում ենք։ Իսկ նրանք,

որ մեզ վրա իշխում են, օգտվում են մեր վախից և է՛լ ավելի են վախեցնում մեզ։

Մայրը թախծագին պաղատեց.

— Մի՛ բարկանա։ Ես ինչպե՞ս չվախենամ։ Ամբողջ կյանքս վախի մեջ եմ անց կացրել, ամբողջ հոգիս վախով է պատած։

Որդին կամաց և ավելի մեղմ ասաց.

— Դու ներիր ինձ. ուրիշ կերպ չի կարելի։

Եվ գնաց։

Երեք օր մոր սիրտը դողում էր և ամեն անգամ տապ անում, հենց որ հիշում էր, թե իրենց տունն են գալու ինչ-որ օտար, սարսափելի մարդիկ։ Այդ նրանք են իր որդուն ցույց տվել այն ճանապարհը, որով նա գնում է...

Շաբաթ երեկոյան Պավելը գործարանից եկավ, լվացվեց, շորերը փոխեց և նորից ինչ-որ տեղ գնալով՝ ասաց, առանց մորը նայելու.

— Որ գան, ասա՛ ես իսկույն կվերադառնամ։ Եվ խընդրում եմ չվախենաս...

Մայրն ուժասպառ ընկավ նստարանին։ Որդին մոայլ նայեց նրան և առաջարկեց.

— Գուցե դու... որևէ տե՞ղ կգնաս։

Դա վիրավորեց մորը։ Նա բացասաբար գլուխը շարժելով ասաց.

— Չէ՛։ Ինչի՞ համար։

Նոյեմբերի վերջն էր։ Սառած գետնի վրա ցերեկը չոր, մանր ձյուն էր եկել, և այժմ լսելի էր, թե ինչպես էր ձյունը ճռճռում հեռացող որդու ոտքերի տակ։ Պատուհանի ապակիներին անշարժ կռթնել էր թանձր խավարը՝ թշնամաբար ինչ-որ բան հսկելով։

Մայրը ձեռքերը նստարանին հենած՝ նստել և դռանը մտիկ տալով՝ սպասում էր...

Նրան թվում էր, թե խավարի մեջ ամեն կողմից զգուշությամբ, կռացած և դեսուդեն նայելով, գաղտագողի մոտենում էին տանն ինչ-որ տարօրինակ հագնված, ոչ բարի մարդիկ։ Ահա մեկն արդեն ման է գալիս տան շուրջը, ձեռներով շոշափում է պատը։

Ինչ-որ սուլոց լսվեց։ Անդորրի մեջ այդ սուլոցը ոլորվում էր բարակ, տխուր ու ներդաշնակ շիթի պես, մտազբաղ թափառում էր խավարի ամայության մեջ, ինչ-որ բան էր որոնում, մոտենում էր։ Եվ հանկարծ չքացավ պատուհանի տակ՝ կարծես պատի փայտերի մեջ խրվելով։

Նախասենյակում մեկի ոտները քստքստացին, մայրը ցընցվեց և լարվածությամբ հոնքերը բարձրացնելով՝ վեր կացավ։

Դուռը բաց արին։ Նախ սենյակը խցկվեց մի գլուխ՝ մեծ, բրդոտ գլխարկով, հետո կռանալով ներս քաշվեց մի երկար մարմին, շտկվեց, առանց շտապելու բարձրացրեց աջ ձեռքը և աղմկալի շնչելով, թավ, կրծքային ձայնով ասաց.

— Բարի երեկո՛։

Մայրը լուռ գլուխ տվեց։

— Իսկ Պավելը տանը չի՞։

Այդ մարդը դանդաղորեն հանեց մորթե բաճկոնակը, մի ոտը բարձրացրեց, կոշիկի վրայի ձյունը գլխարկով թափ տվեց, ապա նույնն արեց մյուս ոտի հետ, գլխարկը նետեց մի անկյուն և երկար ոտների վրա ճռճվելով՝ սենյակ մտավ։ Մոտեցավ աթոռին, տնտղեց, կարծես կամենալով համոզվել՝ ամուր է, թե ոչ, վերջապես նստեց և բերանը ձեռքով ծածկելով հորանջեց։ Նրա գլուխը կանոնավոր կլոր էր և հարթ խուզված, այտերն ածիլված էին և երկար ընչացքների ծայրերը ցած կախված։ Սենյակն ուշիուշով դիտելով իր մեծ-մեծ, ուռուցիկ մոխրագույն աչքերով՝ նա ոտը ոտին դրեց և աթոռի վրա ճռճվելով հարցրեց.

— Սա ձե՞ր խրճիթն է, թե՞ վարձու է։

Մայրը, նրա դիմաց նստելով պատասխանեց։

— Վարձու է։

— Մի բան չէ,— նկատեց նորեկը։

— Պաշան շուտով կգա, դուք մի քիչ սպասեցեք,— կամաց խնդրեց մայրը։

— Դե ես էլ հենց սպասում եմ,— հանգիստ ասաց երկար մարդը։

Նրա հանգստությունը, քնքուշ ձայնը և դեմքի պարզությունը քաջալերում էին մորը։ Նա մոր վրա նայում էր առանց քաշվելու, բարյացակամորեն, նրա հստակ աչքերի խորքում մի ուրախ կայծ էր խաղում, և իր ամբողջ՝ կոշտ ու կոպիտ, կոր, երկար ոտներով կերպարանքի մեջ մի զվարճալի և համակրանք ազդող բան կար։ Նա հագել էր կապույտ շապիկ և սև անդրավարտիք, որը կոշիկների մեջ էր խրած։ Մայրն ուզում էր հարցնել, թե ո՞վ է նա, ո՞րտեղացի է, արդյոք վաղո՞ւց է ճանաչում

իր որդուն, բայց հանկարծ այդ մարդն ամբողջ մարմնով օրորվեց և ինքը հարցրեց մորը.

— Այդ ո՞վ է ձեր ճակատն այդպես պատռել, մա՛յր։— Նա հարցրեց սիրալիր, աչքերում պայծառ ժպիտ, բայց այդ հարցը վիրավորեց կնոջը. նա շրթունքները սեղմեց և կարճ լռությունից հետո սառը քաղաքավարությամբ հարցրեց.

— Է՛հ, ձեր ի՞նչ գործն է, եղբայր։

Մարդն ամբողջ մարմնով ձգվեց դեպի մայրը.

— Մի՛ բարկացեք, ի՞նչ կա որ։ Ես նրա համար հարցրի, որ իմ հոգեմոր գլուխն էլ էր այդպես պատռված, ճիշտ այդպես, ինչպես ձերը։ Նրանը, գիտեք, նրա կենակիցն էր պատռել կոշիկի կաղապարով, կոշկակար էր։ Հոգեմայրս լվացարարուհի էր, իսկ կենակիցը՝ կոշկակար։ Հոգեմայրս, արդեն ինձ որդեգրելուց հետո, մի ինչ-որ տեղ գտել էր նրան, այդ հարբեցողին, որպես իր գլխին փորձանք։ Ա՛յ թե ծեծում էր նա հոգեմորս։ Վախից լեղաճաք էի լինում...

Մայրն իրեն զինաթափված զգաց նրա պարզասրտությունից և մտածեց, թե գուցե Պավելն իր վրա բարկանա, որ այդ տարօրինակ մարդուն ոչ սիրալիր պատասխան է տվել։ Ամաչկոտ ժպտալով նա ասաց.

— Ես չբարկացա, բայց դուք ախր հենց միանգամից... հարցրիք։ Սա մարդս է հիշատակ թողել, հոգին լո՛ւյս դառնա։ Դուք թաթար չե՞ք։

Մարդը ոտները թափահարեց և այնպես լայն ժպտաց, որ ականջները դեպի ծոծրակը թռան։ Ապա նա լուրջ ասաց.

— Դեռ ոչ։

— Ձեր արտասանությունը կարծես ռուսական չի,— նրա կատակը հասկանալով՝ ժպտալով բացատրեց մայրը։

— Դա ռուսականից ավելի լավ է,— ուրախ գլխով անելով ասաց հյուրը։— Ես խոխոլ եմ, Կանև քաղաքից։

— Վաղո՞ւց է, որ այստեղ եք։

— Քաղաքում ապրել եմ մոտ մի տարի, իսկ հիմա փոխադրվել եմ ձեզ մոտ՝ գործարանը, մի ամիս առաջ։ Այստեղ լավ մարդիկ գտա, ձեր որդուն և ուրիշների։ Այստեղ կմնամ,— ասում էր նա՝ ընչացքներից ձիգ տալով։

Նա դուր էր գալիս մորը, և որդու մասին նրա ասած խոսքերի համար մի բանով վարձահատույց լինելու ցանկությանը հնազանդվելով՝ մայրն առաջարկեց.

— Գուցե թե՞յ կխմեք։

— Ես մեն-մենակ ի՞նչ հյուրասիրվեմ,— պատասխանեց հյուրը ուսերը բարձրացնելով։— Ա՛յ, երբ բոլորը կհավաքվեն, այն ժամանակ պատիվ տվեք...

Նա մորը հիշեցրեց իր երկյուղը։

«Երանի թե բոլորն այսպես լինեին»,— ջերմորեն ցանկացավ մայրը։

Նախասենյակում նորից ոտնաձայներ լսվեցին, դուռը շտապ բացվեց, և մայրը էլի վեր կացավ։ Բայց ի զարմանս նրա՝ խոհանոց մտավ կարճահասակ, գեղջկուհու հասարակ դեմքով և բաց գույնի մազերի հաստ հյուսով մի աղջիկ։ Նա կամաց հարցրեց.

— Ես չե՞մ ուշացել։

— Ո՛չ,— պատասխանեց խոխոլը՝ սենյակից դուրս նայելով։— Ոտո՞վ եք եկել։

— Ի՜հ՜րկե։ Դուք Պավել Միխայլովիչի մա՞յրն եք։ Բարև ձեզ։ Իմ անունը Նատաշա է...

— Իսկ հայրանո՞ւնդ,— հարցրեց մայրը։

— Վասիլևնա։ Իսկ ձե՞ր։

— Պելագեյա Նիլովնա։

— Մենք, ուրեմն, արդեն ծանոթներ ենք։

— Այո՛,— ասաց մայրը թեթև շունչ քաշելով և ժպտաղեմ հայացքով դիտելով աղջկան։

Խոխոլն օգնեց աղջկան վերարկուն հանելու և հարցրեց.

— Ցո՞ւրտ է։

— Դաշտում՝ շա՜տ։ Քամի է...

Աղջկա ձայնը հյութեղ, հստակ էր, բերանը փոքր, փափլիկ, և ինքն ամբողջովին կլորիկ ու թարմ։ Վերարկուն հանելով՝ նա կարմիր թշերն ամուր շփեց ցրտից կարմրած փոքրիկ ձեռներով և արագ մտավ սենյակ՝ կոշիկների կրունկներով հատակը բարձր թխթխկացնելով։

«Առանց կրկնակոշիկների է ման գալիս»,— անցավ մոր մտքով։

— Այո՜-ո՜,— ծոր տվեց աղջիկը ցնցվելով։— Սառել եմ... ո՜ւֆ, ինչպե՜ս եմ սառել։

— Ա՛յ, ես ձեզ համար իսկույն ինքնաեռը կդնեմ,— շտապ ասաց մայրը՝ խոհանոց գնալով։— Իսկույն...

Մորը թվաց, թե վաղուց է ճանաչում այդ աղջկան և նրան

սիրում է մայրական լավ, սրտացավ սիրով։ Ժպտալով՝ նա ականջ էր դնում սենյակի խոսակցությանը։

— Դուք ինչո՞ւ եք տխուր, Նախո՛ղկա,— հարցրեց աղջիկը։

— Է՛հ, հենց այնպես,— կամաց պատասխանեց խոխոլը։— Այրին լավ աչքեր ունի, ես էլ մտածեցի, որ գուցե մորս աչքերն էլ են այդպես։ Գիտե՞ք, ես մորս մասին հաճախ եմ մտածում, և միշտ ինձ թվում է, թե նա կենդանի է։

— Դուք ասում էիք, թե մեռել է։

— Դա հոգեմայրս է մեռել։ Իսկ ես խոսում եմ հարազատ մորս մասին։ Ինձ թվում է, թե նա որևէ մի տեղ Կիևում ողորմություն է հավաքում։ Եվ օղի է խմում, հարբած է, իսկ ոստիկանները խփում են նրա այտերին։

«Խե՜ղճ տղա»,— մտածեց մայրը և հառաչեց։

Նատաշան շտապ, տաք-տաք և կամաց մի ինչ-որ բան ասաց։ Նորից հնչեց խոխոլի հնչեղ ձայնը։

— Է՜, դուք դեռ ջահել եք, ընկե՛ր, սոխ քիչ եք կերել։ Երեխա ծնելը դժվար բան է, մարդուն բարի բան սովորեցնելը է՛լ ավելի դժվար է...

«Տեսնո՜ւմ ես»— ներքուստ բացականչեց մայրը և ուզեց խոխոլին մի սիրալիր բան ասել։ Բայց դուռը դանդաղ բացվեց, և ներս մտավ Նիկոլայ Վեսովշչիկովը, հին գող Դանիլայի որդին, ամբողջ ավանում հայտնի մարդախույսը։ Նա մարդկանցից միշտ մռայլորեն խույս էր տալիս, և դրա համար նրան ծաղրում էին։

Մայրը զարմացած հարցրեց նրան.

— Ի՞նչ ես ուզում, Նիկոլա՛յ։

Նիկոլայը ձեռքի լայն ափով սրբեց իր շեշոտ, այտոսկրերը ցցված դեմքը և առանց բարևելու՝ խուլ հարցրեց.

— Պավելը տա՞նն է։

— Ո՛չ։

Նիկոլայը նայեց սենյակի խորքը ու ներս մտավ ասելով.

— Բարև՛, ընկերնե՛ր...

«Սա՞ էլ»,— թշնամանքով մտածեց մայրը և շատ զարմացավ, տեսնելով, որ Նատաշան ձեռը մեկնում է նրան սիրալիր և ուրախացած։

Ապա եկան երկու երիտասարդ, գրեթե դեռ երեխաներ։ Դրանցից մեկին մայրը ճանաչում էր,— դա գործարանի հին բանվոր Սիզովի քրոջ որդին էր՝ Ֆեոդորը, սրադեմ, լայնաճակատ ու գանգրահեր։ Մյուսը, որ հարթ սանրված էր և համեստ, որը ծանոթ չէր, բայց նույնպես սարսափելի չէր։ Վերջապես հայտնվեց Պավելը, հետն էլ երկու երիտասարդ մարդիկ. մայրը ճանաչում էր նրանց, երկուսն էլ գործարանի բանվորներ էին։ Որդին մորը սիրալիր ասաց.

— Ինքնաեռը գցե՞լ ես։ Ա՛յ շնորհակալ եմ։

— Օղի, գուցե օղի առնեինք,— առաջարկեց մայրը՝ չիմանալով, ինչպե՜ս արտահայտի նրան իր շնորհակալությունը մի բանի համար, որ դեռ չէր հասկանում։

— Ո՛չ, դա ավելորդ է,— արձագանքեց Պավելը՝ բարյացակամորեն ժպտալով մոր երեսին։

Մայրը հանկարծ մտածեց, թե որդին դիտմամբ չափազանցրել է ժողովի վտանգը, որպեսզի իրեն ձեռք առնի։

— Սրա՞նք են հենց այդ արգելված մարդիկ,— կամաց հարցրեց մայրը։

— Հենց սրանք են,— պատասխանեց Պավելը՝ սենյակ մտնելով։

— Ը՛հ...— ուշնկցեց մայրը նրան սիրալիր բացականչությամբ, իսկ ինքն իր մեջ ներողամտորեն մտածեց.—«երեխա՜ է դեռ»։

VI

Ինքնաեռը եռաց, մայրը ներս բերեց սենյակ։ Հյուրերը շրջանաձև խիտ նստել էին սեղանի շուրջը, իսկ Նատաշան գիրքը ձեռին տեղավորվել էր անկյունում ճրագի տակ։

— Որպեսզի հասկանանք, թե ինչից է, որ մարդիկ այդպես վատ են ապրում...— ասում էր Նատաշան։

— Եվ ինչու իրենք էլ վատն են,— ավելացրեց խոխոլը։

— ...Պետք է նայել, տեսնել, թե նրանք ինչպես են սկսել ապրել...

— Տեսե՛ք, սիրելիներ, տեսե՛ք,— մրմնջաց մայրը՝ թեյը դեմ տալով։

Ամենքը լռեցին։

— Ի՞նչ եք ասում, մայրիկ,— հարցրեց Պավելը՝ հոնքերը կիտելով։

— Ե՞ս։— Մայրը շուրջը նայեց և տեսնելով, որ բոլորն էլ իրեն են նայում, շփոթված բացատրեց.

— Ես այնպես, ինքս ինձ հետ եմ խոսում, ուզում եմ ասել՝ մտիկ արեք։

Նատաշան ծիծաղեց, Պավելը նույնպես ժպտաց, իսկ խոխոլն ասաց.

— Շնորհակալությո՛ւն թեյի համար, մա՛յր։

— Դեռ չխմած շնորհակալությո՞ւն եք հայտնում,— պատասխանեց մայրը և որդուն նայելով հարցրեց.— ես հո չե՞մ խանգարում։

Նատաշան պատասխանեց.

— Դուք տանտիկինն եք, ինչպե՞ս կարող եք հյուրերին խանգարել։

Եվ երեխայի պես աղերսագին խնդրեց.

— Սիրելի՛ս, ինձ շո՛ւտ թեյ տվեք։ Ոտից գլուխ դողում եմ, ոտներս սարսափելի սառել են։

— Իսկո՛ւյն, իսկո՛ւյն,— շտապ բացականչեց մայրը։

Մի գավաթ թեյ խմելով՝ Նատաշան աղմկալի շունչ քաշեց, հյուսը գցեց ուսին և սկսեց կարդալ դեղին շապիկով նկարազարդ մի գիրք։ Մայրն աշխատելով, որ ամանեղենը չզնգզնգա, թեյ էր լցնում և ականջ դնում աղջկա սահուն խոսքին։ Նրա հնչեղ ձայնը միանում էր ինքնաեռի բարակ, խոհուն երգին, սենյակում գեղեցիկ ժապավենի պես ձգվում էր մի պատմություն վայրենի մարդկանց մասին, որոնք ապրել են քարայրներում և քարերով գազաններ են սպանել։ Դա հեքիաթի նման բան էր, և մայրը մի քանի անգամ նայեց որդուն՝ կամենալով հարցնել. այդ պատմության մեջ արգելված ի՞նչ կա որ։ Բայց նա շուտով հոգնեց այդ պատմությանը հետևելուց և սկսեց դիտել հյուրերին՝ որդուց և նրանցից աննկատելի կերպով։

Պավելը Նատաշայի կողքին էր նստած։ Պավելը բոլորից գեղեցիկ էր։ Նատաշան գրքի վրա հակված, հաճախ ուղղում էր իր քունքերին իջնող մազերը։ Գլուխը թափահարելով և ձայնն իջեցնելով, նա իրենից ինչ-որ բան էր ասում առանց գրքին նայելու, սիրալիր հայացքը սահեցնելով ունկնդիրների դեմքերի վրայով։ Խոխոլը լայն կրծքով ընկել էր սեղանի անկյունին, աչքերը ծռում էր՝ աշխատելով տեսնել իր ընչացքների գզգրզված ծայրերը։ Վեսովշչիկովն աթոռին նստել էր ուղիղ, կարծես փայտե լիներ, ափերը ծնկներին հենած, և նրա հոնքազուրկ, բարակաշուրթ չեչոտ դեմքն անշարժ էր դիմակի պես։ Նեղլիկ աչքերն առանց թարթելու, նա համառորեն նայում էր իր դեմքին, որ արտացոլվել էր ինքնաեռի փայլուն պղնձի մեջ և թվում էր, թե չի շնչում։ Փոքրիկ Ֆեդյան՝ ընթերցանությանն ականջ դնելով՝ անձայն շարժում էր շրթունքները՝ կարծես ինքն իրեն կրկնելով գրքի բառերը, իսկ նրա ընկերը կռացել էր՝ ձեռքերը ծնկներին դրած, և այտոսկրերն ափերին հենած՝ մտախոհ ժպտում էր։ Պավելի հետ եկած տղաներից մեկը կարմրաշեկ, գանգուր մազեր ուներ և ուրախ, կանաչագույն աչքեր, նա երևի ուզում էր մի բան ասել և անհամբեր շարժվում էր նստած տեղը. մյուսը, բաց գույնի կարճ խուզած մազերով, ափով շոյում էր իր գլուխը և նայում հատակին. նրա դեմքը չէր երևում։ Սենյակում անսովոր կերպով ինչ-որ հաճելի էր։ Մայրն զգում էր իրեն անծանոթ այդ անսովոր բանը և Նատաշայի ձայնի կարկաչյունի տակ հիշում իր երիտասարդ ժամանակվա աղմկալից երեկոները, տղաների կոպիտ խոսքերը, տղաների, որոնցից միշտ թունդ օղու հոտ էր փչում, նրանց անպատկառ կատակները։ Հիշում էր, և խղճահարության սիրտ ճմլող զգացմունքը մեղմ հուզում էր նրա սիրտը։

Միտն ընկավ հանգուցյալ ամուսնու հարսնախոսությունը։ Մի երեկո նա իրեն բռնեց մութ նախասենյակում և ամբողջ մարմնով պատին սեղմելով՝ խուլ ու բարկացկոտ հարցրեց.

— Ինձ հետ կամուսնանա՞ս։

Ինքը ցավ ու վիրավորանք էր զգում այդ պահին, իսկ նա սաստիկ տրորում էր ստինքները ու փնչացնելով, տաք ու խոնավ շնչում էր իր դեմքին։ Փորձեց դուրս պրծնել նրա ձեռքից, իրեն մի կողմ նետեց։

— Ո՞ւր,— գոռաց նա։— Պատասխան տուր, է՛։

Ամոթից և վիրավորանքից շնչասպառ եղած՝ ինքը լուռ էր։

Մեկը նախասենյակի դուռը բաց արեց, նա առանց շտապելու բաց թողեց իրեն՝ ասելով.

— Կիրակի օրը հարսնախոս եմ ուղարկելու...

Եվ ուղարկեց։

Մայրն աչքերը փակեց՝ ծանր հառաչելով։

— Ինձ պետք է իմանալ ոչ թե այն, թե ինչպես էին ապրում մարդիկ, այլ՝ թե ինչպես պետք է ապրել,— սենյակում լսվեց Վեսովշչիկովի դժգոհ ձայնը։

— Ի՛սկ որ,— պաշտպանեց նրան կարմրաշեկը վեր կենալով։

— Համաձայն չեմ,— գոչեց Ֆեդյան։

Վեճ բռնկվեց, խոսքերը շողացին, ինչպես կրակի լեզուները՝ խարույկի մեջ։ Մայրը չէր հասկանում, թե ինչի մասին են գոռում։ Բոլոր դեմքերը վառվեցին վրդովմունքի կարմրությամբ, բայց ոչ ոք չէր բարկանում, չէր ասում իրեն ծանոթ սուր խոսքերը։

«Օրիորդից են քաշվում»,— վճռեց մայրը։

Նրան դուր էր գալիս Նատաշայի լուրջ դեմքը, որ ուշադրությամբ դիտում էր ամենքին, կարծես այդ տղաները նրա համար մանուկներ լինեին։

— Սպասեցե՛ք, ընկերնե՛ր,— հանկարծ ասաց նա։ Եվ բոլորը լռեցին՝ նրան նայելով։

— Իրավացի են նրանք, որոնք ասում են՝ մենք պետք է ամեն բան իմանանք։ Մենք պետք է մեզ վառենք բանականության լույսով, որպեսզի խավար մարդիկ տեսնենք մեզ. մենք պետք է ամեն ինչի պատասխանենք ազնվորեն և ճիշտ։ Պետք է ճանաչել ամբողջ ճշմարտությունը, ամբողջ կեղծիքը...

Խոխոլը լսում էր և գլուխը տմբտմբացնում Նատաշայի խոսքերի տակտով։ Վեսովշչիկովը, կարմրաշեկը և Պավելի հետ եկած բանվորը, երեքով սեղմ խումբ կազմած՝ կանգնել էին և հայտնի չէ՝ ինչո՞ւ մորը դուր չէին գալիս։

Երբ Նատաշան լռեց, Պավելը վեր կացավ և հանգիստ հարցրեց.

— Մի՞թե մենք ուզում ենք միայն կուշտ լինել։ Ո՛չ,— ինքն իրեն պատասխանեց նա՝ անհողդողդ նայելով երեքի կողմը։— Մենք պետք է ցույց տանք նրանց, ովքեր նստած են մեր վզին և փակում են մեր աչքերը, որ մենք ամեն բան տեսնում ենք, մենք հիմար չենք, գազաններ չենք, ոչ միայն ուտել ենք ուզում, մենք ուզում ենք ապրել, ինչպես վայել է մարդկանց։ Մենք պետք է թշնամիներին ցույց տանք, որ մեր տաժանակիր կյանքը, որը նրանք մեր վզին են փաթաթել, մեզ չի խանգարում խելքով հավասարվելու իրենց և նույնիսկ իրենցից բարձր կանգնելու...

Մայրը լսում էր նրան, և նրա կրծքում թրթռում էր հպարտությունը. տես ի՞նչ կանոնավոր է խոսում։

— Կուշտերը քիչ չեն, ազնիվնե՞ր չկան,— ասում էր խոխոլը։— Մենք պետք է այդ փտող կյանքի ճահճի վրայով կամուրջ անցկացնենք դեպի սրտի բարության ապագա թագավորությունը, ահա՛ մեր գործը, ընկերնե՛ր։

— Քանի որ կռվելու ժամանակը եկել է, ուրեմն ձեռները բժշկելու ժամանակ չկա,— խուլ առարկեց Վեսովշչիկովը։

Արդեն կեսգիշերից անց էր, երբ նրանք սկսեցին ցրվել։ Նախ գնացին Վեսովշչիկովը և կարմրաշեկը, դա նորից դուր չեկավ մորը։

«Տես ինչպե՞ս են շտապում»,— անբարյացակամորեն նրանց գլուխ տալով՝ մտածեց նա։

— Դուք ինձ ճանապարհ կդնե՞ք, Նախոդկա,— հարցրեց Նատաշան։

— Ինչպե՞ս չէ,— պատասխանեց խոխոլը։

Երբ Նատաշան խոհանոցում հագնվում էր, մայրը նրան ասաց.

— Գուլպաներդ բարակ են այսպիսի եղանակի համար։ Թույլ տվեք ձեզ համար բրդե գուլպաներ գործեմ։

— Շնորհակալությո՛ւն, Պելագե՛յա Նիլովնա։ Ծակում են դրանք, այդ բրդե գուլպաները,— պատասխանեց Նատաշան ծիծաղելով։

— Իսկ ես այնպիսիները կգործեմ, որ չեն ծակի,— ասաց Վլասովան։

Նատաշան նայեց նրան՝ աչքերը մի քիչ կկոցած, և այդ սևեռուն հայացքը շփոթեցրեց մորը։

— Ներեցե՛ք հիմարությանս, սրտանց եմ ասում ես ձեզ,— կամաց ավելացրեց մայրը։

— Ի՞նչ լավն եք դուք,— նույնպես կամաց արձագանքեց Նատաշան՝ նրա ձեռքը արագ սեղմելով։

— Բարի գիշեր, մա՛յր,— նրա աչքերի մեջ նայելով ասաց խոխոլը, կռացավ և Նատաշայի հետևից դուրս եկավ նախասենյակ։

Մայրը նայեց որդուն, որ սենյակի շեմքում կանգնած ժպտում էր։

— Ի՞նչ ես ծիծաղում,— շփոթված հարցրեց մայրը։

— Այնպես, ուրախանում եմ։

— Իհարկե, ես պառավ եմ ու հիմար, բայց լավ բանը ես էլ եմ հասկանում,— թեթև վիրավորված նկատեց մայրը։

— Ուրեմն շատ լա՛վ է,— արձագանքեց որդին։— Լավ կանեիք, պառկեիք, քնելու ժամանակն է...

— Իսկույն կպառկեմ։

Նա դեսուդեն ընկավ սեղանի շուրջը՝ ամանեղենը հավա-

քելով, գոհ, նույնիսկ հաճելի վրդովմունքից քրտնած. նա ուրախ էր, որ ամեն ինչ այդպես լավ և խաղաղ վերջացավ։

— Լավ ես մտածել, Պավլո՛ւշա,— ասում էր նա։— Խոխոլը շատ սիրալիր մարդ է։ Իսկ օրիորդը, ա՜խ, ինչ խելոք է։ Ո՞վ է։

— Վարժուհի է,— հակիրճ պատասխանեց Պավելը՝ սենյակում շրջելով։

— Ասո՜ւմ եմ ախր՝ խեղճ է։ Վատ է հագնված, ախ, շատ վատ։ Մրսելը դժվա՞ր բան է։ Իսկ նրա ծնողները որտե՞ղ են...

— Մոսկվայում,— ասաց Պավելը և, մոր դիմաց կանգ առնելով, լուրջ, կամաց ասաց.

— Ա՛յ, տե՛ս, նրա հայրը հարուստ է, երկաթի առևտուր ունի, մի քանի տուն ունի։ Նրա համար, որ աղջիկն այս ճանապարհով է գնացել, հայրը դուրս է արել նրան։ Նրան բամբակի մեջ են պահել, ինչ որ քեֆն ուզել է, տվել են, իսկ հիմա, ա՛յ, գիշերը յոթ վերստ ճանապարհ է գնալու, մենակ...

Դա մորն ապշեցրեց։ Նա կանգնել էր սենյակի մեջտեղը և հոնքերը զարմացած շարժելով՝ լուռ նայում էր որդուն։ Ապա կամաց հարցրեց.

— Քաղա՞ք է գնալու։

— Այո՛։

— Վա՛յ։ Եվ չի՞ վախենում։

— Ա՛յ, տեսնո՞ւմ ես, չի վախենում,— ժպտաց Պավելը։

— Բայց ինչի՞ համար։ Այստեղ կգիշերեր, կպառկեր ինձ հետ։

— Անհարմար է։ Վաղն առավոտյան նրան կարող էին այստեղ տեսնել, իսկ դա մեզ համար լավ չի։

Մայրը, լուսամուտով մտախոհ նայելով, կամաց հարցրեց.

— Չեմ հասկանում, Պա՛շա, այստեղ ինչ վտանգավոր, արգելված բան կա։ Չէ՞ որ ոչ մի վատ բան չկա, հը՞։

Նա դրան վստահ չէր, ուզում էր որդուց դրական պատասխան լսել։ Որդին նրա աչքերին հանգիստ նայելով՝ հաստատապես ասաց.

— Վատ բան չկա։ Բայց և այնպես մեզ բոլորիս հետագայում բանտ է վիճակված։ Դե՛, դու այդպես էլ իմացիր...

Մոր ձեռքերը դողացին։ Նվաղած ձայնով նա շշնջաց.

— Բայց գուցե աստված անի, մի կերպ անցնի՞...

— Ո՛չ,— քնքշությամբ ասաց որդին։— Ես քեզ խաբել չեմ կարող։ Չի անցնի։

Պավելը ժպտաց։

— Պառկի՛ր։ Չէ՞ որ հոգնել ես, մայրի՛կ։ Բարի գիշեր։

Մենակ մնալով, մայրը մոտեցավ պատուհանին ու կանգնեց նրա առջև՝ փողոցը նայելով։

Լուսամուտից դուրս ցուրտ էր և մութ։ Քամին խաղում էր՝ փոքրիկ, քնած տների տանիքների ձյունը ցած փչելով, զարկվում էր պատերին և շտապով ինչ-որ բան էր շշնջում, ընկնում էր գետին և փողոցներով քշում չոր ձյունի փաթիլների ամպերը...

— Հիսուս Քրիստո՛ս, գթա՛ մեզ,— կամաց շշնջաց մայրը։

Նրա սրտում եռ էին գալիս արտասուքները, և գիշերային թիթեռի պես կուրորեն ու ողբագին թրթռում էր այն վշտի սպասումը, որի մասին այնպես հանգիստ ու վստահ խոսում էր որդին։ Նրա աչքերի առջև կանգնեց տափարակ, ձյունե հարթությունը։ Սառն ու բարակ սուլելով՝ թռչում, թպրտում է սպիտակ ձյունախառն քամին։ Հարթության մեջտեղով տարուբերվելով միայնակ գնում է աղջկա փոքրիկ, մութ կերպարանքը։ Քամին խճճվում է նրա ոտների արանքում, ուռցնում շրջազգեստը, նրա երեսին նետում ձյունի սառցակալած փաթիլները։ Գնալը դժվար է, փոքրիկ ոտները խրվում են ձյունի մեջ։ Ցուրտ է և երկյուղալի։ Աղջիկը կռացել է, և ասես աշնան կայտառ քամու բերանն ընկած մի շյուղ լինի աղոտ այդ հարթության մեջտեղում։ Աղջկա աջ կողմը, ճահճից վեր, մութ պատի պես անտառն է կանգնած։ Այնտեղ թախծագին սկսվում են բարակ, մերկ կեչիներն ու կաղամախիները։ Ավելի այն կողմը, հեռվում հազիվ կայծկլտում են քաղաքի լույսերը։

— Տե՛ր, գթա՛ մեզ,— շշնջաց մայրը, վախից ցնցվելով...

VII

Օրերը սահում էին իրար հետևից համրիչի հատիկների պես՝ շաբաթներ, ամիսներ կազմելով։ Ամեն շաբաթ օր Պավելի մոտ էին գալիս ընկերները, ամեն մի ժողով հանդիսանում էր երկար, թեք սանդուղքի մի աստիճան, սանդուղք, որը մարդկանց դանդաղորեն բարձրացնելով՝ տանում էր դեպի հեռավոր մի վայր։

Հայտնվում էին նոր մարդիկ։ Վլասովների փոքր սենյակում նեղվածք էր լինում և օդը հեղձուցիչ էր դառնում։ Գալիս էր Նատաշան սառած ու հոգնած, բայց միշտ անսահման ուրախ և կայտառ։ Մայրը նրա համար գուլպաներ էր գործել և իր ձեռքով հագցրել նրա փոքրիկ ոտներին։ Նատաշան սկզբում ծիծաղում էր, բայց հետո հանկարծ լռեց, մտածեց և կամաց ասաց.

— Ես մի դայակ ունեի, նույնպես զարմանալի բարի էր։ Ի՞նչ տարօրինակ բան է, Պելագեյա՛ Նիլովնա,— բանվոր ժողովուրդն ապրում է այսպիսի դժվարին, այսպիսի զրկված կյանքով, բայց տես, որ նա ավելի մեծ սիրտ ունի, ավելի բարի է, քան նրա՞նք։

Եվ ձեռքը շարժեց՝ ցույց տալով ինչ-որ հեռու, իրենից շատ հեռու մի տեղ։

— Ա՛յ թե ինչպիսին եք դուք,— ասաց Վլասովան։— Զրկվել եք ծնողներից և ամեն ինչից,— նա չկարողացավ ավարտել իր միտքը, հառաչեց և լռեց՝ նայելով Նատաշայի դեմքին, ներքուստ նրանից շնորհակալ լինելով ինչ-որ բանի համար։ Նա նստել էր հատակին աղջկա առջև, իսկ աղջիկը մտախոհ ժպտում էր՝ գլուխը կախ։

— Ծնողներից զրկվե՞լ եմ,— կրկնեց նա։— Դա վնաս չունի։ Հայրս այնպես կոպիտն էր, եղբայրս նույնպես։ Հարբեցող էլ է։ Մեծ քույրս դժբախտ է... Մի մարդու է գնացել, որ շատ մեծ է իրենից... Շատ հարուստ, ձանձրալի, ագահ մարդ է։ Մորս եմ խղճում։ Մայրս պարզ կին է, ձեզ նման։ Այնպես փոքր է, կարծես մուկ լինի, նա էլ ձեզ նման արագ-արագ է քայլում և ամենքից վախենում է։ Երբեմն այնպե՞ս եմ ուզում տեսնել նրան։

— Իմ խե՞ղճ աղջիկ,— գլուխը տխուր օրորելով ասաց մայրը։

Աղջիկն արագ վեր նետեց գլուխը և ձեռքը մեկնեց, կարծես ինչ-որ բան ետ հրելով։

— Օ՜, ո՜չ։ Ես երբեմն այնպիսի՞ ուրախություն եմ զգում, այնպիսի՞ երջանկություն։

Նրա դեմքը գունատվեց, և կապույտ աչքերը պայծառ բոցավառվեցին։ Ձեռները մոր ուսերին դնելով՝ նա խոր ձայնով կամաց և ազդու ասաց.

— Եթե դուք իմանայիք... եթե դուք հասկանայիք, թե ի՞նչ մեծ գործ ենք անում մենք...

Նախանձին մոտ մի բան շոշափեց Վլասովայի սիրտը։ Հատակից վեր կենալով՝ նա տխրությամբ ասաց.

— Ես արդեն ծեր եմ դրա համար, անգրագետ...

...Պավելն ավելի ու ավելի հաճախ և ավելի շատ էր խոսում, ավելի տաք-տաք էր վիճում ու նիհարում։ Մորը թվում էր, թե երբ որդին խոսում է Նատաշայի հետ կամ նայում է նրան, նրա խիստ աչքերն ավելի մեղմ են փայլում, ձայնն ավելի սիրալիր է հնչում և ինքն ամբողջովին ավելի պարզ է դառնում։

«Աստված հաջողի»,— մտածում էր մայրը։ Եվ ժպտում էր։

Միշտ ժողովներում հենց որ վեճերն սկսում էին չափից ավելի տաք և փոթորկալի բնույթ ստանալ, խոխոլը վեր էր կենում և զանգի լեզվակի պես տատանվելով՝ իր զիլ, զողանջուն ձայնով ինչ-որ պարզ և բարի բան էր ասում, որից ամենքն ավելի հանգիստ ու լուրջ էին դառնում։ Վեսովշչիկովը միշտ մռայլորեն շտապեցնում էր ամենքին, ինչ-որ մի տեղ, նա և կարմրաշեկը, որին Սամոյլով էին անվանում, առաջինն էին սկսում բոլոր վեճերը։ Նրանց հետ համաձայնում էր կլորագլուխ, խարտյաշ, կարծես մոխրաջրով լվացված, Իվան Բուկինը։ Յակով Սոմովը, կոկլիկ ու մաքուր, խոսում էր քիչ, կամաց, լուրջ ձայնով. նա և լայնաճակատ Ֆեդյա Մազինը վեճերի ժամանակ միշտ Պավելի և խոխոլի կողմն էին բռնում։

Երբեմն Նատաշայի փոխարեն քաղաքից գալիս էր Նիկոլայ Իվանովիչը, սև ակնոցով, բաց գույնի փոքրիկ մորուքով մի մարդ, մի ինչ-որ հեռավոր նահանգում ծնված,— նա խոսում էր մի առանձին արտասանությամբ՝ օ տառը շեշտից առաջ օ արտասանելով*։ Նա ընդհանրապես տեղվը մեկ օտարոտի մի մարդ էր։ Նա պատմում էր պարզ բաներ՝ ընտանեկան կյանքի մասին, մանուկների մասին, առևտրի մասին, հացի ու մսի գների մասին, այն ամենի՝ ինչով մարդիկ ապրում են ամեն օր։ Եվ ամեն բանի մեջ նա գտնում էր կեղծիք, խառնաշփոթություն, ինչ-որ տխմար, երբեմն ծիծաղելի բան, որոնք միշտ ակնհայտորեն ձեռնատու չէին մարդկանց։ Մորը թվում էր, թե

* Օ տառը ռուս գրական լեզվում և շատ նահանգների բարբառներում շեշտից առաջ մոտավորապես ա է հնչում, կան բացառություն կազմող շրջաններ, ուր օ-ն միշտ հնչում է օ։ Ռ. բ.։

նա եկել է մի շատ հեռու տեղից, մի ուրիշ թագավորությունից, ուր ամենքն ապրում են աղնիվ և հեշտ կյանքով, իսկ այստեղ ամեն ինչ խորթ է նրա համար, նա չի կարողանում սովորել այս կյանքին, վարժվել դրան իբրև անհրաժեշտության, այս կյանքը դուր չի գալիս նրան և նրա մեջ հանգիստ, համառ ցանկություն է զարթնեցնում վերակառուցել ամեն ինչ իր ձևով։ Նրա դեմքը դեղնավուն էր, աչքերի շուրջը բարակ, ճառագայթանման կնճիռներ կային, ձայնը հանդարտ էր, իսկ ձեռները՝ միշտ տաք։ Վլասովային բարևելիս՝ նա ամուր մատներով ընդգրկում էր նրա ամբողջ ձեռքը. այդպիսով ձեռք սեղմելուց հետո մարդու սիրտը թեթևանում էր, հանգստանում։

Քաղաքից ուրիշ մարդիկ էլ էին գալիս, ամենից շատ մի բարձրահասակ, վայելչակազմ օրիորդ, նիհար, գունատ դեմքով, ահագին աչքերով։ Նրան անվանում էին Սաշենկա։ Նրա քայլվածքի և շարժումների մեջ տղամարդավարի մի բան կար, նա բարկությամբ կիտում էր խիտ, թուխ հոնքերը, իսկ երբ խոսում էր, նրա ուղիղ քթի բարակ ռունգները ցնցվում էին։

Սաշենկան առաջինն էր, որ բարձրաձայն և խստությամբ ասաց.

— Մենք սոցիալիստներ ենք...

Երբ մայրը լսեց այդ բառը, լուռ երկյուղով հայացքը սևեռեց օրիորդի դեմքին։ Նա լսել էր, որ սոցիալիստներն են սպանել ցարին։ Դա մոր երիտասարդ ժամանակն էր. այն ժամանակ ասում էին, թե կալվածատերերը կամենալով վրեժխնդիր լինել ցարից այն բանի համար, որ նա գյուղացիներին ազատել է, ուխտեցին մազերը չխուզել այնքան ժամանակ, մինչև որ նրան չսպանեն, դրա համար էլ նրանց անվանում էին սոցիալիստներ։ Եվ հիմա մայրը չէր կարողանում հասկանալ՝ ինչո՞ւ սոցիալիստ են իր որդին և նրա ընկերները։

Երբ բոլորը ցրվեցին, նա Պավելին հարցրեց.

— Պավլո՛ւշա, մի՞թե դու սոցիալիստ ես։

— Այո՛,— ասաց նա մոր առջև կանգնած՝ ինչպես միշտ ուղիղ և հաստատուն։— Ի՞նչ կա որ։

Մայրը ծանր հառաչեց և աչքերը ցած գցելով հարցրեց.

— Ուղի՞ղ է արդյոք, Պավլո՛ւշա։ Չէ՞ որ նրանք ցարի դեմ են, չէ՞ որ նրանք մեկին սպանել են։

— Պավելը քայլեց սենյակում, ձեռքով այտը տրորեց և քրմծիծաղով ասաց.

— Մեզ դա հարկավոր չի՛։

Նա երկար ժամանակ խաղաղ ու լուրջ ձայնով մորն ինչ-որ բան էր ասում։ Մայրը նայում էր նրա դեմքին և մտածում.

«Նա ոչ մի վատ բան չի անի, չի՞ կարող»։

Դրանից հետո այն սարսափելի խոսքն սկսեց ավելի ու ավելի հաճախ կրկնվել, նրա սրությունը ջնջվեց և նույնպիսի սովորական բան դարձավ մոր ականջների համար, ինչպես տասնյակ այլ անհասկանալի բառեր։ Բայց Սաշենկան դուր չէր գալիս մորը և երբ նա գալիս էր, մայրը անհանգիստ ու անհարմար էր զգում իրեն...

Մի անգամ նա, դժգոհությամբ շրթունքները սեղմելով, խոխոլին ասաց.

— Սաշենկան մի տեսակ շա՜տ խիստ է։ Միշտ հրամայում է. դուք ա՛յս պետք է անեք, դուք ա՛յն պետք է անեք...

Խոխոլը բարձրաձայն ծիծաղեց։

— Ինչ որ ճիշտ է՝ ճիշտ է։ Մա՛յր, այդ ինչ լավ եք հասկացել։ Պա՛վել, ոնց է, հը՞։

Եվ աչքով անելով մորը՝ քմծիծաղով ասաց.

— Ազնվականությո՛ւն։

Պավելը սառը նկատեց.

— Սաշենկան լավ մարդ է։

— Դա ճիշտ է,— հաստատեց խոխոլը։— Միայն թե չի հասկանում, որ ինքը պետք է անի, իսկ մենք ուզում ենք անել և կարո՞ղ ենք անել։

Նրանք վեճի բռնվեցին ինչ-որ անհասկանալի բանի մասին։

Մայրը նկատել էր նաև, որ Սաշենկան ամենից խիստ վարվում է Պավելի հետ, երբեմն նա նույնիսկ գոռում էր որդու վրա։ Պավելը քմծիծաղով լռում էր և աղջկա դեմքին նայում այն մեղմ հայացքով, որով առաջ նայում էր Նատաշայի դեմքին։ Դա էլ դուր չէր գալիս մորը։

Երբեմն մորն ապշեցնում էր աղմկահույզ ուրախության այն տրամադրությունը, որ հանկարծակի և միատեսակ տիրում էր բոլորին։ Դա սովորաբար լինում էր այն երեկոները, երբ նրանք թերթերում կարդում էին արտասահմանի բանվոր ժողովրդի մասին։ Այն ժամանակ բոլորի աչքերը փայլում էին ուրախությամբ, բոլորը դառնում էին տարօրինակ, կարծես երեխաների պես երջանիկ, ծիծաղում էին ուրախ, պայծառ ծիծաղով, սիրալիր կերպով իրար ուսի էին խփում։

— Կեցցե՞ն ընկեր գերմանացիները,— գոռում էր մեկը՝ կարծես իր ուրախությամբ հարբած։

— Կեցցե՞ն Իտալիայի բանվորները,— գոչում էին մի ուրիշ անգամ։

Եվ այս աղաղակներն ուղարկելով մի ինչ-որ հեռավոր վայր, բարեկամներին, որոնք իրենց չէին ճանաչում և չէին կարող հասկանալ իրենց լեզուն, նրանք կարծես հավատացած էին, որ իրենց անծանոթ այդ մարդիկ լսում և հասկանում էին իրենց հրճվանքը։

Սիրո ընդգրկող զգացմունքով լի աչքերը պսպղացնելով՝ խոխոլն ասում էր.

— Լավ կլիներ նրանց նամակ գրեինք, հը՞։ Որպեսզի նրանք իմանային, որ Ռուսաստանում ապրում են իրենց բարեկամները, որոնք հավատում և նույն կրոնն են պաշտում, ինչ-որ նրանք, այստեղ ապրում են նույն նպատակներն ունեցող մարդիկ և ուրախանում են նրանց հաղթանակներով։

Եվ ամենքը երազկոտ, ժպիտները դեմքերին երկար խոսում էին ֆրանսիացիների, անգլիացիների և շվեդների մասին, ինչպես իրենց բարեկամների, իրենց սրտին մոտ մարդկանց մասին, որոնց հարգում են իրենք, ապրում են նրանց ուրախություններով, զգում նրանց վիշտը։

Նեղվածք սենյակում ծնվում էր ամբողջ երկրի բանվորների հոգևոր ազգակցության զգացումը։ Այդ զգացումն ամենքին ձուլում դարձնում էր մի հոգի, հուզելով նաև մորը. թեև նրա համար այդ զգացմունքն անհասկանալի էր, բայց դա շտկում, ուժ էր տալիս նրան՝ ուրախ և պատանեկան արբեցուցիչ ու հուսալի իր ուժով։

— Ի՞նչ մարդիկ եք դուք,— մի անգամ ասաց նա խոխոլին։— Ամենքը ձեր ընկերներն են՝ թե՛ հայ, թե՛ հրեա, թե՛ ավստրիացի, ամենքի համար է ձեր տխրությունը և ուրախությունը։

— Բոլորի՛ համար է, մա՛յրս, բոլորի՛,— բացականչեց խոխոլը։— Մեզ համար ազգեր չկան, ցեղեր չկան, կան միայն ընկերներ, միայն թշնամիներ։ Բոլոր բանվորները մեր ընկերներն են, բոլոր հարուստները, բոլոր կառավարությունները՝ մեր թշնամիները։ Երբ բարի աչքով հայացք ես գցում երկրի վրա, երբ տեսնում ես, թե ինչպես մենք՝ բանվորներս շատ ենք, որքան ուժ կա մեր մեջ, այնպիսի՞ ուրախություն է հա-

մակում սիրտդ, այնպիսի՞ մեծ տոն է տիրում կրծքիդ տակ։ Մա՛յր, և հենց այդպես են զգում թե՛ ֆրանսիացին, թե՛ գերմանացին, երբ նրանք նայում են կյանքի վրա, հենց այդպես է ուրախանում և՛ իտալացին։ Մենք բոլորս մի մոր զավակներ ենք, աշխարհիս բոլոր երկրների բանվոր ժողովուրդների եղբայրության անհաղթելի մտքի զավակներ։ Նա մեզ տաքացնում է, նա արևն է արդարադատության երկնքի վրա, իսկ այդ երկինքը բանվորի սրտումն է, և ով էլ որ նա լինի, ինչ էլ իրեն անվանի, սոցիալիստը միշտ մեր եղբայրն է առ ի հոգվո, այժմ և միշտ և հավիտյա՜նս հավիտենից։

Այս մանկական, բայց ամուր հավատն ավելի ու ավելի հաճախ էր ծագում նրանց մեջ, ավելի էր վսեմանում և աճում նրա հզոր ուժը։ Եվ երբ մայրը տեսնում էր այդ հավատը, նա նրա հզոր ուժը։ Եվ երբ մայրը տեսնում էր այդ հավատը, նա ակամա զգում էր, որ ճշմարտապես աշխարհում ծնվել է մի մեծ ու լուսավոր բան, երկնքի արևի նման, որ տեսանելի է իրեն։

Հաճախ երգեր էին երգում։ Հասարակ, ամենքին հայտնի երգերը երգում էին բարձր և ուրախ, բայց երբեմն երգում էին նորերը, մի տեսակ առանձնապես ներդաշնակ. բայց ոչ ուրախ և ոչ սովորական եղանակով։ Դրանք երգում էին կիսաձայն, լուրջ, ինչպես եկեղեցական երգը։ Երգիչների դեմքերը գունատվում էին, վառվում էին և հնչուն բառերում մեծ ուժ էր զգացվում։

Նոր երգերից հատկապես մեկը անհանգստացնում և հուզում էր մորը։ Այս երգի մեջ չէին լսվում վիրավորված և դառնակսկիծ տարակուսանքների մութ շավիղներում մեն-մենակ դեգերող հոգու տխուր մտորում, կարիքից ընկճված, երկյուղից վախեցած, անդեմ ու անգույն հոգու հեծեծանք։ Եվ նրանում չէին հնչում աղոտ կերպով ազատության իր ծարավն զգացող ուժի թախծոտ հառաչներ, քաջակորով կտրիճության մարտահրավեր աղաղակներ, կտրիճություն, որը հավասարապես պատրաստ է կործանել թե՛ չարը, թե՛ բարին։ Չկար նրանում վրեժի և վիրավորանքի կույր զգացումը, որն ընդունակ է խորտակել ամեն ինչ, անզոր է ստեղծել որևէ բան,— այդ երգի մեջ չէր լսվում հին, ստրկական աշխարհից մնացած ոչ մի բան։

Նրա կծու բառերը և խիստ եղանակը դուր չէին գալիս մորը, բայց բառերի և եղանակի տակ մի ավելի մեծ բան կար՝ այդ էր, որ իր ուժով խլացնում էր հնչյունն ու բառը և սրտի

մեջ արթնացնում մտքի համար անընդգրկելի ինչ-որ բանի նախազգացում։ Այդ բանը մայրը տեսնում էր երիտասարդների դեմքերին, աչքերում, նա զգում էր դա նրանց կրծքերում և բառերի հնչյունների մեջ չպարփակվող երգի ուժին անձնատուր լինելով՝ միշտ ականջ էր դնում նրան առանձին ուշադրությամբ, ավելի խորունկ հուզմունքով, քան բոլոր մնացած երգերը։

Այդ երգը երգում էին մյուսներից ավելի կամաց, բայց դա հնչում էր բոլորից ուժգին և մարդկանց ընդգրկում, ինչպես մարտ ամսին՝ վերահաս գարնան առաջին օրվա օդը։

— Ժամանակն է, որ այս երգը փողոցում երգենք,— մռայլ ասում էր Վեսովշչիկովը։

Երբ նրա հայրը նորից մի ինչ-որ բան գողացավ և բանտ նստեց, Նիկոլայն ընկերներին հանգիստ հայտարարեց.

— Հիմա ի՞նձ մոտ կարելի է հավաքվել...

Գրեթե ամեն երեկո աշխատանքից հետո Պավելի մոտ նստած էր լինում ընկերներից որևէ մեկը, և նրանք մտահոգված, լվացվել չհասցնելով, կարդում էին, ինչ-որ բան էին արտագրում գրքերից։ Ընթրում և թեյ էին խմում գրքերը ձեռքներին, և մոր համար ավելի ու ավելի անհասկանալի էին հնչում նրանց խոսքերը։

— Մեզ թերթ է հարկավոր,— հաճախ ասում էր Պավելը։

Կյանքը դառնում էր փութկոտ ու տենդային, մարդիկ ավելի ու ավելի արագ էին մի գրքից մյուսին անցնում, ինչպես մեղուներն են անցնում մի ծաղկից մյուսը։

— Մեր մասին խոսում են,— մի անգամ ասաց Վեսովշչիկովը։— Մեզ շուտով բռնելու են...

— Լորը հենց նրա համար է ստեղծված, որ ցանցն ընկնի,— արձագանքեց խոխոլը։

Քանի գնում, նա այնքան շատ էր դուր գալիս մորը։ Երբ ասում էր «մայր», այդ բառը կարծես փաղաքշում էր իր այտերը փափլիկ, մանկական ձեռքով։ Կիրակի օրերը Պավելը երբ ժամանակ չէր ունենում, խոխոլն էր փայտ կոտրում, մի անգամ նա եկավ ուսին մի տախտակ և կացինը վերցնելով արագ ու հմտությամբ փոխեց փոքրիկ սանդուղքի փտած աստիճանը, մի ուրիշ անգամ նույնպես աննկատելի կերպով նորոգեց ընկած ցանկապատը։ Աշխատելիս նա սուլում էր, և նրա սուլոցը թախծալի գեղեցիկ էր։

Մի անգամ մայրը որդուն ասաց.

— Արի խոխոլին մեզ ճաշորդ վերցնենք։ Երկուսիդ համար էլ լավ կլինի, իրար մոտ չեք վազի։

— Ինչո՞ւ ձեզ նեղություն պատճառենք,— հարցրեց Պավելն ուսերը թոթվելով։

— Բա՞ն ասացիր դու էլ։ Ամբողջ կյանքումս նեղություն եմ քաշել՝ չիմանալով, թե ինչու. լավ մարդու համար կարելի է։

— Ինչպես ուզում եք՝ արե՛ք,— արձագանքեց որդին։— Եթե նա գա, ես ուրախ կլինեմ...

Եվ խոխոլը նրանց մոտ փոխադրվեց։

VIII

Ավանի ծայրի փոքր տունը մարդկանց ուշադրությունն է գրավում. տասնյակ կասկածավոր հայացքներ արդեն շոշափել էին նրա պատերը։ Նրա վրա անհանգիստ ճախրում էին ասեկոսեների խայտաբղետ թևերը. մարդիկ աշխատում էին վախեցնելով վեր թռցնել, երևան բերել ձորակի գլխի տան պատերի հետևում թաքնված մի ինչ-որ բան։ Գիշերները նայում էին պատուհաններից, երբեմն մեկը զարկում էր ապակուն և շտապ, վախեցած փախչում հեռանում։

Մի անգամ փողոցում Վլասովային կանգնեցրեց պանդոկապետ Բեգունցովը, մի բարետես ծերուկ, որը միշտ սև մետաքսե վզնոց էր կրում կարմիր թորշոմած վզին, և բաց մանուշակագույն պլյուշե հաստ ժիլետ։ Նրա սուր և փայլուն քթին բազմած էր կրեոսկրե շրջանակով ակնոց, և դրա համար նրան անվանում էին Ոսկրե Աչքեր։

Վլասովային կանգնեցնելով, մի շնչով և առանց պատասխանին սպասելու, նրա վրա այսպիսի ճռճռան և չոր խոսքեր սկսեց թափել.

— Պելագե՛յա Նիլովնա, ինչպե՞ս եք։ Որդիդ ինչպե՞ս է։ Ձե՞ք ամուսնացնում, հը՞։ Ամուսնանալու համար լավ հասած տղա է։ Որքան շուտ ամուսնանա տղան, այնքան ծնողների համար հանգիստ է։ Ընտանիքը մարդուս ավելի լավ է պահում թե՛ հոգով, թե՛ մարմնով, ընտանիքում մարդ թթու դրած սունկի նման է։ Ձեր տեղը ես լինեի, կամուսնացնեի նրան։ Մեր ժամանակը պահանջում է խիստ հսկել մարդ արարածին, մարդիկ սկսում են ապրել իրենց գլխու։ Մարդկանց մտքերը խառնաշփոթվել են, և արարքները գովական չեն։ Երիտասարդներն

աստծու եկեղեցին բանի տեղ չեն դնում, հանրային տեղերից հեռու են մնում և գաղտնի, անկյուններում հավաքվելով փըսփըսում են։ Ինչո՞ւ են փսփսում, թույլ տվեք իմանալ։ Ինչո՞ւ են մարդկանցից հեռու փախչում։ Այն, ինչ մարդ չի համարձակվում ասել մարդկանց մոտ, պանդոկում՝ օրինակ, դա ի՞նչ բան է։ Գաղտնիք է։ Իսկ գաղտնիքի տեղը մեր սուրբ, առաքելական եկեղեցին է։ Մնացած բոլոր գաղտնագործությունները, որ անկյուններում են կատարվում, խելքի մոլորությունից են։ Մնաք բարո՛վ։

Սեթևեթաբար կորացրած ձեռքով նա գդակը վերցրեց, օդի մեջ շարժեց ու գնաց՝ մորը տարակուսանքի մեջ թողնելով։

Վլասովների հարևանուհի Մարյա Կորսունովան, մի դարբնի այրի, որ գործարանի դարպասի մոտ ուտելեղեն էր վաճառում, մորը շուկայում տեսնելով, նույնպես ասաց.

— Որդուդ հետևի՛ր, Պելագե՛յա։

— Ի՞նչ կա որ,— հարցրեց մայրը։

— Խոսում են,— խորհրդավոր կերպով հաղորդեց Մարյան։— Լավ չեն խոսում, մա՛յրս։ Իբր թե նա այնպիսի արտել է սարքում, ինչպես խլիստներինն է։ Դա մի աղանդ է։ Իրար կծեծեն, ինչպես խլիստներն են անում...

— Հերի՛ք է, Մա՛րյա, հիմարություններ դուրս տաս։

— Դուրս տվողը չի ստողը, այլ ինքը՝ հնարողը,— արձագանքեց առևտրական կինը։

Մայրը որդուն հաղորդում էր այս բոլոր խոսքերը, որդին լուռ թոթվում էր ուսերը, իսկ խոխոլը ծիծաղում էր իր թավ, մեղմ ծիծաղով։

— Աղջիկներն էլ են ձեզանից նեղանում,— ասում էր մայրը։— Դուք ամեն մի աղջկա համար նախանձելի փեսացու եք և բոլորդ լավ բանվորներ, չխմող, բայց աղջիկների վրա ուշադրություն չեք դարձնում։ Ասում են, թե քաղաքից ձեզ մոտ են գալիս խայտառակ բարքի տեր աղջիկներ...

— Է՛, իհարկե,— դեմքը զզվանքով կնճռելով՝ բացականչեց Պավելը։

— Ճահճում ամեն բանից փտածի հոտ է գալիս,— հառաչելով ասաց խոխոլը։— Իսկ դուք, մա՛յր, բացատրեք նրանց, այդ հիմար աղջիկներին, թե ի՛նչ բան է ամուսնությունը, որ չշտապեին ջարդել իրենց ոսկորները...

— Է՛հ, սիրելիս,— ասաց մայրը,— նրանք վիշտը տեսնում

են, հասկանում են, բայց ախր ո՞ւր գնան, բացի դրանից էլ տեղ չունեն։

— Վատ են հասկանում, թե չէ ճանապարհը կգտնեին,— նկատեց Պավելը։

Մայրը նայեց նրա խիստ դեմքին։

— Իսկ դուք սովորեցրե՛ք նրանց։ Ի՞նչ կլիներ՝ ձեզ մոտ կանչեիք նրանց մեջ եղած խելոքներին։

— Դա անհարմա՞ր է,— չոր-չոր արձագանքեց որդին։

— Իսկ եթե փորձե՞նք,— հարցրեց խոխոլը։

Պավելը մի քիչ լուռ մնաց, ապա պատասխանեց.

— Կսկսեն տղա ու աղջիկ զույգ-զույգ ման գալ, հետո մի քանիսը կամուսնանան, դրանով էլ բանը կվերջանա։

Մայրը խորհել սկսեց։ Պավելի կուսակրոնային խստությունը շվարեցնում էր նրան։ Նա տեսնում էր, որ որդու խորհուրդները լսում են նույնիսկ այն ընկերները, որոնք խոխոլի պես իրենից տարիքով մեծ են, բայց մորը թվում էր, թե բոլորը նրանից վախենում են և ոչ ոք նրան չի սիրում այդ չորության համար։

Մի անգամ, երբ մայրը պառկել էր քնելու, իսկ որդին ու խոխոլը դեռ կարդում էին, նա բարակ միջնորմի միջով ականջ դրեց նրանց կամաց խոսակցությանը։

— Նատաշան ինձ դուր է գալիս, գիտե՞ս,— հանկարծ կամաց բացականչեց խոխոլը։

— Գիտեմ,— ոչ իսկույն պատասխանեց Պավելը։

Լսելի էր, թե խոխոլն ինչպես դանդաղորեն վեր կացավ և սկսեց շրջել։ Հատակին թփթփում էին նրա բոբիկ ոտները։ Եվ հնչեց մեղմ, թախծալի սուլոց։ Ապա նորից ղողանջեց նրա ձայնը.

— Իսկ նա ինքը նկատո՞ւմ է։

Պավելը լուռ էր։

— Ի՞նչ ես կարծում,— ձայնը ցածրացնելով՝ հարցրեց խոխոլը։

— Նկատո՛ւմ է,— պատասխանեց Պավելը։— Դրա համար էլ հրաժարվեց պարապել մեզ մոտ...

Խոխոլը ծանր-ծանր քարշ էր տալիս ոտները հատակի վրա, և սենյակում նորից էր դողդողում նրա մեղմ սուլոցը։ Ապա նա հարցրեց.

— Իսկ եթե ես նրան ասե՞մ...

— Ի՞նչ։

— Որ ես, ա՛յ...— կամաց սկսեց խոխոլը։

— Ինչո՞ւ,— ընդհատեց նրան Պավելը։

Մայրը լսեց, թե խոխոլն ինչպես կանգ առավ, և զգաց, որ խոխոլը ժպտում է։

— Դե ես, գիտե՞ս, կարծում եմ, եթե սիրում ես մի աղջկա, հարկավոր է նրան ասել այդ, թե չէ ի՞նչ միտք ունի։

Պավելը բարձր շրխկոցով փակեց գիրքը։ Լսվեց նրա հարցը.

— Իսկ դու ի՞նչ օգուտ ես սպասում դրանից։

Երկուսն էլ երկար ժամանակ լուռ էին։

— Հը՞,— հարցրեց խոխոլը։

— Անդրե՛յ, հարկավոր է պարզ պատկերացնել, թե ինչ ես ուզում,— դանդաղ խոսեց Պավելը։— Ասենք թե նա էլ քեզ է սիրում, ես չեմ կարծում, բայց ենթադրենք՝ այդպե՛ս է։ Եվ դուք ամուսնացաք։ Հետաքրքիր ամուսնություն է, ինտելիգենտուհի և բանվո՞ր։ Ծնվում են երեխաներ, մենակ քնրդ պետք է աշխատես... և շա՛տ։ Ձեր կյանքը կդառնա մի կտոր հացի համար, երեխաների, բնակարանի համար վարած կյանք. գործի համար դուք արդեն չկաք։ Երկուսդ էլ չկա՞ք։

Լռություն տիրեց։ Ապա Պավելն սկսեց խոսել կարծես ավելի մեղմ.

— Ավելի լավ է՝ դու այդ բանից ձե՛ռ քաշիր, Անդրե՛յ։ Եվ նրան մի՛ վրդովիր...

Լռեցին։ Որոշակի զարկում է ժամացույցի ճոճանակը, համաչափ անջատելով վայրկյանները։

Խոխոլն ասաց.

— Սրտիս կեսը սիրում է, կեսն ատում,— մի՞թե սա սիրտ է, հա՞։

Գրքի էջերը շխշխկացին, երևի Պավելը նորից սկսեց կարդալ։ Մայրը պառկել էր՝ աչքերը փակած և վախենում էր շարժվել։ Նա այնքան էր խղճում խոխոլին, որ քիչ էր մնում լացը գար, բայց է՛լ ավելի էր խղճում որդուն։ Նա որդու մասին մտածում էր.

«Սիրելիս...»

Հանկարծ խոխոլը հարցրեց.

— Ուրեմն լռե՞լ։

— Դա ավելի աղնիվ բան կլինի,— կամաց ասաց Պավելը։

— Այդ ճանապարհով էլ կգնանք,— ասաց խոխոլը։ Եվ մի քանի վայրկյանից հետո շարունակեց թախծոտ ու կամաց։

— Քեզ համար դժվար է լինելու, Պա՛շա, երբ ինքդ այ այսպես...

— Ինձ համար արդեն դժվար է...

Քամին տան պատերին էր զարնվում։ Ժամացույցի ճոճանակը որոշակի հաշվում էր անցնող ժամանակը։

— Այս բանի վրա ծիծաղել չի լինի,— դանդաղ ասաց խոխոլը։

Մայրը դեմքը խրեց բարձի մեջ և անձայն լաց եղավ։

Անդրեյն առավոտյան մորը թվաց ավելի կարճահասակ և է՛լ ավելի սիրելի, իսկ որդին, ինչպես միշտ՝ նիհար, ուղղաձիգ և լուսակյաց։ Մայրը խոխոլին առաջ անվանում էր Անդրեյ Օնիսիմովիչ, իսկ այդ օրը՝ առանց նկատելու՝ ասաց նրան.

— Անդրյուշա, լավ կլիներ կոշիկներդ կարկատելու տայիք, այդպես ոտներդ կմրսեցնեք։

— Ռոճիկ ստանալիս ես նորը կգնեմ,— պատասխանեց Անդրեյը, ծիծաղեց և հանկարծ իր երկար ձեռքը նրա ուսին դնելով հարցրեց.— բայց գուցե դուք հենց իմ հարազատ մայրն եք։ Միայն թե չեք ուզում այդ բանը խոստովանել մարդկանց առաջ, որովհետև ես շատ տգեղ եմ, հա՞։

Մայրը լուռ խփեց նրա ձեռքին։ Նա ուզում էր շատ սիրալիր խոսքեր ասել խոխոլին, բայց սիրտը խղճահարությունից սեղմվել էր, և բառերը լեզվից ցած չէին գալիս։

IX

Ավանում խոսում էին սոցիալիստների մասին, որոնք կապույտ թանաքով գրված թռուցիկներ են ցրում։ Այդ թռուցիկներում զայրույթով էին գրում գործարանում տիրող կարգերի մասին, Պետերբուրգում և հարավային Ռուսաստանում բանվորների գործադուլների մասին, բանվորներին կոչ էին անում միանալ և պայքարել իրենց շահերի համար։

Գործարանում լավ վաստակ ունեցող հասակավոր մարդիկ հայհոյում էին։

— Խռովարարնե՛ր։ Այդպիսի բաների համար պետք է ձեր մռո՛ւթը ջարդել։

Եվ թռուցիկները բերում էին գրասենյակ։ Եբիտասարդները հափշտակությամբ էին կարդում.

— Ճի՜շտ է։

Մեծամասնությունն աշխատանքից ճնշված և դեպի ամեն բան անտարբեր՝ ծույլ-ծույլ արձագանքում էր.

— Բան չի դուրս գա. մի՞թե կարելի է։

Բայց թռուցիկները հուզում էին մարդկանց, և եթե մի շաբաթ թռուցիկ չէր լինում, մարդիկ արդեն ասում էին իրար.

— Երևի ձեռք են քաշել տպելուց...

Բայց երկուշաբթի օրը թռուցիկները նորից էին հայտնվում, և բանվորները նորից խուլ աղմկում էին։

Պանդոկում և գործարանում նկատվում էին նոր, ամենքին անծանոթ մարդիկ։ Նրանց հարցուփորձ էին անում, դիտում, ամեն ինչ հոտոտում և ամենքի աչքին ընկնում, ոմանք կասկածելի զգուշությամբ, ոմանք էլ ավելորդ տեղը մարդկանց կպչելով։

Մայրը հասկանում էր, որ որդու կատարած գործն է բարձրացրել այդ աղմուկը։ Նա տեսնում էր, թե ինչպես են մարդիկ հավաքվում նրա շուրջը, և Պավելի վիճակի համար ունեցած երկյուղը միանում էր նրանով հպարտանալու զգացմունքի հետ։

Մի անգամ երեկոյան Մարյա Կորսունովան փողոցից ծեծեց պատուհանը, և երբ մայրը փեղկը բաց արավ, Կորսունովան բարձր շշուկով ասաց.

— Զգո՜ւյշ, Պելագե՛յա, հոտն առե՛լ են։ Որոշված է գիշերս խուզարկություն կատարել ձեզ մոտ, Մազինի մոտ, Վեսովշչիկովի մոտ...

Մարյայի հաստ շրթունքներն շտապ-շտապ իրար էին շրրպպում, մսոտ քիթը մշմշում էր, աչքերը թարթվում և մի կողմից մյուս կողմն էին խեթվում, փողոցում ինչ-որ մեկի հետևելով։

— Իսկ ես ոչինչ չգիտեմ և քեզ ոչինչ չեմ ասել, և նույնիսկ քեզ չեմ տեսել այսօր, լսո՞ւմ ես։

Նա անհետացավ։

Մայրը պատուհանը փակելով՝ դանդաղ ընկավ աթոռի վրա։ Բայց որդուն սպառնացող վտանգի գիտակցությունը նրան արագ ոտի կանգնեցրեց, նա շտապ հագնվեց, հայտնի չէ, թե ինչու՝ գլուխը շալով ամուր փաթաթեց և վազեց Ֆեդյա Մազինի մոտ,— նա հիվանդ էր ու չէր աշխատում։ Երբ մայրը եկավ, նա պատուհանի առաջ նստած գիրք էր կարդում և ձախ ձեռքով ճոճում էր աջը՝ բութ մատը շոռած։ Նորությունը իմանալով, նա արագ վեր թռավ, դեմքը գունատվեց։

— Ա՛յ քեզ փորձա՜նք...— մրմնջաց նա։

— Ի՞նչ պետք է անել,— դողացող ձեռքով դեմքից քրտինքը սրբելով՝ հարցրեց Վլասովան։

— Կացե՛ք, մի՛ վախեցեք,— պատասխանեց Ֆեդյան՝ դողդղ ձեռքով գանգուր մազերը շոյելով։

— Ինքներդ էլ եք վախենում,— բացականչեց մայրը։

— Ե՞ս։— Ֆեդյայի այտերը շառագունեցին, և նա ամոթահար ժպտալով ասաց.— Հա-ա, սատանա՜ն... Պետք է Պավելին ասել։ Ես իսկույն մարդ կուղարկեմ նրա մոտ։ Դուք գնացե՛ք, բան չկա՜։ Հո չե՞ն ծեծելու։

Տուն վերադառնալով՝ մայրը ժողովեց բոլոր գրքերը և կրծքին սեղմած՝ երկար ժամանակ շրջում էր տանը՝ մտիկ տալով վառարանի մեջ, վառարանի տակը և նույնիսկ ջրի տակառի մեջ։ Նրան թվում էր, թե Պավելն իսկույն գործը կթողնի ու տուն կգա, բայց նա չէր գալիս։ Վերջապես նա հոգնած նստեց խոհանոցում երկար նստարանին՝ գրքերը տակը դնելով և վախենալով վեր կենալ, այդպես նստեց այնքան ժամանակ, մինչև որ գործարանից եկան Պավելն ու խոխոլը։

— Գիտե՞ք,— բացականչեց մայրը՝ վեր չկենալով։

— Գիտենք,— ժպտալով ասաց Պավելը։— Վախենո՞ւմ ես։

— Այնպե՜ս եմ վախենում, այնպե՜ս եմ վախենում...

— Պետք չի՛ վախենալ,— ասաց խոխոլը։— Դա ոչ մի օգուտ չի տա։

— Նույնիսկ ինքնաեռը չես գցել,— նկատեց Պավելը։

Մայրը վեր կացավ և, գրքերը ցույց տալով, ամոթահար բացատրեց.

— Ախր ես, ա՛յ, շարունակ սրանք էի...

Որդին և խոխոլը ծիծաղեցին. դա մորը քաջալերեց։ Պավելը վերցրեց մի քանի գիրք և տարավ բակում թաքցնելու, իսկ խոխոլն ինքնաեռը գցելով ասում էր.

— Բոլորովին սարսափելի բան չկա, մա՛յր, միայն մարդ ամաչում է նրանց փոխարեն, որ դատարկ բաներով են զբաղվում։ Հասակն առած մարդիկ կգան ֆուրը կողքներից կախ, կոշիկներին խթաններ ու ամեն տեղ տակնուվրա կանեն։ Մահճակալի տակը մտիկ կտան և վառարանի տակը, մառան կա՝ մառանը կմտնեն, տանիքը կբարձրանան։ Այնտեղ նրանց ոեխ-

ներին սարդի ոստայն կնստի, կփոշտան։ Զանձրալի է նրանց համար, ամաչում են և այնպես են ձևացնում, թե շատ չար մարդիկ են և ձեզ վրա բարկանում են։ Զազրելի գործ է, նրանք ախր գիտեն։ Մի անգամ ինձ մոտ ամեն ինչ տակնուվրա արին, ամոթահարվեցին և հեռացան ուղղակի, իսկ մի ուրիշ անգամ ինձ էլ հետները տարան։ Բանտ նստեցրին, մի չորս ամիս նստեցի։ Նստում ես այնքան, մինչև որ կանչում են իրենց մոտ, փողոցով տանում զինվորներով, որևէ բան հարցնում։ Նրանք խելոք մարդիկ չեն, անհեթեթ բաներ են ասում, մի քիչ խոսում են, նորից զինվորներին հրամայում՝ բանտ տանել։ Այդպես էլ այստեղ-այնտեղ են քարշ տալիս, չէ՞ որ դրա համար ոռճիկ են ստանում։ Իսկ հետո ազատ բաց են թողնում, ուրիշ ոչի՛նչ։

— Ինչպե՞ս եք միշտ այդպես խոսում, Անդրյո՛ւշա,— բացականչեց մայրը։

Ինքնաեռի մոտ ծունկի իջած՝ խոխոլը եռանդով փչում էր խողովակի մեջ, բայց այդ րոպեին բարձրացրեց լարումից կարմրած դեմքը և, երկու ձեռքով ընչացքներն ուղղելով, հարցրեց.

— Ինչպե՞ս եմ խոսում, որ։

— Այնպես, որ կարծես ձեզ երբեք ոչ ոք չի վիրավորել...

Խոխոլը կանգնեց և գլուխը թափահարելով ասաց ժպտադեմ.

— Բայց մի՞թե աշխարհումս որևէ տեղ չվիրավորված մարդ կա։ Ինձ այնքան են վիրավորել, որ ես վիրավորվելուց արդեն հոգնել եմ։ Ի՞նչ կարող ես անել, եթե մարդիկ ուրիշ կերպ վարվել չեն կարողանում։ Վիրավորանքները գործ կատարելուն խանգարում են, դրանց վրա կանգ առնել՝ նշանակում է ժամանակ կորցնել զուր տեղը։ Կյանքն այդպես է։ Ես, առաջ պատահում էր, բարկանում էի մարդկանց վրա, բայց մտածեցի տեսա՝ չարժե։ Ամեն մեկը վախենում է, որ չլինի թե հարևանն իրեն խփի, և աշխատում է ավելի շուտ ինքը ծեփել հարևանի ականջին։ Այսպես է կյանքը, մայրս։

Հանդարտ հոսում էր նրա ճառը, հեռու վանելով խուզարկության սպասելուց առաջացած տագնապը, նրա ուռուցիկ աչքերը պայծառ վառվում էին, և նա՝ տեղովը մեկ, թեկուզ քիչ անճոռնի, բայց ճարտար էր։

Մայրը հառաչեց և ջերմագին մաղթեց նրան.

— Աստված ձեզ երջանկություն տա, Անդրյո՛ւշա։

Խոխոլը լայն քայլ արեց դեպի ինքնաեռը, նորից պպզեց նրա առջև և կամաց մրմնջաց.

— Երջանկություն թե տան՝ չեմ հրաժարվի, բայց ինքս չեմ խնդրի։

Պավելը բակից եկավ, վստահ ասաց.

— Ջեն գտնի,— և սկսեց լվացվել։

Ապա ամուր և խնամքով ձեռքերը սրբելով՝ ասաց.

— Մայրի՛կ, եթե դուք նրանց ցույց տաք, թե վախեցել եք, նրանք կմտածեն՝ նշանակում է այս տանը մի բան կա, որ նա այսպես դողում է։ Դուք հո հասկանում եք, մենք վատ բան չենք ուզում, մեր կողմն է ճշմարտությունը, և ամբողջ կյանքում մենք աշխատելու ենք դրա համար, ահա՛ մեր ամբողջ մեղքը։ Էլ ինչո՞ւ վախենանք։

— Պա՛շա, ես ինձ կհավաքեմ,— խոստացավ մայրը։ Եվ ապա նրա բերանից դուրս թռավ վշտագին.— դոնե շո՛ւտ գային նրանք։

Բայց նրանք այդ գիշեր չեկան, և մյուս օրն առավոտյան, կանխելով երիտասարդների ծաղրը իր երկյուղի համար, մայրն առաջինն սկսեց իր վրա կատակել.

— Գելը չտեսած՝ ահն առա։

X

Նրանք եկան տագնապալից գիշերվանից գրեթե մեկ ամիս անց։ Պավելի մոտ նստած էր Նիկոլայ Վեսովշչիկովը և Անդրեյի հետ միասին երեքով խոսում էին իրենց թերթի մասին։ Ուշ էր, կեսգիշերին մոտ։ Մայրն արդեն պառկած էր և քնելիս նինջի միջով լսում էր մտահոգ կամացուկ ձայները։ Ահա Անդրեյն զգուշությամբ քայլելով անցավ խոհանոցով, դուռն իր հետևից կամաց փակեց։ Նախասենյակում զնգաց թիթեղե դույլը։ Եվ հանկարծ դուռը լայն բացվեց, խոխոլը քայլեց խոհանոց, բարձր շշնջաց.

— Խթանների ձայն է գալիս։

Մայրն անկողնից վեր թռավ՝ դողացող ձեռներով զգեստը վերցնելով, բայց դռան շեմքում սենյակից երևաց Պավելը և հանգիստ ասաց.

— Դուք պառկեցե՛ք, դուք հիվանդ եք։

Նախասենյակից զգույշ խշխշոց էր լսվում։ Պավելը մոտեցավ դռանը և դուռը ձեռքով հրելով հարցրեց.

— Ո՞վ է այդտեղ։

Տարօրինակ կերպով արագ պտտվելով դռնից ներս ընկավ մի բարձրահասակ գորշ կերպարանք, նրա հետևից մի ուրիշը, երկու ժանդարմներ ետ մղեցին Պավելին, կանգնեցին նրա կողքերին և հնչեց մի բարձր, ծաղրական ձայն.

— Նրանք չեն, որոնց դուք սպասում էիք. հա՞։

Այդ ասաց բարձրահասակ, բարակ մի սպա նոսր սև ընչացքներով։ Մոր անկողնի մոտ երևաց ավանի ոստիկան Ֆեդյակինը և մի ձեռքը դեպի գլխարկը տանելով, իսկ մյուսով մոր դեմքը ցույց տալով, աչքերին սարսափելի տեսք տալով ասաց.

— Ա՛յ, սա նրա մայրն է, ձե՛րդ բարեծնություն։— Եվ Պավելի վրա ձեռքը թափահարելով ավելացրեց,— իսկ սա՝ նա ինքն է։

— Պավել Վլասո՞վը,— հարցրեց սպան՝ աչքերը կկոցելով, և երբ Պավելը լուռ գլխով արեց, նա ընչացքը ոլորելով հայտնեց.— ես պետք է քեզ մոտ խուզարկություն կատարեմ։ Պառա՛վ, վե՛ր կաց։ Այնտեղ ո՞վ կա,— հարցրեց նա, նայելով սենյակի կողմը և թափով քայլ արեց դեպի դուռը։

— Ձեր ազգանո՞ւնը,— լսվեց նրա ձայնը։

Նախասենյակից դուրս եկան երկու վկաներ — հին ձուլող Տվերյակովը և նրա տնվոր հնոցապան Ռիբինը, մի պատկառելի սև մուժիկ։ Նա բամբ և բարձր ձայնով ասաց.

— Բարև՛, Նի՛լովնա։

Մայրը հագնվում էր, և որպեսզի իրեն արիություն տա, կամաց ասում էր.

— Սա՞ ինչ է։ Գիշերն են գալիս. մարդիկ պառկել են քնելու, իսկ նրանք գալիս են...

Սենյակում նեղվածք էր և, հայտնի չէ, թե ինչու, կոշկաներկի սաստիկ հոտ էր գալիս։ Երկու ժանդարմները և ավանի պրիստավ Ռիսկինը ոտներով բարձրաձայն դոփելով՝ դարակից իջեցնում էին գրքերը և դարսում սեղանի վրա սպայի առջև։ Մյուս երկուսը բռունցքներով զարկում էին պատերին, նայում էին աթոռների տակ, մեկն անշնորհք կերպով բարձրանում էր վառարանի գլուխը։ Խոխոլը և Վեսովշչիկովն իրար կիպ կպած կանգնել էին անկյունում։ Նիկոլայի չեչոտ դեմքը ծածկվել էր կարմիր բծերով, նրա մանր, մոխրագույն աչքերն անընդհատ

նայում էին սպային։ Խոխոլն ընչացքներն էր ոլորում, և երբ մայրը սենյակ մտավ, խոխոլը քմծիծաղով սիրալիր գլխով արեց նրան։

Աշխատելով զսպել իր երկյուղը՝ մայրը ման էր գալիս ոչ թե կողքանց, ինչպես միշտ, այլ ուղիղ, կուրծքն առաջ տված, դա ծիծաղելի և փքուն արժանավորություն էր տալիս նրա կերպարանքին։ Նա բարձրաձայն դոփում էր ոտները, իսկ արտանունքները դողում էին...

Սպան ձեռքի բարակ մատներով արագ վերցնում էր գրքերը, թերթում, թափ տալիս և թաթի ճարպիկ շարժումով մի կողմ շպրտում։ Երբեմն գիրքը փափուկ շրխկում էր հատակին։ Բոլորը լուռ էին, լսվում էր քրտնած ժանդարմների ծանր փընչոցը, խթանները զնգում էին, երբեմն լսվում էր մի ցածրաձայն հարց.

— Այստեղ նայե՞լ ես։

Մայրը կանգնել էր Պավելի կողքին պատի մոտ, ձեռները ծալել կրծքին, ինչպես որդին էր անում, և նույնպես սպային էր նայում։ Նրա ծնկների տակ դող էր ընկել, և աչքերը ծածկում էր մի չոր մառախուղ։

Հանկարծ լռության մեջ լսվեց Նիկոլայի ականջ ծակող ձայնը.

— Իսկ ինչո՞ւ գրքերը պետք է հատակին շպրտել։

Մայրը ցնցվեց։ Տվերյակովը գլուխը ճոճեց, կարծես նրան ծոծրակից հրեցին, իսկ Ռիբինը կոնչաց և ուշադրությամբ նայեց Նիկոլային։

Սպան աչքերը կկոցեց և մի վայրկյան հառեց խոսողի չեչոտ, անշարժ դեմքին։ Նրա մատներն սկսեցին է՛լ ավելի արագ թերթել գրքերի էջերը։ Երբեմն նա այնպես լայն էր բաց անում իր մեծ-մեծ, գորշագույն աչքերը, որ կարծես անտանելի ցավ էր զգում և պատրաստ էր անուժ կատաղության բարձր ճչոցով գոռալ այդ ցավի վրա։

— Զինվո՛ր,— նորից ասաց Վեսովշչիկովը,— բարձրացրու գրքերը...

Բոլոր ժանդարմները դեպի նա դարձան, հետո նայեցին սպային։ Նա գլուխը նորից բարձրացրեց և զննական հայացք գցելով Նիկոլայի հաղթ կերպարանքի վրա՝ քթի մեջ ծոր տվեց։

— Բ-բայց... բարձրացրեք...

Մի ժանդարմ կռացավ և Վեսովշչիկովին խեթ-խեթ նայելով՝ սկսեց հատակից հավաքել քրքրված գրքերը...

— Նիկոլայը լռեր՝ լավ կաներ,— կամաց շշնջաց մայրը Պավելին։

Պավելն ուսերը թոթվեց։ Խոխոլը կախեց գլուխը։

— Այս ո՞վ է Աստվածաշունչ կարդում։

— Ե՛ս,— ասաց Պավելը։

— Իսկ ո՞ւմն են այս բոլոր գրքերը։

— Իմն են,— պատասխանեց Պավելը։

— Այդպե՞ս,— ասաց սպան աթոռի մեջքին թիկնելով։ Բարակ ձեռների մատները ճթճթացրեց, ոտները առաջ մեկնեց սեղանի տակ, ուղղեց ընչացքները և հարցրեց Նիկոլային.

— Այդ դո՞ւ ես Անդրեյ Նախոդկան։

— Ե՛ս եմ,— պատասխանեց Նիկոլան՝ առաջ շարժվելով։ Խոխոլը ձեռը մեկնեց, բռնեց նրա ուսից և ետ քաշեց։

— Նա սխալվե՞ց։ Ե՛ս եմ Անդրեյը...

Սպան բարձրացնելով ձեռքը և իր փոքրիկ մատով Վեսովշչիկովին սպառնալով ասաց.

— Ես քեզ ցո՞ւյց կտամ։

Նա սկսեց քրքրել իր թղթերը։

Փողոցի պատուհանից անհոգի աչքերով նայում էր լուսընկա գիշերը։ Մեկը դանդաղ շրջում էր լուսամուտի մոտ, ձյունը ճռռում էր։

— Դու, Նախո՛դկա, արդեն պատասխանատվության ենթարկվե՞լ ես քաղաքական հանցանքների համար,— հարցրեց սպան։

— Ենթարկվել եմ Ռոստովում և Սարատովում... Միայն թե այնտեղ ժանդարմներն ինձ հետ «դուք»-ով էին խոսում...

Սպան աջ աչքը թարթեց, սրբեց և մանր ատամները բաց անելով ասաց.

— Իսկ հայտնի՞ չի ձեզ, Նախո՛դկա, հենց ձեզ, թե ովքե՞ր են այն գարշելիները, որոնք գործարանում հանցավոր կոչեր են ցրում, հը՞։

Խոխոլը ոտների վրա երերաց և լայն ժպտալով՝ ուզեց ինչոր բան ասել, բայց նորից հնչեց Նիկոլայի գրգռիչ ձայնը.

— Մենք առաջին անգամն է, որ գարշելիներ ենք տեսնում...

Լռություն տիրեց, բոլորը մի բոպե կանգ առան։

Մոր դեմքի սպին սպիտակեց, և աջ հոնքը վեր սողաց։ Ռիբինի սև մորուքը տարօրինակ կերպով ողողողաց. աչքերը ցած գցելով՝ նա սկսեց մատներով դանդաղ քորել մորուքը։

— Դո՛ւրս տարեք այս անասունին,— ասաց սպան։

Երկու ժանդարմ բռնեցին Նիկոլայի ձեռքերից, կոպտությամբ տարան խոհանոց։ Այնտեղ նա կանգ առավ՝ ոտներն ամուր դեմ տալով հատակին և գոռաց.

— Կացե՛ք... հագնվեմ։

Բակից եկավ պրիստավը և ասաց.

— Ոչինչ չկա՛։ Ամեն ինչ մտիկ տվինք։

— Դե, հասկանալի՞ է,— բացականչեց սպան քսծիծաղով։— Այստեղ փորձված մարդ կա...

Մայրը լսում էր նրա թույլ, ցնցվող ու բեկբեկ ձայնը և երկյուղով նայելով դեղին դեմքին՝ զգում էր, որ այդ մարդն անխիղճ թշնամի է, դեպի մարդիկ աղայական արհամարհանքով լի սրտով։ Մայրն այդպիսի մարդիկ քիչ էր տեսել և գրեթե մոռացել էր, որ նրանք կան։

«Ա՛յ թե ո՛ւմ են անհանգստացրել»,— մտածում էր մայրը։

— Ձեզ, պարո՛ն Անդրեյ Օնիսիմովիչ Նախոդկա, ապօրինի ծնունդ, ես ձերբակալում եմ։

— Ինչի՞ համար,— հանգիստ հարցրեց խոխոլը։

— Այդ ես ձեզ հետո կասեմ,— շար քաղաքավարությամբ պատասխանեց սպան։ Եվ Վլասովային դառնալով հարցրեց.

— Դու գրագե՞տ ես։

— Ո՛չ,— պատասխանեց Պավելը։

— Ես քե՛զ չեմ հարցնում,— խստությամբ ասաց սպան և նորից հարցրեց.— պառա՛վ, պատասխանի՛ր։

Մայրն ակամա անձնատուր լինելով դեպի այդ մարդը տածած ատելության զգացումին՝ հանկարծ, կարծես սառը ջրի մեջ ցատկելով, դողով բռնված, շտկվեց, նրա սպին շառագունեց, և հոնքը ցած իջավ։

— Դուք մի՛ գոռաք,— ասաց նա, դեպի սպան ուղղելով ձեռքը։— Դուք դեռ երիտասարդ եք, դուք ցավ չեք տեսել...

— Հանգստացե՛ք, մայրի՛կ,— ընդհատեց նրան Պավելը։

— Սպասի՛ր, Պավե՛լ,— գոռաց մայրը՝ խոյանալով դեպի սեղանը։— Դուք մարդկանց ինչո՞ւ եք բռնոտում։

— Այդ ձեզ չի վերաբերում, լռե՛լ,— գոռաց սպան՝ վեր կենալով։— Նե՛րս բերեք ձերբակալված Վեսովշչիկովին։

Եվ սկսեց կարդալ մի թուղթ՝ դեմքին մոտեցնելով։

Նիկոլային ներս բերին։

— Գլխարկդ վերցրո՛ւ,— գոռաց սպան՝ ընթերցանությունն ընդհատելով։

Ռիբինը մոտեցավ Վլասովային և ուսով հրելով նրան՝ կամաց ասաց.

— Մի՛ տաքանար, մա՛յր...

— Գլխարկս ինչպե՞ս վերցնեմ, քանի որ կռներիցս բռնել են,— հարցրեց Նիկոլայը, արձանագրության ընթերցումը խլացնելով։

Սպան թուղթը նետեց սեղանին։

— Ստորագրե՛լ։

Մայրը նայում էր, թե ինչպես են ստորագրում արձանագրությունը, նրա զրգռումները հանգավ, սիրտը թուլացավ, աչքերին վիրավորանքի, անկարության արտասուքներ երևացին։ Այդ արտասուքներով էր նա լացել իր ամուսնության քսան տարին, բայց վերջին տարիները գրեթե մոռացել էր նրանց մաշող դառնությունը. սպան նայեց նրա վրա և դեմքը զզվանքով կընճռելով նկատեց.

— Դուք վաղաժամ եք ողբում, տիկի՛ն։ Զգուշացե՛ք, հետագայում ձեր արցունքները չեն բավականանա։

Նորից կատաղելով՝ մայրն ասաց.

— Մայրն ամեն բանի համար բավականաչափ արցունք կունենա՝, ամե՛ն բանի համար։ Եթե դուք մայր ունեք, նա կիմանա այդ, այո՛։

Սպան թղթերն շտապ դարսում էր փայլուն կողպեքով նոր պորտֆելի մեջ։

— Մա՛րշ,— հրամայեց նա։

— Ցտեսությո՛ւն, Անդրե՛յ, ցտեսությո՛ւն, Նիկոլա՛յ,— ջերմագին և կամաց ասում էր Պավելը, սեղմելով ընկերների ձեռները։

— Իսկապես որ ցտեսությո՛ւն,— քմծիծաղով կրկնեց սպան։

Վեսովշչիկովը ծանր փնչում էր։ Նրա հաստ պարանոցն արյունով էր լցվել, աչքերը շողում էին բուռն զայրույթով։ Խոխոլը պսպղում էր ժպիտներով, գլխով էր անում և ինչ-որ բան էր ասում մորը, մայրը նրան խաչակնքում էր և նույնպես ասում.

— Աստված տեսնում է արդարներին...

Վերջապես գորշ շինելներ հագած մարդկանց խումբը դուրս

թափվեց նախասենյակը և խթանները զնգացնելով լռացավ։ Վերջինը դուրս եկավ Ռիբինը, նա մուգ աչքերի ուշադիր հայացքը գցեց Պավելի վրա, մտախոհ ասաց.

— Դ-դե՛հ, մնաք բարո՛վ։

Եվ մորուքի մեջ հազալով՝ առանց շտապելու դուրս եկավ նախասենյակ։

Ձեռները մեջքին դրած՝ Պավելը դանդաղ շրջում էր սենյակում, քայլելով հատակի վրա թափված գրքերի և ճերմակեղենի վրայով և ասում էր մռայլված.

— Տեսնո՞ւմ ես, թե այդ ինչպես է լինում...

Տարակուսանքով տնտղելով տակնուվրա արված սենյակը, մայրը տրտմագին շշնջաց.

— Նիկոլայն ինչո՞ւ կոպիտ վարվեց նրա հետ։

— Վախեցավ երևի,— կամաց ասաց Պավելը։

— Եկան բռնեցին, տարան,— մրմնջաց մայրը՝ ձեռները տարածելով։

Որդին տանը մնաց, մոր սիրտն սկսեց ավելի հանգիստ զարկել, իսկ միտքն անշարժ կանգնել էր փաստի առջև և չէր կարողանում ընդգրկել այն։

— Ձեռք է առնում այդ դեղնածը, սպառնում է...

— Լա՜վ, մա՛յր,— հանկարծ վճռականորեն ասաց Պավելը,— արի հավաքենք այս բոլորը...

Նա մորն ասաց «մայր» և «դու», ինչպես ասում էր միայն այն ժամանակ, երբ մոտ էր լինում նրան։ Մայրը մոտ շարժվեց դեպի նա, խոր նայեց նրա դեմքին և կամաց հարցրեց.

— Քեզ վիրավորեցի՞ն։

— Այո՛,— պատասխանեց որդին։— Սա ծա՜նր բան է։ Լավ կլիներ՝ ե՛ս էլ նրանց հետ...

Մորը թվաց, թե որդու աչքերում արցունքներ կան, և կամենալով մխիթարել, աղոտ կերպով զգալով նրա վիշտը՝ հառաչելով ասաց.

— Սպասի՛ր, քե՛զ էլ կտանեն...

— Կտանե՞ն,— արձագանքեց որդին։

Քիչ լռելուց հետո մայրը տխուր-տխուր նկատեց.

— Ի՜նչ խիստ ես, Պա՛շա։ Գոնե երբևիցե ինձ մխիթարեիր։ Թե չէ՝ ես սարսափելի բան եմ ասում, դու ավելի՛ սարսափելին ես ասում։

Որդին նայեց նրան, մոտեցավ և մեղմ ասաց.

— Ես չեմ կարողանում, մայրի՛կ։ Դու պետք է այդ բառ-նին ընտելանաս։

Մայրը հառաչեց և քիչ լռելուց հետո երկյուղի դողը թաքցնելով ասաց.

— Բայց գուցե նրանք տանջո՞ւմ են մարդկանց։ Մարմինը պոկոտո՞ւմ են, ոսկորները կոտրատո՞ւմ։ Որ մտածում եմ այդ մասին, Պա՛շա, սիրելիս, սարսափելի՜ է։

— Նրանք հոգին են ջարդում... Դա ավելի է ցավ տալիս, երբ հոգին կեղտոտ ձեռներով...

XI

Մյուս օրը հայտնի դարձավ, որ ձերբակալված են Բուկինը, Սամոյլովը, Սոմովը և ուրիշ հինգ հոգի։ Երեկոյան վազելով եկավ Ֆեդյա Մազինը — նրա մոտ էլ էր խուզարկություն եղել և դրանից գոհ՝ նա իրեն հերոս էր զգում։

— Վախեցա՞ր, Ֆե՛դյա,— հարցրեց մայրը։

Ֆեդյան գունատվեց, դեմքը սրացավ, ոունգերը դողացին։

— Վախենում էի, թե սպան խփի՜։ Նա սևամորուք էր, հաստ, մատները բրդոտ, իսկ քթին սև ակնոց, կարծես աչք չունենար։ Գոռում էր, ոտներով դոփո՜ւմ։ Բանտում կփտացնե՜մ, ասում է։ Իսկ ինձ երբեք չեն ծեծել, ո՛չ հայրս, ո՛չ մայրս, ես նրանց միակ որդին եմ, նրանք ինձ սիրում էին։

Նա մի պահ աչքերը փակեց, շրթունքները հուպ տվեց, երկու ձեռքի արագ շարժումով խառնեց գլխի մազերը և կարմրած աչքերով Պավելին նայելով՝ ասաց.

— Եթե ինձ երբևիցե խփելու լինեն, ես մեկեն դանակի նման խփողի կողը կխրվեմ, ատամներովս կկրծեմ, թող ինձ միանգամից ծեծելով սպանեն։

— Դու բարալիկ, նիհարիկ ես,— բացականչեց մայրը։— Դու ի՞նչ կռվող ես։

— Կկռվե՜մ,— կամաց պատասխանեց Ֆեդյան։

Երբ նա գնաց, մայրն ասաց Պավելին.

— Սա ամենքից շուտ կկոտրվի՜...

Պավելը լուռ մնաց։

Մի քանի րոպեից հետո խոհանոցի դուռը կամաց բացվեց, ներս մտավ Ռիբինը։

— Բարև՛ ձեզ,— ժպտալով արտասանեց նա։— Ահա ես նո-

րից եմ եկել։ Երեկ ինձ բերին, իսկ այսօր ինքս եմ եկել։— Նա ամուր թափահարեց Պավելի ձեռքը, բռնեց մոր ուսից և ասաց.

— Թեյ կտա՞ս։

Պավելը լուռ տնտղում էր նրա թուխ, լայն դեմքը, խիտ սև մորուքով և սևորակ աչքերով։ Հանգիստ հայացքի մեջ ինչ-որ մի նշանակալից բան էր փայլում։

Մայրը գնաց խոհանոց ինքնաեռը գցելու։ Ռիբինը նստեց, մորուքը շոյեց և արմունկները սեղանին դնելով՝ Պավելի վրա մութ հայացք գցեց։

— Այդպես ուրեմն,— ասաց նա, կարծես ընդհատված խոսակցությունը շարունակելով։— Ես պետք է քեզ հետ պարզ խոսեմ։ Ես քեզ երկար ժամանակ հետևել եմ։ Մենք համարյա իրար կողքի ենք ապրում. տեսնում եմ՝ քեզ մոտ շատ մարդիկ են գալիս, բայց հարբեցողություն ու անկարգություն չի երևում։ Դա առաջինը։ Եթե մարդիկ անկարգություն չեն անում, խոկույն երևում է, թե նրանք ի՛նչ են։ Ահա։ Ես ինքս մարդկանց աչքերը կապել եմ նրանով, որ հեռու քաշված եմ ապրում։

Նա դժվարությամբ էր խոսում, բայց ազատ, նա սև ձեռքով շոյում էր մորուքը և ուշի-ուշով նայում Պավելի դեմքին։

— Քո մասին խոսք բացվեց։ Տանտերերս քեզ անվանում են հերետիկոս, ժամ չես գնում։ Ես էլ չեմ գնում։ Հետո այդ թռուցիկները դուրս եկան։ Այդ դո՞ւ ես հնարել։

— Ե՛ս,— պատասխանեց Պավելը։

— Հա՜, դո՛ւ,— անհանգիստ բացականչեց մայրը՝ խոհանոցից գլուխը հանելով։— Մենակ հո դու չե՛ս։

Պավելը ժպտաց։ Ռիբինը նույնպես։

— Այդպե՜ս,— ասաց նա։

Մայրը քթով բարձրաձայն օդ ներշնչեց և հեռացավ՝ մի քիչ վիրավորված նրանից, որ նրանք ուշադրություն չդարձրին իր խոսքին։

— Թռուցիկներ՝ դուք լավ բան եք մտածել։ Դրանք ժողովրդին անհանգստացնում են։ Տասնինը հա՞տ էր։

— Այո՛,— պատասխանեց Պավելը։

— Նշանակում է, ես բոլո՛ր եմ կարդացել։ Այդպես։ Նրանց մեջ կա անհասկանալի բան, ավելորդ բան կա, դե երբ մարդ շատ է խոսում, մի տասը բառ էլ ավելորդ է ասում...

Ռիբինը ժպտաց. նրա ատամները սպիտակ և ամուր էին։

— Հետո՝ խուզարկությանը գանք։ Դա ինձ ամենից շատ

է տրամադրել։ Դու էլ, խոխոլն էլ, Նիկոլայն էլ, դուք բոլորդ էլ հայտնաբերվել եք...

Հարկավոր բառը չգտնելով՝ նա լռեց, նայեց պատուհանին, մատներով սեղանը թխկթխկացրեց։

— Հայտնաբերել են ձեր որոշումը։ Ուզում եք ասել, թե դու, ձերդ բարեծնություն, քո գործն արա՛, մենք էլ մե՛րը կանենք։ Խոխոլն էլ լավ տղա է։ Երբեմն ես ականջ եմ դնում, երբ նա խոսում է գործարանում, և մտածում եմ՝ նրան դժվար է ջախջախել, սրան մահը միայն կհաղթի։ Ջլո՛ւտ մարդ է։ Պավել, դու ինձ հավատո՞ւմ ես։

— Հավատո՛ւմ եմ,— ասաց Պավելը, գլխով անելով։

— Ահա՛։ Տես, ես քառասուն տարեկան եմ, ես քեզանից երկու անգամ մեծ եմ, քսան անգամ շատ բան եմ տեսել։ Ջինվորության մեջ երեք տարուց ավելի քայլել եմ, երկու անգամ ամուսնացել եմ, մի կին մեռել է, մեկին էլ թողել եմ։ Եղել եմ Կովկասում, ճանաչում եմ դուխոբորներին*։ Սրանք, եղբա՛յրս, կյանքը չեն հաղթահարի, չէ՛։

Մայրն ագահաբար ականջ էր դնում նրա վստահ խոսքերին. հաճելի էր տեսնել, որ իր որդու մոտ է եկել այդ հասակավոր մարդը և խոսում է նրա հետ, կարծես խոստովանք է անում։ Բայց մորը թվում էր, թե Պավելն իրեն շատ սառն է պահում հյուրի հետ, և որպեսզի մեղմացնի որդու վերաբերմունքը, նա հարցրեց Ռիբինին.

— Դուցե մի բան կուտես, Միխա՛յլո Իվանովիչ։

— Շնորհակալությո՛ւն, մա՛յր։ Ես ընթրել եմ։ Այդպես ուրեմն, Պավել, նշանակում է, դու կարծում ես, որ կյանքն անօրե՞ն է ընթանում։

Պավելը վեր կացավ և սկսեց սենյակում շրջել՝ ձեռները հետևը դրած։

— Կյանքը ճի՞շտ է ընթանում,— ասում էր նա։— Ա՛յ, նա է ձեզ ինձ մոտ բերել բաց սրտով։ Մեզ, որ ամբողջ կյանքներս աշխատում ենք, նա քիչ-քիչ միացնում է. կգա ժամանակ, բոլորի՛ն կմիացնի։ Մեզ համար նա անարդար կերպով ծանր է կառուցված, բայց հենց ինքն էլ բաց է անում մեր աչքերը, որ տեսնենք իր դառը միտքը, ինքն է ցույց տալիս մարդուս, թե նա ինչպես արագացնի իր կյանքի ընթացքը։

* Ռուսական աղանդավորներ են։

— Ճշմարի՞տ է,— ընդհատեց նրան Ռիբինը։— Մարդուս հարկավոր է վերափոխել։ Եթե քոստացել է՝ բաղնիս տար, լվա, մաքուր շոր հագցրու, կառողջանա՛։ Այսպե՞ս է։ Իսկ ինչպե՞ս մաքրել մարդուս ներքուստ։ Ա՛յ։

Պավելը խոսեց տաքացած և խիստ՝ իշխանավորների մասին, գործարանի մասին, այն մասին, թե ինչպես արտասահմանում բանվորները պաշտպանում են իրենց իրավունքները։ Ռիբինը երբեմն մատը սեղանին էր խփում՝ կարծես վերջակետ դնելով։ Մի քանի անգամ նա բացականչեց.

— Այդպե՞ս։

Եվ մի անգամ ծիծաղելով՝ կամաց ասաց.

— Է՞-է՞, դեռ ջահե՞լ ես։ Մարդկանց քիչ ես ճանաչում։

Այն ժամանակ Պավելը նրա դիմաց կանգնելով, լուրջ նկատեց.

— Չխոսենք ջահելության ու ծերության մասին։ Ավելի լավ է տեսնենք, թե ո՛ւմ մտքերն են ավելի ճիշտ։

— Քո ասելով, նշանակում է աստծով է՞լ են մեզ խաբել։ Այդպես։ Ես էլ եմ կարծում, որ մեր կրոնը կեղծ է։

Այդտեղ խառնվեց մայրը։ Երբ որդին խոսում էր աստծու մասին և այն բոլորի մասին, ինչ որ մայրը կապում էր իր հավատի հետ, որ ուներ աստծու հանդեպ, ինչ որ թանկ և սուրբ էր իր համար, մայրը միշտ աշխատում էր բռնել որդու հայացքը. նա ուզում էր լռելյայն խնդրել որդուն, որ նա իր սիրտը չկեղեքի անհավատության սուր և խստաշունչ խոսքերով։ Բայց մայրը որդու անհավատության հետևում հավատ էր զգում, և այդ բանը հանգստացնում էր իրեն։

«Ես ինչպե՞ս կարող եմ հասկանալ նրա մտքերը»,— խորհում էր մայրը։

Նրան թվում էր, թե Ռիբինի, այդ հասակն առած մարդու համար ևս անհաճո և վիրավորական է լսել Պավելի խոսքերը։ Բայց երբ Ռիբինը Պավելին հանգիստ հարց տվեց, մայրը չհամբերեց և հակիրճ, բայց հաստատամտությամբ ասաց.

— Աստծու վերաբերմամբ մի քիչ ավելի՛ զգույշ։ Դուք— ինչպես կուզեք,— շունչ առնելով՝ նա է՛լ ավելի մեծ ուժով շարունակեց,—բայց ես, պառավս, հենվելու բան չեմ ունենա վշտի ժամանակ, եթե դուք տեր աստծուն ինձանից խլեք։

Նրա աչքերը լցվեցին արցունքով։ Նա ամաններն էր լվանում և նրա մատները դողում էին։

— Դուք մեզ չեք հասկացել, մայրի՛կ,— մեղմ և սիրալիր ասաց Պավելը։

— Ների՛ր, մա՛յր,— դանդաղ և թավ ձայնով ավելացրեց Ռիբինը և ժպտալով նայեց Պավելին։— Ես մոռացել էի, որ դու այնքան պառավ ես, որ դժվար է կտրտել քո գորտնուկները...

— Ես խոսում էի,— շարունակեց Պավելը,— ոչ թե այն բարի և ողորմած աստծու, որին դուք հավատում եք, այլ նրա մասին, որով տերտերներն սպառնում են մեզ, ինչպես ձեռնափայտով, այն աստծու մասին, որի անունով ուզում են բոլոր մարդկանց ստիպել ենթարկվել քչերի չար կամքին...

— Ա՛յ, այդպես, այո՛,— բացականչեց Ռիբինը՝ սեղանին մատով խփելով։— Նրանք աստծուն էլ են փոխել մեզ համար, նրանք իրենց ձեռքում գտնվող ամեն բան մեր դեմ են դարձնում։ Դու հիշի՛ր, մա՛յր, աստված մարդուս ստեղծել է իր պատկերով և նմանությամբ, նշանակում է՝ նա նման է մարդուս, եթե մարդը նման է նրան։ Իսկ մենք ոչ թե աստծուն ենք նման, այլ վայրենի գազանների։ Եկեղեցում մեզ վախեցնող խրտվիլակ են ցույց տալիս... Հարկավոր է փոխել աստծուն, մա՛յր, սրբե՛լ նրան։ Նրան ստություն և բամբասանք են հագցրել, աղավաղել նրա դեմքը, որպեսզի մեր հոգիներն սպանե՛ն...

Նա խոսում էր խաղաղ, բայց նրա խոսքի յուրաքանչյուր բառը մոր գլխին էր ընկնում ծանր, խլացուցիչ հարվածի պես։ Եվ մորուքի սև շրջանակի մեջ առնված նրա մեծ, սգավոր դեմքը վախեցնում էր մորը։ Աչքերի մութ փայլն անտանելի էր, նա մարդու սրտում ցավատանջ երկյուղ էր զարթնեցնում։

— Ո՛չ, ավելի լավ է հեռանամ,— ասաց մայրը, բացասաբար գլուխը շարժելով։— Ուժ չունե՛մ այդ բաները լսելու։

Եվ շտապ գնաց խոհանոց Ռիբինի այս խոսքերի ուղեկցությամբ.

— Ահա՛, Պա՛վել, ոչ թե գլխում, այլ սրտումն է սկիզբը։ Դա մարդու հոգու մեջ այնպիսի մի տեղ է, որի վրա ուրիշ ոչ մի բան չի կարելի բուսցնել...

— Միայն բանականությունը կազատագրի մարդուն,— հաստատապես ասաց Պավելը։

— Բանականությունն ուժ չի տալիս,— առարկում էր Ռիբինը բարձրաձայն ու հաստատ։— Սի՛րտն է ուժ տալիս և ոչ թե գլուխը, ա՛յ թե ինչ։

Մայրը հանվեց և անկողին մտավ առանց աղոթելու։ Նա ցուրտ էր զգում, տհաճություն։ Եվ Ռիբինը, որ սկզբում նրան այնպես պատկառելի, խելոք էր թվում, այժմ նրա մեջ թշնամական զգացմունք էր զարթեցնում։

«Հերետիկո՛ս։ Խառնակի՛չ,— մտածում էր մայրը՝ նրա ձայնը լսելով։— Վեր է կացել եկել, կամ աղն է պակաս, կամ մաղը»։

Իսկ Ռիբինը վստահ և հանգիստ ասում էր.

— Սուրբ տեղը դատարկ չպիտի լինի։ Այնտեղ, ուր աստված է ապրում, խիստ զգայուն տեղ է։ Եթե նա հոգուց դուրս ընկնի, հոգու մեջ վերք կգոյանա, ա՛յ թե ինչ։ Հարկավոր է, Պա՛վել, նոր հավատ հնարել... պետք է աստված ստեղծել, որը մարդկանց բարեկա՛մ լինի։

— Ա՛յ, Քրիստոսը կար,— բացականչեց Պավելը։

— Քրիստոսը հոգով արի չէր։ Անցրու, ասում է, այս բաժակն ինձանից։ Կայսրին ընդունում էր։ Աստված չի կարող մարդկանց վրա մարդկային իշխանություն ընդունել, նա ինքն է ամբողջ իշխանությունը։ Նա իր հոգին բաժան-բաժան չի անում, թե սա աստվածային է, սա՝ մարդկային... Իսկ Քրիստոսը առևտուրն ընդունում էր, ամուսնությունն ընդունում էր։ Թզենուն էլ անտեղի անիծեց, մի՞թե ի՞նչ կամքով էր նա անպտուղ։ Հոգին էլ ի՞նչ կամքով չէ, որ բարի պտուղ չի տալիս, մի՞թե ես ինքս եմ նրա մեջ չարություն ցանել։ Ա՛յ թե ինչ։

Սենյակում անընդհատ հնչում էր երկու ձայն՝ գրկվելով և իրար հետ պայքարելով գրգռված խաղի մեջ։ Պավելը քայլում էր, հատակը ճռռում էր նրա ոտների տակ։ Երբ նա խոսում էր, բոլոր հնչյունները խեղդվում էին նրա խոսքերի մեջ, իսկ երբ հանգիստ ու դանդաղ հնչում էր Ռիբինի ծանր ձայնը, լսվում էր ճոճանակի զարկը և սուր ճանկերով տան պատը ճանկրտող սառնամանիքի մեղմ շրթոցը։

— Կասեմ քեզ իմ խոսքով, հնոցապանավարի, աստված կրակի է նման։ Այդպես։ Նա ապրում է սրտում։ Ասված է՝ աստված բան է, իսկ բանը՝ ոգի...

— Բանականություն է,— հաստատակամ ասաց Պավելը։

— Այսպե՛ս է։ Նշանակում է՝ աստված սրտի մեջ է և բանականության մեջ և ոչ թե եկեղեցում։ Եկեղեցին աստծու գերեզմանն է...

Մայրը քնել էր և չիմացավ, թե երբ գնաց Ռիբինը։

Բայց Ռիբինը սկսեց հաճախ գալ, և եթե ընկերներից մեկնումեկը Պավելի մոտ էր լինում, Ռիբինը նստում էր անկյունում և լռում՝ երբեմն միայն ասելով.

— Ահա՛, Այդպե՞ս։

Իսկ մի անգամ անկյունից մթին հայացքով նայելով բոլորի վրա, նա մռայլված ասաց.

— Պետք է խոսել այն մասին, ինչ որ կա, իսկ թե ինչ է լինելու՝ մեզ հայտնի չէ, ահա՛ թե ինչ։ Երբ ժողովուրդը կազատագրվի, նա ինքը կտեսնի, թե ինչպես է լավ։ Բավական շատ բան են նրա գլուխը լցրել, ինչ որ ինքը բոլորովին չի ցանկացել, հերի՛ք է, թողեք ի՛նքը հասկանա։ Գուցե նա կուզի ամեն բան ժխտել, ամբողջ կյանքը և բոլոր գիտությունները, գուցե նա կտեսնի, որ ամեն ինչ իր դեմ է ուղղված, ինչպես օրինակ՝ եկեղեցական աստվածը։ Դուք միայն բոլոր գրքերը հանձնեցեք նրա ձեռքը, այնուհետև պատասխանն ինքը կտա, պրծավ գնա՛ց։

Բայց եթե Պավելը մենակ էր լինում, նրանք իսկույն ևեթ անվերջ, բայց միշտ հանգիստ վեճի էին բռնվում, և մայրն անհանգիստ ականջ դնելով նրանց խոսքերին հետևում էր նրանց՝ աշխատելով հասկանալ, թե ինչ են ասում։ Երբեմն մորը թվում էր, թե լայնաթիկունք սևամորուք գյուղացին և իր վայելչակազմ, ամրակուռ որդին երկուսով էլ կուրացել են։ Նրանք՝ ելք փնտրելով՝ այս ու այն կողմն են խրվում, ուժեղ, բայց կույր ձեռներով բռնում են ամեն բանից, թափահարում, տեղից տեղ փոխադրում, գցում հատակին և ընկածը ոտներով ճզմում։ Կպչում են ամեն բանի, շոշափում ամեն ինչ և դեն նետում՝ առանց հավատն ու հույսը կորցնելու...

Նրանք վարժեցրել էին մորը լսելու այնպիսի խոսքեր, որոնք իրենց շիտակությամբ և համարձակությամբ սարսափելի էին, բայց այդ խոսքերն արդեն այն ուժով չէին խփում նրան, ինչպես առաջին անգամ, նա սովորել էր վանել դրանք։ Եվ երբեմն աստծուն բացասող խոսքերի հետևում նա ամուր հավատ էր զգում դեպի նա։ Այն ժամանակ նա ժպտում էր խաղաղ, ամեն բան ներող ժպիտով։ Եվ թեև Ռիբինը նրան դուր չէր գալիս, բայց արդեն թշնամություն չէր զարթեցնում։

Շաբաթը մի անգամ մայրը խոխոլի համար բանտ էր տանում ճերմակեղեն և գրքեր, մի անգամ նրան թույլ տվին տեսակցել նրա հետ, և տուն գալով՝ նա զգացված պատմեց.

— Նա այնտեղ էլ այնպես է, ինչպես տանը։ Ամենքի հետ

սիրալիր է, ամենքը նրա հետ կատակ են անում։ Նրա համար դժվար է, ծանր է, բայց չի ուզում ցույց տալ...

— Այդպես էլ հարկավո՞ր է,— նկատեց Ռիբինը։— Մենք բոլորս ցավի մեջ ենք, ինչպես կաշվի մեջ, ցավով ենք շնչում, ցավ ենք հագնում։ Այստեղ պարծենալու բան չկա։ Բոլորի աչքերը չեն փակել, ոմանք իրենք են փակում, ա՛յ թե ինչ։ Իսկ եթե հիմար ես՝ համբերի՛ր...

XII

Վլասովների գորշ, փոքրիկ տունն ավելի ու ավելի էր իր վրա դարձնում ավանի ուշադրությունը։ Այդ ուշադրության մեջ շատ կար կասկածավոր զգուշություն և անգիտակցական թշնամություն, բայց դյուրահավատ հետաքրքրություն էլ էր առաջ գալիս։ Երբեմն որևէ մարդ էր գալիս և զգուշորեն շուրջը նայելով, ասում էր Պավելին.

— Ապա, եղբա՛յրս, դու այստեղ գրքեր ես կարդում, օրենքները քեզ լավ հայտնի են։ Ուրեմն բացատրի՛ր ինձ...

Եվ Պավելը պատմում էր ոստիկանության կամ գործարանի վարչության որևէ անարդարության մասին։ Բարդ դեպքերում Պավելը մարդուն գրություն էր տալիս տանելու քաղաք՝ ծանոթ փաստաբանին, իսկ երբ կարողանում էր, գործն ինքն էր բացատրում։

Մարդկանց մեջ հետզհետե հարգանք էր առաջանում դեպի երիտասարդ, լուրջ մարդը, որն ամեն բանի մասին խոսում էր պարզ և համարձակ, ամեն բանի նայելով և ամեն ինչ լսելով ուշադրությամբ, որը համառորեն թափանցում էր ամեն մի մասնավոր դեպքի խճճվածության մեջ և միշտ, ամենուրեք գտնում էր մի ինչ-որ ընդհանուր, անծայր թել, որը հաղարավոր ամուր հանգույցներով իրար էր կապում մարդկանց։

Պավելը մարդկանց աչքում բարձրացավ մանավանդ «ճահճային կոպեկի» պատմությունից հետո։

Գործարանի հետևը, փտած օղակով գրեթե շրջապատելով այն՝ ձգվում էր մի ընդարձակ ճահիճ՝ եղևիններով և կեչիներով ծածկված։ Ամառն այդ ճահիճը շնչում էր խիտ, դեղին գոլորշիներով, և այդտեղից ավանն էին թռչում մոծակների ամպերը՝ ջերմ ու տենդ սփռելով։ Ճահիճը պատկանում էր գործարանին, և նոր դիրեկտորը ցանկանալով նրանից օգուտ քաղել,

մտածեց չորացնել, և հանգամանքից օգտվելով՝ տորֆ հանել։ Բանվորներին մատնանշելով, որ այդ միջոցն առողջարար կդարձնի այդ վայրը և կլավացնի կյանքի պայմանները բոլորի համար, դիրեկտորը կարգադրեց ճահիճը չորացնելու նպատակով նրանց վաստակած ամեն մի ռուբլուց մի կոպեկ ետ դնել։

Բանվորները վրդովվեցին։ Մանավանդ նրանց վիրավորեց այն, որ ծառայողները չէին մտնում նոր հարկը վճարողների թվի մեջ։

Շաբաթ օրը, երբ կախեցին դիրեկտորի հայտարարությունը կոպեկը հավաքելու մասին, Պավելը հիվանդ էր, նա չէր աշխատում և այդ մասին ոչինչ չգիտեր։ Մյուս օրը, պատարագից հետո, նրա մոտ եկան բարետես ծեր ձուլող Սիզովը և բարձրահասակ ու չար փականագործ Մախոտինը և նրան պատմեցին դիրեկտորի որոշման մասին։

— Հավաքվեցինք մենք մեծերս,— ծանրաբարո ասում էր Սիզովը,—խոսեցինք այդ մասին, և ահա ընկերները մեզ ուղարկեցին քեզ մոտ՝ հարցնելու, որովհետև դու մեր միջի բանիմաց մարդն ես, թե կա՞ այնպիսի օրենք, որ դիրեկտորը մեր կոպեկով մոծակների դեմ պատերազմի։

— Մտածիր, տե՛ս,— ասաց Մախոտինը՝ նեղ-նեղ աչքերը պսպղացնելով։— Չորս տարի սրանից առաջ նրանք, այդ սրիկաները, բաղնիս շինելու համար փող հավաքեցին։ Երեք հազար ութ հարյուր ռուբլի հավաքվեց։ Ո՞ւր է այդ փողը։ Բաղնիսն էլ չկա՞։

Պավելը բացատրեց այդ հարկի անարդարացիությունը և այդ գործի ակնհայտ օգուտը գործարանի համար. երկու պատգամավորները մոայլված գնացին։ Նրանց ճանապարհ դնելով՝ մայրը քմծիծաղով ասաց.

— Ա՛յ, Պա՛շա, ծերերն էլ են սկսել քեզ մոտ գալ խելք սովորելու։

Պավելը նրան չպատասխանելով՝ մտահոգ նստեց սեղանի առաջ և սկսեց ինչ-որ բան գրել։ Մի քանի րոպեից հետո նա մորն ասաց.

— Խնդրում եմ քեզ, գնա քաղաք, այս թուղթը տուր...

— Դա վտանգավո՞ր է,— հարցրեց մայրը։

— Այո՛։ Այնտեղ մեզ համար թերթ են տպում։ Անհրաժեշտ է, որ կոպեկի պատմությունն ընկնի այս համարի մեջ...

— Հա՛, հա՛,— արձագանքեց մայրը։— Ես իսկույն...

Դա առաջին հանձնարարությունն էր, որ որդին անում էր մորը։ Մայրն ուրախացավ, որ նա պարզ ասաց, թե բանն ինչումն է։

— Դա ես հասկանում եմ, Պա՛շա,— ասում էր նա հագնվելով։— Դա արդեն նրանք թալանո՞ւմ են։ Ինչպես է այդ մարդու անունը։ Եգոր Իվա՞նովիչ։

Նա վերադարձավ ուշ գիշերը հոգնած, բայց գոհ։

— Սաշենկային տեսա՞,— ասաց նա որդուն։— Քեզ բարևում է։ Իսկ այդ Եգոր Իվանովիչն այնպես պարզ մարդ է, կատակո՞ղ։ Սիծաղելի բաներ է ասում։

— Ես ուրախ եմ, որ նրանք քեզ դուր են գալիս,— կամաց ասաց Պավելը։

— Պարզ մարդիկ են, Պա՛շա։ Լավ է, երբ մարդիկ պա՛րզ են լինում։ Եվ բոլորը քեզ հարգում են...

Երկուշաբթի Պավելը նորից աշխատանքի չգնաց, նրա գլուխը ցավում էր։ Բայց ճաշին վազեվազ եկավ Ֆեդյա Մազինը հուզված, երջանիկ և հոգնածությունից հևալով հաղորդեց.

— Գնա՛նք։ Ամբողջ գործարանը ոտքի է կանգնել։ Քո հետևից ուղարկեցին։ Սիզովն ու Մախոտինն ասում են, թե ամենից լավ դու կարող ես բացատրել։ Ի՞նչ է տեղի ունենում։

Պավելը լուռ սկսեց հագնվել։

— Կանայք վազելով եկել են, ճվվո՞ւմ են։

— Ես էլ կգամ,— հայտնեց մայրը։— Մի տեսնեմ ի՞նչ են սարքել այնտեղ։ Ես կգա՛մ։

— Արի՛,— ասաց Պավելը։

Փողոցով անցան արագ և լուռ։ Մայրը շնչասպառ էր լինում հուզմունքից և զգում էր, որ մի ինչ-որ կարևոր բան է վրա հասնում։ Գործարանի դարբասի մոտ կանգնած էին մի խումբ կանայք՝ աղմկալից հայհոյելով։ Երբ երեք հոգին մի կերպ մտան բակը, միանգամից ընկան խիտ, սև, գրգռված դժվժացող ամբոխի մեջ։ Մայրը տեսնում էր, որ գլուխները դարձած են դեպի մի կողմ, դեպի դարբնոցային ցեխի պատը, ուր հին երկաթների կույտի վրա և կարմիր աղյուսի ֆոնի վրա կանգնած՝ ձեռքերը դեսուդեն էին շարժում Սիզովը, Մախոտինը, Վյալովը և էլի հասակավոր, ազդեցիկ բանվորներից մի հինգ հոգի։

— Վլասովը գալի՞ս է,— գոռաց մեկը։

— Վլա՞սովը։ Այստե՛ղ բերեք...

— Հանդա՜ռտ,— միանգամից գոռացին մի քանի տեղից։

Եվ մոտիկ մի տեղ հնչում էր Ռիբինի հանգիստ ձայնը.

— Ոչ թե մի կոպեկի համար պետք է պինդ կանգնել, այլ արդարության, ա՛յ թե ինչ։ Մեզ համար թանկ է ոչ թե մեր կոպեկը, որը մյուս կոպեկներից ավելի կլոր չի, այլ այն, որ նա ավելի ծանր է, նրա մեջ մարդկային արյուն ավելի շատ կա, քան դիրեկտորի ռուբլու մեջ, ա՛յ թե ինչ։ Եվ ոչ թե կոպեկն ենք թանկ գնահատում, այլ արյունը, ճշմարտությունը, ա՛յ թե ինչ։

Նրա խոսքերն ընկնում էին ամբոխի վրա և բուռն բացականչություններ առաջ բերում։

— Ճի՜շտ է, Ռի՜բին։

— Ուղի՜ղ է, հնոցապա՜ն։

— Վլասովը եկա՜վ։

Խլացնելով մեքենաների ծանր աղմուկը, գոլորշու դժվարին հառաչները և հաղորդիչների սոսափյունը՝ ձայները միաձուլվում, դառնում էին մի աղմկալից մրրիկ։ Ամեն տեղից շտապով մարդիկ էին գալիս վազեվազ, ձեռքները շարժելով, իրար բորբոքելով տաք, ծակող խոսքերով։ Վրդովմունքը, որ միշտ նինջի մեջ թաքնված էր հոգնած կրծքերում, զարթնում էր, ելք էր պահանջում, հաղթականորեն թռչում էր օդում, ավելի ու ավելի լայն փռելով մուգ թևերը, ավելի ամուր գրկելով մարդկանց, նրանց տանելով իր հետևից, իրար ընդհարվելով, վերածվելով բոցավառ ցասումի։ Ամբոխի վրա օրորվում էր մրի ու փոշու ամպը, քրտինքով պատած դեմքերը վառվում էին, այտերի մաշկը լալիս էր սև արցունքներով։ Մութ դեմքերի վրա պսպղում էին աչքերը, փայլում էին ատամները։

Այնտեղ, ուր կանգնած էին Սիզովն ու Մախոտինը, երևաց Պավելը, և հնչեց նրա կանչը.

— Ընկերնե՛ր։

Մայրը տեսնում էր, թե ինչպես գունատվեց նրա դեմքը և շրթունքները դողացին. նա ակամա առաջ շարժվեց՝ ամբոխը դեսուդեն հրելով։ Գրգռված ասում էին նրան.

— Ո՞ւր ես խցկվում։

Նրան հրում էին։ Բայց դա չէր կանգնեցնում մորը. ուսերով և արմունկներով մարդկանց դեսուդեն գցելով՝ նա դանդաղորեն ավելի ու ավելի էր մոտենում որդուն, նրա կողքին կանգնելու ցանկությանը ենթարկվելով։

Իսկ Պավելը կրծքից դուրս նետելով այն բառը, որի մեջ նա սովորել էր խոր ու կարևոր միտք դնել, զգաց, որ իր կոկորդը սեղմում է մարտական ուրախության ջղաձգումը, իրեն համակում է ճշմարտության երազի կրակով վառված իր սիրտը մարդկանց առջև գցելու ցանկությունը։

— Ընկերնե՛ր,— կրկնեց նա՝ այդ խոսքից հրճվանք և ուժ առնելով։— Մենք այն մարդիկն ենք, որոնք կառուցում են եկեղեցիներ ու գործարաններ, կռում են շղթաներ ու փող, մենք այն կենդանի ուժն ենք, որը կերակրում ու զվարճացնում է բոլորին՝ բարուրից սկսած մինչև գերեզման...

— Այդ է որ կա,— գոչեց Ռիբինը։

— Մենք միշտ և ամեն տեղ առաջինն ենք աշխատանքի մեջ և վերջին տեղում ենք կյանքում։ Ո՞վ է հոգում մեզ համար։ Ո՞վ է մեզ բարիք ուզում։ Ո՞վ է մեզ մարդ հաշվում։ Ոչ ո՛ք։

— Ոչ ո՛ք,— արձագանքի պես կրկնեց մեկի ձայնը։

Պավելն իրեն տիրապետելով՝ սկսեց խոսել ավելի պարզ, հանգիստ։ Ամբոխը դանդաղորեն մոտենում էր նրան, դառնալով մութ, հազար գլխանի մի մարմին։ Նա նայում էր Պավելի դեմքին հարյուրավոր ուշադիր աչքերով, ներծծում էր նրա բառերը։

— Մենք լավ վիճակի չենք հասնի, մինչև որ մեզ չզգանք, ընկերնե՛ր, բարեկամների ընտանիք, բարեկամների, որոնք իրար հետ կապված են մի՛ ցանկությամբ, մեր իրավունքների համար կռվելու ցանկությամբ։

— Գործի մասի՛ն խոսիր,— կոպիտ գոռացին մոր կողքից ինչ-որ մի տեղից։

— Մի՛ խանգարիր,— ոչ բարձր հնչեց տարբեր տեղերից երկու ձայն։

Մրոտված դեմքերը խոժոռվում էին թերահավատորեն, մռայլ, տասնյակ աչքեր նայում էին Պավելի դեմքին լուրջ, մտախոհ։

— Սոցիալիստ է, բայց հիմար չէ,— նկատեց մեկը։

— Վա՜հ։ Համարձա՜կ է խոսում,— մոր ուսը հրելով ասաց մի բարձրահասակ, աչքը շիլ բանվոր։

— Ժամանակն է, ընկերնե՛ր, հասկանալու, որ, բացի մեզնից, մեզ ոչ ոք չի օգնելու։ Մեկն ամենքի համար, ամենքը մե-

կի համար, ահա մեր օրենքը, եթե մենք ուզում ենք հաղթահարել թշնամուն։

— Ճիշտ է խոսում, աղե՛րք,— գոչեց Մախոտինը։

Եվ ձեռքը լայն թափ տալով՝ նա բռունցքը թափահարեց օդում։

— Պետք է դիրեկտորին դո՛ւրս կանչել,— շարունակեց Պավելը։

Ամբոխին կարծես մրրիկ հարվածեց։ Նա տարուբերվեց, և տասնյակ ձայներ միանգամից գոռացին.

— Դիրեկտորին այստե՛ղ բերեք։

— Պատգամավորնե՛ր ուղարկել հետևից։

Մայրը հրելով առաջ անցավ և նայում էր որդուն ցածից վերև՝ հպարտությամբ լի։ Պավելը կանգնած էր հին, հարգված բանվորների մեջ, բոլորն ականջ էին դնում նրան և նրա հետ համաձայնում։ Մորը դուր էր գալիս, որ որդին չի բարկանում, չի հայհոյում մյուսների նման։

Ինչպես կարկուտը երկաթի վրա՝ կցկտուր թափվում էին բացականչություններ, հայհոյանքներ, շար խոսքեր։ Պավելը մարդկանց նայում էր վերևից և լայն բացված աչքերով ինչ-որ բան էր փնտրում նրանց մեջ։

— Պատգամավորնե՛ր։

— Սի՛զովին։

— Վլա՛սովին։

— Ռի՛բինին։ Նա սարսափեցուցիչ ատամնե՛ր ունի։

Հանկարծ ամբոխի մեջ ոչ բարձր բացականչություններ լսվեցին.

— Ի՞նքն է գալիս...

— Դիրե՛կտորը...

Ամբոխը ետ քաշվեց՝ ճանապարհ տալով սուր մորուքով ու երկար դեմքով բարձրահասակ մարդուն։

— Թողե՛ք,— ասում էր նա՝ ձեռքի կարճ շարժումով իր ճանապարհից հեռացնելով բանվորներին, բայց առանց դիպչելու նրանց։ Նրա աչքերը կկոցված էին, և մարդկանց վրա փորձված իշխողի աչքերով նա փորձող հայացք էր գցում բանվորների դեմքերին։ Նրա առջև գլխարկները վերցնում էին, նրան գլուխ էին տալիս, նա գնում էր առանց բարևներին պատասխանելու և ժողովրդի մեջ տարածում անդորրություն, շփոթմունք, ամոթահար ժպիտներ և ցածրաձայն բացականչություններ, որոնց մեջ լսվում էր արդեն այն մանուկների զղջումը, որոնք գիտակցում են, թե չարություն են արել։

Ահա նա անցավ մոր մոտով՝ խիստ աչքերը նրա դեմքին սահեցնելով, կանգ առավ երկաթե կույտի մոտ։ Վերևից մեկը ձեռքը մեկնեց նրան,— նա չբռնեց, ազատ, մարմնի ուժեղ շարժումով վեր բարձրացավ, կանգնեց Պավելի ու Սիզովի առաջ, հարցրեց.

— Սա ի՞նչ հավաքույթ է։ Ինչո՞ւ եք աշխատանքը թողել։

Մի քանի վայրկյան լռություն էր տիրում։ Մարդկանց գլուխներն օրորվում էին հասկերի պես։ Սիզովն օդում գլխարկը թափ տալով՝ ուսերը շարժեց և կախեց գլուխը։

— Ես հարցնո՛ւմ եմ,— գոռաց դիրեկտորը։

Պավելը կանգնեց նրա կողքին և Սիզովի ու Ռիբինի վրա մատնանշելով, բարձրաձայն ասաց.

— Ընկերների կողմից մենք երեքս լիազորված ենք պահանջելու, որ դուք փոխեք մի կոպեկ դուրս գալու ձեր արած կարգադրությունը...

— Ինչո՞ւ,— հարցրեց դիրեկտորն առանց Պավելի վրա նայելու։

— Մենք արդարացի չենք համարում մեզ վրա դրված այդ հարկը,— բարձրաձայն ասաց Պավելը։

— Դուք ի՞նչ է, ճահիճը չորացնելու իմ մտադրության մեջ տեսնում եք միայն բանվորներին շահագործելու ցանկությո՞ւն, բայց ոչ նրանց կենցաղը բարելավելու հոգատարությո՞ւն։ Այո։

— Այո՛,— պատասխանեց Պավելը։

— Դուք է՞լ,— հարցրեց դիրեկտորը Ռիբինին։

— Բոլորս միատեսակ,— պատասխանեց Ռիբինը։

— Իսկ դո՞ւք, պատվելի՛,— դարձավ դիրեկտորը Սիզովին։

— Դե ես էլ եմ խնդրում. լավ է որ մեր կոպեկը թողնեք մեզ մնա։

Եվ գլուխը նորից կախելով, Սիզովը հանցավորի պես ժըպտաց։

Դիրեկտորը դանդաղորեն աչքերը շուռ ածեց ամբոխի վրա, ուսերը թոթվեց։ Ապա փորձող հայացքով տնտղեց Պավելին և նկատեց.

— Դուք բավական ինտելիգենտ մարդ եք երևում, մի՞թե դուք էլ չեք հասկանում այդ միջոցի օգտակարությունը։

Պավելը բարձրաձայն պատասխանեց.

— Եթե գործարանը ճահիճը չորացնի ի՛ր հաշվին, այդ ամե՛նքը կհասկանան։

— Գործարանը բարեգործությամբ չի զբաղվում,— չոր-չոր նկատեց դիրեկտորը։— Ես բոլորիդ հրամայում եմ անմիջապես աշխատանքի անցնել։

Եվ նա սկսեց ցած իջնել՝ ոտով երկաթն զգուշությամբ շոշափելով և ոչ ոքի վրա չնայելով։

Ամբոխի մեջ դժգոհության աղմուկ բարձրացավ։

— Ի՞նչ է,— հարցրեց դիրեկտորը կանգ առնելով։

Բոլորը լռեցին, միայն հեռու մի տեղից հնչեց մի մենակ ձայն.

— Ի՞նքդ աշխատիր...

— Եթե մինչև տասնհինգ րոպե դուք չսկսեք աշխատել, ես կհրամայեմ բոլորիդ վրա տուգանք գրել,— չոր և որոշակի պատասխանեց դիրեկտորը։

Նա նորից անցավ ամբոխի միջով, բայց այժմ նրա հետևից լսել տրտունջ էր բարձրանում, և որքան ավելի էր հեռանում նրա կերպարանքը, այնքան ավելի էին բարձրանում աղաղակները.

— Եկ խոսի՛ր դրա հետ։

— Ահա՛ քեզ և իրավունք։ Է՜հ, կյանք է հա՛...

Դիմում էին Պավելին՝ գոչելով նրան.

— Հե՛յ, օրենսգետ, ի՞նչ անենք հիմա։

— Դու խոսեցիր-խոսեցիր, իսկ նա եկավ, ամեն բան ջընջե՛ց։

— Ապա՛, Վլա՛սով, ի՞նչ անենք։

Երբ աղաղակներն ավելի պահանջկոտ դարձան, Պավելը հայտնեց.

— Ընկերնե՛ր, ես առաջարկում եմ թողնել աշխատանքն այնքան ժամանակ, մինչև որ նա հրաժարվի մեկ կոպեկից...

Բառերը գրգռված թռչկոտում էին։

— Հիմարնե՛ր եք գտել։

— Գործադո՞ւլ։

— Մի կոպեկի՞ համար։

— Ի՞նչ կա որ։ է՛, թո՛ղ գործադուլ լինի։

— Դրա համար բոլորիս վզակոթին տալով դուրս կանեն...

— Իսկ ո՞վ կաշխատի։

— Կճարվե՛ն։

— Հուդանե՛ր։

XIII

Պավելը ցած իջավ և կանգնեց մոր կողքին։

Շուրջն ամենքը թնդացին, իրար հետ վիճելով, վրդովվելով, ճչալով։

— Գործադուլը գլո՛ւխ չի գա,— ասաց Ռիբինը՝ Պավելին մոտենալով։— Ժողովուրդը թեև ագահ է, բայց՝ վախկոտ։ Մի երեք հարյուր հոգի կանցնեն քո կողմը, ոչ ավելի։ Աղբի մի այդպիսի կույտ մի եղանով բարձրացնել չի կարելի...

Պավելը լուռ էր։ Նրա առջև օրորվում էր ամբոխի ահագին, սև դեմքը և պահանջողաբար նայում էր նրա աչքերին։ Սիրտը տագնապով խփում էր։ Վլասովին թվում էր, թե նրա խոսքերն անհետ չքացան մարդկանց մեջ անձրևի նոսր կաթիլների պես, որոնք ընկնում են երկարատև երաշտից ուժասպառ հողի վրա։

Նա տուն գնաց տխուր, հոգնած։ Նրա հետևից գնում էին մայրն ու Սիզովը, իսկ կողքից քայլում էր Ռիբինը և ականջին ղողանջում.

— Դու լավ ես խոսում, բայց սրտի վրա չես ազդում, ա՛յ թե ինչ։ Պետք է սրտի մեջ, ուղղակի խորքը կայծ գցել։ Բանականությամբ չես կարող մարդկանց համոզել, այդ կոշիկը նրանց ոտովը չէ, բարակ է, նե՛ղ է։

Սիզովն ասում էր մորը.

— Մեր՝ ծերերիս ժամանակն է հանգստարան գնալու, Նի՛լովնա։ Նոր ժողովուրդ է դուրս եկել։ Մենք ի՞նչ ենք ապրել։ Ծնկների վրա սողացել ենք և միշտ խոր գլուխ տվել։ Իսկ հիմա մարդիկ, ասեմ՝ թե խելքները գլուխներն է եկել, թե է՛լ ավելի վատ են սխալվում, մի խոսքով՝ նմա՛ն չեն մեզ։ Ա՛յ, երիտասարդները դիրեկտորի հետ խոսում են, ինչպես հավասարի հետ... այո-ո՛։ Յտեսությո՛ւն, Պա՛վել Միխայլով, լա՛վ ես մարդկանց պաշտպան կանգնում, եղբա՛յրս։ Աստված քեզ բարի տա, գուցե մի ելք գտնես, աստվա՛ծ անի։

Նա գնաց։

— Հա՛, մեռե՛ք, էլի՛,— բարբաջում էր Ռիբինը։— Հենց հիմա էլ դուք մարդիկ չեք, այլ ծեփ, ձեզանով միայն կարելի է

ճեղքեր ծեփել։ Տեսա՞ր դու, Պա՛վել, թե ովքեր էին գոռում, որ քեզ պատգամավոր ընտրեն։ Նրանք, որոնք ասում են, թե դու սոցիալիստ, խառնակիչ ես, ա՛յ թե ինչ, նրա՛նք։ Այսինքն թե՝ թող վռնդեն քեզ, տեղն է։

— Նրանք իրենց կարծիքով իրավացի են,— ասաց Պավելը։

— Գայլերն էլ են իրավացի, երբ հոշոտում են իրենց ընկերոջը...

Ռիբինի դեմքը մռայլ էր, ձայնն անսովոր կերպով ցընցվում էր։

— Մարդիկ լոկ խոսքին չեն հավատա, հարկավոր է տանջվել, հարկավոր է խոսքն արյունի մեջ լվանալ...

Ամբողջ օրը Պավելը շրջում էր մռայլ, հոգնած, տարօրինակ կերպով անհանգիստ, նրա աչքերը վառվում էին և կարծես մի բան էին որոնում։ Մայրն այդ նկատելով՝ զգուշությամբ հարցրեց.

— Քեզ ի՞նչ է պատահել, Պա՛շա, հը՞։

— Գլուխս ցավում է,— մտախոհ ասաց Պավելը։

— Պառկեիր, լավ կլիներ, ես բժիշկ կկանչեմ...

Պավելը նայեց մորը և շտապ պատասխանեց.

— Չէ, պետք չի՛։

Եվ հանկարծ մեղմորեն ասաց.

— Երիտասարդ, թույլ եմ ես, ա՛յ թե ինչ։ Ինձ չհավատացին, չգնացին իմ ճշմարտության հետևից, նշանակում է՝ ես չկարողացա՞ ասել նրանց այդ ճշմարտությունը... Լավ չեմ զգում ինձ, ամաչո՞ւմ եմ ինքս ինձանից։

Մայրը նրա մռայլ դեմքին նայելով և մխիթարել կամենալով՝ կամացուկ ասաց.

— Դու սպասի՛ր մի քիչ։ Այսօր չեն հասկացել, վաղը կհասկանան...

— Պե՞տք է հասկանան,— բացականչեց Պավելը։

— Չէ՞ որ, ա՛յ, նույնիսկ ես տեսնում եմ քո ճշմարտությունը...

Պավելը մոտեցավ նրան։

— Դու, մա՛յր, լավ մարդ ես...

Եվ երեսը նրանից դարձրեց։ Մայրը ցնցվելով, կարծես որդու մեղմ բառերից այրված, ձեռը սրտին դրեց ու գնաց՝ զգուշորեն տանելով որդու գուրգուրանքը։

Գիշերը, երբ մայրը քնած էր, իսկ Պավելն անկողնում

պառկած գիրք էր կարդում, ժանդարմները եկան և բարկացած սկսեցին տակնուվրա անել ամեն տեղ, բակում, տանիքում։ Դեղնագեմ սպան իրեն պահում էր էլի այնպես, ինչպես առաջին անգամ, վիրավորական, ծաղրական ձևով, բավականություն գտնելով ծաղրուծանակի մեջ, աշխատելով վշտացնել։ Մայրն անկյունում նստած լուռ էր, աչքերը որդու դեմքից չհեռացնելով։ Որդին աշխատում էր ցույց չտալ իր վրդովմունքը, բայց երբ սպան ծիծաղում էր, Պավելի մատները տարորեն շարժվում էին, և մայրն զգում էր, որ որդու համար դժվար է չպատասխանել ժանդարմին, դժվար է դիմանալ նրա կատակներին։ Այժմ մոր համար այնպես սարսափելի չէր, ինչպես առաջին խուզարկության ժամանակ, նա ավելի մեծ ատելություն էր զգում դեպի ոտներին խթաններ ունեցող այդ գիշերաթիթ գորշ հյուրերը, և ատելությունը իր մեջ կլանում էր տագնապը։

Պավելը ժամանակ գտավ շշնջալու նրան.

— Ինձ կտանեն...

Մայրը գլուխը թեքելով կամաց պատասխանեց.

— Հասկանում եմ...

Նա հասկանում էր, որդուն բանտ կնստեցնեն նրա համար, ինչ նա այդ օրն ասել էր բանվորներին։ Բայց ինչ որ ասել էր նա, դրան ամենքը համաձայնում էին և ամենքը պետք է նրան պաշտպան հանդիսանան, նշանակում է՝ նրան երկար չեն պահի...

Նա ուզում էր գրկել որդուն, լաց լինել, բայց կողքին կանգնած էր սպան և աչքերը կկոցած իրեն էր նայում։ Սպայի շրթունքները ցնցվում էին, ընչացքները շարժվում, Վլասովային թվում էր, թե այդ մարդն սպասում է նրա արցունքներին, գանգատներին ու խնդրելուն։ Բոլոր ուժերը հավաքելով, աշխատելով քիչ խոսել, մայրը սեղմեց որդու ձեռքը և շունչը պահելով՝ դանդաղ, կամաց ասաց.

— Ցտեսությո՛ւն, Պա՛շա։ Բոլո՞ր վերցրիր, ինչ պետք է։

— Բոլորը։ Ցտխրես։

— Քրիստո՛սը քեզ հետ...

Երբ որդուն տարան, մայրը նստեց նստարանին և աչքերը փակելով՝ ցածրաձայն ողբաց։ Մեջքը պատին դեմ տալով այնպես, ինչպես մի ժամանակ անում էր իր ամուսինը, նա վշտով և իր տկարության վիրավորական գիտակցությամբ ամուր

կաշկանդված գլուխը ետ գցած երկար ժամանակ միալար ողբում էր, այդ հնչյունների մեջ թափելով վիրավորված սրտի ցավը։ Իսկ նրա առջև, ինչպես անշարժ բիծ կանգնել էր նոսր ընչացքներով դեղին դեմքը, և կկոցված աչքերը նայում էին բավականությամբ։ Մոր կրծքում սև կծիկի պես մորմոքվում էին կատաղությունն ու զայրույթը այն մարդկանց դեմ, որոնք մորից խլում են որդուն նրա համար, որ որդին ճշմարտությունն է որոնում։

Ցուրտ էր, անձրևը զարկում էր ապակիներին, թվում էր, գիշերվա մեջ տան շուրջը ման են գալիս անաչք, լայն, կարմիր դեմքերով, երկար ձեռներով գորշ կերպարանքներ՝ մեկի հետքը պահելով։ Ման են գալիս և հազիվ լսելի ձայնով զրընգնացնում են խթանները։

«Ի՞նչ կլիներ ինձ էլ տաներին»,— մտածում էր մայրը։

Շչակը ոռնաց՝ մարդկանց աշխատանքի պահանջելով։ Այդ օրը նա ոռնում էր խուլ, ցած և անվստահ։ Դուռը բացվեց, մտավ Ռիբինը։ Նա կանգնեց Վլասովայի առջև և ափով անձրևի կաթիլները մորուքից սրբելով՝ հարցրեց.

— Տարա՞ն։

— Տարա՞ն անիծվածները,— հառաչելով պատասխանեց մայրը։

— Այդպե՞ս,— ասաց Ռիբինը ժպտալով։— Ինձ էլ խուզարկեցին, ման եկան, այո-ո։ Հայհոյեցին... է՛հ, բայց չնեղացրին։ Տարան՝ նշանակում է Պավելի՞ն։ Դիրեկտորն աչքով արեց, ժանդարմը գլխով արեց, և — մարդը ոտով-գլխով կորա՞վ։ Նրանք իրար բարեկամ են։ Ոմանք կթում են ժողովրդին, մյուսները՝ եղջյուրներից բռնում...

— Պավելի համար միջամտեիք՝ ի՞նչ կլիներ,— բացականչեց մայրը՝ վեր կենալով։— Չէ՞ որ բոլորի համար է գնացել։

— Ո՞վ միջամտի,— հարցրեց Ռիբինը։

— Բոլորդ։

— Սրա՞ն տես։ Չէ՞, այդպիսի բան չի կարող լինել։

Քմծիծաղը դեմքին նա դուրս եկավ ծանր քայլերով, մոր վիշտը մեծացնելով իր խոսքերի դաժան անհուսությամբ։

— Հանկարծ ծեծե՞ն, չարչարե՞ն...

Մայրը երևակայում էր որդու մարմինը ծեծված, պատառոտված, արյունաթաթախ, և երկյուղը սառը հողակույտի պես ընկնում էր նրա կրծքին, ճնշում նրան։ Աչքերը ցավ էին զգում։

Նա վառարանը չէր վառել, իր համար ճաշ չէր եփել և թեյ չէր խմել, միայն ուշ երեկոյան մի կտոր հաց էր կերել։ Եվ երբ պառկեց քնելու, այնպես մտածեց, որ իր կյանքը դեռ երբեք այսպես միայնակ, մերկ չէր եղել։ Վերջին տարիները նա սովորել էր ապրել՝ մշտապես սպասելով մի ինչ-որ կարևոր, բարի բանի։ Նրա շուրջն աղմկելով աշխույժ պտտվում էին երիտասարդները և նրա առջև միշտ կանգնած էր լինում որդու, այդ անհանգիստ, բայց լավ կյանք ստեղծողի լուրջ դեմքը։ Եվ ահա նա չկա և — ոչ մի բան չկա։

XIV

Դանդաղ անցավ օրը, անցավ անքուն գիշերը, և է՛լ ավելի դանդաղ՝ մյուս օրը։ Մայրն սպասում էր որևէ մեկին, բայց ոչ ոք չերևաց։ Եկավ երեկոն։ Եվ՝ գիշերը։ Հառաչում և պառտերն էր քստքստացնում սառն անձրևը, խողովակը ղողանջում էր, հատակի տակ մի բան էր դեսուդեն ընկնում։ Կտրից կաթում էր և կաթիլների անկման թախծոտ հնչյունը տարօրինակ կերպով միանում էր ժամացույցի տկտկոցի հետ։ Թվում էր, թե ամբողջ տունը կամաց օրորվում է, և շուրջն ամեն ինչ անպետք է, մեռել է թախծի մեջ...

Պատուհանը կամաց խփեցին — մեկ, երկու... Մայրը սովորել էր այդ թխկոցին, դա չէր վախեցնում մորը, բայց այս անգամ ցնցվեց սրտի ուրախ ծակոցից։ Աղոտ մի հույս արագ ոտքի կանգնեցրեց նրան։ Շալն ուսերին գցելով նա դուռը բաց արեց...

Մտավ Սամոյլովը, իսկ նրա հետևից մի ուրիշ մարդ, դեմքը վերարկուի օձիքով ծածկած, գլխարկը հոնքերին քաշած։

— Ձեզ արթնացրի՞նք,— առանց բարևելու հարցրեց Սամոյլովը, որը սովորականին հակառակ մտահոգված և մռայլ էր։

— Ես քնած չէի,— պատասխանեց մայրը և լուռ՝ սպասող աչքերը հառեց նրանց վրա։

Սամոյլովի ուղեկիցը ծանր ու խոպոտ հառաչելով գլխարկը վերցրեց և կարճ մատներով լայն ձեռը մեկնելով մորը՝ ասաց նրան բարեկամաբար, ինչպես հին ծանոթի.

— Բարև, մայրի՛կ։ Չճանաչեցի՞ք։

— Այս դո՞ւք եք,— բացականչեց Վլասովան՝ հանկարծ մի բանի վրա ուրախանալով։— Եգոր Իվա՞նովիչ։

— Ե՛ս եմ,— պատասխանեց նա՝ տիրացուի մազերի պես երկար մազերով իր մեծ գլուխը թեքելով։ Նրա լիքը դեմքը բարեմտորեն ժպտում էր, մանրիկ, գորշագույն աչքերը մոր դեմքին էին նայում սիրալիր ու պայծառ։ Նա նման էր ինքնաեռի, նույնպես կլոր, կարճլիկ, հաստավիզ և կարճաբազուկ։ Նրա դեմքը պլպլում էր ու փայլում, նա շնչում էր աղմկալի, և նրա կուրծքն ամբողջ ժամանակ խզզում, խռռացնում էր...

— Անցեք սենյակը, ես իսկույն կհագնվեմ,— առաջարկեց մայրը։

— Մենք գործ ունենք ձեզ հետ,— մտահոգ ասաց Սամոյլովն՝ աչքի տակով նայելով մորը։

Եգոր Իվանովիչը սենյակ անցնելով՝ այնտեղից ասաց.

— Այսօր առավոտյան, սիրելի՛ մայրիկ, բանտից դուրս էր եկել ձեզ հայտնի Նիկոլայ Իվանովիչը...

— Մի՞թե նա այնտեղ էր,— հարցրեց մայրը։

— Երկու ամիս և տասնմեկ օր նստեց։— Այնտեղ տեսել էր խոխոլին, նա ձեզ բարևել է, և Պավելին, որը նույնպես բարևում է, խնդրում է ձեզ չանհանգստանալ և ասել ձեզ, որ նրա գնացած ճանապարհին մարդուս հանգստի տեղը միշտ բանտն է լինում, այդպես է արդեն սահմանել մեր հոգատար իշխանությունը։ Հետո, մայրի՛կ, ես գործի կանցնեմ։ Դուք գիտե՞ք, թե երեկ քանի մարդ են բռնել։

— Ո՛չ։ Բայց մի՞թե բացի Պաշայից...— բացականչեց մայրը։

— Նա քառասունիններորդն է,— ընդհատեց նրան Եգոր Իվանովիչը հանգիստ։— Եվ պետք է սպասել, որ իշխանությունը մի տասը հոգի էլ կտանի։ Ա՛յ, այս պարոնին էլ...

— Այո՛, ինձ էլ,— մռայլ ասաց Սամոյլովը։

Վլասովան զգաց, որ շնչելը հեշտացավ...

«Նա մենակ չէ այնտեղ»,— անցավ նրա գլխով...

Հագնվելով՝ նա մտավ սենյակ և աշխույժ ժպտաց հյուրին։

— Երևի երկար չեն պահի, քանի որ այդքան շատ են բռնոտել...

— Ճի՛շտ է,— ասաց Եգոր Իվանովիչը,— իսկ եթե մենք կարողանանք փչացնել նրանց այդ պատարագը, նրանք միանգամայն հիմար դրության մեջ կընկնեն։ Բանն այսպես է. եթե մենք հիմա դադարենք գործարան տանել մեր գրքույկները, ողորմելի ժանդարմները կկառչեն այդ տխուր երևույթից և

կդարձնեն այդ հանգամանքը Պավելի և այն ընկերների դեմ, որոնք նրա հետ բանտ են նետված...

— Ինչպե՞ս թե,— անհանգիստ գոչեց մայրը։

— Շատ պարզ է,— մեղմորեն ասաց Եգոր Իվանովիչը։— Երբեմն ժանդարմներն էլ են ուղիղ դատում։ Մտածեցե՛ք, տեսեք. երբ Պավելը կար՝ գրքույկներն ու թղթիկներն էլ կային, Պավելը չկա՝ ոչ գրքույկներ կան, ոչ թղթիկնե՛ր։ Ուրեմն նա՛ է եղել գրքույկները տարածողը, հա-ա՜։ է՛, և կսկսեն բոլորի հոգին հանել, ժանդարմները սիրում են այնպես մաքրազարդել մարդուս, որ նրանից միայն շնչին բան մնա...

— Ես հասկանում եմ, հասկանում եմ,— վշտանալով ասաց մայրը։— Ա՛խ, տե՛ր աստված։ Հիմա ի՞նչ անենք։

Խոհանոցից հնչեց Սամոյլովի ձայնը.

— Համարյա ամենքին բռնել են,— սատանա՛ն տանի նրանց... Հիմա պետք է մենք գործը շարունակենք առաջվա նման ոչ միայն գործի համար, այլև ընկերներին ազատելու համար։

— Իսկ աշխատող չկա՞,— ավելացրեց Եգորը ժպտալով։— Գերազանց որակի գրականություն ունենք, ինքս եմ պատրաստել... Բայց ինչպե՞ս ներս տանենք գործարան, սա՛ է, որ հայտնի չէ։

— Սկսել են բոլորին խուզարկել դարպասում,— ասաց Սամոյլովը։

Մայրն զգում էր, որ իրենից ինչ-որ բան են ուզում, սպասում, և շտապ հարցրեց.

— Հը՛, որ ի՞նչ։ Ի՞նչ անենք հիմա։

Սամոյլովը շեմքում կանգնեց և ասաց.

— Դուք, Պելագե՛յա Նիլովնա, ծանոթ եք մանրավաճառուհի Կորսունովային...

— Ծանոթ եմ, հետո՞։

— Նրա հետ խոսեցեք տեսնենք, նա չի՞ անց կացնի արդյոք։

Մայրը ձեռը բացասաբար թափ տվեց.

— Օ՜, ո՛չ։ Նա շատախոս կին է, ո՛չ։ Որ իմանան, թե դա իմ միջոցով է եղել, այս տանից... ո՛չ, ո՛չ։

Եվ հանկարծ մի միտք առկայծեց նրա գլխում, ու նա կամաց ասաց.

— Դուք տվեք ինձ, ի՛նձ տվեք։ Արդեն ես ինքս գլուխ կբե-

ռեմ, ինքս հնար կգտնեմ։ Ես հենց Մարյային էլ կխնդրեմ, թող ինձ վերցնի իրեն օգնական։ Ես հաց պե՞տք է ուտեմ, թե չէ, ուրեմն պետք է աշխատեմ։ Ահա և ես ճաշ կտանեմ գործարան, ուրիշների համար։ Ես ինքս մի կերպ գործը գլուխ կբերեմ։

Ձեռները կրծքին սեղմած՝ նա շտապ-շտապ հավատացնում էր, որ ամեն ինչ կանի լավ, աննկատելի, և վերջում հրճվելով բացականչեց.

— Նրանք կտեսնեն, որ Պավելը չկա, բայց նրա ձեռքը մինչև անգամ բանտից էլ է հասնում, նրանք կտեսնե՞ն։

Երեքով էլ աշխուժացան։ Եգորը ձեռներն ամուր շփելով՝ ժպտում էր և ասում.

— Հրաշալի՞ է, մայրի՛կ։ Եթե իմանայիք, թե ի՞նչ սքանչելի բան է։ Ուղղակի զմայլելի է։

— Ես բանտում կնստեմ ինչպես բազկաթոռում, եթե այդ բանը հաջողվի՛,— ձեռները շփելով՝ նկատեց Սամոյլովը։

— Դուք գեղեցկուհի՞ եք,— խռպոտ ձայնով գոչում էր Եգորը։

Մայրը ժպտաց։ Նրա համար պարզ էր. եթե հիմա գործարանում թռուցիկներ երևան, իշխանությունը պետք է հասկանա, որ իր որդի՛ն չէր տարածում դրանք։ Եվ իրեն ընդունակ զգալով կատարելու այդ խնդիրը՝ նա ամբողջովին ցնցվում էր ուրախությունից։

— Երբ Պավելին տեսության կգնաք,— ասում էր Եգորը,— ասացե՛ք նրան, որ նա լավ մայր ունի...

— Ես նրան ավելի շուտ կտեսնեմ,— ժպտալով խոստացավ Սամոյլովը։

— Դուք այդպես էլ ասացե՛ք նրան, ես ամենը, ինչ որ պետք է, կանե՛մ։ Թող նա իմանա՛ այդ։

— Իսկ եթե նրան չնստացնե՞ն,— հարցրեց Եգորը՝ Սամոյլովին մատնանշելով։

— Է՛հ, ի՞նչ արած։

Նրանք երկուսով քրքջացին։ Եվ մայրը հասկանալով իր սխալը՝ սկսեց ծիծաղել ցածրաձայն և շփոթված, մի քիչ խորամանկորեն։

— Սեփականի հետևում ուրիշը վատ է երևում,— ասաց նա՝ աչքերը ցած գցելով։

— Դա բնական է,— բացականչեց Եգորը։— Իսկ Պավելի համար դուք մի՛ անհանգստացեք, մի՛ վշտացեք։ Բանտից նա

է՛լ ավելի լավ կվերադառնա։ Այնտեղ մարդ հանգստանում և սովորում է, իսկ ազատության մեջ մեզ նմանները ժամանակ չեն ունենում դրա համար։ Ա՛յ ես, երեք անգամ նստել եմ և ամեն անգամ թեև ոչ մեծ հաճույքով, բայց խելքի ու սրտի համար անկասկած օգուտով։

— Դուք դժվար եք շնչում,— ասաց մայրը՝ բարյացակամորեն նայելով Եգորի պարզ դեմքին։

— Դա իր հատուկ պատճառներն ունի,— պատասխանեց Եգորը՝ մատը վեր բարձրացնելով։— Ուրեմն վճռվա՞ծ է, մայրի՛կ։ Վաղը մենք ձեզ կհասցնենք նյութը, և նորից կպտտվի դարավոր խավարի կործանման սղոցը։ Կեցցե՛ ազատ խոսքը, և կեցցե՛ մոր սիրտը։ Իսկ առայժմ ցտեսությո՛ւն։

— Ցտեսությո՛ւն,— ասաց Սամոյլովն՝ ամուր սեղմելով մոր ձեռքը։— Իսկ, ա՛յ, ես մորս մոտ բերանս էլ չեմ կարող բանալ այսպիսի բանի մասին խոսելու, այո՛։

— Ամենքը կհասկանա՞ն,— ասաց Վլասովան՝ ցանկանալով նրա սիրտը շահել։

Երբ նրանք հեռացան, մայրը դուռը կողպեց և սենյակի մեջ ծունկ չոքելով՝ սկսեց աղոթել անձրևի աղմուկի տակ։ Աղոթում էր առանց բառերի, համակված մի մեծ խոհով այն մարդկանց մասին, որոնց Պավելը ներգրավել էր իր կյանքի մեջ։ Նրանք կարծես անցնում էին իր և սրբապատկերների արանքով, բոլորն անցնում էին այնպես պարզ, իրար տարօրինակ կերպով մտերիմ և միայնակ։

Առավոտը վաղ նա գնաց Մարյա Կորսունովայի մոտ։

Առևտրական կինը, ինչպես միշտ, յուղաթաթախ և ճվճվան, նրան դիմավորեց կարեկցաբար։

— Վշտանո՞ւմ ես,— հարցրեց նա՝ ճարպոտ ձեռքով մորուսին խփելով։— Թո՜ղ։ Վերցրին տարան, ի՞նչ մեծ ցավ է։ Այդտեղ ոչ մի վատ բան չկա։ Դա առաջ էր՝ գողության համար բանտ էին նստեցնում, իսկ հիմա սկսել են ճշմարտության համար նստեցնել։ Պավելը գուցե մի առանձին բան էլ չասաց, բայց ամենքին պաշտպան կանգնեց, և ամենքը հասկանում են նրա արածը, մի՛ անհանգստանա։ Ամենքը չեն ասում, բայց ամենքը գիտեն, թե լավն ո՛վ է։ Ես միշտ պատրաստվում էի քեզ մոտ գալ, բայց, ա՛յ ժամանակ չունեցա։ Եփում ու ծախում եմ, բայց երևի աղքատ էլ կմեռնեմ։ Սիրականներս հոգիս հանում են, անիծածնե՛րը։ Այնպե՞ս են կրծոտում, այնպե՞ս,

ինչպես ուտիճները՝ բոքոնը։ Մի տասը ռուբլի ետ ես գցում՝ թե չէ, մեկ էլ տեսար մի հերետիկոս դուրս եկավ և փողը լիզե՞ց։ Փորձա՞նք է կին լինելը։ Գարշելի՞ պաշտոն է աշխարհիս երեսին։ Մենակ ապրելը դժվար է, երկուսով էլ զզվելի է։

— Ես եկել եմ քեզ մոտ խնդրելու, որ ինձ օգնական ընդունես,— ասաց Վլասովան՝ ընդհատելով նրա շաղակրատանքը։

— Ինչպե՞ս,— հարցրեց Մարյան և ընկերուհու բացատրությունը լսելով, դրականապես գլխով արավ։

— Կարելի՛ է։ Հիշո՞ւմ ես, դու ինձ երբեմն մարդուցս թաքցնում էիր։ Դե հիմի էլ ե՛ս քեզ կթաքցնեմ կարիքից... Ամենքը պարտավոր են քեզ օգնել, որովհետև քո որդին հասարակական գործի համար է կորչում։ Լա՞վ տղա է որդիդ, այդ ամենքն են ասում անխտիր, և ամենքը խղճում են նրան։ Պիտի ասեմ, որ այդ ձերբակալությունից իշխանությունը խեր չի տեսնի, մի տես գործարանում ի՞նչ է կատարվում։ Վատ են խոսում, սիրելի՛ս։ Այնտեղ նրանք, պետերը, կարծում են, թե մարդու կրունկը կծեցին, էլ չի՞ կարող հեռու գնալ. բայց բանից պարզվում է, որ տասին խփել են՝ հարյուրներն են բարկացել։

Խոսակցությունը վերջացավ նրանով, որ հետևյալ օրը ճաշին Վլասովան գործարանումն էր Մարյայի եփածների երկու թաղարով, իսկ ինքը՝ Մարյան շուկա էր գնացել առևտուր անելու։

XV

Բանվորներն իսկույն նկատեցին նոր առևտրական կնոջը։ Ոմանք նրան մոտենալով՝ հավանությամբ ասում էին։

— Գործի՞ ես անցել, Նի՛լովնա։

Ոմանք էլ մխիթարում էին, հաստատելով, որ Պավելին շուտով բաց կթողնեն, ուրիշները վրդովում էին նրա տխուր սիրտը կարեկցական խոսքերով, երրորդները՝ զայրացած հայհոյում էին դիրեկտորին, ժանդարմներին, մոր կրծքում պատասխանի արձագանք գտնելով։ Կային մարդիկ, որոնք նրան նայում էին շարախնդությամբ, իսկ համարակալ Իսայ Գորբովն ատամների միջից ասաց.

— Եթե ե՛ս լինեի նահանգապետ, ես քո որդուն կկախեի՛։ Թող մարդկանց չմոլորեցնի՛։

Այդ չար սպառնալիքից մոր վրա մեռած սառնություն փչեց։ Նա ոչինչ չպատասխանեց Իսային, միայն նայեց նրա փոքրիկ, պեպեններով ծածկված դեմքին և հառաչելով՝ աչքերը ցած գցեց։

Գործարանում անհանգստություն էր տիրում, բանվորները հավաքվում էին փոքրիկ խմբերով, ինչ-որ բանի մասին կիսաձայն խոսում էին իրար մեջ, ամեն տեղ վխտում էին մտահոգված վարպետները, երբեմն լսվում էին հայհոյանքներ, գոռգոռված ծիծաղ։

Երկու ոստիկաններ նրա մոտով անցկացրին Սամոյլովին. նա գնում էր մի ձեռքը գրպանը դրած, իսկ մյուսով իր կարմրաշիկավուն մազերն ուղղելով։

Նրան ճանապարհ էր դնում մոտ հարյուր հոգուց բաղկացած բանվորների մի խումբ՝ ոստիկանների հետևից հայհոյանք և ծաղրական խոսքեր շպրտելով...

— Ջբոսնելու գնացիր, Գրի՛շա,— կանչեց մեկը նրա հետևից։

— Պատի՛վ մեզ նմաններին,— ձայն տվեց մյուսը։— Պահապաններով ենք ման գալիս...

Եվ թունդ հայհոյեց։

— Գողեր բռնելը երևի ձեռնտու չէ այլևս,— չարացած և բարձրաձայն ասում էր մի բարձրահասակ և շիլ բանվոր։— Սկսել են ազնիվ մարդկանց քարշ տալ...

— Գոնե գիշե՞րը տաներին,— ամբոխի միջից կրկնեց մեկը։— Թե չէ ցերեկը, անամոթաբար... Սրիկանե՛ր։

Ոստիկանները գնում էին մռայլ, արագ, աշխատելով ոչինչ չտեսնել և կարծես թե չլսելով այն բացականչությունները, որոնցով ուղեկցում էին իրենց։ Երեք բանվոր նրանց հանդիմանելիս էին երկաթի մի մեծ շերտ և ոստիկանների վրա ուղղելով այդ երկաթը՝ գոռացին.

— Զգո՛ւյշ, ձկնորսնե՛ր։

Վլասովայի մոտով անցնելիս Սամոյլովը քմծիծաղով՝ գլխով արեց նրան և ասաց.

— Քա՛րշ տվին։

Մայրը լուռ, խոր գլուխ տվեց նրան. մորը հուզում էին այդ ազնիվ, զգաստ, ժպիտը դեմքերին բանտ գնացող երիտասարդները. նրա մեջ մայրական խղճահարվող սեր էր ծագում դեպի նրանք։

Գործարանից վերադառնալով՝ նա ամբողջ օրն անց կացրեց Մարյայի մոտ, աշխատանքի մեջ նրան օգնելով և նրա շաղակրատանքին ականջ դնելով, իսկ ուշ երեկոյան եկավ իր տուն, որ դատարկ էր, ցուրտ և անհրապույր։ Նա երկար ժամանակ անկյունից անկյուն ընկավ՝ իր համար տեղ չգտնելով, չիմանալով ինչ անել։ Նրան էլ անհանգստացնում էր այն, որ ահա շուտով գիշեր կլինի, իսկ Եգոր Իվանովիչը գրականությունը չի բերում, ինչպես խոստացել է։

Պատուհանից դուրս նկատվում էին աշնան ձյունի ծանր, գորշ փաթիլները։ Փափուկ կպչելով ապակիներին՝ նրանք անձայն ցած էին սահում և հալվում՝ իրենց հետևից թաց հետք թողնելով։ Մայրը մտածում էր որդու մասին...

Դուռն զգույշ խփեցին, մայրն արագ վազեց, կեռը դուրս գցեց, մտավ Սաշենկան։ Վաղուց էր, որ մայրը նրան չէր տեսել, և հիմա առաջին բանը, որ նրա աչքովն ընկավ, այդ աղջկա անբնական շաղությունն էր։

— Բարև՛ ձեզ,— ասաց մայրն ուրախանալով, որ մարդ է եկել և գիշերվա մնացած մասն անց կկացնի ո՛չ միայնության մեջ։— Վաղուց է չեք երևում։ Ուրիշ տե՞ղ էիք գնացել։

— Ո՛չ, բանտում նստած էի,— պատասխանեց աղջիկը ժպտալով։— Նիկոլայ Իվանովիչի հետ միասին. հիշո՞ւմ եք նրան։

— Ինչպե՞ս չեմ հիշում,— բացականչեց մայրը։— Երեկ Եգոր Իվանովիչն ինձ ասաց, որ նրան բաց են թողել, իսկ ձեր մասին ես չգիտեմ... Ոչ ոք էլ չի ասել, որ դուք այնտեղ եք...

— Այդ մասին էլ ի՞նչ ասել... Քանի Եգոր Իվանովիչը չի եկել, ես շորերս փոխեմ,— ասաց աղջիկը շուրջը նայելով։

— Դուք թրջված եք ամբողջովին...

— Ես թռուցիկներ և գրքույկներ եմ բերել...

— Տվե՛ք, տվե՛ք,— շտապեց մայրը։

Աղջիկն արագ ետ տարավ վերարկուն, թափ տվեց և, ինչպես ծառից տերևներ են թափվում, վերարկուից հատակի վրա խշխշալով թափվեցին թղթի փաթեթները։ Մայրը ծիծաղելով հավաքում էր դրանք հատակից և ասում.

— Ես էլ նայում տեսնում եմ՝ այնպե՛ս եք լցվել, կարծեցի մարդու եք գնացել, սպասում եք, որ երեխա ծնվի։ Օհո՛, ինչքան շա՛տ եք բերել։ Մի՞թե ոտքով եք եկել։

— Այո,— ասաց Սաշենկան։

Նա հիմա նորից վայելչակազմ և բարակ էր, ինչպես առաջ։ Մայրը տեսնում էր, որ նրա այտերը ներս են ընկել, աչքերը խոշորացել և նրանց տակ մութ բծեր են գոյացել։

— Նոր են բաց թողել ձեզ, հարկավոր է հանգստանալ, իսկ դուք...— հառաչելով և գլուխն օրորելով ասաց մայրը։

— Հարկավո՛ր է,— պատասխանեց աղջիկը ցնցվելով։— Ասացե՛ք, ինչպե՞ս էր Պավել Միխայլովիչը, ոչի՞նչ... Շատ չվրդովվե՞ց։

Հարցնելիս Սաշենկան մորը չէր նայում, գլուխը թեքած նա ուղղում էր մազերը, և նրա մատները դողդողում էին։

— Ոչինչ,— պատասխանեց մայրը։— Նա ինքն իրեն մատնողը չի։

— Նա լավ առողջություն ունի, չէ՞,— կամաց հարցրեց աղջիկը։

— Չի հիվանդացել երբեք,— պատասխանեց մայրը։— Դուք ոտից գլուխ դողում եք։ Ես հիմա ձեզ մորու մուրաբայով թեյ կխմացնեմ։

— Դա լավ կլիներ։ Միայն թե արժե՞, որ դուք անհանգստանաք։ Ուշ է։ Թողեք ես ինքս...

— Հոգնած-հոգնած,— հանդիմանորեն արձագանքեց մայրը՝ շարժվել սկսելով ինքնաեռի մոտ։ Սաշան էլ գնաց խոհանոց, նստեց այնտեղ նստարանին և ձեռը գլխի հետևը դնելով, ասաց.

— Այնուամենայնիվ բանտը թուլացնում է։ Անիծված անգործություն։ Դրանից ավելի տանջող ոչ մի բան չկա։ Գիտես, թե ինչքան շատ աշխատել է հարկավոր, և նստում ես վանդակում գազանի պես...

— Ձեզ ո՞վ կվարձատրի այդ ամենի համար,— հարցրեց մայրը։

Եվ հառաչելով ինքն իրեն պատասխանեց.

— Ոչ ոք, բացի աստծուց։ Երևի դուք էլ չեք հավատում նրան, հա՞։

— Ո՛չ,— հակիրճ պատասխանեց աղջիկը՝ գլուխն օրորելով։

— Իսկ ես ձեզ չեմ հավատում,— հանկարծ գրգռվելով՝ հայտնեց մայրը։ Եվ ածուխով կեղտոտված ձեռները գոգնոցով արագ սրբելով՝ նա խոր համոզմունքով շարունակեց.

— Դուք ձեր հավատը չեք հասկանում։ Ինչպե՞ս կարելի է առանց աստծուն հավատալու ապրել այդպիսի կյանքով։

Նախասենյակում մեկը ոտները աղմուկով դոփեց, փնթփընթաց, մայրը ցնցվեց, աղջիկն արագ վեր թռավ և շտապ շշնջաց.

— Զբանաք, եթե այդ նրանք են՝ ժանդարմները, ձևացրեք, թե ինձ չեք ճանաչում... որ իբր ես տունը շփոթել եմ, ձեզ մոտ պատահմամբ եմ մտել, ուշաթափվել, դուք շորերս հանել եք, գրքերը գտել, հասկանո՞ւմ եք։

— Սիրելիս, ինչո՞ւ,— խանդաղատանքով հարցրեց մայրը։

— Սպասեցե՛ք,— ականջ դնելով ասաց Սաշենկան։— Սա կարծես թե Եգորն է...

Դա նա՛ էր, թրջված և հոգնածությունից շնչասպառ։

— Հա՛։ Ինքնաեռը պատրա՞ստ է,— բացականչեց նա։— Դա ամեն բանից լավ է կյանքում, մայրի՛կ։ Դուք արդեն այստե՞ղ եք, Սա՛շենկա։

Փոքրիկ խոհանոցը խոպոտ հնչյուններով լցնելով՝ նա դանդաղորեն ծանր-ծանր հանում էր վերարկուն և առանց կանգ առնելու՝ խոսում.

— Ա՛յ, մայրի՛կ, այս աղջիկը շատ անդուրեկան է իշխանության համար։ Վիրավորվելով բանտի տեսչից՝ սա հայտնեց նրան, թե սովամահ է լինելու, եթե տեսուչն իրենից ներողություն չխնդրի, և ութ օր բան չի կերել, որից քիչ է մնացել ոտները մեկնի, մեռնի։ Վատ չի՞։ Իմ փո՞ղս ոնց է, հը՞։

Շաղակրատելով և կարճ ձեռներով անճոռնի կերպով կախ ընկած փորը պահելով՝ նա անցավ սենյակը, դուռը հետևից ծածկեց, բայց այնտեղ ևս շարունակեց ինչ-որ բան ասել։

— Մի՞թե ութ օր դուք բան չեք կերել,— զարմացած հարցրեց մայրը։

— Հարկավոր էր, որ նա ներողություն խնդրի ինձնից,— պատասխանեց աղջիկը՝ մրսելուց ուսերը թոթվելով։ Նրա հանգստությունը և խստասիրտ հաստատամտությունը մոր հոգու մեջ հանդիմանության նման մի բան հարուցեցին։

«Այ թե ինչ...»— մտածեց մայրը և նորից հարցրեց.— իսկ եթե մեռնի՞ք։

— Է՛հ, ի՞նչ արած,— կամաց պատասխանեց աղջիկը։— Նա այնուամենայնիվ ներողություն խնդրեց։ Մարդ չպիտի վիրավորանքը ների։

— Այո՛...— դանդաղ արձագանքեց մայրը։— Բայց, ա՛յ կանանց ամբողջ կյանքում վիրավորում են...

— Ես բեռնաթափվեցի՛,— հայտնեց Եգորը՝ դուռը բանալով։— Ինքնաեռը պատրա՞ստ է։ Թույլ տվեք, ես ներս կտանեմ...

Նա ինքնաեռը վերցրեց և տարավ՝ ասելով.

— Իմ հարազատ հայրիկը օրական խմում էր քսան բաժակից ոչ պակաս, ուստի և աշխարհիս երեսին առանց հիվանդանալու և խաղաղ ապրեց յոթանասուներեք տարի։ Նա ութ փութ ծանրություն ուներ և սարկավագ էր Վոսկրեսենսկոյե գյուղում...

— Դուք հայր Իվանի որդի՞ն եք,— բացականչեց մայրը։

— Հենց նա եմ։ Իսկ դուք որտեղի՞ց գիտեք այդ։

— Ախր ես Վոսկրեսենսկոյեից եմ։

— Հայրենակցուհի՞։ Ումոնցի՞ց եք։

— Ձեր հարևանն ենք։ Ես Սերյոգիններից եմ։

— Կաղ Նիլի աղջի՞կը։ Ինձ ծանոթ անձնավորություն է, որովհետև ականջներս շատ է քաշել...

Նրանք կանգնել էին իրար դեմ և իրար վրա հարցեր թափելով ծիծաղում էին։ Սաշենկան ժպտալով նայեց նրանց և սկսեց թեյ պատրաստել։ Ամանեղենի չխչխկոցը մորը սթափեցրեց։

— Վա՛յ, ներեցե՛ք, խոսքով ընկա։ Ախր շատ հաճելի բան է հայրենակից տեսնելը...

— Այդ ե՞ս պետք է ներողություն խնդրեմ, որ այստեղ կարգադրություն եմ անում։ Բայց արդեն ժամը տասից անց է, իսկ ես հեռու տեղ եմ գնալու...

— Ո՞ւր պիտի գնաք։ Քաղա՞ք,— զարմացած հարցրեց մայրը։

— Այո՛։

— Ի՞նչ եք ասում։ Մութ է, եղանակը խոնավ, դուք հոգնա՞ծ։ Այստե՛ղ գիշերեցեք։ Եգոր Իվանովիչը խոհանոցում կպառկի, իսկ ես ու դուք այստեղ։

— Ո՛չ, ես պետք է գնամ,— ուղղակի հայտնեց աղջիկը։

— Այո՛, հայրենակցուհի, պահանջվում է, որ օրիորդը չքանա։ Նրան այստեղ ճանաչում են։ Եվ եթե նա վաղը փողոցում երևա, դա լավ չի լինի,— հայտնեց Եգորը։

— Բայց ինչպե՞ս։ Մենա՞կ կգնա...

— Կգնա՞,— ասաց Եգորը ժպտալով։

Աղջիկն իր համար թեյ լցրեց, վերցրեց մի կտոր հաճարի հաց, աղ ցանեց վրան և սկսեց ուտել՝ մտախոհ նայելով մորը։

— Այդ ինչպե՞ս թե գնում եք։ Դո՞ւք էլ, Նատաշա՞ն էլ։ Ես չէի կարող գնալ, կվախենայի՞,— ասաց Վլասովան։

— Նա էլ է վախենում,— նկատեց Եգորը։— Դուք վախենո՞ւմ եք, Սա՛շա։

— Ի՞նչ կարելի՞,— պատասխանեց աղջիկը։

Մայրը նայեց նրան, Եգորին և կամացուկ բացականչեց.

— Ի՞նչ... խիստն եք։

Թեյ խմելուց հետո Սաշան լուռ սեղմեց Եգորի ձեռքը, գնաց խոհանոց, իսկ մայրը նրան ճանապարհ դնելու համար դուրս եկավ հետևից։ Խոհանոցում Սաշենկան ասաց.

— Պավել Միխայլովիչին տեսնելուց հաղորդեցե՛ք նրան իմ բարևը։ Խնդրո՞ւմ եմ։

Եվ դռան կեռից բռնելով՝ հանկարծ ետ շրջվեց, կամաց հարցրեց.

— Կարելի՞ է ձեզ համբուրել։

Մայրը լուռ գրկեց նրան և ջերմ համբուրեց։

— Շնորհակալությո՞ւն,— կամաց ասաց աղջիկը և գլխով անելով հեռացավ։

Սենյակ դառնալով՝ մայրը անհանգստությամբ նայեց պատուհանից։ Խավարի մեջ ծանր-ծանր թափվում էին ձյան թաց փաթիլները։

— Իսկ Պրոզորովներին հիշո՞ւմ եք,— հարցրեց Եգորը։

Նա նստել էր ոտները լայն դրած և ուժեղ փչում էր բաժակի թեյին։ Նրա դեմքը կարմիր էր, քրտնած, գոհ։

— Հիշո՞ւմ եմ, հիշում,— մտախոհ ասաց մայրը կողքանց մոտ գալով սեղանին։ Նստեց և տխուր աչքերով Եգորին նայելով՝ դանդաղորեն ձայնը երկարացրեց.

— Ա՛յ-ա՛յ-ա՛յ։ Սաշենկային բան չպատահի՞։ Ինչպե՞ս կհասնի։

— Կհասնի՞,— համաձայնեց Եգորը։— Բանտը նրան խիստ քայքայել է, աղջիկն առաջ ավելի ամուր էր... Մյուս կողմից էլ նա քնքուշ ապրած աղջիկ է... Կարծես թե թոքերը արդեն փչացրել է...

— Ո՞վ է նա,— կամաց հարցրեց մայրը։

— Մի կալվածատիրոջ աղջիկ է։ Հայրը մեծ ստահակ է,

ինչպես ինքը Սաշան է ասում։ Դուք գիտե՞ք, մայրի՛կ, որ նրանք ուզում են ամուսնանալ։

— Ովքե՞ր։

— Նա և Պավելը։ Բայց, ա՛յ, ոչ մի կերպ չի հաջողվում. երբ մեկն ազատ է, մյուսը բանտումն է, և ընդհակառակը։

— Ես այդ չգիտեի,— կարճ լռությունից հետո պատասխանեց մայրը։— Պաշան իր մասին ոչ մի բան չի ասում...

Այժմ մայրն սկսեց ավելի շատ խղճալ այդ աղջկան և ակամա անբարյացակամությամբ հյուրին նայելով ասաց.

— Ի՞նչ կլիներ ուղեկցեիք նրան...

— Չի կարելի,— հանգիստ պատասխանեց Եգորը։— Ես այստեղ ահագին գործ ունեմ, և առավոտից սկսած պետք է ամբողջ օրը շրջեմ, շրջեմ, շրջեմ։ Դա հաճելի զբաղմունք չի ինձ նման շնչարգելություն ունեցողի համար...

— Լավ աղջիկ է,— անորոշ նկատեց մայրը՝ մտածելով այն մասին, ինչ հաղորդեց Եգորը։ Նրա համար վիրավորական էր լսել այդ ոչ թե որդուց, այլ օտար մարդուց, և նա շրթունքներն ամուր սեղմեց հոնքերն իջեցնելով։

— Լա՜վն է,— գլխով արեց Եգորը։— Տեսնում եմ՝ խղճում եք նրան։ Զո՞ւր։ Ձեր սիրտը բավական չի լինի, եթե սկսեք խղճալ մեզ՝ բոլոր խռովարարներիս։ Մեր ամենքիս կյանքն էլ այնքան թեթև չի, ճիշտն ասած։ Ա՛յ, վերջերս աքսորից վերադարձավ ընկերս. երբ նա գալիս էր Նիժնիով, կինն ու երեխան սպասում էին Սմոլենսկում, իսկ երբ Սմոլենսկ հասավ, նրանք արդեն Մոսկվայի բանտո՛ւմն էին։ Այժմ կնո՛ջ հերթն է Սիբիր գնալու։ Ես էլ կին ունեի, հրաշալի մարդ էր, հինգ տարվա այսպիսի կյանքը նրան գերեզման տարավ...

Նա մի շնչով խմեց մի բաժակ թեյ և շարունակեց պատմել։ Թվարկելով բանտարկության, աքսորի տարիներն ու ամիսները, հաղորդում էր զանազան դժբախտությունների, բանտերում եղած ծեծերի, Սիբիրում տիրող սովի մասին։ Մայրը նայում էր նրան, ականջ դնում և զարմանում, թե ինչպե՞ս հասարակ ու հանգիստ էր խոսում նա այդ կյանքի մասին, որ լի էր տառապանքներով, հալածանքներով, ծաղրուծանակով...

— Բայց խոսենք գործի՛ մասին։

Նրա ձայնը փոխվեց, դեմքը լրջացավ։ Նա սկսեց հարցնել մորից, թե նա ինչպե՞ս պիտի գործարան տանի գրքույկները,

և մայրը զարմանում էր նրա՝ ղանաղան մանր-մունր բաները նրբորեն զիտենալու վրա։

Այդ վերջացնելով՝ նրանք նորից սկսեցին հիշել իրենց հարազատ գյուղը. Եգորը կատակում էր, իսկ մայրը մտախոհ թափառում էր իր անցյալում, որը թվում էր նրան տարօրինակ կերպով նման մի ճահճի, որը միատեսակ ծածկված է գուղձերով, վախվխելով դողացող բարակ կաղամախիներով, կարմ եղևիններով և գուղձերի մեջ խճճված սպիտակ կեչիներով։ Կեչիները դանդաղ էին աճում և մի հինգ տարի կանգուն մնալով երերուն, փտած հողի վրա, ընկնում ու փտում էին։ Նա նայում էր այդ տեսարանին և անտանելի ափսոսում մի ինչ-որ բան։ Նրա առաջ կանգնած էր աղջկա կերպարանքը խիստ, համառ դեմքով։ Նա այժմ գնում էր ձյունի թրջող փաթիլների միջով միայնակ, հոգնած։ Իսկ որդին նստած է բանտում։ Գուցե նա դեռ քնած չի, մտածում է... Բայց մտածում է ոչ թե իր՝ մոր մասին, նա սրտին իրենից ավելի մոտ մարդ ունի։ Խայտաբղետ, խառնիճաղանջ ամպերի պես մոր վրա էին սողում ծանր մտքերը և ամուր պարուրում սիրտը...

— Հոգնել եք, մայրի՛կ։ Պառկենք քնե՛նք,— ասաց Եգորը ժպտալով։

Մայրը հրաժեշտ տվեց նրան և կողքանց զգուշությամբ անցավ խոհանոց՝ սրտում տանելով մի կծու, դառն զգացմունք։

Առավոտյան թեյ խմելիս, Եգորը հարցրեց նրան.

— Իսկ եթե ձեզ ճանկեն, հարցնեն, թե որտեղից եք վերցրել այդ հերետիկոսական գրքույկները, դուք ի՞նչ կասեք։

— Կասեմ. «Ձեր գործը չի՛»,— պատասխանեց մայրը։

— Նրանք դրա հետ ոչ մի կերպ չե՛ն համաձայնի,— առարկեց Եգորը։— Նրանք խոր համոզված են, որ դա հենց իրենց գործն է։ Եվ կհարցնեն եռանդագին, երկա՞ր։

— Իսկ ես չեմ ասի՞։

— Իսկ ձեզ բանտ կնստեցնե՞ն։

— Է՛, ի՞նչ անենք։ Փառք աստծու, գոնե այդ բանի համար պետք կգամ,— ասաց մայրը հառաչելով։— Ես ում եմ պետք։ Ոչ ոքի։ Իսկ տանջանք չեն տա՝ ասում են...

— Հը՛մ,— ասաց Եգորը ուշադրությամբ նայելով նրան։— Տանջանք չեն տա։ Բայց լավ մարդը պետք է իրեն պահպանի...

— Ձեզնից այդ բանը դժվար է սովորել,— պատասխանեց մայրը ժպտալով։

Եգորը քիչ լուռ մնալով՝ սկսեց սենյակում շրջել, ապա մոտեցավ մորը և ասաց.

— Դժվար է, հայրենակցուհի՛։ Զգում եմ, շա՞տ դժվար է ձեզ համար։

— Ամենքի համար է դժվար,— ձեռքը թափ տալով պատասխանեց մայրը։— Գուցե միայն ովքեր հասկանում են, նրանց համար է մի քիչ թեթև... Բայց ես էլ եմ մի քիչ հասկանում, թե ի՞նչ են ուզում լավ մարդիկ...

— Իսկ եթե դուք այդ հասկանում եք, մայրի՛կ, նշանակում է դուք բոլորին հարկավոր եք, բոլորին,— լրջորեն ասաց Եգորը։

Մայրը նայեց նրան և լուռ ժպտաց։

Կեսօրին նա հանգիստ և բանիմացորեն կուրծքը լցրեց գրքույկներով և այնպես ճարպիկ ու հարմար կատարեց այդ բանը, որ Եգորը բավականությամբ լեզուն ծպպացրեց հայտնելով.

— Ձե՞ր գուտ*, ինչպես ասում է լավ գերմանացին, երբ մի դույլ գարեջուր է խմում։ Մայրի՛կ, գրականությունը ձեզ չի՞ փոխել. դուք մնացել եք բարի, հասակավոր կին, լիքը-լիքը և բարձրահասակ, թո՛ղ անթիվ աստվածներն օրհնեն ձեր ձեռնարկությունը..

Կես ժամից հետո իր բեռի ծանրության տակ կորացած, հանգիստ ու վստահ, մայրը կանգնած էր գործարանի դարպասի մոտ։ Բանվորների ծաղրուծանակից գրգռված երկու պահակներ նրանց հետ կռվելով կոպտաբար շոշափում էին բոլոր բակ մտնողներին։ Մի կողմում կանգնած էին մի ոստիկան և կարմիր երեսով, արագ պտտվող աչքերով մի բարակոտն մարդ։ Մայրը ամանների լծակը մի ուսից մյուսը փոխադրելով՝ աչքի տակով հետևում էր նրան, զգալով, որ նա լրտեսում է։

Մի բարձրահասակ, գանգրահեր տղա, գլխարկը ծոծրակին, գոռում էր իրեն խուզարկող պահակներին.

— Սատանանե՛ր, դուք մարդու գլո՛ւխը խուզարկեցեք, ո՛չ թե գրպանները։

Պահակներից մեկը պատասխանեց.

— Քո գլխում սարդերից բացի ուրիշ բան չկա...

* Շատ բարի։

— Դուք սարդ պիտի բռնեք, ոչ թե մարդ*,— պատասխանեց բանվորը։

Լրտեսը նրա վրա արագ հայացք նետեց և թքեց։

— Ի՞նչ կլինի ինձ բաց թողնեք,— խնդրեց մայրը։—Տեսնում եք բեռս ծանր է, մեջքս կոտրվո՞ւմ է։

— Գնա՛, գնա՛,— բարկացած գոռաց պահակը։— Շատ ես խոսում...

Մայրը հասավ իր տեղը, ամանները գետնին դրեց և քրտինքը երեսից սրբելով նայեց շուրջը։

Իսկույն նրան մոտեցան փականագործ Գուսև եղբայրները, և ավագը՝ Վասիլին, հոնքերը կիտելով բարձրաձայն հարցրեց.

— Կարկանդակներ ունե՞ս։

— Վա՛ղը կբերեմ,— պատասխանեց մայրը։

Դա պայմանական խոսքն էր։ Եղբայրների աչքերը փայլեցին։ Իվանը չհամբերելով՝ բացականչեց.

— Մարդու քեֆ է գալիս, հա՛...

Վասիլին պպզեց նայելով ամանին, այդ նույն ժամանակ նրա կոնատակը թռուցիկների մի կապոց հայտնվեց։

— Իվա՛ն,— բարձրաձայն ասում էր նա,— տուն չգնանք, արի սրա մոտ ճաշենք։— Իսկ ինքն արագ-արագ կոշիկների ճիտքերն էր խրում գրքույկները։— Պետք է նոր առևտրականին օգնել...

— Պետք է,— համաձայնեց Իվանը և քրքջաց։

Մայրն զգուշորեն շուրջը նայելով՝ կանչում էր.

— Շի՛, տաք-տաք լապշա՛։

Եվ աննկատելիորեն գրքերը հանելով կապոց կապոցի հետևից՝ կոխում էր եղբայրների ձեռքը։ Ամեն անգամ, երբ գրքերը նրա ձեռքից անհետանում էին, նրա առջև ժանդարմային սպայի դեմքն էր բռնկվում դեղին բծի պես, ինչպես լուցկու կրակը մութ սենյակում, և մայրը մի չարախինդ զգացմունքով ասում էր ժանդարմին.

«Ա՛ռ քեզ, տեր իմ...»

Հետևյալ կապոցը հանձնելով՝ գոհունակությամբ ավելացնում էր.

* Բնագրում գլխի միջատներից և պերկես ձկներից կազմված բառախաղ է, որ մենք փոխեցինք սարդ և մարդ բառերով, որպեսզի թե՛ բառախաղ ստացվի, թե՛ ասածի միտքը տրվի։ Ս. Բ.։

«Ա՛ռ...»

Մոտենում էին բանվորները գավաթները ձեռներին. երբ նրանք մոտ էին լինում, Իվան Գուսևն սկսում էր բարձր քրքջալ, և Վլասովան ընդհատում էր հանձնելը՝ շշի և լապշա լցնելով, իսկ Գուսևները կատակում էին նրա մասին.

— Ճարպի՞կ է գործում Նիլովնան։

— Կարիքը կստիպի մկներ էլ բռնել,— մռայլ նկատեց մի հնոցապան։— Կերակրողին խլել են։ Սրիկանե՛ր։ Ապա՛, երեք կոպեկի լապշա լցրու։ Վնաս չունի՞, մա՛յր։ Յոլա կգնա՛ս։

— Շնորհակալություն բարի խոսքիդ համար,— ժպտաց նրան մայրը։

Հնոցապանը դենը գնալով փնթփնթում էր.

— Ինձ համար մի թանկ բան չէ բարի խոսքը...

Վլասովան կանչում էր.

— Տաք շշի՞, լապշա՞, շշի՞...

Եվ մտածում էր, թե որդուն ինչպես կպատմի իր առաջին փորձի մասին, իսկ նրա աչքերի առջև դեռ կանգնած էր սպայի դեղին դեմքը, վարանոտ ու չար։ Նրա վրա շփոթված շարժվում էին սև ընչացքները, և վերին, վեր բարձրացած շուրթի տակից փայլում էր ամուր սեղմված ատամների սպիտակ ոսկրը։ Մոր կրծքում թռչունի պես երգում էր ուրախությունը, հոնքերը խորամանկորեն ցնցվում էին, և նա իր գործը ճարպկորեն կատարելով՝ ինքն իրեն ասում էր.

— Ահա՛, էլի...

XVI

Երեկոյան, երբ մայրը թեյ էր խմում, պատուհանից դուրս՝ ցեխի մեջ լսվեց ձիու սմբակների չփչփոց և մի ծանոթ ձայն հնչեց։ Մայրը վեր ցատկեց, նետվեց խոհանոց, դեպի դուռը, նախասենյակով մեկը գալիս էր արագ, մոր աչքերը մթնեցին, նա դռան շրջանակին հենվելով՝ դուռը ոտով հրեց։

— Բարի երեկո, մա՛յր,— հնչեց ծանոթ ձայնը և մոր ուսերի վրա ընկան չոր, երկար ձեռները։

Մոր սրտում իրար խառնվեցին հիասթափության թախիծը և Անդրեյին տեսնելու ուրախությունը։ Բռնկեցին, իրար խառնվելով դարձան մի մեծ, այրող զգացմունք, որը գրկեց մորը ջերմ ալիքի պես, գրկեց, բարձրացրեց, և մայրը դեմքը ձգեց

դեպի Անդրեյի կուրծքը։ Անդրեյն ամուր գրկեց նրան, ձեռները դողում էին, մայրը լուռ, կամաց լալիս էր, Անդրեյը շոյում էր նրա մազերը և ասում, կարծես երգում էր.

— Դե լաց մի՛ եղեք, մա՛յր, սրտներդ մի՛ տանջեք։ Աղնիվ խոսք եմ ասում ձեզ՝ նրան շուտով բա՛ց կթողնեն։ Նրանք ոչ մի փաստ չունեն նրա դեմ, բոլոր տղաները լուռ են մնում եփած ձկների պես...

Մոր ուսերը գրկելով՝ տարավ սենյակը, իսկ մայրը նրան հպվելով սկյուռի պես արագ շարժումով դեմքից սրբում էր արցունքները և անհագորեն, ամբողջ կրծքով կլանում Անդրեյի բառերը։

— Պավելը բարևում է ձեզ, առողջ և ուրախ է, որքան որ կարող է լինել։ Այնտեղ նեղվածք է։ Հարյուրից ավելի մարդիկ են բռնոտել թե՛ մերոնցից, թե՛ քաղաքից, ամեն մի սենյակում երեք-երեք, չորս-չորս են նստած։ Բանտի իշխանությունը, վնաս չունի, լավ է և հոգնել էլ է, այնքան շատ գործ են դրել նրա վրա անիծված ժանդարմները։ Այնպես որ, իշխանությունն այնքան էլ խիստ հրամաններ չի տալիս, այլ միշտ ասում է. դե լավ, պարոննե՛ր, մի քիչ հանդարտ, մեզ անհարմար դրության մեջ մի՛ դրեք։ Է՛հ, ամեն բան լավ է գնում։ Զրուցում են իրար հետ, իրար գրքեր են տալիս, ուտելիքը բաժանում են իրար մեջ։ Լա՛վ բանտ է։ Հին է, կեղտոտ, բայց մեղմ է մի տեսակ, թեթև է։ Քրեականներն էլ շատ լավ մարդիկ են, մեզ շատ են օգնում։ Բաց թողեցին ինձ, Բուկինին և էլի չորս հոգու։ Շուտով Պավելին էլ բաց կթողնեն։ Ամենից երկար Վեսովշչիկովը կնստի, նրա վրա շատ են բարկանում։ Նա բարձրաձայն հայհոյում է անդադար։ Ժանդարմները նրա վրա մտիկ տալ չեն կարողանում։ Նա երևի դատի տակ ընկնի, կամ մի անգամ ծեծ կուտի։ Պավելը նրան հորդորում է. «Թո՛ղ, Նիկո՛լայ, նրանք հո չեն լավանալու, եթե դու նրանց հայհոյես», իսկ նա բոռում է. «Նրանց խոցերի նման պիտի պոկեմ երկրի երեսից»։ Պավելն իրեն շատ լավ է պահում, հավասարակշռված, հաստատակամ։ Շուտով բաց կթողնեն նրան, ասում եմ ձեզ...

— Շուտո՛վ,— ասաց մայրը հանգստացած և սիրալիր ժպտալով։— Ես գիտեմ, շուտո՛վ։

— Լա՛վ է, որ իմանում եք։ Ապա ինձ համար մի թեյ լցրեք է՛, ասացեք տեսնեմ՝ ինչպես եք անցկացրել։

Անդրեյը նայում էր մորը, ասես ոտից գլուխ ժպտալով,

այնպես մոտիկ ու լավ, և նրա կլոր աչքերում շողում էր սիրո մի քիչ թախծոտ կայծը։

— Ես ձեզ շատ եմ սիրում, Անդրյուշա,— խոր հառաչելով ասաց մայրը՝ դիտելով նրա նիհար դեմքը, որը շատ երկարած մազերի մուգ փնջերից ծիծաղելի էր թվում։

— Ինձ քիչն էլ բավական է։ Ես գիտեմ, որ ինձ սիրում եք, դուք կարող եք ամենքին սիրել, ձեր սիրտը մեծ է,— աթոռի վրա ճոճվելով ասաց խոխոլը։

— Ո՛չ, ձեզ առանձնապես եմ սիրում,— պնդում էր մայրը։— Եթե դուք մայր ունենայիք, մարդիկ նրան կնախանձեին, որ այդպիսի տղա ունի...

Խոխոլը գլուխը տարուբերեց և երկու ձեռքով պինդ տրորեց։

— Ես էլ մայր ունեմ որևէ մի տեղ...— կամաց ասաց նա։

— Բայց գիտե՞ք ես այսօր ինչ եմ արել,— բացականչեց մայրը և բավականությունից շնչակտուր՝ մի քիչ գունավորելով պատմեց, թե ինչպես գրականություն տարավ գործարան։

Խոխոլը նախ աչքերը չռեց զարմացած, հետո քրքջաց ոտները շարժելով, մատներով ծեծեց գլուխը և հրճվանքով գոչեց.

— Օհո՛։ Է՛, դա կատակ չի՛։ Դա գո՛րծ է։ Պավելն ինչպես կուրախանա, հա՛։ Այդ լավ բան է, մա՛յր, թե՛ Պավելի համար և թե՛ բոլորի։

Նա հիացմունքով մատները շրխկացնում էր, սուլում և ամբողջ իրանով ճոճվում, ուրախությունից փայլում էր, մոր մեջ ուժգին, լիակատար արձագանք առաջ բերելով.

— Սիրելի՛ս, Անդրյուշա՛,— ասում էր մայրն այնպես, որ կարծես նրա սիրտը բացվել էր, և նրանից խայտալով դուրս էին ցայտում մեղմ ուրախությամբ լի բառերը։— Ես մտածում էի իմ կյանքի մասին, Հիսո՛ւս Քրիստոս։ Է՛, ինչո՞ւ եմ ապրել։ Ծեծ... աշխատանք... բան չեմ տեսել, բացի մարդուցս, բան չեմ իմացել, բացի երկյուղից։ Թե ինչպես մեծացավ Պաշան՝ չտեսա, և արդյոք սիրե՞լ եմ նրան, երբ ամուսինս կենդանի էր, չգիտեմ։ Իմ բոլոր հոգսերը, բոլոր մտքերս մի բանի մասին էին— կերակրել իմ դաղանին համեղ, կուշտ, ժամանակին սիրտը շահել, որ չխոժոռվի, ծեծով չվախեցնի, խղճա թեկուզ մի անգամ։ Չեմ հիշում, որ երբևիցե խղճացած լինի։ Նա ինձ այնպես էր ծեծում, որ կարծես ոչ թե կնոջն է ծեծում, այլ ամենքին, ում վրա չարացած է։ Քսան տարի այդպես ապրեցի, իսկ թե ինչ է եղել մին-

չև ամուսնանալս, չեմ հիշում։ Հիշում եմ և կույրի պես ոչինչ չեմ տեսնում։ Այստեղ էր Եգոր Իվանովիչը, ես ու նա միևնույն գյուղացի ենք, այս էր ասում, այն էր ասում, իսկ ես տները հիշում եմ, մարդկանց հիշում եմ, իսկ թե մարդիկ ինչպես էին ապրում, ինչ էին խոսում, ում ինչ էր պատահել, մոռացե՞լ եմ։ Հրդեհները հիշում եմ, երկու հրդեհ։ Երևի մեջիցս ամեն բան ծեծով դուրս է հանվել, հոգիս անդարձ խլացել է, կուրացել, չի լսում ու չի տեսնում...

Նա շունչ առավ և ջրից հանած ձկան պես ագահաբար օդ կլանելով՝ առաջ թեքվեց և ձայնն իջեցնելով շարունակեց.

— Մարդս մեռավ, ես տղայիցս բռնեցի, նա էլ այս ճանապարհով գնաց։ Ահա այդտեղ ես ինձ վատ զգացի և սկսեցի խղճալ նրան... Եթե կորչի, ես ինչպե՞ս պիտի ապրեմ։ Ինչքա՜ն երկյուղ, անհանգստություն եմ կրել ես, սիրտս պատռվել է, երբ մտածել եմ նրա վիճակի մասին...

Նա լռեց և գլուխը կամաց օրորելով՝ նշանակալից շեշտով ասաց.

— Մաքուր չի՞ մեր այդ կանացի սերը... Մենք ա՜յն ենք սիրում, ինչ որ մե՛զ է պետք։ Բայց, ա՜յ, մտիկ եմ անում ձեզ, ձեր մոր կարոտն եք քաշում, նա ձեզ ինչի՞ է պետք։ Մյուս բոլոր մարդիկ էլ ժողովրդի համար են տանջվում, բանտեր են գնում և Սիբիրում մեռնում... երիտասարդ աղջիկները ճանապարհ են գնում գիշերը, մենակ, ցեխի միջով. անձրևի տակ, քաղաքից յոթ վերստ անցնելով՝ գալիս են մեզ մոտ։ Նրանց ո՞վ է քշում, ո՞վ է առաջ մղում։ Նրանք սիրում են։ Ա՜յ, նրանք մաքո՜ւր են սիրում։ Հավատում են։ Հավատում են, Անդրյուշա։ Իսկ ես այդպես անել չեմ կարողանում։ Ես սիրում եմ ի՛մը, մոտի՛կը։

— Դուք կարո՞ղ եք,— ասաց խոխոլը և դեմքը նրանից դարձնելով՝ ըստ իր սովորության ձեռներով ամուր տրորեց գլուխը, այտը և աչքերը։— Ամենքը սիրում են մոտիկը, բայց մեծ սրտի համար հեռո՛ն էլ մոտիկ է։ Դուք շատ բան կարող եք։ Մեծ է ձեր մայրական...

— Աստվա՜ծ անի,— կամաց ասաց մայրը։— Ես չէ՞ որ զգում եմ, որ այսպես ապրելը լա՜վ է։ Ա՜յ, ես ձեզ սիրում եմ, գուցե ես ձեզ սիրում եմ ավելի լավ, քան Պաշային։ Նա ծածկամիտ է... Ա՜յ, նա ուզում է ամուսնանալ Սաշայի հետ, բայց ինձ, որ իր մայրն եմ, այդ մասին բան չի ասել...

— Ճշմարիտ չի՛,— առարկեց խոխոլը։— Ես այդ գիտեմ։

Ճշմարիտ չի։ Նա աղջկան սիրում է, աղջիկն էլ նրան՝ ուղիղ է։ Իսկ ամուսնանալ՝ այդ չի լինի, չէ՛։ Աղջիկը կուզեր, բայց Պավելը չի ուզում...

— Ա՛յ թե ի՜նչ,— մտախոհ և կամաց ասաց մայրը, և նրա աչքերը տխուր կանգ առան խոխոլի դեմքի վրա։— Այո։ Այ թե ինչ։ Մարդիկ իրենք իրենցից հրաժարվում են...

— Պավելը հազվագյո՜ւտ մարդ է,— կամաց արտասանեց խոխոլը։— Երկաթե մարդ...

— Հիմա, ա՜յ, նա նստած է բանտում,— տարակուսած շարունակեց մայրը։— Անհանգստացնում է դա ինձ, երկյուղալի է, բայց ոչ այնպես, ինչպես առաջ։ Ամբողջ կյանքն այնպես չի, երկյուղն էլ է ուրիշ, ամենքի՛ համար ես անհանգստանում։ Սիրերկյուղն էլ է ուրիշ, հոգին իր աչքերը բացել, նայում է, տխրում և ուրախանում է։ Շատ բան ես չեմ հասկանում, և այնպես է սիրտս վիրավորվում, դառնանում, որ աստծուն չեք հավատում դուք։ Է՛, դա արդեն ի՞նչ կարող եմ անել։ Բայց տեսնում եմ՝ լավ մարդիկ եք դուք, այո՛։ Եվ ձեզ դատապարտել եք ծանր կյանքի՝ ժողովրդի համար, ծանր կյանքի՝ ճշմարտության համար։ Ես ձեր ճշմարտությունն էլ եմ հասկացել. քանի որ հարուստներ կան, ժողովուրդը ոչ մի բանի չի հասնի, ո՛չ ճշմարտության, ո՛չ ուրախության, ոչնչի՛։ Ա՛յ, ես ապրում եմ ձեր մեջ, երբեմն գիշերը հիշում եմ անցյալը, իմ ուժը, որ կոխոտվել է ոտի տակ, իմ ճնշված երիտասարդ սիրտը, ինքս խղճում եմ ինձ, սիրտս դառնանում է։ Բայց էլի՛, կյանքս ավելի լավացել է։ Ես ինքս ինձ ավելի ու ավելի շատ եմ տեսնում...

Խոխոլը վեր կացավ և աշխատելով ոտները չքստքստացնել՝ սկսեց շրջել սենյակում իր բարձր, նիհար, խոհուն կերպարանքով։

— Լա՛վ ասացիք դուք,— կամաց բացականչեց նա։— Լա՛վ։ Կերչում մի երիտասարդ հրեա կար, ոտանավորներ էր գրում և մի անգամ այսպիսի բան գրեց.

Եվ անմեղ տեղը սպանվածներին
Ճշմարիտ ուժը հարություն կտա...

Հենց իրեն այնտեղ Կերչում ոստիկանությունն սպանեց, բայց դա կարևոր չի՛։ Նա ճանաչում էր ճշմարտությունը և մարդկանց մեջ շատ էր սերմանել այն։ Դուք էլ, ահա, անմեղ տեղն սպանված մարդ եք...

— Ես խոսում եմ հիմա,— շարունակեց մայրը,— խոսում եմ, ինքս ինձ լսում, ինքս ինձ չեմ հավատում։ Ամբողջ կյանքս մտածել եմ մի բանի մասին, ինչպե՞ս անեմ, որ օրը մի կերպ անց կացնեմ, աննկատելի, միայն թե ի՛նձ ձեռք չտան։ Իսկ հիմա ամենքի մասին եմ մտածում, գուցե և այնպես չեմ հասկանում ձեր բաները, ինչպես պետք է, բայց ամենքն էլ մոտ են ինձ, ամենքին եմ խղճում, ամենքի լավն եմ ուզում։ Իսկ ձեզ, Անդրյո՛ւշա, առանձնապե՛ս...

Խոխոլը մոտեցավ նրան, ասաց.

— Շնորհակա՛լ եմ։

Վերցրեց նրա ձեռքն իր ձեռների մեջ, ամուր սեղմեց, թափ տվեց և արագ դարձավ մի կողմ։ Հուզմունքից խոնջացած մայրն առանց շտապելու լվանում էր գավաթները և լռում, նրա կրծքում կամաց տաքանում էր մի աշխույժ, սիրտը ջերմացնող զգացմունք։

Խոխոլը շրջելով ասում էր նրան.

— Ա՛յ, լավ կլիներ, մա՛յր, Վեսովշչիկովին գուրգուրեիք մի անգամ։ Նրա հայրը նստած է բանտում, մի պիղծ ծերուկ է։ Նիկոլայը հենց որ պատուհանից տեսնում է նրան, հայհոյում է։ Դա լավ չի՞։ Նա բարի է, Նիկոլայը սիրում է շներին, մկներին և ամեն մի արարածի, իսկ մարդկանց չի՛ սիրում։ Ա՛յ թե ինչ աստիճան կարելի է փչացնել մարդուս։

— Նրա մայրն անհետ կորավ, հայրը գող է ու հարբեցող,— մտախոհ ասաց կինը։

Երբ Անդրեյը քնելու գնաց, մայրն աննկատելիորեն խաչակնքեց նրան, իսկ երբ նա պառկեց և մի կես ժամ անցավ, մայրը կամաց հարցրեց.

— Քնած չե՞ք, Անդրյո՛ւշա։

— Ոչ, ի՞նչ կա։

— Բարի գիշեր։

— Շնորհակա՛լ եմ, մա՛յր, շնորհակալ եմ,— երախտագիտորեն պատասխանեց նա։

XVII

Հետևյալ օրը, երբ Նիլովնան իր բեռով մոտեցավ գործարանի դարպասին, պահակները կոպտաբար կանգնեցրին նրան, հրամայելով ամանները գետնին դնել, խնամքով խուզարկեցին բոլորը։

— Կերակուրս կսառեցնե՞ք,— հանգիստ նկատեց նա այն ժամանակ, երբ նրանք կոպտաբար շոշափում էին նրա զգեստը։

— Լռի՛ր,— մռայլ ասաց մի պահակ։

Մյուսը թեթևակի հրելով մոր ուսը՝ վստահ ասաց.

— Ասում եմ՝ ցանկապատի վրայով են գցում։

Առաջինը մոտեցավ նրան ծերունի Սիզովը և շուրջը նայելով կամաց հարցրեց.

— Լսեցի՞ր, մա՛յր։

— Ի՞նչ։

— Թղթերի մասին։ Նորի՛ց են երևացել, հացի վրա ցանած աղի պես ամեն տեղ շաղ են տվել։ Այս էլ քեզ ձերբակալություններ ու խուզարկություններ։ Մազինին, քրոջս որդուն, բանտ տարան, է՛, որ ի՞նչ։ Քո՞ տղային տարան, հիմի հո երևում է, որ այդ նրա՛նք չեն։

Նա մորուքը ձեռքի մեջ ժողովեց, նայեց կնոջը և հեռանալով ասաց.

— Ինչո՞ւ մեզ մոտ չես գալիս։ Մենակ երևի տխուր կլինի...

Մայրը շնորհակալություն հայտնեց և կերակուրների անունները կանչելով՝ ուշի ուշով դիտում էր գործարանում տիրող արտասովոր կենդանությունը։ Ամենքը հուզված էին, հավաքվում, ցրվում էին, մի ցեխից մյուսն էին վազում։ Մրով լի օդում մի առույգ, համարձակ բանի հով էր զգացվում։ Մերթ այստեղ, մերթ այնտեղ լսվում էին հավանության բացականչություններ, ծաղրական գոչեր։ Հասակավոր բանվորներն զգուշությամբ քըմծիծաղ էին տալիս։ Մտահոգ շրջում էին պետերը, ոստիկանները վազվզում էին, և բանվորները նրանց նկատելով՝ դանդաղ ցրվում էին կամ տեղերում մնալով դադարեցնում էին խոսակցությունը, լուռ նայում զայրացած, գրգռված դեմքերին։

Բոլոր բանվորները մաքուր լվացված էին երևում։ Աչքի էր ընկնում ավագ Գուսևի բարձրահասակ կերպարանքը. նրա եղբայրը բադիկի պես ման էր գալիս և քրքջում։

Մոր մոտով առանց շտապելու անցան ատաղձագործական ցեխի վարպետ Վավիլովը և համարակալ Իսայը։ Փոքրիկ, վտիտ համարակալը գլուխը վեր նետելով պարանոցը ծռեց դեպի ձախ և վարպետի անշարժ, ուռած դեմքին նայելով՝ խոսեց արագ, փոքրիկ մորուքը տմբտմբացնելով.

— Իվա՛ն Իվանովիչ, դրանք քրքջում են, նրանց քեֆը գալիս է, թեև գործը վերաբերում է պետության կործանմանը, ինչ-

պես ասաց պարոն դիրեկտորը։ Այստեղ, Իվա՛ն Իվանովիչ, ոչ թե քաղհանել, այլ հերկել է հարկավոր...

Վավիլովը գնում էր ձեռները մեջքին դրած, և նրա մատներն ամուր սեղմված էին...

— Դու, շա՛ն որդի, այնտեղ ինչ կուզես տպի՛ր,— բարձրաձայն ասաց նա,— բայց իմ մասին՝ չհամարձակվես։

Մոտեցավ Վասիլի Գուսևը՝ հայտնելով.

— Իսկ ես էլի՛ քեզ մոտ եմ ճաշելու, համե՞ղ է ճաշդ։

Եվ ձայնն իջեցնելով, աչքերը կկոցելով կամաց ավելացրեց.

— Լա՛վ կպցրիք... Է՛հ, մայրի՛կ, շա՛տ լավ էր։

Մայրը սիրալիր գլխով արեց նրան։ Մորը դուր էր գալիս, որ այդ տղան, ավանի առաջին չարաճճին, իր հետ գաղտնի խոսելիս «դուք»-ով էր խոսում, դուր էր գալիս գործարանում տիրող ընդհանուր հուզումը, և նա ինքն իրեն մտածում էր.

«Իսկ չէ՞ որ եթե ես չլինեի...»

Մոտիկ կանգ առան երեք սևագործ բանվոր, և մեկը կամաց ասաց ափսոսանքով.

— Ոչ մի տեղ չգտա...

— Ախր լսել է պետք։ Ես անգրագետ եմ, բայց տեսնում եմ, որ նրանց սրտի՞ն է դիպել...— նկատեց մյուսը։

Երրորդը շուրջը նայեց և առաջարկեց.

— Գնանք կաթսայանոց...

— Ներգործո՞ւմ է,— շշնջաց Գուսևն՝ աչքով անելով։

Նիլովնան ուրախ տուն եկավ։

— Այնտեղ մարդիկ ափսոսում են, որ անգրագետ են,— ասաց նա Անդրեյին։— Իսկ ես, ա՛յ, երիտասարդ ժամանակս կարդալ գիտեի, բայց մոռացա...

— Սովորե՛ք,— առաջարկեց խոխոլը։

— Այս հասակո՞ւմ։ Մարդկանց ինչո՞ւ ծիծաղեցնենք...

Բայց Անդրեյը դարակից մի գիրք վերցրեց և դանակի ծայրով շապկի վրա մի տառ ցույց տալով հարցրեց.

— Սա ի՞նչ է։

— Բե,— ծիծաղելով պատասխանեց մայրը։

— Իսկ սա՞։

— Այբ...

Մայրն ամաչում էր և վշտանում։ Թվում էր, թե Անդրեյի

աչքերը ծիծաղում են թաքնված ծիծաղով, և մայրը խույս է տալիս նրա հայացքից։

Բայց Անդրեյի ձայնը հնչում էր քնքուշ և հանգիստ, դեմքը լուրջ էր։

— Մի՞թե դուք, Անդրյո՛ւշա, իսկապես ուզում եք ինձ կարդալ սովորեցնել,— հարցրեց մայրն ակամա ժպտալով։

— Ի՞նչ կա որ,— արձագանքեց Անդրեյը։— Քանի որ դուք կարդացել եք, վերհիշելը հեշտ է։ Թե հրաշք չլինի, վատ բան էլ չի լինի, իսկ թե հրաշք եղավ՝ այդ ավելի լավ։

— Բայց այն էլ է ասած՝ սրբապատկերներին նայելով սուրբ չես դառնա։

— Է՛,— գլխով անելով ասաց խոխոլը,— առածներ շատ կան։ Քիչ բան իմացողը հանգիստ կքնի,— ինչո՞վ է պակաս։ Առածներով է մտածում ստամոքսը, նա առածներից սանձեր է հյուսում հոգու համար, որպեսզի ավելի լավ ղեկավարի նրան։ Իսկ սա՞ ինչ տառ է։

— Լյուն,— ասաց մայրը։

— Այդպե՞ս է։ Տես պոչերն ինչպե՞ս են չուվել։ Լավ, իսկ սա՞։

Տեսողությունը լարելով, հոնքերը ծանր շարժելով՝ մայրը դժվարությամբ հիշում էր մոռացված տառերը և աննկատելիորեն ենթարկվելով իր ճիգերի ուժին։ Բայց նրա աչքերը շուտով հոգնեցին։ Նախ՝ հոգնածության արցունքներ երևացին, իսկ հետո սկսեցին արագ կաթկթել թախծի արցունքները։

— Կարդա՞լ եմ սովորում,— հեծկլտալով ասաց նա։— Քառասուն տարեկան եմ, բայց դեռ նոր եմ սկսում կարդալ սովորել...

— Պետք չի՛ լաց լինել,— ասաց խոխոլը սիրալիր և մեղմ։— Դուք ուրիշ կերպ ապրելու հնար չունեիք, բայց, ա՛յ, այնուամենայնիվ հասկանում եք, որ վատ եք ապրել։ Հաղարավոր մարդիկ կարող են ձեզանից լավ ապրել, բայց ապրում են անասունների պես և դեռ պարծենում էլ են, թե լա՞վ են ապրում։ Բայց ի՞նչ լավություն կա դրանում, այսօր մարդն աշխատեց ու կերավ, վաղն աշխատեց ու կերավ, այսպիսով իր ամբողջ կյանքն աշխատում և ուտո՞ւմ է։ Այդ գործի արանքում երեխաներ է բազմացնում և սկզբում զվարճանում է նրանցով, բայց հենց որ նրանք էլ են սկսում շատ ուտել, նա բարկանում է, հայհոյում նրանց, ասելով՝ շո՛ւտ մեծացեք, ագահնե՛ր, աշխատելու

ժամանակն է։ Եվ կուզենար իր զավակներին դարձնել ընտանի անասուններ, բայց նրանք սկսում են աշխատել իրե՛նց փորի համար, և այդպես մի կերպ քարշ են տալիս կյանքը։ Միայն նրանք են իսկական մարդիկ, ովքեր մարդու գիտակցության շղթաներն են փշրում։ Ա՛յ, հիմի գուք էլ եք ձեր ուժի համեմատ այդ գործին կպել։

— Է՛, ես ի՞նչ,— հառաչեց մայրը։— Ես ի՞նչ կարող եմ անել։

— Ո՞նը չէ։ Դա անձրևի նման է, որի ամեն մի կաթիլը մի հատիկ է ջրում։ Իսկ հենց որ սկսեք կարդալ...

Խոխոլը ծիծաղեց, վեր կացավ և սկսեց սենյակում մեն գալ։

— Չէ՛, սովորե՛ք... Պավելը կգա, կտեսնի, որ դուք, էհե՛...

— Ա՛խ, Անդրյո՛ւշա,— ասաց մայրը։—Երիտասարդների համար ամեն ինչ հեշտ է։ Իսկ մի քիչ որ հասակդ առնում ես, թե՛ ցավդ է շատանում, թե՛ ուժդ է քշանում, իսկ խելք բոլորովին չի մնում...

XVIII

Երեկոյան խոխոլը գնաց, մայրը ճրագը վառեց և նստեց սեղանի մոտ գուլպա գործելու։ Բայց շուտով վեր կացավ, անվճռականորեն անցավ սենյակով, դուրս եկավ խոհանոց, դռան կեռը գցեց և հոնքերն ուժգին շարժելով վերադարձավ սենյակ։ Պատուհանների վարագույրներն իջեցրեց և դարակից գիրքը վերցնելով նորից նստեց սեղանի մոտ, շուրջը նայեց, կռացավ գրքի վրա, շրթունքները շարժվեցին։ Երբ փողոցից աղմուկ էր լսվում, նա ցնցվելով գիրքը ծածկում էր ափով, ուշի-ուշով ականջ դնելով... Եվ նորից մերթ աչքերը փակելով, մերթ բանալով մրմնջում էր.

— Ժե, ինի... ժի, զա, նու...

Դուռը բախեցին, մայրը վեր ցատկեց, գիրքը դրեց դարակին և տագնապահար հարցրեց.

— Ո՞վ է։

— Ես եմ...

Մտավ Ռիբինը, ծանր ու լրջագեմ շփեց մորուքը և նկատեց.

— Առաջները մարդկանց առանց հարցնելու էիր ներս թողնում։ Մենա՞կ ես։ Այդպես։ Իսկ ես կարծում էի խոխոլը տանն է։ Այսօր ես նրան տեսա... Բանտը մարդուս չի փչացնում։

Նստեց և մորն ասաց.

— Արի խոսենք...

Նա նշանակալից, խորհրդավոր կերպով նայեց՝ մորն աղոտ անհանգստություն ներշնչելով։

— Ամեն բան փող արժի,— սկսեց նա իր ծանր ձայնով։— Չրի ոչ ծնվում են, ոչ մեռնում, ա՛յ թե ինչ։ Գրքույկներն էլ, թռուցիկներն էլ փող արժեն։ Դու գիտե՞ս, թե գրքույկների փողերը որտեղի՞ց են գալիս։

— Չգիտեմ,— կամաց ասաց մայրը ինչ-որ վտանգավոր բան զգալով։

— Այդպես։ Ես էլ չգիտեմ։ Երկրորդը՝ գրքույկներն ո՞վ է կազմում։

— Գիտունները...

— Պարոննե՞րը,— ասաց Ռիբինը, և նրա մորուքավոր դեմքը լարվեց, կարմրեց։— Նշանակում է՝ պարոններն են գրքեր կազմում, նրանք են բաժանում։ Իսկ այդ գրքերում գրվածը պարոնների դեմ է։ Հիմի դու ինձ ասա՛, ի՞նչ օգուտ ունեն նրանք փող մսխել նրա համար, որ ժողովրդին իրենց դեմ բարձրացնեն, հը՞։

Մայրը աչքերը ճպճպացնելով՝ վախեցած բացականչեց.

— Դու ի՞նչ ես կարծում...

— Հա՛,— ասաց Ռիբինը և արջի պես շուռ եկավ աթոռի վրա։— Ահա՛։ Ես էլ երբ այդ մտքին հասա, սարսռացի։

— Իմացա՞ր որևէ բան։

— Խաբեբայությո՛ւն է,— պատասխանեց Ռիբինը։— Զգում եմ, խաբեբայություն է։ Ոչինչ չգիտեմ, բայց խաբեբայություն է։ Պարոններն ինչ-որ բան են խելքներին զոռ տալիս։ Իսկ ինձ հարկավոր է ճշմարտությունը։ Եվ ես ճշմարտությունը հասկացել եմ։ Բայց պարոնների հետ չեմ գնա։ Նրանք, եթե կարիք զգան, ինձ առաջ կհրեն և առաջ կքայլեն իմ ոսկորների վրայով, ինչպես կամուրջի վրայով։

Նա կարծես մոր սիրտը կապկպում էր մռայլ խոսքերով։

— Տե՛ր աստված,— թախծագին բացականչեց մայրը։— Մի՞թե Պաշան չի հասկանում։ Եվ ամենքը, որոնք...

Մոր առջև փայլեցին Եգորի, Նիկոլայ Իվանովիչի, Սաշենկայի լուրջ, ազնիվ դեմքերը, նրա սիրտը թպրտաց։

— Ո՛չ, ո՛չ,— ասաց նա՝ բացառաբար գլուխն օրորելով։— Չեմ կարող հավատալ։ Նրանք խղճով են գործում։

— Ո՞ւմ մասին ես խոսում,— մտախոհ հարցրեց Ռիբինը։

— Բոլորի մասին... առանց բացառության ամենքի մասին, ում որ տեսել եմ։

— Դու այնտեղ չես նայում, մա՛յր, ուր որ պետք է, ավելի հեռո՛ւն նայիր,— ասաց Ռիբինը՝ գլուխը խոնարհելով։— Նրանք, որոնք մոտ են եկել մեզ, նրանք գուցե իրենք ոչինչ չգիտեն։ Նրանք հավատում են, թե այդպես է պետք։ Բայց գուցե նրանց հետևը ուրիշնե՞րը կան, որոնք մտածում են միայն, որ օգուտ ստանան։ Մարդ զուր տեղն իր դեմ չի գնա...

Եվ գյուղացու ծանր համոզմունքով նա ավելացրեց.

— Պարոններից երբեք լավ բան չի դուրս գա։

— Խելքդ ի՞նչ է փչել,— հարցրեց մայրը՝ նորից կասկածով համակված։

— Ի՞մ։— Ռիբինը նայեց նրան, քիչ լուռ մնաց և կրկնեց.— պարոններից պետք է հեռու կենալ։ Ա՛յ թե ինչ։

Ապա նորից լռեց խոժոռված։

— Ես ուզում էի տղաներին կցվել, որ նրանց հետ միասին լինեմ։ Ես այդ գործի համար պետք կգամ, գիտեմ, թե ի՞նչ պետք է ասել մարդկանց։ Հա՛։ Իսկ հիմա ես կհեռանամ։ Ես չեմ կարողանում հավատալ, պետք է հեռանամ։

Նա գլուխը կախեց, մտածեց։

— Մենակ կգնամ գյուղերը։ Ժողովրդին խոսվության կդրդեմ։ Պետք է, որ ինքը ժողովուրդն սկսի գործել։ Եթե նա հասկանա, նա իր համար ճանապարհ կգտնի։ Ահա ես էլ աշխատելու եմ, որ հասկանա, թե նա ոչ մի հույս չունի, բացի իրենից, ո՛չ մի գիտակցություն չկա, բացի իր գիտակցությունից։ Ա՛յ, այսպե՛ս։

Մայրն սկսեց խղճալ նրան, նա այդ մարդու համար վախ զգաց։ Նա, որ միշտ դուր չէր գալիս մորը, այժմ նրան հանկարծ մոտիկ դարձավ. մայրը կամաց ասաց.

— Քեզ կբռնեն...

Ռիբինը նայեց նրան և հանգիստ պատասխանեց.

— Կբռնեն, բաց կթողնեն։ Իսկ ես՝ նորից...

— Հենց իրենք մուժիկները ձեռքերդ կկապեն։ Եվ բանտ կնստես...

— Կնստեմ՝ դուրս էլ կգամ։ Նորից կգնամ։ Իսկ ինչ վերաբերում է մուժիկներին, մեկ կկապեն, երկու կկապեն, վերջ ի վերջո կհասկանան, որ ոչ թե կապել է պետք, այլ լսել։ Ես նրանց

կասեմ, դուք ինձ մի՛ հավատաք, դուք միայն ականջ դրեք։ Իսկ որ ականջ դնեն՝ կհավատա՞ն։

Նա խոսում էր դանդաղ, կարծես յուրաքանչյուր բառը շոշափելով, նախքան ասելը։

— Ես այստեղ վերջին ժամանակներս շատ բան եմ լսել։ Քիչ ու միշ հասկացել եմ..

— Ոտով-գլխով կկորչես, Միխա՛յլո Իվանովիչ,— գլուխը տխուր օրորելով ասաց մայրը։

Մութ, խոր ընկած աչքերով Ռիբինը նայում էր նրան՝ հարցական և սպասողական։ Նրա ամրակազմ մարմինն առաջ էր թեքվել, ձեռները հենվել էին աթոռի նստատեղին, թուխ դեմքը մորուքի սև շրջանակի մեջ գունատ էր թվում։

— Իսկ լսե՞լ ես, թե Քրիստոսն ի՞նչ է ասել հատիկի մասին։ Մինչև չմեռնես՝ նոր հասկի ձևով հարություն չես առնի։ Մինչև մահս ժամանակ շատ կա։ Ես խորամա՛նկ մարդ եմ։

Նա շարժվեց աթոռի վրա և առանց շտապելու վեր կացավ։

— Գնամ պանդոկ, մարդկանց մեջ մի քիչ նստեմ։ Խոխոլն ուշացավ։ Սկսե՞լ է աշխատել։

— Այո՛,— ասաց մայրը ժպտալով։

— Այդպես էլ պետք է։ Դու նրան իմ մասին ասա՛...

Նրանք ուս-ուսի տված դանդաղ գնացին խոհանոց և իրար չնայելով կարճ խոսքեր փոխանակեցին։

— Դե, մնաս բարո՛վ։

— Գնաս բարո՛վ։ Հաշիվդ ե՞րբ ես վերջացնում...

— Վերջացրել եմ։

— Իսկ ե՞րբ ես գնում։

— Էգուց։ Առավոտ վաղ։ Մնաս բարո՛վ։

Ռիբինը կռացավ և ակամա, անհարմար կերպով դուրս գնաց նախասենյակ։ Մայրը մի րոպե կանգնած մնաց դռան առաջ, ականջ դնելով ծանր քայլերին և իր կրքում զարթնած կասկածներին։ Ապա կամաց շրջվեց, գնաց սենյակը և վարագույրը բարձրացնելով՝ նայեց պատուհանից։ Ապակու հետև անշարժ, սև խավար էր տիրում։

«Գիշերն եմ ապրում»,— մտածեց մայրը։

Նա խղճում էր այդ պատկառելի մուժիկին,— նա այնպես լայնաթիկունք է, ուժեղ։

Եկավ Անդրեյը, աշխույժ և ուրախ։

Երբ մայրը պատմեց նրան Ռիբինի մասին, խոխոլը բացականչեց.

— Է՛, թող գյուղերը ման գա, ճշմարտություն քարոզի, ժողովրդին զարթեցնի։ Նա մեզ հետ դժվար է հաշտվում։ Նրա գլուխում իր մուժիկային մտքերն են գոյացել, մեր մտքերի համար նեղ է այդ գլուխը...

— Ա՛յ, պարոնների մասին էր խոսում նա, այդտեղ մի բան կա,— զգուշությամբ նկատեց մայրը։— Հանկարծ չխաբե՞ն։

— Դիպչո՞ւմ է,— ծիծաղելով գոչեց խոխոլը։— Է՛, մա՛յր, փո՞ղ է հարկավոր։ Եթե փող ունենայի՞նք։ Մենք դեռ էլի ուրիշի հաշվին ենք ապրում։ Ա՛յ, Նիկոլայ Իվանովիչն ամսական յոթանասունհինգ ռուբլի է ստանում, հիսունը մեզ է տալիս։ Այդպես էլ՝ մյուսները։ Երբեմն էլ քաղցած ուսանողներն են մի քիչ ուղարկում՝ կոպեկ-կոպեկ հավաքելով։ Իսկ պարոնները, իհարկե, զանազան տեսակ են լինում։ Ոմանք կխաբեն, ոմանք ետ կմընան, իսկ մեզ հետ ամենալավերը կգնան...

Նա ծափ զարկեց և հաստատուն շեշտով առաջ տարավ իր խոսքը։

— Մինչև մեր տոնը դեռ շատ հեռու է, բայց էլի, ա՛յ, մայիսի մեկին մի փոքր տոն կսարքենք։ Ուրախալի՜ կլինի։

Նրա աշխուժությունը վանում էր Ռիբինի սերմանած տագնապը։ Խոխոլը շրջում էր սենյակում ձեռքով գլուխը տրորելով և հատակին նայելով ասում էր.

— Գիտե՞ք, երբեմն մարդու սրտում մի այսպիսի բան է լինում, զարմանալի բան։ Թվում է, թե ուր որ գնում ես, ընկերներդ են, բոլորն այրվում են մի՛ կրակով, բոլորն ուրախ են, բարի, հիանալի։ Առանց խոսքերի իրար հասկանում են... Բոլորն ապրում են խմբովին, իսկ ամեն մի սիրտ իր երգն է երգում։ Բոլոր երգերն առուների պես վազում, մի գետ են կազմում, և գետը հոսում է լայն ու ազատ և թափվում նոր կյանքի լուսավոր ուրախությունների ծովը։

Մայրն աշխատում էր չշարժվել, որպեսզի նրան չխանգարի, նրա խոսքը չընդհատի։ Նա միշտ Անդրեյին լսում էր ավելի մեծ ուշադրությամբ, քան մյուսներին։ Անդրեյը խոսում էր ամենքից ավելի անպաճույճ, և նրա խոսքերն ավելի ուժեղ էին հուզում սիրտը։ Պավելը երբեք չէր խոսում այն մասին, թե ինչ է տեսնում առաջիկայում։ Իսկ սա, մորը թվում էր, թե իր սրտի մի մասով միշտ այնտեղ էր, նրա խոսքերում հնչում էր հեքիաթն

այն ապագա տոնի մասին, որ ամենքի համար է լինելու աշխարհիս վրա։ Այդ հեքիաթը մոր համար պայծառեցնում էր կյանքի, և՛ նրա որդու, և՛ նրա բոլոր ընկերների աշխատանքի իմաստը։

— Բայց երբ ուշքի ես գալիս,— ասում է խոխոլը՝ գլուխը թափահարելով,— շուրջդ ես նայում՝ ցուրտ է և կեղտոտ։ Բոլորը հոգնել են, գազազել...

Խորին տխրությամբ նա շարունակեց.

— Վիրավորական բան է դա, բայց մարդուս չպիտի հավատալ, պետք է վախենալ նրանից և նույնիսկ ատել։ Մարդս երկվանում է։ Դու կուզեիր միայն սիրել, բայց դա ինչպե՞ս կարելի է։ Ինչպե՞ս ներել մարդուն, եթե նա վայրենի գազանի նման վրադ է հարձակվում, չի ընդունում, որ մեջդ կենդանի հոգի կա և աքացիներ է տալիս քո մարդկային դեմքին։ Ներել չի՛ կարելի։ Ո՛չ թե անձիդ համար չի կարելի, ես անձիս հասցրած բոլոր վիրավորանքները կտանեմ, այլ բռնակալներին երես տալ չեմ ուզում, չեմ ուզում, որ իմ մեջքը ծեծելով, ուրիշներին ծեծել սովորեն։

Այժմ նրա աչքերը բոցավառվեցին սառը փայլով, նա համառ կերպով գլուխը կախեց և սկսեց խոսել է՛լ ավելի հաստատուն շեշտով.

— Ես չպիտի թույլ տամ որևէ վնասակար բան, եթե նա նույնիսկ չվնասի ինձ։ Աշխարհիս երեսին մենակ ես չե՞մ։ Այսօր ես թույլ կտամ, որ ինձ վիրավորեն և գուցե միայն մի քիչ կծիծաղեմ վիրավորանքի վրա՝ ասելով, նա ինձ չի ծակի, իսկ վաղը վիրավորողն իր ուժն ինձ վրա փորձած լինելով կսկսի մի ուրիշի կաշին քերթել։ Եվ ստիպված ես լինում մարդկանց վրա նայել տարբեր տեսակ, ստիպված ես լինում սրտիդ խիստ հետևել. սրանք ձերոնք են, սրանք՝ օտարներ են։ Արդարացի է, բայց մխիթարական չէ՛։

Մայրը, հայտնի չէ թե ինչու, հիշեց սպային և Սաշենկային։ Հառաչելով ասաց.

— Զմաղած ալյուրից ի՞նչ հաց դուրս կգա...

— Ցավն էլ հենց այդ է,— բացականչեց խոխոլը։

— Այո՜-ո՜,— ասաց մայրը։ Նրա հիշողության մեջ այժմ զարթնեց ամուսնու կերպարանքը, մռայլ, ծանր, ինչպես մեծ քար, որը մամռակալել է։ Մայրը խոխոլին պատկերացնում էր

իբրև Նատաշայի ամուսին և որդուն՝ Սաշենկայի հետ ամուսնացած։

— Իսկ ինչի՞ց է այս,— հարցրեց խոխոլը բորբոքված։— Դա այնպես լավ է երևում, որ նույնիսկ ծիծաղելի է։ Նրանից է միայն, որ մարդիկ հավասար չեն կանգնած։ Դե, եկեք, ուրեմն, ամենքին հավասարեցնե՛նք։ Հավասար բաժանե՛նք այն ամենը, ինչ որ բանականությունն է ստեղծել, ինչ որ ձեռքով է մշակված։ Իրար չպահե՛ն երկյուղի և նախանձի ստրկության մեջ, ագահության և տխմարության կալանքի մեջ...

Նրանք հաճախ սկսեցին խոսել այդպես։

Նախոդկային նորից ընդունեցին գործարան. նա իր ամբողջ վաստակը տալիս էր մորը, և մայրը վերցնում էր այդ դրամները նույնքան հանգիստ, որքան հանգիստ ընդունում էր Պավելի ձեռքից։

Երբեմն Անդրեյը ժպիտն աչքերում առաջարկում էր մորը.

— Մի քիչ կարդա՞նք, մա՛յր, հը՞։

Մայրը կատակով, բայց համառորեն հրաժարվում էր, նրան շփոթում էր Անդրեյի ժպիտը, և մի քիչ վիրավորված մտածում էր նա.

— Քանի որ ծիծաղում ես, էլ ի՞նչ կարդանք։

Եվ ավելի ու ավելի հաճախ էր հարցնում Անդրեյին, թե ի՞նչ է նշանակում գրքի այս կամ այն բառը, որն իր համար խորթ է։ Հարցնելիս նա մի կողմ էր նայում, նրա ձայնը անտարբեր էր հնչում։ Անդրեյը կռահեց, որ մայրը կամաց-կամաց սովորում է ինքն իրեն, հասկացավ նրա ամոթխածությունը և դադարեց առաջարկել նրան կարդալ իր հետ։ Մայրը շուտով հայտնեց.

— Աչքերս թուլանում են, Անդրյո՛ւշա։ Ակնոց է հարկավոր։

— Ճի՞շտ է,— պատասխանեց Անդրեյը։— Ա՛յ, կիրակի օրը ձեզ հետ քաղաք կգնամ, ձեզ ցույց կտամ բժշկին և ակնոց կառնենք...

XIX

Մայրն արդեն երեք անգամ գնացել էր տեսակցություն խնդրելու Պավելի հետ, և ամեն անգամ ժանդարմական գեներալը, որ մի ալեզարդ ծերունի էր շառագունած այտերով և մեծ քթով, սիրալիր կերպով մերժում էր նրան։

— Մի շաբաթից հետո, մայրի՛կ, ո՛չ ավելի վաղ։ Մի շաբաթից հետո դեռ կտեսնենք, իսկ հիմա անկարելի է...

Գեներալը կլորիկ էր, կուշտ և մորը հիշեցնում էր հասած սալոր, որը մի քիչ ավելի է մնացել և արդեն ծածկվել է մազմզոտ բորբոսով։ Նա միշտ քշփորում էր մանր, սպիտակ ատամները սուր, դեղին փայտիկով, նրա ոչ մեծ, կանաչավուն աչքերը քնքուշ ժպտում էին, ձայնը հնչում էր սիրալիր, բարեկամաբար։

— Քաղաքավարի՞ է,— մտախոհ ասում էր մայրը խոխոլին։— Ամբողջ ժամանակ ժպտում է...

— Այո՛, այո՛,— ասաց խոխոլը։— Նրանք, վնաս չունի, սիրալիր են, ժպտում են։ Նրանց կասեն. «Ա՛յ, սա խելոք ու ազնիվ մարդ է և մեզ համար վտանգավոր է, ապա մի կախեցե՛ք նրան»։ Նրանք կժպտան ու կկախեն, իսկ հետո՝ էլի կժպտան։

— Նա, որ մեզ մոտ խուզարկելու էր եկել, ավելի պարզ էր,— համեմատում էր մայրը։— Միանգամից երևում էր, որ շո՛ւն է...

— Նրանք բոլորն էլ մարդիկ չեն, այլ այնպես, մուրճեր են մարդկանց խլացնելու համար։ Գործիքներ են։ Նրանցով մեզ նմաններին այնպես են մշակում, որ հարմարավոր դառնանք։ Նրանք իրենք արդեն հարմարավոր են դարձված մեզ կառավարող ձեռքի համար, կարող են շինել այն ամենը, ինչ որ նրանց կստիպեն, առանց մտածելու, առանց հարցնելու, թե դա ինչի համար է։

Վերջապես մորը տեսակցության իրավունք տվին, և մի կիրակի օր, նա համեստորեն նստած էր բանտի գրասենյակի մի անկյունում։ Նեղ, կեղտոտ, ցածր առաստաղով սենյակում բացի նրանից մի քանի մարդիկ էլ կային, որոնք տեսակցության էին սպասում։ Երևի նրանք առաջին անգամը չէր, որ այդտեղ էին և միմյանց ճանաչում էին. նրանց մեջ կամաց և սարդի ոստայնի պես կպչուն խոսակցություն էր հյուսվում ծուլորեն ու դանդաղ։

— Լսե՞լ եք,— ասում էր թորշոմած դեմքով և ճամպրուկը ծնկին դրած մի չաղ կին։— Այսօր ճաշի ժամերգությանը մայր եկեղեցու երգեցիկ խմբի ղեկավարը մի երգիչ երեխայի ականջը պոկել է...

Պաշտոնաթող զինվորական համազգեստ հագած մի հասակավոր մարդ բարձր հազաց և նկատեց.

— Երգիչները թոկից փախած են։

Գրասենյակում դեսուդեն էր վազվզում կարճոտնյա, երկայնաքազուկ և դուրս պրծած կզակով մի կարճահասակ, ճաղատ

մարդ։ Առանց կանգ առնելու նա անհանգիստ և ճքճքան ձայնով ասում էր.

— Կյանքը քանի գնում՝ թանկանում էր, դրանից էլ մարդիկ ավելի չար են։ Տավարի մսի երկրորդ տեսակի գրվանքան արժե տասնչորս կոպեկ, հացը նորից է դարձել երկուսուկես...

Երբեմն ներս էին գալիս բանտարկյալներ, գորշ, միակերպ, կաշվե ծանր քոշերով։ Կիսամութ սենյակը մտնելով՝ նրանք աչքները ճպում էին։ Մեկի ոտներին շառաչում էին շղթաները։

Ամեն ինչ տարօրինակ հանգիստ և անդուրեկան կերպով պարզ էր։ Թվում էր, թե ամենքը վաղուց են սովորել, ընտելացել այս դրությանը. ոմանք հանգիստ նստած են, մյուսները ծուլորեն հսկում են, երրորդները ճշտապահությամբ և հոգնած այցելում են բանտարկյալներին։ Մոր սիրտը դողում էր անհամբերության դողով, նա տարակուսանքով նայում էր շուրջն ամեն բանի՝ այդ ծանր պարզությամբ զարմացած։

Վլասովայի կողքին նստել էր մի փոքրիկ պառավ. նրա դեմքը կնճռոտ էր, իսկ աչքերը երիտասարդ։ Բարակ վիզը շրջելով՝ նա ականջ էր դնում խոսակցությանը և բոլորի վրա նայում էր տարօրինակ խիզախությամբ։

— Ձեզնից ո՞վ կա այստեղ,— կամաց հարցրեց նրան Վլասովան։

— Որդիս։ Ուսանող է,— պատասխանեց պառավը բարձրաձայն և արագ։— Իսկ ձեզնի՞ց։

— Նույնպես որդիս։ Բանվոր է։

— Ի՞նչ է ազգանունը։

— Վլասով։

— Ձեմ լսել։ Վաղո՞ւց է նստած։

— Յոթերորդ շաբաթն է...

— Իսկ իմը տասներո՞րդ ամիսն է,— ասաց ծեր կինը, և նրա ձայնի մեջ Վլասովան զգաց մի տարօրինակ բան, որ նման էր հպարտության։

— Այո՛, այո՛,— արագ ասում էր ճաղատ ծերուկը։— Մարդու համբերությունը հատնում է... Բոլորը գրգռվում են, բոլորը գոռում են, ամեն բան քանի գնում թանկանում է։ Իսկ մարդիկ դրա համեմատ էժանանում են։ Հաշտեցնող ձայներ չեն լսվում։

— Կատարելապես ճշմարիտ է,— ասաց զինվորականը։

— Խայտառակությո՛ւն է։ Հարկավոր է, որ վերջապես մի

ուժգին ձայն հնչի՝ լռե՛լ։ Ահա թե ի՞նչ է հարկավոր։ Ուժգին ձայն...

Խոսակցությունը դարձավ ընդհանուր, աշխույժ։ Ամեն մեկն շտապում էր ասել իր կարծիքը կյանքի մասին, բայց բոլորն էլ խոսում էին կիսաձայն, և ամենքի մեջ մայրն իր համար խորթ մի բան էր զգում։ Տանն այլ կերպ էին խոսում, ավելի հասկանալի, ավելի պարզ և ավելի բարձրաձայն։

Քառակուսի, կարմրաշեկ մորուքով մի հաստ վերակացու կանչեց մոր ազգանունը, նայեց նրան ոտից գլուխ և կաղալով գնաց՝ ասելով նրան.

—Հետևիցս ե՛կ...

Մայրը քայլում էր և ուզում էր հրել վերակացուի մեջքին, որ նա ավելի արագ գնա։ Մի փոքրիկ սենյակում կանգնած էր Պավելը, ժպտալով ձեռքը մեկնեց։ Մայրը բռնեց նրա ձեռքը, ծիծաղեց աչքերն արագ-արագ ճպելով, բառեր չգտնելով մեղմաձայն ասում էր.

— Բարև... բարև...

— Հանգստացի՛ր, մայրի՛կ,— նրա ձեռքը սեղմելով ասում էր Պավելը։

— Ոչինչ։

— Մայրն է,— հառաչելով ասաց վերակացուն։— Ի միջի այլոց, իրարից հեռացեք, այնպես որ ձեր մեջ որոշ տարածություն լինի...

Եվ բարձրաձայն հորանջեց։ Պավելը հարցրեց մոր առողջությունը, տան մասին... Մայրն ինչ-որ ուրիշ հարցեր էր սպասում, փնտրում էր դրանք որդու աչքերում և չէր գտնում։ Պավելը հանգիստ էր, ինչպես միշտ, միայն դեմքն էր մի քիչ գունատվել, և աչքերը կարծես մի քիչ մեծացել էին։

— Սաշան բարևում է,— ասաց մայրը։

Պավելի արտահայտությունները ցնցվեցին, դեմքը մեղմացավ, նա ժպտաց։ Մոր սիրտը մի սուր դառնություն ծակծկեց։

— Շո՞ւտ բաց կթողնեն քեզ սրանք,— ասաց մայրը վիրավորված և գրգռված։— Ինչի՞ համար են նստեցրել։ Չէ՞ որ, ա՛յ, այն թղթերը նորից են դուրս եկել...

Պավելի աչքերն ուրախ փայլեցին։

— Նորի՞ց,— արագ հարցրեց նա։

— Այդ բաների մասին խոսելն արգելվա՛ծ է,— ծույլ-ծույլ

հայտնեց վերակացուն։— Կարելի է միայն ընտանեկան գործի մասին...

— Իսկ մի՞թե սա ընտանեկան չի,— առարկեց մայրը։

— Դե ես չգիտեմ։ Միայն՝ արգելվում է,— անտարբեր պնդեց վերակացուն։

— Մայրի՛կ, խոսիր ընտանեկա՛ն գործի մասին,— ասաց Պավելը,— դու ի՞նչ ես անում։

Մայրն իր մեջ երիտասարդական ավյուն զգալով պատասխանեց.

— Գործարան եմ տանում ամենը...

Դադարեց և ժպտալով շարունակեց.

— Շչի, կաշա, Մարյայի եփած-թխածը և ամեն տեսակ կերակուր...

Պավելը հասկացավ։ Նրա երեսը դողդողաց զսպված ծիծաղից, նա մազերը քրքրեց և սիրալիր ասաց մորը մի այնպիսի ձայնով, որ մայրը դեռ չէ՛ր լսել նրանից.

— Լավ է որ գործ ունես, չես ձանձրանում։

— Իսկ երբ այն թռուցիկները երևացին, ինձ էլ սկսեցին խուզարկել,— ոչ առանց պարծենկոտության հայտնեց մայրը։

— Էլի՞ այդ մասին,— ասաց վերակացուն նեղացած։— Ես ասում եմ՝ չի՛ կարելի։ Մարդուն ազատությունից զրկել են, որ նա բան չիմանա, իսկ դու էլի քոնն ես ասո՞ւմ։ Պետք է հասկանալ, թե ինչը չի կարելի։

— Լա՛վ, թո՛ղ, մայրի՛կ,— ասաց Պավելը։— Մատվեյ Իվանովիչը լավ մարդ է, պետք չի բարկացնել նրան։ Մենք իրար բարեկամ ենք։ Այսօր նա տեսակցությանը պատահաբար է ներկա, թե չէ սովորաբար բանտապետի օգնականն է ներկա լինում։

— Տեսակցությունը վերջացավ,— հայտնեց վերակացուն ժամացույցին նայելով։

— Դե՛հ, շնորհակալությո՛ւն, մայրի՛կ,— ասաց Պավելը։— Շնորհակալությո՛ւն, սիրելի՛ս։ Մի՛ անհանգստանա։ Ինձ շուտով բաց կթողնեն...

Նա ամուր գրկեց մորը, համբուրեց, և մայրը դրանից հուզված, երջանիկ, լաց եղավ։

— Բաժանվեցե՛ք,— ասաց վերակացուն և մորը ճանապարհ դնելիս մրմնջաց.— մի՛ լար, բա՞ց կթողնեն։ Բոլորին բաց կթողնեն... Տեղ չկա...

Մայրը տանը լայն ժպտալով և հոնքերն աշխուժորեն շարժելով ասում էր խոխոլին.

— Ես նրան լա՛վ ասացի, հասկացա՛վ նա։

Եվ տխուր հառաչեց։

— Հասկացա՛վ։ Թե չէ ինձ չէր փաղաքշի, նա երբեք այդպիսի բան չէր արել։

— Է՛հ, դուք է՛լ,— ծիծաղեց խոխոլը։— Ով ինչ ուզում է ուզի, մայրը միշտ գուրգուրանք կուզի...

— Չէ՛, Անդրյո՛ւշա, մի դու մարդկա՛նց տես,— հանկարծ զարմանքով բացականչեց մայրը։— Ի՞նչպես են սովորել։ Երեխաներին իրենցից կտրել են, բանտ են նստեցրել, իսկ նրանց փույթն էլ չի, եկել, նստել, սպասում են, խոսակցում են, հը՞։ Դե, եթե կրթված մարդիկ այդպես սովորում են, ապա մեզ, հասարակ ժողովրդիս համա՞ր ինչ ասել...

— Դա հասկանալի է,— ասաց խոխոլն իր քմծիծաղով,— օրենքը նրանց վերաբերմամբ այնուամենայնիվ, ավելի սիրալիր է, քան մեր վերաբերմամբ, և նրանք օրենքի կարիքն ավելի շուտ ունեն, քան մենք։ Այնպես որ, երբ օրենքը խփում է նրանց ճակատին, նրանք թեև ճակատները կնճռում են, բայց ոչ շատ։ Փայտն իրենցն է՝ թեթև է խփում...

XX

Մի անգամ երեկոյան մայրը սեղանի մոտ նստած՝ գուլպա էր գործում, իսկ խոխոլը բարձրաձայն կարդում էր մի գիրք հռոմեական ստրուկների ապստամբության մասին, մեկը դուրը հոսմեական ստրուկների ապստամբության մասին, մեկը դուրը Վեսպիկիդ խփեց, և երբ խոխոլը դուրը բաց արեց, ներս մտավ Վասովշչիկովը մի կապոց կոնատակին, գլխարկը ծոծրակին թեքած, մինչև ծնկներն ցեխաթաթախ։

— Անցնում էի, տեսա ձեզ մոտ լույս կա։ Մտա, որ բարևեմ։ Ուղղակի բանտի՛ց եմ գալիս,— հայտարարեց նա տարօրինակ ձայնով և Վլասովայի ձեռը բռնելով ուժեղ թափ տվեց ասելով.

— Պավելը բարևում է...

Ապա անվճռականորեն նստելով աթոռին սենյակը տնտղեց իր մռայլ, կասկածոտ հայացքով։

Նա մորը դուր չէր գալիս իր անկյունավոր, խուզած գլխով, նրա փոքր աչքերում մի բան կար, որ մորը միշտ վախեցնում էր, բայց այժմ մայրն ուրախացել էր և սիրալիր, ժպտալով աշխուժորեն ասում էր.

— Սմքե՛լ ես։ Անդրյո՛ւշա, թե՛յ տանք սրան։

— Իսկ ես արդեն ինքնաեռը դնում եմ,— արձագանքեց խոխոլը խոհանոցից։

— Է՛, Պավելն ինչպե՞ս է։ Էլի ո՞ւմն են բաց թողել, թե՞ միայն քեզ են ազատել։

Նիկոլայը գլուխը կախեց և պատասխանեց.

— Պավելը նստած է, համբերո՞ւմ է։ Մենակ ինձ են բաց թողել։— Նա աչքերը բարձրացրեց դեպի մոր դեմքը և ատամների արանքով դանդաղ արտասանեց.— ես նրանց ասացի՝ բավակա՛ն է, ինձ ազա՛տ թողեցեք... Թե չէ ես մեկնումեկին կսպանեմ, ինձ էլ հետը... Բաց թողեցին։

— Ը-ը-հա՛-հա՛,— ասաց մայրը նրանից հեռու քաշվելով և ակամայից աչքը թարթեց, երբ իր հայացքը հանդիպեց Նիկոլայի նեղլիկ, սուր աչքերին։

— Իսկ ի՞նչպես է Ֆեդյա Մազինը,— խոհանոցից գոչեց խոխոլը։— Ոտանավորներ գրո՞ւմ է։

— Գրում է։ Ես դա չե՛մ հասկանում,— գլուխը տատանելով ասաց Նիկոլայը։— Նա ի՞նչ է, դեղձանի՞կ է. նստեցրել են վանդակում, երգո՞ւմ է։ Ե՛ս, ա՛յ, մի բան եմ հասկանում՝ տուն գնալ չեմ ուզում...

— Դու տանն ի՞նչ ունես որ,— մտախոհ ասաց մայրը։— Դատարկ, կրակը մարած, ամեն ինչ սառած...

Նիկոլայը լռեց աչքերը կկոցած։ Գրպանից հանեց մի տուփ ծխախոտ, առանց շտապելու մի գլանակ վառեց և նայելով ծխի մոխրագույն քուլային, որը հալվում էր դեմքի առաջ, քմծիծաղեց մռայլ շան ժպիտով։

— Այո, տանը երևի ցուրտ է։ Հատակին՝ սառած ուտիճները թափված։ Մկներն էլ սառած կլինեն։ Պելագե՛յա Նիլովնա, թո՛ւյլ տուր քեզ մոտ գիշերել, կարելի՞ է,— խուլ հարցրեց նա առանց մորը նայելու։

— Հա՛, իհարկե՛, սիրելի՛ս,— արագ ասաց մայրը։ Նա իրեն անհարմար դրության մեջ էր զգում Նիկոլայի ներկայությամբ։

— Հիմա այնպիսի ժամանակ է, որ զավակներն ամաչում են ծնողների համար...

— Ի՞նչ,— ցնցվելով հարցրեց մայրը։

Նիկոլայը նայեց նրան, աչքերը փակեց և նրա չեչոտ դեմքը կուրացավ։

— Զավակներն սկսել են ամաչել ծնողների համար, ասում

եմ,— կրկնեց նա և աղմկալից հառաչեց։— Պավելը քեզ համար չի ամաչի երբեք։ Իսկ ես, ա՛յ, ամաչում եմ հորս համար։ Եվ նրա այդ տունն էլ... ես չեմ գնա այլևս։ Ես հայր չունեմ...տուն է՛լ չունեմ։ Ինձ ոստիկանության հսկողության տակ են դրել, թե չէ Սիբիր կգնայի... Ես այնտեղ աքսորվածներին կազատեի, նրանց փախուստը կհաջողացնեի...

Զգայուն սրտով մայրը հասկանում էր, որ այդ մարդու կյանքը ծանր է, բայց նրա ցավն իր մեջ կարեկցություն չէր զարթեցնում։

— Այո՛, քանի որ այդպես է... լավ է հեռանա՛լ,— ասաց մայրը, որպեսզի լռությամբ վիրավորած չլինի նրան։

Խոհանոցից դուրս եկավ Անդրեյը և ծիծաղելով ասաց.

— Ի՞նչ ես քարոզում, հը՞։

Մայրը վեր կացավ ասելով.

— Պետք է ուտելու բան պատրաստել...

Վեսովշչիկովը աչքերը հառած նայեց խոխոլին և հանկարծ հայտնեց.

— Ես այնպես եմ կարծում, որ մի քանի մարդկանց պետք է սպանե՛լ։

— Վա՛հ։ Իսկ ինչո՞ւ,— հարցրեց խոխոլը։

— Որպեսզի նրանք չլինեն...

Խոխոլը, բարձրահասակ ու չոր-չոր, ոտների վրա օրորվելով կանգնել էր սենյակի մեջ և վերից վար նայում էր Նիկոլային, ձեռները գրպանները դրած, իսկ Նիկոլայը պինդ նստել էր աթոռին ծխի ամպերով շրջապատված, և նրա գորշ դեմքի վրա կարմիր բծեր էին երևան գալիս։

— Իսայ Գորբովի գլուխը ես պոկելո՞ւ եմ, կտեսնե՛ս։

— Ինչի՞ համար,— հարցրեց խոխոլը։

— Թող չլրտեսի, չմատնի։ Նրա մեղքով հայրս կորավ, նրա մեղքով է նա հիմա ուզում խուզարկու-լրտես դառնալ,— մռայլ թշնամությամբ Անդրեյի վրա նայելով ասում էր Վեսովշչիկովը։

— Ա՛յ թե ի՞նչ,— բացականչեց խոխոլը։— Բայց դրա համար քեզ ո՞վ կմեղադրի։ Հիմարնե՛րը...

— Հիմարներն էլ, խելոքներն էլ մի՛ մեռոնով են մկրտվել,— հաստատամտորեն ասաց Նիկոլայը։— Ա՛յ, դու խելոք ես, Պավելն էլ, իսկ ես ձեզ համար մի՞թե նույնն եմ, ինչ որ Ֆեդկա Մազինը կամ Սամոյլովը, կամ դուք երկուսդ իրար համար։ Մի՛ սիրիր,

ես չեմ հավատա, միևնույն է... և դուք բոլորդ ինձ մի կողմ եք ետ հրում, մի առանձին տեղ...

— Ցավո՞ւմ է քո հոգին, Նիկոլա՛յ,— մեղմ և սիրալիր ասաց խոխոլը նրա կողքին նստելով։

— Ցավում է։ Ձերն էլ է ցավում... Միայն թե ձեր խոցերը ձեզ ավելի ազնիվ են թվում իմից։ Մենք բոլորս սրիկաներ ենք իրար վերաբերմամբ, ա՛յ, թե ինչ կասեմ։ Իսկ դո՞ւ ինչ կարող ես ասել ինձ։ Ապա՞։

Նա սուր աչքերը հառեց Անդրեյի դեմքին և ատամները բաց արած սպասում էր։ Նրա այլագունած դեմքն անշարժ էր, իսկ հաստ շրթունքների վրայով մի դող անցավ, կարծես մի տաք բանով այրեց շրթունքները։

— Ես քեզ բան չեմ ասի,— խոսեց խոխոլը ջերմ շոյելով Վեսովշչիկովի թշնամական հայացքը իր կապույտ աչքերի թախծոտ ժպիտով։— Գիտեմ, վիճաբանել մարդու հետ այնպիսի ժամանակ, երբ նրա սրտի բոլոր վերքերից արյուն է կաթում, դա նշանակում է միայն վիրավորել. ես գիտեմ, եղբա՛յր։

— Ինձ հետ վիճաբանել չի կարելի, ես չեմ կարողանում,— մրմնջաց Նիկոլայը աչքերը խոնարհելով։

— Ես կարծում եմ,— շարունակեց խոխոլը,— մեզանից ամեն մեկը բոբիկ ոտներով ման է եկել կոտրտած ապակիների վրա, ամեն մեկն իր խավար ժամին շնչել է ահա այդպես, ինչպես դո՛ւ ես շնչում...

— Դու ինձ ոչինչ չես կարողանում ասել,— դանդաղ արտասանեց Վեսովշչիկովը։— Իմ հոգին գայլի պես ոռնո՞ւմ է...

— Չեմ էլ ուզում ասել։ Միայն ես գիտեմ,— կանցնի քո այդ տրամադրությունը։ Գուցե ոչ բոլորովին, բայց կանցնի՞։

Նա քմծիծաղեց և շարունակեց խփելով Նիկոլայի ուսին.

— Դա, եղբա՛յր, մանկական հիվանդություն է, ինչպես կարմրուկը։ Մենք բոլորս այդ ցավով հիվանդանում ենք, ուժեղները՝ թույլ կերպով, թույլերն՝ ուժեղ։ Նա ա՛յն ժամանակ է հաղթում մեզ, երբ ինքներս մեզ գտնում ենք, բայց կյանքը և մեր տեղն այդ կյանքում դեռ չենք տեսնում։ Քեզ թվում է, թե աշխարհումս ամենալավ պտուղը միայն դո՛ւ ես և ամենքը քեզ ուտել են ուզում։ Հետո, մի քիչ ժամանակ կանցնի, կտեսնես, որ քո հոգու լավ կտորը ուրիշների կրծքի մեջ էլ վատ չէ, այն ժամանակ կհանգստանաս։ Եվ մարդ մի քիչ ամաչում է, թե ինչո՞ւ է բարձրացել զանգակատուն, քանի որ իր զանգակն այնքան

փոքր է, որ ձայնը չի էլ լսվում տոնական զանգահարության ժամանակ։ Հետագայում կտեսնես, որ քո զանգահարությունը լսելի է զանգերի խմբի մեջ, թեև մենակ՝ հին զանգերը խեղդում են այն իրենց ղողանջի մեջ, ինչպես յուղի մեջ ճանճն է խեղդվում։ Դու հասկանո՞ւմ ես ինչ եմ ասում։

— Գուցե հասկանում եմ,— գլխով անելով ասաց Նիկոլայը։— Միայն թե ես չե՛մ հավատում։

Խոխոլը ծիծաղեց, ոտքի կանգնեց, սկսեց աղմկալի քայլել։

— Ա՛յ, ես էլ չէի հավատում։ Ա՛խ, դու, սայլաբեռ։

— Ինչո՞ւ սայլաբեռ,— մռայլ քմծիծաղեց Նիկոլայը խոխոլին նայելով։

— Է՛, նմա՛ն ես։

Հանկարծ Վեսովշչիկովը բարձրաձայն ծիծաղեց բերանը լայն բանալով։

— Ի՞նչ պատահեց քեզ,— զարմացած հարցրեց խոխոլը նրա դիմաց կանգնելով։

— Մտածեցի, ա՛յ թե հիմար կլինի նա, ով քեզ վիրավորի,— հայտնեց Նիկոլայը գլուխը շարժելով։

— Բայց ինձ ինչո՞վ կարելի է վիրավորել,— արտասանեց խոխոլը ուսերը թոթվելով։

— Չգիտեմ,— ասաց Վեսովշչիկովը բարեկամորեն կամ զիջողաբար ատամները բաց անելով։— Ես միայն այն եմ մտածում, թե երևի մարդու խիղճը շատ կտանջվի քեզ վիրավորելու համար։

— Ահա՛ թե որտե՛ղ ընկար,— ծիծաղելով ասաց խոխոլը։

— Անդրյո՛ւշա,— կանչեց մայրը խոհանոցից։

Անդրեյը գնաց։

Մենակ մնալով, Վեսովշչիկովը շուրջը նայեց, մեկնեց ծանր կոշիկ հագած ոտը, նայեց, կռացավ, ձեռներով շոշափեց հաստ սրունքը։ Ձեռքը բարձրացրեց դեպի դեմքը, ուշադրությամբ նայեց ձեռքի ափին, հետո դարձրեց։ Ձեռքը հաստ էր, կարճ մատներով։ Դեղին բրդով ծածկված։ Նա օդի մեջ թափ տվեց ձեռքը, վեր կացավ։

Երբ Անդրեյն ինքնաեռը ներս բերեց, Վեսովշչիկովը կանգնած էր հայելու մոտ և նրան դիմավորեց այսպիսի խոսքերով.

— Վաղուց է մռութս չէի տեսել...

Ժպտաց և գլուխն օրորելով ավելացրեց.

— Զզվելի՜ մուրթ ունեմ։

— Ի՞նչ վնաս ունես դրանից,— հարցրեց Անդրեյը հետաքրքրությամբ նայելով նրան։

— Ա՜յ, Սաշենկան ասում է, թե դեմքը հոգու հայելին է,— դանդաղ արտասանեց Նիկոլայը։

— Եվ ճիշտ չի՜,— բացականչեց խոխոլը։—Նրա քիթը կեռի նման է, այտոսկրները՝ մկրատի, իսկ հոգին աստղ է ասես։

Վեսովշչիկովը նայեց նրան ու ժպտաց։

Սկսեցին թեյ խմել։

Վեսովշչիկովը վերցրեց մի մեծ կարտոֆիլ, մի կտոր հացի վրա աղ ցանեց և սկսեց հանգիստ, եզի նման դանդաղ ծամել։

— Իսկ այստե՞ղ ինչպե՞ս են գործերը,— հարցրեց նա, լիքը բերանով։

Եվ երբ Անդրեյն ուրախ-ուրախ պատմեց նրան գործարանում պրոպագանդայի զարգացման մասին, Նիկոլայը, որ նորից մռայլվել էր, խուլ ձայնով նկատեց.

— Երկա՜ր է տևում այդ բոլորը, երկա՜ր։ Հարկավոր է, որ շուտ լինի...

Մայրը նայեց նրան և կրծքում կամացուկ շարժվեց մի թշնամական զգացմունք դեպի այդ մարդը։

— Կյանքը ձի չի, մտրակով քշել չես կարող,— ասաց Անդրեյը։

Վեսովշչիկովը համառորեն գլուխը թափահարեց.

— Երկա՜ր է տևում։ Համբերություն չի՜ մնացել։ Ի՞նչ անեմ։

Նա անզորությամբ ձեռները տարածեց՝ խոխոլի դեմքին նայելով և լռեց՝ պատասխանի սպասելով։

— Մենք ամենքս պետք է սովորենք և ուրիշներին սովորեցնենք, ահա՜ մեր գործը,— ասաց Անդրեյը գլուխը կախելով։

Վեսովշչիկովը հարցրեց.

— Իսկ ե՞րբ ենք կռվելու։

— Մինչև այդ ժամանակը մեզ դեռ շատ կխփեն, այդ ես գիտե՜մ,— քմծիծաղով պատասխանեց խոխոլը։— Իսկ թե մենք երբ պիտի կռվենք, չգիտե՜մ։ Առաջ, գիտե՞ս, պետք է գլուխն սպառազինել, իսկ հետո ձեռները, ես կարծում եմ...

Նիկոլայը նորից սկսեց ուտել։ Մայրն աչքի տակով աննկատելիորեն տնտղում էր նրա լայն դեմքը, աշխատելով Վեսովշչիկովի մեջ գտնել մի բան, որն իրեն հաշտեցներ նրա ծանր, քառակուսի կերպարանքի հետ։

Եվ հանդիպելով փոքրիկ աչքերի ծակող հայացքին, մայրը վախկոտությամբ շարժում էր հոնքերը։ Անդրեյն իրեն անհանգիստ էր պահում, հանկարծ սկսում էր խոսել, ծիծաղում էր և հանկարծակի խոսքն ընդհատելով սուլում։

Մորը թվում էր, թե ինքը հասկանում է նրա անհանգստությունը։ Իսկ Նիկոլայը լուռ նստած էր, և երբ նրանից որևէ բան էր հարցնում, նա պատասխանում էր հակիրճ, պարզապես ակամա։

Փոքրիկ սենյակում նրա երկու բնակիչների համար հեղձուցիչ էր, նեղվածք, և նրանք մերթ մեկը, մերթ մյուսը, աչքի տակով նայում էին հյուրին։

Վերջապես Նիկոլայը վեր կենալով ասաց.

— Ես կուզեի պառկել քնել։ Թե չէ նստել եմ, նստել, հանկարծ բաց են թողել, բավական ճանապարհ եմ անցել։ Հոգնել եմ։

Երբ նա գնաց խոհանոց և, մի քիչ դեսուդեն շարժվելով, կարծես հանկարծ մեռավ այնտեղ, մայրը անդորրությանն ականջ դնելով Անդրեյին շշնջաց.

— Նա սարսափելի բան է մտածում...

— Ծանր տղա է,— համաձայնեց խոխոլը՝ գլուխն օրորելով։— Բայց դա կանցնի։ Ես էլ եմ այդպես եղել։ Երբ սրտիդ ճրագը պայծառ չի վառվում, նրա մեջ շատ մուր է կիտվում։ է՛, դուք, մա՛յր, պառկեցե՛ք, իսկ ես դեռ մի քիչ կնստեմ, կկարդամ։

Մայրը գնաց այն անկյունն, ուր մահճակալն էր դրված, որը ծածկված էր չթի վարագույրով, և Անդրեյը սեղանի մոտ նստած երկար ժամանակ լսում էր նրա աղոթքների և հառաչների ջերմ շշնջյունը։ Գիրքն արագ թերթելով՝ նա բորբոքված շփում էր ճակատը, երկար մատներով ոլորում ընչացքները, ոտները քսքստացնում։ Ժամացույցի ճոճանակը զարկում էր, պատուհանից դուրս հառաչում էր քամին։

Հնչեց մոր մեղմ ձայնը.

— Ա՜խ, տե՜ր աստված։ Ինչքա՜ն մարդ կա աշխարհումս և ամեն մեկը մի ցավից հառաչում է։ Իսկ ո՞ւր են նրանք, որոնց կյանքն ուրախ է։

— Կան և՛ այդպիսիները, կա՜ն։ Շուտով դրանք ավելի շատ կլինեն, է՛, շա՜տ,— արձագանքեց խոխոլը։

XXI

Կյանքն արագ էր ընթանում, օրերը խայտաբղետ էին, բազմադեմ։ Ամեն մի օրը իր հետ բերում էր մի նոր բան, և դա արդեն չէր անհանգստացնում մորը։ Երեկոներն ավելի ու ավելի հաճախ էին երևում անծանոթ մարդիկ, մտահոգ, կիսաձայն զրուցում Անդրեյի հետ և ուշ գիշերին օձիքները բարձրացնելով, գլխարկներն աչքերի վրա խիստ իջեցնելով հեռանում էին մթության մեջ՝ զգույշ, անաղմուկ։ Ամեն մեկի մեջ զգացվում էր զբաղված հուզմունք, թվում էր, թե ամենքն էլ ուզում են երգել ու ծիծաղել, բայց ժամանակ չունեին, նրանք միշտ շտապում էին։ Ոմանք ծաղրասեր ու լուրջ էին, ոմանք ուրախ, երիտասարդության ուժով շողշողուն, երրորդները՝ մտախոհ խաղաղ. նրանք ամենքը մոր աչքում ունեին մի ինչ-որ միատեսակ հաստատակամ ինքնավստահ բան, և թեև յուրաքանչյուրն ուներ իր դեմքը, մոր համար բոլոր դեմքերը միաձուլվում էին, դառնում մի նիհար, հանգիստ, վճռական, պայծառ դեմք՝ մուգ աչքերի խոր հայացքով, որ սիրալիր և խիստ էր, ինչպես Քրիստոսի հայացքն էմմաուսի ճանապարհին։

Մայրը նրանց հաշվում էր՝ մտքում խմբովին հավաքելով Պավելի շուրջը, այդ խմբի մեջ որդին աննկատելի էր դառնում թշնամիների աչքերի համար։

Մի անգամ քաղաքից եկավ մի ժիր, գանգրահեր աղջիկ, նա Անդրեյի համար ինչ-որ կապոց էր բերել, և հեռանալիս ուրախ աչքերը շողացնելով Վլասովային ասաց.

— Ցտեսություն, ընկե՛ր։

— Գնաք բարո՛վ,— ժպիտը զսպելով պատասխանեց մայրը։

Եվ աղջկան ճանապարհ դնելով մոտեցավ պատուհանին ու ծիծաղելով նայեց, թե ինչպես է փողոցով փոքրիկ ոտները շուտ-շուտ տրոփելով գնում իր ընկերը, որ թարմ էր, ինչպես գարնան ծաղիկը, և թեթև, ինչպես թիթեռը։

— Ընկե՛ր,— ասաց մայրը, երբ հյուրն անհայտացավ։— Ա՛խ, սիրելի՛ս։ Աստված քեզ մի ազնիվ ընկեր տա ամբողջ կյանքիդ համար։

Քաղաքից եկող բոլոր մարդկանց մեջ նա հաճախ էր ինչ-որ մանկական բան նկատում և ներողամտորեն ժպտում, բայց նրան հուզում և ցնծագին զարմացնում էր նրանց հավատը, որի խորությունը նա քանի գնում՝ ավելի պարզ էր զգում, նրան

գուրգուրում և ջերմացնում էին նրանց երազանքներն արդարության հաղթանակի մասին, նրանց ականջ դնելով՝ ակամա հառաչում էր մի անիմանալի տխրությունից։ Բայց մանավանդ հուզում էին նրան՝ նրանց պարզությունն ու իրենց վերաբերմամբ ունեցած գեղեցիկ, շռայլ անփութությունը։

Նա արդեն շատ բան էր հասկանում այն ամենից, ինչ որ նրանք ասում էին կյանքի մասին, զգում էր, որ նրանք գտել են բոլոր մարդկանց դժբախտության իսկական աղբյուրը, և սովորել էր համաձայնել նրանց մտքերի հետ։ Բայց հոգու խորքում չէր հավատում, թե նրանք կարող են կյանքը վերակառուցել իրենց ուզածի պես և, որ նրանց ուժը կբավի իրենց կրակի կողմը գրավելու ամբողջ բանվոր ժողովրդին։ Ամեն մեկն ուզում է կուշտ լինել այսօր, ոչ ոք չի ցանկանում իր ճաշը հետաձգել նույնիսկ վաղվան, եթե կարող է այն հիմա ուտել։ Ո՛չ շատերը կգնան այդ երկար և դժվարին ճանապարհով, ո՛չ շատ աչքեր կտեսնեն այդ ճանապարհի վերջում մարդկանց եղբայրության հեքիաթային թագավորությունը։ Ահա թե ինչո՛ւ նրանք ամենքը, այդ լավ մարդիկ, չնայած նրանց մորուքներին և, երբեմն, հոգնած դեմքերին, մանուկներ էին թվում նրան։

— Սիրելինե՛րս,— մտածում էր նա գլուխը օրորելով։

Բայց նրանք ամենքն արդեն այժմ ապրում էին լավ, լուրջ և խելոք կյանքով, խոսում էին բարու մասին և ցանկանալով մարդկանց սովորեցնել իրենց գիտեցածը՝ այդ անում էին առանց իրենց խնայելու։ Նա հասկանում էր, որ այդպիսի կյանքը կարելի է սիրել՝ չնայած նրա վտանգավորությանը և հառաչելով նայում էր ետ, ուր մութ, նեղ շերտի նման՝ տափակ ձգվում էր իր անցյալը։ Նրա մեջ աննկատելիորեն առաջ էր եկել այդ նոր կյանքի համար իր պիտանի լինելու անվարան գիտակցությունը, առաջ նա երբեք չէր զգացել, որ ինքը հարկավոր է որևէ մեկին, իսկ այժմ պարզ տեսնում էր, որ հարկավոր է շատերին. դա նոր բան էր, հաճելի և բարձրացրել էր նրա գլուխը...

Նա ճշտապահությամբ գործարան էր տանում թռուցիկները, դրա վրա նայում էր իբրև իր պարտականության, և նա սովորական մի մարդ էր դարձել լրտես-խուզարկուների համար ու անշմար էր մնում։ Մի քանի անգամ նրան խուզարկել էին, բայց միշտ թռուցիկները գործարանում երևալու հետևյալ օրը։ Երբ նրա հետ բան չէր լինում, նա կարողանում էր գրգռել խուզար-

կուների և պահակների կասկածը, նրանք ճանկում էին նրան, խուզարկում ոտից գլուխ, նա վիրավորված էր ձևանում, վիճում էր նրանց հետ և ամաչեցնելով հեռանում՝ իր ճարպկությամբ հպարտ։ Նրան դուր էր գալիս այդ խաղը։

Վեսովշչիկովին գործարան չընդունեցին. նա բանվոր մտավ մի փայտավաճառի մոտ և ավանում գերաններ, տախտակ և փայտ էր կրում։ Մայրը գրեթե ամեն օր տեսնում էր նրան. լարումից դողացող ոտներն ուժգին հենելով գետնին՝ մի զույգ սև ձիեր էին գնում, երկուսն էլ պառավ, ոսկրոտ, նրանց գլուխները հոգնած ու տաղտուկ տմբտմբում էին, աղոտ աչքերը տանջված թարթում։ Նրանց հետևից ցնցվելով քարշ էր գալիս մի երկար, թաց գերան կամ տախտակների մի կույտ՝ ծայրերը բարձրաձայն շառաչելով, իսկ կողքից՝ սանձերը բաց թողած քայլում էր Նիկոլայը պատառոտված շորերով, կեղտոտ, ծանր կոշիկներով, գլխարկը ծոծրակին, անճոռնի, ինչպես գետնից հանած կոճղ։ Նա էլ էր գլուխը տմբտմբացնում իր ոտների տակ նայելով։ Նրա ձիերը կուրորեն գնում են հանդիպող սայլերի վրա, մարդկանց վրա։ Նրա շուրջն իշամեղուների պես պտտվում են բարկացկոտ հայհոյանքներ, չարացած ճիչերն օդն են կտրում։ Նա առանց գլուխը բարձրացնելու, առանց նրանց պատասխանելու սուլում է սուր, խլացուցիչ սուլոցով և խուլ ձայնով մրթմրթում ձիերի վրա.

— Դա՛հ, դա՛հ։

Ամեն անգամ, երբ ընկերները հավաքվում էին Անդրեյի մոտ արտասահմանյան թերթի նոր համար կամ որևէ բրոշյուր կարդալու, գալիս էր և՛ Նիկոլայը, անկյունում նստում և լուռ լսում մեկ, երկու ժամ։ Ընթերցանությունն ավարտելով երիտասարդները վիճում էին, բայց Վեսովշչիկովը վեճերին չէր մասնակցում։ Նա ամենքից երկար էր մնում և մեն-մենակ մնալով Անդրեյի հետ՝ նրան մռայլ հարց էր տալիս.

— Իսկ ո՞վ է ամենից մեղավորը։

— Մեղավորը նա է, հասկանո՞ւմ ես, ով առաջինն ասաց՝ սա ի՞մն է։ Այդ մարդը մեռել է մի քանի հազար տարի սրանից առաջ, և նրա վրա բարկանալ չարժե՛,— կատակելով ասում էր խոխոլը, բայց նրա աչքերը նայում էին անհանգիստ։

— Իսկ հարուստնե՞րը։ Իսկ նրանք, որոնք հարուստների կողմն են։

Խոխոլը բռնում էր գլուխը, ընչացքները քաշքշում և հասա-

բակ բառերով երկար խոսում կյանքի և մարդկանց մասին։ Բայց նրա ասելով այնպես էր դուրս գալիս, որ մեղավոր են բոլոր մարդիկ ընդհանրապես, և դա Նիկոլային չէր գոհացնում։ Հաստ շրթունքներն ամուր սեղմելով նա բացասաբար օրորում էր գլուխը և թերահավատորեն հայտարարելով որ դա այդպես չէ, հեռանում էր դժգոհ ու մռայլ։

Մի անգամ նա ասաց.

— Ո՛չ, մեղավորներ պետք է որ լինեն, նրանք այստեղ են։ Ես ասում եմ, մենք պետք է ամբողջ կյանքը շուռ տանք հերկելով, ինչպես մոլախոտով ծածկված դաշտը,— անխնա՛։

— Ա՛յ, մի անգամ համարակալ Իսայը ձեր մասին այդպես ասաց,— հիշեց մայրը։

— Իսա՞յը,— հարցրեց Վեսովշչիկովը քիչ լռությունից հետո։

— Այո՛։ Ջա՛ր մարդ է։ Հետևում է ամենքին, հարց ու փորձ է անում, սկսել է մեր փողոցով անցուդարձ անել, մեր պատուհաններով մտիկ է տալիս...

— Մտի՞կ է տալիս,— կրկնեց Նիկոլայը։

Մայրն արդեն պառկած էր անկողնում և չէր տեսնում Նիկոլայի դեմքը, բայց հասկացավ, որ մի ավելորդ բան է ասել, որովհետև խոխոլն շտապով և հաշտեցուցիչ կերպով ասաց.

— Է՛հ, թո՛ղ անցուդարձ անի ու մտիկ տա։ Ազատ ժամանակ ունի, ման է գալիս, էլի՛...

— Չէ՛, սպասի՛ր,— խուլ ձայնով ասաց Նիկոլայը։— Ա՛յ, նա է մեղավորը։

— Ի՞նչ բանում,— արագ հարցրեց խոխոլը։— Որ հիմա՞ է։

Վեսովշչիկովն առանց պատասխանելու գնաց։

Խոխոլը դանդաղ և հոգնած քայլում էր սենյակում, իր բարակ, սարդային ոտները կամաց քստքստացնելով։ Կոշիկները հանել էր, ինչպես միշտ անում էր, որպեսզի չթխկթխկացնի և Վլասովային չանհանգստացնի։ Բայց մայրը քնած չէր, և երբ Նիկոլայը գնաց, անհանգստությամբ ասաց.

— Ես նրանից վախենո՞ւմ եմ։

— Այո՛-ո՛,— դանդաղ ձայնը երկարացրեց խոխոլը։— Ջայրացկոտ տղա էր։ Մա՛յր, դուք նրա հետ Իսայի մասին չխոսե՛ք, այդ Իսայն իսկապես լրտեսում է։

— Ջարմանալու ի՞նչ կա։ Նրա քավորը ժանդարմ է,— նկատեց մայրը։

— Երևի Նիկոլայը նրան կծեծի,— երկյուղով շարունակեց խոխոլը։— Ա՛յ, տեսնո՞ւմ եք, թե ի՞նչ զգացմունքներ են ներջնչել մեր կյանքի պարոն հրամանատարները շարքային զինվորներին։ Երբ Նիկոլայի պես մարդիկ զգան իրենց վիրավորանքը և համբերությունից դուրս գան, ի՞նչ կլինի։ Երկինքն արյունով կցողեն, և երկիրն արյան մեջ սապնի պես կփրփրի...

— Սարսափելի՞ է, Անդրյո՛ւշա,— կամաց բացականչեց մայրը։

— Ճանճեր կուլ չտային, սիրտները հո չէին թափի,— քիչ լուռ մնալուց հետո ասաց Անդրեյը։— Եվ այնուամենայնիվ, մայր, նրանց արյան ամեն մի կաթիլը նախօրոք լվացված է ժողովրդի արցունքների լճերով...

Նա հանկարծ կամաց ծիծաղեց և ավելացրեց.

— Արդարացի է, բայց մխիթարական չէ։

XXII

Մի անգամ, մի տոն օր, մայրը խանութից եկավ, դուռը բաց արեց և շեմքում մնաց կանգնած, հանկարծակի ամբողջովին ուրախությամբ ողողված՝ ինչպես տաք, ամառվա անձրևով. սենյակում հնչում էր Պավելի ուժեղ ձայնը։

— Ահա՛ մայրը,— գոչեց խոխոլը։

Մայրը տեսավ, թե ինչպես արագ շուռ եկավ Պավելը և նկատեց, որ նրա դեմքը բոցավառվեց մի զգացմունքով, որն իբր՝ մոր համար, ինչ-որ մեծ բան էր խոստանում։

— Ահա և եկար... ու տանն ես,— մրմնջաց մայրը, անսպասելիությունից իրեն կորցնելով, և նստեց։

Որդին դեպի մայրը կռացավ. գունատ, աչքերի անկյուններում պայծառ շողշողում էին փոքրիկ արցունքներ, շրթունքները ցնցվում էին։ Մի վայրկյան նա լուռ էր, մայրը նայեց նրան նույնպես լռությամբ։

Խոխոլը մեղմ սուլելով, գլուխը կախ անցավ նրանց մոտով և բակը դուրս եկավ։

— Շնորհակալություն, մայրի՛կ,— խոր, ցածր ձայնով ասաց Պավելը ցնցվող մատներով նրա ձեռքը սեղմելով։— Շնորհակալություն, հարազա՛տս։

Որդու դեմքի արտահայտությամբ և ձայնի հնչյունով ուրախ, ցնցված մայրը շոյում էր նրա գլուխը և սրտի զարկը զսպելով, կամաց ասում.

— Քրիստո՛ս քեզ հետ։ Ինչի՞ համար...

— Նրա համար, որ օգնում ես մեր մեծ գործին՝ շնորհակալությո՛ւն,— ասում էր Պավելը։— Երբ մարդ կարող է իր մորն անվանել հոգով ևս հարազատ, դա հազվագյո՛ւտ երջանկություն է։

Մայրը լուռ, բաց սրտով ագահությամբ կլանելով նրա խոսքերը՝ հիանում էր որդով,— նա կանգնած էր իր առջև այնպե՛ս լուսավոր, մոտիկ։

— Մայրի՛կ, ես տեսել եմ, շատ բան էր դիպչում քո հոգուն, դժվար էր քեզ համար։ Կարծում էի՝ երբեք չես հաշտվի մեզ հետ, չես ընդունի մեր մտքերն իբրև քոնը, այլ միայն լուռ կհամբերես, ինչպես համբերել ես ամբողջ կյանքդ։ Դա ծա՛նր բան էր...

— Անդրյուշան ինձ շա՛տ բան հասկացրեց,— ավելացրեց մայրը։

— Նա ինձ պատմել է քո մասին,— ծիծաղելով ասաց Պավելը։

— Եգորը նույնպես։ Ես և նա հայրենակիցներ ենք։ Անդրյուշան նույնիսկ ուզում էր գրել-կարդալ սովորեցնել...

— Իսկ դու ամաչել ես և ինքդ ծածուկ սկսել ես սովորե՞լ։

— Նա տեսե՞լ է, հա՞,— շփոթված բացականչեց մայրը։ Եվ կուրծքը լցված ուրախության առատությունից անհանգստացած՝ առաջարկեց Պավելին.— կանչե՛նք նրան։ Դիտմամբ գնաց, որ չխանդարի։ Նա մայր չունի...

— Անդրե՛յ...— կանչեց Պավելը նախասենյակի դուռը բանալով։— Ո՞ւր ես։

— Այստեղ եմ։ Ուզում եմ փայտ կոտրել։

— Եկ այստե՛ղ։

Անդրեյն իսկույն չեկավ, այլ խոհանոց մտնելով՝ տնտեսավարի ասաց.

— Պետք է Նիկոլային ասել, որ փայտ բերի, մեր փայտը քիչ է։ Տեսնո՞ւմ եք, մա՛յր, թե ոնց է Պավելը։ Իշխանությունը՝ պատժելու փոխարեն՝ միայն լավ կերակրում է խռովարարներին...

Մայրը ծիծաղեց։ Նրա սիրտը դեռ քաղցր նվաղում էր, նա ուրախությունից հարբած էր, բայց արդեն մի ժլատ և զգույշ զգացմունք նրա մեջ ցանկություն էր հարուցում տեսնել որդուն հանդիստ, այնպես, ինչպես միշտ։ Նրա հոգում չափազանց լավ

էր, և նա ուզում էր, որ իր կյանքի առաջին մեծ ուրախությունը մի անգամ ընդմիշտ տպավորվի սրտում այնպես կենդանի և ուժգին, ինչպես որ եկել էր։ Եվ երկյուղ կրելով՝ չլինի թե այդ երջանկությունը պակասի, նա շտապում էր շուտով ծածկել այն, ինչպես թռչնորսը ծածկում է իր պատահաբար բռնած հազվագյուտ թռչունը։

— Եկեք ճաշե՛նք։ Պաշա՛, դու չէ՞ որ դեռ բան չես կերել,— այս ու այն կողմ ընկնելով առաջարկեց նա։

— Ոչ։ Ես երեկ վերակացուից իմացա, որ որոշել են բաց թողնել ինձ, և այսօր ոչ խմելս էր գալիս, ոչ ուտելս...

— Առաջինը ես այստեղ հանդիպեցի ծերունի Սիզովին,— պատմում էր Պավելը։— Նա ինձ տեսավ, ճանապարհի այն կողմից այս կողմն անցավ, բարևեց։ Ես նրան ասում եմ. ինձ հետ դուք հիմա զգույշ եղեք, ես վտանգավոր մարդ եմ, ոստիկանության հսկողության տակ եմ գտնվում։ «Վնաս չունի»,— ասում է։ Եվ գիտե՞ս նա ինչպես հարցրեց քրոջ տղայի մասին։ «Ի՞նչ,— ասում է,— Ֆյոդորն իրեն լա՞վ պահեց»։ Ի՞նչ է նշանակում բանտում իրեն լավ պահել։ «Էհ,— ասում է,— ընկերների դեմ ավելորդ բաներ դուրս չի՞ տվել»։ Եվ երբ ես ասացի, թե Ֆեդյան աղնիվ մարդ է ու խելոք, նա մորուքը շփեց և հպարտ-հպարտ ասաց. «Մենք, Սիզովներս, մեր ընտանիքում վատ մարդիկ չունե՛նք»։

— Նա խելքը գլխին ծերունի է,— ասաց խոխոլը գլխով անելով։— Ես ու նա հաճախ ենք խոսում, լավ մուժիկ է։ Ֆեդյային շուտո՞վ բաց կթողնեն։

— Բոլորին բաց կթողնեն, ես կարծում եմ։ Նրանց դեմ ոչ մի բան չկա, բացի Իսայի ցուցմունքներից, իսկ նա ի՞նչ կարող էր ասել։

Մայրը ետ ու առաջ էր գնում և նայում էր որդուն. Անդրեյը Պավելի պատմություններին ականջ դնելով, կանգնել էր պատուհանի մոտ ձեռները մեջքին դրած։ Պավելը շրջում էր սենյակում։ Նրա մորուքը երկարել էր, բարակ և մուգ մազերի մանր օղակները խիտ ոլորվել էին այտերի վրա՝ մեղմացնելով դեմքի թուխ գույնը։

— Նստե՛ք,— առաջարկեց մայրը՝ սեղանին դնելով տաք կերակուրը։

Ճաշին Անդրեյը պատմեց Ռիբինի մասին։ Եվ երբ նա վերջացրեց, Պավելը ցավակցությամբ բացականչեց.

— Եթե ես տանը լինեի, նրան բաց չէի թողնի։ Նա ի՞նչ է տարել իր հետ։ Վրդովմունքի մեծ զգացմունք և գլխում շփոթ։

— Է՛,— ասաց խոխոլը քմծիծաղով,— երբ մարդ քառասուն տարեկան է, և ինքն էլ իր հոգու մեջ երկար կռվել է արջերի դեմ, դժվար է նրան վերափոխել...

Սկսվեց այն վեճերից մեկը, երբ մարդիկ սկսում էին խոսել այնպիսի խոսքերով, որոնք անհասկանալի էին մոր համար։ Ճաշը ավարտեցին, բայց դեռ էլի կատաղորեն իրար վրա էին թափում խորիմաստ բառերի ճռճռան կարկուտը։ Երբեմն պարզ էին խոսում։

— Մենք պետք է գնանք մեր ճանապարհով՝ ոչ մի քայլ չթեքվելով ոչ մի կողմ,— հաստատապես հայտնում էր Պավելը։

— Եվ ճանապարհին դեմ կառնենք մի քանի տասնյակ մարդկանց, որոնք կդիմավորեն մեզ իբրև թշնամիների...

Մայրն ականջ էր դնում վեճին և հասկանում էր, որ Պավելը գյուղացիներին չի սիրում, իսկ խոխոլը նրանց պաշտպանում է՝ ապացուցելով, որ մուժիկներին ևս պետք է բարիք սովորեցնել։ Մայրն Անդրեյին ավելի էր հասկանում և թվում էր, թե նա իրավացի է, բայց ամեն անգամ, երբ Անդրեյը որևէ բան էր ասում Պավելին, մայրը ուշադրությունը լարելով և շնչառությունը պահելով՝ սպասում էր որդու պատասխանին, որպեսզի շուտով իմանա, թե արդյոք խոխոլը նրան չի՞ վիրավորել։ Բայց նրանք իրար վրա գոռում էին առանց վիրավորելու։

Երբեմն մայրը հարցնում էր որդուն.

— Այդպե՞ս է արդյոք, Պա՛շա։

Պավելը ժպտալով պատասխանում էր.

— Այդպե՛ս է։

— Դուք, պարո՛ն,— սիրալիր նենգամտությամբ ասում էր խոխոլը,— կուշտ կերել եք, բայց վատ եք ծամել, ձեր կոկորդում պատառ է մնացել։ Ողողեցե՛ք ձեր կոկորդը։

— Հիմարություններդ թո՛ղ,— խորհուրդ էր տալիս Պավելը։

— Ես կարծես հոգեհանգստի եմ...

Մայրը կամաց ծիծաղելով գլուխն օրորում էր...

XXIII

Մոտենում էր գարունը, հալվում էր ձյունը, մերկացնելով իր խորքում գտնվող ցեխն ու մուրը։ Օրեցօր ցեխն ավելի համառորեն էր աչքի զարնում, թվում էր, թե ամբողջ ավանը ցնցոտի-

ներ է հագել, անլվա է։ Ցերեկը կտուրները կաթում էին, հոգնած ու քրտնած ծխում էին տների գորշ պատերը, իսկ գիշերվա դեմ աղոտ կերպով սպիտակին էին տալիս սառցե լուլաները։ Երկընքում ավելի ու ավելի հաճախ էր երևում արեգակը։ Եվ սկսել էին անդադրում խոխոջել առուները դեպի ճահիճը վազելով։

Պատրաստվում էին տոնելու Մայիսի մեկը։

Գործարանում և ավանում թռչում էին թռուցիկները, որոնք բացատրում էին այդ տոնի նշանակությունը, և նույնիսկ պրոպագանդայից շաղված երիտասարդները դրանք կարդալով ասում էին.

— Ա՛յս տոնը պետք է կազմակերպել։

Վեսովշչիկովը խոժոռ ժպտալով բացականչում էր.

— Ժամանա՛կն է։ Հերի՛ք է պահմտոցի խաղալ։

Ուրախանում էր Ֆեդյա Մազինը։ Սաստիկ նիհարած լինելով նա իր շարժումների և խոսքերի ջղային թրթռոցով նմանվում էր վանդակում գտնվող արտույտի։ Նրան միշտ ուղեկցում էր ոչ իր տարիքի համեմատ լուրջ Յակով Սոմովը, որ այդ ժամանակ քաղաքում էր աշխատում։ Սամոյլովը, որ բանտում ավելի կարմրաշեկ էր դարձել, Վասիլի Գուսևը, Բուկինը, Դրագունովը և էլի մի քանի հոգի ապացուցում էին, թե անհրաժեշտ է ղեկը ձեռին դուրս գալ, բայց Պավելը, խոխոլը, Սոմովը և ուրիշները վիճում էին նրանց հետ։

Հայտնվում էր Եգորը, միշտ հոգնած, քրտնած, հևալով, և կատակում էր.

— Գոյություն ունեցող իրավակարգը փոխելու աշխատանքը մեծ աշխատանք է, ընկերներ, բայց որպեսզի դա ավելի հաջող ընթանա, ես պետք է ինձ համար նոր կոշիկներ գնեմ,— ասում էր նա մատնանշելով իր պատառոտված և թաց կոշիկները։— Կրկնակոշիկներս էլ են պատառոտվել անբուժելի կերպով, և ամեն օր ոտներս թրջվում են։ Ես չեմ կամենում փոխադրվել երկրի խորքերը, նախքան մեր հրաժարվելը հին աշխարհից հրապարակորեն և բացեիբաց, ուստի բացասելով ընկեր Սամոյլովի առաջարկը զինված ցույցի վերաբերյալ՝ առաջարկում եմ զինել ինձ ամուր կոշիկներով, քանզի խորապես համոզված եմ, որ սա ավելի՛ օգտակար է սոցիալիզմի հաղթանակի համար, քան նույնիսկ շատ մեծ տուրուդմբոցը...

Հենց այսպիսի սեթևեթ լեզվով էր նա պատմում բանվորներին այն մասին, թե ինչպես զանազան երկրներում ժողովուրդն

աշխատել է թեթևացնել իր կյանքը։ Մայրը սիրում էր լսել նրա ճառերը և դրանցից նա տարօրինակ տպավորություն էր ստանում,— ժողովրդի ամենախորամանկ թշնամիները, որոնք ամենից ավելի անգթորեն և հաճախ են խաբել նրան, եղել են փոքրիկ, հաստափոր, կարմրամորուք մարդուկները՝ անխիղճ ու ագահ, խորամանկ և անգութ։ Երբ նրանց համար ցարերի իշխանության տակ ապրելը դժվարանում էր, նրանք խավար ժողովրդին գրգռել են ցարական իշխանության դեմ, իսկ երբ ժողովուրդը բարձրացել և այդ իշխանությունը կորզել է թագավորի ձեռքից, այդ մարդուկները խաբեբայությամբ իրենց ձեռքն են առել իշխանությունը և ժողովրդին քշել բները. իսկ եթե ժողովուրդը վիճել է նրանց հետ, կոտորել են նրան հարյուրներով ու հազարներով։

Մի անգամ, սիրտ անելով, մայրը Եգորին պատմեց կյանքի այն պատկերը, որ ինքը ստեղծել էր նրա ճառերի հիման վրա, և ամաչկոտությամբ ծիծաղելով հարցրեց.

— Այսպե՞ս է արդյոք, Եգո՛ր Իվանիչ։

Եգորը քրքջաց աչքերը ծռելով, շնչասպառ եղավ, ձեռներով կուրծքը տրորեց։

— Հիրավի այդպես է, մայրի՛կ։ Դուք միանգամայն ճիշտ եք ըմբռնել պատմությունը։ Այդ դեղին ֆոնի վրա կան մի քանի զարդանկարներ, այսինքն ասեղնագործություններ, բայց դրանք բանը չե՛ն փոխում։ Հենց հաստլիկ մարդուկներն են գլխավոր մեղավորները և ամենաթունավոր միջատները, որոնք կծում են ժողովրդին։ Ֆրանսիացիները հաջող կերպով դրանց անվանում են բուրժուա։ Հիշեցե՛ք, մայրի՛կ, բուրժուա՛։ Խժռում են նրանք մեզ, խժռում ու հյութը ծծում...*

— Նշանակում է՝ հարուստնե՞րը,— հարցրեց մայրը։

— Ա՛յ, հենց նրա՞նք։ Նրանց դժբախտությունն այդ է։ Գիտե՞ք, եթե երեխայի կերակրի մեջ քիչ-քիչ պղինձ խառնեն, դրանից նրա ոսկորները ուշ կաճեն և նա թզուկ դուրս կգա, իսկ եթե մարդուն ոսկով թունավորեն, նրա հոգին կդառնա փոքրիկ, մեռած և գորշ, հինգ կոպեկանոց ռետինե գնդակի պես...

Մի անգամ Եգորի մասին խոսելիս Պավելն ասաց.

---

* Բնագրում բառախաղ է бур-жуа (буржуа) жуют (ծամում են) բառերից։ Ծամում բառը փոխարինեցինք «խժռում» բառով որոշ նույնահնչյունություն պահպանելու համար։ Ս. Բ.։

— Բայց գիտե՞ս, Անդրե՛յ, ամենից շատ այն մարդիկ են կատակում, որոնց սիրտը մրմռում է...

Խոխոլը քիչ լռեց և աչքերը կկոցելով պատասխանեց.

— Եթե քո ասածը ճիշտ լիներ, ամբողջ Ռուսաստանը ծիծաղից կմեռներ...

Երևաց Նատաշան, նա էլ էր բանտում նստած եղել մի ուրիշ քաղաքում, բայց այդ նրան չէր փոխել։ Մայրը նկատեց, որ նրա ներկայությամբ խոխոլը զվարթանում, կատակներ էր շռայլում, բոլորին դիպչում էր թեթև ենգախոսությամբ՝ մոր մեջ ուրախ ծիծաղ հարուցելով։ Բայց երբ Նատաշան հեռանում էր, Անդրեյն սկսում էր թախծալի սուլել իր անվերջ երգերը և երկար ժամանակ ման էր գալիս սենյակում ոտները վհատությամբ քստքստացնելով։

Հաճախ շտապ գալիս էր Սաշան, միշտ մռայլված, միշտ շտապելիս և ինչ-որ պատճառով ավելի ու ավելի կոշտ-կոպիտ, խիստ։

Մի անգամ, երբ Պավելը նախասենյակ էր դուրս եկել նրան ճանապարհ դնելու և դուռը հետևից չէր փակել, մայրն այս արագ խոսակցությունը լսեց.

— Դրոշակը դո՞ւք եք տանելու,— կամաց հարցրեց աղջիկը։

— Ես։

— Դա որոշվա՞ծ է։

— Այո։ Դա իմ իրավունքն է։

— Նորի՞ց բանտ։

Պավելը լուռ էր։

— Դուք չէի՞ք կարող...— սկսեց Սաշան և կանգ առավ։

— Ի՞նչ,— հարցրեց Պավելը։

— Ուրիշին զիջել...

— Ո՛չ,— բարձրաձայն ասաց Պավելը։

— Մտածեցե՛ք, դուք այնպես ազդեցիկ եք, ձեզ սիրո՞ւմ են... Դուք և Նախոդկան այստեղ առաջինն եք, դուք որքա՞ն գործ կարող եք կատարել ազատության մեջ, մտածեցե՛ք։ Իսկ չէ՞ որ դրա համար ձեզ կաքսորեն հեռու տեղ, երկա՞ր ժամանակով։

Մորը թվաց, թե աղջկա ձայնի մեջ ծանոթ զգացումներ են հնչում՝ թախիծ և երկյուղ։ Եվ Սաշայի խոսքերն սկսեցին մոր սրտի մեջ ընկնել ինչպես սառցաջրի խոշոր կաթիլներ։

— Ո՛չ, ես վճռե՛լ եմ,— ասաց Պավելը։— Դրանից ես չեմ հրաժարվի ոչ մի պայմանով։

— Նույնիսկ եթե ե՞ս խնդրելու լինեմ...

Պավելը հանկարծ սկսեց խոսել արագ և առանձնապես խիստ.

— Դուք այդպես չպիտի խոսեք, ի՞նչ եք ասում։ Դուք չպիտի խոսեք։

— Ես մա՛րդ եմ,— կամաց ասաց աղջիկը։

— Լավ մարդ եք,— նույնպես կամաց, բայց մի ինչ-որ առանձնահատկությամբ, կարծես շնչասպառ էր լինում, ասաց Պավելը։— Ինձ համար թանկագին մարդ։ Ուստի և... ուստի և պետք չի այդպես խոսել...

— Մնաս բարո՞վ,— ասաց աղջիկը։

— Նրա կոշիկի կրունկների թխկթխկոցից մայրը հասկացավ, որ նա հեռացավ արագ, գրեթե վազեց։ Պավելը նրա հետևից գնաց բակ։

Մի ծանր, ճնշող երկյուղ պատեց մոր սիրտը։ Նա չէր հասկանում, թե ինչի մասին էր խոսքը, բայց զգում էր, որ առաջիկայում իրեն վիշտ է սպասում։

«Նա ի՞նչ է ուզում անել»։

Պավելը վերադարձավ Անդրեյի հետ միասին. խոխոլը գլուխը տարուբերելով ասում էր.

— Է՛հ, Իսա՛յկա, Իսայկա. ի՞նչ անել դրան։

— Պետք է նրան խորհուրդ տալ, որ թողնի իր մտադրությունը,— մռայլ ասաց Պավելը։

— Պաշա՛, ի՞նչ ես ուզում անել,— հարցրեց մայրը գլուխը կախելով։

— Ե՞րբ։ Հիմա՞։

— Մայիսի... Մայիսի մեկին։

— Հա՛,— բացականչեց Պավելը ձայնն իջեցնելով։— Ես տանելու եմ մեր դրոշը, դրոշը ձեռքիս գնալու եմ բոլորի առջևից։ Դրա համար ինձ հավանորեն նորից բանտ կնստեցնեն։

Մոր աչքերը տաքացան և բերանում անախորժ չորություն առաջ եկավ։ Պավելը բռնեց նրա ձեռքը, շոյեց։

— Դա հարկավոր է, հասկացի՛ր։

— Ես բան չեմ ասում,— ասաց մայրը գլուխը դանդաղ բարձրացնելով։ Եվ երբ նրա աչքերը հանդիպեցին որդու աչքերի համառ փայլին, վիզը նորից ծռեց։

Պավելը բաց թողեց մոր ձեռքը, հառաչեց և հանդիմանորեն ասաց.

— Ոչ թե պետք է վշտանաս դու, այլ պետք է ուրախանաս։ Ե՞րբ են այնպիսի մայրեր լինելու, որ ուրախությամբ իրենց զավակներին ուղարկեն մեռնելու...

— Հո՛ւֆ, հո՛ւֆ,— փնթփնթաց խոխոլը,— տես ի՞նչ մեծ-մեծ է բրդում*...

— Ես բան եմ ասում ո՞ր,— կրկնեց մայրը։— Ես քեզ չեմ խանգարում։ Իսկ եթե քեզ խղճում եմ, ես մայր եմ, ինչպե՞ս չխղճամ...

Պավելը ետ քաշվեց մորից, և մայրը լսեց նրա կոշտ, սուր խոսքը.

— Սեր կա, որը մարդուս խանգարում է ապրել...

Ցնցվելով, վախենալով, որ որդին նորից իր սիրտը վանող որևէ բան կասի, մայրն արագ ասաց.

— Հարկավոր չի, Պա՛շա։ Ես հասկանում եմ, որ դու ուրիշ կերպ չես կարող, ընկերների համար է...

— Ո՛չ,— ասաց Պավելը։— Այդ ես ի՞նձ համար եմ անում։

Դրան շեմքում կանգնեց Անդրեյը, նա դռնից բարձր էր և այժմ շեմքում կանգնելով, ինչպես շրջանակի մեջ, տարօրինակ կերպով ծնկները ծալեց՝ մի ուսը շրջանակին հենելով, իսկ մյուս ուսը, վիզը և գլուխն առաջ դուրս բերելով։

— Լավ կլիներ, որ խոսելուն վերջ տայիք, պարո՛ն,— ասաց նա իր ուռուցիկ աչքերը մռայլ հառելով Պավելի դեմքին։ Նա նման էր քարի ճեղքում գտնվող մողեսի։

Մոր լացը գալիս էր։ Ջցանկանալով, որ որդին տեսնի իր արցունքները, նա հանկարծ մրմնջաց.

— Վա՜յ, ես մոռացել եմ...

Եվ դուրս եկավ նախասենյակ։ Այնտեղ գլուխն անկյունը մտցնելով՝ նա ազատություն տվեց իր սրտնեղության արցունքներին և լաց եղավ լուռ, անմռունչ, արցունքներից այնպես թուլանալով, որ կարծես դրանց հետ միասին դուրս էր հոսում իր սրտի արյունը։

Իսկ թույլ փակված դռան միջով նրա վրա էին սողում վեճի խուլ հնչյունները։

---

[1] Բնագրում «Поскакал наш пан подогнув кафтан» (սլացավ մեր պարոնը՝ բաճկոնի փեշերը վեր քաշելով) չափածո ասացվածքի նշանակությունն ենք տալիս։ Ս. Բ.։

— Այդ ի՞նչ է, դու հիանո՞ւմ ես քեզանով՝ մորդ տանջելո՞վ,— հարցնում էր խոխոլը։

— Դու իրավունք չունես այդպես խոսելու,— գոչեց Պավելը։

— Լա՜վ ընկեր կլինեի ես քեզ, եթե լռեի՝ տեսնելով քո այդ հիմար այծի ոստյունները։ Դու ինչո՞ւ ասացիր այդ խոսքերը, ինքդ հասկանո՞ւմ ես։

— Պետք է միշտ հաստատ ասել և՛ այո՝-ն և՛ ոչ՝-ը։

— Մո՞րդ։

— Բոլորի՛ն։ Չեմ ուզում ո՛չ սեր, ո՛չ բարեկամություն, որը ոտներիդ է փաթաթվում, արգելք է հանդիսանում...

— Հերո՜ս։ Քի՜թդ սրբիր։ Սրբիր ու գնա այդ բոլորը Սաշենկային ասա։ Դա նրան պետք է ասեիր...

— Ասե՛լ եմ...

— Այսպե՞ս։ Ստո՛ւմ ես։ Դու նրան ասել ես սիրալիր, նրան ասել ես քնքուշ, ես չեմ լսել, բայց գիտե՛մ։ Իսկ մորդ առաջ հերոսությունդ ես ցույց տալիս... Հասկացի՛ր, ա՛յծ, քո հերոսությունը գրո՛շ չարժի։

Վլասովան սկսեց արագությամբ սրբել արցունքներն այտերից։ Նա վախեցավ, որ խոխոլը կվիրավորի Պավելին, շտապով բացեց դուռը և խոհանոց մտնելով՝ դողալով, վշտով ու երկյուղով լի, բարձրաձայն ասաց.

— Ու՜-ո՜ւ, ցուրտ է։ Դեռ գարուն էլ է...

Խոհանոցում զանազան իրեր աննպատակ մի տեղից մի ուրիշ տեղ փոխադրելով, աշխատելով խլացնել սենյակի քիչ հանդարտված ձայները, նա ավելի բարձրաձայն շարունակեց։

— Ամեն ինչ փոխվել է, մարդիկ տաքացել են, եղանակը սառել։ Առաջներն այս ժամանակ եղանակները տաք էին լինում, երկինքը պարզ, արևոտ...

Սենյակում լռեցին։ Մայրը սպասելով կանգ առավ խոհանոցի մեջտեղը։

— Լսեցի՞ր,— հնչեց խոխոլի կամաց հարցը։— Դա պետք է հասկանալ, սատանա՜։ Նրա ասածն ավելի ուժեղ է, քան թե քոնը։

— Թեյ կխմե՞ք,— դողդոջուն ձայնով հարցրեց մայրը։ Եվ պատասխանի չսպասելով՝ այդ դողը թաքցնելու նպատակով գոչեց.

— Սա ի՞նչ բան է, այ թե սառել եմ, հա՜։

Պավելը դանդաղ դուրս եկավ մոր մոտ։ Նա նայում էր աչքի տակով, շրթունքների վրա դողացող մեղավոր ժպիտով։

— Ների՛ր ինձ, մա՛յր,— ցածր ասաց նա։— Ես դեռ երեխա եմ, հիմար եմ...

— Դու ինձ հետ բան չունես,— վշտագին գոչեց մայրը՝ դողդող գլուխն իր կրծքին սեղմելով։— Ոչինչ մի՛ ասա։ Տերը քեզ հետ, քո կյանքը՝ քո՛ գործն է։ Բայց սրտիս մի՛ դիպչիր։ Մի՞թե մայրը կարող է չխղճալ։ Չի՛ կարող։ Ես ամենքի՛ն եմ խղճում։ Դուք ամենքդ հարազատ եք, ամենքդ արժանավոր եք։ Եվ ձեզ ո՞վ կխղճա բացի ինձանից... Դու գնում ես, քո հետևից էլ ուրիշները ամեն ինչ թողին, գնացին... Պա՛շա։

Մի մեծ, ջերմ միտք թպրտում էր նրա կրծքում, թևավորում նրա սիրտը տառապալից, մարտիրոսական ուրախության ներշնչված զգացմունքով, բայց մայրը բառեր չէր գտնում և իր տանջանքի համբուրության մեջ, ձեռքը թափ տալով նայում էր որդու դեմքին վառ և սուր ցավով այրվող աչքերով։

— Լա՛վ, մայրի՛կ, ների՛ր, ես տեսնում եմ,— մրմնջաց որդին գլուխը կախելով և ժպտադեմ, աչքի տակով նայելով մորը ավելացրեց, երեսը շփոթված, բայց ուրախ դարձնելով։

— Ես սա չեմ մոռանա, ազնիվ խո՛սք։

Մայրը նրան հեռացրեց իրենից և նայելով դեպի սենյակը, աղաչական-սիրալիր ձայնով ասաց Անդրեյին.

— Անդրյո՛ւշա, նրա վրա մի՛ զոռաք։ Դուք իհարկե՝ մեծ եք...

Մեջքը դեպի մայրը դարձրած և անշարժ՝ խոխոլը տարօրինակ և ծիծաղելի կերպով մռնչաց.

— Հը՞-ը՞-ը՞։ Գոռալու եմ վրան։ Դեռ ծեծելու էլ եմ։

Մայրը կամաց-կամաց գնում էր դեպի նա, ձեռքը մեկնած, ու ասում.

— Անո՛ւշ մարդ...

Խոխոլը երեսը դարձրեց, գլուխը կախեց եզի պես և ձեռները ետևում սեղմելով մոր մոտով անցավ խոհանոցը։ Այնտեղից հնչեց նրա մռայլ ծիծաղաշարժ ձայնը։

— Հեռացի՛ր, Պավե՛լ, թե չէ գլուխդ կկծեմ-կպոկե՛մ։ Ես հանաք եմ անում, մա՛յր, դուք մի՛ հավատաք։ Լավ է գնամ ինքնաեռը գցեմ։ Հա՛։ Մեր ածուխը... թաց է, սատանան տանի։

Նա լռեց։ Երբ մայրը խոհանոց եկավ, նա հատակին նստած ինքնաեռն էր փչում։ Մոր վրա չնայելով նա նորից սկսեց.

— Դուք մի՛ վախեցեք, ես նրան ձեռք չե՞մ տա։ Սիրտս փափուկ է խաշած բոզկի պես։ Եվ ես... է՛յ, դո՛ւ, հերոս, մի՛ լսիր, ես նրան սիրում եմ։ Բայց ես նրա ժիլե՛տը չեմ սիրում։ Նա, գիտե՞ք, նոր ժիլետ է հագել, որ իրեն շատ է դուր գալիս, դրա համար էլ փորը ցցած է ման գալիս և ամենքին հրում. ապա մի մտիկ արեք տեսեք ե՛ս ինչ ժիլետ ունեմ։ Լավն է, ճիշտ է, բայց մարդկանց ինչո՞ւ հրել։ Առանց այդ էլ նեղվածք է։

Պավելը քմծիծաղով հարցրեց.

— Դեռ երկա՞ր պիտի փնթփնթաս։ Ինձ մի քոթակ տվիր՝ հերի՞ք էր։

Հատակին նստած՝ խոխոլը ոտները մեկնել էր ինքնաեռի երկու կողմը և նայում էր նրան։ Մայրը կանգնել էր դռան մոտ, աչքերը սիրալիր և տրտում հառած Անդրեյի կլոր ծոծրակին և նրա երկար, կռացած վզին։ Անդրեյը մարմինը ետ թեքեց, ձեռներով հենվեց հատակին, նայեց մորը և որդուն, մի քիչ կարմրած աչքերով, և աչքերը ճպճպացնելով ցածրաձայն ասաց.

— Լա՛վ մարդիկ եք դուք, այո՛։

Պավելը կռացավ, բռնեց նրա ձեռքը։

— Մի՛ ձգիր,— խուլ ձայնով ասաց խոխոլը։ Ինձ կգլորես,..

— Ի՞նչ եք քաշվում,— տրտում ասաց մայրը։— Համբուրվեցեք գնա՛, պինդ-պինդ գրկվեցե՛ք...

— Ուզո՞ւմ ես,— հարցրեց Պավելը։

— Կարելի՞ է,— պատասխանեց խոխոլը տեղից բարձրանալով։

Ամուր գրկվելով, նրանք մի վայրկյան քարացան, երկու մարմին՝ դարձան մի հոգի, որը ջերմ այրվում էր բարեկամության զգացումով։

Մոր դեմքով հոսում էին արցունքները, արդեն թեթև արցունքներ։ Աչքերը սրբելով մայրը հուզված ասաց.

— Կինը սիրում է լաց լինել, վշտից լալիս է, ուրախությունից լալիս է..

Խոխոլը դեն հրեց Պավելին քնքուշ շարժումով և նույնպես աչքերը մատներով սրբելով ասաց.

— Հերի՞ք է։ Հորթերը շատ ցատկոտեցին, ժամանակն է, որ տապակվե՛ն։ Ի՞նչ սատանայական ածուխ է։ Փչեցի, փչեցի՝ աչքերս փոշի լցվեցին...

Պավելը գլուխը կախելով նստեց պատուհանի մոտ և ցածր ասաց.

— Այդպիսի արցունքների համար չպիտի ամաչել...

Մայրը մոտեցավ նրան, նստեց կողքին։ Նրա սիրտը ջերմ ու քնքուշ համակվել էր մի ոգևորիչ զգացմունքով։ Նա տխուր էր, բայց հաճելի և հանգիստ տրամադրության մեջ։

— Ես ամանեղենը կհավաքեմ, դուք նստեցե՛ք, մայր,— ասաց խոխոլը սենյակ գնալով։— Հանգստացե՛ք։ Ձեր սիրտը ցավացրել են...

Եվ սենյակում հնչեց նրա քաղցր ձայնը.

— Հիանալի՜ զգացինք հիմա կյանքը, իսկական, մարդկային կյանքը...

Խոխոլը դեն հրեց Պավելին քնքուշ շարժումով և նույնպես

— Այո՛,— ասաց Պավելը մորը նայելով։

— Ամեն ինչ ուրիշ տեսակ է դարձել,— արձագանքեց մայրը։— Ցավն էլ է ուրիշ, ուրախությունն էլ է ուրիշ...

— Այդպես էլ պետք է լինի՜,— ասաց խոխոլը։— Որովհետև նոր սիրտ է աճում, իմ սիրելի մայր, կյանքի մեջ նոր սիրտ է աճում։ Մարդը գալիս է, կյանքը լուսավորում բանականության կրակով և գոռում է, կանչում. «Հե՜յ, դո՛ւք, բոլոր երկրների մարդի՛կ, միացե՛ք դարձեք մի ընտանիք»։ Եվ նրա կանչին բոլոր սրտերն իրենց առողջ կտորներով միանում դառնում են մի ահագին սիրտ, ուժեղ, հնչեղ, ինչպես արծաթե զանգ...

Մայրը շրթունքներն ամուր սեղմել էր, որ չդողան, և աչքերը պինդ փակել, որ լաց չլինեն։

Պավելը ձեռքը բարձրացրեց, ուզեց մի բան ասել, բայց մայրը վերցրեց նրա մյուս ձեռքը և ցած քաշելով շշնջաց.

— Մի՛ խանգարիր նրան...

— Գիտե՞ք,— ասաց խոխոլը՝ դռան շեմքում կանգնած,— Դեռ հետագայում մարդիկ շա՜տ ցավ կտեսնեն, դեռ շատ արյուն կքամեն նրանցից, բայց այդ բոլորը, իմ ամբողջ վիշտն ու արյունը, փո՜քր գինն է այն բանի, ինչ որ արդեն կա իմ կրծքում, իմ ուղեղում... Ես արդեն հարուստ եմ, ինչպես աստղը ճառագայթներով, ես ամեն բանի կդիմանամ, ամեն բանի կհամբերեմ, որովհետև իմ մեջ կա մի ուրախություն, որը ոչ ոք, ոչ մի բան, երբե՛ք չի կարող սպանել։ Այդ ուրախության մեջ ո՜ւժ կա։

Թեյ խմեցին, սեղանի մոտ նստեցին մինչև կեսգիշեր, մտերմական զրույց անելով կյանքի, մարդկանց, ապագայի մասին։

Եվ մայրը, երբ մի միտք իր համար պարզ էր լինում, հառաչելով իր անցյալից վերցնում էր որևէ բան, միշտ ծանր ու

կոպիտ, և իր սրտից վերցրած այդ քարով հիմնավորում, հաստատում էր իր միտքը։

Զրույցի տաք հոսանքում նրա երկյուղը հալվում էր, այժմ նա իրեն զգում էր այնպես, ինչպես այն օրը, երբ հայրը դաժանորեն ասաց իրեն.

— Ի՞նչ ես ուզում։ Գտնվել է մի հիմար, քեզ կին է առնում, գնա՛։ Բոլոր աղջկերքն են մարդու գնում, բոլոր կանայք են երեխա ծնում, բոլոր ծնողների համար երեխաները ցավ են։ Դո՞ւ ինչ է, մարդ չե՞ս։

Այդ խոսքերից հետո նա իր առջև տեսնում էր մի անխուսափելի շավիղ, որ անպատասխան ձգվում էր մի դատարկ, խավար վայրի շուրջը։ Եվ այդ շավղով գնալու անխուսափելիությունը նրա սիրտը լցնում էր կույր հանգստությամբ։ Այնպես էր և այժմ։ Բայց զգալով նոր վշտի գալուստը՝ նա իր ներսում ասում էր ինչ-որ մեկին.

«Առե՛ք, վերցրե՛ք»։

Դա թեթևացնում էր նրա սրտի ցավը, որը ցնցվելով երգում էր նրա կրծքում ինչպես ձգված լար։

Եվ սպասումի տխրությամբ վրդովված նրա հոգու խորքում ոչ ուժեղ, բայց անշեջ վառվում էր այն հույսը, որ իրենից ամեն ինչ չեն վերցնի, չե՞ն կորզի։ Մի բան կմնա...

XXIV

Վաղ առավոտյան, երբ Պավելն ու Անդրեյը դեռ նոր էին գնացել, Կորսունովան տագնապալի ծեծեց պատուհանը և շտապ աղաղակեց.

— Իսային սպանե՞լ են։ Գնանք տեսնենք...

Մայրը ցնցվեց. նրա ուղեղում կայծի պես փայլատակեց սպանողի անունը։

— Ո՞վ,— հակիրճ հարցրեց նա շալն ուսերին գցելով։

— Դե հո սպանողն այնտեղ՝ Իսայի վրա նստած չի, խփել է ու գնացե՞լ,— պատասխանեց Մարյան։

Փողոցում նա ասաց.

— Հիմա նորից կսկսեն տակնուվրա անել, մեղավորին փնտրել։ Լավ է, որ քոնոնք գիշերը տանն են եղել, ես դրան վկա եմ։ Կեսգիշերից հետո ձեր տան մոտով անցնում էի, ձեր պատուհանով մտիկ տվի, դուք բոլորդ սեղանի շուրջը նստած էիք...

— Ի՞նչ ես ասում, Մարյա։ Մի՞թե նրանց վրա կարելի է կասկածել,— վախեցած բացականչեց մայրը։

— Ապա ո՞վ է սպանել նրան։ Հավանական է որ ձերո՛նք,— համոզված ասաց Կորսունովան։— Ամենքին հայտնի է, որ Իսայը հետևում էր նրանց...

Մայրը կանգ առավ շնչասպառ, ձեռը դրեց կրծքին։

— Քեզ ի՞նչ եղավ։ Դու մի՛ վախենար։ Ով արել է, թող նա էլ վախենա՛։ Շուտ-շո՛ւտ գնանք, թե չէ կտանեն նրան...

Մորը ցնցում էր Վեսովշչիկովի մասին ունեցած ծանր միտքը։

«Ահա՛, ուզածը եղավ»,— ծանր մտածում էր մայրը։

Գործարանի պատերից ոչ հեռու, մոտ ժամանակներս այրված տան տեղում ոտներով ածուխը տրորելով և փոշի բարձրացնելով կանգնած էր ժողովրդի մի բազմություն և իշամեղուների պարսի պես ղոբռում էր։ Շատ էին կանայք, է՛լ ավելի շատ էին երեխաները, կային խանութպաններ, պանդոկի սպասավորներ, ոստիկաններ և ժանդարմ Պետլինը, բարձրահասակ մի ծերունի, թավ արծաթագույն մորուքով, շքանշանները կրծքին։

Իսայը կիսապառկած էր գետնին, մեջքը հենած խանձված գերաններին և բաց գլուխն աջ ուսի վրա կախած։ Աջ ձեռքը կոխել էր անդրավարտիքի գրպանը, իսկ ձախ ձեռքի մատներով կառչել էր փխրուն հողից։

Մայրը նայեց նրա դեմքին. Իսայի մի աչքն աղոտ նայում էր հոգնած չոռած ոտների արանքում ընկած գլխարկին, բերանը զարմանքից ապշած՝ կիսաբաց էր, նրա կարմրաշեկ փոքր մորուքը ցցված էր կողքի։ Սրագլուխ և ոսկրոտ, պեպենոտ դեմքով նիհար մարմինն է՛լ ավելի էր փոքրացել, մեռնելուց կուչ եկել։ Մայրը երեսը խաչակնքեց հառաչելով։ Կենդանի ժամանակ Իսայը զզվանք էր ազդում նրան, իսկ այժմ զուսպ խղճահարություն էր զարթեցնում նրա մեջ։

— Արյուն չկա՞,— նկատեց մեկը կիսաձայն։— Երևի բռունցքով են զարկել...

Մի չար ձայն բարձր արտասանեց.

— Ամբաստանողի բերանը փակել են...

Ժանդարմը ցնցվեց և ձեռներով դեն հրելով կանանց՝ սպառնագին հարցրեց.

— Այդ ո՞վ է դատողություններ անում, հը՞։

Մարդիկ ցրվեցին նրա հրումներից։ Մի քանիսն արագ փախան։ Մեկը շարախնդությամբ ծիծաղեց։

Մայրը տուն գնաց։

«Ոչ ոք չի՛ խղճում»,— մտածում էր նա։

Իսկ նրա առջև ստվերի պես կանգնած էր Նիկոլայի թիկնեղ կերպարանքը. նրա նեղ-նեղ աչքերը նայում էին սառը, դաժան հայացքով, և աջ ձեռքը ճոճվում էր, կարծես ջարդվել էր...

Երբ որդին և Անդրեյը ճաշելու եկան, նա ամենից առաջ հարցրեց.

— Հը՛ ի՞նչ կա։ Ոչ ոքի չե՞ն ձերբակալել Իսայի համար։

— Բան չենք լսել,— պատասխանեց խոխոլը։

Մայրը տեսնում էր, որ երկուսն էլ ընկճված են։

— Նիկոլայի մասին բան չե՞ն ասում,— կամաց հարցրեց մայրը։

Որդու խիստ աչքերը կանգ առան մոր դեմքին և նա որոշակի ասաց.

— Բան չեն ասում։ Եվ դժվար թե կասկածեն նրա վրա։ Նա այստեղ չի։ Երեկ գնացել է դետը և դեռ չի վերադարձել։ Ես նրա մասին հարցրել եմ...

— Դե փա՛ռք աստծու,— թեթևացած շունչ քաշելով ասաց մայրը։— Փա՛ռք աստծու։

Խոխոլը նայեց մորը և գլուխը կախեց։

— Նա ընկած էր,— մտախոհ պատմում էր մայրը,— և կարծես զարմանում էր, այդպես է նրա դեմքը։ Եվ ո՛չ ոք նրան չէր խղճում, ոչ ոք մի բարի խոսքով չպաշտպանեց նրան։ Այնպես փոքրիկ է, աննկատելի։ Կարծես մի բեկոր է, մի բանից կոտրվել է, ընկել է ու ընկած մնացել...

Ճաշին Պավելը հանկարծ գդալը նետեց և բացականչեց.

— Այդ ես չեմ հասկանում։

— Ի՞նչը,— հարցրեց խոխոլը։

— Կենդանուն սպանել միմիայն նրա համար, որ ուտել է հարկավոր, դա արդեն զզվելի բան է։ Սպանել գազանին, գիշատչին... դա հասկանալի է։ Ես ինքս կարող էի սպանել այն մարդուն, որը գազան է դարձել մարդկանց համար։ Բայց սպանել այդպիսի ողորմելուն, ի՞նչպես է ձեռքը բարձրացել...

Խոխոլն ուսերը թոթվեց։ Ապա ասաց.

— Նա գազանից ոչ պակաս վնասակար էր։ Մոծակը, որ

մեր արյունից մի քիչ ծծում է, մենք սպանո՛ւմ ենք,— ավելացրեց խոխոլը։

— Դե, իհարկե՛։ Ասելս դա չի։ Ես ասում եմ, զզվելի՞ է։

— Ի՞նչ արած,— արձագանքեց Անդրեյը ուսերը նորից թոթվելով։

— Դու կարո՞ղ էիր սպանել այդպիսի մեկին,— մտախոհ հարցրեց Պավելը երկար լռությունից հետո։

Խոխոլը նայեց նրան իր կլոր աչքերով, աչքի տակով նայեց մորը և տրտմորեն, բայց հաստատապես պատասխանեց.

— Ընկերների համար, գործի համար ես ամեն ինչ կանեմ։ Կսպանեմ էլ։ Թեկուզ որդուս...

— Վա՜յ, Անդրյո՛ւշա,— կամաց բացականչեց մայրը։

Անդրեյը ժպտաց մորը, ասաց.

— Այլ կերպ չի՛ կարելի։ Կյա՛նքն է այդպես...

— Այո-ո՜...— դանդաղ ծոր տվեց Պավելը։— Կյանքն այդպե՛ս է...

Հանկարծ վրդովված, ներքին մի մղումի ենթարկվելով՝ Անդրեյը վեր կացավ, ձեռները շարժեց և ասաց.

— Ի՞նչ կարող եք անել։ Ստիպված ես ատել մարդուն, որպեսզի շուտ հասնի այն ժամանակը, երբ կարելի կլինի միայն հիանալ մարդկանցով։ Պետք է ոչնչացնել նրան, ով խանգարում է կյանքի ընթացքը, ով մարդկանց վաճառում է փողով, որպեսզի դրանով գնի իր համար հանգիստ կամ պատիվ։ Եթե ազնիվների ճանապարհին Հուդա է կանգնած, սպասում է, որ մատնի նրանց, ես ինքս Հուդա կլինեմ, եթե չոչնչացնեմ նրան։ Ես իրավունք չունե՞մ։ Իսկ նրանք՝ մեր տերերը, նրանք իրավո՞ւնք ունեն պահելու զինվորներ ու դահիճներ, հասարակաց տներ ու բանտեր, տաժանակրություն և այն բոլոր պղծությունները, որոնք պահպանում են իրենց հանգիստը, իրենց հարմարավոր կյանքը։ Երբեմն ես ստիպված եմ լինում ձեռքս առնել նրանց փայտը, ի՞նչ արած։ Ես կվերցնեմ այդ փայտը, չեմ հրաժարվի։ Նրանք մեզ սպանում են տասնյակներով և հարյուրներով, դա ինձ իրավունք է տալիս ձեռքս բարձրացնել և իջեցնել թշնամիներից մեկի գլխի վրա, այն թշնամու վրա, որն ամենից ավելի՞ է մոտեցել ինձ և մյուսներից ավելի վտանգավոր է իմ կյանքի, գործի համար։ Այսպես է կյանքը։ Ես էլ հենց դրա՛ դեմ եմ գնում, ես էլ հենց այդ է, որ չեմ ուզում։ Ես գիտեմ, նրանց արյունով ոչինչ չի ստեղծվում, անպտուղ է այդ արյունը... Լավ է աճում ճշմարտու-

թյունն այն ժամանակ, երբ մե՛ր արյունը հորդ անձրևի պես ողողում է հողը, իսկ նրանցը հոտած է, կորչում է անհետ, ես այդ գիտե՞մ։ Բայց ես վրաս մեղք կվերցնեմ, կսպանեմ, եթե տեսնեմ, որ հարկավո՛ր է։ Ես չէ՞ որ միայն ի՛նձ համար եմ ասում։ Իմ մեղքն ինձ հետ կմեռնի, ապագայի վրա բիծ չի դառնա, ոչ ոքի չի կեղտոտի, բացի ինձանից, ոչ ոքի՛։

Նա շրջում էր սենյակում ձեռքը դեմքի առջև թափահարելով և կարծես թե օդը կտրում էր, պոկում էր իրենից։ Մայրը նրա վրա նայում էր թախծով և անհանգստությամբ, զգալով, որ նրա մեջ մի բան փշրվել է և ցավ է զգում։ Սպանության խավար, վտանգավոր մտքերը հեռացել էին մորից. «Եթե Վեսովշչիկովը չի սպանել, ապա Պավելի ընկերներից ոչ ոք չէր կարող անել այդ»,— մտածում էր նա։ Պավելը գլխիկոր ականջ էր դնում խոխոլին, իսկ խոխոլը համառորեն և ուժգին ասում էր.

— Առաջ գնալիս հարկ է լինում, որ ինքդ քո՛ դեմ էլ գնաս։ Պետք է կարողանալ ամե՛ն բան տալ, ամբողջ սիրտդ անգամ։ Կյանքը տալը, գործի համար մեռնելը, դա հասարակ բան է։ Տուր ավելի՛, և ա՛յն, ինչ որ կյանքիցդ ավելի թանկ է, տո՛ւր, այն ժամանակ խիստ կաճի և՛ քո ամենաթանկագինը՝ քո ճշմարտությո՛ւնը...

Նա կանգ առավ սենյակի մեջտեղը գունատված, աչքերը կիսափակ ու ձեռքը բարձրացնելով հանդիսավոր խոստում տալով ասաց.

— Ես գիտեմ, կգա ժամանակը, երբ մարդիկ կսկսեն իրարով հիանալ, երբ յուրաքանչյուրը մյուսի առջև իբրև աստղ կլինի։ Երկրի երեսով կշրջեն ազատ, իրենց ազատությամբ մեծ մարդիկ, ամենքը կշրջեն բաց սրտերով, ամեն մեկի սիրտը զերծ կլինի նախանձից, և անոխակալ կլինեն ամենքը։ Այն ժամանակ ոչ թե կյանք կլինի, այլ՝ ծառայություն մարդուն. նրա պատկերը կհամբառնա բա՜րձր, շատ բարձր. ազատների համար բոլո՛ր բարձունքներն են մատչելի։ Այն ժամանակ կապրեն ճշմարտության և ազատության մեջ գեղեցկության համար, և լավագույններ կհամարվեն նրանք, որոնք սրտով ավելի լա՛յն կգրկեն աշխարհը, որոնք ավելի խո՛ր կսիրեն աշխարհը, լավագույններ կլինեն ամենաազատները, նրանց մեջ ամենից շատ գեղեցկություն կլինի։ Մեծ կլինեն ա՛յդ կյանքի մարդիկ...

Նա լռեց, շտկվեց, խլաձայն, ամբողջ կրծքով ասաց.

— Այդպե՛ս, ա՛յդ կյանքի համար ես ամեն բան կանեմ...

Նրա դեմքը ցնցվեց, աչքերից արցունքներ էին հոսում իրար հետևից, խոշոր ու ծանր։

Պավելը գլուխը բարձրացրեց և նայում էր նրան գունատ, աչքերը լայն բացած։ Մայրն աթոռից վեր կացավ՝ զգալով, թե ինչպես է ածում և դեպի իրեն շարժվում մթին տագնապը։

— Քեզ ի՞նչ պատահեց, Անդրե՛յ,— կամաց հարցրեց Պավելը։

Խոխոլը գլուխը թափ տվեց, շտկվեց լարի պես և մորը նայելով ասաց.

— Ես տեսել եմ... Գիտեմ...

Մայրը վեր կացավ, արագ մոտեցավ նրան, բռնեց նրա ձեռները, Անդրեյը փորձեց աջ ձեռքը դուրս քաշել, բայց մայրն ամուր բռնել էր և շշնջում էր ջերմ շշուկով.

— Սիրելիս՛, հանգի՛ստ։ Հարազա՛տս...

— Սպասեցե՛ք,— խուլ քրթմնջաց խոխոլը։— Ես կասեմ ձեզ թե դա ինչպես եղավ...

— Հարկավոր չի՛,— շշնջում էր մայրը՝ արցունքոտ աչքերով նրան նայելով։— Հարկավոր չի, Անդրյո՛ւշա...

Պավելը կամաց մոտեցավ թաց աչքերով նայեց ընկերոջը։ Նա գունատ էր և ժպտալով ցածրաձայն ասաց նրան դանդաղ,

— Մայրս վախենում է, թե այդ դո՛ւ...

— Ես չեմ վախենում։ Չե՛մ հավատում։ Տեսնեի էլ, էլի չէի հավատա։

— Սպասեցե՛ք,— ասում էր խոխոլը նրանց չնայելով, գլուխքն օրորելով և միշտ աշխատելով ազատել ձեռքը։— Այդ ես չեմ եղել, բայց ես կարող էի թույլ չտալ...

— Թո՛ղ, Անդրե՛յ,— ասաց Պավելը։

Մի ձեռքով սեղմելով Անդրեյի ձեռքը՝ Պավելը մյուս ձեռքը դրեց նրա ուսին, կարծես կամենալով կանգնեցնել նրա բարձր մարմնի դողը։ Խոխոլը գլուխը թեքեց դեպի նրանց և կամաց, կցկտուր ասաց.

— Ես այդ չէի ուզում, դու հո գիտես, Պա՛վել։ Այսպես պատահեց, երբ դու առաջ գնացիր, իսկ ես կանգ առա անկյունում Դրագունովի հետ, Իսայը դուրս եկավ անկյունից, կանգնեց մի կողմ։ Նայում է մեզ, քմծիծաղում... Դրագունովն ասաց. «Ծեսնո՞ւմ ես։ Նա ինձ է հետապնդում, ամբողջ գիշերը հետևել է։ Ես նրան կջարդեմ»։ Եվ գնաց, ինձ թվաց թե՝ տուն... Իսկ Իսայը մոտեցավ ինձ...

Խոխոլը խ շնչեց։

— Ոչ ոք ինձ այնպես զզվելի կերպով չի վիրավորել, ինչպես նա, այդ շունը...

Մայրը լուռ քաշեց նրա ձեռքից դեպի սեղանը և վերջապես նրան հաջողվեց աթոռին նստեցնել Անդրեյին։ Իսկ ինքը նստեց նրա կողքին՝ ուս-ուսի։ Իսկ Պավելը մոայլ կանգնել էր Անդրեյի առաջ, մորուքը քրքրելով։

— Նա ինձ ասում էր, թե ամենքիս ճանաչում են, ժանդարմները մեր բոլորիս հաշիվը պահում են և Մայիսից առաջ բոլորիս բռնելու են։ Ես չէի պատասխանում, ծիծաղում էի, բայց սիրտս փոթորկվում էր։ Նա սկսեց ասել, թե ես խելոք տղա եմ և պետք չէ որ այդպիսի ճանապարհով գնամ, այլ ավելի լավ է...

Նա կանգ առավ, ձախ ձեռքով երեսը սրբեց, նրա աչքերը շոր-շոր փայլատակեցին։

— Ես հասկանում եմ,— ասաց Պավելը։

— Ավելի լավ է, ասում է, օրենքի ծառայության մտնել, հը՞։

Խոխոլը ձեռքը շարժեց և սեղմված բռունցքը թափ տվեց։

— Օրենքի՞, անիծյա՛լ հոգի,— ատամների արանքով ասաց նա.— ավելի լավ կլիներ՝ երեսիս ապտակեր... ավելի տանելի կլիներ ինձ համար, և գուցե նրա համար էլ։ Բայց այդպես, երբ նա թքեց սրտիս մեջ իր նեխած թուքը, ես չհամբերեցի։

Անդրեյը ջղաձգաբար ձեռքը դուրս էր քաշում Պավելի ձեռքից և ավելի խուլ ձայնով գարշանքով ասում էր.

— Ես խփեցի նրա թշին և գնացի։ Լսում եմ, Դրագունովը հետևիցս կամաց ասում է. «Բռնվեցի՞ր»։ Նա երևի կանգնած է եղել անկյունում...

Քիչ լուռ մնալով խոխոլն ասաց.

— Ես ետ չնայեցի, թեև զգում էի... Հարված լսեցի... Ինքս ինձ համար հանգիստ գնում եմ, կարծես գորտ եմ կոխատել։ Սկսեցի աշխատել, տեսա՝ գոռում են. «Իսային սպանե՛լ են»։ Հավատս չէր գալիս։ Բայց ձեռքս թուլացավ, էլ չեմ կարողանում բանեցնել, չի ցավում, բայց կարծես կարճացել է...

Նա խեթ-խեթ նայեց ձեռքին և ասաց.

— Երևի ամբողջ կյանքումս չեմ կարող լվանալ այդ գարշելի բիծը...

— Սի՛րտդ մաքուր լինի, սիրելի՛ս,— կամաց ասաց մայրը։

— Ես ինձ չեմ մեղադրում, ո՛չ,— հաստատապես ասաց խո-

խոլը։— Բայց ախր զզվելի՞ է դա ինձ համար։ Ավելորդ է ինձ համար։

— Ես քեզ լա՛վ չեմ հասկանում,— ասաց Պավելը ուսերը թոթվելով։— Սպանողը դո՞ւ չես, բայց եթե նույնիսկ...

— Եղբա՛յր, իմանաս, որ սպանում են, և չխանգարես...

Պավելը հաստատուն ձայնով ասաց.

— Ես այդ բոլորովին չեմ հասկանում...

Եվ քիչ խորհելով ավելացրեց.

— Այսինքն՝ կարող եմ հասկանալ, բայց զգալ չեմ կարող։

Շչակը հնչեց։ Խոխոլը գլուխը ծռեց, ականջ դրեց զորեղ մոնչյունին և ուշքի գալով ասաց.

— Աշխատելու չեմ գնա...

— Ես էլ,— արձագանքեց Պավելը։

— Բաղնի՞ս կգնամ,— քմծիծաղով արտասանեց խոխոլը և շտապ, լուռ, շորերը պատրաստելով մոայլ դուրս գնաց։

Մայրը, նրան կարեկցական հայացքով ճանապարհ դնելով, որդուն ասաց.

— Ինչ ուզում ես ասա՛, Պա՛շա։ Գիտեմ, մեղք է մարդ սպանելը, բայց ոչ ոքի մեղավոր չեմ համարում։ Խղճում եմ Իսային, նա այնպես փոքրի՞կ էր. ես մտիկ արի նրան, հիշեցի, թե ինչպես էր սպառնում քեզ կախել տալ, և ոչ քեն զգացի դեպի նա, ոչ սիրտս ուրախացավ, որ նա մեռել է։ Ուղղակի խղճացի։ Իսկ հիմա մեղքս է՛լ չի գալիս։

Նա լռեց, մտածեց մի քիչ և զարմացած ժպտալով ասաց.

— Տե՛ր Հիսուս, լսո՞ւմ ես, Պա՛շա, թե ես ինչ եմ խոսում...

Պավելը երևի չէր լսել։ Սենյակում դանդաղ շրջելով, գլխիկոր, նա մտախոհ ու մոայլ ասաց.

— Ահա նա, կյա՛նքը։ Տեսնո՞ւմ ես, թե ինչպես են մարդիկ իրար դեմ կանգնեցված։ Չես ուզում, բայց պետք է խփես։ Եվ ո՞ւմ։ Քեզ պես իրավազուրկ մի մարդու։ Նա քեզանից ավելի է դժբախտ, որովհետև հիմար է։ Ոստիկանությունը, ժանդարմները, լրտեսները, դրանք բոլորը մեր թշնամիներն են, բայց նրանք բոլորն էլ նույնպիսի մարդիկ են, ինչպես մենք, նույնպես ծծում են նրանց արյունը և նույնպես մարդ չեն համարում նրանց։ Ամենքն էլ այդպես են։ Բայց, ա՛յ, մարդկանց կանգնեցրել են իրար դեմ, կուրացրել հիմարությամբ ու երկյուղով, կապել բոլորի ձեռնուոտը, հուպ տվել և ծծում են, ճզմում և ծեծում մեկին՝

մյուսի միջոցով։ Մարդկանց դարձրել են հրացաններ, փայտեր, քարեր ու ասում են. «Սա պետությո՞ւն է...»

Նա ավելի՞ մոտեցավ մորը։

— Սա ոճիր է, մա՛յր։ Միլիոնավոր մարդկանց զազրելի սպանությունը հոգիների սպանություն է... Հասկանո՞ւմ ես, հոգին են սպանում։ Տեսնո՞ւմ ես մեր և նրանց մեջ եղած տարբերությունը. մարդն ապտակ է խփել և նա զզվում է, ամաչում, ցավ է զգում, գլխավորը՝ զզվո՛ւմ է, իսկ նրանք հազարներով են սպանում հանգիստ, առանց խղճահարության, առանց սրտի թպրտոցի, բավականությա՛մբ են սպանում։ Եվ միայն նրա համար են մահու չափ ճզմում ամենքին և ամեն ինչ, որ պահպանեն արծաթը, ոսկին, չնչին թղթադրամները, այն բոլոր ողորմելի աղբը, որը նրանց տալիս է իշխանություն մարդկանց վրա։ Մտածիր, տե՛ս, ո՛չ թե իրենց են պահպանում՝ ժողովրդի սպանությամբ պաշտպանվելով, մարդկանց հոգիներն աղավաղելով, ո՛չ թե իրենց համար են անում այդ, այլ իրենց գույքի համար։ Ո՛չ թե ներսից են իրենց պահպանում, այլ դրսից...

Նա վերցրեց մոր ձեռները, կոացավ և թափ տալով ասաց.

— Եթե դու զգայիր այս բոլոր աղտեղությունը և ամոթալի փտածությունը, կհասկանայիր մեր ճշմարտությունը, կտեսնեիր, թե ի՞նչ վեհ ու պայծառ է այն...

Մայը հուզված վեր կացավ իր և որդու սրտից մի կրակ ձուլելու ցանկությամբ լի։

— Սպասի՛ր, Պա՛շա, սպասի՛ր,— շնչակտուր լինելով մրմնջաց նա։— Ես զգում եմ, սպասի՛ր...

XXV

Նախասենյակում որոշակի լսվեց մեկի շարժվելու ձայնը։ Մայրն ու որդին ցնցվելով՝ իրար նայեցին։

Դուռը կամաց-կամաց բացվեց և ծանր ներս մտավ Ռիբինը։

— Ահա՛,— գլուխը բարձրացնելով և ժպտալով ասաց նա։— Կասեք՝ կամ աղն է պակաս, կամ մաղը։

Նա հագել էր ձյութով կեղտոտված կիսամուշտակ, տրեխներ, գոտկի միջից ցցված էին սև ձեռնոցներ և գլխին բրդոտ գլխարկ կար։

— Առո՞ղջ եք։ Քեզ բա՞ց թողեցին, Պավե՛լ։ Այդպես։ Ինչպե՞ս ես, Նի՛լովնա։— Նա բերանը լայն բանալով ժպտաց ցույց

տալով սպիտակ ատամները. նրա ձայնը հնչում էր ավելի մեղմ, քան առաջ, դեմքն ավելի խիտ էր պատել մորուքով։

Մայրն ուրախացավ, մոտեցավ նրան, սեղմեց նրա մեծ, սև ձեռքը և կպրածյութի առողջարար, թունդ հոտը ներշնչելով ասաց.

— Ա՛խ, այդ դու ես... է՛ շատ ուրախ եմ...

Պավելը ժպտում էր, Ռիբինին տնտղելով։

— Լա՛վ մուժիկ է։

Մուշտակը կամաց-կամաց հանելով՝ Ռիբինն ասում էր.

— Այո, էլի մուժիկ եմ դարձել, դուք քիչ-քիչ պարոն եք դառնում, իսկ ես ետ եմ գնում... ա՛յ թե ինչ։

Շերտավոր քաթանե շապիկը շտկելով՝ նա անցավ սենյակ, ուշադիր հայացք գցեց և հայտնեց.

— Երևում է, որ ձեր գույքը չի ավելացել, իսկ գրքերը շատացել են, այդպե՞ս։ Դե՛, պատմեցեք, գործերն ի՞նչպես են։

Նա նստեց ոտները լայն դնելով, ձեռքի ափերը հենեց ծունկներին և մուգ աչքերով Պավելին հարցականորեն շոշափելով, բարեմիտ ժպիտը դեմքին՝ պատասխանի էր սպասում։

— Գործերն աշխո՞ւյժ են ընթանում,— ասաց Պավելը։

— Վարում ենք ու ցանում, պարծենալ չենք սիրում, իսկ բերք կվերցնենք, բրագա կշինենք, կխմենք ու կքնենք, չէ՞,— շաղակրատեց Ռիբինը։

— Դո՞ւք ոնց եք, Միխա՛յլո Իվանիչ,— հարցրեց Պավելը՝ նրա դիմաց նստելով։

— Վնաս չունի։ Լավ եմ։ Բնակություն եմ հաստատել Եգիլդեևոյում, լսե՞լ եք Եգիլդեևո անունը։ Մի լավ գյուղ է։ Տարեկան երկու անգամ տոնավաճառ է լինում, երկու հազարից ավելի բնակիչ ունի, չարասի՞րտ ժողովուրդ է։ Հող չունեն, արքայական կալվածքից են վարձում, վատ հող է։ Բատրակ եմ մտել մի ցեցի մոտ, այնտեղ այնքան ցեցեր կան, որքան դիակի վրա ճանճեր են լինում։ Կպրածյութ ենք պատրաստում, ածուխ ենք շինում։ Աշխատանքի համար ստանում եմ չորս անգամ քիչ, բայց մեջքս կոտրում եմ երկու անգամ շատ, քան այստեղ, ա՛յ թե ինչ։ Նրա, այդ ցեցի մոտ, յոթ հոգի ենք։ Վնաս չունի, բոլորը ջահել տղերք են, բոլորը տեղացի են, բացի ինձանից, բոլորը գրագետ են։ Մի տղա կա Եֆիմ անունով, այնպե՞ս կատաղածն է, որ ասել չի լինի։

— Դուք նրանց հետ զրուցո՞ւմ եք, ի՞նչ է,— աշխույժ հարցրեց Պավելը։

— Չեմ լռում։ Ես հետս տարել եմ այստեղի բոլոր թռուցիկները, երեսունչորս հատ են։ Բայց ես ավելի Աստվածաշնչից եմ օգտվում, այնտեղից վերցնելու բաներ շատ կան, հաստ գիրք է պետական, սինոդն է տպագրել, կարելի՞ է հավատալ։

Նա Պավելին աչքով արեց և քմծիծաղով շարունակեց.

— Մի՛այն թե դա քիչ է։ Ես եկել եմ քեզանից գրքեր տանեմ։ Մենք այստեղ երկուսով ենք, այդ Եֆիմն ինձ հետ է, ձյութ ենք բերել, է՛հ, ճանապարհներս ծռել ենք, եկել քեզ մոտ։ Դու գրքերը տուր ինձ, քանի դեռ Եֆիմը չի եկել, կարիք չկա, որ նա շատ բան իմանա...

Մայրը նայում էր Ռիբինին և նրան թվաց, թե Ռիբինը պիջակի հետ իր վրայից մի բան ևս հանեց։ Նա դարձավ պակաս պատկառելի, և նրա աչքերը նայում էին ավելի խորամանկորեն, ոչ այնպես բացսիրտ, ինչպես առաջ։

— Մայրի՛կ,— ասաց Պավելը,— գնացե՛ք գրքե՛ր բերեք։ Այնտեղ գիտեն, թե ինչ պիտի տան։ Ասացե՛ք՝ գյուղի համար է։

— Լա՛վ,— ասաց մայրը։— Հիմա ինքնաեռը կեռա՝ կգնամ։

— Դու է՞լ ես այդ գործի հետևից ընկել, Նի՛լովնա,— քմծիծաղով հարցրեց Ռիբինը։— Այդպես։ Գիրք ուզող շատ կա այնտեղ մեզ մոտ։ Ուսուցիչը սեր է զարթեցնում դեպի գրքերը, ասում են՝ լավ տղա է, թեև հոգևոր կոչում ունի։ Մի վարժուհի էլ կա յոթ վերստի վրա։ է՛հ, նրանք արգելված գրքեր չեն օգտագործում, տերունական մարդիկ են, վախենում են։ Իսկ ինձ հարկավոր է արգելված, կծու գիրք, ես նրանց թևի տակ կդնեմ... Եթե գավառամասի վերակացուն կամ տերտերը տեսնեն, որ արգելված գիրք է, կկարծեն, թե վարժապետներն են տարածում։ Իսկ ես ժամանակավորապես մի կողմ կմնամ։

Եվ իր իմաստությունից գոհ՝ նա ուրախ-ուրախ ատամները բաց արեց։

«Մի սրա՞ն տեսեք,— մտածեց մայրը։— Վրան նայես՝ հիմար արջ է, արարմունքից դատես՝ խորամանկ աղվես է...»

— Ի՞նչ եք կարծում,— հարցրեց Պավելը,— եթե ուսուցիչների վրա կասկածեն, որ նրանք են արգելված գրքերը տարածում, նրանց բանտ կնստեցնե՞ն դրա համար։

— Կնստեցնեն, ի՞նչ կա որ,— հարցրեց Ռիբինը։

— Գրքերը դո՛ւք եք տվել, և ոչ թե նրանք։ Ուրեմն դո՛ւք էլ պետք է բանտ գնաք...

— Տարօրինակ մարդ ես,— քմծիծաղեց Ռիբինը՝ ձեռքը ծնկին խփելով։— Ինձ վրա ո՞վ կկասկածի։ Հասարակ գյուղացին այդպիսի բանով չի զբաղվում, մի՞թե այդպիսի բան լինում է։ Գիրքը պարոնների գործն է, նրանք էլ պետք է դրա համար պատասխան տան...

Մայրն զգում էր, որ Պավելը Ռիբինին չի հասկանում, և տեսնում էր, որ նա աչքերը կկոցել է, նշանակում է՝ բարկացած է։ Մայրն զգուշորեն և մեղմությամբ ասաց.

— Միխայիլ Իվանովիչն այնպես է ուզում, որ ինքը գործը կատարի, իսկ դրա համար ուրիշները պատասխանատվություն կրեն...

— Ահա՛,— ասաց Ռիբինը մորուքը հարդարելով։— Առժամանակ։

— Մայրի՛կ,— չոր-չոր ձայն տվեց Պավելը.— եթե մեզնից որևէ մեկը, Անդրեյն՝ օրինակ, մի բան անի իմ ձեռքի տակ, իսկ ինձ բանտ նստեցնեն, դու ի՞նչ կասես։

Մայրը ցնցվեց, վարանած նայեց որդուն և բացասաբար գլուխը օրորելով ասաց.

— Մի՞թե կարելի է ընկերոջ հետ այդպես վարվել։

— Հա՛-հա՛,— ծոր տվեց Ռիբինը։— Ես քեզ հասկացա, Պա՛վել։— Ծաղրաբար աչքով անելով նա դարձավ մորը.

— Այստեղ, մայր, մի նրբություն կա։

Եվ նորից խրատաբար դիմեց Պավելին.

— Դու դեռ խամ ես, եղբա՛յր։ Գաղտնի գործում պատվի հարց չկա։ Դատիր, տես. առաջինը, բանտ կնստեցնեն ամենից առաջ այն տղային, որի մոտ գիրքը գտնեն, և ոչ թե ուսուցիչներին, այս մեկ։ Երկրորդ, թեև ուսուցիչները տալիս են թույլատրված գիրք, բայց նրա էությունը նույնն է, ինչ որ արգելվածինը, միայն բառերն են ուրիշ, ճշմարտությունն է քիչ, այս երկու։ Նշանակում է՝ նրանք նույն բանն են ուզում, ինչ որ ես, միայն, թե ծուռումուռ ճանապարհով են գնում, իսկ ես մեծ ճանապարհով. իսկ իշխանության առաջ մենք միատեսակ մեղավոր ենք, ճի՞շտ է։ Իսկ երրորդը, եղբա՛յրս, ես նրանց հետ գործ չունեմ, ոտով գնացողը ձիավորին ընկեր չի։ Մուժիկի հետ ես գուցեև՛ չուզենամ այդպես վարվել։ Իսկ այդ ուսուցիչներից մեկը տերտերի տղա է, մյուսը կալվածատիրոջ աղջիկ է, նրանց

ինչի՞ն է հարկավոր ժողովրդին ապստամբեցնել, ես չեմ հասկանում։ Նրանց պարոնային մտքերն ինձ՝ մուժիկիս անհայտ են։ Ինչ որ ինքս եմ անում, ես գիտեմ, իսկ ինչ նրանք են անում, ինձ անհայտ է։ Հազար տարի շարունակ մարդիկ պարոններ են եղել, մուժիկի կաշին են քերթել, և հանկարծ զարթնել են և սկսել մուժիկի աչքը բանալ։ Ես, եղբա՛յրս, հեքիաթներ լսելու ցանկություն չունեմ, իսկ դա հեքիաթանման բան է։ Ես ինձ ամեն մի պարոնից հեռու եմ համարում։ Ձմեռն անցնում ես դաշտով, առջևդ ինչ-որ բան է աչքովդ ընկնում, բայց ի՞նչ բան է, գա՞յլ է, աղվե՞ս, թե պարզապես շո՞ւն է, չի երևում։ Հեռու է։

Մայրը նայեց որդուն։ Նրա դեմքը թախծոտ էր։

Իսկ Ռիբինի աչքերը փայլում էին մութ փայլով, նա Պավելին նայում էր ինքնագոհ հայացքով և բորբոքված մատներով մորուքը սանրելով՝ ասում.

— Ես սիրաշահելու ժամանակ չունեմ։ Կյանքը խիստ աչքով է նայում մարդու վրա. մենք շնանոցում ենք, ոչ թե ոչխարների փարախում, ամեն մի ոհմակ իր իմացած ձևով է հաշում...

— Կան պարոններ,— խոսեց մայրը՝ հիշելով ծանոթ դեմքեր,— որոնք իրենց սպանում են ժողովրդի համար, իրենց ամբողջ կյանքում տանջվում են բանտերում...

— Նրանց հաշիվն էլ առանձին է պահվում, նրանց պատիվն էլ ուրիշ է,— ասաց Ռիբինը։— Մուժիկը որ հարստանում է, ձգտում է պարոն դառնալ, իսկ պարոնը որ աղքատանում է, մուժիկի մոտ է գալիս։ Երբ քսակը դատարկ է, հոգին ակամայից սրբանում է։ Հիշում ես, Պավել, դու ինձ բացատրում էիր, թե ով ինչպես ապրում է, այնպես էլ մտածում է, և եթե բանվորն ասում է՝ ո՛չ, տերն էլ իր սովորության համեմատ անպայման գոռում է՝ այո՛։ Այսպիսով, մուժիկի ու պարոնի բնությունը տարբեր է։ Եթե գյուղացին կուշտ է, պարոնի քունը գիշերը չի տանում։ Իհարկե, ամեն տեղ էլ իր շանորդին կա, ես բոլոր գյուղացիներին պաշտպանելու համաձայն չեմ...

Նա ոտքի կանգնեց մռայլ, հուժկու։ Նրա դեմքն աղոտացել էր, մորուքը ցնցվում էր, կարծես ատամներն անլսելիորեն կրճտացնում էր, և ձայնը ցածրացնելով շարունակեց.

— Ես գործարաններում հինգ տարի թափառեցի, գյուղից խորթացա, ա՛յ թե ինչ։ Եկա գյուղ, տեսա էլ չե՛մ կարող այնպես ապրել։ Հասկանո՞ւմ ես։ Չե՛մ կարող։ Դուք այստեղ եք ապրում, դուք այնպիսի զրկանքներ չեք տեսնում։ Իսկ այնտեղ՝ սոր-

վը սողում է մարդու հետևից ստվերի պես և հաց ճարելու հույս չկա, չկա՛։ Քաղցը լափել է հոգիները, ջնջել մարդկային կերպարանքները, մարդիկ չեն ապրում, այլ փտում են անծայր կարիքի մեջ... Եվ շորս կողմն ագռավների պես իշխանավորն է հրսկում, տեսնելու, թե հացի ավելորդ կտոր չկա՞ քեզ մոտ։ Տեսնելուն պես խլում է, դեռ մռութդ էլ ջարդում...

Ռիբինը շուրջը նայեց, կռացավ դեպի Պավելը՝ ձեռքը սեղանին հենելով։

— Մինչև անգամ սիրտս խառնեց, երբ նորից մտիկ արի այդ կյանքին։ Տեսա, չե՛մ կարող։ Սակայն ինձ հաղթահարեցի՝ ո՛չ, ասացի, խելո՛ք կաց, հոգի՛։ Ես կմնա՛մ։ Ես ձեզ համար հաց չեմ ճարի, բայց խառնակություն կգցեմ, անպատճա՛ռ կգցեմ, լցված եմ վիրավորանքով՝ թե՛ մարդկանց հասցրած, թե՛ մարդկանցից ինձ հասցրած։ Այդ վիրավորանքը դանակի պես ցցված է սիրտս և օրորվում է։

Նրա ճակատը քրտնեց, նա կամաց մոռենալով Պավելին, ձեռքը դրեց նրա ուսին։ Ձեռքը դողում էր։

— Ինձ օգնությո՛ւն տուր։ Գրքե՛ր տուր, բայց այնպիսի գրքեր, որ կարդալուց մարդ այլևս դադար չգտնի. պետք է մարդկանց գանգի տակ ոզնի դնել, ծակող ոզնի՛։ Ասա քաղաքի ընկերներիդ, որոնք ձեզ համար գրում են, թո՛ղ գյուղի համար է՛լ գրեն։ Թո՛ղ այնպես գրեն, որ եռացած ջրի պես փոթորկի, որ ժողովուրդը դեպի մա՛հ գնա։

Նա ձեռքը բարձրացրեց և ամեն մի բառ առանձին արտասանելով՝ խուլ ձայնով ասաց.

— Մահվամբ զմահ կոխյաց, ա՛յ, թե ինչ։ Այսինքն՝ մեռի՛ր, որպեսզի մարդիկ հարություն առնեն։ Եվ թո՛ղ հազարներ մեռնեն, որպեսզի հարություն առնեն անթիվ ժողովուրդներ ամբողջ աշխարհում։ Ա՛յ, թե ինչ։ Մեռնելը հեշտ է։ Միայն թե հարությո՛ւն առնեին։ Տեղներից բարձրանայի՛ն մարդիկ։

Մայրն ինքնաեռը ներս բերեց՝ Ռիբինին խեթ-խեթ նայելով։ Նրա ծանր և ուժգին խոսքերը ճնշում էին մորը։ Եվ Ռիբինի մեջ մի բան կար, որ մորը հիշեցնում էր իր ամուսնուն, նա էլ էր սրա նման ատամները ժնգռում, ձեռները շարժում թևքերը ծալելով, նրա մեջ էլ այդպիսի անհամբեր շարություն կար, անհամբեր, բայց համր։ Սա՝ խոսում է։ Եվ պակա՛ս սարսափելի է, քան նա։

— Այդ հարկավոր է,— ասաց Պավելը գլուխը թափահարելով։— Մեզ նյութ տվեք, մենք ձեզ համար թերթ կտպենք...

Մայրը ժպիտով նայեց որդուն, գլուխն օրորեց և լուռ հագնվելով՝ տնից դուրս գնաց։

— Արա՛։ Ամեն ինչ կբերենք։ Գրեցեք որքան կարելի է պարզ, այնպես, որ հորթերն էլ հասկանան,— գոչում էր Ռիբինը։

Խոհանոցի դուռը բացվեց։ Մեկը ներս մտավ։

— Սա Եֆիմն է,— ասաց Ռիբինը՝ նայելով դեպի խոհանոց։— Այստե՛ղ արի, Եֆի՛մ, իսկ այս մարդու անունը Պավել է, ես նրա մասին քեզ ասել եմ։

Պավելի առջև գլխարկը ձեռքին բռնած և մոխրագույն աչքերի տակով նրան նայելով կանգնած էր մի խարտյաշ, լայներես տղա, կարճ կիսամուշտակով, վայելչակազմ և, երևի, ուժեղ։

— Բարև՛ ձեզ,— խռպոտ ձայնով ասաց նա և Պավելի ձեռքը սեղմելով երկու ձեռքով հարդարեց ուղիղ մազերը։ Սենյակը տնտղեց և իսկույն կամաց-կամաց, կարծես գաղտագողի, գնաց դեպի գրքերի դարակը։

— Տեսա՛վ,— ասաց Ռիբինը՝ Պավելին աչքով անելով։ Եֆիմը ետ դարձավ, նայեց նրան և սկսեց գրքերը նայել՝ ասելով.

— Ինչքա՛ն կարդալու բան ունեք։ Բայց երևի կարդալու ժամանակ չունեք։ Գյուղում շատ ավելի ժամանակ կա դրա համար...

— Իսկ ցանկություն ավելի քի՞չ,— հարցրեց Պավելը։

— Ինչո՞ւ։ Ցանկություն է՛լ կա,— պատասխանեց տղան ծնոտը սրբելով։— Ժողովուրդն սկսել է բան հասկանալ։ «Երկրաբանություն». սա ի՞նչ բան է։

Պավելը բացատրեց։

— Մեզ պետք չի՛,— ասաց տղան գիրքը դարակին դնելով։

Ռիբինն աղմկալի հառաչեց և նկատեց.

— Մուժիկի համար հետաքրքիրն այն չի, թե հողը ո՞րտեղից է դուրս եկել, այլ թե ի՞նչպես է նա սրա-նրա ձեռքն ընկել, ի՞նչպես են ժողովրդի ոտքի տակից պարոնները դուրս քաշել այդ հողը։ Կանգնած է նա, թե պտտվում է, այդ կարևոր չի, կուզես թեկուզ մի պարանից կախ տուր, միայն թե հաց տա. թեկուզ երկնքից մեխի՛ր, միայն թե մարդկանց կերակրի՛...

— «Ստրկության պատմությունը»,— նորից կարդաց Եֆիմը և հարցրեց Պավելին։

— Մե՞ր մասին է։

— Ճորտատիրական իրավունքի մասին է՛լ կա,— ասաց Պավելը՝ նրան ուրիշ գիրք տալով։ Եֆիմը գիրքը վերցրեց, շուռումուռ տվեց ձեռքում և մի կողմ դնելով՝ հանգիստ ասաց.

— Սա՝ անցել գնացե՛լ է։

— Դուք ինքներդ հողաբաժին ունե՞ք,— ուզեց տեղեկանալ Պավելը։

— Մե՞նք։ Ունե՛նք։ Երեք եղբայր ենք, իսկ հողաբաժինը չորս դեսյատին է։ Ավազ է, պղինձ մաքրելու համար լավ է, իսկ հացահատիկի համար՝ անընդունակ հող է...

Մի քիչ լուռ մնալով նա շարունակեց.

— Ես հողից ձեռք եմ քաշել, ինչի՞ է պետք։ Հաց չի տալիս, բայց ձեռնուոտս կապում է։ Չորրորդ տարին է բատրակություն եմ անում։ Իսկ աշնանը զինվոր եմ գնալու։ Քեռի Միխայլոն ասում է մի՛ գնա։ Հիմա, ասում է, զինվորներին ուղարկում են մարդկանց կոտորելու։ Իսկ ես ուզում եմ գնալ։ Չորքը Ստենկա Ռազինի ժամանակ էլ է կոտորել ժողովրդին, Պուգաչովի ժամանակ էլ։ Ժամանա՛կն է վերջ տալ դրան։ Դուք ի՞նչ եք կարծում,— հարցրեց նա հայացքը հառելով Պավելին։

— Ժամանա՛կն է,— ժպտալով պատասխանեց Պավելը։— Միայն թե՝ դժվա՛ր է։ Պետք է իմանալ, թե զինվորներին ի՛նչ պետք է ասես և ի՛նչպես պետք է ասես...

— Կսովորենք՝ կկարողանա՛նք,— ասաց Եֆիմը։

— Եթե իշխանությունն այդ բանն անելիս բռնի, կարող է գնդակահարել,— վերջացրեց Պավլովը հետաքրքրությամբ նայելով Եֆիմին։

— Նա չի՞ ների,— հանգիստ համաձայնեց տղան և սկսեց նորից նայել գրքերը։

— Թե՛յ խմիր, Եֆի՛մ, շուտով պիտի գնանք,— նկատեց Ռիբինը։

— Իսկույն,— պատասխանեց տղան և նորից հարցրեց.— ռևոլյուցիան խռովությո՞ւն է։

Եկավ Անդրեյը կարմրած, քրտնաթոր ու խոժոռ։ Լուռ սեղմեց Եֆիմի ձեռքը, նստեց Ռիբինի կողքին և նրան տնտղելով՝ քմծիծաղեց։

— Ինչո՞ւ ես տխուր,— հարցրեց Ռիբինը ափով նրա ծունկանը խփելով։

— Հենց այնպես,— պատասխանեց խոխոլը։

— Նույնպես բանվո՞ր է,— հարցրեց Եֆիմը գլխով Անդրեյին ցույց տալով։

— Նույնպես,— պատասխանեց Անդրեյը։— Ի՞նչ կա որ։

— Նա առաջին անգամն է գործարանի բանվորներ տեսնում,— բացատրեց Ռիբինը։— Ասում է՝ մի ուրիշ տեսակ մարդիկ են...

— Ինչո՞վ,— հարցրեց Պավելը։

Եֆիմն ուշադրությամբ տնտղեց Անդրեյին, ասաց.

— Ձեր ոսկորը սուր է։ Մուժիկի ոսկորն ավելի կլոր է։

— Մուժիկը ոտի վրա ավելի՛ հանգիստ է կանգնում,— ավելացրեց Ռիբինը։— Նա իր տակը հող է զգում, թեև հող էլ չունի, բայց զգում է, թե կա։ Իսկ գործարանի բանվորը թռչնի նման բան է. հայրենիք չունի, տուն-տեղ չունի, այսօր այստեղ է, վաղը մի ուրիշ տեղ։ Կինն անգամ նրան չի կարողանում մի տեղի հետ կապել, մի բան եղավ թե չէ՝ մնաս բարով, սիրելի՛ս, գնա կորի՛ր։ Ու գնում է փնտրելու, թե որտեղ է ավելի լավ։ Իսկ մուժիկն ուզում է իր շուրջը լավացնել՝ առանց տեղից շարժվելու։ Ա՛յ, մայրը եկա՛վ։

Եֆիմը մոտեցավ Պավելին հարցնելով.

— Գուցե ինձ որևէ գի՞րք կտաք։

— Խնդրեմ,— պատրաստակամությամբ պատասխանեց Պավելը։

Տղայի աչքերը ագահությամբ բոցավառվեցին, նա արագ ասաց.

— Ես կվերադարձնե՛մ։ Մերոնք այստեղ մի մոտիկ տեղ կպրածյութ են բերում, նրանք կբերեն։

Ռիբինն արդեն հագնված, ամուր գոտեպնդված, Եֆիմին ասաց.

— Գնա՛նք, ժամանակն է։

— Ա՛յ թե կկարդամ,— բացականչեց Եֆիմը՝ ցույց տալով գրքերը, և լայն ժպտաց։

Երբ նրանք գնացին, Պավելն աշխույժ բացականչեց Անդրեյին դիմելով.

— Տեսա՞ր այդ սատանաներին...

— Այո՜-ո՜,— դանդաղ ծոր տվեց խոխոլը։— Ամպերի պես են...

— Միխայլո՞ն,— բացականչեց մայրը։— Կարծես իսկի գործարանում չի ապրել, բոլորովին մուժիկ է դարձել։ Եվ ի՜նչ սարսափելի է։

— Ափսո՜ս, դու այստեղ չէիր,— ասաց Պավելն Անդրեյին, որը սեղանի մոտ նստած մռայլ նայում էր իր թեյի բաժակին։— Ա՜յ թե սրտի խաղ կտեսնեիր, դու միշտ սրտի մասին ես խոսում։ Այստեղ Ռիբինն ինձ այնպե՜ս քրտնացրեց, գլորեց ինձ, խեղդեց... Ես չկարողացա առարկել նրան։ Ինչքան անվստահություն կա նրա մեջ դեպի մարդիկ, և ի՜նչ էժան է գնահատում մարդկանց։ Մայրս ճիշտ է ասում, սարսափելի ուժ է կրում իր մեջ այդ մարդը...

— Այդ ես տեսե՜լ եմ,— մռայլ ասաց խոխոլը։— Այդ մարդկանց թունավորե՜լ են։ Երբ նրանք ոտքի ելնեն՝ նրանք ամեն ինչ կգլորե՜ն մեկը մյուսի հետևից։ Նրանց հարկավոր է լերկ հող, և նրանք ամեն ինչ կմերկացնեն, ամեն ինչ կպոկե՜ն։

Նա խոսում էր դանդաղ և երևում էր, որ ուրիշ բանի մասին է մտածում։ Մայրն զգուշությամբ ձեռք տվեց նրան։

— Մի քիչ սթափվեիր գոնե, Անդրյո՜ւշա։

— Սպասեցե՛ք, մայրի՜կ, հարազա՜տս,— կամաց և սիրալիր խնդրեց խոխոլը։

Եվ հանկարծ գրգռվելով նա սկսեց խոսել, ձեռքը սեղանին խփելով։

— Այո՜, Պա՜վել, մուժիկը հողը կմերկացնի իր համար, եթե ոտքի կանգնի։ Ինչպես ժանտախտից հետո նա ամեն ինչ կհրդեհի, որ իր զրկանքների հետքերը մոխրի պես քամուն տա...

— Իսկ հետո դեմ կառնի մեր ճանապարհին,— կամաց նկատեց Պավելը։

— Մեր գործն է՝ թույլ չտա՜լ այդ։ Մեր գործն է, Պավե՜լ, դրա առաջն առնե՜լ։ Մենք ամենից մոտ ենք նրան, նա մեզ կհավատա, մեր հետևից կգա՜։

— Գիտե՞ս, Ռիբինը մեզ առաջարկում է թերթ հրատարակել գյուղի համար,— հաղորդեց Պավելը։

— Եվ պետք է։

Պավելը քմծիծաղեց և ասաց.

— Ցավում եմ, որ նրա հետ չվիճեցի։

Խոխոլը գլուխը տրորելով հանգիստ նկատեց։

— Դեռ կվիճե՜նք։ Դու սրինգդ նվագիր, ում ոտները հողի մեջ չեն խրված ու կպած, կպարի՜ քո երաժշտությամբ։ Ռիբինը ճիշտ ասաց, մենք մեր ոտքի տակ հող չենք զգում, և չպիտի էլ զգանք, որովհետև հենց մեզ վրա է պարտականություն ընկած թափ տալու հողը։ Մի անգամ որ թափ տվինք, մարդիկ նրանից կկտրվեն, երկրորդ անգամ թափ կտանք, էլի՜ ու էլի՜։

Մայրը քմծիծաղելով ասաց.

— Քեզ համար ամեն ինչ հեշտ է, Անդրյո՜ւշա։

— Է, իհարկե՜,— ասաց խոխոլը։— Հե՜շտ է։ Ինչպես կյանքը։

Մի քանի րոպե հետո նա ասաց.

— Ես գնում եմ դաշտը, մի քիչ ման կգամ...

— Բաղնիսից հետո՞։ Քամի է, կմրսես,— նախազգուշացրեց մայրը։

— Հենց ուզում եմ, որ քամին տա՜ ինձ,— պատասխանեց Անդրեյը։

— Տե՜ս, կմրսե՜ս,— սիրալիր ասաց Պավելը։— Ավելի լավ է պառկես։

— Ո՜չ, ես կգնամ։

Եվ հագնվելով լուռ հեռացավ...

— Ծանր է նրա համար,— նկատեց մայրը հառաչելով։

— Գիտե՞ս ինչ,— ասաց Պավելը մորը,— դու լավ ես արել, որ սկսել ես նրա հետ «դու»-ով խոսել։

Մայրը զարմանքով նայեց որդուն, ասաց.

— Ես իսկի չեմ էլ նկատել, թե այդ ի՜նչպես եղավ։ Նա ինձ համար այնքան մոտիկ է դարձել, որ չեմ էլ իմանում, թե ինչպես ասեմ։

— Լա՜վ սիրտ ունես, մա՜յր,— կամաց ասաց Պավելը։

— Միայն թե կարողանայի քեզ և ձեզ բոլորիդ որևէ կերպ օգնել։ Կարողանայի՜։

— Մի՜ վախենա, կկարողանա՜ս...

Մայրը կամաց ծիծաղեց, ասելով.

— Բայց, ա՜յ, չեմ կարողանում չվախենա՜լ։

— Լա՜վ, մայրի՜կ, թողնենք,— ասաց Պավելը։— Իմացի՜ր, ես քեզնից շա՜տ, շա՜տ շնորհակալ եմ։

Մայրը գնաց խոհանոց, որպեսզի որդուն չհուզի իր արցունքներով։

Խոխոլը վերադարձավ ուշ երեկոյան հոգնած և իսկույն պառկեց քնելու՝ ասելով.

— Մի տասը վերստ վազեցի կարծեմ...

— Օգնե՞ց,— հարցրեց Պավելը։

— Մի՛ խանգարի, քնելու եմ։

Եվ լռեց, կարծես մեռավ։

Քիչ ժամանակ անց եկավ Վեսովշչիկովը՝ պատառոտված, ցեխոտ և դժգոհ ինչպես միշտ։

— Չե՞ս լսել, թե Իսային ո՛վ է սպանել,— հարցրեց նա Պավելին, անճոռնի կերպով սենյակում քայլելով։

— Ո՛չ,— կարճ պատասխանեց Պավելը։

— Ճարվեց մի մարդ, որը չզվե՛ց։ Իսկ ես միշտ պատրաստվում էի ինքս ճղմել նրան։ Դա իմ գործն էր, ամենից շատ ի՛նձ էր հարմարում։

— Թո՛ղ, Նիկոլա՛յ, այդպիսի բաներ խոսելը,— բարյացակամորեն ասաց Պավելը։

— Դա ի՛նչ է, իսկապես,— սիրալիր կցեց մայրը։— Սիրտն այդքան բարի է, իսկ ինքը մոնչում է։ Դա ինչի համար է։

Այդ րոպեին մոր համար հաճելի էր տեսնել Նիկոլային, նույնիսկ նրա չեչոտ դեմքն ավելի գեղեցիկ էր թվում։

— Ես ոչ մի բանի պետք չեմ, բացի այդպիսի գործերից,— ասաց Նիկոլայը ուսերը թոթվելով։— Միտք եմ անում, միտք, թե ո՞ւր է իմ տեղը։ Ես տեղ չունե՛մ։ Պետք է մարդկանց հետ խոսել, իսկ ես չեմ կարողանում։ Ես տեսնում եմ ամեն ինչ, մարդկային բոլոր զրկանքներն զգում եմ, բայց ասել չե՛մ կարողանում։ Լուռումունջ է հոգիս։

Նա մոտեցավ Պավելին և գլուխը կախելով, սեղանը մատով քչփորելով ասաց մի տեսակ երեխայի պես ողբագին, որ իրեն չէր սազում.

— Ինձ որևէ մի ծանր գո՛րծ տվեք, եղբայրնե՛ր։ Ես չե՛մ կարող այսպես անմիտ կերպով ապրել։ Դուք բոլորդ գործի մեջ եք։ Ես տեսնում եմ, որ գործն աճում է, իսկ ես մի կողմ կանգնած եմ մնացել։ Տեսնում եմ միայն գերաններ, տախտակներ։ Մի՞թե կարելի է սրա համար ապրել։ Ծանր աշխատա՛նք տվեք։

Պավելը բռնեց նրա ձեռքից և դեպի իրեն քաշեց.

— Կտա՛նք...

Բայց վարագույրի հետևից լսվեց խոխոլի ձայնը.

— Նիկոլա՛յ, ես քեզ կսովորեցնեմ տառեր շարել, և դա մեզ մոտ գրաշար կդառնաս, լա՞վ։

Նիկոլայը գնաց նրա մոտ, ասելով.

— Եթե սովորեցնես, ես դրա համար քեզ մի դանակ կնվիրեմ...

— Կորի՛ր քո դանակով,— գոռաց խոխոլը և հանկարծ ծիծաղեց։

— Լա՛վ դանակ,— պնդեց Նիկոլայը։ Պավելն էլ ծիծաղեց։

Այն ժամանակ Վեսովշչիկովը կանգ առավ սենյակի մեջտեղը և հարցրեց.

— Այդ ի՞նձ վրա եք ծիծաղում։

— Է՛, իհարկե,— պատասխանեց խոխոլը անկողնից վեր ցատկելով։— Ա՛յ թե ինչ. գնանք դաշտ զբոսնելու։ Լուսնյակ, լավ գիշեր է։ Գնա՞նք։

— Լա՛վ,— ասաց Պավելը։

— Ե՛ս էլ կգամ,— հայտնեց Նիկոլայը։— Ես սիրում եմ, խոխո՛լ, երբ դու ծիծաղում ես...

— Իսկ ես սիրում եմ, երբ դու նվերներ ես խոստանում,— պատասխանեց խոխոլը քմծիծաղով։

Երբ նա հագնվում էր խոհանոցում, մայրը փնթփնթալով ասաց նրան.

— Ավելի տա՛ք հագնվիր...

Եվ երբ նրանք երեքով գնացին, մայրը պատուհանից նրանց նայելուց հետո երեսը դարձրեց սրբապատկերներին, կամաց ասաց.

— Տե՛ր, օգնի՛ր նրանց...

XXVI

Օրերն իրար հետևից թռան այնպիսի արագությամբ, որ մորը թույլ չտվին մտածել Մայիսի մեկի մասին։ Միայն գիշերները, երբ օրվա աղմկալից, հուզիչ հոգսերից հոգնած՝ մայրը պառկում էր անկողնում, նրա սիրտը կամաց նվում էր։

«Երանի շուտ գար...»

Լուսաբացին ոռնում էր գործարանի շչակը, որդին և Անդրեյն շտապ թեյ էին խմում, մի բան ուտում ու գնում՝ մորը տասնյակ հանձնարարություն անելով։ Եվ ամբողջ օրը մայրը պտույտ էր գալիս, ինչպես սկյուռը անիվի վրա, ճաշ էր եփում,

բաց մանուշակագույն դոնդող և սոսինձ էր եփում թռուցիկների համար, ինչ-որ մարդիկ էին գալիս, թղթեր էին տալիս Պավելին հանձնելու համար ու անհայտանում՝ մորը վարակելով իրենց հուզվածությամբ։

Գրեթե ամեն գիշեր Մայիսի մեկը տոնելու համար բանվորներին կոչ անող թռուցիկներ էին կպցնում ցանկապատերին, կպցնում էին նույնիսկ ոստիկանական վարչության դռներին, ամեն օր գործարանում գտնում էին դրանցից։ Առավոտները ոստիկանները հայհոյելով ավանն էին ընկնում՝ ցանկապատերից պոկելով և քերելով բաց մանուշակագույն թղթերը, իսկ ճաշին դրանք նորից էին թռչկոտում փողոցում՝ անցորդների ոտների տակ գլորվելով։ Քաղաքից խուզարկուներ ուղարկեցին. նրանք անկյուններում կանգնած՝ աչքերով տնտղում էին բանվորներին, որոնք ուրախ և աշխույժ անցնում էին գործարանից ճաշելու և ետ էին գալիս։ Ամենքին դուր էր գալիս տեսնել ոստիկանության անզորությունը, և նույնիսկ հասակավոր բանվորները, քմծիծաղով իրար ասում էին.

— Տես ի՞նչ են անում, է՞։

Ամեն տեղ մարդկանց խմբեր էին հավաքվում՝ տաք-տաք քննարկելով հուզիչ կոչը։ Կյանքը եռում էր, դա այդ գարնանն ամենքի համար ավելի հետաքրքիր էր, ամենքի համար մի ինչ-որ նոր բան էր բերում, ոմանց՝ խռովարարներին կատաղած հայհոյելով գրգռվելու նոր պատճառ, ոմանց էլ՝ աղոտ անհանգստություն և հույս, իսկ երրորդներին, որ փոքրամասնությունն էին, բերում էր այն գիտակցության թունդ ուրախությունը, թե իրենք հանդիսանում են մի ուժ, որ զարթեցնում է բոլորին։

Պավելը և Անդրեյը համարյա թե չէին քնում գիշերները, տուն էին գալիս արդեն շչակից քիչ առաջ, երկուսն էլ հոգնած, ձայները խզված, գունատ։ Մայրը գիտեր, որ նրանք ժողովներ են գումարում անտառում, ճահճի վերևը. նրան հայտնի էր, որ գիշերներն ավանի շուրջը վխտում են հեծյալ ոստիկանների պահակախմբեր, խուզարկուներ են սողում՝ բռնելով և խուզարկելով առանձին բանվորների, խմբերը ցրելով և երբեմն սրան կամ նրան ձերբակալելով։ Հասկանալով, որ որդուն ևս Անդրեյի հետ կարող են կալանավորել ամեն գիշեր, նա գրեթե ցանկանում էր, որ այդպես լինի,— այդ նրանց համար ավելի լավ կլիներ, թվում էր մորը։

Համարակալի սպանման գործը տարօրինակ կերպով քնել էր։ Երկու օր տեղական ոստիկանությունը հարցուփորձ էր արել մարդկանց այդ առիթով և մի տասը հոգու հարցուփորձ անելով՝ կորցրել էր հետաքրքրությունը դեպի այդ սպանությունը։

Մարյա Կորսունովան մոր հետ խոսելիս ասաց նրան՝ իր խոսքերում արտացոլելով ոստիկանության կարծիքը, որի հետ նա հաշտ էր ապրում, ինչպես բոլոր մարդկանց հետ.

— Մի՞թե այստեղ կարելի է գտնել հանցավորին։ Այն առավոտ գուցե մի հարյուր հոգի տեսել են Իսային և դրանցից իննըսունը, եթե ոչ ավելին, կարող էին Իսային ապտակ հասցնել։ Յոթ տարվա ընթացքում նա ամենքին էլ դաղել է...

Խոխոլը նկատելի կերպով փոխվել էր։ Նրա դեմքը դուրս էր պրծել և արտանունքները ծանրացել էին ուռուցիկ աչքերի վրա կախվելով, նրանց կիսաածածկելով։ Մի բարակ կնճիռ էր գոյացել նրա դեմքին՝ ռունգներից դեպի շրթունքների անկյունները։ Նա սկսել էր ավելի քիչ խոսել առօրյա բաների ու գործերի մասին, բայց ավելի ու ավելի հաճախ էր բռնկվում և ընկնելով գինովի ու ամենքին արբեցնող զմայլանքի մեջ՝ խոսում էր ապագայի մասին,— ազատության և բանականության հաղթանակի հիանալի, լուսապայծառ տոնի մասին։

Երբ Իսայի սպանության գործը լռության մատնվեց, Անդրեյը, զզվանքով և տխուր քմծիծաղով ասաց.

— Ոչ միայն ժողովուրդը, այլև այն մարդիկ, որոնց նրանք մեզ վրա են արձակում, ինչպես շներին, նրանց համար արժեք չունեն։ Ափսոսում են ոչ թե իրենց հավատարիմ Հուդային, այլ արծաթը...

— Բավակա՛ն է այդ մասին խոսել, Անդրե՛յ,— կտրուկ ասաց Պավելը։ Մայրը կամաց ավելացրեց.

— Փտած բան էր, կպան, ցրիվ եկա՞վ։

— Իրավացի է, բայց մխիթարական չէ,— մռայլ արձագանքեց խոխոլը։

Նա հաճախ էր ասում այս խոսքերը, և դրանք նրա շրթունքներում մի առանձին, ամեն ինչ ընդգրկող, դառն և կծու իմաստ էին ձեռք բերում...

...Եվ ահա, եկավ այդ օրը— Մայիսի մեկը։

Շչակը մռնչաց, ինչպես միշտ, պահանջկոտ և տիրաբար։ Մայրը, որ գիշերը ոչ մի րոպե չէր քնել, վեր թռավ անկողնից, երեկոյից պատրաստ ինքնաեռը կրակ գցեց, ուզեց սովորա-

կանի պես բախել որդու և Անդրեյի դուռը, բայց մի քիչ մտածելով ձեռքը թափ տվեց և նստեց պատուհանի մոտ, ձեռքը դեմքին այնպես դրած, որ կարծես ատամները ցավում էին։

Գունատ-կապույտ երկնքով արագ լողում էր թեթև ամպերի ճերմակ և վարդագույն երամը, կարծես շոգու դղրդեցուցիչ մոբիլոցից վախեցած մեծ-մեծ թռչուններ էին թռչում։ Մայրը նայում էր ամպերին և ինքն իրեն ականջ դնում։ Նրա գլուխը ծանր էր և անքուն գիշերից բորբոքված աչքերը չոր էին։ Մի տարօրինակ անդորրություն կար կրծքում, սիրտը համաչափ էր զարկում, և մայրը մտածում էր հասարակ բաների վրա...

«Ինքնաեռը շուտ դրի, կեռա կանցնի։ Թող այսօր մի քիչ երկար քնեն։ Երկուսն էլ հալից ընկել են...»

Զվարթ խաղալով՝ լուսամուտից նայում էր արևի նոր ճառագայթը. մայրը ձեռքը պահեց նրա տակ, և երբ այդ լուսավոր ճառագայթն ընկավ նրա ձեռքի մորթին, մյուս ձեռքով նա շոյեց այն՝ մտախոհ և սիրալիր ժպտալով։ Ապա վեր կացավ, ինքնաեռից խողովակը վերցրեց, աշխատելով չաղմկել, լվացվեց և սկսեց աղոթել ջերմեռանդությամբ երեսը խաչ հանելով և շրթունքներն անբարբառ շարժելով։ Նրա դեմքը պայծառանում էր, իսկ աջ հոնքը մերթ դանդաղորեն վեր էր բարձրանում, մերթ հանկարծ իջնում...

Երկրորդ շչակը սուլեց ավելի կամաց, ո՛չ այնքան վստահ, դողդոջուն, խիստ և խոնավ հնչյունով։ Մորն այնպես թվաց, թե այդ օրը նա ավելի երկար է կանչում, քան սովորաբար։

Սենյակում հնչեց խոխոլի բամբ և պարզ ձայնը.

— Պա՛վել։ Լսո՞ւմ ես։

Նրանցից մեկը բորբիկ ոտը հատակին շրմփացրեց, մեկը անուշ հորանջեց...

— Ինքնաեռը պատրաստ է,— կանչեց մայրը։

— Վեր ենք կենում,— ուրախ-ուրախ ասաց Պավելը։

— Արևը ծագում է,— ասում էր խոխոլը։— Ամպերն էլ փախչում են։ Այսօր ավելորդ են ամպերը...

Եվ խոհանոց դուրս եկավ գզգզված, քնից ճմռթված, բայց ուրախ...

— Բարի լույս, մա՛յր։ Լա՞վ քնեցիք։

Մայրը մոտեցավ նրան և կամաց ասաց.

— Անդրյո՛ւշա, խնդրում եմ նրանից չհեռանաս։

— Դե իհարկե՛,— շշնջաց խոխոլը։— Քանի մենք միասին ենք, միշտ էլ կողք-կողքի կգնանք, այդ լա՛վ իմացեք։

— Ի՞նչ եք այստեղ փսփսում,— հարցրեց Պավելը։

— Ոչինչ, Պա՛շա։

— Նա ինձ ասում է՝ մաքո՛ւր լվացվիր։ Աղջիկները մտիկ են տալու,— պատասխանեց խոխոլը դուրս գնալով նախասենյակը լվացվելու։

«Դե, ե՛լ, բարձրացիր, դու բանվոր ժողովուրդ»,— կամաց երգեց Պավելը։

Օրն ավելի էր պարզում, ամպերը հեռանում էին քամուց հալածված, մայրը ժողովում էր թեյի պարագաները և գլուխն օրորելով մտածում, թե ինչպես ամեն բան տարօրինակ է, նրանք երկուսն էլ կատակում, ժպտում են այդ առավոտ, իսկ կեսօրին նրանց ո՛վ գիտե ի՛նչ է սպասում։ Եվ ինքն էլ չգիտեր ինչու հանգիստ էր, գրեթե ուրախ։

Թեյին երկար նստեցին, աշխատելով սպասումը կրճատել։ Պավելն էլ սովորականի պես գդալով դանդաղ և խնամքով խառնում էր բաժակի մեջ շաքարը, ճշտապահությամբ աղ էր ցանում մի կտոր հացի՝ իր սիրած չորուկին։ Խոխոլը սեղանի տակ ոտներն էր շարժում, նա երբեք չէր կարողանում ոտները դնելու համար հարմար տեղ գտնել, և տեսնելով, թե ինչպես է առաստաղից ու պատի վրայով թրթռում հեղուկի մեջ արտացոլված արևի ճառագայթը, պատմում էր.

— Երբ ես տասը տարեկան երեխա էի, ուզեցի արևը բռնել բաժակով։ Եվ ահա վերցրի բաժակը, գաղտագողի մոտեցա և, թրա՜խկ, բաժակը կպցրի պատին։ Ձեռքս կտրտեցի։ Դրա համար ինձ ծեծեցին։ Հենց որ ծեծեցին, դուրս եկա բակ, տեսա արևը ջրափոսի մեջ ու սկսեցի ոտներով կոխ տալ։ Ամբողջովին ցեխով շաղախվեցի, ինձ էլի ծեծեցին... Ի՞նչ անեմ։ Սկսեցի գոռալ արևի վրա. «Իսկի էլ ոչ մի տեղս չի ցավում, կարմրաշեկ սատանա, չի՞ ցավում»։ Եվ ամբողջ ժամանակ լեզուս հանելով՝ ծաղրում էի նրան։ Դա մխիթարում էր ինձ։

— Ինչո՞ւ էր արևը քեզ կարմրաշեկ թվում,— հարցրեց Պավելը ծիծաղելով։

— Մեր դիմացը մի դարբին կար, այնպես կարմրամորթ ու կարմրաշեկ մորուքով։ Ուրախ, բարի մուժիկ էր։ Ինձ թվում էր՝ արեգակը նրան նման էր...

Չհամբերելով մայրն ասաց.

— Մի ասեք տեսնեմ, թե ինչպես եք գնալու։

— Որոշված բանի մասին խոսել՝ նշանակում է ամեն ինչ իրար խառնել,— մեղմ նկատեց խոխոլը։— Այն դեպքում, եթե մեզ բոլորիս բռնեն, մա՛յր, ձեզ մոտ կգա Նիկոլայ Իվանովիչը և կասի, թե ինչ անեք։

— Լա՜վ,— հառաչելով ասաց մայրը։

— Չգնանք փողոց,— երազկոտ ասաց Պավելը։

— Ոչ, ավելի լավ է՝ առայժմ տանը նստես,— արձագանքեց Անդրեյը։— Ինչո՞ւ զուր տեղը ոստիկանության աչքը մտնել։ Դու բավական լա՜վ հայտնի ես նրան։

Վազելով եկավ Ֆեդյա Մազինը, պսպղուն, այտերին կարմիր բծեր։ Ուրախության դողով լի նա ցրեց սպասումի ձանձրույթը։

— Սկսվե՜ց,— ասաց նա։— Ժողովուրդը շարժվե՜ց, թափվում են փողոցը, բոլորի մռութները կացնի պես են։ Գործարանի դարպասի մոտ ամբողջ ժամանակ Վեսովշչիկովը Գուսև Վասյայի և Սամոյլովի հետ կանգնել, ճառեր էին ասում։ Շա՜տ մարդկանց տուն վերադարձրին։ Գնա՜նք, ժամանակն է։ Արդեն ժամը տասն է...

— Ես կգնամ,— վճռական ասաց Պավելը։

— Կտեսնեք,— խոստացավ Ֆեդյան,— կեսօրից հետո ամբողջ գործարանը կանգ կառնի։

Եվ նա վազելով գնաց։

— Այրվում է, ինչպես մեղրամոմը քամու առաջ,— ուղեկցեց նրան մայրը կամաց ասելով, վեր կացավ և խոհանոց դուրս գալով, սկսեց հագնվել։

— Ո՞ւր եք գնում, մա՛յր։

— Ձեզ հետ կգա՛մ,— ասաց մայրը։

Անդրեյը նայեց Պավելին ընչացքները քաշելով։ Պավելն արագ շարժումով գլխի մազերն ուղղեց և գնաց մոր մոտ։

— Մայրի՛կ ես քեզ ոչինչ չեմ ասի... Դու էլ ինձ բան մի՛ ասիր։ Լա՞վ։

— Լա՜վ, լա՜վ, Քրիստո՛ս ձեզ հետ,— մրմնջաց մայրը։

XXVII

Երբ մայրը փողոց դուրս եկավ և լսեց օդում մարդկային ձայների անհանգիստ, սպասողական աղմուկը, երբ տեսավ ամեն տեղ տների պատուհաններում և դարպասների մոտ մարդկանց

խմբերը, որոնք իր որդուն և Անդրեյին ուղեկցում էին հետաքրքրված հայացքներով, նրա աչքերում մի ամպամած բիծ գոյացավ և սկսեց տարուբերվել՝ գույները փոխելով մերթ թափանցիկ կանաչի, մերթ պղտոր-մոխրագույնի։

Նրանց բարևում էին, և այդ բարևներում մի առանձին բան կար։ Նրա լսողությունը որսում էր կցկտուր, ցածրաձայն ձայներ.

— Ահա նրանք, զորավարները...

— Մեզ հայտնի չի, թե ով է զորավարություն անում...

— Ես հո ոչ մի վատ բան չե՞մ ասում...

Մի այլ տեղ բակում մեկը հուզված գոչում էր.

— Ոստիկանությունը նրանց կբռնի,— նրանք կկորչե՞ն...

Մի կնոջ ողբագին ձայն պատուհանից վախեցած թռչում էր փողոց.

— Խելքդ գլո՛ւխդ հավաքիր։ Ի՞նչ ես լսել, ամո՞ւրի ես, ի՞նչ է։

Երբ անցնում էին անոտ Զոսիմովի տան մոտով, այն Զոսիմովի, որն իր հաշմանդամության համար գործարանից ամսական նպաստ էր ստանում, նա գլուխը պատուհանից հանելով գոռաց.

— Պա՛շկա։ Գլուխդ ոլորելով կպոկեն, ստո՛ր մարդ, արարքներիդ համար, սպասիր՝ կտեսնե՛ս։

Մայրը ցնցվեց, կանգ առավ։ Այդ գոռոցը նրա մեջ շարուբության զգացում առաջացրեց։ Մայրը նայեց հաշմանդամի ուռած, հաստ դեմքին, նա հայհոյելով գլուխը թաքցրեց։ Այն ժամանակ մայրը քայլերն արագացնելով հասավ որդուն և աշխատելով ետ չմնալ նրանից՝ գնաց նրա հետևից։

Թվում էր, թե Պավելն ու Անդրեյը ոչինչ չէին նկատում, չէին լսում իրենց ուղեկցող բացականչությունները։ Գնում էին հանգիստ, առանց շտապելու։ Ահա նրանց կանգնեցրեց Միրոնովը, մի հասակավոր և համեստ մարդ, բոլորից հարգված իր զգաստ, մաքուր կյանքի համար։

— Դուք է՞լ չեք աշխատում, Դանի՛լո Իվանովիչ,— հարցրեց Պավելը։

— Կինս երեխա է բերում։ Դե, օրն էլ մի տեսակ է, անհանգիստ օր է,— բացատրեց Միրոնովը ուշի-ուշով նայելով ընկերներին և կամաց հարցրեց.

— Տղե՛րք, ասում են, թե ուզում եք դիրեկտորի գլխին խայտառակություն սարքել, ապակինե՞րը կոտրատել։

— Մի՞թե մենք հարբած ենք,— բացականչեց Պավելը։

— Մենք ուղղակի փողոցով անցնելու ենք դրոշակներով և երգեր ենք երգելու,— ասաց խոխոլը։— Ա՛յ կլսեք մեր երգերը, նրանց մեջ է մեր հավատը։

— Ձեր հավատը ես գիտե՞մ,— մտախոհ ասաց Միրոնովը։— Այդ թղթերը կարդացել եմ։ Վա՛հ, Նի՛լովնա,— բացականչեց նա խելոք աչքերով ժպտալով մոր դեմքին։— Դո՞ւ էլ ես եկել բունտ անելու։

— Գոնե մահից առաջ ճշմարտության հետ կողք-կողքի գնա՞նք։

— Տե՛ս, տե՛ս,— ասաց Միրոնովը։— Երևի ճիշտ են ասում քեզ համար, թե դո՛ւ ես արգելված գրքեր բերել գործարան։

— Այդ ո՞վ է ասում,— հարցրեց Պավելը։

— Է՛հ, ասում են, է՛լի։ Դե, մնաք բարով, հաստա՛տ կացեք։

Մայրը կամաց ծիծաղում էր, նրան դուր էր եկել, որ իր մասին այդպես են խոսում։ Պավելն ասաց նրան քմծիծաղով.

— Բանտ ես ընկնելու, մայրի՛կ։

Արեգակն ավելի ու ավելի էր բարձրանում իր ջերմությունը թափելով գարնանային օրվա աշխույժ թարմության մեջ։ Ամպերը լողում էին առաջվանից դանդաղ, նրանց ստվերներն ավելի բարակ, ավելի թափանցիկ էին դարձել։ Նրանք քնքշորեն սողում էին փողոցով և տների կտուրներով, փաթաթվում մարդկանց և կարծես մաքրում էին ավանը՝ սրբելով ցեխն ու փոշին պատերից ու կտուրներից, ձանձրույթը՝ դեմքերից։ Ավելի ուրախ էր դառնում, ձայներն ավելի բարձր էին հնչում՝ խլացնելով մեքենաների շարժման հեռավոր աղմուկը։

Կրկին ամեն կողմից, պատուհաններից, բակերից մոր ականջների մեջ սողացին ու թռան տագնապալի և չար խոսքեր, խոհուն և ուրախ։ Բայց այժմ մայրն ուզում էր առարկել, շնորհակալություն հայտնել, բացատրել, ուզում էր խառնվել այդ օրվա տարօրինակ խայտաբղետ կյանքին։

Փողոցի անկյունում, մի նեղ նրբանցքում հավաքվել էր մոտ հարյուր հոգուց բաղկացած մի ամբոխ և նրա խորքում հնչում էր Վեսովշչիկովի ձայնը։

— Ձեր արյունը քամում են այնպես, ինչպես լոռամրգի հյութը,— մարդկանց գլխներին էին թափվում անտաշ բառերը։

— Ճի՛շտ է,— բամբ հնչյունով պատասխանում էին միանգամից մի քանի ձայներ։

— Տղան աշխատո՞ւմ է,— ասաց խոխոլը։— Հապա, գնամ, օգնե՛մ նրան...

Նա կռացավ և նախքան Պավելը կարողանար կանգնեցնել նրան, ամբոխի մեջ խոթեց իր երկար, ճկուն մարմինը, ինչպես խցանահանը խցանի մեջ։ Հնչեց նրա քաղցրահնչուն ձայնը.

— Ընկերնե՛ր։ Ասում են, թե երկրի վրա ապրում են զանազան ժողովուրդներ՝ հրեաներ ու գերմանացիներ, անգլիացիներ ու թաթարներ։ Իսկ ես դրան չե՛մ հավատում։ Կա երկու ժողովուրդ միայն, անհաշտելի երկու ցեղ՝ հարուստնե՛ր և աղքատնե՛ր։ Մարդիկ տարբեր տեսակ են հագնվում և տարբեր խոսում, բայց նայեք, թե ինչպես են հարուստ ֆրանսիացիները, գերմանացիները, անգլիացիները վարվում բանվոր ժողովրդի հետ, և կտեսնեք, որ նրանք բոլորն էլ բանվորի համար նույնպես բաշիբոզուկ են, ոսկո՛ր մնա նրանց բկում։

Ամբոխի մեջ մեկը ծիծաղեց։

— Իսկ եթե մյուս կողմից նայենք, կտեսնենք, որ և՛ ֆրանսիացի բանվորը, և՛ թաթարը, և՛ թուրքը նույնպիսի շան կյանքով են ապրում, ինչպես և մենք՝ ռուս բանվոր ժողովուրդս։

Փողոցից ժողովուրդն ավելի ու ավելի էր մոտենում, և մարդիկ իրար հետևից լուռումունջ, վիզները երկարացնելով, ոտների ծայրերի վրա կանգնելով՝ խցկվում էին նրբանցք։

Անդրեյը ձայնն ավելի բարձրացրեց.

— Արտասահմանում բանվորներն արդեն հասկացել են այս պարզ ճշմարտությունը, և այսօր, Մայիսի մեկի լուսավոր օրը...

— Ոստիկանությո՛ւնը,— գոչեց մեկը։

Փողոցից դեպի նրբանցք, ուղղակի մարդկանց վրա էին գալիս չորս հեծյալ ոստիկան, մտրակները ճոճելով և գոռալով.

— Ցրվեցե՛ք։

Մարդիկ մռայլվում էին՝ դժկամորեն ձիերին ճանապարհ տալով։ Ոմանք ցանկապատերն էին բարձրանում։

— Խոզերին ձի են նստեցրել և նրանք խոխոռում են, թե տեսե՛ք, տեսե՛ք, մենք զորավարներ ենք,— գոռում էր մեկի հընչեղ, կովի հրավիրող ձայնը։

Խոխոլը մենակ մնաց նրբանցքի մեջտեղը. գլուխը տմբտմբացնելով նրա վրա արշավեցին երկու ձի։ Նա մի կողմ քաշվեց, և նույն ժամանակ մայրը նրա ձեռքից բռնելով՝ տարավ իր հետևից, փնթփնթալով.

— Խոստացել է Պաշայի հետ լինել, բայց ինքը մենա՞կ է գնում ուժի դեմ։

— Ներողությո՞ւն,— ասաց խոխոլը ժպտալով։

Նիլովնային համակեց մի տագնապալից, ուժասպառ անող հոգնածություն, որը բարձրանում էր ներսից և պատում գլուխը, սրտում տարօրինակ կերպով փոխնիփոխ առաջացնելով և՛ տրտմություն, և՛ ուրախություն։ Մայրն ուզում էր, որ շուտ հնչի ճաշի շչակը։

Դուրս եկան հրապարակ, եկեղեցու մոտ։ Նրա շուրջը՝ բակում խիտ կանգնած և նստած էր ժողովուրդը, այդտեղ կային հինգ հարյուրի չափ ուրախ երիտասարդներ և մանուկներ։ Ամբոխը ծփում էր, մարդիկ անհանգիստ վեր էին բարձրացնում գլուխները և նայում հեռուն, բոլոր կողմերը, անհամբեր սպասելով։ Զգացվում էր մի ինչ-որ բարձր տրամադրություն, ոմանց հայացքը վարանոտ էր, ոմանք իրենց ցույց էին տալիս արտաքուստ խիզախ։ Կամաց էին հնչում կանանց ճնշված ձայները, տղամարդիկ բարկությամբ երեսները շուռ էին տալիս կանանցից, երբեմն ցածրաձայն հայհոյանք էր լսվում։ Թշնամական ընդհարման խուլ աղմուկը պատել էր խայտաբղետ ամբոխին։

— Մի՛տենկա,— կամաց դողում էր մի կանացի ձայն։— Խնայիր քեզ...

— Ձեռք քաշի՛ր,— զնգում էր պատասխանը։

Իսկ Սիզովի պատկառելի ձայնը խոսում էր հանգիստ, համոզիչ.

— Ո՛չ, մենք չպիտի՛ թողնենք երիտասարդներին։ Նրանք մեզանից խելոք են դարձել, մեզանից համարձակ են։ Ճահճի կոպեկն ո՞վ պահպանեց։ Նրա՞նք։ Դա պետք է միտը պահել։ Դրա համար նրանց բանտերը քարշ տվին, իսկ դրանից շահեցին բոլո՛ր...

Շչակը մոնչաց իր սև հնչյունով կլանելով մարդկային խոսակցությունը։ Ամբոխը ցնցվեց, նստածները կանգնեցին, մի բոպե ամեն ինչ քարացավ, ամենքի ուշադրությունը լարվեց, և շատ դեմքեր գունատվեցին։

— Ընկերնե՛ր,— լսվեց Պավելի ձայնը զիլ ու հաստատ։ Մի չոր, ջերմ մառախուղ այրեց մոր աչքերը, և նա հանկարծ պիրկ մարմնի մի շարժումով կանգնեց որդու հետևը։ Բոլորը դեմքերը դարձրին դեպի Պավելը, շրջապատելով նրան, ինչպես երկաթի փշրանքը՝ մագնիսի կտորին։

Մայրը նայում էր որդու դեմքին և տեսնում միայն աչքերը, հպարտ ու համարձակ, տոչորող...

— Ընկերնե՛ր։ Մենք որոշել ենք բացեիբաց հայտարարել, թե ովքեր ենք, մենք այսօր բարձրացնում ենք մեր դրոշակը, բանականության, ճշմարտության, ազատության դրոշա՞կը։

Սպիտակ և երկար մի ձող երևաց օդում, թեքվեց, ճեղքեց ամբոխը, անհետացավ նրա մեջ և մի բոպե հետո մարդկանց վեր դարձրած դեմքերից բարձր, կարմիր թռչունի պես ծածանվեց բանվոր ժողովրդի դրոշակի լայն կտավը։

Պավելը ձեռքը բարձրացրեց, ձողը ճոճվեց, այն ժամանակ տասնյակ ձեռքեր բռնեցին սպիտակ հարթ փայտը. դրանց մեջ էր նաև մոր ձեռքը։

— Կեցցե՛ բանվոր ժողովուրդը,— գոչեց Պավելը։

Հարյուրավոր ձայներ արձագանքեցին նրան թնդացող գոչյունով.

— Կեցցե՛ սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիան, մե՛ր պարտիան, ընկերնե՛ր, մեր հոգևոր հայրենիքը։

Ամբոխը եռում էր։ Ուրիշներին դես ու դեն հրելով դեպի դրոշակն էին դիմում նրանք, ովքեր հասկացել էին նրա նշանակությունը, Պավելի կողքին կանգնած էին Մազինը, Սամոյլովը, Գուսևները. գլուխը կորացրած Նիկոլայը հրում էր մարդկանց, և էլի մորն անծանոթ, երիտասարդ, վառվռուն աչքերով մարդիկ հրում էին նրան...

— Կեցցե՛ն բոլոր երկրների բանվոր մարդիկ,— գոչեց Պավելը։ Եվ ավելի ու ավելի սաստկացնելով իր ուժը և ուրախությունը՝ հաղարաշուրթ արձագանքը պատասխանեց նրան հոգեցունց հնչյունով։

Մայրը բռնեց Նիկոլայի և էլի մի ուրիշի ձեռքից. նա արցունքից խեղդվում էր, բայց չէր լալիս, նրա ոտները դողում էին, և դողդոջուն շրթունքներով ասում էր.

— Հարազատնե՛ր...

Նիկոլայի չեչոտ դեմքի վրա մի լայն ժպիտ տարածվեց, նա նայում էր դրոշակին և ինչ-որ բան մոնչում՝ ձեռք մեկնելով դեպի դրոշակը, իսկ հետո այդ ձեռքով գրկեց մոր պարանոցը, համբուրեց նրան և ծիծաղեց։

— Ընկերնե՛ր,— երգաձայն ասաց խոխոլը՝ իր փափուկ ձայնով ծածկելով ամբոխի խուլ աղմուկը։— Մենք այժմ թափոր ենք կատարում հանուն նոր աստծու, լույսի և ճշմարտության

աստծու, բանականության և բարու աստծո՞ւ։ Հեռո՞ւ է մեզնից մեր նպատակը, փշե պսակները մո՞տ են։ Ո՞վ չի հավատում ճշմարտության ուժին, ում մեջ համարձակություն չկա մինչև մահ պաշտպանելու այն, ով իր վրա հավատ չունի և վախենում է տանջանքներից, թող մեզանից հեռանա։ Մենք կոչ ենք անում գալու մեր հետևից նրանց, ովքեր հավատում են մեր հաղթանակին։ Նրանք, ովքեր չեն տեսնում մեր նպատակը, թող չգան մեզ հետ, այդպիսիներին միայն դժբախտություն է սպասում։ Շարքե՛ր մտեք, ընկերնե՛ր։ Կեցցե՛ ազատ մարդկանց տոնը։ Կեցցե՛ Մայիսի մեկը։

Ամբոխը ավելի խտացավ։ Պավելը թափահարեց դրոշակը, որը տարածվեց օդում և առաջ լողաց արևից շողշողալով, կարմիր և լայն ժպտալով...

Հրաժարվեք, ընկերներ հին օրենքներից...

Լսվեց Ֆեդյա Մազինի զիլ ձայնը, և տասնյակ ձայներ միացան նրան փափուկ, ուժգին ալիքի պես...

Թափ տանք նրա փոշին մեր ոտքերից...

Մայրը ջերմ ժպիտը շրթունքներին գնում էր Մազինի հետևից և նրա գլխի վրայով նայում որդուն և դրոշակին։ Շուրջն աչքովն էին ընկնում հրճվալից դեմքեր, զանազան գույների աչքեր, բոլորի առջևից գնում էին նրա որդին, և Անդրեյը։ Նա լսում էր նրանց ձայները, Անդրեյի փափուկ և խոնավ ձայնը ներդաշնակորեն ի մի էր ձուլվում իր որդու թանձր և թավ ձայնին։

Դե, ե՛լ, բարձրացի՛ր, բանվո՛ր ժողովուրդ,
Ծլիր պայքարի՛, քաղցած մարդկության...

Եվ ժողովուրդը վազում էր դեպի դրոշակը, ինչ-որ բան էր գոռում, խառնվում ամբոխին ու նրա հետ ետ դառնում, և նրա աղաղակները հանգչում էին երգի հնչյունների մեջ, այն երգի, որ տանը երգում էին մյուս երգերից ավելի կամաց, փողոցում դա հնչում էր համաչափ, շիտակ, ահեղ մի ուժով։ Նրա մեջ հընչում էր երկաթե արիություն, մարդկանց կանչելով հեռավոր ճանապարհ՝ դեպի ապագան, այդ երգն աղնվաբար հայտնում էր ճանապարհի դժվարությունները։ Նրա մեծ, խաղաղ բոցում հալվում էր անցած կյանքի մութ տականքը, սովորական դարձած զգացմունքների ծանր գուղձը և այրվելով մոխիր էր դառնում անիծյալ երկյուղը նորի հանդեպ...

Մեկի վախեցած և ուրախ դեմքը տատանվում էր մոր կողքին, և մի դողդոջուն ձայն հեծկլտալով բացականչում էր.

— Մի՛տյա, ո՞ւր ես գնում։

Մայրն առանց կանգ առնելու ասում էր.

— Թո՛ղ գնա, մի՛ անհանգստանաք։ Ես էլ էի շատ վախենում, իմն ամենից առաջ է։ Նա, որ դրոշակն է տանում, որդի՛ս է։

— Ավազակնե՛ր։ Ո՞ւր եք գնում։ Զինվորներն այնտե՛ղ են։

Եվ հանկարծ ոսկրոտ ձեռքով բռնելով մոր ձեռքը այդ բարձրահասակ ու նիհար կինը բացականչեց.

— Քույրի՛կս, մի տես ո՞նց են երգում։ Միտյան էլ է երգում...

— Դուք մի՛ անհանգստանաք,— մրմնջաց մայրը։— Սա սուրբ գործ է... Մտածեցեք, տեսե՛ք, չէ՞ որ Քրիստոսն էլ չէր լինի, եթե նրա համար մարդիկ չկոտորվեին։

Այդ միտքը հանկարծ ծագեց նրա գլխում և ապշեցրեց նրան իր պարզ ու պայծառ ճշմարտությամբ։ Նա նայեց այդ կնոջ դեմքին, որ ամուր բռնել էր իր ձեռքը, և զարմացած ժպտալով կրկնեց.

— Քրիստոսն էլ չէր լինի, եթե մարդիկ չկոտորվեին նրա՝ տիրոջ, համար։

Նրա կողքին երևաց Սիզովը։ Նա գլխարկը վերցնելով՝ շարժում էր երգի չափով և ասում.

— Բացեիբաց դուրս եկանք, մա՛յր, հը՛։ Երգ են հորինել։ Ի՞նչ երգ է, մայր, հը՛։

Ցարին պետք են զորքի համար զինվորներ,
Նրա՛ն տվե՛ք ձեր որդիներ...

— Ոչ մի բանից չե՛ն վախենում,— ասում էր Սիզովը։— Իսկ իմ որդին գերեզմանոցումն է...

Մոր սիրտը չափազանց ուժեղ զարկեց, և մայրն սկսեց ետ մնալ։ Նրան արագ մի կողմ հրեցին, սեղմեցին ցանկապատին, և նրա մոտով օրորվելով հոսեց մարդկանց մի թանձր ալիք. նրանք շատ էին, և այդ ուրախացնում էր մորը։

Դե, ե՛լ, բողոքի՛ր, բանվո՛ր ժողովուրդ,

Թվում էր, թե օդում երգում է մի ահագին պղնձե փող, երգում և զարթեցնում է մարդկանց, առաջացնելով մի կրծքում պայքարի պատրաստակամություն, մյուսում՝ անորոշ ուրախու-

թյուն, մի նոր բանի նախազգացում, այրող հետաքրքրություն, այնտեղ հույսերի աղոտ թրթիռ զարթեցնելով, այստեղ ելք բանալով տարիներով կուտակված զայրույթի կծու հոսանքի համար։ Ամենքը նայում էին դեպի առաջ, ուր ծածանվում և փողփողում էր օդում կարմիր դրոշակը։

— Գնա՛նք,— մոնչում էր մեկի ոգևորված ձայնը։— Հիանալի՛ է, տղե՛ր։

Եվ երևի ավելին զգալով, քան կարող էր արտահայտել սովորական բառերով, այդ մարդը թունդ հիշոցով հայհոյում էր։ Բայց և՛ զայրույթը, ստրուկի խավար, կույր զայրույթը ֆշշում էր օձի պես՝ չարացած բառերի մեջ գալարվելով, իր վրա ընկած լույսից վրդովված։

— Հերետիկոսնե՛ր,— բռունցքով սպառնալով՝ պատուհանից գոռում էր մի ճաթած ձայն։

Եվ համառորեն մոր ականջն էր մտնում մեկի սուր ճիչը.

— Թագավոր-կայսե՞ր դեմ, նորին մեծության-ցարի՞ դեմ։ Խռովություն անե՞լ։

Մոր կողքով շողում-անհետանում էին շփոթված դեմքեր, ցատկոտելով վազվզում էին տղամարդիկ, կանայք, սև լավայի պես թափվում էր ժողովուրդը՝ հրապուրված այն երգից, որի հնչյունների թափով կարծես ամեն ինչ գլորում էր առջևում՝ ճանապարհը մաքրելով։ Նայելով հեռուն, կարմիր դրոշակին, մայրն առանց նկատելու տեսնում էր որդու դեմքը, նրա բրոնզե ճակատը և հավատի վառ կրակով այրվող աչքերը։

Բայց ահա մայրն ամբոխի հետևի մասում է, այն մարդկանց մեջ, որոնք գնում էին առանց շտապելու, անտարբեր առաջ նայելով, այնպիսի հանդիսատեսների սառն հետաքրքրությամբ, որոնց առաջո՛ւց է հայտնի տեսարանի վերջը։ Գնում և ցածրաձայն, վստահ խոսում էին.

— Մի վաշտ դպրոցի մոտ է կանգնած, մեկն էլ գործարանի մոտ...

— Նահանգապետը եկել է...

— Ճի՞շտ։

— Ի՞նքս տեսա՝ եկել է...

Մեկն ուրախ հայհոյեց և ասաց.

— Այնուամենայնիվ սկսել են մեզանից վախենալ։ Թե՛ զորք, թե՛ նահանգապետ։

«Հարազատնե՛րս», բաբախում էր մոր կրծքի տակ։

Բայց նրա շուրջը խոսքերը հնչում էին մեռած և սառն։ Նա քայլերն արագացրեց, որպեսզի այդ մարդկանցից հեռանա, և նրա համար դյուրին էր նրանց դանդաղ, ծույլ ընթացքից առաջ անցնել։

Եվ հանկարծ ամբոխի գլուխը կարծես ինչ-որ բանի խփվեց, նրա մարմինն առանց կանգ առնելու ընկրկեց տագնապալիորեն, ցածր, խուլ ձայնով։ Երգը նույնպես դողաց, ապա հոսեց ավելի արագ, ավելի բարձր։ Եվ նորից հնչյունների թանձր ալիքն իջավ, ետ սողաց։ Երգեցիկ խմբից ձայները մեկ-մեկ պակասում էին, լսվեցին առանձին բացականչություններ, որոնք աշխատում էին երգը հասցնել նախկին բարձրության, առաջ մղել.

Դե, ե՛լ, բողոքի՛ր բանվո՛ր ժողովուրդ,
Ընդդեմ թշնամու գնա, քաղցած մարդկություն...

Բայց այդ կոչի մեջ չկար ընդհանուր, միաձույլ վստահություն, և նրա մեջ արդեն անհանգստությունն էր թրթռում։

Ոչինչ չտեսնելով, չիմանալով, թե ինչ է պատահել առջևում, իսկ մայրը հրում էր ամբոխին՝ արագ-արագ առաջ շարժվելով, նրա դիմացն էին գալիս ընկրկող մարդիկ, ոմանք գլուխները կախած և հոնքերը կիտած, ոմանք շվարած ժպտալով, ոմանք հեգնորեն սուլելով։ Մայրը վշտագին տնտղում էր նրանց դեմքերը, նրա աչքերը լուռ հարցնում էին, խնդրում, կանչում...

— Ընկերնե՛ր,— հնչեց Պավելի ձայնը։— Զինվորները նույնպիսի մարդիկ են, ինչ որ մենք։ Նրանք մեզ չեն խփի։ Ինչի՞ համար պետք է խփեն։ Նրա՞ համար, որ մենք կրում ենք այն ճշմարտությունը, որ հարկավոր է ամենքին։ Չէ՞ որ այս ճշմարտությունը նրանց էլ է հարկավոր։ Առայժմ նրանք այս բանը չեն հասկանում, բայց արդեն մոտ է ժամանակը, երբ նրա՛նք էլ կկանգնեն մեր կողքին, երբ կքայլեն ոչ թե կողոպուտների և սպանությունների դրոշակի տակ, այլ մեր՝ ազատության դրոշակի տակ։ Եվ որպեսզի նրանք շուտ հասկանան մեր ճշմարտությունը, մենք պետք է առաջ գնանք։ Առա՛ջ, ընկերնե՛ր։ Մի՛շտ առաջ։

Պավելի ձայնը հնչում էր անհողդողդ, խոսքերը ղնգում էին օդում որոշակի ու պարզ, բայց ամբոխը ցրվում էր, մարդիկ իրար հետևից հեռանում էին աջ ու ձախ դեպի տները, հենվում ցանկապատերին։ Այժմ ամբոխը սեպի ձև ուներ, որի սուր ծայրը Պավելն էր, և նրա գլխավերևը կարմիր վառվում էր բանվոր

ժողովրդի դրոշակը։ Ամբոխը նման էր նաև սև թռչնի, որն իր թևերը լայն տարածած՝ ականջները սրել է՝ պատրաստ բարձրանալու և թռչելու, իսկ Պավելը նրա կտուցն էր...

XXVIII

Մայրը տեսնում էր, որ փողոցի ծայրում, հրապարակի մուտքը փակած, կանգնած էր անդեմ, միատեսակ մարդկանց մի գորշ պատ։ Նրանցից ամեն մեկի ուսին սառը և նուրբ փայլում էր սվինի սուր շերտը։ Եվ այդ լուռ, անշարժ պատից բանվորների վրա ցուրտ էր փչում, այդ ցուրտը բախվում էր մոր կրծքին և թափանցում սիրտը։

Մայրը խցկվեց ամբոխի մեջ, այնտեղ, ուր նրան ծանոթ մարդիկ, որոնք կանգնած էին առջևում դրոշակի մոտ, խառնվում էին անծանոթների հետ, կարծես նրանց վրա հենվելով։ Մայրը կիպ սեղմեց մի բարձրահասակ, սափրված, միականի մարդու, որը մորը նայելու համար գլուխը թափով դարձրեց։

— Դու այդ ի՞նչ է։ Դու ո՞ւմն ես...— հարցրեց նա։

— Պավել Վլասովի մայրն եմ,— պատասխանեց մայրը, զգալով, որ ծնկները դողում են և ստորին ծնոտն ակամա կախ է ընկնում։

— Հա՛,— ասաց միականին։

— Ընկերնե՛ր,— ասաց Պավելը։— Ամբողջ կյանքում առա՛ջ, մեզ համար ուրիշ ճանապարհ չկա՛։

Տիրեց զգոն մի լռություն։ Դրոշակը բարձրացավ, օրորվեց և կարծես մտախոհ փողփողալով մարդկանց գլխին՝ սահուն շարժվեց դեպի զինվորների գորշ պատը։ Մայրը ցնցվեց, փակեց աչքերը և հառաչեց, Պավելը, Անդրեյը, Սամոյլովը և Մազինը միայն չորս հոգով կտրվեցին ամբոխից։

Բայց օդում դանդաղ դողդողաց Ֆեդյա Մազինի հստակ ձայնը.

Դուք զոհ գնացիք...

Սկսեց երգել նա,

...Պայքարում... օրհասական....

երկու ծանր հառաչով արձագանքեցին թանձր, ցածր ձայները։ Մարդիկ առաջ քայլեցին՝ ոտները հատ-հատ գետնին զարկելով։ Եվ հոսեց նոր երգը, վճռական ու խիզախ։

Դուք տվիք ամենն, ինչ կարող էիք, նրա համար...

պայծառ ժապավենի պես ոլորվում էր Ֆեդյայի ձայնը...

...Ազատության համար...

ներդաշնակ երգում էին ընկերները։

— Ը՛հը՛-ը՛,— չարախնդությամբ գոռաց մեկը մի կողմից։— Հոգեհանգիստ սկսեցին երգել, շա՛ն որդիք...

— Ջարդեցե՛ք դրանց,— հնչեց մի զայրագին բացականչություն։

Մայրը ձեռներով ճանկեց կուրծքը, շուրջը նայեց և տեսավ, որ ամբոխը, որն առաջ խիտ լցված էր փողոցը, կանգնել է տատանման մեջ, վարանում և նայում է, թե ինչպես են հեռանում դրոշակ տանողները։ Նրանց հետևից գնում էին մի քանի տասնյակ մարդիկ և ամեն մի քայլը դեպի առաջ՝ որևէ մեկին ստիպում էր մի կողմ ցատկել, կարծես փողոցի մեջտեղով ճանապարհը շիկացած էր, այրում էր ներբանները։

Կկործանվի կամայականությունը...

մարգարեանում էր երգը Ֆեդյայի շրթունքներում...

...և կհասնի ժողովուրդը...

վստահ և ահարկու կրկնում էր ուժեղ ձայների խումբը։

Բայց երգի ներդաշնակ հոսանքի միջով դուրս էին պրծնում խուլ հնչող բառեր.

— Հրաման է տալիս...

— Հրացանները ձեռքի՛,— առջևում հնչեց մի զիլ աղաղակ։

Օդում ոլոր-մոլոր ճոճվեցին սվինները, իջան և ձգվեցին դրոշակի դեմ՝ խորամանկ ժպտալով։

— Մա՛րշ։

— Գնա՛նք,— ասաց միականին և ձեռները գրպանը դնելով լայն քայլեց մի կողմ։

Մայրն անթարթ նայում էր։ Զինվորների գորշ ալիքը տատանվեց և փողոցի ամբողջ լայնությամբ ձգվելով՝ համաչափ, սառնությամբ շարժվեց՝ առջևից տանելով արծաթի պես պսպղուն նոսրատամ պողպատե սանրը։ Մայրը լայն քայլեր անելով ավելի մոտեցավ որդուն, տեսավ, թե ինչպես Անդրեյը նույնպես քայլեց Պավելի առջև և նրան ծածկեց իր երկար մարմնով։

— Կողքի՛ց գնա, ընկե՛ր,— խիստ գոռաց Պավելը։

Անդրեյը երգում էր, նրա ձեռները հետևն էին դրված, նա գլուխը վեր բարձրացրեց։ Պավելը հրեց նրան ուսով և նորից գոչեց.

— Կողքի՛ցս գնա։ Իրավունք չունե՛ս։ Առջևում դրոշակը պիտի լինի։

— Ցը՛ր-վե՛լ,— բարակ ձայնով գոռում էր մի փոքրիկ սպա սպիտակ սուրը շարժելով։ Նա ոտները բարձրացնում էր և ծընկները չծալելով ներբանները թափով խփում գետնին։ Մոր աչքին ընկան նրա լավ մաքրված կոշիկները։

Իսկ սպայի կողքից և նրանից մի քիչ ետ ծանր-ծանր գնում էր մի երկարահասակ, ածիլված մարդ՝ հաստ, ալեզարդ ընչացքներով, կարմիր աստառով երկար մոխրագույն վերարկուով և դեղին շերտերը լայն անդրավարտիքին։ Նա ևս խոխոլի պես ձեռները հետևն էր դրել, բարձրացրել էր ալեզարդ խիտ հոնքերը և Պավելին էր նայում։

Մայրն անընդգրկելիորեն շատ բան էր տեսնում, նրա կրծքում անշարժ կանգնած էր մի բարձր ճիչ, որ պատրաստ էր ամեն մի շնչի հետ դուրս նետվելու, դա խեղդում էր մորը, բայց մայրը պահում էր ճիչը, ձեռներով կուրծքը բռնած։ Մորը հրում էին, նա երերվում էր ոտքի վրա և առաջ գնում առանց մտածելու, գրեթե առանց գիտակցության։ Նա զգում էր, որ իր հետևից եկող մարդիկ ավելի ու ավելի են քշանում, սառը կոհակը նրանց դեմ հանդիման էր գալիս և քշում նրանց։

Ավելի ու ավելի էին իրար մոտենում կարմիր դրոշակի մարդիկ և գորշ մարդկանց խիտ շղթան, պարզ երևում էր զինվորների դեմքը, ամբողջ փողոցի լայնությամբ, այլանդակորեն տափակած՝ կեղտոտ-դեղին նեղ շերտ դարձած, անհամաչափորեն այդ շերտի մեջ էին մտցված գույնզգույն աչքեր, իսկ նրա առջև անողոքաբար շողշողում էին սվինների բարակ սայրերը։ Դրանք դեպի մարդկանց կրծքերն ուղղվելով, դեռ նրանց չկպած, մեկ-մեկ պոկում էին նրանց ամբոխից՝ քայքայելով այդ ամբոխը։

Մայրն իր հետևում լսում էր վազողների ոտների դոփյունը։ Ճնշված, անհանգիստ ձայները գոռում էին.

— Ցրվեցե՛ք, տղե՛րք...

— Վլա՛սովա, փախի՛ր...

— Ե՛տ, Պավլո՛վա։

— Դրոշակը թո՛ղ, Պա՛վել,— մոայլ ասաց Վեսովշչիկովը։— Տո՛ւր ինձ, ես կթաքցնեմ։

Նա ճանկեց կոթը, դրոշակը ետ ճոճվեց։

— Թո՛ղ,— գոչեց Պավելը։

Նիկոլայը ձեռքը ետ քաշեց, կարծես դաղվեց։ Երգը մարեց։ Մարդիկ կանգ առան՝ Պավելին կիպ շրջապատելով, բայց նա առաջ անցավ։ Լռություն տիրեց, հանկարծ, միանգամից, կարծես աներևույթ կերպով վերից իջնելով և թափանցիկ ամպի պես գրկելով մարդկանց։

Դրոշակի տակ քսանի չափ մարդ էր կանգնած, ոչ ավելի, բայց նրանք կանգնած էին անհողդողդ՝ մորը ձգելով դեպի իրենց, իրենց համար ունեցած երկյուղի զգացումով և ինչ-որ բան ասելու աղոտ ցանկությամբ...

— Պորո՛ւշիկ, վերցրե՛ք նրանից այդ բանը,— լսվեց բարձրահասակ ծերունու հմաշափ ձայնը։

Ձեռքը մեկնելով նա ցույց տվեց դրոշակը։

Պավելի մոտ ցատկեց փոքրիկ սպան, ճանկեց դրոշակի կոթը, սուր ճչաց.

— Բա՛ց թող։

— Ձեռներդ հեռո՛ւ,— բարձրաձայն ասաց Պավելը։

Կարմիր դրոշակը թրթռում էր օդում՝ աջ ու ձախ թեքվելով, և նորից ուղիղ կանգնեց. սպայիկը ետ թռավ, նստեց գետնին։ Մոր կողքով ոչ իրեն հատուկ արագությամբ սահեց Նիկոլայը՝ բռունցքը պարզած։

— Տանել դրանց,— մռնչաց ծերունին ոտը գետնին խփելով։

Մի քանի զինվոր անցան առաջ։ Նրանցից մեկը հրացանի կոթը թափ տվեց, դրոշակը ցնցվեց, թեքվեց և անհետացավ զինվորների գորշ կույտի մեջ։

— Ա՜խ,— թախծագին գոչեց մեկը։

Եվ մայրը ճչաց գաղանային, ոռնացող ձայնով։ Բայց որպես պատասխան զինվորների խմբի միջից հնչեց Պավելի հրստակ ձայնը.

— Ցտեսությո՛ւն, մայրի՛կ։ Ցտեսությո՛ւն, հարազա՛տս...

«Կենդանի՞ է։ Հիշե՞ց ինձ»,— կրկնակի խփեց մոր սիրտը։

Ցտեսությո՛ւն, մայրի՛կս։

Ոտների մատների վրա բարձրանալով, ձեռները թափահարելով մայրն աշխատում էր տեսնել նրանց, և զինվորների գլուխների վրայով տեսնում էր Անդրեյի կլոր դեմքը, ժպտում էր դեմքը, բարևում էր մորը։

— Հարազատներս... Անդրյո՛ւշա... Պա՛շա...— աղաղակում էր մայրը։

— Ցտեսությո՛ւն, ընկերնե՛ր,— գոչեցին նրանք, զինվորների խմբի միջից։

Նրանց պատասխանեց կրկնվող, պատառոտված արձագանքը։ Դա հնչեց պատուհաններից, ինչ-որ տեղ՝ վերևից, կտուրներից։

XXIX

Մոր կրծքին հրեցին։ Աչքերը պատած մառախուղի միջով նա իր առջև տեսնում էր փոքրիկ սպային. սպայիկի դեմքը կարմիր էր, ձգված, նա գոռում էր մոր վրա.

— Հեռացի՛ր, պառա՛վ։

Մայրը նայեց նրան վերևից ներքև, տեսավ նրա ոտքի տակ դրոշակի կոթը երկու մաս եղած, մեկի վրա մի քիչ կարմիր կտոր էր մնացել։ Կռանալով մայրը վերցրեց դրոշակը։ Սպան նրա ձեռներից դուրս կորզեց փայտը, դեն շպրտեց և ոտները դոփելով, գոռաց.

— Կորի՛ր, ասում եմ։

Զինվորների մեջ բռնկվեց և ծորաց երգը.

Դե, ե՛լ, բարձրացի՛ր, բանվո՛ր ժողովուրդ...

Ամեն ինչ պտտվում էր, օրորվում, ցնցվում։ Օդում կանգնած էր մի բազմաձայն, տագնապալից աղմուկ, որ նման էր հեռագրական լարերի փայլատ աղմուկին։ Սպան տեղից վեր թռավ և վրդովված ճչաց.

— Վե՛րջ տալ երգին։ Ֆելդֆե՛բել Կրայնով...

Մայրը երերալով մոտեցավ փայտի կտորին, որ սպան նետել էր, և նորից վերցրեց։

— Փակե՛լ դրանց կոկորդները...

Երգը խառնվեց, դողդողաց, կտրվեց, մարեց։ Մեկը բռնեց մոր ուսերից, շուռ տվեց նրան, հրեց մեջքին...

— Գնա՛, գնա՛...

— Մաքրե՛լ փողոցը,— գոռում էր սպան։

Մայրն իրենից մի տասնյակ քայլ հեռու տեսնում էր նորից մարդկանց մի հոծ բազմություն։ Նրանք մռնչում էին, քրթմընջում, սուլում և դանդաղ նահանջելով փողոցի խորքը՝ թափվում էին բակերը։

— Գնա՛, դե՛,— ուղղակի մոր ականջին գոռաց մի երիտասարդ, մեծ ընչացքներով զինվոր նրան հասնելով, և հրեց դեպի մայթը։

Մայրն սկսեց գնալ՝ փայտին հենված, նրա ծնկները ծալվում էին։ Չընկնելու համար նա մի ձեռքով կառչում էր պատերին ու ցանկապատերին։ Մարդիկ նրա առջևից ընկրկում էին, նրա կողքից և հետևից զինվորներ էին գնում՝ գոռալով.

— Գնա՛, գնա՛...

Զինվորները նրանից առաջ անցան, նա կանգ առավ, նայեց շուրջը։ Փողոցի ծայրում ցանցառ շղթայով կանգնած էին էլի նրանք, զինվորները, փակելով հրապարակի մուտքը։ Հրապարակը դատարկ էր։ Առջևում ևս գորշ կերպարանքներ էին օրորվում, դանդաղ շարժվելով դեպի մարդիկ...

Մայրն ուզում էր ետ դառնալ, բայց անգիտակցորեն նորից գնաց դեպի առաջ և մի նրբանցքի հասնելով՝ շուռ եկավ դեպի այնտեղ, որը նեղ էր և ամայի։ Մայրը նորից կանգ առավ։ Ծանր շնչեց, ականջ դրեց։ Առջևում ինչ-որ տեղ աղմկում էր ժողովուրդը։

Փայտին հենված նա քայլեց առաջ, հոնքերը շարժելով, հանկարծ քրտնելով, շարժելով շրթունքները, ձեռքը թափ տալով. նրա սրտում կայծերի պես բռնկվում էին ինչ-որ բառեր, բռնկվում, սեղմվում, դրանք ասելու, բարձրաձայն գոչելու մի համառ, հրամայական ցանկություն վառելով...

Նրբանցքը շեշտակի դառնում էր դեպի ձախ, և անկյունից դենը մայրը տեսավ մարդկանց մի մեծ, սեղմ խումբ, մեկի ձայնն ուժգին և բարձր ասում էր.

— Եղբայրնե՛ր, իրեն խիղախ ցույց տալու համար սվինների դեմ չեն գնում։

— Ի՞նչ մարդիկ էին նրանք, հա՞։ Վրա են գալիս, իսկ իրենք կանգնած են մնում։ Մնում են տեղում, եղբայրնե՛ր, անվախ...

— Ա՛յ թե Պաշա Վլա՛սովը...

— Ապա խոխո՞լը։

Ձեռները հետևը դրած՝ ժպտում է, սատանան...

— Սիրելինե՛րս։ Ա՛յ մարդիկ,— աղաղակեց մայրը խցկվելով ամբոխի մեջ։ Նրա առջև պատկառանքով ետ-ետ գնացին։

Մեկը ծիծաղեց։

— Տե՛ս, տե՛ս, դրոշակո՞վ է։ Ձեռքում դրոշա՞կն է։

— Լռի՛ր,— խստորեն ասաց մի ուրիշ ձայն։

Մայրը ձեռները լայն տարածեց...

— Լսեցե՛ք, ի սեր Քրիստոսի։ Դուք բոլորդ հարազատներս եք... դուք բոլորդ սրտակիցներս եք...մտիկ արեք անվախ, ի՞նչ պատահեց։ Գնում են աշխարհում մեր զավակները, մեր արյունը, գնում են ճշմարտության հետևից... ամենքի համար։ Ձեր բոլորիդ համար, ձեր մանուկների համար իրենց դատապարտեցին խաչի ճանապարհին... փնտրում են լուսավոր օրեր։ Ուզում են մի ուրիշ կյանք՝ ապրել ճշմարտության, արդարության մեջ... բարիք են ցանկանում ամենքին։

Նրա սիրտը պատռվում էր, կրծքի տակ նեղվածք էր, կոկորդը չոր ու տաք։ Նրա սրտի խորքում ծնվում էին մեծ, ամեն ինչ և ամենքին գրկող սիրո խոսքեր և այրում նրա լեզուն՝ շարժելով այն ավելի ուժգին, ավելի ազատ։

Նա տեսնում էր իրեն լսում են, ամենքը լուռ են, զգում էր մարդիկ մտածում են՝ իրեն կիպ շրջապատված, և նրա մեջ մի ցանկություն էր աճում, որ այժմ արդեն ավելի պարզ էր իր համար, ցանկություն մարդկանց հրելու այնտեղ, որդու հետևից, Անդրեյի հետևից, բոլորի հետևից, որոնց տվել են զինվորների ձեռքը, մենակ են թողել։

Դիտելով շուրջը գտնվող մռայլ, ուշադիր դեմքերը, նա շարունակեց մեղմ ուժգնությամբ.

— Գնում են աշխարհում մեր զավակները դեպի ուրախություն, նրանք գնացին բոլորի համար և Քրիստոսի ճշմարտության համար, այն բոլորի դեմ, ինչով որ մեզ գերել են, կապկրպել, խեղդել են մեզ մեր չարերը, կեղծերը, մեր ագահները։ Սրտակիցներս, չէ՞ որ ամբողջ ժողովրդի համար բարձրացավ մեր ջահել արյունը, ամբողջ աշխարհի համար, բոլոր բանվոր մարդկանց համար գնացին նրանք... Ուրեմն մի՛ հեռացեք նրանցից, մի՛ հրաժարվեք, մի՛ թողեք ձեր զավակներին մենակ ճանապարհին։ Խղճացեք ձեզ... հավատացեք ձեր որդիների սրտերին, նրանք ճշմարտություն են ծնել, նրա՛ համար են կորչում։ Հավատացե՛ք նրանց

Նրա ձայնը խզվեց, նա ուժասպառ օրորվեց, մեկը բռնեց նրա կռնատակից...

— Աստվածային բան է ասում,— հուզված և խուլ ձայնով գոչեց մեկը։— Աստվածային բան է, բարի մարդիկ։ Լսեցի՞ք։

Մի ուրիշը խղճահարվեց.

— Է՛հ, ինչպես է մորմոքվում։

Նրան հանդիմանորեն առարկեցին։

— Նա չի մորմոքվում, այլ մեզ՝ հիմարներիս է խփում, հասկացի՛ր։

Ամբոխից վեր սլացավ մի բարձր, թրթռուն ձայն.

— Ուղղափառներ։ Իմ Միտյան, այդ մաքուր հոգին, ի՞նչ արեց նա։ Նա ընկերների հետևի՛ց գնաց, սիրած ընկերների... Ճշմարիտ է ասում մայրը, ինչի՞ համար ենք մենք երեխաներին մենակ թողնում։ Նրանք մեզ ի՞նչ վատություն են արել։

Մայրը դողաց այդ խոսքերից և մեղմ արցունքներով արձագանքեց։

— Գնա տո՛ւն, Նի՛լովնա։ Գնա՛, մա՛յր։ Տանջվե՛լ ես,— բարձրաձայն ասաց Սիզովը։

Սիզովը գունատ էր, նրա մորուքը գզգզված էր և դողդողում էր։ Հանկարծ հոնքերը կիտելով՝ նա աչքերը խստորեն շուռ տվեց բոլորի վրա, ամբողջ մարմնով շտկվեց և պարզ ու որոշ ասաց.

— Դուք գիտեք, որդիս, Մատվեյը, գործարանում մեքենայի տակ ջարդվեց։ Բայց եթե կենդանի լիներ, ես ինքս կուղարկեի նրանց հետ մի շարքում կանգնելու, ինքս կասեի. դո՛ւ էլ գնա, Մատվե՛յ։ Գնա՛, սա ճշմարիտ գործ է, սա՛ ազնի՛վ գործ է։

Նրա ձայնը կտրվեց, նա լռեց և ամենքը մռայլ, լուռ էին, համակված մի ինչ-որ ահագին, նոր, բայց արդեն իրենց չվախեցնող բանով։ Սիզովը ձեռքը բարձրացրեց և թափահարելով շարունակեց.

— Խոսում է մի ծեր մարդ, դուք ինձ ճանաչում եք։ Երեսունինը տարի է աշխատում եմ այստեղ, հիսուներեք տարի ապրում եմ աշխարհիս երեսին։ Քրոջս որդուն, մի մաքուր, խելոք երեխայի, այսօր նորից տարան։ Նա էլ առջևից էր գնում, Վլասովի կողքից, հենց դրոշակի մոտ...

Նա ձեռքը թափ տվեց, կուչ եկավ և մոր ձեռքից բռնելով ասաց.

— Այս կինը ճշմարիտ ասաց։ Մեր երեխաներն ուզում են ապրել պատվով, բանականությամբ, իսկ մենք, ա՛յ, թողել ենք նրանց, հեռացել, այո՛։ Գնա՛, Նի՛լովնա...

— Հարազատնե՛րս,— ասաց մայրը լացակումած աչքերը բոլորի վրա գցելով։— Երեխաների՛ համար է կյանքը, նրա՛նց համար է երկիրը...

— Գնա՛, Նի՛լովնա։ Ա՛ռ, փայտն էլ վերցրո՛ւ,— ասում էր Սիզովը՝ դրոշակի կոթի կտորը նրան տալով։

Մոր վրա նայում էին տրտմությամբ, հարգանքով, կարեկցության քրթմնջյունն էր ուղեկցում նրան։ Սիզովը ճանապարհից լուռ հեռացնում էր մարդկանց, նրանք լռությամբ մի կողմ էին քաշվում և ենթարկվելով մի անորոշ ուժի, որը իրենց քաշում էր մոր հետևից, առանց շտապելու գնում էին նրա հետևից՝ իրար հետ կիսաձայն կարճ խոսքեր փոխանակելով։

Իր տան դարպասի մոտ մայրը դարձավ դեպի նրանց՝ դրոշակի բեկորի վրա հենվելով, գլուխ տվեց և գոհունակությամբ, կամաց ասաց.

— Շնորհակալ եմ ձեզանից...

Եվ նորից մտաբերելով իր միտքը, նոր միտքը, որը թվում էր, թե իր սիրտն է ծնել, նա արտասանեց.

— Մեր տեր Հիսուս Քրիստոսը չէր լինի, եթե Մարդիկ չմեռնեին նրա փառքի համար...

Ամբոխը լուռ ու մունջ նայում էր նրան։

Նա կրկին գլխով հրաժեշտ տվեց մարդկանց և մտավ իր տունը, իսկ Սիզովը գլուխը կռացնելով մտավ նրա հետ։

Մարդիկ դարպասի մոտ կանգնել՝ խոսում էին։

Ապա ցրվեցին առանց շտապելու։

Երկրորդ մաս

I

Օրվա մնացորդն անց կացավ հիշողությունների խայտաճամուկ մառախուղի մեջ, ծանր հոգնածության մեջ, որ ամուր գրկել էր մոր մարմինն ու հոգին։ Գորշ բծի պես ցատկտում էր փոքրիկ սպան, շողշողում էր Պավելի բրոնզագույն դեմքը, ժըպտում էին Անդրեյի աչքերը։

Մայրը շրջում էր սենյակում, նստում պատուհանի մոտ, նայում փողոցին, նորից շրջում՝ հոնքը բարձրացրած, ցնցվելով, շուրջը նայելով և առանց մտածելու ինչ-որ բան էր որոնում։ Ջուր էր խմում առանց ծարավը հագեցնելու և չէր կարողանում հանգցնել թախծի և վիրավորանքի այրող մարմրոցը կրծքում։ Օրը միջից կտրված էր, նրա սկզբում բովանդակություն կար, իսկ այժմ ամեն ինչ նրա միջից դուրս էր հոսել, մոր առջև տարածվում էր մի թախծալի ամայություն և երերվում էր մի տարակուսական հարց։

«Իսկ հիմա՞ ինչ...»

Եկավ Կորսունովան։ Նա ձեռները թափ էր տալիս, դողում, լալիս, ոտները դոփում, ինչ-որ բան առաջարկում ու խոստանում, ինչ-որ մեկին սպառնում։ Այս բոլորը չէր հուզում մորը։

— Ըհը՛,— լսում էր մայրը Մարյայի ճղճղան ձայնը,— էլի դիպա՞ն ժողովրդին։ Գործարանը կա՞նգ է առել, ամբողջովին կանգ է առել։

— Այո՛, այո՛,— կամաց ասում էր մայրը գլուխը տմբտմբացնելով, իսկ նրա աչքերն անշարժ տնտղում էին այն, ինչ որ արդեն անցյալ էր դարձել, հեռացել էր իրենից Անդրեյի և Պավելի

հետ։ Նա չէր կարողանում լալ, սիրտը ճմլվում էր, չորացել էր, շրթունքներն էլ էին չորացել և բերանում պակասում էր թացությունը։ Ձեռները դողում էին, մեջքի կաշին ցնցվում էր մանրիկ դողոցով։

Երեկոյան եկան ժանդարմները։ Մայրը նրանց դիմավորեց առանց զարմանքի, աներկյուղ։ Նրանք մտան աղմուկով և նրանց մեջ մի ինչ-որ ուրախ, գոհ բան կար։ Դեղնադեմ սպան ատամները բաց անելով ասում էր.

— Հը՞, ո՞նց եք։ Երրորդ անգամն ենք իրար պատահում, հա՞։

Մայրը լուռ էր մնում, չոր լեզվով շրթունքները լիզելով։ Սպան խոսում էր շատ, խրատական տոնով, մայրն զգում էր, որ սպայի համար խոսելը հաճելի է։ Բայց նրա խոսքերը չէին հասնում մորը, չէին խանգարում նրան։ Միայն երբ սպան ասաց. «Դու ինքդ ես մեղավոր, մայրիկ, եթե չես կարող որդուդ հարգանք ներշնչել դեպի աստված և ցարը...», մայրը դռան մոտ կանգնած և առանց սպայի վրա նայելու խուլ ձայնով պատասխանեց.

— Այո, մեր զավակները մեզ դատավոր են։ Նրանք իրավացի կերպով կդատապարտեն մեզ նրա համար, որ մենք նրանց թողնում ենք այդ ճանապարհին։

— Ի՞նչ,— գոռաց սպան։— Բա՛ր ասա։

— Ես ասում եմ. դատավորները մեր զավակներն են,— կրկնեց մայրը հառաչելով։

Սպան այդ ժամանակ ինչ-որ բան ասաց արագ ու բարկացած, բայց նրա խոսքերը մոր շուրջը բոլորվեցին առանց նրան դիպչելու։

Վկաների մեջ էր Մարյա Կորսունովան։ Նա կանգնած էր մոր կողքին, բայց նրան չէր նայում, և երբ սպան դիմում էր նրան որևէ հարցով, նա շտապ և խոր գլուխ տալով՝ միօրինակ պատասխանում էր.

— Չգիտեմ, ձերդ բարեծնություն։ Ես մի անուսում կին եմ, առևտրով եմ զբաղվում, հիմարությունից ոչինչ չգիտեմ...

— Դե՛, լռի՛ր,— հրամայում էր սպան՝ ընչացքները շարժելով։ Մարյան գլուխ էր տալիս և աննկատելի չանչելով նրան, շշնջում էր մորը.

— Ա՛ռ, կե՛ր։

Նրան հրամայեցին խուզարկել Վլասովային։ Նա աչքերը ճպճպացրեց, չռեց սպայի վրա և վախեցած ասաց.

— Ձե՛րդ բարեծնություն, ես այդ բանը չե՛մ իմանում։

Սպան ոտը դոփեց, գոռաց, Մարյան ցած գցեց աչքերը և մորը կամաց խնդրեց.

— Ինչ արած, կոճակներդ բա՛ց, Պելագե՛յա Նիլովնա...

Տակնուվրա անելով և շոշափելով մոր զգեստը՝ նա արյունով լցված դեմքով շշնջում էր.

— Ախ, շներ են, հա՞։

— Դու այդ ի՞նչ ես խոսում,— դաժանաբար գոչեց սպան՝ նայելով այն անկյունը, որտեղ Մարյան խուզարկում էր։

— Կանացի գործի մասին եմ խոսում, ձե՛րդ բարեծնություն,— մրմնջաց Մարյան վախեցած։

Երբ սպան մորը հրամայեց ստորագրել արձանագրությունը, մայրն անվարժ ձեռքով տպագրական հաստ-հաստ փայլուն տառերով թղթի վրա գծեց.

«Բանվոր մարդու այրի Պելագեյա Վլասովա»։

— Այս ի՞նչ ես գրել։ Ինչի՞ համար է սա,— բացականչեց սպան դեմքը զզվանքով կնճռելով և ապա քմծիծաղով ասաց.— վայրենիներ...

Նրանք հեռացան։ Մայրը կանգնեց պատուհանի մոտ, ձեռները կրծքին ծալած և առանց աչքը թարթելու, առանց որևէ բան տեսնելու երկար նայում էր իր առջև, հոնքերը բարձրացրած, սեղմում էր շրթունքները և ծնոտներն այնպես սեղմում, որ շուտով զգաց ատամների ցավը։ Ճրագի նավթը վերջացել էր, լույսը ճրճտալով մարում էր։ Նա ճրագը փչեց և մնաց խավարի մեջ։ Թախծալի խոհաղրկության մութ ամպը լցնում էր նրա կուրծքը՝ դժվարացնելով սրտի բաբախումը։ Երկար ժամանակ նա կանգնած էր, հոգնել էին ոտներն ու աչքերը։ Նա լսեց, թե ինչպես պատուհանի տակ կանգ առավ Մարյան և հարբած ձայնով կանչեց.

— Պելագե՛յա։ Քնա՞ծ ես։ Իմ թշվառ նահատակ, քնի՛ր։

Մայրն առանց հանվելու պառկեց անկողնում և արագ խորասուզվեց ծանր քնի մեջ, կարծես խոր փոսի մեջ էր ընկել։

Նա երազում տեսնում էր ճահճի հետևում, քաղաք տանող ճանապարհի վրա մի դեղին ավազե բլուր։ Նրա ծայրին դեպի փոսերն իջնող ձորակողի վրա, որտեղից ավազ էին տանում, կանգնած էր Պավելը և Անդրեյի ձայնով կամաց, հնչեղ երգում էր.

Ելի՛ր, բարձրացի՛ր, բանվո՛ր ժողովուրդ...

Մայրը գնում էր բլրի մոտի ճանապարհով և ձեռքը ճակատին դրած նայում էր որդուն։ Կապույտ երկնքի ֆոնի վրա որդու պատկերը գծագրված էր պարզ և որոշ։ Մայրն ամաչում էր մոտենալ որդուն, որովհետև հղի էր։ Ձեռներին էլ երեխա ուներ։ Ճանապարհը շարունակեց։ Դաշտում երեխաները գնդակ էին խաղում. նրանք շատ էին. գնդակն էլ կարմիր էր։ Ձեռքից երեխան ձգվեց դեպի խաղացողները և սկսեց բարձրաձայն լալ։ Մայրը կուրծք տվեց նրան և ետ դարձավ, իսկ բլրի վրա արդեն զինվորներ էին կանգնած՝ սվիններն իր վրա ուղղած։ Նա արագ փախավ դեպի դաշտի միջի եկեղեցին, սպիտակ, թեթև եկեղեցին, որ կարծես ամպերից էր կառուցված և անչափ բարձր էր։ Այնտեղ մեկին թաղում էին, դագաղը մեծ էր, սև կափարիչն ամուր ծածկված։ Բայց քահանան և սարկավագը եկեղեցում շրջում էին սպիտակ շուրջառներով և երգում.

Քրիստոս հարյավ ի մեռելոց...

Սարկավագը խնկարկում էր, երկրպագում մորը, ժպտում։ Սարկավագի մազերը վառ կարմրաշեկ էին և դեմքն ուրախ, ինչպես Սամոյլովինը։ Վերևից, գմբեթից թափվում էին արևի ճառագայթները, սրբիչների պես լայն։ Երկու դասերում էլ տղաները մեղմ երգում էին.

Քրիստոս հարյավ ի մեռելոց...

— Վերցնել դրանց,— հանկարծ գոռաց քահանան եկեղեցու մեջտեղը կանգնելով։ Նրա վրայից շուրջառը չքացավ, նրա դեմքին երևան եկան ալեխառն, խիստ ընչացքներ։ Բոլորն սկսեցին փախչել, սարկավագն էլ փախավ բուրվառը նետելով մի կողմ, ձեռքով գլուխը բռնելով, ինչպես խոխոլն է անում։ Մայրը երեխային գցեց հատակին, մարդկանց ոտների տակ, մարդիկ վազում էին իր շուրջը, հեռվից, վախվխելով նայելով երեխայի մերկ մարմնին, իսկ ինքը ծունկ չոքեց և աղաղակում էր։

— Երեխային մի՛ թողեք։ Վերցրե՛ք նրան...

Քրիստոս հարյավ ի մեռելոց...

Երգում էր խոխոլը՝ ձեռները մեջքին դրած և ժպտալով։

Մայրը կռացավ, երեխային վերցրեց և դրեց տախտակների բեռան վրա, որի կողքով կամաց-կամաց գնում էր Նիկոլայը և քրքջում ասելով.

— Ծանր գործ եք տվել ինձ...

Փողոցում ցեխ էր, տների պատուհաններից մարդիկ գլուխները հանել էին և սուլում, գոռում, ձեռքերը թափ էին տալիս։ Օրը պարզ էր, արևը վառում էր պայծառ, իսկ շվաք չկար ոչ մի տեղ։

— Երգեցե՛ք, մա՛յր,— ասում էր խոխոլը։— Կյա՞նքն է այսպես։

Եվ երգում է Անդրեյը բոլոր հնչյուններն իր ձայնով խափանելով։ Մայրը գնում էր նրա հետևից, հանկարծ սայթաքեց, արագ թռավ մի անհատակ անդունդ, և այդ խորությունն ահավոր ոռնում էր նրա դեմ...

Նա զարթնեց դողով բռնված։ Կարծես մեկի բիրտ, ծանր ձեռքը ճանկեց նրա սիրտը և չարությամբ խաղալով կամաց-կամաց սեղմում է։ Համառ կերպով շչակն աշխատանքի էր հրավիրում. մայրը որոշեց, որ դա արդեն երկրորդ կանչն է։ Սենյակում անկարգ թափթփված էին գրքեր, ամեն ինչ տեղահանված էր, շուռ տված. հատակը կոխկռտված։

Մայրը վեր կացավ և առանց լվացվելու, առանց աստծուն աղոթելու, սկսեց սենյակը հավաքել։ Խոհանոցում նրա աչքովն ընկավ կտավի կտորը վրան փայտը, նա անբարյացակամորեն ձեռքն առավ և ուզում էր կոխել վառարանի տակ, բայց հառաչելով՝ պոկեց նրանից դրոշակի կտորը, խնամքով ծալեց և դրեց գրպանը, իսկ փայտը ծնկան վրա կոտրեց և գցեց վառարանի առաջակողմը։ Ապա պատուհանը և հատակը սառը ջրով լվաց, ինքնաեռը դրեց, հագնվեց։ Նստեց խոհանոցում պատուհանի մոտ, և նրա առջև նորից ծառացավ մի հարց.

«Հիմա ի՞նչ անել»։

Հիշելով, որ դեռ չի աղոթել, նա կանգնեց սրբապատկերների առջև և մի քանի վայրկյան կանգնած մնալով նորից նըստեց, սիրտը դատարկ էր։

Տարօրինակ անդորրություն էր տիրում, կարծես, մարդիկ, որ երեկ այնքան գոռացել էին փողոցում, այդ օրը թաքնվել էին տներում և լուռ մտածում արտասովոր օրվա մասին։

Հանկարծ մոր միտն ընկավ մի պատկեր, որ նա տեսել էր մի անգամ իր երիտասարդության օրերին. պարոն Ջաուսայլովների հին պուրակում մի մեծ լճակ կար՝ հարսնամատներով խիտ ծածկված։ Աշնան մի գորշ օր նա անցնում էր լճակի մոտով և նրա մեջ տեսավ մի մակույկ։ Լճակի ջուրը սև էր, խաղաղ, և

մակույկը կարծես սոսնձված էր սև ջրին, որը խիտ զարդարված էր դեղին տերևներով։ Խորին տխրություն, շտեսնված վիշտ էր հառնում թիակ և ձող չունեցող այդ մակույկից, որ միայնակ, անշարժ ընկած էր փայլատ ջրի վրա, մեռած տերևների մեջ։ Մայրն այն ժամանակ երկար կանգնեց լճափին, մտածելով, այդ ո՞վ է ափից մակույկը դեն հրել, ինչո՞ւ։ Նույն օրվա երեկոյան իմացան, որ լճակում խեղդվել է Զաուսայլովների գործակատարի կինը, սև, միշտ գզգզված մազերով, արագ քայլող մի փոքրիկ կին։

Մայրը ձեռքը քսեց դեմքին, և նրա միտքը դողդոջուն կերպով դուրս լողաց երեկվա տպավորությունների վրա։ Այդ տպավորություններով համակված՝ մայրը երկար նստած էր, աչքերը սառած թեյի բաժակին հառած, իսկ նրա հոգում վառվում էր մի խելոք, պարզ մարդ տեսնելու, նրանից շատ բան հարցնելու ցանկությունը։

Եվ կարծես նրա ցանկությանն ընդառաջելով՝ կեսօրից հետո եկավ Նիկոլայ Իվանովիչը։ Բայց երբ մայրը նրան տեսավ, հանկարծ մի անհանգստություն տիրեց իրեն, և նրա ողջույնին չպատասխանելով կամաց ասաց.

— Վա՜յ, սիրելի՛ս, միանգամայն զո՞ւր եք եկել։ Անզգույշ բան եք արել, չէ՞ որ ձեզ կբռնեն, եթե տեսնեն...

Մոր ձեռքն ամուր սեղմելով՝ Նիկոլայ Իվանովիչն ուղղեց ակնոցը և դեմքը մոտեցնելով նրան՝ շտապ խոսքերով բացատրեց.

— Ես, գիտե՞ք, Պավելի և Անդրեյի հետ պայմանավորվել եմ, որ եթե նրանց ձերբակալելու լինեն, մյուս օրը ձեզ պետք է քաղաք փոխադրեմ,— ասաց նա սիրալիր և մտահոգված։— Ձեզ մոտ խուզարկություն եղա՞վ։

— Եղավ։ Տակնուվրա արին, պտրտեցին։ Այդ մարդիկ ոչ ամոթ ունեն, ոչ խիղճ,— բացականչեց մայրը։

— Ամոթը նրանց ինչի՞ն է պետք,— ուսերը թոթվելով ասաց Նիկոլայը և սկսեց պատմել, թե ինչո՞ւ է հարկավոր, որ մայրը քաղաքում ապրի։

Մայրը լսում էր այդ բարեկամական հոգատար ձայնը, նայում էր Նիկոլային գունատ ժպիտով և նրա ապացույցները չհասկանալով՝ զարմանում էր դեպի այդ մարդն ունեցած սիրալիր վստահության իր զգացմունքի վրա։

— Եթե Պաշան այդպես է ցանկացել,— ասաց նա,— և եթե ձեզ նեղություն չեմ պատճառի...

Նիկոլայն ընդհատեց նրան.

— Այդ մասին մի՛ անհանգստանաք։ Ես մենակ եմ ապրում, միայն երբեմն քույրս է գալիս։

— Ջրի հաց չեմ ուտի,— բարձրաձայն մտածում էր նա։

— Ուղենաք՝ գործ կճարվի՞,— պատասխանեց Նիկոլայը։

Մոր համար գործ հասկացողությունն արդեն անքակտելիորեն միանում էր որդու և Անդրեյի ու ընկերների աշխատանքի պատկերացմանը։ Նա մոտեցավ Նիկոլային և նայելով նրա աչքերի մեջ հարցրեց.

— Կճարվի՞։

— Իմ տնտեսությունը փոքր է, ամուրի մարդու տնտեսություն է...

— Ես դրա մասին, տնայինի մասին չեմ հարցնում,— կամաց ասաց մայրը։

Եվ տրտում հառաչեց իրեն վիրավորված զգալով, որ Նիկոլայն իրեն չի հասկացել։ Նիկոլայը իր կարճատես աչքերով ժպտալով մտախոհ ասաց.

— Ա՜յ, եթե դուք Պավելի հետ տեսակցելիս աշխատեիք իմանալ նրանից այն գյուղացիների հասցեն, որոնք խնդրել էին թերթ հրատարակել...

— Ես նրանց ճանաչում եմ,— բացականչեց մայրն ուրախացած։— Կգտնեմ և ամեն բան կանեմ, ինչպես կասեք։ Ո՞վ կկարծի, որ ես արգելված բան եմ տանում։ Գործարան հո տանում էի, փա՜ռք աստծո։

Հանկարծ նա ցանկություն ունեցավ որևէ տեղ գնալ ճանապարհներով, անտառների և գյուղերի մոտով, մախաղն ուսից կախած, փայտը ձեռքին։

— Սիրելի՛ս, դուք ինձ այդ գործի վրա դրեք, խնդրում եմ ձեզ,— ասում էր մայրը։ Ես ձեզ համար ամեն տեղ կգնամ։ Բոլոր նահանգները կգնամ բոլոր ճանապարհները կգտնեմ։ Կգնամ ձմեռ ու ամառ, մինչև գերեզման մտնելս, պանդուխտ լինելը մի՞թե վատ վիճակ է ինձ համար։

Նա տխրեց, երբ մտածեց, որ պիտի դառնա անտուն-անօթևան պանդուխտ, որը գյուղական խրճիթների պատուհանների տակ ողորմություն է խնդրում ի սեր Քրիստոսի։

Նիկոլայն զգուշությամբ վերցրեց նրա ձեռքը և շոյեց իր տաք ձեռքով։ Ապա ժամացույցին նայելով ասաց.

— Այդ մասին մենք հետո կխոսե՛նք։

— Սիրելի՛ս,— բացականչեց մայրը։— Երեխաները, մեր սրտի ամենաթանկագին կտորները, իրենց աղատությունն ու կյանքը զոհում են, կորչում առանց իրենց խղճալու, իսկ ես ի՞նչ եմ, մայր չե՞մ։

Նիկոլայի դեմքը գունատվեց, նա սիրալիր ուշադրությամբ մորը նայելով հանդարտ ասաց.

— Ես, գիտե՞ք, առաջին անգամն եմ այդպիսի խոսքեր լսում...

— Ես ի՞նչ կարող եմ ասել,— գլուխը տխուր օրորելով ասաց մայրը և տկար շարժումով ձեռքերը տարածեց։— Եթե ես բառեր ունենայի՛, որ պատմեի իմ մայրական սրտի մասին...

Նա վեր կացավ՝ բարձրացվելով այն ուժով, որ աճում էր իր սրտում և հարբեցնում գլուխը զայրույթի բառերի հախուռն թափով։

— Շատերը լաց կլինեին... Նույնիսկ չարերը, անխիղճները...

Նիկոլայը նույնպես վեր կացավ նորից նայելով ժամացույցին։

— Ուրեմն որոշված է, դուք գալիս եք քաղաք ինձ մոտ։

Մայրը լուռ գլխով արեց։

— Ե՞րբ։ Շտապեցե՛ք,— խնդրեց Նիկոլայը և քնքշորեն ավելացրեց։— Ձեզ համար անհանգստանալու եմ. ճշմարիտ։

Մայրը զարմանքով նայեց նրան,— ինչո՞վ է հետաքրքիր ինքը նրա համար։ Գլուխը կախած, շփոթված ժպտալով՝ Նիկոլայը կանգնած էր իր առջև կոր ու կարճատես, հասարակ սև պիջակը հագին և վրայի ամեն ինչը ոչ իրենը...

— Դուք փող ունե՞ք,— հարցրեց Նիկոլայը աչքերը ցած գցելով։

— Ո՛չ։

Նիկոլայը գրպանից արագ հանեց քսակը, բաց արեց և մեկնեց մորը։

— Ահա, խնդրեմ, վերցրե՛ք...

Մայրն ակամա ժպտաց և գլուխն օրորելով նկատեց.

— Ամեն ինչ նոր ձևով է։ Փողն էլ արժեք չունի։ Մարդիկ դրա համար իրենց հոգին են կորցնում, իսկ ձեզ համար՝ մի

առանձին բան չի՛։ Կարծես թե մարդկանց շնորհ անելու համար եք ձեզ մոտ փող պահում։

Նիկոլայը ցածրաձայն ծիծաղեց։

— Սարսափելի անհարմար և անդուրեկան բան է փողը։ Միշտ մարդ քաշվում է և՛ վերցնելուց, և՛ տալուց...

Նա վերցրեց մոր ձեռքը, ամուր սեղմեց և կրկին անգամ խնդրեց նրան.

— Ուրեմն շո՛ւտ արեք։

Եվ հանգիստ՝ ինչպես միշտ, հեռացավ։

Նրան ճանապարհ դնելով մայրը մտածեց.

«Այդպես բարի է, բայց չխղճաց»։

Եվ չկարողացավ հասկանալ իր համար տհաճ է այդ, թե՞ միայն զարմանալի։

II

Մայրը պատրաստվում էր Նիկոլայի մոտ գնալ նրա այցելության չորրորդ օրը։ Երբ սայլը նրա երկու արկղները բարձած ավանից դուրս եկավ դաշտը, մայրը ետ նայելով՝ հանկարծ զգաց, որ ընդմիշտ թողնում է այն վայրը, որտեղ անցել է նրա կյանքի մութ և ծանր ժամանակաշրջանը, որտեղ սկսվել է մի ուրիշ, լի նոր վշտով և ուրախությամբ, օրերն արագ կլանող մի շրջան։

Մրից սևացած գետնի վրա ահագին մուգ կարմիր սարդի պես փռվել էր գործարանը՝ բարձր, դեպի երկինք ցցած իր ծխնելույզներով։ Նրան սեղմվել էին բանվորների միհարկանի տնակները։ Գորշ, տափակած, նրանք հոծ կուտակված խմբվել էին ճահճի եզրին և խեղճ-խեղճ իրար էին նայում փոքրիկ, աղոտ պատուհաններով։ Նրանց վրա բարձրացել էր եկեղեցին, նույնպես մուգ կարմիր, գործարանի գույնի. նրա զանգակատունը գործարանի ծխնելույզներից ցածր էր։

Մայրը հառաչելով ուղղեց զգեստի օձիքը, որ կոկորդը խեղդում էր։

— Քայլի՛ր,— քրթմնջաց սայլապանը սանձը ձիու վրա շարժելով։ Դա ոտը ծուռ մի մարդ էր, անորոշ տարիքի, դեմքին և գլխին նոսր, գունազուրկ մազերով, անգույն աչքերով։ Կողքից կողք ճոճվելով՝ նա գնում էր սայլի կողքով, և պարզ էր, որ նրա համար նույնն է՝ աջ գնա, թե՛ ձախ, ուր կուզի լինի։

— Քայլի՛ր,— ասում էր նա դժգույն ձայնով և ծիծաղելի

կերպով առաջ էր նետում իր ծուռ-ծուռ ոտները՝ չորացած ցեխը վրան ծանր կոշիկներով։ Մայրը շուրջը նայեց. դաշտն ամայի էր, ինչպես իր հոգին...

Գլուխը վհատ շարժելով՝ ձին ոտները ծանր-ծանր հենում էր խոր, արևից տաքացած ավազին, որը կամաց խշխշում էր։ Ճռռում էր վատ ձյութված, կոտրտված սայլը, և բոլոր հնչյունները փոշու հետ միասին մնում էին հետևում...

Նիկոլայ Իվանովիչն ապրում էր քաղաքի ծայրում, մի ամայի փողոցում, երկհարկանի, հնությունից ուռած, մի մութ տան կից փոքրիկ ֆլիգելում։ Ֆլիգելի առջև կար մի ցցապատ պարտեզ և բնակարանի երեք սենյակի պատուհաններով սիրալիր նայում էին հասմիկի, հակակու ճյուղերը, մատղաշ բարդիների սրծաթագույն տերևները։ Սենյակները խաղաղ էին, մաքուր, հատակի վրա անմռունչ դողում էին նկարի ստվերները, պատերի վրա ձգվում էին դարակները, վրաները խիտ դասավորված գրքեր, և կախված էին ինչ-որ լուրջ մարդկանց նկարներ։

— Ձեզ համար այստեղ հարմա՞ր կլինի,— հարցրեց Նիկոլայը՝ առաջնորդելով մորը մի ոչ մեծ սենյակ, որի մի լուսամուտը նայում էր դեպի ցցապատ պարտեզը, իսկ մյուսը՝ դեպի խոտով խիտ ծածկված բակը։ Այս սենյակում էլ բոլոր պատերը բռնված էին պահարաններով և գրքերի դարակներով։

— Ավելի լավ կլիներ՝ ես խոհանոցում տեղավորվեի,— ասաց մայրը։— Խոհանոցը լուսավոր, մաքուր է...

Մորը թվաց, թե Նիկոլայն ինչ-որ բանից վախեցավ։ Իսկ երբ նա անպատեհ և շփոթված սկսեց հորդորել մորը և մայրը համաձայնեց, Նիկոլայն իսկույն ուրախացավ։

Բոլոր երեք սենյակներն էլ լի էին մի ինչ-որ հատուկ օդով,— հեշտ և դուրեկան էր շնչել, բայց մարդու ձայնն ակամայից ցածրանում էր, մարդ չէր ուզում բարձր խոսելով խանգարել պատերից կենտրոնացած հայացքով նայող մարդկանց խաղաղ մտախոհությունը։

— Ծաղիկները հո հարկավոր է ջրել,— ասաց մայրը՝ շոշափելով պատուհաններում դրված ծաղկամանների հողը։

— Այո՛, այո՛,— ամոթապարտ ասաց տանտերը։— Գիտե՞ք, ես սիրում եմ ծաղիկներ, բայց դրանցով զբաղվելու ժամանակ չունեմ...

Նրան դիտելով՝ մայրը տեսնում էր, որ իր հարմարավոր բնակարանում ևս Նիկոլայը շրջում էր զգույշ, խորթ և հեռու այն ամենից, ինչ որ շրջապատում է իրեն։ Նա իր դեմքն ընդհուպ

մոտեցնում էր այն բանին, ինչի որ նայում էր, և աջ ձեռքի բարակ մատներով ակնոցն ուղղելով՝ աչքերը կուչ էր ածում, անմռունչ հարցով նշան բռնելով իրեն հետաքրքրող առարկային։ Նա երբեմն առարկան վերցնում էր, մոտեցնում դեմքին և խնամքով զննում աչքերով, թվում էր, թե նա սենյակ էր մտել մոր հետ միասին, և ինչպես մորը, այնպես էլ իրեն այդտեղ ամեն ինչ անծանոթ էր, անսովոր։ Նրան այդպես տեսնելով՝ մայրը միանգամից զգաց, որ այդ սենյակներում ինքն իր տեղումն է։ Նա գնում էր Նիկոլայի հետևից, նկատելով, թե ինչը որտեղ է գտնվում, հարցնում էր այդտեղ տիրող ապրելակերպի մասին. Նիկոլայը նրան պատասխանում էր այնպիսի մի մարդու հանցավոր տոնով, որը գիտե, որ ամեն բան անում է ոչ այնպես, ինչպես պետք է, բայց ուրիշ կերպ էլ չի կարող։

Ծաղիկները շրջելով և դաշնամուրի վրա թափթփված նոտաները կանոնավոր դարսելով՝ մայրը նայեց ինքնաեռին և նկատեց.

— Պետք է մաքրել...

Նիկոլայը մատները քսեց աղոտ մետաղին, մատը տարավ դեպի քիթը և լրջորեն զննեց։ Մայրը սիրալիր քմծիծաղեց։

Երբ մայրը պառկեց քնելու և հիշեց իր անցկացրած օրը, գլուխը զարմացած բարձրացրեց բարձից՝ շուրջը նայելով։ Ամբողջ կյանքում առաջին անգամն էր նա ուրիշի տանը և դրանից չէր քաշվում։ Նա Նիկոլային նայում էր հոգատարությամբ, ցանկություն էր զգում նրա համար ամեն բան անել որքան կարելի է լավ, նրա կյանքի մեջ մտցնել մի սիրալիր, ջերմացնող բան։ Նրա սիրտը հուզում էր Նիկոլայի անշնորհքությունը, ծիծաղելի անկարողությունը, նրա խորթացումը սովորականից և նրա պայծառ աչքերի ինչ-որ մի խելացի մանկական բանը։ Հետո մոր միտքը համառորեն կանգ առավ որդու վրա և նրա առջև նորից ծավալվեց Մայիսի մեկի օրը՝ ամբողջովին նոր հնչյուններով, նոր իմաստով թևավորված։ Եվ այդ օրվա վիշտը՝ ինչպես այդ ամբողջ օրը, առանձնահատուկ էր. դա գլուխը դեպի գետին չէր ծռում, ինչպես բռունցքի բութ, խլացուցիչ հարված, դա ծակոտում էր սիրտը բազմաթիվ ծակոցներով և նրա մեջ առաջացնում մի մեղմ զայրույթ՝ կորացած մեջքը շակելով։

«Երեխաները շրջում են աշխարհում», մտածում էր նա ականջ դնելով քաղաքի գիշերային կյանքի անծանոթ հնչյուններին։ Դրանք ներս էին սողում բաց պատուհաններով, խշխշաց-

նում պարտեզի սաղարթը, թռչում գալիս էին հեռվից, հոգնած, գունատ և խաղաղ մեռնում սենյակում։

Վաղ առավոտյան մայրն ինքնաեռը մաքրեց, եռացրեց, անաղմուկ հավաքեց ամանեղենը և խոհանոցում նստելով սկսեց սպասել, թե երբ է զարթնելու Նիկոլայը։ Լսվեց Նիկոլայի հազը, և նա երևաց շեմքում՝ մի ձեռքում ակնոցը բռնած, մյուսով կոկորդը ծածկելով։ Նրա բարևին պատասխանելով մայրն ինքնաեռը տարավ սենյակ, իսկ Նիկոլայը փնչացնելով սկսեց լվացվել ջուրը գետնին թափելով, գցելով օճառը, ատամի խոզանակը։

Թեյի ժամանակ Նիկոլայը պատմեց նրան.

— Ես զեմստվոյի վարչության մեջ զբաղվում եմ մի տխուր աշխատանքով, դիտում եմ, թե ինչպես են քայքայվում մեր գյուղացիները...

Եվ ժպտալով հանցավոր կերպով կրկնեց.

— Սովից հյուծված մարդիկ վաղաժամ գերեզման են մտնում, մանուկները ծնվում են թույլ, կոտորվում աշնան ճանճերի պես, մենք այս բոլորը գիտենք, գիտենք թշվառության պատճառները և դրանք դիտելով ոռճիկ ենք ստանում։ Եվ ուրիշ ոչինչ, ճիշտն ասած...

— Իսկ դուք ի՞նչ է, ուսանո՞ղ եք,— հարցրեց նրան մայրը։

— Ոչ, ես ուսուցիչ եմ։ Հայրս գործարանի կառավարիչ է Վյատկայում, իսկ ես ուսուցիչ եմ դարձել։ Բայց գյուղում ես սկսեցի մուժիկներին գրքեր տալ, և դրա համար ինձ բանտ նստեցրին։ Բանտից հետո մի գրախանութում գործակատար էի, բայց ինձ անզգույշ պահեցի և նորից բանտ ընկա, հետո Արխանգելսկ աքսորեցին։ Այնտեղ էլ անախորժություններ ունեցա նահանգապետի հետ, ինձ ուղարկեցին Սպիտակ ծովի ափը մի գյուղակ, ուր հինգ տարի ապրեցի։

Լուսավոր, արևոտ սենյակում նրա ձայնը հնչում էր խաղաղ և համաչափ։ Մայրն արդեն շատ էր լսել այդպիսի պատմություններ և երբեք չէր հասկացել, թե ինչու են դրանք այդպես հանգիստ պատմում, դրանց վերաբերվելով որպես մի անխուսափելի բանի։

— Քույրս այսօր գալու է,— հաղորդեց Նիկոլայը։

— Ամուսնացա՞ծ է։

— Այրի է։ Նրա ամուսինը Սիբիր էր աքսորված, բայց այնտեղից փախավ և թոքախտով մեռավ արտասահմանում սրանից երկու տարի առաջ...

— Ձեր քույրը ձեզանից փո՞քր է։

— Մեծ է վեց տարով։ Ես նրան շատ բան եմ պարտական։ Ա՛յ, դուք նրան կլսեք, կտեսնեք ինչպես է նվագում։ Սա նրա դաշնամուրն է... այստեղ նա ընդհանրապես շատ բան ունի, իմ գրքերն են...

— Իսկ նա ո՞րտեղ է ապրում։

— Ամեն տեղ,— պատասխանեց Նիկոլայը ժպտալով։— Ուր խիզախ մարդու կարիք կա, նա էլ այնտեղ է։

— Նա է՞լ այս գործի մեջ է,— հարցրեց մայրը։

— Իհարկե՛,— ասաց Նիկոլայը։

Նա շուտով գնաց ծառայության, իսկ մայրն սկսեց մտածել «այդ գործի» մասին, որ օրեցօր մարդիկ համառորեն և հանգիստ կատարում են։ Եվ նա իրեն այդ մարդկանց առջև զգում էր այնպես, ինչպես մարդ կարող է զգալ սարի առջև գիշեր ժամանակ։

Կեսօրին մոտ եկավ մի սևազգեստ, բարձրահասակ և բարեկազմ տիկին։ Երբ մայրը դուռը բաց արեց նրա առաջ, նա հատակին գցեց փոքրիկ, դեղին ճամպրուկը և Վլասովայի ձեռքն արագ բռնելով հարցրեց.

— Դուք Պավել Միխայլովիչի մայրի՞կն եք, այո՞։

— Այո,— պատասխանեց մայրը նրա ճոխ զգեստից շփոթված։

— Ես ձեզ այդպես էլ պատկերացնում էի։ Եղբայրս գրել էր, որ դուք իր մոտ պետք է ապրեք,— ասում էր տիկինը՝ հայելու առջև գլխարկը հանելով։— Ես և Պավել Միխայլովիչը վաղուց բարեկամներ ենք։ Նա ինձ պատմել է ձեր մասին։

Նրա ձայնը խլավուն էր, խոսում էր դանդաղ, բայց շարժվում էր ուժեղ և արագ։ Մեծ-մեծ մոխրագույն աչքերը ժպտում էին երիտասարդական և պայծառ ժպիտով, իսկ քունքերին արդեն փայլում էին բարակ ճառագայթաձև կնճիռներ և փոքրիկ ականջաբլթակների վրա արծաթափայլում էին ալեխառն մազերը։

— Քաղցա՛ծ եմ,— հայտնեց նա։— Մի գավաթ սուրճ լիներ, կխմեի...

— Հենց հիմա կեփեմ,— արձագանքեց մայրը և պահարանից հանելով սուրճի սպասքը՝ կամացուկ հարցրեց.— բայց մի՞թե Պաշան խոսում էր իմ մասին։

— Շատ...

Նա հանեց կաշվե փոքրիկ պորտսիգարը, մի ծխախոտ վառեց և սենյակում շրջելով հարցրեց մորը.

— Դուք շա՞տ եք վախենում նրա համար։

Դիտելով, թե ինչպես են դողում կրակի կապույտ լեզուները սպիրտի ճրագի վրա դրված սրճամանի տակ, մայրը ժպտում էր։ Տիկնոջ հանդեպ ունեցած նրա շփոթմունքը չքացավ ուրախության խորքում։

«Ուրեմն նա իմ մասին պատմում է. լավի՞կս»,— մտածում էր մայրը և միևնույն ժամանակ դանդաղ ասում.— իհարկե, հեշտ բան չի, բայց առաջներն ավելի վատ կլիներ, հիմա ես գիտեմ, նա մենակ չի...

Ապա, կնոջ դեմքին նայելով, հարցրեց նրան.

— Իսկ ի՞նչպես է ձեր անունը։

— Սոֆյա,— պատասխանեց կինը։

Մայրն ուշի-ուշով դիտեց նրան։ Այդ կնոջ մեջ կար մի ինչոր փարթամ, չափազանց ժիր և փութկոտ բան։

Սուրճն արագ խմելով նա վստահորեն ասաց.

— Գլխավորն այն է, որ նրանք բանտում երկար չնստեն, նրանց շուտո՛վ դատապարտեն։ Իսկ հենց որ աքսորեն, մենք իսկույն ևթ կհաջողացնենք Պավել Միխայլովիչի փախուստը, նա անհրաժեշտ է այստեղ։

Մայրը թերհավատորեն նայեց Սոֆյային, իսկ նա աչքերով ծխախոտի մնացորդը գցելու տեղ որոնելով՝ խրեց ծաղկամանի հողի մեջ։

— Ծաղիկները դրանից փչանում են,— մեքենայորեն նկատեց մայրը։

— Ներեցե՛ք,— ասաց Սոֆյան։— Նիկոլայն էլ է միշտ ասում ինձ այդ։— Եվ ծաղկամանից գլանակի մնացորդը հանելով նա լուսամուտից դուրս շպրտեց։

Մայրը շփոթված նայեց նրա դեմքին և ամաչելով ասաց.

— Դուք ինձ ներեցե՛ք։ Ես այդ այնպե՛ս ասացի, առանց մտածելու։ Մի՞թե ես կարող եմ ձեզ բան սովորեցնել։

— Իսկ ինչո՞ւ չպիտի սովորեցնեք, քանի որ ես փնթի եմ,— արձագանքեց Սոֆյան ուսերը թոթվելով։— Սուրճը պատրաստ է։ Շնորհակալություն։ Իսկ ինչո՞ւ միայն մի՛ բաժակ է։ Դուք չե՞ք խմելու։

Եվ հանկարծ մոր ուսերից բռնելով, քաշելով դեպի իրեն և աչքերին նայելով զարմացած հարցրեց.

— Մի՞թե դուք քաշվում եք։

Մայրը ժպտալով պատասխանեց.

— Հենց նոր ասացի ձեզ ծխախոտի մնացորդի մասին, իսկ դուք ինձ հարցնում եք՝ քաշվո՞ւմ եմ։

Եվ չթաքցնելով իր զարմանքը, նա ասաց կարծես հարցնելով.

— Երեկ եմ եկել ձեզ մոտ, իսկ ինձ պահում եմ ինչպես իմ տանը, ոչնչից չեմ վախենում, խոսում եմ, ինչ որ ուզում եմ...

— Այդպես էլ պե՛տք է,— բացականչեց Սոֆյան։

— Գլուխս պտտվում է, և կարծես ինքս ինձ համար օտար եմ,— շարունակեց մայրը։— Մի ժամանակ շատ անգամ կգայի, կգնայի մեկի մոտ, մինչև որ մի բան ասեի սրտանց, իսկ հիմա՝ հոգիս միշտ բաց է, և միանգամից ասում եմ այն, ինչ որ առաջները մտքովս էլ չէր անցնի...

Սոֆյան նորից մի ծխախոտ վառեց, սիրալիր և լուռ լուսավորելով մոր դեմքն իր մոխրագույն աչքերով։

— Դուք ասում եք՝ փախո՞ւստ եք կազմակերպելու։ Է՛, բայց նա ի՞նչպես պիտի ապրի, փախստակա՞ն,— ասաց մայրը իրեն հուզող հարցը։

— Դա դատա՞րկ բան է,— պատասխանեց Սոֆյան իր համար կրկին սուրճ լցնելով։— Կապրի այնպես, ինչպես ապրում են տասնյակ փախածներ... Ես, ա՛յ, հենց նոր պատահեցի և ճանապարհ դրի մեկին, նույնպես շատ արժեքավոր մարդ է, աքսորված է եղել հինգ տարով, իսկ աքսորում մնացել է երեք և կես ամիս...

Մայրն ուշադրությամբ նայեց նրան, ժպտաց և գլուխն օրորելով կամաց ասաց.

— Չէ՛, ինչպես երևում է, տրորել է ինձ այդ օրը, Մայիսի մեկը։ Մի տեսակ անհարմար դրության մեջ եմ, և կարծես միանգամից երկու ճանապարհով եմ գնում. երբեմն ինձ թվում է, թե ամեն ինչ հասկանում եմ, բայց հանկարծ՝ կարծես մառախուղի մեջ եմ ընկել։ Ա՛յ, հիմա, դուք, նայում եմ ձեզ, տիրուհի՛ եք, և զբաղվում եք այդ գործով... Պաշային ճանաչում եք և գնահատում եք նրան, շնորհակալ եմ ձեզանից...

— Է՛, դրա համար արդեն ձեզանից պետք է շնորհակալ լինել,— ծիծաղեց Սոֆյան։

— Ես՝ ի՞նչ։ Նրան այդ բանը ե՛ս չեմ սովորեցրել,— հառաչելով ասաց մայրը։

Սոֆյան ծխախոտի մնացորդները դրեց իր գավաթի պնակում, գլուխը թափահարեց, նրա ոսկեգույն մազերը խիստ փընջերով մեջքին փռվեցին, և նա գնաց ասելով.

— Է՜հ, ժամանակն է, որ վրայիցս հանեմ այս բոլոր շքեղությունը...

III

Երեկոյան դեմ եկավ Նիկոլայը։ Ճաշեցին, և ճաշի շուրջ Սոֆյան պատմում էր ծիծաղելով, թե ինչպես էր պատահել և թաքցրել աքսորից փախած մի մարդու, ինչպես էր վախենում լրտեսներից՝ բոլոր մարդկանց լրտես համարելով, և ինչ ծիծաղելի էր պահում իրեն այդ փախածը։ Նրա տոնի մեջ մի բան կար, որը մորը հիշեցնում էր այն բանվորի պարծենկոտությունը, որը մի դժվար աշխատանք լավ է կատարել և գոհ է։

Այժմ Սոֆյան հագել էր պողպատագույն, թեթև, լայն զգեստ։ Այդ զգեստով նա ավելի բարձրահասակ էր երևում, նրա աչքերը կարծես ավելի մգացել էին, և շարժումներն ավելի հանգիստ էին դարձել։

— Սո՜ֆյա,— ասաց Նիկոլայը ճաշից հետո,— դու պետք է մի գործ ևս հանձն առնես։ Դու գիտես, մենք սկսել ենք գյուղի համար թերթ հրատարակել, բայց այնտեղի մարդկանց հետ կապը կտրված է վերջին ձերբակալությունների պատճառով։ Ահա միայն Պելագեյա Նիլովնան է կարող մեզ ցույց տալ, թե ինչպես գտնել մեկին, որն իր վրա վերցնի թերթի տարածումը։ Դու նրա հետ գնա այնտեղ։ Շուտ է հարկավոր։

— Լա՜վ,— ծխախոտը ծխելով ասաց Սոֆյան։— Գնա՜նք, Պելագեյա Նիլովնա։

— Ի՞նչ կա որ, գնանք...

— Հեռո՞ւ է։

— Ութսուն վերստ կլինի...

— Հրաշալի՜... Իսկ այժմ ես մի քիչ կնվագեմ։ Դուք ինչպես եք, Պելագե՜յա Նիլովնա, կարո՞ղ եք մի քիչ երաժշտություն լսել։

— Դուք ինձ մի՜ հարցնեք,— այնպես համարեցեք, թե ես այստեղ չեմ,— ասաց մայրը նստելով բազմոցի անկյունում։ Նա տեսնում էր, որ եղբայր և քույր կարծես նրա վրա ուշադրություն չեն դարձնում, և միևնույն ժամանակ այնպես էր դուրս գալիս,

որ ինքն ամբողջ ժամանակ ակամա խառնվում էր նրանց խոսակցությանը, նրանց կողմից աննկատելիորեն ներգրավվելով։

— Ա՜յ, լսի՜ր, Նի՜կոլայ։ Սա Գրիգն է։ Ես այսօր բերի... Պատուհանները փակիր։

Նա բաց արեց նոտաները, ձախ ձեռքով ոչ ուժեղ խփեց ստեղներին։ Լարերը հյութեղ և թանձր հնչեցին։ Խոր շնչելով՝ նրանց միացավ հնչյունով հարուստ մի նոտա ևս։ Աջ ձեռքի մատների տակից պայծառ հնչեցին, անհանգիստ երամի նման թռան լարերի տարօրինակ թափանցիկ ճիչերը և երերացին, ընդհարվեցին վախեցած թռչունների պես ցածր նոտաների մութ ֆոնի վրա։

Այդ ձայները սկզբում մորը չէին հուզում, նրանց ընթացքի մեջ նա միայն հնչող քաոս էր լսում։ Նրա լսողությունը չէր կարող ըմբռնել մեղեդին նոտաների զանգվածի բարդ թրթռումի մեջ։ Կիսանստելով նա նայում էր Նիկոլային, որը ոտները ծալած՝ նստած էր լայն բազմոցի ծայրին, մայրը դիտում էր Սոֆյայի լուրջ կիսադեմքը և ոսկեգույն մազերի ծանր դանգվածով ծածկված նրա գլուխը։ Արևի ճառագայթն առատ ջերմությամբ լուսավորում էր Սոֆյայի գլուխը և ուսը, ապա ընկավ դաշնամուրի ստեղների վրա և թովեց կնոջ մատների տակ, պարուրելով նրանց։ Երաժշտությունն ավելի և ավելի հոծ լցնում էր սենյակը և մոր համար աննկատելիորեն արթնացնում էր նրա սիրտը։

Եվ հայտնի չէ, թե ինչու անցյալի մութ փոսից ծառանալ սկսեց իր կրած մի վիրավորանքը, որ վաղուց մոռացել էր, բայց այժմ դառն պարզությամբ հարություն էր առել։

Մի անգամ հանգուցյալ ամուսինը տուն եկավ ուշ գիշերով, սաստիկ հարբած, իր ձեռքից բռնեց, նետեց անկողնից հատակին, ոտքով խփեց կողքին ու ասաց.

— Դո՜ւրս կորիր, գարշելի՜, դու ինձ ձանձրացրել ես։

Նրա հարվածներից իրեն պաշտպանելու համար արագ վերցրեց երկու տարեկան տղային և ծունկ չոքած ծածկվեց նրա մարմնով, ինչպես վահանով։ Տղան լալիս էր, թպրտում էր իր ձեռքերում վախեցած, մերկ ու տաքուկ։

— Կորի՜ր,— գոռում էր Միխայիլը։

Մայրը ոտքի թռավ, նետվեց խոհանոց, ուսին գցեց կոֆտան, երեխային փաթաթեց շալի մեջ և լուռ, առանց ճիչերի ու բողոքների, բոբիկ, միայն շապիկով և կոֆտան վրայից

հագած սկսեց փողոցով գնալ։ Մայիս էր, գիշերը զով. փողոցի փոշին սա-սառ կպչում էր ոտներին՝ մատների արանքը լցվելով։ Երեխան լալիս էր, թպրտում։ Կուրծքը բաց արեց, որդուն սեղմեց իր մարմնին և երկյուղից հալածված գնում էր փողոցով, գնում, մեղմիկ օրոր ասելով.

— Օ՜-օ՜-օ՜... օ՜-օ՜-օ՜...

Արդեն լուսանում էր, նա վախենում էր և ամաչում՝ սպասելով, որ որևէ մեկը փողոց դուրս կգա, իրեն կտեսնի կիսամերկ։ Նա գնաց ճահիճը և նստեց գետնին, մատղաշ կաղամախիների խիտ խմբի տակ։ Եվ այդպես նստած էր երկար, գիշերվա խավարով պարուրված, լայն բացված աչքերով անշարժ նայելով մութի մեջ, և վախվխելով երգում էր՝ օրորելով քնած մանկանը և իր վիրավոր սիրտը...

— Օ՜-օ՜-օ՜... օ՜-օ՜-օ՜... օ՜-օ՜-օ՜-օ՜...

Այնտեղ նրա անցկացրած բոպեներից մեկում նրա գլխավերևը երևաց հեռու թռչող ինչ-որ սև, խաղաղ թռչուն, նա մորը արթնացրեց, տեղից վեր կացրեց։ Ցրտից դողալով մայրը բռնեց տան ճամփան, ծեծի սովորական սարսափին և նոր վիրավորանքներին ընդառաջ գնալով...

Վերջին անգամ հառաչեց մի մեծաձայն ակկորդ, անտարբեր, սառն, հառաչեց և մեռավ։

Սոֆյան երեսը պարձրեց՝ եղբորը կամաց հարցնելով.

— Դո՞ւր եկավ։

— Շա՜տ,— ասաց Նիկոլայը արթնացածի պես ցնցվելով։— Շա՜տ...

Մոր կրծքում երգում և դողում էր հիշողությունների արձագանքը։ Եվ ինչ-որ մի կողմ, կողմնակի, տարածվում էր միտքը.

«Ա՜յ, ապրում են մարդիկ, միաբան, խաղաղ։ Չեն հայհոյում, օրի չեն խմում, մի կտոր հացի համար չեն վիճում... ինչպես այդ լինում է սև կյանքի մարդկանց մեջ...»

Սոֆյան ծխախոտ էր ծխում։ Նա շատ էր ծխում, գրեթե անընդհատ։

— Սա հանգուցյալ Կոստյայի սիրած բանն է,— ասաց նա՝ ծուխն արագ ներս քաշելով, և նորից վերցրեց ցածր, տխուր ակկորդը։ Ի՜նչպես սիրում էի նվագել նրա համար։ Ի՜նչ զգայուն էր նա, ամեն բանի արձագանքող, ամեն ինչով լի...

«Մարդուն է հիշում երևի,— անցողակի նկատեց մայրը։— Իսկ՝ ժպտում է...»

— Որքա՜ն երջանկություն տվեց ինձ այդ մարդը...— կամաց ասում էր Սոֆյան՝ իր խոհերին ընկերակցելով լարերի թեթև հնչյունները։— Ի՜նչպես էր կարողանում ապրել...

— Այո՜-ո՜,— ասաց Նիկոլայը՝ մորուքը քրքրելով։— Քաղցրահնչյուն հոգի էր...

Սոֆյան ինչ-որ տեղ նետեց նոր սկսած ծխախոտը, դարձավ դեպի մայրը և հարցրեց նրան.

— Չեզ չի՞ խանգարում իմ աղմուկը, ո՞չ։

Մայրը պատասխանեց սրտնեղությամբ, որը չկարողացավ թաքցնել.

— Դուք ինձ մի՛ հարցնեք, ես ոչինչ չեմ հասկանում։ Նստում եմ, ականջ դնում, մտածում ինքս ինձ...

— Ոչ,— դուք պետք է հասկանաք,— ասաց Սոֆյան։— Կինը չի կարող երաժշտություն չհասկանալ, մանավանդ եթե տխուր է...

Նա ուժգին խփեց ստեղներին և հնչեց մի բարձր ճիչ, կարծես մեկն իր համար սոսկալի մի լուր էր լսել, որը խփել էր իր սրտին և դուրս կորզել այդ ցնցող հնչյունը։ Վախեցած դողդողացին մատաղ ձայները և շտապ, շփոթված նետվեցին մի կողմ. նորից աղաղակեց մի բարձր, զայրագին ձայն՝ ամեն ինչ խլացնելով։ Երևի դժբախտություն էր պատահել, բայց կյանքի էր կոչում ոչ թե բողոքներ, այլ ցասում։ Ապա երևան եկավ սիրալիր, ուժեղ մեկը և երգեց մի պարզ, գեղեցիկ երգ՝ հորդորելով, իրեն հետևելու կոչ անելով։

Մոր սիրտը լցվեց այդ մարդկանց մի լավ բան ասելու ցանկությամբ։ Նա ժպտաց, երաժշտությունից արբեցած, իրեն ընդունակ զգալով եղբոր և քրոջ համար մի ինչ-որ հարկավոր բան անելու։

Եվ աչքերով փնտրելով, թե ինչ կարելի է անել, կամաց գնաց խոհանոց ինքնաեռը դնելու։

Բայց այդ ցանկությունը նրա միջից չքացավ, և թեյ լցնելիս նա խոսում էր՝ շփոթված քմծիծաղելով, և կարծես, իր սիրտը սրբելով ջերմ գգվանքի բառերով, գգվանք, որը տալիս էր հավասարաչափ նրանց և իրեն։

— Մենք, սև կյանքի մարդիկս, ամեն ինչ զգում ենք, բայց մեզ համար դժվար է արտահայտել, մենք ամաչում ենք, որ, ա՜յ, հասկանում ենք, իսկ ասել չենք կարողանում։ Եվ շատ անգամ ամոթից մենք բարկանում ենք մեր մտքերի վրա։ Կյանքն

ամեն կողմից և՛ խփում է, և՛ ծակում, ուզում ես հանգստանալ, իսկ մտքերը խանգարում են։

Նիկոլայը լսում էր ակնոցը սրբելով, Սոֆյան նայում էր իր խոշոր աչքերը լայն բացած և հանգած ծխախոտը ծխելը մոռացած։ Նա նստած էր դաշնամուրի մոտ՝ կիսով չափ դարձած դեպի դաշնամուրը և երբեմն աջ ձեռքի բարակ մատները կամաց կպցնում էր ստեղներին։ Ակկորդն զգուշորեն միաձուլվում էր մոր խոսքին, որը շուտափույթ պարուրում էր նրա զգացմունքները և պարզ, հոգեպարար բառերը։

— Ես, ա՛յ, այժմ կարող եմ մի կերպ խոսել իմ մասին, մարդկանց մասին, որովհետև սկսել եմ հասկանալ, կարող եմ համեմատել։ Առաջներն ապրում էի, բան չկար, որ հետը համեմատեի։ Մեր կենցաղում բոլորը միատեսակ են ապրում։ Իսկ հիմա տեսնում եմ՝ թե ուրիշներն ինչպես են ապրում, հիշում եմ, թե ես ինչպես էի ապրում, և դա՞ռն, ծա՞նր է թվում։

Նա ձայնն իջեցրեց՝ շարունակելով.

— Գուցե ես որևէ բան այնպես չեմ ասում, ինչպես պետք է, գուցե և պետք էլ չի ասել, որովհետև դուք ինքներդ ամեն բան գիտեք...

Արցունքները զրնգացին նրա ձայնի մեջ, և ժպիտն աչքերում ասաց, նրանց նայելով.

— Բայց ուզում եմ սիրտս բանալ ձեր առաջ, որպեսզի տեսնեք դուք, թե ի՞նչպես եմ ես լավը, բարին, ցանկանում ձեզ։

— Մենք այդ տեսնում ենք,— մեղմ ձայնով ասաց Նիկոլայը։

Մայրը չէր կարողանում հագուրդ տալ իր ցանկությանը և նրանց կրկին ասում էր այն, ինչ որ իր համար նոր էր և իրեն թվում էր անգնահատելի կարևոր։ Սկսեց պատմել իր կյանքի մասին, որ անց էր կացրել վիրավորանքների և համբերատար տառապանքի մեջ, պատմում էր անհիշաչարությամբ, շրթունքներին ափսոսանքի քմծիծաղ, բաց անելով տրտում օրերի գորշ փաթեթը, թվելով ամուսնու տված ծեծերը, և ինքը զարմանում էր, թե որքան ընչին էին այդ ծեծերի առիթները, ինքը զարմանում էր, թե ինչպես չէր կարողանում խուսափել այդ ծեծերից...

Նրանք մորը լսում էին լուռ, ճնշված նրա պարզ պատմության խոր մտքից, նրա, որին անասուն էին համարում և որն ինքն էլ երկար ժամանակ և անտրտունջ իրեն այն էր զգում, ինչ որ համարում էին։ Թվում էր, թե հազարավոր կյանքեր են խոսում նրա շրթունքներով. առօրյա և պարզ էր այն ամենը, ինչով նա ապրում էր, բայց այդպես պարզ և սովորական կերպով էր ապրում մարդկանց անթիվ բազմությունն աշխարհում, և նրա պատմությունը սիմվոլի նշանակություն էր ստանում։ Նիկոլայն արմունկները դրեց սեղանին, գլուխն առավ ափերի մեջ և չէր շարժվում՝ ակնոցի վրայով նայելով նրան լարված կկոցված աչքերով։ Սոֆյան ետ էր ընկել աթոռի մեջքին և երբեմն ցնցվում էր՝ բացասաբար շարժելով գլուխը։ Նրա դեմքը ավելի նիհար և գունատ էր դարձել, նա չէր ծխում։

— Մի անգամ ես ինձ դժբախտ համարեցի, ինձ թվաց, թե իմ կյանքը մի տենդ է,— կամաց ասաց Սոֆյան՝ գլուխը կախելով։— Դա աքսորավայրում էր։ Փոքրիկ գավառական քաղաք էր, անելու բան չկար, բացի սեփական անձից ոչինչ չկար, որի մասին մտածեիր։ Ես իրար վրա էի դարսել իմ բոլոր դժբախտությունները և պարապությունից կշռում էի. ահա, կռվել եմ հորս հետ, որին սիրում էի, ինձ դուրս են արել գիմնազիայից և վիրավորել, բանտը, մատնությունը մի ընկերոջ, որ մոտ էր եղել ինձ, ամուսնուս ձերբակալումը, նորից բանտն ու աքսորը, ամուսնուս մահը։ Բայց իմ բոլոր դժբախտությունները— և տասն անգամ է՛լ ավելին — չարժեն ձեր կյանքի մեկ ամսին, Պելագեյա Նիլովնա... Դա ամենօրյա չարչարանք է տարիների ընթացքում... Տանջվելու համար մարդիկ որտեղի՞ց են ուժ ճարում։

— Վարժվում են,— հառաչելով պատասխանեց Վլասովան։

— Ինձ թվում էր, թե ես կյանքը ճանաչում եմ,— մտախոհ ասաց Նիկոլայը։— Բայց երբ կյանքի մասին խոսում է ոչ թե գիրքը և ոչ էլ իմ իրարից անջատ տպավորությունները այլ, ա՛յ, այսպես, ինքը կյանքը, սարսափելի՞ է։ Եվ սարսափելի են մանրմունր բաները, սարսափելի է ոչնչությունը, վայրկյանները, որոնցից տարիներ են կազմվում...

Զրույցը հոսում, ուռճանում էր, ընդգրկելով սև կյանքն ամեն կողմից, մայրը խորանում էր իր հիշողությունների մեջ և անցյալի աղջամուղջից ամենօրյա վիրավորանքներ դուրս քաշելով, ստեղծում էր այն համր սարսափ ծանր պատկերը, որի մեջ սուզված է եղել նրա երիտասարդությունը։ Վերջապես նա ասաց.

— Վա՛յ, ես խոսելով ձեզ հոգնեցրի,— ձեր հանգստանալու ժամանա՛կն է։ Ամբողջը պատմել չի լինի...

Քույր ու եղբայր լուռ հրաժեշտ տվին նրան։ Մորը թվաց,

թե Նիկոլայն ավելի՛ խոր գլուխ տվեց, քան սովորաբար, և ձեռքը սվելի ամուր սեղմեց։ Իսկ Սոֆյան նրան ուղեկցեց մինչև սենյակը և շեմքում կանգնելով կամաց ասաց.

— Հանգստացե՛ք, բարի գիշե՛ր։

Նրա ձայնի մեջ ջերմություն էր հնչում, մոխրագույն աչքերը քնքուշ շոյում էին մոր դեմքը...

Մայրը բռնեց Սոֆյայի ձեռքը և իր ձեռքերով սեղմելով՝ պատասխանեց.

— Շնորհակալությո՛ւն...

IV

Մի քանի օր անց մայրը և Սոֆյան Նիկոլային ներկայացան աղքատ քաղքենուհիների պես հագնված, մաշված չթե զգեստներով և կոֆտաներով, մախաղներն ուսերին և ձեռնափայտերով։ Զգեստը Սոֆյայի հասակը կարճացրել էր և նրա գունատ դեմքն ավելի էր խստացրել։

Քրոջը հրաժեշտ տալով Նիկոլայն ամուր սեղմեց նրա ձեռքը, և մայրը մի անգամ ևս նկատեց նրանց հարաբերությունների պարզությունն ու հանգստությունը։ Ոչ համբույրներ, ոչ սիրալիր խոսքեր ունեին այդ մարդիկ, իսկ իրար վերաբերվում են այնպես սրտանց, այնքա՜ն հոգատար։ Այնտեղ, ուր մայրն էր ապրել, մարդիկ շատ են համբուրվում, հաճախ են սիրալիր խոսքեր ասում և իրար միշտ կծոտում են քաղցած գայլերի պես։

Մայրը և Սոֆյան լուռ անցան քաղաքի փողոցներով, դաշտ դուրս եկան և ուս-ուսի քայլեցին լայն, տորորված ճանապարհով, հին կեչիների երկու շարքի միջով։

— Իսկ դուք չե՞ք հոգնի,— ասաց մայրը Սոֆյային։

— Դուք կարծում եք ես քի՞չ եմ ման եկել։ Սա ինձ ծանոթ գործ է...

Ուրախ, կարծես պարծենալով մանկության չարություններով, Սոֆյան սկսեց մորը պատմել իր ռևոլյուցիոն աշխատանքի մասին։ Նա ստիպված էր եղել ապրել ուրիշի անունով՝ օգտվելով կեղծ փաստաթղթից, կերպարանափոխվել՝ լրտեսներից թաքնվելիս, փթերով արգելված գրքեր տանել զանազան քաղաքներ, աքսորված ընկերների փախուստը կազմակերպել՝ նրանց ճանապարհ դնել արտասահման։ Նրա բնակարանում գաղտնի տպարան էր սարքվել և երբ ժանդարմներն այդ մասին

իմանալով խուզարկության էին եկել, նրանց գալուց մի րոպե առաջ նա սպասուհու պես հագնվելով, կարողացել էր հեռանալ, տան դարպասի մոտ հանդիպելով իր հյուրերին, և առանց վերնազգեստի, գլխին թեթև թաշկինակ և ձեռքին նավթի թիթեղե աման, ձմեռը, խիստ սառնամանիքին անցել էր ամբողջ քաղաքը ծայրից ծայր։ Մի ուրիշ անգամ նա գնացել էր մի այլ քաղաք՝ ծանոթների մոտ և երբ արդեն սանդուղքով բարձրանում էր նրանց բնակարանը, նկատել էր, որ այնտեղ խուզարկություն է կատարվում։ Ետ դառնալն ուշ էր, այն ժամանակ նա համարձակ զանգահարել էր ծանոթների բնակարանից մի հարկ ցած գտնվող մի դուռ և իր ճամպրուկով մտնելով անծանոթ մարդկանց մոտ՝ բացեիբաց բացատրել նրանց իր դրությունը։

— Կարող եք ինձ մատնել, եթե ուզում եք, բայց ես կարծում եմ, դուք այդ բանը չեք անի,— ասել էր նա վստահորեն։

Նրանք սաստիկ վախեցել էին և ամբողջ գիշերը չէին քնել ամեն րոպե սպասելով, թե իրենց դուռը կծեծեն, բայց սիրտ չէին արել նրան ժանդարմների ձեռքը տալ, իսկ առավոտյան նրա հետ միասին ծիծաղել էին ժանդարմների վրա։ Մի անգամ նա կույսի զգեստ հագած՝ միևնույն վագոնում և միևնույն նստարանին նստած գնացել է մի լրտեսի հետ, որը հետևում էր իրեն և, իր ճարպկությամբ պարծենալով, լրտեսը պատմում էր իրեն, թե ինչպես է կատարում իր գործը։ Լրտեսը հավատացած էր, թե Սոֆյան գնում է այդ նույն գնացքով՝ երկրորդ կարգի վագոնում, և ամեն կանգ առնելուց վար իջնելով ու վերադառնալով ասում էր.

— Չի երևում, երևի պառկել է քնելու։ Նրանք էլ են հոգնում, անշուշտ, ծա՜նր է նրանց կյանքն էլ մերի պես։

Մայրը լսում էր նրա պատմությունները, ծիծաղում և գրգվող աչքերով նայում էր նրան։ Բարձրահասակ, չոր, Սոֆյան իր բարեկազմ ոտքերով թեթև ու հաստատաքայլ էր գնում ճանապարհով։ Նրա քայլվածքում, բառերում, հենց ձայնի հնչյունի մեջ, որը թեև խլավուն էր, բայց աշխույժ, նրա ամբողջ շիտակ կերպարանքի մեջ շատ կար հոգեկան առողջություն, ուրախ համարձակություն։ Նրա աչքերն ամեն բանի վրա նայում էին երիտասարդի հայացքով և ամենուրեք տեսնում էին մի բան, որն ուրախացնում էր նրան պատանեկան ուրախությամբ։

— Տեսեք ի՜նչ հիանալի սոսի է,— բացականչում էր Սոֆյան ծառը ցույց տալով մորը։ Մայրը կանգ էր առնում և մտիկ

տալիս, սոսին մյուսներից ոչ ավելի բարձր էր, ոչ ավելի խիտ։

— Լավ ծառ է,— քմծիծաղով ասում էր մայրը։ Եվ տեսնում էր, թե քամին ինչպես է խաղում այդ կնոջ ականջի վրա թափված ալեխառն մազերի հետ։

— Արտո՜ւյտ,— Սոֆյայի մոխրագույն աչքերը սիրազեղ վառվում էին, և մարմինը կարծես գետնից վեր էր ելնում ընդառաջ գնալու պայծառ բարձունքի մեջ աներևույթ հնչող երաժշտությանը։ Երբեմն նա ճկունորեն կռանալով մի դաշտային ծաղիկ էր պոկում և բարակ, արագաշարժ մատների թեթև հպումով սիրալիր շոյում էր դողդոջուն թերթիկները։ Եվ մի ինչ-որ բան էր երգում մեղմ ու գեղեցիկ։

Այս բոլորը մարդու սիրտն ավելի էր մոտեցնում պայծառ աչքերով այդ կնոջը, և մայրն ակամա սեղմվում էր նրան՝ աշխատելով նրա հետ համընթաց գնալ։ Բայց երբեմն Սոֆյայի խոսքերում ինչ-որ սուր բան էր երևում, որ մորն ավելորդ էր թվում և նրա մեջ մի երկյուղալի միտք էր առաջացնում.

«Դուր չի գա սա Միխայլոյին...»

Իսկ մի բոպե հետո Սոֆյան նորից էր խոսում պարզ, մտերմորեն, և մայրը ժպտալով նայում էր նրա աչքերի մեջ։

— Դեռ ինչքա՜ն ջահել եք դուք,— հառաչելով ասաց մայրը։

— Օ՜, ես արդեն երեսուներկու տարեկան եմ,— բացականչեց Սոֆյան։

Վլասովան ժպտաց։

— Ես այդ չեմ ուզում ասել— ձեր դեմքին նայելով՝ ձեզ ավելի մեծ կարելի է համարել։ Բայց երբ մարդ մտիկ է տալիս ձեր աչքերին, ականջ է դնում ձեզ, նույնիսկ զարմանում է, կարծես թե ջահել աղջիկ եք։ Ձեր կյանքը անհանգիստ ու դժվար է, վտանգավոր է, իսկ ձեր սիրտը ժպտում է։

— Ես չեմ զգում, որ կյանքս դժվար է, և չեմ կարող երևակայել սրանից ավելի լավ, ավելի հետաքրքիր կյանք... Ես ձեզ Նիլովնա եմ անվանելու. Պելագեյա ձեզ չի սազում։

— Անվանեցեք այնպես, ինչպես ուզում եք,— մտախոհ ասաց մայրը։— Ինչպես կուզեք, այնպես էլ անվանեցեք։ Ես ա՛յ, ամբողջ ժամանակ ձեզ եմ նայում, լսում, մտածում։ Ինձ համար հաճելի է տեսնել, որ դուք գիտեք մարդկային սրտի ճանապարհը։ Մարդու մեջ ամեն բան բացվում է ձեր առաջ առանց վախի, առանց երկյուղի, հոգին ինքն իրեն բացվում է ձեր առաջ։ Եվ

ես մտածում եմ ձեր բոլորիդ մասին — սրանք կյանքի մեջ եղած չարը կհաղթահարեն, անպատճա՛ռ կհաղթահարեն։

— Մենք կհաղթենք, որովհետև բանվոր ժողովրդի հետ ենք,— վստահ և բարձրաձայն ասաց Սոֆյան,— նրա մեջ են թաքնված բոլոր հնարավորությունները, և նրա հետ ամեն ինչի կարելի է հասնել։ Հարկավոր է միայն զարթեցնել նրա գիտակցությունը, որին աճելու ազատություն չեն տալիս...

Նրա խոսքերը մոր սրտում արթնացնում էին մի բարդ զգացմունք. նա հայտնի չէ թե ինչու խղճում էր Սոֆյային՝ ոչ վիրավորական, մտերմական խղճահարությամբ և ուզում էր նրանից լսել այլ խոսքեր, ավելի պարզ խոսքեր։

— Ձեզ ո՞վ կվարձատրի ձեր արածների համար,— հարցրեց մայրը, կամաց և տխուր։

Սոֆյան, ինչպես թվաց մորը, պատասխանեց հպարտությամբ.

— Մենք արդեն վարձատրված ենք։ Մենք մեզ համար գտել ենք մի կյանք, որը մեզ բավարարում է, մենք ապրում ենք մեր հոգու բոլոր ուժերով, էլ ի՞նչ կարելի է ցանկանալ։

Մայրը նայեց նրան և գլուխը կախեց նորից մտածելով. «Միխայլոյին դուր չի գա սա...»

Քաղցր օդը լիաթոք շնչելով, նրանք գնում էին ոչ շտապ, բայց արագ քայլերով, և մորը թվում էր, թե ուխտի է գնում։ Նա հիշում էր մանկությունը և այն լավ ուրախությունը, որով նա մի ժամանակ տոնին գյուղից գնում էր մի հեռավոր վանք՝ հրաշագործ սրբապատկերի մոտ։

Երբեմն Սոֆյան ցածրաձայն, բայց գեղեցիկ երգում էր ինչ-որ նոր երգեր երկնքի մասին, սիրո մասին կամ հանկարծ սկսում էր ոտանավորներ ասել դաշտի և անտառների, Վոլգայի մասին. իսկ մայրը ժպտալով ականջ էր դնում և ակամայից շարժում գլուխը, ոտանավորի ռիթմի համեմատ՝ անձնատուր լինելով նրա երաժշտությանը։

Նրա կրծքում տիրում էր ջերմություն, անդորրություն և մտախոհություն, ինչպես փոքրիկ հին այգում ամռան երեկոյին։

V

Երրորդ օրը մոտեցավ գյուղին։ Մայրը դաշտում աշխատող մի մուժիկի հարցրեց, թե որտեղ է կպրաձյութի գործարանը, և նրանք շուտով իջան անտառի մի թեք շավղով, նրա վրա ծա-

ռերի արմատները փովել էին աստիճանների պես, հասան մի փոքրիկ կլոր մարգագետին, որը կեղտոտված էր ածուխով, տաշեղներով, ողողված էր կպրածյութով։

— Ահա և եկա՜նք,— անհանգստությամբ շուրջը նայելով ասաց մայրը։

Ջողերից և ճյուղերից կառուցված հոլիկի մոտ, գետնի մեջ խրած խաչմերուկի վրա դրված երեք անտաշ տախտակներից շինված սեղանի առաջ նստած ճաշում էին Ռիբինը, ամբողջովին սև, կուրծքը բացած շապկով, Եֆիմը և էլի երկու երիտասարդ տղաներ։ Ռիբինն առաջինը նկատեց եկողներին և ձեռքի ափն աչքերին բարձրացրած սպասում էր։

— Բարև՛ ձեզ, եղբա՛յր Միխայլո,— գոչեց մայրը դեռ հեռվից։

Ռիբինը վեր կացավ, առանց շտապելու դիմավորելու գնաց. մորը ճանաչելով կանգ առավ և ժպտալով սև ձեռքով մորուքը շփեց։

— Ուխտի ենք գնում,— ասում էր մայրը մոտենալով։— Ասացի, գնանք տեսնենք եղբորս։ Ա՛յ, ընկերուհիս է, անունն Աննա է...

Իր հնարքներով պարծենալով, մայրը խեթ նայեց Սոֆյայի լուրջ և խիստ դեմքին։

— Բարև՛,— ասաց Ռիբինը մռայլ քմծիծաղելով, թոթվեց մոր ձեռքը, գլուխ տվեց Սոֆյային և շարունակեց.— սուտ մի՛ ասիր, այստեղ քաղաք չի, ստելու կարիք չկա, բոլորն էլ մեր մարդիկն են...

Եֆիմը սեղանի առաջ նստած ուշադրությամբ տնտղում էր օտարականներին և բզզացող ձայնով ինչ-որ բան էր ասում ընկերներին։ Երբ կանայք սեղանին մոտեցան, Եֆիմը վեր կացավ և լուռ գլուխ տվեց նրանց. նրա ընկերները անշարժ նստած էին, կարծես հյուրերին չնկատելով։

— Այստեղ մենք մենակյացների պես ենք ապրում,— ասաց Ռիբինը թեթևակի խփելով Վլասովայի ուսին։— Ոչ ոք մեզ մոտ չի գալիս, մեր տերը գյուղում չի, տիրուհուն հիվանդանոց են տարել, և ես կառավարչի պես բան եմ։ Ապա՛, սեղանի մոտ նստեցեք։ Սոված կլինեք։ Եֆիմ, կաթ ճարեիր՝ լավ կլիներ։

Առանց շտապելու Եֆիմը գնաց վրանը, ուխտավորները ուսերից հանեցին մախաղները, տղաներից մեկը, բարձրահասակ ու նիհար, վեր կացավ սեղանի հետևից նրանց օգնելու, մյուսը՝ թիկնավետ և մազմզոտ, արմունկը սեղանին հենած նայում էր նրանց, գլուխը քորելով և կամաց մի երգ մռռալով։

Կպրածյութի ծանր բույրը խառնվում էր փտած տերևների հեղձուցիչ հոտի հետ և գլուխ պտտեցնում։

— Ա՛յ, սրան Յակով են ասում,— բարձրահասակ տղային ցույց տալով ասաց Ռիբինը,— իսկ այն մյուսի անունն Իգնատ է՛։ Է՛, ի՞նչպես է որդիդ։

— Բանտո՛ւմն է,— հառաչելով ասաց մայրը։

— Նորի՞ց բանտում,— բացականչեց Ռիբինը։— Ա՛յ թե դուր է եկել նրան այդ բանտը...

Իգնատը դադարեց երգել, Յակովը մոր ձեռքից վերցրեց փայտը և ասաց.

— Նստի՛ր...

— Իսկ դո՞ւք ինչու եք կանգնել։ Նստեցե՛ք,— հրավիրեց Ռիբինը Սոֆյային։ Սոֆյան լուռ նստեց փայտի կտորի վրա, Ռիբինին ուշադրությամբ տնտղելով։

— Ե՞րբ են տարել,— հարցրեց Ռիբինը, նստելով մոր դիմաց և գլուխն օրորելով՝ բացականչեց.— բախտ չունես, Նի՛լովնա։

— Ոչինչ,— ասաց մայրը։

— Է, ընտելանո՞ւմ ես։

— Չեմ ընտելանում, այլ տեսնում եմ՝ առանց դրան չի՛ կարելի։

— Այդպե՞ս,— ասաց Ռիբինը։— Դե՛ պատմիր տեսնենք...

Եֆիմը մի կճուճ կաթ բերեց, սեղանից վերցրեց մի գավաթ, ջրով ողողեց և կաթ լցնելով մոտեցրեց Սոֆյային, մոր պատմությունն ուշադրությամբ լսելով։ Նա շարժվում և ամեն բան անում էր անաղմուկ, զգույշ։ Երբ մայրը վերջացրեց իր համառոտ պատմությունը, բոլորը մի բոպե լռեցին՝ առանց իրար նայելու։ Իգնատը սեղանի առաջ նստած եղունգով մի նախշ էր քաշում տախտակների վրա, Եֆիմը կանգնած էր Ռիբինի հետևը, արմունկը նրա ուսին հենած, Յակովը ծառի բնին թիկնած՝ ձեռները խաչել էր և գլուխը կախել։ Սոֆյան աչքի տակով տնտղում էր մուժիկներին։

— Հա՜,— դանդաղ և խոժոռ ծոր տվեց Ռիբինը։— Ա՛յ թե ինչպես բացեիբա՛ց...,

— Ա՛յ, եթե մեզ մոտ այդպիսի հանդես սարքեի՞նք,—

ասաց Եֆիմը և մռայլ ժպտաց,— մուժիկները մեզ ջարդելով կսպանեին։

— Կջարդե՞ն,— հաստատեց Իգնատը գլխով անելով։— Չէ՛, ես գործարան եմ գնալու, այնտեղ ավելի լավ է...

— Ասում ես՝ Պավելին դատելո՞ւ են,— հարցրեց Ռիբինը։— Եվ ի՞նչ, ի՞նչ պատիժ կտան, չե՞ս լսել։

— Տաժանակիր աշխատանք կամ մշտական աքսոր Սիբիրում...— կամաց պատասխանեց մայրը։

Երեք տղաներն էլ միանգամից նայեցին նրան, իսկ Ռիբինը գլուխը կախեց և դանդաղ հարցրեց.

— Իսկ նա, երբ այդ գործն ուզում էր անել, գիտե՞ր, թե իրեն ինչ է սպառնում։

— Գիտե՛ր,— բարձրաձայն ասաց Սոֆյան։

Բոլորը լռեցին առանց շարժվելու, կարծես մի ցրտաշունչ մտքի մեջ սառչելով։

— Այդպե՞ս,— շարունակեց Ռիբինը խիստ և ծանրաբարո։— Ես էլ եմ կարծում, որ գիտեր։ Առանց չափելու նա չի ցատկի, լուրջ մարդ է։ Ա՛յ, տղե՛րք, տեսա՞ք։ Մարդը գիտեր, որ կարող են իրեն սվինով իսկ խփել, և տաժանակիր աշխատանքով պատվել, բայց գնաց։ Մայրը նրա ճանապարհին պառկեր՝ վրայից կանցներ։ Կանցնե՞ր վրայովդ, Նի՛լովնա։

— Կանցնե՛ր,— ցնցվելով ասաց մայրը և շուրջը նայեց ծանր հառաչելով։ Սոֆյան լուռ շոյեց նրա ձեռքը և հոնքերը կիտելով շեշտակի նայեց Ռիբինին։

— Մարդը դա՛ է,— կամաց ասաց Ռիբինը և բոլորին նայեց իր թուխ աչքերով։ Եվ վեցն էլ նորից լռեցին։ Արևի բարակ ճառագայթները ոսկե ժապավենների պես կախված էին օդում։ Ինչ-որ մի տեղ ինքնավստահ կռնչում էր ագռավը։ Մայրը շուրջը էր նայում՝ Մայիսի մեկի հիշողություններով, որդու և Անդրեյի կարոտով տրամադրությունը փչացած։ Փոքրիկ, նեղ բացատում ընկած էին կպրաձյութի տակառները, ցցված էին արմատախիլ արված կոճղերը։ Կաղնիները և կեչիները բացատի շուրջը խիտ խռնված՝ աննկատելիորեն ամեն կողմից տարածվում էին նրա վրա, և, անդորրությամբ կաշկանդված, անշարժ. գետնին փռել էին իրենց մուգ, թանձր ստվերները։

Հանկարծ Ցակովը ծառից ընկրկելով քայլեց մի կողմ, կանգ առավ և գլուխը թափ տալով շոր ու բարձրաձայն հարցրեց.

— Այդպիսիների՞ դեմ պետք է ուղարկեն ինձ ու Եֆիմին։

— Իսկ դու կարծում ես՝ ո՞ւմ դեմ,— պատասխանեց Ռիբինը մռայլ հարցով։— Մեզ խեղդում են հե՛նց մեր ձեռքերով, հենց աչքակապությունն էլ այդ է։

— Այնուամենայնիվ ես զինվո՛ր եմ գնալու,— ցածր ու համառ հայտնեց Եֆիմը։

— Ո՞վ է քեզ ասում մի՛ գնա,— բացականչեց Իգնատը։— Գնա՛։

Եվ շեշտակի նայելով Եֆիմին, քմծիծաղով ասաց.

— Միայն երբ վրաս կրակելու կլինես, գլխի՛ս նշան բռնիր... հաշմանդամ չդարձնես, այլ միանգամի՛ց սպանիր։

— Ես այդ լսել եմ,— խստորեն գոչեց Եֆիմը։

— Կացե՛ք, տղե՛րք,— խոսեց Ռիբինը, նրանց մնտղելով և ոչ շտապ շարժումով ձեռքը բարձրացրեց։— Ա՛յ, այս կի՛նը, տեսեք,— ասաց նա մորը ցույց տալով։— Սրա որդին հավանական է, որ կորած է հիմա...

— Ինչի՞ համար ես այդ բանն ասում,— հարցրեց մայրը թախծագին և կամաց։

— Պե՛տք է,— դժկամ պատասխանեց Ռիբինը։— Հարկավոր է, որ քո մազերը զուր չլինեն ճերմակած։ Հը՛, ի՞նչ կա որ, դրանով սպանեցի՞ն սրան։ Նի՛լովնա, գրքույկներ բերե՞լ ես։

Մայրը նայեց նրան և քիչ լռելուց հետո պատասխանեց.

— Բերել եմ...

— Այդպե՞ս,— ասաց Ռիբինը՝ ձեռքի ափը սեղանին խփելով։— Ես իսկույն հասկացա, հենց որ քեզ տեսա. դու ինչո՞ւ պիտի այստեղ գայիր, եթե դրա համար չլիներ։ Տեսա՞ք։ Որդուն շարքից դուրս են գցել, մա՛յրն է նրա տեղը կանգնել։

Նա, չարագուշակորեն ձեռքով սպառնալով, կոպիտ հայհոյեց։

Մայրը վախեցավ նրա աղաղակից, նայեց նրան և տեսավ, որ Միխայիլի դեմքը սաստիկ փոխվել է, նիհարել է, մորուքն անհավասար է դարձել, նրա տակ զգացվում էին այտոսկրները։ Աչքերի կապտավուն սպիտակուցների վրա երևան էին եկել կարմիր երակներ, կարծես թե նա երկար ժամանակ չէր քնել, նրա քիթն ավելի կրճկավուն էր դարձել, գիշատիչ թռչնի կտցի պես կեռացել։ Կուպր ծծած երբեմնի կարմիր շապկի բացված օձիքը մերկացնում էր շոր անրակները, կրծքի խիտ, սև մազերը, և ամբողջ կերպարանքում այժմ ավելի մռայլ, սգավոր մի բան

կար։ Բորբոքված աչքերի շոր փայլը լուսավորում էր թուխ դեմքը զայրույթի կրակով։ Սոֆյան, գունատվելով, լռել էր՝ աչքերը մուժիկների վրայից չհեռացնելով։ Իգնատը գլուխն էր օրորում աչքերը կկոցած, իսկ Յակովը նորից վրանի մոտ կանգնած՝ սևացած մատներով բարկացած պոկոտում էր ձողի կեղևը։ Մոր հետևը, սեղանի երկարությամբ, դանդաղ քայլում էր Եֆիմը։

— Մի քանի օր առաջ,— շարունակեց Ռիբինը,— ինձ կանչե՛ց վիճակապետը, ասում է. «Դու, գարշելի՛, ի՞նչ ես ասել քահանային»։ «Ես ինչո՞վ եմ գարշելի։ Ես իմ հացը մեջքս կոտրելով եմ աշխատում, մարդկանց ոչ մի վատություն չեմ արել, ասում եմ,— ա՛յ, թե ինչ»։ Նա գոռգոռաց, հասցրեց ատամներիս... երեք օր կալանքի տակ նստեցի։ Դուք, ուրեմն, այդպե՛ս եք խոսում ժողովրդի հետ։ Այդպե՞ս։ Թողություն չսպասե՛ս, դև՛։ Ես չլինեմ՝ մի ուրիշը կլինի, քեզնից չլինի՝ քո երեխաներից կառնեն վրեժս, մի՛տդ պահիր։ Երկաթե ճանկերով դուք հերկել եք ժողովրդի կուրծքը, այնտեղ չարիք ցանել, ներողամտություն չսպասե՛ք, մեր հոգեհանեե՛ր։ Ա՛յ, թե ինչ։

Նա ամբողջովին լցված էր եռացող զայրույթով և նրա ձայնի մեջ ցնցվում էին հնչյուններ, որոնք վախեցնում էին մորը։

— Իսկ ես ի՞նչ էի ասել տերտերին,— շարունակեց նա ավելի հանգիստ։— Գյուղական ժողովից հետո նա մուժիկների հետ նստած է փողոցում և պատմում է նրանց, թե մարդիկ իբր անասունների հոտ են, նրանց միշտ հովիվ է հարկավոր,— ա՛յ թե ինչ։ Իսկ ես հանաք արի. «երբ անտառում աղվեսն է զորավար դառնում, փետուրը կշատանա, իսկ թռչունը կվերանա»։ Նա խեթ-խեթ մտիկ տվեց ինձ, խոսեց՝ թե ժողովուրդը պետք է համբերի և աղոթի աստծուն, որ նա համբերելու համար ուժ տա։ Իսկ ես ասացի, թե՝—է՛հ, ժողովուրդը շատ է աղոթում, բայց աստված երևի ժամանակ չի գտնում, չի լսում։ Ա՛յ թե ինչ։ Նա կպավ ինձ թե ես ի՞նչ աղոթքներով եմ աղոթում։ Ես էլ ասում եմ՝ ամբողջ կյանքում մի՛ աղոթք եմ անում, ինչպես և՛ ամբողջ ժողովուրդը, «Ուսուցանի՛ր, տե՛ր աստված, տերերի համար կրել աղյուսներ, քարեր ուտել, փայտեր թքել»։ Նա չթողեց էլ, թե խոսքս վերջացնեմ։ Դուք, խանո՞ւմ եք,— հանկարծ պատմությունն ընդհատելով հարցրեց Ռիբինը Սոֆյային։

— Ինչո՞ւ եմ խանում,— արագ հարցրեց Սոֆյան անակնկալից ցնցվելով։

— Ինչո՞ւ,— քմծիծաղեց Ռիբինը։— Այդպես է ձեզ վիճակ-

վել, այդպես եք ծնվել։ Ա՛յ, թե ինչ։ Կարծում եք՝ չթե աղլուխով կարելի՞ է մարդկանցից թաքցնել ազնվականի մեղքը։ Մենք տերտերներին խսիրի մեջ թաքնված է՛լ կճանաչենք։ Ա՛յ, դուք ձեր արմունկը սեղանի վրա թաց տեղ դրիք՝ ցնցվեցիք, կնճռվեցիք։ Ձեր մեջքը բանվոր մարդու կորացած մեջք չի...

Վախենալով, որ Ռիբինը Սոֆյային կվիրավորի իր կոշտ ձայնով, ծաղրով և բառերով, մայրն շտապ և խստորեն ասաց.

— Սա իմ ընկերուհին է, Միխա՛յլո Իվանիչ, նա լավ մարդ է, ա՛յս գործի մեջ են մազերն սպիտակել։ Դու շատ էլ մի՛...

Ռիբինը ծանր շնչեց։

— Մի՞թե ես վիրավորական բան եմ ասում։

Սոֆյան նրան նայելով չոր-չոր ասաց.

— Դուք ինչ-որ բա՞ն էիք ուզում ասել ինձ։

— Ե՞ս։ Այո։ Ա՛յ, վերջերս այստեղ մի նոր մարդ է հայտնվել, Յակովի հորեղբոր տղան, հիվանդ է, թոքախտ ունի։ Կարելի՞ է նրան կանչել։

— Ի՞նչ կա որ, կանչեցե՛ք,— պատասխանեց Սոֆյան։

Ռիբինը նայեց նրան կկոցելով աչքերը և ձայնն իջեցնելով ասաց.

— Եֆի՛մ, մի նրա հետևից գնայիր. ասա՝ թող գիշերվա դեմ գա, ա՛յ, թե ինչ։

Եֆիմը գլխարկը դրեց և սուսուփուս, առանց որևէ մեկի վրա նայելու, առանց շտապելու չքացավ անտառում։ Ռիբինը գլխով արեց նրա հետևից, խուլ ձայնով ասելով.

— Տանջվո՞ւմ է։ Նա պետք է զինվոր գնա, նա և ա՛յ, Յակովը։ Յակովն ուղղակի ասում է՝ չեմ կարող, նա էլ չի կարող, բայց ուզում է գնալ։ Կարծում է, թե զինվորներին կարելի է մի քիչ գրգռե՛լ։ Ես կարծում եմ՝ պատը ճակատով ջարդել չի լինի... Նրանց բանն այս է,— սվինները ձեռքերն առան ու գնացին։ Այո-ո, տանջվում է։ Իսկ Իգնատին ցավացնում է նրա սիրտը, զուր տեղը...

— Իսկի էլ զուր չի՛,— մռայլ ասաց Իգնատը Ռիբինին չնայելով։— Այնտեղ նրան այնպես կխրատեն, որ կսկսի կրակել մյուսներից ոչ վատ։

— Հազի՛վ թե,— մտախոհ արձագանքեց Ռիբինը։— Բայց, իհարկե, ավելի լավ է փախչել այդ բանից։ Ռուսաստանը մեծ երկիր է, որտե՞ղ պիտի գտնեն։ Մի անձնագիր ձեռք կգցես ու ման կգաս գյուղերում...

— Ես այդպես էլ կանեմ,— նկատեց Իգնատը տաշեղով իր ոտին խփելով։— Մարդ քանի որ վճռում է դեմ գնալ, պետք է ուղիղ գնա։

Խոսակցությունն ընդհատվեց։ Ջանասիրությամբ պտտվում էին մեղուները և բոռերը՝ բզզալով անդորրության մեջ և երանգավորելով այն։ Թռչունները ծլվլում էին, հեռվում մի տեղ մի երգ էր հնչում՝ դաշտերում թափառելով։ Քիչ լուռ մնալով Ռիբինն ասաց.

— Դեհ, մենք պետք է աշխատենք... Դուք գուցե կհանգստանա՞ք։ Այնտեղ, հոլիկում թախտ կա։ Ձոր տերև հավաքիր սրանց համար, Յա՛կով... Իսկ դու, մա՛յր, գրքերը տուր...

Մայրն ու Սոֆյան սկսեցին մախաղները բաց անել։ Ռիբինը թեքվեց մախաղների վրա և գոհ ասաց.

— Քի՛չ բան չեք բերել, տե՛ս, տե՛ս։ Վաղո՞ւց եք այս գործի մեջ, ինչպե՞ս է ձեր անունը,— դիմեց նա Սոֆյային։

— Աննա Իվանովնա,— պատասխանեց Սոֆյան։— Տասներկու տարի է... Ի՞նչ կա որ։

— Ոչինչ։ Բանտում եղե՞լ եք երևի։

— Եղել եմ։

— Տեսնո՞ւմ ես,— ցածրաձայն և հանդիմանությամբ ասաց մայրը։— Իսկ դու նրա ներկայությամբ կոպիտ բաներ էիր ասում...

Ռիբինը լռեց և մի կույտ գրքեր ձեռքն առնելով, ասաց ատամները բաց անելով.

— Դուք ինձանից մի՛ վիրավորվեք։ Մուժիկը պարոնի հետ նույնն է, ինչ կուպրը ջրի հետ, դժվար բան է միասին լինելը, իրարից ե՛տ են թռչում։

— Ես խանում չեմ, այլ մա՛րդ,— առարկեց Սոֆյան մեղմորեն ժպտալով։

— Այդ էլ կարող է լինել,— արձագանքեց Ռիբինը։— Ասում են, թե շունն առաջ իբր գայլ է եղել։ Գնամ սրանք թաքցնեմ։

Իգնատն ու Յակովը մոտեցան նրան ձեռքերը մեկնելով։

— Տուր մե՛զ,— ասաց Իգնատը։

— Բոլորը միատեսա՞կ են,— հարցրեց Ռիբինը Սոֆյային։

— Ջանազան են։ Այդտեղ թերթ կա։

— Օ՜։

Նրանք երեքով շտապ հոլիկ մտան։

— Այրվո՞ւմ է այդ մուժիկը,— կամաց ասաց մայրը խոհուն հայացքով ուղեկցելով նրանց։

— Այո,— կամաց արձագանքեց Սոֆյան։— Ես դեռ երբեք չեմ տեսել այնպիսի դեմք, ինչպես նրանն է, մի նահատակ է կարծես։ Մենք էլ գնանք այնտեղ, ես ուզում եմ նայել նրանց...

— Դուք նրա վրա մի՛ բարկանաք, որ նա խստասիրտ մարդ է...— կամաց խնդրեց մայրը։

Սոֆյան քմծիծաղեց։

— Ի՞նչ հրաշալի եք դուք, Նի՛լովնա...

Երբ նրանք շեմքում էին, Իգնատը գլուխը բարձրացրեց, թեթևակի նայեց նրանց և մատները գանգուր մազերի մեջ խրելով՝ կռացավ մի թերթի վրա, որ ընկած էր իր ծնկներին. Ռիբինը կանգնած՝ թղթի վրա բռնեց արևի ճառագայթը, որ հոլիկ էր թափանցել կտրի մի ճեղքով, և թերթը ճառագայթի տակ ետ ու առաջ տանելով՝ կարդում էր շրթունքները շարժելով։ Յակովը ծնկաչոք՝ կրծքով ընկել էր թախտի եզրին և նույնպես կարդում էր։

Մայրը հոլիկի անկյունն անցնելով նստեց այնտեղ, իսկ Սոֆյան նրա ուսերը գրկած լուռ դիտում էր։

— Միխա՛յլո հորեղբայր, հայհոյում են մեզ՝ մուժիկներիս,— կիսաձայն ասաց Յակովն առանց դեմքը ետ դարձնելու։

Ռիբինը դեմքը դարձրեց, նայեց նրան և քմծիծաղով պատասխանեց.

— Սիրելով։

Իգնատը խոր շնչեց, բարձրացրեց գլուխը և աչքերը փակելով ասաց.

— Այստեղ գրված է՝ «գյուղացին դադարել է մարդ լինելուց», իհարկե՛, դադարել է։

Նրա պարզ, անծածկամիտ դեմքով վիրավորանքի ստվեր սահեց։

— Ապա մի եկ հագիր իմ կաշին, վրադ հագած մի քիչ ման եկ, տեսնեմ՝ թե ինչ կդառնաս, խելո՛ք։

— Ես ուզում եմ պառկել,— կամաց ասաց մայրը Սոֆյային։— Այնուամենայնիվ մի քիչ հոգնել եմ, գլուխս էլ հոտից պտտվում է։ Իսկ դո՞ւք։

— Ջեմ ուզում։

Մայրը մեկնվեց թախտի վրա ու թեթև քնեց։ Սոֆյան նստել էր նրա գլխավերևը, դիտելով ընթերցողներին, և երբ մի բոռ

կամ իշամեղու պտտվում էր մոր դեմքի վրա, Սոֆյան հոգատարությամբ քշում էր։

Մայրն այդ տեսնում էր կիսափակ աչքերով, և նրա համար հաճելի էր Սոֆյայի հոգատարությունը։

Մոտեցավ Ռիբինը և բամբ շշնջյունով հարցրեց.

— Քնա՞ծ է։

— Այո։

Ռիբինը լռեց, ուշի-ուշով նայեց մոր դեմքին, հառաչեց և կամաց ասաց.

— Նա գուցե առաջին կինն է, որ գնացել է որդու հետևից՝ նրա ճանապարհով, առաջի՜նը։

— Չխանգարենք նրան, գնանք,— առաջարկեց Սոֆյան։

— Այո, մենք պետք է աշխատենք։ Կուզեի մի քիչ խոսել, բայց մնա երեկոյան։ Գնա՜նք, տղե՜ր։

Երեքն էլ գնացին, Սոֆյային հյուղակի հոլիկի մոտ թողնելով։ Իսկ մայրը մտածում էր.

«Է, վնաս չունի, փա՜ռք աստծու։ Բարեկամացան...»

Եվ խաղաղ քնեց, շնչելով փայտի և ծյութի բարկ հոտը։

VI

Ձյութագործները եկան, գոհ, որ աշխատանքն ավարտել էին։

Նրանց ձայներից արթնացած մայրը հոլիկից դուրս եկավ հորանջելով և ժպտալով.

— Դուք աշխատել եք, իսկ ես խանումի պես քնել եմ,— ասաց նա սիրալիր աչքերով տնտղելով բոլորին։

— Քեզ ներելի է,— արձագանքեց Ռիբինը։ Նա ավելի հանգիստ էր, հոգնածությունը կլանել էր վրդովմունքի առատությունը։

— Իգնա՜տ,— ասաց նա,— ապա մի թեյի համար հո՜գս քաշիր։ Մենք այստեղ հերթով ենք տնտեսությունը վարում, այսօր Իգնա՜տն է մեզ ուտեցնում-խմեցնում։

— Ես իմ հերթը կզիջեի՜,— նկատեց Իգնատը և սկսեց տաշեղներ և ճյուղեր հավաքել խարույկի համար խոսակցությանն ականջ դնելով։

— Հյուրերն ամենքի համար են հետաքրքիր,— ասաց Եֆիմը նստելով Սոֆյայի կողքին։

— Ես քեզ կօգնեմ, Իգնա՜տ,— կամաց ասաց Յակովը՝ հոլիկ գնալով։ Նա այնտեղից դուրս բերեց մի բոքոն և սկսեց կտրատել՝ սեղանի վրա դարսելով։

— Լսո՞ւմ եք,— կամաց գոչեց Եֆիմը։— Հազում է...

Ռիբինն ականջ դրեց և գլխով անելով ասաց.

— Այո, գալիս է...

Եվ Սոֆյային դառնալով՝ բացատրեց.

— Հիմա կգա վկան։ Ես նրան քաղաքից քաղաք կտանեի, հրապարակներում կկանգնեցնեի, որ ժողովուրդը լսեր նրան։ Նա միշտ միևնույն բանն է ասում, բայց դա բոլո՜ր պետք է լսեն...

Անդորրությունը և աղջամուղջն ավելի էին խտանում, մարդկանց ձայներն ավելի մեղմ էին հնչում։ Սոֆյան և մայրը դիտում էին մուժիկներին, նրանք բոլորը ման էին գալիս դանդաղ, ծանր, ինչ-որ տարօրինակ զգուշությամբ և նույնպես հետևում էին կանանց։

Անտառից բացատ դուրս եկավ մի բարձրահասակ, կորամեջք մարդ. նա քայլում էր դանդաղ, ձեռնափայտին կռթնելով, և լսելի էր նրա խռպոտ շնչառությունը։

— Ահա և ես,— ասաց նա և սկսեց հազալ։

Նա հագել էր երկար, մինչև կրունկները հասնող մաշված վերարկու, կլոր, տրորված գլխարկի տակից ցանցառ փնջերով անուժ կախկխվել էին դեղնավուն, հարթ մազերը։ Բաց դույնի մորուք էր բուսել նրա դեղնած, ոսկրոտ դեմքին, բերանը կիսաբաց էր, աչքերը խոր ընկել էին ճակատի տակ և տենդորեն փայլում էին այնտեղից, մութ փոսերից։

Երբ Սոֆյայի հետ Ռիբինը ծանոթացրեց նրան, նա Սոֆյային հարցրեց.

— Լսել եմ, գրքե՜ր եք բերել։

— Բերել եմ։

— Շնորհակալություն... ժողովրդի՜ կողմից... Նա ինքը դեռ չի կարողանում հասկանալ ճշմարտությունը... ուստի ես, որ հասկացել եմ... շնորհակալություն եմ հայտնում նրա փոխարեն։

Նա շնչում էր արագ, օդը կարծես բռնելով կարճատև, անհագ շնչելով։ Նրա ձայնն ընդհատվում էր, տկար ձեռների ոսկրոտ մատները սողում էին կրծքի վրա՝ աշխատելով կոճկել վերարկուի կոճակները։

— Ձեզ համար վնասակար է այսպես ուշ անտառում լի-

նելը։ Անտառը սաղարթավոր է, այստեղ խոնավ է և տոթ,— նկատեց Սոֆյան։

— Ինձ համար այլևս օգտակար բան չկա,— պատասխանեց նա հևալով։— Ինձ համար միայն մահն է օգտակար...

Նրա ձայնը լսելը ծանր էր, և նրա ամբողջ պատկերն առաջ էր բերում այն ավելորդ կարեկցությունը, որը գիտակցելով իր տկարությունը, մռայլ սրտնեղություն է զարթեցնում։ Նա նստեց մի տակառի վրա, ծնկներն այնպես զգույշ ծալելով, որ կարծես վախենում էր, թե ոտները կկոտրատվեն, սրբեց քրտնած ճակատը։ Նրա մազերը չոր էին, մեռած։

Խարույկը բոցավառվեց, շուրջն ամեն ինչ դողաց, երերաց, խանձված ստվերները վախեցած նետվեցին անտառ, և կրակի վրա երևաց Իգնատի կլոր դեմքն ուռած այտերով։ Կրակը հանգավ։ Ծխի հոտ եկավ, անդորրն ու մեգը կրկին խտացան բացատի վրա, կարծես ուշադրությունը լարելով և հիվանդի խռպոտ խոսքերին ականջ դնելով։

— Իսկ ժողովրդին ես դեռ կարող եմ օգուտ բերել որպես ոճրագործության վկա... Ահա, նայեցե՛ք վրաս... ես քսանութ տարեկան եմ, բայց մեռնո՞ւմ եմ։ Իսկ տասը տարի առաջ ես առանց ուժերս լարելու ամեն մի ուսիս բարձրացնում էի տասներկու փութ, և վնաս չկար։ Այդպիսի առողջությամբ ես կարծում էի, թե յոթանասուն տարեկանի կհասնեմ առանց սայթաքելու։ Բայց ապրեցի տասը տարի, ավելի չեմ կարող։ Ինձ կողոպտեցին տերերս, քառասուն տարվա կյանքս թալանեցին, քառասո՞ւն տարվա։

— Ա՛յ, սա է սրա երգը,— խուլ ասաց Ռիբինը։

Նորից բոցավառվեց կրակը, բայց արդեն ավելի ուժգին, ավելի պայծառ, ստվերները կրկին նետվեցին դեպի անտառ, էլի ետ խռնվեցին դեպի կրակը և դողդողացին խարույկի շուրջն անմռունչ, թշնամական պարով։ Կրակի մեջ ճրճտում ու նվվում էին թաց ճյուղերը։ Շշնջում, խշխշում էր ծառերի սաղարթը, տաքացած օդի ալիքից այլայլված։ Բոցի ուրախ, կենդանի լեզուները՝ դեղին ու կարմիր, խաղում էին գրկվելով, վեր էին սլանում կայծեր ցանելով, թռչում էր վառվող տերևը, իսկ աստղերը երկնքում ժպտում էին կայծերին՝ իրենց մոտ կանչելով...

— Սա ի՛մ երգը չի, սա հազարավոր մարդիկ են երգում, չհասկանալով ժողովրդի համար բուժիչ դասն իրենց թշվառ կյանքում։ Որքա՞ն աշխատանքից հոգեհան արված խեղանդամներ

լուռումունջ մեռնում են քաղցից...— Նա հազաց կորանալով, ցնցվելով։

Յակովը սեղանին դրեց մի դույլ կվաս, գցեց կանաչ սոխի մի կապոց և հիվանդին ասաց.

— Արի՛, Սավելի՛, ես քեզ համար կաթ եմ բերել։

Սավելին բացասաբար գլուխը շարժեց, բայց Յակովը բռնեց նրա կոնատակից, բարձրացրեց և սեղանի մոտ տարավ։

— Լսեցե՛ք,— կամաց ասաց Սոֆյան Ռիբինին նախատական տոնով,— դուք նրան ինչո՞ւ եք այստեղ կանչել։ Նա ամեն մի րոպե կարող է մեռնել...

— Կարո՞ղ է,— համաձայնեց Ռիբինը։— Առայժմ քանի կա՝ թո՛ղ խոսի։ Դատարկ բաների համար կյանքը փչացրել է, թող մարդկանց համար էլ մի քիչ նեղություն քաշի, վնաս չունի՞։ Ա՛յ, թե ինչ։

— Դուք կարծես թե մի բանով հրճվում եք,— բացականչեց Սոֆյան։

Ռիբինը նայեց նրան և խոժոռված պատասխանեց.

— Դա պարոններն են, որ Քրիստոսով հրճվում են, թե ինչպես է նա խաչի վրա հեծեծել, իսկ մենք մարդուց սովորում ենք և ուզում ենք, որ դուք էլ սովորեք մի քիչ...

Մայրը վախեցած բարձրացրեց հոնքը և ասաց նրան.

— Դե՛, դե՛, բավական է...

Հիվանդը սեղանի մոտ նստած նորից խոսեց.

— Մարդկանց ոչնչացնում են աշխատանքով, ինչո՞ւ։ Մարդու կյանքը գողանում են, ինչո՞ւ, ասում եմ։ Մեր տերը, ես Նեֆեդովի գործարանում եմ կյանքս փչացրել, մեր տերը մի երգչուհու ոսկե ման նվիրեց լվացվելու համար, նույնիսկ ոսկե միզաման՞։ Այդ միզամանի մեջ է իմ ուժը, իմ կյանքը։ Ահա՛, թե ինչի համար է գնացել կյանքս, մարդն աշխատանքով ինձ սպանեց, որպեսզի իր սիրուհուն զվարճացնի իմ արյունով, ոսկե միզաման գնեց նրա համար իմ արյունով։

— Մարդը ստեղծված է աստծու պատկերով և նմանությամբ,— ասաց Եֆիմը քմծիծաղով,— բայց ա՛յ, տեսեք ինչի համար են բանեցնում մարդուն...

— Ուրեմն սուս մի՛ կաց,— բացականչեց Ռիբինը՝ թաթը խփելով սեղանին։

— Մի՛ համբերիր,— կամաց ավելացրեց Յակովը։

Իգնատը ծիծաղեց։

Մայրը նկատեց, որ տղաները երեքն ականջ էին դնում քաղցած հոգիների անհագ ուշադրությամբ և ամեն անգամ, երբ Ռիբինը խոսում էր, նայում էին նրա դեմքին դարանակալ աչքերով։ Սավելիի խոսածը նրանց դեմքերի վրա տարօրինակ, կծու ծաղր էր առաջ բերում։ Դեպի հիվանդը նրանց մեջ խղճահարություն չէր նկատվում։

Սոֆյային թեքվելով, մայրը կամաց հարցրեց.

— Մի՞թե ճիշտ է ասում նա։

Սոֆյան բարձրաձայն պատասխանեց.

— Այո, դա ճի՛շտ է։ Այդպիսի մի պարգևի մասին թերթում գրեցին, դա Մոսկվայում էր...

— Եվ ո՛չ մի պատիժ չստացավ նա,— խուլ ձայնով ասաց Ռիբինը։— Բայց հարկավոր էր նրան պատժել, դուրս բերել ժողովրդի առաջ, կտոր-կտոր անել և նրա գարշելի միսը շների առաջը գցել։ Մեծ պատիժներ կտա ժողովուրդը, երբ ոտքի կանգնի։ Շատ արյուն կթափի նա, որ լվանա իր կրած վիրավորանքները։ Այդ արյունը նրա արյունն է, նրա երակներից են խմել, այդ արյան տերը ժողովուրդն է։

— Ցուրտ է,— ասաց հիվանդը։

Յակովն օգնեց նրան, որ վեր կենա, և տարավ կրակի մոտ։

Խարույկը պայծառ վառվում էր, և անդեմ ստվերները դողդողում էին նրա շուրջը՝ ապշած դիտելով կրակի զվարթ խաղը։ Սավելին նստեց մի կոճղի և դեպի կրակը մեկնեց թափանցիկ, չոր ձեռները։ Ռիբինը գլխով արեց նրա կողմը և Սոֆյային ասաց.

— Սա, գրքից ավելի խիստ է։ Երբ մեքենան բանվորի ձեռքը է պոկում կամ սպանում նրան, բացատրում են, թե ինքն է մեղավորը։ Իսկ ա՛յ, երբ ծծում են մարդու արյունը և դեն գցում նրան լեշի պես, դա ոչ մի բանով չի բացատրվում։ Ամեն մի սպանություն ես հասկանում եմ, բայց կատակի համար տանջելը, չե՛մ հասկանում։ Ինչի՞ համար են չարչարում ժողովրդին, ինչի՞ համար են բոլորիս տանջում։ Կատակի համար, ուրախանալու համար, զվարճալի լինի աշխարհումս ապրելը, կարելի լինի արյունով գնել ամեն ինչ՝ երգչուհի, ձիեր, արծաթե դանակներ, ոսկե ամանեղեն, երեխաների համար թանկագին խաղալիքներ։ Դու աշխատի՛ր, որքան կարելի է շատ աշխատիր, իսկ ես քո աշխատանքով փող կդիզեմ և ոսկե միզաման կնվիրեմ սիրուհուս։

Մայրն ականջ էր դնում, նայում, և նրա առջև նորից խավարի մեջ փայլեց և լուսավոր շերտի պես ձգվեց Պավելի և նրա հետ բոլոր գնացողների ուղին։

Ընթրիքն ավարտելով՝ բոլորը տեղավորվեցին խարույկի շուրջը. նրանց առջև փայտն արագ կլանելով վառվում էր կրակը, հետևում կախվել էր խավարը՝ անտառն ու երկինքը պատելով։ Հիվանդն աչքերը լայն բացած՝ նայում էր կրակին, անընդհատ հազում, ամբողջ մարմնով դողում, թվում էր, թե կյանքի մնացորդներն անհամբերությամբ դուրս են նետվում նրա կրծքից, ձգտելով թողնել հիվանդությունից հյուծված մարմինը։ Բոցի արտացոլումները դողդողում էին նրա դեմքին, առանց կենդանացնելու մեռած մորթը։ Միայն հիվանդի աչքերն էին վառվում մարվող կրակով։

— Գուցե լա՛վ է հյուղա՞կը գնաս, Սավելի՛,— հարցրեց Յակովը նրա վրա թեքվելով։

— Ի՞նչ կարիք կա,— պատասխանեց նա ուժերը լարելով։— Ես կնստեմ, շա՛տ ժամանակ չի մնացել ինձ մարդկանց հետ լինելու...

Նա զննեց ամենքին, մի քիչ լռեց և շարունակեց դժգույն քմծիծաղով.

— Ձեզ հետ լինելն ինձ հաճելի է։ Նայում եմ ձեզ և մտածում, գուցե սրանք հատուցեն նրանց փոխարեն, ում կողոպտել են, այն ժողովրդի փոխարեն, որն սպանվել է ագահության պատճառով...

Նրան չպատասխանեցին, և շուտով նա ննջեց, գլուխն անուժ կախելով կրծքին։ Ռիբինը նայեց նրան և կամաց ասաց.

— Գալիս է մեզ մոտ, նստում ու պատմում միշտ միևնույն բանը, այդ ծաղրուծանակի մասին, որին ենթարկել են մարդուն։ Դրանով է ամբողջովին զբաղված նրա հոգին, կարծես թե դրանով նրա աչքերը հանել են և էլ ոչինչ չի տեսնում։

— Դե էլ ի՞նչ է հարկավոր,— մտախոհ ասաց մայրը։— Քանի որ մարդիկ ամեն օր հազարներով կոտորվում են աշխատանքի մեջ նրա համար, որ տերը կարողանա փողերը կատակի համար շռայլել, էլ ի՞նչ...

— Զանձրալի է նրան լսելը,— ցածր ասաց Իգնատը։— Դու մի անգամ որ լսեցիր, էլ չես մոռանա, իսկ նա մի՛շտ միևնույնն է ասում։

— Այստեղ ամեն ինչ խտացված է մի՛ բանի մեջ... ամ-

բո՜ղջ կյանքը, հասկացի՛ր, խոժոռվելով նկատեց Ռիբինը։— Ես տասն անգամ լսել եմ նրա վիճակի մասին, բայց էլի երբեմն մարդ կասկածում է։ Լինում են բարի ժամեր, երբ չես ուզում հավատալ մարդու գարշելիությանը, նրա խեղճությանը... երբ ամենքին խղճում ես, թե՛ հարուստին, թե՛ աղքատին... հարուստն էլ կարող է մոլորված լինել։ Մեկը կույր է քաղցից, մյուսը՝ ոսկուց։ Է՛, մարդի՛կ, մտածում ես, է՛հ, եղբայրնե՛ր։ Սթափվեցե՛ք, մտածեցե՛ք ազնվորեն, մտածեցե՛ք առանց ձեզ խնայելու, մտածեցե՛ք։

Հիվանդն օրորվեց, աչքերը բաց արեց, պառկեց գետնին։ Յակովը սուսուփուս վեր կացավ, գնաց հոլիկը, բերեց մի կիսամուշտակ, հագցրեց եղբորը և նորից նստեց Սոֆյայի կողքին։

Կրակի կարմիր դեմքը շլացուցիչ ժպտալով լուսավորում էր իր շուրջը գտնվող մութ պատկերները, և մարդկանց ձայները մտախոհ խառնվում էին բոցի մեղմ ճրճտոցին և սոսափյունին։

Սոֆյան պատմում էր ժողովրդի՝ ապրելու իրավունքի համար մղած համաշխարհային մարտի մասին, Գերմանիայի գյուղացիների հնում ունեցած կռիվների մասին, դժբախտ իռլանդացիների, բանվոր ֆրանսիացիների՝ ազատության համար մղած հաճախակի կռիվներում կատարած մեծ սխրագործությունների մասին...

Գիշերվա թավիշ հագած անտառում, ծառերով ցանկապատված, մութ երկնքով ծածկված փոքրիկ բացատում, կրակի առաջ, թշնամորեն զարմացած ստվերների շրջանում՝ հառնում էին դեպքեր, որոնք ցնցել էին կուշտերի և ագահների աշխարհը, իրար հետևից անցնում էին երկրի ժողովուրդները՝ արյունաքամ լինելով, կռիվներից հոգնած, հիշվում էին ազատության և ճշմարտության մարտիկների անունները։

Կամաց հնչում էր այդ կնոջ խլավուն ձայնը։ Կարծես անցյալից գալով հասնելով՝ այդ ձայնը հույսեր էր զարթեցնում, վստահություն էր ներշնչում, և մարդիկ լուռ ունկնդրում էին այդ պատմությունն իրենց հոգևոր եղբայրների մասին։ Նրանք նայում էին այդ կնոջ նիհար, գունատ դեմքին. նրանց առջև ավելի և ավելի պայծառ էր լուսավորվում աշխարհի ժողովուրդների սուրբ գործը՝ ազատության համար մղվող անվերջ պայքարը։ Մարդը տեսնում էր իր ցանկություններն ու խոհերը հեռավոր, մութ, արյունոտ վարագույրով ծածկված անցյալում, իրեն անծանոթ այլազգիների մեջ, և ներքնապես, խելքով ու սրտով հաղորդակցվում էր աշխարհին, նրա մեջ տեսնելով բարեկամներ, որոնք վաղուց արդեն համամտորեն և հաստատապես որոշել են ձեռք բերել աշխարհում ճշմարտությունը, իրենց որոշումը սրբագործել են անհաշիվ տառապանքներով, իրենց արյան գետերն են թափել հանուն նոր, լուսավոր և ուրախ կյանքի հաղթանակի։ Առաջանում և աճում էր ամենքի հետ հոգևոր մոտիկության զգացմունքը, ծնվում էր երկրի նոր սիրտը՝ ամեն ինչ հասկանալու, ամեն ինչ իր մեջ միացնելու ջերմ ձգտումով լի։

— Կգա այն օրը, երբ բոլոր երկրների բանվորները գլուխները կբարձրացնեն և հաստատապես կասեն՝ բավակա՛ն է։ Մենք այլևս չե՛նք ուզում այս կյանքը,— վստահ հնչում էր Սոֆյայի ձայնը։— Այն ժամանակ կխորտակվի իրենց ագահությամբ ուժեղ մարդկանց խաբուսիկ ուժը, նրանց ոտների տակից հողը կկորչի, և նրանք հենվելու տեղ չեն ունենա...

— Այդպես էլ կլինի,— ասաց Ռիբինը գլուխը կախելով։— Քեզ մի՛ ափսոսա և ամեն ինչ կհաղթահարե՛ս։

Մայրն ականջ էր դնում հոնքը խիստ բարձրացրած, ուրախ զարմանքի ժպիտով, որ սառել էր դեմքին։ Նա տեսնում էր, որ այն բոլորը, ինչ որ կտրուկ էր, զիլ, համարձակ, այն բոլորը, ինչ որ ավելորդ էր թվում Սոֆյայի մեջ, այժմ անհետացել է, սուզվել նրա պատմության տաք, սահուն հոսանքի մեջ։ Նրան դուր էր գալիս գիշերվա անդորրությունը, կրակի խաղը, Սոֆյայի դեմքը, բայց ամենից ավելի՝ մուժիկների լարված ուշադրությունը։ Նրանք նստել էին անշարժ, աշխատելով չխանգարել պատմության խաղաղ ընթացքը, վախենալով կտրել աշխարհի հետ իրենց կապող լուսավոր թելը։ Միայն երբեմն նրանցից մեկը կրակի մեջ զգուշությամբ փայտ էր դնում և, երբ խարույկից կայծերի խուրձ և ծուխ էր բարձրանում, ձեռքն օդում շարժելով, կայծերն ու ծուխը քշում էր, որ կանանց կողմը չգնան։

Մի անգամ Յակովը վեր կացավ, ցածրաձայն խնդրեց.

— Մի քիչ սպասեցեք...

Վազեց հոլիկ, այնտեղից բերեց և Իգնատի հետ լուռ ծածկեց կանանց ոտները և ուսերը։ Սոֆյան նորից սկսեց խոսել՝ նկարագրելով հաղթության օրը, մարդկանց հավատ ներշնչելով դեպի իրենց ուժերը, նրանց մեջ զարթեցնելով այն բոլորի հետ ունեցած ընդհանրության գիտակցությունը, ովքեր իրենց կյանքը զոհում են անպտուղ աշխատանքի, հղփացածների տիմար զվարճությունների համար։ Բառերը չէին հուզում մորը, բայց

Սոֆյայի պատմության առաջ բերած մեծ, ամենքին ընդգրկող զգացմունքը լցնում էր և՛ նրա կուրծքը գոհունակ, աղոթային խոհով ա՛յն մարդկանց մասին, որոնք վտանգների միջով գնում են դեպի նրանց, ովքեր շղթայված են աշխատանքի շղթաներով, և նրանց համար բերում են իրենց հետ ազնիվ մտքի պարգևներ, ճշմարտության սիրո պարգևներ։

«Դո՛ւ օգնես, տե՛ր»,— մտածում էր մայրը աչքերը փակելով։

Լուսադեմին Սոֆյան հոգնած լռեց և ժպտալով զննեց իր շուրջը գտնվող մտախոհ, պայծառացած դեմքերը։

— Մեր գնալու ժամանա՛կն է,— ասաց մայրը։

— Ժամանա՛կն է,— հոգնած ասաց Սոֆյան։

Տղաներից մեկն աղմկալի հառաչեց։

— Ափսո՛ս որ գնում եք,— անսովոր քնքուշ ձայնով ասաց Ռիբինը։— Լա՛վ եք խոսում։ Մե՛ծ գործ է դա՝ մարդկանց իրար հարազատ դարձնելը։ Երբ այսպես իմանում ես, որ միլիոնավոր մարդիկ նույնն են ուզում, ինչ որ մենք, սիրտդ ավելի է բարիանում։ Իսկ բարության մեջ մե՛ծ ուժ կա։

— Դու նրան բարիք տուր, իսկ նա քեզ ցից հանի,— կամաց ծիծաղելով ասաց Եֆիմը և արագ ոտքի ցատկեց։— Նրանց գնալու ժամանակն է, Միխա՛յլո հորեղբայր, քանի դեռ ոչ ոք չի տեսել։ Գրքույկները որ բաժանենք, իշխանությունը կսկսի փընտրել, թե որտեղից են։ Մեկնումեկը կհիշի՝ թե, ա՛յ, օտարական կանայք էին եկել...

— Դե՛հ, շնորհակալությո՛ւն, մա՛յր, նեղություններիդ համար,— ասաց Ռիբինը Եֆիմին ընդհատելով։— Ես միշտ Պավելի մասին եմ մտածում՝ քեզ մտիկ տալով, լա՛վ ճանապարհով ես գնում։

Քնքշացած, Ռիբինը ժպտում էր լայն և բարի ժպիտով։ Օդը սառն էր, իսկ նա կանգնել էր միայն օձիքը բաց շապկով, կուրծքը բոլորովին մերկ։ Մայրը նայեց նրա մեծ կերպարանքին և սիրալիր խորհուրդ տվեց.

— Մի բան հագնեիր, լավ կլիներ, ցո՛ւրտ է։

— Ներսիցս տաքանում եմ,— պատասխանեց Ռիբինը։

Երեք տղաները խարույկի մոտ կանգնած, կամաց զրուցում էին, իսկ նրանց ոտների մոտ պառկած էր հիվանդը՝ կիսամուշտակներով ծածկված։ Երկինքը դժգունում էր, ստվերները հալվում էին, ցնցվում էին տերևներն արևի սպասելով։

— Դե՛հ, գնաք բարո՛վ ուրեմն,— ասաց Ռիբինը Սոֆյայի ձեռքը սեղմելով։— Իսկ քաղաքում ձեզ ի՞նչպես գտնենք։

— Դու ի՛նձ կփնտրես,— ասաց մայրը։

Տղաները դանդաղ, խիտ խմբված մոտեցան Սոֆյային և լուռ սեղմեցին նրա ձեռքը՝ անշնորհք, սիրալիր կերպով։ Ամեն մեկի մեջ պարզ երևում էր թաքնված բավականություն՝ գոհունակ ու բարեկամական, և այդ զգացմունքը երևի շփոթեցնում էր նրանց իր նորությամբ։ Անքուն գիշերվանից չոր աչքերով ժպտալով՝ նրանք լուռ նայում էին Սոֆյայի դեմքին և մի ոտից մյուսի վրա էին ծանրանում։

— Կաթ չեք խմի՞ ճանապարհից առաջ,— հարցրեց Յակովը։

— Կաթ կա՞ արդյոք,— ասաց Եֆիմը։

Իգնատը շփոթված, մազերը հարթելով ասաց.

— Չկա, ես թափել եմ...

Եվ երեքն էլ ծիծաղեցին։

Կաթի մասին էին խոսում, բայց մայրն զգում էր, որ նրանք մտածում են այլ բանի մասին, առանց բառերի՝ Սոֆյային և իրեն բարիք, լավություն ցանկանալով։ Դա նկատելիորեն հուզում էր Սոֆյային և նրա մեջ ևս առաջ էր բերում շփոթմունք, պարկեշտ համեստություն, որը թույլ չէր տալիս նրան որևէ այլ բան ասել, բացի կամաց՝

— Շնորհակալությո՛ւն, ընկերնե՛ր։

Տղաներն իրար նայեցին, կարծես այդ բառը քնքշորեն օրորեց նրանց։

Լսվեց հիվանդի խուլ հազը։ Հանգան վառ ածուխները մաքուր խարույկում։

— Գնաք բարո՛վ,— կիսաձայն ասում էին մուժիկները, և այդ տխուր բառերը երկար ժամանակ ուղեկցում էին կանանց։

Նրանք առանց շտապելու գնում էին ցայգաբացի աղջամուղջում, անտառի արահետով, և մայրը Սոֆյայի հետևից քայլելով, ասում էր.

— Լա՛վ է. այս բոլորը, կարծես երազում է, այնքա՛ն լավ է։ Մարդիկ ուզում են ճշմարտությունը ճանաչել, սիրելի՛ս, ուզո՛ւմ են։ Եվ սա նման է այն բանին, ինչ որ եկեղեցում է լինում՝ մեծ տոնի առավոտյան ժամերգությունից առաջ... քահանան դեռ չի եկել, մութ է և խաղաղ, տաճարի ներսն ահավոր է, իսկ ժողովուրդն արդեն հավաքվում է... այստեղ են մոմ վա-

ռում սրբապատկերի առաջ, այնտեղ են վառում և քիչ-քիչ քշում խավարը, լուսավորելով աստծու տունը։

— Ճիշտ է,— ուրախ պատասխանեց Սոֆյան։— Միայն թե այստեղ աստծու տունն ամբո՛ղջ երկիրն է։

— Ամբողջ երկի՛րը,— գլուխը մտախոհ օրորելով կրկնեց մայրը։— Այնպե՛ս լավ է այդ, որ հավատալն անգամ դժվար է... Եվ լա՛վ էիք խոսում դուք, թանկագինս, շա՛տ լավ։ Իսկ ես վախենում էի, թե դուք նրանց դուր չեք գա...

Սոֆյան մի քիչ լռելով՝ մեղմ և տխուր պատասխանեց.

— Նրանց հետ մարդ ավելի պարզ է դառնում...

Նրանք գնում էին և խոսում Ռիբինի մասին, հիվանդի և տղաների մասին, որոնք այնպես ուշադիր լուռ էին մնում և այնպես քաշվելով, բայց պերճախոս կերպով արտահայտում էին իրենց գոհունակ բարեկամության զգացմունքները կանանց համար մանր հոգացողություններ անելով։ Դաշտը դուրս եկան։ Դիմացից բարձրանում էր արևը։ Աչքից դեռ անտեսանելի՝ նա երկնքի վրա սփռել էր վարդագույն ճառագայթների թափանցիկ հովհարը, և ցողի կաթիլները խոտի մեջ փայլփլում էին գարնանային աշխույժ ուրախության գույնզգույն կայծերով։ Ջարթնում էին թռչունները՝ ուրախ ծլվլոցով առավոտը կենդանացնելով։ Փութաջանորեն կռնչալով, թևերը ծանր շարժելով թռչում էին հաստամարմին ագռավները, մի ինչ-որ տեղ անհանգիստ սուլում էր պիրոլը։ Բացվում էին հեռաստանները՝ արևի դիմա՛ց իրենց բլուրներից գիշերային ստվերները վեր քաշելով։

— Երբեմն մարդ խոսում է, խոսում, իսկ դու նրա ասածը չես հասկանում, մինչև որ չի հաջողվում նրան մի որևէ հասարակ խոսք ասել քեզ, և այդ խոսքը միայն հանկարծ ամեն ինչ պարզում է,— մտախոհ ասաց մայրը։— Այնպես էլ, այդ հիվանդը։ Ես լսել եմ և ինքս գիտեմ, թե բանվորներին ինչպես են հուպ տալիս գործարաններում և ամեն տեղ։ Բայց այդ բանին մանկությունից վարժվում ես, և այնքան էլ սրտիդ չի դիպչում դա։ Իսկ նա հանկարծ մի այնպիսի վիրավորական, այնպիսի անպիտան բան ասաց, որ... Տե՛ր աստված, մի՞թե մարդիկ նրա համար են ամբողջ կյանքն աշխատանքին նվիրում, որ տերերը նրանց ծաղրուծանակի ենթարկեն։ Դա արդարացում չունի՛։

Մոր միտքը կանգ առավ այդ դեպքի վրա, և այդ դեպքն իր բութ, լկտի փայլով նրա առջև պարզեց մի շարք համանման արարքներ, որոնք հայտնի էին, և նա մոռացել էր։

— Երևի նրանք ամեն բանից կուշտ են և սրտերը խառնում է։ Ես գիտեմ, որ մի վիճակապետ մուժիկներին ստիպում էր, որ իր ձիուն գլուխ տան գյուղում ման ածելու ժամանակ, և ով որ գլուխ չէր տալիս, նրան բանտարկում էր։ Է՛, դա ինչի՞ էր հարկավոր այդ մարդուն։ Չի կարելի հասկանալ, չէ՛։

Սոֆյան սկսեց կամաց երգել մի երգ, առույգ, ինչպես առավոտը...

VII

Նիլովնայի կյանքն ընթանում էր տարօրինակ կերպով հանգիստ։ Այդ հանգստությունը երբեմն զարմացնում էր նրան։ Որդին նստած էր բանտում, մայրը գիտեր, որ նրան ծանր պատիժ է սպասում, բայց ամեն անգամ, երբ նա մտածում էր այդ մասին, նրա հիշողությունն ակամա դուրս էր կանչում իր առջև՝ Անդրեյին, Ֆեդյային և մյուս անձերի երկար շարքը։ Որդու կերպարանքը, կլանելով նրան վիճակակից բոլոր մարդկանց, մեծանում էր մոր աչքում, դիտողական զգացմունք էր առաջացնում, ակամա և աննկատելիորեն ընդարձակելով Պավելի վերաբերյալ խոհերը, ամեն կողմ վանելով դրանք։ Այդ խոհերը սփռվում էին ամեն կողմ բարակ, անհավասար շողերի պես. ամեն ինչի դիպչելով, աշխատում էին ամեն ինչ լուսավորել, հավաքելով մի պատկեր դարձնել և մորը թույլ չէին տալիս կանգ առնել մի բանի վրա, թույլ չէին տալիս, որ խտանա թախիծը և երկյուղը որդու համար։

Սոֆյան շուտով ինչ-որ տեղ գնաց, մի հինգ օրից հետո վերադարձավ ուրախ, կայտառ, իսկ մի քանի ժամ հետո նորից անհայտացավ և մի երկու շաբաթից կրկին երևաց։ Թվում էր, թե նա կյանքում պտտվում է լայն շրջաններ անելով, երբեմն եղբորը տեսության գալով, որպեսզի նրա բնակարանը լցնի իր կայտառությամբ և երաժշտությամբ։

Երաժշտությունն սկսեց մորը դուր գալ։ Ականջ դնելով՝ մայրն զգում էր, որ ջերմ հորձանքներ են զարնվում իր կրծքին, թափվում սրտի մեջ, որը բաբախում է ավելի համաչափ, և ինչպես առատ ջրված, խոր հերկված հողում հատիկները, այնպես էլ իր սրտում խոհերի ալիքներն են արագ, աշխուժորեն աճում, հեշտ և գեղեցիկ ծաղկում են հնչյունների ուժով արթնացած խոսքերը։

Մոր համար դժվար էր հաշտվել Սոֆյայի թափթփվածությանը, որն ամեն տեղ ցրիվ էր տալիս իր իրեղենները, ծխուկները, մոխիրը, և ավելի դժվար էր սովորել նրա համարձակ խոսքերին, այդ բոլորը աչք էր ծակում մանավանդ Նիկոլայի հանգիստ վստահության, նրա խոսքերի անփոփոխ, մեղմ լրջության կողքին։ Սոֆյան մորը թվում էր մի պատանի, որն շտապում է հատակավոր ցույց տալ իրեն, իսկ մարդկանց վրա նայում է որպես հետաքրքիր խաղալիքների։ Նա շատ էր խոսում աշխատանքի սրբության մասին և իր փնթիությամբ անմտորեն ավելացնում էր մոր աշխատանքը, խոսում էր ազատության մասին և մոր համար նկատելի կերպով ամենքին անհարմար դրության մեջ էր դնում սուր անհամբերատարությամբ, մշտական վեճերով։ Նրա մեջ հակասական շատ բան կար, և մայրն այդ տեսնելով՝ նրա հետ վարվում էր լարված զգուշությամբ, հետապնդող ուշադրությամբ, առանց այն մշտական սրտի ջերմության, որ Նիկոլայն էր առաջացնում նրա մեջ։

Նիկոլայը միշտ մտազբաղ՝ օրերն անց էր կացնում միօրինակ, չափված-ձևված կյանք վարելով. առավոտյան ժամը ութին նա թեյ էր խմում և լրագիր կարդալով՝ մորը հաղորդում էր նորությունները։ Նրան ունկնդրելով՝ մայրն ապշեցուցիչ պարզությամբ տեսնում էր, թե ինչպես կյանքի ծանր մեքենան մարդկանց անողոքաբար կտրտում՝ փող է դարձնում։ Մայրը նրա և Անդրեյի մեջ մի ընդհանուր բան էր զգում։ Նա էլ խոխոլի պես մարդկանց մասին խոսում էր առանց ոխակալության, կյանքի հոռի դասավորման մեջ հանցավոր համարելով ամենքին, բայց դեպի նոր կյանքն ունեցած հավատը նրա մեջ այնպես վառ չէր, ինչպես Անդրեյի մեջ, և ոչ այնպես պայծառ։ Նա խոսում էր միշտ հանգիստ, ազնիվ և խիստ դատավորի ձայնով և, թեև՝ նույնիսկ սարսափելի բանի մասին խոսելիս՝ ժպտում էր ափսոսանքի մեղմ ժպիտով, բայց նրա աչքերը փայլում էին սառն և հաստատապես։ Նրանց փայլը տեսնելով մայրը հասկանում էր, որ այդ մարդը ոչ ոքի ոչ մի բան չի ներում, ներել չի կարողանում, և զգալով, որ նրան ծանր է թվում այդ հաստատունությունը, խղճում էր Նիկոլային։ Եվ Նիկոլայն ավելի ու ավելի էր դուր գալիս մորը։

Նիկոլայը ժամը իններին գնում էր ծառայության, մայրը հավաքում էր սենյակը, ճաշ պատրաստում, լվացվում, հագնում մաքուր զգեստը և իր սենյակում նստած՝ նայում գրքերի նկարներին։ Նա արդեն սովորել էր կարդալը, բայց դա նրանից միշտ լարում էր պահանջում, և կարդալուց նա շուտով հոգնում էր, սկսում էր խոսքերի կապը չհասկանալ։ Իսկ նկարներ դիտելը նրան հրապուրում էր ինչպես երեխայի, նկարները նրա առջև բաց էին անում մի հասկանալի, գրեթե շոշափելի աշխարհ, նոր ու հրաշալի։ Հառնում էին ահագին քաղաքներ, հիանալի շենքեր, մեքենաներ, նավեր, հուշարձաններ, անհաշիվ հարստություններ, որ մարդիկ էին ստեղծել, և բնության ստեղծագործության բազմազանություն, որ ապշեցնում էր մարդու միտքը։ Կյանքն անսահման ընդլայնվում էր՝ ամեն օր աչքերի առջև բաց անելով վիթխարին, անծանոթը, հրաշալին, և ավելի ու ավելի էր հուզում այդ կնոջ արթնացող ծարավի հոգին իր հարստությունների առատությամբ, գեղեցկությունների անհամարելիությամբ։ Նա առանձնապես սիրում էր նայել կենդանաբանական ատլասի հատորները, և թեպետ դրանք օտար լեզվով էին, բայց նրան ամենից ավելի վառ պատկերացում էին տալիս երկրի գեղեցկության, հարստության ու լայնարձակության մասին։

— Մե՞ծ է երկիրը,— ասում էր նա Նիկոլային։

Ամենից շատ հուզում էին նրան միջատները և մանավանդ թիթեռները. նա խորին զարմանքով էր դիտում նրանց պատկերող նկարները և այսպես էր դատում.

— Ի՞նչ գեղեցկություն է, Նիկոլա՛յ Իվանովիչ, հը՞։ Եվ ի՞նչքան կա այս հաճելի գեղեցկությունից ամեն տեղ, բայց դե բոլորը մեզնից թաքնված է և չենք վայելում, չենք տեսնում։ Մարդիկ գեսուղեն են ընկնում, բան չեն իմանում, ոչ մի բանով հիանալ չեն կարողանում, դրա համար ոչ ժամանակ ունեն, ոչ ցանկություն։ Որքա՞ն ուրախություն կարող էին ստանալ, եթե իմանային, թե երկիրն ի՞նչքան հարուստ է, նրա վրա ի՞նչքան շատ զարմանալի բան է ապրում։ Եվ բոլորը ամենքի համար, ամեն մեկը բոլորի համար, այնպես չէ՞։

— Ի՞սկ որ,— ասում էր Նիկոլայը ժպտալով։ Եվ էլի նկարազարդ գրքեր էր բերում։

Երեկոները հաճախ Նիկոլայի մոտ հյուրեր էին հավաքվում, գալիս էր Ալեքսեյ Վասիլևիչը, դժգույն դեմքով և սև մորուքով լուրջ ու լռակյաց մի գեղեցիկ տղամարդ. Ռոման Պետրովիչը, դեմքը կարմիր բշտիկներով ծածկված, կլոր գլխով մի մարդ, որ շրթունքները միշտ ծպծպացնում էր ափսոսանքով. Իվան

Դանիլովիչը, վտիտ ու փոքրիկ, սրամորուք ու բարակաձայն, տաքարյուն, ճվճվան և բզի նման սուր. Եգորը, որ միշտ կատակում էր իր ու ընկերների մասին, և իր ավելի ու ավելի սաստկացող հիվանդության մասին։ Երևում էին և զանազան հեռավոր քաղաքներից եկած այլ մարդիկ։ Նիկոլայը նրանց հետ երկար և ցածրաձայն զրույցներ էր ունենում միշտ միևնույն բանի շուրջը, երկրի բանվոր մարդկանց մասին։ Վիճում էին, տաքանում ձեռքները թափահարելով, շատ թեյ էին խմում, երբեմն Նիկոլայը զրույցի աղմուկի մեջ լուռումունջ գրում էր թռուցիկներ, ապա կարդում ընկերներին, դրանք հենց այդտեղ արտագրում էին տպագիր տառերով, մայրը խնամքով հավաքում էր պատառոտված սևագրությունների կտորները և այրում։

Մայրը թեյ էր լցնում և զարմանում այն դյուրաբորբոքության վրա, որով նրանք խոսում էին բանվոր ժողովրդի կյանքի և վիճակի մասին, այն մասին, թե ինչպես անեն, որ այդ բանվոր ժողովրդի մեջ որքան կարելի է արագ և լավ սերմանեն մըտքերը ճշմարտության մասին, բարձրացնեն նրա ոգին։ Հաճախ նրանք բարկանալով՝ իրար հետ չէին համաձայնվում, իրար մեղադրում էին ինչ-որ բանում, վիրավորվում և նորից վիճում։

Մայրն զգում էր, որ ինքը բանվորների կյանքն ավելի լավ է ճանաչում, քան այդ մարդիկ, նրան թվում էր, թե ինքը նրանցից ավելի պարզ է տեսնում այդ մարդկանց հանձն առած խընդրի մեծությունը, և դա իրեն թույլ էր տալիս վերաբերվել նրանց բոլորին մեծի ներողամիտ, մի քիչ թախծագին զգացմունքով դեպի փոքրերը, որոնք մարդ ու կին խաղն են խաղում՝ առանց հասկանալու այդ հարաբերությունների դրաման։ Նա ակամա համեմատում էր նրանց ճառերն իր որդու և Անդրեյի ճառերի հետ և համեմատելով զգում էր տարբերություն, որն առաջ չէր կարողանում հասկանալ։ Երբեմն նրան թվում էր, թե այդտեղ ավելի ուժեղ են գոռում, քան մի ժամանակ գոռում էին ավանում. նա ինքն իրեն այսպես էր բացատրում այդ.

«Ավելի շատ գիտեն— ավելի բարձր էլ խոսում են...»

Բայց չափից դուրս հաճախ նա տեսնում էր, որ այս բոլոր մարդիկ կարծես դիտմամբ են իրար հրահրում և բորբոքվում են ձևի համար, կարծես նրանցից ամեն մեկն ուզում է ընկերներին ապացուցել, որ իր համար ճշմարտությունն ավելի է սըրտին մոտ և թանկագին, քան նրանց համար, իսկ մյուսները դրանից վիրավորվում էին, իրենց հերթին ապացուցելով՝ ճըշ-

մարտությունն իրե՛նց ավելի մոտ լինելը, սկսում էին վիճել կտրուկ, կոպիտ։ Յուրաքանչյուրն ուզում էր մյուսից ավելի բարձր ցատկել, ինչպես թվում էր մորը, և դա նրա մեջ անհանգիստ տխրություն էր առաջ բերում։ Մայրը շարժում էր հոնքը և ամենքի վրա նայելով աղաչական աչքերով մտածում էր.

«Մոռացել են Պավելին ու ընկերներին...»

Միշտ լարված ունկնդրելով վեճերին, իհարկե, չհասկանալով դրանք, նա այդ խոսքերի տակ զգացմունք էր որոնում և տեսնում էր, որ, երբ ավանում խոսում էին բարու մասին, ընդհանուր առմամբ, իբրև մի ամբողջություն էին դիտում այն, իսկ այստեղ ամեն ինչ կտոր-կտոր էին անում և մանրացնում, այնտեղ ավելի խոր և ուժգին էին զգում, այստեղ սուր, ամեն ինչ կտրատող խոհերի բնագավառն էր։ Այստեղ, վերջապես, ավելի շատ էին խոսում հինը կործանելու մասին, իսկ այնտեղ երազում էին նորը, սրանից էլ իր որդու և Անդրեյի ճառերն ավելի մոտ էին մոր սրտին, ավելի հասկանալի էին նրան...

Մայրը նկատել էր, որ երբ Նիկոլայի մոտ էր գալիս բանվորներից մեկնումեկը, տանտերն անսովոր համարձակ էր դառնում, նրա դեմքի վրա մի ինչ-որ քաղցրություն էր գալիս, և խոսում էլ էր այլ կերպ, քան ընդհանրապես, չգիտես՝ ավելի կոպիտ թե՛ ավելի անփույթ։

«Աշխատում է, որ իրեն հասկանան»,— մտածում էր մայրը։

Բայց դա մորը չէր գոհացնում, և նա տեսնում էր, որ բանվոր-հյուրն էլ է կուչ գալիս, կարծես ներքուստ կաշկանդվում է և չի կարող այնպես հեշտ և ազատ խոսել, ինչպես խոսում է իր հետ՝ հասարակ կնոջ հետ։ Մի անգամ, երբ Նիկոլայը դուրս էր գնացել, մայրը հարցրեց մի տղայի.

— Ի՞նչ ես քաշվում։ Քննության կանգնած երեխա հո՞ չես...

Տղան խոր ժպտաց։

— Անսովոր լինելուց խեցգետինն էլ է կարմրում... այնուամենայնիվ՝ մեզ նման մարդ չի...

Երբեմն գալիս էր Սաշինկան, նա երբեք երկար չէր նստում, միշտ դատում էր բանիմաց, չէր ծիծաղում, և ամեն անգամ հեռանալիս հարցնում էր մորը.

— Ինչպե՞ս է Պավել Միխայլովիչն, առո՞ղջ է։

— Փա՛ռք աստծու,— ասում էր մայրը։— Վնաս չունի, քեֆը տեղն է։

— Բարևեցե՛ք նրան,— խնդրում էր աղջիկը և անհետանում։

Երբեմն մայրը գանգատվում էր Սաշինկային, թե Պավելին երկար են պահում, նրա դատի օրը չեն նշանակում։ Սաշինկան մռայլվում և լռում էր, իսկ նրա մատներն արագ-արագ շարժվում էին։

Նիլովնան ցանկություն էր զգում ասել նրան.

«Անուշիկս, ես հո գիտեմ, որ դու նրան սիրում ես...»

Բայց սիրտ չէր անում, «աղջկա խիստ դեմքը, նրա ամուր սեղմված շրթունքները և խոսքի չոր, գործնական բնույթը կարծես նախօրոք վանում էին ամեն մի փաղաքշանք։ Հառաչելով մայրը սեղմում էր իրեն մեկնած ձեռքը և մտածում.

«Իմ դժբախտս...»

Մի անգամ եկավ Նատաշան։ Նա շատ ուրախացավ մորը տեսնելով, համբուրեց նրան և ի միջի այլոց, մի տեսակ հանկարծակի և կամացուկ հաղորդեց.

— Իսկ իմ մայրիկը մեռավ, մեռա՜վ խեղճը...

Գլուխը թափ տվեց, ձեռքի արագ շարժումով սրբեց աչքերը և շարունակեց.

— Ափսոսում եմ նրան, նա հիսուն տարեկան չկար, դեռ կարող էր երկար ապրել։ Իսկ մյուս կողմից նայում ես և ակամա մտածում՝ մահը հավանորեն ավելի թեթև է այս կյանքից։ Միշտ մենակ, ամենքի համար օտար, հորս գոռգոռոցից վախեցած, մի՞թե նա ապրում էր։ Մարդիկ ապրում են մի լավ բանի սպասելով, իսկ մայրս սպասելու բան չուներ, բացի վիրավորանքներից...

— Դուք ճիշտ եք ասում, Նատա՜շա,— ասաց մայրը քիչ մտածելուց հետո։— Մարդիկ ապրում են՝ լավին սպասելով, իսկ եթե սպասելու բան չկա, էլ ի՞նչ կյանք։— Եվ աղջկա ձեռքը գգվանքով շոյելով հարցրեց,— դուք հիմա մենա՞կ եք մնացել։

— Մենա՜կ,— թեթևությամբ պատասխանեց Նատաշան։

Մայրը մի քիչ լռեց և հանկարծ ժպտալով ասաց.

— Վնաս չունի՛։ Լավ մարդը մենակ չի ապրում, մարդիկ միշտ կմոտենան նրան...

VIII

Նատաշան գավառում ուսուցչուհի դարձավ մի մանածագործարանում, և Նիլովնան սկսեց արգելված գրքույկներ, թռուցիկներ, լրագրեր տանել նրա մոտ։

Դա դարձավ մոր գործը։ Ամիսը մի քանի անգամ կույսի զգեստ հագած, իբրև ժանյակներ և տանու քաթան վաճառող, իբրև հարուստ քաղքենուհի կամ ուխտավորուհի պանդուխտ՝ նա շրջագայում էր նահանգում քսակը մեջքին կամ ճամպրուկը ձեռքին։ Վագոններում և նավերում, հյուրանոցներում և իջևաններում նա իրեն պահում էր միշտ պարզ և հանգիստ, առաջինն ինքն էր զրույցի բռնվում անծանոթ մարդկանց հետ՝ անվախ, իր վրա ուշադրություն հրավիրելով իր սիրալիր, սրտաբաց խոսքերով և փորձված, շատ բան տեսած մարդու վստահ շարժումներով։

Նրան դուր էր գալիս մարդկանց հետ խոսել, լսել նրանց պատմությունները կյանքի մասին, գանգատները և տարակուսանքները։ Ամեն անգամ նրա սիրտը ուրախությամբ լցվում էր, երբ մարդու մեջ նկատում էր սուր դժգոհություն, այն դժգոհությունը, որը բողոքելով ճակատագրի հարվածների դեմ՝ լայնածորեն պատասխան է որոնում արդեն մտքում ձևակերպված հարցերին։ Նրա առջև ավելի ու ավելի լայն ու խայտաբղետ տեսքով էր ծավալվում մարդկային կյանքի պատկերը — կուշտ լինելու համար մղվող պայքարի մեջ անցնող անհանգիստ, խռովված կյանքի։ Ամենուրեք պարզ երևում էր մարդուն խաբելու, նրան կողոպտելու, նրանից որքան կարելի է իր համար շա՜տ օգուտ քամելու, նրա արյունը ծծելու կոպտորեն մերկ, լկտիորեն պարզ ձգտումը։ Եվ մայրը տեսնում էր, որ երկրիս երեսին ամեն բան առատ է, իսկ ժողովուրդը կարիքի մեջ է և անհամար հարստությունների շուրջն ապրելով՝ կիսաքաղց է։ Քաղաքներում կան տաճարներ ոսկով ու արծաթով լի, որոնք պետք չեն աստծուն, իսկ տաճարների գավիթներում մուրացկաններն են դողդողում՝ ապարդյուն սպասելով, թե երբ իրենց ձեռքը կդնեն մի փոքրիկ պղնձե դրամ։ Մայրն առաջ էլ էր տեսել այդ՝ հարուստ եկեղեցիները և տերտերների ոսկեկար շուրջառները, աղքատ ժողովրդի հյուղերը և նրա խայտառակ ցնցոտիները, բայց առաջ դա նրան բնական էր թվում, իսկ այժմ՝ անհաշտելի և վիրավորական չքավոր մարդկանց համար, մարդկանց, որոնց, նա գիտեր, եկեղեցին ավելի հարազատ և հարկավոր էր, քան հարուստներին։

Քրիստոսին պատկերող նկարներից, նրա մասին լսած պատմություններից մայրը գիտեր, որ նա, չքավորների այդ բարեկամը, պարզ էր հագնվում, իսկ եկեղեցիներում, ուր չքա-

վոր ժողովուրդը գալիս էր նրա մոտ մխիթարություն ստանալու, մայրը տեսնում էր նրան շղթայված լպիրշ ոսկով և մետաքսով, որը պժգանքով խշխշում էր աղքատություն տեսնելիս։ Եվ մայրն ակամա միտն էր բերում Ռիբինի խոսքերը.

«Աստուծով էլ են խաբել մեզ»։

Իր համար աննկատելի կերպով մայրն սկսեց ավելի քիչ աղոթել, բայց ավելի ու ավելի շատ էր մտածում Քրիստոսի և այն մարդկանց մասին, որոնք առանց նրա անունը տալու, կարծես նույնիսկ առանց նրան ճանաչելու ապրում էին, ինչպես մորն էր թվում, նրա պատվերներով և նրա պես երկիրը չքավորների թագավորություն համարելով՝ կամենում էին մարդկանց մեջ հավասարապես բաժանել երկրի ամբողջ հարստությունը։ Մայրն այդ մասին շատ էր մտածում, և նրա հոգում աճում էր այդ մտածմունքը՝ խորանալով և ընդգրկելով նրա համար տեսանելի ամեն ինչ, այն ամենը, ինչ որ լսել էր նա, աճում էր՝ աղոթքի լուսավոր դեմք ընդունելով, աղոթքի, որը համահավասար լույսով ողողում էր խավար աշխարհը, ամբողջ կյանքը և բոլոր մարդկանց։ Եվ մորը թվում էր, թե ինքը Քրիստոսը, որին մայրը միշտ սիրել էր աղոտ սիրով, մի բարդ զգացմունքով, որի մեջ երկյուղը սերտորեն շաղկապված էր հույսի հետ և խանդաղատանքը տրտմության հետ, Քրիստոսն այժմ իր սրտին ավելի մոտ է դարձել և արդեն ուրիշ էր նա, ավելի բարձր և իր համար ավելի տեսանելի, ավելի ուրախալի և ավելի պայծառադեմ,— կարծես թե նա իրոք հարություն է առել կյանքի համար՝ լվացված և աշխուժացած ա՛յն ջերմ արյունով, որ մարդիկ առատաձեռն կերպով թափել են նրա համար, ողջախոհությամբ չհայտարարելով մարդկության տարաբախտ բարեկամի անունը։ Իր ճանապարհորդություններից մայրը վերադառնում էր Նիկոլայի մոտ միշտ ուրախ, հուզված այն բանից, ինչ որ տեսնում և լսում էր ճանապարհին, առույգ և կատարած գործից գոհ։

— Լա՜վ բան է ամեն տեղ ման գալը և շատ բան տեսնելը,— ասում էր նա Նիկոլային երեկոները։— Հասկանում ես, թե կյանքն ի՜նչպես է կառուցվում։ Քերում, շպրտում են ժողովրդին կյանքի մի անկյունը, մարդը վիրավորված դեսուդեն է ընկնում այնտեղ, բայց ուզի-չուզի, մտածում է՝ ինչի՞ համար։ Ինձ ինչո՞ւ են դեն քշում։ Ինչո՞ւ ամեն ինչ առատ է, իսկ ես քաղցած եմ։ Եվ որքան խելք կա ամեն տեղ, իսկ ես հիմար ու

տգետ եմ։ Եվ ո՞ւր է այն ողորմած աստվածը, որի առաջ հարուստ ու աղքատ չկա, այլ ամենքը նրա զավակներն են, նրա սրտի համար թանկագին։ Ժողովուրդը քիչ-քիչ վրդովվում է իր կյանքով, զգում է, որ ստությունը կխեղդի իրեն, եթե ինքն իր մասին չմտածի։

Եվ մայրն ավելի ու ավելի էր պահանջկոտ ցանկությունն զգում իր լեզվով ասելու մարդկանց կյանքի անարդարությունների մասին. երբեմն նրա համար դժվար էր լինում զսպել այդ ցանկությունը...

Նիկոլայը նրան նկարներով զբաղված տեսնելով՝ ժպտալով միշտ մի որևէ զարմանալի բան էր պատմում։ Մարդու նպատակների խիզախությամբ ապշած՝ մայրը թերահավատությամբ հարցնում էր Նիկոլային.

— Բայց մի՞թե կարելի բան է դա։

Եվ Նիկոլայը համառորեն, իր մարգարեությունների ճշմարտությանը անհողդողդ կերպով հավատացած, ակնոցի միջից բարի աչքերով նայելով մոր դեմքին, ապագայի մասին հեքիաթներ էր պատմում նրան։

— Մարդու ցանկություններին չափ չկա, նրա ուժն անսպառ է։ Բայց աշխարհն, այնուամենայնիվ, դեռ շատ դանդաղ է հարստանում ոգով, որովհետև այժմ ամեն մարդ կամենալով ազատել իրեն կախվածությունից՝ ստիպված է կուտակել ոչ թե գիտելիքներ, այլ փող։ Իսկ երբ մարդիկ կսպանեն ագահությունը, երբ նրանք իրենց կազատեն անազատ աշխատանքի գերությունից...

Մայրը հազվադեպ էր հասկանում նրա բառերի իմաստը, բայց այդ խոսքերին կենդանի շունչ տվող անվարան հավատի զգացմունքն իր համար ավելի ու ավելի մատչելի էր դառնում։

— Երկրիս երեսին ազատ մարդիկ չափազանց քիչ կան, ահա երկրի դժբախտությունը,— ասում էր Նիկոլայը։

Դա հասկանալի էր — մայրը ճանաչում էր ագահությունից և չարությունից ազատագրվածներին, նա հասկանում էր, որ եթե այդպիսի մարդիկ ավելի շատ լինեին, կյանքի խավար և ահռելի դեմքն ավելի բարեհամբույր և պարզ, ավելի բարի և լուսավոր կլիներ։

— Մարդ ակամա պետք է անողոք լինի,— տխրությամբ ասում էր Նիկոլայը։

Մայրը գլխով հավանության նշան էր տալիս՝ խոխոլի խոսքերը մտաբերելով։

IX

Նիկոլայը, որ միշտ ճշտապահ էր, մի անգամ ծառայությունից եկավ շատ ավելի ուշ, քան ընդհանրապես, և առանց վերարկուն հանելու, ձեռները վրդովված տրորելով՝ շտապ ասաց.

— Գիտե՞ք, Նի՛լովնա, այսօր մեր ընկերներից մեկը բանտից փախել է։ Բայց ո՞վ է նա։ Չհաջողվեց իմանալ...

Մայրը հուզմունքով բռնված օրորվեց ոտների վրա, նստեց աթոռին շշուկով հարցնելով.

— Գուցե Պաշա՞ն է։

— Գուցե՛,— պատասխանեց Նիկոլայն ուսերը թոթովելով։— Բայց ի՞նչպես օգնել նրան թաքնվելու, ի՞նչպես գտնել նրան։ Ես հիմա փողոցներով շրջում էի, որպեսզի տեսնեմ՝ կգտնե՞մ նրան։ Սա հիմարություն է, բայց պետք է որևէ բան անել։ Եվ ես նորից կգնամ...

— Ե՛ս էլ,— գոչեց մայրը։

— Դուք գնացեք Եգորի մոտ, տեսեք՝ նա որևէ բան գիտե՞,— առաջարկեց Նիկոլայը շտապ հեռանալով։

Մայրը թաշկինակը գլխից գցեց և հույսով համակված՝ Նիկոլայի հետևից արագ դուրս եկավ փողոց։ Աչքերը պղտորվում էին, և սիրտը խփում էր շտապ-շտապ, մորն ստիպելով գրեթե վազել։ Նա գնում էր հույսը դիպվածի վրա դրած, գլխահակ, և շուրջը ոչինչ չէր նկատում։

«Գնամ՝ տեսնեմ հանկարծ, նա այնտե՞ղ է»,— առկայծում էր մի հույս առաջ մղելով նրան։

Շոգ էր, մայրը հոգնածությունից շնչասպառ էր լինում և երբ հասավ Եգորի բնակարանի սանդուղքին, կանգ առավ այլևս առաջ գնալու ուժ չունենալով, ետ նայեց և զարմացած, կամաց ճչալով, մի պահ աչքերը փակեց, նրան թված, թե դարպասի մոտ կանգնած է Նիկոլայ Վեսովշչիկովը, ձեռները գրպանում դրած։ Բայց երբ մայրը նորից նայեց, ոչ ոք չկար...

«Աչքի՞ս երևաց»,— մտքում ասաց մայրը աստիճաններով բարձրանալով և ականջ դնելով։ Ներքևում, բակում լսելի էր դանդաղ քայլերի խուլ թմփթմփոց։ Սանդուղքի դարձում կանգ առնելով՝ մայրը կռանալով ներքև նայեց և նորից տեսավ իրեն ժպտացող չեչոտ դեմքը։

— Նիկոլա՛յ, Նիկոլա՛յ...— բացականչեց մայրը իջնելով նրան դիմավորելու, իսկ սիրտը հուսախաբ նվաղեց։

— Դու գնա՛։ Գնա՛,— ցածր պատասխանեց Նիկոլայը ձեռքով անելով։

Մայրն արագ վազեց սանդուղքով, մտավ Եգորի սենյակը և նրան բազմոցի վրա պառկած տեսնելով՝ շնչասպառ շշնջաց.

— Նիկոլայը փախե՛լ է... բանտից...

— Ո՞րը,— խռպոտ ձայնով հարցրեց Եգորը, գլուխը բարձրացնելով բարձից։— Այնտեղ երկու Նիկոլայ կա...

— Վեսովշչիկովը... Այստե՛ղ է գալիս։

— Հրաշալի՛ է։

Նիկոլայն արդեն մտել էր սենյակը, դռան կեռը գցել և գլխարկը հանած ցածր ծիծաղում էր, գլխի մազերը հարթելով։ Եգորը արմունկները բազմոցին հենելով վեր կացավ, կոկորդը մաքրեց՝ գլխով անելով.

— Համեցե՛ք...

Լայն ժպտալով Նիկոլայը մոտեցավ մորը, բռնեց նրա ձեռքը։

— Եթե ես քեզ չտեսնեի, գուցե էլի բանտ վերադառնայի։ Քաղաքում ոչ ոքի չեմ ճանաչում, իսկ ավանը գնայի՝ իսկույն կբռնեին։ Գնում եմ ու մտքս եմ անում. հիմա՛ր, ինչո՞ւ փախար։ Հանկարծ տեսնեմ՝ Նի՛լովնան վազում է։ Ես էլ քո հետևից եկա...

— Դու ի՞նչպես փախար,— հարցրեց մայրը։

Վեսովշչիկովն անհամարձակ նստեց բազմոցի ծայրին և ուսերը շփոթված կծկելով ասաց.

— Դեպքն այդպես բերեց։ Ես զբոսնում էի, իսկ քրեականներն սկսեցին վերակացուին ծեծել։ Այնտեղ մեկը կա, գողության համար ժանդարմությունից դուրս են արել, լրտեսում է, լուր է տալիս, ոչ ոքի չի թողնում ապրել։ Քրեականները ծեծում էին նրան, իրարանցում ընկավ, վերակացուները վախեցան, սկսեցին վազվզել, սուլել։ Ես տեսա, որ դարպասը բաց է, երևում են հրապարակը, քաղաքը։ Եվ դուրս եկա առանց շտապելու... Կարծես երազումս էր։ Մի քիչ հեռացա, ուշքի եկա, մտածեցի՝ ո՞ւր գնամ։ Մտիկ տվի, տեսա բանտի դարպասը արդեն փակված է։

— Հը՛մ,— ասաց Եգորը,— իսկ դուք, պարո՛ն, լավ կլիներ՝ վերադառնայիք, դուրը քաղաքավարի խփեիք և խնդրեիք, որ

ներս թողնեն ձեզ։ Ներողություն, կասեիք, ես մի քիչ հրապուրվել էի...

— Այո,— քմծիծաղով շարունակեց Նիկոլայը,— սա հիմարություն է։ Է՛հ, այնուամենայնիվ, ընկերներիս հետ լավ չվարվեցի, ոչ ոքի բան չասացի... Գալիս տեսնում եմ՝ ննջեցյալ են տանում, մի երեխա։ Գնացի դագաղի հետևից գլուխս կախ, չեմ նայում ոչ ոքի։ Գերեզմանատանը մի քիչ նստեցի, օդ կպավ ինձ, և գլխումս մի միտք ծագեց...

— Հենց մի՞,— հարցրեց Եգորը և հառաչելով ավելացրեց.— ես կարծում եմ՝ գլուխդ նեղ չի լինի դրա համար...

Վեսովշչիկովը առանց վիրավորվելու ծիծաղեց գլուխը թափ տալով։

— Է՛, հիմա գլուխս այնպես դատարկ չի, ինչպես առաջ էր։ Իսկ դու, Եգո՛ր Իվանովիչ, դեռ հիվա՞նդ ես...

— Ամեն մարդ անում է այն, ինչ որ ձեռքից գալիս է,— պատասխանեց Եգորը թաց-թաց հազալով։— Շարունակի՛ր։

— Հետո գնացի զեմստվոյի թանգարանը։ Մի քիչ ման եկա, բայց ամբողջ ժամանակ մտածում էի՝ ի՞նչ անեմ, ո՞ւր գնամ հիմա։ Մինչև անգամ վրաս բարկացա։ Սաստիկ սոված էի։ Դուրս եկա փողոց, ման եմ գալիս, վրդովվում եմ... Մեկ էլ տեսնեմ՝ ոստիկաններն ամենքին տնտղում են։ Հը՛, մտածում եմ, ոեխս ինձ շատ շուտ կմատնի... Հանկարծ տեսնեմ Նիլովնան դիմացս է վազում, ես մի կողմ անցա, հետո նրա հետևից ընկա, ահա՛ և բոլորը։

— Իսկ ես քեզ չեմ է՛լ նկատել,— քաշվելով ասաց մայրը։ Նա զննում էր Վեսովշչիկովին և թվում էր, թե Նիկոլայը կարծես թեթևացել է։

— Հիմա ընկերներս անհանգստանում են երևի... գլուխը քորելով ասաց Նիկոլայը։

— Իսկ իշխանավորներիդ չե՞ս խղճում։ Չէ՞ որ նրանք էլ են անհանգստանում,— նկատեց Եգորը։ Նա բերանը բաց արեց և սկսեց շրթունքներն այնպես շարժել, որ կարծես օդ էր ծամում։— Սակայն՝ կատակը մի կո՛ղմ։ Պետք է քեզ թաքցնել, որը հեշտ բան չի, թեպետ և՝ հաճելի է։ Եթե ես կարողանայի վեր կենա՛լ...— Նրա շունչը կտրվեց, ձեռները նետեց կրծքին և թույլ շարժումներով սկսեց կուրծքը տրորել։

— Դու շատ հիվանդ ես, Եգո՛ր Իվանովիչ,— ասաց Նիկոլայը։

Մայրը հառաչեց, աչքերն անհանգիստ ման ածեց փոքրիկ, նեղ սենյակում։

— Դա իմ անձնական գործն է,— պատասխանեց Եգորը։— Դուք, մայրի՛կ, հարցրեք Պավելի մասին, անտարբեր ձևանալու կարիք չկա։

Վեսովշչիկովը խոր ժպտաց։

— Պավելը վատ չի։ Առողջ է։ Նա մի տեսակ ավագի պես բան է այնտեղ։ Իշանավորների հետ խոսում է և ընդհանրապես հրամանատարություն է անում։ Նրան հարգում են...

Վլասովան գլխով էր անում լսելով Վեսովշչիկովի պատմածները և խեթ նայում էր Եգորի ուռած, կապտած դեմքին։ Այդ դեմքն անշարժ սառած, արտահայտությունից զուրկ, տարօրինակ տափակ էր թվում, և նրա վրա աչքերն էին միայն աշխույժ և ուրախ պսպղում։

— Ուտելու բան տայիք, լավ կլիներ, աստված վկա, շատ քաղցած եմ,— անսպասելիորեն բացականչեց Նիկոլայը։

— Մայրի՛կ, դարակի վրա հաց կա, հետո գնացեք միջանցքը, ձախ կողմի երկրորդ դուռը խփեք։ Կբանա մի կին, նրան ասացեք, թող այստեղ գա և, ինչ ուտելիք որ ունի, բոլորը հետը բերի։

— Բոլորն ի՞նչ պիտի անենք,— բողոքեց Նիկոլայը։

— Մի՛ հուզվիր, շատ բան չկա...

Մայրը դուրս գնաց, խփեց դուռը և ներսի անդորրությանն ականջ դնելով՝ տխրությամբ մտածեց Եգորի մասին.

«Մեռնում է...»

— Ո՞վ է,— հարցրին դռան հետևից։

— Եգոր Իվանովիչի մոտից եմ եկել,— ցածր ձայնով ասաց մայրը։— Ձեզ խնդրում է գալ իր մոտ...

— Իսկույն կգա՛մ,— առանց դուռը բանալու պատասխանեցին նրան։ Մայրը մի քիչ սպասեց և դուռը նորից խփեց։ Այն ժամանակ դուռն արագ բացվեց, և միջանցք դուրս եկավ մի բարձրահասակ, ակնոցավոր կին։ Շտապ ուղղելով փոքրիկ կոֆտայի ճմրթված թևքը, խստությամբ հարցրեց մորը.

— Դուք ի՞նչ եք ուզում։

— Ես Եգոր Իվանովիչի մոտից եմ եկել...

— Հա՛։ Գնանք։ Օ՜, ես ձեզ ճանաչում եմ,— կամաց բացականչեց կինը։— Բարև՛ ձեզ։ Մութ է այստեղ...

Վլասովան նայեց նրան և հիշեց, որ նա երբեմն Նիկոլայի մոտ էր գալիս։

«Բոլորը մերոնք են»,— անցավ մոր մտքով։

Դեպի Վլասովան գալով՝ կինն ստիպեց նրան առաջ գնալ, իսկ ինքը հետևից գալով հարցրեց.

— Նա իրեն վա՞տ է զգում։

— Այո, պառկած է։ Ձեզ խնդրեց ուտելիք տանել...

— Է՜, դա ավելորդ է...

Երբ նրանք մտնում էին Եգորի սենյակը, նրանց դիմավորեց նրա խռոցը.

— Նախահայրերիս մոտ եմ ուղևորվում, բարեկա՜մս։ Լյուդմի՛լա Վասիլևնա, այս մարդը բանտից հեռացել է առանց իշխանության թույլտվության, հանդո՜ւգն է։ Ամենից առաջ կերակրե՛ք նրան, ապա թաքցրե՛ք որևէ տեղ։

Կինը գլխով արեց և, ուշադրությամբ նայելով հիվանդի դեմքին, խստությամբ ասաց.

— Դուք, Եգո՛ր, պետք է իսկո՛ւյն ուղարկեիք հետևիցս, հենց որ ձեզ մոտ էին եկել։ Եվ դուք, տեսնում եմ, երկու անգամ է դեղ չեք խմել, դա ի՞նչ անփութություն է։ Ընկերնե՛ր, եկեք ինձ մոտ։ Հիմա հիվանդանոցից այստեղ կգան Եգորի հետևից։

— Այնուամենայնիվ, ինձ հիվանդանո՞ց եք ուղարկում,— հարցրեց Եգորը։

— Այո։ Այնտեղ ես ձեզ հետ կլինեմ։

— Այնտե՞ղ էլ։ Օ՜, տե՜ր աստված։

— Հիմարություն մի՛ անեք...

Խոսելով կինն ուղղեց վերմակը Եգորի կրծքին, ուշի-ուշով զննեց Նիկոլային, աչքերով չափեց սրվակի դեղը։ Նա խոսում էր միալար, կամաց, նրա շարժումները սահուն էին, դեմքը դժգույն, մուգ հոնքերը գրեթե իրար էին միանում քթարմատից վեր։ Նրա դեմքը դուր չէր գալիս մորը, նա գոռոզ էր թվում, իսկ աչքերը նայում էին առանց ժպտալու, անփայլ։ Եվ այնպես էր խոսում, կարծես հրամայում էր։

— Մենք գնա՜նք,— շարունակեց նա։— Ես շո՛տ՛վ կվերադառնամ։ Դուք Եգորին մի հացի գդալով ա՛յ սրանից տվեք։ Թույլ չտաք նրան խոսել...

Եվ նա գնաց, Նիկոլային հետը տանելով։

— Հրաշալի՜ կին է,— ասաց Եգորը հառաչելով։— Սքանչելի կին է... Մայրիկ, ձեզ պետք է նրա մոտ գործի դնել, նա շատ է հոգնում...

— Այդքան մի՛ խոսիր։ Ա՜հ, խմի՛ր՝ ավելի լավ է...— մեղմորեն խնդրեց մայրը։

Եգորը կուլ տվեց դեղը և մի աչքը կկոցելով շարունակեց.

— Լռեմ էլ, միևնույն է, մեռնելու եմ...

Մյուս աչքով նա նայում էր մոր դեմքին, շրթունքները դանդաղ շարժվում էին ժպտալու համար։ Մայրը գլուխը կախեց, խղճահարության սուր զգացմունքը նրա մեջ արցունքներ էր հարուցանում։

— Ոչի՜նչ, դա բնական է... Ապրելու հաճույքն իր հետևից մեռնելու պարտականություն է բերում...

Մայրը ձեռքը դրեց նրա գլխին և նորից կամաց ասաց.

— Սո՜ւս արա, է՜...

Եգորն աչքերը փակեց, կարծես իր կրծքի խռոցներին ականջ դնելով, և համառությամբ շարունակեց.

— Լռելը միտք չունի, մայրի՛կ։ Լռությամբ ի՞նչ պիտի շահեմ։ Հոգեվարքի մի քանի վայրկյաններ, բայց կկորցնեմ լավ մարդու հետ խոսակցելու բավականությունը։ Ես կարծում եմ, որ մյուս աշխարհում այնպիսի լավ մարդիկ չկան, ինչպես այս աշխարհում...

Մայրն անհանգստությամբ ընդհատեց նրա խոսքը.

— Ահա կգա նա, խանումը, և ինձ կհայհոյի, որ դու խոսում ես...

— Նա խանում չի, այլ ռևոլյուցիոներ է, ընկեր է, հրաշալի հոգի է։ Նա ձեզ անպայման հայհոյելու է, մայրի՛կ։ Բոլորին է հայհոյում, միշտ...

Եվ դանդաղ, շրթունքները դժվարությամբ շարժելով, Եգորն սկսեց պատմել իր հարևանուհու կյանքի պատմությունը։ Նրա աչքերը ժպտում էին, մայրը տեսնում էր, որ նա դիտմամբ հակառակվում է իրեն, և նայելով նրա դեմքին, որ ծածկված էր թաց կապտությամբ, անհանգիստ մտածում էր.

«Կմեռնի...»

Ներս մտավ Լյուդմիլան, դուռը հետևից խնամքով ծածկեց, և Վլասովային դիմելով ասաց.

— Անհրաժեշտ է, որ ձեր ծանոթն զգեստը փոխի և որքան կարելի է շուտ հեռանա իմ մոտից. ուրեմն դուք, Պելագե՛յա Նիլովնա, իսկույն ևեթ գնացեք, նրա համար զգեստ ճարեք և

բոլորն այստեղ բերեք։ Ափսոս, Սոֆյան այստեղ չի, դա նրա մասնագիտությունն է, մարդկանց թաքցնելը։

— Նա վաղը գալու է,— նկատեց Վլասովան գլխաշորը ուսերին գցելով։

Ամեն անգամ, երբ մորը որևէ հանձնարարություն էին անում, նա սաստիկ ցանկություն էր զգում արագ և լավ կատարել այդ գործը, և արդեն չէր կարողանում ոչ մի բանի մասին մտածել, բացի իր անելիքից։ Եվ այժմ նոթերը մտահոգված կիտելով՝ գործնականորեն հարցրեց.

— Դուք ի՞նչ շոր եք ուզում հագցնել նրան։

— Միևնո՛ւյնն է։ Նա գիշերն է գնալու...

— Գիշերն ավելի վատ է, փողոցներում ավելի՛ քիչ մարդ կա, ավելի շատ են հետևում, իսկ նա շատ էլ ճարպիկ չի...

Եգորը խոպոտ ծիծաղեց։

— Իսկ կարելի՞ է գալ հիվանդանոց քեզ մոտ,— հարցրեց մայրը։

Եգորը հազալով գլխով արեց. Լյուդմիլան սև աչքերով նայեց մոր երեսին և առաջարկեց.

— Ուզում եք նրա մոտ հերթապահությո՞ւն անել ինձ հետ։ Այո՞։ Լա՛վ։ Իսկ հիմա շո՛ւտ գնացեք...

Սիրալիր, բայց հրամայողաբար մորը թևանցուկ անելով դռնից դուրս բերեց և այնտեղ կամաց ասաց.

— Մի՛ վիրավորվեք, որ ես ձեզ դուրս եմ բերում։ Բայց նրա համար խոսելը վտանգավոր է... Իսկ ես հույս ունեմ...

Նա բռունցքները սեղմեց, մատները ճռճռացին, իսկ արտանունքները հոգնած իջան աչքերի վրա...

Այդ բացատրությունը շփոթեցրեց մորը, և նա մրմնջաց.

— Այդ ի՞նչ եք ասում։

— Նայեցե՛ք տեսեք, լրտեսներ չկա՞ն,— կամաց ասաց Լյուդմիլան։ Ձեռքերը դեմքին դնելով նա տրորեց քունքերը, շրթունքները ցնցվում էին, դեմքը մեղմացել էր։

— Գիտե՞մ...— պատասխանեց նրան մայրը ոչ առանց հպարտության։

Դարպասից դուրս գալով, նա մի րոպե կանգ առավ գլխաշորն ուղղելով և աննկատելիորեն, բայց ուշի-ուշով շուրջը նայեց։ Նա արդեն կարողանում էր գրեթե անսխալ ճանաչել լրտեսին փողոցի ամբոխի մեջ։ Նրան լավ ծանոթ էին քայլվածքի շեշտվող անփութությունը, ձեռքի շարժումների բռնազբոսիկ

համարձակությունը, հոգնածության և ձանձրույթի արտահայտությունը դեմքի վրա և այդ բոլորի հետևում վատ թաքցրված՝ անհանգիստ, անախորժ սուր աչքերի վախկոտ, հանցավոր կայծկլտումը։

Այս անգամ մայրն այդ ծանոթ դեմքը չնկատեց և առանց շտապելու գնաց փողոցով, իսկ հետո կառք վարձեց և հրամայեց շուկա տանել իրեն։ Նիկոլայի համար զգեստ գնելիս նա խիստ սակարկում էր վաճառողների հետ և ի միջի այլոց հայհոյում իր հարբեցող մարդուն, որի համար գրեթե ամեն ամիս ստիպված է լինում նոր զգեստ գնել։ Այդ հնարքը քիչ էր ազդում վաճառականների վրա, բայց շատ դուր էր գալիս իրեն՝ մորը։ Ճանապարհին նա կռահել էր, որ ոստիկանությունն անշուշտ կհասկանա Նիկոլայի զգեստ փոխելու անհրաժեշտությունը և խուզարկուներ կուղարկի շուկա։ Նույնպիսի միամիտ նախազգուշություններով էլ նա վերադարձավ Եգորի բնակարանը, ապա հարկ եղավ, որ նա ուղեկցի Նիկոլային քաղաքի ծայրամասը։ Ինքը փողոցի մի կողմից էր գնում, Նիկոլայը՝ մյուս, և իր համար ծիծաղելի և հաճելի էր տեսնել, թե Վեսովշչիկովն ինչպես ծանր էր քայլում՝ գլխիկոր և ոտներն իրար փաթաթելով կարմրաշեկ վերարկուի երկար փեշերի մեջ, և ինչպես էր ուղղում քթի վրա ընկնող գլխարկը։ Ամայի փողոցներից մեկում նրանց դիմավորեց Սաշինկան, և մայրը գլխի շարժումով հրաժեշտ տալով Վեսովշչիկովին՝ տուն գնաց։

«Իսկ Պաշան նստած է... Անդրյուշան էլ...»,— տխուր մտածում էր նա։

X

Նիկոլայը մորը դիմավորեց անհանգիստ բացականչությամբ.

— Գիտե՞ք, Եգորը շա՛տ վատ է, շա՛տ։ Նրան տարել են հիվանդանոց, այստեղ էր Լյուդմիլան, նա խնդրում է ձեզ գնալ այնտեղ իր մոտ...

— Հիվանդանո՞ց։

Ակնոցը ներվային շարժումով ուղղելով՝ Նիկոլայը մորն օգնեց կոֆտան հագնել և շոր, տաք ձեռքով նրա ձեռքը սեղմելով՝ ցնցվող ձայնով ասաց.

— Հա՛։ Վերցրե՛ք ահա այս կապոցը։ Վեսովշչիկովին տեղավորեցի՞ք։

— Ամեն բան լավ է...

— Ես էլ կգամ Եգորի մոտ...

Հոգնածությունից մոր գլուխը պտտվում էր, իսկ Նիկոլայի անհանդիստ տրամադրությունը նրա մեջ ողբերգության թախծալի նախազգացում առաջացրեց։

«Մեռնում է»,— մոր գլխում բութ կերպով զարկում էր այդ մռայլ միտքը։

Բայց երբ նա եկավ հիվանդանոցի փոքրիկ, մաքուր ու լուսավոր սենյակը և տեսավ, որ Եգորը մահճակալի վրա բարձերի սպիտակ կույտի մեջ նստած խռպոտ ձայնով քրքջում է, դա միանգամից հանգստացրեց մորը։ Նա ժպտալով կանգնեց շեմքում և սկսեց ականջ դնել, թե հիվանդն ինչպես էր բժշկին ասում.

— Բուժումը՝ դա ռեֆորմ է...

— Խեղկատակություն մի՛ անիր, Եգո՛ր,— բարակ ձայնով մտահոգ բացականչեց բժիշկը։

— Իսկ ես ռևոլյուցիոներ եմ, ատում են ռեֆորմները...

Բժիշկն զգուշորեն ձեռքը դրեց Եգորի ծնկին, աթոռից վեր կացավ և մտախոհ, մորուքը ձգելով, սկսեց մատներով շոշափել հիվանդի դեմքի ուռուցիկները։

Մայրը լավ էր ճանաչում բժշկին. նա Նիկոլայի մոտ ընկերներից մեկն էր, նրան անվանում էին Իվան Դանիլովիչ։ Մայրը մոտեցավ Եգորին, որը լեզուն հանելով դիմավորեց նրան։ Բժիշկը ետ նայեց։

— Հա՛, Նի՛լովնան է։ Բարև՛ ձեզ։ Ձեռքինդ ի՞նչ է։

— Գրքեր են երևի։

— Նրան կարդալ չի կարելի,— նկատեց փոքրահասակ բժիշկը։

— Նա ուզում է ինձ ապուշ դարձնել,— գանգատվեց Եգորը։

Կարճառոտ, ծանր հառաչներ էին դուրս մղվում Եգորի կրծքից թաց խռոցով, նրա դեմքը պատած էր քրտինքի մանր կաթիլներով, և չհնազանդվող, ծանր ձեռները դանդաղորեն բարձրացնելով նա ափով սրբում էր ճակատը։ Ուռած այտերի տարօրինակ անշարժությունն այլանդակում էր նրա լայն, բարի դեմքը, բոլոր դիմագծերը չքացել էին մեռելային դիմակի տակ և միմիայն ուռուցիկների մեջ խորասուզված աչքերն էին պայծառ նայում ներողամիտ ժպիտով։

— Հե՛յ, գիտությո՛ւն, ես հոգնել եմ, կարելի՞ է պառկել...— հարցրեց նա։

— Չի կարելի,— կարճ ասաց բժիշկը։

— Լավ, ես կպառկեմ, հենց որ դու գնաս...

— Դուք, Նի՛լովնա, թույլ չտա՛ք նրան պառկել։ Բարձերն ուղղեցե՛ք։ Եվ, խնդրում եմ, նրա հետ չխոսեք, նրա համար դա վնասակար է...

Մայրը գլխով արեց։ Բժիշկը հեռացավ արագ, մանր քայլերով։ Եգորը գլուխը ետ տարավ, աչքերը փակեց և այդպես սառած մնաց, միայն նրա ձեռքի մատներն էին կամաց շարժվում։ Փոքր սենյակի սպիտակ պատերից չոր ցուրտ, աղոտ տխրություն էր փչում։ Մեծ պատուհանից նայում էին լորենիների գանգուր գագաթները, մուգ փոշոտ սաղարթի մեջ փայլում էին դեղին բծեր՝ մոտալուտ աշնան սառը հպումները։

— Մահն ինձ մոտենում է դանդաղ, դժկամորեն...— առանց շարժվելու և առանց աչքերը բանալու ասաց Եգորը։— Երևում է, որ նա մի քիչ խղճում է ինձ, մտածելով, թե յոլա գնացող տղա եմ եղել...

— Սուս արա, էլի՛, Եգո՛ր Իվանովիչ,— խնդրեց մայրը նրա ձեռքը կամաց շոյելով։

— Սպասիր, սուս կանեմ...

Շնչասպառվելով, բառերն ուժով արտասանելով՝ Եգորը շարունակեց, խոսքն ընդհատելով տկարության երկար պառկաներով։

— Դա շատ լավ է, որ դուք մեզ հետ եք, հաճելի է տեսնել ձեր դեմքը։ Ի՞նչ է լինելու ձեր վերջը, մտածում եմ ինքս ինձ ձեր մասին։ Մարդ տխրում է մտածելով, որ ձեզ ևս, ինչպես բոլորին, սպասում է բանտը և ամեն տեսակ խոզություն։ Դուք բանտից չե՞ք վախենում։

— Ո՛չ,— պարզ պատասխանեց մայրը։

— Դեհ, իհարկե։ Բայց և այնպես բանտը զզվելի բան է, բանտն է ինձ այսպես խեղանդամել, ա՛յ։ Խղճով ասած, ես չեմ ուզում մեռնել...

«Գուցե չես մեռնելու դեռ»,— ուզում էր ասել մայրը, բայց նրա դեմքին նայելով լռեց։

— Ես դեռ կարող էի աշխատել... Բայց եթե աշխատել կարելի չլինի, էլ ապրելու բան չի մնա, ապրելը հիմարություն կլինի...

«Իրավացի է, բայց մխիթարական չէ»,— ակամա հիշեց մայրն Անդրեյի խոսքերը և ծանր հառաչեց։ Նա օրվա ընթաց-

քում շատ էր հոգնել, քաղցած էր։ Հիվանդի միալար, թաց շշունջը սենյակը լցնելով անզոր սողում էր հարթ պատերի վրայով, պատուհանից դուրս լորենիների ծայրերը նմանվում էին ցածր կախ ընկած թուխ ամպերի, և զարմանք էին պատճառում իրենց տրտմագին սևությամբ։ Ամեն ինչ տարորեն մեռնում էր աղջամուղջի անշարժության, գիշերվա թախծագին սպասման մեջ։

— Ի՞նչպես վատ եմ զգում ինձ,— ասաց Եգորը և աչքերը փակելով լռեց։

— Քնի՛ր,— խորհուրդ տվեց մայրը։— Գուցե, լավանաս։

Ապա ականջ դրեց նրա շնչառությանը, նայեց շուրջը, մի քանի րոպե նստեց անշարժ, սառը տխրությամբ համակված, և ննջեց։

Դռան մոտ լսվող զգույշ քայլերի ձայնը արթնացրեց նրան. ցնցվելով նա տեսավ Եգորի բաց աչքերը։

— Քնել էի, ների՛ր...— կամաց ասաց մայրը։

— Դու էլ ներիր...— կրկնեց Եգորը նույնպես կամաց։

Պատուհանից նայում էր երեկոյան մթնշաղը, պղտոր ցուրտը ճնշում էր մարդու աչքերը, ամեն ինչ տարորինակ կերպով աղոտացավ, հիվանդի դեմքը մթնեց։

Լսվեց խշխշոց և Լյուդմիլայի ձայնը։

— Նստել են մթության մեջ և շշնջում են։ Ո՞ւր է այստեղի լույսի կոճակը։

Հանկարծ ամբողջ սենյակը լցվեց սպիտակ, անհրապույր լույսով։ Սենյակի կենտրոնում կանգնած էր Լյուդմիլան՝ ոտքից գլուխ սև, բարձրահասակ, ձգված։

Եգորը հանկարծ ցնցվեց ամբողջ մարմնով, ձեռքը բարձրացրեց դեպի կուրծքը։

— Ի՞նչ է,— ճչաց Լյուդմիլան վազելով դեպի նա։

Եգորը նայեց մորը կանգ առած աչքերով, և այժմ դրանք մեծ-մեծ և տարորինակ պայծառ էին թվում։

Բերանը լայն բացած՝ նա գլուխը վեր բարձրացրեց, իսկ ձեռքը մեկնեց առաջ։ Մայրն զգուշությամբ բռնեց նրա ձեռքը և շունչը պահած՝ նայում էր Եգորի դեմքին։ Եգորը պարանոցի ջղաձգային և ուժեղ շարժումով գլուխը ետ գցեց և բարձրաձայն ասաց.

— Չեմ կարող, վերջացա՞ծ է...

Նրա մարմինը թեթև ցնցվեց, գլուխը տկար ընկավ ուսին,

և լայն բացված աչքերում անկյանք արտացոլվեց մահճակալի վերևը վառվող լամպի սառը լույսը։

— Սիրելի՛ս,— շշնջաց մայրը։

Լյուդմիլան դանդաղ հեռացավ մահճակալից, կանգնեց պատուհանի մոտ և ինչ-որ տեղ նայելով՝ Վլասովային անծանոթ, անսովոր բարձր ձայնով ասաց.

— Մեռավ...

Նա կռացավ, արմունկները դրեց պատուհանի գոգին և հանկարծ, կարծես գլխին խփեցին, ուժաթափ ընկավ ծնկների վրա, դեմքը ծածկեց ձեռներով ու խուլ տնքաց։

Եգորի ծանր ձեռները կրծքին ծալելով, բարձի վրա ուղղելով տարորինակ կերպով ծանր գլուխը, մայրն արցունքները սրբելով մոտեցավ Լյուդմիլային, կռանալով կամաց շոյեց նրա խիտ մազերը։ Լյուդմիլան դանդաղորեն դարձավ դեպի մայրը. նրա կաթնագույն աչքերը հիվանդագին լայնացել էին, նա ոտքի կանգնեց և դողդոջուն շրթունքներով շշնջաց.

— Մենք միասին ենք ապրել աքսորում, միասին ենք գնացել այնտեղ, միասին ենք բանտ նստել... Երբեմն անտանելի էր, զզվելի, շատերն էին հուսահատվում...

Չոր, բարձրաձայն հեկեկանքը սեղմեց նրա կոկորդը, նա հաղթահարեց այդ և իր դեմքը, որ մի քնքուշ, թախծալի զգացմունքով մեղմացել էր, և երիտասարդացրել էր նրան, մոր դեմքին մոտեցնելով շարունակեց արագ շշնջալով, անարցունք հեկեկալով.

— Իսկ նա միշտ անընկճելի ուրախ էր, կատակում էր, ծիծաղում, արիաբար թաքցնելով իր տառապանքները... աշխատում էր քաջալերել թույլերին։ Բարի էր, զգայուն, սիրալիր... Այնտեղ, Սիբիրում անգործությունն այլասերում է մարդկանց, հաճախ վատ զգացմունքներ է ծնեցնում, ի՞նչպես էր նա կարողանում պայքարել դրանց դեմ... Ի՞նչ ընկեր էր նա, եթե իմանայի՞ք։ Ծանր, տանջալից էր նրա անձնական կյանքը, բայց ոչ ոք նրանից գանգատ չէր լսել, ոչ ո՞ք, երբե՛ք։ Ես նրա մտերիմ բարեկամն էի։ Ես նրա սրտին շատ բան եմ պարտական, նա իր խելքից ինձ տվեց այն բոլորն, ինչ կարող էր, և միայնակ, հոգնատանջ, փոխարենը երբեք չէր խնդրում ոչ փաղաքշանք, ոչ ուշադրություն...

Նա մոտեցավ Եգորին, կռացավ և նրա ձեռքը համբուրելով՝ թախծագին, կամացուկ ասաց.

— Ընկե՛ր, սիրելի՛ս, հոգյա՛կս, շնորհակալ եմ, շնորհակալ եմ, ամբողջ սրտով, գնաս բարո՛վ։ Կաշխատեմ քեզ նման առանց հոգնելու, առանց կասկածների, ամբո՛ղջ կյանքումս... գնաս բարո՛վ։

Հեկեկանքները ցնցեցին նրա մարմինը, և նա շնչասպառվելով գլուխը դրեց մահճակալին՝ Եգորի ոտների մոտ։ Մայրը լուռ լալիս էր առատ արցունք թափելով։ Նա՝ չիմանալով ինչու, աշխատում էր արտասուքը պահել, ուզում էր Լյուդմիլային փաղաքշել մի առանձին, ուժգին գգվանքով, ուզում էր Եգորի մասին սիրո և տխրության լավ խոսքեր ասել։ Արցունքների միջով նա նայում էր Եգորի ուռած դեմքին, իջած արտևանունքներով նինջանման փակված աչքերին, կապտած, թեթև ժպիտը վրան սառած շրթունքներին։ Անդորր էր և տաղտուկ լույս...

Մտավ Իվան Դանիլովիչը ինչպես միշտ շտապ, մանրիկ քայլերով, մտավ, հանկարծ սենյակի մեջտեղը կանգ առնելով և արագ շարժումով ձեռները գրպանները կոխելով՝ հարցրեց ջղայնորեն և բարձր.

— Վաղո՞ւց է։

Նրան չպատասխանեցին։ Նա ոտների վրա կամաց օրորվելով և ճակատը սրբելով մոտեցավ Եգորին, սեղմեց նրա ձեռքը և մի կողմ գնաց։

— Զարմանալի չէ. ունենալով այն սիրտը, որ նա ուներ, այս բանը պետք է պատահեր կես տարի առաջ... առնվազն...

Նրա բարձր, անտեղի-բարձր, բռնազբոսիկ-հանգիստ ձայնը հանկարծ կտրվեց։ Մեջքը պատին դեմ տալով՝ նա արագաշարժ մատներով մորուքն էր ոլորում և աչքերը արագ-արագ թարթելով նայում էր մահճակալի մոտ կանգնած խմբին։

— Մե՛կը ևս,— ասաց նա կամաց։

Լյուդմիլան վեր կացավ, մոտեցավ պատուհանին, բաց արեց։ Մի րոպեից հետո նրանք երեքով կանգնած էին լուսամուտի մոտ՝ իրար կիպ սեղմված և նայում էին աշնան գիշերվա մռայլ դեմքին։ Ծառերի սև գագաթներից վեր աստղերն էին փայլում՝ անվերջ խորացնելով երկնային հեռաստանը...

Լյուդմիլան բռնեց մոր թևի տակից և լուռ սեղմվեց նրա ուսին։ Բժիշկը գլուխը վար կախած՝ թաշկինակով ակնոցն էր սրբում։ Պատուհանից դուրս անդորրության մեջ՝ հոգնած հանդարտվում էր քաղաքի երեկոյան աղմուկը, ցուրտը փչում էր դեմքերին, շարժում գլուխների մազերը։ Լյուդմիլան ցնցվում

էր, նրա այտի վրայով հոսում էր արցունքը։ Հիվանդանոցի միջանցքում շարժվում էին տրորված, ահաբեկված, հնչյուններ, ոտների շտապ քստքստոց, տնքոցներ, թախծալի շշունջ։ Իսկ նրանք պատուհանի մոտ անշարժ կանգնած՝ նայում էին խավարի մեջ և լուռ էին։

Մայրն իրեն ավելորդ զգաց և ձեռքն զգուշորեն ազատելով, գնաց դեպի դուռը, Եգորին գլուխ տալով։

— Դուք գնո՞ւմ եք,— կամաց և առանց ետ նայելու հարցրեց բժիշկը։

— Այո...

Փողոցում մայրը մտածեց Լյուդմիլայի մասին, հիշելով նրա ժլատ արցունքները.

«Լաց լինել էլ չի կարողանում...»

Եգորի մահանալուց առաջ ասած խոսքերը մոր մեջ ցածր հառաչանք առաջ բերին։ Փողոցում դանդաղ քայլերով նա հիշեց Եգորի աշխույժ աչքերը, նրա կատակները, կյանքի մասին պատմածները։

— Լավ մարդու համար ապրելն է դժվար, մեռնելը հեշտ է։ Տեսնես ե՞ս ինչպես եմ մեռնելու...

Ապա պատկերացրեց Լյուդմիլային և բժշկին պատուհանի մոտ՝ սպիտակ, չափազանց լուսավոր սենյակում, նրանց հետևում՝ Եգորի մեռած աչքերը, և դեպի մարդիկ հոգեմաշ խրոնճահարությամբ համակված խոր հառաչեց ու սկսեց ավելի արագ գնալ. մի աղոտ զգացմունք շտապեցնում էր նրան։

— Պետք է շտապե՛լ,— մտածում էր նա ենթարկվելով այն տխուր, բայց կայտառ ուժին, որ մեղմորեն հրում էր նրան ներսից։

XI

Հետևյալ ամբողջ օրը մայրը անցկացրեց հոգսերի մեջ՝ թաղումը կազմակերպելով, իսկ երեկոյան, երբ նա, Նիկոլայը և Սոֆյան թեյ էին խմում, եկավ Սաշան տարօրինակ աղմկալի և աշխուժացած։ Նրա այտերը կարմրությունից վառվում էին, աչքերն ուրախ փայլում, և մորը թվում էր, թե նա ամբողջովին լցված էր մի ուրախ հույսով։ Նրա տրամադրությունը բուռն և շեշտակի ներխուժելով մեռածի մասին հիշողությունների տխուր ընթացքի մեջ և չձուլվելով նրան՝ շփոթեցրեց ամենքին և կու-

բացրեց, խավարի մեջ անսպասելիորեն բռնկված լույսի պես՝ Նիկոլայը մատը սեղանին խփելով մտախոհ ասաց.

— Այսօր դուք նման չեք ձեզ, Սա՛շա...

— Այո՞։ Գուցե՛,— պատասխանեց Սաշենկան և ծիծաղեց երջանիկ։

Մայրը նայեց նրան լուռ հանդիմանությամբ, իսկ Սոֆյան հիշեցնող տոնով նկատեց.

— Իսկ մենք խոսում էինք Եգոր Իվանովիչի մասին...

— Ի՞նչ հրաշալի մարդ էր, այնպես չէ՞,— բացականչեց Սաշան։— Ես նրան չեմ տեսել առանց ժպիտի, առանց կատակի։ Եվ ի՞նչպես էր աշխատում։ Դա ռևոլյուցիայի արվեստագետ էր, նա տիրապետում էր ռևոլյուցիոն մտքին, ինչպես մեծ վարպետ։ Ի՞նչ պարզությամբ և ուժով էր նա նկարագրում միշտ ստի, բրոնության, կեղծիքի պատկերները։

Նա խոսում էր կամաց, աչքերի խոհուն ժպիտով, բայց այդ ժպիտը չէր հանգցնում նրա հայացքում ամենքին անհասկանալի, բայց և ամենքի համար պարզ տեսանելի ցնծության կրակը։

Նրանք չէին ցանկանում ընկերոջ համար ունեցած տխրության տրամադրությունը զիջել Սաշայի ներս բերած ուրախության զգացմունքին և անգիտակցորեն պաշտպանելով վշտով սնվելու իրենց տխուր իրավունքը, ակամայից աշխատում էին աղջկան ընդգրկել իրենց տրամադրության շրջանակի մեջ...

— Եվ ահա նա մեռա՛վ,— Սաշայի վրա ուշադիր նայելով համառորեն ասաց Սոֆյան։

Սաշան բոլորին զննեց, արագ, հարցական հայացքով, նրա հոնքերը մռայլվեցին։ Եվ գլուխը կախելով, մի փոքր լռեց, ձեռքի դանդաղ շարժումով մազերն ուղղելով։

— Մեռա՞վ,— բարձրաձայն ասաց նա լռությունից հետո, նորից բոլորի վրա գցելով իր գրգռիչ աչքերը։— Ի՞նչ է նշանակում մեռավ։ Ի՞նչն է մեռել։ Մի՞թե մեռել է իմ հարգանքը դեպի Եգորը, իմ սերը դեպի նա, ընկերս, հիշողությունս նրա մտքի աշխատանքի մասին, մի՞թե մեռել է այդ աշխատանքը, չքացե՞լ են այն զգացմունքները, որ նա է առաջացրել իմ սրտում, փշրվա՞ծ է իմ պատկերացումը նրա մասին իբրև արի, ազնիվ մարդու։ Մի՞թե այս ամենը մեռել է։ Դա ինձ համար երբե՞ք չի մեռնի, ես գիտեմ։ Ինձ թվում է, թե մենք չափից դուրս շտապում ենք մարդու մասին ասել՝ նա մեռավ։ «Մեռած են նրա

շրթունքները, բայց խոսքը մշտնջենապես թող ապրի կենդանի սրտերում»։

Հուզված՝ նա նորից նստեց սեղանի մոտ, արմունկը հենեց սեղանին և ավելի կամաց, ավելի խոհուն շարունակեց՝ ժպտուն, մշուշված աչքերը հառած ընկերներին.

— Գուցե ես հիմար ձևով եմ խոսում, բայց ես հավատում եմ, ընկերնե՛ր, ազնիվ մարդկանց անմահությանը, նրա՞նց անմահությանը, ովքեր ինձ երջանկություն են պարգևել ապրելու այն հիանալի կյանքով, որով ես եմ ապրում, որն ուրախագին հարբեցնում է ինձ իր զարմանալի բարդությամբ, երևույթների բազմազանությամբ և գաղափարների աճումով, որոնք սրտիս պես թանկագին են ինձ համար։ Մենք գուցե չափազանց խնայող ենք մեր զգացմունքները գործադրելուց, շատ ենք մտքով ապրում, և դա մի քիչ աղճատում է մեզ, մենք գնահատում ենք, այլ ոչ թե զգում...

— Ձեզ մի լավ բա՞ն է պատահել,— հարցրեց Սոֆյան ժըպտալով։

— Այո՛,— գլխով անելով ասաց Սաշան։— Շա՛տ լավ, ինձ թվում է։ Ես ամբողջ գիշեր զրուցել եմ Վեսովշչիկովի հետ։ Ես առաջ նրան չէի սիրում, նա ինձ թվում էր կոպիտ և տգետ։ Նա հենց այդպես էլ էր անկասկած։ Նրա մեջ ապրում էր մի քարացած, մութ զայրույթ բոլորի դեմ, նա միշտ մի տեսակ սոսկալի ծանր կերպով իրեն դնում էր ամեն բանի կենտրոնում և կոպիտ, գազազած ասում էր ե՛ս, ե՛ս, ե՛ս։ Դրա մեջ կար ինչ-որ քաղքենիական, գրգռիչ բան...

Նա ժպտաց և նորից ամենքի վրա իր պսպղուն հայացքը գցեց։

— Հիմա նա ասում է՝ ընկերնե՛ր։ Եվ պետք է լսել, թե նա ի՞նչպես է ասում այդ բառը։ Մի վարանոտ, քնքուշ սիրով, դա դժվա՞ր է բառերով արտահայտել։ Դարձել է զարմանալի պարզ ու անկեղծ և ամբողջովին լցված է աշխատելու ցանկությամբ։ Նա խելքը գլուխն է հավաքել, տեսնում է իր ուժը, գիտի, թե իրեն ի՞նչ բան է պակասում. որ գլխավորն է, նրա մեջ ծնվել է ճշմարիտ ընկերական զգացմունք...

Վլասովան լսում էր Սաշայի խոսքը և նրա համար հաճելի էր տեսնել այդ խստասիրտ աղջկան քնքշացած, ուրախ։ Բայց միևնույն ժամանակ նրա հոգու խորքում ինչ-որ տեղ ծընվում էր մի խանդոտ միտք.

«Իսկ Պա՞շան հապա...»

— Նա,— շարունակեց Սաշան,— ամբողջովին համակված է մտքերով ընկերների մասին, և գիտե՞ք ի՞նչ է ուզում ինձ համոզել. որ անհրաժեշտ է գլուխ բերել նրանց փախուստը, այո՛։ Նա ասում է, թե դա շատ հասարակ և հեշտ բան է...

Սոֆյան գլուխը բարձրացրեց և աշխուժորեն ասաց.

— Իսկ դո՞ւք ինչ եք կարծում, Սա՛շա։ Դա լա՛վ միտք է։

Մոր ձեռքի թեյի բաժակը դողդողաց, Սաշան հոնքերը կիտեց՝ զսպելով իր աշխուժությունը, մի փոքր լռեց և լուրջ ձայնով, բայց ուրախ ժպտալով, շփոթված ասաց.

— Եթե հիրավի ամեն ինչ այնպես է, ինչպես նա՛ է ասում, մենք պետք է փորձենք։ Դա մեր պարտականո՛ւթյունն է...

Նա կարմրեց, նստեց աթոռին, լռեց։

«Սիրելի՛ս, անուշի՛կս»,— ժպտալով մտածում էր մայրը։ Սոֆյան նույնպես ժպտաց. իսկ Նիկոլայը մեղմագին նայելով Սաշայի դեմքին՝ կամաց ծիծաղեց։ Այդ ժամանակ աղջիկը գլուխը բարձրացնելով՝ խստությամբ նայեց բոլորի վրա և գունատվելով, աչքերը շողացնելով, չոր-չոր, վիրավորված ձայնով ասաց.

— Դուք ծիծաղում եք, ես ձեզ հասկանում եմ... Դուք ինձ առանձնապես շահագրգռվա՞ծ եք համարում։

— Ինչո՞ւ, Սա՛շա,— խորամանկորեն հարցրեց Սոֆյան վեր կենալով և մոտենալով նրան։ Մորն այդ հարցը թվաց ավելորդ և աղջկա համար վիրավորական, նա հառաչեց և հոնքը բարձրացնելով հանդիմանությամբ նայեց Սոֆյային։

— Բայց ես հրաժարվո՛ւմ եմ,— բացականչեց Սաշան։ Ես հարցի լուծմանը չեմ մասնակցի, եթե դա քննարկելու լինեք...

— Թողե՛ք, Սա՛շա,— հանգիստ ասաց Նիկոլայը։

Մայրը նույնպես մոտեցավ Սաշային և կռանալով՝ զգուշորեն նրա գլուխը շոյեց։ Սաշան բռնեց մոր ձեռքը և կարմրած դեմքը դեպի վեր դարձնելով՝ շփոթված նայեց նրա երեսին։ Մայրը ժպտաց և Սաշային ասելու բան չգտնելով՝ տխուր հոգոց հանեց։ Իսկ Սոֆյան նստեց աթոռին, Սաշայի կողքին, գրկեց նրա ուսերը և հետաքրքրության ժպիտը դեմքին՝ նրա աչքերի մեջ նայելով ասաց.

— Դուք տարօրինակ աղջիկ եք...

— Այո, ես կարծեմ հիմարություն արի...

— Դուք ի՞նչպես կարողացաք կարծել, որ...— շարունակեց

Սոֆյան։ Բայց Նիկոլայը գործնականորեն և լուրջ կերպով ընդհատեց նրան.

— Փախուստ կազմակերպելու մասին, եթե դա հնարավոր է, երկու կարծիք լինել չի կարո՛ղ։ Ամենից առաջ մենք պետք է գիտենանք՝ այդ բանն ուզո՞ւմ են արդյոք բանտարկված ընկերները...

Սաշան գլուխը կախեց։

Սոֆյան ծխախոտը վառելով նայեց եղբորը և ձեռքի լայն շարժումով լուցկին նետեց մի անկյուն։

— Ի՞նչպես թե նրանք չեն ուզենա,— հառաչելով ասաց մայրը։— Միայն թե ես չեմ հավատում, որ դա կարելի բան է..

Բոլորը լուռ էին, իսկ մայրն ա՛յնպես էր ցանկանում դեռ լսել փախուստի հնարավորության մասին։

— Ես պետք է տեսնվեմ Վեսովշչիկովի հետ,— ասաց Սոֆյան։

— Վաղը ես ձեզ կասեմ, թե երբ և որտեղ կարելի է,— կամաց պատասխանեց Սաշան։

— Նա ի՞նչ է անելու,— հարցրեց Սոֆյան սենյակում շրջելով։

— Որոշել են նրան գրաշար դարձնել նոր տպարանում։ Իսկ մինչև այդ անտառապահի մոտ է ապրելու։

Սաշայի հոնքերը մռայլվեցին, դեմքն ստացավ սովորական խիստ արտահայտությունը, իսկ ձայնը չոր էր հնչում։ Նիկոլայը մոտեցավ մորը, որ գավաթներն էր լվանում, և ասաց նրան.

— Դուք վաղը չէ մյուս օրը տեսակցության եք գնում, հարկավոր է Պավելին մի թուղթ հանձնել։ Հասկանո՞ւմ եք, հարկավոր է իմանալ...

— Ես հասկանում եմ, հասկանո՛ւմ եմ,— շտապ արձագանքեց մայրը։— Ես կհանձնեմ, կկարողանամ։

— Ես գնում եմ,— հայտնեց Սաշան և արագ, լուռ սեղմելով բոլորի ձեռքը, ինչ-որ մի տեսակ հաստատուն քայլերով հեռացավ շիտակ ու չոր-չոր։

Սոֆյան ձեռները դրեց մոր ուսերին և նրան աթոռի վրա օրորելով՝ ժպտալով հարցրեց.

— Նի՛լովնա, դուք կսիրեի՞ք, եթե այսպիսի աղջիկ ունենայիք...

— Օ, տե՛ր աստված։ Թեկուզ մե՛կ օր միայն տեսնեի նրանց միասին,— բացականչեց Վլասովան՝ լալու պատրաստ։

— Այո, մի փոքր երջանկություն, դա լավ է ամենքի համար էլ,— ցածրաձայն նկատեց Նիկոլայը։— Բայց մարդ չկա, որ քիչ երջանկություն ցանկանա։ Իսկ երբ երջանկությունը շատ է, էժան է...

Սոֆյան նստեց դաշնամուրի առջև և սկսեց մի տխուր բան նվագել։

XII

Մյուս օրն առավոտյան մի քանի տասնյակ տղամարդիկ և կանայք կանգնած էին հիվանդանոցի դարպասի մոտ՝ սպասելով, թե ե՛րբ փողոց դուրս կբերեն իրենց ընկերոջ դագաղը։ Նրանց շուրջն զգույշ պտտվում էին լրտեսները՝ նրբազգաց ականջներով որսալով այս կամ այն բացականչությունը, միտները պահելով դեմքեր, շարժուձևեր և բառեր, իսկ փողոցի մյուս կողմից նրանց նայում էր ատրճանակները կողքերից կապած ոստիկանների մի խումբ։ Լրտեսների լկտիությունը, ոստիկանության ծաղրական ժպիտները և իր ուժը ցույց տալու նրա պատրաստակամությունը գրգռում էին բազմությանը։ Ոմանք իրենց վրդովմունքը զսպելով՝ կատակում էին, ուրիշները գետին էին նայում մռայլ հայացքով՝ աշխատելով չնկատել վիրավորականը, երրորդները զայրույթը չզսպելով՝ հեգնորեն ծիծաղում էին իշխանության վրա, որը վախենում է լոկ խոսքերով զինված մարդկանցից։ Աշնան դժգույն-կապույտ երկինքը նայում էր փողոցին, որ սալահատակված էր կլոր, մոխրագույն քարերով, ծածկված դեղին սաղարթներով և քամին տերևներն ավլելով՝ նետում էր մարդկանց ոտների տակ։

Մայրը կանգնած էր բազմության մեջ և ծանոթ դեմքերը դիտելով՝ տխրությամբ մտածում էր.

«Քիչ եք դուք, քի՛չ։ Իսկ բանվոր ժողովուրդ չկա գրեթե...»

Դարպասը բացվեց, փողոց դուրս բերին դագաղի կափարիչը՝ կարմիր ժապավեններ կրող պսակներով։ Մարդիկ միահամուռ հանեցին գլխարկները, կարծես սև թռչունների երամ թռավ նրանց գլուխների վրայից։ Մի բարձրահասակ ոստիկանական սպա, կարմիր դեմքին խիտ, սև ընչացքներ, արագ մտավ ամբոխի մեջ, նրա հետևից առանց քաշվելու մարդկանց դեսուդեն հրելով քայլում էին զինվորները՝ ծանր կոշիկներով բարձրաձայն թխկացնելով քարերի վրա։ Խոպոտ, հրամայողական ձայնով սպան ասաց.

— Խնդրեմ, ժապավենները հանե՛լ։

Նրան կիպ շրջապատեցին տղամարդիկ և կանայք, ինչ-որ բան էին ասում, ձեռքները դեսուդեն շարժելով, վրդովվելով, իրար հրելով։ Մոր աչքերի առջև երևում-չքանում էին գունատ, հուզված դեմքեր դողդոջուն շրթունքներով, մի կնոջ դեմքի վրա գլորվում էին վիրավորանքի արցունքներ...

— Կորչի՛ բռնությունը,— գոչեց մի երիտասարդ ձայն և միայնակ կորավ վիճաբանության աղմուկի մեջ։

Մայրը ևս դառնություն զգաց սրտում և դիմելով իր հարևանին, որ աղքատիկ հագնված մի երիտասարդ էր, վրդովված ասաց.

— Չեն էլ թողնում մարդուն թաղել այնպես, ինչպես ընկերներն են ուզում, սա ի՞նչ բան է։

Թշնամությունն աճում էր, մարդկանց գլուխներից վեր ճոճվում էր դագաղի կափարիչը, քամին խաղացնում էր ժապավենները, գլուխներին ու դեմքերին փաթաթելով, լսելի էր մետաքսի չոր և ներվային շփշփոցը։

Մորը համակեց հնարավոր ընդհարման երկյուղը, նա շտապշտապ և ցածրաձայն ասում էր աջ ու ձախ.

— Աստվա՛ծ նրանց հետ, քանի որ այդպես են ուզում, թո՛ղ ժապավենները հանեն։ Թող զիջե՛ն, էլ ճար չկա՛։

Մի բարձր և սուր ձայն է հնչում՝ աղմուկը խլացնելով.

— Մենք պահանջում ենք, որ մեզ չխանգարեք վերջին անգամ ճանապարհ դնելու ձեր տանջած մարդուն...

Մեկը բարձր և բարակ ձայնով երգել սկսեց.

Դուք զոհ գնացիք պայքարում։

— Խնդրում եմ, հանե՛լ ժապավենները։ Յա՛կովլև, կտրի՛ր։

Դուրս հանվող թրի շաչյուն լսվեց։ Մայրն աչքերը փակեց՝ սպասելով ճիչի։ Բայց լռություն տիրեց, մարդիկ տրտնջում էին, իրար հետ կռվում հետապնդվող գայլերի պես։ Ապա լուռ, գլուխը խոր կախ գցած, նրանք առաջ շարժվեցին քայլերի քըստքըստոցով լցնելով փողոցը։

Առջևում օդի մեջ լողում էր դագաղի թալանված կափարիչը տրորված պսակներով, և կողքից կողք տարուբերվելով, գնում էին ձիավոր ոստիկանները։ Մայրը գնում էր մայթով, նա դա-

գաղը չէր տեսնում իրեն շրջապատած խիտ բազմության մեջ, որն աննկատելիորեն աճեց և լցրեց փողոցի ամբողջ լայնքը։ Բազմության հետևից նույնպես հեծյալների գորշ կերպարանքներ էին բարձր երևում, կողքերից քայլում էր հետևակ ոստիկանությունը ձեռքները թրերին դրած, և ամենուրեք նկատվում էին մորը ծանոթ լրտեսների սուր աչքերը, որոնք ուշի-ուշով մարդկանց դեմքերն էին շոշափում։

Հրաժեշտ քեզ, մեր ընկեր, հրաժեշտ...

տխուր երգել սկսեցին երկու գեղեցիկ ձայներ։

— Պետք չի՛,— հնչեց մի գոչյուն։— Լուռ մնանք, պարոնե՛ր։

Այդ գոչյունի մեջ կար մի խիստ, ազդեցիկ բան։ Տխուր երգն ընդհատվեց, խոսակցությունն ավելի կամաց դարձավ, և միայն քարերի վրա ոտների ամուր հարվածներն էին լցնում փողոցները խուլ, համաչափ հնչյունով։ Այդ հնչյունը բարձրանում էր մարդկանց գլուխներից վեր՝ լողալով թափանցիկ երկնքի մեջ, և օդը ցնցում էր դեռ հեռու ամպրոպի առաջին որոտի արձագանքի պես։ Սառը քամին ավելի ու ավելի սաստկանալով՝ թշնամաբար մարդկանց դեմ էր տանում քաղաքի փողոցների փոշին ու աղբը, փչելով բարձրացնում մարդկանց զգեստներն ու մազերը, աչքները կուրացնում, կրծքներին խփում, խճճվում ոտքերի արանքում...

Այդ լուռումունջ թաղումն առանց քահանաների և հոգեմաշ երգեցողության, մտախոհ դեմքերը, կիտած հոնքերը ահի զգացմունք էին հարուցում մոր մեջ, իսկ նրա միտքը դանդաղ պտտվելով՝ տպավորություններն զգեստավորում էր տխուր բառերով.

«Քի՛չ եք դուք, որ ճշմարտության կողմն եք...»

Նա քայլում էր գլխահակ, և նրան թվում էր, թե թաղում են ոչ թե Եգորին, այլ մի ուրիշ, սովորական, իրեն հարազատ և հարկավոր բան։ Նա թախծում էր, իրեն լավ չէր զգում։ Նրա սիրտը լցվում էր Եգորին ուղեկցող մարդկանց հետ անհամաձայն լինելու մի խորդուբորդ, անհանգիստ զգացմունքով։

«Անշուշտ,— մտածում էր նա,— Եգորուշկան ստածուն չէր հավատում, և սրանք բոլորն էլ...»

Բայց չէր ուզում ավարտել իր միտքը և հառաչում էր՝ կամենալով ծանրությունը վայր գլորել իր հոգու վրայից։

«Ո՜վ տեր աստված, տեր Հիսուս Քրիստոս։ Մի՞թե ի՛նձ էլ են այսպես...»

Հասան գերեզմանատուն և այնտեղ երկար ժամանակ պտտվում էին շիրիմների մեջ նեղ շավիղներով, մինչև որ դուրս եկան մի բաց տարածություն, ուր ցածրադիր սպիտակ խաչեր էին սփռված։ Խռնվեցին գերեզմանի շուրջը և լռեցին։ Շիրիմների մեջ կենդանի մարդկանց խիստ լռությունը մի ինչ-որ սարսափելի բան էր խոստանում, որից մոր սիրտը ցնցվեց և քարացավ սպասողության մեջ։ Խաչերի արանքում սուլում ու ոռնում էր քամին, դագաղի կափարիչի վրա տխուր դողդողում էին ճմլված ծաղիկները...

Ոստիկանությունն ուշադրությունը լարեց, շտկվեց՝ իր պետին նայելով։ Գերեզմանի գլխին կանգնեց մի բարձրահասակ երիտասարդ, անգլխարկ, երկար մազերով, մրահոն, դժգույն։ Հենց այդ նույն ժամանակ էլ հնչեց ոստիկանապետի խռպոտ ձայնը.

— Պարոններ...

— Ընկերնե՛ր,— բարձրաձայն և զիլ սկսեց մրահոնը։

— Թո՛ւյլ տվեք,— գոչեց ոստիկանը։— Հայտարարում եմ, որ չեմ կարող ճառեր թույլ տալ...

— Ես միայն մի քանի խոսք կասեմ,— հանգիստ հայտնեց երիտասարդը։— Ընկերնե՛ր։ Մեր ուսուցչի և բարեկամի շիրիմի վրա եկեք երդվե՛նք, որ երբեք չենք մոռանա նրա ավանդները, որ մեզնից յուրաքանչյուրն ամբողջ կյանքում անդուլ կփորի՛ մեր հայրենիքի բոլոր թշվառությունների աղբյուրի, նրան կեղեքող չար ուժի՝ ինքնակալության գերեզմանը։

— Ձերբակալե՛լ,— գոռաց ոստիկանը, բայց նրա ձայնը խեղդվեց աղաղակների աննկարագրելի պայթյունի մեջ։

— Կորչի՛ ինքնակալությունը։

Ամբոխին հրհրելով ոստիկանները նետվեցին դեպի հռետորը, իսկ նա ամեն կողմից խիտ շրջապատված, գոչում էր՝ ձեռքը թափ տալով.

— Կեցցե՛ ազատությունը։

Մորը հրեցին մի կողմ, այնտեղ նա աչուղղի մեջ հենվեց մի խաչի և հարվածի սպասելով աչքերը փակեց։ Աննկարագրելի հնչյունների կատաղի մրրիկը նրան խլացնում էր, հողը տատանվում էր ոտների տակ, քամին և երկյուղը դժվարացնում էին շնչառությունը։ Օդի մեջ անհանգիստ թռչում էին ոստիկանների

սուլոցները, լսվում էր մի կոպիտ, հրամայող ձայն, ջղաձգորեն աղաղակում էին կանայք, ճռնչում էին ցանկապատերի փայտերը, և խուլ հնչում էր ոտքերի ծանր դոփյունը չոր հողի վրա։ Դա երկար տևեց, և մոր համար աչքերը փակ կանգնելն անտանելի ահավոր դարձավ։

Մայրը նայեց և աղաղակելով առաջ նետվեց՝ ձեռները մեկնած։ Նրանից ոչ հեռու նեղ շավղում շիրիմների մեջ ոստիկանները երկարամազ մարդուն շրջապատած՝ ետ էին մղում ամեն կողմից իրենց վրա հարձակվող ամբոխին։ Օդի մեջ սպիտակին տալով, սառը ցոլցլում էին մերկացված թրերը՝ գլուխներից վեր թռչելով և արագ ցած իջնելով։ Երևում ու չքանում էին ձեռնափայտեր, ցանկապատերի բրերի բեկորներ, վայրենի պարով պտտվում էին իրար կպած մարդկանց աղաղակները, բարձրանում էր երիտասարդի գունատ դեմքը, կատաղի գրգռմունքի փոթորկից վեր ղողանջում էր նրա ամուր ձայնը.

— Ընկերնե՛ր։ Ինչի՞ համար եք փչացնում ձեզ...

Նա հաղթում էր։ Փայտերը նետելով՝ մարդիկ իրար հետևից հեռանում էին, իսկ մայրն անդադար առաջ էր անցնում մի անպարտելի ուժով տարված, տեսնում էր, թե ինչպես Նիկոլայը գլխարկը ծոծրակին քաշած դեն էր հրում շարությամբ հարբած մարդկանց, և լսում էր նրա նախատող ձայնը.

— Դուք խելագարվե՞լ եք։ Հանգստացեք, էլի՛...

Մորը թվում էր, թե իր մի ձեռքը կարմիր է։

— Նի՛կոլայ Իվանովիչ, հեռացե՛ք,— գոչեց նա Նիկոլայի մոտ նետվելով։

— Ո՞ւր եք գնում։ Այնտեղ ձեզ կխփեն...

Մոր ուսից բռնելով նրա կողքին կանգնեց Սոֆյան անգլխարկ, մազերը գզգզված, մի տղայի, գրեթե երեխայի բռնած։ Տղան ձեռքով սրբում էր ջախջախված, արյունոտ դեմքը և դողդոջուն շրթունքներով մրմնջում էր.

— Բա՛ց թողեք, բան չկա...

— Զբաղվեցեք նրանով, տարեք մեզ մոտ։ Ահա թաշկինակ, երեսը կապեցե՛ք...— արագ-արագ ասում էր Սոֆյան և տղայի ձեռքը տալով մորը, դենը վազեց ասելով.

— Շո՛ւտ գնացեք, կձերբակալեն...

Գերեզմանատան բոլոր ուղղություններով ցրվում էին մարդիկ, նրանց հետևից գերեզմանների արանքով ծանր քայլում էին ոստիկաններն անշնորհքությամբ խճճվելով վերարկուների

փեշերում, հայհոյելով և թրերը ճոճելով։ Տղան նրանց ուղեկցում էր գայլի հայացքով։

— Շո՛ւտ-շո՛ւտ գնանք,— կամաց գոչեց մայրը, թաշկինակով տղայի երեսը սրբելով։

Տղան մրմնջում էր, արյուն թքելով.

— Դուք մի՛ անհանգստացեք, ոչ մի տեղս չի ցավում։ Նա ինձ թրի կոթով խփեց... է՛, ես էլ նրան փայտով ա՛յնպես հասցրի։ Մինչև անգամ ոռնաց...

Եվ արյունոտ բռունցքը թափ տալով՝ բեկբեկվող ձայնով ավարտեց.

— Սպասեցե՛ք, դեռ շատ բան կտեսնեք։ Մենք ձեզ կջախջախենք առանց կռվի, երբ ոտքի կկանգնենք, ամբո՛ղջ բանվոր ժողովուրդս։

— Շո՛ւտ-շո՛ւտ,— շտապեցնում էր մայրը արագ քայլելով դեպի գերեզմանատան ցանկապատի փոքրիկ դուռը։ Նրան թվում էր, թե այնտեղ, ցանկապատից դուրս, դաշտում թաքնվել և իրենց է սպասում ոստիկանությունը, և հենց որ իրենք դուրս գան, ոստիկանները հարձակվելու են իրենց վրա, սկսելու են ծեծել։ Բայց երբ դուռն զգուշորեն բանալով՝ նա նայեց աշնանային աղջամուղջի գորշ հյուսվածքներով պատած դաշտին, անդորրությունն ու ամայությունն իսկույն հանգստացրին նրան։

— Դե թողեք կապեմ ձեր երեսը,— ասում էր նա։

— Պետք չի, էլի՛, ես այսպես է՛լ չեմ ամաչում։ Կռիվն անխարդախ էր. նա ինձ խփեց, ես է՛լ նրան...

Մայրն շտապ կապեց վերքը։ Արյան տեսքը նրա սիրտը լցնում էր կարեկցությամբ, և երբ նրա մատները շոշափում էին խոնավ ջերմությունը, սոսկումի դողը բռնում էր նրան։ Նա լուռ և արագ դաշտով անցկացրեց վիրավորին, նրա ձեռքից բռնած։ Բերանն աղատելով՝ տղան ծիծաղկոտ ձայնով ասաց.

— Դուք ինձ ո՞ւր եք քարշ տալիս, ընկե՛ր։ Ես ինքս է՛լ կարող եմ գնալ...

Բայց մայրն զգում էր, որ նա երերվում է, նրա ոտները քայլում են անհաստատ և ձեռքը դողում է։ Նվաղող ձայնով նա խոսում և հարցեր էր տալիս մորն առանց պատասխանի սպասելու.

— Ես թիթեղագործ Իվանն եմ, իսկ դո՞ւք ով եք։ Մենք երեք հոգի էինք Եգոր Իվանովիչի խմբակում, երեք թիթեղագործներ... իսկ ընդամենը տասնմեկ հոգի էինք։ Մենք շատ էինք սիրում

նրան, աստված հոգին լուսավորի՜։ Թեև աստծուն ես չեմ հավատում...

Մի փողոցում մայրը կառք վարձեց, Իվանին կառք նստեցնելով շշնջաց նրան.

— Հիմա լռեցե՛ք,— և նրա բերանն զգուշությամբ փաթաթեց թաշկինակով։

Տղան ձեռքը բարձրացրեց դեպի դեմքը և արդեն չկարողացավ բերանն ազատել, ձեռքն ուժասպառ ընկավ ծնկի վրա։ Բայց այնուամենայնիվ շարունակեց թաշկինակի միջով փընթփընթալ.

— Ես ձեր այդ հարվածները չեմ մոռանա, բարեկամներս... Իսկ նրանից առաջ մեզ հետ պարապում էր ուսանող Տիտովիչը... Քաղաքատնտեսություն... Հետո ձերբակալեցին...

Մայրն Իվանին գրկելով՝ նրա գլուխը դրեց իր կրծքին, տղան հանկարծ ծանրացավ և լռեց։ Երկյուղից դալկացած, մայրն աչքի տակով նայեց այս ու այն կողմ, նրան թվում էր, թե ահա ուր որ է մի անկյունից ոստիկանները դուրս կվազեն, կտեսնեն Իվանի կապկպած գլուխը, կբռնեն նրան և կսպանեն։

— Խմե՞լ է,— հարցրեց կառապանը՝ կառքի ուսի վրայից ետ նայելով, ժպտալով բարեմտորեն։

— Թունդ է կոնծել,— հառաչելով պատասխանեց մայրը։

— Որդի՞դ է։

— Այո, կոշկակար է։ Իսկ ես խոհարարուհի եմ...

— Նահատակվում ես։ Այդպե՛ս...

Մտրակը ձիերի վրա շարժելով կառապանը նորից ետ դարձավ և կամաց շարունակեց.

— Իսկ նոր հենց լսեցինք՝ գերեզմանոցում կռի՞վ է եղել։ Թաղելիս են եղել, ուրեմն, մի քաղաքական մարդու, նրանցից, որ իշխանության դեմ են... Նրանք իշխանության հետ վիճելի գործեր ունեն։ Նրան թաղելիս են եղել իր նման մարդիկ, այսինքն՝ նրա բարեկամները։ Սկսել են գոռալ՝ կորչի՜ իշխանությունը, նա, իբր, ժողովրդին քայքայում է... Ոստիկանությունն սկսում է ծեծե՛լ նրանց։ Ասում են՝ մի քանիսին կտրատել-մեռցրել են։ Դե՛, ոստիկանությունն էլ է հասել...— Նա լռեց և սրտաբեկ օրորելով գլուխը՝ տարօրինակ ձայնով արտասանեց.— մեռելների՞ն են անհանգստացնում, ննջեցյալների՞ն են արթնացնում։

Կառքը թխկթխկալով ցնցվում էր քարերի վրա, Իվանի

գլուխը թեթևակի հրում էր մոր կուրծքը, իսկ կառապանը մտախոհ մրմնջում էր կողքի նստած.

— Ժողովրդի մեջ հուզմունք կա, խռովություն է բարձրանում, այո՛։ Երեկ գիշեր մեր հարևանների մոտ եկան ժանդարմները, փորփրեցին մինչև լույս, իսկ առավոտյան իրենց հետ վերցրին մի դարբնի ու տարան։ Ասում են, գիշերը նրան գետը կտանեն ու ծածուկ կխեղդեն։ Իսկ դարբինը վատ մարդ չէր...

— Անունն ի՞նչ էր,— հարցրեց մայրը։

— Դարբնի՞։ Սավել է, ազգանունը Եվչենկո։ Դեռ ջահել էր, բայց արդեն շատ բան էր հասկանում։ Երևում է, որ բան հասկանալն է՛լ է արգելված։ Պատահում էր՝ մեկ-մեկ գալիս էր՝ ասում. «Ինչ կյանք է ձեր կյանքը, կառապանե՛ր»։— «Ճիշտ է,— ասում ենք,— շան կյանքից էլ վատ է մեր կյանքը»։

— Կանգնի՛ր,— ասաց մայրը։

Իվանն ուշքի եկավ կառքի ցնցումից և կամաց տնքաց։

— Թուլացրե՛լ է տղային,— նկատեց կառապանը։— Է՜խ, օղի՜, օղի՜...

Ոտները դժվարությամբ փոխելով, ամբողջ մարմնով օրորվելով, Իվանը գնում էր դեպի բակն ու ասում.

— Վնաս չունի, ես կարող եմ...

XIII

Սոֆյան արդեն տանն էր, նա մորը դիմավորեց ծխախոտը բերանին, անհանգիստ, վրդովված։

Վիրավորին բազմոցի վրա դնելով, Սոֆյան հմտությամբ քանդեց նրա գլխի կապը և կարգադրություններ էր անում՝ ծխախոտի ծխից աչքերը կկոցած։

— Իվա՛ն Դանիլովիչ, բերին։ Դուք հոգնե՞լ եք, Նի՛լովնա։ Վախեցե՞լ եք, այո՞։ Դե՛, հանգստացեք։ Նիկոլա՛յ, Նիլովնային մի ըմպանակ պորտվեյն տուր։

Ապրումներից շշմած, ծանր շնչելով և կրծքում հիվանդագին ծակոց զգալով, մայրը մրմնջաց.

— Դուք ինձ համար մի՛ անհանգստանաք...

Եվ իր ամբողջ էությամբ թախանձագին խնդրում էր ուշադրություն, հանգստացուցիչ փաղաքշանք դեպի ինքը։

Հարևան սենյակից դուրս եկան ձեռքը կապած Նիկոլայը և ամբողջովին գզգզված, ոզնու պես մազերը բիզ-բիզ կանգնած

բժիշկ Իվան Դանիլովիչը։ Նա արագ մոտեցավ Իվանին, կռացավ նրա վրա ասելով.

— Ջո՛ւր, որքան կարելի է՝ շա՛տ ջուր, քաթանի մաքուր կտո՛ր, բամբա՛կ։

Մայրը շարժվեց դեպի խոհանոց, բայց Նիկոլայը ձախ ձեռքով բռնեց նրա թևից և նրան սեղանատուն տանելով ասաց.

— Դա ձե՛զ չեն ասում, այլ Սոֆյային։ Դուք շատ եք հուզվել, սիրելի՛ս, այո՞։

Մայրը հանդիպեց նրա սևեռուն կարեկցական հայացքին և հեկեկանքով, որը չկարողացավ պահել, բացականչեց.

— Այդ ի՞նչ բան էր, բարեկա՛մս։ Կտրատո՛ւմ էին, մարդկանց կտրատում էին։

— Ես տեսա՛,— նրան գինի տալով և գլխով անելով ասաց Նիկոլայը։— Տաքացան մի քիչ երկու կողմերն էլ։ Բայց դուք մի՛ անհանգստացեք, նրանք խփում էին թրերի տափակ կողմով, լուրջ վիրավորված է կարծեմ միայն մի հոգի։ Նրանք իմ աչքի առջև խփեցին, հենց ե՛ս դուրս բերի նրան տուրուդմբոցի միջից...

Նիկոլայի դեմքն ու ձայնը, սենյակի տաքությունն ու լույսը հանգստացրին Վլասովային։ Շնորհակալությամբ նայելով Նիկոլային՝ մայրը հարցրեց.

— Ձեզ է՞լ խփեցին։

— Սա ինքս եմ արել, կարծեմ, անզգուշությամբ ձեռքս մի բանի եմ դիպցրել և կաշին քերծել։ Թե՛յ խմեցեք, ցուրտ է, իսկ դուք բարակ եք հանգված...

Մայրը ձեռքը մեկնեց դեպի գավաթը, տեսավ, որ մատները ծածկված են չորացած արյան բծերով, ակամա շարժումով ձեռքը տարավ դեպի ծունկը, շրջազգեստը թաց էր։ Աչքերը լայն բանալով, հոնքը բարձրացնելով՝ նա շեղակի նայեց իր մատներին, նրա գլուխը պտտվում էր և սրտի զարկերն ասում էին.

«Ա՛յ, այսպես, Պաշային էլ կարող են...»

Ներս մտավ Իվան Դանիլովիչը ժիլետով, շապկի թևերը ետ ծալած, և Նիկոլայի լուռ հարցին իր բարակ ձայնով ասաց.

— Դեմքի վրա աննշան վերք կա, իսկ գանգը կոտրված է, թեև ոչ սաստիկ, առողջ տղա է։ Սակայն շատ արյուն է կորցրել։ Հիվանդանո՞ց պիտի ուղարկենք։

— Ինչո՞ւ։ Թո՛ղ այստեղ մնա,— բացականչեց Նիկոլայը։

— Այսօր կարելի է, է, ասենք՝ վաղն էլ, իսկ հետո ինձ

համար ավելի հարմար կլինի, որ նա հիվանդանոցում պառկի։ Ես ժամանակ չունե՛մ այցելություններ անելու։ Դու թոուցիկ կգրե՞ս գերեզմանատան դեպքի մասին։

— Իհարկե,— պատասխանեց Նիկոլայը։

Մայրը կամաց վեր կացավ և գնաց խոհանոց։

— Ո՞ւր եք գնում, Նի՛լովնա,— անհանգստանալով կանգնեցրեց նրան Նիկոլայը։— Սոնյան մենակ ամեն բան կանի՛։

Մայրը նայեց նրան և ցնցվելով պատասխանեց տարօրինակ կերպով քմծիծաղելով.

— Ես արյունոտ եմ...

Իր սենյակում զգեստը փոխելով՝ մայրը նորից միտք արեց այդ մարդկանց հանգստության մասին, սարսափելին արագորեն վերապրելու նրանց ունակության մասին։ Դա զգաստացնում էր նրան, երկյուղը սրտից դուրս վանելով։ Երբ նա այն սենյակը մտավ, ուր պառկած էր վիրավոր տղան, Սոֆյան նրա վրա կռացած ասում էր.

— Հիմարություններ են, ընկե՛ր։

— Ախր ես ձեզ նեղություն կտամ,— առարկում էր տղան թույլ ձայնով։

— Իսկ դուք լո՛ւռ կացեք, դա ձեզ համար ավելի օգտակար է...

Մայրը կանգնեց Սոֆյայի հետևը և ձեռքը նրա ուսին դնելով, ժպիտով նայելով վիրավորի գունատ դեմքին, քմծիծաղով ասաց, թե նա ինչպես էր զառանցում կառքում և անզգույշ խոսքերով իրեն վախեցնում։ Իվանը լսում էր, նրա աչքերը տենդորեն վառվում էին, շրթունքները չփչփացնում էր և կամաց, շփոթված բացականչում.

— Օ՜հ... ի՞նչ հիմարն եմ։

— Դեհ, մենք ձեզ մենակ կթողնենք,— նրա վրայի վերմակն ուղղելով հայտնեց Սոֆյան։— Հանգստացե՛ք։

Նրանք սեղանատուն գնացին և այնտեղ երկար զրուցում էին օրվա դեպքի մասին։ Եվ արդեն այդ դրամային վերաբերվում էին որպես մի ինչ-որ հեռավոր բանի, վստահ նայելով ապագային, քննարկելով վաղվա աշխատանքի հնարները։ Դեմքերը հոգնած էին, իսկ մտքերը կայտառ, և իրենց գործի մասին խոսելով՝ այդ մարդիկ չէին թաքցնում իրենցից իրենց դժգոհ լինելը։ Աթոռի վրա ջղայնորեն շարժվելով, բժիշկը հազիվ զսպելով իր բարակ, սուր ձայնը, ասում էր.

— Պրոպագա՛նդա, պրոպագա՛նդա։ Դա քի՛չ է հիմա, բանվոր երիտասարդությունն իրավացի է։ Պետք է ավելի լայն ծավալել ագիտացիան,— բանվորներն իրավացի են՝ ասում եմ...

Նիկոլայը մռայլ և բժշկի տոնով արձագանքեց.

— Ամեն տեղից գանգատներ են գալիս, թե գրականությունը քիչ է, իսկ մենք դեռ էլի չենք կարողանում լավ տպարան կազմակերպել։ Լյուդմիլան ուժասպառ է լինում, նա կհիվանդանա, եթե մենք նրան օգնականներ չտանք...

Իսկ Վեսովշչիկո՞վը,— հարցրեց Սոֆյան։

— Նա քաղաքում ապրել չի կարող։ Նա գործի կկպչի միայն նոր տպարանում, իսկ Լյուդմիլային պակասում է մի մարդ ևս...

— Ես հարմար չե՞մ լինի,— կամաց հարցրեց մայրը։

Նրանք երեքն էլ նայեցին Վլասովային և մի քանի վայրկյան լուռ էին։

— Լա՛վ միտք է,—բացականչեց Սոֆյան։

— Ոչ, դա դժվար բան է ձեզ համար, Նի՛լովնա,— չոր-չոր ասաց Նիկոլայը։— Դուք ստիպված կլինեիք ապրել քաղաքից դուրս, ընդհատել տեսակցությունները Պավելի հետ և ընդհանրապես...

Հառաչելով, մայրն առարկեց.

— Պաշայի համար դա մեծ կորուստ չի, ասենք՝ այդ տեսակցություններն էլ միայն սիրտս կեղեքում են։ Ոչ մի բանի մասին խոսել չի լինում։ Որդուս առաջ կանգնում եմ հիմարի պես, իսկ նրանք բերանիս են նայում, սպասում, թե մի որևէ ավելորդ բան չե՞մ ասի արդյոք...

Վերջին օրերի դեպքերը մորը հոգնեցրել էին, և հիմա լսելով, որ իր համար հնարավոր կլինի ապրել քաղաքից դուրս, նրա դրամաներից հեռու, նա անձկորեն կառչեց այդ հնարավորությանը։

Բայց Նիկոլայն ընդմիջեց այդ խոսակցությունը։

— Ինչի՞ մասին ես մտածում, Իվա՛ն,— հարցրեց նա բժշկին։

Սեղանի վրա կռացրած գլուխը բարձրացնելով, բժիշկը մռայլ պատասխանեց.

— Մենք քի՛չ ենք, ահա՛, թե ինչի մասին եմ մտածում։ Անհրաժեշտ է ավելի համառորեն աշխատել... և անհրաժեշտ է համոզել Պավելին և Անդրեյին՝ փախչել, նրանք երկուսն էլ այնքան պետք են, որ նրանց անգործ նստելը ձեռնտու չէ...

Նիկոլայը հոնքերը կիտեց և կասկածանքով գլուխն օրորեց, հապճեպ նայելով մորը։ Մայրն զգաց, որ իր ներկայությամբ նրանք քաշվում են խոսել իր որդու մասին, և գնաց իր սենյակը, սրտում մարդկանցից վիրավորված այն բանի համար, որ նրանք այդպես անուշադրությամբ վերաբերվեցին իր ցանկությանը։ Անկողնում բաց աչքերով պառկած՝ նա ձայների ցածր շշուկի տակ ենթարկվեց անհանգիստ մտքերի։

Անցկացած օրը մռայլորեն անհասկանալի էր և չարագուշակ ակնարկներով լի, բայց մոր համար ծանր էր մտածել նրա մասին և իրենից վանելով դժկամ տպավորությունները՝ նա սկսեց մտածել Պավելի մասին։ Նա ցանկանում էր տեսնել նրան ազատ, և միևնույն ժամանակ դա վախեցնում էր իրեն, նա զգում էր, որ իր շուրջն ամեն ինչ սուր կերպարանք է ստանում, խիստ ընդհարումներով է սպառնում։ Մարդկանց լուռ համբերությունն անհետանում էր՝ տեղի տալով լարված սպասողությանը, նկատելիորեն աճում էր վրդովմունքը, հնչում էին սուր խոսքեր, ամեն կողմից ինչ-որ գրգռիչ բանի հոտ էր փչում... Ամեն մի պրոկլամացիա տաք-տաք խոսակցություններ էր առաջ բերում շուկայում, խանութներում, ծառաների և արհեստավորների մեջ, ամեն մի ձերբակալություն քաղաքում զարթեցնում էր ձերբակալության պատճառի մասին դատողությունների վախկոտ, վարանոտ, իսկ երբեմն նաև անգիտակցորեն համակրական արձագանք։ Մայրն ավելի ու ավելի հաճախ էր լսում հասարակ մարդկանցից մի ժամանակ իրեն վախեցնող խոսքերը՝ խռովություն, սոցիալիստներ, քաղաքականություն. այդ բառերն արտասանում էին հեգնորեն, բայց հեգնանքի տակ անհաջող թաքնված էր լինում պրպտուն մի հարցում. այդ խոսքերն արտասանում էին չարությամբ, բայց դրա տակ երկյուղ էր հնչում, արտասանում էին առերևույթ մտախոհ, սակայն՝ հույսով և սպառնալիքով։ Դանդաղ, բայց լճացած խավար կյանքի միջով լայն շրջաններ կազմելով տարածվում էր վրդովմունքը, արթնանում էր քնատ միտքը և տատանվում էր դեպի օրվա բովանդակությունը եղած սովորական, հանգիստ վերաբերմունքը։ Մայրն այդ բոլորը տեսնում էր ուրիշներից ավելի պարզ, որովհետև նրանցից ավելի լավ էր ճանաչում կյանքի թախծոտ դեմքը, և այժմ այդ դեմքին մտախոհության և գրգռվածության կնճիռներ տեսնելով՝ նա և՛ ուրախանում էր, և՛ վախենում։ Ուրախանում էր, որովհետև դա համարում էր իր որդու գործը, վախենում էր՝

իմանալով, որ եթե նա բանտից դուրս գա, կկանգնի բոլորից առաջ, ամենավտանգավոր տեղը։ Եվ կկործանվի։

Երբեմն որդու պատկերը նրա առջև աճում էր՝ հասնելով հեքիաթային հերոսի մեծության, այդ պատկերը միացնում էր իր մեջ այն ազնիվ, համարձակ խոսքերը, որ մայրը լսել էր, այն բոլոր մարդկանց, որոնք մորը դուր էին գալիս, այն ամբողջ հերոսականն ու լուսավորը, որ մայրը ճանաչում էր։ Այդ ժամանակ մայրը զգացված, հպարտ, խաղաղ հիացմունքով զմայլվում էր իր որդով և հույսերով լի՝ մտածում.

«Ամե՜ն ինչ լավ կլինի, ամե՜ն ինչ»։

Նրա սերը, մոր սերը, բորբոքվում էր, սիրտը սեղմելով գրեթե ցավացնելու աստիճանի, ապա մայրականը խանգարում էր մարդկայինի աճելուն, այրում այն, և մեծ զգացմունքի տեղն անհանգստության գորշ մոխրի մեջ երկչոտությամբ թպրտում էր մի թախծալի միտք։

«Կկործանվի՜... կկորչի՜...»

XIV

Կեսօրին մայրը նստած էր բանտի գրասենյակում։ Պավելի դիմաց և աչքերի մթագնած մառախուղի միջով դիտում էր նրա մորուքով դեմքը, պատեհություն էր փնտրում հանձնելու նրան մատների արանքում ամուր սեղմած թուղթը։

— Առողջ եմ և ամենքն էլ առողջ են,— ցածր ասում էր Պավելը։— Է՜, դո՞ւ ինչպես ես։

— Վնաս չունի. Եգոր Իվանովիչը մահացավ,— մեքենայորեն ասաց մայրը։

— Հա՞,— բացականչեց Պավելը և խաղաղ կախեց գլուխը։

— Թաղմանը ոստիկանությունը կռիվ արեց, մեկին ձերբակալեցին,— միամտորեն շարունակում էր մայրը։ Բանտապետի օգնականը վրդովված ծպծպացրեց բարակ շրթունքները և աթոռից ցատկելով մրթմրթաց.

— Դա արգելվա՜ծ է, հարկավոր է հասկանալ։ Արգելված է քաղաքականության մասին խոսելը...

Մայրը նույնպես վեր կացավ աթոռից և կարծես թե չհասկանալով՝ հանցապարտորեն հայտնեց.

— Ես քաղաքականության մասին չեմ խոսում, այլ կռվի մասին։ Իսկ որ նրանք կռվել են, այդ ճիշտ է։ Եվ մինչև անգամ մեկի գլուխը պատռել են...

— Միևնո՜ւյնն է։ Ես ձեզ խնդրում եմ լռե՛լ։ Այսինքն՝ լռել ա՜յն բոլորի մասին, ինչ որ չի վերաբերում անձամբ ձեզ, ընտանիքին և ընդհանրապես ձեր տանը։

Զգալով, որ խճճվել է, նա նստեց աթոռին և թղթերը ջոկելով թախծագին և ձանձրացած ավելացրեց.

— Ես պատասխանատու եմ, այո...

Մայրը շուրջը նայեց և թուղթն արագ խոթելով Պավելի ձեռքը թեթևացած շունչ քաշեց։

— Մարդ չի հասկանում, թե ինչի՞ մասին խոսի...

Պավելը ծիծաղեց.

— Ես էլ չեմ հասկանում...

— Այն ժամանակ տեսակցություններն էլ պետք չեն,— գրգռված նկատեց աստիճանավորը։— Խոսելու բան չունեն, իսկ գալիս են անհանգստացնում...

— Իսկ դատը շուտո՞վ կլինի,— քիչ լռելուց հետո հարցրեց մայրը։

— Այս քանի օրը դատախազն այստեղ էր եկել, ասաց, որ շուտով կլինի...

Նրանք իրար աննշան, երկուսի համար էլ անկարևոր խոսքեր էին ասում։ Մայրը տեսնում էր, որ Պավելի աչքերը իր դեմքին են նայում քնքշորեն, սիրով։ Պավելն էլի առաջվա պես հավասարակշռված և հանգիստ էր, նա չէր փոխվել, միայն մորուքն էր սաստիկ աճել ու նրան ծերացրել, և ձեռները ճերմակել էին։ Մայրն ուզում էր նրան մի հաճելի բան անել, ասել Նիկոլայի մասին, և առանց ձայնը փոխելու, նույն տոնով, ինչպես խոսում էր անկարևոր և անհետաքրքիր բանի մասին շարունակեց.

— Տեսել եմ քո սանիկին...

Պավելն ուշի-ուշով նայեց մոր աչքերին՝ լուռ հարցնելով։ Ցանկանալով հիշեցնել որդուն Վեսովշչիկովի չեչոտ դեմքը՝ մայրը մատով իր դեմքին խփեց...

— Վնաս չունի, տղան ողջ և առողջ է, շուտով գործի կդրվի։

Որդին հասկացավ, գլխով արեց նրան և ուրախ ժպիտն աչքերում պատասխանեց.

— Դա լա՜վ է։

— Հա, իհարկե՛,— բավարարված արտասանեց մայրը՝ իրենից գոհ, որդու ուրախությունից զգացված։

Մորը հրաժեշտ տալիս Պավելն ամուր սեղմեց նրա ձեռքը։

— Շնորհակալությո՛ւն, մա՛յր։

Մորը պատեց դեպի որդին ունեցած սրտակից մտերմության ուրախ զգացումը, և բառերով պատասխանելու ուժ չունենալով նա պատասխանեց ձեռքի լուռ սեղմումով։

Տուն վերադառնալով՝ տեսավ, որ Սաշան եկել է։ Աղջիկը սովորաբար Նիլովնայի մոտ էր գալիս այն օրերը, երբ մայրը տեսակցության էր լինում գնացած։ Նա Պավելի մասին երբեք չէր հարցնում, և եթե մայրն ինքը չէր խոսում որդու մասին, Սաշան աչքերը հառած նայում էր մոր դեմքին և դրանով բավարարվում։ Բայց այժմ նա մորը դիմավորեց անհանգիստ հարցով.

— Հը՛, ի՞նչպես է նա։

— Ոչինչ, առո՛ղջ է։

— Թուղթը տվի՞ք։

— Իհարկե՛։ Ես այնպես ճարպիկ կերպով ձեռքը կոխեցի...

— Նա կարդա՞ց։

— Որտե՞ղ։ Մի՞թե կարելի էր...

— Հա, ես մոռացել էի,— դանդաղ ասաց աղջիկը։— Մի շաբաթ էլ սպասենք, մի շաբաթ էլ։ Իսկ դուք ի՞նչ եք կարծում, նա կհամաձայնի՞։

Նա հոնքերը կիտեց և կանգ առած աչքերով նայում էր մոր դեմքին։

— Դե, ես չգիտեմ,— խորհում էր մայրը։— Ինչո՞ւ չպիտի փախչի, եթե անվտանգ է դա։

Սաշան գլուխը թափ տվեց և չոր-չոր հարցրեց.

— Դուք չգիտե՞ք, թե հիվանդին ուտելու ի՞նչ կարելի է տալ։ Նա ուտել է ուզում։

— Ամեն բան կարելի է, ամե՛ն բան։ Ես իսկույն...

Նա գնաց խոհանոց, Սաշան դանդաղ շարժվեց նրա հետևից։

— Օգնե՞մ ձեզ։

— Շնորհակալությո՛ւն, ի՞նչ եք ասում։

Մայրը դեպի վառարանը կռանալով հանեց կճուճը։ Աղջիկը կամաց ասաց նրան.

— Սպասեցե՛ք...

Նրա դեմքը գունատվեց, աչքերը թախծալի կերպով լայնացան, և դողդոջուն շրթունքները ճիգ գործադրելով ջերմագին և արագ շշնջացին.

— Ես ուզում եմ ձեզ խնդրել։ Ես գիտեմ՝ նա չի՛ համաձայնի։ Դուք նրան համոզեցե՛ք։ Նա հարկավոր է, ասացե՛ք նրան, որ նա անհրաժեշտ է գործի համար, որ ես վախենում եմ՝ նա հիվանդանա։ Դուք տեսնում եք, դատը դեռ չի նշանակված...

Նա ըստ երևույթին դժվարանում էր խոսել։ Նա շտկվեց, նայեց մի կողմ, նրա ձայնը անհավասար էր հնչում։ Արտահայտությունները հոգնած փակելով՝ աղջիկը կծում էր շրթունքները, իսկ ամուր սեղմված ձեռների մատները ճռճռում էին։

Մայրը շփոթվել էր նրա հոգու հորդումից, բայց հասկացավ այդ ամենը և հուզված, տխուր զգացմունքով լի՝ գրկելով Սաշային, կամաց պատասխանեց.

— Իմ անգի՛ն։ Բացի իրենից նա ոչ ոքի չի լսի, ոչ ոքի՛։

Երկուսն էլ լռեցին իրար պինդ հպված։ Ապա Սաշան զգուշորեն իր ուսերից վերցրեց մոր ձեռները և ցնցվելով ասաց.

— Այո, ձեր ասածը ճիշտ է, այս բոլորը հիմարություններ են, ջղերս են...

Եվ հանկարծ, լուրջ դեմք ընդունելով, պարզապես խոսքն ավարտեց.

— Ավելի լավ է եկեք հիվանդին կերակրենք...

Իվանի անկողնի մոտ նստելով Սաշան արդեն հոգատարությամբ և փաղաքշանքով հարցրեց.

— Գլուխդ շա՞տ է ցավում։

— Ոչ այնքան, միայն ամեն ինչ աղոտ է երևում։ Թույլ եմ,— ամաչկոտությամբ վերմակը դեպի ծնոտը քաշելով պատասխանեց Իվանը և աչքերը կկոցեց կարծես պայծառ լույսից։ Նկատելով, որ նա քաշվում է իր մոտ բան ուտել, Սաշան վեր կացավ և գնաց։

Իվանը նստեց անկողնում, նայեց Սաշայի հետևից և աչքերը թարթելով ասաց.

— Գեղե-ցի՛կն է...

Իվանի աչքերը պայծառ և ուրախ էին, ատամները մանր, խիտ, ձայնը դեռ չէր կազմակերպվել։

— Քանի՞ տարեկան եք,— մտախոհ հարցրեց մայրը։

— Տասնյոթ...

— Իսկ ծնողներդ ո՞րտեղ են։

— Գյուղում. ես տասը տարեկանից այստեղ եմ, դպրոցը վերջացրի այստեղ եկա։ Իսկ ձե՛ր անունն ինչ է, ընկե՛ր։

Մորը միշտ ծիծաղեցնում և հուզում էր այդ բառը, որով դիմում էին իրեն։ Հիմա էլ ժպտալով նա հարցրեց.

— Ինչո՞ւ եք ուզում իմանալ։

Պատանին լռեց շփոթված, հետո բացատրեց.

— Գիտեք, ինչ, մեր խմբակի ուսանողը, այսինքն նա, որ մեզ հետ կարդում էր, մեզ պատմում էր Պավել Վլասովի, բանվորի, մոր մասին, գիտե՞ք, Մայիսի մեկի ցույցը։

Մայրը գլխով արեց և լարեց ուշադրությունը։

— Պավելն առաջինն էր, որ բացեիրաց բարձրացրեց մեր պարտիայի դրոշը,— հպարտությամբ հայտնեց պատանին, և նրա հպարտությունը իր համահնչուն արձագանքը գտավ մոր սրտում։

— Ես այն ժամանակ այնտեղ չէի, մենք այն ժամանակ մտածում էինք այստեղ մեր ցույցը սարքելու, չհաջողվեց։ Մենք քիչ էինք այն ժամանակ։ Իսկ մյուս տարի — համեցեք... Կտեսնե՛ք։

Նա հուզմունքից շնչասպառ էր լինում, ապագա դեպքերից կանխապես ուրախանալով, ապա գդալն օդում ճոճելով շարունակեց.

— Այդպես ուրեմն, Վլասովի մայրը, ասում եմ։ Դրանից հետո նա էլ է պարտիայի մեջ մտել։ Ասում են՝ այնպիսի՞ն է, որ ուղղակի հրաշք։

Խոր ժպտաց մայրը, նրա համար հաճելի էր լսել տղայի հիացմունքով լի գովասանքները։ Հաճելի էր և անհարմար։ Նա նույնիսկ ուզեց տղային ասել. «Այդ ե՛ս եմ Վլասովան...», բայց իրեն զսպեց և թեթև քմծիծաղով, թախիծով ասաց ինքն իրեն. «Ա՛խ, դո՛ւ, պառաված հիմար...»

— Իսկ դուք շա՛տ կերեք։ Շո՛ւտ առողջացեք լավ գործի համար,— հանկարծ հուզված ասաց մայրը նրան կռանալով։

Դուռը բացվեց, փչեց աշնան խոնավ սառնությունը, մտավ Սոֆյան շիկնած, ուրախ։

— Լրտեսները հետևից թրև են գալիս, ինչպես փեսացուները հարուստ հարսնացուի հետևից, ազնիվ խոսք։ Ես պետք է այստեղից ծլկեմ... է՛, ի՞նչպես է Վանյան։ Լա՞վ է։ Ի՞նչպես է Պավելը, Նի՛լովնա։ Սաշան այստե՞ղ է։

Ծխախոտը վառելով նա հարցնում էր և պատասխանի չէր

սպասում, մորը և պատանուն իր մոխրագույն աչքերի հայացքով փաղաքշելով։ Մայրը նայում էր նրան և ներքուստ ժպտալով մտածում.

«Ա՛յ, ես էլ եմ լավ մարդկանց շարքն ընկնում»։

Եվ նորից դեպի Իվանը թեքվելով ասաց.

— Առողջացե՛ք, որդյա՛կ։

Եվ գնաց սեղանատուն։ Այնտեղ Սոֆյան Սաշային պատմում էր.

— Նրա մոտ արդեն երեք հարյուր օրինակ պատրաստ կա։ Նա իրեն կսպանի այդպիսի աշխատանքով։ Ա՛յ քեզ հերոսություն։ Գիտե՞ք, Սաշա՛, մեծ երջանկություն է այդպիսի մարդկանց մեջ ապրելը, նրանց ընկեր լինելը, նրանց հետ աշխատելը...

— Այո՛,— կամաց պատասխանեց աղջիկը։

Երեկոյան թեյի ժամանակ Սոֆյան մորն ասաց.

— Իսկ դուք, Նի՛լովնա, պետք է նորից այցելեք գյուղ։

— Լավ, ի՞նչ կա որ։ Ե՞րբ։

— Երեք օրից հետո, կարո՞ղ եք։

— Լավ։

— Գնացե՛ք,— կամաց խորհուրդ տվեց Նիկոլայը։— Փոստի կառքը վարձեցեք և, խնդրեմ, ուրի՛շ ճանապարհով գնաք, Նիկոլսկայա գավառակով։

Նա լռեց և խոժոռվեց։ Դա նրա դեմքին չէր սազում՝ տարօրինակ և անհաճո փոխելով միշտ հանգիստ արտահայտությունը։

— Նիկոլսկայայով հեռու է,— նկատեց մայրը։— Կառքով էլ ճանապարհ գնալը...

— Գիտե՞ք ինչ կա,— շարունակեց Նիկոլայը։— Ես ընդհանրապես այդ գնալուն դեմ եմ։ Այնտեղ խաղաղ չի, արդեն ձերբակալություններ են եղել, մի ուսուցիչ են բռնել, պետք է ավելի զգույշ լինել։ Հարկավոր էր որոշ ժամանակ սպասել...

Սոֆյան մատներով սեղանը թխկթխկացնելով նկատեց.

— Մեզ համար կարևոր է անընդհատություն պահպանել գրականություն տարածելու գործում։ Դուք գնալուց չե՞ք վախենում, Նի՛լովնա,— հանկարծ հարցրեց նա։

Մայրն իրեն վիրավորված զգաց։

— Ես ե՞րբ եմ վախեցել որ։ Հենց առաջին անգամն էլ այդ արել եմ առանց վախենալու... Իսկ հիմա հանկարծ...— նա խաղասությունը չվերջացնելով նա գլուխը կախեց։ Ամեն անգամ,

երբ նրան հարցնում էին, թե չի՞ վախենում արդյոք, հարմա՞ր է նրա համար, կարո՞ղ է նա անել այս կամ այն բանը,— նրան թվում էր, թե խնդրում են իրեն, նրան թվում էր, թե մարդիկ իրեն հեռացնում են իրենցից, դեպի ինքն այլ կերպ են վերաբերվում, քան դեպի իրար։

— Դուք զուր եք ինձ հարցնում թե՝ վախենո՞ւմ եմ ես,— ասաց նա հառաչելով,— դուք իրար չեք հարցնում վախի մասին։

Նիկոլայն շտապով հանեց ակնոցը, նորից դրեց և ուշադրությամբ նայեց քրոջ դեմքին։ Շփոթմունքի լռությունն անհանգստացրեց Վլասովային, նա հանցավորի պես աթոռից վեր կացավ՝ ցանկանալով ինչ-որ բան ասել նրանց, բայց Սոֆյան բռնեց նրա ձեռքը և կամաց խնդրեց.

— Ներեցե՛ք ինձ։ Ես է՛լ չեմ անի։

Դա ծիծաղեցրեց մորը, և մի քանի րոպե հետո երեքով մտահոգված և մտերմորեն խոսում էին գյուղ գնալու մասին։

XV

Լուսաբացին մայրը փոստի կառքում օրորվելով գնում էր աշնանային անձրևից ողողված ճանապարհով։ Խոնավ քամի էր փչում, ցեխի ցալքունները թռչկոտում էին, իսկ կառապանը կառքի ուսին՝ կողքի վրա նստած դեպի մայրը մտախոհ և ոռնդային ձայնով գանգատվում էր.

— Ես նրան ասում եմ, այսինքն եղբորս, ի՞նչ կա որ, արի բաժանվենք։ Սկսեցինք բաժանվել...

Նա հանկարծ մտրակեց ձախ ձիուն և շարացած գոչեց.

— Դա՛հ-դա՛հ։ Վազի՛ր, սատանայի ծնունդ...

Աշնան գեր ագռավները մտահոգ քայլում էին լերկ հերկերի վրա. սառը սուլելով, նրանց վրա էր թռչում քամին։ Ագռավները քամու հարվածներին դեմ էին անում իրենց կողերը, քամին փքում էր նրանց փետուրները, սայթաքեցնելով նրանց, այդ ժամանակ նրանք ուժին տեղի տալով՝ թևերի ծույլ թափահարումով թռչում նստում էին մի նոր տեղ։

— Դե, թալանեց նա ինձ։ Տեսա էլ բան չունեմ,— ասում էր կառապանը։

Մայրը նրա խոսքերը կարծես երազում էր լսում, հիշողությունը նրա առջև մի երկար շարան էր հյուսում վերջին տարիները վերապրած դեպքերից, և այդ դեպքերին անդրադառնալով

մայրն ամեն տեղ իրեն էր տեսնում։ Մի ժամանակ կյանքն ստեղծվում էր մի ինչ-որ հեռավոր տեղ, հայտնի չէր, թե ո՞վ է ստեղծում և ինչի համար, իսկ ահա այժմ շատ բան կատարվում է իր աչքի առջև, իր օգնությամբ։ Եվ դա նրա մեջ զարթեցնում էր իր հանդեպ անվստահություն ու գոհունակություն, տարակուսանքի և զուսպ թախծի շփոթ մի զգացմունք...

Շուրջն ամեն ինչ օրորվում էր դանդաղ շարժման մեջ. երկինքում ծանրորեն իրար առաջ կտրելով լողում էին գորշ ամպերը. ճանապարհի երկու կողմում երևում-չքանում էին թաց ծառերը՝ մերկ կատարներն օրորելով. չորս կողմն էին հեռանում դաշտերը, բլուրները առաջ էին դալիս ու ցրվում-կորչում։

Կառապանի ոռնդային ձայնը, զանգակների ղողանջը, քամու խոնավ սուլոցը և շնկշնկոցը ձուլվում դառնում էին մի խոխոջուն, ոլորապտույտ առվակ, որը հոսում էր դաշտի վրայով միօրինակ ուժով...

— Հարստի համար արքայությունն էլ է նեղ, բանն այսպես է... Սկսեց հուպ տալ, իշխանավորները նրա բարեկամներն են,— կառքի ուսի վրա ճոճվելով՝ շարունակում էր կառապանը։

Երբ կայարան հասան, կառապանը ձիերն արձակեց և հուսակտուր ձայնով ասաց մորը.

— Մի հինգկոպեկանոց տայիր, գոնե կխմեի՞։

Մայրը տվեց դրամը, կառապանը դրամը ափում թափ տալով՝ նույն տոնով հայտնեց մորը.

— Երեք կոպեկով օղի կխմեմ, երկուսով հաց կուտեմ...

Կեսօրից հետո ջարդված, սառած՝ մայրը հասավ Նիկոլսկոյե մեծ գյուղը, գնաց կայարան, իր համար թեյ խնդրեց և նստեց պատուհանի մոտ, իր մեծ ճամպրուկը երկար նստարանի տակ դնելով։ Պատուհանից երևում էր դեղին խոտի կոխոտված գորգով ծածկված մի փոքրիկ հրապարակ, գավառակի վարչությունը՝ կախ ընկած տանիքով մի մուգ գորշագույն տուն։ Գավառակի վարչության պատշգամբում նստած էր մի ճաղատ, երկարամորուք մուժիկ՝ միայն շապիկ հագած, և ծխամորճ էր ծխում։ Խոտի վրա մի խոզ էր ման գալիս, ականջները դժգոհ թափահարելով, դունչը խրում էր գետնի մեջ և գլուխն օրորում։

Սև ամպերը լողում էին մուգ զանգվածներով, կիտվում իրար վրա։ Խաղաղ էր, աղոտ և ձանձրալի, կյանքը կարծես թաքնվել էր ինչ-որ տեղ, պահ մտել։

Հանկարծ, ձիով քառատրոփ հրապարակ արշավեց մի ուր-

յադնիկ, շեկ ձիու սանձը քաշելով կանգնեցրեց գավառակի վարչության պատշգամբի մոտ և մտրակն օդում թափ տալով՝ մի մուժիկի վրա գոռաց, աղաղակները կպչում էին պատուհանի ապակիներին, բայց բառերը չէին հասկացվում։ Մուժիկը վեր կացավ, ձեռքը մեկնեց՝ հեռուն ցույց տալով, ուրյադնիկը գետին ցատկեց, երերաց, ոտների վրա, դեպի մուժիկը շպրտեց սանձը և բռնելով ճաղերը ծանր-ծանր բարձրացավ պատշգամբը ու չքացավ գավառակի վարչության դռան հետևում...

Նորից անդորրություն տիրեց։ Ջին սմբակներով երկու անգամ խփեց փափուկ գետնին։ Սենյակ մտավ մի ջահել աղջիկ, ծոծրակին կարճ, դեղնագույն հյուսեր, իսկ կլոր դեմքին՝ փաղաքշալից աչքեր։ Շրթունքները կծած, նա մեկնած ձեռներով տանում էր մի մեծ, եզրերը տրորված մատուցարան՝ վրան ամանեղեն դարսած, և բարևում էր, հաճախ գլխով անելով։

— Բարև, խելո՛ք,— սիրալիր ասաց մայրը։

— Բարև՛ ձեզ։

Սեղանի վրա շարելով ափսեներն ու թեյի ամանեղենը, աղջիկը հանկարծ աշխուժորեն հայտնեց.

— Հենց հիմա մի ավազակ են բռնել, բերո՛ւմ են։

— Դա ի՞նչ ավազակ է։

— Չգիտեմ...

— Իսկ ի՞նչ է արել։

— Չգիտեմ,— կրկնեց աղջիկը։— Միայն լսել եմ, որ բռնել են։ Գավառակի պահակը վազեց պրիստավին կանչելու։

Մայրը նայեց պատուհանից, հրապարակի վրա մուժիկներ երևացին։ Ոմանք քայլում էին դանդաղ և լրջորեն, ոմանք քայլելիս կիսամուշտակներն էին շտապ կոճկում։ Գավառակի վարչության շենքի առջև կանգ առնելով՝ բոլորը նայում էին ձախ կողմը։

Աղջիկն էլ նայեց փողոց և սենյակից դուրս փախավ դուռը պինդ շրխկացնելով։ Մայրը ցնցվեց, իր ճամպրուկն ավելի խոր հրեց նստարանի տակ և շալը գլխին գցելով՝ դեպի դուռը գնաց շտապելով և զսպելով հանկարծ իրեն համակած շուտ հեռանալու, փախչելու անհասկանալի ցանկությունը...

Երբ դուրս եկավ փոքրիկ պատշգամբը, սաստիկ ցուրտ խփեց նրա աչքերին, կրծքին, նա շնչասպառ եղավ, ոտները փայտացան, հրապարակի մեջտեղով գալիս էր Ռիբինը ձեռները մեջքին կապկպած, նրա կողքից քայլում էին երկու հարյուրապետներ՝ փայտերը համաչափ զարկելով գետնին, իսկ գավառակի վարչության պատշգամբի մոտ կանգնած էին մի խումբ մարդիկ և լուռ սպասում էին։

Մայրն ապշած անընդհատ նայում էր, Ռիբինն ինչ-որ բան էր ասում, մայրը լսում էր նրա ձայնը, բայց բառերն անարձագանք կորչում էին իր սրտի մութ, դողդոջուն ամայության մեջ։

Մայրն ուշքի եկավ, շունչ քաշեց, պատշգամբի մոտ կանգնած էր լայն, փայլուն մորուքով մի մուժիկ, որ կապույտ աչքերը հառել էր մոր դեմքին։ Հազալով և երկյուղից ուժասպառ ձեռներով կոկորդը սրբելով՝ մայրը դժվարությամբ հարցրեց մուժիկին.

— Սա ի՞նչ բան է։

— Մտիկ արեք ու տեսեք,— պատասխանեց մուժիկը և երեսը դարձրեց։ Մի մուժիկ էլ եկավ ու կանգնեց կողքին։

Հարյուրապետները կանգ առան ամբոխի առջև, որն ավելի ու ավելի էր աճում արագ և լուռ, ահա նրա վրա հանկարծ թանձրորեն բարձրացավ Ռիբինի ձայնը.

— Ուղղափառնե՛ր։ Լսե՞լ եք այն ճշմարիտ թղթերի մասին, որոնց մեջ ճշմարտությունն է գրված մեր գյուղացիական կյանքի մասին։ Ահա՛ ես այդ թղթերի համար եմ տառապում, այդ գրքերը ե՛ս եմ ժողովրդին բաժանել։

Մարդիկ Ռիբինին ավելի սեղմ շրջապատեցին։ Նրա ձայնը հնչում էր հանգիստ, չափավոր։ Դա մորն զգուշացնում էր։

— Լսո՞ւմ ես,— կապտաչյա մուժիկի կողին հրելով կամաց հարցրեց մյուսը։ Նա առանց պատասխանելու գլուխը բարձրացրեց և նորից նայեց մոր դեմքին։ Մյուս մուժիկն է՛լ նայեց մորը, նա առաջինից ավելի երիտասարդ էր, մուգ, նոսր մորուքով և պեպենից խայտաբղետ, նիհար դեմքով։ Ապա երկուսն էլ պատշգամբից հեռացան մի կողմ։

«Վախենում են»,— ակամա նկատեց մայրը։

Նրա ուշադրությունը լարվեց։ Պատշգամբի բարձրությունից նա պարզ տեսնում էր Միխայիլ Իվանովիչի ջարդված, սև դեմքը, նկատում էր նրա աչքերի վառվռուն փայլը. նա ուզում էր, որ Ռիբինն էլ իրեն տեսնի, և ոտների ծայրերին բարձրանալով՝ գլուխը երկարացնում էր դեպի նա։

Մարդիկ Ռիբինի վրա նայում էին մռայլ, անվստահորեն և լռում էին։ Միայն ամբոխի հետևի շարքերում էր զուսպ խոսակցություն լսվում։

— Գյուղացինե՛ր,— լիաթոք և զիլ ձայնով ասում էր Ռիբինը։— Այդ թղթերին հավատացեք, ես այժմ նրանց համար գուցե մեռնեմ, ինձ ծեծեցին, տանջեցին, ուզում էին իմանալ՝ ես ո՞րտեղից եմ վերցրել դրանք, և դեռ էլի կծեծեն, ամեն ինչ կտանեմ։ Որովհետև այդ թղթերում ճշմարտությունն է գրված, այդ ճշմարտությունը մեզ համար հացից թանկ պիտի լինի, ա՛յ թե ինչ։

— Նա ինչո՞ւ է այդ բաներն ասում,— կամաց բացականչեց պատշգամբի մոտի մուժիկներից մեկը։ Կապտաչյան դանդաղ պատասխանեց.

— Հիմա միևնույնն է՝ մարդ մի անգամից ավելի հո՞ չի մեռնելու։

Մարդիկ կանգնած էին լուռումունջ, նայում էին աչքի տակով, խոժոռ, կարծես ամենքի վրա մի անտեսանելի, բայց ծանր բան էր ընկած։

Ուրյադնիկը դուրս եկավ պատշգամբ և երերալով, հարբած ձայնով մռնչաց.

— Այդ ո՞վ է խոսողը։

Նա հանկարծ իրեն ցած գլորեց պատշգամբից, բռնեց Ռիբինի մազերից և գլուխը դեպի առաջ քաշքշելով ու ետ հրելով, գոռաց.

— Այդ դո՞ւ ես խոսում, շա՜ն որդի, այդ դո՞ւ ես։

Ամբոխը տատանվեց. դղրդաց։ Մայրն անզոր թախծով գլուխը կախեց։ Եվ նորից հնչեց Ռիբինի ձայնը.

— Ա՜յ, մտի՛կ արեք, բարի՛ մարդիկ...

— Լռե՛լ,— Ուրյադնիկը խփեց նրա ականջին։ Ռիբինը ոտների վրա օրորվեց, թոթվեց ուսերը։

— Մարդու ձեռները կապել են ու չարչարում, ինչպես ուզում են...

— Հարյուրապետնե՛ր։ Տարե՛ք սրան։ Ժողովո՛ւրդ, ցրվի՛ր։— Ռիբինի առջև ցատկոտելով, ինչպես շղթայված շունը մսի կտորի առջև, ուրյադնիկը բռունցքներով խփում էր նրա դեմքին, կրծքին, փորին։

— Մի՛ խփիր,— գոռաց մեկն ամբոխի միջից։

— Ինչո՞ւ ես խփում,— պաշտպանեց մի ուրիշ ձայն։

— Գնա՛նք,— ասաց կապտաչյա մուժիկը գլխով անելով։ Եվ երկուսով առանց շտապելու գնացին դեպի գավառակի վարչությունը, իսկ մայրն ուղեկցեց նրանց բարի հայացքով։ Նա

թեթևացած շունչ քաշեց, ուրյադնիկը նորից ծանրորեն վա՜հեց պատշգամբ և այնտեղից բռունցքով սպառնալով կատաղի գոռաց.

— Այստե՛ղ բերել նրան, ասում եմ...

— Հարկավոր չի՛,— ամբոխի միջից լսվեց մի ուժեղ ձայն. մայրը հասկացավ, որ կապույտ աչքերով մուժիկն էր այդ ասողը։— Ջթողնե՛ք, տղե՛ր։ Կտանեն այնտեղ, ծեծելով կսպանե՛ն։ Հետո էլ մեզ վրա կգցեն, կասեն թե մե՛նք ենք սպանել։ Ջթողնե՛ք։

— Գյուղացինե՛ր,— որոտում էր Միխայլոյի ձայնը,— մի՞թե դուք չեք տեսնում ձեր կյանքը, չեք հասկանում, թե ինչպես են կողոպտում ձեզ, ինչպես են խաբում, խմում ձեր արյունը։ Ամեն ինչ ձեզնից է կախված, դո՛ւք եք առաջին ուժը երկրիս վրա, իսկ ի՞նչ իրավունքներ ունեք։ Սովից սատկել, սա՛ է ձեր միակ իրավունքը...

Մուժիկները հանկարծ աղմկեցին իրար ընդհատելով.

— Ճի՛շտ է ասում։

— Գրի՛ստավին կանչեցեք։ Ո՞ւր է պրիստավը...

— Ուրյադնիկը գնացել է հետևից...

— Հարբա՞ծը...

— Մեր գործը չի՛ իշխանավորներին հավաքելը...

Աղմուկը քանի գնում աճում էր, ավելի՛ վեր բարձրանում։

— Խոսի՛ր։ Ջենք թողնի, որ ծեծեն։

— Բա՛ց արեք նրա ձեռքերը...

— Հանկարծ փորձանքի մեջ չընկնե՛նք...

— Ձեռքերս ցավո՛ւմ են,— բոլոր ձայները խլացնելով՝ համաչափ և զիլ ձայնով ասում էր Ռիբինը։— Ես չեմ փախչի, մուժիկնե՛ր։ Իմ ճշմարտությունից չե՛մ թաքնվի, նա իմ մեջ է ապրում...

Մի քանի հոգի ամբոխից հաստատորեն զանազան կողմեր հեռացան ծանր քայլերով, կիսաձայն խոսքեր փոխանակելով իրար հետ և գլուխները ճոճելով։ Բայց ավելի ու ավելի շատ էին վազեվազ գալիս վատ և շտապ հագնված, գրգռված մարդիկ։ Նրանք սև փրփուրի պես եռում էին Ռիբինի շուրջը, իսկ նա կանգնել էր նրանց մեջ, ինչպես մատուռը անտառում, ձեռները գլխից վեր բարձրացրած և ցնցելով գոռում էր ամբոխի մեջ.

— Շնորհակալությո՛ւն, բարի՛ մարդիկ, շնորհակալությո՛ւն։

Մենք ինքներս պետք է իրար ձեռքեր ազատենք, այսպե՞ս։ Մեզ ո՞վ կօգնի։

Նա սրբեց մորուքը և նորից բարձրացրեց ամբողջապես արնաթաթախ ձեռքը։

— Ահա իմ արյունը, ճշմարտությա՞ն համար է թափվում։

Մայրը պատշգամբից իջավ, բայց գետնից Միխայլոն չէր երևում, որին սեղմել էր ժողովուրդը, և մայրը նորից բարձրացավ աստիճանների վրա։ Իր կրծքում նա ջերմություն էր զգում, և մի անորոշ ուրախություն թպրտում էր այնտեղ։

— Գյուղացինե՛ր, փնտրեցեք գտեք այդ թղթերը, կարդացե՛ք. մի՛ հավատաք իշխանավորներին ու տերտերներին, երբ նրանք ասում են, թե անաստված և խռովարար են այն մարդիկ, որոնք մեզ ճշմարտություն են բերում։ Ճշմարտությունը գաղտնի է շրջում երկրի երեսին, նա բույն է փնտրում ժողովրդի մեջ, իշխանության համար նա դանակի ու կրակի պես բան է, իշխանությունը չի կարող ընդունել նրան, դա կմորթի իշխանությանը, կայրի նրան։ Ճշմարտությունը ձեր բարի բարեկամն է ու իշխանության ոխերիմ թշնամին։ Ահա թե ինչո՞ւ է նա թաքնվում...

Աբոխի մեջ նորից բռնկվեցին մի քանի բացականչություններ։

— Լսեցե՛ք, ուղղափառնե՛ր...

— Է՛, եղբա՛յր, դու կկորչես....

— Քեզ ո՞վ մատնեց։

— Տերտե՛րը,— ասաց հարյուրապետներից մեկը։

Երկու մուժիկ թունդ հայհոյեցին։

— Մտի՛կ արեք, տղե՛ր,—հնչեց մի նախազգուշացնող աղաղակ։

XVI

Ամբոխին մոտենում էր գավառամասի պրիստավը, բարձրահասակ, ամրակազմ, կլոր դեմքով մի մարդ։ Նրա գլխարկը թեք էր դրված, մեկ ընչացքը ոլորված էր վեր, իսկ մյուսը կախված դեպի ցած, և դրանից նրա դեմքը թվում էր ծուռ, բութ, մեռած ժպիտից այլանդակված։ Ձախ ձեռքում նա թուրն էր բռնել, իսկ աջը շարժում էր օդում։ Լսելի էր նրա ծանր և հաստատուն քայլերի ձայնը։ Ամբոխն ընկրկեց նրա առջև։ Դեմքերի վրա մի խոժոռ և ճնշված արտահայտություն երևաց, աղմուկը

լռում, ցածրանում էր կարծես մտնում էր գետնի մեջ։ Մայրն զգում էր, որ իր ճակատի կաշին դողում է և աչքերը տաքացել են։ Նա նորից ցանկացավ մտնել ամբոխի մեջ, առաջ թեքվեց և սառեց լարված դիրքով։

— Ի՞նչ կա,— հարցրեց պրիստավը կանգ առնելով Ռիբինի դիմաց և աչքերով չափելով նրան։— Ձեռքներդ ինչո՞ւ կապված չեն։ Հարյուրապետնե՛ր։ Կապկպե՛լ։

Նրա ձայնը բարձր ու զիլ էր, բայց անգույն։

— Կապված են եղել, ժողովուրդը ետ է արել,— պատասխանեց հարյուրապետներից մեկը։

— Ի՞նչ։ Ժողովո՞ւրդը։ Ի՞նչ ժողովուրդ։

Պրիստավը նայեց մարդկանց, որոնք կիսաշրջանաձև կանգնած էին իր առջև։ Եվ նույն միալար, անգույն ձայնով, ոչ բարձրացնելով, ոչ էլ իջեցնելով՝ շարունակեց.

— Այդ ո՞վ է այդ ժողովուրդը։

Ձեռքի թարս շարժումով նա թրի կոթը խփեց կապույտ աչքերով մուժիկի կրծքին։

— Ջո՛ւմակով, այդ դո՞ւ ես ժողովուրդը։ Դե, էլի՞ ով է։ Դո՞ւ ես, Մի՛շին։

Եվ աջ ձեռքով քաշեց մեկի մորուքը։

— Ցրվե՛ք, սրիկաներ... Թե չէ, ես ձեզ, ձեզ ցույց կտամ։

Նրա ձայնի մեջ, դեմքի վրա ոչ գրգռվածություն կար, ոչ սպառնալիք, նա խոսում էր հանգիստ, մարդկանց խփում էր ամուր ու երկար ձեռների սովորական, համաչափ շարժումներով։ Մարդիկ նահանջում էին նրա առջև՝ գլուխները կախ, դեմքերը մի կողմ դարձնելով։

— Հը՛, դուք ի՞նչ եք կանգնել,— դիմեց նա հարյուրապետներին։— Կապի՛ր։

Անպատկառ խոսքերով հայհոյեց, նորից նայեց Ռիբինին և բարձրաձայն ասաց նրան.

— Ձեռքերդ հետևդ տար, դո՛ւ։

— Ես չե՛մ ուզում, որ ձեռքերս կապեն,— խոսեց Ռիբինը։— Փախչելու միտք չունեմ, չեմ կռվում, էլ ինչո՞ւ եք կապոտում ինձ։

— Ի՞նչ,— հարցրեց պրիստավը դեպի նա քայլ անելով։

— Բավակա՞ն է ժողովրդին տանջել, գազանանե՛ր,— ձայնը բարձրացնելով՝ շարունակեց Ռիբինը։— Շուտով ձեր կարմիր օրն էլ կհասնի...

Պրիստավը կանգնել էր նրա առջև և ընչացքները շարժելով նայում էր նա դեմքին։ Ապա մի քայլ ետ գնաց և սուլող ձայնով ապշած երգեց.

— Ա-ա՜-ա՜խ, շա՜ն որդի։ Ի-ի՜նչ խոսքեր են։

Եվ հանկարծ արագ և պինդ խփեց Ռիբինի երեսին։

— Բռունցքով ճշմարտությունն սպանել չե՞ս կարող,— գոչեց Ռիբինը նրա վրա հարձակվելով։— Եվ ինձ ծեծելու իրավունք չունես, գարշելի՜ շուն։

— Իրավունք չունե՞մ։ Ե՞ս,— ծոր տալով ոռնաց պրիստավը։

Եվ նորից ձեռքը ետ տարավ՝ նշան վերցնելով Ռիբինի գլուխը։ Ռիբինը կռացավ, հարվածը չկպավ նրան, պրիստավն օրորվելով՝ հազիվ կարողացավ ոտքի վրա մնալ։ Ամբոխի մեջ մեկը բարձրաձայն փութակցրեց, և նորից հնչեց Միխայիլի զայրագին աղաղակը.

— Մի՛ համարձակվիր, ասում եմ, խփել ինձ, դև։

Պրիստավը շուրջը նայեց, մարդիկ մռայլ ու լուռ ավելի սեղմ, մութ օղակ էին կազմում...

— Նիկի՛տա,— բարձրաձայն կանչեց պրիստավը շուրջը նայելով։— Նիկի՛տա, հե՜յ։

Ամբոխի միջից դուրս եկավ մի թիկնավետ, ցածրահասակ մուժիկ կարճ կիսամուշտակով։ Նա գետնին էր նայում, մեծ գրզգրզված գլուխը կախած։

— Նիկի՛տա,— ընչացքը ոլորելով և առանց շտապելու ասաց պրիստավը։— Մի լա՜վ հասցրու նրա ականջին։

Մուժիկն առաջ քայլեց, կանգ առավ Ռիբինի դիմաց, գլուխը բարձրացրեց։ Ռիբինը շեշտակի նրա երեսին խփում էր ծանր, ճշմարիտ խոսքեր.

— Ա՜յ, մտի՛կ արեք, մարդի՛կ, տեսեք թե գազաններն ինչպե՞ս են հենց ձեր ձեռքով ձեզ խեղդում։ Մտի՛կ արեք, մտածեցե՛ք։

Մուժիկը ձեռքը դանդաղ բարձրացրեց և ծուլլ-ծուլլ հարվածեց նրա գլխին։

— Մի՞թե այդպես կխփեն, շա՜ն որդի,— ճչաց պրիստավը։

— Հե՜յ, Նիկի՛տա,— ոչ բարձրաձայն ասացին ամբոխի միջից։— Աստծուն մի՛ մոռանա։

— Խփի՛ր, ասում եմ,— գոռաց պրիստավը մուժիկի վզակթին հրելով։

Մուժիկը մի կողմ քայլեց և գլուխը կախելով մռայլ ասաց.

— Էլ չեմ խփի...

— Ի՞նչ։

Պրիստավի դեմքը ցնցվեց, նա ոտները գետնին խփելով, հայհոյելով հարձակվեց Ռիբինի վրա։ Խուլ շրխկաց հարվածը, Միխայլոն օրորվեց, ձեռքը թափահարեց, բայց պրիստավը երկրորդ հարվածով նրան գետին գլորեց և շուրջը ցատկոտելով՝ սկսեց մռնչալով խփել ոտներով Ռիբինի կրծքին, կողերին, գլխին։

Ամբոխը թշնամաբար բոռաց, տատանվեց՝ պրիստավի վրա շարժվելով, պրիստավը նկատեց այդ, ետ ցատկեց և պատյանից դուրս քաշեց թուրը։

— Այդպես հա՞։ Բունտ եք անում։ Հա՞... Ա՛յ թե ի՞նչ...

Նրա ձայնը ցնցվեց, ճչաց և կարծես կոտրվեց, խռռաց։ Ձայնի հետ նա հանկարծ կորցրեց իր ուժը, գլուխը քաշեց ուսերի մեջ, կռացավ և դատարկ աչքերն ամեն կողմ պտտելով՝ ընկրկեց, ոտներով զգուշորեն շոշափելով հետևի հողը։ Նահանջելով նա գոռում էր խոպոտ ու տագնապալից։

— Լա՛վ։ Վերցրե՛ք նրան, ես մեկնում եմ,— ապա՞։ Գիտե՞ք դուք, անիծվա՛ծ սրիկաներ, որ նա քաղաքական հանցագործ է, ցարի դեմ է գնում, խռովություն է սարքում, գիտե՞ք։ Իսկ դուք նրան պաշտպանում եք, հա՞։ Դուք խռովարարնե՞ր եք։ Ըհը՜-ը...

Անշարժ, անթարթ աչքերով, ուժն ու դատողությունը կորցրած կանգնել էր մայրը կարծես ծանր երազում, երկյուղից ու խղճահարությունից ճզմված։ Իշամեղուների պես նրա գլխում բզզում էին մարդկանց վիրավորված, մռայլ և զայրագին աղաղակները, դողում էր պրիստավի ձայնը, լսվում էին ինչ-որ շշուկներ...

— Եթե նա հանցավոր է՝ դատի՛ր...

— Դուք ներեցե՛ք նրան, ձերդ ազնվություն...

— Այդ ի՞նչ եք անում դուք, այդ ո՞ր օրենքով...

— Մի՞թե կարելի է։ Որ բոլորն սկսեն այդպես ծեծել, ի՞նչ դուրս կգա այն ժամանակ։

Մարդիկ երկու խմբի բաժանվեցին, մեկը պրիստավին շրջապատելով գոռում և հորդորում էր նրան, մյուսը, որ սակավաթիվ էր, մնաց ծեծվածի մոտ և խուլ, մռայլ բոբռում էր։ Մի քանի հոգի բարձրացրին նրան գետնից, հարյուրապետները նորից կամեցան կապել նրա ձեռները։

— Սպասեցե՛ք, սատանանե՛ր,— գոռում էին նրանց վրա։

Միխայլոն դեմքից և մորուքից սրբում էր ցեխը, արյունը և լուռ շուրջն էր նայում։ Նրա հայացքը սահեց մոր դեմքի վրայով, մայրը ցնցվելով դեպի նա ձգվեց, ակամա թափ տվավ ձեռքը, Ռիբինը երեսը դարձրեց։ Բայց մի քանի րոպե հետո նրա աչքերը նորից կանգ առան մոր դեմքի վրա։ Մորը թվաց, թե Ռիբինը շտկվեց, գլուխը բարձրացրեց, արյունոտված այտերը դողդողացին...

«Ճանաչեց, մի՞թե ճանաչեց...

Եվ Ռիբինին գլխով արեց՝ տխրագին, հոգեմաշ ուրախությունից ցնցվելով։ Բայց հետևյալ պահին նա տեսավ, որ Ռիբինի մոտ կանգնած է կապտաչյա մուժիկը և նույնպես նայում է իրեն։ Այդ մուժիկի հայացքը մի րոպե երկյուղի գիտակցություն արթնացրեց մոր մեջ...

«Ես այս ի՞նչ եմ անում։ Չէ՞ որ ինձ էլ կբռնեն»։

Մուժիկը Ռիբինին ինչ-որ բան ասաց, նա գլուխը թափ տվեց և կերկերուն ձայնով, բայց պարզորոշ և առույգ խոսեց.

— Վնաս չունի՞։ Մենակ ե՞ս չեմ աշխարհումս, ամբողջ ճշմարտությունը նրանք բռնել չե՞ն կարող։ Ուր որ ես եղել եմ, այնտեղ իմ հիշատակը կմնա՞, ա՛յ թե ինչ։ Թեպետ նրանք բույնը քանդել են, այնտեղ այլևս բարեկամ-ընկերներ չկան...

«Այդ նա ինձ համար է ասում»,— արագ կռահեց մայրը։

— Բայց կգա օրը, արծիվները դուրս կթռչեն ազատ, ժողովուրդը կազատվի՞։

Մի կին մի դույլ ջուր բերեց և սկսեց ախ քաշելով և ողբուկոծ անելով լվանալ Ռիբինի երեսը։ Նրա բարակ, աղերսագին ձայնը խառնվում էր Միխայլոյի խոսքերին և մորը խանգարում հասկանալու դրանք։ Պրիստավին առաջները գրած մոտեցան մի խումբ մուժիկներ. մեկը բարձրաձայն գոռում էր.

Սա՛յլ բերեք կալանավորի համար, հե՛յ։ Ո՞ւմ հերթն է։

Ապա լսվեց պրիստավի նոր, կարծես նեղացած ձայնը.

— Ես կարող եմ քեզ խփել, իսկ դու ինձ չես կարող, չես համարձակվի, տխմա՛ր։

— Այդպե՞ս։ Իսկ դու ո՞վ ես, աստվա՞ծ ես,— գոչեց Ռիբինը։ Բացականչությունների մի աններդաշնակ և ոչ բարձր հորձանք խլացրեց նրա ձայնը.

— Մի՛ վիճիր, քեռի։ Այստեղ իշխանություն է...

— Մի՛ բարկանա, ձերդ աղնվություն։ Մարդու խելքը գլխին չի...

— Սո՛ւս արա, հիմա՛ր։

— Ա՛յ, հիմա քեզ քաղաք կտանեն...

— Այնտեղ ավելի՛ շատ օրենք կա։

Ամբոխի գոչյունները հնչում էին ավելի հաշտարար, աղաչական, այդ հնչյունները խառնվում, դառնում էին մի անորոշ իրարանցում, որի մեջ ինչ-որ անհուսալի, ողբագին շեշտ կար։ Հարյուրապետները Ռիբինի թևերի տակից բռնած տարան գավառակի վարչության պատշգամբը, անհետացան դռան հետևում։ Մուժիկները դանդաղ ցրվում էին հրապարակում, մայրը տեսնում էր, որ կապտաչյան մոտենալով աչքի տակով իրեն է նայում։ Մոր ծնկները դողացին, մի վհատ, զգացում ծծեց նրա սիրտը՝ սրտախառնություն առաջացնելով։

«Չպիտի՛ հեռանամ,— մտածեց նա։— Հարկավոր չէ»։

Եվ ճաղերից պինդ բռնած՝ սպասում էր։

Պրիստավը գավառակի վարչության պատշգամբում կանգնած, ձեռները թափահարելով ասում էր կշտամբալից, արդեն նորից անգույն, անհոգի ձայնով։

— Հիմարներ եք դուք, շա՛ն որդիներ։ Ոչինչ չհասկանալով՝ խցկվում եք այսպիսի գործի մեջ, պետական գործի մեջ։ Անասունե՛ր։ Պետք է ինձանից շնորհակալ լինեք, ծնկաչոք խոնարհվեք ինձ, բարության համար։ Ուզենամ, բոլորդ տաժանակիր աշխատանքի կերթաք...

Մի երկու տասնյակ մուժիկներ կանգնել էին գլխարկները հանած և լսում էին։ Մթնում էր, ամպերը ցած էին իջնում։ Կապտաչյան մոտեցավ պատշգամբին և հառաչելով ասաց.

— Ահա թե մեզ մոտ ինչեր են լինում...

— Այո-ո,— կամաց արձագանքեց մայրը։

Մուժիկը նայեց նրան սրտաբաց հայացքով և հարցրեց.

— Ինչո՞վ եք զբաղվում։

— Կանանցից ժանյակներ եմ գնում, նույնպես և քաթան...

Մուժիկը դանդաղորեն շփեց մորուքը։ Ապա գավառակի վարչության կողմը նայելով՝ ձանձրալիորեն և կամաց ասաց.

— Մեզ մոտ այդպիսի բաներ չեն ճարվի...

Մայրը նայեց նրան վերից վար և սպասում էր հարմար պահի, որ գնա սենյակը։ Մուժիկի դեմքը մտախոհ էր, սիրուն, աչքերը տրտում։ Նա լայնաթիկունք էր և բարձրահասակ, հագել

էր վերից վար կարկատաններով ծածկված կաֆտան, չթե մաքուր շապիկ, գյուղական շեկ մահուդից անդրավարտիք և բոբիկ ոտներին հնամաշ կոշիկներ...

Մայրը չիմանալով ինչո՞ւ, թեթևացած շունչ քաշեց։ Եվ հանկարծ, ենթարկվելով անորոշ մտքից ավելի շուտ ծագած մի նուրբ զգացումի, իր համար անսպասելիորեն հարցրեց մուժիկին.

— Հը՛, կարելի՞ է քեզ մոտ գիշերել։

Հարցրեց, և նրա մեջ պիրկ ձգվեց ամեն ինչ՝ մկանները, ոսկորները։ Նա շտկվեց, կանգ առած աչքերով նայելով մուժիկին։ Նրա գլխում արագ իրար էին հաջորդում խոցոտող մտքերը.

«Նիկոլայ Իվանովիչին կկործանեմ։ Պաշային չեմ տեսնի երկա՞ր ժամանակ։ Ինձ ծեծե՞ն»։

Գետին նայելով և առանց շտապելու մուժիկը պատասխանեց, կաֆտանը կրծքին քաշելով.

— Գիշերե՞լ։ Կարելի է, ինչո՞ւ չէ։ Միայն թե խրճիթս վատն է...

— Ես երես տվածներից չեմ,— առանց իրեն հաշիվ տալու պատասխանեց մայրը։

— Կարելի՛ է,— կրկնեց մուժիկը, փորձող հայացքով չափելով նրան։

Արդեն մթնել էր, և աղջամուղջի մեջ մուժիկի աչքերը սառը փայլում էին, դեմքը խիստ գունատ էր թվում։ Մայրը կարծես զառիվայրից իջնելով կամաց ասաց.

— Ուրեմն ես հենց հիմա էլ կգամ, իսկ դու ճամպրուկս վերցրու...

— Լավ։

Մուժիկն ուսերը թոթվեց, կաֆտանը նորից վրա քաշեց և կամաց ասաց.

— Ահա սայլը գալիս է...

Գավառակի վարչության պատշգամբի վրա երևաց Ռիբինը, նրա ձեռները նորից էին կապկպված, գլուխն ու դեմքն ինչ-որ գորշ բանով փաթաթված։

— Մնաք բարո՞վ, բարի՛ մարդիկ,— հնչում էր նրա ձայնը երեկոյան սառն աղջամուղջում։— Փնտրեցեք, գտե՛ք ճշմարտությունը ու պահպանեցե՛ք, հավատացե՛ք այն մարդուն, որը ձեզ համար կբերի մաքուր խոսք, ճշմարտության համար ձեզ չխնայեցե՛ք...

— Լռի՛ր, շո՛ւն,— ինչ-որ տեղից գոռաց պրիստավը,— հարյուրապե՛տ, ձիերը, քշի՛ր, հիմա՛ր։

— Դուք ի՞նչ ունեք ափսոսելու։ Ի՞նչ է ձեր կյանքը։

Սայլը ճանապարհ ընկավ։ Երկու հարյուրապետները երկու կողմում՝ Ռիբինը սայլում նստած, խուլ ձայնով գոչում էր.

— Ինչի՞ համար եք քաղցից կոտորվում։ Աշխատեցեք ազատությո՞ւն ձեռք բերել, նա կտա և՛ հաց, և՛ ճշմարտություն, մնաք բարով, բարի՛ մարդիկ...

Անիվների արագ աղմուկը, ձիերի դոփյունը, պրիստավի ձայնը պարուրեցին Ռիբինի խոսքը, շփոթեցին և խեղդեցին։

— Վերջացա՛վ,— ասաց մուժիկը գլուխը թափ տալով, և մորը դիմելով կամաց շարունակեց.— դուք այնտեղ կայարանում մի քիչ նստեցեք, ես քիչ հետո կգամ...

Մայրը մտավ սենյակ, նստեց սեղանի մոտ ինքնաեռի առաջ, ձեռքն առավ մի կտոր հաց, նայեց և դանդաղորեն նորից դրեց ափսեի մեջ։ Քաղցած չէր, սրտի գդալի տակ նորից աճեց սիրտ խառնելու զգացողությունը։ Դա զզվելիորեն տաք մի բան էր, որ ուժից գցում էր՝ արյունը սրտից դուրս ծծելով և գլուխը պտտեցնում։ Նրա առջև կանգնած էր կապտաչյա մուժիկի դեմքը, տարօրինակ, կարծես կիսատ-պռատ, վստահություն չէր ներշնչում։ Չգիտես ինչո՞ւ, մայրը չէր ուզում ուղղակի մտածել, թե նա կմատնի իրեն, բայց այդ միտքն արդեն ծագել էր նրա գլխում և ծանրացել սրտին իբրև բութ և անշարժ մի բան։

«Նա ինձ նկատեց,— ծուլորեն և անուժ մտորում էր նա։— Նկատեց, գլխի ընկավ...»

Դրանից դենը չէր գնում միտքը, սուզվելով ձանձրալի վհատության, սրտախառնոցի մածուցիկ զգացողության մեջ։

Պատուհանի հետևը, երկչոտ կերպով պահ մտած խաղաղությունն աղմուկին փոխարինելով՝ գյուղում երևան էր բերում մի ինչ-որ ճնշված, վախեցած բան, կրծքում սրում էր մենակության զգացումը՝ հոգին լցնելով մոխրի պես գորշ ու փափուկ աղջամուղջով։

Ներս մտավ աղջիկը և դռան մոտ կանգ առնելով հարցրեց.

— Ջվածե՞ղ բերեմ։

— Պետք չի, արդեն չեմ ուզում, ինձ այդ աղմուկով վախեցրին։

Աղջիկը մոտեցավ սեղանին՝ գրգռված, բայց կամաց պատմելով։

— Ինչպե՞ս էր խփում պրիստավը։ Ես մոտիկ էի կանգնած, տեսնում էի, բոլոր ատամները ջարդեց, նա թքում էր, իսկ արյունը թանձր-թանձր էր, մուգ... Աչքեր հո չմնացին բոլորովին։ Նա ձյութագործ է։ Ուրյադնիկը այնտեղ մեզ մոտ ընկած է հարբած և դեռ էլի գինի է պահանջում։ Ասում է՝ նրանք մի ամբողջ խումբ են եղել, իսկ սա, այդ մորուքավորը նրանց մեծն է, ատամանն է այսինքն։ Երեքին բռնել են, իսկ մեկը փախել է, լսո՞ւմ ես։ Մի ուսուցիչ էլ են բռնել, էլի նրանց հետ։ Աստծուն նրանք չեն հավատում, ուրիշներին էլ հորդորում են, որ եկեղեցիները կողոպտեն, ա՛յ թե ի՞նչ բաներ են նրան։ Իսկ մեր մուժիկներից ոմանք խղճում էին նրան, այդ մարդուն, ոմանք էլ ասում էին, թե լավ է սպանել վերջացնել։ Մեզ մոտ այնպիսի չարասիրտ մուժիկներ կան ո՞ր։

Մայրն ուշադրությամբ ականջ էր դնում այդ անկապ, արագ խոսակցությանը, աշխատելով խեղդել իր տագնապը, ցրել տաղտկալի սպասումը։ Իսկ աղջիկը երևի ուրախ էր, որ իրեն լսում են, և խոսքերից շնչասպառ լինելով՝ ավելի ու ավելի աշխուժորեն էր շաղակրատում ձայնն իջեցնելով։

— Հայրիկս ասում է՝ այս բոլորն անբերրիությունից է։ Երկրորդ տարին է, որ մեր հողը բերք չի տալիս, հալից ընկել ենք։ Հիմա դրանից մուժիկներն ա՛յնպես են դարձել, որ սարսափելի է։ Ժողովներում գոռգոռում են, կռվում են։ Մի քանի օր առաջ, երբ Վասյուկովի իրերը չվճարված հարկերի դիմաց ծախում էին, նա ա-ա՛յնպես ծեփեց գյուղապետի մռութին. ահա՛ քեզ իմ պարտքն, ասում է...

Դռան հետևում ծանր ոտնաձայներ լսվեցին։ Ձեռքը նեղանին հենելով մայրը ոտքի կանգնեց...

Ներս մտավ կապտաչյա մուժիկը և առանց գլխարկը հանելու հարցրեց.

— Իսկ ո՞ւր է ծանրոցը։

Նա դյուրությամբ վերցրեց ճամպրուկը, թափահարեց և ասաց.

Դատա՞րկ է։ Մա՛րկա, եկվորին բեր մեր խրճիթը։

Եվ գնաց առանց ետ նայելու։

— Այստե՞ղ եք գիշերում,— հարցրեց աղջիկը։

— Այո՛։ Ժանյակների համար եմ եկել, ժանյակ եմ գնում...

— Մեզ մոտ չեն գործում։ Դա Տինկովոյում են գործում, Դարյինոյում, իսկ մեզ մոտ՝ չկա,—բացատրեց աղջիկը։

— Այնտեղ ես վաղը կերթամ...

Աղջկան թեյի համար վճարելով մայրը նրան երեք կոպեկ տվեց և դրանով շատ ուրախացրեց նրան։ Փողոցում բոբիկ ոտներով թաց հողը չփչփացնելով, աղջիկն ասում էր.

— Ուզո՞ւմ եք, ես Դարյինո վազեմ, կանանց ասեմ, որ այստեղ ժանյակ բերեն։ Նրանք կգան, իսկ ձեզ կարիք չի լինի այնտեղ գնալու։ Տասներկու վերստ է այնուամենայնիվ...

— Հարկավոր չի, սիրելի՛ս,— պատասխանեց մայրը նրա կողքից քայլելով։ Սառն օդը զովացրեց նրան, և նրա գլխում դանդաղորեն ծագում էր մի աղոտ որոշում, աղոտ, բայց ինչ-որ բան խոստացող այդ որոշումը դժվարությամբ էր զարգանում, և մայրը ցանկանալով արագացնել նրա աճումը՝ համառորեն հարցնում էր ինքն իրեն.

«Ի՞նչպես վարվել։ Եթե ուղղակի, խղճի դիմեմ...»

Մութ էր, խոնավ ու ցուրտ։ Խրճիթների պատուհաններն աղոտ լուսավորվում էին կարմրավուն, անշարժ լույսով։ Անդորրության մեջ ննջելով բառաչում էին անասունները, լսվում էին վաղանցիկ կանչեր։ Մի մութ, ճնշված մտախոհություն էր պատել գյուղը։

— Այստեղ է,— ասաց աղջիկը։— Գիշերելու համար վատ տեղ եք ընտրել դուք,— շատ աղքատ է այս մուժիկը...

Նա դուռը շոշափեց, բաց արեց, ժիր կանչեց դեպի խրճիթի ներսը.

— Մորաքո՞ւյր Տատյանա։

Եվ փախավ։ Խավարի միջից հասավ նրա ձայնը.

— Մնաք բարո՛վ...

XVII

Մայրը կանգ առավ շեմքի մոտ և աչքերն ափով ծածկելով՝ տնտղեց։ Խրճիթը նեղ էր, փոքրիկ, բայց մաքուր, դա միանգամից աչքի էր ընկնում։ Վառարանի հետևից նայեց մի երիտասարդ կին, լուռ գլուխ տվեց և չքացավ։ Առջևի անկյունում սեղանի վրա վառվում էր ճրագը։

Խրճիթի տերը նստած էր սեղանի առաջ, մատներով թրխկ-թրխկացնելով նրա ծայրը, և սևեռուն հայացքով նայում էր մոր աչքերին։

— Մտե՛ք,— ոչ իսկույն ասաց նա։— Տատյա՛նա, ապա մի գնա Պյոտրին կանչիր, շո՛ւտ։

Կինն արագ հեռացավ առանց հյուրին նայելու։ Տանտիրոջ դիմաց երկար նստարանին նստած՝ մայրը շուրջը նայեց, իր ճամպրուկը չէր երևում։ Տանջող լռությունը լցնում էր սենյակը, միայն ճրագի լույսը հազիվ լսելի ճրթճրթում էր։ Մուժիկի մտահոգված, մռայլ դեմքն անորոշ օրորվում էր մոր աչքերում՝ նրա մեջ հուսահատ տրտմություն առաջ բերելով։

— Իսկ ո՞ւր է իմ ճամպրուկը,— հանկարծ և իր համար անսպասելիորեն բարձրաձայն հարցրեց մայրը։

Մուժիկը ուսերը թոթվեց և մտախոհ պատասխանեց.

— Չի կորչի...

Ձայնն իջեցնելով՝ մռայլ շարունակեց.

— Ես քիչ առաջ աղջկա մոտ դիտմամբ ասացի, թե դատարկ է ճամպրուկը, ո՛չ, դատարկ չի՛։ Նրա մեջ ծա՜նր բան է դրված։

— Է՞,— հարցրեց մայրը։— Որ ի՞նչ

Մուժիկը վեր կացավ, մոտեցավ մորը, կռացավ և ցածրաձայն հարցրեց.

— Այն մարդուն գիտե՞ք։

Մայրը ցնցվեց, բայց հաստատ պատասխանեց.

— Գիտե՛մ։

Այդ կարճ բառը կարծես ներսից նրան լուսավորեց և դրսից ամեն բան պարզ դարձրեց։ Մայրը թեթևացած շունչ քաշեց, շարժվեց առաջ նստարանի վրա, ավելի ամուր՝ նստեց...

Մուժիկը լայն քմծիծաղ տվեց։

— Ես նկատեցի, որ դուք նրան նշան էիք անում, նա էլ ձեզ։ Ես նրա ականջին հարցրի՝ ծանո՞թ է, ասացի, նա որ պատշգամբում կանգնած է։

— Իսկ նա՞ ինչ ասաց,— արագ հարցրեց մայրը։

— Նա՞։ Ասաց, մենք շատ-շատ ենք։ Այո՛։ Շատ ենք, ասում է...

Հարցական նայելով հյուրի աչքերին և նորից ժպտալով՝ շարունակեց.

— Մե՜ծ ուժի տեր մարդ է... Համարձակ... ուղղակի ասում է — ե՛ս եմ, որ կամ։ Նրան ծեծում են, իսկ նա իր ասածն է անում...

Նրա անվստահ և տկար ձայնը, կիսատ-պռատ դեմքը և պայծառ, սրտաբաց աչքերն ավելի ու ավելի էին հանգստացնում մորը։ Անհանգստության և լքումի փոխարեն նրա կրծքում

հետզհետե բռնում էր կծու, ծակող կարեկցությունը դեպի Ռիբինը։ Իրեն զսպել չկարողանալով, հանկարծակի և դառն բարկությամբ նա ճնշված բացականչեց.

— Ավազակնե՜ր, մոլագարնե՜ր։

Եվ փղձկաց։

Մուժիկը նրանից հեռացավ՝ մռայլորեն գլխով անելով։

— Իշխանությունը բարեկամներ ձեռք բերեց իր համար, այո՛։

Եվ հանկարծ նորից դեպի մայրը դառնալով, նա կամաց ասաց.

— Ես, ա՛յ թե ինչ, այնպես եմ գլխի ընկնում, որ ճամպրուկում թերթեր են, ճի՞շտ է։

— Այո՛,— ուղղակի պատասխանեց մայրը աչքերը սրբելով։— Նրա համար էի բերել։

Մուժիկը հոնքերը կիտեց, մորուքը բռունցքի մեջ առավ և մի կողմ նայելով լռեց։

— Մեր ձեռքն էլ է ընկել դրանից, գրքույկներն էլ են մեզ հասել։ Այդ մարդուն մենք ճանաչում ենք... տեսե՛լ ենք։

Մուժիկը կանգ առավ, մտածեց հետո հարցրեց.

— Հիմա՛ ուրեմն՝ ի՞նչ պիտի անեք այդ բանը՝ ճամպրուկը։

Մայրը նայեց նրան և շեշտակի ասաց.

— Ձե՛զ կթողնեմ...

Մուժիկը չզարմացավ, չբողոքեց, միայն կարճ կրկնեց.

— Մեզ...

Գլխով անելով՝ մորուքը բռունցքից բաց թողեց, մատներով ոստերեց և նստեց։

Հիշողությունը անողոք, համառ հաստատակամությամբ նորից մոր աչքերի առջև էր բերում Ռիբինի խոշտանգման տեսարանը։ Ռիբինի պատկերը նրա գլխում հանգցնում էր բոլոր մտքերը, մարդու համար զգացած ցավն ու վիրավորանքը ծածկում էին բոլոր զգացմունքները, նա արդեն չէր կարողանում մտածել ճամպրուկի և որևէ այլ բանի մասին։ Նրա աչքերից անդուսպ հոսում էին արցունքները, իսկ դեմքը մռայլ էր, և ձայնը չէր դողում, երբ տանտիրոջն ասում էր.

— Թալանում են, ճնշում, մարդուն կոխոտում են ցեխի մեջ, անիծվածնե՜ր։

— Ո՜ւժ է,— կամաց արձագանքեց մուժիկը։— Նրանց ուժը շա՜տ մեծ է։

— Իսկ որտեղի՞ց են վերցնում,— բացականչեց մայրը բարկությամբ։— Հենց մեզնից են վերցնում, ժողովրդից, ամե՞ն բան մեզնից է վերցված։

Մորը դրդում էր այդ մուժիկն իր պայծառ, բայց անհասկանալի դեմքով։

— Այո՛-ո՛,— մտախոհ ծոր տվեց տանտերը։— Անիվ է...

Ուշադրությունը լարեց, գլուխը թեքեց դեպի դուռը և ականջ դնելով՝ կամաց ասաց.

— Գալիս են...

— Ովքե՞ր։

— Մերոնք... երևի...

Եկավ կինը, նրա հետևից ներս մտավ մի մուժիկ, գլխարկն անկյունը նետեց, արագ մոտեցավ տանտիրոջը, հարցրեց.

— Հը՛, ի՞նչ դուրս եկավ։

Տանտերը գլխով արեց։

— Ստեպա՛ն,— ասաց կինը՝ կանգնելով վառարանի մոտ,— գուցե նրանք ճանապարհից են եկել, ուտել կուզենան։

— Չեմ ուզում, շնորհակալություն, սիրելիս,— պատասխանեց մայրը։

Մուժիկը մոտեցավ մորը և արագ, խզված ձայնով ասաց.

— Ուրեմն թո՛ւյլ տվեք ծանոթանալ։ Իմ անունը Պյոտր Եգորով Ռյաբինին է, մականունս՝ Շիլո*։ Ձեր գործերին մի քիչ տեղյակ եմ։ Գրագետ եմ և հիմար չեմ, այսպես ասած...

Նա բռնեց մոր մեկնած ձեռքը և թոթվելով՝ դիմեց տանտիրոջը.

— Ա՛յ, Ստեպա՛ն, տե՛ս։ Վարվառա Նիկոլաևնան բարի տիկին է, ճի՛շտ է։ Իսկ այս բոլորի մասին ասում է՝ դատարկ բաներ են, ցնորքնե՛ր են։ Իբր թե տղաներ և ինչ-որ զանազան ուսանողներ ժողովրդին հիմարությամբ գրգռում են։ Սակայն ես ու դու տեսնում ենք՝ հենց նոր մի պատկառելի, ինչպես որ կարգն է, մուժիկի ձերբակալեցին, հիմա էլ ահա սա, հասակն առած մի կին և, ինչպես երևում է, աղաներից չի։ Զվիրավորվեք, դուք ի՞նչ ծագում ունեք։

Նա խոսում էր փութկոտ, պարզորոշ, առանց շունչ առնելու, նրա փոքրիկ մորուքը ջղայնորեն դողում էր և աչքերը կկոցվելով՝ արագ շոշափում էին մոր դեմքն ու կերպարանքը։ Պատ-

* Բիզ։

ռոտված, գզգզված, գլխի մազերը խճճված, նա կարծես թե նոր էր կռվել մեկի հետ, հաղթել թշնամուն և ամբողջովին համակված էր հաղթության ուրախ հուզմունքով։ Նա մորը դուր եկավ իր ճարտարությամբ և նրանով, որ միանգամից խոսեց ուղղակի և պարզ։ Սիրալիր նրա դեմքին նայելով՝ մայրը պատասխանեց նրա հարցին, իսկ նա նորից ուժգին թափ տվեց մոր ձեռքը և կամացուկ, չոր-չոր ծիծաղեց բեկբեկուն ծիծաղով։

— Բանը պարզ է, Ստեպա՛ն, տեսնո՞ւմ ես։ Հրաշալի գործ է։ Ես քեզ ասում էի, որ սա ժողովուրդն է սկսում ինքն իր ձեռքով։ Իսկ տիկինը, նա ճիշտը չի ասի, նրան դա վնաս է։ Ես տիկնոջը հարգում եմ, խոսք չկա։ Լավ մարդ է և մեզ բարիք է ցանկանում, ասենք՝ մի՛ քիչ, այնքան, որ իրեն էլ վնաս չլինի։ Իսկ ժողովուրդը, նա ցանկանում է առանց դեսուդեն ընկնելու առաջ գնալ և ոչ մի կորստից, ոչ մի վնասից չի վախենում, հասկացա՞ր։ Նրա համար ամբողջ կյանքն է վնասակար, ամեն տեղ կորուստ ունի, նա ետ դառնալու տեղ չունի, չորս կողմը բան չկա, բացի այն, որ ամեն կողմից նրա ճանապարհն են կտրում։

— Ես տեսնում եմ,— ասաց Ստեպանը գլխով անելով և իսկույն ևեթ ավելացրեց.— Նա ծանրոցի համար անհանգիստ է։

Պյոտրը խորամանկորեն աչքով արեց մորը և նորից սկսեց խոսել՝ հանգստացուցիչ կերպով ձեռքը թափ տալով.

— Մի՛ անհանգստանաք։ Ամեն բան կարգին կլինի, մայրի՛կ։ Ձեր ճամպրուկն ինձ մոտ է։ Քիչ առաջ երբ նա ձեր մասին ինձ ասաց, թե ասում է՝ դուք էլ եք խառն այս բանում և այն մարդուն ճանաչում եք, ես նրան ասացի՝ տե՛ս, Ստեպա՛ն, չի կարելի բացբերան մնալ այսպիսի լուրջ դեպքում։ Դե, դո՛ւք էլ, մայրի՛կ, երևում է, որ նույնպես ճանաչեցիք մեզ, երբ ձեր կողքին կանգնած էինք։ Աղնիվ մարդուն ոչխից էլ կարելի է ճանաչել, դրա համար է, որ փողոցներում դրանցից շատ քիչ կարելի է տեսնել, պա՛րզ ասած։ Ձեր ճամպրուկն ինձ մոտ է...

Նա նստեց մոր կողքին և խնդրողաբար նայելով նրա աչքերին, շարունակեց.

— Եթե դուք ցանկանում եք նրա փորոտիքը դուրս տալ, մենք այդ բանում ուրախությա՛մբ կօգնենք ձեզ։ Գրքույկները մեզ հարկավոր են...

— Նա ուզում է բոլորը մեզ տալ,— նկատեց Ստեպանը։

— Շատ էլ լավ եք անում, մայրի՛կ։ Բոլորի համար տեղ կճարե՛նք...

Նա ոտքի թռավ, ծիծաղեց և խրճիթով արագ ետ ու առաջ քայլելով՝ ասում էր գոհ.

— Զարմանալի՜ է, այսպես ասած, այս դեպքը։ Թեև միանգամայն պարզ է։ Թելը մի տեղ կտրվեց, մի ուրիշ տեղ կշկովե՜ց։ Վնաս չունի՜։ Իսկ թերթը լա՜վ բան է, մայրիկ, և իր գործն անում է, բաց է անում մարդկանց աչքերը։ Աղաներին հաճելի չէ։ Ես այստեղ յոթ վերստ հեռու մի տիկնոջ մոտ աշխատում եմ, ատաղձագործ եմ. լավ կին է, պետք է ասել, զանազան գրքույկներ է տալիս, մեկ-մեկ որ կարդում ես, միտքդ լուսավորվում է։ Ընդհանրապես մենք նրան երախտապարտ ենք։ Բայց նրան թերթի մի համար ցույց տվի, նա նույնիսկ վիրավորվեց մի քիչ։ «Թողե՛ք, ասում է, դա, Պյո՛տր։ Դա, ասում է, անխելք տղաներն են անում։ Եվ դրանից միայն կշատանա ձեր ցավը, դրա հետևանքը, ասում է, բանտ է ու Սիբիր...»

Նա նորից անսպասելիորեն լռեց, քիչ մտածեց և հարցրեց.

— Իսկ, ասացեք տեսնեմ, մայրի՛կ, այդ մարդը ձեր ազգակա՞ն է։

— Օտար է,— պատասխանեց մայրը։

Պյոտրն անձայն ծիծաղեց, ինչ-որ բանից խիստ գոհ և գլխով արեց, բայց մի վայրկյան հետո մորը թվաց, թե «օտար» բառը Ռիբինի վերաբերմամբ տեղին չէ և վիրավորում է նրան։

— Ես նրան ազգական չեմ,— ասաց մայրը,— բայց նրան վաղուց եմ ճանաչում և հարգում, ինչպես հարազատ եղբորս... մեծ եղբորս։

Հարկավոր բառը չէր ճարվում, մոր համար դա անախորժ էր, և նորից նա չկարողացավ զսպել մեղմ հեկեկանքը։ Մռայլ, սպասողական լռությունը լցրեց սենյակը։ Պյոտրը գլուխը դեպի ուսը թեքած կանգնել էր, կարծես ինչ-որ բան էր ականջ դնում։ Ստեպանն արմունկները սեղանին հենած՝ ամբողջ ժամանակ մատներով մտախոհ թխկթխկացնում էր տախտակը։ Նրա կինը թիկնել էր վառարանի մոտ, կիսախավարում, մայրը զգում էր նրա սևեռուն հայացքը և երբեմն ինքն էլ էր նայում նրա ձվաձև, թուխ, ուղիղ քթով և շեշտակի հատված ծնոտով դեմքին։ Ուշադիր և աչալուրջ պսպղում էին նրա կանաչավուն աչքերը։

— Բարեկամ է ուրեմն,— կամաց ասաց Պյոտրը։— Հաստատակամ է հա՜... Իր արժեքը լավ է իմանում, ինչպես որ

պետքն է։ Ա՛յ, Տատյա՜նա, մարդ եմ ասում հա՜։ Դու ասում ես...

— Նա ամուսնացա՞ծ է,— հարցրեց Տատյանան Պյոտրի խոսքը կտրելով, և նրա փոքրիկ բերանի բարակ շրթունքներն ամուր սեղմվեցին։

— Այրի է,— պատասխանեց մայրը տխրությամբ։

— Դրա համար էլ համարձա՜կ է,— ասաց Տատյանան ցածր, կրծքային ձայնով։— Ամուսնացածը այդ տեսակ ճանապարհով չի գնա, կվախենա...

— Իսկ ե՞ս։ Ամուսնացած եմ, բայց էլի... բացականչեց Պյոտրը։

— Լա՜վ, լա՜վ, սանահա՜յր,— առանց նրան նայելու և շրթունքները ծռելով՝ ասաց կինը։— Է՛, դու ի՞նչ ես որ, միայն խոսում ես և երբեմն մի գրքույկ ես կարդում։ Մարդիկ շատ օգուտ չունեն այն բանից, որ դու և Ստեպանն անկյուններում փսփսում եք։

— Սիրելի՜ս, ինձ շատերն են լսում,— առարկեց մուժիկը վիրավորված և ցածրաձայն։— Ես այստեղ թթխմորի նման բան եմ, դու այդ զուր ես...

Ստեպանը լուռ նայեց կնոջը և գլուխը նորից կախեց։

— Եվ ինչո՞ւ են ամուսնանում մուժիկները,— հարցրեց Տատյանան։— Աշխատող է պետք, ասում են, բայց ինչի՞ վրա աշխատելու համար։

— Քեզ համար դեռ քի՜չ է,— խուլ ձայնով կցեց Ստեպանը։

— Ի՞նչ միտք կա այդ աշխատանքում։ Օր օրի ապրում են կիսաքաղց, միևնույնն է։ Երեխաներ են ծնվում, պահելու ժամանակ չունես, չի թողնում աշխատանքը, որը հաց էլ չի տալիս։

Նա մոտեցավ մորը, նստեց կողքին՝ հաստատամտորեն, առանց գանգատի և տխրության խոսելով...

— Ես երկուսն ունեի։ Մեկը երկու տարեկան խաշվեց եռացած ջրով, մյուսին չհասցրի, մեռած ծնվեց, այդ անիծված աշխատանքի պատճառով։ Ինձ համար ուրախությո՞ւն է դա։ Ես ասում եմ՝ մուժիկները զուր են ամուսնանում, միայն իրենց ձեռքերն են կապում, ազատ կապրեին, հարկավոր կարգ ու կանոն ձեռք կբերեին, ճշմարտության համար դուրս կգային բաց ճակատով, ինչպես այն մարդը։ Ճի՞շտ եմ ասում, մայրի՛կ...

— Ճի՛շտ է,— ասաց մայրը։— Ճիշտ է, սիրելի՛ս, ուրիշ կերպ կյանքի հարից դալ չես կարող...

— Իսկ դուք ամուսին ունե՞ք։

— Մեռել է։ Որդի ունեմ...

— Իսկ ո՞րտեղ է նա, ձե՞ղ հետ է ապրում։

— Բանտում նստած է,— պատասխանեց մայրը։

Եվ զգաց, որ այդ խոսքերն իրենց միշտ առաջացրած սովորական տրտմության հետ միասին կուրծքը լցրին անվրդով հպարտությամբ։

— Երկրորդ անգամն են նստեցրել, միայն նրա համար, որ նա հասկացել է աստվածային ճշմարտությունը և դա բացեիբաց սերմանել է... Նա երիտասարդ է, գեղեցիկ, խելո՛ք։ Լրագիրը նա է հնարել, իսկ Միխայլո Իվանովիչին էլ նա է ճանապարհը ցույց տվել, թեկուզ Միխայլոն նրանից երկու անգամ մեծ է։ Հիմա, ա՛յ, որդուս դրա համար դատելու են և կդատապարտեն, իսկ նա փախչելու է Սիբիրից և նորից իր գործն է անելու...

Նա խոսում էր, և հպարտ զգացմունքն աճելով ուռճանում էր նրա կրծքում, և հերոսի պատկեր ստեղծելով, այդ զգացումը իր համար խոսքեր էր պահանջում, սեղմում էր կոկորդը։ Մոր համար անհրաժեշտ էր որևէ պայծառ և խելացի բանով հավասարակշռել այն մռայլ դեպքը, որ տեսել էր այդ օրը և որը ճնշում էր նրա ուղեղն անմիտ սոսկումով, անպատկառ դաժանությամբ։ Անգիտակցորեն ենթարկվելով առողջ հոգու այդ պահանջին՝ մայրը ժողովել էր այն ամենը, ինչ տեսել էր պայծառ ու մաքուր, դարձրել մի լույս, որը կուրացնում էր նրան պայծառ վառվելով...

— Արդեն այդպիսի մարդիկ շատ են դուրս եկել, ավելի ու ավելի են շատանում, և նրանք բոլորը մինչև իրենց կյանքի վերջը պաշտպան են կանգնելու մարդկության ազատությանը, ճշմարտությանը...

Նա մոռացել էր զգուշությունը, և թեև անուններ չէր տալիս, բայց պատմում էր այն ամենը, ինչ իրեն հայտնի էր ագահության շղթաներից ժողովրդին ազատագրելու համար կատարվող գաղտնի աշխատանքի մասին։ Նկարագրելով իր սրտի համար թանկագին դեմքերը, մայրն իր խոսքերի մեջ էր դնում այն ամբողջ ուժը, սիրո ամբողջ առատությունը, որ այնպես ուշ զարթեցրել էին նրա սրտում կյանքի անհանգիստ ցնցող հարվածները, ինքը ջերմագին ուրախությամբ հիանում էր այն մարդկանցով, որոնք հառնում էին հիշողության մեջ՝ իր զգացմունքով լուսավորված ու զարդարված։

— Ամբողջ աշխարհում, բոլոր քաղաքներում ընդհանուր

աշխատանք է կատարվում, լավ մարդկանց ուժը չափ ու սահման չունի, հաշիվ չկա, աճելով աճում է, և աճելու է մինչև որ գա մեր հաղթական ժամը...

Նրա ձայնը հնչում էր սահուն, նա բառերը հեշտությամբ էր գտնում և արագորեն շարում գույնզգույն ուլունքի պես այդ օրվա արյունից ու կեղտից սիրտը մաքրելու իր ցանկության ամուր թելին։ Նա տեսնում էր, որ մուժիկները կարծես մեխված մնացին այնտեղ, իրենց տեղում, երբ սկսեց իր խոսքը, նրանք չէին շարժվում, լուրջ նայում էին իր դեմքին. նա լսում էր իր կողքը նստած կնոջ ընդհատ շնչառությունը, և այդ բոլորն ավելացնում էր իր հավատը դեպի այն, ինչ որ ինքն ասում և խոստանում էր մարդկանց...

— Ամենքը, որոնք վատ են ապրում, որոնց ճնշում է կարիքը և անօրինությունը, որոնց հաղթահարել են հարուստները և նրանց հաճոյակատար սպասավորները, բոլորը, ամբողջ ժողովուրդը պետք է ընդառաջ գնա ա՛յն մարդկանց, որոնք նրա համար կորչում են բանտերում, մահացու շարշարանքների են ենթարկվում։ Առանց շահախնդրության նրանք կբացատրեն, թե որտեղից է անցնում բոլոր մարդկանց երջանկության ուղին, առանց խաբելու կասեն, որ ճանապարհը դժվարին է, և բռնությամբ ոչ ոքի չեն քարշ տա իրենց հետևից, բայց հենց որ կանգնես նրանց կողքին, էլ նրանցից երբեք չես հեռանա, տեսնում ես, որ ամեն ինչ ճիշտ է, ճանապարհն ա՛յդ է և ո՛չ թե մի ուրիշը։

Նրա համար հաճելի էր իր վաղեմի ցանկությունն իրագործելը, թե ահա՛, տեսե՛ք, ի՞նքն է մարդկանց հետ խոսում ճշմարտության մասին։

— Այդպիսի մարդկանց հետ ժողովուրդը կարող է աշխատել, նրանք քչով չեն բավականանա, կանգ չեն առնի, մինչև որ չհաղթահարեն բոլոր խաբեբայությունները, ամբողջ չարությունը և ագահությունը, նրանք ձեռքները չեն ծալի, մինչև որ ամբողջ ժողովուրդը մի հոգի չդառնա, մինչև որ նա միաձայն չասի՝ ե՛ս եմ իշխողը, ես ինքս օրենքներ կհաստատեմ, ամենքի համար հավասար...

Նա հոգնած լռեց, նայեց շուրջը։ Խաղաղ նրա կրծքի տակ մտավ այն հավատը, թե իր խոսքերն ապարդյուն չեն կորչի։ Մուժիկները նայում էին նրան ինչ-որ բան սպասելով տակավին։ Պյոտրը ձեռները ծալել էր կրծքին, աչքերը կկոցել, և նրա խայ-

տաբղետ դեմքին դողդողում էր ժպիտը։ Ստեպանը մի ձեռքի արմունկը սեղանին հենած՝ ամբողջովին առաջ էր թեքվել, պարանոցը մեկնել և կարծես դեռ ականջ էր դնում։ Նրա դեմքին ստվեր էր պատել, և դրանից ավելի շեշտված էր երևում։ Նրա կինը մոր կողքին նստած՝ կորացել էր արմունկները ծնկներին դրած և նայում էր իր ոտների առաջ։

— Ահա՛ թե ի՞նչ,— շշուկով ասաց Պյոտրը և զգուշությամբ նստեց նստարանին գլուխն օրորելով։

Ստեպանը դանդաղորեն շտկվեց, նայեց կնոջը և ձեռքը պտտացրեց օդում, կարծես ինչ-որ բան գրկել ցանկանալով...

— Եթե մարդ այդ գործին կպչելու լինի,— մտախոհ և ցածր ձայնով սկսեց նա,— ճիշտ որ արդեն ամբողջ հոգով պետք է կպչի...

Պյոտրը երկչոտ ավելացրեց.

— Ա-այո՛, էլ ետ չպիտի՛ մտիկ տա...

— Այդ գործը լայն է դրված,— շարունակեց Ստեպանը։

— Ամբողջ երկրով մեկ,— նորից ավելացրեց Պյոտրը։

XVIII

Մայրը մեջքը հենեց պատին և գլուխը ետ տանելով՝ սկսեց լսել նրանց ցածրաձայն, ծանրութեթև անող խոսքերը։ Տատյանան վեր կացավ, շուրջը նայեց և նորից նստեց։ Նրա կանաչ աչքերը պսպղում էին չոր-չոր, երբ նա դժգոհ և արհամարհանքը դեմքին նայեց մուժիկներին։

— Երևում է՝ շա՞տ վիշտ եք տեսել դուք,— հանկարծ ասաց նա մորը դիմելով։

— Տեսե՛լ եմ,— պատասխանեց մայրը։

— Լա՛վ եք խոսում, մարդուս սրտին է դիպչում ձեր խոսքը։ Մարդ մտածում է, տե՛ր աստված, թեկուզ դռան ծակով տեսնեի այդ մարդկանց, ամբողջ կյանքումս բավական էր։ Ի՞նչ է մեր կյանքը։ Ոչխարնե՞ր ենք։ Ա՛յ, ես գրագետ եմ, գրքույկներ եմ կարդում, շատ եմ մտածում, երբեմն էլ գիշերը քունս չի տանում մտքերիցս։ Բայց ի՞նչ օգուտ։ Չմտածե՞մ, զուր տեղը կմեռնեմ՝ կգնամ, մտածեմ, էլի զուր տեղը կկորչեմ։

Նա խոսում էր քմծիծաղն աչքերում և երբեմն կարծես հանկարծ կծում կտրում էր խոսքը թելի պես։ Մուժիկները լուռ էին։ Քամին շշում էր պատուհանների ապակիները, տանիքում ծղոտը խշխշում էր, ծխնելույզի մեջ կամաց ղողանջում։ Շունը ոռնում էր։ Եվ դժկամորեն, երբեմն պատուհանն էին ծեծում անձրևի կաթիլները։ Ճրագի լույսը ցնցվեց, աղոտացավ, բայց մի վայրկյան հետո նորից բորբոքվեց համաչափ ու պայծառ։

— Լսեցի ձեր խոսքերը, թե մարդիկ ինչի համար են ապրում։ Եվ այնպես զարմանալի է, լսում եմ ձեզ և տեսնում եմ, չէ՞ որ ես այդ գիտեմ։ Իսկ մինչև ձեր գալը ես ոչ մի այդպիսի բան չէի լսել, և մտքովս անգամ այդպիսի բան չէր անցել...

— Լավ կլիներ մի բան ուտեինք, Տատյանա, ու լույսը հանգցնեինք,— ասաց Ստեպանը մռայլ ու դանդաղորեն։ Մարդիկ կնկատեն կասեն՝ Զումակովների մոտ ճրագը երկար ժամանակ վառ էր։ Մեզ համար դա կարևոր չի, բայց հյուրի համար գուցե լավ չի լինի...

Տատյանան վեր կացավ և մոտեցավ վառարանին։

— Այո՛-ո՛,— կամաց և ժպիտով ասաց Պյոտրը։— Հիմա, սանահա՛յր, ականջդ ձենի պահիր։ Հենց որ ժողովրդի մեջ լրագիր երևա...

— Ես ինձ համար չեմ ասում։ Ինձ բանտարկեն էլ, մեծ բան չի՞։

Նրա կինը մոտեցավ սեղանին և ասաց.

— Դե՛ն գնա...

Ստեպանը վեր կացավ, մի կողմ գնաց և նայելով, թե կինն ինչպես է սփռոցը գցում, ժպտալով ասաց.

— Մեզպեսների գինը՝ ջուխտը մի կոպեկ է...

Մայրը հանկարծ սկսեց խղճալ նրան. Ստեպանը նրան ավելի ու ավելի էր դուր գալիս այժմ։ Իր խոսքից հետո մայրն իրեն զգում էր օրվա կեղտոտ ծանրությունից հանգստացած, գոհ էր իրենից և ամենքի բարին ու լավն էր ցանկանում։

— Ուղիղ չեք դատում, տանտե՛ր,— ասաց մայրը։— Պետք չի, որ մարդ համաձայնի այն բանի հետ, թե իրեն ինչպես են գնահատում այն մարդիկ, որոնց բացի իր արյունից ուրիշ ոչինչ հարկավոր չի։ Դուք ինքներդ պետք է ձեզ գնահատեք, ներսից, ոչ թե թշնամիների, այլ բարեկամների համար...

— Մենք ի՞նչ բարեկամներ ունենք,— կամաց բացականչեց մուժիկը։— Մեր բարեկամը կարող է լինել մինչև մեր սև օրը...

— Իսկ ես ասում եմ,— ժողովուրդը բարեկամներ ունի...

— Կան, բայց ո՛չ այստեղ, ա՛յ թե ինչ,— մտախոհ արձագանքեց Ստեպանը։

— Իսկ դուք այստե՛ղ բարեկամներ ստեղծեցեք։

Ստեպանը մի քիչ մտածեց և կամաց ասաց.

— Այո՜-ո, պետք է անել...

— Նստեցե՛ք սեղանի մոտ,— հրավիրեց Տատյանան։

Մոր խոսքերից ճնշված և կարծես շփոթված Պյոտրն ընթրիքի ժամանակ նորից աշխույժ և արագ-արագ ասում էր.

— Մայրի՛կ, այսպես ասած՝ չնկատվելու համար դուք պետք է այստեղից շուտով ճանապարհվեք։ Եվ գնացեք հետևյալ կայարանը, ոչ թե քաղաք, փոստի կառքո՛վ գնացեք...

— Ինչո՞ւ։ Ես կտանեմ,— ասաց Ստեպանը։

— Պետք չի՛։ Մի բան որ լինի՝ քեզ կհարցնեն՝ գիշերե՞լ է քեզ մոտ։ Գիշերել է։ Ո՞ւր է գնացել։ Ես եմ տարել։ Ըհը՞, դո՞ւ ես տարել։ Ապա մի բանտ գնա։ Հասկացա՞ր։ Իսկ ինչո՞ւ բանտ շտապել։ Ամեն բան հերթով է, ժամանակը որ գա՝ թագավորն էլ կմեռնի, ասում են։ Իսկ այստեղ բանը պարզ է, գիշերել է, ձիեր փարձել, գնացել։ Մարդիկ իրար տան քի՞չ են գիշերում։ Ճանապարհի վրայի գյուղ է...

— Պյո՛տր, այդ որտե՞ղ ես սովորել վախենալը,— ծաղրաբար հարցրեց Տատյանան։

— Ամեն բան պետք է իմանալ, սանամա՛յր,— իր ծնկանը խփելով բացականչեց Պյոտրը։— Իմանալ պետք է՝ երբ վախենալ, երբ համարձակ լինել։ Դու հիշո՞ւմ ես, թե այդ լրագրի համար գավառապետը ի՞նչպես գզգզեց Վագանովին։ Հիմա Վագանովին մեծ փող տալով է՛լ չես կարող համոզել, որ գիրք առնի ձեռքը, այո՛։ Մայրի՛կ, դուք հավատացե՛ք ինձ, ամեն բան ձեռքիցս կգա, դա բոլորին հայտնի է։ Գրքույկներն ու թղթերը ինձնից ավելի լավ տարածող չի լինի, և կարող եմ որքան որ կուզեք։ Մեզ մոտ ժողովուրդն, իհարկե, շատ էլ գրագետ չի և վախկոտ է, դեհ, բայց ժամանակն այնքան է սեղմում մարդու կողերը, որ մարդ ուզի-չուզի պետք է աչքերը չռի, տեսնի, թե ինչ կա։ Իսկ գրքույկը նրան պարզապես պատասխանում է՝ ա՛յ թե ինչ կա, մտածի՛ր, գլխի՛ ընկիր։ Օրինակներ կան, որ անգրագետը գրագետից ավելի է հասկանում, մանավանդ եթե այդ գրագետը կո՛ւշտ մարդ է։ Ես այստեղ ամեն տեղ ման եմ գալիս, շատ բան եմ տեսնում՝ վնաս չունի։ Կարելի է ապրել, բայց հարկավոր է խելք և մեծ ճարպկություն, որ միանգամից չխրվես։ Իշխանությունը, նա էլ է քթով հոտ առնում, որ մուժիկից սառնություն է փչում, քիչ է ժպտում, և բոլորովին անսիրալիր, ընդհանրապես ուզում է իշխանությունից ետ վարժվել։ Մի քանի ժամանակ առաջ Սմոլյակովո, այստեղ մոտիկ մի փոքրիկ գյուղ է, Սմոլյակովո եկան հարկ հավաքելու, իսկ մուժիկները ծառս ելան ու բրեր վերցրին։ Պրիստավն ուղղակի ասում է. «Ա՜խ, դուք, շան որդինե՛ր։ Չէ՞ որ դա ցարին հակառակ է»։ Այնտեղ մի մուժիկ կար, Սպիվակին, տեղն ու տեղը վրա բերեց. «Չհաննամը կորեք դուք է՛լ։ Ձեր ցարն է՛լ։ Ի՞նչ ցար, ի՛նչ բան, որ ուսերիցդ վերջին շապիկն է հանում...» Ա՛յ թե բանն ուր է հասել, մայրիկ։ Իհարկե, Սպիվակինին բռնեցին, բանտ ուղարկեցին, բայց նրա խոսքը մնաց, և նույնիսկ մանր երեխաներն էլ գիտեն այդ, այդ խոսքը գոռում է, ապրո՛ւմ է։

Նա չէր ուտում, այլ ամբողջ ժամանակ խոսում էր արագ շշուկով՝ աշխույժ պսպղացնելով մուգ, խորամանկ աչքերը և մոր առջև առատաձեռնորեն թափելով գյուղի կյանքից կատարած իր անթիվ դիտողությունները, ինչպես պղնձե դրամն են թափում քսակից։

Մի երկու անգամ Ստեպանը նրան ասաց.

— Դե մի քիչ բա՛ն կեր...

Պյոտրը վերցնում էր մի կտոր հաց, գդալը և նորից սկսում էր պատմություններ գեղգեղալ, ինչպես կարմրակատարիկն է դայլայլում։ Վերջապես ընթրիքից հետո նա ոտքի ցատկելով՝ հայտնեց.

— Դե՛, տուն գնալուս ժամանակն է...

Կանգնեց մոր առջև և գլուխ տալով թոթվեց նրա ձեռքն ասելով.

— Մնաք բարո՛վ, մա՛յր։ Գուցե երբեք էլ չենք տեսնվի։ Պետք է ձեզ ասեմ, որ այս բոլորը շա՛տ լավ է։ Ձեզ հանդիպելը և ձեր խոսքերը շա՛տ լավ էին։ Ձեր ճամպրուկում բացի տպագրված թղթերից էլի որևէ բան կա՞։ Բրդե թաշկինա՞կ։ Հրաշալի՛, բրդե թաշկինակ։ Ստե՛պան, մի՛տդ պահիր։ Հիմա սա ձեզ կբերի ճամպրուկը։ Գնա՛նք, Ստե՛պան։ Մնաք բարով, ամենայն բարի՛ք ձեզ...

Երբ նրանք գնացին, սկսեց լսվել, թե ինչպես են խշշում ուտիճները, տանիքի վրա թափառում է քամին և վառարանի խուփը ծխնելույզին խփում, մանր անձրևը զարկվում պատուհանին։ Տատյանան մոր համար անկողին պատրաստեց, վառարանի վրայից և թախտից շորերը ցած բերելով ու դարսելով նստարանի վրա։

— Աշխո՜ւյժ մարդ է,—նկատեց մայրը։

Տանտիրուհին աչքի տակով նայելով նրան պատասխանեց.

— Զնգում է, հա զնգում, բայց ձայնը հեռու չի գնում։

— Իսկ ի՞նչպես է ձեր ամուսինը,— հարցրեց մայրը։

— Վնաս չունի։ Լավ մուժիկ է, չի խմում, հաշտ ենք ապրում, վնաս չունի։ Միայն թույլ բնավորության տեր է...

Նա շտկվեց և մի քիչ լռելուց հետո հարցրեց.

— Հիմա էլ ի՞նչ է պետք, հարկավոր է, որ ժողովուրդը բունտ անի՛։ Իհարկե՛։ Այդ մասին ամենքն են մտածում, միայն ամեն մեկն առանձին, ինքն իր մեջ։ Բայց հարկավոր է, որ բարձրաձայն խոսեն... և սկզբում պետք է որ մեկնումեկը սիրտ անի...

Նա նստեց նստարանին և հանկարծ հարցրեց.

— Ասում եք՝ ջահել աղջիկներն էլ են այդ բանով զբաղվում, բանվորների մոտ են գնում, կարդում, չե՞ն խորշում, չե՞ն վախենում։

Եվ մոր պատասխանն ուշի-ուշով լսելով, խոր հառաչեց։ Ապա թերթերունքներն իջեցնելով և գլուխը կախելով՝ նորից խոսեց.

— Ես մի գրքույկում կարդացել եմ այսպիսի բառեր— անմիտ կյանք։ Դա ես շա՜տ լավ եմ հասկացել, իսկույն։ Այդպիսի կյանքը ես գիտեմ, մտքեր կան, բայց կապված չեն և թափառում են, ինչպես անհովիվ ոչխարներ, նրանց հավաքելու բան չկա, հավաքող չկա... Հենց դա է անմիտ կյանքը։ Ես կփախչեի այդպիսի կյանքի առանց ետ նայելու, այնպես ես տխրում, երբ որևէ բան ես հասկանում։

Մայրը այդ տխրությունը տեսնում էր կնոջ կանաչ աչքերի շոր փայլի մեջ, նրա վտիտ դեմքի վրա, լսում էր նրա ձայնի մեջ։ Մայրն ուզում էր մխիթարել նրան, փաղաքշել։

— Սիրելի՛ս, դուք հո հասկանում եք, թե ինչ պետք է անել...

Տատյանան կամաց ընդհատեց նրան.

— Պետք է կարողանալ։ Ձեր անկողինը պատրաստ է, պառկեցե՛ք։

Հեռացավ վառարանի մոտ և լուռ կանգնեց այնտեղ ուղիղ, խիստ կենտրոնացած։ Մայրն առանց հանվելու պառկեց, ոսկորներում կսկծացնող հոգնածություն զգաց և կամաց տնքաց։ Տատյանան ճրագը հանգցրեց, և երբ թանձր խավարը լցրեց

խրճիթը, լսվեց Տատյանայի ցածր, միալար ձայնը։ Այնպես էր հնչում նրա ձայնը, որ կարծես ինչ-որ բան էր սրբում հեղձուցիչ խավարի դեմքից։

— Դուք չեք աղոթում։ Ես էլ եմ կարծում, որ աստված չկա։ Հրաշքներ էլ չկան։

Մայրն անհանգիստ շուռ եկավ, պատուհանից ուղղակի մորն էր նայում անհատակ խավարը, և համառորեն անդորրության մեջ էր սողում հազիվ լսելի մի խշշոց, մի սոսափյուն։ Մայրը խոսեց գրեթե շշուկով և երկյուղով։

— Ինչ վերաբերում է աստծուն, ես չգիտեմ, իսկ Քրիստոսին հավատում եմ... Եվ հավատում եմ նրա խոսքերին՝ սիրիր մերձավորիդ ինչպես քո անձը, դրան հավատում եմ...

Տատյանան լուռ էր։ Մթության մեջ մայրը տեսնում էր նրա շիտակ կերպարանքի աղոտ ուրվագիծը, որ վառարանի սև ֆոնի վրա գորշագույն էր թվում։ Նա կանգնած էր անշարժ։ Մայրն անձկությամբ աչքերը փակեց։

Հանկարծ հնչեց տանտիկնոջ սառը ձայնը.

— Երեխաներիս մահը չեմ կարող ներել ոչ աստծուն, ոչ մարդկանց, երբե՛ք...

Նիլովնան անհանգիստ մի քիչ բարձրացավ, սրտով հասկանալով այն ցավի ուժը, որը ծնունդ էր տվել այդ խոսքերին։

— Դուք ջահել եք, դեռ երեխաներ կունենաք,— սիրալիր ասաց նա։

Շշուկով և ոչ իսկույն կինը պատասխանեց.

— Ո՜չ։ Ես փչացել եմ, բժիշկն ասում է՝ էլ երբեք չեմ ծնելու...

Հատակի վրայով մի մուկ վազեց։ Մի ինչ-որ բան չոր ու բարձրաձայն ճաթեց, հնչյունի անտեսանելի շանթով պատռելով խաղաղության անշարժությունը։ Եվ նորից պարզ լսելի դարձան աշնան անձրևի խշշոցն ու սոսափյունը տանիքի ծղոտի վրա, որոնք տակնուվրա էին անում այն, ինչ-որ մեկի վախեցած բարակ մատների պես։ Եվ թախծալի թափվում էին գետնին ջրի կաթիլները, նշելով աշնան գիշերվա դանդաղ ընթացքը...

Ծանր նինջի միջով մայրը լսեց խուլ ոտնաձայներ փողոցում, նախասենյակում։ Դուռն զգուշորեն բացվեց, լսվեց մի ցածրաձայն կանչ.

— Տատյա՜նա, պառկե՞լ ես, հա՞։

— Ոչ։

— Իսկ նա քնե՞լ է։

— Երևի քնել է։

Լույսը բռնկվեց, դողդողաց և սուզվեց խավարում։ Մուժիկը մոտեցավ մոր անկողնին, շտկեց մուշտակը, նրանով մոր ոտքերը ծածկելով։ Այդ փաղաքշանքը մեղմագին հուզեց մորն իր պարզությամբ, և աչքերը նորից փակելով՝ մայրը ժպտաց։ Ստեպանը լուռ հանվեց, բարձրացավ թախտի վրա։ Խաղաղություն տիրեց։

Քնաբեր անդորրության ծույլ օրորվելուն ուշի-ուշով ունկնդրելով՝ մայրն անշարժ պառկել էր, իսկ նրա առջև մթության մեջ երերվում էր Ռիբինի արյունաթաթախ դեմքը...

Թախտի վրա հնչեց չոր շշուկ.

— Տեսնո՞ւմ ես, ի՜նչպիսի մարդիկ են այդ գործով զբաղվում։ Արդեն ծերացած, անվերջ ցավեր տեսած, աշխատելուց հոգնած, հիմա սրա հանգստանալու ժամանակն է, իսկ սա, տե՛ս։ Իսկ դու ջահել ես, խելքդ գլխիդ, է՞հ, Ստյոպա...

Մուժիկի թաց և թանձր ձայնը պատասխանեց.

— Առանց մտածելու չի կարելի այս գործով զբաղվել...

— Դա ես լսել եմ...

Հնչյուններն ընդհատվեցին և նորից ծայր առան, ղողանջեց Ստեպանի ձայնը.

— Այսպես պետք է անել, նախ մուժիկների հետ խոսել առանձին-առանձին, ա՛յ, Մակովը, Ալյոշան, ճարպիկ, գրագետ և իշխանությունից զրկանք կրած։ Շորինը, Սերգեյը, նույնպես խելքը գլխին մուժիկ է։ Կնյազևը ազնիվ, սրտոտ մարդ է։ Առայժմ բավական կլինի։ Պետք է մի տեսնել այն մարդկանց, որոնց մասին նա խոսում էր։ Մի օր ես կացինը կվերցնեմ, կանցնեմ քաղաք, իբր թե գնում եմ փայտ կոտրելու, իբր աշխատանքի եմ գնացել։ Այս գործում պետք է զգույշ լինել։ Նա ճիշտ է ասում, մարդուս արժեքն իր գո՛րծն է։ Ա՛յ, ինչպես այն մուժիկը. նրան թեկուզ աստծու առաջ կանգնեցրու, նա չի զիջի.. խորն է գնացել։ Իսկ Նիկի՞տան. խիղճը տանջեց, զարմա՛նք բան է։

— Ձեր աչքի առաջ ծեծում են մարդուն, իսկ դուք բերանբաց մտիկ եք տալիս...

— Դու սպասի՛ր։ Դու ասա, փառք աստծու, որ ինքներս չծեծեցինք նրան, այդ մարդուն, ա՛յ թե ինչ։

Ստեպանը երկար ժամանակ շշնջում էր՝ մերթ ձայնն այնպես իջեցնելով, որ մայրը հազիվ էր լսում նրա խոսքերը, մերթ հանկարծ սկսում էր ղողանջել ուժեղ և թանձր։ Այն ժամանակ կինը նրան ընդհատում էր.

— Կամա՛ց։ Կզարթեցնես...

Մայրը քնեց ծանր քնով, քունը հանկարծակի հեղձուցիչ ամպի պես ընկավ նրա վրա, գրկեց ու տարավ։

Տատյանան մորն արթնացրեց այն ժամանակ, երբ առավոտյան գորշ աղջամուղջը դեռ կուրորեն նայում էր խրճիթի պատուհաններից և գյուղի վրա սառը խաղաղության մեջ քնած լողում ու հալվում էր եկեղեցու հսկման զանգի պղնձե հնչյունը։

— Ես ինքնաեռը դրել եմ, թե՛յ խմեցեք, թե չէ ցուրտ կլինի գնալիս, քնից նոր վեր կացած...

Ստեպանը զգզված մորուքը քորելով գործնականորեն հարցնում էր մորը, թե քաղաքում ինչպես գտնի նրան, իսկ մորը թվում էր, թե այդ օրը մուժիկի դեմքը դարձել էր ավելի լավ, ավելի ավարտված։ Թեյի ժամանակ Ստեպանը քմծիծաղով նկատեց.

— Ի՞նչ զարմանալի բան պատահեց։

— Ի՞նչը,— հարցրեց Տատյանան։

— Ա՛յ, այս ծանոթությունը։ Հենց այնպես...

Մայրը մտախոհ, բայց վստահորեն ասաց.

— Այս գործի մեջ ամեն բանում զարմանալի պարզություն կա։

Տանտերերը մորից բաժանվեցին զսպված, բառերը ժլատորեն գործադրելով, բայց նրա հարմարության համար առատորեն բազմաթիվ մանր հոգացողություններ ցուցաբերելով։

Սայլակում նստած, մայրը մտածում էր, որ այդ մուժիկը կսկսի աշխատել զգույշ, անաղմուկ, խլուրդի պես, և անդուլ։ Եվ միշտ նրա կողքին կհնչի կնոջ դժգոհ ձայնը, կշողա նրա կանաչ աչքերի այրող փայլը, և չի մեռնի այդ կնոջ մեջ, քանի նա կենդանի կլինի, կորցրած զավակների մայրական վրիժառու, գայլային կարոտը։

Հիշեց Ռիբինին, նրա արյունը, դեմքը, կրակոտ աչքերը, նրա խոսքերը և սիրտը սեղմվեց գազանների առջև ունեցած անզորության դառն զգացմունքից։ Եվ մինչև քաղաք ամբողջ ճանապարհին, գորշ օրվա աղոտ ֆոնի վրա մոր առջև կանգնած էր սևամորուք Միխայլոյի ամրակուռ կերպարանքը պատառոտված շապկով, հետևում կապկպված ձեռներով, քրքրված

գլխով, ցասմամբ և դեպի իր ճշմարտությունն ունեցած հավատով պարուրված։ Մայրը մտածում էր այն բազմաթիվ գյուղերի մասին, որոնք երկչոտ կուչ են եկել գետնին, մտածում էր մարդկանց մասին, որոնք թաքուն սպասում են ճշմարտության գալուն և այն հաղարավոր մարդկանց մասին, որոնք անմտորեն և անմռունչ աշխատում են ամբողջ կյանքում, ոչինչ չակնարկելով։

Կյանքը պատկերանում էր նրան մի անհերկ, բլրոտ դաշտ, որը լարված և մունջ սպասում է մշակների և լուռ խոստանում է ազատ, ազնիվ ձեռքերին։

«Բեղմնավորեցեք ինձ բանականության և ճշմարտության սերմերով, ես հարյուրապատիկը կհատուցեմ ձեզ։

Հիշելով իր հաջողությունը, նա կրծքում խոր զգում էր ուրախության մի մեղմ թրթռոց և զսպում էր ամաչկոտությամբ։

XIX

Տանը մոր առջև դուռը բացեց Նիկոլայը, մազերը խռիվ, գիրքը ձեռքին։

— Արդե՞ն,— բացականչեց նա ուրախ-ուրախ։— Շո՜ւտ եկաք։

Նրա աչքերը սիրալիր և աշխույժ ճպճպում էին ակնոցի տակ, նա մորն օգնեց վերարկուն հանելու և սիրալիր ժպիտով նայելով նրա դեմքին, ասաց.

— Իսկ գիշերս ինձ մոտ, գիտեք, խուզարկություն եղավ, մտածեցի պատճառն ի՞նչ է։ Արդյոք ձեզ հետ որևէ բան չի՞ պատահել։ Բայց չձերբակալեցին։ Չէ՞ որ եթե ձեզ ձերբակալեին, ինձ էլ չէին թողնի...

Նա մորը տարավ սեղանատուն աշխուժորեն շարունակելով.

— Սակայն, այս անգամ ծառայությունից կվռնդեն։ Դա ինձ չի վշտացնում. ես ձանձրացել եմ ձիազուրկ գյուղացիներին հաշվելուց։

Սենյակն այնպիսի տեսք ուներ, որ կարծես ուժեղ մեկը շարության տխմար մոլուցքով բռնված՝ փողոցից տան պատերն այնքան է հրհրել, որ նրա միջի ամբողջ եղած-չեղածը թափթփել է։ Պատկերները թափված էին հատակին, պաստառները պատառոտված և կտորները կախ-կախ մի տեղ հատակի տախտակը վեր էր բարձրացված, պատուհանի տախտակը շուռ տված,

վառարանի մոտ հատակին մոխիր ցրված։ Մայրը գլուխն օրորեց՝ ծանոթ պատկեր տեսնելով և սևեռուն հայացքով նայեց Նիկոլային, նրա մեջ մի նոր բան զգալով։

Սեղանի վրա դրված էր հանգած ինքնաեռը, ավացված ամանեղենը, երշիկն ու պանիրը պնակի փոխարեն թղթի մեջ էին, թափված էին հացի կտորներ ու փշրանքներ, գրքեր, ինքնաեռի ածուխներ։ Մայրը ժպտաց, Նիկոլայը նույնպես ամաչելով ժպտաց։

— Սա արդեն ե՛ս եմ լրացրել ավերածության պատկերը, բայց վնաս չունի, Նի՛լովնա, վնաս չունի՞։ Ես կարծում եմ, նրանք նորից են գալու, ուստի և՛ այս բոլորը չեմ հավաքել։ Է՛, դո՞ւք ինչպես գնացիք-եկաք։

Այդ հարցը ծանր հարվածեց մոր սրտին, նրա առջև ծառացավ Ռիբինը, և մայրն իրեն մեղավոր զգաց, որ իսկույն չի խոսել նրա մասին։ Աթոռի վրա նստած կռանալով՝ նա մոտեցավ Նիկոլային և աշխատելով հանգիստ մնալ, վախենալով թե կմոռանա որևէ բան, սկսեց պատմել.

— Նրան բռնեցին...

Նիկոլայի դեմքը ցնցվեց։

— Այո՞։

Մայրը ձեռքի շարժումով կասեցրեց նրա հարցը և շարունակեց այնպես, որ կարծես նստած էր հենց արդարության առաջ, մարդուն խոշտանգելու համար նրան գանգատ անելիս։ Նիկոլայը մեջքը թեքեց աթոռին, գունատվեց և շրթունքները կծած լսում էր։ Նա դանդաղորեն հանեց ակնոցը, դրեց սեղանին, ձեռքով դեմքը շփեց, կարծես սրբում էր մի անտեսանելի սարդոստայն։ Նրա դեմքը սրացավ, այտոսկրները տարօրինակ կերպով սրվեցին, ոունգները ցնցվեցին, մայրն առաջին անգամն էր նրան այդպես տեսնում, և նա մի քիչ վախեցնում էր իրեն։ Երբ մայրն ավարտեց, Նիկոլայը վեր կացավ, մի բոպե լուռ անցուդարձ արեց սենյակում ձեռները խրելով գրպանները։ Ապա ատամների արանքից մրմնջաց.

— Խոշո՞ր մարդ է, ինչպես երևում է։ Նրա համար բանտում մնալը դժվար կլինի, նրա նմաններն իրենց վատ են զգում այնտեղ։

Նա ձեռներն ավելի ու ավելի էր խոր տանում՝ զսպելով իր հուզմունքը, բայց և այնպես մայրն զգում էր այդ հուզմունքը, դա իրեն էլ էր հաղորդվում։ Նիկոլայի աչքերը նեղացան դանա-

կի ծայրի պես։ Սենյակով նորից քայլելով նա սառն ու զայրագին ասում էր.

— Տեսե՛ք ի՞նչ սոսկում է։ Տխմար մարդկանց մի խմբակ, պաշտպանելով ժողովրդի վրա ունեցած իր կործանարար իշխանությունը՝ ծեծում, խեղդում, ճզմում է բոլորին։ Աճում է վայրենացումը, վայրագությունը դառնում է կյանքի օրենք, մտածեցե՛ք։ Նրանք ծեծում և գազանանում են անպատիժ մնալուց, հիվանդանում են խոշտանգումների պագշոտ ծարավից, այնպիսի ստրուկների նողկալի հիվանդությամբ, որոնց ազատություն է տրված երևան հանելու ստրկական զգացմունքների և անասնական սովորությունների ամբողջ ուժը։ Ոմանք թունավորվում են վրիժառությամբ, ոմանք էլ բթացման աստիճան ընկճված՝ դառնում են համր ու կույր։ Ժողովրդին այլասերում են, ամբո՞ղջ ժողովրդին։

Նա կանգ առավ և լռեց՝ ատամները կրճտացնելով։

— Ակամայից ինքդ է՛լ ես գազանանում այս գազանային կյանքում,— կամաց ասաց նա։

Բայց իր վրդովմունքը հաղթահարելով, գրեթե հանգիստ, աչքերի մնայուն փայլով նայեց մոր դեմքին, որ ողողված էր լուռ արցունքներով։

— Սակայն մեզ չի կարելի ժամանակ կորցնել, Նի՛լովնա։ Եկե՛ք, թանկագի՛ն ընկեր, ուշքներս գլուխներս հավաքենք...

Տրտում ժպտալով նա մոտեցավ մորը և թեքվելով հարցրեց, նրա ձեռքը սեղմելով.

— Ո՞ւր է ձեր ճամպրուկը։

— Խոհանոցո՛ւմն է,— պատասխանեց մայրը։

— Մեր դարպասի մոտ լրտեսներ են կանգնած, այն հրսկայական քանակությամբ թղթերը մենք չենք կարող տանից աննկատելի կերպով դուրս տանել, իսկ թաքցնելու տեղ չկա, ես կարծում եմ՝ նրանք այս գիշեր նորից կգան։ Նշանակում է՝ որքան էլ ափսոսալի լինի աշխատանքը, մենք այդ բոլորը պետք է այրե՛նք։

— Ի՞նչը,— հարցրեց մայրը։

— Այն բոլորը, ինչ որ ճամպրուկումն է։

Մայրը հասկացավ նրան, և, որքան էլ որ տխուր էր, իր հաջողությամբ հպարտանալու զգացումը նրա դեմքին ժպիտ առաջացրեց։

— Այնտեղ ոչինչ չկա, ո՛չ մի թերթիկ,— ասաց նա և

հետզհետե աշխուժանալով սկսեց պատմել Զումակովի հետ ունեցած իր հանդիպման մասին։

Նիկոլայը լսում էր նրան նախ հոնքերն անհանգիստ կիտելով, ապա զարմանքով և վերջապես պատմությունն ընդհատելով՝ բացականչեց.

— Լսեցե՛ք, բայց դա հիանալի՞ է։ Դուք զարմանալի բախտավոր մարդ եք...

Մոր ձեռքը սեղմելով նա մեղմ բացականչեց.

— Դուք այնպե՞ս եք հուզում դեպի մարդիկ ունեցած ձեր հավատով... ես, ճշմարիտն ասած, սիրում եմ ձեզ ինչպես հարազատ մո՛ր...

Մայրը հետաքրքրությամբ, ժպտալով հետևում էր նրան, ուզում էր հասկանալ, թե ինչից այդպես պայծառ և աշխույժ դարձավ։

— Ընդհանրապես զարմանալի է,— ձեռներն իրար շփելով ասում էր Նիկոլայը և ծիծաղում ցածրաձայն, սիրալիր ծիծաղով,— ես, գիտե՞ք, վերջին օրերս չափից դուրս լավ եմ ապրել, ամբողջ ժամանակ բանվորների հետ եմ եղել, կարդացել եմ, խոսել, տեսել։ Եվ հոգուս մեջ այնքա՞ն բան է կուտակվել, զարմանալի առողջ, մաքուր բան։ Ի՞նչ լավ մարդիկ են, Նի՛լովնա։ Ես խոսում եմ երիտասարդ բանվորների մասին, կորովի, զգայուն, ամեն ինչ հասկանալու ծարավով լի։ Նայում ես նրանց և տեսնում՝ Ռուսաստանն աշխարհիս ամենապայծա՞ռ դեմոկրատիան կլինի։

Նա դրականորեն բարձրացրեց ձեռքը, կարծես երդվում էր և քիչ լուռ մնալով շարունակեց.

— Ես նստել եմ այստեղ, գրել և մի տեսակ թթվել, բորբոսնել գրքույկների ու թվերի վրա։ Գրեթե մի տարի այդպիսի կյանք եմ վարել, դա այլանդակություն է։ Զէ՞ որ ես սովորել եմ բանվոր ժողովրդի մեջ լինել և երբ նրանից կտրվում եմ, ինձ անհարմար եմ զգում, գիտե՞ք, լարվում եմ, ճնշում եմ ինձ, որ կարողանամ այսպիսի կյանք վարել։ Իսկ հիմա կարող եմ նորից ապրել ազատ, նրանց հետ կտեսնվեմ, կպարապեմ։ Դուք հասկանո՞ւմ եք, ես կլինեմ նորածին մտքերի օրորոցի մոտ, մատաղ ստեղծագործական եռանդի դեմ հանդիման։ Դա զարմանալի պարզ բան է, գեղեցիկ և սաստիկ ոգևորում է, ջահելանում ես, սրտապնդվում, ապրում ավելի ճոխ կյանքով։

Նա ծիծաղեց շփոթված և ուրախ, և մոր սիրտն էլ համա-

կում էր նրա ուրախությունը, որը հասկանալի էր նրա համար։

— Իսկ հետո, դուք անչափ լավ մարդ եք,— բացականչեց Նիկոլայը։— Դուք ի՜նչքան վառ եք նկարագրում մարդկանց, ի՜նչ լավ եք տեսնում նրանց...

Նիկոլայը նստեց նրա կողքին, շփոթված մի կողմ դարձնելով ուրախ դեմքը և մազերը հարթելով, բայց շուտով դարձավ և մորը նայելով՝ ագահորեն սկսեց ունկնդրել նրա սահուն, պարզ և վառ պատմությունը։

— Զարմանալի՜ հաջողություն է,— բացականչեց Նիկոլայը։— Դուք լիակատար հնարավորություն ունեիք բանտ ընկնելու, և հանկարծ ի՜նչ։ Այո, երևում է շարժվում է գյուղացին, դա բնական է, ասենք։ Այդ կի՜նը, զարմանալի պարզորոշ կերպով ես տեսնում եմ նրան... Մենք պետք է գյուղական գործերի համար հատուկ մարդիկ դնենք։ Մարդի՜կ։ Դա է, որ պակասում է մեզ... Կյանքը հարյուրավոր ձեռքեր է պահանջում...

— Ա՜յ, եթե Պաշան ազատության մեջ լիներ։ Եվ Անդրյո՜ւշան,— կամաց ասաց մայրը։

Նիկոլայը նայեց նրան և գլուխը կախեց։

— Գիտե՞ք ինչ, Նի՜լովնա, դա ձեզ համար լսելը դժվար կլինի, բայց ես այնուամենայնիվ կասեմ. ես Պավելին լավ եմ ճանաչո՜ւմ, բանտից նա չի հեռանա։ Նրան հարկավոր է դատ, նրան հարկավոր է կանգնել ամբողջ հասակովը մեկ, նա դրանից չի հրաժարվի։ Եվ պետք էլ չի՜։ Նա Սիբիրի՜ց կփախչի։

Մայրը հառաչեց և կամաց ասաց.

— Է՜հ, ի՞նչ արած։ Նա ինքը գիտե՝ ի՜նչպես է ավելի լավ...

— Հը՜մ,— ասաց Նիկոլայը հետևյալ րոպեին՝ ակնոցի միջից նայելով մորը։— Եթե ձեր այդ մուժիկը շտապի՞ր գալ մեզ մոտ։ Տեսե՜ք ինչ, Ռիբինի մասին անհրաժեշտ է թերթիկ գրել գյուղի համար, դա Ռիբինին չի վնասի, քանի որ նա իրեն այդպես խիզախ է պահում։ Ես հենց այսօր կգրեմ, Լյուդմիլան խնդրեմ կտպագրի... Միայն թե թերթիկն ի՞նչպես պետք է ընկնի գյուղը։

— Ես կտանեմ...

— Ո՜չ, շնորհակա՜լ եմ,— արագ բացականչեց Նիկոլայը։— Ես մտածում եմ, այդ բանի համար արդյոք պետք չի՞ գա Վեսովշչիկովը, հը՞։

— Նրա հետ խոսե՞մ։

— Ապա՜ փորձեցեք, տեսնենք։ Եվ սովորեցրե՜ք նրան։

— Իսկ ե՞ս ինչ պիտի անեմ։

— Մի՜ անհանգստանաք։

Նիկոլայը նստեց գրելու։ Մայրը սեղանը հավաքեց, մեկմեկ նայելով Նիկոլային տեսնում էր, թե ինչպես է դողում գրիչը նրա ձեռքում՝ թուղթը ծածկելով սև բառերի շարքերով։ Երբեմն Նիկոլայի պարանոցի մորթը ցնցվում էր, նա գլուխը ետ էր գցում՝ աչքերը փակելով, նրա կզակը դողում էր։ Դա հուզում էր մորը։

— Ահա և պատրաստ է,— ասաց Նիկոլայը վեր կենալով։— Դուք այս թուղթը ձեզ վրա մի տեղ թաքցրեք։ Բայց իմացե՜ք, եթե ժանդարմները գալու լինեն, ձեզ էլ են խուզարկելու։

— Սատանան նրանց հետ,— հանգիստ պատասխանեց մայրը։

Երեկոյան եկավ բժիշկ Իվան Դանիլովիչը։

— Ինչո՞ւ է հանկարծ իշխանությունն այդպես իրար անցել,— ասում էր նա՝ սենյակում արագ քայլելով։— Գիշերս յոթ խուզարկություն է եղել։ Իսկ հիվա՞նդն ուր է, հը՞։

— Նա դեռ երեկ է գնացել,— պատասխանեց Նիկոլայը։— Այսօր, գիտես, շաբաթ է, նա ընթերցանություն ունի, նա չի կարող բաց թողնել...

— Է՜, դա հիմարություն է, ջարդված գլխով ընթերցանության նստել...

— Ես նրան այդ ապացուցում էի, բայց ապարդյուն...

— Ուզեցել է ընկերների մոտ պարծենալ,— նկատեց մայրը,— այսինքն՝ թե տեսե՜ք, ես արդեն արյուն եմ թափել...

Բժիշկը նայեց մոր վրա, դեմքին կատաղի արտահայտություն տվեց և ատամները սեղմելով ասաց.

— Ու-ո՜ւ, արյունարբու...

— Դե՜հ, Իվա՜ն, դու այստեղ բան չունես, մենք հյուրերի ենք սպասում, գնա՜։ Նի՜լովնա, ապա թուղթը տվեք նրան...

— Էլի՞ թղթեր,— բացականչեց բժիշկը։

— Ահա՜։ Վերցրո՜ւ և հանձնիր տպարան։

— Վերցրի։ Կհանձնեմ։ Ուրիշ ոչի՞նչ։

— Ուրիշ ոչինչ։ Դարպասի մոտ լրտես կա։

— Տեսա։ Իմ դռան մոտ էլ կա։ Դե՜հ, ցտեսությո՜ւն։ Ցտեսություն, դաժա՜ն կին։ Իսկ գիտե՞ք, բարեկամնե՜ր, գերեզմանատան կռիվը լավ բան դուրս եկավ վերջիվերջո։ Դրա մասին է խոսում ամբողջ քաղաքը։ Այդ առիթով քո գրած թերթիկը շատ

լավն է և ժամանակին հասավ։ Ես միշտ ասել եմ, որ լավ կոիվը վատ հաշտությունից լավ է...

— Դե լավ, դու գնա՛...

— Այնքան էլ սիրալիր չես վարվում։ Ձեր ձե՛ռքը, Նի՛լովնա։ Իսկ այդ տղան հիմարություն է արել այնուամենայնիվ։ Դու գիտե՞ս որտեղ է ապրում նա։

Նիկոլայը հասցեն տվեց։

— Վաղը պետք է նրա մոտ գնալ, հիանալի տղա է, չէ՞։

— Շա՛տ...

— Պետք է նրան պահպանել, նա առողջ ուղեղ ունի,— ասում էր բժիշկը հեռանալիս։— Հենց այդպիսի տղաներից պետք է աճեցնել պրոլետարական ինտելիգենցիա, որը փոխարինի մեզ, երբ մենք կհեռանանք այս աշխարհից այնտեղ, ուր հավանորեն չկան դասակարգային հակասություններ...

— Դու սկսել ես շատ շաղակրատել, Իվա՛ն...

— Որովհետև ուրախ եմ, դրանից է։ Նշանակում է՝ դու բա՞նտ ես սպասում։ Ցանկանում եմ քեզ հանգստանալ այնտեղ։

— Շնորհակալ եմ։ Ես չեմ հոգնել։

Մայրը լսում էր նրանց խոսակցությունը, և նրան հաճելի էր բանվորի նկատմամբ ցույց տրվող այդ հոգատարությունը։

Բժշկին ճանապարհ դնելով Նիկոլայն ու մայրն սկսեցին թեյ խմել և բան ուտել, սպասելով գիշերային հյուրերին, կամաց խոսելով։ Նիկոլայը երկար պատմում էր մորն իր ընկերների մասին, որոնք աքսորումն են, նրանց մասին, որոնք արդեն այնտեղից փախել և իրենց աշխատանքը շարունակում են ուրիշի անվան տակ։ Սենյակի լերկ պատերը ետ էին մղում նրա ձայնի մեղմ հնչյունները, կարծես զարմանալով և չհավատալով աշխարհի վերափոխման մեծ գործին իրենց ամբողջ ուժերն անշահադիտորեն նվիրած համեստ հերոսների պատմությանը։ Մի ջերմ ստվեր սիրալիր շրջապատում էր մորը, սիրտը ջերմացնելով դեպի անտես-անճանաչ մարդիկ տածած սիրո զգացումով, և նրա երևակայության մեջ նրանք բոլորը միանալով դառնում էին մի ահագին մարդ, լի արիության անսպառ ուժով, նա դանդաղ, բայց անդուլ-անդադար ընթանում է երկրի վրայով, իր աշխատանքի վրա սիրահարված՝ ձեռներով մաքրելով երկրի երեսից ստության դարավոր բորբոսը, մարդկանց աչքերի առջև բաց անելով կյանքի պարզ ու պայծառ ճշմարտությունը։ Եվ մեծ ճշմարտությունը հարություն առնելով՝ ամենքին միահա-

վասար քաղցրությամբ իր մոտ է հրավիրում, ամենքին հավասարապես խոստանում է ազատություն ագահությունից, չարությունից և կեղծիքից, այդ երեք հրեշներից, որոնք իրենց ցինիկ ուժով ստրկացրել և ահաբեկել են ամբողջ աշխարհը... Այդ պատկերը մոր հոգու մեջ մի զգացմունք էր առաջացնում, նման այն զգացողությանը, որով նա մի ժամանակ կանգնում էր սրբապատկերի առջև՝ բերկրալի և գոհաբանական աղոթքով ավարտելով այն օրը, որը նրան ավելի թեթև էր թվում կյանքի մյուս օրերից։ Այժմ նա մոռացել էր այդ օրերը, իսկ դրանց առաջ բերած զգացմունքն ընդլայնվել, դարձել էր ավելի լուսավոր և բերկրալի, ավելի խոր էր թափանցել հոգու մեջ և կենդանի՝ ավելի ու ավելի պայծառ էր վառվում։

— Իսկ ժանդարմները չե՞ն գալիս,— հանկարծ իր պատշաճությունն ընդհատելով բացականչեց Նիկոլայը։

Մայրը նայեց նրան և մի փոքր լռելով սրտնեղած արձագանքեց.

— Թող գրողի ծոցը գնան։

— Իհարկե՞։ Բայց ձեր քնելու ժամանակն է, Նի՛լովնա, դուք երևի սոսկալի հոգնել եք, զարմանալի ամրապինդ եք, պետք է ասել։ Որքա՞ն հուզմունք, անհանգստություն, և այդ բոլորին դուք հեշտությամբ դիմանում եք։ Միայն թե, ա՛յ, ձեր մազերը արագ են սպիտակում։ Դե՛հ, գնացեք հանգստացե՛ք։

XX

Մորն արթնացրեց խոհանոցի դռան բարձրաձայն թխկոցը։ Մեծում էին անընդհատ, համբերատար համառությամբ։ Դեռ մութն էր, խաղաղ և խաղաղության մեջ բախյունի կամակոր մանր զարկերը անհանգստություն էին առաջացնում։ Շտապ հագնվելով՝ մայրն արագ դուրս եկավ խոհանոց և դռան առաջ կանգնելով հարցրեց.

— Ո՞վ է։

— Ես եմ,— պատասխանեց մի անծանոթ ձայն։

— Ո՞վ ես։

— Բացե՛ք,— խնդրաբար և կամաց պատասխանեցին դռան հետևից։

Մայրը դռան կեռը բարձրացրեց, դուռը ոտով հրեց, ներս մտավ Իգնատը և ուրախացած ասաց.

— Նշանակում է՝ չեմ սխալվել։

Նա մինչև գոտին ցեխոտված էր, նրա դեմքը գորշացել էր, աչքերը խոր ընկել, և միայն գանգուր մազերն էին ըմբոստ ցցվել՝ դեպի ամեն կողմ գլխարկի տակից դուրս գալով։

— Մեզ մոտ փորձանք է պատահել,— դուռը փակելով շշուկով ասաց նա։

— Ես գիտեմ...

Դա տղային զարմացրեց։ Աչքերը թարթելով նա հարցրեց.

— Որտեղի՞ց։

Մայրը կարճ և շտապ պատմեց։

— Իսկ այն երկուսին բռնե՞լ են։ Ընկերներիդ։

— Նրանք այնտեղ չէին։ Նրանք գնացել էին ներկայանալու, զինվորագրուներ են։ Հինգ հոգու բռնեցին՝ հաշված քեռի Միխայլոյին։

Նա քթով շնչեց օդը և ժպտալով ասաց.

— Իսկ ես մնացի։ Երևի ինձ փնտրում են։

— Իսկ դու ի՞նչպես ազատվեցիր,— հարցրեց մայրը։

Սենյակի դուռը կամաց բացվեց։

— Ե՞ս,— նստարանին նստելով և շուրջը նայելով՝ բացականչեց Իգնատը։— Նրանց գալուց մի րոպե առաջ անտառապահը վազելով եկավ, պատուհանը ծեծեց, թե՝ զգուշացե՛ք, տղե՛ր, ասում է, ձեզ վրա են գալիս...

Նա կամաց ծիծաղեց, երեսը սրբեց կաֆտանի փեշով և շարունակեց.

— Դե, քեռի Միխայլոյին մուրճի հարվածով էլ չես շշմացնի։ Իսկույն ինձ ասաց. «Իգնա՛տ, քաղա՛ք, շո՛ւտ։ Հիշո՞ւմ ես այն հասակավոր կնոջը»։ Իսկ ինքն սկսեց տոմսակ գրել։ «Ա՛ռ, գնա՛...» Ես սկսեցի սողալ թփերի միջով, լսում եմ՝ գալի՛ս են։ Շա՛տ են, ամեն կողմից աղմկում են սատանաները։ Օղակի պես պատել են գործարանը։ Թփերի մեջ պառկեցի, կողքովս անցա՛ն։ Այդ ժամանակ ես վեր կացա և սկսեցի վազել։ Երկու գիշեր ճանապարհ եկա, ամբողջ օրն առանց հանգստանալու։

Երևում էր, որ նա իրենից գոհ է. նրա շագանակագույն աչքերում ժպիտ էր փայլում, կարմիր, խոշոր շրթունքները դողդողում էին։

— Իսկույն ես քեզ թեյ կտամ,— շտապ ասաց մայրը ինքնաեռը վերցնելով։

— Դուք տոմսակն ստացեք ախր...

Նա դժվարությամբ բարձրացրեց ոտքը և կոկորդը մաքրելով՝ դրեց նստարանին։

Շեմքում երևաց Նիկոլայը։

— Բարև ձեզ, ընկե՛ր,— ասաց նա աչքերը կկոցելով։— Թույլ տվեք ես ձեզ օգնեմ։

Եվ կռանալով սկսեց արագորեն ետ անել ցեխոտ փաթաթանները։

— Վա՜,— կամաց բացականչեց տղան, ոտը քաշելով և աչքերը զարմացած թարթելով՝ նայեց մորը։

Առանց նրա հայացքը նկատելու՝ մայրն ասաց.

— Պետք է սրա ոտներն օղիով շփել...

— Իհարկե,— ասաց Նիկոլայը։

Իգնատը շփոթված փռթկացրեց։

Նիկոլայը գտավ տոմսակը, հարդարեց այն և այդ գորշ, տրորված թուղթը դեմքին մոտեցնելով կարդաց.

«Չթողնես գործը, մայր, առանց ուշադրության։ Ասա բարձր խանումին, որ չմոռանա, որ ավելի շատ գրեն մեր գործերի մասին, խնդրում եմ։ Մնաս բարով։ Ռիբին»։

Նիկոլայը վար իջեցրեց ձեռքը, որով տոմսն էր բռնել, և ցածր ձայնով ասաց.

— Սա սքանչելի՜ է...

Իգնատը նայում էր նրանց, սերկ ոտի կեղտոտ մատները կամաց շարժելով։ Մայրն արցունքով ողողված դեմքը թաքցնելով մոտեցավ նրան մի կոնք ջրով, նստեց հատակին և ձեռը մեկնեց դեպի նրա ոտքը։ Իգնատն իսկույն ոտքը կոխեց նստարանի տակ՝ վախեցած բացականչելով.

— Ի՞նչ եք անում։

— Ոտքդ շո՛ւտ տուր...

— Ես իսկույն սպիրտ կբերեմ,— ասաց Նիկոլայը։

Տղան ոտքն ավելի ու ավելի հեռու էր տանում նստարանի տակ և մրթմրթում.

— Ի՞նչ եք անում։ Հիվանդանոցո՞ւմն եք, ի՞նչ է...

Այդ ժամանակ մայրն սկսեց հանել նրա մյուս ոտքը։

Իգնատը բարձրաձայն քթթը փնչացրեց և անճոռնի կերպով վիզը շարժելով վերից վար նայեց մորը շրթունքները կախած։

— Գիտե՞ս,— ասաց մայրը ցնցվող ձայնով,— Միխայլո Իվանովիչին ծեծում էին...

— Մի՞թե,— կամաց և վախեցած բացականչեց տղան։

— Այո՛։ Նրան ծեծված բերին, և Նիկոլսկոյեյում ուրյադնիկն էր ծեծում, պրիստավը, և՛ ապտակում էին, և՛ աքացիներ էին տալիս... արնաթաթախ արին։

— Նրանք այդ բանը կարողանո՞ւմ են,— արձագանքեց տղան հոնքերը մռայլելով։ Նրա ուսերը ցնցվում էին։— Այսինքն, ես նրանցից վախենում եմ, ինչպես սատանաների՞ց։ Իսկ մուժիկները չծեծեցի՞ն։

— Մեկը խփեց։ Պրիստավը հրամայեց նրան։ Բայց բոլորը ո՞չ, նույնիսկ պաշտպանում էին, չի կարելի, ասում էին, խփել...

— Այո-ո, մուժիկներն արդեն սկսում էին հասկանալ, թե ով ինչ բանի է և ինչու։

— Այնտեղ էլ կան խելացիներ...

— Որտե՞ղ չկան։ Կարի՞ք է ստիպում։ Նրանք ամեն տեղ կան, գտնելն է դժվար։

Նիկոլայը մի շիշ սպիրտ բերեց, ինքնաեռը ածուխ գցեց և լուռ գնաց։ Հետաքրքիր աչքերով նրան ուղեկցելով Իգնատը կամաց հարցրեց մորից.

— Աղան բժի՞շկ է։

— Այս գործում աղաներ չկան, բոլորն ընկերներ են...

— Զարմանք բան է,— ասաց Իգնատը թերահավատորեն և շփոթված ժպտալով։

— Ինչի՞ ես զարմանում։

— Այնպես էլի։ Մի կողմը տեսնում ես, քիթ ու մռութ են ջարդում, մյուս կողմը՝ ոտքերդ են լվանում, իսկ մեջտե՞ղն ինչ է։

Սենյակի դուռը լայն բացվեց, և Նիկոլայը շեմքում կանգնած ասաց.

— Իսկ մեջտեղում ա՛յն մարդիկ են, որոնք լիզում են նրա՛նց ձեռքերը, որոնք մռութներ են ջարդում, և ծծում են նրա՛նց արյունը, ում մռութը ջարդվում է, ահա՛ մեջտեղը։

Իգնատը հարգանքով նայեց նրան և քիչ լռությունից հետո ասաց.

— Այդ ճիշտ է։

Տղան վեր կացավ, մի ոտից մյուսին հենվելով՝ ոտներն ամուր դեմ տալով հատակին, ասաց.

— Կարծես նորացա՞ն։ Շնորհակալություն ձեզ...

Ապա նստեցին սեղանատանը և սկսեցին թեյ խմել, իսկ Իգնատը մեծալուրջ ձայնով պատմում էր.

— Ես թերթերի ցրիչ եմ եղել, լավ ման եկող եմ։

— Շա՞տ մարդիկ են կարդում,— հարցրեց Նիկոլայը։

— Բոլորը, ովքեր որ գրագետ են, նույնիսկ հարուստներն են կարդում, նրանք, իհարկե, մեզանից չեն ստանում... Նրանք հասկանում են, որ գյուղացիներն իրենց արյունով ողողելու են աղաների ու հարուստների տակից դուրս քաշած հողը, ուրեմն՝ իրենք էլ բաժանելու են այդ հողը, դե նրանք էլ այնպես կբաժանեն, որ չլինեն այլևս ոչ տերեր, ոչ մշակներ, հապա ինչպե՞ս։ Էլ ինչի՞ համար պիտի կռվի խառնվեն, եթե ոչ սրա համար։

Նա նույնիսկ կարծես նեղացավ և Նիկոլային նայում էր թերահավատ, հարցականորեն։ Նիկոլայը լուռ ժպտում էր։

— Իսկ եթե այս բոլորը միասին կռվեն՝ հաղթեն, այսինքն, իսկ էգուց նորից մեկը հարուստ է լինելու, մյուսն աղքատ, էլ ինչո՞ւ պետք է կռվենք։ Մենք լավ ենք հասկանում՝ հարստությունը սորուն ավազ է, տեղը հանգիստ մնալ չի կարող, նորից դեսուդեն կհոսի։ Դրա օգուտն ի՞նչ։

— Իսկ դու մի՛ բարկանա,— կատակով ասաց մայրը։

Նիկոլայը մտախոհ բացականչեց.

— Ինչպե՞ս անենք, որ շուտով այնտեղ ուղարկենք Ռիբինին ձերբակալման վերաբերյալ թռուցիկը։

Իգնատն ուշադրությունը լարեց։

— Իսկ թռուցիկ կա՞։

— Այո։

— Տվե՛ք, ես տանեմ,— առաջարկեց տղան ձեռները տրորելով։

Մայրը կամաց ծիծաղեց առանց նրան նայելու։

— Չէ՞ որ դու հոգնած ես և վախենում ես, ասացիր։

Իգնատը լայն թաթով հարթելով գլխի գանգուր մազերը, գործնականորեն և հանգիստ ասաց.

— Վախն ի՛ր տեղը, իսկ գործն էլ ի՛ր տեղը։ Ի՞նչ եք ծիծաղում։ Սրա՛նց տեսեք։

— Ա՛խ, դու, երեխա՛ս,— ակամա բացականչեց մայրը, ենթարկվելով տղայի առաջ բերած ուրախության զգացմունքին։ Տղան ամաչելով ծիծաղեց։

— Հիմի էլ երեխա՞։

Նիկոլայը սկսեց խոսել՝ բարեսրտորեն կկոցած աչքերով տղային տնտղելով։

— Դուք այնտեղ չեք գնա...

— Իսկ ի՞նչ պիտի անեմ։ Ապա ո՞ւր պիտի գնամ,— անհանգիստ հարցրեց Իգնատը։

— Ձեր փոխարեն կգնա մի ուրիշը, իսկ դուք նրան մանրամասն կպատմեք, թե ինչ պետք է անի և ինչպես, լա՞վ։

— Լա՛վ,— ասաց Իգնատը ոչ իսկույն և դժկամությամբ։

— Իսկ ձեզ համար լավ անձնագիր կճարենք և ձեզ անտառապահ նշանակել կտանք...

Տղան գլուխն արագ վեր նետեց և անհանգստացած հարցրեց.

— Իսկ եթե մուժիկները փայտ տանելու գան կամ... ընդհանրապես, ես ի՞նչ պիտի անեմ։ Բռնեմ կապե՞մ։ Դա իմ գործը չի...

Մայրը ծիծաղեց, Նիկոլայը նույնպես. դա նորից շվարեցրեց և վշտացրեց տղային։

— Անհանգիստ մի՛ լինեք,— սփոփեց նրան Նիկոլայը։— Պետք չի լինի, որ դուք մուժիկներին կապկպեք, հավատացեք...

— Հա, դա ուրիշ բան է,— ասաց Իգնատը և հանգստացավ ուրախ ժպտալով։— Ա՛յ, եթե ես գործարան գնայի՞, այնտեղ, ասում են, տղերքը բավական խելոք են...

Մայրը սեղանի առաջից վեր կացավ և մտախոհ նայելով պատուհանից, ասաց.

— Է՛հ, կյա՞նք, կյանք։ Մարդ օրական հինգ անգամ ծիծաղում է, հինգ անգամ լալիս։ Հը՞, վերջացրի՞ր, Իգնա՛տ։ Արի քնի՛ր...

— Դե, ես չեմ ուզում...

— Արի՛, արի՛...

— Ձեզ մոտ շատ խիստ է։ Լավ, գալիս եմ... Շնորհակալություն տված պատվի համար, սիրալիրության համար...

Մոր անկողնում պառկելով՝ նա գլուխը քորելով փնթփնթում էր.

— Հիմա ձեր ամեն բանից կպրի հոտ է գալու, է՛հ։ Ջուր է այս բոլորը... Քունս չի տանում... Նա մեջտեղի համար ի՞նչ լավ ասաց... Սատանաներ...

Եվ հանկարծ բարձրաձայն խռմփացնելով քնեց, հոնքերը խիստ բարձրացրած, բերանը կիսաբաց։

XXI

Երեկոյան նա նստած էր նկուղային հարկի մի փոքրիկ սենյակում, աթոռի վրա, Վեսովշչիկովի դիմաց և ցածրաձայն, հոնքերը կնճռած, ասում էր նրան.

— Միջին պատուհանը չորս անգամ...

— Չո՞րս,— մտահոգված կրկնեց Նիկոլայը։

— Սկզբում՝ երեք, ա՛յ, այսպե՛ս։

Եվ կեռացած մատով հարվածեց սեղանը՝ համրելով.

— Մեկ, երկու, երեք։ Հետո, քիչ սպասելուց՝ մի անգամ էլ։

— Հասկանում եմ։

— Բաց կանի մի շեկ մուժիկ, կհարցնի՝ տատմոր հետևի՞ց ես եկել։ Դուք կասե՛ք՝ այո, գործարանատիրոջ կողմից եմ եկել։ Ուրիշ ոչինչ, արդեն նա կհասկանա՛։

Նրանք նստել էին գլուխները իրար կռացրած, երկուսն էլ թիկնեղ, ամրակազմ, և ձայները զսպած խոսում էին, իսկ մայրը ձեռները կրծքին ծալած կանգնել էր սեղանի մոտ, նրանց զննելով։ Այդ բոլորը, պատուհանը գաղտագողի թակելը, պայմանական հարց ու պատասխանը նրան ներքուստ ժպտալ էին հարկադրում, նա մտածում էր...

«Դեռ երեխաներ են...»

Պատից կախված ճրագը վառվում էր՝ լուսավորելով հատակին թափված ծոմոված դույլերը, թիթեղի կտորտանքը։ Ժանգի, յուղաներկի և խոնավության հոտը լցրել էր սենյակը։

Իգնատը հագել էր խավոտ կտորից կարած աշնանային հատ վերարկու, և դա նրան դուր էր գալիս, մայրը տեսնում էր, թե ինչ սիրով էր նա ափով հարթում թևը, ինչպես էր իրեն զննում՝ մկանոտ պարանոցը դժվարությամբ դարձնելով։ Եվ մոր կրծքում մեղմ զարկում էր.

«Երեխանե՛ր են։ Հարազատներս...»

— Ահա՛,— ասաց Իգնատը վեր կենալով։— Ուրեմն միտնե՛ր դպահեցեք, առաջ Մուրատովի մոտ, հարցրեք պապիկին...

— Միտս է,— պատասխանեց Վեսովշչիկովը։

Բայց Իգնատն ըստ երևույթին չհավատաց նրան, նորից կրկնեց բոլոր բախյունները, բառերն ու նշանները և վերջապես ձեռքը մեկնեց.

— Բարևեցե՛ք նրանց։ Լավ մարդիկ են, կտեսնեք...

Նա գոհ հայացքը նետեց իր վրա, վերարկուն շփեց ձեռքերով և հարցրեց մորը.

— Գնա՞մ։

— Բայց ճանապարհը կգտնե՞ս։

— Իհարկե՛։ Կգտնեմ... Ցտեսությո՛ւն, ուրեմն, ընկերնե՛ր։

Եվ գնաց ուսերը խիստ բարձրացրած, կուրծքը ցցած, նոր գլխարկը ծուռ դրած, ձեռքերը մեծալրջորեն խրած գրպանը։ Նրա քունքերին աշխույժ դողում էին բաց գույնի գանգուրները։

— Ա՛յ, հիմա ես էլ գործի վրա եմ,— ասաց Վեսովշչիկովը թեթևաքայլ մոտենալով մորը։— Ես արդեն ձանձրանում էի... Բանտից գլուխս փախցրի, ինչի՞ համար։ Միայն թաքնվում եմ։ Իսկ այնտեղ ես սովորում էի, այնտեղ Պավելն այնպե՞ս էր հուպ տալիս ուղեղներս, որ մարդու քեֆը գալիս էր։ Իսկ, Նի՛լովնա, փախուստի մասին ի՞նչ որոշեց։

— Չգիտե՞մ,— պատասխանեց մայրն ակամա հառաչելով։

Նանր ձեռքը մոր ուսին դնելով և դեմքը մոտեցնելով նրան, Նիկոլայն ասաց.

— Դու ասա՛ նրանց, նրանք քեզ կլսեն, դա շա՞տ հեշտ բան է։ Դու ինքդ տես, ա՛յ՝ բանտի պատն է, մոտը լապտեր կա։ Դիմացը ամայի տեղ է. դեպի ձախ՝ գերեզմանատունը, դեպի աջ՝ փողոցներ, քաղաքը։ Լապտերին է մոտենում լապտերավառը, ցերեկով, լապտերները մաքրում, սանդուղքը դնում պատին։ Պիտի բարձրանալ, պատի վրա գցել պարանե սանդուղքի կեռերը, պարանը կախել բանտի բակը և գնալ։ Այնտեղ, պատի հետևում, գիտեն ժամանակը, թե երբ են անելու այդ, քրեականներին կխնդրեն աղմուկ անել կամ իրենք կանեն, իսկ նրանք, որոնք պետք է փախչեն, այդ ժամանակ սանդուղքով պատը կբարձրանան, մե՛կ, երկու, և բանը պրծած է։

Նա մոր դեմքի առաջ շարժում էր ձեռքերը, նկարագրելով իր նախագիծը, նրա ասելով ամեն ինչ դուրս էր գալիս պարզ, որոշ, ճարպիկ։ Մայրը նրան ճանաչում էր որպես դանդաղամիտ, անշնորհք մի մարդ։ Անցյալում Նիկոլայի աչքերն ամեն բանի նայում էին մռայլ բարկությամբ և թերահավատորեն, իսկ հիմա կարծես նոր էին բացվում, պսպղում էին հավասար, ջերմ լույսով, մորը համոզելով և հուզելով...

— Մտածիր, տե՛ս, չէ՞ որ սա ցերեկն է լինելու... Անպատճառ ցերեկը։ Ո՞վ կարող է մտածել, թե բանտարկյալը սիրտ կանի օրը ցերեկով փախչել ամբողջ բանտի աչքի առաջ...

— Իսկ եթե գնդակահարե՞ն,— ցնցվելով արտասանեց կինը։

— Ո՞վ։ Զինվորներ չկան, վերակացուներն ատրճանակներով մեխեր են խփում...

— Քո ասելով շատ պարզ է ամեն բան...

— Կտեսնես, որ հենց այդպես է։ Չէ՛, դու խոսի՛ր նրա հետ։ Ինձ մոտ ամեն բան պատրաստ է, պարանե սանդուղքը, նրա կեռերը, տանտերս լապտերավառ կլինի...

— Դռան հետևում մեկը շարժվում էր, հազում, երկաթի ձայն եկավ։

— Ահա՛, նա՛,— ասաց Նիկոլայը։

Բաց դռնով մի թիթեղե լոգարան ներս խցկվեց, մի խռպոտ ձայն մրթմրթաց.

— Մտի՛ր, սատանա...

Ապա երևաց մի կլոր, ալեհեր գլուխ, անգլխարկ, պլշած աչքերով, մեծ ընչացքներով և բարեհոգի արտահայտությամբ։

Նիկոլայն օգնեց լոգարանը ներս բերելու, դռնով մտավ մի բարձրահասակ, կորամեջք մարդ, հազաց սափրած այտերն ուռացնելով, թքեց և խռպոտ ձայնով բարևեց.

— Բարի աջողում...

— Ա՛յ, հարցրու սրան,— բացականչեց Նիկոլայը։

— Ի՞նձ։ Ինչի՞ մասին։

— Փախուստի մասին...

— Հա՞-ա՞,— ասաց տանտերը սևացած մատներով ընչացքները սրբելով։

— Ա՛յ, Յա՛կով Վասիլևիչ, նա չի հավատում, որ դա հեշտ բան է։

— Հը՞մմ, չի հավատո՞ւմ։ Նշանակում է՝ չի ուզում։ Իսկ ես ու դու ուզում ենք, դրա համար էլ հավատում ենք,— հանգիստ ասաց տանտերը և հանկարծ կիսից կորանալով սկսեց խուլ հազալ։ Հազաց վերջացրեց՝ կուրծքը շփելով, երկար կանգնեց սենյակի մեջտեղը՝ ֆսֆսացնելով և պլշած աչքերով տրնտղելով մորը։

— Դա պետք է Պաշան և ընկերները որոշեն,— ասաց Նիլովնան։

Նիկոլայը մտախոհ կախեց գլուխը։

— Ո՞վ է այդ Պաշան,— հարցրեց տանտերը նստելով։

— Որդիս է։

— Ինչպե՞ս է ազգանունը։

— Վլասով։

Տանտերը գլխով արեց, հանեց ծխախոտի քսակը, դուրս քաշեց ծխամորճը և ծխախոտ լցնելով կցկտուր ասաց.

— Լսել եմ։ Քրոջս որդին ճանաչում է նրան։ Նա էլ է բանտում, քրոջս որդի Եվչենկոն, լսե՞լ եք։ Իսկ իմ ազգանունը Գոբուն է։ Ահա շուտով բոլոր ջահելներին բանտում կփակեն, ա՜յ, թե ծերերիս համար ազատ տեղ կբացվի։ Ժանդարմն ինձ խոստանում է քրոջս որդուն նույնիսկ Սիբիր քշել։ Կքշի՞ շունը։

Ծխելով նա դարձավ Նիկոլային՝ հաճախ թքելով հատակին։

— Ուրեմն չի՞ ուզում։ Ի՞ր գործն է։ Մարդս ազատ է. նստելուց հոգնել է՝ կարող է գնալ, գնալուց է հոգնել՝ կարող է նստել։ Եթե թալանել են՝ սո՛ւս կաց, ծեծում են՝ համբերի՛ր, սպանել են՝ պառկած մնա՛։ Սա հայտնի բան է։ Իսկ ես Սավկային դուրս կհանեմ։ Դո՛ւրս կհանեմ։

Նրա կարճ, հաչոցի նման ֆրազները մորը տարակուսանք էին պատճառում, իսկ վերջին խոսքերը նախանձ առաջացրին։

Փողոցում սառը քամու և անձրևի դեմ գնալիս մայրը մտածում էր Նիկոլայի մասին։

«Ի՞նչ է դարձել, մի տես, է՞»։

Եվ Գոբունին հիշելով, գրեթե աղոթելու պես խորհում էր.

«Երևում է՝ մենակ ես չեմ նոր կյանքով ապրում...»

Իսկ դրանից անմիջապես հետո նրա սրտում բարձրացավ մի մտածմունք որդու մասին.

«Եթե համաձայնե՞ր»։

XXII

Մի կիրակի բանտի գրասենյակում Պավելին հրաժեշտ տալիս մայրն իր ձեռքում թղթի մի փոքրիկ գունդ շոշափեց։ Ցընցվելով, կարծես դա այրեց իր ափի մորթը, մայրը նայեց որդու դեմքին՝ խնդրելով ու հարցնելով, բայց պատասխան չստացավ։ Պավելի կապույտ աչքերը ժպտում էին սովորական, մորը ծանոթ ժպիտով, հանգիստ և անվրդով։

— Մնաս բարո՞վ,— ասաց մայրը, հառաչելով։

Որդին նորից մեկնեց ձեռքը, և մի ինչ-որ սիրալիր դող անցավ նրա դեմքով։

— Գնաս բարո՛վ, մա՛յր։

Մայրն սպասում էր առանց ձեռքը թողնելու։

— Ջանհանգստանա՛ս, չբարկանաս,— ասաց որդին։

Որդու այս խոսքերը և ճակատի համառ ծալքը պատասխանեցին մորը։

— Ի՞նչ ես ասում,— մրմնջաց մայրը գլուխը կախելով։— Ի՞նչ կա որ...

Եվ շտապ հեռացավ առանց որդուն նայելու, որպեսզի իր զգացմունքը չմատնի աչքերին երևացող արցունքներով և շրթունքների դողով։ Ճանապարհին նրան թվում էր, թե կսկծում են այն ձեռքի ոսկորները, որի մեջ ամուր սեղմել էր որդու պատասխանը, և ամբողջ ձեռքը ծանրացել էր կարծես ուսին հասցրած հարվածից։ Տանը տոմսը Նիկոլայի ձեռքը կոխելով՝ կանգնեց նրա առաջ և սպասելով, թե երբ է հարթելու պիղծ ճմլված թղթիկը, նորից հույսի թրթիռ զգաց։ Բայց Նիկոլայն ասաց.

— Իհարկե՞։ Ա՛յ թե ինչ է գրում նա. «Մենք չենք փախչի, ընկերնե՛ր, չենք կարող։ Մեզանից ոչ մեկը։ Կկորցնեինք դեպի ինքներս տածած հարգանքը։ Ուշադրությո՛ւն դարձրեք նորերս ձերբակալված գյուղացու վրա։ Նա արժանի է ձեր հոգատարությանը, արժե որ ուժեր վատնեք։ Նրա համար այստեղ չափազանց դժվար է։ Ամեն օր ընդհարվում է իշխանության հետ։ Արդեն մեկ օր կարցեր է նստել։ Նրան տանջամահ կանեն։ Մենք բոլորս խնդրում ենք նրա համար։ Մխիթարեցե՛ք, գուրգուրեցե՛ք մորս։ Նրան բացատրեցե՛ք, նա ամեն ինչ կհասկանա»։

Մայրը գլուխը բարձրացրեց և կամաց, ցնցվող ձայնով ասաց.

— Էլ ի՞նչ բացատրել ինձ։ Ես հասկանում եմ։

Նիկոլայն արագ մի կողմ դարձավ, թաշկինակը հանեց, բարձրաձայն մաքրեց քիթը, թոնթորաց.

— Հարբուխ եմ ստացել...

Ապա աչքերը ձեռներով ծածկելով, ակնոցն ուղղելու համար, և սենյակում անց ու դարձ անելով ասաց.

— Գիտե՞ք, մենք չէինք հասնի, միևնույնն է...

— Ոչի՞նչ, թո՛ղ դատեն,— ասում էր մայրը հոնքերը կիտելով, իսկ կուրծքը լցվում էր խռնավ, մշուշապատ թախիծով։

— Ա՛յ, ես նամակ ստացա ընկերոջից, Պետերբուրգից...

— Չէ՞ որ նա Սիբիրից էլ կարող է փախչել... կարո՞ղ է։

— Իհարկե՞։ Ընկերս գրում է՝ գործը շուտով կնշանակեն, վճիռը հայտնի է՝ բոլորին աքսոր։ Տեսնո՞ւմ եք։ Այն չնչին սրի-

կաներն իրենց դատն ամենագռեհիկ կատակերգության են վերածում։ Հասկանո՞ւմ եք, դատավճիռը կայացված է Պետերբուրգում, դատից առաջ...

— Թողե՛ք այդ, Նիկոլա՛յ Իվանովիչ,— վճռականորեն ասաց մայրը։— Ինձ մխիթարելու կարիք չկա, պետք չի բացատրել։ Պաշան վատ բան չի անի, զուր տեղը ոչ իրեն, ոչ ուրիշին չի տանջի։ Եվ նա ինձ սիրում է, այո՛։ Տեսնում եք, իմ մասին է մտածում։ Բացատրեցե՛ք, գրում է, մխիթարեցե՛ք...

Նրա սիրտն արագ էր խփում, գլուխը պտտվում էր վրդովմունքից։

— Ձեր որդին հիանալի՜ մարդ է,— գոչեց Նիկոլայն իրեն ոչ հատուկ բարձր ձայնով։— Ես նրան շա՛տ եմ հարգում։

— Ա՛յ թե ինչ, ավելի լավ է՝ եկեք Ռիբինի մասին մտածենք,— առաջարկեց մայրը։

Նա ուզում էր որևէ բան անել հենց իսկույն, գնալ որևէ տեղ, ճանապարհ գնալ հոգնելու աստիճանի։

— Հա՛, լա՛վ,— պատասխանեց Նիկոլայը սենյակում անց ու դարձ անելով։— Լավ կլիներ՝ Սաշենկային...

— Նա կգա։ Նա միշտ գալիս է այն օրը, երբ ես Պաշային տեսնում եմ...

Գլուխը կախելով մտախոհ, կծելով շրթունքները և մորուքը ոլորելով Նիկոլայը նստեց բազմոցին, մոր կողքին։

— Ափսոս քույրս այստեղ չի...

— Լավ է դա կազմակերպել հիմա, քանի դեռ Պաշան այնտեղ է,— նրան հաճելի կլինի,— ասում էր մայրը։

Լռեցին, և հանկարծ մայրն ասաց դանդաղ և կամաց.

— Չեմ հասկանում, ինչո՛ւ չի ուզում նա...

Նիկոլայը ոտքի թռավ, բայց զանգը հնչեց։ Նրանք իսկույն իրար նայեցին։

— Դա Սաշան է, հա՜,— կամաց ասաց Նիկոլայը։

— Նրան ի՞նչ ասել,— նույնպես կամաց հարցրեց մայրը։

— Հա՜-ա՜, գիտեք...

— Նա մեղքս շատ է գալիս...

Զանգը կրկնվեց պակաս բարձրաձայն, կասես դռան հետևը գտնվող մարդն էլ սիրտ չէր անում։ Նիկոլայն ու մայրը վեր կացան և միասին գնացին, բայց խոհանոցի դռան մոտ Նիկոլայը մի կողմ թեքվեց ասելով.

— Ավելի լավ է դուք...

— Համաձայն չի՞,— հաստատապես հարցրեց աղջիկը, երբ մայրը դուռը բաց արեց։

— Ոչ։

— Ես այդ գիտեի՜,— ուղղակի ասաց Սաշան, բայց դեմքը գունատվեց։ Նա բաց արեց վերարկուի կոճակները և երկուսը նորից կոճկելով՝ փորձեց հանել։ Դա նրան չհաջողվեց։ Այդ ժամանակ նա ասաց.

— Անձրև է ու քամի, զզվելի՜ է։ Առո՞ղջ է։

— Այո։

— Առողջ է և ուրախ,— ցածրաձայն ասաց Սաշան իր ձեռքը տնտղելով։

— Գրում է, թե պետք է Ռիբինին ազատել,— հաղորդեց մայրն առանց աղջկա վրա նայելու։

— Հա՞։ Ինձ թվում է, թե պետք է օգտագործենք այն ծրագիրը,— դանդաղ արտասանեց աղջիկը։

— Ես էլ եմ այդպես կարծում,— ասաց Նիկոլայը շեմքում երևալով։— Բարև՛ ձեզ, Սա՛շա։

Ձեռքը մեկնելով աղջիկը հարցրեց.

— Էլ ի՞նչ կա։ Բոլորը համաձա՞յն են, որ ծրագիրն հաջող է...

— Իսկ ո՞վ է կազմակերպում։ Բոլորն զբաղված են...

— Տվեք ի՜նձ,— արագ ասաց Սաշան ոտքի կանգնելով։— Ես ժամանակ ունեմ։

— Վերցրե՛ք։ Բայց պետք է հարցնել մյուսներին...

— Լա՛վ, ես կհարցնեմ։ Ես հենց հիմա էլ կգնամ։

Եվ նորից սկսեց վերարկուի կոճակները կոճկել բարակ մատների վստահ շարժումներով։

— Կհանգստանայի՜ք,— առաջարկեց մայրը։

Սաշան կամաց ժպտաց և ձայնը մեղմացնելով պատասխանեց.

— Մի՛ անհանգստանաք, ես չեմ հոգնել...

Եվ նրանց ձեռքերը սեղմելով՝ հեռացավ նորից սառն ու խիստ։

Մայրն ու Նիկոլայը պատուհանին մոտենալով նայում էին, թե աղջիկն ինչպես անցավ բակով և անհետացավ դարպասի հետևում։ Նիկոլայը կամաց սուլեց, նստեց սեղանի առաջ և սկսեց ինչ-որ բան գրել։

— Այս գործով կզբաղվի աղջիկը և սիրտը կթեթևանա,— ասաց մայրը մտախոհ ու կամաց։

— Այո, իհարկե՞,— արձագանքեց Նիկոլայը և դեպի մայրը դառնալով, ժպիտը բարի դեմքին հարցրեց.— իսկ ձեզ համար, Նի՛լովնա, այս բաժակն անցե՞լ է, դուք սիրած մարդու կարոտով չե՞ք տանջվել։

— Է՛,— բացականչեց մայրը ձեռքը թափ տալով։— Ի՞նչ կարոտ։ Վախենում էի, որ չլինի՞ թե սրա կամ նրա հետ ինձ ամուսնացնեն։

— Եվ ոչ ոք դուր չէ՞ր գալիս։

Մայրը քիչ մտածեց և պատասխանեց.

— Չեմ հիշում, թանկագինս։ Ինչպե՞ս կլիներ, որ ոչ ոք դուր չգար... Երևի մեկնումեկը դուր էր գալիս, միայն թե չեմ հիշում՝ ով։

Մայրը նայեց Նիկոլային և պարզապես, խաղաղ թախծով ավարտեց.

— Մարդս ինձ շատ էր ծեծում, նրանից առաջ ինչ որ եղել է բոլորը մտքիցս գնացել է։

Նիկոլայը դարձավ դեպի սեղանը, իսկ մայրը մի բոպեով դուրս եկավ սենյակից և երբ վերադարձավ, Նիկոլայը սիրալիր նայելով նրան, սկսեց խոսել՝ բառերով մեղմ և սիրով շոյելով իր հիշողությունները։

— Ինձ հետ ևս, գիտեք, Սաշայի պատմության նման մի դեպք է պատահել։ Սիրում էի մի աղջկա, նա զարմանալի մարդ էր, հրաշալի։ Քսան տարեկան էի հանդիպեցի նրան և այն ժամանակվանից սիրում եմ, հենց հիմա էլ եմ սիրում՝ ճիշտն ասած։ Սիրում եմ էլի առաջվա նման, ամբողջ հոգով, երախտագիտորեն և առմիշտ...

Նրա կողքին կանգնած՝ մայրը տեսնում էր նրա ջերմ և պայծառ լուսավորված աչքերը։ Ձեռքերն աթոռի թիկունքին դրած, իսկ նրանց վրա իր գլուխը, Նիկոլայը նայում էր հեռու, մի ինչ-որ տեղ, և նրա ամբողջ նիհար ու բարակ, բայց ուժեղ մարմինը թվում էր թե ձգտում է դեպի առաջ, ինչպես բույսի ցողունը դեպի արևի լույսը։

— Է՛, ամուսնանայիք լավ կլիներ,— խորհուրդ տվեց մայրը։

— Օ՜, արդեն հինգ տարի է՝, որ ամուսնացած է։

— Իսկ առա՞ջ ինչու չամուսնացաք։

Քիչ մտածելով Նիկոլայը պատասխանեց.

— Գիտե՞ք ինչ, գլուխս չէր գալիս. երբ ես բանտումն էի լինում, նա ազատ էր լինում, երբ ես էի ազատ լինում, նա էր բանտում կամ աքսորում լինում։ Դա շատ նման էր Սաշայի վիճակին, ճշմարիտ։ Վերջապես այդ կնոջը տասը տարով Սիբիր աքսորեցին, սարսափելի հեռու։ Ես նույնիսկ ուզեցի նրա հետևից գնալ։ Բայց ամաչեցինք թե՛ նա, թե՛ ես։ Եվ այնտեղ նա հանդիպեց մի ուրիշ մարդու, իմ ընկերն է, մի շա՛տ լավ տղա։ Հետո նրանք միասին փախան, այժմ ապրում են արտասահմանում, այո...

Նիկոլայը խոսքը վերջացրեց, հանեց ակնոցը, սրբեց, ապակիները պահեց լույսի դեմ, նայեց և սկսեց նորից սրբել։

— Է՛, սիրելի՛ս,— գլուխն օրորելով սիրալիր բացականչեց մայրը։ Նա խղճում էր Նիկոլային, և միևնույն ժամանակ իր մեջ մի բան ստիպում էր ժպտալ նրան ջերմ, մայրական ժպիտով։ Իսկ Նիկոլայը դիրքը փոխեց, նորից ձեռքն առավ գրիչը և սկսեց խոսել, ձեռքի թափահարումով նշելով իր խոսքի ռիթմը։

— Ընտանեկան կյանքը նվազեցնում է ռևոլյուցիոների եռանդը, մի՞շտ նվազեցնում է։ Երեխանե՞րը, անապահովությո՞ւնը, հացի համար շատ աշխատելու անհրաժեշտությո՞ւնը։ Իսկ ռևոլյուցիոները պետք է իր եռանդը զարգացնի անդադար, ավելի ու ավելի խոր ու լայն։ Դա է պահանջում ժամանակը, մենք պետք է գնանք միշտ ամենքից առաջ, որովհետև մենք, պատմության ուժով կոչված, հին աշխարհը խորտակելու, նոր կյանք ստեղծելու բանվորներ ենք։ Իսկ եթե մենք ետ ենք մնում հոգնածության ենթարկվելով և փոքրիկ նվաճումի մոտակա հնարավորությամբ հրապուրվելով, դա վա՛տ է, դա գրեթե գործի դավաճանություն է։ Չկա մեկը, որի հետ մենք կարողանայինք գնալ կողք կողքի, առանց աղավաղելու մեր հավատը, և մենք երբեք չպիտի մոռանանք, որ մեր նպատակը մանր նվաճումները չեն, այլ միայն լիակատար հաղթանակը։

Նրա ձայնն առնականացավ, դեմքը գունատվեց և աչքերում վառվեց սովորական զուսպ և հավասարակշիռ ուժը։ Նորից բարձրաձայն զանգահարեցին, Նիկոլայի խոսքը բառի կիսում ընդհատելով,— այդ Լյուդմիլան էր եկավ, այդ եղանակի համար բարակ վերարկուով, ցրտից կարմրած այտերով։ Հանելով պատառոտված կրկնակոշիկները, նա բարկացած ձայնով ասաց.

— Դատը նշանակված է, մի շաբաթից։

— Դա ճի՞շտ է,— գոչեց Նիկոլայը սենյակից։

Մայրն արագ գնաց Նիկոլայի մոտ, չհասկանալով երկյո՞ւղն է հուզում իրեն, թե՞ ուրախությունը։ Լյուդմիլան նրա հետ կողք-կողքի քայլելով՝ հեգնորեն ասում էր իր ցածր ձայնով.

— Ճի՛շտ է։ Դատարանում բացեիբաց ասում են, թե դատավճիռն արդեն պատրաստ է։ Բայց դա ի՞նչ բան է։ Կառավարությունը վախենո՞ւմ է, որ իր աստիճանավորները մեզմ վերաբերվեն իր թշնամիների հետ։ Այդպես երկար ժամանակ, այդքան փութաջանորեն իր ծառաներին այլասերելով՝ նա դեռ էլի վստահ չէ՞, որ նրանք պատրաստ են ստոր մարդիկ լինելու...

Լյուդմիլան նստեց բազմոցին, նիհար այտերը ձեռքի ափերով տրորելով. նրա անփայլ աչքերում վառվում էր արհամարհանքը, նրա ձայնն ավելի էր ցասումով լցվում։

— Դուք զուր եք խոսում, Լյուդմի՛լա,— հանգստացնելով նրան ասաց Նիկոլայը։— Չէ՞ որ նրանք ձեզ չեն լսում...

Մայրն ուշադրությամբ ունկնդրում էր Լյուդմիլայի խոսքերը՝ բայց ոչինչ չէր հասկանում, ինքն իրեն ակամա կրկնելով միևնույն բառերը.

«Դատ է, մի շաբաթից դա՞տ է»։

Հանկարծ նրան թվաց, թե իրեն մոտենում է ինչ-որ անողոք, անտանելի դաժան մի բան։

XXIII

Այսպես, վարանմունքի ու վհատության այդ թուխպի մեջ, թախծալի սպասումների ծանրության տակ մայրը լուռումունջ ապրեց երկու օր, իսկ երրորդ օրը եկավ Սաշան և Նիկոլային ասաց.

— Ամեն ինչ պատրա՞ստ է։ Այսօր ժամը մեկին...

— Արդեն պատրա՞ստ է,— զարմացավ Նիկոլայը։

— Այո, ի՞նչ կար որ։ Ինձ միայն հարկավոր էր Ռիբինի համար տեղ և զգեստ ճարել, բոլոր մնացածն իր վրա էր վերցրել Գոբունը։ Ռիբինին հարկ կլինի միայն մի թաղ անցնել։ Փողոցում նրան կդիմավորի Վեսովշչիկովը, անշուշտ գրիմավորված, վերարկուն կգցի վրան, գլխարկ կտա և ճանապարհ ցույց կտա։ Ես նրան կսպասեմ, զգեստը կփոխեմ և կտանեմ։

— Վատ չի՞։ Իսկ ո՞վ է այդ Գոբունը,—հարցրեց Նիկոլայը։

— Դուք նրան տեսել եք. նրա բնակարանում դուք պարապել եք փականագործների հետ։

— Հա՞, հիշում եմ։ Քիչ տարօրինակ մի մարդ է...

— Նա նախկին զինվոր է, տանիքագործ։ Քի՛չ զարգացած մարդ է, լի անսպառ ատելությամբ դեպի ամեն մի բռնություն... Մի քիչ փիլիսոփա է,— մտախոհ ասում էր Սաշան պատուհանից նայելով։ Մայրը լուռ ականջ էր դնում նրան, և մի ինչ-որ անորոշ բան էր հասունանում նրա մեջ։

— Գոբունն ուզում է ազատել իր քրոջ որդուն, հիշո՞ւմ եք, ձեզ դուր էր գալիս Եվչենկոն, այնպիսի մի պճնամոլ ու մաքրասերն էր։

Նիկոլայը գլխով արեց։

— Նա ամեն բան լավ է սարքել,— շարունակեց Սաշան,— բայց ես սկսում եմ կասկածել, թե կհաջողվի։ Զբոսանքն ընդհանուր է. ես կարծում եմ, որ երբ բանտարկյալները սանդուղքը տեսնեն, շատերը կուզենան փախչել...

Նա աչքերը փակելով լռեց, մայրն ավելի մոտեցավ նրան.

— Եվ իրար կխանգարեն...

Նրանք երեքն էլ կանգնած էին պատուհանի առջև, մայրը՝ Նիկոլայի և Սաշայի հետևում։ Նրանց արագ խոսակցությունը մոր սրտում մի աղոտ զգացմունք էր զարթեցնում։

— Ես կգնամ այնտեղ,—հանկարծ ասաց նա։

— Ինչո՞ւ,— հարցրեց Սաշան։

— Մի՛ գնացեք, սիրելիս։ Հանկարծ փորձանքի մեջ կընկնեք։ Հարկավոր չի,— խորհուրդ տվեց Նիկոլայը։

Մայրը նայեց նրան և կամաց, բայց ավելի համառորեն կրկնեց.

— Ո՛չ, ես կգնամ։

Նրանք արագ իրար նայեցին։ Սաշան ուսերը թոթվելով ասաց.

— Դա հասկանալի է...

Դեպի մայրը դառնալով՝ բռնեց նրա թևից, թեքվեց դեպի նա և պարզ ու մոր սրտին մոտ ձայնով ասաց.

— Այնուամենայնիվ ես ձեզ պիտի ասեմ, որ դուք զուր եք սպասում...

— Սիրելի՛ս,— բացականչեց մայրը դողդոջուն ձեռքով նրան սեղմելով իրեն։— Ինձ էլ տարեք,— չե՛մ խանգարի։ Ինձ հարկավոր է։ Ես չեմ հավատում, թե կարելի բան է դա, փախչե՛լը։

— Թո՛ղ գա,— ասաց աղջիկը Նիկոլային։

— Դա ձե՛ր գործն է,— պատասխանեց Նիկոլայը գլուխը թեքելով։

— Մեզ միասին լինել չի կարելի։ Դուք գնացեք դաշտը, դեպի բանջարանոցները։ Այնտեղից բանտի պատը երևում է։ Իսկ եթե ձեզ հարցնեն, թե այդտեղ ի՞նչ եք անո՞ւմ։

Ուրախացած՝ մայրը վստահորեն ասաց.

— Ասելու բան կգտնե՞մ...

— Մի՛ մոռացեք, որ բանտի վերակացուները ձեզ ճանաչում են,— ասաց Սաշան։— Եվ եթե նրանք ձեզ այնտեղ տեսնեն...

— Չե՞ն տեսնի,— բացականչեց մայրը։

Նրա կրծքում հանկարծ հիվանդագին պայծառությամբ ոնկվեց ամբողջ ժամանակ աննկատելիորեն մխացող հույսը և կենդանացրեց նրան...

«Գուցե նա՛ էլ...»— մտածում էր մայրը՝ շտապ հագնվելով։

Մի ժամ հետո նա դաշտումն էր, բանտի հետևում։ Սուր քամին թռչում էր նրա շուրջը, զգեստն ուռցնում, զարկվում սառած գետնին, օրորում այն բանջարանոցի հնացած ցանկապատը, որի մոտով անցնում էր մայրը, և թափով խփում բանտի ոչ բարձր պատին։ Քամին գլորվելով պատի հետևը, բակից ավլում էր ինչ-որ աղաղակներ, ցրիվ տալիս օդի մեջ, երկինք տանում։ Այնտեղ արագ վազում էին ամպերը՝ փոքրիկ անցքեր բանալով դեպի կապույտ բարձունքը։

Մոր հետևում բանջարանոցն էր, առջևում գերեզմանատունը, իսկ աջ կողմը տասը սաժենաչափ հեռավորության վրա բանտը։ Գերեզմանատան մոտ մի զինվոր սանձից բռնած, իր շուրջը պտտեցնելով քշում էր մի ձի, իսկ մի ուրիշ զինվոր նրա կողքին կանգնած՝ ոտները բարձրաձայն դոփում էր գետին, աղաղակում, սուլում ու ծիծաղում։ Բանտի մոտ էլ մարդ չէր երևում։

Մայրը նրանց մոտով դանդաղորեն, անցավ դեպի գերեզմանատան ցանկապատը, խեթ-խեթ աջ ու ձախ նայելով։ Եվ հանկարծ զգաց, որ ոտները դողացին, ծանրացան, կարծես սառած կպան գետնին, բանտի անկյունից շտապ, ինչպես միշտ լապտերավառներն են ման գալիս, դուրս եկավ մի կորաքամակ մարդ սանդուղքն ուսին։ Մայրն աչքերը վախեցած թարթելով արագ նայեց զինվորներին, նրանք միևնույն տեղում ոտքերը գետնին էին դոփում, իսկ ձին վազում էր նրանց շուրջը։ Մայրը նայեց սանդուղքը տանող մարդուն, նա արդեն սանդուղքը դրել էր պատին և բարձրանում էր առանց շտապելու։ Դեպի բակը ձեռքով անելով՝ արագ ցած իջավ, չքացավ անկյան հետևում։

Մոր սիրտը զարկում էր հապճեպ, վայրկյաններն անցնում էին դանդաղ։ Բանտի սև պատի վրա, որ ծածկված էր ցեխի բծերով և թափված ծեփի տակից երևում էին աղյուսները, հազիվ նկատվում էին սանդուղքի գծերը։ Հանկարծ պատի վրա երևաց մի սև գլուխ, բուսավ մի մարմին, անցավ պատի վրայով, պատից սահեց ցած։ Երևաց մի այլ կերպարանք բրդոտ գդակով, գետնին գլորվեց մի սև գունդ և արագ անհետացավ անկյունի հետևում։ Միխայլոն շտկվեց, շուրջը նայեց, թափահարեց գլուխը...

— Վազի՛ր, փախի՛ր,— շշնջում էր մայրը, ոտը դոփելով։

Մոր ականջները ուժեղ ձայն էին տալիս, լսվում էին բարձր աղաղակներ, ահա պատի վրա երևաց մի երրորդ գլուխ։ Մայրը ձեռներով կուրծքը բռնած՝ նայում էր նվաղելով։ Բաց գույնի մազերով, մի անմորուք գլուխ վեր ձգվեց, կարծես ուզում էր մարմնից անջատվել, և հանկարծ անհետացավ պատի հետևում։ Ավելի ու ավելի բարձր, կատաղի էին աղաղակում, քամին օդի մեջ տարածում էր սուլիչների բարակ շվոցները։ Միխայլոն գնում էր պատի երկարությամբ, ահա արդեն անցավ, անցավ բանտի և քաղաքի տների միջև եղած բաց տարածությունը։ Մորը թվում էր, թե նա չափազանց դանդաղ է գնում և զուր է գլուխն այնքան բարձրացրել, ով որ նայի նրա դեմքին, հավիտյան միտը կպահի։ Մայրը շշնջում էր.

— Շուտ... շուտ...

Բանտի պատի հետևում մի բան չոր շրխկաց, լսվեց կոտրվող ապակու բարակ զրնգոց։ Զինվորներից մեկը ոտքերը գետնին դեմ տված՝ դեպի իրեն էր քաշում ձին, մյուսը՝ բռունցքը բերանին դրած ինչ-որ բան էր գոռում բանտի ուղղությամբ և գոռալով գլուխը դարձնում կողքի, դեպի բանտի կողմը, ականջը դեմ անելով։

Լարվելով՝ մայրը վիզը պտտում էր ամեն կողմ, նրա աչքերն ամեն ինչ տեսնելով ոչնչի չէին հավատում, չափազանց հեշտ և արագ կատարվեց այն, ինչ նա պատկերացնում էր սարսափելի և բարդ, և այդ արագությունը նրան շշմեցնելով՝ գիտակցությունը թմրեցնում էր։ Փողոցում արդեն չէր երևում Ռիբինը, անցնում էր մի ինչ-որ բարձրահասակ մարդ երկար վերարկուով, վազում էր մի փոքրիկ աղջիկ։ Բանտի անկյունից դուրս թռան երեք վերակացու, նրանք վազում էին իրար շատ մոտ և երեքն էլ աջ ձեռքերն առաջ էին մեկնել։ Զինվորներից մեկը նրանց դեմ նետվեց, մյուսը վազում էր ձիու շուրջը, աշխատելով վրան

ցատկել, բայց ձին չէր հպատակվում, ցատկոտում էր և շուրջն ամեն ինչ ցատկոտում էր նրա հետ միասին։ Անընդհատ, հնչյուններից շնչասպառ, սուլիչներն օդն էին կտրատում։ Նրանց անհանգիստ, հուսահատ աղաղակները մոր մեջ վտանգի գիտակցություն զարթեցրին. ցնցվելով՝ նա սկսեց գնալ գերեզմանատան ցանկապատի երկարությամբ, հետևելով վերակացուներին, բայց նրանք և զինվորները վազեցին բանտի մյուս անկյունի հետևը և անհայտացան։ Նրանց հետևից նույն կողմը վազեց մորը ծանոթ բանտի տեսուչի օգնականը, կոճակները բաց համազգեստով։ Ինչ-որ տեղից ոստիկաններ դուրս եկան, ժողովուրդը վազելով հավաքվում էր։

Քամին պտտվում էր, դեսուդեն նետվում, կարծես ուրախանում էր մի բանի համար, և մոր ականջին էր հասցնում պատառոտված շփոթ աղաղակներ, սուլոց... Այդ խառնիճաղանջությունն ուրախացնում էր մորը, նա սկսեց ավելի արագ քայլել, մտածելով.

«Նշանակում է՝ նա էլ կարո՞ղ էր»։

Հանկարծ ցանկապատի անկյունից նրա դիմաց դուրս պրծան երկու ոստիկան։

— Կանգնի՛ր,— գոչեց մեկը ծանր հևալով։— Մի մորուքավոր մարդ չտեսա՞ր։

Մայրը ձեռքով ցույց տվեց բանջարանոցները և հանգիստ պատասխանեց.

— Այն կողմը փախավ, ի՞նչ կա։

— Նգո՛րով, սուլի՛ր։

Մայրը տուն գնաց։ Նա ինչ-որ բան էր ափսոսում, սրտին մի դաղջ, վիրավորական բան էր ծանրացած։ Երբ նա դաշտից փողոց էր մտնում, նրա ճանապարհը կտրեց մի կառք։ Գլուխը բարձրացնելով նա կառքում տեսավ բաց գույնի ընչացքներով և դժգույն, հոգնած դեմքով մի երիտասարդ։ Նա էլ էր նայում մորը։ Նա թեք էր նստած, և երևի դրանից էր, որ նրա աջ ուսը ձախից բարձր էր թվում։

Նիկոլայը նրան ուրախ-ուրախ դիմավորեց։

— Հը, ի՞նչ եղավ։

— Կարծես հաջողվեց...

Աշխատելով հիշողության մեջ վերականգնել բոլոր մանրամասնությունները, մայրն սկսեց պատմել փախուստի մասին

և այնպես էր խոսում, որ կարծես հաղորդում էր մի ուրիշի պատմածը, կասկածելով ճշտությանը։

— Մեր բոսխտը բերո՞ւմ է,— ասաց Նիկոլայը ձեռքերը շփելով։— Բայց ես ինչպե՞ս էի վախենում ձեզ համար։ Սատանան գիտե, թե ինչպե՞ս։ Գիտե՞ք, Նի՛լովնա, ընդունեցե՛ք իմ բարեկամական խորհուրդը, դատից մի՛ վախեցեք։ Որքան շուտ լինի դատը, այնքան կմոտենա Պավելի ազատությունը, հավատացե՛ք։ Գուցե նա ճանապարհի՛ց կփախչի։ Իսկ դատը, դա մոտավորապես այսպիսի բան է...

Նա սկսեց նկարագրել մորը դատարանի նիստի պատկերը, մայրը լսում և հասկանում էր, որ Նիկոլայը մի բանից վախենում է, ուզում է իրեն՝ մորը քաջալերել։

— Գուցե դուք կարծում եք, ես այնտեղ դատավորներին որևէ բա՞ն կասեմ,— հանկարծ հարցրեց մայրը։— Որևէ բա՞ն կխնդրեմ։

Նիկոլայը տեղից ցատկեց, ձեռները թափահարեց դեպի մայրը և վիրավորված գոչեց.

— Ի՞նչ եք ասում։

— Ես վախենում եմ, ճի՛շտ է։ Ինչից եմ վախենում, չգիտե՛մ...— ընդհատեց մայրը հայացքը սենյակում շրջեցնելով...

— Երբեմն թվում է, թե նրանք կսկսեն Պաշային վիրավորել, ծաղրուծանակի ենթարկել նրան։ Ա՛խ դու, մուժի՛կ, կասեն, մուժիկի տղա՛։ Ի՞նչ ես սարքել։ Իսկ Պաշան հպարտ է, նա այնպիսի՛ պատասխան կտա նրանց որ։ Կամ Անդրեյը ձեռք կառնի նրանց։ Նրանք բոլորն էլ տաքարյուն են։ Մեկ էլ մտքովանցնում է, թե հանկարծ չհամբերի... Եվ այնպե՛ս կդատապարտեն, որ էլ երբեք երեսը չես տեսնի։

Նիկոլայը մռայլ լռեց՝ մորուքը ձգելով։

— Այս մտքերը գլխից հանել չեմ կարողանում,— կամաց ասաց մայրը։— Սարսափելի բան է դա, այդ դատը, հենց որ սկսեն ամեն բան քննել ու կշռադատել։ Շա՛տ սարսափելի է։ Ոչ թե պատիժն է սարսափելի, այլ դատը։ Ես չեմ կարողանում ասել այդ բանը...

Մայրն զգում էր, որ Նիկոլայն իրեն չի հասկանում, և դա ավելի էր դժվարացնում իր երկյուղի մասին պատմելու ցանկությունը։

XXIV

Այդ երկյուղը բորբոսի պես, որը ծանր խոնավությամբ դժվարացնում է շնչառությունը, աճեց մոր կրծքում, և երբ դատի օրը հասավ, նա իր հետ նիստի դահլիճը մտցրեց մի ծանր, սև բեռ, որը կորացրել էր նրա մեջքն ու պարանոցը։

Փողոցում մորը բարևում էին ավանի ծանոթները, նա լուռ գլուխ էր տալիս, մռայլ ամբոխի միջով առաջ գնալով։ Դատարանի միջանցքներում և դահլիճներում նրան հանդիպեցին մեղադրյալների ազգականները և նույնպես ինչ-որ բան էին խոսում զսպված ձայնով։ Բառերը մորն անկարևոր բան էին թվում, նա չէր հասկանում դրանք։ Բոլոր մարդիկ համակված էին միևնույն տխուր զգացումով, դա հաղորդվում էր մորը և է՛լ ավելի ճնշում նրան։

— Նստիր կողքի՛ս,— ասաց Սիզովը երկայն նստարանի վրա մի կողմ քաշվելով։

Մայրը հլու նստեց, զգեստը շտկեց, նայեց շուրջը։ Նրա աչքերի առջևից ի մի ձուլված անցան ինչ-որ կանաչ ու մորեգույն շերտեր, բծեր, փայլփլեցին բարակ, դեղին թելեր։

— Որդիդ կորցրե՞ց մեր Գրիշային,— կամաց ասաց մոր կողքին նստած մի կին։

— Լռի՛ր, Նատա՛լյա,— մռայլ պատասխանեց Սիզովը։

Մայրը նայեց այդ կնոջը, դա Սամոյլովան էր, որից այն կողմը նստած էր նրա ամուսինը, ճաղատ, կարմրաշեկ լայն մորուքով մի վայելչատես մարդ։ Նրա դեմքը ոսկրոտ էր, աչքերը կկոցած առաջ էր նայում, և նրա մորուքը դողդողում էր։

Բարձր պատուհաններից պղտոր լույսը հավասարապես լցվում էր դահլիճ, դրսից ապակիների վրա սահում էր ձյունը։ Պատուհանների արանքում կախված էր ցարի մեծադիր նկարը՝ հաստ, խիստ փայլող ոսկեզօծ շրջանակի մեջ, պատուհանների ծանր, մորեգույն վարագույրները կողքերից ծածկում էին շրջանակը ուղղաձիգ ծալքերով։ Նկարի առաջ գրեթե դահլիճի ամբողջ լայնությամբ դրված էր մի սեղան, կանաչ մահուդով ծածկված. աջ կողմը, պատի մոտ, ճաղերի հետևը դրված էին երկու փայտե նստարան, ձախ կողմը՝ երկու շարք մորեգույն բազկաթոռներ։ Դահլիճում անաղմուկ վազվզում էին կանաչագույն օձիքներով, կրծքերին ու փորերին ոսկե կոճակներով ծառայողներ։ Պղտոր օդում վախվխելով թափառում էր մի մեղմ շշուկ, տարածվում

էր դեղատան խառը հոտ։ Այդ բոլորը՝ ծաղիկները, փայլերը, հնչյուններն ու հոտերը ճնշում էին մարդու աչքերը, շնչառության հետ խուժվում էին կրծքի տակ և ամայացած սիրտը լցնում թախծալի երկյուղի անշարժ, խայտաբղետ պղտորությամբ։

Հանկարծ մարդկանցից մեկը բարձրաձայն ինչ-որ բան ասաց, մայրը ցնցվեց, բոլորը կանգնեցին, նա էլ տեղից բարձրացավ Սիզովի ձեռքը բռնելով։

Դահլիճի ձախ անկյունում մի բարձր դուռ բացվեց, օրորվելով դուրս եկավ ակնոցավոր մի ծերուկ։ Նրա փոքրիկ, գորշ դեմքի վրա դողդողում էին սպիտակ, ցանցառ այտմորուսները, ածիլված վերին շրթունքը ծռվել էր դեպի բերանը, սուր-սուր այտոսկրերը և կզակը հենված էին համազգեստի բարձր օձիքին, թվում էր, թե օձիքի տակ պարանոց չկա։ Հետևից նրա թևը մտած պահում էր ճենապակեգույն, կարմիր ու կլոր դեմքով, բարձրահասակ մի երիտասարդ, իսկ անմիջապես նրանց հետևից դանդաղորեն շարժվում էին էլի երեք հոգի ոսկեկար համազգեստներով և երեք հոգի՝ քաղաքացիական զգեստով։

Նրանք երկար ժամանակ շարժվում էին սեղանի մոտ, բազմոցներին նստելով, իսկ երբ նստոտեցին, նրանցից մեկը կոճակները բաց համազգեստով, ծույլ, ածիլված դեմքով, սկսեց ինչ-որ բան ասել ծերուկին՝ անձայն և ծանր շարժելով փափուկ շրթունքները։ Ծերունին ականջ էր դնում տարօրինակ կերպով ուղիղ և անշարժ նստած, նրա ակնոցի ապակիների հետևում մայրը տեսնում էր երկու փոքրիկ, անգույն բծեր։

Սեղանի վերջում բարձր ու թեք գրասեղանի մոտ կանգնած էր մի բարձրահասակ, ճաղատ մարդ, հազում էր, թղթերը խշխշացնում։

Ծերուկը դեպի առաջ երերաց, սկսեց խոսել։ Նա առաջին բառը պարզ արտասանեց, իսկ հետևյալները կարծես դես ու դեն էին սռնում նրա բարակ ու գորշ շրթունքների վրա։

— Բացում եմ... ներս բերեք...

— Մտի՛կ արա,— շշնջաց Սիզովը մորը կամաց հրելով և վեր կացավ։

Ճաղերի հետևի պատի մեջ մի դուռ բացվեց, մի զինվոր դուրս եկավ մերկ թուրն ուսին, նրա հետևից երևացին Պավելը, Անդրեյը, Ֆեդյա Մազինը, երկու Գուսևները, Սամոյլովը, Բուկինը, Սոմովը և էլի հինգ երիտասարդ, որոնց անունները մայրը չգիտեր։ Պավելը սիրալիր ժպտում էր։ Անդրեյը նույնպես ատամ-

ները բաց անելով՝ գլուխ էր տալիս. դահլիճը կարծես թե ավելի լուսավորվեց և պարզեց նրանց ժպիտներից, կայտառ դեմքերից և այն շարժումներից, որ նրանք մտցրին լարված, սեթևեթ լռության մեջ։ Համազգեստների վրայի ոսկու առատ փայլն աղոտացավ, ավելի մեղմացավ, մոր սրտին դիպավ, արթնացնելով նրան, աշխույժ վստահության հովը, կենդանի ուժի շունչը։ Եվ մոր հետևի, նստարանների վրա, որտեղ մարդիկ մինչև այդ ճնշված սպասում էին, նույնպես պատասխանող ցածրաձայն դղրդյուն բարձրացավ։

— Ձեն վախենում,— լսեց մայրը Սիզովի շշուկը, իսկ աջ կողմում կամաց փղձկաց Սամոյլովի մայրը։

— Հանգի՛ստ,— լսվեց մի դաժան կանչ։

— Նախազգուշացնում եմ...— ասաց ծերուկը։

Պավելն ու Անդրեյն իրար կողքի նստեցին, նրանց հետ առաջին նստարանի վրա նստեցին Մազինը, Սամոյլովը և Գուսևները։ Անդրեյը մորուքն ածիլել էր. նրա ընչացքներն աճել և ցած էին կախվել՝ նրա կլոր գլուխը նմանեցնելով կատվի գլխի։ Նրա դեմքին մի ինչ-որ բան էր երևան եկել, սուր և կծու, ծաղրական՝ բերանի ծալքերում, մութ՝ աչքերում։ Մազինի վերին շրթունքի վրա սևին էին տալիս երկու շերտիկներ, դեմքն ավելի էր լցվել, Սամոյլովը գանգրահեր էր, ինչպես առաջ, և առաջվա պես լայն ժպտում էր Իվան Գուսևը։

— Է՜հ, Ֆե՛դյա, Ֆե՛դյա,— շշնջում էր Սիզովը գլուխը կախած։

Մայրը լսում էր ծերուկի անորոշ հարցերը,— նա հարցնում էր առանց մեղադրյալներին նայելու, և նրա գլուխն անշարժ ընկած էր համազգեստի օձիքին,— լսում էր որդու հանգիստ, կարճ պատասխանները։ Մորը թվում էր, թե ավագ դատավորը և նրա բոլոր ընկերները չեն կարող չոր, դաժան մարդիկ լինել։ Ուշադրությամբ տնտղելով դատավորների դեմքերը՝ նա, աշխատելով մի ինչ-որ բան գուշակել, կամաց ականջ էր դնում իր կրծքի տակ ծնված նոր հույսի աճումին։

Ճենապակյա մարդն անտարբեր կարդում էր մի թուղթ, նրա հարթ ձայնը դահլիճը լցնում էր ձանձրույթով և նրանով հեղեղված մարդիկ նստած էին անշարժ, կարծես քարացած։ Զորս փաստաբան կամաց, բայց տաք-տաք խոսում էին մեղադրյալների հետ, նրանք ամենքն էլ շարժվում էին ուժգին ու արագ և մեծ, սև թռչուններ էին հիշեցնում։

Ծերուկի մի կողմում բազկաթոռն իր մարմնով լցնում էր մի հաստ, ուռած դատավոր՝ փոքրիկ, ճաչպակալած աչքերով, մյուս կողմում՝ կորամեջք, գունատ դեմքին կարմրաշեկ ընչացքներով մեկը։ Նա գլուխը հոգնած ետ էր գցել աթոռի թիկունքին և աչքերը կիսաբաց մտածում էր ինչ-որ բանի մասին։ Դատախազի դեմքը նույնպես հոգնած էր և տխուր։ Դատավորների հետևում՝ այտը մտախոհ շփելով նստած էին քաղաքագլուխը՝ մի լիքը-լիքը, լրջատես տղամարդ, ապա ազնվականության պարագլուխը՝ ալեզարդ, մեծամորուք և կարմրադեմ մի մարդ, մեծ-մեծ, բարի աչքերով, և վոլոստի ավագը՝ անթև բաճկոնով, ահագին փորով, որն ըստ երևույթին ամաչեցնում էր նրան, նա ամբողջ ժամանակ աշխատում էր ծածկել փորը բաճկոնի փեշով, իսկ փեշը ցած էր սողում։

— Այստեղ չկան հանցագործներ, չկան դատավորներ,— լսվեց Պավելի ուժեղ ձայնը,— այստեղ միայն գերիներ և հաղթողներ են...

Լռություն տիրեց, մի քանի վայրկյան մոր ականջը լսում էր միայն գրչի բարակ, շտապ ճռճռոցը թղթի վրա և իր սրտի խփոցը։

Ավագ դատավորն էլ կարծես ականջ էր դնում մի բանի, սպասում։ Նրա տեղակալները շարժվեցին։ Այդ ժամանակ նա ասաց.

— Հը՛մ-հա՛,— Անդրեյ Նախո՛դկա։ Դուք ճանաչո՞ւմ եք...

Անդրեյը դանդաղ բարձրացավ տեղից, շտկվեց և ընչացքները ձգելով աչքի տակով նայեց ծերուկին։

— Ախր ես ինչի՞ մեջ կարող եմ ինձ հանցավոր ճանաչել,— երգաձայն և ինչպես միշտ առանց շտապելու ասաց խոխոլը ուսերը թոթվելով։— Ես չեմ սպանել, չեմ գողացել, ես ուղղակի համաձայն չեմ կյանքի այնպիսի կարգի հետ, ուր մարդիկ ստիպված են թալանել և սպանել իրար...

— Կա՛րճ պատասխանեցեք,— ճիգ գործադրելով, բայց որոշակի ասաց ծերունին։

Մայրն իր հետևի նստարանների վրա կենդանություն էր զգում, մարդիկ ինչ-որ բանի մասին կամաց շշնջում էին և շարժվում, կարծես իրենց ազատելով ճենապակյա մարդու գորշ խոսքերի սարդոստայնից։

— Լսո՞ւմ ես, ինչպես են պատասխանում,— շշնջաց Սիզովը։

— Ֆյո՛դոր Մազին, պատասխանեցեք...

— Չե՛մ ուզում,— պարզ ասաց Ֆեդյան ոտքի կանգնելով։ Նրա դեմքը լցվեց հուզմունքի կարմրությամբ, աչքերը շողացին, նա, հայտնի չէ թե ինչու, ձեռները հետևը դրեց։

Սիզովը զարմանքից կամաց հառաչեց, մայրն աչքերը չռեց ապշած։

— Ես պաշտպանությունից հրաժարվել եմ, ես ոչինչ չեմ ասելու, ձեր դատը համարում եմ ապօրինի։ Ո՞վ եք դուք։ Արդյոք ժողովուրդը ձեզ իրավունք տվե՞լ է դատելու մեզ։ Ո՛չ, նա չի՛ տվել։ Ես ձեզ չեմ ճանաչում։

Նա նստեց և իր բորբոքված դեմքը թաքցրեց Անդրեյի ուսի հետևում։

Հաստ դատավորը գլուխը թեքեց դեպի ավագը և ինչ-որ բան փսփսաց։ Դատավորը գունատ դեմքով՝ բարձրացրեց արտանունքները, աչքերը թեքեց մեղադրյալների վրա, ձեռքը մեկնեց սեղանին և ընկած թղթի վրա մատիտով խզմզեց։ Վոլոստի ավագը գլուխն օրորեց՝ ոտներն զգուշությամբ տեղափոխելով, փորը դրեց ծնկներին և ձեռներով ծածկեց։ Առանց գլուխը շարժելու՝ ծերուկը մարմինը դարձրեց դեպի կարմրաշեկ դատավորը, անձայն խոսեց նրա հետ, նա լսեց ծերուկին գլուխը կախելով։ Աղնվականների պարագլուխը փսփսում էր դատախազի հետ, քաղաքագլուխն ականջ էր դնում նրանց՝ այտը շփելով։ Նորից հնչեց ավագ դատավորի աղոտ ճառը։

— Ի՞նչպես կպցրե՞ց։ Ուղղակի, բոլորից էլ լա՞վ,— զարմացած շշնջում էր Սիզովը մոր ականջին։

Մայրը վարանած ժպտում էր։ Այն բոլորը, ինչ տեղի էր ունենում, նախ նրան թվում էր ավելորդ և ձանձրալի նախաբան մի ինչ-որ սարսափելի բանի, որը հայտնվելու է և սառը սարսափով ջախջախելու բոլորին։ Բայց Պավելի և Անդրեյի հանգիստ խոսքերն այնպես աներկյուղ և հաստատուն հնչեցին, որ կարծես դրանք ասվել էին ավանի փոքրիկ տնակում, և ոչ թե դատարանի առաջ։ Ֆեդյայի տաքարյուն ելույթը կենդանություն տվեց մորը։ Դահլիճում մի ինչ-որ խիզախություն էր աճում, և մայրն իր հետևում եղած մարդկանց շարժումից գլխի էր ընկնում, որ մենակ ինքը չի զգում այդ։

— Ձեր կարծի՞քը,— ասաց ծերուկը։

Ճաղատավուն դատախազը կանգնեց և մի ձեռքով գրասեղանից բռնելով սկսեց արագ խոսել՝ թվեր բերելով։ Նրա ձայնի մեջ ահարկու բան չէր լսվում։

Բայց միևնույն ժամանակ մի չոր, ծակող փառ ցավեցնում և անհանգստացնում էր մոր սիրտը, նա աղոտ կերպով մի ինչ-որ դեպի ինքը թշնամական բան էր զգում։ Դա չէր սպառնում, չէր աղաղակում, այլ զարգանում էր անտեսանելի, անըմբռնելի կերպով։ Ծուլորեն և բութ նա երերում էր դատավորների շուրջը մի ինչ-որ մի տեղ, կարծես նրանց պատելով անթափանցելի ամպով, որի միջով դրսից ոչ մի բան չէր հասնում նրանց։ Մայրը նայում էր դատավորների վրա, և նրանք բոլորն էլ անհասկանալի էին իր համար։ Նրանք չէին բարկանում Պավելի և Ֆեդյայի վրա, ինչպես մայրն էր սպասում, չէին վիրավորում խոսքերով, բայց այն ամենը, ինչի մասին նրանք հարցնում էին, մորը թվում էր, թե ավելորդ են նրանց համար, նրանք կարծես ակամայից են հարցնում, դժվարությամբ են լսում պատասխանները, ամեն ինչ նախօրոք գիտեն, ոչնչով չեն հետաքրքրվում։

Ահա նրանց առջև մի ժանդարմ է կանգնած և թավ ձայնով ասում է.

— Պավել Վլասովին գլխավոր դրդիչ էին համարում ամենքը...

— Իսկ Նախոդկայի՞ն,— ծուլորեն և կամաց հարցրեց հաստ դատավորը։

— Նրան էլ...

Փաստաբաններից մեկը վեր կացավ ասելով.

— Ես կարո՞ղ եմ։

Ծերուկը հարցնում է մեկին։

— Դուք ոչինչ չունե՞ք։

Բոլոր դատավորները մորն անառողջ մարդիկ էին թվում։ Հիվանդագին հոգնածություն էր երևում նրանց կեցվածքի ու ձայների մեջ, դա երևում էր նրանց դեմքերին՝ այդ հիվանդագին հոգնածությունը և տաղտկացնող, գորշ ձանձրույթը։ Երևի նրանց համար ծանր և անհարմար է այս բոլորը՝ համազգեստները, դահլիճը, ժանդարմները, փաստաբանները, բազկաթոռներում նստելու, հարցնելու և լսելու պարտականությունը։

Նրանց առջև կանգնած է ծանոթ դեղնադեմ սպան և ծանրամեծորեն, խոսքերը ծոր տալով, բարձրաձայն պատմում է Պավելի մասին, Անդրեյի մասին։ Մայրը նրան լսելով ակամա մտածում է.

«Շատ էլ բան չգիտես»։

Եվ նայում էր ճաղերի հետևի մարդկանց, արդեն առանց նրանց համար վախենալու, առանց խղճահարվելու, խղճահարությունը նրանց չէր սազում, նրանք իր մեջ զարթեցնում էին միայն զարմանք և սեր, որ ջերմագին գրկում էր սիրտը. զարմանքը հանգիստ էր, սերը՝ զվարթագին պարզ։ Նրանք՝ երիտասարդ, ա՛ռրակազմ, նստած էին պատի տակ մի կողմ, գրեթե չէին խառնվում վկաների և դատավորների միօրինակ խոսակցությանը, դատախազի հետ փաստաբանների ունեցած վեճերին։ Երբեմն որևէ մեկն արհամարհանքով քմծիծաղում էր, ինչ-որ բան էր ասում ընկերներին, նրանց դեմքերով էլ էր ծաղրական ժպիտ անցնում։ Անդրեյն ու Պավելը գրեթե ամբողջ ժամանակ կամաց զրուցում էին պաշտպաններից մեկի հետ, մայրը նրան նախընթաց օրն էր տեսել Նիկոլայի մոտ։ Նրանց զրույցին ականջ էր դնում Մազինը, որ մյուսներից ավելի աշխույժ և ժիր էր. Սամոյլովը երբեմն ինչ-որ բան էր ասում Իվան Գուսևին, և մայրը տեսնում էր, որ ամեն անգամ Իվանն աննկատելիորեն արմունկով ընկերոջը հրելով՝ հազիվ է զսպում ծիծաղը, նրա դեմքը կարմրում է, այտերն ուռչում են, նա գլուխը կախում է։ Մի երկու անգամ նա արդեն փոթկացրեց, իսկ դրանից հետո մի քանի րոպե նստած էր շրթունքները կախ, աշխատելով ավելի լուրջ լինել։ Եվ յուրաքանչյուրի մեջ այսպես թե այնպես խաղում էր երիտասարդությունը, հեշտությամբ հաղթահարելով նրա աշխույժ հուզմունքը զսպելու ճիգերը։

Սիզովը թեթևակի կպավ մոր արմունկին, մայրը դարձավ դեպի նա, Սիզովի դեմքը գոհ էր և մի քիչ մտահոգ։ Նա շշնջաց.

— Մտի՛կ արա, մի տես, թե ի՞նչպես են ամրապնդվել մոր ծիծ կերածները, հա՞։ Պարոններ են՝ կասես, հը՞։

Դահլիճում խոսում էին վկաները, շտապ, դժգունած ձայներով, դատավորները՝ ակամա և անտարբեր։ Հաստ դատավորը հորանջում էր փափլիկ ձեռքով բերանը ծածկելով, կարմրաշեկ ընչացքավորն ավելի էր գունատվել, երբեմն նա ձեռքը բարձրացնում էր և մատով խիստ հուպ տալով քունքի ոսկորը՝ կուրորեն նայում էր առաստաղին՝ աղերսագին, լայնացած աչքերով։ Դատախազը երբեմն մատիտով խազխզում էր թղթի վրա և նորից շարունակում անձայն զրույցն ազնվականության ավագի հետ, իսկ նա ալեհեր մորուքը շփելով՝ պլշում էր խոշոր գեղեցիկ աչքերն ու ժպտում՝ վիզը ծանրամեծորեն կորացնելով։ Քաղաքագլուխը նստել էր ոտը ոտին գցած, մատներով անաղմուկ թմբկահարում էր իր ծունկը և կենտրոնացած դիտում մատների շարժումը։ Միայն վոլոստի ավագը փորը տեղավորելով ծնկների վրա և ձեռներով հոգատարությամբ պահելով, նստել էր գլխիկոր ու թվում էր, թե մենակ ականջ է դնում ձայների միօրինակ խոխոջին, և մեկ էլ բազմոցի մեջ խրված ծերուկը ցցված էր այնտեղ անշարժ, ինչպես հողմացույցը ոչ քամոտ օրին։ Դա երկար շարունակվեց, և տաղտուկի քարացումը նորից կուրացրեց մարդկանց։

— Հայտարարում եմ...— ասաց ծերուկը և բարակ շրթունքներով ճզմելով հաջորդ բառերը՝ վեր կացավ։

Աղմուկը, հառաչները, ցածրաձայն բացականչությունները, հազը և ոտքերի քստքստոցը լցրեցին դահլիճը։ Մեղադրյալներին տարան. հեռանալիս՝ նրանք ժպտալով գլխով էին անում հարազատներին և ծանոթներին, իսկ Իվան Գուսևը ցածրաձայն գոչեց մեկին.

— Զվախենա՛ս, Եգո՛ր...

Մայրն ու Սիզովը դուրս եկան միջանցք։

— Պանդոկ կգա՞ս թեյ խմելու,— հոգատարությամբ և մտախոհ հարցրեց մորը ծերունին։— Մեկուկես ժամ ժամանակ ունենք։

— Չեմ ուզում։

— Էհ, ես էլ չեմ գնա։ Չէ՛, տե՛ս ի՞նչ տղերք են, է՞։ Նստած են այնպես, որ կարծես իսկական մարդիկը հենց իրենք են որ կան, իսկ բոլոր մնացածները մի բան չեն։ Ֆե՛դյային տես, է՞։

Նրանց մոտեցավ Սամոյլովի հայրը գլխարկը ձեռքում բռնած։ Նա մռայլ ժպտում էր և ասում.

— Իսկ իմ Գրիգորի՞ն։ Պաշտպանից հրաժարվել է ու խոսել չի ուզում։ Գիտե՞ս, առաջինը նա՛ է հնարել այդ։ Քո տղան, Պելագե՛յա, փաստաբան բռնելու կողմնակից է եղել, իսկ իմն ասում է՝ չե՛մ ուզում։ Եվ այն ժամանակ չորս հոգի հրաժարվել են...

Նրա կողքին կանգնած էր կինը։ Աչքերը հաճախ թարթելով՝ նա թաշկինակի ծայրով սրբում էր քթթը։ Սամոյլովը մորուքը ձեռքով բռնեց և շարունակեց հատակին նայելով.

— Մի տես, բանն ինչ է։ Երբ նայում ես այդ սատանաների վրա, այնպես ես հասկանում, թե զուր են այս բոլորը սարքել, զուր տեղն իրենց կործանում են։ Եվ հանկարծ սկսում

ես մտածել, բայց գուցե՞ նրա՞նց ասածն է ճշմարիտը։ Հիշում ես, որ գործարանում նրանք քանի գնում, այնքան աճում են, նրանց մի գլուխ բռնոտում են, իսկ նրանք գետի ձկան նման չեն վերջանում, չէ՞։ Նորից ես մտածում՝ գուցե՞ և ուժ ունեն նրանք։

— Մեզ համար դժվար է այդ բանը հասկանալ, Ստեպա՛ն Պետրով,— ասաց Սիզովը։

— Դժվար է, այո՛,— համաձայնեց Սամոյլովը։

Նրա կինը քթով ուժգին շնչելով՝ նկատեց.

— Բոլորն առողջ են, անիծածները...

Եվ չկարողանալով զսպել իր ժպիտը լայն, թորշոմած դեմքին, շարունակեց.

— Դու, Նի՛լովնա, մի՛ բարկանա, քիչ առաջ ես առանց մտածելու ասացի, թե իբր տղադ է մեղավորը։ Բայց սատանան գիտե, թե ո՛վ է ավելի մեղավոր, եթե ճիշտն ասենք։ Ա՛յ թե ինչ էին խոսում մեր Գրիգորիի մասին ժանդարմները լրտեսների հետ։ Շա՛տ բան է արել այն կարմրաշեկ շունը։

Նա ըստ երևույթին պարծենում էր իր որդով, գուցեև՝ չհասկանալով իր զգացմունքը, բայց նրա զգացմունքը ծանոթ էր մորը և մայրը նրա խոսքերին պատասխանեց բարի ժպիտով, մեղմ բառերով.

— Երիտասարդ սիրտը միշտ ավելի մոտ է լինում ճշմարտությանը...

Միջանցքում թափառում էին մարդիկ, խումբ-խումբ հավաքվում՝ հուզված և մտազբաղ խոսում էին խուլ ձայներով։ Գրեթե ոչ ոք մենակ չէր կանգնում, բոլոր դեմքերի վրա պարզ երևում էր խոսելու, հարցնելու, լսելու ցանկություն։ Երկու պատերի արանքի նեղ, սպիտակ խողովակում մարդիկ ետ ու առաջ էին ընկնում, կարծես սաստիկ քամու հարվածների տակ, և թվում էր, թե ամենքը հնարավորություն էին փնտրում որևէ բանի վրա հաստատապես և ամուր կանգնելու։

Բուկինի ավագ եղբայրը, բարձրահասակ և նույնպես գունատ, ձեռները թափահարելով՝ արագ շուռումուռ էր գալիս բոլոր կողմերի վրա և ապացուցում.

— Վոլոստի ավագ Կլեպանովն այս գործում իր տեղում չի...

— Լռի՛ր, Կոնստանտի՛ն,— խրատում էր նրան հայրը, մի փոքրիկ ծերունի, և վախվխելով շուրջն էր նայում։

— Ո՛չ, պիտի ասեմ։ Նրա մասին ասում են, թե անցյալ տարի սպանել է իր գործակատարին՝ նրա կնոջ պատճառով։

Գործակատարի կինը նրա հետ է ապրում, սա ի՞նչպես պետք է հասկանալ։ Եվ բացի այդ նա հայտնի գող է...

— Ա՛խ, տեր իմ աստված, Կոնստանտի՛ն։

— Ճի՛շտ է,— ասաց Սամոյլովը,— ճի՛շտ է։ Դատն այնքան էլ ճիշտ չի...

Բուկինը լսեց նրա ձայնը, արագ մոտեցավ իր հետևից բոլորին բերելով, և ձեռները թափահարելով, վրդովմունքից կարմրած գոռաց.

— Գողության համար, սպանության համար դատում են երդվյալ ատենակալները, հասարակ մարդիկ, գյուղացիներ, մեշչաններ, թույլ տվեք ասել։ Իսկ այն մարդկանց, որոնք իշխանավորների դեմ են, դատում են իշխանավորները, այդ ի՞նչպես կլինի։ Եթե դու ինձ վիրավորես, իսկ ես ատամներդ ջարդեմ, և դու ինքդ ինձ դրա համար դատես, իհարկե, մեղավորը ե՛ս դուրս կգամ, բայց առաջինն ո՞վ է վիրավորել, դո՛ւ։ Դո՛ւ։

Ալևոր, սապատաքիթ, կուրծքը շքանշաններով զարդարված պահապանն ամբոխին դեսուդեն հրեց և Բուկինին մատով սպառնալով ասաց.

— Հե՛յ, մի՛ գոռա։ Գինետո՞ն է այստեղ։

— Թո՛ւյլ տվեք, ասպետ, ես հասկանում եմ։ Լսեցե՛ք, եթե ես ձեզ խփեմ և ինքս էլ ձեզ դատելու լինեմ, դուք ի՞նչ եք կարծում...

— Ա՛յ, ես կհրամայեմ ձեզ դուրս տանել այստեղից,— խստորեն ասաց պահապանը։

— Իսկ ո՞ւր։ Ինչո՞ւ։

— Փողոց։ Որպեսզի չգոռգոռաս...

Բուկինը տնտղեց ամենքին և կամաց ասաց.

— Նրանց համար գլխավորն այն է, որ մարդիկ լուռ մնան...

— Իսկ դու ի՞նչ էիր կարծում,— գոռաց ծերունին խիստ ու կոպիտ ձայնով։

Բուկինը ձեռները տարածեց և սկսեց ավելի կամաց խոսել։

— Եվ հենց այս էլ ասենք, ինչո՞ւ ժողովրդին թույլ չեն տվել դատարան գալ, այլ միայն հարազատներին են թույլ տվել։ Եթե արդար ես դատում, բոլորի մոտ դատիր, էլի՛, ինչի՞ց ես վախենում։

Սամոյլովը կրկնեց, բայց արդեն ավելի բարձր.

— Խղճով դատաստան չի, դա ճի՛շտ է...

Մայրը ուզում էր նրան ասել այն, ինչ Նիկոլայից լսել էր դատի ապօրինության մասին, բայց վատ էր հասկացել և խոսքերը մասամբ մոռացել էր։ Աշխատելով դրանք հիշել՝ մայրը մարդկանցից մի կողմ հեռացավ և նկատեց, որ բաց գույնի ընչացքներով մի երիտասարդ իրեն է նայում։ Աջ ձեռքը նա դրել էր անդրավարտիքի գրպանը, դրանից նրա ձախ ուսն աջից ցածր էր, և նրա կերպարանքի այդ առանձնահատկությունը մորը ծանոթ թվաց։ Բայց նա մեջքը դարձրեց դեպի մայրը, իսկ մայրը մտահոգված իր հիշողություններով իսկույն մոռացավ նրան։

Բայց մի րոպե հետո մոր ականջին հասավ մի ցածրաձայն հարց.

— Սա՞ է։

Եվ մեկն ավելի բարձր, ուրախ ձայնով պատասխանեց.

— Այո՛։

Մայրը շուրջը նայեց։ Թեք ուսերով մարդը կողքով կանգնած էր դեպի իրեն, նա ինչ-որ բան էր ասում իր հարևանին, կարճ վերարկուով և ծնկներին հասնող կոշիկներով մի սևամորուք տղայի։

Մոր հիշողությունը նորից անհանգիստ ցնցվեց, բայց ոչ մի պարզ բան չստեղծեց։ Մոր կրծքում հրամայաբար վառվում էր որդու ճշմարտության մասին մարդկանց հետ խոսելու իր ցանկությունը, նա ուզում էր լսել, թե մարդիկ ինչ կասեն այդ ճշմարտության դեմ, ուզում էր նրանց խոսքերից գուշակել դատարանի վճիռը։

— Մի՞թե այսպես են դատում,— զգույշ և ցածրաձայն սկսեց նա՝ դիմելով Սիզովին։— Հարցուփորձ են անում, թե ո՛վ ի՞նչ է արել, իսկ թե ինչու են արել՝ չեն հարցնում։ Եվ նրանք բոլորն էլ ծերեր են, ջահելներին ջահելները պետք է դատեն...

— Այո,— ասաց Սիզովը,— մեզ համար դժվար է հասկանալ այս գործը, դժվա՞ր է։— Եվ մտախոհ օրորեց գլուխը։

Պահապանը դահլիճի դուռը բանալով գոչեց.

— Ազգականնե՛ր, տոմսերը ցո՛ւյց տվեք...

Մի մռայլ ձայն դանդաղորեն արտասանեց.

— Տոմսե՛րը, կարծես կրկեսո՞ւմ ենք։

Բոլոր մարդկանց մեջ զգացվում էր խուլ վրդովմունք, աղոտ զայրույթ, նրանք սկսեցին իրենց ավելի ազատ պահել, աղմկում էին, վիճում պահապանների հետ։

XXV

Նստարանին նստելով Սիզովն ինչ-որ փնթփնթում էր։

— Ի՞նչ կա,— հարցրեց մայրը։

— Ոչի՛նչ։ Ժողովուրդը հիմար է...

Զանգը հնչեց։ Մեկն անտարբեր ձայնով հայտնեց.

— Դատարանը գալիս է...

Նորից բոլորը կանգնեցին, և նորից նույն կարգով ներս մտան դատավորները, նստոտեցին։ Մեղադրյալներին ներս բերին։

— Պի՛նդ կաց,— փսփսաց Սիզովը,— դատախազը խոսելու է։

Մայրը վիզը երկարեց, ամբողջ մարմնով թեքվեց առաջ և սառեց սարսափանքի նոր սպասողության դիրքում։

Դատախազը կողքով դեպի դատավորները կանգնելով, գլուխը նրանց կողմը դարձրած, արմունկը հենած գրասեղանին, խոր շնչեց և աջ ձեռքն օդում ընդհատ-ընդհատ շարժելով՝ սկսեց խոսել։ Առաջին բառերը մայրը չհասկացավ. դատախազի ձայնը սահուն էր, թանձր և անհարթ էր ընթանում, մերթ դանդաղ, մերթ ավելի արագ։ Բառերը միօրինակ դուրս էին ձգվում, երկար շարք կազմում թելի մկդակի պես և հանկարծ դուրս էին թռչում շտապ, պտտվում ինչպես սև ճանճերի պարսը շաքարի կտորի վրա։ Բայց մայրը դրանց մեջ ոչ մի սարսափելի, ոչ մի սպառնական բան չէր գտնում։ Դրանք ձյունի պես սառը և մոխրի պես գորշ՝ թափվում էին, հա՛ թափվում, բարակ, չոր փոշու պես, զայրացնելու աստիճանի ձանձրացուցիչ մի բանով դահլիճը լցնելով։ Զգացմունքներով ժլատ, խոսքերով առատ այդ ճառը երևի չէր հասնում Պավելին և նրա ընկերներին, նրանց բոլորովին չէր դիպչում, ամենը նստած էին հանգիստ և առաջվա պես անձայն զրուցում էին, երբեմն ժպտում, երբեմն մռայլվում՝ ժպիտը ծածկելու համար։

— Ստո՞ւմ է,— շշնջում էր Սիզովը։

Մայրը չէր կարող ասել այդ բանը։ Նա լսում էր դատախազի բառերը, հասկանում էր, որ մեղադրում է ամենքին, ոչ ոքի չառանձնացնելով. Պավելի մասին խոսելիս նա սկսում էր խոսել Ֆեդյայի մասին, իսկ նրան Պավելի կողքին դնելով՝ համառորեն մոտեցնում էր նրանց Բուկինին, թվում էր, թե նա բոլորին ծրարում, կարում է մի քսակի մեջ, իրար վրա պինդ դարսելով։

Բայց նրա խոսքերի արտաքին միտքը չէր բավարարում, չէր հուզում և չէր վախեցնում մորը, նա այնուամենայնիվ սպասում էր սարսափելիին և համառորեն դա փնտրում էր դատախազի խոսքերի մեջ, նրա դեմքի վրա, աչքերում, ձայնի մեջ, նրա սպիտակ ձեռքում, որ դանդաղ երևում ու չքանում էր օդի մեջ։ Մի ինչ-որ սարսափելի բան կա՛ր, մայրն այդ զգում էր, բայց անըմբռնելի էր որոշել, թե ինչ է այդ, չէր լինում, մոր սիրտը նորից ծածկվում էր շոր և կծու փառով։

Մայրը նայում էր դատավորներին, տեսնում էր, որ նրանք անկասկած ձանձրանում են այդ ճառը լսելուց։ Նրանց անկենդան, դեղնած և գորշ դեմքերը ոչինչ չէին արտահայտում։ Դատախազի խոսքերը մի անտեսանելի մառախուղ էին թափում օդի մեջ, այդ մառախուղն անդադար աճում էր և թանձրանում դատավորների շուրջը, ավելի ու ավելի ամուր պատելով նրանց անտարբերության և տաղտկացած սպասումի ամպով։ Ավագ դատավորը չէր շարժվում, շորացել էր իր ուղիղ դիրքի մեջ, նրա ակնոցի հետևի գորշ բծիկները երբեմն չքանում էին՝ դեմքի վրա տարածվելով։

Եվ մայրը տեսնելով այդ մեռած անկարեկցությունը, այդ անհիշաչար անտարբերությունը, տարակուսանքով հարցնում էր ինքն իրեն.

«Դատո՞ւմ են»։

Այդ հարցը ճմլում էր նրա սիրտը, և նրանից հետզհետե դուրս վանելով սարսափելիի սպասումը, կոկորդն այրում էր վիրավորանքի սուր զգացողությամբ։

Դատախազի ճառն ընդհատվեց մի տեսակ անսպասելիորեն, նա մի քանի արագ, մանր մկդակումներ արեց, գլուխ տվեց դատավորներին ու նստեց՝ ձեռները տրորելով։ Ազնվականության պարագլուխը նրան գլխով տրեց աչքերը պլշելով, քաղաքագլուխը ձեռքը մեկնեց, իսկ վոլոս.դի ավագը նայում էր իր փորին ու ժպտում։

Բայց նրա ճառը դատավորներին ըստ երևույթին չուրախացրեց, նրանք չէին շարժվում։

— Խոսքը պատկանում է,— ասաց ծերունին մի ինչ-որ թուլթ դեպի դեմքը տանելով,— Ֆեդոսեևի, Մարկովի և Զագորովի պաշտպանին։

Վեր կացավ մի փաստաբան, որին մայրը տեսել էր Նիկոլայի մոտ։ Նրա դեմքը բարեմիտ էր, լայն, նրա մանր աչքերը

լուսաճաճանչ ժպտում էին, թվում էր, թե կարմրաշրթակավուն հոնքերի տակից դուրս են ցցվել երկու սայրեր և մկրատի պես ինչ-որ բան են խուզում օդի մեջ։ Նա սկսեց խոսել ոչ շտապ, հնչուն և պարզ, բայց մայրը չկարողացավ լավ հասկանալ նրա ճառը, Սիզովը նրա ականջին փսփսաց.

— Հասկացա՞ր, թե ինչ ասաց։ Հասկացա՞ր։ Քայքայված, ասում է, խելացնոր մարդիկ են։ Ո՞վ, Ֆե՞դյան։

Մայրը չպատասխանեց՝ ծանր հիասթափությամբ ճնշված։ Վիրավորանքն աճում էր՝ հոգին մորմոքելով։ Այժմ Վլասովայի համար պարզվեց, թե ինչո՞ւ էր արդարադատություն սպասում, կարծում էր, որ կտեսնի, թե ինչպես են իրար հետ վեճի բռնվում որդու ճշմարտությունը և նրա դատավորների ճշմարտությունը։ Նրան այնպես էր թվում, թե դատավորները Պավելին կհարցնեն երկար, ուշադիր և մանրամասն նրա սրտի, ամբողջ կյանքի մասին, նրանք խորաթափանց աչքերով կգնեն իր որդու բոլոր խոհերն ու գործերը, նրա բոլոր օրերը։ Եվ երբ տեսնեն նրա իրավացիությունը, այն ժամանակ արդարադատորեն, բարձրաձայն կասեն.

— Այս մարդն իրավացի՞ է։

Բայց ոչ մի նման բան չկար, թվում էր, թե մաղադրյալներն անտեսանելիորեն հեռու են դատավորներից, իսկ դատավորները նրանց համար ավելորդ են։ Մայրը հոգնած՝ կորցրել էր իր հետաքրքրությունը դեպի դատը և առանց խոսքերին ականջ դնելու վիրավորված մտածում էր.

«Մի՞թե այսպես կդատեն»։

— Տե՞ղն է դրանց,— հավանությամբ շշնջաց Սիզովը։

Արդեն խոսում էր մի ուրիշ փաստաբան, փոքրիկ մի մարդ, սև, գունատ և ծաղրական դեմքով, իսկ դատավորները նրան խանգարում էին։

Դատախազը վեր թռավ, արագորեն և բարկացած ինչ-որ բան ասաց արձանագրության մասին, ապա հորդորելով խոսել սկսեց ծերուկը,— պաշտպանը գլուխը հարգանքով թեքած՝ լսեց նրանց և ճառը նորից շարունակեց։

— Փորի՛ր,— նկատեց Սիզովը։— Փորփրի՛ր...

Դահլիճում կենդանություն էր առաջ գալիս, փայլատակում էր մարտական խիզախությունը, փաստաբանը սուր խոսքերով գրգռում էր դատավորների հին կաշին։ Դատավորները կարծես

ավելի կիպ մոտեցան իրար, ուռան ու փքվեցին, որպեսզի ետ մղեն խոսքերի ծակող և շեշտակի հարվածները։

Բայց ահա տեղից բարձրացավ Պավելը և հանկարծ անսպասելիորեն խաղաղություն տիրեց։ Մայրն ամբողջ մարմնով առաջ օրորվեց։ Պավելն սկսեց հանգիստ խոսել.

— Պարտիայի մարդ լինելով, ես ընդունում եմ միայն իմ պարտիայի դատաստանը և խոսելու եմ ոչ թե ինձ պաշտպանելու համար, այլ ընկերներիս ցանկությամբ, որոնք նույնպես հրաժարվել են պաշտպանությունից, կփորձեմ բացատրել ձեզ այն, ինչ դուք չեք հասկացել։ Սոցիալ-դեմոկրատիայի դրոշով մեր ելույթը դատախազն անվանեց գերագույն իշխանության դեմ ուղղված խռովարարություն և ամբողջ ժամանակ մեզ վրա նայում էր, որպես ցարի դեմ ելած խռովարարների։ Ես պետք է հայտարարեմ, որ մեզ համար ինքնակալությունը չի հանդիսանում երկրի մարմինը կապկպող միակ շղթա, այլ նա միայն առաջին և ամենամոտ շղթան է, որը մենք պետք է պոկենք ժողովրդի վրայից...

Անդորրությունը խորանում էր հաստատուն ձայնի հնչյունների տակ, այդ ձայնը կարծես պատերը հեռացնելով լայնացնում էր դահլիճը, Պավելը կարծես մարդկանցից հեռու մի կողմ էր գնում՝ ավելի ցայտուն դառնալով։

Դատավորները ծանր ու անհանգիստ շարժվեցին։ Ազնվականության պարագլուխը ինչ-որ բան փսփսաց ծուլադեմ դատավորին, նա գլխով արեց և դիմեց ծերուկին, իսկ մյուս կողմից նույն ժամանակ նրա ականջին խոսում էր հիվանդ դատավորը։ Բազկաթոռի մեջ աջուձախ ճոճվելով՝ ծերուկը Պավելին ինչ-որ բան ասաց, բայց նրա ձայնը սուզվեց Վլասովի ճառի համաչափ և լայն հոսանքում։

— Մենք սոցիալիստներ ենք։ Դա նշանակում է, որ մենք թշնամի ենք մասնավոր սեփականությանը, որն անջատում է մարդկանց, զինում իրար դեմ, շահերի անհաշտելի թշնամություն ստեղծում, ստում՝ աշխատելով թաքցնել կամ արդարացնել այդ թշնամությունը և այլասերում է բոլորին ստությամբ, կեղծավորությամբ և ոխակալությամբ։ Մենք ասում ենք. այն հասարակությունը, որը մարդու վրա նայում է միայն որպես իր հարստացման գործիքի վրա, հակամարդկային է, նա մեր թշնամին է, մենք չենք կարող հաշտվել նրա երկերեսանի և ստահոդ բարոյականության հետ. դեպի անհատն ունեցած նրա վերաբերմունքի ցինիզմը և անգթությունը զզվելի են մեզ համար, մենք ուզում ենք կռվել և կկռվենք այդպիսի հասարակության կողմից մարդուն ֆիզիկապես և բարոյապես ստրկացնելու բոլոր ձևերի դեմ, շահամոլությունից դրդված մարդկանց բաժան-բաժան անելու բոլոր եղանակների դեմ։ Մենք, բանվորներս, այն մարդիկն ենք, որոնց աշխատանքով է ստեղծվում ամեն ինչ, հսկայական մեքենաներից սկսած մինչև մանկական խաղալիքները. մենք այն մարդիկն ենք, որոնք զրկված են իրենց մարդկային արժանապատվության համար կռվելու իրավունքից, յուրաքանչյուրն աշխատում է և կարողանում է մեզ իր նպատակներին հասնելու գործիք դարձնել, որը մեզ հնարավորություն տա առժամանակ հետո նվաճելու ամբողջ իշխանությունը։ Մեր լողունգները պարզ են, թող կորչի՛ մասնավոր սեփականությունը, արտադրության բոլոր միջոցները տալ ժողովրդին, ամբո՛ղջ իշխանությունը՝ ժողովրդին, աշխատանքը պարտադի՛ր է ամենքի համար։ Դուք տեսնում եք, մենք խռովարարներ չե՛նք։

Պավելը քմծիծաղեց, ձեռքը դանդաղորեն սահեցրեց մազերի վրայով, նրա կապույտ աչքերի կրակն ավելի պայծառ բոցավառվեց։

— Խնդրում եմ ձեզ գործի մասին խոսել,— ասաց նախագահը պարզ և բարձրաձայն։ Նա կուրծքը դարձրեց դեպի Պավելը, նայում էր նրան, և մորը թվում էր, թե նրա ձախ աղոտ աչքը վառվում է վատ, ագահ կրակով։ Եվ բոլոր դատավորները նրա որդու վրա նայում էին այնպես, որ թվում էր, թե նրանց աչքերը կպչում են որդու դեմքին, ծծվում են մարմնի մեջ, ծարավի են նրա արյանը, որպեսզի նրանով վերակենդանացնեն իրենց մաշված մարմինները։ Իսկ նա շիտակ, բարձրահասակ, հաստատուն և ամուր կանգնած, ձեռքը մեկնում էր դեպի նրանց և ոչ բարձր, հստակ ձայնով ասում.

— Մենք ռևոլյուցիոներներ ե՛նք և կմնա՛նք մինչև այն ժամանակ, քանի դեռ ոմանք հրամայում են, մյուսները միայն աշխատում։ Մենք կանգնած ենք այն հասարակության դեմ, որի շահերը պաշտպանել է հրամայված ձեզ, որպես այդ հասարակության և ձեր անհաշտ թշնամիներ, և մեր մեջ հաշտությունն անհնարին է մինչև այն ժամանակ, մինչ որ մենք հաղթենք։ Կհաղթե՛նք մենք, բանվորներս։ Ձեր հանձնարարությունները բոլորովին էլ այնքան ուժեղ չեն, ինչպես իրենց է թվում։ Հենց նույն սեփականությունը, որը կուտակելիս և պահպանելիս

նրանք զոհում են իրենց ճորտացրած միլիոնավոր մարդկանց, հենց նույն ուժը, որը նրանց իշխանություն է տալիս մեզ վրա, նրանց մեջ թշնամական բախումներ է առաջացնում, քայքայում նրանց ֆիզիկապես և բարոյապես։ Սեփականությունը չափազանց մեծ լարվածություն է պահանջում իր պաշտպանության համար, և էապես դուք բոլորդ, մեր տերերը, ավելի՛ ստրուկներ եք, քան մենք, դուք ստրկացած եք հոգեպես, մենք՝ միայն ֆիզիկապես։ Դուք չեք կարող հրաժարվել նախապաշարումների և սովորույթների ճնշումից, որը հոգեպես մահացրել է ձեզ, մեզ ոչ մի բան չի խանգարում ներքնապես ազատ լինել. այն թույնը, որով դուք թունավորում եք մեզ, ավելի թույլ է այն հակաթույնից, որ դուք չցանկանալով հանդերձ լցնում եք մեր գիտակցության մեջ։ Նա աճում է, նա զարգանում է առանց կանգ առնելու, ավելի ու ավելի արագ է վառվում և իր հետևից տանում բոլոր լավագույնը, բոլոր հոգեպես առողջ նույնիսկ ձե՛ր միջավայրից։ Նայեցե՛ք, դուք արդեն չունեք այնպիսի մարդիկ, որոնք կարողանային գաղափարապես պայքարել ձեր իշխանության համար, դուք արդեն մսխել եք այն բոլոր փաստարկումները, որոնք կարող են ձեզ պատսպարել պատմական արդարության ճնշումից, դուք ոչ մի նոր բան ստեղծել չեք կարող գաղափարների բնագավառում, դուք հոգեպես ամուլ եք։ Մեր գաղափարներն աճում են, նրանք ավելի ու ավելի պայծառ են վառվում, նրանք ընդգրկում են ժողովրդական զանգվածները՝ կազմակերպելով նրանց հանուն ազատության պայքարելու։ Բանվորի մեծ դերի գիտակցությունը աշխարհի բոլոր բանվորներին ձուլում՝ մի հոգի է դարձնում, դուք ոչ մի բանով չեք կարող կյանքի վերափոխման այդ պրոցեսի առաջն առնել, բացի վայրագությունից և ցինիզմից։ Բայց ցինիզմն ակնհայտ է, վայրագությունը՝ գրգռում է։ Եվ այն ձեռքերը, որ այսօր մեզ խեղդում են, շուտով ընկերաբար սեղմելու են մեր ձեռքերը։ Ձեր էներգիան՝ ոսկու աճման մեխանիկական էներգիա է, նա ձեզ միացնում՝ դարձնում է այնպիսի խմբեր, որոնք կոչված են իրար խժռելու, մե՛ր էներգիան բոլոր բանվորների համերաշխության ավելի ու ավելի աճող գիտակցության կենդանի ուժն է։ Այն բոլորը, ինչ դուք եք անում, ոճրագործություն է, որովհետև առաջնորդում է դեպի մարդկանց ստրկացումը. իսկ մեր աշխատանքն աշխարհն ազատում է այն ուրվականներից և հրեշներից, որոնք ծնվել են ձեր ստից, չարությունից, ագահությունից, այն հրեշներից, որոնք

վախեցնում են ժողովրդին։ Մարդուն դուք կտրել ե՛ք կյանքից և խորտակել նրան. սոցիալիզմը միացնում է ձեր կործանած աշխարհը՝ դարձնում միասնական մեծ մի ամբողջություն, և դա կլինի՛։

Պավելը մի վայրկյան կանգ առավ ու կրկնեց ավելի կամաց և ուժգին.

— Դա կլինի՛։

Դատավորներն իրար հետ քշփշում էին՝ դեմքերը տարօրինակ ծամածռելով և ամբողջ ժամանակ չէին հեռացնում իրենց ագահ աչքերը Պավելից, իսկ մայրն զգում էր, որ նրանք կեղտոտում են որդու ճկուն, ամրակուռ մարմինն իրենց հայացքներով՝ նախանձելով առողջությանը, ուժին, թարմությանը։ Մեղադրյալներն ուշադրությամբ լսում էին իրենց ընկերոջ ճառը, նրանց դեմքերը գունատվել էին, աչքերն ուրախությամբ փայլում էին։ Մայրը կլանում էր որդու խոսքերը, և դրանք իր հիշողության մեջ ներխուժում էին կանոնավոր շարքերով։ Ծերուկը մի քանի անգամ կանգնեցրեց Պավելին, ինչ-որ բան բացատրեց նրան, մի անգամ նույնիսկ տխուր ժպտաց. Պավելը լուռ լսում էր նրան և նորից սկսում խոսել խիստ, բայց հանգիստ, իրեն լսել տալով, դատավորների կամքն իր կամքին ենթարկելով։ Բայց ի վերջո ծերունին գոռաց ձեռքը դեպի Պավելը մեկնելով. իբրև պատասխան՝ մի քիչ ծաղրաբար հնչեց Պավելի ձայնը.

— Ես վերջացնում եմ։ Ձեզ անձամբ վիրավորել ես չէի ուզում, ընդհակառակը. ակամա ներկա լինելով այս կատակերգությանը, որը դուք դատ եք անվանում, ես դեպի ձեզ գրեթե կարեկցություն եմ զգում։ Այնուամենայնիվ, դուք մարդիկ եք, իսկ մեզ համար միշտ վիրավորական է տեսնել մարդկանց, որոնք թեև թշնամական վերաբերմունք ունեն դեպի մեր նպատակը, բայց այդպես խայտառակ կերպով ստորացված են բրոնությանը սպասավորելով, այդ աստիճան կորցնելով իրենց մարդկային արժանապատվության գիտակցությունը...

Նա նստեց առանց դատավորներին նայելու, մայրը շունչը պահած սևեռուն հայացքով նայում էր դատավորներին, սպասում էր։

Անդրեյը ժպտաղեմ ամուր սեղմեց Պավելի ձեռքը, Սամոյլովը, Սագինը և մյուսները աշխուժորեն ձգվեցին դեպի Պավելը, նա ժպտում էր ընկերների պոռթկումից մի քիչ շփոթված, նա-

յեց այնտեղ, ուր մայրն էր նստած և գլխով արեց նրան՝ կարծես հարցնելով.

«Այսպե՞ս է»։

Մայրը նրան պատասխանեց ուրախության խոր հառաչով, ասես ոտից գլուխ ողողված սիրո ջերմ ալիքով։

— Ահա՜, դատն սկսվե՞ց,— շշնջաց Սիզովը։— Ի՞նչ օրը գցեց նրանց, հա՜։

Մայրը լուռ գլխով էր անում՝ գոհ այն բանից, որ որդին այնպես համարձակ էր խոսում, գուցե ավելի գոհ այն բանից, որ որդին վերջացրել էր։ Մոր գլխում թրթռացին թպրտում էր այս հարցը.

«Է՞։ Հիմա՞ ինչ պիտի անեք»։

XXVI

Այն, ինչ որ ասում էր որդին, մոր համար նոր բան չէր, նա գիտեր այդ մտքերը, բայց առաջին անգամ այստեղ, դատարանի առաջ նա զգաց նրա հավատի տարօրինակ, գրավիչ ուժը։ Նրան ապշեցրեց Պավելի հանգստությունը, և որդու ճառն իր սրտում ձուլվեց իբրև նրա իրավացիության, և նրա հաղթության նկատմամբ ունեցած անհողդողդ համոզմունքի աստղանման, ճառագայթող մի գունդ։ Մայրն այժմ սպասում էր, որ դատավորներն սկսելու են սաստիկ վիճել որդու հետ, բարկացած առարկելու են նրան՝ առաջ քաշելով իրե՞նց ճշմարտությունը։ Բայց ահա վեր կացավ Անդրեյը, օրորվեց, աչքի տակով նայեց դատավորներին և սկսեց խոսել.

— Պարո՞ն պաշտպաններ...

— Ձեր առաջ դատարա՜նն է, այլ ոչ թե պաշտպանությունը,— բարկացած և բարձրաձայն նկատեց նրան հիվանդ դեմք ունեցող դատավորը։ Անդրեյի դեմքի արտահայտությունից մայրը տեսնում էր, որ նա ուզում է չարաճճիություն անել. նրա ընչայքները դողում էին, աչքերում շողում էր մորը ծանոթ խորամանկ կատվային փաղաքշանքը։ Նա երկար ձեռքով պինդ տրորեց գլուխը և հառաչեց։

— Բայց մի՞թե,— ասաց նա գլուխն օրորելով։— Ես կարծում եմ, դուք դատավորներ չեք, այլ միայն պաշտպաններ...

— Ես խնդրում եմ ձեզ խոսել ըստ գործի էության,— չորշոր նկատեց ծերուկը։

— Ըստ էությա՞ն։ Լա՜վ։ Ես արդեն ինձ ստիպեցի կարծել, որ դուք հիրավի դատավորներ եք, անկախ, ազնիվ մարդիկ...

— Դատարանը ձեր բնութագրության կարիք չունի՜։

— Կարիք չունի՞։ Հըմ, է՜հ, բայց և այնպես ես կշարունակեմ... Դուք այնպիսի մարդիկ եք, որոնց համար չկան ոչ յուրայիններ, ոչ օտարներ, դուք ազատ մարդիկ եք։ Ահա ձեր առջև կանգնած են երկու կողմեր, մեկը գանգատվում է, թե նա ինձ կողոպտել է ու քիթ ու բերանս ջարդել, իսկ մյուսը պատասխանում է, թե իրավունք ունեմ թալանելու և քիթ ու բերանը ջարդելու, որովհետև զենք ունեմ...

— Դուք ըստ էության որևէ բան ունե՞ք ասելու,— ձայնը բարձրացնելով հարցրեց ծերուկը։ Նրա ձեռքը դողում էր, և մոր համար հաճելի էր տեսնել, որ նա բարկանում է։ Բայց Անդրեյի վարմունքը մորը դուր չէր գալիս, դա իր որդու ճառի հետ չէր ձուլվում, մայրը լուրջ և խիստ վիճաբանություն էր ուզում։

Խոխոլը լուռ նայեց ծերուկին, հետո գլուխը շփելով լրջորեն ասաց.

— Ըստ էությա՞ն։ Բայց ախր ես ձեզ հետ ինչո՞ւ պիտի խոսեմ ըստ էության։ Ինչ որ ձեզ հարկավոր էր իմանալ՝ ընկերս ասաց։ Մնացածը, ժամանակ կլինի, ձեզ կասեն ուրիշները...

Ծերուկը քիչ բարձրացավ և հայտնեց.

— Ձեզ խոսքից զրկո՜ւմ եմ։ Գրիգորի Սամո՜յլով։

Շրթունքներն ամուր փակելով խոխոլը ծուլլ-ծուլլ նստեց նստարանին, նրա կողքին կանգնած Սամոյլովը՝ գանգուրները թափ տալով։

— Դատախա՜զն ընկերներիս անվանեց վայրենիներ, կուլտուրայի թշնամիներ...

— Պետք է խոսել միայն այն մասին, ինչ որ ձե՜ր գործին է վերաբերում։

— Սա վերաբերում է։ Ոչ մի բան չկա, որ ազնիվ մարդկանց չվերաբերի։ Եվ ես խնդրում եմ չընդհատել ինձ։ Ես հարցնում եմ ձեզ, ի՞նչ է ձեր կուլտուրան։

— Մենք ձեզ հետ բանավեճի մտնելու համար չենք այստեղ։ Գործի մասին խոսեցեք,— ատամները մերկացնելով ասաց ծերուկը։

Անդրեյի վարմունքը պարզապես փոխել էր դատավորներին, նրա խոսքերը կարծես նրանցից ինչ-որ բան էին սրբել, գորշ դեմքերի վրա երևան էին գալիս բծեր, նրանց աչքերում վառ-

վում էին սառը, կանաչ կայծեր։ Պավելի ճառը նրանց գրգռեց, բայց գրգռմունքը զսպվում էր մի ուժով, որ ակամա հարգանք էր ներշնչում, խոխոջը պոկեց այդ զսպվածությունը և դյուրին կերպով երևան հանեց այն, ինչ որ կար նրա տակ։ Դատավորներն իրար հետ շշնջում էին տարօրինակ ծամածռություններով և սկսեցին շարժվել իրենց համար չափազանց արագ։

— Դուք լրտեսներ եք դաստիարակում, դուք անբարոյականացնում եք կանանց և աղջիկներին, դուք մարդուն զցում եք գռեհ և մարգասպանի դրության մեջ, դուք նրան թունավորում եք օղիով, միջազգային սպանդներ, համաժողովրդական ստություն, անբարոյականություն և վայրենացում — ահա՛ ձեր կուլտուրան։ Այո՛, մենք այդ կուլտուրայի թշնամիներն ենք։

— Անգրո՛մ եմ ձեզ,— գոչեց ծերուկը՝ կղակը թափ տալով։ Բայց Սամոյլովն կաս-կարմիր կտրած, աչքերը շողացնելով, նույնպես գոռում էր.

— Իսկ մենք հարգում գնահատում ենք այն մյուս կուլտուրան, որի ստեղծողներին դուք փտեցրել եք բանտերում, խելագարեցրել եք...

— Խոսքից զրկո՛ւմ եմ։ Ցյոզոր Մա՛զին։

Փոքրիկ Մազինը տեղից բարձրացավ, կարծես հանկարծ մի բիզ դուրս պրծավ, և խզվող ձայնով ասաց.

— Ես... ես երդվո՛ւմ եմ։ Ես գիտեմ, դուք ինձ դատապարտել եք։

Նա ջնջահեղձ եղավ, գունատվեց, դեմքին միայն աչքերը մնացին, և ձեռքը մեկնելով գոչեց.

— Ես, ազնի՛վ խոսք, ուր էլ որ ինձ ուղարկելու լինեք, փախչելու եմ, վերադառնալու եմ և աշխատելու եմ միշտ, ամբողջ կյանքումս։ Ազնի՛վ խոսք։

Սիզովը բարձրաձայն կոկորդը մաքրեց, շարժվեց նստած տեղում։ Ամբողջ հասարակությունը ենթարկվելով վրդովմունքի ավելի ու ավելի վեր բարձրացող ալիքին՝ աղմկում էր տարօրինակ ու խուլ ձայնով։ Մի կին լալիս էր, մեկը հազում էր խեղդվելով։ Ժանդարմները մեղադրյալներին դիտում էին բուռ զարմանքով, հասարակությանը՝ զայրույթով։ Դատավորներն օրորվում էին, ծերունին գոռում էր բարակ ձայնով.

— Գուսև Իվա՛ն։

— Չեմ ուզում խոսել։

— Վասիլի Գո՛ւսև։

— Չե՛մ ուզում։

— Բո՛ւկին Ֆյո՛դոր։

Ծանրորեն բարձրացավ սպիտակավուն, գունազուրկ մի տղա և գլուխն օրորելով, դանդաղորեն ասաց.

— Գոնե ամաչեի՛ք։ Ես բանը դժվար հասկացող մարդ եմ, բայց էլի հասկանում եմ արդարությունը։— Նա ձեռքը դլխից վեր բարձրացրեց և լռեց աչքերը կիսափակ, կարծես հեռվում մի բան դիտելով։

— Ի՞նչ է,— գրգռված, ապշած ճչաց ծերունին ետ գլորվելով բազմոցի մեջ։

— Է՛հ, դուք է՛լ ձեր...

Բուկինը մոայլ նստեց նստարանին։ Նրա մութ բառերի մեջ կար մի ահագին, կարևոր բան, կար տրտմագին նախատական և միամիտ մի բան։ Այդ ամե՛նքն զգացին, և նույնիսկ դատավորները լսողությունները լարեցին, կարծես սպասելով, թե չի՞ հնչի արդյոք այդ բառերից ավելի պարզ մի արձագանք։ Եվ հասարակության նստարաններին ամեն ինչ քարացավ, միայն կամաց լացն էր օրորվում օդի մեջ։ Ապա դատախազն ուսերը թոթվելով քմծիծաղեց, աղնվականության պարագլուխը բարձրաձայն հազաց, և հետզհետե նորից շշուկներ ծնվեցին՝ հուզված պտտվելով դահլիճում։ Մայրը դեպի Սիզովը թեքվելով հարցրեց.

— Դատավորները խոսելո՞ւ են։

— Ամեն ինչ վերջացած է... միայն դատավճիռը կհայտարարեն...

— Ուրիշ ոչի՞նչ։

— Այո...

Մայրը նրան չհավատաց։

Սամոյլովան անհանգիստ շարժվում էր նստարանի վրա՝ ուսով և արմունկով մորը հրելով և կամաց ասում էր ամուսնուն.

— Սա ի՞նչ բան է։ Մի՞թե կարելի է այսպես։

— Տեսնում ես՝ կարելի՞ է։

— Բայց ի՞նչ են անելու նրան, Գրիշային։

— Չե՞ռք քաշիր...

Ամենքի մեջ զգացվում էր, որ մի բան է տեղաշարժվել, խանգարվել, ջարդվել, մարդիկ տարակուսանքով կուրացած աչքերը թարթում էին, կարծես նրանց առջև վառվում էր պայծառ, անորոշ գծագրությամբ, անհասկանալի նշանակությամբ, բայց հրապուրիչ ուժ ունեցող մի բան։ Եվ չհասկանալով անակնկալ

երևան եկած այդ մեծ բանը, մարդիկ շտապով ծախսում էին այդ իրենց համար նոր զգացմունքը մանր, ակնհայտ, իրենց համար հասկանալի բանի վրա։ Ավագ Բուկինն առանց քաշվելու բարձր քրթմնջում էր.

— Թո՛ւյլ տվեք, ինչո՞ւ չեն թողնում, որ խոսեն։ Դատախազը կարող է ասել ամեն բան և որքան ուզի...

Նստարանների մոտ կանգնած էր մի աստիճանավոր և ձեռքերը մարդկանց վրա թափ տալով կիսաձայն ասում էր.

— Հանգի՛ստ։ Հանգի՛ստ...

Սամոյլովը ետ թեքվեց և կնոջ հետևում բոբոում էր, բառերը կցկտուր դուրս նետելով.

— Իհարկե՛, ասենք թե նրանք մեղավոր են։ Իսկ դու թող, որ բացատրվեն, է՛։ Ինչի՞ են դեմ գնացել նրանք։ Ես ուզում եմ հասկանա՛լ։ Ես է՛լ եմ շահագրգռված...

— Հանգի՛ստ,— մատով սպառնալով նրան բացականչեց աստիճանավորը։

Սիզովը մռայլ գլխով էր անում։

Իսկ մայրն անընդհատ նայում էր դատավորներին և տեսնում, որ նրանք ավելի ու ավելի էին հուզվում՝ իրար հետ խոսելով անորոշ ձայներով։ Նրանց սառը և լպրծուն խոսակցության հնչյունը դիպչում էր մոր դեմքին և իր հպումով առաջ բերում այտերի մեջ դող, բերանում՝ ախտաժետ, զզվելի զգացողություն։ Հայտնի չէ թե ինչու, մորը թվում էր, թե նրանք բոլորը խոսում են իր որդու և նրա ընկերների մարմնի մասին, ջերմ արյունով, կենդանի ուժով լի երիտասարդների մկանների և մարմնի անդամների մասին։ Այդ մարմինը նրանց մեջ վառում էր մուրացկանների վատ նախանձ, հյուծվածների և հիվանդների կպչուն ագահություն։ Նրանք շրթունքները ծպծպացնում էին և ափսոսում, որ չունեն այնպիսի մարմիններ, որոնք ընդունակ են աշխատելու և հարստություն ստեղծելու, վայելք ստանալու և ստեղծագործելու։ Այժմ իրենց մարմինները դուրս են գալիս կյանքի գործնական շրջանառությունից, հրաժարվում են կյանքից, իրենց հետ տանում են իրենց վրա իշխելու, իրենց ուժն օգտագործելու, այդ ուժը կլանելու հնարավորությունը։ Ուստի և երիտասարդները ծեր դատավորների մեջ առաջացնում են թուլացած գազանի վրիժառու, թախծալի զայրույթ, գազանի, որը թարմ կերակուր է տեսնում, բայց արդեն ուժ չունի վերցնելու, կորցրել է ուրիշ ուժով հագենալու ընդունակությունը և հիվանդագին մրթմրթում է, վհատորեն ոռնում, տեսնելով, որ կշտության աղբյուրը դուրս է գալիս իր ձեռքից։

Այս կոպիտ և տարօրինակ միտքն այնքան ավելի վառ ձև էր ստանում, ինչքան ավելի ուշադրությամբ էր դիտում մայրը դատավորներին։ Նրան թվում էր, թե դատավորները չեն թաքցնում քաղցածների գրգռված ագահությունը և անուժ զայրույթը, քաղցածների, որոնք մի ժամանակ կարող էին շատ լափել։ Նրա համար, այդ կնոջ և մոր համար, որին որդու մարմինը միշտ և այնուամենայնիվ ավելի թանկ է այն բանից, ինչ կոչվում է հոգի, նրա համար սարսափելի էր տեսնել, թե ինչպես մարած աչքերը սահում են որդու դեմքով, շոշափում նրա կուրծքը, ուսերը, ձեռները, քսվում տաք մաշկին, կարծես հնարավորություն փնտրելով բոցավառվելու, բորբոքվելու և ջերմացնելու արյունը կիսամեռ մարդկանց կարծրացած ջղերում, մաշված մկաններում, մարդկանց, որոնք այժմ մի քիչ աշխուժացել են ագահության և դեպի երիտասարդ կյանքն զգացվող նախանձի խայթոցներից, մի կյանք, որը նրանք պետք է դատապարտեին և խլեին հենց իրենցից։ Մորը թվում էր, թե որդին զգում է այդ խոնավ, անախորժորեն խտղտացուցիչ հպումները և ցնցվելով նայում է իրեն։

Պավելը նայում էր մոր դեմքին մի քիչ հոգնած աչքերով, հանգիստ և սիրալիր։ Երբեմն մորը գլխով էր անում, ժպտում։

«Շուտով կազատվենք»,— ասում էր մորն այդ ժպիտը և կարծես մեղմ հպումներով շոյում նրա սիրտը։

Հանկարծ դատավորները վեր կացան միանգամից։ Մայրը նույնպես ոտքի ելավ ակամա։

— Գնացի՞ն,— ասաց Սիզովը։

— Դատավճիռ կայացնելո՞ւ,— հարցրեց մայրը։

— Այո...

Մոր լարվածությունը հանկարծ փարատվեց, հոգնածության մի հեղձուցիչ ուժասպառություն պատեց մարմինը, հոնքը դողաց և ճակատին քրտինք տվեց։ Հիասթափման և վիրավորանքի ճնշող զգացումը ներխուժեց նրա սիրտը և արագորեն փոխարկվեց հոգին կեղեքող արհամարհանքի՝ դեպի դատավորներն ու դատարանը։ Հոնքերում ցավ զգալով նա ափով ամուր շփեց ճակատը, շուրջը նայեց, մեղադրյալների ազգականները մոտենում էին ճաղերին, դահլիճը լցվեց խոսակցության աղմուկով։ Մայրը նույնպես մոտեցավ Պավելին և նրա ձեռքն ամուր սեղ-

մելով լաց եղավ՝ վիրավորանքով և ուրախությամբ լցված, մոլորված խառնակ իրարամերժ զգացմունքների քաոսում։ Պավելը նրան փաղաքշական խոսքեր էր ասում, խոխոլը կատակում էր և ծիծաղում։

Բոլոր կանայք լալիս էին, բայց ավելի շուտ ըստ սովորության, քան վշտից։ Հանկարծական, բուռ հարվածով շշմեցնող, անսպասելիորեն և անտեսանելի կերպով գլխին եկող վիշտ չկար, կար զավակներից բաժանվելու անհրաժեշտության տխուր գիտակցություն, բայց դա էլ սուզվում, լուծվում էր այդ օրվա առաջ բերած տպավորությունների մեջ։ Հայրերն ու մայրերը զավակների վրա նայում էին մի աղոտ զգացումով, որի մեջ դեպի երիտասարդությունն ունեցած թերահավատությունը, զավակներից ունեցած իրենց առավելության սովորական գիտակցությունը տարօրինակ կերպով խառնվում էր մի այլ զգացումի հետ, որը մոտ էր զավակների հանդեպ տածվող հարգանքի. և այն տխուր, ձեռք չքաշող մտածմունքը, թե ինչպես պիտի ապրենք հիմա, բթանում էր այն հետաքրքրությանը հանդիպելով, որ զարթեցնում էր երիտասարդ հասակը, որը համարձակ և աներկյուղ խոսում է մի այլ, լավ կյանքի հնարավորության մասին։ Զգացմունքները զսպվում էին դրանք արտահայտելու անկարողությամբ, բառերը գործադրվում էին առատորեն, բայց խոսում էին հասարակ բաների մասին, սպիտակեղենի և զգեստի մասին, առողջությունը պահպանելու անհրաժեշտության մասին։

Իսկ Բուկինի եղբայրը ձեռները թափահարելով համոզում էր կրտսեր եղբորը.

— Արդարադատությո՛ւն ասիր ու պրծա՛ր։

Կրտսեր Բուկինը պատասխանում էր.

— Սարյակին լա՛վ պահպանիր...

— Ողջ-առո՛ղջ կլինի...

Իսկ Սիզովը բռնել էր քրոջորդու ձեռքը և դանդաղորեն ասում էր.

— Այդպես, Ֆյո՛դոր, ուրեմն գնացիր...

Ֆեդյան կռացավ և նրա ականջին մի բան փսփսաց խորամանկորեն ժպտալով։ Պահակախմբի զինվորն էլ ժպտաց, բայց իսկույն դեմքին դաժան արտահայտություն տվեց և մաքրեց կոկորդը։

Մայրը Պավելի հետ խոսում էր, ինչպես և մյուսները, նույն բանի մասին՝ զգեստի, առողջության, իսկ նրա կրծքում տասնյակ հարցեր էին իրար ընդհարվում՝ Սաշայի մասին, իր մասին, որդու մասին։ Բայց այդ բոլորի տակ կար և դանդաղ աճում էր դեպի որդին տածած սիրո հորդման զգացումը, նրան դուր գալու, նրա սրտին մոտ լինելու լարված ցանկությունը։ Սարսափի սպասողությունը մեռել էր, որպես հետք թողնելով միայն դատավորներին հիշելիս առաջացող անախորժ դողը և ինչ-որ մի կողմում նրանց մասին եղած մութ միտքը։ Նա իր մեջ զգում էր մի մեծ, պայծառ ուրախության ծնունդը, չէր հասկանում այն և շվարում էր։ Տեսնելով, որ խոխոլը բոլորի հետ խոսում է, հասկանալով, որ նրան ավելի է պետք զգվանքը, քան Պավելին, մայրը խոսեց նրա հետ.

— Դատարանն ինձ դուր չեկա՛վ։

— Իսկ ինչո՞ւ, մայրիկ,— երախտագիտորեն ժպտալով բացականչեց խոխոլը։— Ճիշտ է, հալից ընկած է, բայց դեռ շունչը չի փչել...

— Ո՛չ սարսափելի է, ո՛չ էլ մարդկանց համար հասկանալի, թե արդարությունն ո՛ւմ կողմն է,— անվճռականորեն ասաց մայրը։

— Օհո՛, ա՛յ թե ի՞նչ կուզեիք,— բացականչեց Անդրեյը։— Բայց մի՞թե այստեղ ճշմարտության վրա են գլուխ կոտրում...

Հառաչելով և ժպտալով մայրն ասաց.

— Իսկ ես կարծում էի, թե սարսափելի է....

— Դատարանը գալի՞ս է։

Բոլորն արագորեն իրենց տեղերը նստվեցին։

Մեկ ձեռքը սեղանին հենելով՝ ավագ դատավորը, դեմքը թղթով ծածկելով, սկսեց կարդալ այդ թուղթը թույլ բզզացող, իշամեղվային ձայնով։

— Դատապարտում է,— ասաց Սիզովն ուշադրությունը լարելով։

Խաղաղություն տիրեց։ Բոլորը վեր կացան ծերունուն նայելով։ Փոքրիկ, չոր, ուղղաձիգ, նա մի ինչ-որ ընդհանուր բան ուներ այն փայտի հետ՝ որը բռնած պահում է աներևույթ մի ձեռք։ Դատավորները նույնպես կանգնած էին, վոլոստի պետը՝ գլուխն ուսին թեքած և հայացքն առաստաղին, քաղաքագլուխը՝ ձեռքերը կրծքին խաչած, ազնվականության պարագլուխը՝ մորուքը շոյելով։ Հիվանդ դեմք ունեցող դատավորը, նրա ուռած ընկերն ու դատախազը նայում էին մեղադրյալների կողմը։ Իսկ դատավորների հետևից, պատկերից, նրանց գլուխների վրայով

նայում էր ցարը կարմիր համազգեստով, անտարբեր սպիտակ դեմքով, և նրա դեմքի վրա ինչ-որ միջատ էր սողում։

— Աքսոր,— թեթևացած շունչ քաշելով ասաց Սիզովը։— Դե իհարկե՝, փա՜ռք աստծու։ Ասում էին տաժանակիր աշխատանքի կուղարկե՝ն։ Վնաս չունի, մա՜յր։ Սա ոչինչ։

— Ես ախր գիտեի,— պատասխանեց մայրը հոգնած ձայնով։

— Բայց և այնպե՜ս։ Հիմա արդեն ճի՜շտ է։ Թե չէ՝ ով գիտե դրանց բանը։— Նա դարձավ դեպի դատապարտյալները, որոնց արդեն տանում էին, և բարձրաձայն ասաց.

— Ցտեսությո՜ւն, Ֆյո՜դոր։ Եվ բոլորի՜դ։ Աստված ձեզ բարի՜ տա։

Մայրը լուռ գլխով էր անում որդուն և բոլորին։ Ուզում էր լաց լինել, բայց ամաչում էր։

XXVII

Մայրը դուրս եկավ դատարանից և զարմացավ, որ քաղաքի վրա արդեն գիշեր է իջել, փողոցում լապտերներն են վառվում, երկնքում՝ աստղերը։ Դատարանի մոտ խռնված էին մարդկանց փոքրիկ խմբեր, սառնամանիքից ձյունը ճռռում էր, երիտասարդ ձայներ էին հնչում՝ իրար ընդհատելով։ Մոխրագույն բաշլուղով մի մարդ նայեց Սիզովի դեմքին և շտապ հարցրեց.

— Ի՞նչ էր դատավճիռը։

— Աքսոր։

— Բոլորի՞ն։

— Բոլորին։

— Շնորհակալությո՜ւն։

Մարդը հեռացավ։

— Տեսնո՞ւմ ես,— ասաց Սիզովը։— Հարցնում են...

Հանկարծ նրանց շրջապատեցին մի տասը հոգի երիտասարդներ ու աղջիկներ, և մարդկանց ուշադրությունը գրավող բացականչություններ թափվեցին արագ-արագ։ Մայրն ու Սիզովը կանգ առան։ Հարցնում էին դատավճռի մասին, այն մասին, թե իրենց ինչպես էին պահում մեղադրյալները, ով է ճառեր խոսել, ինչի մասին, և բոլոր հարցերում հնչում էր անհագ հետաքրքրության միևնույն նոտան, հետաքրքրության, որն անկեղծ և ջերմ լինելով՝ իրեն բավարարելու ցանկություն էր հարուցում։

— Պարոնա՜յք, սա Պավել Վլասովի մա՜յրն է,— ցածրաձայն գոչեց մեկը, և ոչ իսկույն, բայց արագ ամենքը լռեցին։

— Թո՛ւյլ տվեք սեղմել ձեր ձեռքը։

Մեկի ամուր ձեռքը սեղմեց մոր մատները, մեկի ձայնը հուզված խոսեց.

— Ձեր որդին արիության օրինակ կլինի մեզ բոլորիս համար...

— Կեցցե՜ ռուս բանվորը,— հնչեց մի զիլ աղաղակ։

Աղաղակներն աճում էին, բազմապատկվում, բռնկվում այստեղ-այնտեղ, ամեն կողմից մարդիկ վազելով գալիս էին՝ խմբվելով Սիզովի և մոր շուրջը։ Օդի մեջ ցատկոտեցին ոստիկանների սուլիչները, բայց նրանց սուլոցները չէին խլացնում աղմուկները։ Ներունին ծիծաղում էր, իսկ մորն այս բոլորը անուշ երազ էր թվում։ Նա ժպտում էր, ձեռքեր սեղմում, գլուխ տալիս, և լավ, պայծառ արցունքները սեղմում էին կոկորդը, նրա ոտքերը դողում էին հոգնածությունից, բայց սիրտն ուրախությամբ հագեցած, ամեն ինչ կլանելով, լճի վճիտ դեմքի նման արտացոլում էր տպավորությունները։ Իսկ նրան մոտիկ մի պարզ ձայն ջղայնորեն ասում էր.

— Ընկերնե՜ր։ Ռուս ժողովրդին լափող հրեշն այսօր նորից կլանեց իր անհատակ, անհագ երախով...

— Սակայն, մա՜յր, գնա՜նք,— ասաց Սիզովը։

Եվ նույն ժամանակ ինչ-որ մի տեղից հայտնվեց Սաշան, մորը թևանցուկ արեց և հետևից արագ քաշեց փողոցի մյուս կողմը՝ ասելով.

— Եկե՜ք, գուցե ծեծեն։ Կամ ձերբակալեն։ Աքսո՞ր։ Սիբի՞ր։

— Այո՜, այո՜։

— Իսկ նա ինչպես խոսեց։ Ասենք՝ ես գիտեմ։ Նա բոլորից ավելի ուժեղ և պարզ էր, բոլորից ավելի խիստ, իհարկե։ Նա զգայուն է, քնքուշ, միայն թե ամաչում է իրեն ցույց տալ։

Նրա ջերմ կիսաշշունջը, նրա սիրո խոսքերը մոր հուզումները հանգստացնելով, բարձրացնում էին նրա ընկած ուժերը։

— Ե՞րբ եք գնալու նրա մոտ,— կամաց և փաղաքշանքով հարցրեց մայրը Սաշային, սեղմելով նրա ձեռքն իր մարմնին։

Վստահ առաջ նայելով աղջիկը պատասխանեց.

— Հենց որ մեկին ճարեմ, որն իմ աշխատանքը հանձն առնի։ Չէ՞ որ ես էլ եմ դատավճռի սպասում։ Երևի նրանք ինձ

էլ Սիբիր կուղարկեն, այն ժամանակ ես կհայտարարեմ, որ ուզում եմ վերաբնակվել այն վայրում, ուր նա կլինի։

Հետևից լսվեց Սիզովի ձայնը.

— Այն ժամանակ իմ կողմից կբարևե՛ք նրան։ Սիզովը, կասեք, բարևում է։ Նա ճանաչում է։ Ֆյոդոր Մաղինի քեռին...

Սաշան կանգ առավ, ետ դարձավ ձեռքը մեկնելով։

— Ես Ֆեդյային ծանոթ եմ։ Անունս Ալեքսանդրա է

— Իսկ հո՞րդ անունը։

Սաշան նայեց նրան և պատասխանեց.

— Ես հայր չունեմ։

— Մեռել է ուրեմն։

— Ոչ, նա կենդանի՞ է,— հուզված պատասխանեց աղջիկը, և մի համառ, կամակոր բան հնչեց նրա ձայնի մեջ, նկատվեց նրա դեմքին։— Նա կալվածատեր է, այժմ զեմստվոյի պետ է, գյուղացիներին թալանում է...

— Այդպե՞ս,— ճնշված արձագանքեց Սիզովը և փոքր լռելով ասաց՝ աղջկա կողքից գնալով և նայելով նրան.

— Դե՛հ, մա՛յր, մնաք բարո՛վ։ Ես դեպի ձախ պետք է գնամ։ Ցտեսությո՛ւն, օրիո՛րդ, ձեր հոր վերաբերմամբ խիստ եք։ Իհարկե, ձե՛ր գործն է...

— Իսկ եթե ձեր որդին անպիտան մարդ լինի, մարդկանց համար վնասակար, ձեզ համար նողկալի, դուք կասե՞ք այդ բանը,— կրքով գոչեց Սաշան։

— Է՛հ, կասեմ,— չշտապելով պատասխանեց ծերունին։

— Նշանակում է՝ ձեզ համար արդարությունն ավելի թանկ է որդուց, իսկ ինձ համար այն ավելի թանկ է հորից...

Սիզովը ժպտաց գլուխն օրորելով, ապա հառաչելով ասաց.

— Լա՛վ, լա՛վ։ Այ թե խոսում եք, հա՞։ Շատ որ մնաք՝ դուք ծերերին կհաղթահարեք, ձեր թափը մեծ է... Մնաք բարո՛վ, ցանկանում եմ ձեզ ամենայն բարիք։ Եվ դեպի մարդիկ ավելի բարի լինեք, հա՞։ Մնաս բարո՛վ, Նի՛լովնա։ Պավելին կտեսնես, կասես՝ լսեցի նրա ճառը, լսեցի։ Ոչ բոլորն է հասկանալի, կան բաներ, որ սարսափելի են, բայց, ասա, ճի՛շտ են։

Նա գլխարկը բարձրացրեց և ծանր ու մեծորեն ծռվեց փոզոցի անկյունից ու հեռացավ։

— Լա՛վ մարդ է ըստ երևույթին,— նկատեց Սաշան, ուղեկցելով նրան իր խոշոր աչքերի ժպտուն հայացքով։

Մորը թվաց թե այդ օրն աղջկա դեմքն ավելի մեղմ ու բարի է, քան միշտ։

Տանը նրանք նստեցին բազմոցին, իրար կիպ սեղմված, և մայրը անդորրության մեջ հանգստանալով նորից խոսեց Սաշայի՝ Պավելի մոտ գնալու մասին։ Խիտ հոնքերը մտածկոտ բարձրացնելով, աղջիկը նայում էր հեռու, իր խոշոր, երազուն աչքերով, անվրդով մի խոհ պարուրել էր նրա դժգույն դեմքը։

— Հետո, երբ դուք երեխաներ ունենաք, ես կգամ ձեզ մոտ, նրանց գայակություն կանեմ։ Եվ այնտեղ մենք կապրենք այստեղից ոչ վատ։ Պաշան աշխատանք կճարի, նա ոսկի ձեռքեր ունի...

Մորը վրա զննող հայացք գցելով Սաշան հարցրեց։

— Իսկ մի՞թե դուք հիմա չեք ցանկանում գնալ նրա հետևից։

Մայրը հառաչելով ասաց.

— Ես նրան ի՛նչ հարկավոր եմ։ Միայն կխանգարեմ փախուստի դեպքում։ Նա ինքն է՛լ չէր համաձայնի...

Սաշան գլխով արեց.

— Չի համաձայնի։

— Բացի այդ, ես գործի վրա եմ,— ավելացրեց մայրը թեթև հպարտությամբ։

— Այո՛,— մտախոհ արձագանքեց Սաշան։— Դա լավ է...

Եվ հանկարծ ցնցվելով, կարծես իրենից մի բան նետելով, սկսեց խոսել պարզ և ցածր ձայնով.

— Նա այնտեղ չի մնա։ Նա կփախչի, իհարկե...

— Իսկ դո՞ւք ինչ կանեք... Եվ եթե երեխա էլ ունենա՞ք...

— Կտեսնենք, էլի՛։ Նա ինձ հաշվի չպիտի առնի, ես էլ նրան չեմ խանգարի։ Ինձ համար դժվար կլինի նրանից բաժանվելը, բայց պարզ է, որ ես մի կերպ կապրեմ։ Ես չեմ խանգարի նրան, ո՛չ։

Մայրն զգաց, որ Սաշան ընդունակ է այնպես անելու, ինչպես ասում է, նա խղճաց այդ աղջկան։ Նրան գրկելով ասաց.

— Անուշի՛կս, ձեզ համար դժվա՞ր կլինի։

Սաշան մեղմ ժպտաց ամբողջ մարմնով սեղմվելով նրան։

Եկավ Նիկոլայը հոգնած և վերարկուն հանելով շտապ ասաց.

— Դե՛, Սա՛շենկա, հեռացե՛ք, քանի դեռ ողջ եք։ Առավոտվանից երկու լրտես հետևիցս են ընկած և այնքան աշկարա, որ ձերբակալության հոտ է փչում։ Ես նախազգում եմ։ Մի տեղ

որևէ բան է պատահել։ Ի դեպ, ահա ինձ մոտ է Պավելի ճառը, որոշված է տպագրել։ Տարեք Լյուդմիլայի մոտ, աղաչեցեք, որ շուտ անի։ Պավելը փառավո՞ր է խոսել, Նի՛լովնա... Լրտեսներից զգուշացե՛ք, Սա՛շա...

Այս ասելով նա պինդ շփեց սառած ձեռքերը և սեղանին մոտենալով սկսեց շտապ-շտապ դուրս քաշել արկղները, նրանց մեջ թղթեր ջոկելով, մի քանիսը պատռում էր, մյուսները մի կողմ դնում մտահոգված ու ընկճված։

— Վաղո՞ւց է, որ ես բոլորը մաքրել եմ, բայց արդեն նորից այ թե որքան է հավաքվել դեսից դենից, սատանա՛ն գիտե։ Գիտե՞ք ինչ, Նի՛լովնա, գուցե լավ կանեք, եթե դուք էլ տանը չգիշերեք; հը՞։ Այդ տեսարանին ներկա լինելը բավական ձանձրալի է, իսկ նրանք կարող են ձեզ էլ նստեցնել, իսկ ձեզ համար անհրաժեշտ կլինի այստեղ-այնտեղ գնալ Պավելի ճառը տարածելու...

— Է՛, ես նրանց ինչի՞ եմ պետք,— ասաց մայրը։

Նիկոլայը ձեռքի թաթն աչքերի առջև շարժելով վստահորեն ասաց.

— Ես հոտառություն ունեմ։ Բացի այդ դուք կարող էիք Լյուդմիլային օգնել, հը՞։ Փորձանքից հեռո՛ւ կացեք...

Որդու ճառի տպագրությանը մասնակցելու հնարավորությունն ախորժելի էր մոր համար, ուստի նա պատասխանեց.

— Եթե այդպես է, ես կգնամ։

Եվ իր համար անսպասելիորեն ասաց վստահ, բայց կամաց.

— Այժմ ես ոչնչից չեմ վախենում, փա՞ռք աստծու։

— Հրաշալի՞ է,— բացականչեց Նիկոլայն առանց նրան նայելու։— Ահա թե ինչ. դուք ինձ ասացեք, ո՞ւր է իմ ճամպրուկը և ճերմակեղենս, թե չէ դուք ամեն բան ձեր գիշատիչ ձեռքն եք առել, և ես միանգամայն զրկված են անձնական սեփականությանս համար ազատորեն կարգադրություն անելու հնարավորությունից։

Սաշան լուռ այրում էր վառարանում թղթի կտորները, և երբ այրվում վերջանում էին, խնամքով խառնում էր մոխրի հետ։

— Սա՛շա, դուք գնացե՛ք,— ասաց Նիկոլայը ձեռքը նրան մեկնելով։— Ցտեսությո՛ւն։ Զմոռանա՛ք գրքեր հայթայթել, եթե որևէ հետաքրքիր բան լույս տեսնի։ Դեհ, ցտեսությո՛ւն, թանկագի՛ն ընկեր։ Զգույշ եղեք...

— Դուք կարծում եք՝ երկա՞ր կմնաք,— հարցրեց Սաշան։

— Սատանա՛ն գիտե դրանց։ Հավանորեն որևէ հանցանք են բարդում վրաս։ Նի՛լովնա, միասի՛ն գնացեք, հա՞։ Երկուսին դժվար է հետևելը, լա՞վ։

— Գնում եմ,— պատասխանեց մայրը։— Հիմա կհագնվեմ...

Մայրն ուշադրությամբ հետևում էր Նիկոլային, բայց ոչինչ չէր նկատում բացի մտատանջությունից, որ ծածկել էր նրա դեմքի սովորաբար բարի և մեղմ արտահայտությունը։ Ոչ շարժումների ավելորդ շփոթ, ոչ հուզմունքի որևէ նշան չէր տեսնում մայրն այդ մարդու մեջ, որ մյուսներից ավելի թանկագին էր իր հումար։ Դեպի ամենքը միատեսակ ուշադիր, բոլորի հետ սիրալիր և միահավասար, միշտ հանգիստ, միայնակ, Նիկոլայն ամենքի համար մնացել էր նույնը, ինչ որ առաջ էր, գաղտնի կյանքով ինքն իր մեջ և մարդկանց առջև մի ինչ-որ տեղ ապրող։ Բայց մայրը գիտեր, որ նա բոլորից ավելի է մոտեցել իրեն, և մայրը սիրում էր նրան մի զգույշ և կարծես ինքն իրեն չհավատացող սիրով։ Այժմ նա անչափ խղճում էր Նիկոլային, բայց զսպում էր իր զգացմունքը՝ գիտենալով, որ եթե ցույց տա, Նիկոլայը կշփոթվի, կամաչի և, ինչպես միշտ, մի քիչ ծիծաղելի կդառնա, մայրը չէր ուզում նրան այդպես տեսնել։

Մայրը նորից մտավ սենյակ։ Նիկոլայը Սաշայի ձեռքը սեղմելով ասում էր.

— Հրաշալի՞ է։ Դա, ես հավատացած եմ, շատ լավ է նրա համար և ձեզ համար։ Մի քիչ անձնական երջանկություն վնաս չունի։ Դուք պատրաստ եք, Նի՛լովնա։

Նա մոտեցավ մորը ժպտալով և ակնոցն ուղղելով։

— Դե՛հ, ցտեսությո՛ւն, ես ուզում եմ կարծել, որ ինձ կպահեն երեք-չորս ամիս, կես տարի՝ վերջապես։ Կես տարին, դա շատ երկար կյանք է... Պահպանեցե՛ք ձեզ, խնդրում եմ, հա՞։ Եկեք գրկախառնվենք...

Վտիտ ու բարակ՝ նա իր ամուր ձեռքերը գցեց մոր վզով, նայեց նրա աչքերին և ծիծաղեց, ասելով.

— Ես կարծես սիրահարվել եմ ձեզ, ամբողջ ժամանակ գրկախառնվում եմ։

Մայրը լուռ համբուրում էր նրա ճակատը և շրթունքները, իսկ ձեռքերը դողում էին։ Որպեսզի Նիկոլայն այդ չնկատի, նա ձեռքերը հեռացրեց։

— Տեսե՛ք, վազը ավելի՛ զգույշ եղեք։ Այ, վազն առավոտ դուք ուղարկեցեք մի տղայի, այնտեղ Լյուդմիլայի մոտ մի այդպիսի տգա կա, թո՛ղ նա մտիկ անի։ Դե՛հ, ցտեսությո՛ւն, ընկերնե՛ր։ Ամեն բան լա՛վ է...

Սաշան փողոցում մորը կամաց ասաց.

— Ահա այդպես պարզ կերպով նա դեպի մահ էլ կգնա, եթե պետք լինի, և այդպես էլ հավանորեն մի քիչ կշտապի։ Իսկ երբ մահը նայի նրա դեմքին, նա ակնոցը կուզղի ու կասի՝ հրաշալի՛ է, ու կմեռնի։

— Սիրում եմ ես նրան,— շշնջաց մայրը։

— Ես զարմանում եմ նրանով, իսկ սիրել՝ ոչ։ Հարգում եմ, շա՛տ։ Նա մի տեսակ շոր է, թեև բարի և նույնիսկ գուցե քնքուշ է երբեմն, բայց այդ բոլորը բավական չէ մարդկային լինելու համար... Կարծես մեզ հետևո՞ւմ են։ Արի բաժանվենք։ Եվ Լյուդմիլայի մոտ չմտնեք, եթե ձեզ թվա, որ լրտես կա։

— Ես գիտեմ,— ասաց մայրը։

Բայց Սաշան պնդելով ավելացրեց.

— Զմտնե՛ք։ Այն ժամանակ ինձ մոտ կգար։ Ցտեսությո՛ւն առայժմ։

Նա արագ դարձավ և ետ գնաց։

XXVIII

Մի քանի բոպե հետո մայրը նստած տաքանում էր վառարանի մոտ Լյուդմիլայի փոքրիկ սենյակում։ Տանտիրուհին սև զգեստով, որի վրա գոտի էր կապել, դանդաղ շրջում էր, սենյակը լցնելով խշխշոցով և հրամայող ձայնի հնչյուններով։

Վառարանում ճարճատում և աղմկում էր կրակը՝ սենյակի օդը ներս քաշելով, կնոջ ձայնը հնչում էր համաչափ։

— Մարդիկ շատ ավելի հիմար են քան թե չարչ։ Նրանք կարողանում են տեսնել միայն այն, ինչ մոտ է իրենց, ինչ կարող են իսկույն վերցնել։ Իսկ ամեն ինչ, որ մոտ է՝ էժան է, հեռավո՛ր է թանկ։ Չէ՞ որ ըստ էության ամենքի համար ձեռնտու և հաճելի կլիներ, եթե կյանքը դառնար այլ, ավելի հեշտ, մարդիկ՝ ավելի խելացի։ Բայց դրա համար անհրաժեշտ է, որ այժմ եթե մարդ մի քիչ անհանգստացնի իրեն...

Հանկարծ մոր դիմաց կանգ առնելով նա ավելի կամաց և կարծես ներողություն խնդրելով, ասաց.

— Քիչ եմ տեսնում մարդկանց և, երբ որևէ մեկն ինձ մոտ է գալիս, սկսում եմ խոսել։ Ծիծաղելի՞ է։

— Ինչո՞ւ,— արձագանքեց մայրը։ Նա աշխատում էր գուշակել, թե որտեղ է տպագրում այդ կինը, և ոչ մի արտասովոր բան չտեսավ։ Դեպի փողոցը երեք լուսամուտ ունեցող այդ սենյակում կային մի բազմոց, դրքերի պահարան, սեղան, աթոռներ, պատի մոտ անկողինն էր, նրա մոտ, անկյունում լվացարանն էր, մյուս անկյունում վառարանը, պատերին՝ լուսանկարներ։ Ամեն ինչ նոր էր, ամուր, մաքուր, և ամեն բանի վրա տանտիրուհու վանական կերպարանքը սառն ստվեր էր գցում։ Մի ինչոր ծածկված, թաքցված բան էր զգացվում, բայց որտեղ լինելը հասկանալի չէր։ Մայրը զննեց դռները, մեկով նա այդտեղ էր մտել փոքրիկ նախասենյակից, վառարանի մոտ կար մի ուրիշ դուռ, նեղ ու բարձր։

— Ես ձեզ մոտ գործով եմ եկել,— շփոթված ասաց նա, նկատելով, որ տանտիրկինը դիտում է իրեն։

— Ես գիտե՛մ։ Ինձ մոտ այլ կերպ չեն գալիս...

Լյուդմիլայի ձայնի մեջ մայրը մի տարօրինակ բան լսեց, նայեց Լյուդմիլայի դեմքին, նա ժպտում էր բարակ շրթունքների անկյուններով, ակնոցի ապակիների հետևում փայլում էին փայլատ աչքերը։ Հայացքը մի կողմ թեքելով մայրը նրան հանձնեց Պավելի ճառը։

— Ահա, խնդրում են որքան կարելի է շատ տպել...

Եվ սկսեց պատմել Նիկոլայի ձերբակալվելու նախապատրաստությունների մասին։

Լյուդմիլան լուռ՝ թուղթը խրեց գոտու տակ, նստեց աթոռին, նրա ակնոցի ապակիներին արտացոլվեց կրակի կարմիր փայլը, կրակի ջերմ ժպիտները խաղացին անշարժ դեմքի վրա։

Երբ նրանք ինձ մոտ գան, ես նրանց վրա կկրակեմ,— կամաց և վճռական արտասանեց Լյուդմիլան՝ մոր պատմածը լսելով։— Ես իրավունք ունեմ բռնությունից պաշտպանվելու և ես պարտավոր եմ կռվել նրանց դեմ քանի որ ուրիշներին կոչ եմ անում կռվելու։

Կրակի շողքերը ցած սահեցին նրա դեմքից, և դեմքը նորից դարձավ խիստ, մի քիչ ամբարտավան։

«Լավ չե՞ս ապրում»,— հանկարծ սիրալիր մտածեց մայրը։

Լյուդմիլան սկսեց կարդալ Պավելի ճառն ակամա, ապա ավելի ու ավելի էր կռանում թղթի վրա, կարդացած թերթիկներն

Արագ մի կողմ դնելով, և վերջացնելով վեր կացավ, շտկվեց, մոտեցավ մորը։

— Ա՛յս լա՞վ է։

Նա մի քիչ մտածեց, մի բոպե գլուխը կախելով։

— Ես չէի ուզում ձեզ հետ խոսել ձեր որդու մասին, նրան չեմ պատահել և տխուր խոսակցություններ չեմ սիրում։ Ես գիտեմ, թե ինչ է նշանակում, երբ մտերիմ մարդն աքսոր է գնում։ Բայց ես ուզում եմ հարցնել ձեզ, լա՞վ է այդպիսի որդի ունենալը...

— Այո՛, լա՞վ է,— ասաց մայրը։

— Եվ՝ սարսափելի, այո՞։

Հանգիստ ժպտալով մայրը պատասխանեց.

— Այժմ արդեն սարսափելի չէ...

Լյուդմիլան թուխ ձեռքով ուղղելով հարթ սանրված մազերը դարձավ դեպի պատուհանը։ Մի թեթև ստվեր էր դողդողում նրա այտերին, գուցե ղսպված ժպիտի ստվերը։

— Ես շուտ կշարեմ։ Դուք պառկեցե՛ք, այսօր ձեզ համար ծանր է եղել, հոգնել եք։ Պառկեցեք այստեղ, մահճակալի վրա, ես չեմ քնելու և գիշերը գուցե ձեզ արթնացնեմ ինձ օգնելու համար... Երբ կպառկեք՝ լամպը հանգցրեք։

Նա վառարանը երկու կտոր փայտ դցեց, շտկվեց և հեռացավ վառարանի մոտ գտնվող նեղ դռնով, դուռը հետևից պինդ փակելով։ Մայրը նայեց նրա հետևից և սկսեց հանվել մտածելով տանտիրուհու մասին.

«Ինչ-որ բանի կարոտ է քաշում...»

Հոգնածությունը պտտում էր նրա գլուխը, իսկ հոգին տարօրինակ կերպով հանգիստ էր, և աչքերում ամեն ինչ լուսավորվում էր մեղմ ու փաղաքշող լույսով, որ կամաց և հավասարապես լցվում էր կուրծքը։ Նա արդեն ծանոթ էր այդ հանգստությանը, դա երևում էր միշտ մեծ հուզմունքներից հետո, թեև առաջներում մի փոքր անհանգստացնում էր իրեն, բայց այժմ միայն լայնացնում էր հոգին, ամրապնդելով մեծ և զորեղ զգացմունքով։ Մայրը լամպը հանգցրեց, պառկեց սառն անկողնում, վերմակի տակ կուչ եկավ և շուտով քնեց խոր քնով...

Իսկ երբ աչքերը բացեց, սենյակը լի էր ձմեռային պարզ օրվա սառն սպիտակ լույսով, տանտիրուհին գիրքը ձեռին պառկած էր բազմոցին և ոչ իր նման ժպտալով՝ նայում էր նրա երեսին։

— Վա՞յ,— շփոթված բացականչեց մայրը։— Այս ինչքա՞ն եմ քնել, ժամը քանի՞սն է, հը՞։

— Բարի՛ լույս,— արձագանքեց Լյուդմիլան։— Շուտով տասը կլինի, վեր կացեք թեյ խմենք։

— Ինչո՞ւ ինձ չարթնացրիք։

— Ուզում էի։ Մոտեցա ձեզ, իսկ դուք այնպես լավ ժըպտում էիք քնի մեջ...

Ամբողջ մարմնի ճկուն շարժումով նա վեր կացավ բազմոցից, մոտեցավ անկողնին, կռացավ մոր դեմքի վրա, և մայրը նրա անփայլ աչքերում տեսավ մի ինչ-որ հարազատ, մտերիմ և հասկանալի բան։

— Մեղքս գալիս էր ձեզ խանգարել, գուցե դուք երջանիկ երազ էիք տեսնում...

— Ոչի՛նչ չէի տեսնում։

— Է՛հ, միևնույն է։ Բայց ինձ դուր եկավ ձեր ժպիտը։ Այնպես խաղաղ էր, բարի... մե՛ծ։

Լյուդմիլան ծիծաղեց, նրա ծիծաղը հնչում էր ոչ բարձր, թավշի փափկությամբ։

— Ես մտածում էի ձեր մասին... Ձեր կյանքը ծա՞նր է։

Մայրը հոնքերը շարժելով լուռ մտածում էր։

— Իհարկե՝ ծանր է,— բացականչեց Լյուդմիլան։

— Չգիտեմ իսկապես,— զգուշորեն ասաց մայրը։— Երբեմն ծանր է թվում։ Բայց այնքան շատ բան կա, բոլորն այնպես լուրջ, զարմանալի, իրար հետևից անցնում են այնպես արագարագ...

Նրան ծանոթ կայտառ գրգիռի ալիքը բարձրանում էր կըրծքում, սիրտը լցնելով պատկերներով ու մտքերով։ Նա նստեց անկողնում մտքերն շտապ-շտապ զգեստավորելով բառերով։

— Գնում է, գնում, բոլորը մի բանի... Ծանր բան շա՛տ կա, գիտեք։ Մարդիկ տանջվում են, նրանց ծեծում են, անգթորեն ծեծում, և շատ ուրախություններ արգելված են նրանց, այո՞ շա՞տ ծանր է։

Լյուդմիլան գլուխն արագ վեր բարձրացնելով նայեց նրան գրկախառնվող հայացքով և նկատեց.

— Դուք ձե՛ր մասին չեք խոսում։

Մայրը նայեց նրան, վեր կացավ անկողնից և հագնվելով ասում էր.

— Բայց, ախր ի՞նչպես կարող ես մի կողմ քաշվել, երբ մեկին սիրում ես, և նա թանկ է, ու ամենքի համար վախենում ես, ամենքին խղճում ես, ամեն բան սրտիդ է դիպչում... Ի՞նչպես հեռու կենաս։

Սենյակի մեջտեղը կիսահագնված կանգնած՝ նա մի րոպե մտածմունքի մեջ ընկավ։ Նրան թվաց, թե չկա ինքը, ինքը, որ ապրում էր որդու համար անհանգստանալով և վախենալով, նրա մարմինը պաշտպանելու մտքերով, չկա ինքը իբրև այդպիսին, անջատվել է, գնացել հեռու, և գուցե բոլորովին այրվել է հուզմունքի կրակում, և դա թեթևացրեց, մաքրեց հոգին, նորոգեց սիրտը նոր ուժով։ Նա ուսկնդրեց ինքն իրեն՝ կամենալով նայել իր սրտի խորքը և վախենալով նորից արթնացնել այնտեղ մի որևէ հին, վրդովեցնող բան։

— Ինչի՞ մասին եք մտածում,— սիրալիր հարցրեց տանտիրուհին մոտենալով նրան։

— Չգիտեմ,— պատասխանեց մայրը։

Քիչ լուռ մնացին՝ իրար նայելով, երկուսն էլ ժպտացին, ապա Լյուդմիլան սենյակից դուրս գնաց ասելով.

— Տեսնեմ ինչ է անում ինքնաեռը։

Մայրը պատուհանից նայեց, փողոցում փայլում էր սառը ցրտաշունչ օրը, մոր կրծքի տակ ես պայծառ էր, բայց տաք։ Նա ցանկություն ուներ խոսելու ամեն բանի մասին, շատ, հրճվալից, երախտագիտության մի աղոտ զգացումով դեպի մի անհայտ ոմն այն բոլորի համար, ինչ որ մտել էր իր հոգու մեջ և կարմրին էր տալիս այնտեղ երեկոյան վերջալույսի լույսով։ Աղոթելու վաղուց չծագող ցանկությունը նրան վրդովում էր։ Մեկի երիտասարդ դեմքը մտաբերեց, հիշողության մեջ գոչեց մի զիլ ձայն՝ «սա Պավել Վլասովի մա՛յրն է»... Հրճվագին և քնքշորեն շողացին Սաշայի աչքերը, աչքի առջև կանգնեց Ռիբինի մութ կերպարանքը, ժպտում էր որդու բռանգե, ամրալինդ դեմքը, շփոթված թարթում էր աչքերը Նիկոլայը, և հանկարծ ամեն ինչ ցնցվեց խոր ու թեթև շունչ քաշելուց, խառնվեց և խճճվելով դարձավ թափանցիկ, գույնզգույն ամպ, որը բոլոր մտքերն ընդգրկել էր հանգստի զգացումով։

— Նիկոլայն իրավացի՞ էր,— ասաց Լյուդմիլան ներս մտնելով։— Նրան ձերբակալել են։ Ես տղային այնտեղ ուղարկեցի, ինչպես դուք ասացիք։ Նա ասում էր, թե բակում ոստիկաններ կային, տեսել է մի ոստիկանի, որը թաքնվել է դարպասի

հետևում։ Եվ խուզարկուները շրջելիս են եղել, տղան նրանց ճանաչում է։

— Այդպես,— ասաց մայրը գլխով անելով։— Ա՜խ, խե՜ղճ...

Հառաչեց, բայց առանց տխրելու և կամաց զարմանում էր այդ բանի վրա։

— Նա վերջին ժամանակներս շատ էր կարդում քաղաքի բանվորների մոտ, և ընդհանրապես նրա ժամանակն էր հեռանալու,— մռայլ և հանգիստ նկատեց Լյուդմիլան։— Ընկերներն ասում էին՝ գնա՛։ Զլսեց։ Իմ կարծիքով, այդպիսի դեպքերում պետք է ստիպել, այլ ոչ թե հորդորել...

Շեմքում կանգնեց մի սևահեր և կարմրաթուշ տղա գեղեցիկ կապույտ աչքերով և սապատավոր քթով։

— Ինքնաեռը նե՞րս բերեմ,— զիլ ձայնով հարցրեց նա։

— Խնդրեմ, Սերյո՛ժա։ Իմ սանն է։

Մորը թվում էր, թե Լյուդմիլան այդ օրն ուրիշ տեսակ է, ավելի պարզ ու մտերիմ է իր հետ։ Նրա բարեկազմ մարմնի ճկուն շորորանքի մեջ կար շատ գեղեցկություն և ուժ, որ որոշ չափով մեղմացնում էր խիստ և գունատ դեմքը։ Գիշերվա ընթացքում ավելացել էին նրա աչքերի տակի շրջանակները։ Եվ նրա մեջ զգացվում էր լարված ճիգ, հոգու մեջ զիլ ձգված մի լար։

Տղան ինքնաեռը ներս բերեց։

— Ծանոթացի՛ր, Սերյո՛ժա։ Պելագեյա Նիլովնան է, այն բանվորի մայրը, որին երեկ դատապարտեցին։

Սերյոժան լուռ գլուխ տվեց, սեղմեց մոր ձեռքը, դուրս եկավ բուկի բերեց և նստեց սեղանի մոտ։ Լյուդմիլան թեյ լցնելով մորը համոզում էր տուն չգնալ, մինչև չպարզվի, թե ոստիկանությունն ո՛ւմ է սպասում այնտեղ։

— Գուցե ձե՛զ է սպասում։ Ձեզ երևի հարցուփորձ կանեն...

— Թո՛ղ անեն,— արձագանքեց մայրը։— Ձերբակալեն էլ՝ փույթս չի։ Միայն թե առաջ Պաշայի ճառը ցրենք։

— Արդեն շարված է։ Վաղը կարող է պատրաստ լինել քաղաքի և ավանի համար... Դուք ճանաչո՞ւմ եք Նատաշային։

— Ինչպե՞ս չէ՞։

— Կտանեք, նրան կտաք...

Տղան լրագիր էր կարդում և կարծես ոչինչ չէր լսում, բայց երբեմն նրա աչքերը նայում էին թերթի հետևից մոր դեմքին, և երբ մայրը նկատում էր նրանց աշխույժ հայացքը, դուր էր գալիս

այդ իրեն, ժպտում էր։ Լյուդմիլան նորից հիշեց Նիկոլային, առանց խղճալու նրան՝ ձերբակալվելու համար, իսկ մորը կատարելապես բնական էր թվում նրա տոնը։ Ժամանակն անցնում էր ավելի արագ, քան ուրիշ օրեր, երբ թեյ խմելը վերջացրին, արդեն կեսօրին մոտ էր։

— Այդպիսի բանե՞ր,— բացականչեց Լյուդմիլան։

Եվ հենց այդ ժամանակ դուռն շտապ խփեցին։ Տղան վեր կացավ։ Հարցականորեն նայեց տանտիրուհուն աչքերը կկոցելով։

— Բա՛ց, Սերյոժա։ Ո՞վ կարող է լինել։

Եվ հանգիստ շարժումով Լյուդմիլան ձեռքը շրջազգեստի գրպանը տարավ՝ մորն ասելով։

— Եթե ժանդարմներ են, դուք, Պելագե՛յա Նիլովնա, ահա այստեղ կանգնեցեք, այս անկյունում։ Իսկ դու, Սերյո՛ժա...

— Ես գիտեմ,—կամաց պատասխանեց տղան անհայտանալով։

Մայրը ժպտաց։ Այդ պատրաստությունները նրան չէին հուզում, նրա մեջ փորձանքի նախազգացում չկար։

Մտավ փոքրիկ բժիշկը։ Նա շտապ ասաց.

— Նախ՝ Նիկոլայը ձերբակալված է։ Հա՜, դուք այստե՞ղ եք, Նի՛լովնա։ Ձերբակալման ժամանակ դուք չկայի՞ք։

— Նա ինձ այստեղ էր ուղարկել։

— Հը՜մ, ես չեմ կարծում, որ դա ձեզ համար օգտակար է... Երկրորդ՝ այս գիշեր զանազան երիտասարդներ հեկտոգրաֆով մի հինգ հարյուր օրինակ ճառ են տպագրել։ Ես տեսել եմ, վատ չի տպված, դյուրընթեռնելի, պարզ է։ Նրանք ուզում են երեկոյան ցրել քաղաքում։ Ես դեմ եմ, քաղաքի համար հարմար են տպագրված թերթիկները, իսկ դա հարկավոր է որևէ տեղ ուղարկել։

— Ա՛յ, ես հենց դրանք կտանեմ Նատաշային,—շտապ բացականչեց մայրը։— Տվեք տեսնե՛մ։

Նա սաստիկ ցանկանում էր շուտով տարածել Պավելի ճառը, ամբողջ աշխարհը ողողել որդու խոսքերով և նայում էր բժշկի դեմքին պատասխան սպասող աչքերով, խնդրելու պատրաստ։

— Սատանան գիտե, թե որքան հարմար է ձեզ համար այժմ զբաղվել այդ գործով,— անվճռականորեն ասաց բժիշկը և ժամացույցը հանեց։— Այժմ տասնմեկից քառասուներեք րոպե անց է, գնացքը երկուսից հինգ անց է գնում, ճանապարհը տևում է հինգ ժամ տասնհինգ րոպե։ Դուք կհասնեք երեկոյան, բայց ոչ հարկավոր չափով ուշ։ Եվ բանն այդ չի...

— Այդ չի,— կրկնեց տանտիրուհին հոնքերը կիտելով։

— Իսկ ի՞նչ է,— հարցրեց մայրը նրանց մոտենալով։— Միայն այն, որ լավ կատարվի...

Լյուդմիլան լարված նայեց նրան և ճակատը տրորելով նկատեց.

— Ձեզ համար վտանգավոր է...

— Ինչո՞ւ,— տաք-տաք և պահանջկոտ բացականչեց մայրը։

— Ահա թե ինչո՛ւ,— ասաց բժիշկն արագ ու թոթովելով,— դուք տանից անհետացել եք Նիկոլայի ձերբակալումից մեկ ժամ առաջ։ Դուք գնում եք գործարան, ուր ձեզ ճանաչում են իբրև վարժուհու մորաքույր։ Ձեր գալուց հետո գործարանում վնասակար թռուցիկներ են հայտնվում։ Այս բոլորն իրար հետ համընկնելով՝ հանգույց են գոյացնում ձեր պարանոցի շուրջը։

— Այնտեղ ինձ չեն նկատի,— համոզում էր մայրը՝ տաքանալով։— Իսկ վերադառնամ տուն, կձերբակալեն, կհարցնեն, թե որտեղ էի...

Մի վայրկյան կանգ առնելով նա բացականչեց.

— Ես գիտեմ, թե ի՛նչ կասեմ։ Այնտեղից ես ուղղակի կգնամ ավան, ես այնտեղ ծանոթ ունեմ, Սիզովը, ես կասեմ, թե իբր դատարանից ուղղակի գնացել եմ նրա մոտ, վիշտն է իբր տարել ինձ։ Նա էլ վիշտ ունի, քրոջ տղային դատապարտել են։ Նա նույն ցուցմունքը կտա։ Տեսնո՞ւմ եք։

Զգալով, որ նրանք զիջելու են իր ցանկության ուժին, ձրգտելով շուտով հարկադրել նրանց այդ անելու, նա ավելի ու ավելի էր պնդում։ Եվ նրանք զիջեցին։

— Ի՞նչ արած, գնացե՛ք,— դժկամորեն համաձայնեց բժիշկը։

Լյուդմիլան լուռ անցուդարձ էր անում սենյակում։ Նրա դեմքը մթնել էր, դուրս պրծել, իսկ գլուխը պահում էր՝ նկատելիորեն լարելով պարանոցի մկանները, կարծես գլուխը հանկարծակի ծանրացել և ակամա կախ էր ընկնում կրծքի վրա։ Մայրն այդ նկատեց։

— Դուք բոլորդ ինձ խնայում եք,— ժպտալով ասաց նա։— Ձեզ չեք խնայում...

— Ճիշտ չի,— պատասխանեց բժիշկը։— Մենք մեզ խնա-

յում ենք, պե՞տք է խնայենք։ Եվ խիստ հայհոյում ենք նրան, ով անօգուտ կերպով սպառում է իր ուժերը, այո՛, Հիմա, ահա՛ թե ինչ, ճառը դուք կստանաք կայարանում...

Նա մորը բացատրեց, թե այդ ինչպես են անելու, ապա նայեց նրա դեմքին, ասաց.

— Դե՛հ, հաջողությո՛ւն եմ ցանկանում։

Եվ դնաց այնուամենայնիվ ինչ-որ բանից դժգոհ։ Երբ դուռը նրա հետևից փակվեց, Լյուդմիլան մոտեցավ մորը, ծիծաղելով անձայն։

— Ես ձեզ հասկանում եմ...

Մորը թևանցուկ անելով նա նորից սկսեց սենյակում անցուդարձ անել։

— Ես էլ որդի ունեմ։ Նա արդեն տասներեք տարեկան է, բայց հոր մոտ է ապրում։ Իմ ամուսինը դատախազի օգնական է։ Եվ տղաս նրա հետ է։ Նա ի՞նչ կդառնա, հաճախ մտածում եմ ես...

Նրա տամուկ ձայնը ցնցվեց, ապա նորից մտախոհ ու կամաց հնչեց խոսքը։

— Նրան դաստիարակում է ա՛յն մարդկանց գիտակից թշնամին, որոնք մոտ են ինձ, որոնց ես համարում եմ աշխարհիս լավագույն մարդիկը։ Որդիս կարող է մեծանալ իբրև մի թշնամի։ Նա չի կարող ինձ հետ ապրել, ես ուրիշի անվան տակ եմ ապրում։ Ութ տարի է՝ չեմ տեսել նրան, դա շա՛տ է, ո՛ւթ տարի։

Պատուհանի մոտ կանգ առնելով, նայում էր դժդույն, ամա՛լի երկնքին, շարունակելով.

— Եթե նա ինձ հետ լիներ. ես ավելի զորեղ կլինեի, չէի ունենա սրտումս այն վերքը, որը միշտ ցավում է։ Եվ նույնիսկ եթե նա մեռներ, ես ավելի հանգիստ կլինեի...

— Աղավնյա՛կս,— կամաց ասաց մայրը՝ զգալով, թե կարեկցությունն ինչպես է այրում իր սիրտը։

— Դուք երջանի՞կ կին եք,— ժպտալով արտասանեց Լյուդմիլան։— Դա հրաշալի՞ է, մայր և որդի իրար կողքի, դա հազվագյո՛ւտ բան է։

Վլասովան իր համար անսպասելիորեն բացականչեց.

— Այո, լա՛վ է։— Եվ կարծես գաղտնիք հաղորդելով, ձայնն իջեցնելով շարունակեց։— Դուք բոլորդ, Նիկոլայ Իվանովիչը, ճշմարտության բոլոր մարդիկ, նույնպես իրար կողքի եք։ Հան-

կարծ մարդիկ հարազատներ են դարձել, բոլորիդ հասկանում եմ։ Խոսքներդ չեմ հասկանում, իսկ բոլոր մնացածը՝ հասկանում եմ։

— Ա՛յ թե ի՞նչ,— ասաց Լյուդմիլան։— Ա՛յ թե ի՞նչ...

Մայրը ձեռքը դրեց նրա կրծքին և կամաց հրելով, խոսում էր գրեթե շշնջալով և կարծես դիտելով այն, ինչի մասին խոսում է։

— Խմբովին գալի՞ս են երեխաները։ Ա՛յ թե ես ինչ եմ հասկանում, աշխարհումս գալիս են երեխաները, ամբողջ երկրի վրա, բոլորը, ամեն կողմից՝ դեպի միևնույն նպատակը։ Գալիս են ամենալավ սրտերը, ազնիվ խելքի տեր մարդիկ, անվախ վրա են տալիս ամեն մի չարիքի, գալիս են, ամուր ոտներով կոխոտում ստությունը։ Երիտասարդ, առողջ, նրանք բերում են իրենց անհաղթելի ուժերը բոլորը դեպի մի բան, դեպի արդարությո՛ւն։ Գալիս են հաղթելու մարդկային ամբողջ ցավը, զինվել են ոչնչացնելու արար աշխարհի դժբախտությունները, գալիս են հաղթահարելու այլանդակը և կհաղթահարե՞ն։ Նոր աբա՛ կվառենք, ասում էր ինձ մեկը, և կվառե՞ն։ Կմիացնե՞նք բոլոր կոտրված սրտերը, մի սիրտ կդարձնենք, կմիացնե՞ն։

Նա հիշում էր մոռացված աղոթքների խոսքերը, նոր հավատով վառվելով նա դուրս էր նետում դրանք իր սրտից կայծերի պես։

— Դեպի ամեն ինչ սեր են տածում երեխաները, որոնք գնում են ճշմարտության և գիտակցության ճանապարհներով, և ամեն բան զգեստավորում են նոր երկինքներով, ամեն բան լուսավորում են մշտնջենական լույսով, հոգու միջից։ Նոր կյանք է առաջ գալիս դեպի ամբողջ աշխարհը երեխաների տածած սիրո բոցի մեջ։ Եվ ո՞վ կհանգցնի այդ սերը, ո՞վ։ Ի՞նչ ուժ կա դրանից բարձր, ով կհաղթահարի այն։ Երկիրն է ծնել այդ սերը, և ամբողջ կյանքը նրա հաղթությունն է ցանկանում, ամբո՞ղջ կյանքը։

Նա ընկրկեց Լյուդմիլայից՝ հուզմունքից հոգնած, և նստեց ծանր հևալով։ Լյուդմիլան նույնպես հեռացավ անաղմուկ, զգույշ, կարծես վախենալով, թե մի բան կխորտակի։ Նա ճկունությամբ անցուդարձ էր անում սենյակում, իր առջևն էր նայում անփայլ աչքերի խոր հայացքով և կարծես ավելի բարձր, շիտակ, բարակ էր գարձել։ Նրա նիհար, խիստ դեմքը կենտրոնացած էր և շրթունքները ջղայնորեն սեղմված։ Սենյակի խաղաղությունը

շուտով հանգստացրեց մորը. Լյուդմիլայի տրամադրությունը նկատելով, նա հանցավորի պես և ցածր ձայնով հարցրեց.

— Ես գուցե որևէ բան այնպե՞ս չասացի...

Լյուդմիլան արագ ետ դարձավ, նայեց նրան կարծես վախեցած և շտապ-շտապ խոսեց ձեռները մեկնած դեպի մայրը, կարծես ուզենալով մի բան կանգնեցնել։

— Բոլորն այդպես է, այդպես է։ Բայց այլևս չենք խոսի այդ մասին։ Թող դա մնա այնպես, ինչպես ասվեց։— Եվ ավելի հանգիստ շարունակեց.— դուք շուտով արդեն պետք է գնաք, չէ՞ որ հեռու է։

— Այո՛, շուտով։ Ա՜խ, ինչքա՜ն ուրախ եմ, եթե իմանայի՞ք։ Որդուս խոսքն եմ տանելու, իմ արյունի խո՜սքը։ Չէ՞ որ դա նույնն է թե՝ սեփական հոգի՞ս։

Նա ժպտում էր, բայց նրա ժպիտը պարզ չէր անդրադառնում Լյուդմիլայի դեմքին։ Մայրն զգում էր, որ Լյուդմիլան սառեցնում է այդ ուրախությունն իր զսպվածությամբ, և հանկարծ նրա մեջ ծագեց մի համառ ցանկություն, այդ խիստ հոգու մեջ թափելու իր կրակը, վառելու այն, թո՛ղ նա էլ հնչի ուրախությամբ լի սրտին ներդաշնակ։ Նա վերցրեց Լյուդմիլայի ձեռները, ամուր սեղմեց ասելով.

— Իմ թանկագի՛ն։ Ի՜նչ լավ է, երբ իմանում ես, որ կյանքում արդեն լույս կա բոլոր մարդկանց համար, և կգա ժամանակը նրանք կտեսնեն այդ լույսը, հոգով կգրկախառնվեն նրա հետ։

Նրա բարի, մեծ դեմքը ցնցվում էր, աչքերը ճաճանչափայլ ժպտում էին, և հոնքերը դողդողում էին նրանցից վեր, կարծես նրանց փայլը թևավորելով։ Նրան արբեցնում էին մեծ մտքերը, նա այդ մտքերի մեջ էր դնում այն ամենը, ինչով այրվում էր իր սիրտը, ինչ կարողացել էր վերապրել, և մտքերը սեղմելով դարձնում էր լուսավոր խոսքերի ամուր ծանրակշիռ բյուրեղներ։ Նրանք ավելի ու ավելի մեծ թափով էին ծնվում աշնանային սրտի մեջ, որը լուսավորված էր գարնան արևի ստեղծարար ուժով, ավելի ու ավելի վառ էին ծաղկում և կարմրին տալիս նրա մեջ։

— Չէ՞ որ կարծես նոր աստված է ծնվում մարդկանց համար։ Ամեն ինչ ամենքի՛ համար, ամենքն ամեն ինչի՛ համար։ Ես այսպես եմ հասկանում ձեզ բոլորիդ։ Հիրավի, դուք բոլորդ

ընկերներ եք, բոլորդ հարազատներ եք, բոլորդ մի մոր՝ ճշմարտությա՜ն զավակներն եք։

Նորից իր հուզմունքի ալիքով տարված, նա կանգ առավ, շունչ քաշեց և լայն շարժումով, կարծես գրկելու համար, ձեռները տարածելով ասաց.

— Երբ ինքս իմ մեջ ասում եմ այդ ընկերնե՛ր բառը, սրտով լսում եմ, որ գալի՞ս են։

Մայրը հասավ նրան, ինչի ձգտում էր, Լյուդմիլայի դեմքը զարմացած բոցավառվեց, շրթունքները դողում էին, աչքերից գլորվում էին արցունքները խոշոր ու վճիտ։

Մայրն ամուր գրկեց նրան, անմռունչ ծիծաղեց՝ թեթևակի հպարտանալով իր սրտի հաղթությամբ։ Երբ նրանք իրար հրաժեշտ էին տալիս, Լյուդմիլան նայեց նրա դեմքին և կամաց հարցրեց.

— Դուք գիտե՞ք, որ ձեզ հետ լինելը լա՜վ է։

XXIX

Փողոցում սառնաշունչ օդը չոր և ամուր գրկեց մոր մարմինը, թափանցեց կոկորդը, խտղտացրեց քիթը և մի վայրկյան կրծքում ճնշեց շնչառությունը։ Կանգ առնելով մայրը շուրջը նայեց. մոտիկ անկյունում կանգնած էր բրդոտ գլխարկով մի կառապան, հեռվում գնում էր մի մարդ կռացած, գլուխն ուսերի մեջ քաշած, իսկ նրա առջևից ցատկոտելով վազում էր մի զինվոր ականջները շփելով։

«Երևի խանութ են ուղարկել զինվորին»,— մտածեց մայրը և քայլեց հաճույքով ականջ դնելով, թե ինչպես թարմ և հնչեղ է ճռճռում ձյունն իր ոտների տակ։ Նա վաղ հասավ կայարան, գնացքը դեռ պատրաստ չէր, բայց երրորդ կարգի կեղտոտ, ծխից սևացած դահլիճում արդեն շատ ժողովուրդ էր հավաքվել, ցուրտն այդտեղ էր քշել երկաթուղային բանվորներին, տաքանալու էին եկել կառապանները և ինչ- որ վատ հագնված անօթևան մարդիկ։ Կային նաև ճանապարհորդներ, մի քանի գյուղացի, մի հաստ վաճառական ջրարջի մորթուց մուշտակը հագին, մի քահանա իր չեչոտ աղջկա հետ, հինգ զինվոր, անհանգիստ մեշչաններ։ Մարդիկ ծխում էին, խոսում, թեյ, օղի խմում։ Բուֆետի մոտ մեկը որոտընդոստ ծիծաղում էր, գլուխների վրայով պրտտում էին ծխի ալիքները։ Դուռը բացվելիս ճռռում էր, դողդո-

գում ու զրնգում էին ապակիները, երբ դուռը շրխկալով փակում էին։ Ծխախոտի և աղած ձկան հոտը թունդ խփում էր մարդու քթին։

Մայրը նստեց մուտքի մոտ այնպես, որ նկատվի, և սպասում էր։ Երբ դուռը բացվում էր, նրա վրա էր թռչում սառն օդի հոսանքը, դա հաճելի էր նրա համար, և նա ամբողջ կրծքով խոր ներշնչում էր այդ օրը։ Մտնում էին կապոցները ձեռքերին մարդիկ ծանր հագնված, նրանք անշնորհք կերպով դեմ էին ընկնում դռներին, հայհոյում և խրեղենները նետելով հատակին կամ երկար նստարանին՝ վերարկուների օձիքներից և թևերից թափ էին տալիս շոր եղյամը, որբում մորուքի և ընչացքների վրայից, կանչում։

Մտավ մի երիտասարդ դեղին ճամպրուկը ձեռքին, արագ շուրջը նայեց և գնաց ուղիղ դեպի մայրը։

— Մոսկվա՞,— կամաց հարցրեց նա։

— Այո։ Տանյայի մոտ։

— Ահա՛։

Նա ճամպրուկը դրեց մոր մոտ նստարանի վրա, արագ հանեց մի ծխախոտ, վառեց և գլխարկը բարձրացնելով լուռ հեռացավ դեպի մյուս դուռը։ Մայրը ձեռքով շփեց ճամպրուկի սառը կաշին, թիկնեց վրան և գոհ՝ սկսեց դիտել ժողովրդին։ Մի րոպե հետո նա վեր կացավ և անցավ մի ուրիշ նստարան՝ կառամատույցի մուտքին ավելի մոտ։ Ճամպրուկը նա հեշտությամբ էր ձեռքում պահում, մեծ չէր, և քայլում էր գլուխը բարձրացրած, իր առջև երևացող դեմքերը դիտելով։ Կարճ վերարկու հագած, օձիքը բարձրացրած մի երիտասարդ դիպավ մոր և լուռ ետ ցատկեց՝ ձեռքը դեպի գլուխը թափահարելով։ Այդ մարդու մեջ ինչ-որ մի բան ծանոթ թվաց մորը, մայրը ետ նայեց և տեսավ, որ նա օձիքի տակից պսպղացող մի աչքով նայում է իրեն։ Այդ ուշադիր աչքը խայթեց մորը, ճամպրուկը բռնող ձեռքը ցնցվեց, և բեռը հանկարծ ծանրացավ։

«Ես մի ինչ-որ տեղ տեսել եմ նրան»,— մտածեց մայրը այդ մարդով ծածկվելով կրծքում առաջացած անախորժ և աղոտ զգացումը, ուրիշ բառերի թույլ չտալով որոշելու այն զգացմունքը, որ կամացուկ, բայց տիրաբար սաստ սեղմեց իր սիրտը։ Իսկ այդ զգացմունքն աճում և բարձրանում էր դեպի կոկորդը, բերանը լցնում էր շոր գառնությամբ. մայրն անդիմադրելիորեն ցանկանում էր դառնալ, մի անգամ ևս նայել։ Նա այդպես էլ

արեց. այն մարդն զգուշությամբ մի ոտից մյուսի վրա հենվելով կանգնել էր նույն տեղը, թվում էր, թե նա ինչ-որ բան է ուզում կատարել և սիրտ չի անում։ Նրա աջ ձեռքը խրված էր վերարկուի կոճակների արանքը, մյուսը գրպանում էր պահում, դրանից նրա աջ ուսը ձախից ավելի բարձր էր թվում։

Մայրն առանց շտապելու մոտեցավ նստարանին և նստեց զգույշ, դանդաղորեն, կարծես վախենալով, թե իր մեջ մի բան կարող է կտրվել։ Փորձանքի ուր նախազգացումից արթնացած հիշողությունը երկու անգամ մոր առջև դրեց այդ մարդուն, մի անգամ դաշտում, քաղաքից դուրս, Ռիբինի փախուստից հետո, մյուս անգամ՝ գառատրանում։ Այդտեղ այդ մարդու կողքին կանգնած էր այն թաղական ոստիկանը, որին մայրը սխալ էր ցույց տվել Ռիբինի ճանապարհը։ Մորը ճանաչում էին, նրան հետևում էին, դա պարզ էր։

«Բռնվեցի՞»,— հարցրեց մայրն ինքն իրեն։ Իսկ հետևյալ ակնթարթում պատասխանեց ցնցվելով.

«Գուցե դեռ ոչ...»

Եվ խսկույն եթե իր վրա ճիգ գործ դնելով՝ խստությամբ ասաց.

«Բռնվեցի՞»։

Շուրջն էր նայում և ոչինչ չէր տեսնում, իսկ մտքերն իրար հետևից կայծերի պես բռնկվում էին ու հանգչում նրա ուղեղում։

«Ճամպրուկը թողնեմ դնա՞մ»։

Բայց ավելի վառ փայլփլում էր մի ուրիշ կայծ.

«Որդուս խոսքերը գցե՞մ։ Այդպիսի ձեռքերի մեջ...»

Նա ճամպրուկը սեղմեց իրեն։

«Իսկ եթե վերցնեմ հեռանա՞մ... Փախչեմ...»

Այդ մտքերը նրան խորթ էին թվում, կարծես դրսից մեկը դրանք խոթում էր իր գլուխը։ Դրանք այրում էին մորը, դրանց դաղոցները ցավագին խայթում էին նրա ուղեղը, մտրակում սիրտը ասես կրակե թելերով։ Եվ ցավ հարուցելով վիրավորում էին այդ կնոջը, նրան հեռու քշում հենց իրենից, Պավելից և այն բոլորից, ինչ արդեն բուսել-կպել էր նրա սրտին։ Նա զգում է, որ իրեն համառորեն սեղմում է մի թշնամական ուժ, ճնշում իր ուսերն ու կուրծքը, ստորացնում իրեն մնալով երկյուղի մեջ խորասուզելով. նրա քունքերի երակներն ուժգին զարկեցին և մազերի արմատները տաքացան։

Այդ ժամանակ սրտի մի մեծ շեշտակի ջանքով, որը կար-

ծես ամբողջովին թափ տվեց նրան, մայրը հանգցրեց այդ բոլոր խորամանկ, փոքրիկ, թույլ կրակները, հրամայողաբար ինքն իրեն ասելով.

«Ամաչի՛ր»։

Նա իսկույն իրեն ավելի լավ զգաց և բոլորովին ամրապընդվեց, ավելացնելով.

«Գնա որդո՛ւդ մի խայտառակիր։ Ոչ ոք չի վախենում»։

Նրա աչքերը հանդիպեցին մեկի թախծոտ, երկչոտ հայացքին։ Ապա նրա հիշողության մեջ առկայծեց Ռիբինի դեմքը։ Մի քանի վայրկյան տևած տատանումները կարծես ամեն ինչ խտացրին նրա մեջ։ Սիրտն սկսեց ավելի հանգիստ բաբախել։

«Հիմա ի՞նչ է լինելու տեսնես»,— մտածում էր նա շուրջը դիտելով։

Լրտեսը մոտ կանչեց պահակին և ինչ-որ բան շշնջաց՝ աչքերով մորը նշելով։ Պահակը զննեց լրտեսին և ետ ընկրկեց։ Մոտեցավ մի ուրիշ պահակ, ականջ դրեց, կիտեց հոնքերը։ Նա ծեր էր, խոշոր, ալևոր, չսափրված։ Ահա նա լրտեսին գլխով արեց և գնաց դեպի այն նստարանը, որի վրա մայրն էր նստած, իսկ լրտեսն արագորեն անհետացավ։

Ներունին քայլում էր առանց շտապելու, բարկացած աչքերով ուշի-ուշով շոշափելով մոր դեմքը։ Մայրը քաշվեց դեպի նստարանի մեջտեղը։

«Միայն թե չծեծեն...»

Պահակը կանգ առավ մոր կողքին, քիչ լուռ մնաց և ցածր ձայնով դաժանորեն հարցրեց.

— Ի՞նչ ես մտիկ տալիս։

— Ոչինչ։

— Հա՞, գող ես հա՞։ Պառավ ես արդեն, բայց էլի գողությո՞ւն ես անում։

Մորը թվաց, թե նրա խոսքերը հարվածում են իր դեմքին, մե՛կ, երկո՛ւ. այդ չարամիտ, խոպոտ բառերը ցավ էին պատճառում իրեն, կարծես ճանկռտում էին այտերը, մտրակում էին աչքերը...

— Ե՞ս։ Ես գող չեմ, ստո՛ւմ ես,— գոչեց մայրն ամբողջ կրծքով, և նրա առջև ամեն ինչ պտտվեց նրա վրդովմունքի մրրկի մեջ, սիրտը վիրավորանքի դառնությամբ լցնելով։ Մայրը քաշեց ճամպրուկը, և նա բացեց։

— Մտի՛կ արա։ Մտի՛կ արեք բոլորդ,— գոռում էր մայրը

վեր կենալով, գլխից վեր մի կապոց պրոկլամացիաներ թափահարելով։ Ականջների խշշոցի միջով նա լսում էր վազելով հավաքվող մարդկանց բացականչությունները և տեսնում, որ ամեն կողմից վազում են արագ-արագ, ամենքը։

— Ի՞նչ է պատահել։

— Ա՛յ, հետախույզը...

— Ի՞նչ բան է սա։

— Գողություն է արել, ասում են...

— Այդպես պատկառելի, վա՛յ-վա՛յ-վա՛յ։

— Ես գող չե՞մ,— ասում էր մայրը լիաձայն, մի քիչ հանգըստացած, տեսնելով մարդկանց, որոնք ամեն կողմից խոնըվում էին։

— Երեկ դատում էին քաղաքականների, այնտեղ էր իմ որդին՝ Վլասովը, նա ճառ ասաց, ահա՛ այդ ճառը։ Ես տանում եմ՝ մարդկանց բաժանեմ, որ նրանք կարդան, մտածեն ճշմարտության մասին...

Մեկն զգուշությամբ նրա ձեռքերի միջից թղթերը քաշեց, մայրը թղթերը թափ տվեց օդում և նետեց ամբոխի մեջ։

— Դրա՛ համար էլ չեն գովի,— բացականչեց մի երկչոտ ձայն։

Մայրը տեսնում էր, որ թղթերը խլխլում են, թաքցնում ծոցերում, գրպաններում, այդ բանը նորից սրտապնդեց նրան։ Ավելի հանգիստ և ավելի ուժեղ, ամբողջովին լարվելով, և զգալով, թե ինչպես է իր մեջ աճում զարթնած հպարտությունը, վառվում ճնշված հրճվանքը, նա խոսում էր, ճամպրուկից հանելով թղթի կապոցները և ցրիվ տալով աջ ու ձախ մարդկանց արագաշարժ, ագահ ձեռքերի մեջ։

— Ինչի՛ համար էին դատում որդուս և բոլորին, որոնք նրա հետ էին, դուք գիտե՞ք։ Ես ձեզ կասեմ, իսկ դուք հավատացե՛ք մոր սրտին, նրա ալևոր մազերին, երեկ մարդկանց դատում էին այն բանի համար, որ նրանք ձեզ բոլորիդ համար բերում են ճշմարտությո՛ւն։ Երեկ ես իմացա այդ ճշմարտությունը... ոչ ոք դեմ չի գնա նրան, ոչ ո՛ք։

Ամբոխը լռեց և աճում էր՝ ավելի ու ավելի խտանալով, ձուլածորեն շրջապատելով կնոջը կենդանի մարմինների օղակում։

— Չքավորություն, տոլ և հիվանդություններ, ա՛յ թե ինչ է տալիս մարդկանց իրենց աշխատանքը։ Ամեն ինչ մեր դեմ է,

մենք մեր ամբողջ կյանքում օրեցօր սատկում ենք աշխատանքի մեջ, միշտ ցեխի, խաբեության մեջ, իսկ մեր վաստակով զվարճանում և հղփանում են ուրիշները և մեզ պահում են շղթայակապ շների պես, տգիտության մեջ մենք ոչինչ չգիտենք, և երկյուղի մեջ մենք ամեն բանից վախենում ենք։ Գիշե՞ր է մեր կյանքը, խավա՞ր գիշեր։

— Այդպե՞ս է,— ի պատասխան խուլ հնչեց մի ձայն։

— Փակի՞ր դրա բերանը։

Ամբոխի հետևում մայրը նկատեց լրտեսին ու երկու ժանդարմի և շտապեց տալ վերջին կապոցները, բայց երբ ձեռքը մտցրեց ճամպրուկի մեջ, այնտեղ նա նկատեց մի ուրիշ ձեռք։

— Վերցրե՞ք, վերցրե՞ք,— ասաց մայրը կռանալով։

— Ցրվեցե՞ք,— գոռում էին ժանդարմները մարդկանց հրելով։ Մարդիկ հրոցներին սիրով չէին զիջում, ժանդարմներին սեղմում էին իրենց զանգվածով, խանգարում էին նրանց, գուցե և չցանկանալով այդ։ Նրանց տիրաբար հրապուրում էր բարի դեմքին մեծ-մեծ, ազնիվ աչքերով այդ ալեհեր կինը, և նրանք, որոնց իրարից բաժանել էր կյանքը, կտրել իրարից, այժմ միաձուլվում, դառնում էին մի ամբողջություն՝ խաչի կրակով տաքացած, կրակ, որը գուցե վաղուց էին որոնում և որին ծարավի էին կյանքի անարդարություններից վիրավորված բազմաթիվ սրտեր։ Ամենից մոտ կանգնածները լուռ էին, մայրը տեսնում էր նրանց անհագ ուշադիր աչքերը և նրանց տաք շնչառությունն էր զգում իր դեմքին։

— Հեռացի՞ր, պառա՞վ։

— Հենց հիմա կբռնե՞ն...

— Ա՞խ, հանդո՞ւգն կին։

— Հեռո՞ւ։ Ցրվեցե՞ք,— ավելի ու ավելի մոտ էին լսվում ժանդարմների աղաղակները։ Մոր առջև մարդիկ օրորվում էին ոտքերի վրա, իրարից բռնելով։

Մորը թվում էր, թե ամենքը պատրաստ են իրեն հասկանալու, հավատալու իրեն, և նա ուզում էր, շտապում էր ասել մարդկանց այն բոլորը, ինչ գիտեր, այն բոլոր մտքերը, որոնց ուժն զգում էր։ Դրանք հեշտությամբ դուրս էին թռչում նրա սրտի խորքից և հյուսվելով վերածվում երգի, բայց նա վշտացած զգում էր, որ ձայնը թույլ է, խզզում է, դողում, կտրվում։

— Իմ որդու խոսքը բանվոր մարդու անկաշառ հոգու անկեղծ խոսք է։ Անկաշառը ճանաչեցեք համարձակությունի՞ց։

Մեկի երիտասարդ աչքերը մոր դեմքին նայում էին հիացմունքով և երկյուղով։

Մոր կրծքին հրեցին, նա երերաց և նստեց նստարանին։ Մարդկանց գլուխներից վեր երևացին ժանդարմների ձեռքերը, նրանք բռնում էին մարդկանց օձիքներից և ուսերից, մի կողմ էին նետում մարմինները, թոցնում էին գլխարկները՝ հեռու շպրտելով։ Մոր աչքերում ամեն ինչ սևացավ, օրորվեց, բայց իր հոգնածությունը հաղթահարելով նա դեռ աղաղակում էր ձայնի մնացորդներով.

— Ժողովո՞ւրդ, ուժերդ ի մի՞ հավաքիր։

Մի ժանդարմ մեծ, կարմիր ձեռքով բռնեց մոր օձիքից, թափահարեց։

— Լռի՞ր։

Մոր ծոծրակը պատին խփվեց, սիրտը մի վայրկյան պատեց երկյուղի բարակ ծխով և նորից պայծառ բոցավառվեց՝ ծուխը փարատելով։

— Արի՞,— ասաց ժանդարմը։

— Մի՞ վախենաք ոչնչից։ Ավելի դառն տանջանք չկա, քան այն, ինչ շնչում եք դուք ամբողջ կյանքում...

— Լռի՞ր, ասում եմ։— ժանդարմը բռնեց մոր թևը, քաշեց։ Մյուսը բռնեց մյուս թևը, և խոշոր քայլերով մորը տարան։

— ... որն ամեն օր կրծո՞ւմ է սիրտը, չորացնում կո՞ւրծքը։

Լրտեսն առաջ վազեց և մոր դեմքին բռունցքով սպառնալով գոռաց։

— Լռի՞ր, դո՞ւ, սրիկա՞։

Մոր աչքերը լայնացան, փայլատակեցին, կզակը դողդողաց։ Ոտքերը հենելով հատակի սահուն քարին, նա գոչեց.

— Հարություն առած հոգին սպանել չե՞ք կարող։

— Շո՞ւն։

Լրտեսը նրա երեսին խփեց ձեռքի կարճ թափով։

— Այդպես տո՞ւր դրան, այդ անզգամ պառավին,— լսվեց մի չարախինդ աղաղակ։

Մի ինչ-որ սև ու կարմիր բան մի ակնթարթ կուրացրեց մոր աչքերը, արյան աղի համով լցվեց բերանը։

Աղմուկների հատ-հատ, վառ թնդյունը քաջալերեց մորը։

— Մի՞ համարձակվի խփել։

— Տղե՞րք։

— Ա՞խ դու գարշելի։

— Հասցրո՛ւ դրան։

— Գիտակցությունն արյունով չեք կարող ողողել։

Հրում էին մոր պարանոցին, մեջքին, խփում ուսերին, գլխին, ամեն ինչ պտտվեց մութ մրրիկի պես աղաղակների, ոռնոցի, սուլոցի մեջ, ինչ-որ թանձր, խլացուցիչ բան մտնում էր նրա ականջները, լցնում կոկորդը, խեղդում, հատակը փլվում էր նրա ոտքերի տակ, ատատանվում, ոտքերը ծալվում էին, մարմինը ցնցվում էր ցավի այրոցներով, ծանրացել և օրորվում էր ուժասպառ։ Բայց նրա աչքերը չէին մարում և տեսնում էին ուրիշ շատ աչքեր, որոնք վառվում էին մորը ծանոթ խիզախ, թեժ կրակով, նրա սրտին հարազատ կրակով։

Նրան հրեցին դեպի դուռը։

Նա ձեռքը ազատեց, բռնեց դռան շրջանակից։

— Արյան ծովերով չեք կարող հանգցնել ճշմարտությունը։

Նրա ձեռքին խփեցին։

— Միայն զայրույթ կկուտակեք ձեր դեմ, անմիտնե՛ր։ Այդ զայրույթը կթափվի ձե՛զ վրա։

Ժանդարմը հանկեց նրա կոկորդը և սկսեց խեղդել։

Մայրը կերկերում էր։

— Դժբախտներ...

Մեկը նրան պատասխանեց բարձրաձայն հեկեկանքով։

ՀԱՏԱԿՈՒՄ

Պիես 4 գործողությամբ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԿՈՍՏԻԼՅՈՎ ՄԻԽԱՅԻԼ ԻՎԱՆՈՎԻՉ, 54 տարեկան, օթևանի տերը։
ՎԱՍԻԼԻՍԱ ԿԱՐՊՈՎՆԱ, նրա կինը, 26 տարեկան։
ՆԱՏԱՇԱ, Վասիլիսայի քույրը, 20 տարեկան։
ԿՎԱՇՆՅԱ, կարկանդակի առևտրով զբաղվող, մոտ 40 տարեկան։
ՆԱՍՏՅԱ, օրիորդ, 24 տարեկան։
ԿԼԵՇՉ ԱՆԴՐԵՅ ՄԻՏՐԻՉ, փականագործ, մոտ 40 տարեկան։
ԱՆՆԱ, նրա կինը, 30 տարեկան։
ՍԱՏԻՆ, ԴԵՐԱՍԱՆ — մոտավորապես նույն հասակի, մոտ 40 տարեկան։
ՎԱՍԿԱ ՊԵՊԵԼ, 28 տարեկան։
ԲԱՐՈՆ, 33 տարեկան։
ԼՈՒԿԱ, ուխտավոր, 60 տարեկան։
ԹԱԹԱՐ, ԿՐԻՎՈՅ ՋՈՒԹ — բեռնակիրներ։
ԲՈՒԲՆՈՎ, փականագործ, 45 տարեկան։
ԱԼՅՈՇԿԱ, կոշկակար, 20 տարեկան։
ՄԵԴՎԵԴԵՎ, Վասիլիսայի և Նատաշայի քեռին, ոստիկան, 50 տարեկան։

Մի քանի անխոս և անանուն բոսյակներ։

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Նկուղ, որ նման է քարանձավի: Առաստաղը ծանր է, մռոտ, ծեփը թափված քարե կամարներով: Լույսն ընկնում է ճանդիսականի դիմացի կողմից: Աջ կողմը զբաղեցնում է բարակ միջնորմներով անջատված սենյակը: Ձախ անկյունում ռուսական մեծ վառարան է, ձախ քարե պատի մեջ դուռ է, որ տանում է խոհանոց, ուր ապրում են Կվաշնյան, Բարոնը, Նաստյան: Վառարանի և պատի դռան միջև լայն մահճակալ է, որ փակված է չթե կեղտոտ վարագույրով: Ձախ մասի առաջամասում ծառաքնի կտոր է, վրան ամրացված մամլակ ու փոքրիկ զնդան և մի ուրիշ, առաջինից ավելի ցածր ծառաքնի կտոր: Վերջինի վրա, զնդանի առաջ, նստած է Կլեշշը և ճին կոդպեքների վրա բանալիներ է փորձում: Ոտքերի մոտ երկաթալարի օղակներին անցկացված բանալիների երկու մեծ կապոց է, թիրեղյա ջարդոտած ինքնաեռ, մուրճ, սղոցներ: Օրևանի մեջտեղում մեծ սեղան է, երկու աթոռ, տաբուրետ, բոլորը՝ շներկված ու կեղտոտ: Սեղանի հետև, ինքնաեռի մոտ, Կվաշնյան զբաղված է գործով, Բարոնը սև հաց է ծամում, իսկ Նաստյան աթոռին նստած, ձեռքերը ճենել է սեղանին և մի քրքված գրքույկ է կարդում: Վարագույրով ծածկված մահճակալին Աննան հագում է: Բուքնովը տախտամածին նստած, ծնկների մեջ սեղմած գլխարկի կաղապարի վրա ճին, բաց արած շալվարն է չափում, մտածելով, թե ինչպես պետք է ձևել: Նրա մոտ լայնեզր գլխարկի մի ստվարաթղթե ճին տուփ կա՝ շքոցիկների համար, մոմաթելի կտորներ, փալասներ: Սատինը հենց հոր է արբնցել և տախտամածին պառկած մռնչում է: Վառարանի վրա, շերեփալով, Պերասանը ինչ-որ բան է անում ու հագում է: Գարնան սկիզբ է: Առավոտ:

Բ ա ր ո ն. *Շարունակի՛ր:*

Կ վ ա շ ն յ ա. *Ո՞-ո՞չ, սիրելիս, ասում եմ, էդ հարցով ինձ մոտ չգաս: Ես, ասում եմ, էդ բանը փորձել եմ... Եվ հիմա, որ քաշովս մեկ ոսկի էլ տան, մարդու չեմ գնա:*

Բ ո ւ ք ն ո վ (Սատինին). *Դո՞ւ ինչ ես խռխռացնում:*

Սատինը մռնչում է:

Կ վ ա շ ն յ ա. *Ասում եմ, որ ես, ազատ կինս՝ իմ գլխի տերն ու տիրականը, վերցնեմ հանկարծ ու ինչ-որ մեկի անձնագրում գրվեմ, ինչ-որ տղամարդու ճորտը դառնամ՝ չէ՞... Ուզում է թող նույնիսկ ամերիկյան թագավորի տղա լինի, մտքովս էլ չի անցնի հետն ամուսնանալ:*

Կ լ ե շ շ. *Սո՛ւտ ես ասում:*

Կ վ ա շ ն յ ա. *Ի՞նչ...*

Կ լ ե շ շ. *Սուտ ես ասում: Աբրամկայի հետ կամուսնանաս:*

Բ ա ր ո ն. (Նաստյայից խլելով գիրքը՝ վերնագիրն է կարդում). «Ճակատագրական սեր» (Քրքջում է):

Ն ա ս տ յ ա (մեկնելով ձեռքը). *Տո՛ւր, ե՛ռ տուր: Խաղ մի անի:*

Բ ա ր ո ն (նայում է նրան՝ օդում թափահարելով գիրքը):

Կ վ ա շ ն յ ա (Կլեշշին). *Շեկ այծ, բան ասաց — սո՛ւտ ես ասում... էդ ո՞նց ես սիրտ անում ինձ այդպիսի լպիրշ խոսք ասել:*

Բ ա ր ո ն (գրքով խփելով Նաստյայի գլխին). *Հիմար ես դու, Նաստյա:*

Ն ա ս տ յ ա (գիրքը խլելով) *Տո՛ւր...*

Կ լ ե շ շ. *Իշխանուհո՛ւս նայիր... Աբրամկայի հետ կամուսնանաս... հենց դրան էլ սպասում ես:*

Կ վ ա շ ն յ ա. *Իհա՛րկե... հապա ո՞նց... ինչպե՞ս չէ... Դու, հրեն, կնկադ ծեծելով կիսամեռ ես արել...*

Կ լ ե շ շ. *Լռի՛ր, քավթառ շուն, քո գործը չէ...*

Կ վ ա շ ն յ ա. *Ա՜... ճիշտ խոսքը դուրդ չի գալիս:*

Բ ա ր ո ն. *Սկսվե՛ց: Նաստյա, որտե՞ղ ես:*

Ն ա ս տ յ ա (գլուխը շքարձրացնելով). *Ա՜... Կորիր՛:*

Ա ն ն ա. *Օրն սկսվեց: Ի սեր աստծո... մի՛ գոռաք... մի՛ հայհոյեք:*

Կ լ ե շ շ. *Ոռնա՜ց...*

Ա ն ն ա. *Էսպես՝ ամեն աստծու օր... թողեք հանգիստ մեռնեմ:*

Բ ո ւ ք ն ո վ. *Աղմուկը մեռնելուն չի խանգարում...*

Կ վ ա շ ն յ ա (Աննային մոտենալով). *Եվ ինչպե՞ս ես դու, խեղճ արարած, էսպիսի հրեշի հետ ապրել:*

Ա ն ն ա. *Թող ինձ... հեռացի՛ր...*

Կ վ ա շ ն յ ա. *Լավ, լավ... Ախ դու... նահատակ... ի՞նչ է, կրծքիդ ցավը չի՞ թեթևացել:*

Բ ա ր ո ն. *Կվաշնյա, շուկա գնալու ժամանակն է...*

Կ վ ա շ ն յ ա. *Հիմա կգնանք:* (Աննային). *Ուզո՞ւմ ես, տաքտաք պելմեններ տամ:*

Ա ն ն ա. *Հարկավոր չէ... շնորհակալ եմ: Ուտելն ինչիս է պետք:*

Կ վ ա շ ն յ ա. *Իսկ դու կեր: Տաքը փափկացնում է: Քեզ համար գավաթի մեջ կառանձնացնեմ և կթողնեմ... Երբ կուզես՝ կուտես: Գնանք, Բարոն...* (Կլեշշին). *Ո՛ւ... չար ոգի...* (գնում է խոհանոց):

Ա ն ն ա (հագնելով). *Տե՛ր աստված...*

Բ ա ր ո ն (բեթև բոթելով Նաստյայի վզակոթին). *Դե՛ն ձգիր... հիմարիկ։*

Ն ա ա տ յ ա (մրմրթալով). *Հեռացի՛ր... ես քեզ չեմ իանգարում։*

Բարոնը շվշվացնելով գնում է Կվաշնյայի ետեից։

Ս ա տ ի ն (բարձրանալով իր տեղից). *Այն ո՞վ էր երեկ ինձ ծեծում։*

Բ ո ւ բ ն ո վ. *Իսկ քեզ համար միևնույնը չէ՞...*

Ս ա տ ի ն. *Ասենք թե այդպես է... բայց ինչո՞ւ էին ծեծում։*

Բ ո ւ բ ն ո վ. *Թուղթ խաղո՞ւմ էիր։*

Ս ա տ ի ն. *Խաղում էի...*

Բ ո ւ բ ն ո վ. *Դրա համար էլ ծեծում էին։*

Ս ա տ ի ն. *Սրիկանե՛ր...*

Դ ե ր ա ս ա ն. (գլուխը դուրս ճանելով վառարանի վրայից). *Մի օր քեզ այնպես կծեծեն, որ կսպանեն։*

Ս ա տ ի ն. *Իսկ դու տխմար ես։*

Դ ե ր ա ս ա ն. *Ինչո՞ւ։*

Ս ա տ ի ն. *Որովհետև երկու անգամ սպանել հնարավոր չի։*

Դ ե ր ա ս ա ն (փոքրիկ դաղարից ներս). *Չեմ հասկանում... Ինչո՞ւ հնարավոր չի։*

Կ լ ե շ շ. *Իսկ դու վեր եկ վառարանից և բնակարանը մաքրիր... Ինչ ես կոտրատվում...*

Դ ե ր ա ս ա ն. *Այդ քո գործը չէ...*

Կ լ ե շ շ. *Այ, Վասիլիսան կգա ու քեզ ցույց կտա, թե ում գործն է։*

Դ ե ր ա ս ա ն. *Թող գրողի ծոցը գնա Վասիլիսան։ Այսօր մաքրելու հերթը Բարոնինն է։ Բարո՞ն։*

Բ ա ր ո ն (դուրս գալով խոհանոցից). *Ես ժամանակ չունեմ մաքրելու... Կվաշնյայի հետ շուկա եմ գնում։*

Դ ե ր ա ս ա ն. *Այդ իմ գործը չէ... Թեկուզ աքսոր գնա։ Իսկ հատակն ավլելու հերթը քոնն է։ Ես ուրիշների փոխարեն չեմ աշխատի։*

Բ ա ր ո ն. *Սատանան քեզ ուտի։ Նաստենկան կավլի։ Հե՛յ, դու, ճակատագրական սեր, սթափվիր։* (Խլում է Նաստյայի ձեռքից գիրքը)։

Ն ա ա տ յ ա. *Ի՞նչ ես ուզում, տո՛ւր, թոկից փախած։ Եվ դեռ բարոն ես։*

Բ ա ր ո ն (գիրքը տալով). *Նաստյա, ավլիր իմ փոխարեն, լա՞վ։*

Ն ա ա տ յ ա (գնալով խոհանոց). *Շատ պե՞տքս է... ինչպե՞ս չէ։*

Կ վ ա շ ն յ ա (խոհանոցի դռնից՝ Բարոնին). *Իսկ դու եկ։ Առանց քեզ էլ կմաքրեն։ Դերասա՞ն, խնդրում են քեզ, դու էլ արա, չես հալվի, կարծում եմ։*

Դ ե ր ա ս ա ն. *Դե... Միշտ ես... Չեմ հասկանում...*

Բ ա ր ո ն (ուսափայտի վրա խոհանոցից դուրս է բերում երկու զամբյուղ, նրանց մեջ կաթսաներ՝ ցնցոտիներով ծածկված)։ *Այսօր ինչ-որ ծանր է...*

Ս ա տ ի ն. *Պետք էր, որ դու բարոն ծնվեիր...*

Կ վ ա շ ն յ ա (դերասանին). *Նայի՛ր ինձ, կմաքրես, հա՞...* (Դուրս է գնում նախասենյակ, Բարոնին առաջ թողնելով)։

Դ ե ր ա ս ա ն (իջնելով վառարանից). *Ինձ վնաս է փոշի կուլ տալը։* (Հպարտորեն)։ *Իմ օրգանիզմը թունավորված է ալկոհոլով։* (Նստելով թախտի ծայրին՝ մտածմունքի մեջ է ընկնում)։

Ս ա տ ի ն. *Օրգանիզմ, օրգանոն...*

Ա ն ն ա. *Անդրեյ Միտրիչ...*

Կ լ ե շ շ. *Ի՞նչ կա էլի։*

Ա ն ն ա. *Կվաշնյան այստեղ ինձ համար պելմեն է թողել, վերցրու, կեր։*

Կ լ ե շ շ. (մոտենալով նրան). *Իսկ դու չե՞ս ուզում։*

Ա ն ն ա. *Չեմ ուզում... իմ ինչին է պետք... Դու աշխատող ես... քեզ է պետք...*

Կ լ ե շ շ. *Վախենո՞ւմ ես, մի վախենա... գուցե դեռ...*

Ա ն ն ա. *Գնա, կեր... ես ինձ վատ եմ զգում։ Երևի շուտով...*

Կ լ ե շ շ (հեռանալով). *Ոչինչ, գուցե դեռ կազդուրվես... Պատահում է...* (Գնում է խոհանոց)։

Դ ե ր ա ս ա ն (բարձրանալով, կարծես ինքից արբնանալով). *Երեկ բուժարանում բժիշկն ինձ ասաց. ձեր օրգանիզմը, ասում է, կատարելապես թունավորված է ալկոհոլով...*

Ս ա տ ի ն. (ժպտալով). *Օրգանոն...*

Դ ե ր ա ս ա ն. *Ոչ թե օրգանոն, այլ օրգանիզմ...*

Ս ա տ ի ն. *Սիկամբրո...*

Դ ե ր ա ս ա ն (թափահարելով ձեռքը նրա վրա). *Է՛հ, հիմարություն։ Ես լուրջ եմ ասում, այո՛... Եթե օրգանիզմս թու-*

նավորված է... կնշանակի ինձ վնաս է հատակ ավելը... փոշի կուլ տալը...

Սատին. Մակրոբիոտիկա... հը՞...

Բուբնով. Դու այդ ինչ ես մրթմրթում։

Սատին. Բառեր։ Եվ դեռ կա տրասցեդենտրալ...

Բուբնով. Դա՞ ինչ բան է։

Սատին. Չգիտեմ... մոռացել եմ...

Բուբնով. Բա ինչո՞ւ ես ասում։

Սատին. Այնպես... Ջանձրացրել են ինձ, եղբայր, մարդկային բոլոր բառերը ձանձրացրել են։ Նրանցից յուրաքանչյուրը ես լսել եմ... երևի հազար անգամ...

Դերասան. «Համլետ» դրամայում ասված է. «Բառեր, բառեր, բառեր»։ Լավ գործ է։ Ես նրա մեջ գերեզմանափոր էի խաղում...

Կլեշչ (դուրս գալով խոհանոցից). Իսկ ավելի հետ շուտո՞վ կսկսես խաղալ։

Դերասան. Քո գործը չէ։ (Խփելով իր ծնկին). Օֆելյա, օ՜, հիշիր ինձ քո աղոթքների մեջ...

Բեմի ճեղեռում, ինչ-որ ճեռու տեղ խոպ ազմուկ է, գոռոցներ, ոստիկանի սուլոց։ Կլեշչը նստում է աշխատելու և խարտոցով ճոճոացնում է։

Սատին. Սիրում եմ անհասկանալի, հազվագյուտ բառեր... Երբ դեռ ես լակոտ էի... հեռագրատանն էի ծառայում... Շատ գրքեր էի կարդում։

Բուբնով. Դու հեռագրիչ է՞լ ես եղել։

Սատին. Եղել եմ... Շատ լավ գրքեր կան... Եվ բազմաթիվ հետաքրքիր բառեր... Գիտես, ես կրթված մարդ էի։

Բուբնով. Լսել եմ... Հարյուր անգամ եմ լսել։ Եղել ես, եղել... Մեծ բան է... Ես ահա մորթեգործ էի... սեփական արհեստանոց ունեի... Ձեռքերս այնպես դեղին էին, ներկից, իհարկե։ Մորթիներ էի ներկում, ու այնպես դեղին էին, եղբայր, ձեռքերս մինչև արմունկներս։ Ես կարծում էի, թե մինչև մահ էլ չեմ կարող այդ ներկը լվալ, այդպես էլ դեղին ձեռքերով կմեռնեմ... Իսկ այժմ, ահա նրանք, ձեռքերս... Պարզապես կեզտոտ են... այո՜։

Սատին. Եվ ի՞նչ...

Բուբնով. Եվ ոչինչ...

Սատին. Ինչի՞ համար դա ասացիր։

Բուբնով. Հենց այնպես... Օրինակի համար... Դուրս է գալիս, որ դրսից որքան էլ քեզ ներկես, միևնույն է, ամեն ինչ ջնջվում է, ամեն ինչ ջնջվում է, այո՜։

Սատին. Ա՜... ոսկորներս ցավում են։

Դերասան. (նստած է, ծնկները ձեռքերով գրկած). Կրթությունը դատարկ բան է, գլխավորը տաղանդն է։ Ես մի դերասան գիտեի, իր դերերը հեղեղով էր կարդում, բայց այնպես էր խաղում, որ թատրոնը դղրդում էր հիացմունքից։

Սատին. Բուբնո՛վ, ինձ հինգ կոպեկ տուր։

Բուբնով. Ընդամենը երկու կոպեկ ունեմ։

Դերասան. Ես ասում եմ — տաղանդ, ահա թե դերասանին ինչ է պետք։ Իսկ տաղանդը — ինքն իր նկատմամբ, իր ուժի նկատմամբ հավատն է։

Սատին. Ինձ հինգ կոպեկ տուր, և ես կհավատամ, որ դու տաղանդ ես, հերոս ես, կոկորդիլոս ես, տեղամասի պրիստավ ես... Կլե՛շչ, հինգ կոպեկ տուր։

Կլեշչ. Կորիր գրողի ծոցը։ Քեզ նմանները շատ են էստեղ..

Սատին. Ինչո՞ւ ես հայհոյում։ Չէ՞ որ դու մի գրոշ իսկ չունես, ես լավ գիտեմ։

Անեա. Անդրեյ Միտրիչ... խեղդվո՞ւմ եմ, ծա՜նր է...

Կլեշչ. Ի՞նչ կարող եմ անել։

Բուբնով. Հաշտի դուռը բաց արա։

Կլեշչ. Շատ լավ։ Նստել ես թախտին, իսկ ես հատակին եմ... Տուր ինձ քո տեղը և դուռը բաց արա... իսկ ես առանց այն էլ մրսած եմ...

Բուբնով (հանգիստ). Ինձ համար բացելու կարիք չկա... քո կինն է խնդրում։

Կլեշչ (մռայլ). Շատ բան կարող են խնդրել...

Սատին. Գլուխս դղրդում է... Ա՜խ, և ինչո՞ւ են մարդիկ իրար գլխի խփում։

Բուբնով. Նրանք ոչ միայն գլխին են խփում, այլև մնացյալ բոլոր տեղերին։ (Վեր կենալով). Գնամ, թել գնեմ.. Իսկ մեր տերերն այսօր ինչ-որ չեն երևում, կարծես սատկոտել են։ (Գնում է)։

Անեան հագում է։ Սատինը ձեռքերը գլխատակին, անշարժ պառկած է։

Դերասան (տխուր նայելով շուրջը, մոտենում է Աննային)։ *Ի՞նչ է, վա՞տ ես զգում։*

Աննա. *Խեղդվում եմ։*

Դերասան. *Ուզո՞ւմ ես, դուրս բերեմ միջանցք։ Դե, վեր կաց* (օգնում է կնոջը բարձրանալու, նրա ուսերին ինչ-որ ցնցոտի է գցում և բռնելով՝ դուրս է տանում նախասենյակ)։ *Դե՛, դե՛... պինդ կաց։ Ես ինքս էլ հիվանդ եմ... Թունավորված եմ ալկոհոլով։*

Կոստիլյով (դռների մեջ). *Զբոսնելո՞ւ եք գնում։ Սքանչելի զույգ, ոչխար և գառնուկ։*

Դերասան. *Իսկ դու ճանապարհ տուր... Տեսնում ես, հիվանդներ են գալիս...*

Կոստիլյով. *Համեցի՛ր, անցի՛ր...* (Քթի տակ ինչ-որ եկեղեցական երգ մմռալով, կասկածամտորեն զննում է կացարանը և գլուխը ձախ է թեքում, ասես ականջ է դնում Պեպելի սենյակին։

Կլեշշը կատաղիորեն բանալիներն է զրնգացնում և ճռնչացնում խարտոցը, աչքի տակով նետելով տանտիրոջը)։

Ճռնչացնո՞ւմ ես։

Կլեշշ. *Ի՞նչ։*

Կոստիլյով. *Ճռնչացնո՞ւմ ես, ասում եմ։* (Դադար)։ *Ա՜-ա՜... էն... Ի՞նչ էի ուզում քեզանից հարցնել...* (Արագ և ցածրաձայն). *Կինս էստեղ չի՞ եղել։*

Կլեշշ. *Չեմ տեսել։*

Կոստիլյով (զգուշությամբ Պեպելի դռանը մոտենալով). *Ամսեկան երկու ռուբլով ինչքա՜ն տեղ ես զբաղեցնում դու իմ տանը։ Մահճակալ... Ինքդ էլ նստած... Հա, աստված վկա, հինգ ռուբլու տեղ ես զբաղեցնում։ Պետք է մի հիսուն կոպեկ քեզ վրա ավելացնել։*

Կլեշշ. *Դու ավելի լավ է, վզիս օղակ գցիր ու խեղդիր։ Շուտով սատկելու ես, բայց անվերջ հիսուն կոպեկների մասին ես մտածում։*

Կոստիլյով. *Ինչո՞ւ քեզ խեղդեմ, դրանից ո՞ւմ ինչ օգուտ։ Տերը քեզ հետ, ապրիր քո հաճույքի համար, իսկ ես քեզանից հիսուն կոպեկ ավել կվերցնեմ ու դրանով ճրագի ձեթ կառնեմ... սրբապատկերի առաջ կվառեմ։ Դա իմ մեղքերին թողություն կլինի, քո՛ մեղքերին էլ։ Չէ՞ որ ինքդ քո մեղքերի մասին չես մտածում... Դե ահա... Ա՜խ, Անդրյուշկա, շար մարդ ես դու։ Կինդ շարությանդ պատճառով է հյուծվել... Ոչ ոք քեզ չի սիրում, չի հարգում... Արհեստդ էլ ճռճռան է, ամենքին է անհանգստացնում։*

Կլեշշ (բղավելով). *Դու ի՞նչ է... ինձ հալածելու համա՞ր ես եկել այստեղ։* (Սատինը բարձր մռնչում է)։

Կոստիլյով (ցնցվելով). *Ա՜խ, դու, տեր իմ...*

Դերասան (ներս մտնելով). *Կնոջդ նստացրի հաշտում, լավ փաթաթեցի։*

Կոստիլյով. *Դու ինչ բարի ես, եղբայր։ Լա՜վ է... այդ ամենը հաշվի կառնվի...*

Դերասան. *Ե՞րբ։*

Կոստիլյով. *Այն աշխարհում, եղբայր... այնտեղ ամեն ինչ, մեր բոլոր արարքները հաշվի են առնում...*

Դերասան. *Իսկ դու, ավելի լավ է, այստեղ ինձ վարձատրիր բարությանս համար...*

Կոստիլյով. *Այդ ինչպե՞ս կարող եմ։*

Դերասան. *Ջնջիր պարտքիս կեսը։*

Կոստիլյով. *Հա՜, հա՜, հա՜... դու միշտ կատակում ես, սիրելիս, միշտ խաղում ես... Միթե սրտի բարությունը կարելի է փողի հետ հավասարեցնել։ Բարությունը դա բոլոր բարիքներից վեր է։ Իսկ քո պարտքն ինձ՝ այնպես էլ մնում է պարտք։ Կնշանակի, դու պետք է ինձ վճարես։ Քո բարությունը պետք է անվարձահատույց տրվի ծերուկիս։*

Դերասան. *Սատանա ես դու, ծերուկ...* (Գնում է խոհանոց)։

Կլեշշը վեր է կենում և գնում միջանցք։

Կոստիլյով (Սատինին). *Ճռճռանը փախավ, հա՜, հա՜, հա՜... Չի սիրում նա ինձ...*

Սատին. *Սատանայից զատ ո՞վ է քեզ սիրում...*

Կոստիլյով (ծիծաղի տալով). *Ուշունց տվողն ես, հա՜... Իսկ ես ձեզ ամենքիդ սիրում եմ... Ես հասկանում եմ, որ դուք իմ եղբայրներն եք, թշվառ, անպիտան, կորած...* (Ճանկարձ արագ). *Իսկ... Վասկան տա՞նն է։*

Սատին. *Նայիր...*

Կոստիլյով (մոտենում է և ծեծում դուռը). *Վա՜սյա։*

Դերասանը երևում է խոհանոցի դռանը, նա ինչ-որ բան է ծամում։

Պեպել. Ո՞վ է։

Կոստիլյով. Ես եմ... Ե՛ս, Վասյա

Պեպել. Ի՞նչ ես ուզում։

Կոստիլյով (ետ-ետ գնալով). Բա՛ց արա։

Սատին (չնայելով Կոստիլյովին). Կբացի, իսկ կինն այնտեղ է...

Դերասանը փոթկացնում է։

Կոստիլյով (անհանգիստ, ցածրաձայն). Ի՞նչ։ Ո՞վ է այնտեղ։ Դու... ի՞նչ...

Սատին. Ի՞նչ։ Դու ինձ հե՞տ ես։

Կոստիլյով. Դու ի՞նչ ասացիր։

Սատին. Այդ ես այնպես... ինքս ինձ...

Կոստիլյով. Լսի՛ր, եղբայր, կատակ արա, բաց չափդ իմացիր... Այո՛։ (Ուժեղ բախում է դուռը) Վասիլի՛...

Պեպել (բացելով դուռը). Դե, ի՞նչ ես անհանգստացնում։

Կոստիլյով (սենյակը դիտելով) Ես... գիտես ինչ...

Պեպել. Փողը բերի՞ր։

Կոստիլյով. Գործ ունեմ քեզ հետ...

Պեպել. Փողը բերի՞ր։

Կոստիլյով. Ի՞նչ փող։ Սպասիր...

Պեպել. Փողը, յոթ ռուբլին, ժամացույցի փողը, դե՞...

Կոստիլյով. Ի՞նչ ժամացույց, Վասյա... Ախ, դու...

Պեպել. Մի տես, է՛։ Երեք վկաների ներկայությամբ ես քեզ ժամացույց ծախեցի տասը ռուբլով, երեքը ստացա, յոթը տուր։ Ի՞նչ ես աչքերդ ճպճպացնում։ Ձվռնում է այստեղ, մարդկանց անհանգստացնում... Իսկ իր գործը չգիտի...

Կոստիլյով. Շ՛շ։ Մի բարկանա, Վասյա... Այդ ժամացույցը...

Սատին. Գողացված է...

Կոստիլյով (խիստ). Ես գողացված բան չեմ ընդունում... Այդ ի՞նչ ես ասում...

Պեպել (բռնելով նրա ուսից). Դու ինչո՞ւ ինձ անհանգստացրիր։ Ի՞նչ ես ուզում ինձանից։

Կոստիլյով. Ճիշտն ասած՝ ոչինչ... ես կգնամ... եթե որ էդպիսին ես։

Պեպել. Գնա, բե՛ր փողը։

Կոստիլյով (գնալով). Ա՛յ, ա՛յ, ինչ կոպիտ մարդիկ են։

Դերասան. Կատակերգությո՞ւն։

Սատին. Լա՞վ է, ես այդ սիրում եմ։

Պեպել. Ինչո՞ւ էր եկել։

Սատին (ծիծաղելով). Չե՞ս հասկանում, կնոջն է փընտրում... Եվ ինչո՞ւ նրան չես թրխկացնում, Վասիլի։

Պեպել. Շատ հարկավոր է, որ մի էդպիսի անպետքի համար կյանքս փչացնեմ։

Սատին. Իսկ դու խելքով արա ու հետո պսակվիր Վասիլիսայի հետ... Մեր տերը կդառնաս...

Պեպել. Մե՞ծ բան է... Դուք ոչ միայն իմ ամբողջ ունեցվածքը, ինձ էլ իմ բարության պատճառով օղու կտաք... (ընտում է թախտին): Քավթառ սատանա... արթնացրեց... իսկ ես լավ երազ էի տեսնում, իբր թե ձուկ էի որսում, մի ահագին բրամ էր ընկել կարթս։ Ի՞նչ բրամ. միայն երազում են լինում էդպիսի ձկներ... և ահա ես քաշում եմ կարթով ու վախենում, որ թելը կկտրվի։ Ու ցանցաթին առա... ահա, մտածում եմ, հիմա...

Սատին. Դա ձուկ չէր, Վասիլիսան էր...

Դերասան. Վասիլիսային նա վաղուց է որսացել։

Պեպել (բարկացած). Գրողի ծոցը կորեք, ու նա էլ ձեզ հետ։

Կլեշշ (ներս գալով). Շան ցուրտ է։

Դերասան. Այդ ի՞նչ է, Աննային չբերի՞ր հետդ։ Կատուշի...

Կլեշշ. Նրան Նատաշան իր մոտ, խոհանոց տարավ։

Դերասան. Ծերուկը դուրս կանի։

Կլեշշ (նստում է, որ աշխատի). Դե... Նատաշան կբերի...

Սատին. Վասիլի, հինգ կոպեկ տուր...

Դերասան (Սատինին). Էհ, դու... հի՞նգ կոպեկ։ Վասյա, քսա՛ն կոպեկ տուր մեզ...

Պեպել. Վռազեմ... քանի դեռ մի ռուբլի չեք դարձրել... Առ։

Սատին. Ջիբլարթար։ Աշխարհիս երեսին գողերից լավ մարդ չկա։

Կլեշշ (մռայլ). Նրանք հեշտ են փող ճարում... Նրանք չեն աշխատում...

Սատին. Շատերն են հեշտ փող ճարում, բայց շատերը չէ, որ հեշտությամբ են բաժանվում նրանից։ Աշխատանք ես

տնում։ Այնպես արա, որ աշխատանքն ինձ դուր գա, գուցե ես էլ աշխատեմ, այո՛։ Կարող է պատահել։ Երբ աշխատանքը հաճույք է, կյանքը լավ է։ Երբ աշխատանքը պարտականություն է, կյանքը ստրկություն է։ (Դերասանին) Սարդանապալ, գնա՛նք...

Դերասան. Գնանք, Նաբուգոդոնոսոր։ Կխմե՞մ, ինչպես... քառասուն հազար հարբեցողներ... (գնում են):

Պեպել (հորանջելով). Ի՞նչ կա։ Կինդ ինչպե՞ս է։

Կլեշչ. Երևի շուտով... (դադար):

Պեպել. Նայում եմ քեզ, զուր ես ճոճոացնում։

Կլեշչ. Բա ի՞նչ անեմ։

Պեպել. Ոչինչ։

Կլեշչ. Բա ի՞նչ ուտեմ։

Պեպել. Ապրում են, չէ՞, ուրիշները։

Կլեշչ. Սրա՞նք։ Ի՞նչ մարդիկ են սրանք... թափթփուկներ, մուրացկաններ... մարդի՞կ... ես բանվոր մարդ եմ... ես ամաչում եմ սրանց նայել... ես փոքրուց եմ աշխատում... դու կարծում ես, ես այստեղից չե՞մ պրծնի... Դուրս կպրծնեմ, կաշիս կքերթեմ, բայց դուրս կպրծնեմ... Ահա, սպասիր, կինս մեռնի... ես այստեղ վեց ամիս եմ ապրում, բայց կարծես վեց տարի լինի...

Պեպել. Այստեղ ոչ ոք քեզանից վատը չէ... Իզուր ես ասում...

Կլեշչ. Վատը չէ՞... Ապրում են անպատիվ, անխիղճ։

Պեպել (անտարբեր). Իսկ ինչների՞ն է պատիվն ու խիղճը։ Սապոգի տեղ ոտքերիդ ոչ խիղճը կարող ես հագնել և ոչ էլ պատիվը։ Պատիվն ու խիղճը նրանց է պետք, ովքեր իշխանություն և ուժ ունեն։

Բուբնով (մտնելով). Ո՞ւռ՝... սառեցի։

Պեպել. Բուբնով, դու խի՞ղճ ունես։

Բուբնով. Ի՞նչ... խի՞ղճ...

Պեպել. Հա։

Բուբնով. Ինչի՞ս է պետք խիղճը։ Ես հարուստ չեմ...

Պեպել. Ահա ես էլ նույնն եմ ասում, պատիվն ու խիղճը հարուստներին է պետք, այո՛։ Իսկ Կլեշչը հայհոյում է մեզ, խիղճ չունեք, ասում է...

Բուբնով. Իսկ նա ի՞նչ է, ուզում է խի՞ղճ պարտք վերցնել։

Պեպել. Դրանից ինքն էլ շատ ունի...

Բուբնով. Ուրեմն, ծախո՞ւմ ես։ Այստեղ առնող չես գտնի։ Այ, եթե կտրտած կարտոնի կտորներ լինեին, ուրախությամբ կառնեի... պարտքով, իհարկե։

Պեպել (ուսուցողաբար). Հիմար ես դու, Անդրյուշկա։ Խղճի հաշվով լավ կանեիր Սատինին լսեիր... կամ Բարոնին...

Կլեշչ. Նրանց հետ խոսելու պետք չունեմ։

Պեպել. Նրանք քեզանից մի քիչ խելոք են... թեև հարբեցողներ են...

Բուբնով. Ով խելոք է ու հարբած, նա ունի երկու կալվածք...

Պեպել. Սատինն ասում է. ամեն մարդ ուզում է, որ իր հարևանը խիղճ ունենա, բայց ոչ ոքի ձեռնատու չէ խիղճ ունենալը... և դա ճիշտ է...

Մտնում է Նատաշան, նրա ետևից՝ Լուկան, փայտը ձեռքին, տոպրակը մեջքին, կաքսան ու թեյամանը գոտկից կախ։

Լուկա. Բարի առողջություն, ազնիվ մարդիկ։

Պեպել (թեղերը շոյելով). Ա, Նատաշա։

Բուբնով (Լուկային). Ազնիվ էր նա, ազնվություն, բայց դա վաղ էր՝ անցյալ գարուն...

Նատաշա. Ահա նոր կենվոր...

Լուկա. Ինձ համար միևնույն է, ես սրիկաներին էլ չեմ հարգում։ Իմ կարծիքով ամեն լու արժանի է թռչելու, բոլորն էլ սև են, բոլորն էլ թող թռչկոտեն... այդպե՛ս է։ Ո՞ւր տեղավորվեմ, սիրելիս։

Նատաշա (ցույց տալով խոհանոցի դուռը). Այնտեղ գնա, պապիկ...

Լուկա. Շնորհակալություն, աղջիկս, այնտեղ է, թող այնտեղ լինի։ Մերուկիս համար որտեղ տաք է, այնտեղ էլ հայրենիք է։ (Գնում է):

Պեպել. Ի՞նչ հետաքրքիր ծերուկ եք բերել, Նատաշա։

Նատաշա. Գոնե ձեզանից ավելի հետաքրքիր է... Անդրեյ, կինդ խոհանոցումն է, մեզ մոտ, քիչ հետո արի նրան տար։

Կլեշչ. Լավ... կգամ...

Նատաշա. Դու հետը մի քիչ ավելի քաղցր վարվիր... չէ՞ որ երկար չի ապրելու...

Կլեշչ. Գիտեմ։

Նատաշա. Գիտե՞ս... Գիտենալը քիչ է, հասկացիր։ Մեռնելը սարսափելի է...

Պեպել. Իսկ ես ահա, չեմ վախենում...

Նատաշա. Իհա՞րկե։ Քաջություն է...

Բուբնով (շվացնելով). Իսկ թելը փտած է...

Պեպել. Իսկապես չեմ վախենում։ Թեկուզ հենց այս րոպեին կմեռնեմ։ Վերցրեք դանակը, խփեք սրտիս... կը մեռնեմ... ձայն էլ չեմ հանի։ Մինչև անգամ ուրախությամբ, որովհետև մաքուր ձեռքից է...

Նատաշա (գնում է). Դե դուք ուրիշների աչքին թոզ փչեք։

Բուբնով (երկարացնելով). Իսկ թելը փտած է...

Նատաշա (դռան դռան մոտ). Անդրե՛յ, չմոռանաս կնոջդ մասին։

Կլեշչ. Լավ։

Պեպել. Հիանալի աղջիկ է։

Բուբնով. Ոչինչ, լավ աղջիկ է։

Պեպել. Ինչո՞ւ է ինձ հետ այդպես վարվում։ Մերժում է... Միևնույն է, այստեղ պիտի կորչի...

Բուբնով. Քո պատճառով է կորչելու։

Պեպել. Ինչո՞ւ իմ պատճառով, ես նրան խղճում եմ...

Բուբնով. Ինչպես գայլը մաքուն...

Պեպել. Ստո՛ւմ ես։ Ես շա՛տ եմ խղճում նրան... Նա այստեղ վատ է ապրում... ես տեսնում եմ...

Կլեշչ. Սպասիր, Վասիլիսան մի քեզ տեսնի նրա հետ խոսելիս...

Բուբնով. Վասիլիսա՞ն։ Այո, նա իրենը ձեռքից ձրի բաց չի թողնում... կատաղի կին է...

Պեպել (պառկելով). Երկուսդ էլ կորեք գրողի ծոցը... Մարգարենե՞ր։

Կլեշչ. Կտեսնես... սպասիր...

Լուկա (երգում է խոհանոցում). Կես գի-շե-բին... չի երևում ուղին...

Կլեշչ. (գնալով միջանցք). Ըհը՞... ոռնո՞ւմ է... սա էր պակաս...

Պեպել. Բայց տխուր է... ինչո՞ւ է էդպես տխուր։ Ապրում ես, ապրում, ամեն ինչ լավ է... և հանկարծ, կարծես սառչում ես, տխրում։

Բուբնով. Տխրո՞ւմ ես։ Հրմ...

Պեպել. Էդպե՛ս է։

Լուկա (երգում է). Էհ, և չի երևում ուղին...

Պեպել. Ծերուկ, հե՛յ...

Լուկա (նայելով դռնից). Ինձ հե՞տ ես...

Պեպել. Քե՛զ։ Մի՛ երգիր։

Լուկա (դուրս գալով). Չե՞ս սիրում։

Պեպել. Երբ լավ են երգում, սիրում եմ։

Լուկա. Իսկ ես, ուրեմն, վա՞տ եմ երգում։

Պեպել. Ուրեմն...

Լուկա. Այ թե ի՞նչ... Իսկ ես կարծում էի, լավ եմ երգում։ Ահա, միշտ այդպես է լինում. մարդն ինքն իրեն մտածում է՝ լավ բան եմ անում, բայց հանկարծ՝ մարդիկ դժգոհ են...

Պեպել (ծիծաղելով). Ա՛յ, դա ճիշտ է...

Բուբնով. Ասում ես՝ տխուր է, իսկ ինքդ հոհոռում ես։

Պեպել. Իսկ քե՞զ ինչ։ Ագռա՛վ...

Լուկա. Այդ ո՞վ է տխուր։

Պեպել. Ես, ահա։

Բարոնը մտնում է։

Լուկա. Նայիր է՞... Իսկ այնտեղ, խոհանոցում, օրիորդը նստած գիրք է կարդում ու լաց լինում։ Ճիշտ եմ ասում։ Արցունքները հոսում են։ Հարցնում եմ, այդ ի՞նչ է, սիրելիս, ինչո՞ւ ես լալիս, իսկ նա թե՝ մեղք է։ Ո՞վ է, հարցնում եմ, մեղք։ Իսկ նա թե՝ գրքի մեջ։ Ահա թե ինչով է մարդը զբաղվում։ Երևի էլի տխրությունից։

Բարոն. Նա հիմար է...

Պեպել. Բարոն, թեյ խմե՞լ ես։

Բարոն. Խմել եմ... հետո։

Պեպել. Ուզո՞ւմ ես, կես շիշ օղի դնեմ։

Բարոն. Հայտնի բան է, ուզում եմ... հետո՞։

Պեպել. Կանգնիր չորեքթաթ, շան պես հաչիր։

Բարոն. Հիմա՛ր, դու ի՞նչ է, վաճառակա՞ն ես, թե՞ հարբած։

Պեպել. Դե հաչիր։ Ինձ համար հետաքրքիր կլինի... Չէ որ դու բարոն ես... Եղել է ժամանակ, որ մեզ նմաններին մարդատեղ չես դրել... և նման բաներ...

Բարոն. Հետո՞։

Պեպել. Էլ ի՞նչ հետո։ Իսկ այժմ ես քեզ կստիպեմ շան նման հաչել, և կանես... կհաչես, չէ՞...

Բարոն. Դե կհաչեմ, հիմար։ Ինչ հաճույք կստանաս դու դրանից, երբ ես ինքս էլ շատ լավ գիտեմ, որ համարյա թե քեզանից էլ վատն եմ դարձել։ Այ, դու այն ժամանակ ստիպեիր ինձ չորեքթաթ քայլել, երբ ես քո հատը չէի...

Բուբնով. Ճի՛շտ է։

Լուկա. Ես էլ եմ ասում՝ լա՛վ ասաց։

Բուբնով. Ինչ եղել է, անցել է, միայն դատարկ բաներ են մնացել... Այստեղ տերեր չկան... բոլորն էլ խունացել են, մնացել է միայն մերկ մարդը։

Լուկա. Ասել է բոլորն էլ հավասար են։ Իսկ դու, սիրելիս, բարո՞ն ես եղել։

Բարոն. Իսկ սա ի՞նչ է։ Դու ո՞վ ես, խեղկատակ։

Լուկա (ծիծաղելով). Կոմս տեսել եմ, իշխան տեսել եմ, բայց բարոն առաջին անգամ եմ տեսնում, այն էլ փչացած...

Պեպել (ծիծաղելով). Բարո՛ն, բայց դու ինձ ամաչեցրիր...

Բարոն. Խելոքանալու ժամանակն է, Վասիլի։

Լուկա. Էհե՛-հե՛, եղբայրներ, նայում եմ ձեզ, ձեր կյանքին, օ՛յ, օ՛յ, օ՛յ...

Բուբնով. Այնպիսի կյանք է, որ առավոտը վեր կացար թե չէ, իսկույն ոռնալ ես սկսում։

Բարոն. Եղել է, ավելի լավ ենք ապրել... Այո՛։ Ես... պատահում էր... զարթնում էի առավոտյան ու անկողնիս մեջ պառկած սուրճ էի խմում, սուրճ, սերուցքով... այո՛։

Լուկա. Բոլորն էլ մարդ են... ինչքան էլ ձևացնես, ինչքան էլ ծռմռվես, մարդ ես ծնվել, մարդ էլ կմեռնես... Անվերջ նայում եմ ու տեսնում, որ գնալով մարդիկ ավելի խելոք են դառնում, ավելի հետաքրքիր, թեև ավելի վատ են ապրում, բայց ուզում են ավելի լավին հասնել... համառ են։

Բարոն. Դու, ծերուկ, ո՞վ ես։ Որտեղի՞ց լույս ընկար։

Լուկա. Ե՞ս։

Բարոն. Շրջմոլի՞կ ես։

Լուկա. Աշխարհիս երեսին բոլորս էլ շրջմոլիկ ենք, լսել եմ, ասում են՝ աշխարհս էլ երկնքում է շրջմոլիկ։

Բարոն (խիստ). Դա այդպես է, իսկ անձնագիր ունե՞ս։

Լուկա (ոչ իսկույն). Իսկ դու ո՞վ ես, լրտե՞ս ես։

Պեպել (ուրախ). Կեցցե՛ս, ծերուկ։ Ի՞նչ է, բարոնիկ, քե՞զ էլ բաժին հասավ։

Բուբնով. Այո՛, բարոնը կերավ...

Բարոն (ամաչելով). Դե լա՛վ, չէ որ կատակ եմ անում, ծերուկ։ Ես, եղբայր, ինքս էլ ոչ մի թուղթ չունեմ։

Բուբնով. Ստում ես։

Բարոն. Այսինքն... ես թղթեր ունեմ... բայց դրանք բանի պետք չեն...

Լուկա. Դրանք, այդ թղթերը, բոլորն էլ էդպես են... բոլորն էլ բանի պետք չեն։

Պեպել. Բարոն, գնանք գինետուն։

Բարոն. Պատրաստ եմ։ Դե, ցտեսություն ծերուկ... Հա՞մա թե սատանա՞ն ես։

Լուկա. Ամեն ինչ պատահում է, սիրելիս...

Պեպել (միջանցքի դռան մոտ). Դե, գնո՞ւմ ենք, թե չէ։ (Գնում է, Բարոնը արագորեն հետևում է նրան)։

Լուկա. Իսկապե՞ս այդ մարդը բարոն է եղել։

Բուբնով. Ո՞վ գիտե։ Որ աղա է՝ ճիշտ է։ Նա հիմա էլ, չէ-չէ ու հանկարծ իրեն աղա է ձևացնում... դեռ երևի չի մոռացել։

Լուկա. Դա, այդ աղայությունը, երևի ծաղիկ հիվանդության նման է... մարդն առողջանում է, բայց հետքերը մնում են...

Բուբնով. Նա, համենայն դեպս, վատը չէ... Միայն այդպես, մեկ էլ տեսար քացի տվեց... ոնց որ հիմա, անձնագրիդ հաշվով։

Ալյոշկա (ներս է մտնում խմած, ճարմոնը ձեռքին։ Սուլում է). Հե՛յ, կենվորներ...

Բուբնով. Ի՞նչ ես գոռում...

Ալյոշկա. Ներեցեք... Ներեցեք։ Ես քաղաքավարի մարդ եմ...

Բուբնով. Նորի՞ց ես խմել...

Ալյոշկա. Շա՛տ... Հիմա պրիստավի օգնական Մեդյակինը տեղամասից ինձ դուրս արավ ու ասում է. որ, ասում է, փողոցում հոտդ անգամ չգա... չտեսնեմ... ես կամքի տեր մարդ եմ։ Իսկ տերը վրաս փնչացնում է... իսկ ինչ բան է տերը... ֆեֆե... թյուրիմացությո՛ւն... Հարբեցող է նա, այդ տեր կոչվածը... իսկ ես այնպիսի մարդ եմ, որ ոչինչ չեմ ցանկանում...

Ոչինչ չեմ ուզում և՝ վերջ։ Փորձիր, գնիր ինձ մի մանեթով, քսանով։ Իսկ ես ոչինչ չեմ ուզում։ (Նաստյան խոհանոցից դուրս է գալիս)։ Տուր ինձ միլիոն, ու չեմ ուզի։ Եվ որ ինձ, լավ մարդուս, հրամայի իմ ընկերը... հարբեցողը, չեմ ցանկանում։ Չեմ ուզում։

Դռան մոտ կանգնած, Նաստյան, նայելով Ալյոշային, գլուխն է տարուբերում։

Լուկա. (բարեհոգաբար). Ա՜խ, տղա, խմճվել ես դու...

Բուբնով. Մարդկային հիմարություն...

Ալյոշկա (պառկում է հատակին). Ա՜ռ, կեր ինձ։ Իսկ ես ոչինչ չեմ ուզում։ Ես անվախ մարդ եմ։ Բացատրեք ինձ, ես ումի՞ց եմ վատ։ Ինչո՞ւ եմ ուրիշներից վատ։ Ահա Մեդյակինն ասում է. փողոց դուրս մի գա, մոութիդ կտամ... իսկ ես կգնամ, կգնամ ու կպառկեմ փողոցի մեջտեղը՝ ճզմիր ինձ։ Ես ոչինչ չեմ ցանկանում։

Նաստյա. Թշվառ։ Ինչքան ջահել է, բայց արդեն... կոտրվում է։

Ալյոշկա (նրան տեսնելով ելնում է ծնկի). Օրիորդ, մամզել... Պարլե ֆրանսե... պրեյս-կուրանտ... Հարբե՞լ եմ ես...

Նաստյա (բարձր շշնջում է). Վասիլիսան...

Վասիլիսա (արագ բացելով դուռը՝ Ալյոշկային). Դու նորի՞ց այստեղ ես...

Ալյոշկա. Բարև ձեզ... համեցեք...

Վասիլիսա. Ես քեզ, շան լակոտիդ, ասացի, որ շունչդ էլ այստեղ չլինի, իսկ դու նորից եկել ես։

Ալյոշկա. Վասիլիսա Կարպովնա... Ուզում ես, ես քեզ համար մահվան քայլերգ նվագեմ։

Վասիլիսա (հրում է նրա ուսը). Դո՜ւրս...

Ալյոշկա (շարժվելով դեպի դուռը). Սպասի՛ր... այդպես չի կարելի։ Մահվան քայլերգ... նոր եմ սովորել... թարմ երաժշտություն է... Սպասիր, այդպես չի կարելի։

Վասիլիսա. Ես քեզ ցույց կտամ՝ չի կարելի... ես ամբողջ փողոցը վրադ քսի կտամ... Անիծյալ կռապաշտ... Վրաս հաչելու համար շատ ես ջահել...

Ալյոշկա (դուրս վազելով). Դե, ես գնամ...

Վասիլիսա (Բուբնովին). Որ նրա ոտքն այստեղ չլինի... լսո՞ւմ ես...

Բուբնով. Ես քեզ համար պահակ չեմ այստեղ։

Վասիլիսա. Իսկ իմ ի՞նչ գործն է, թե ով ես դու։ Մի՛ մոռացիր, ողորմածությամբ ես ապրում։ Ինչքա՞ն ես ինձ պարտք։

Բուբնով (ճանգիստ). Չեմ հաշվել։

Վասիլիսա. Նայիր, այնպես հաշվեմ ո՞ր...

Ալյոշկա (դուռը բացելով, գոռում է). Վասիլիսա Կարպովնա, իսկ ես քեզանից չե՞մ վախենում, չե՞մ վախենում։ (Թաքնվում է)։

Լուկան ծիծաղում է։

Վասիլիսա. Դո՞ւ ով ես։

Լուկա. Անցորդ եմ... ճամփորդ...

Վասիլիսա. Գիշերում ես, թե պիտի բնակվես։

Լուկա. Կնայեմ դեռ...

Վասիլիսա. Անձնագի՛րդ։

Լուկա. Կարելի է...

Վասիլիսա. Տո՛ւր...

Լուկա. Կբերեմ... քո բնակարանը քաշ կտամ։

Վասիլիսա. Անցո՛ր եմ... Սա՛ էլ... ասեիր՝ թոկից փախած եմ, ճշմարտությանն ավելի մոտ կլիներ...

Լուկա (հառաչելով). Ա՜խ, չէ, համա թե բարի չես դու, մերս...

Վասիլիսան գնում է դեպի Պեպելի սենյակի դուռը։ Ալյոշկան խոհանոցից դուրս գալով, շշնջում է. «Գնա՞ց, ը՞»։

Վասիլիսա (շուռ է գալիս նրա կողմը). Դու դեռ այստե՞ղ ես։

Ալյոշկան թաքնվելով, առլում է։ Նաստյան և Լուկան ծիծաղում են։

Բուբնով (Վասիլիսային). Չկա նա...

Վասիլիսա. Ո՞վ...

Բուբնով. Վասկան։

Վասիլիսա. Ես քեզ նրա մասին հարցրի՞...

Բուբնով. Տեսնում եմ... դեսուդեն են նայում...

Վասիլիսա. Ես կարգուկանոնին եմ նայում, հասկացա՞ր։ Այդ ինչո՞ւ մինչև հիմա հատակը չի ավլած։ Քանի անգամ եմ ես հրամայել, որ մաքուր լինի։

Բուբնով. Դերասանը պիտի մաքրեր...

Վասիլիսա. Իմ գործը չէ, թե ով պիտի մաքրեր։ Ու եթե

սանիտարները գան տուգանեն, ես այն ժամանակ բոլորիդ դուրս կվռնդեմ...

Բուբնով (հանգիստ). Իսկ ինչո՞վ պիտի ապրես։

Վասիլիսա. Որպեսզի աղբի նշույլ իսկ չլինի... (Գնում է խոհանոց, Նաստասյային): Դո՞ւ ինչ ես այստեղ ցցվել։ Մոուիթ ինչո՞ւ է ուռել։ Ի՞նչ ես կոճղի պես ցցվել։ Հատակն ավլիր։ Նատալյային... տեսե՞լ ես։ Այստեղ եղե՞լ է։

Նաստյա. Չգիտեմ... չեմ տեսել...

Վասիլիսա. Բուբնով, քույրս այստեղ եղե՞լ է...

Բուբնով. Ահա, սրան ինքը բերեց...

Վասիլիսա. Էն մեկը... տա՞նն էր...

Բուբնով. Վասի՞լին... Տա՜նն էր... Կլեշչի հետ էր զրուցում, իսկ Նատալյան...

Վասիլիսա. Ես քեզ չեմ հարցնում՝ ում հետ էր զրուցում... Աղբ է այստեղ... Աղբակույտ... Ախ, դուք խոզե՞ր... Որպեսզի մաքուր լինի... լսո՞ւմ եք... (Արագ գնում է):

Բուբնով. Ինչքա՜ն գազանություն կա այս կնկա մեջ։

Լուկա. Շա՜տ լուրջ կնիկ է...

Նաստյա. Այսպիսի կյանքից գազան կկտրես... Կապիր ուզածդ կենդանի մարդուն այնպիսի ամուսնու հետ, ինչպիսին նրանն է...

Բուբնով. Դե, նա այնքան էլ ամուր չի կապված...

Լուկա. Նա միշտ այսպես... պայթո՞ւմ է...

Բուբնով. Մի՛շտ... Սիրեկանի մոտ էր եկել, իսկ նա չկա...

Լուկա. Վիրավորվեց, ուրեմն։ Ամեն տեսակի ինչքա՜ն մարդ է այս երկրի վրա հրաման տալիս... ինչ տեսակ-տեսակ սարսափներով են մեկմեկու վախեցնում, բայց կյանքում էլի կարգուկանոն չկա... և մաքրություն չկա...

Բուբնով. Բոլորն են կարգուկանոն ուզում, բայց խելքն է պակասում... Այսպես թե այնպես, բայց հատակը պետք է ավլել... Նա՛ստյա, զբաղվիր դրանով։

Նաստյա. Իհա՜րկե, ինչպե՞ս չէ... Հավաքարար եմ ձեզ համար, ինչ է... (Լռելուց հետո): Այսօր ես կխմեմ... այնպե՞ս կխմեմ։

Բուբնով. Դա էլ գործ է...

Լուկա. Այդ ինչի՞ց է, օրիորդ, որ դու խմել ես ուզում։ Քիչ առաջ լաց էիր լինում, իսկ հիմա ասում ես՝ կխմեմ։

Նաստյա (հանդգնաբար). Կխմեմ ու նորից կսկսեմ լալ... Հենց էդպես։

Բուբնով. Շատ լե՞։

Լուկա. Բայց ի՞նչ պատճառով, ասա։ Ախր, առանց պատճառի պզուկն անգամ դուրս չի գալիս...

Նաստյան գլուխը թափահարելով, լռում է:

Լուկա. Այդպե՞ս... Ա՜խ... ա՜խ... պարոնայք մարդիկ... ինչ կկատարվի ձեզ հետ։ Գոնե ես այստեղ ավլեմ։ Ավելն ո՞ւր է։

Բուբնով. Դռան ետևը, հաշտում։

Լուկան գնում է միջանցք:

Բուբնով. Նաստենկա...

Նաստյա. Ի՞նչ...

Բուբնով. Վասիլիսան այդ ինչո՞ւ հարձակվեց Ալյոշկայի վրա։

Նաստյա. Նա Վասիլիսային ասաց՝ Վասկան քեզնից ձանձրացել է, կթողնի... ու Նատաշային կառնի... Ես այստեղից կգնամ... ուրիշ բնակարան։

Բուբնով. Ի՞նչ։ Ո՞ւր։

Նաստյա. Ձանձրացել եմ... Ես այստեղ ավելորդ եմ։

Բուբնով (հանգիստ). Դու ամեն տեղ ավելորդ ես... Եվ բոլոր մարդիկ էլ աշխարհի վրա ավելորդ են...

Նաստյան տարուբերում է գլուխը: Ելնում, կամաց գնում է միջանցք: Ներս է մտնում Մեդվեդևը: Նրա ետևից՝ Լուկան է, ավելը ձեռքին:

Մեդվեդև. Ես կարծես թե քեզ չեմ ճանաչում։

Լուկա. Իսկ մնացյալ բոլոր մարդկանց ճանաչո՞ւմ ես։

Մեդվեդև. Իմ տեղամասում ես բոլորին պարտավոր եմ ճանաչել, իսկ քեզ, ահա, չեմ ճանաչում։

Լուկա. Այդ նրանից է, քեռի, որ ամբողջ երկիրը քո տեղամասում չի տեղավորվել։ Նրանից դուրս էլ մի փոքրիկ մնացել է... (Գնում է խոհանոց):

Մեդվեդև (մոտենալով Բուբնովին). Ճիշտ է, իմ տեղամասը մեծ չէ, բայց բոլոր մեծերից վատթար է... Հիմա, հեղաբեկոխությունից քիչ առաջ, կոշկակար Ալյոշկային տեղամաս տարա... Պառկել է, հասկանում ես, փողոցի մեջտեղը, հարմոն է նվագում ու գոռում է՝ ոչինչ չեմ ուզում, ոչինչ չեմ ցանկանում։ Ձիերը են այդտեղով անցնում, և ընդհանրապես շարժում

կա... կարող են անիվներով տրորել, և նման բաներ... Կատաղի տղա է... Դե, ես էլ անմիջապես նրան տարա։ Անկարգություն շատ է սիրում։

Բուբնով. Երեկոյան շաշկի խաղալու կգաս...

Մեդվեդև. Կդամ։ Հը՛մ... իսկ Վասկան... ո՞նց է...

Բուբնով. Ոչինչ... առաջվա պես...

Մեդվեդև. Ուրեմն... ապրո՞ւմ է։

Բուբնով. Իսկ ինչո՞ւ չապրի։ Նրան կարելի է...

Մեդվեդև (կասկածանքով). Կարելի է... (Լուկան դույլը ձեռքին գնում է միջանցք)։ Ըմ... այստեղ խոսում են Վասկայի մասին... դու չե՞ս լսել։

Բուբնով. Ես շատ բան եմ լսում...

Մեդվեդև. Վասիլիսայի հաշվով, իբր թե... չե՞ս նկատել։

Բուբնով. Ի՞նչ...

Մեդվեդև. Այնպես... ընդհանրապես։ Դու գուցե գիտես, բայց ստում ես։ Ախր, բոլորը գիտեն... (խիստ) Ստել չի կարելի, եղբայր։

Բուբնով. Ինչո՞ւ պիտի ստեմ։

Մեդվեդև. Ա՛յդ է... Ախ, շներ... խոսում են՝ Վասկան Վասիլիսայի հետ... իբր թե... իսկ ի՞նձ ինչ։ Ես նրա հայրը չեմ, քեռին եմ... ինչո՞ւ են ինձ վրա ծիծաղում։ (Մտնում է Կվաշնյան)։ Ի՞նչ է դարձել ժողովուրդը... ամեն ինչի վրա ծիծաղում է... Ա-ա՛... դու... եկա՞ր...

Կվաշնյա. Սիրելագույնդ իմ կայազոր... Բուբնով, սա շուկայում նորից կպել էր ինձ, թե պսակվենք...

Բուբնով. Պսակվիր... ինչո՞ւ չէ։ Փող ունի և դեռ պինդ տղամարդ է։

Մեդվեդև. Այդ ե՞ս... հո՛-հո՛...

Կվաշնյա. Ախ, դու, գայլ։ Չէ, դու իմ ցավոտ տեղին ձեռք մի տա։ Դա, սիրելիս, ես արգեն փորձել եմ, կնկա համար մարդու գնալը նույնն է, ինչ ձմռանը սառցածակով գետն ընկնելը. մի անգամ արել եմ, ամբողջ կյանքումս հիշելու համար հերիք է։

Մեդվեդև. Համբերիր, ախր... ամուսինները տարբեր են լինում։

Կվաշնյա. Բայց ես հո միշտ նո՞ւյնն եմ։ Երբ իմ սիրելի ամուսնյակը սատկեց, թող գերեզմանում էլ տեղ-դադար չունենա, ես ուրախությունից ամբողջ օրը մեն մենակ նստեցի, նստել եմ ու էլի չեմ հավատում իմ երջանկությանը...

Մեդվեդև. Եթե մարդդ քեզ անմեղ տեղն էր ծեծում, ոստիկանատուն պիտի դիմեիր...

Կվաշնյա. Ես յոթը տարի աստծուն դիմեցի... չօգնեց...

Մեդվեդև. Հիմա կանանց ծեծելն արգելված է... հիմա ամեն ինչում խստություն կա և օրենք՝ կարգուկանոն։ Ոչ մեկին անմեղ տեղը ծեծել չի կարելի... ծեծում են կարգուկանոնի համար...

Լուկա (ներս է բերում Աննային). Ահա և քարշ գալով հասանք։ Ախ, դու, միթե կարելի է այսպիսի թույլ կազմվածքով մենակ քայլել։ Ո՞ւր է քո տեղը...

Աննա (ցույց տալով). Շնորհակալ եմ, պապիկ...

Կվաշնյա. Ահա նա, մարդ ունի... նայեցեք...

Լուկա. Բոլորովին թույլ կազմվածքի տեր կնիկ է... գնում է միջանցքով, կախվում է պատերից ու տնքում է... Ինչո՞ւ եք նրան մենակ բաց թողնում։

Կվաշնյա. Չնկատեցինք, ներեցեք, հայրիկ։ Իսկ նրա սպասուհին երևի ման գալու է գնացել...

Լուկա. Դու ծիծաղում ես ահա, բայց մի՞թե կարելի է մարդուն էդպես մենակ թողնել։ Նա, ինչպիսին էլ լինի, բայց միշտ իր գինն ունի։

Մեդվեդև. Հսկողություն է պետք։ Հանկարծ ու մեռավ։ Գլխացավանք կլինի... Հետևել է պետք...

Լուկա. Ճիշտ է, պարոն ունտեր...

Մեդվեդև. Հա... թեև ես... դեռ լրիվ ունտեր չեմ...

Լուկա. Ի՞նչ ես ասում... իսկ տեսքդ իսկը հերոսի է։

Միջանցքում աղմուկ է ու դոփոց։ Խուլ կանչեր են լսվում։

Մեդվեդև. Երևի տուրուդմփոց է...

Բուբնով. Նման է...

Կվաշնյա. Գնամ, նայեմ...

Մեդվեդև. Ես էլ պետք է գնամ։ Ախ, ծառայություն։ Եվ ինչո՞ւ են մարդկանց բաժանում, երբ նրանք կռվում են։ Նրանք հենց իրենք կդադարեցնեն... ախր, կռվելուց հոգնում են... Պիտի թույլ տալ, որ նրանք իրար ազատորեն էնքան տան, ինչքան ամեն մեկին պետք է, կշտանալու համար... դրանից հետո ավելի քիչ կռիվ կանեին, քանի որ կերած քոթակը ավելի երկար կհիշեին։

Բուրենով (տախտամածից իջնելով). *Դու քո պետերի հետ խոսիր այդ հարցով...*

Կոստիլյով (դուռը բացելով, գոռում է). *Աբրա՜մ... Հասի՜ր, Վասիլիսան Նատաշկային սպանում է, հասի՜ր...*

Կվաշնյան, Մեդվեդևը, Բուրենովը նետվում են միջանցք։
Լուկան, գլուխը տարուբերելով, նայում է նրանց ետևից։

Աննա. *Օ՜, տեր աստված... Նատաշենկան մեղք է։*

Լուկա. *Ո՞վ է կռվում այնտեղ...*

Աննա. *Տանտիրուհիները... քույրերը...*

Լուկա (մոտենալով Աննային). *Ի՞նչ են բաժանում։*

Աննա. *Այնպես... երկուսն էլ կուշտ են... առողջ...*

Լուկա. *Անունդ ի՞նչ է...*

Աննա. *Աննա... Նայում եմ քեզ... իմ հորն ես դու նման, հայրիկիս... նա էլ այդպես սիրալիր էր, փափուկ...*

Լուկա. *Շատ են տրորել, դրա համար էլ փափուկ եմ...* (ծիծաղում է զրնգացող ծիծաղով)։

Վարագույր

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Նույն կահավորությունն է։ Երեկո։ Տախտամածի վրա, վառարանի մոտ Սատինը, Բարոնը, Կրիվոյ Զոբը և Թաթարը թուղթ են խաղում։ Կլեշշն ու դերասանը նետևում են խաղին։ Բուրենովը իր տախտամածի վրա Մեդվեդևի հետ շաշկի է խաղում։ Լուկան նստած է աթոռին, Աննայի անկողնի մոտ։ Օթյանը լուսավորված է երկու լամպով, մեկը կախված է պատին, թուղթ խաղացողների մոտ, մյուսը՝ Բուրենովի տախտամածի վրա է։

Թաթար. *Մի անգամ էլ խաղում, էլ չեմ խաղում...*

Բուրենով. *Զոբ, երգիր։* (Երգում է)։

Արփին ծագում, մտնում է մայր...

Կրիվոյ Զոբ (ձայնակցելով).

Բայց խավար է իմ բանտում...

Թաթար (Սատինին). *Թղթերը խառնիր. լավ խառնիր, գիտենք, դու ինչ պտուղ...*

Բուրենով և Կրիվոյ Զոբ.

Պահակները զոր ու գիշեր
Լուսամուտս են պահպանում...

Աննա. *Ծեծկռտուք... վիրավորանք... դրանից բացի ես ոչինչ չեմ տեսել, չեմ տեսել։*

Լուկա. *Ախ, սիրունս, մի տխրիր։*

Մեդվեդև. *Այդ ինչպե՞ս ես խաղում, նայի՛ր...*

Բուրենով. *Ա՜-ա՜, այդպես, այդպես, այդպես...*

Թաթար (բռունցքներով Սատինին սպառնալով). *Ինչո՞ւ թուղթ պահել ուզում ես։ Ես տեսնում եմ... է՜, դու։*

Կիվոյ Զոբ. *Թող, Հասան, մեկ է, նրանք մեզ կխաբեն... Բուրենով, գլի՛ր...*

Աննա. *Չեմ հիշում, թե երբ եմ կուշտ եղել... Հացի ամեն կտորի վրա դողում էի... Ամբողջ կյանքումս դողում էի... Տանջվում... թե հանկարծ ուրիշից շատ չուտեմ... ամբողջ կյանքում ցնցոտիներով եմ ման եկել... իմ ամբողջ անբախտ կյանքում։ Ինչի՞ համար։*

Լուկա. *Ախ, դու, զավակս։ Հոգնել ես։ Ոչինչ։*

Դերասան (Կրիվոյ Զոբին). *Չինովորը խաղա... գլի՛ր։ Սատանա՜։*

Բարոն. *Իսկ մեզ մոտ թագավորն է։*

Կլեշշ. *Նրանք միշտ էլ կխփվեն։*

Սատին. *Այդպես է մեր սովորությունը։*

Մեդվեդև. *Տամա՜...*

Բուրենով. *Իմ ձեռքին էլ է... դե...*

Աննա. *Մեռնում եմ ահա...*

Կլեշշ. *Տես է, տես... խան, թող խաղը, թող, ասում եմ։*

Դերասան. *Առանց քո ասելու չի՞ հասկանում, ինչ է։*

Բարոն. *Ինձ նայիր, Անդրյուշկա, այնպես արա, որ քեզ գրողի ծոցը չղրկեմ։*

Թաթար. *Մեկ էլ բաժանիր... Կուժը գնում էր ջրի, իրեն կոտրում էր... ես էլ...*

Կլեշշ (գլուխը թափահարելով, մոտենում է Բուրենովին)։

Աննա. *Անվերջ մտածում եմ, տեր աստված, մի՞թե այն աշխարհում էլ պիտի տանջվեմ, մի՞թե այնտեղ էլ...*

Լուկա. *Այնտեղ ոչինչ էլ չի լինելու, իմացիր, ոչինչ... կհանգստանաս այնտեղ... Քիչ էլ համբերիր։ Բոլորն են, սիրելիս, համբերում... ամեն մեկն իր ձևով է համբերում կյանքում։* (Ելնում է ուրագ բայլերով գնում է խոհանոց)։

Բուրենով (երգում է). *Ոնց ուզում եք պահպանեք ինձ...*

Կրիվոյ Զոբ. *Ո՞ւր կփախչեմ ես, ախր, ո՞ւր...*

Երգում են երկուսով:

Շատ կուզեի լինել ազատ,
Բայց շղթաներս են ամուր...

Թաքար (գոռում է). *Ա՜, թուղթը թևքի մեջ խոթել...*

Բարոն (շփոթված). *Իսկ ի՞նչ է... քթիդ մե՞ջ պիտի խոթեի...*

Դերասան (ճամոզիչ կերպով). *Խան, դու սխալվեցիր... ոչ ոք, երբեք...*

Թաքար. *Ես տեսա... Դու խարդախ ես... չե՛մ խաղա...*

Սատին (թղթերը ճավաբելով). *Հասան, վազն արի... Որ մենք խարդախ ենք, քեզ հայտնի է։ Ուրեմն ինչո՞ւ էիր խաղում...*

Բարոն. *Երկու քսան կոպեկանոց ես տարվել, բայց երեք ռուբլու աղմուկ ես անում... ու դեռ խան ես...*

Թաքար (տաքացած). *Պետք է ազնիվ խաղալ...*

Սատին. *Իսկ ինչի՞ համար...*

Թաքար. *Ինչպե՞ս, ինչի համար...*

Սատին. *Այնպես... ինչի՞ համար...*

Թաքար. *Դու չգիտե՞ս...*

Սատին. *Չէ՛, իսկ դու գիտե՞ս...*

Թաքարը կատաղած բռում է։ Բոլորը ճնշում են վրան։

Կրիվոյ Զոբ (բարեհոգաբար). *Զարմանալի մարդ ես, Հասան, հասկացիր։ Եթե սրանք սկսեն ազնիվ խաղալ, երեք օրում սովից կսատկեն...*

Թաքար. *Իսկ իմ ի՞նչ գործ. պետք է ազնիվ խաղալ...*

Կրիվոյ Զոբ. *Լարե՛լ է... Ավելի լավ է գնանք թեյ խմենք... է՜հ, շղթաներ, իմ շղթաներ...*

Բուբնով. *Պահապաններ երկաթե...*

Կրիվոյ Զոբ. *Գնանք, Հասանկա...* (Գնում է երգելով)։ *Չեք փշրվում, չեք կոտրվում...*

Թաքարը Բարոնին սպառնում է բռունցքով ու դուրս է գալիս ընկերոջ ետևից:

Սատին (Բարոնին, ծիծաղելով). *Դուք, ձերդ ձերություն, նորից հանդիսավորապես հիմար վիճակի մեջ ընկաք։ Ուսումնական մարդ եք, բայց թուղթը ծլլացնել չեք կարողանում...*

Բարոն (ձեռքերը տարածելով)։ *Սատանան գիտե, թե ոնց եղավ...*

Դերասան. *Տաղանդ չունի... իր նկատմամբ հավատ։ Իսկ պառանց դրանց երբեք ոչինչ չի ստացվում։*

Մեդվեդև. *Ես մի տամա ունեմ, իսկ քոնը երկուսն է... Հա։*

Բուբնով. *Քիչ չէ մեկն էլ լոկ, եթե շատ է խելոք...*

Կլեշչ. *Տարվեցիք, Աբրամ Իվանիչ։*

Մեդվեդև. *Դա քո գործը չէ, հասկացա՞ր։ Եվ լռիր...*

Սատին. *Շահույթը հիսուներեք կոպեկ է...*

Դերասան. *Երեք կոպեկը ինձ... բայց, ասենք, ինչի՞ս է պետք երեք կոպեկը։*

Լուկա (խոհանոցից դուրս գալով). *Դե, թաթարին տարաք։ Արաղ խմելո՞ւ պիտի գնաք։*

Բարոն. *Գնանք մեզ հետ։*

Սատին. *Տեսնեմ՝ խմած ժամանա՞կ ոնց ես։*

Դերասան. *Գնանք, ծերուկ, ես քեզ համար քառյակները կարտասանեմ։*

Լուկա. *Դա ի՞նչ է...*

Դերասան. *Բանաստեղծություն, հասկանո՞ւմ ես։*

Լուկա. *Բանաստեղծություն, իսկ իմ ինչի՞ն է պետք բանաստեղծությունը։*

Դերասան. *Դա զվարճալի է... իսկ երբեմն՝ տխուր...*

Սատին. *Հը, ասմունքող, գալի՞ս ես։* (Գնում է Բարոնի հետ):

Դերասան. *Գալիս եմ... Ես կհասնեմ։ Ահա, օրինակ, ծերուկ, մի բանաստեղծության մեջ այսպես է ասված... սկիզբը մոռացել եմ... մոռացել եմ* (ճակատն է շփում):

Բուբնով. *Վե՛րջ։ Քո տաման կորած է... Խաղա...*

Մեդվեդև. *Ճիշտ չխաղացի ես... ահա, կրակիր...*

Դերասան. *Առաջ, երբ իմ օրգանիզմը ալկոհոլով թունավորված չէր, ես, ծերուկ, լավ հիշողություն ունեի։ Իսկ հիմա, ախպերս, ամեն ինչ վերջացած է... ինձ համար ամեն ինչ վերջացած է... ես միշտ այդ բանաստեղծությունը հաջողությամբ էի արտասանում... ծափերը որոտում էին... դա, եղբայր, արաղի պես է... Պատահում էր, դուրս էի գալիս, կանգնում էի ահա այսպես...* (Կեցվածք է ընդունում): *Կանգնում էի և...* (Լռում է)։ *Ոչինչ չեմ հիշում... ոչ մի բառ... չե՛մ հիշում։ Սիրածս բանաստեղծությունը... Վատ է դա, ծերուկ...*

Լ ու կ ա. Դե ոնց կարող է լավ լինել, երբ սիրածդ բանն ես մոռացել։ Սիրած բանի մեջ է ամբողջ հոգիդ։

Դ ե ր ա ս ա ն. Հոգիս գինուն ծախեցի, ծերուկ... Ես, եղբայրս, կործանվեցի... իսկ ինչո՞ւ կործանվեցի։ Որովհետև հավատ չունեի... Ես վերջացած եմ...

Լ ու կ ա. Ինչո՞ւ այդպես... Դու բուժվիր։ Հարբեցողությունը հիմա բուժում են, իմացար։ Զրի են, ախպերս, բուժում... Հարբեցողների համար այդպիսի հիվանդանոց է ստեղծված, ուրեմն, որ բուժեն, առանց փողի բուժեն... Խելքի են եկել, որ հարբեցողն էլ մարդ է... Եվ նույնիսկ, ուրախանում են, երբ նա ցանկանում է բուժվել։ Վռազիր, գնա՛...

Դ ե ր ա ս ա ն. Ո՞ւր, որտե՞ղ է դա։

Լ ու կ ա. Իսկ դա... մի քաղաքում է... ո՞նց էր դրա... անունը մի տեսակ է... Հա, ես քեզ անունը կտամ։ Իսկ դու, ահա թե ինչ, դու առայժմ պատրաստվիր։ Մի խմիր։ Ինքդ քեզ հավաքիր ու համբերիր... իսկ հետո կբուժվես... և նորից կսկսես ապրել... Նորից ապրելը լավ է։ Դե, որոշիր... իսկույն...

Դ ե ր ա ս ա ն (ժպտալով). Նորից... Սկզբից... Լավ է դա... Այո՛... Նորից (ծիծաղում է)։ Իհարկե։ Ես կարող եմ։ Կարող եմ, չէ՞...

Լ ու կ ա. Ինչո՞ւ չէ։ Մարդը ամեն ինչ կարող է, միայն թե ցանկանա։

Դ ե ր ա ս ա ն (կարծես ճանկարձ արթնանալով). Դու զարմանալի մարդ ես։ Առայժմ մնաս բարով (սուլում է), մնաս բարով, ծերուկ (գնում է)։

Ա ն ն ա. Պապի՛կ...

Լ ու կ ա. Ի՞նչ է, հոգիս...

Ա ն ն ա. Խոսիր ինձ հետ...

Լ ու կ ա (մոտենալով նրան). Լավ, զրուցենք....

Կլեշչը շուրջն է նայում, լուռ մոտենում է կնոջը, նայում է նրան, ձեռքերով ինչ-որ շարժումներ է անում, ցանկանալով ասես ինչ-որ բան ասել։

Լ ու կ ա։. Ի՞նչ է, ախպերս...

Կ լ ե շ չ (ցածրաձայն). Ոչինչ...

Դանդաղ շարժվում է դեպի միջանցքի դուռը, մի ճանի վայրկյան կանգնում է նրա դեմ և գնում է։

Լ ու կ ա (ճայացքով ճամփու դնելով նրան). Դժվար է մարդուդ համար։

Ա ն ն ա. Էլ նա չի իմ հոգսը։

Լ ու կ ա. Ծեծո՞ւմ էր քեզ։

Ա ն ն ա. Էն էլ ո՞նց... Դրանից, երևի, էսպես հալումաշ եղա։

Բ ու բ ն ո վ. Կինս սիրեկան ուներ. հիանալի շաշկի էր խաղում սրիկան...

Մ ե դ վ ե դ և. Հը՛մ...

Ա ն ն ա. Պապիկ, սիրելիս, խոսիր ինձ հետ... սիրտս խառնում է...

Լ ու կ ա. Դա ոչինչ։ Մեռնելուց առաջ էդպես է լինում, աղավնյակս։ Ոչինչ, սիրունս։ Դու հուսա... Ահա, ուրեմն, կմեռնես ու կհանգստանաս... էլ ոչնչի պետք չես ունենա, և վախենալ էլ պետք չէ։ Լռություն, խաղաղություն... պառկիր քեզ հարմար... Մահը ամեն ինչ հանգստացնում է... Մեզ համար նա սիրալիր է... կմեռնես, ասում են, կհանգստանաս... Դա ճիշտ է, սիրունս, որովհետև այստեղ մարդը ո՞նց կհանգստանա։

Մտնում է Պեպելը։ Նա մի քիչ խմած է, զզզված, մռայլ։ Նստում է դռան մոտ՝ տախտամածին, լռում է ու անշարժանում։

Ա ն ն ա. Իսկ այնտեղ ի՞նչ է լինելու, նորի՞ց չարչարանք։

Լ ու կ ա. Ոչինչ չի լինելու, ոչի՛նչ։ Հավատա։ Հանգստություն և ուրիշ ոչինչ։ Կկանչեն քեզ աստծու մոտ ու կասեն. տե՛ր աստված, նայիր տես, ահա եկավ քո ծառա Աննան...

Մ ե դ վ ե դ և (խիստ). Իսկ դու ի՞նչ գիտես, թե այնտեղ ինչ կասեն։ Է՛յ, դու...

Պեպելը Մեդվեդևի ձայնի վրա բարձրացնում է գլուխն ու ականջ դնում։

Լ ու կ ա. Ուրեմն, գիտեմ, պարոն ունտեր...

Մ ե դ վ ե դ և (ճաշտվողաբար). Հըմ... այո... դե քո գործն է... թեև ես դեռ լրիվ ունտեր չեմ...

Բ ու բ ն ո վ. Երկուսն եմ առնում։

Մ ե դ վ ե դ և. Ախ, դու... Թող որ քեզ...

Լ ու կ ա. Իսկ աստված կնայի քեզ քաղցր ու անուշ ու կասի. Ճանաչում եմ ես այս Աննային։ Դե, կասի, տարեք նրան՝ Աննային, դրախտ։ Թող հանգստանա... գիտեմ, նա շատ դժվար է ապրել... շա՛տ է հոգնել... Հանգիստ տվեք Աննային...

Ա ն ն ա (շնչահատվելով). Պապիկ, սիրելի՛ս... երանի թե այդպես լինի... Երանի թե հանգիստ լինի... Երնեկ ոչինչ չզգամ...

Լ ու կ ա. Չես զգա... ոչինչ չի լինի։ Հավատա։ Դու ուրախու-

թյամբ մեռիր, առանց վախի... Մահը, ախր, ասում եմ, մեզ համար նույնն է, ինչ մայրն իր պստիկ երեխայի համար...

Ա ն ն ա. Բայց... Գուցե... գուցե... առողջանամ։

Լ ո ւ կ ա (քմծիծաղում է). Ինչի՞ համար։ Նորի՞ց տանջվելու...

Ա ն ն ա. Դե... էլի մի քիչ կուզեի ապրել... մի քիչ։ Քանի որ այնտեղ տանջանք չի լինելու... այստեղ կարելի է համբերել... կարելի է։

Լ ո ւ կ ա. Ոչինչ չի լինի այնտեղ։ Պարզապես...

Պ ե պ ե լ (տեղից ելնելով). Ճիշտ է... բայց գուցե և ճիշտ չէ...

Ա ն ն ա (վախեցած). Տեր աստված...

Լ ո ւ կ ա. Ա, սիրուն տղա, դո՞ւ ես...

Մ ե դ վ ե դ ե. Ո՞վ է գոռում։

Պ ե պ ե լ (մոտենալով նրան). Ե՛ս։ Իսկ ի՞նչ է։

Մ ե դ վ ե դ ե. Զուր ես գոռում, ահա թե ինչ։ Մարդն իրեն պիտի լուրջ պահի։

Պ ե պ ե լ. Է՜... Դմբո՜... Եվ դեռ քեռի է...

Լ ո ւ կ ա (Պեպելին՝ ցածրաձայն). Լսիր, մի գոռա։ Կինը մահանում է... Շրթունքներն արդեն հողով են պատվում.., մի խանգարիր։

Պ ե պ ե լ. Թույլ տուր քեզ, պապ, պատիվ անեմ։ Դու, ախպերս, ապրես։ Լա՜վ ես դու ստում... Հեքիաթներն անուշ ես պատմում։ Ստիր, ոչինչ... աշխարհի վրա, ախպերս, հաճելի բաները քիչ են։

Բ ո ւ բ ն ո վ. Իսկապես որ կինը մեռնում է...

Լ ո ւ կ ա. Չէ, կարծես կատակ չի անում...

Բ ո ւ բ ն ո վ. Էլ չի հազա, ուրեմն... Շատ անհանգիստ էր հազում... Երկուսն եմ առնում։

Մ ե դ վ ե դ ե. Ախ, զարկվե՜ս դու, զարկվես...

Պ ե պ ե լ. Աբրա՜մ։

Մ ե դ վ ե դ ե. Ես քեզ համար Աբրամ չեմ։

Պ ե պ ե լ. Աբրաշկա։ Նատաշան հիվանդ է։

Մ ե դ վ ե դ ե. Իսկ քո՞ ինչ գործն է։

Պ ե պ ե լ. Չէ, դու ասա, Վասիլիսան նրան պի՞նդ է ծեծել։

Մ ե դ վ ե դ ե. Դա էլ քո գործը չէ։ Դա ընտանեկան գործ է, իսկ դու ո՞վ ես...

Պ ե պ ե լ. Ով եմ, ով չեմ, բայց... եթե ուզեմ... դուք Նատաշկային էլ չեք տեսնի...

Մ ե դ վ ե դ ե (խաղը դադարեցնելով). Այդ ի՞նչ ես ասում։ Այդ ո՞ւմ մասին ես ասում։ Որ իմ զարմուհին... Ախ, դու գո՜ղ։

Պ ե պ ե լ. Գող եմ, բայց չես բռնել։

Մ ե դ վ ե դ ե. Սպասի՜ր։ Կբռնեմ... Եվ շատ շուտով...

Պ ե պ ե լ. Իսկ եթե բռնես էլ, ձեր ամբողջ բնի գլխին փորձանք կբերես։ Դու կարծում ես ես քննչի առաջ կլռե՞մ։ Եկ ու գայլից խիղճ հուսա։ Կհարցնեն, չէ՞, ով է ինձ գողության դրդել ու տեղը ցույց տվել։ Կասեմ՝ Միշկա Կոստիլյովը կնկա հետ։ Ով է գողացած ապրանքները պարտկել։ Միշկա Կոստիլյովը կնկա հետ։

Մ ե դ վ ե դ ե. Ստո՜ւմ ես։ Չեն հավատա քեզ։

Պ ե պ ե լ. Կհավատան, որովհետև ճիշտ է։ Ու հլա քեզ էլ կխառնեմ... հա։ Կկործանեմ բոլորիդ, սատանե՜ք, կտեսնես։

Մ ե դ վ ե դ ե (իրեն կորցրած). Ստում ես... Հա ստում ես... Եվ ի՞նչ վատ բան եմ արել ես քեզ... Կատաղած շուն։

Պ ե պ ե լ. Իսկ ի՞նչ լավ բան ես արել դու ինձ։

Լ ո ւ կ ա. Այդպես...

Մ ե դ վ ե դ ե. Դո՞ւ ինչ ես կռավում։ Քո՞ ինչ գործն է։ Ընտանեկան գործ է սա։

Բ ո ւ բ ն ո վ (Լուկային). Չեռ քաշի։ Ինձ ու քեզ համար չեն պարանը հյուսում։

Լ ո ւ կ ա (խոնարհաբար). Ես, ախր, էնպես... Մեկայն էն էի մտնում, որ եթե մեկը մեկին լավ բան չի արել, ուրեմն վատ է վարվել։

Մ ե դ վ ե դ ե (շեռսկանալով). Էդ է։ Մենք էստեղ բոլորս իրար գիտենք... իսկ դո՞ւ ով ես։ (Զայրացած փնչացնելով, արագ հեռանում է)։

Լ ո ւ կ ա. Ջղայնացավ փեսացուն... օ՜խ-օ՜խ... Ձեր գործերն, ախպերս, ինչպես տեսնում եմ... խճճված գործեր են։

Պ ե պ ե լ. Վասիլիսայի մոտ վազեց, բողոքելու...

Բ ո ւ բ ն ո վ. Խելառ բաներ ես ասում, Վասիլի։ Ինչ-որ չափից ավելի շատ ես քաջացել... Նայիր, էդ քաջությունը պետք է, երբ անտառ՝ սունկի ես գնում, իսկ այստեղ դա բանի պետք չէ։ Նրանք իսկույն վիզդ կոլորեն։

Պ ե պ ե լ. Ո՜նց չէ։ Մեզ, յարոսլավցիներիս, պարապ ձեռքով էդքան հեշտ չես վերցնի... Եթե կռիվ է, կկռվենք։

Լ ու կ ա. Եվ իսկապես, տղա, լավ կանեիր, որ այստեղից հեռանայիր։

Պ ե պ ե լ. Ո՞ւր։ Դե, ասա տեսնեմ։

Լ ու կ ա. Գնա Սիբիր։

Պ ե պ ե լ. Էհե, չէ՞, դեռ կսպասեմ, մինչև որ ինձ էդ Սիբիրը տերության հաշվին ուղարկեն...

Լ ու կ ա. Իսկ դու արի ինձ լսիր։ Էնտեղ դու քեզ համար կարող ես ճամփա գտնել... Քեզպեսները էնտեղ պետք են։

Պ ե պ ե լ. Իմ ճամփան ինձ համար որոշված է։ Ծնողս ամբողջ կյանքը բանտերում է նստել ու ինձ էլ է պատվիրել... Երբ ես փոքր էի, դեռ այն ժամանակ էլ ինձ ասում էին՝ գող, գողի տղա։

Լ ու կ ա. Բայց լավ երկիր է Սիբիրը։ Ոսկե երկիր։ Ով ուժ ունի ու խելք էլ ունի, այնտեղ էնպես կզգա իրեն, ինչպես ձուկը ջրում։

Պ ե պ ե լ. Ձերուկ, ինչո՞ւ ես հա փչում...

Լ ու կ ա. Հը՞...

Պ ե պ ե լ. Խլացա՞ր... ինչո՞ւ ես փչում, ասում եմ։

Լ ու կ ա. Էդ ի՞նչն եմ փչում...

Պ ե պ ե լ. Ամեն ինչ... Էստե՛ղ է լավ, էնտե՛ղ է լավ... Ախր, փչում ես... Ի՞նչի համար։

Լ ու կ ա. Իսկ դու ինձ հավատա ու գնա ինքդ տես։ Շնորհակալություն կասես... ի՞նչ ես այստեղ տրորվում։ Եվ ինչո՞ւ է քեզ ճշմարտությունն էդքան պետք... Հապա մտածիր։ Նա, էդ ճշմարտությունը, գուցե կացնի հարված է գլխիդ...

Պ ե պ ե լ. Իսկ ինձ համար մեկ է... Թող կացնի հարված լինի...

Լ ու կ ա. Զարմանալի մարդ, ինչո՞ւ ինքդ քեզ սպանես։

Բ ու բ ն ո վ. Եվ ի՞նչ եք երկուսդ էլ լեզու թակում։ Չեմ հասկանում... Ի՞նչ ճշմարտություն է քեզ պետք, Վասկա։ Եվ ինչո՞ւ։ Դու գիտես ճշմարտությունը քո մասին... Եվ բոլորն էլ դա գիտեն...

Պ ե պ ե լ. Սպասիր, մի կռավիր։ Թող նա ինձ ասի... Լսիր, ծերուկ, աստված կա՞։

Լուկան ժպտալով, լռում է։

Բ ու բ ն ո վ. Բոլոր մարդիկ ապրում են... Տաշեղների պես գետով հոսում են... Տուն են կառուցում, տաշեղը դեն են նետում։

Պ ե պ ե լ. Դե, կա՞։ Խոսիր...

Լ ու կ ա (ցածրաձայն). Եթե հավատում ես, կա՝, չես հավատում՝ չկա։ Ինչի հավատում ես, դա էլ կա...

Պեպելը լռում, զարմացած և համեստորեն նայում է ծերունուն։

Բ ու բ ն ո վ. Գնամ, թեյ խմեմ։ Գնանք գինետուն։ Է՛յ։

Լ ու կ ա (Պեպելին). Ի՞նչ ես նայում։

Պ ե պ ե լ. Այդպես... Սպասիր... ուրեմն...

Բ ու բ ն ո վ. Դե, մենակ կգամ... (Գնում է դեպի դուռը և ճանդիպում է Վասիլիսային)։

Պ ե պ ե լ. Ուրեմն... Դու...

Վ ա ս ի լ ի ս ա (Բուբնովին). Նաստյան տա՞նն է։

Բ ու բ ն ո վ. Չէ... (գնում է)։

Պ ե պ ե լ. Ա... Եկա՞ր...

Վ ա ս ի լ ի ս ա (մոտենալով Աննային). Դեռ կենդանի՞ է...

Լ ու կ ա. Մի անհանգստացնի...

Վ ա ս ի լ ի ս ա. Իսկ դու... ի՞նչ ես էստեղ ցցվել։

Լ ու կ ա. Կարող եմ գնալ... Եթե պետք է...

Վ ա ս ի լ ի ս ա (ուղղվելով դեպի Պեպելի սենյակի դուռը). Վասիլի, գործ ունեմ քեզ հետ...

Լուկան մոտենում է միջանցքի դռանը, բացում է և ամուր բրնկացնելով փակում։ Հետո զգուշորեն բարձրանում է տախտակածին և այնտեղից՝ վառարանի վրա։

Վ ա ս ի լ ի ս ա (Պեպելի սենյակից). Վասյա... արի էստեղ...

Պ ե պ ե լ. Չեմ գա... չեմ ուզում...

Վ ա ս ի լ ի ս ա. Իսկ... ի՞նչ է։ Ի՞նչի վրա ես զայրանում...

Պ ե պ ե լ. Ձանձրալի է... ինձ հոգնեցրել է էս ամբողջ քաշքշուկը։

Վ ա ս ի լ ի ս ա. Ե՞ս էլ եմ... ձանձրացրել։

Պ ե պ ե լ. Դո՛ւ էլ...

Վասիլիսան ուսերին գցած գլխաշորն ամուր ձգում է, ձեռքերը սեղմում է կրծքին։ Գնում է դեպի Աննայի անկողինը, զգուշորեն նայում է վարագույրի ետևը և վերադառնում Պեպելի մոտ։

Պ ե պ ե լ. Դե... խոսիր...

Վ ա ս ի լ ի ս ա. Էլ ինչ խոսեմ... Զորով սիրելի չես դառնա... Եվ բնավորությանս մեջ էլ ողորմություն խնդրել չկա... Շնորհակալ եմ ճշմարտության համար...

Պ ե պ ե լ. Ի՞նչ ճշմարտություն...

Վ ա ս ի լ ի ս ա. Էն, որ ձանձրացրել եմ քեզ... թե՞ դա ճիշտ չէ...

Պեպելը լուռ նայում է նրան:

Վ ա ս ի լ ի ս ա (մոտենալով նրան). Ի՞նչ ես նայում... Չե՞ս ճանաչում...

Պ ե պ ե լ (հառաչելով). Գեղեցիկ ես դու, Վասկա... (Կինը ձեռքերը դնում է նրա վզին, բայց նա ուսի շարժումով ձեռքը վայր է բերում): Բայց երբեք սրտիս մեջ տեղ չարիր... Եվ ապրել եմ քեզ հետ, և ամեն ինչ... Բայց երբեք դու ինձ դուր չես եկել...

Վ ա ս ի լ ի ս ա (ցածրաձայն). Այդպես... Հ-հետո՞...

Պ ե պ ե լ. Դե հետո քեզ հետ խոսելիք չունեմ... չունե՛մ... հեռացի՛ր ինձանից:

Վ ա ս ի լ ի ս ա. Ուրի՞շն է դուր եկել...

Պ ե պ ե լ. Քո գործը չի... դուր է եկել, բայց քեզ խնամախոս չեմ ուղարկի:

Վ ա ս ի լ ի ս ա (նշանակալից). Եվ... իզուր... Գուցե հենց ես էլ պսակեի քեզ...

Պ ե պ ե լ (կասկածամտորեն). Էդ ո՞ւմ հետ...

Վ ա ս ի լ ի ս ա. Դու գիտես... իզուր մի ձևացնի: Վասիլի, ես մարդ եմ... (ցածրաձայն): Չեմ թաքցնի, դու ինձ վիրավորել ես... Անմեղ տեղս՝ ասես մտրակով շրխկացրիր... Ասում էիր՝ սիրում ես... Եվ հանկարծ...

Պ ե պ ե լ. Ոչ էլ հանկարծ է... Ես վաղուց էի... Ա՛յ կնիկ, դու հոգի չունես... Կինը պիտի հոգի ունենա... Մենք գազան ենք, մենք պետք է... մեզ պետք է վարժեցնել... իսկ դու ինձ ինչի՞ ես վարժեցրել...

Վ ա ս ի լ ի ս ա. Ինչ եղել է, անցել է... Ես գիտեմ, մարդն իր կամքի տերը չէ... էլ չես սիրում... Լավ: Թող այդպես լինի...

Պ ե պ ե լ. Դե, ուրեմն, վերջ: Խաղաղ, առանց գզվռտոցի բաժանվեցինք... ու լավ է:

Վ ա ս ի լ ի ս ա. Չէ, սպասիր: Համենայն դեպս... Երբ ես քեզ հետ ապրում էի, անվերջ սպասում էի, որ ինձ կօգնես՝ այս ջրափոսից դուրս գալու... կազատես ինձ մարդուցս, քեռուցս... ամբողջ այս կյանքից... Եվ գուցե ես քեզ չէի սիրում, Վասյա,

այլ... իմ հույսը, իմ էդ միտքն էի սիրում քո մեջ... Հասկանում ես: Սպասում էի, որ դու ինձ դուրս կքաշես...

Պ ե պ ե լ. Դու մեխ չես, ես էլ աքցան չեմ: Ես ինքս էի կարծում, որ դու որպես խելացի կին... Ախր, դու խելացի ես... ու ճարպիկ ես...

Վ ա ս ի լ ի ս ա (ավելի մոտիկ թեքվելով դեպի նա). Վասյա, արի... իրար օգնենք...

Պ ե պ ե լ. Էդ ո՞նց...

Վ ա ս ի լ ի ս ա (ցածրաձայն, ուժեղ). Քույրս քեզ դուր է գալիս, գիտեմ...

Պ ե պ ե լ. Դրա համար էլ դու նրան գազանաբար ծեծում ես: Նայիր, Վասկա, նրան ձեռք մի տա...

Վ ա ս ի լ ի ս ա. Սպասիր, մի տաքանա: Ամեն ինչ կարելի է անել հանգիստ, լավ... Ուզո՞ւմ ես, պսակվիր հետը: Ու ես դեռ քեզ փող էլ կտամ... մի երեքհարյուր մանեթ: Ավելի շատ կհավաքեմ՝ ավելի շատ կտամ...

Պ ե պ ե լ (ետ քաշվելով). Սպասիր... այդ ինչպե՞ս... ինչի՞ համար...

Վ ա ս ի լ ի ս ա. Ազատիր ինձ... մարդուցս... վզիցս հանիր էդ օղակը...

Պ ե պ ե լ (կամաց ասլում է). Ահա թե ինչ... օհո՜... դու էդ բանը տամթով ես մտածել... Մարդուդ, ուրեմն, գերեզման, սիրեկանիդ՝ աքսոր, իսկ ինքդ...

Վ ա ս ի լ ի ս ա. Վասյա, ինչո՞ւ աքսոր: Դա ինքդ չես անի... Ընկերներիդ միջոցով: Ու եթե ինքդ էլ անես, ո՞վ կիմանա որ: Մտածիր... Նատալյան: Փող կլինի... Կմեկնես մի տեղ... Ինձ մեկընդմիշտ կազատես... Եվ որ քույրս էլ կողքիս չլինի, իր համար լավ է: Նրան տեսնելը ինձ համար դժվար է... Քո պատճառով նրա վրա կատաղում եմ ու ինձ զսպել չեմ կարողանում... Տանջում եմ աղջկան, ծեծում եմ... Այնպես եմ ծեծում, որ խղճալուց ինքս էլ եմ լալիս... Բայց ծեծում եմ: Եվ պիտի ծեծեմ:

Պ ե պ ե լ. Գազա՛ն, պարծենում է իր գազանությամբ:

Վ ա ս ի լ ի ս ա. Չեմ պարծենում, ճիշտն եմ ասում: Մտածիր, Վասյա, դու մարդուս պատճառով երկու անգամ բանտ ես նստել... նրա ագահության պատճառով: Նա փայտոջիլի նման կպել է ինձ... չորս տարի է, ծծում է: Իսկ նա ինձ համար ի՞նչ ամուսին է: Նատաշկային նեղում է, ծաղրում, մուրացկան ես, ասում է: Բոլորի համար էլ նա թույն է:

Պ ե պ ե լ. *Խորամանկ ես հյուսում ցանցդ...*

Վ ա ս ի լ ի ս ա. *Իմ խոսքերի մեջ ամեն ինչ պարզ է... Միայն հիմարը չի հասկանա, թե ինչ եմ ուզում...*

Կոստիլյովը զգուշորեն մտնում ու թաքուն առաջ է գալիս:

Պ ե պ ե լ (Վասիլիսային). *Դե... հեռացիր։*

Վ ա ս ի լ ի ս ա. *Մտածիր։* (Տեսնում է ամուսնուն) *Դու ի՞նչ է... Հետևի՞ցս ես եկել...*

Պեպելը ցատկում է ու կատաղի նայում Կոստիլյովին:

Կ ո ս տ ի լ յ ո վ. *Էդ ե՛ս եմ, ես... իսկ դուք էստեղ մենակ եք... Ա՜-ա՜, դուք զրուցում էիք...* (Հանկարծ դոփում է ոտքերով ու բարձր ղժժում): *Վասկա... կեղտոտի մեկը... Մուրացկան... Գի՛ղձ...* (Վախենում է իր գոռոցից, որ լռությամբ ու անշարժությամբ է ընդունվում): *Ների՛ր, տեր աստված... էլի դու, Վասիլիսա, ինձ մեղքի մեջ գցեցիր... Ես քեզ ամեն տեղ փնտրում եմ...* (Ճչալով). *Քնելու ժամանակ է։ Ճրագների մեջ մոռացել ես ձեթ լցնել... ո՜ւ, դու... մուրացկա՛ն, խո՛զ...* (Դողացող ձեռքերը թափ է տալիս Վասիլիսայի վրա, որ դանդաղ գնում է դեպի միջանցքի դուռը, նայելով Պեպելին):

Պ ե պ ե լ (Կոստիլյովին). *Դո՛ւ... հեռացիր... կորիր...*

Կ ո ս տ ի լ յ ո վ (գոռում է). *Ես այս տան տերն եմ։ Ի՛նքդ կորիր։ Գո՛ղ։*

Պ ե պ ե լ (խուլ ձայնով). *Հեռացի՛ր, Միշկա...*

Կ ո ս տ ի լ յ ո վ. *Չհամարձակվես... ես այստեղ... Ես քեզ...*

Պեպելը բռնում է նրա օձիքից ու թափ է տալիս: Վառարանի վրա աղմկոտ իրարանցում է բարձրանում և լսվում է ոռնաձայն, ճորանչ։ Պեպելը բաց է թողնում Կոստիլյովին, ծերունին գոռալով վազում է միջանցք:

Պ ե պ ե լ (թռչում է տախտամածին). *Էդ ո՞վ է... ո՞վ է վառարանի վրա։*

Լ ո ւ կ ա. *Ի՞նչ...*

Պ ե պ ե լ. *Դո՞ւ ես...*

Լ ո ւ կ ա (ճանգիստ). *Ես եմ... ես ինքս... Օ՜, տեր, Հիսուս Քրիստոս...*

Պ ե պ ե լ (փակում է միջանցքի դուռը, փնտրում է փականը ու չի գտնում). *Ա՜խ, սատանեք... ծերուկ, ցա՛ծ արի...*

Լ ո ւ կ ա. *Իսկույն, իջնում եմ...*

Պ ե պ ե լ (կոպտորեն). *Դու ինչո՞ւ ես վառարանի վրա ելել...*

Լ ո ւ կ ա. *Իսկ ո՞ւր պիտի ելնեի...*

Պ ե պ ե լ. *Ախր... դու միջանցք գնացիր...*

Լ ո ւ կ ա. *Միջանցքում, ախպերս, ինձ, ծերուկիս համար, ցուրտ է...*

Պ ե պ ե լ. *Դու... լսեցի՞ր...*

Լ ո ւ կ ա. *Լսեցի... ինչպես չլսեի... խուլ հո չե՞մ... Ախ, տղա, բախտդ բանում է... այ թե բանում է բախտդ...*

Պ ե պ ե լ. *Ի՞նչ բախտ, ի՞նչ բանի մեջ...*

Լ ո ւ կ ա. *Այ հենց էն, որ ես վառարանի վրա էի բարձրացել։*

Պ ե պ ե լ. *Իսկ ինչո՞ւ էիր դու այնտեղ իրարով անցել...*

Լ ո ւ կ ա. *Որովհետև, ուրեմն, սկսել էի շոգել... ու դա քո՝ որբիդ բախտից։ Ու մտածեցի, հանկարծ տղան չսխալվի... չխեղդի հանկարծ ծերուկին...*

Պ ե պ ե լ. *Հա՜-ա՜... Ես էդ կարող էի... ատո՛ւմ եմ...*

Լ ո ւ կ ա. *Եվ զարմանալու չէ... ինչ մի դժվար բան է... Շատերն են հենց էդպես սխալվում...*

Պ ե պ ե լ (ժպտալով). *Դու՝ ինչ է, ինքդ էլ ես մի օր էդպես սխալվել...*

Լ ո ւ կ ա. *Տղա՛, լսիր, թե քեզ ինչ կասեմ. այդ կնկան քեզանից հեռու քշիր... Մոտ չթողնես... չէ՛, չէ՛... իր մարդուն ինքն էլ կարող է էս աշխարհից ղրկել, հլա դեռ քեզանից էլ ավելի տամթով, հա՛։ Դու նրան, էդ շար ոգուն, չլսես... Նայի՛ր, ինչպիսին եմ ես... ճաղատ... իսկ ինչի՞ց։ Հենց էդ ամեն տեսակի կնանիքանցից... Ես դրանցից, էդ կնանիքանցից, կարող է ավելի շատ եմ տեսել, քան թե գլխիս մազ կար... Իսկ էդ Վասիլիսան չերեմիսից էլ վատ է։*

Պ ե պ ե լ. *Չեմ հասկանում... շնորհակալություն ասեմ քեզ, թե՞ դու էլ...*

Լ ո ւ կ ա. *Ոչինչ մի ասա։ Ինձանից լավ չես ասի։ Լսիր, որը քեզ այստեղ դուր է գալիս, ձեռքը բռնիր ու քայլով մարշ այստեղից։ Գնա՛, հեռու գնա...*

Պ ե պ ե լ (մռայլ). *Չես հասկանում մարդկանց, ո՞րն է բարի, ո՞րն է շար... ոչի՞նչ չես հասկանում...*

Լ ո ւ կ ա. *Հասկանալու ինչ կա։ Մարդ ամեն ձևի էլ ապրում է... այսօր՝ բարի, վաղը՝ շար... Իսկ եթե էդ աղջիկը սիրտդ պինդ է մտել... հետը գնա ու վերջ... Իսկ թե չէ՛, մենակդ գնա, դեռ ջահել ես, կհասցնես կնիկ ճարել...*

Պ ե պ ե լ (բռնում է նրա ուսը). *Չէ, ասա, ինչի՞ համար ես անում էս բոլորը...*

Լ ո ւ կ ա. *Սպասիր, թող... Աննային նայեմ, ինչ-որ շատ է խռխռացնում* (գնում է դեպի Աննայի անկողինը, բարձրացնում է վարագույրը, նայում, ձեռք է տալիս: Պեպելը մտածկոտ ու շփոթված նետևում է նրան): *Հիսուս Քրիստոս, գթառատ... Քո նոր վախճանված ծառա Աննայի հոգին խաղաղությամբ ընդունիր...*

Պ ե պ ե լ (ցածրաձայն). *Մեռա՞վ...* (Զմռսենալով, ձգվում ու նայում է մահճակալին):

Լ ո ւ կ ա (ցածրաձայն). *Զարշարվեց, պրծավ։ Իսկ դրա մարդն ո՞ւր է...*

Պ ե պ ե լ. *Գինետանն է, երևի...*

Լ ո ւ կ ա. *Պետք է ասել...*

Պ ե պ ե լ (ցնցվում է). *Չեմ սիրում հանգուցյալների...*

Լ ո ւ կ ա (գնում է դեպի դուռը). *Իսկ ինչու պիրել նրանց։ Ապրողներին պիտի սիրել, ապրողներին...*

Պ ե պ ե լ. *Ես էլ կգամ քեզ հետ...*

Լ ո ւ կ ա. *Վախենում ես...*

Պ ե պ ե լ. *Չե՛մ սիրում...*

Շտապ դուրս են գալիս: Դատարկություն ու լռություն: Միջանցքի դռան հետև լսվում է խուլ աղմուկ՝ աճեավատար, աճեասկանալի: Հեռո մտնում է Դերասանը:

Դ ե ր ա ս ա ն (առանց դուռը փակելու կանգ է առնում շեմին և ձեռքերով դռան շրջանակը բռնելով, գոռում է). *Մերուկ, հե՛յ, ո՞ւր ես... Հիշեցի, լսի՛ր* (օրորվելով երկու քայլ առաջ է գալիս ու կեցվածք ընդունելով, արտասանում է).

Պարոնա՛յք, եթե այս աշխարհն արար
Չկարողանա ճշմարտին հասնել,
Փա՞ռք այն խենթ մարդուն, որ մարդկությանը
Կբերի ոսկե ու սուրբ երազներ։

Դերասանի ետևում, դռների մեջ նայանվում է Նատաշան:

Դ ե ր ա ս ա ն. *Մերո՞ւկ...*

Թե արեգակը վաղը մոռանա
Ու երկրի վրա լույսն իր չնետի,
Կլուսավորի աշխարհը արար
Հրավառ միտքը ինչ-որ մի խենթի...

Ն ա տ ա շ ա (ծիծաղում է). *Խրտվիլա՛կ։ Լակել է...*

Դ ե ր ա ս ա ն (շուռ է գալիս նրա կողմը). *Ա՜հ, դո՞ւ ես, իսկ ո՞ւր է ծերունին, սիրելի ծերուկը... Այստեղ, ինչպես երևում է, ոչ ոք չկա... Նատաշա, մնաս բարո՞վ։ Մնաս բարո՞վ։*

Ն ա տ ա շ ա (ներս գալով). *Բարև չես ասել և մնաս բարով ես ասում...*

Դ ե ր ա ս ա ն (փակելով նրա ճանապարհը). *Ես գնում եմ, հեռանում եմ, հեռանում եմ... Այո՛, գարուն կգա, ու ես այստեղ չեմ լինի։*

Ն ա տ ա շ ա. *Թող անցնեմ... Դու այդ ո՞ւր ես գնալու...*

Դ ե ր ա ս ա ն. *Փնտրելու մի քաղաք... Բուժվելու... Դու էլ հեռացիր, Օֆելյա... Մտիր կուսանոց... Հասկանում ես, մի բուժարան կա օրգանիզմների համար... հարբեցողների համար... Հիասքանչ բուժարան է... Մարմար... Մարմարե հատակ... Լո՛ւյս է, մաքրություն, սնունդը... ամեն ինչը ձրի։ Եվ մարմարե հատակ, այո՛։ Ես դա կգտնեմ, կբուժվեմ և... նորից կլինեմ... ես վերածնության ճանապարհին եմ... ինչպես ասել է... Լիր արքան։ Նատաշա, իմ բեմական անունն է Սվերչոկ-Զովոլժսկի... Ոչ ոք դա չգիտի, ոչ ոք։ Ես այստեղ անուն չունեմ... Հասկանո՞ւմ ես դու, թե դա ինչ վիրավորական է... կորցնել անունդ։ Նույնիսկ շները մականուն ունեն...*

Նատաշան զգուշորեն շրջանցում է Դերասանին, կանգ է առնում Աննայի մահճակալի մոտ, նայում է:

Դ ե ր ա ս ա ն. *Առանց անունի մարդ չկա...*

Ն ա տ ա շ ա. *Նայիր... Աղավնյա՛կս... մեռել է, ախր...*

Դ ե ր ա ս ա ն (տարուբերելով գլուխը). *Չի՛ կարող պատահել...*

Ն ա տ ա շ ա (ետ քաշվելով). *Ատված վկա... Նայիր...*

Բ ո ւ բ ն ո վ (դռների մեջ). *Ի՞նչ կա նայելու...*

Ն ա տ ա շ ա. *Աննան... մեռել է։*

Բ ո ւ բ ն ո վ. *Դադարել է, ուրեմն, հազալուց* (գնում է **Աննայի** անկողնի մոտ, նայում է, վերադառնում իր տեղը): *Կլեշչին պիտի ասել... Նրա գործն է...*

Դ ե ր ա ս ա ն. *Ես գնում եմ... կասեմ... Կորցրել է անունը...* (գնում է):

Ն ա տ ա շ ա (սենյակի մեջտեղում). *Ահա ես էլ... մի օր էսպես... նկուղում... մոռացված...*

Բ ու բ ն ո վ (իր տախտամածի վրա ինչ-որ փալասներ փռելով). *Ի՞նչ... դու այդ ի՞նչ ես մրթմրթում...*

Ն ա տ ա շ ա. *Այնպես... ինձ համար...*

Բ ու բ ն ո վ. *Վասյայի՞ն ես սպասում... Նայիր, գլուխդ կշարդի Վասյան...*

Ն ա տ ա շ ա. *Իսկ մեկ չէ՞, թե ով կշարդի... Ավելի լավ է, ուրեմն, նա շարդի։*

Բ ու բ ն ո վ. *Դե, քո գործն է։*

Ն ա տ ա շ ա. *Ախր, լավ է, որ նա մեռավ... բայց մեղք է... Տեր աստված, ինչո՞ւ ապրեց մարդը...*

Բ ու բ ն ո վ. *Բոլորն էլ այդպես ծնվում են, ապրում են, մեռնում։ Ես էլ կմեռնեմ, դու էլ... ինչո՞ւ մեղքանալ...*

Մտնում են Լուկան, Թաքարը, Կրիվոյ Զոբը և Կլեշշը։
Կլեշշը գալիս է բոլորից հետո, զանգալ, կծկված։

Ն ա տ ա շ ա. *Ս-ս։ Աննա՜ն...*

Կ ր ի վ ո յ Զ ո բ. *Լսել ենք։ Երկնային արքայություն նրան, քանի որ մեռել է։*

Թ ա ք ա ր. *Դուրս պիտի տանել... Հաշտը տանել պիտի... Այստեղ մեռած չի կարելի, այստեղ սաղ պիտի պառկի...*

Կ լ ե շ շ (ցածրաձայն). *Կտանենք...*

Բոլորը մոտենում են անկողնին։ Կլեշշը կնոջն է նայում մյուսների ուսերի վրայով։

Կ ր ի վ ո յ Զ ո բ (Թաքարին). *Դու կարծում ես հո՞տ կգցի... Նրանից ոչ մի հոտ էլ չի գա... նա դեռ կենդանի ժամանակ լրիվ չորացել էր...*

Ն ա տ ա շ ա. *Տեր աստված, գոնե խղճայիք նրան... Գոնե որևէ մեկդ մի ինչ-որ խոսք ասեիք... Ա՜խ, դո՛ւք...*

Լ ու կ ա. *Դու, աղջիկս, մի նեղանա... ոչինչ։ Ի՞նչ անեն... Ի՞նչ անենք, մեռածին խղճանք, է՞, սիրելիս, մենք ապրողներին չենք խղճում... ինքներս մեզ խղճալ չենք կարողանում... էլ ո՞ւր մնաց...*

Բ ու բ ն ո վ (հորանջելով). *Համենայն դեպս մահը խոսքից չի վախենում, հիվանդությունը վախենում է, բայց մահը չէ...*

Թ ա ք ա ր (հեռանալով). *Ոստիկանությանը պետք է...*

Կ ր ի վ ո յ Զ ո բ. *Ոստիկանությանը՝ անպայման... Կլեշշ, ոստիկանություն հայտնե՞լ ես...*

Կ լ ե շ շ. *Չէ... Թաղել է պետք... իսկ ես ընդամենը քառասուն կոպեկ ունեմ...*

Կ ր ի վ ո յ Զ ո բ. *Դե, էդպիսի դեպքի համար պարտք առ... կամ գուցե մենք հավաքենք... ով՝ հինգ կոպեկ, ով՝ ինչքան կարող է... իսկ ոստիկանություն հայտնիր, շտապ։ Թե չէ, նա կարող է մտածել, որ դու կնկադ սպանել ես... կամ, ո՞վ գիտե...* (գնում է դեպի տախտամածը և պատրաստվում է պառկել Թաքարի կողքին)։

Ն ա տ ա շ ա (հեռանալով դեպի Բուբնովի տախտամածը). *Ահա... սրանից հետո նա պիտի երազումս գա... ես միշտ երազիս մեջ մեռել եմ տեսնում... Վախենում եմ մենակ գնալ... Հաշտում մութ է...*

Լ ու կ ա (հետևելով նրան). *Դու ապրողներից վախեցիր... ահա թե ինչ կասեմ...*

Ն ա տ ա շ ա. *Ինձ ճամփու դիր, պապիկ...*

Լ ու կ ա. *Գնանք, գնանք... Ճամփու դնեմ...* (գնում են։ Դադար)։

Կ ր ի վ ո յ Զ ո բ. *Օխո՜-խո՜-ո... Հասա՜ն։ Շուտով գարուն է, բարեկամներս... Կարգին կտաքանանք... Հիմա գյուղերում գյուղացիք արոր, տափան են նորոգում... Պատրաստվում են վարի դուրս գալ... այո՜... իսկ մենք... Հասան... խոմփում է արդեն, անիծյալ Մուհամեդ...*

Բ ու բ ն ո վ. *Թաթարները սիրում են քնել։*

Կ լ ե շ շ (կանգնած է օթևանի մեջտեղում և բուռ հայացքով նայում է իր առջևը). *Հիմա ես ի՞նչ պիտի անեմ...*

Կ ր ի վ ո յ Զ ո բ. *Պառկիր տեղդ քնիր... էլ ի՞նչ պիտի անես...*

Կ լ ե շ շ (կամաց). *Իսկ... նա... ինչպե՞ս...*

Ոչ ոք չի պատասխանում նրան։ Մտնում են Սատինն ու Դերասանը։

Դ ե ր ա ս ա ն (գոռում է). *Մերուկ, այստե՛ղ եկ, իմ հավատարիմ քենտ...*

Ս ա տ ի ն. *Միկլուխա-Մակլայն է գալիս... հո՜-հո՜...*

Դ ե ր ա ս ա ն. *Վերջացած ու որոշված է։ Մերուկ, որտեղ է այդ քաղաքը... Ո՞ւր ես...*

Ս ա տ ի ն. *Ֆատա-մորգանա... փչել է ծերուկը... ոչինչ չկա։ Չկան քաղաքները, չկան մարդիկ... ոչի՞նչ չկա։*

Դ ե ր ա ս ա ն. *Սո՛ւմ ես...*

Թ ա ք ա ր. *Տանտերն ո՞ւր է... Տանտիրոջ գնամ... Չի կա-*

բելի քնել, չի կարելի փող առնել... մեռելներ... հարբածներ... (Արագ գնում է):

Սատինը նրա ետևից սուլում է:

Բ ո ւ բ ն ո վ (բնաս ձայնով). *Տզե՛ր, պառկեք, մի՛ աղմկի... Գիշերը քնել է պետք...*

Թ ե ր ա ս ա ն. *Այո՛... այստեղ ահա... մեռել կա... «Ապի, ապի, եկ, մեր թոռը մեռել հանեց գետի ափ»... Բանաստեղծություն։*

Ս ա տ ի ն (գոռում է). *Մեռյալները չեն լսում։ Մեռյալները չեն զգում... Գոռա՛, ոռնա՛... մեռյալները չեն լսում։*

Դռների մեջ երևում է Լուկան:

Վ ա ր ա գ ա ս ը

ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

«Պարապուտ», զանազան անպետք իրերով ու մոլախոտով ծածկված բականման մի տեղ։ Խարխուլ աղյուսե բարձր ճրագնապարիսպ, որ փակում է երկինքը։ Նրա մոտ՝ բանբվենու թփեր։ Աջ կողմում ինչ-որ բակային շինության՝ փայտատան կամ գոմի գերանակապ մութ պատն է։ Իսկ ձախ կողմում՝ զորշ, ծեփի մնացորդներով ծածկված պատն է այն տան, ուր տեղավորված է Կոստիլյովի օթևանը։ Նա թեք է կանգնած, այնպես, որ նրա հետևի անկյունը դուրս է գալիս պարապուտի ճամարյա մեջտեղը։ Նրա և կարմիր պատի միջև մի բանի անցուղի կա։ Դարշ պատի մեջ երկու լուսամուտ՝ մեկը գետնի բարձրությանն է, մյուսը մի երկու արշին վերև է և մոտ է ճրագնապարսպին։ Այդ պատի մոտ մի շոտ տված սանձակ կա և մի գերանի կտոր՝ չորս արշին երկարությամբ։ Պատի աջ կողմում ճին փայտի, չորսուների կույտ է։ Երեկո է, արևը մայր է մտնում, ճրագնապարիսպը լուսավորելով կարմրավուն լույսով։ Վաղ գարուն է, ձյունը նոր է հալվել։ Թանբվենու սև շյուղերը դեռ չեն բողբոջել։ Գերանի վրա կողքկողքի նստած են Նատաշան և Նաստյան։ Փայտերին՝ Լուկան ու Բարոնը։ Կլեշշը պառկած է փայտերի կույտի վրա, որ աջ պատի մոտ է։ Գետնի բարձրության լուսամուտի մեջ Բուբնովի մոռութն է։

Ն ա ս տ յ ա (Աչքերը փակած և գլուխը բառերի տակտով շարժելով, երգեցիկ ձայնով պատմում է). *Ահա նա գիշերը գալիս է այդի, տաղավար, ինչպես մենք պայմանավորվել էինք... իսկ ես նրան արդեն վաղուց եմ սպասում և դողում եմ վախից ու վշտից։ Նա ոտից գլուխ դողում է ու կավճի պես ճերմակ է։ Իսկ ձեռքին ատրճանակ է...*

Ն ա տ ա շ ա (արևածաղիկ է շրթում). *Տես, է... երևում է, ճիշտ են ասում, որ ուսանողները քաջ են...*

Ն ա ս տ յ ա. *Ու նա ինձ մի վախենալիք ձայնով ասում է. իմ թանկագին սեր...*

Բ ո ւ բ ն ո վ. *Հո՛-հո՛... թանկագին...*

Բ ա ր ո ն. *Համբերի՛ր։ Հաճելի չէ, մի լսիր... բայց փչելուն մի խանգարիր... Շարունակի՛ր...*

Ն ա ս տ յ ա. *Աննմանս, ասում է, ի՛մ սեր... ծնողներս, ասում է, իրենց համաձայնությունը չեն տալիս, որ ես քեզ հետ պսակվեմ... Եվ սպառնում են հավիտյան անիծել ինձ քեզ սիրելուս համար։ Ու ես, ասում է, էդ պատճառով պիտի ինձ կյանքից զրկեմ... Իսկ ատրճանակը հսկայական է ու մեջն էլ տասը փամփուշտ կա... «Մնաս բարով, ասում է, իմ սրտի սիրելի տիրուհի...անվերադարձ որոշել եմ... առանց քեզ ոչ մի կերպ ապրել չեմ կարող։ Եվ պատասխանում էի ես նրան. «Իմ անմոռանալի ընկեր Ռաուլ...»*

Բ ո ւ բ ն ո վ (զարմացած). *Ի-ի՞նչ... Ինչպե՞ս... Կրառ՞ալ...*

Բ ա ր ո ն (ֆրֆչում է). *Նաստկա... Ախր... ախր... անցյալ անգամ Գաստոն էր...*

Ն ա ս տ յ ա (տեղից ցատկելով). *Լռե՛ք, թշվառականներ... Ախ, թափառական շներ։ Միթե... միթե դուք կարո՞ղ եք սերը հասկանալ։ Իսկական սերը։ Իսկ իմը... իսկական էր։* (Բարոնին) *Դու, ոչնչություն... Կրթված մարդ ես դու... ասում ես անկողնի մեջ սուրճ ես խմել...*

Լ ո ւ կ ա. *Իսկ դուք համբերեք... դուք մի խանգարեք... Հարգեք մարդուն... Բանը խոսքը չէ, այլ այն, թե ինչո՞ւ է էդ խոսքը ասվում... Ահա թե բանն ինչ է... Պատմիր, աղջիկս, ոչինչ...*

Բ ո ւ բ ն ո վ. *Ներկիր, ագռավս, փեռուրներդ... դե՛հ...*

Ն ա տ ա շ ա. *Նրանց մի լսիր... ի՞նչ են նրանք։ Նախանձից են նրանք էդպես... իրենց մասին պատմելու բան չունեն...*

Ն ա ս տ յ ա (նստում է նորից). *Էլ չեմ ուզում, չեմ պատմի... Քանի որ չեն հավատում... ծիծաղում են...* (Հանկարծ խոսքն ընդհատելով, մի բանի վայրկյան լռում է և նորից աչքերը փակած, շարունակում է պատմել բարձրաձայն ու եռանդով, խոսքի տակտով թափահարելով ձեռքը և ասես ականջ դնելով հեռավոր երաժշտությանը)։ *Եվ ահա պատասխանում եմ ես նրան. «Իմ կյանքի ուրախություն, իմ պայծառ արեգակ... ես էլ առանց քեզ չեմ կարող ապրել աշխարհի վրա... որովհետև*

խելագարի պես սիրում եմ և կսիրեմ, քանի դեռ կրծքիս տակ սիրտս բաբախում է։ Բայց, ասում եմ, քեզ մի զրկիր քո երիտասարդ կյանքից... Նա այնքան պետք է քո թանկագին ծնողներին, որոնց ամբողջ ուրախությունը դու ես... Լսի՛ր ինձ։ Ավելի լավ է, թող ես կործանվեմ քո սիրուց... միայն ես... այդպիսին եմ ես... Թող ես մեռնեմ, մեկ է... ես ոչ մի բանի պետք չեմ... ու ինձ համար ոչինչ չկա... ոչի՛նչ չկա...» (Երեսը ծածկում է ձեռքերով ու անձայն լալիս)։

Նաստաշա. (մի կողմ շուռ գալով, ցածրաձայն)։ Լաց մի լինի... պետք չի։

Լուկան ժպտալով շոյում է Նաստյայի գլուխը։

Բուբնով (բրբշում է)։ Ա՜խ, դու... սատանի պուպրիկ...

Բարոն (նույնպես ծիծաղում է)։ Պապիկ, դու կարծում ես դա ճի՞շտ է... էդ բոլորը «Ճակատագրական սեր» գրքից է... էդ բոլորը դատարկ բան է...

Նաստաշա. Իսկ քե՞զ ինչ... Ավելի լավ է լռես, քանի որ աստծո զարկված ես...

Նաստյա (կատաղած)։ Կորած հոգի՛, դատարկ մարդ... ո՞ւր է քո հոգին։

Լուկա (բռնում է Նաստյայի ձեռքը)։ Գնանք, սիրունս... ոչինչ, մի բարկանա... ես գիտեմ, ես հավատում եմ։ Ճշմարտությունը քոնն է և ոչ նրանցը։ Եթե դու հավատում ես, որ իսկական սեր ես ունեցել... ուրեմն, ունեցել ես։ Ունեցել ես։ Իսկ նրա վրա մի զայրանա... էդ կենվորի վրա... Նա...երևի իսկապես էլ նախանձից է ծիծաղում քեզ վրա... նա երևի երբեք էլ ոչ մի իսկական բան չի ունեցել... ոչինչ...Հապա, գնանք...

Նաստյա (ձեռքերը ամուր կրծքին սեղմելով)։ Պապիկ, աստված վկա... Դա եղել է։ Ամեն ինչ եղել է... Ուսանող էր... Ֆրանսիացի... Գաստոշա էր անունը... Սև մորուսով... Լաքած կոշիկներով էր ման գալիս... Թող կայծակը ինձ հենց էստեղ խփի։ Եվ էնպե՞ս էր ինձ սիրում... էնպե՞ս էր սիրում։

Լուկա. Ես գիտեմ։ Ոչինչ։ Ես հավատում եմ։ Լաքած կոշիկներով, ասում ես։ Ա՜յ-ա՜յ-ա՜յ... իսկ դու, դո՞ւ էլ նրան սիրում էիր...

Գնում է պատի ետև։

Բարոն. Համա թե հիմարն է այդ օրիորդը... Բարի է, բայց անտանելի հիմար...

Բուբնով. Եվ ինչո՞ւ է էդպես... Ինչո՞ւ է մարդն էդքան սիրում փչել։ Միշտ ոնց որ քննչի առաջ կանգնած լինի... իսկապես...

Նաստաշա. Երևի փչոցը... ճշմարտությունից հաճելի է... ես նույնպես....

Բարոն. Ի՞նչ նույնպես... Հետո՞։

Նաստաշա. Հնարում եմ, հնարում ու սպասում...

Բարոն. Ինչի՞ ես սպասում...

Նաստաշա (շփոթված ժպտալով)։ Այսպես ահա... մտածում եմ, որ վաղը կգա ինչ-որ մեկը... բացառիկ մի մարդ... Կամ ինչ-որ մի բան կպատահի... ու դա էլ չեղած-չլսված բան կլինի... Երկար եմ սպասում, միշտ սպասում եմ... Իսկ այնպես... ճիշտն ասած, ինչի՞ կարելի է սպասել։

Դադար։

Բարոն (մմծիծաղով)։ Ոչնչի... ես ոչնչի չեմ սպասում։ Ամեն ինչ արդեն եղել է... Անցել է... Վերջացել է... Շարունակի՛ր։

Նաստաշա. Եվ կամ... երևակայում եմ ինքս ինձ, որ վաղը ես... հանկածամահ կլինեմ... Եվ դրանից սարսափում եմ... Ամռանը լավ է մահը երևակայել... ամպրոպները ամռանն են լինում... Կայծակը միշտ կարող է սպանել...

Բարոն. Դու վատ ես ապրում... էդ բոլորի համար քույրդ է մեղավոր։ Հրեշավոր բնավորություն ունի։

Նաստաշա. Իսկ ո՞վ է լավ ապրում։ Բոլորն են վատ... տեսնում եմ։

Կլեշչ (Ոռ մինչ այդ անշարժ ու խոսակցությանն անմասնակից պառկած էր, հանկարծ ցատկում է տեղից)։ Բոլո՞ը... Ստո՛ւմ ես։ Ոչ բոլորը։ Եթե բոլորը լինեին... ոչինչ։ Այն ժամանակ վիրավորական չէր լինի։ Այո՛։

Բուբնով. Ինչ է, սատանան քեզ պողահարեց։ Մի տես է՞, ոնց ոռնաց...

Կլեշչը ներից է պառկում իր տեղում և փնթփնթում։

Բարոն. Հարկավոր է գնալ Նաստենկայի հետ հաշտվել... Չհաշտվեմ՝ խմելու փող չի տա...

Բուբնով. Մարդիկ սիրում են փչել... Դե, Նաստկան հասկանալի է... Նա սովոր է մռութը ներկել... հիմա էլ հոգին է

ուզում ներկել... կարմրացնել հոգին։ Իսկ ուրիշներն ինչո՞ւ են անում։ Լուկան, օրինակ... շա՜տ է փչում... և իր համար առանց որևէ օգուտի... Արդեն ծեր է... Նրա ինչի՞ն է պետք։

Բարոն (մմծիծաղելով հեռանում է). Բոլոր մարդկանց հոգիները գորշ են, և բոլորն ուզում են կարմրացնել։

Լուկա. (պատի ետևից դուրս գալով). Դու, աղա, աղջկան ինչո՞ւ ես անհանգստացնում... Լավ կլիներ, որ նրան չխանգարեիր... Թող լաց լինի, զվարճանա... Ախր նա իր հաճույքի համար է արցունք թափում... Դա քեզ ի՞նչ վնաս է տալիս...

Բարոն. Տխմարություն է, ծերուկ։ Զանձրացրել է նա... այսօր Ռաուլ, վաղը՝ Գաստոն... բայց միշտ նույն բանը։ Իմիջիայլոց, գնում եմ հետը հաշտվեմ։

Լուկա. Հա, գնա էդպես... շոյիր։ Մարդուն շոյելը երևի վնասակար չի։

Նատաշա. Բարի ես դու, պապիկ... Ինչի՞ց է, որ դու էդպես բարի ես։

Լուկա. Բարի եմ, ասում ես։ Դե լավ է, եթե էդպես է...

Կարմիր պատի ետևում կամաց ճնշում է հարմոնը և երգը։

Պետք է, աղջիկս, որ ինչ-որ մեկն էլ բարի լինի... Մարդկանց պիտի խղճալ։ Քրիստոսը բոլորին էլ խղճում էր ու մեկ էդպես է պատվիրել... Ասեմ քեզ, երբ ժամանակին ես մարդուն խղճում, լավ է լինում։ Ահա, օրինակ, ես մի ինժեների ամառանոցում, Տոմսկ քաղաքի մոտ, պահակ էի... Անտառում էր ամառանոցը, խուլ տեղում... Ամեն էր, ու ես ամառանոցում մենակ էի։ Ամեն ինչ կարգին էր, լավ... Եվ ահա մի անգամ լսում եմ, մրտնում են...

Նատաշա. Գողե՞ր...

Լուկա. Հա, դրանք։ Ուրեմն մտնում են։ Այո՛։ Հրացանն առա ու դուրս եկա... Նայում եմ՝ երկուսով են... Պատուհանն են բացում։ Ես գոռում եմ՝ հե՜յ, դուք, հեռացե՛ք... իսկ նրանք, ուրեմն, կացնով ինձ վրա են քշում... ես նրանց զգուշացնում եմ՝ կանգնի՛ր, ասում եմ, թե չէ կկրակեմ... Հրացանով էլ մեկ մեկին եմ նշան բռնում, մեկ մյուսին... ծնկաչոք ընկան՝ թե բաց թող մեզ։ Դե, ես էլ արդեն էն է, կատաղած եմ... կացնի համար, գիտես... Ասում եմ՝ ես ձեզ, սատանեք, փախցնում էի, չէիք գնում... իսկ հիմա, ասում եմ, ձեզանից որևէ մեկը թող ճյուղեր կոտրի... Կոտրեցին։ Հիմա, հրամայում եմ, թող մեկդ պառկի,

մյուսդ՝ ճիպոտահարի... Այդպես նրանք, իմ հրամանով, մեկը մյուսին ճիպոտահարեցին... Ու երբ ծեծվեցին, պրծան, ասում են՝ պապիկ, Քրիստոսի սիրուն, հաց տուր մեզ... ասում են, բան լենք կերել, անոթի ենք... Ահա քեզ՝ գողեր, սիրունս, ահա քեզ՝ կացնով վրա քշել... Հա՜... Երկուսն էլ լա՜վ տղերք էին... Ես նրանց ասում եմ, լավ չէր լինի, որ հենց սկզբից հաց ուղեիր։ Իսկ նրանք՝ զզվել էինք, ասում են, ուզում ես, ուզում ու ոչ մեկը չի տալիս... Վիրավորական է... էդպես էլ նրանք ամբողջ ձմեռ ապրեցին ինձ մոտ։ Մեկը, անունը Ստեպան էր, պատահում էր առնում էր հրացանը ու, հայդա, անտառ... իսկ մյուսը, Յակով էր, անվերջ հիվանդ էր, հազում էր... Երեքով, ուրեմն, մենք ամառանոցում էինք ապրում։ Գարունը եկավ թե չէ, մնաս բարով, պապիկ, ասացին ու գնացին... դեպի Ռուսաստան...

Նատաշա. Փախստակա՞ն էին, աքսորակա՞ն։

Լուկա. էդպես էին, իրոք փախստական, աքսորավայրից էին փախել։ Լավ տղերք էին։ Եթե ես նրանց չխղճայի, նրանք երևի ինձ սպանեին... Կամ ով գիտե՝ ինչ... իսկ հետո դատարան ու բանտ ու Սիբիր... Ի՞նչ օգուտ... Բանտը լավ բան չի սովորեցնի, Սիբիրն էլ չի սովորեցնի... իսկ մարդը կսովորեցնի, այո՛։ Մարդը կարող է բարություն սովորեցնել.... շատ հասարակ ձևով։

Դադար։

Բուբնով. Հը՜մ-հը՜մ... Իսկ ահա փչել չեմ կարողանում։ Ինչո՞ւ։ Իմ կարծիքով՝ պիտի ճակատին ասել ողջ ճշմարտությունը, ինչպիսին նա կա։ Ինչո՞ւ քաշվել...

Կլեշչ (Հանկարծ, այրվածի նման, նորից է ցատկում և զոռում). Ի՞նչ ճշմարտություն։ Ո՞ւր է ճշմարտությունը։ (Զեռքերով իր հագի ցնցոտիներն է քերում)։ Ահա ճշմարտությունը։ Գործ չկա, ուժ չկա։ Ահա ճշմարտությունը։ Ապրելու տեղ... ապրելու տեղ չկա... Սատկել է պետք... ահա քեզ ճշմարտությունը։ Սատանա։ Իմ ինչի՞ն է պետք էդ ճշմարտությունը։ Թող շունչ քաշեմ... շո՛ւնչ։ Ես ինչո՞վ եմ մեղավոր։ Ո՞ր մեղքիս համար է էդ ճշմարտությունը։ Ապրել, ապրել չի լինում, գրողը տանի... ահա քեզ ճշմարտություն։

Բուբնով. Համա՜ թե գլուխն է մտել...

Լուկա. Հիսուս Քրիստոս... Լսիր, է, սիրելիս։ Դու...

Կլեշչ (Վրդովմունքից դողում է). Ասում եք ճշմարտու-

Բյուն... Դու, ծերուկ, մխիթարում ես բոլորին... կասեմ ես քեզ... ատում եմ բոլորին։ Եվ էդ ճշմարտությունն էլ հետը... թող դա, էդ գրողի տարածը, անիծյալ լինի։ Հասկացա՞ր։ Հասկացի՞ր։ Թող անիծյալ լինի։ (Շուրջը նայելով, վազում է պատի ետև):

Լ ու կ ա. Ա՜յ-յա՜յ-ա՜յ... Ոնց գժվեց մարդը... Եվ ո՞ւր վազ տվեց։

Ն ա տ ա շ ա. Ասես՝ ցնդեց...

Բ ու բ ն ո վ. Զոռ տվեց, հա՜... Ասես թատրոն խաղաց... էլպես հաճախ է լինում... Դեռ չի վարժվել կյանքին...

Պ ե պ ե լ (Դանդաղ դուրս է գալիս պատի ետևից). Խաղաղություն աղնիվ համքարությանը։ Ի՞նչ է, Լուկա, խորամանկ ծերուկ, անվերջ պատմություններ ես անում։

Լ ու կ ա. Մի տեսնեիր դու, թե մարդն էստեղ ոնց էր գոռում։

Պ ե պ ե լ. Կլեշշը հո չէ՞ր։ Ինչո՞ւ... Վազում էր, ոնց որ մտրակված լիներ...

Լ ու կ ա. Կվազես, եթե էդպես սրտիդ դիպչեն...

Պ ե պ ե լ (նստում է). Չեմ սիրում դրան... Չափից ավելի է չար ու գոռոզ։ (Կլեշշի տնազն է անում). «Ես աշխատավոր մարդ եմ»։ Եվ բոլորն իրենից ցածր են, ասես... Աշխատի՛ր, եթե դուր է գալիս... էլ ինչո՞ւ գոռոզանալ... Եթե մարդկ ոնց աշխատելով դատելու լինենք, ապա ձին բոլոր մարդկանցից լավ է... Քշում է ու լռում։ Նատաշա, ձերոնք տա՞նն են։

Ն ա տ ա շ ա. Գերեզմանոց գնացին... Ուզում էին հետո էլ երեկոյան ժամերգության գնալ...

Պ ե պ ե լ. Էդ է... Տեսնում եմ, ազատ ես... քիչ է պատահում։

Լ ու կ ա (Բուբնովին, մտախոհ). Ահա... ասում ես ճշմարտություն։ Էդ ճշմարտությունը միշտ չէ, որ հարմար է մարդու ցավին... Միշտ չէ, որ կարող ես ճշմարտությամբ հոգիդ բուժել։ Եղել է, օրինակ, մի էսպիսի դեպք. ծանոթ էի մի մարդու, որ հավատում էր արդար երկրի գոյությանը...

Բ ու բ ն ո վ. Ինչի՞ն էր հավատում...

Լ ու կ ա. Արդար երկրի գոյությանը... Պետք է որ, ասում էր, աշխարհի վրա լինի արդար երկիր... էդ երկրում, իբր թե, հատուկ մարդիկ են ապրում, լավ մարդիկ։ Նրանք մեկը մյուսին հարգում են, մեկը մյուսին անվարձ-անհատույց օգնում են, և ամեն ինչ նրանց մոտ լավ է ու հրաշալի։ Եվ ահա մարդն անվերջ

պատրաստվում էր գնալ փնտրելու այդ երկիրը։ Աղքատ էր, վատ էր ապրում... ու երբ նրա համար էնքան էր դժվար լինում, որ պառկելուց ու տեղն ու տեղը մեռնելուց բացի ուրիշ բան չէր մնում, նա հույսը չէր կորցնում, քմծիծաղում էր ու ասում՝ ոչի՞նչ, կհամբերեմ։ Դեռ մի քիչ էլ կսպասեմ, իսկ հետո կթողնեմ էս կյանքը ու կգնամ էդ արդար երկիրը։ Մի ուրախություն ուներ նա՝ էդ երկիրը...

Պ ե պ ե լ. Եվ գնա՞ց...

Բ ու բ ն ո վ. Ո՞ւր... Հո՜-հո՜...

Լ ու կ ա. Եվ ահա, էդտեղ, Սիբիրում էր էս դեպքը, մի աքսորականի բերին... Գիտուն մարդ էր... գրքերով, գծագրերով և զանազան այլ բաներով... գիտնական էր... էդ մարդն էլ հենց ասում է գիտնականին. ցույց տուր ինձ, խնդրեմ, թե որտե՞ղ է էդ արդար երկիրը և ո՞նց է դրա ճամփան... Գիտնականն անմիջապես գրքերը բացեց, գծագրերը փռեց, նայեց, նայեց՝ չկա, ոչ մի տեղ չկա, ոչ մի տեղ էդ արդար երկիրը չկա։ Ամեն ինչ ճիշտ է, բոլոր երկրները ցույց են տրված, իսկ արդար երկիրը՝ չկա...

Պ ե պ ե լ (ցածրաձայն). Ի՞նչ։ Չկա՞...

Բուբնովը երջում է:

Ն ա տ ա շ ա. Համբերիր... Հետո՞, պապիկ...

Լ ու կ ա. Մարդը չի հավատում։ Պետք է, որ լինի, ասում է, լա՜վ փնտրիր... եթե ասում է, արդար երկիր չկա, ուրեմն քո գրքերն ու գծագրերը բանի պետք չեն... Գիտնականը վիրավորվեց։ Իմ գծագրերը, ասում է, ամենաճիշտն են, իսկ արդար երկիր ոչ մի տեղ էլ չկա... Դե, մարդն այստեղ կատաղեց, այդ ինչպե՞ս... Ապրել է, ապրել, համբերել է, համբերել և հավատացած էր, որ կա։ Իսկ գծագրերով դուրս է գալիս, որ չկա... Թալան է։ Եվ ասում է նա գիտնականին՝ ա՜խ, դու, սրիկա, ստոր մարդ ես դու և ոչ գիտնական... ու շրխկ՝ ականջին, մեկ, երկու... իսկ դրանից հետո գնաց տուն ու կախվեց...

Բոլորը լուռ են: Լուկան ժպտալով նայում է Պեպելին ու Նատաշային:

Պ ե պ ե լ (ցածրաձայն). Սատանան տանի, ուրախ պատմություն չէ...

Ն ա տ ա շ ա. Չի դիմացել ստին...

Բ ու բ ն ո վ. Հեքիաթներ են...

Պ ե պ ե լ. *Ահա և քեզ արդար երկիր... չկա՞, ուրեմն։*

Ն ա տ ա շ ա. *Մեղք էր էն մարդը...*

Բ ո ւ բ ն ո վ. *Հնարած բաներ են... բոլորը... Հո՜-հո՜... Արդար երկիր... դեպի էնտեղ... հո՜-հո՜-հո՜...* (պատուհանի միջից անհետանում է):

Լ ո ւ կ ա (գլխով է անում դեպի Բուբնովի պատուհանը). *Սիծաղում է, հե՜, հե՜...* (դադար): *Դե, տղերք... լավ կացեք։ Շուտով կգնամ ձեր մոտից...*

Պ ե պ ե լ. *Հիմա՞ ուր...*

Լ ո ւ կ ա. *Խոխոլ կդառնամ... Լսել եմ, էնտեղ նոր հավատ են գտել... Տեսնել է պետք... Այո՜։ Անվերջ փնտրում են մարդիկ, անվերջ մտածում են, թե ոնց անեն, որ լավ լինի... Համբերություն տուր նրանց, տեր աստված։*

Պ ե պ ե լ. *Ի՞նչ ես կարծում, կգտնեն...*

Լ ո ւ կ ա. *Մարդի՞կ... կգտնեն... ով փնտրում է՝ կգտնի... Ով պինդ է ուզում՝ կգտնի։*

Ն ա տ ա շ ա. *Գոնե ինչ-որ բան գտնեին... ինչ-որ մի լավ բան հնարեին։*

Լ ո ւ կ ա. *Կհնարեն... Միայն նրանց պիտի օգնել, աղջիկս... պիտի հարգել...*

Ն ա տ ա շ ա. *Ես ինչպե՞ս կարող եմ օգնել... Ես ինքս եմ անօգնական...*

Պ ե պ ե լ (վճռական). *Ես էլի, ես նորից պիտի քեզ հետ խոսեմ... Նատաշա... Ահա սրա ներկայությամբ... գնանք... ինձ հետ...*

Ն ա տ ա շ ա. *Ո՞ւր, բանտից բանտ...*

Պ ե պ ե լ. *Ես ասացի. գողությունը կթողնեմ։ Աստված վկա, կթողնեմ։ Որ ասացի, կանեմ։ Ես գրագետ մարդ եմ, կաշխատեմ... Ահա սա ասում է, որ սեփական կամքով պիտի Սիբիր գնալ... Գնանք էնտեղ, հը՞... Դու կարծում ես, իմ կյանքն ինձ չի զզվեցնում։ Ա՜խ, Նատաշա, ես գիտեմ... տեսնում եմ։ Ես ինձ մխիթարում եմ նրանով, որ ուրիշներն ինձանից ավելի են գողանում ու դեռ առոք ու փառոք էլ ապրում են... Բայց դա ինձ չի օգնում։ Դա էն չի։ Ես չեմ զղջում... Ես խղճին չեմ հավատում... Բայց մի բան եմ զգում՝ պետք է ուրիշ ձևով ապրել։ Ավելի լավ պիտի ապրել... Պետք է այնպես ապրել, որ կարողանաս ինքդ քեզ հարգել...*

Լ ո ւ կ ա. *Ճիշտ է, սիրելիս, թող աստված քեզ տա, Քրիստոսը թող օգնական լինի։ Ճիշտ է, մարդ պիտի ինքն իրեն հարգի....*

Պ ե պ ե լ. *Ես... փոքրուց եմ գող... բոլորը ինձ ասում էին, գող Վասկա, գողի տղա Վասկա։ Էդպե՞ս։ Դե լա՜վ։ Առեք, ուրեմն՝ գող եմ... Հասկացի՛ր, ես կարող է, կատաղությունից եմ գող. գող եմ, որովհետև ոչ ոք ոչ մի անգամ գլխի չընկավ ինձ ուրիշ անուն տալ... Դու տուր, Նատաշա, հը՞...*

Ն ա տ ա շ ա. *Ոչ մի խոսքի... ինչ-որ... չեմ հավատում... Եվ անհանգիստ եմ այսօր... սիրտս ճմլվում է... ասես ինչ-որ բանի եմ սպասում։ Դու, Վասիլի, իզուր էսօր էդ խոսքը բացիր...*

Պ ե պ ե լ. *Էլ ե՞րբ։ Առաջին անգամ չէ, որ ասում եմ։*

Ն ա տ ա շ ա. *Եվ ինչո՞ւ պիտի ես քեզ հետ գամ։ Ախր, թե սեր ասեմ, էնքան էլ չեմ սիրում քեզ... Մեկ-մեկ դուրս ես գալիս, մեկ էլ սիրտս խառնում է, երբ նայում եմ վրադ... Երևի ես քիչ եմ սիրում, երբ սիրում են՝ սիրածի մեջ վատը չեն տեսնում, իսկ ես... տեսնում եմ...*

Պ ե պ ե լ. *Կսիրես, մի վախենա... Այնպես կանեմ, որ ինձ վարժվես... դու միայն համաձայնիր... Մի տարուց ավել է նայում եմ վրադ... տեսնում եմ՝ դու խիստ աղջիկ ես... լավն ես... հուսալի մարդ ես... քեզ շատ սիրեցի։*

Վասիլիսան, զուգված, երևում է լուսամուտի մեջ ու շրջանակին ճենված լսում է։

Ն ա տ ա շ ա. *Էդպես։ Ինձ սիրեցիր։ Իսկ քրո՞ջս...*

Պ ե պ ե լ (շփոթված). *Դե, ի՞նչ է նա։ Էդպիսիները քի՞չ են, ինչ է։*

Լ ո ւ կ ա. *Դու... ոչինչ, աղջիկս։ Հաց չեղած տեղը, բանջար են ուտում...*

Պ ե պ ե լ. *Խղճա ինձ։ Վատ եմ ապրում... շան կյանք է... ուրախ օր չունեմ... խեղդվում եմ ցեխի մեջ... ու մի բան չկա, որ ձեռքս գցեմ, բռնեմ... ամեն ինչ փտած է, չի պահում... Քույրդ... ես կարծում էի նա էն չի... Եթե նա փողի էդքան ագահ չլիներ, ես նրա սիրուն ամեն ինչ կանեի... միայն թե նա ամբողջովին իմը լիներ... բայց նրան ուրիշ բան է պետք... նրան փող է պետք և ազատություն։ Իսկ ազատությունը պետք է, որ լրբություն անի։ Նա ինձ օգնել չի կարող... իսկ դու չահել եղևնու նման ես՝ թեթև ծակում ես, բայց կպահես...*

Լ ո ւ կ ա. *Ես էլ եմ ասում՝ գնա նրա հետ, աղջիկս, գնա։*

Նա՝ ոչինչ, լավ տղա է։ Միայն թե դու հաճախակի հիշեցրու նրան՝ որ լավ տղա է, որ նա, ուրեմն, էդ բանը չմոռանա... Նա քեզ կհավատա։ Միայն թե դու նրան ասա՝ Վասյա, դու լավ մարդ ես... մի մոռացիր։ Մտածիր, սիրելիս, ո՞ւր պիտի գնաս, գնալու տեղ չունես։ Քույրդ կատաղած գազան է, նրա մարդու մասին խոսել էլ չարժի, էնքան գարշելի ծերուկ է, որ խոսքով չես ասի... ու էստեղի ամբողջ կյանքը... Ո՞ւր պիտի գնաս։ Իսկ սա պինդ տղա է...

Նատաշա. Գնալու տեղ չկա... գիտեմ, մտածել եմ... Միայն թե չեմ հավատում, ոչ ոքի՛... իսկ գնալու տեղ՝ չունեմ...

Պեպել. Մի ճամփա կա... Չէ, թույլ չեմ տա, որ էդ ճամփան բռնես... Ավելի լավ է՝ սպասեմ...

Նատաշա (ժպտալով). Տեսնո՞ւմ ես, դեռ քո կնիկն էլ չեմ, բայց արդեն ուզում ես սպանել...

Պեպել (Գրկում է նրան). Թող, Նատաշա։ Մեկ է...

Նատաշա (սեղմվելով նրան). Դե, մի բան կասեմ քեզ, Վասիլի... ահա, ոնց որ աստծու առաջ եմ ասում... Հենց որ առաջին անգամ դու ինձ խփես կամ ուրիշ ձևով նեղացնես... ես ինձ չեմ խնայի, կամ կկախվեմ, կամ...

Պեպել. Թող չորանան ձեռքերս, եթե քեզ դիպչեմ...

Լուկա. Մի փոշմանի, սիրելիս... Դու նրան ավելի շատ ես պետք, քան նա քեզ...

Վասիլիսա (պատուհանից). Ահա և պսակվեցին։ Սեր և միություն...

Նատաշա. Եկան... ա՜խ, աստված... տեսան... Ա՜խ, Վասիլի...

Պեպել. Ինչի՞ց վախեցար։ Հիմա ոչ ոք սիրտ չի անի դիպչել քեզ։

Վասիլիսա. Մի վախենա, Նատալյա... նա քեզ չի ծեծի... նա ոչ ծեծել կարող է, ոչ սիրել... գիտե՛մ։

Լուկա (ցածրաձայն). Ա՜խ, կնիկ... թունավոր օձ...

Վասիլիսա. Նա ավելի շատ խոսքով է քաջ...

Կոստիլյով (ներս է գալիս). Նատաշկա, դու այստեղ ի՞նչ ես անում, ձրիակե՛ր։ Բամբասո՞ւմ ես։ Հարազատների՞ցդ ես բողոքում... Իսկ ինքնաեռը պատրաստ չէ, սեղանը հավաքած չէ...

Նատաշա (հեռանալով). Ախր դուք ուզում էիք եկեղեցի գնալ։

Կոստիլյով. Քո գործը չէ, թե մենք ինչ էինք ուզում։ Դու պարտավոր էիր քո գործը անել... էն, ինչ որ քեզ հրամայված է։

Պեպել. Ձե՜նդ... նա էլ քո ծառան չէ... Նատալյա, չգնաս... ոչինչ չանես...

Նատաշա. Դու մի հրամայիր... դեռ շուտ է... (գնում է)։

Պեպել. Հերիք է։ Մարդուն խաղք արիք, պրծաք, ու բավական է։ Հիմա նա իմն է։

Կոստիլյով. Քո՞ն է։ Ե՞րբ գնեցիր։ Ինչքա՞ն տվիր։

Վասիլիսա (frfչում է)։

Լուկա. Վասյա, դու գնա...

Պեպել. Նայեք դուք, ծիծաղկոտներ... Չլացեք հանկարծ...

Վասիլիսա. Օ, սարսափելի՜ է, օ, վախենո՜ւմ եմ...

Լուկա. Վասիլի, գնա... տեսնում ես, դրդում է քեզ, գրգռում, հասկանո՞ւմ ես։

Պեպել. Հա... էդ է։ Չէ՛ մի... ո՞նց չէ... Չի լինի էն, ինչ դու ես ուզում։

Վասիլիսա. Ու էն էլ չի լինի, ինչ ես չուզեմ, Վասյա։

Պեպել (բռունցքներով սպառնում է նրան). Կտեսնենք... (գնում է)։

Վասիլիսա (պատուհանից անհետանալով). Գլխիդ մի էնպիսի հարսանիք սարքեմ, որ...

Կոստիլյով (մոտենում է Լուկային). Ի՞նչ կա, ծերուկ։

Լուկա. Ոչինչ չկա, ծերուկ։

Կոստիլյով. Ուրեմն, ասում են, գնո՞ւմ ես...

Լուկա. Ժամանակն է...

Կոստիլյով. Ո՞ւր...

Լուկա. Ուր որ ոտքերս տանեն...

Կոստիլյով. Ուրեմն, զվռնելու... Երևում է, որ մի տեղ ապրելն էնքան էլ հարմար չի քեզ։

Լուկա. Անշարժ քարի տակ, ասում են, ջուր էլ չի հոսում։

Կոստիլյով. Դա քար է։ Իսկ մարդը պիտի ապրի մի տեղ... Չի կարելի, որ մարդիկ բզեզների պես ապրեն... ով ուր ուզում է, այնտեղ էլ թռչում է... Մարդը պիտի իր տեղը որոշի, իզուր քարշ չգա աշխարհով...

Լուկա. Իսկ եթե մեկի համար ամեն տեղ տե՞ղ է...

Կոստիլյով. Նշանակում է, նա շրջմոլիկ է... անօգուտ մարդ... Պետք է, որ մարդը օգուտ տա, աշխատի...

Լ ու կ ա. Հլա սրա՞ն...

Կ ո ս տ ի լ լ յ ո վ. Այո՛։ Հապա ոնց... ի՞նչ ասել է... շրջմոլիկ... դե, էնպիսի մարդ, որ տարօրինակ է, ուրիշների պես չէ, անվերջ շրջում է... ու եթե նա իսկականից տարօրինակ է ու ինչ-որ բան գիտի... էնպիսի մի բան է իմացել... ոչ ոքի պետք չեկող... գուցե իսկապես էդպիսի մի բան իմացել է... դե, ամեն ճիշտ բան չէ, որ պետք է, այո՛։ Նա էդ բանը իր մեջ է պահում ու լռում է։ Եթե նա իսկականից տարօրինակ է, լռում է։ Կամ էնպես է անում, որ ոչ ոք դրանից բան չհասկանա... Եվ նա ոչինչ չի ուզում, ոչ մի բանի չի խառնվում, մարդկանց զուր տեղը չի պղտորում... Նրա գործը չէ, թե մարդիկ ոնց են ապրում... Նա պետք է արդար կյանք վարի, պետք է ապրի անտառներում, խուլ անկյուններում... անտեսանելի։ Եվ ոչ-ոքի չխանգարի, ոչ ոքի չմեղադրի... և բոլորի տեղակ աղոթի... երկրային բոլոր մեղքերի համար... իմ, քո, նրա... բոլորի մեղքերի... Նա երկրային ունայնությունից հենց նրա համար է փախչում, որ աղոթի։ Էդպե՛ս... (դադար)։ Իսկ դու... Ի՞նչ շրջմոլիկ ես դու։ Փաստաթուղթ չունես... Լավ մարդը պիտի փաստաթուղթ ունենա... բոլոր լավ մարդիկ փաստաթուղթ ունեն, այո՛...

Լ ու կ ա. Կան մարդիկներ, այո, բայց կա և ուրիշ բան՝ մարդ...

Կ ո ս տ ի լ լ յ ո վ. Դու խելքիդ զոռ մի տա... Հանելուկներ մի ասի... ես քեզանից դմբո չեմ։ Ի՞նչ ասել է մարդիկներ ու մարդ...

Լ ու կ ա. Այստեղ ի՞նչն է հանելուկ։ Ես ասում եմ, հող կա, որ ցանքի համար անհարմար է, և կա բերքառատ հող... ինչ էլ էնտեղ ցանես, բուսնում է... էդպես է...

Կ ո ս տ ի լ լ յ ո վ. Էդ ինչի՞ համար ես ասում։

Լ ու կ ա. Ահա, օրինակ, դու... եթե քեզ հենց ինքը տեր աստված ասի՝ Միխայլո, մա՛րդ դարձիր... մեկ է, ոչինչ դուրս չի գա... Ոնց որ եղել ես, էնպես էլ կմնաս...

Կ ո ս տ ի լ լ յ ո վ. Իսկ դու գիտե՞ս, որ իմ կնկա քեռին ոստիկան է... Ու եթե ես..

Վ ա ս ի լ ի ս ա (ներս է գալիս). Միխայլա Իվանովիչ, արի՛, թեյ ենք խմում..

Կ ո ս տ ի լ լ յ ո վ. Դու, գիտե՞ս ինչ՝ դուրս բնակարանից, գնա կորիր...

Վ ա ս ի լ ի ս ա. Հա, փասափուսեդ հավաքիր, ծերուկ։ Լեզուդ շա՛տ է երկար... Ու, ով է իմանում, գուցե դու ինչ-որ փախստական ես...

Կ ո ս տ ի լ լ յ ո վ. Հենց էսօր քո շունչը էստեղ չլինի... Թե չէ ես... նայի՛ր...

Լ ու կ ա. Քեռո՞ւդ կկանչես... Կանչիր քեռուդ... Տես, փախստական եմ բռնել... Գուցե քեռիդ ստանա... մի երեք կոպեկ։

Բ ու բ ն ո վ (պատուհանի մեջ). Ի՞նչ են էստեղ ծախում... էդ ի՞նչը երեք կոպեկ արժե։

Լ ու կ ա. Վախեցնում են, թե ինձ կծախեն...

Բ ու բ ն ո վ. Երեք կոպեկո՞վ... Զգույշ ծերուկ, նրանք մի կոպեկով էլ կծախեն։

Կ ո ս տ ի լ լ յ ո վ. Դուրս ես ցցվել, ոնց որ շարքը վառարանի տակից...

Գնում է կնոջ հետ։

Վ ա ս ի լ ի ս ա. Աշխարհի վրա ինչքա՞ն մութ մարդիկ կան... ու զանազան խաբեբաներ։

Լ ու կ ա. Բարի ախորժակ ձեզ...

Վ ա ս ի լ ի ս ա (շուռ գալով). Էեզուդ քեզ քաշիր, թունավո՛ր սունկ...

Ամուսնու հետ անցնում է պատի եռև։

Լ ու կ ա. Այս գիշեր հեռանամ...

Բ ու բ ն ո վ. Դա ավելի լավ է։ Ժամանակին հեռանալն ավելի լավ է...

Լ ու կ ա. Ճիշտ ես ասում։

Բ ու բ ն ո վ. Ես գիտեմ։ Ես, երևի, աքսորից էն պատճառով փրկվեցի, որ ժամանակին հեռացա։

Լ ու կ ա. Էդ ո՞նց...

Բ ու բ ն ո վ. Ճիշտ եմ ասում։ Էսպես եղավ. կինս վարպետի հետ կապվեց... Վարպետը, ճիշտն ասած, լավ վարպետ էր... Շան մորթին շատ սամթով ներկում, ջրարջի մորթի էր դարձնում... Կատու էլ էր ներկում, դարձնում կենգուրուի մորթի, մշկամկան... ու էդպիսի բաներ։ Ճարպիկ մարդ էր։ Էդպես, ուրեմն, կինս կապվեց դրա հետ... Ու էնպես պինդ դրանք իրար կպան, որ ինձ կամ պիտի թունավորեին, կամ ուրիշ մի ձևով էն աշխարհն ուղարկեին։ Ես, պատահում էր, սկսում էի կնկաս ծե-

ծել, վարպետն էլ՝ ինձ... Շա՜տ կատաղի էր կռիվ անում... Մի անգամ միրուքիս կեսը պոկեց ու կողիս ոսկորը ջարդեց... Դե ես էլ կատաղեցի... Երկաթե արշինով կնկաս գլխին հո չթխկացրի... մի խոսքով մեծ կռիվ սկսվեց։ Համա տեսնում եմ, որ էդպես բան դուրս չի գա... խեղճացնում են դրանք ինձ։ Ու ես էդտեղ մտքիս դրի՝ կնկաս սպանել... Հաստատ դրի։ Բայց ժամանակին ուշքի եկա՝ հեռացա...

Լ ու կ ա. Էդպես ավելի լավ է։ Թող նրանք էնտեղ շնից ջըրարջ սարքեն...

Բ ու բ ն ո վ. Միայն թե... արհեստանոցը կնոջս վրա էր գրված, ու ես մնացի էսպես։ Բայց եթե ճիշտն ասենք, մեկ է, ես էդ արհեստանոցը օղու կտայի... Հարբեցող եմ, բա՜...

Լ ու կ ա. Հարբեցո՞ղ... Հա՜...

Բ ու բ ն ո վ. Կատաղի հարբեցող... Հենց որ սկսում եմ լակել, ամեն ինչս օղուն եմ տալիս, միայն կաշիս է մնում... Բացի էդ էլ, ծույլ եմ։ Սարսափելի չեմ սիրում աշխատել։

Վիճելով մտնում են Սատինն ու Դերասանը։

Ս ա տ ի ն. Դատարկ բան է։ Դու ոչ մի տեղ չես գնա... Այդ ամենը սուտուփուտ բան է։ Ծերուկ, դու ի՞նչ ես լցրել էս լակոտի ականջը...

Դ ե ր ա ս ա ն. Խաբում ես։ Պա՜պ, ասա նրան, որ խաբում է։ Ես գնում եմ։ Ես այսօր աշխատել եմ, փողոցն եմ ավլել... իսկ օղի չեմ խմել։ Ո՞նց է։ Ահա երկու տասնհինգ կոպեկանոց, իսկ ես լուրջ եմ։

Ս ա տ ի ն. Անմտություն է։ Տուր, ես կխմեմ... կամ կտարվեմ...

Դ ե ր ա ս ա ն. Գնա կորիր, սա ճանապարհի համար է...

Լ ու կ ա (Սատինին). Իսկ դու ի՞նչ ես նրան ճամփից հանում...

Ս ա տ ի ն. Ասա դու ինձ, կախարդ, աստվածների սիրելին, կյանքում ի՞նչ կլինի ինձ հետ։ Ես, եղբայր, մինչև վերջին թելը տանուլ եմ տվել։ Դեռ ամեն ինչ կորած չէ, պապ, աշխարհում դեռ կան խաղանենգ սրիկաներ, որ ինձանից ավելի խելացի են։

Լ ու կ ա. Ուրա՜խ տղա ես դու, Կոստանտին... Դուրեկան...

Բ ու բ ն ո վ. Դերասա՜ն, հապա այստեղ արի։

Դերասանը գնում է նրա մոտ ու պպզած նստում է նրա առաջ։ Կիսաձայն խոսում են։

Ս ա տ ի ն. Ես, եղբայր, ջահել ժամանակ հետաքրքիր էի։ Հաճելի է հիշելը։ Հոգի՜ տղա էի... Հրաշալի ապրում էի, խաղում էի բեմի վրա, մարդկանց ծիծաղեցնում... Հոյակա՜պ էր։

Լ ու կ ա. Էդ ո՞նց եղավ, որ շեղվեցիր քո արահետից... Հը՞...

Ս ա տ ի ն. Ինչ հետաքրքրասերն ես, ծերուկ։ Ամեն ինչ ուզում ես իմանալ, իսկ ինչո՞ւ։

Լ ու կ ա. Մարդկային գործերն եմ ուզում հասկանալ... բայց նայում եմ քեզ ու չեմ հասկանում։ Դու էնպես կտրիճն ես, Կոստանտին, հիմար չես... ու հանկարծ...

Ս ա տ ի ն. Բանտն է արել, ծերուկ։ Ես չորս տարի յոթ ամիս բանտում եմ նստել... իսկ բանտից հետո՝ խելքի չեմ գալիս։

Լ ու կ ա. Օհո՜, էդ ինչի՞ ես նստել։

Ս ա տ ի ն. Մի սրիկայի պատճառով... տաքացած ու զրգռված վիճակում սպանեցի սրիկային... Բանտում էլ թուղթ խաղալ սովորեցի...

Լ ու կ ա. Կնկա պատճառո՞վ սպանեցիր...

Ս ա տ ի ն. Հարաղատ քրոջս պատճառով... Բայց դու վաղն արի... Ես չեմ սիրում, երբ ինձ հարցաքննում են։ Եվ այդ ամենը վաղուց է եղել... Քույրս մեռել է... ինը տարի առաջ... անցավ... Մի հոյակապ մարդ էր, եղբայր, իմ քույրը...

Լ ու կ ա. Դու հեշտ ես կյանքը տանում։ Իսկ քիչ առաջ էստեղ փականագործը էնպիսի ոռնոց ձգեց... ա՜յ, ա՜յ, ա՜յ...

Ս ա տ ի ն. Կլե՞շչը...

Լ ու կ ա. Ինքը։ Աշխատանք, գոռում է, չկա... ոչինչ չկա...

Ս ա տ ի ն. Կվարժվի... Մի գործ լիներ, ես էլ զրաղվեի...

Լ ու կ ա (կամաց). Նայիր, գալիս է։

Գալիս է Կլեշչը, դանդաղ, գլուխը կախած։

Ս ա տ ի ն. Հե՜յ, որբևայրի մարդ, ի՞նչ ես քիթդ կախել, ի՞նչ ես ուզում հնարել...

Կ լ ե շ չ. Մտածում եմ, թե ի՞նչ պիտի անեմ։ Գործիքներ չկան... բոլորը թաղման վրա գնաց...

Ս ա տ ի ն. Ես քեզ մի խորհուրդ կտամ. ոչինչ մի արա, պարզապես աշխարհի վրա ծանրացիր։

Կ լ ե շ չ. Մի՜ ասա... ես մարդկանցից ամաչում եմ...

Ս ա տ ի ն. Թո՜ղ... մարդիկ չեն ամաչում, որ դու շնից էլ վատ ես ապրում... Հապա մտածիր՝ դու չես աշխատի, ես չեմ

աշխատի, էլի հարյուրներ, հազարներ... Բոլորը, հասկանո՞ւմ ես... Բոլորը թողնում են աշխատանքը։ Ոչ ոք ոչինչ չի ուզում անել... Ի՞նչ կլինի հետո...

Կլեշչ. *Բոլորը սովից կսատկեն...*

Լուկա (Սատինին). *Դու լավ կանես, էդպիսի ճառերով բեգունների մոտ գնաս... Կան այդպիսի մարդիկ, բեգուններ են կոչվում...*

Սատին. *Գիտեմ... Նրանք հիմարներ չեն, պապիկս։*

Կոստիլյովների պատուհանից լսվում է Նատաշայի գոռոցը. «Ինչի՞ համար... կանգնիր, ինչի՞ համար»։

Լուկա (անհանգիստ). *Նատաշա՞ն է... գոռում է... նա... Ա՜խ, դու...*

Կոստիլյովների բնակարանում աղմուկ է, իրարանցում, ջարդված ամանեղենի զրնգոց և Կոստիլյովի ճչան գոռոցը. «Ա-ա՜... կռապա՜շտ... լի՜րբ»։

Վասիլիսա. *Կանգնի՛ր... սպասի՛ր... ես դրան... ա՜ռ քեզ, ա՜ռ քեզ...*

Նատաշա. *Ծեծում են։ Սպանում են...*

Սատին (գոռում է պատուհանի մեջ). *Է՜յ, դուք...*

Լուկա (իրար անցած). *Վասիլիին... Պիտի Վասյային կանչել... Ա՜խ, աստված իմ, եղբայրնե՛ր, տղե՛ր...*

Թերասան (վազ տալով). *Ես... հիմա նրան...*

Բուբնով. *Համա թե շուտ-շուտ են սկսել նրանք Նատաշային ծեծել...*

Սատին. *Գնանք ծերուկ... վկա կլինենք...*

Լուկա (գնում է Սատինի ետևից). *Ես ի՞նչ վկա եմ... Ինչի՞ս է... Վասիլին շուտ գար...*

Նատաշա. *Քո՜ւյրս... քույրի՜կս... Վա՜-ա՜...*

Բուբնով. *Բերանը փակեցին... Գնամ, նայեմ...*

Կոստիլյովների բնակարանում աղմուկը ճանդարտվում է, ճավանաբար սենյակից հեռանալով միջանցք։ Լսվում է ծերունու գոռոցը. «Կանգնի՛ր»։ Պինգ բրխկում է դուռը, և այդ ձայնը, ասես կացնով, կտրում է ամբողջ աղմուկը։ Բեմի վրա ճանգիստ է։ Իրիկնային կիսամութ։

Կլեշչ (Անտարբեր նստած է փայտերի վրա, ամուր շփում է ձեռքերը։ Հետո սկսում է ինչ-որ բան մրթմրթալ, սկզբում անհասկանալի, ապա՝) *Ախր ոնց... Պետք է ապրել... (բարձր) Կացարան է պետք... չէ՞... Կացարան չկա... ոչինչ չկա։ Մի հոգի եմ... Ընդամենը մի հոգի... օգնություն չկա...*

Դանդաղորեն, կորացած ետևանում է։ Մի քանի վայրկյան շարունակ լռություն է։ Հետո ինչ-որ տեղ ներքանցքում ծնվում է խառնակ աղմուկ, ձայների քաոս։ Անում է դա, մոտենում։ Լսվում են առանձին ձայներ։

Վասիլիսա. *Ես նրա քույրն եմ, թո՛ղ...*

Կոստիլյով. *Դու ի՞նչ իրավունք ունես...*

Վասիլիսա. *Աքսորակա՛ն...*

Սատին. *Վասկային կանչիր... Շո՛ւտ... Զոբ, տո՛ւր դրան...*

Ստիկանի սպոց։

Թաթար (ներս է վազում։ Աջ ձեռքը վիրակապած է). *Էդ ինչպիսի՞ էդպիսի օրենք կա՝ ցերեկով սպանել։*

Կրիվոյ Զոբ (ետևից՝ Մեդվեդևը). *Համա՞ թե ես դրան մի հատ հասցրի...*

Մեդվեդև. *Դու... ի՞նչ իրավունքով ես կռվում...*

Թաթար. *Իսկ դո՞ւ։ Ի՞նչ է քո պարտականությունը...*

Մեդվեդև (բեռնակրի ետևից է վազում). *Կա՛նգ առ։ Տո՛ւր սուլիչը...*

Կոստիլյով (դուրս է վազում). *Աբրամ, բռնի՛ր դրան... ճանկի՛ր... Սպանեց...*

Պատի ետևից դուրս են գալիս Կվաշնյան և Նատայան, ճրաքի թևերի տակից բռնած բերում են զզվված Նատաշային։ Սատինը ետևից է գալիս, ետևավ նրելով Վասիլիսային, որը ձեռքերը թափահարելով ուզում է խփել հոգը։ Նրա մոտ, խելագարի պես, թռչտում է Այրոշկան, սուլում է ականջների մեջ, գոռում է, ոռնում։ Հետո՝ ևս մի քանի ցնցոտիավոր տղամարդկանց ու կանանց կերպարանք։

Սատին (Վասիլիսային). *Ո՞ւր, անիծյալ բու...*

Վասիլիսա. *Հեռո՛ւ, աքսորական... Կմեռնեմ, բայց դրան բզիկ-բզիկ կանեմ...*

Կվաշնյա (Նատաշային քաշելով մի կողմ). *Իսկ դու, Կարպովնա, վերջ տուր... ամոթ ունեցիր... ի՞նչ ես կատաղել...*

Մեդվեդև (բռնում է Սատինին). *Ահա... ճանկս ընկավ...*

Սատին. *Զոբ, հասցրո՛ւ դրանց... Վասկա՛ն, Վասկա՛ն...*

Բոլորը խռնվում ու կուտակվում են անցքի մոտ, կարմիր պատի կողքին։ Նատաշային տանում են աջ կողմը և նստեցնում են փայտերի կույտի վրա։

Պեպել (դուրս պրծնելով ներքանցքից, լուռ, ուժեղ շարժումներով դես ու դեն է նրում բոլորին). *Ո՞ւր է Նատալյան... Դու...*

Կոստիլյով (թաթնվելով անկյունում). *Աբրա՛մ, Վասկային բռնիր... Եղբայրներ օգնեցեք բռնելու Վասկային... գողին, ավազակին....*

Պեպել. *Ա՜խ, դու... քավթառ սրիկա...*

Ուժեղ բռի առնելով, խփում է ծերունուն: Կոստիլյովն այնպես է ընկնում, որ պատի ետևից երևում է միայն նրա մարմնի վերին մասը: Պեպելը նետվում է դեպի Նատաշան:

Վասիլիսա. *Խփե՛ք Վասկային, աղավնյակներս... ծեծե՛ք գողին...*

Մեդվեդև (Սատինի վրա գոռալով). *Չե՛ս կարող... այստեղ ընտանեկան գործ է, նրանք հարազատներ են... Դո՞ւ ով ես...*

Պեպել. *Ինչպե՞ս... Այդ ինչո՞վ է նա քեզ... Դանակո՞վ...*

Կվաշնյա. *Նայիր հապա, ի՜նչ գազաններ են... եռացրած ջրով աղջկա ոտքերն են խաշել...*

Նաստյա. *Ինքնաեռն են շրջել...*

Թաթար. *Կարող է պատահական է եղել... Պետք է ճիշտը իմանալ... չի կարելի... իզուր խոսել...*

Նատաշա (համարյա ուշաթափ). *Վասիլի... Վերցրու ինձ... թաղիր ինձ...*

Վասիլիսա. *Տե՛ր աստված, մի նայեք, տեսեք... Մեռել է... Սպանել են...*

Բոլորը խոնվում են անցքի մոտ, Կոստիլյովի գլխին: Բազմության միջից դուրս է գալիս Բուրնովը, գնում է դեպի Վասիլին:

Բուրնով (ցածրաձայն). *Վասկա, ծերուկը... էն իք է... պատրաստ է...*

Պեպել (նայում է նրան, կարծես չհասկանալով). *Գնա... կանչիր... հիվանդանոց է պետք... Ես նրանց հաշիվը կտեսնեմ:*

Բուրնով. *Ես ասում եմ, ծերունուն ինչ-որ մեկը փռել է...*

Ադմուկը բեմի վրա հանգչում է, ինչպես խարույկի բոցը, որի վրա չուր են լցրել: Կիսաձայն ճնշում են առանձին բացականչություններ. «Իսկապես», «Ա՜յ բեզ բան», «Չէ՜ մի, չէ», «Հեռանանք, եղբայր», «Ա՜խ սատանա», «Հիմա. զգուշացիր», «Հայդա՜, բոլոր, բանի ոստիկանությունը չի եկել»: Բազմությունը նոսրանում է: Ցրվում են: Բուրնովը, Թաթարը, Նաստյան և Կվաշնյան նետվում են դեպի Կոստիլյովի դիակը:

Վասիլիսա (գետնից բարձրանալով, գոռում է հանդիսավոր ձևով). *Սպանե՛լ են ամուսնուս... ահա թե ով է սպանել: Վասկան է սպանել: Ես տեսա՛: Աղավնյակնե՛րս, ես տեսա: Ի՞նչ է, Վասյա: Ոստիկանություն:*

Պեպել (հեռանում է Նատաշայից). *Թողե՛ք... հեռու* (նայում է ծերունուն: Վասիլիսային). *Դե, ուրա՞խ ես...* (Ոտքով շոշափում է դիակը): *Սատկեց... քավթառ շունը... Քո ուզածի պես եղավ... Հը՞... Քեզ էլ չսատկացնե՞մ* (Նետվում է նրա վրա: Սատինն ու Կրիվոյ Զոբը բռնում են նրան: Վասիլիսան թաթնվում է նրբանցքում):

Սատին. *Ուշքի՛ եկ...*

Կրիվոյ Զոբ. *Կա՛նգ առ, ո՞ւր ես արշավում...*

Վասիլիսա (հայտնվում է). *Ի՞նչ է, Վասյա, սիրելիս: Ճակատագրից չես փախչի... Ոստիկանությո՛ւն: Աբրամ, սուլի՛ր...*

Մեդվեդև. *Սուլիչս պոկել են, սատանեք...*

Ալյոշկա. *Ահա* (Սուլում է: Մեդվեդևը վազում է նրա ետևից):

Սատին (Պեպելին տանելով Նատաշայի մոտ). *Վասկա, մի վախենա: Կռվի մեջ սպանությունը դատարկ բան է: Դա էնքան էլ թանկ չարժե...*

Վասիլիսա. *Բռնե՛ք Վասկային: Նա՛ սպանեց... ես տեսա...*

Սատին. *Ես էլ մի երեք անգամ հասցրի ծերուկին... իսկ նրան շա՞տ էր պետք, ի՞նչ է... Ինձ վկա կանչիր, Վասկա...*

Պեպել. *Ես արդարանալու պետք չունեմ... Վասիլիսային պիտի մեջ քաշեմ... ու մեջ էլ կքաշեմ: Նա էդ բանն ուզում էր... նա ինձ համոզում էր սպանել իր մարդուն... համոզում էր...*

Նատաշա (հանկարծ, բարձրաձայն). *Ա-ա՜, ես հասկացա... այդպե՞ս է, Վասիլի... Բարի մարդիկ, նրանք իրար հետ են: Քույրս և նա... խոսքները մեկ են արել... նրանք էս ամենը սարքել են... Այ, այդպե՞ս է, Վասիլի... Դու քիչ առաջ դրա համա՞ր էիր ինձ հետ խոսում... որ նա ամեն ինչ լսի: Բարի մարդիկ, նա նրա սիրուհին է... դուք գիտեք... դա բոլորը գիտեն... նրանք խոսքները մեկ են արել: Նա էր... էդ նա էր համոզում Վասյային, որ իր մարդուն սպանի... մարդը նրանց խանգարում էր... Ես էլ էի խանգարում... Ահա, հաշմանդամ դարձրին ինձ...*

Պեպել. *Նատալյա, այդ ի՞նչ... ի՞նչ ես ասում:*

Սատին. *Ահա այսպես, սատանա...*

Վասիլիսա. *Ստում ես: Նա ստում է... Ես... նա... Վասկան սպանեց...*

Նատաշա. *Նրանք խոսքները մեկ են արել: Անիծյալ լինեք... Դուք, երկուսդ...*

Սատին. *Համա թե խաղ է, հա՞... Պինդ կաց, Վասիլի, նրանք քեզ չրահեղձ կանեն։*

Կրիվոյ Զոբ. *Անհնար է հասկանալ... Ա՜խ, դուք... Համա թե գո՞րծ է...*

Պեպել. *Նատալյա, մի՞թե դու իսկականից... Մի՞թե հավատում ես, որ ես... նրա հետ եմ...*

Սատին. *Իսկապե՞ս, Նատաշա, դու... խելքի եկ...*

Վասիլիսա (նրբանցքում). *Սպանե՞լ են ամուսնուս, ձերդ բարեծնություն... Վասկա Պեպելը՝ գողը, նա սպանեց... պարոն պրիստավ... ես տեսա, բոլորը տեսան...*

Նատաշա (համարյա ուշագնաց, դես ու դեն է նետվում). *Բարի մարդիկ... Քույրս և Վասկան են սպանել։ Ոստիկանություն՛ն, լսիր... Ահա սա է, իմ քույրը, սովորեցրել, համոզել... իր սիրեկանին... ահա նա, անիծյալը... նրանք են սպանել... Բռնեք նրանց, դատեք... ի՛նձ էլ բռնեք, բանտ դրեք... Քրիստոսի սիրուն, ինձ բանտ տարեք։*

Վարագույր

ՉՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Առաջին գործողության կանավորությունն է։ Բայց Պեպելի սենյակը չկա, միջնորմները ճաճված են։ Եվ այն տեղում, ուր նստած էր Կլեշշը, չկա զրնդանը։ Անկյունում, ուր Պեպելի սենյակն էր, պառկած է Թաթարը, շուռումուռ է գալիս ու երբեմն տնքում։ Սեղանի մոտ նստած է Կլեշշը, ճարմոն է վերանորոգում, մերթընդմերթ փորձելով ստեղները։ Սեղանի մյուս ծայրին Սատինը, Բարոնը և Նատաշան են։ Նրանց առաջ մի շիշ օղի է, երկու շիշ գարեջուր ու մի մեծ կտոր սև հաց։ Վառարանի վրա Դերասանը շուռումուռ է գալիս ու տնքում։ Գիշեր է։ Բեմը լուսավորված է լամպով, որ դրված է սեղանի մեջտեղը։ Դռում խամի է։

Կլեշշ. *Հա, նա էդ խառնակության ժամանակ էլ կորավ։*

Բարոն. *Ոստիկանության աչքից չքվեց, ոնց որ ծուխը կրակի երեսից։*

Սատին. *Այդպես մեղավորներն են չքվում արդարների աչքից։*

Նատյա. *Լավ ծերուկ էր։ Իսկ դուք... մարդիկ չեք... այլ ժանգ...*

Բարոն (խմում է). *Ձեր կենացը, լեդի...։*

Սատին. *Հետաքրքիր ծերուկ էր, այո... Ահա Նաստենկան սիրահարվեց նրան...*

Նաստյա. *Եվ սիրահարվեցի, ճիշտ է։ Նա ամեն ինչ տեսնում էր, ամեն ինչ հասկանում էր։*

Սատին (ծիծաղելով). *Եվ ընդհանրապես շատերի համար այնպես էր, ոնց որ հացի փափուկը անատամի համար։*

Բարոն (ծիծաղելով). *Ոնց որ սպեղանին ուռուցքի համար։*

Կլեշշ. *Նա խղճահարվել գիտեր, իսկ դուք ահա... խիղճ չունեք...*

Սատին. *Քեզ ինչ օգուտ, եթե քեզ խղճամ...*

Կլեշշ. *Դու կարող ես... դու ոչ միայն խղճալ կարող ես... դու կարողանում ես մարդկանց չնեղացնել։*

Թաթար (նստում է տախտամածին և երեխայի պես օրորում է իր ճիվանդ ձեռքը). *Ծերուկը լավն էր, հոգու օրենք ուներ։ Ով հոգու օրենք ունի՝ լավն է։ Ով օրենք կորցրեց, կորավ..*

Բարոն. *Ի՞նչ օրենք, խան...*

Թաթար. *Այնպես... տարբեր տեսակ... գիտես, ինչպես...*

Բարոն. *Շարունակի՛ր...*

Թաթար. *Մարդուն մի նեղացնի՝ ահա օրենք...*

Սատին. *Դա կոչվում է՝ «Օրենսգիրք քրեականների և ուղղման ենթակաների պատիժների մասին»։*

Բարոն. *Եվ էլի՝ «Կանոնադրություն հաշտարար դատավորների կողմից տրվող պատիժների մասին»։*

Թաթար. *Ղորան կոչվում է... Ձեր Ղորան պետք է լինի ձեր օրենք... Հոգին Ղորան պետք է լինի...*

Կլեշշ (փորձելով ճարմոնը). *Ֆշշացնում է, անտերը։ Իսկ խանը ճիշտ է ասում, պետք է օրենքով ապրել, Ավետարանի համաձայն...*

Սատին. *Ապրի՛ր...*

Բարոն. *Փորձի՛ր..*

Թաթար. *Մուհամեդ Ղորան տվեց, ասաց՝ ահա օրենք... Արա, ինչպես այստեղ է գրված, Ղորան քիչ կլինի... ժամանակ կտա իր օրենք, նոր... ամեն ժամանակ կտա իր օրենք...*

Սատին. *Այդպես է... Եկավ ժամանակը և տվեց պատիժների օրենսգիրքը։ Պինդ օրենք է, շուտ չես մաշի...*

Նաստյա (բաժակով խփում է սեղանին). *Եվ ինչո՞ւ...*

ինչի՞ համար եմ ես ապրում այստեղ... ձեզ հետ։ Կգնամ... Կգնամ որևէ տեղ... աշխարհի ծայրը։

Բ ա ր ո ն. *Առանց մաշիկների՞, լեդի...*

Ն ա ս տ յ ա. *Տկլոր կգնամ... Ջորեքթաթ սողալով...*

Բ ա ր ո ն. *Դա շատ գեղեցիկ կլինի, լեդի, եթե չորեքթաթ ես սողալու...*

Ն ա ս տ յ ա. *Այո՛, ես կսողամ... միայն թե չտեսնեմ քո ոտքը... Ախ, զզվացրել է ինձ ամեն ինչ։ Ամբողջ կյանքը, բոլոր մարդիկ...*

Ս ա տ ի ն. *Թե գնալու լինես, Դերասանին էլ հետդ առ... Նա էլ է պատրաստվում այնտեղ գնալու... Նրան հայտնի է դարձել, որ աշխարհի ծայրից ընդամենը կես վերստ այս կողմ կանգնած է օրգանոնների հիվանդանոցը...*

Դ ե ր ա ս ա ն (*վառարանի վրայից դուրս ցցվելով*). *Օրգանիզմների... Տխմա՛ր...*

Ս ա տ ի ն. *Ալկոհոլով թունավորված օրգանոնների...*

Դ ե ր ա ս ա ն. *Այո՛, նա կգա... նա կգա, կտեսնեք։*

Բ ա ր ո ն. *Ո՞վ՝ նա, սըր...*

Դ ե ր ա ս ա ն. *Ե՛ս...*

Բ ա ր ո ն. Merci, *աստվածուհու սպասավոր... Ի՞նչ էր անունը... Դրամայի, ողբերգության աստվածուհու անունը...*

Դ ե ր ա ս ա ն. *Մուսա, տխմարի մեկը... Ոչ թե աստվածուհի, այլ մուսա...*

Ս ա տ ի ն. *Լահեզա... Հերա... Աֆրոդիտե... Ատրոպա... սատանան էլ գլուխ չի հանի։ Այդ բոլորը ծերուկն արեց... Նա է ֆոռացրել Դերասանի գլուխը... Հասկանո՞ւմ ես, Բարոն։*

Բ ա ր ո ն. *Ծերուկը հիմար էր...*

Դ ե ր ա ս ա ն. *Տգետներ, վայրենիներ... Մելպոմենա... Մարդիկ անսիրտ են։ Դուք կտեսնեք՝ նա կգա։ «Ճարպակալեք, մռայլ ուղեղներ»... Բերանժեի բանաստեղծությունն է, այո՛։*

Նա կգտնի իր տեղը, ուր չկա... չկա..

Բ ա ր ո ն. *Ոչինչ չկա, սըր...*

Դ ե ր ա ս ա ն. *Այո՛, ոչինչ։ «Թող այս սև փոսն ինձ լինի գերեզման... Ես մեռնում եմ թույլ ու անօգնական»։ Ինչո՞ւ եք դուք ապրում, ինչո՞ւ...*

Բ ա ր ո ն. *Է՛յ դու, Քին կամ հանճար ու անառակություն, մի՛ գոռա...*

Դ ե ր ա ս ա ն. *Ստում ես, պիտի գոռամ...*

Ն ա ս տ յ ա (*գլուխը սեղանից բարձրացնելով, թափահարում է ձեռքերը*). *Գոռա՛, թող լսեն...*

Բ ա ր ո ն. *Ի՞նչ միտք ունի, լեդի...*

Ս ա տ ի ն. *Թո՛ղ դրանց, Բարոն... Թող գոռան... Թող գլուխները ջարդեն... Այստեղ իմաստ կա... Մի խանգարիր մարդուն, ինչպես ասում էր ծերուկը... Այո՛, նա էր, էն հին թթխմորը, որ մեր կենվորներին էսպես թթվացրեց...*

Կ լ ե շ շ. *Հրապուրեց, որ ինչ-որ տեղ գնան, բայց ճանապարհը ցույց չտվեց...*

Բ ա ր ո ն. *Ծերուկը խաբեբա էր...*

Ն ա ս տ յ ա. *Ստում ես, դու ինքդ ես խաբեբա։*

Բ ա ր ո ն. *Ձե՛նդ, լեդի...*

Կ լ ե շ շ. *Ճշմարտություն չէր սիրում էդ ծերունին... Շատ էր ըմբոստանում ճշմարտության դեմ... Այդպես էլ պետք է... իսկապես՝ էստեղ ինչ ճշմարտություն... Առանց այդ էլ էստեղ շընչելու օդ չկա... Հրեն խանը... աշխատանքի ժամանակ ձեռքն է ճզմել... Երևի էդ ձեռքը սղոցել, դեն ձգելու հարկ լինի... լսում ես... ահա և քեզ ճշմարտություն...*

Ս ա տ ի ն (*բռունցքով խփելով սեղանին*). *Լռե՛ք։ Դուք բոլորդ անասուններ եք։ Դդումներ... Ջեննե՛ղդ, ծերունու մասին բան չասեք։* (Ավելի ճանգիստ): *Դու, Բարոն, բոլորից վատն ես... Դու ոչինչ չես հասկանում... և ստում ես։ Ծերունին խաբեբա չէր։ Ի՞նչ բան է ճշմարտությունը։ Մարդը — ահա քեզ ճշմարտություն։ Նա հասկանում էր դա, դուք՝ ոչ։ Դուք աղյուսի պես բութ եք։ Ես հասկանում եմ ծերունուն, այո՛։ Նա փչում էր... բայց ձեզ խղճալուց, սատանան ձեզ տանի։ Շատ մարդիկ կան, որ մերձավորի նկատմամբ ունեցած խղճահարությունից ստում են... Ես գիտեմ, ես կարդացել եմ։ Ստում են գեղեցիկ, ներշընչված, ոգևորիչ... Կա սփոփիչ սուտ և հաշտեցնող սուտ... այդ սուտը արդարացնում է այն ծանրությունը, որ բանվորի ձեռքն է ճզմել... և մեղադրում է սովամահներին... ես գիտեմ այդ սուտը։ Ով թույլ է հոգով և ուրիշների հյութերով է ապրում, սուտը։ Ով թույլ է հոգով և ուրիշների հյութերով է ապրում, սուտը։ Ոմանց նա օժանդակում է, մյուսները ծածկվում են նրանով... Իսկ ով ինքն իր տեղն է, ով անկախ է և ուրիշինը չի խժռում, նրա ինչի՞ն է պետք սուտը... Սուտը ստրուկների ու տերերի կրոնն է... Ճշմարտությունը ազատ մարդու աստվածն է։*

Բ ա ր ո ն. Կեցցե՛ս։ Հիանալի է ասված։ Ես համաձայն եմ։ Դու խոսում ես որպես կանոնավոր մարդ։

Ս ա տ ի ն. Եվ ինչո՞ւ մեկ մեկ խաղանենգն էլ սուտ չխոսի, երբ կանոնավոր մարդիկ խոսում են որպես խաղանենգներ։ Այո՛... Ես շատ բան եմ մոռացել, բայց ինչ-որ բաներ դեռ դիտեմ։ Սերունին... նա խելքի ծով էր... նա ինձ վրա այնպես ազդեց, ինչպես թթուն հին և կեղտոտ մետաղադրամի վրա... Համենք նրա կենացը... Լցրո՛ւ...

Նաստյան մի բաժակ գարեջուր է լցնում և տալիս Սատինին։

Ս ա տ ի ն. Սերունին ինքնուրույն է ապրում... նա ամեն ինչի նայում է իր աչքերով։ Մի անգամ ես նրան հարցրի. պապ, մարդիկ ինչի՞ համար են ապրում։ (Աշխատելով խոսել Լուկայի ձևով և նրա ձևերն ընդօրինակելով)։ «Լավագույնի համար են մարդիկ ապրում, սիրելիս։ Ահա, ասենք, ապրում են ատաղձագործներ, բոլորը՝ անպետք մարդիկ... Եվ ահա նրանց միջից ծնվում է մի ատաղձագործ, այնպիսի ատաղձագործ, որի նմանը աշխարհը չի տեսել, բոլորին գերազանցել է, ու ատաղձագործների մեջ չկա նրան հավասարը։ Եվ նա ամբողջ ատաղձագործությանը իր կերպարանքն է տալիս, և գործն անմիջապես քսան տարով առաջ է մղում... Այդպես էլ բոլոր մյուսները... փականագործները, կոշկակարները և այլ աշխատավոր մարդիկ... և բոլոր գյուղացիները... և նույնիսկ աղաները... լավագույնի համար են ապրում։ Ամեն մեկը կարծում է, թե իր համար է ապրում, բայց դուրս է գալիս, որ ապրում է լավագույնի համար... Հարյուր տարի, գուցե և ավելին, լավագույն մարդու համար են ապրում»։

Նաստյան ճարմանդերն նայում է Սատինի դեմքին։ Կլեշչը դադարում է ճարմանդի վրա աշխատելուց և նույնպես լռում է։ Բարոնը, գրպանը ցած խոնարհած, մատներով կամաց խփում է սեղանին։ Դերասանը վառարանի վրայից ցցվել, աշխատում է զգույշ իջնել տախտակամածին։

Ս ա տ ի ն. «Բոլորը, սիրելիս, բոլորն ինչքան կան, լավագույնի համար են ապրում։ Դրա համար էլ ամեն տեսակի մարդու էլ հարկավոր է հարգել... Չէ որ մեզ համար հայտնի չէ, թե ով է նա, ինչու է ծնվել և ինչ կարող է անել... գուցե նա ծնվել է ի երջանկություն մեզ... մեզ մի մեծ օգուտ տալու... Հատկապես երեխաներին պիտի հարգել, մանուկներին։ Երեխաներին լայն

տարածություն է պետք։ Մի՛ խանգարեք երեխաներին ապրել... Հարգեք երեխաներին»։

Դադար։

Բ ա ր ո ն. (մտախոհ). Էդպես... Լավագույնի համար։ Դա ինձ հիշեցնում է մեր ընտանիքը... Հին գերդաստան... Եկատերինայի ժամանակների... ազնվականներ... ռազմիկներ... Ֆրանսիայից գաղթածներ... ծառայում էին, հա վեր էին բարձրանում... Նիկոլայ առաջինի օրոք պապս՝ Գուստավ Դեբիլը, բարձր պաշտոն էր զբաղեցնում... հարստություն... հարյուրավոր ճորտեր... ձիեր... խոհարարներ...

Ն ա ս տ յ ա. Ստում ես։ Դա չի եղել...

Բ ա ր ո ն (տեղից ցատկելով). Ի՞նչ... գե՞ղ, շարունակի՛ր...

Ն ա ս տ յ ա. Դա չի եղել։

Բ ա ր ո ն (գոռում է). Տուն՝ Մոսկվայում։ Տուն՝ Պետերբուրգում։ Կառքեր... զինանշաններով կառքեր...

Կլեշչը վերցնում է ճարմանդը, վեր է կենում, քաշվում է մի կողմ և այնտեղից դիտում է տեսարանը։

Ն ա ս տ յ ա. Չի՛ եղել...

Բ ա ր ո ն. Չե՞ղ... Ես ասում եմ՝ տասնյակ սպասավորներ...

Ն ա ս տ յ ա (բավականությամբ). Չի՛ եղել...

Բ ա ր ո ն. Կսպանե՛մ...

Ն ա ս տ յ ա (պատրաստվելով փախչել). Չեն եղել կառքեր...

Ս ա տ ի ն. Թող, Նաստենկա, մի կատաղեցնի դրան...

Բ ա ր ո ն. Սպասիր դու... ոչնչությո՛ւն։ Իմ պապը...

Ն ա ս տ յ ա. Չի՛ եղել պապ, ոչինչ չի եղել...

Բ ա ր ո ն (զայրույթից հոգնած, նստում է աթոռին). Սատին, ասա դրան, էդ լրբին... Դո՞ւ էլ ես ծիծաղում, դո՞ւ էլ չես հավատում... (գոռում է հուսահատ, բռունցքները խփելով սեղանին)։ Եղել է, սատանան տանի ձեզ։

Ն ա ս տ յ ա (ճրճվանքով). Ա՜, ա՜, ոռնացի՞ր... Հասկացա՞ր, թե ինչպես է լինում, երբ մարդուն չեն հավատում։

Կ լ ե շ չ (վերադառնալով սեղանի մոտ). Ես կարծում էի, տուրուգմբոց կլինի...

Թ ա թ ա ր. Ախ, հիմար են մարդիկ։ Շա՜տ վատ է։

Բ ա ր ո ն. Ես թույլ չեմ տա, որ ինձ ծաղրուծանակի ենթարկեք, ես ապացույցներ ունեմ, փաստաթղթեր... Սատանա։

Սատին. Դեն նետիր դրանք ու պապիդ կառքերը մոռացիր... Անցյալի կառքով ոչ մի տեղ չես կարող գնալ...

Բարոն. Բայց ինչպե՞ս է նա համարձակվում...

Նաստյա. Ասա՜-ցե՛ք, խնդրեմ, ինչպե՞ս եմ համարձակվում...

Սատին. Տեսնում ես, համարձակվում է... նա ինչո՞վ է քեզանից վատ... թեև անցյալում հավանաբար չի ունեցել ոչ միայն պապ ու կառքեր, այլ նույնիսկ հայրիկ ու մայրիկ...

Բարոն (ճանգստանալով). Գրողը քեզ տանի, դու կարողանում ես հանգիստ դատել... իսկ ես երևի կամք չունեմ...

Սատին. Ձեռք բեր։ Օգտակար է... (դադար)։ Նաստյա, դու հիվանդանոց գնո՞ւմ ես...

Նաստյա. Ինչո՞ւ...

Սատին. Նատաշայի մոտ...

Նաստյա. Նոր գլխի ընկար... նա վաղուց է հիվանդանոցից դուրս եկել... Դուրս է եկել ու կորել... ոչ մի տեղ չկա...

Սատին. Ուրեմն, դուրս է եկել...

Կլեշչ. Հետաքրքիր է, ով ում ավելի շատ կխրի... Վասկա՞ն՝ Վասիլիսային, թե՞ սա՝ նրան...

Նաստյա. Վասիլիսան դուրս կպրծնի... նա խորամանկ է... Իսկ Վասկային կքշեն տաժանակիր աշխատանքի...

Սատին. Կովի մեջ կատարված սպանության համար միայն բանտ է հասնում...

Նաստյա. Ափսոս։ Ավելի լավ կլիներ տաժանակիր աշխատանքի ուղարկեին... Ձեզ բոլորիդ տաժանակիր աշխատանքի ուղարկեին։ Ավելին, աղբի պես թափեին մի փոսի մեջ...

Սատին (զարմացած). Ի՞նչ ես ասում։ Կատաղեցի՞ր...

Բարոն. Հիմա ես կհասցնեմ դրա ականջին... հանդգնության համար։

Նաստյա. Փորձիր։ Ձեռք տուր։

Բարոն. Կփորձեմ։

Սատին. Թո՛ղ, ձեռք մի տա... մի վիրավորիր մարդուն։ Իմ մտքից դուրս չի գալիս այդ ծերուկը... (Քրքջում է)։ Մի վիրավորիր մարդուն։ Բայց եթե ինձ մի անգամ վիրավորե՞լ են... ամբողջ կյանքիս համար միանգամից։ Ի՞նչ անել։ Ներել... երբե՛ք։ Ոչ մեկին...

Բարոն (Նաստյային). Դու պարտավոր ես հասկանալ, որ ես քո հատը չեմ։ Դու... զիբիլ ես...

Նաստյա. Ա՜խ, դու, թշվառակա՜ն։ Ախր դու իմ հաշվին ես ապրում, ինչպես որդը՝ խնձորի...

Տղամարդկանց ճամբարաշխ քրքիջի պայթյուն։

Կլեշչ. Ա՜խ... հիմար։ Լա՜վ խնձոր ես։

Բարոն. Չի կարելի... բարկանալ... տխմարիկս։

Նաստյա. Ծիծաղո՞ւմ եք... Ստում եք... Ձեզ համար ծիծաղելի չէ։

Պերասան (մոայլ). Հո՛ւշ տուր դրանց։

Նաստյա. Եթե ես կարողանայի, ես ձեզ (սեղանից վերցնում է գավաթը և շպրտում հատակին) ահա այսպես կանեի...

Թաթար. Ինչո՞ւ աման ջարդել։ Է՜... հիմարի գլուխ...

Բարոն (տեղից ելնելով). Չէ՜, ես հիմա դրան... կսովորեցնեմ էդ ձևերը...

Նաստյա (փախչելով). Սատանան ձեզ տանի։

Սատին (նրա ետևից). Է՜յ, բավական է։ Ո՞ւմ ես վախեցնում։ Բանն ինչ է, վերջապես...

Նաստյա. Գայլե՛ր։ Երնեկ սատկեիք։ Գայլե՛ր...

Պերասան (մոայլ). Ամե՛ն։

Թաթար. Ո՜ւ-ո՜ւ... Չար կնիկ, ռուս կնիկ... կապը կըտրած... ազատ... Թաթար կնիկ՝ չէ... Թաթար կնիկ օրենք սիրի...

Կլեշչ. Դրան քոթակ է պետք...

Բարոն. Գարշելի կնիկ...

Կլեշչ (հարմոնը փոռձելով). Պատրաստ է։ Իսկ տերը չկա ու չկա... Վառվում է տղան...

Սատին. Հիմա՝ խմիր...

Կլեշչ. Շնորհակալ եմ։ Ասենք, պառկելու էլ ժամանակն է...

Սատին. Վարժվո՞ւմ ես մեզ...

Կլեշչ (խմելով, գնում է դեպի անկյունի տախտամածը). Ոչինչ... Ամեն տեղ մարդիկ են... Սկզբում դա չես տեսնում... հետո նայում ես, ու դուրս է գալիս, որ բոլոր մարդիկ... ոչինչ...

Թաթարը տախտամածի վրա ինչ-որ բան է փռում, ծնկի է գալիս և աղոթում է։

Բարոն (Սատինին, մատնացույց անելով Թաթարին). Նայի՛ր...

Սատին. Թո՛ղ։ Նա լավ տղա է... մի խանգարիր (քրքջում է)։ Ես այսօր բարի եմ, սատանան գիտի, թե ինչու...

Բ ա ր ո ն. *Դու բարի ես միշտ, երբ խմում ես... և խելացի...*

Ս ա տ ի ն. *Երբ ես հարբած եմ... ինձ ամեն ինչ դուր է գալիս։ Հա՛, նա աղոթում է։ Հիանալի է։ Մարդը կարող է հավատալ և չհավատալ... Դա իր գործն է։ Մարդը ազատ է... Ամեն ինչի համար նա ինքն է վճարում... հավատի համար ու անհավատության, սիրո համար, խելքի համար... Մարդը ամենի ինչի համար ինքն է վճարում և այդ պատճառով ազատ է։ Մարդը՝ ահա ճշմարտությունը։ Ինչ բան է մարդը։ Դա ես չեմ, դու չես, նրանք չեն։ Չէ... Դա դու ես, ես եմ, նրանք են, ծերուկն է, Նապոլեոնը, Մուհամեդը... Մի հոգու մեջ* (մտովի օդի մեջ գծում է մարդու կերպարանք)։ *Հասկանո՞ւմ ես։ Դա սրամիտ է։ Դրա մեջ են բոլոր սկիզբները և վերջերը։ Ամեն ինչ մարդու մեջ է, ամեն ինչ մարդու համար է... Միայն մարդը գոյություն ունի, իսկ մնացյալը նրա ձեռքի և ուղեղի գործն է։ Մա՛րդ... հոյակապ է դա։ Դա հպարտ է հնչում։ Մա՛րդ։ Պետք է հարգել մարդուն։ Չխղճալ... խղճահարությամբ չստորացնել... Հարգել է պետք... Ամենք մարդու կենացը, Բարոն* (կանգնում է)։ *Լավ է, երբ քեզ մարդ ես զգում։ Ես բանտարկյալ եմ, մարդասպան, խաղանենգ, այո՛։ Երբ քայլում եմ փողոցով, մարդիկ նայում են ինձ իբրև սրիկայի... և մի կողմ են քաշվում և իրենց շուրջն են նայում... և հաճախ ինձ ասում են՝ սրիկա։ Խաբեբա։ Աշխատիր։ Աշխատե՞մ։ Ինչո՞ւ։ Որ կո՞ւշտ լինեմ* (քրքջում է)։ *Ես միշտ ատել եմ այն մարդկանց, որոնք չափից ավելի են մտահոգվում, որ կուշտ լինեն։ Բանը դա չէ, Բարոն։ Բանը դա չէ։ Մարդն ավելի բարձր է։ Մարդը կշտությունից ավելի բարձր է։*

Բ ա ր ո ն (գլուխն օրորելով). *Դու դատում ես... դա լավ է... դա, հավանաբար, տաքացնում է սիրտը... Ես դա չունեմ... ես չեմ կարողանում* (շուրջն է նայում և ասում կամաց, զգույշ) *ես, եղբայր, վախենում եմ... երբեմն։ Հասկանո՞ւմ ես։ Ահ եմ զգում... որովհետև չգիտեմ՝ ի՞նչ է լինելու հետո։*

Ս ա տ ի ն (քայլում է). *Դատարկ բաներ են։ Մարդն ումի՞ց պիտի վախենա։*

Բ ա ր ո ն. *Գիտե՞ս ինչ... Այն ժամանակից, ինչ ես հիշում եմ ինքս ինձ... իմ գլխի մեջ ինչ-որ մշուշ է։ Երբեք և ոչինչ ես չեմ հասկացել։ Ես միշտ անհարմար եմ զգացել... ինձ թվում է, թե ես ամբողջ կյանքում միայն շորերս եմ փոխում... իսկ ինչո՞ւ։ Չեմ հասկանում։ Երբ սովորում էի, աղնվականական ինստիտուտի համազգեստ էի հագնում... իսկ ի՞նչ էի սովորում։ Չեմ հի-*

շում... Ամուսնացա՝ ֆրակ հագա, հետո՝ խալաթ... իսկ կին առա գարշելի մեկին՝ ինչո՞ւ։ Չեմ հասկանում... Մսխեցի ամենը, ինչ կար... ինչ-որ գորշ պիջակ էի հագնում ու հին շալվար... իսկ ինչպե՞ս սնանկացա։ Չնկատեցի։ Ծառայում էի պետական հիմնարկում։ Համազգեստ, կոկարդով գլխարկ... Վատնեցի պետական փողերը... բանտարկյալի խալաթ հագցրին... Հետո հագա ահա այս... Եվ այս ամենը՝ ոնց որ երազում... Հը՞։ Սիծաղելի՞ է...

Ս ա տ ի ն. *Ոչ այնքան, ավելի շուտ՝ անմիտ է...*

Բ ա ր ո ն. *Այո... Ես էլ եմ կարծում, որ անմիտ է... Բայց, ախր, ինչ-որ մի բանի համար ես ծնվել եմ... չէ՞։*

Ս ա տ ի ն (ծիծաղելով). *Հավանաբար... Մարդը ծնվում է լավագույնի համար* (գլխով անելով)։ *Այդպես... լավ է։*

Բ ա ր ո ն. *Դա... Նաստկան էր... Փախավ... Ո՞ւր... Գնամ, նայեմ... Որտե՞ղ է նա։ Համենայն դեպս... նա...* (գնում է։ Դադար)։

Դ ե ր ա ս ա ն. *Թաթա՛ր։* (դադար) *Խա՛ն...*

Թաթարը շուռ է տալիս գլուխը։

Դ ե ր ա ս ա ն. *Ինձ համար... աղոթիր...*

Թ ա թ ա ր. *Ի՞նչ...*

Դ ե ր ա ս ա ն (ավելի կամաց). *Աղոթիր... ինձ համար...*

Թ ա թ ա ր (լռելուց հետո). *Ինքդ աղոթիր...*

Դ ե ր ա ս ա ն (Արագ իջնում է վառարանի վրայից, մոտենում է սեղանին, դողացող ձեռքերով օդի է լցնում, խմում է ռեմարյա թե վազելով, գնում է միջանցք)։ *Գնացի։*

Ս ա տ ի ն. *Է՛յ, դու սիկամբը, ո՞ւր...*

Սալոց։ Նորս են մտնում կանացի բամբակե բաճկոն հագած Մեդվեդևը և Բուբնովը, երկուսն էլ խմած, բայց ոչ շատ։ Բուբնովի մի ձեռքին մի շաբաթ հագցրանաց է, իսկ մյուս ձեռքին՝ մի քանի վոբլա, ընի տակ՝ մի շիշ օղի։ պիջակի գրպանում՝ մեկ ուրիշ շիշ։

Մ ե դ վ ե դ ե ն. *Ուղտը էշի նման է, բայց առանց ականջների...*

Բ ո ւ բ ն ո վ. *Ձեռ քաշի, դու ինքդ էլ ես էշի նման...*

Մ ե դ վ ե դ ե ն. *Ուղտը բոլորովին ականջ չունի, նա քթածակերով է լսում...*

Բ ո ւ բ ն ո վ (Սատինին). *Բարեկամ, ես քեզ փնտրել եմ բոլոր գինետուն-պանդոկներում։ Շիշը վերցրու, իմ ձեռքերը զբաղված են...*

Սատին. Իսկ դու քաղցրահացը դիր սեղանին, մի ձեռդ կազատվի...

Բուրնով. Ճիշտ է։ Ախ, դու... նայիր, է՜... խելքի ծով է...

Մեդվեդև. Բոլոր խաբեբաները խելացի են, ես գիտեմ։ Նրանք առանց խելքի չեն կարող յոլա գնալ։ Լավ մարդը, եթե նա նույնիսկ հիմար է, լավ է, իսկ վատը անպայման պիտի խելք ունենա։ Բայց ուղտի վերաբերյալ դու ճիշտ չես, նա երթևեկության համար պիտանի կենդանի է... նա պոզեր չունի... ատամներ էլ չունի...

Բուրնով. Ո՞ւր է ժողովուրդը։ Ինչո՞ւ այստեղ մարդ չկա։ Հե՜յ, դուրս եկեք... հյուրասիրում եմ... Ո՞վ է անկյունում...

Սատին. Դու ունեցածդ շուտո՞վ կխմես, կպրծնես, խբրտվիլա՜կ...

Բուրնով. Շուտո՞վ։ Այս անգամ ես մի շատ պստլիկ կապիտալ էի կուտակել։ Զո՜բ... ո՞ւր է Զոբը...

Կլեշչ (մոտենալով սեղանին). Այստեղ չի...

Բուրնով. Ո՜ւ-ո՜ւ-ռռռ... Բարբոս... բոյա, բոլյու, բրռլյու... Հնդկահավ... Մի հաչիր, մի գոմռա... խմիր, քեֆ արա... քիթդ մի կախիր... Ես բոլորին հյուրասիրում եմ... Ես, ախպերս, սիրում եմ հյուրասիրել... թե որ ես հարուստ լինեի, մի ձրի գինետուն կբացեի... Աստված վկա... երաժշտությամբ, և որ երգիչների խումբ լիներ... Արի, կեր, խմիր, երգ լսիր... հոգիդ թեթևացրու... Աղքատ մարդ, հայդա՜, իմ ձրի գինետունը եկ... Սատին, ես քեզ. ես քեզ կասեի... վերցրու իմ բոլոր կապիտալների կեսը... էդպես կասեի...

Սատին. Դու հիմա ամբողջը տուր ինձ։

Բուրնով. Ամբողջ կապիտա՞լս... Հիմա... Ա՜ռ... Ահա մեկ ռուբլի, ահա էլի մի քսան կոպեկանոց... հինգ կոպեկանոցներ.. երկու կոպեկանոցներ... բոլորը։

Սատին. Եվ լավ է։ Ինձ մոտ ավելի ապահով կլինի։ Կխաղամ այս փողերով։

Մեդվեդև. Ես վկա եմ։ Փողերը հանձնված են պահպանության... Գումարն ինչքա՞ն է։

Բուրնով. Դու... դու ուղտ ես... մենք վկայի պետք չունենք։

Ալյոշկա (մտնում է ոտաբոբիկ). Եղբայրներ, ես ոտքերս եմ թրջել...

Բուրնով. Գնա կոկորդդ թրջիր... Միայն էդպես... Դու լավն ես... Դու երգում ես ու նվագում... Դա շատ լավ է։ Բայց իզուր ես խմում։ Դա, եղբայր, վնասակար է... խմելը վնասակար է...

Ալյոշկա. Քեզանով եմ դատում... Դու միայն հարբած ժամանակ ես մարդու նման... Կլե՜շչ, հարմոնը նորոգեցի՞ր... (Պարելով երգում է)։

Ախ, ախ, թե իմ ոտքը
Էսքան սիրուն չլիներ,
Ասա տեսնեմ՝ սանամերս
Ինչո՞ւ պիտի ինձ սիրեր...

Սառել եմ եղբայրներ, ցուրտ է...

Մեդվեդև. Հըմ... ամոթ չլինի հարցնելը, ո՞վ է սանամերդ...

Բուրնով. Ձեռ քաշի... Դու հիմա, եղբայրս, ոչինչ ես... պրծա՜վ... էլ քեռի չես...

Ալյոշկա. Այլ պարզապես մորաքրոջ ամուսին...

Բուրնով. Քրոջդ մի աղջիկը բանտում է, մյուսը՝ մեռնում է...

Մեդվեդև (հպարտորեն). Ստում ես... Նա չի մեռնում, նա անհայտ կորել է։

Սատինը ֆրչում է։

Բուրնով. Մեկ է եղբայր, մարդն առանց քրոջ վավակների՝ քեռի չէ...

Ալյոշկա. Ձերդ գերազանցություն... Պաշտոնաթող այծի թմբկահար...

Սանահերս շատ փող ունի,
Քոռ գրոշ իսկ ես չունեմ,
Բայց մի ուրախ տղա եմ ես,
Դիտի խմեմ, քեֆ անեմ...

Ցուրտ է։

Մտնում է Զոբը, հետո, մինչև գործողության վերջը, դարձյալ մի քանի տղամարդկանց ու կանանց կերպարանքներ են երևում։ Նրանք հանվում են, տեղավորվում տախտամածներին, ֆրմնչում են։

Կրիվոյ Զոբ. Բուրնով, դու ինչո՞ւ փախար...

Բուրնով. Եկ այստեղ, նստիր... Արի երգենք, եղբայր, իմ սիրելի երգը... հը՞...

Թաթար. Գիշեր է, քնել պետք է։ Երգ պետք է ցերեկ երգել...

Սատին. Դե, ոչինչ, խան... դու այստեղ արի...

Թաթար. Ինչպես՝ ոչինչ... Աղմուկ կլինի.... երբ երգ երգում ես... աղմուկ լինում է...

Բուրնով (գնում է դեպի նա). Խան... ի՞նչ է ձեռք։ Կրտրե՞լ են ձեռքդ...

Թաթար. Ինչո՞ւ... կսպասենք... կարող է՝ կտրել պետք չէ... Ձեռք երկաթ չէ... դժվար չէ կտրել...

Կրիվոյ Զոբ. Քո գործը յաման է, Հասանկա։ Առանց ձեռքի դու բանի պետք չես։ Մեղպեսների գինը ձեռքի ու կոնակի մեջ է... Չկա ձեռք, չկա և մարդ... Գործդ խարաբ է։ Արի արաղ խմիր... Ուրիշ ոչինչ...

Կվաշնյա (մտնում է). Ա՜խ, դուք իմ սիրելի հարևաններ... ի՞նչ է դրսում... էն ի՞նչ է դրսում... ցո՛ւրտ, ցե՛խ... իմ կենվորն էստե՞ղ է... իմ կենվորը...

Մեդվեդև. Էստեղ եմ...

Կվաշնյա. Էլի՞ իմ բաճկոնն ես հագել... Եվ կարծես թե մի քիչ էնպես ես... Հը՞... էդ ի՞նչ է, ասա տեսնեմ...

Մեդվեդև. Անվանակոչության առիթով... Բուբնովը... և ցուրտ է, ցեխ...

Կվաշնյա. Ինձ նայիր, հա՜, ցե՛խ, խելոք մնա... գնա քնիր տեսնեմ։

Մեդվեդև (գնում է խոհանոց). Քնել կարող եմ... Ուզում եմ... ժամանակն է...

Սատին. Դու ի՞նչ է... այդքան խի՞ստ ես նրա հետ։

Կվաշնյա. Ուրիշ ձևով, բարեկամս, չի կարելի... էդպիսի տղամարդուն պիտի խստության մեջ պահել։ Ես նրան իմ կենակիցը դարձրի, կարծելով, որ նրանից օգուտ կլինի... քանի որ զինվորական է... Իսկ դուք անզուսպ մարդիկ եք... իմ գործն էլ կնկա գործ է... բայց նա՝ խմել է։ Դա իմ ինչի՞ն է պետք...

Սատին. Օգնականիդ ընտրությունը վատ արիր...

Կվաշնյա. Չէ՜, վատ չեմ ընտրել... Դու ինձ հետ չես ուզի ապրել... էդպիսին ես դու։ Ու եթե ապրես էլ, մի շաբաթից ավել չի քաշի... թղթախաղում ինձ տանուլ կտաս՝ իմ ամբողջ փալասմալասի հետ...

Սատին (ֆրֆչում է). Ճիշտ է, տիրուհի, տանուլ կտամ։

Կվաշնյա. Մի տես, Ալյոշկան է։

Ալյոշկա. Ես եմ ահա։

Կվաշնյա. Դու էդ ի՞նչ ես իմ մասին դուրս տալիս...

Ալյոշկա. Ես... ամեն ինչ խղճով եմ ասում։ Համա թե, ասում եմ, կնիկ է, հա՜... Զարմանալի... Միսը, ճարպը, ոսկորը տասը փութ է, իսկ խելքը մի մսխալ էլ չի...

Կվաշնյա. Դե, էդ մեկը դու ստում ես... Չէ, դու ինչո՞ւ ես ասում, որ ես իմ կենակցին ծեծում եմ...

Ալյոշկա. Ես կարծում էի, թե ելք նրա մաղերից քաշ էիր տալիս, ծեծում էիր...

Կվաշնյա (ծիծաղելով). Հիմա՛ր։ Իսկ դու էնպես ցույց տուր, իբր թե չես տեսնում։ Աղբը խրճիթից ինչո՞ւ դուրս հանել։ Ինչքան չլինի, նրա համար վիրավորական է... Նա քո էդ խոսքերի համար է խմել սկսել...

Ալյոշկա. Ուրեմն, ճիշտ են ասում, թե կատուն էլ է քացախ խմում...

Սատինը, Կլեշչը ֆրֆչում են։

Կվաշնյա. Մեծաբերան... Եվ ի՞նչ մարդ ես դու, Ալյոշկա...

Ալյոշկա. Ամենաառաջին տեսակի... Ամեն ինչ ձեռքիցս գալիս է... Եվ ուր աչքս աշում է, էնտեղ էլ ինձ քաշում է...

Բուբնով (թաթարի տախտամածի մոտ). Գնանք։ Մեկ է, չենք թողնի, որ քնես։ Պիտի երգենք... ամբողջ գիշերը։ Զոբ...

Կրիվոյ Զոբ. Երգել... կարելի է...

Ալյոշկա. Իսկ ես կնվագեմ...

Սատին. Կլսենք...

Թաթար (ժպտալով). Շեյթան ես դու, Բուբնա... գինի տուր... խմենք պիտի. քեֆ անենք պիտի, մահ եկավ, մեռնենք պիտի...

Բուբնով. Լցրու դրա բաժակը, Սատին։ Զո՛ր, նստիր։ Ա՜խ, եղբայրներ, շա՞տ բան է մարդուն պետք... Ես խմել եմ ահա և ուրախ եմ... Զոբ, զի՛ր... էն մեր սիրածը։ Երգեմ, լաց ըլնեմ...

Կրիվոյ Զոբ (երգում է). Արփին ծագում, մտնում է մայր...

Բուբնով (ձայնակցում է). Բայց խավար է իմ բանտում...

Դուռն արագ բացվում է։

Բարոն (շեմին կանգնած, գոռում է). Հե՜յ, դուք... եկեք, այստեղ, եկեք... դրսում... այնտեղ... Դերասանը... կախվել է...

Լռություն. բոլորը նայում են Բարոնին. նրա ետևից նայանվում է Նաստյան և դանդաղ, աչքերը լայն բացած, գնում է դեպի սեղանը։

Սատին (ցածրաձայն). Ա՜խ... փչացրիր երգը... հիմա՛ր...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բանաստեղծություններ, լեգենդներ

Մրրկահավի երգը — թարգմ. Ե. Չարենց 5
Բազեի երգը — թարգմ. Ե. Չարենց 7
Աղջիկը և մահը — թարգմ. Ե. Չարենց 14

Պատմվածքներ

Պառավ Իզերգիլը — թարգմ. Հ. Մազմանյան 23
Մակար Չուդրա — թարգմ. Հ. Հարությունյան 47
Չելկաշը — թարգմ. Հ. Հարությունյան 61
Մի անգամ աշնանը — թարգմ. Ստ. Շահումյան 98
Քսանվեց տղամարդ և մի աղջիկ (պոեմ) — թարգմ. Ա. Խոնդկարյան . 107
Իմ ուղեկիցը — թարգմ. Ա. Խոնդկարյան 124
Բոլես — թարգմ Ա .Խոնդկարյան 157
Մարդու ծնունդը — թարգմ. Վ. Միքայելյան 163
Մայրը (վեպ) — թարգմ. Ա. Արայան 175
Հատակում (պիես) — թարգմ. Վ. Դավթյան 549

Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկի
ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

Алексей Максимович Горький ИЗБРАННЫЕ ПРОИЗВЕДЕНИЯ
(На армянском языке) Издательство «Советакан грох» Ереван, 1983

Խմբագիր՝ Գ. Գ. Խաչատրյան *Նկարիչ՝* Ռ. Ս. Ջուլֆակյան
Գեղ. խմբագիր՝ Վ. Ա. Հարությունյան *Տեխ. խմբագիր՝* Ա. Ց. Կովկասյան
Վերստուգող սրբագրիչներ՝ Օ. Ղ. Թերզյան, Ա. Ա. Հովսեփյան

ИБ *4102*

Հանձնված է շարվածքի 13. 04. 83։ Ստորագրված է տպագրության 5. 08. 83։
Ֆորմատ 84×108¹/₃₂։ Թուղթ՝ տպագր. № 1։ Տառատեսակը՝ «Գրքի սովորական»։
Տպագրություն բարձր, 32,76 պայմ. տպ. մամ., 31,15 հրատ. մամ.։
Տպաքանակը՝ 50 000։ Պատվեր 701։ Գինը՝ 3 ռ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։
Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.
ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։
Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.